

Ա. Բ. ԿԱՐԻՆՅԱՆ

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ
ԴՐՈՇԻ ՆԵՐՔՈՒ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

А. Б. КАРИНЯН

ПОД ЗНАМЕНОМ БРАТСТВА НАРОДОВ

ЛИТЕРАТУРНО-КРИТИЧЕСКИЕ,
НАУЧНО-ПУБЛИЦИСТИЧЕСКИЕ ОЧЕРКИ



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1976

8С
У-32

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Բ. ԿԱՐԻՆՅԱՆ

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՆԵՐՔՈՒ

939


ԳՐԱԿԱՆ-ԲՆՆԱԳԱՏԱԿԱՆ,
ԳԻՏԱԿԱՆ-ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1976



Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս
 Ա. Բ. Կարինյանի «Ժողովուրդների եղբայրության դրոշի ներքո»
 ժողովածուում զետեղված են սովետական պարբերական մամուլի
 էջերում տարբեր ժամանակներում հեղինակի տպագրված գրական-
 քննադատական, գիտական-հրապարակախոսական աշխատանքները:
 Գիրքը հրատարակվում է Ա. Բ. Կարինյանի ծննդյան 90-ամյակի
 առթիվ:

Կազմեց և խմբագրեց՝
 Վ. Մ. ԱՄԻՐԲԵԿՅԱՆԸ





ԱՐՏԱՇԵՍ ԿԱՐԻՆՅԱՆ

1976 թվականի նոյեմբերին լրանում է ականավոր բոլշևիկ, հասարակական գործիչ և գրականագետ-ակադեմիկոս Արտաշես Բալասիի Կարինյանի ծննդյան 90-ամյակը:

Ա. Բ. Կարինյանը իրավամբ պատկանում է լենինյան հին գվարդիայի այն գործիչների թվին, որոնք Հոկտեմբերի արշավույսից դեռ շատ առաջ մտնելով կոմունիստական կուսակցության շարքերը, իրենց ամբողջ գիտելիքները, կյանքն ու անսպառ եռանդը տրամադրել են բանվոր դասակարգի ազատագրության վեճ պայքարին և այսօր էլ ակտիվ մասնակցություն են ցուցաբերում կոմունիստական հասարակարգի շինարարությանը:

Նա ծնվել է Բաքվում, բանվորի ընտանիքում: Սկզբնական կրթությունն ստացել է Բաքվի առաջին դիմնադիայում և ապա ընդունվել ու հաջող կերպով ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Հասարակական-քաղաքական կյանքն սկսել է շատ վաղ հասակից, երբ տակավին աշակերտ էր և ղեկավար մասնակցություն էր ունենում աշակերտական անլեզալ հեղափոխական ժուռնալների խմբագրմանը, մասնակցում ընդհատակյա բանվորական խմբակների գործունեությանը:

Նա անցել է հեղափոխական գործիչի մեծ ճանապարհ: Արդեն 1906 թվականին հանդես է եկել սոցիալ-դեմոկրատական մամուլի էջերում՝ հին «Իսկրայական» հայերեն առաջին լեզալ «Կայծ» թերթում տպագրվում է նրա «Բաքվի նորագույն անարխիստների մասին» հոդվածը:

Ա. Կարինյանի հեղափոխական գործունեության մեջ խոշոր դեր է կատարել Ստ. Շահումյանը, որի հետ նա ծանոթացել է 1907 թ.: Ստ. Շահումյանի և ապա Ս. Սպանդարյանի, Ա. Զափարիձեի, Վ. Կասպարովի ու ականավոր այլ լենինյանների գաղափարական ազդեցության տակ նա հաստատ կերպով կանգնում է մարքսիզմի դիրքերում և դառնում կովկասյան բոլշևիկների ակտիվ գործիչներից մեկը: Զնայած պատկառելի հասակին, որպես

լենինյան գործիչ նա այսօր էլ ամենակտիվ մասնակցությունն է ցուցաբերում կուսակցության քաղաքական կյանքին, հանդիսանալով ժողովրդի շահերին անձնուրաց նվիրվածության օրինակ:

1907 թ. կովկասյան մի խումբ ուսանողների հետ միասին Ա. Կարինյանին բախտ է վիճակվում Ֆինլանդիայի Տերիոկի քաղաքում, ՌՍԳԲԿ Պետրոգրադի Կոմիտեի կողմից կազմակերպված բուլղարացիների ժողովում առաջին անգամ տեսնել ու լսել Վ. Ի. Լենինին:

1907—1910 թթ. Կարինյանը Բաքվում մասնակցում է բուլղարացիների մեջ տարվող հեղափոխական աշխատանքներին, ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանք ծավալում նրանց շրջանում: Նա միաժամանակ սերտ շփում է ունենում Ստ. Շահումյանի, Վ. Կասպարովի և այլ ականավոր բուլղարացիների հետ: 1908 թ. սկսում է թղթակցել «Բակինսկի ուբոչի» թերթին, որի խմբագիրներն էին այդ ժամանակ Ստ. Շահումյանը, Ա. Զափարիձեն, Ս. Սպանդարյանը և ուրիշներ:

Ռուսական առաջին հեղափոխությունից հետո ամբողջ երկրով մեկ մոլեզունց ստոլիպինյան ուսուցիչներն: Նա իր արտահայտությունը գտավ նաև գաղափարախոսության և այդ թվում զրականագիտության ասպարեզում: Բուլղարացիները, պայքարելով ստոլիպինյան ուսուցիչների դեմ բոլոր ուղղություններով, լուրջ ուշադրություն են դարձնում նաև բուրժուական նացիոնալիզմի դեմ մղվող պայքարին:

Բուրժուական նացիոնալիզմի դեմ գաղափարական պայքարն ուժեղացնելու և հայ բանվորներին ու գյուղացիներին մարքսիզմի և պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու նպատակով, Ստ. Շահումյանի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ 1911 թ. լույս է տեսնում գրական-հասարակական «Նոր խոսք» ամսագիրը, որի խմբագրական կոլեգիայի անդամ էր նաև Ա. Կարինյանը:

Այս փաստը բավական է գնահատելու այն մեծ վստահությունը, որ տաժում էր Ստ. Շահումյանը Արտ. Կարինյանի նկատմամբ: «Նոր խոսքի» էջերում Ստ. Շահումյանի, Ստոպանու և ուրիշների հետ միասին նա տեսական որոշակի արժեք ներկայացնող մի շարք հոդվածներով է հանդես գալիս, որոնցում մարքսիստական դիրքերից քննարկում է հայ գրականության ժամանակակից հարցերը: Կարինյանը էական ավանդ է ներմուծում բուլղարական հայ ժողովրդի ստեղծման գործում:

Իր գրական-հասարակական գործունեությանը զուգընթաց, բուլղարիկ հրատարակախոսը ակտիվ մասնակցություն է ունենում բանվորների շրջանում տարվող հեղափոխական պրակտիկ աշխատանքին: Նա անխոնջ պայքարում է հայ, ռուս, ադրբեջանցի, վրացի և Կովկասում բնակվող այլ ազգերի բանվորների ու գյուղացիների ինտերնացիոնալ համախմբման համար:

Ա. Կարինյանի հեղափոխական գործունեությունը աննկատ չի մնում ցարական ինքնակալությանը: 1913 թ. ոստիկանությունը մի խումբ բուլղարացի բանվորների հետ միասին ձերբակալում է նաև նրան, նետում բանտ և ապա արտաքսում Բաքվից ու Կովկասից: Յարական իշխանությունը հինգ տարով արգելում է նրան ապրելու Կովկասի սահմաններում:

Ռեպրեսիաները, բանտն ու քստըրը չեն ընկճում հավատարիմ լենինյանի կամքը: Նա շարունակում է իր հեղափոխական պայքարը՝ էլ ավելի մեծ ատելություններ լցված ցարական ինքնակալության դեմ: 1914 թ. Կարինյանը «Պրավդա»-ի էջերում հանդես է գալիս հոդվածներով ու գրախոսություններով: Ուշագրավ են հատկապես նրա հոդվածները Մաքսիմ Գորկու հեքիաթների, պրոլետարական գրողների ժողովածուի և այլ հարցերի մասին:

«Պուտ Պրավդի» թերթի հավելված «Ռաբոչի» ամսագրի № 2-ում 1915 թ. տպագրված «Պրոլետարական գրողների ժողովածուի մասին» ընդարձակ գրախոսականում Ա. Կարինյանը սուր ծաղրի է ենթարկում դեկադենտներին, որոնց համար կապիտալիստական հասարակությունը հանդիսանում է «հավերժական» իրավակարգ՝ անսասան հիմքով: Յուրջ տալով, որ «մեռնող դասակարգի բոլոր արվեստագետների մոտ սեռական խախտանքի և անասնական կյանքի քարոզը զուգորդվել է մոռյլ հոռետեսության և ինքնասպանության քարոզի հետ», հեղինակը բացահայտում է, որ բոլորովին այլ է մարտնչող հասարակարգի խավերի հոգեբանությունը, պրոլետարական խավերի հոգեբանությունը, որ «պրոլետարիատի գաղափարախոսությունը միակ առաջավոր գաղափարախոսությունն է, որովհետև պրոլետարիատը ձգտում է՝ հենվելով հասարակական զարգացման օրենքների վրա, վերակառուցել ամբողջ հին աշխարհը»:

1916 թ. Կարինյանը ակտիվ կերպով աշխատակցում է հայկական սոցիալ-դեմոկրատական պարտիզական «Պայքար» թերթին, որտեղ տպագրում է մի շարք հրատարակախոսական և գրական-քննադատական հոդվածներ: 1917 թ. առաջին կեսը նա նորից անց է կացնում Պետրոգրադում, քայլում ցարական ինքնակալությունը տապալողների շարքերում: Նրան բախտ է վիճակվում 1917 թ. ապրիլին լինել Ֆինլանդական կայարանում, լսել մեծ Լենինի հռչակավոր ճառը:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը նոր ուժ ու եռանդ է հաղորդում ականավոր հեղափոխականին: Նա բուռն խանդավառությամբ մասնակցում է մեծ Հոկտեմբերի նվաճումները պաշտպանելու և Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակն Անդրկովկասում ապահովելու համար մղված պայքարին: 1917 թ. աշնանը Արտ. Կարինյանը նորից գալիս է Բաքու: Սկսվում է նրա կյանքի ու պայքարի նոր, փայլուն էտա-

պը: Ստ. Շահումյանի և Ա. Զափարիձեի առաջարկով նա ընտրվում է «Բանվորների և զինվորների ղեկավարության Բաքվի սովետի տեղեկագրի» գլխավոր խմբագիր: Այդ թերթը, ինչպես հայտնի է, խոշոր դեր է կատարել ոչ միայն Բաքվի, այլ ամբողջ Անգրկովկասի բազմազգ պրոլետարիատի՝ հեղափոխական պայքարի կազմակերպման գործում:

Արտ. Կարինյանը Բաքվի սովետի և նրա գործադիր կոմիտեի անդամ էր, կուսակցության Բաքվի կոմիտեի անդամության թեկնածու 1918 թ. ապրիլին ստեղծվում է Բաքվի ժողովրդասովետը՝ Ստ. Շահումյանի գլխավորությամբ: Արտ. Կարինյանը ընտրվում է Բաքվի ժողովրդասովետի արդարադատության կոմիտար և ակտիվ մասնակցություն է ունենում Կոմունայի գործունեությանը: Նա այս շրջանում հանդես է գալիս բազմաթիվ հոդվածներով:

Ուշագրավ է նրա «Քաղաքային ինքնավարությունը և դեմոկրատիան» հրատարակախոսական հոդվածը, որը հեղինակը գրել է Ստ. Շահումյանի հանձնարարությամբ և առանձին գրքույկով հրատարակել 1917 թ. Բաքվում: Բանվորների համար մատչելի լեզվով հեղինակը սուր քննադատության է ենթարկում ցարական ինքնակալությանն ու կովկասյան քաղաքների դումաները, որտեղ նստածները մտածել են ոչ թե ժողովրդի շահերի մասին, այլ օգտագործել են իրենց դիրքերը աշխատավոր ժողովրդին շահագործելու, հարստահարելու և նրա հաշվին իրենց գրպանները ուռճացնելու համար: Կարինյանը այնուհետև ցույց է տալիս, թե ինչպիսին պետք է լինի իսկական ժողովրդական քաղաքային ինքնավարությունը, որտեղ կարող են ընտրվել միայն ժողովրդի ներկայացուցիչները, և որոնք ծառայելու են միայն ժողովրդի բարօրությանը: «Քաղաքային ինքնավարությունը,— գրում է Ա. Կարինյանը,— միմիայն այն պարագայում կարող կլինի բավարարություն տալ ժողովրդական լայն տարրերի կարիքներին, երբ ինքը, պետությունը կօգնի նրան ու կօժանդակի» (էջ 30): Այս հոդվածը ժամանակին որոշակի դեր խաղաց քաղաքի աշխատավոր մասսաների դասակարգային ինքնագիտակցության բարձրացման գործում:

Բաքվի կոմունայի անկումից հետո Արտ. Կարինյանը աշխատում է Մոսկվայում՝ Ազգությունների ժողովրդական կոմիսարիատին կից Հայկական գործերի կոմիսարիատում, մասնակցում է հայերեն «Կոմունիստ» հանդեսի խմբագրմանը և ապա խմբագրում է «Կարմիր գրոշ» թերթը:

Հետագայում կուսակցության Կենտկոմի հանձնարարությամբ, որպես կուսակցական իրավագետ-հրահանգիչ, աշխատում է Մ. Կալինինի անվան «Սովետական Կովկաս» ազիտ-հրահանգչական ղեկավարում, որը գործում էր Կովկասի ազատագրված վայրերում:

Հաջողությամբ կատարելով կուսակցության այդ պատասխանատու հանձնարարությունը, նա վերադառնում է Մոսկվա և ՌԿ(բ)Պ Կենտկոմի հանձնարարությամբ մեկնում Պետրոգրադ, ուր ղեկավարում է Նարվա-Պետրոգրադյան շրջանի կուսակցական դպրոցը:

1921 թ. առաջին կեսին Արտ. Կարինյանը գործուղվում է Հայաստան, որտեղ ընտրվում է ՀԿԿ Կենտկոմի անդամ: Կուսակցության հանձնարարությամբ նա որոշ ժամանակ մեկնում է արտասահման՝ գաղութահայության մեջ աշխատանք տանելու համար, լինում է Թուրքիայում, ապա Ամերիկայի Միացյալ Նահանգների մի շարք քաղաքներում:

Սովետական Հայաստանում Արտ. Կարինյանը երկար տարիներ վարել է կուսակցական-սովետական ղեկավար պաշտոններ, եղել է ՀՍՍՀ Կենտգործկոմի նախագահ, բազմաթիվ անգամ ընտրվել է ՀԿԿ Կենտկոմի անդամ, ՀՍՍՀ Կենտգործկոմի, ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային Կոմիտեի, Անդրբնդերացիայի Կենտգործկոմի նախագահության անդամ:

1928 թ. հետո, երբ Արտ. Կարինյանը ազատվում է ՀՍՍՀ Կենտգործկոմի նախագահի պարտականություններից, տեղափոխվում է Թբիլիսի, որտեղ 1929—30 թթ. ընթացքում խմբագրում է «Անդրկովկասի ժողովրդական տնտեսություն» ամսագիրը: Հետագայում նորից վերադառնում է Հայաստան, որոշ ժամանակ խմբագրում է «Նոր ուղի» ամսագիրը, ավելի ուշ նշանակվում է լուսավորության ժողովրդի տեղակալ, իսկ հետագա տարիներին ղեկավարում գրականագիտության հարցերով:

Ա. Կարինյանի գրչին են պատկանում բազմաթիվ հոդվածներ, որոնք տպագրվել են նախասովետական բոլշևիկյան մամուլում, բրոշյուրներ ու մենագրություններ: Գրանց թվում «Քաղաքային ինքնավարությունը և դեմոկրատիան» (Բաքու, 1917 թ.), «Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը» (1924 թ.), «Հայ ազգայնականների ուղին» (1926 թ.), «Անդրկովկասը 1905 թվին» (1927 թ.), «Դաշնակցությունը և իր զինակիցները» (1932 թ.), «Նավթը և հայկական հարցը» (1929 թ.) և այլ աշխատություններ: 1934 թ. հրատարակվեց Արտ. Կարինյանի երկերի ժողովածուն, որտեղ տեղ են գտել ռուսական և հայ բոլշևիկյան մամուլի էջերում հեղինակի տպագրած հրատարակախոսական հոդվածները:

1956 թ. լույս տեսավ Արտ. Կարինյանի «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» շորսհատորյակի առաջին հատորը, իսկ 1960 թ.՝ 2-րդ հատորը: Այս միանգամայն ուշագրավ մենագրության առաջին հատորում հեղինակը մեր պատմագրության մեջ առաջին անգամ գիտական լուրջ և հաջողված փորձ է կատարում հնդկահայ պարբերական մամուլի պատմական տեսությունը տալու ուղղությամբ, իսկ երկրորդ հատորում բնութագրվում են

գաղութահայ այն պարբերականները, որոնք լույս են տեսել Արևմտյան Եվրոպայում XIX դարի սկզբից մինչև 70-ական թվականները: Այստեղ հեղինակը բնական վերլուծության է ենթարկում մասնավորապես Վենետիկում, Վիեննայում, Փարիզում և Մանչեստրում հրատարակված հայ պարբերականները: Այս աշխատության գիտական հասարակական արժեքը հատկապես ընդգծելի է այն փաստով, որ ակադեմիկոս Կարինյանը կարողացել է բազմակողմանիորեն ցույց տալ Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների կապը Վատիկանի կաթոլիկական կղերապետության հետ և գնահատելով նրանց պարբերականները, միաժամանակ մերկացրել է նրանցում ցայտուն կերպով նշմարվող կաթոլիցիզմը: Մենագրության 3-րդ հատորը, որի լույս ընծայմանը սպասում է մեր հասարակայնությունը, պարունակելու է Քուրքիայում և Ռուսաստանում լույս տեսած հայ պարբերականների բնութագիրն ու տեսությունը:

Ականավոր գիտնականի մեծ վաստակը բարձր է գնահատվում գիտական հասարակայնության կողմից: Նա ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ է, երկար տարիներ աշխատել է որպես ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, վիցե-պրեզիդենտի պաշտոնակատար:

Արտ. Կարինյանը հասարակական խոշոր գործիչ է: Նա եղել է ՍՍՀՄ միլիտարների սովետին կից գիտության և տեխնիկայի գծով լենինյան մրցանակներ շնորհող կոմիտեի անդամ, բազմիցս ընտրվել է ՀԿԿ Կենտկոմի անդամ:

Կուսակցությունն ու կառավարությունը բարձր գնահատելով Ա. Կարինյանի ծառայությունները նրան պարգևատրել է լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով, մեդալներով և պատվոգրերով:

Չի կարելի առանց շնորհակալության նշել այն փաստը, որ նա այսօր էլ ժամանակ է գտնում լսելու և օգնելու բոլոր նրանց, ովքեր նրա օգնության կարիքն են զգում, իր խորհուրդներով օժանդակում է երիտասարդ գիտաշխատողներին լուծելու նրանց առջև կանգնած խնդիրները:

Գ. Ա. ԳԱՆՅԱՆ
ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի
բյուրակից-անդամ

Կոմունիստների լենինյան հին գվարդիայի հայ մարտիկների շարքում իր արժանավոր տեղն ունի Արտաշես Կարինյանը: Նա անցել է հեղափոխական գործիչ և մարքսիստ-հրապարակախոսի մեծ ճանապարհ, որն այսօր էլ ուսանելի է երիտասարդության համար:

Կարինյանը պատկանում է մարքսիստների այն սերնդին, որը գաղափարապես աճեց ու կոփվեց բանվոր դասակարգի ազատագրման համար մղված հերոսական պայքարում: Վաղ հասակից ներգրավվելով հեղափոխական շարժման մեջ, նա 1907 թ. մտավ կոմունիստական կուսակցության շարքերը և այնուհետև իր ամբողջ ուժերն ու եռանդը նվիրաբերեց կոմունիզմի հաղթանակի գործին: Նա դարձավ Ստեփան Շահումյանի մարտակից ընկերն ու Բաքվի փառապանծ կոմունայի կոմիսարներից մեկը: Թե՛ որպես կուսակցական-պետական գործիչ և թե՛ որպես հրապարակախոս-բնագատ, Ա. Կարինյանը միշտ դրսևորել է բարձր սկզբունքայնություն, համարձակություն և անհաշտ պայքար մղել խորթ հայացքների ու տրամադրությունների դեմ:

* * *

Արտաշես Կարինյանը աչք է բացել պրոլետարական Բաքվում: Բաքվի միջնակարգ դպրոցում՝ գիմնազիայում սովորելու տարիներին նա ակտիվորեն մասնակցում է աշակերտական անլեգալ խմբակների աշխատանքներին, հանդես է գալիս հայ և ռուս առաջավոր գործիչների մասին ռեֆերատներով:

Ուստի, բնավ պատահական չէ, որ հենց այդ շրջանում (1905 թ.) Կարինյանը Բոլոս ծածկանունով անլեգալ հրատարակությամբ լույս է ընծայում «Գրականություն և կյանք» բրոշյուր-ակնարկը՝ նվիրված Մաքսիմ Գորկու «Հովեկներ» պիեսի բնութագրմանը:

1906 թ. քսանամյա Կարինյանը լեռն Բրուտյան ծածկանունով հանդես է գալիս հայերեն «Կայծ» թերթում «Մեք նորագույն անարխիստները» հոդվածով: Նա մերկացնում է կովկասյան անարխիստներին և այդ առնչությամբ սուր ծաղրի ենթարկում նաև դաշնակներին, որոնք իրենց ստոր արարքները փորձում են սքողել կեղծ ազգասիրությամբ:

Բարձրագույն կրթություն ստանալու նպատակով նույն թվականին Կարինյանը մեկնում է Պետերբուրգ և ընդունվում համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Շուտով նա սերտ կապեր է հաստատում ռուս առաջավոր աշխատողների հետ և նրանց միջավայրում կազմավորվում որպես հեղափոխական-մարքսիստ: Կարինյանը Կովկասի մի խումբ ուսանողների հետ 1907 թ. հոկտեմբերին, ֆիննական Տերիոկի ավանում առաջին անգամ տեսնում է

Վ. Ի. Լենինին և լսում նրա հաղորդումը ընթացիկ մոմենտի մասին, որը մեծ տպավորություն է թողնում իր վրա. «Վերադարձանք մենք ոգևորված և առույգ, պատրաստ ակտիվ աշխատանքի համար», — վկայում է Կարինյանը:

Զինված գիտելիքների հարուստ պաշարով և ոգեշնչված մարքս-լենինյան գաղափարներով՝ Կարինյանը 1910 թ. վերադառնում է Կովկաս և մեծ եռանդով ծավալում գրական-հրատարակատնային գործունեություն: Որպես կոմունիստ-քննադատ նա ամենից առաջ արձագանքում է գրականության և արվեստի հարցերին: Ուշագրավ է հայերեն «Կոչ» երկշաբաթաթերթում նրա հրատարակած հոդվածները Ա. Շիրվանզադեի, Ա. Շահնազարյանի, «Գարուն» ամսանախի մասին և այլն:

Կարինյան-գրականագետի մարքսիստական հայացքները երևան եկան Ստ. Շահումյանի նախաձեռնությամբ ստեղծված «Նոր լուսն»-ում, որի խմբագրական կոլեգիայի ակտիվ անդամներից էր նա, իսկ Շահումյանի ձերբակալությունից հետո նրա փաստական խմբագիրը: Այդ հանդեսի էջերում է, որ լույս տեսան Կարինյանի գրապատմական այնպիսի ակնարկներ, ինչպիսիք են «Գյուղացին ուսասհայ գրականության մեջ», «Գծեր արևմտահայ գրականությունից», «Քաղաքի երգիչները» և այլն:

Իր հեղափոխական ակտիվ գործունեության և մասնավորապես 1913 թ. քաղաքական վիթխարի գործադուլի նախապատրաստմանը մասնակցելու համար, մի խումբ բանվոր բոլշևիկների հետ միասին, Կարինյանը ևս ձերբակալվում և արտաքսվում է Բաքվից: Նրան երկար ժամանակով արգելվում է ապրել Կովկասում, ապա արքայազնի ծառայության (այսօր—Վոլզոգրադ), որտեղից անցնում է Պետերբուրգ և այնտեղ մնում մինչև 1917 թ. աշունը:

Բանտը և արքայազնի ծառայությունը չեն կարողանում ընկճել հավատարիմ լենինյան հեղափոխականի ոգին: Նա համառորեն շարունակում է իր գրական և կուսակցական գործունեությունը: Հատկապես Պետերբուրգում եղած ժամանակ դանազան ծածկանուններով նա աշխատակցում է բոլշևիկյան «Պրավդա» թերթին, որի էջերում հրատարակում է «Ռեալիզմի ծնունդը» վերնագրով հոդվածը, Հ. Հակոբյանի հրատարակած «Բանվորի գրագրան» մատենաշարի ու Մ. Գորկու «Հեքիաթների» մասին (1914 թ.): Դրանք ինչպես և մի փոքր հետո (1914 թ.) «Պրավդայի» հավելված «Ռաբոչի» սյուրբերականում տպագրված «Պրոլետարական գրողների ժողովածուի մասին» ընդարձակ հոդվածը հրատարակվել են «Պրավդայի» խմբագրության հանձնարարությամբ:

Հետագա տարիներին Կարինյանը գրական-հրատարակատնային գործունեություն է ծավալում «Պայքար», «Սոցիալ-դեմոկրատ», «Բանվորի կոլվը» և այլ թերթերում:

Բաքվի կոմունայի անկումից հետո Կարինյանը ուղևորվում է Մոսկվա և աշխատանքի անցնում ազգությունների ժողովուրդների հայկական գործերի կո-

միտարիատում որպես գրական-հրատարակչական բաժնի վարիչ, միաժամանակ խմբագրելով «Կոմունիստ» և «Կարմիր դրոշ» պարբերաթերթերը: Այնուհետև կուսակցության Կենտկոմի կողմից մոբիլիզացվում և աշխատանքի է ուղարկվում Մ. Ի. Կալինինի անվան «Սովետական Կովկաս» ազիտացիոն-հրահանգչական գնացք, որից հետո մեկնում է Պետրոգրադ, ուր և ղեկավարում է Նարվա-Պետրոգրադյան շրջանի կուսակցական դպրոցը:

1921 թ. մի խումբ հայ կոմունիստների հետ, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի որոշմամբ, նա ևս գործուղվում է Հայաստան: Այստեղ ծավալում է կուսակցական-պետական և գրական-հրատարակատնային արգասավոր գործունեություն: Մյանիկյանի գլխավորած Սովետական Հայաստանի կառավարության կազմում նա ստանձնում է արդարագատության ժողովուրդի պոստը:

Նույն թվականի աշնանը, որպես Սովետական Հայաստանի կառավարության ներկայացուցիչ, Կարինյանը մեկնում է արտասահման՝ հայ գաղութների հետ ծանոթանալու, սփյուռքահայ աշխատավորության մեջ սովետական պետության քաղաքականությունը պարզաբանելու նպատակով: Այդ կապակցությամբ նա լինում է Պոլսում: Հովհ. Թումանյանի հետ միասին նա հրատարակային ելույթներ է ունենում: Այդտեղից էլ նա մեկնում է Աթենք, ապա՝ Ամերիկա, ուր հանդես է գալիս ղեկուցումներով դադարահայ օջախներում:

Արտասահմանից վերադառնալուց հետո Կարինյանը մեծ եռանդով մասնակցում է մեր հանրապետության հասարակական-քաղաքական ու կուլտուրական կյանքին: Կուսակցական ու պետական գործունեությանը զուգընթաց (ՀՍՍՀ Կենտգործկոմի նախագահի տեղակալ, ապա նախագահ, ՀամԿ(բ)Կ Անդրերկրումի և Անդրկենտգործկոմի նախագահության անդամ, լուսժողովուրդի տեղակալ և այլն) նա ակտիվորեն զբաղվում է նաև գրական-հրատարակատնային և գիտական-հետազոտական աշխատանքներով:

Մեծ է Կարինյանի ծառայությունը սովետահայ կուլտուրայի զարգացման, գրական նոր կազմերի դաստիարակման գործում: Տարիներ շարունակ նա ուշադիր հետևել է մեր գրական-կուլտուրական շարժման կենդանի պրոցեսին, ակտիվորեն միջամտել նրա ընթացքին և օգնել մեր գրական-ղեղարվեստական ինտելիգենցիայի առաջընթացին: Կանգնած լինելով սոցիալիստական ուսուցիչի գրականության ակունքների մոտ՝ Կարինյանը ժրջան կերպով մասնակցել է նրա սկզբունքային-մեթոդաբանական հարցերի մշակմանը: Առանձնապես արժեքավոր են նրա այն հոդվածներն ու ելույթները, որոնք շոշափում են նոր գրականության զարգացման բնույթի և ուղիների, նոր մարդու պատկերման, հայ և ուս գրականության լավագույն ավանդների օգտագործման հարցերը: Նա առաջիններից էր, որ ի հակադրություն պրոլետարական գրականության նկատմամբ եղած թերահավատության, պաշտպա-

նեց ու տեսականորեն հիմնավորեց նոր հեղափոխական գրականության իրավունքը:

Նույնպիսի ճիշտ դիրք զբաղեց Կարինյանը անցյալի գեղարվեստական ժառանգության գնահատման խնդրում այն տարիներին, երբ պրոլետարոզներից ոմանք ժխտում էին այն և պահանջում ստեղծել ինչ-որ «ազատ և անազարտ պրոլետարական արվեստ»: Նա նշում էր, որ պրոլետարական գրականությանը չի կարող և չպիտի սահմանափակվի «բացառապես» ֆարքիկային-զավոդային «մոտիվներով», այն պետք է գեղարվեստորեն պատկերի սոցիալիստական իրականությունն իր բոլոր կողմերով, վերարտադրի ժողովրդի կյանքի էական երևույթները «ճիշտ այնպես, ինչպես այդ արել են մինչև այժմ արվեստի մեծագույն վարպետները»:

Այդ տեսանկյունից էլ Կարինյանը առանձնապես բարձր էր գնահատում Չարենցի ստեղծագործությունները, որոնք առավելագույն ցայտունությամբ արտացոլում են մեր ժողովրդի սոցիալիստական վերածննդի դրվագները:

Կարինյանի գրականագիտական գործունեությունը բեղմնավոր դարձավ մասնավորապես 1943 թ. ի վեր, երբ նա աշխատանքի անցավ մեր նորաստեղծ գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտում: Չնայած առաջացած տարիքին, նա երիտասարդական եռանդով նվիրվեց հետազոտական աշխատանքի և հրապարակեց «Նալբանդյանը և XIX դ. 60-ական թվականների ուս առաջավոր գործիչները», «Չերնիշևսկին և պարբերական մամուլի մի քանի հարցեր», «Անտոն Չեխով», «Գրական արձագանքներ», «Հոկտեմբերյան հեղափոխությունը և հայ մշակույթի ծաղկումը», «Պրավդան» նախահոկտեմբերյան տարիներին», «Անդրկովկասի ժողովուրդների կուլտուրական համագործակցությունը» և այլ աշխատություններ, որոնք դրսևորում են հեղինակի հետաքրքրությունների լայն շառավիղը և արդիականության հետ ունեցած սերտ կապը:

Իրովին տիրապետելով հետազոտական աշխատանքի մարքսիստական մեթոդին՝ նա կարողանում է այն հմտորեն կիրառել գրա-պատմական երեվույթների լուսաբանման ընթացքին: Այդ են վկայում նաև նրա հետազոտական աշխատանքի պսակը կազմող «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմությանը» քառահատոր աշխատության առաջիկ լույս տեսած առաջին և երկրորդ հատորները: Դա հիրավի արժեքավոր ավանդ է հայ ժողովրդի սոցիալիստական պատմության մարքսիստական ուսումնասիրության բնագավառում:

ԳՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

«Գրական թերթ», 24 փետրվարի 1967 թ.:

Միրելի պիոներներ

Մի քանի տարի առաջ, հունիսի 29-ին, ինձ հանձնեցին պիոներական Ձեր «գրուծինայի» որոշումը և ինձ ուղարկված կարմիր փողկապը—«Պատվավոր պիոների» փողկապը: Ջերմորեն շնորհակալություն եմ հայտնում: Բարևներ—ողջույն եմ ուղարկում Ձեզ: Համոզված եմ, որ Դուք լավ եք սովորում, զուր ժամանակ չեք կորցնում, օգնում եք միմյանց, ձգտում եք գիտելիքներ յուրացնել: Ձեր շարքերից պիտի դուրս գան՝ ազդեցիկներ, տեխնիկներ, բժիշկներ, գրողներ, գիտնականներ, վարպետներ, կառուցողներ...

Երբ ես և իմ ընկերները սովորում էինք 1900—1906 թթ. միջնակարգ դպրոցներում անգիր էինք անում հաճախ ավելորդ բաներ, անօգուտ և անպետք գրքեր էինք կարդում: Մենք շատ բան չգիտեինք: Չգիտեինք, թե ինչպես են ապրում գաղութային հեռու երկրների ժողովուրդները, ինչու են բռնակալ պետությունները պատերազմներ կազմակերպում և աշխատավոր մարդկանց կոտորածի մատնում, ինչու է քիչ դպրոցների և հիվանդանոցների թիվը: Այսօր, իհարկե, ամեն ինչ փոխվել է: Դուք ստանում եք անհրաժեշտ գիտելիքներ, դպրոցում դուք դառնում եք գիտակից աշխատավորներ, շատ բան եք սովորում, պատրաստվում եք ավելի լավ օգնել ձեր հայրերին և մայրերին:

Երբ մենք էինք սովորում, ամենուրեք իշխում էին բռնակալ և չար մարդիկ, գիշատիչ գործարանատերերն ու կալվածատերերը: Շատ ծանր էր այդ օրերին ժողովրդի դրությունը: Երբ դպրոց էինք գնում՝ տեսնում էինք նկուղների մոտ կանգնած աղքատ և հիվանդ արհեստավորներին, կամ էլ նավթով-մրով ծածկված բանվորներին: Իմ հայրենի քաղաքում շատ կային բանվորներ: Քաղաքը շրջապատված է նավթահանքերով և մեծ գործարաններով: Մենք գիտեինք, իհարկե, որ բանվոր-գյուղացի ժողովուրդը ցանկանում է վերջ տալ բռնակալների իշխանությանը և պայքար է մղում նոր կարգերի—կոմունիստական կարգերի հաղթանակի համար: Ամեն տարի, մայիսի մեկին, տոնին, մենք տեսնում էինք մեր քաղաքի զլխավոր հրապարակում բանվորների մեծ ցույցեր, և առաջին շարքերի մեջ շատ ամուր քայլերով քայլող բանվոր-գրոշակակիրին: Մենք գիտեինք, որ այդ քաջ և բողոքող բանվորներին բանտարկում, աքսորում, զնդակահարում կամ կախաղան են հանում: Գրքերում մենք կարդում էինք, որ ժողովուրդը պետք է անպատճառ հաղթի և որ բռնակալները պետք է տապալվեն: Բայց մեզ այդ հե-

ուստարիններին թվում էր, որ շատ հեռու է ժողովրդի ազատության այդ օրը: Որ հին աշխարհի դեմ ուղղված պայքարը այնքան էլ շուտ չի հաղթություններ ապարտվի: Այժմ դուք, իհարկե, գիտեք շատ բան: Ձեզ լավ հայտնի է նաև, թե ինչպես է կարողացել ապստամբ ժողովուրդը ստեղծել բանվորների և գյուղացիների սոցիալիստական մեծ պետությունը:

Բանվոր և գյուղացի ժողովուրդը կենդանի աշակերտների և գինակիցների ղեկավարությամբ է քանդել անիժյալ հին կարգերը և ստեղծել Սովետական Միության հզոր նոր պետությունը:

Դուք հզոր Սովետական Միության պիոներներ եք: Ձեր աշխատանքին մեծ ուշադրությամբ հետևում են բոլոր դեմոկրատական պետությունների պիոներները, որոնք ուրախանում են, երբ տեսնում են Ձեր հաջողությունները: Այդ պիոներները գիտեն, որ Դուք աշխատում եք լավ սովորել և յուրացնելով անհրաժեշտ գիտելիքները պիտի դառնաք նոր լուսավոր կյանք կառուցողներ:

Ուրեմն միշտ առաջ: Սովորել և սովորել: Կարդալ լավ գրքեր: Կատարել կենդանի պատգամները: Հառաջ քայլել կենդանի գրողի ներքո: Մեր մեծ սոցիալիստական հայրենիքը դառնում է ավելի ու ավելի հզոր: Կառուցվում են բազմաթիվ գործարաններ, դպրոցներ, գրադարաններ, հիվանդանոցներ: Նորանոր հսկայական էլեկտրակայանները գալիք յոթ տարիների ընթացքում կհասցնեն վճռական վերջին հարվածները հին կյանքի վերջին բեկորներին:

Այսօր սովետական ժողովուրդը քանդում է վերջին պատնեշները և աշխատանք է տանում կոմունիզմի հաղթանակի համար: Աշխատանքի և խաղաղության, ժողովուրդների բարեկամության և համաշխարհային պատգամներն են ամրացնում դեպի լուսավետ նոր կարգերը քայլող ժողովուրդների մեծ շարժումը:

Դուք էլ, սիրելի պիոներներ, պետք է պատրաստվեք միանալու Ձեր աշխատանքով և դպրոցում ձեռք բերված գիտելիքներով այդ մեծ շարժմանը...

Կեցցե՛ք ժողովուրդների մեծ եղբայրությունը:

Կեցցե՛ք Սովետական Միությունը:

Կեցցե՛ք Կոմունիստական Կուսակցությունը:

Ձեր մ ողջույններ՝

Արտաշես Կարինյան.

Դոնի-Ռոստովի Ղրիմ հայաբնակ գյուղի դպրոցի պիոներներին ուղղված նամակը (տե՛ս Ա. Բ. Կարինյանի անձնական արխիվը):


Մ. ԿԱԼԻՆԻՆԸ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ

Բանվոր-բուլճեիկների ամենացայտուն ներկայացուցիչներից մեկն էր Մ. Կալինինը: Պարզ և կտրուկ, գրասեր և ղինված մեծ կուլտուրայով, աննկուն և տոկուն՝ նա հայտնի էր պրոլետարիատի լայնագույն շարքերին: Ես տեսա նրան առաջին անգամ փետրվարյան հեղաշրջումից հետո կենդանադրում՝ մի երկու անգամ հրապարակային ժողովներում: Շարքային աշխատող էի: Դիտում էի հեռվից, մի քանի անգամ ավելի ուշադիր արդեն որպես կովկասյան բուլճեիկյան թերթերի թղթակից: Թե՛ Սմոլնիի հայտնի շենքում և թե՛ նաև Տավրիկյան պալատում տեսել եմ շատ ընկերների հետ միասին և հետևել նրա գործունեությանը մինչև հոկտեմբերյան հրատապ շրջանում:

Սանոթացա Կալինինի հետ 1924 թ.: Այդ ժամանակ ես կատարում էի Անդրկովկասյան Ֆեդերացիայի ներկայացուցչի տեղակալի պարտականությունները: Ես եղել եմ և մասնակցել Կրեմլում Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահության նիստերին: Միութենական հանրապետությունների ներկայացուցիչները պարտավոր էին ներկա գտնվել այդ նիստերին, մասնակցել օրենսդրական ակտերի և օրինագծերի քննարկման և նույնիսկ գրավոր կերպով առաջադրել իրենց դիտողությունները: Նիստերին, առանձին պարագաներին, երբ այդ դիտողությունների առթիվ առարկություններ էին արվում, հանրապետությունների ներկայացուցիչները պարտավոր էին արդեն բանավոր ելույթների միջոցով հիմնավորել իրենց կարծիքները և լրացուցիչ դիտողություններ առաջադրել:

Ահա այդ օրերին առիթ ունեցա ծանոթանալ Կալինինի հետ: Մեր ընդ մերթ, հիշում եմ, թե նա ինչպիսի հմտությամբ էր ղեկավարում այս կամ այն հարցի քննարկումը, հակիրճ դիտողություններ էր նետում: Նա արտահայտում էր իր կարծիքը ոչ միայն տնտեսական, այլ նաև կուլտուրայի խրոնիկների մասին: Այսպես, օրինակ, ես ներկա եմ եղել այն նիստին, երբ Լուսժողկոմի կողմից առաջարկ էր մտցվել Բուլճարի հայտնի «Հանրային գրադարանը» մեծացնել և հայտարարել «կենդանի անվան գրադարան»: Ինքը՝ Կալինինը, մեծագույն ուշադրությամբ լսում էր Լուսժողկոմատի ներկայացուցչի գրեթե պատմական զեկույցը, հարցեր էր տալիս գրադարանի անցյալի մասին ու միաժամանակ առաջադրում իր առանձին դիտողությունները:

Երբ Հայաստանի աշխատավորները հատուկ մի գրություն ուղարկելով խնդրեցին հնօրյա Ալեքսուրը վերանվանել կենդանական, Մ. Կալինինը բավական ուշադրությամբ կարդաց Հայաստանի սովետական կառավարության ներկայացուցչի գրավոր դիմումը և հիշեցրեց, որ փոստի և տրանսպորտի համար մեծագույն բարդություններ կարող են ստեղծել անպլան և միօրինակ որոշումները:— «Արդեն մենք ունենք կենդանի անվան մի քանի վայրեր: Ահա



այսօր մեզ մի քանի վայրերից առաջարկում են նշել Լենինի հիշատակը», — ասաց Կալինինը և ապա ավելացրեց.

— Այդ ամենը հասկանալի է, ընկերներ: Ժողովուրդը սիրում է Լենինին և ցանկանում է ընդգծել իր անսահման սերը: Մենք ամենքս էլ սիրում ենք մեր կուսակցության մեծ առաջնորդին: Բայց մենք շենք կարող հաշվի չառնել տեխնիկական որոշ խնդիրներ: Երեակայում եք, թե ինչ կացութուն կատեղծվի, եթե մենք առանց վարչական մարմինների և մանավանդ փոստի ու հաղորդակցության, տրանսպորտի ղեկավարների կարծիքն իմանալու վերցնենք և առանց լավ մտածելու փոխենք բոլոր հին անունները...

Կալինինին դուր եկավ, սակայն, հնչուն անունը. «Լենինական» — կրկնեց նա մի երկու անգամ ականերև հաճույքով, ժպտաց մի ակնթարթ, ապա տեղեկանալով, որ այդ քաղաքը գտնվում է անմիջապես սահմանի մոտ, նորից ընդգծելով կրկնեց «Լենինական» անունը և ձեռքի մի շարժում անելով ասաց. — «Նու, լավ է, ընդունենք այդ առաջարկը: Ալեքսյով ոչ մի պարագայում չի կարելի անվանել հենց նրա համար, որ այդ անունը կապված է ճորտատերերի հովանավորի անվան հետ: Դա շատ լուրջ մոտիվ է: Տգեղ էլ հնչում է: Թող ուրեմն այդ քաղաքը անվանվի Լենինական: Բայց դուք այժմ պարտավոր եք այդ քաղաքը դարձնել օրինական և շեն մի քաղաք...»:

Այդ նիստին կարծեմ մի ուրիշ վայր էլ, կամ նույնիսկ երեք վայրեր էլ պիտի վերանվանվեն: Կալինինի առաջարկով ընդունվեց միայն Հայաստանի սովետական կառավարության դիմումը և հին Ալեքսյով-Գյումրին դարձավ Լենինական: Բնորոշ է այն, որ այդ անունը այնքան սիրելի դարձավ, որ ոչ մի հայ քաղաքացի, այլևս չէր հիշում հին անունները: Հենց առաջին օրերից, մանավանդ, Լենինականի բանվորներն ու աշխատավորները սիրով ընդունելով նոր անունը, սկսեցին առանձին պարծանքով հիշեցնել երևանցիներին, որ իրենք «Լենինականցիներ» են: Իսկ բոլոր նրանք, որոնք հին Գյումրի անունը չէին կարողանում առաջին օրերին մոռանալ, իսկույն նահանջում էին, երբ տեսնում էին երիտասարդության արտասովոր դիրքը: Դրանք երեկվա քաղաքացիներն էին: Բնորոշ է այն էլ, որ դրանց շրջանում էլ ամրացված էր այն կարծիքը, թե քաղաքի անվան հետ միասին պիտի սկսվի նոր պատմական մի շրջան՝ ապահով կյանքի և վերածնության մի բեղուն շրջան: «Դե, եթե Լենինական է, արդեն պարզ է, որ Ռուսիան չի թողնի այդ քաղաքը և միշտ կպաշտպանի հայ ժողովուրդին»: Այդպես էին հիմնավորում անգամ հեղափոխությունից շատ հեռու կանգնած այդ քաղաքացիները:

Ես հետագայում մի անգամ Կալինինին պատմեցի քաղաքացիների ուրույն այդ խոսքերը: «Դա, ասաց Կալինինը, այդ անունը շատ շուտ ընդունվեց և լավ էլ հնչում է՝ Լենինական...»:

Երբ Լենինականի բնակիչները երկրաշարժի օրերին տեղավորվել էին

հրապարակում հաստատված վրաններում, տխուր այդ օրերին Կալինինը եկավ Հայաստան: Ես այդ ժամանակ ուղեկցում էի Կալինինին և մյուս ընկերների հետ միասին ցույց էի տալիս քաղաքի ավերված շենքերն ու նկարագրում աղետի ծանր հետևանքները: Մեծ տպավորություն էր թողել վրանաբնակ բնակչության վրա Կալինինի պտույտը և անշափ մտերիմ ու ջերմ վերաբերմունքը: Կալինինը կանգ էր առնում փողոցում, զրույցի էր բռնվում առանձին մարդկանց հետ, նետում էր դիպուկ ու թևավոր մի խոսք ու նորից դիտում շրջապատն ու մարդկանց: Երբ մենք ասացինք, որ մի տասնյակ գյուղերից ավելի քանդվել են ու ավերվել, Կալինինը ինքն առաջարկեց ուղեվորվել դեպի այդ գյուղերը: Գնացինք ավտոմոբիլով, իսկ ավերված գյուղերի մոտ իջնում էինք ու դիտում աղետի հետևանքները: Առույզ երիտասարդի նման Կալինինը ցատկում էր քարե կույտերի վրա, բարձրանում, դիտում ամեն ինչ և մեծագույն ուշադրությամբ ուսումնասիրում գյուղացիների կեցվածքը, աչքերի արտահայտությունը, տրամադրությունը:

Ճանապարհին մերթ ընդ մերթ կանգնեցնում էր մեկին, հարցեր էր տալիս: Բնորոշ է այն, որ ժողովուրդը զգում էր, կարծես, որ բարձր իշխանության այդ ներկայացուցիչը, Համամիութենական կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահը, Լենինի մոտիկ գինակիցներից մեկը շատ հասարակ և պարզ մարդ է, բանվոր մարդ: Մոտենում էին Կալինինին, բայց չէին գանգատվում: Պատահում էր, որ զրույցի ժամանակ գյուղացիներից մեկը մոտենալով ընդհուպ Կալինինին, իր ձեռքը ինտիմ կերպով դնում էր նրա ուսին: Կալինինին դուր էր գալիս այդ ամենը և նա ավելի երկար էր կանգ առնում ու զրուցում: — Ամուր ժողովուրդ է, — ասաց նա ականջատ կերպով զգացված այդպիսի մի ջերմ հանդիպման և զրույցի ժամանակ:

Ավերակ մի գյուղի մոտ հավաքված գյուղացիների մի խմբի մոտենալով նա առաջարկեց ինձ թարգմանել իր խոսքերը.

«Ընկեր Կալինին, — ասացի ես, — իհարկե կթարգմանեմ, բայց լավ կլինեք, եթե դուք առաջ խոսեիք հենց ուսերեն: Կլինեն այդ խմբի մեջ ուսերեն իմացողներ»:

— Ռեքյատա, — ընդհատելով ինձ՝ խոսք նետեց իսկույն Կալինինը, — եստ սրեղի վաս գովորյաշչիե պառուսսի: Իսկույն այդ խոսքերից հետո խմբի միջից դուրս ելան մի քանի հոգի: Եվ սկսվեց զրույցը: Դրանցից մեկը «սալգատի» հին շինելը ուսերին, ամուսկուտ մի գյուղացի էր:

Անհրաժեշտ էր նշել այդ մոմենտը: Դիտել Կալինինին, հետևել նրա հայացքին, նրա հետ խոսողների աչքերի խոհուն արտահայտությունը: Ես շատ պրոպագանդիստներ եմ տեսել իմ կյանքի օրերին, եղել եմ և՛ բանվորների, և՛ շարքային զինվորների ժողովներում: Այս անգամ խոսողը ուս էր՝ Մ. Ի. Կալինինը, բանվորների և գյուղացիների սոցիալիստական մեծ հանրապե-

տության նախագահը, իսկ նրա դեմ կանգնած ռամիկ աշխատավորները հայեր էին: Մ՞վ կարող էր այդ մոմենտին նշմարել ազգային տարբերությունը կամ խոստովանելի դիրքերը: Ոչ մի տարբերություն չէր նշմարվում: Կալինինը խոսում էր այնպես, ինչպես խոսում էր ռուս բանվորների հետ տասնյակ տարիներ առաջ հյուսիսային մեծ քաղաքի գործարաններում: Եվ նրան դուր էր գալիս, որ նա հնարավորություն ունի այդպես պարզ խոսել և տեսնել պարզ մարդկանց ու լսել նրանց:

— Ովքե՞ր են այդ գյուղացիները, — հարցնում էր նա վերագարծին. ինչպե՞ս լավ խոսում և ինչպե՞ս խելոք դատողություններ են անում:

Ես ասացի, որ շատ հավանական է, որ իմպերիալիստական պատերազմի օրերին զինվորներ են եղել կամ ապրել են գործարանային ռուսական քաղաքներում իրենց թափառումների ժամանակ: Հիացած էր Կալինինը և այդ հիացումը ավելի բարձր դարձավ, երբ ես ծիծաղելով ասացի, որ լենինականցի գյուղացիների շարքերում կան մարդիկ, որոնք նույնիսկ իրոնիայով են վերաբերվում դեպքերին: «Էն ինչ որ քանդվել է՝ պիտի քանդվեր: Երկրաշարժը քանդել է անպետք շենքերը: Ոչինչ: Սովետական իշխանությունը հզոր է: Նա հիմա նոր պլանով կկառուցի նոր քաղաք և նոր կանոնավոր շենքեր»: Երբ եկանք քաղաք, մի քանի ընկերներ ասացին, որ ցանկանում են մի ընկերական խնջույք կազմակերպել Կալինինի պատվին ու շատ խնդրում են նրան ներկա լինել այդ խնջույքին:

Հանդիսավոր երեկույթին եկել էին ժողովրդական երգիչները՝ մեր աշուղները: Կալինինի վրա առանձին տպավորություն թողեց այն, որ ընկերները հագնված էին լավ և չէին տարբերվում ժողովրդի ներկայացուցիչներից: Խմեցին, իհարկե, կենացներ: Արտասանվեցին ըստ արևելյան տրագիցիայի ճառեր: Կալինինը հետաքրքրությամբ լսում էր երգերը: Խնդրում էր թարգմանել մի երկու երգ, որոնք իրեն դուր էին եկել («Քյոո-օղլի», «Դլե-յաման»): Աշուղները սիրով դիտում էին Կալինինին և երգում արտասովոր ոգևորությամբ: Ստեղծվեց շատ ջերմ և այնքան պարզ մթնոլորտ, որ հանրապետության նախագահին ընկերներից բաժանող այլևս ոչ մի դիստանցիա չէր ճշմարվում:

Այդ ժամանակ լենինականի գործկոմի նախագահը՝ Գևորգ Հանես-Օղլյանն էր, որ ինքն էլ էր ժողովրդի ընդերքից և շատ սիրված դեմք էր ամենուրեք: Խոհուն, սրամիտ, եռանդուն այդ բանվոր-բոլշևիկը «դուզ խոսող»-ի համբավ ուներ: Եզակի գործիչ էր, որի համարձակությունը շատ բարձր էր գնահատում Սերգո Օրջոնիկիձեն: Այժմ չկա մեր սիրելի Գևորգը, բայց ես չեմ կարող մոռանալ նրան այսօր, երբ վերհիշում եմ հին օրերը: Գևորգը շատ դուր եկավ Կալինինին: Ամբողջ երեկո ռուս և հայ ժողովրդի

այդ երկու տաղանդավոր զավակները որպես եղբայրներ-ընկերներ մտախոհ լսում էին ժողովրդական մեր երգիչներին:

Վերագարծին Կալինինը նորից ասում էր, որ իր վրա մեծ տպավորություն է թողել հատկապես լենինականի ժողովրդի առույգ տրամադրությունը: Հիրավի, նա շտեպավ ողբացող ու լացող մարդկանց: Եղավ մի քանի գյուղերում: Տեսավ ավերակներ և մեծ աղետի ծանր հետևանքները: Բայց արդեն գրույցները ժողովրդի ներկայացուցիչների հետ այնքան մեծ տպավորություն թողին, որ նա խոսում էր ոչ այնքան աղետի, որքան մարդկանց մասին:

«Նու, դա, հզոր է սովետական իշխանությունը: Հավատում է ժողովուրդը սովետական իշխանության: Նու, երևակայեցեք, թե այդպիսի մի երկրաշարժ է պատահել կապիտալիստական մի երկրում: Կարող էր այդտեղ քանդված տան բնակիչը այդպես խոսել և ասել թե այժմ կարելի է «պլանով» կառուցել նոր տներ և նոր քաղաք»:

Վերջին պարբերությունը կրկնում էր Կալինինը նաև Մոսկվա ուղևորվելու ժամանակ:

... Մի անգամ էլ ես առիթ ունեցա տեսնելու Կալինինին ուրիշ պարագաներում: Ես այլևս չէի աշխատում Հայաստանում: Թիֆլիսում ապրող պատասխանատու ընկերներից մեկը՝ Ենկ. Շալվա էլիավան ինձ հայտնեց, որ մտադիր է ռազմավիրական ճանապարհով՝ ավտոմոբիլով ուղևորվել Վլադիկավկազ կամ այժմյան Օրջոնիկիձե քաղաքը Կալինինին հանդիպելու համար: Ես ուղևորվեցի զիշերվա ժամը մեկին այդ ընկերոջ հետ միասին: Հասանք քաղաքը վաղ առավոտ: Կալինինին ողջունելու համար բացի մեզանից եկել էին շատ ուրիշ ընկերներ: Մի ժամից հետո Կալինինի հետ միասին ուղևորվեցինք նորից դեպի Թիֆլիս: Ռազմավիրական ճամփան շատ գեղեցիկ ուղի է: Ճանապարհին «Պասսանաուրի» իջևանի պարտեզում, արդեն պատրաստել էին սեղանը նախաճաշի համար: Կալինինը հոգնել էր, բայց դարձյալ աշխատում էր ձայնակցել ընկերների ուրախությանը: Շատ բավական էր մանավանդ այն պատճառով, որ սեղանի շուրջը տեսնում էր կովկասյան բոլոր ազգությունների ներկայացուցիչներին: Եղբայրական-ընկերական այդ անակնկալ ջերմ հավաքույթը շատ դուր եկավ նրան: Իր խոսքն ասելու ժամանակ նա հենց այդ էր ընդգծում, երբ ծանրանալով լենինյան ազգային քաղաքականության նշանակության վրա, կոչ էր անում միշտ և ամենուրեք բարձր բռնել ժողովուրդների բարեկամության վսեմ գրոշը...

Ես չեմ սիրում բանկետները: Չեմ սիրում նաև պաշտոնական մեծ հավաքույթները: Երբ վերհիշում եմ հնօրյա «խնջույքները» չեմ տեսնում բանկետներ, այլ ընկերական վաղեմի հանդիպումներ-հավաքույթներ: Ինչո՞ւ է այդպես տպավորվել իմ հուշերի մեջ թե երկրաշարժի օրերի երեկույթը և թե շեշտված արտասովոր հանդիպումը: Ամենից առաջ նրա համար, որ



Կալինինի ներկայությունն արդեն ստեղծել էր շատ ջերմ մտերմություն: Նա ինքը կապող ու ընկերներին միաձուլող զորավոր մի ուժ էր: Նշանակություն ուներ գուցե և այն, որ ես էլ երիտասարդ էի այդ տարիներին: Չկար այդ ժամանակ այն «պաշտոնականությունը», որ հետագա տարիներին չզիտեմ ինչու քննարկվում էր որպես «սպետականության» ներկայացուցիչների անհրաժեշտ ատրիբուտ: Չկար ընկերներին միմյանցից բաժանող այն մեծ «դիստանցիան», որի հետևանքով ամեն մի հանդիպում և ամեն մի խնջույք վերածվում է անպատճառ դիվանագիտական, պաշտոնական բանկետի նման մի բանի: Չկար այդ ամենը, և դա շատ լավ էր: Վաղեմի օրերի թարմ և միշտ առույզ ընկերական միջոցառումը այն լուսավոր ֆունն է, որի վրա նկարագրվող Կալինինի խոհուն դիմաստվերը անվերջ մնացել է իմ հիշողության մեջ՝ կապված լենինականցիների դիմաստվերների հետ...

Ա. Բ. Կարինյանի զեկուցումը կարգացած լենինականի կուսակցական ակտիվի նիստում: Զեկուցման համառոտագրությունը տպագրված է լենինականի «Բանվոր» թերթում:

Չ

Ա.

ԲԱՔՎԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ 1905 ԹՎԱԿԱՆԻՆ

(Փաստեր, հուշեր)

Բաքվի դպրոցական պատանեկությունը նրբին շերմաշափի նման բացահայտում էր այն ամենը, ինչ որ կատարվում էր 1905 թ. մարտից օրերին արդյունաբերական մեծ քաղաքի բազմազգ բնակչության շարքերում:

... Քաղաքին կից տարածված էին Սև ու Սպիտակ «քաղաքների» մեծ գործարանները: Օր ու գիշեր բանվորական թաղամասերում շարժում էր ու կյանք: Հատուկ երկաթուղագիծը միացնում էր քաղաքը Բալախանի—Ռոմանի—Բինաղաղի և ապա Սուրախանի հանքային ուսյունների հետ: Այդ վայրերում նավթային վիշկաներ-բուրգերը, նավթային մեծ ցիստերները, շոգեկաթսաների կրակները առանձին տոն էին հաղորդում ինքնատիպ «բնանկարին»: Բախլովից կարելի էր իջնել դեպի Բիբի-Հեյբաթի հովիտը, որը լեցուն էր վիշկաներով, ցիստերներով, կաշեգարկաներով:

Այսպես էր քաղաքի շրջապատն ու «կոլորիտը»: Երբ դպրոց էինք գնում, հանքային կայարանի մոտ, փողոցներում տեսնում էինք հապճեպ քայլերով դեպի աշխատանքի վայրերը ուղևորվող բանվորական խմբեր, մեքենաներով և գործիքներով բարձված սալերի շարաններ, գործավորների մտախոհ դեմքեր: Մովսիսին մեր ուշադրությունը գրավում էին նավաստիների, բեռնակիրների դիմաստվերները, նավերի ու նավակների սիլուետները: Քաղաքի բնակչության շարքերում բանվորներն ու աշխատավորները նկատելի տեղ էին զրավում:

Այդ ամենն ահա մեծ տպավորություն էր թողնում պատանեկության վրա: Մեծ ուշադրությամբ էինք լսում մենք բանվորական զաղտնի ժողովներն ու միտինգները նկարագրող ականատեսի պատմությունը: Երբ մոտենում էր մայիսը, մենք էլ հետևելով նավթային պրոլետարիատի օրինակին տոնում էինք մայիսի տոնը: Սուր ուշադրությամբ էինք դիտում ամեն ինչ և նետվում էինք դեպի համբավավոր հին «Պարապետ» պատմական հրապարակը,

տեսնում էինք ցուցարարների առաջին շարքերում զրոշակակիրների ամբակուռ կեցվածքը և լսում հեղափոխական երգերի հրաշունչ խոսքերը: Մեր բողոքը կամ «ցատումը» հետամնաց «մանկավարժների» կամ հնօրյա «պերեդոնովների» դեմ հաճախ կապակցվում և միաձուլվում էր անիրավ բռնապետական կարգերի դեմ կռվի ելնող նավթային պրոլետարիատի հերոսական պայքարի հետ:

Այդպես էլ ահա կազմավորվում է աշակերտական հեղափոխական այն շարժումը, որի հիմնական ղեկավարը 1905 թ. նավթային մեծ քաղաքի բուլշևիկների հետ կապված հեղափոխական ս. դ. աշակերտական կազմակերպությունն էր: Երբ հասնում էին առաջին լուրերը հունվարի իննի «ղեկների» մասին, քաղաքի բնակչության հետ միասին ցնցվում էր նաև համալս աշակերտությունը: Բռնկվում էին գասագուլներ և միտինգներ միջնակարգ դեպրոցներում: Հրապարակվում էին անլեզալ թռուցիկներ, բրոշյուրներ, ամսագրեր: Աշակերտական կազմակերպության որոշմամբ տպագրվում էր Սալտիկով-Շչեգրինի այն հեքիաթը, որ ուղղված էր լիբերալների և ստորաքարշ մարդկանց դեմ: Լույս էին տեսնում 1905 թ. ռուսերեն «Նարատ» աշակերտական պարբերականի երկու համարները և ապա հայերեն «Նոր կյանք» ամսագիրը: Դրանք խմորատիպ հրատարակություններ էին (հեկտոգրաֆային): Մեծագույն համարում ուներ այդ օրերին Մաքսիմ Գորկին: Գորկու «Բազեի երգը», ապա «Մրրկահավի երգը» հեղափոխական պատանիներն անգիր էին արել: Անլեզալ հրատարակությամբ 1905 թ. ապրիլին հրատարակվել էր հայերեն մի բրոշյուր-ակնարկ՝ նվիրված Մաքսիմ Գորկու հայտնի «Ամառանոցավորներ» պիեսի բնութագրմանը: Աշակերտական «ինքնակրթական» խմբակներում կարգում և քննարկում էինք Գորկու, Չեխովի, Ուսայնսկու պատմվածքները: Այդ օրերին աշակերտական խմբակների կուսակցական ղեկավարներից հիշում եմ Իվան Իվանովիչին (հայտնի բժիշկ-վիրաբույժ էր—հետագայում), Կիր-Պարիժերին («Խակրայում» հիշատակվում է), Լյուզվիգ Գնունյանին—հետագայում ինժեներ-տեխնոլոգ (Բոզղան Կնունյանցի եղբայրն էր)... Գիսկուսիտն աշակերտական ժողովներում քննարկվում էին օրվա հրատապ թեորիական խնդիրները (աղգային հարց, նարոզնիկովյան տեսությունը և այլն):

Երբ հասնում էին ավելի մանրամասն լուրերը հունվարի իննի մասին, ուժեղանում էին հեղափոխական տրամադրությունները: Չեռքից-ձեռք աշակերտները խլում էին լուսանկարները, թռուցիկները, անլեզալ բրոշյուրները: Հեռուն տեսնում էինք հեղափոխական մեծ հորձանքի վերջին, «իններորդ ալիքը»: Տարօրինակ կերպով Ալվազովսկու նկարն էլ մենք մեկնաբանում էինք այլաբանորեն—որպես գալիք հեղափոխության հաղթանակը նախագուշակող սիմվոլիկական նկար-պատգամ:

... Աշնանը ստանում էինք նոր լուրեր երկու մայրաքաղաքներից՝ կուտակվող ու ուժեղացող ժողովրդական զայրույթի մասին: Երբ երգում էինք ռուսերեն հեղափոխական երգերը,—«Գուբինուշկան» դարձնում էինք շատ կտրուկ հեղափոխական երգ և ապա «Գուբինուշկա»-ից հետո առանձին զգացումով երգում «Վարշավյանկան» և «Կարմիր զրոշակը»...

Ամենից սիրելի բանաստեղծը նեկրասովն էր: Երգերի կողքին պատանի աշակերտների հուզաշխարհը «կազմակերպում» էին հեղափոխական մոտիվներին արձագանքող նկարները—բելգիական նկարիչ-բանդակագործ Կոնստանտին Մյունչի «Ածխահանների» խոստն սիլուետները, Ստեյնլենի նրբին գրավյուրների—նկարների հերոսները, Յարոշենկոյի «Կոչեգարը», Մաիովսկու «Վեչերինկան»—հնօրյա հեղափոխականների դիմաստվերները...

Երգերի ու նկարների հետ միասին սիրելի էին պատանիների համար սիրելի գրքերի հերոսները—Տուրգենևի Բազարովը կամ Չերնիշևսկու Ռախմետովը, Կորոլենկոյի իսպանական ինսուրգենտը, Վերեսևսի Ադելիլը, Վոյնիչի «Բոռը», Վիկտոր Հյուգոյի «Մովի աշխատավորները»—ռուս ժողովրդական երգերի—Ստեպան Տիմոֆեևիչ Ռազինը...

Այդ ամենը մտնում էր պատանի-աշակերտի գիտակցության մեջ, կուտակվում ու ամրանում նրա հուզաշխարհում և ենթագիտակցության մեջ, կազմավորում նրա համոզումները:

Լուրերն ամենուրեք հասունացող շարժումների ու պրոլետարական սուր բռնկումների մասին, սիրելի երգերի խոսքերը և սիրելի գրողների կերպարները, հայրենի քաղաքի պրոլետարիատի առաջավոր շարքերի հեղափոխական ելույթները շատ ուժգին կերպով մտնում էին պատանիների գիտակցության մեջ և սուր ակոս փորում շնորհիվ մեծ նավթային քաղաքի ու շատ յուրահատուկ մթնոլորտի—գործարանային և միջազգային իր էությունը կենդանի կենտրոնավայրի՝ միշտ առույգ հույզեր, անսպառ եռանդ ու տոկունություն ներշնչող ինքնահատուկ կոլորիտի...

«Կոմունիստ», Բաբու, ապրիլի 26, 1955 թ.

ՆՎԻՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

... Փետրվարյան հեղափոխության օրերին ես Պետրոգրադումն էի: Տեսա առաջին օրերի սուր մարտերը, աղմկահույզ պողոտաներն ու փողոցները, ժողովրդական շարքերի անսահման զայրույթն ու ցատումը: Իմ մտերիմ ընկերների հետ միասին ես եղա նաև Ֆինլանդական կայսրանի հրապարակում: Տեսա այդտեղ բանվորների, զինվորների, նավաստիների հսկայական հավաքույթը, որը կազմակերպվել էր Լենինին դիմավորելու և ջերմ ողջունի խոսք ասելու համար:

Արտասովոր ու ցնցող էր տեսարանը: Տեսա պատմական «բրոնհիկը», Տեսա և լսեցի Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության մեծ առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինին... Այնուհետև մի քանի անգամ տեսել ու լսել եմ նույն այդ մրրկահաճույզ օրերին Լենինին Տավրիկյան պալատում և ուրիշ վայրերում:

Մեր կուսակցության վեցերորդ համագումարի օրերին եղան հանդիպումներ և մտերիմ զրույցներ Ալյոշա Զափարիձեի հետ: Կովկասյան կուսակցական կազմակերպությունների ղեկավար ընկերներին շատ էին հետաքրքրում մայրաքաղաքի կովկասցի բոլշևիկները: Երբ ես և մոտիկ ընկերները գնացինք Շահումյանի մոտ, եկավ նաև Վահան Տերյանը: Պատմական այդ տեսակցության ժամանակ նա էնտուզիաստ ուսանողի նման անշափ զգացված էր՝ տարված նոր, աննախընթաց դեպքերով: Ահա այդ օրերին էլ մեզ առաջարկեցին Պետրոգրադից փոխադրվել Կովկաս և ակտիվորեն լծվել հեղափոխական աշխատանքի:

1917 թ. օգոստոսի վերջին կամ սեպտեմբերի սկզբին ես արդեն իմ հայրենի Բաբու քաղաքումն էի: Տեսա հենց առաջին օրերին Շահումյանին և Զափարիձեին, վաղեմի նվիրական ընկերներին: Նորից ակամա և երկարամյա «պաուզայից» հետո ուղևորվեցի դեպի հանքային վայրերը: Նորից՝ նավթային վիշկանների տեսարանը և բանվոր-աշխատավորների դիմաստվերներն արթնացրին հեռու օրերի հուշերը: Քաղաքում՝ տեխնիկական դպրոցի մեծ սենյակներից մեկում, տեսա պատանի էնտուզիաստներին՝ գալիք կոմերիտականներին, որոնք հավաքվել էին իրենց անելիքը որոշելու նպատակով: Պատանիների հատուկ ոգևորությամբ նրանք նկարագրում էին շրջապատի երևույթները: Այդտեղ էին Սուրեն Շահումյանը՝ Շահումյանի ավագ որդին, Բրեյտմանը, ապա պատանի աղջիկներ՝ Բրեյտմանը, Կրամարենկոն, շատ ուրիշներ: Միայն Օլգա Շատունովսկայան է կենդանի մնացել հեղափոխական բարձր զգացումներով համակված հերոսական այդ երիտասարդներից...

Բաբվի Սովետի պատգամավորների կազմի մեջ սկզբնական շրջանում բոլշևիկներն աննշան թիվ էին կազմում: Նորերս հրապարակված «Պատմական արխիվ» պարբերականի մեջ նշվում է, որ բոլշևիկյան կազմակերպության անդամների թիվն այդ ժամանակ մեծ չի եղել: Չնայած այդ ամենին, շատ որոշակի կերպով նկատելի էր անգամ 1917 թ. աշնանը, որ նավթարդյունաբերական պրոլետարիատի գերակշռող մեծամասնությունը ռուս, աղբբեջանցի, հայ, ընդհանրապես բազմազգ նավթային պրոլետարիատը, հետևում է բոլշևիկների ուղեգծին: Դա անշափ նշանակալից մի երևույթ էր:

Քաղաքում նույն այդ օրերին տակավին շատ ուժեղ էին բուրժուազիան և բուրժուական հոսանքները: Մի շարք հասարակական օրգաններ՝ Բաբվի քաղաքային ինքնավարությունը, հասարակական կազմակերպությունները

այսպես կոչված գործադիր կոմիտեն, զանազան «Ազգային խորհուրդներ», զրանց հետ կապված ազգային զորամասերը, բուրժուական և մանր-բուրժուական հոսանքները լիբերալների և ազգայնականների, մենշևիկների ու էսեռների համար ուժեղ հենակետեր էին: Նրանց համար էարևոր գաղափարական հենակետեր էին նաև բազմազան ակումբները, պարբերական հանդեսներն ու լրագրերը:

Եվ ահա այդ կազմակերպված թշնամիների դեմ կանգնած էր մի կուսակցություն՝ բոլշևիկների կուսակցությունը: Նա շատ ազդեցիկ ու ուժեղ էր Բաբվի իրականության մեջ: Այդ կուսակցությունը նավթարդյունաբերական պրոլետարիատի և ընդհատակյա հասարակական-դեմոկրատական լավագույն շարքերի նվիրական բաղձանքներն ու ձգտումներն արտահայտող միակ հետևողական և ինտերնացիոնալիստական կուսակցությունն էր:

Բաբվի բանվորների ընդհանուր գործադուլի ընթացքն արդեն ցուցադրել էր բոլշևիկների ամրակուռ կապերը բանվորական ամենալայն մասսաների հետ:

Բաբվի Սովետի կազմում բոլշևիկ-պատգամավորների թիվը 1917 թ. աշնանը հիրավի քիչ էր: Դա ճիշտ է: Սակայն Վ. Ֆիոլետովին, Ռ. Զափարիձեին և ուրիշ բոլշևիկ գործիչների լիազորելով ղեկավարել գործադուլային մեծ շարժումը, նավթային պրոլետարիատը զրանով ցույց էր տալիս իր զրական դիրքորոշումը բոլշևիկյան կազմակերպության նկատմամբ: Ամենևին պատահական չի կարելի համարել նաև այն, որ գործարանային «լայն» և անկուսակցական կոնֆերանսները՝ բանվորական յուրահատուկ այդ «պաուլամենտները», հիմնականում նույնպես հետևել են բոլշևիկ-գործիչների կողմից առաջադրված լուղունգներին և գործելակերպին:

Վերջապես անհրաժեշտ է միշտ հաշվի առնել նաև մի ուրիշ շափազանց նշանակալից հանգամանք: Բաբվի բարդ իրականության մեջ ժողովուրդների բարեկամության, խաղաղության վսեմ պատգամների միակ իրական և իսկական ջահակիրը Լենինի աշակերտների և հետևորդների Բաբվի մարտական բոլշևիկյան ջոկատն է եղել: Բաբվի բոլոր մյուս հասարակական-քաղաքական հոսանքները ուժգնորեն կապված են եղել նացիոնալիզմի հետ և իրենց գործելակերպով միմիայն ուժեղացրել են ազգայնական տրամադրությունները: Բաբվի կոնկրետ հասարակական պրակտիկան, ազգայնական հնօրյա բախումներն ու կոտորածները, երկարատև շովինիստական կոլիվները ստեղծել էին ոչ միայն նավթային պրոլետարիատի, այլև քաղաքային դեմոկրատիայի լայն շարքերում անսահման ատելություն նացիոնալիզմի անգամ ամենաշնչին արտահայտության նկատմամբ և բացասական դիրքորոշում ամեն գույնի ազգայնականների հանդեպ:

Զարմանալի չէ այդ ամենից հետո, որ Բաբվի Սովետի կազմում փոք-

(Факты. Воспоминания)

Многие историки Бакинской Коммуны не раз в своих трудах писали о весьма сложной обстановке в Баку в 1917—1918 гг. Известно, что бакинская буржуазия, буржуазно-националистические партии, социал-оборонческие течения разных красок и в начале 1918 года были сильны в городе и районах. Достаточно только отметить наличие ряда опорных баз, которые имелись в распоряжении буржуазии (банки, кредитные товарищества, национальные советы, благотворительные общества и пр.). Самые крупные типографии принадлежали буржуазии. Самые крупные газеты издавались ею же. Наконец, в городе стояли вооруженные до зубов отряды оруженосцев буржуазии—дашнаков и мусаватистов. Добавим ко всему этому также не менее сильные организации церковников, которые и в церквях и в мечетях проводили систематически контрреволюционную пропаганду...

Что же могли противопоставить объединенному фронту всех враждебных сил бакинские большевики? Чем можно объяснить, что сравнительно малочисленной организации бакинских большевиков удалось возглавить мощное революционное движение, встряхнуть массы трудящихся, создать первые основы Советской власти, восстановить разрушающуюся нефтяную промышленность Баку и, наконец, в невероятно трудных условиях борьбы против империалистических агрессоров и внутренней контрреволюции организовать планомерную и систематическую доставку нефти родной социалистической Родине.

* Автор данного сообщения А. Б. Каринян—старый партийный публицист, член КПСС с 1907 года. Еще в годы первой русской революции он стал сотрудничать в большевистской прессе. В 1917 году А. Каринян являлся членом Бакинского Комитета РСДРП(б), затем руководил изданием газеты «Известия» Бакинского Совета. С образованием Бакинского Совнаркома в апреле 1918 года вошел в его состав в качестве народного комиссара юстиции. С 1921 года занимал ряд ответственных государственных постов в Советской Армении. В настоящее время—академик Академии наук Армянской ССР.

Публикуемое сообщение не претендует на всестороннее освещение истории бакинской периодической печати 1917—1918 годов. Автор, основываясь в значительной мере на личных воспоминаниях, дает характеристику ряда большевистских печатных органов того времени, в которых он принимал непосредственное участие.—*Ред.*

րաթիվ բուլլետենների ֆրակցիան իրականում եղել է ամենից ազդեցիկը և ամենից ուժեղը: Այդ ֆրակցիայի մեծ ազդեցությունը արտասովոր համայնքի ուժ են հաղորդել և՛ բանվորական կոնֆերանսները, և՛ գործադուլների ընթացքում բռնկված վեճերը, և՛ վերջապես այն զգացումը, որ ազատության, խաղաղության ամենից հետևողական ջահակիր բուլլետենների հեղափոխական կազմակերպություն է: Գրանով էլ պայմանավորվում էր քաղաքի և շրջանների ղեմավարական հասարակայնության վճռական դիրքը Շահումյանի, Նարիմանովի, Ջափարիձեի, Ֆիոլետովի, Զարգարյանի, Ազիզբեկովի, Բասինի, Տեր-Գաբրիելյանի և շատ ու շատ ուրիշ բուլլետիկ գործիչների նկատմամբ:

Այսօր, երբ ճիգ եմ անում նորից վերհիշելու հնօրյա իմ հուշերն ու սպավորությունները, շեշտված էջերն եմ նշմարում ամենից առաջ: Հիշում եմ, որ Ստ. Շահումյանին լսող հսկայական լսարանում դահլիճի բացարձակ մեծամասնությունը լիովին ձայնակցում էր նրան:

... Անցել են տասնյակ տարիներ, քառասուն ձիգ տարիներ: Աշխատանքի և հերոսական պայքարի տարիներ են եղել այդ քառասուն տարիները: Ո՞վ կարող է անցած տարիների այնքան սիրելի ու այնքան նվիրական ղեմքերին այսօր մոտենալ զինված ցամաք պատմաբանի դիտակետով: Ո՞վ կարող է ժխտել ու սքողել այն, որ զանազան ազդությունների վաղեմի այդ ներկայացուցիչները՝ Շահումյանը, Նարիմանովը, Ջափարիձեի, Ազիզբեկովը, Ֆիոլետովը, Զևինը, Զարգարյանը, Բասինը, Սարգարովը, Կազի Մամեդը, Գուբանովը, Մուխամադիբը շատ և շատ ուրիշ հեղափոխական մարտիկներ կապված են եղել միմյանց հետ ամրակուռ եղբայրական կապերով և խորհրդանշել են իրենց միությունը նավթային պրոլետարիատի առաջավոր շարքերի բարձր միջազգայնությունը և հումանիզմը:

Ես բախտ եմ ունեցել տեսնել ու լսել հերոսական այդ պլեադայի ներկայացուցիչներին: Շատ անգամ տեսել եմ նրանց, ժողովներում, հանդիպումներ և բազմաթիվ գրույցներ եմ ունեցել շատ-շատերի հետ: Նրանք իմ ամենանվիրական ու ամենասիրելի ուսուցիչներն ու ընկերներն են եղել: Ինձ համար լուսավոր են եղել այն օրերը, երբ բախտ եմ ունեցել իրականության մեջ տեսնել այժմյան սիրելի վեպերում նկարագրված հերոսներին...

«Կոմունիստ», Բաքու

Только одно объяснение может считаться убедительным. Решающую роль играли прежде всего полностью отвечающие стремлениям народных масс лозунги мира и братства народов, последовательная революционная программа большевиков-ленинцев. Решающую роль играли светлые идеалы дружбы народов и социальная программа ленинской партии. Иного ответа мы не можем дать. Партия большевиков была единственной классовой организацией, которая бескорыстно, честно и последовательно отстаивала интересы рабочего класса. В Баку эта партия вписала яркие страницы в историю рабочего движения, борьбы за социальное и национальное освобождение трудящихся. Популярность большевиков в Баку была исключительно велика и в широких слоях беспартийной демократической общественности. Привлекали внимание этой общественности, прежде всего, подлинный интернационализм и последовательный демократизм большевиков. Бакинская большевистская организация состояла из представителей самых различных национальностей, представителей, которые своим непоколебимым братством и единством, нерушимым содружеством олицетворяли подлинно революционное и интернационалистическое мировоззрение передового и активного авангарда бакинского многонационального пролетариата...

* * *

После разгрома контрреволюционного мятежа мусаватистов постановлением Комитета революционной обороны были закрыты две самые крупные буржуазные газеты—«Баку» и «Каспий». Обе они выходили на русском языке. Периодические издания меньшевиков, эсеров, а также армянских воинствующих националистов—дашнаков продолжали выходить и после ликвидации мусаватистской авантюры. Общее число периодических изданий было велико даже в последние дни Бакинской Коммуны. Официальные органы меньшевиков и эсеров выходили на нескольких языках.

Следует сказать, что политическая линия, проводимая социал-оборонческими течениями и дашнаками в своих периодических изданиях, не так сильно отличалась от той линии, которая была выдвинута и обоснована публицистами «Баку» и «Каспия». Стоит только просмотреть номера газет «Арев» и «Вперед», которые издавались бакинскими дашнаками, а также страницы меньшевистских и эсеровских газет, чтобы стало ясно, что основные положения буржуазного либерализма были приняты и усвоены всеми указанными общественно-политическими

течениями. Беззащитная защита «западных» держав, провокационная критика революционных мероприятий Советской власти, ироническое освещение деятельности молодых советских учреждений—все это преподносилось в упомянутых газетах чаще всего в одинаковом аспекте. Меньшевики и эсеры нередко прикрывали свои реакционные утверждения лже-социалистической фразеологией. Дашнаки в свою очередь добавляли к «философии» социал-оборонцев сентенции о «национальном» социализме и «большом значении» националистического мировоззрения. И все они вместе изо дня в день вели бешеную борьбу против большевиков и всех представителей «левого сектора» Бакинского Совета.

Против лживых проповедей социал-оборонцев и националистов всех мастей последовательно и неутомимо выступала тогда большевистская печать, являвшаяся в руках большевиков мощным орудием политического воспитания масс, сплочения их вокруг идей и лозунгов Ленина. Страницы большевистской прессы были пронизаны огнем и пламенем борьбы и носили яркий революционный характер.

Ведущей газетой в числе большевистских периодических изданий была газета «Бакинский рабочий», которая после долгого перерыва начала вновь выходить в Баку с апреля 1917 года.

В этот первый период редактором ее был Степан Шаумян, который руководил всей работой по подготовке и редактированию материалов газеты. Мне в те дни приходилось по непосредственному поручению С. Г. Шаумяна собирать для газеты материалы в районах, править рабочие корреспонденции, принимать участие в заседаниях редакционной коллегии. Кажется, в конце 1917 года по предложению Шаумяна Бакинским Комитетом руководство редакцией было возложено на Арсена Амрияна. Будучи очень хорошим журналистом, Амриян откликался с большим темпераментом на актуальные вопросы дня и нередко—особенно в период активизации антисоветских партий—наносил сильные удары вражеским рядам.

Написанные очень просто и ясно, небольшие по размеру заметки и статьи, помещаемые в «Бакинском рабочем», били прямо по цели, по замаскированным и открытым врагам Советской власти. Надо сказать, что дашнаки, меньшевики и эсеры внимательно следили за всеми выступлениями ненавистной им газеты и очень часто в пылу злобной полемики раскрывали все свои карты. Антисоветская кампания особенно усилилась после получения сообщения о заключении Брестского мира.

Не все работники партии в первое время сумели учесть в полной мере историческое значение решения рабоче-крестьянского правительства. Нередко отдельные авторы, публикуя статьи по вопросам иностранной политики, забывали, что неудачная формулировка той или иной мысли, а также недостаточный учет тем или иным публицистом значения Брестского договора могли только нанести вред делу политического воспитания читателей газеты.

На заседаниях Бакинского Комитета несколько раз заслушивались отчетные доклады редактора «Бакинского рабочего» и неоднократно по предложению Шаумяна обсуждались отдельные статьи, помещаемые в газете. Помню, что на всех таких заседаниях мнение, высказанное Шаумяном, всегда учитывалось большевиками-журналистами.

Несмотря на небольшой формат, на случайные недочеты, газета «Бакинский рабочий» сыграла огромную роль как активный и революционный выразитель воли и дум самого передового авангарда бакинского пролетариата.

Несколько иным был профиль основанного в январе 1918 года армянского журнала «Банвори хоск». Мне пришлось принимать большое участие в работах этого журнала. Некоторые передовые статьи были написаны мною (в частности статья «Национальная или классовая борьба»). Журнал, основанный по специальному решению Бакинского Комитета, имел теоретический уклон. Предполагалось, что этот орган будет оказывать помощь партийным пропагандистам в борьбе против армянских воинствующих националистов. Из наиболее примечательных материалов журнала можно отметить содержательную работу Акопа Иоаннисяна «Тайные договоры и армянские дипломаты», статьи Амиряна («События в Гяндже» и др.), Ашота Иоаннисяна («О Закавказском сейме»), Вагана Теряна и других авторов. Очерк Вагана Теряна являлся фрагментом популярной работы, подготовленной талантливым поэтом-коммунистом по предложению Шаумяна еще в 1917 году в Петрограде в дни печальной памяти «Демократического совещания». Написанный доступным и красочным языком очерк Теряна «Что сказал Ленин крестьянам о земле» являлся ценным вкладом в армянскую большевистскую агитационную литературу того времени. Из написанных мною работ я мог бы отметить здесь публицистические статьи «Турция и западные империалисты», «Международная буржуазия» и другие.

В одном из отделов журнала печатались обзоры, отчеты о рабочих собраниях в районах. Все эти материалы для историка представ-

ляют немалую ценность, так как содержат весьма интересные сведения о неутомимой агитационной работе, проводившейся в промышленных районах большевиками-агитаторами.

В заключение я хотел бы сказать несколько слов о тех спорах, которые возникли по поводу профиля журнала «Банвори хоск». Последний, как уже отмечено, был организован как и популярный и теоретический журнал. На одном из собраний сотрудников журнала было решено уделять значительное внимание освещению проблем марксизма в доходчивой форме. Кроме популяризации трудов основоположников научного социализма, собрание решило отводить определенное место истории «армянского вопроса», обозрению международного рабочего движения, обзорам закавказской печати и, наконец, критике идеологии дашнаков и других националистов.

Журнал имел широкий круг читателей во всех промышленных рабочих районах. Тем не менее по инициативе некоторых работников однажды было предложено изменить композицию журнала и в дальнейшем уделять больше внимания и места публикации максимально популярных очерков и материалов. В соответствии с этим редакция журнала заметно расширила второй—информационный—отдел журнала. Все материалы его составлялись чаще всего мною или Караханяном (без подписей). Это нововведение было одобрено Бакинским Комитетом и рабочими-читателями.

Однако спустя некоторое время вышеуказанными товарищами было выдвинуто новое предложение. Ссылаясь на просьбы многих читателей, товарищи находили, что в журнале следует печатать исключительно одни лишь популярные очерки и статьи агитационного характера и вместе с тем максимально упростить язык всех материалов.

В этот период мое участие в журнале было незначительно, так как я стал работать в комиссариате юстиции Бакинского Совнаркома и не имел возможности принимать повседневное участие в работах редакционной коллегии. Как раз в этот период указанными товарищами были внесены большие изменения в журнал. Стараясь упростить язык статей, эти товарищи стали помещать в журнале очерки и письма на диалекте. Нововведение это было мотивировано стремлением расширить круг читателей. Между тем, кроме владеющих карабахским диалектом, в промышленных районах имелось немалое число рабочих из других районов Закавказья. Новое обсуждение вопроса о профиле журнала не привело к примирению сторонников противоположных мнений.

Шаумян осудил применение и диалекта и жаргона, но в то же время предложил упростить язык научно-популярных очерков и статей. Журнал после этого совещания издавался недолго и вскоре был закрыт. Да и трудно было в те напряженные дни регулярно готовить номера этого журнала. Выходившая тогда на армянском языке газета «Известия» считалась вполне достаточной и, будучи более оперативной, могла удовлетворить запросы читателей.

Первоначально «Известия Бакинского Совета» печатались только на русском языке. Желая подчеркнуть лояльную по отношению к Временному правительству позицию, редакция этой газеты помещала по преимуществу писания представителей социал-оборонческих партий. Состав редакции «Известий» несколько раз менялся. Редакторами одновременно были М. Н. Мандельштам, Газар Тер-Газарян, Анушавай Тер-Аракелян, Аршак Адамян, которые отставали основные посылки социал-оборонческих партий (позже, однако, первый из редакторов отошел от оборонцев и вновь вступил в ряды большевистской партии). За время своего властвования редакторы-оборонцы успели создать свои кадры и в редакции и в типографии газеты. Дело дошло до того, что из редакционного состава был «отчислен» единственный из большевиков-работников. После этого на заседании Бакинского Комитета серьезно обсуждался вопрос о нашем отношении к газете. После провозглашения Советской власти в Баку в октябре 1917 года мы получили полную возможность выдвинуть на пост первого редактора газеты своего кандидата. Так и было решено сделать. Шаумян напомнил, что, ввиду ряда обстоятельств, редактору придется проводить политику, выдвинутую левым большинством, в «осторожной» форме, с большим тактом. Освободить двух членов старой редакционной коллегии было трудно: оба считались меньшевиками-интернационалистами. Один из них не был профессиональным журналистом, а второй не проявлял особенной активности. Вот почему, намечая на пост первого редактора нового работника-большевика, Шаумян полагал, что он, если будет действовать активно, сумеет легко «выпрямить» общую линию даже «коалиционной» газеты.

На пост редактора был выдвинут пишущий настоящие строки. Мои «коллеги» не проявляли особой строптивости и чаще всего соглашались со мною. По отзывам, появившимся вскоре во вражеском стане, стало ясно, что «перемена» вызвала некоторое «оживление». Об этом мне поспешили сказать наборщики, примыкавшие к меньшевикам. Дело,

однако, не ограничилось этим. Однажды зашли в редакцию специальные делегаты и от имени «общего собрания» работников типографии газеты заявили, что «демагогические» статьи не будут печататься в газете. Речь шла о передовых статьях. Из вошедших в комнату редакции трех делегатов один был с подвешенным у пояса «парабеллумом». «Высокий» тон речи этих делегатов вынудил одного из моих «коллег» призвать их к порядку. Я коротко напомнил делегации, что избран Бакинским Советом и Исполнительным Комитетом Совета, что сама газета является органом Совета и что наборщики типографии не имеют права выступать в роли цензоров. Тем дело и кончилось.

Спустя два дня было организовано вновь «общее собрание» в типографии, которое по предложению социал-оборонцев приняло пространную резолюцию с «критикой поведения» редактора. Не ограничившись этим, инициаторы собрания послали письмо в редакцию газеты «Каспий» с осуждением того же редактора. Наконец, одним из редакторов этой газеты (Вейнбергом) был напечатан фельетон, направленный против «зазнавшегося» большевика-редактора «Известий». Одновременно члены редакционной коллегии «Известий» были подвергнуты автором фельетона осмеянию и критике за «приспособление» к проводимой большевиком-редактором «демагогической» линии.

Словом, редакцию непрестанно критиковали, причем не только справа, но и слева. Положение осложнялось. Здесь я отмечу один из инцидентов, вызванных «протестом» мусаватистов. После возвращения Шаумяна из Тифлиса в начале 1918 года в газете были помещены сведения о разбойничьих нападениях на воинские эшелоны, организованных мусаватистами и грузинскими меньшевиками при активном участии американских империалистов. Ко мне явились представители азербайджанской националистической прессы. Лидер мусаватистов М. Э. Расул Заде заявил, что он является представителем фракции мусаватистов в Совете и требует «обязательно» напечатать представленную им статью против «клеветнических» обвинений, выдвинутых газетой.

Статья Расул Заде была написана в агрессивном тоне и не могла быть напечатана. Еще до решения вопроса я получил соответствующую директиву от председателя Исполкома Бакинского Совета А. Джанридзе. Расул Заде предварительно обратился к членам Исполнительного комитета. Однако на заседании последнего большинство присутствующих поддержало меня.

Второй инцидент был вызван критикой в «Известиях» буржуазного национализма, националистических течений. Вначале и дашнаки и мусаватисты ограничивались тем, что печатали злобные статьи и провокационные очерки. Однако в рабочих районах статьи, опубликованные в «Известиях», не только читались, но и комментировались. Подавляющая часть рабочей аудитории резко осуждала и дашнаков и мусаватистов. Ввиду того, что ни окрики, ни клеветнические статьи не оказывали должного влияния на редакцию «Известий», объединенным фронтом дашнаков и мусаватистов была предпринята «парламентская» атака против редакции «Известий». Расул Заде, явившись на заседание Исполнительного Комитета, требовал «обуздать» редактора, чтобы он не забывал о том, что газета является официальным органом всего Бакинского Совета. На этом заседании дашнаки, меньшевики, правые эсеры поддержали Расул Заде. Однако решительные выступления Шаумяна и Джапаридзе оказали влияние даже на некоторых депутатов из меньшинства Совета и «протест» был оставлен без внимания.

Прошло немного времени, и дашнаки и мусаватисты возобновили атаку. Теперь вопрос был поставлен уже на обсуждение Бакинского Совета. Было курьезно, что непрестанно занимавшиеся взаимной бранью и дракой, ненавидевшие друг друга армянские и азербайджанские буржуазные националисты сочли необходимым объединиться и выступить совместно против представителя большевистской партии. Это неожиданное объединение старолавных пропагандистов волчьей националистической философии вызвало в рядах подавляющего большинства депутатов иронические усмешки и явно отрицательный резонанс.

Не так легко мне вспомнить сейчас все детали. В одном из номеров газеты «Известия Бакинского Совета» напечатан краткий отчет об этом заседании. В отчете приведены речи депутатов и А. Кариняна. Я прямо заявил, что линия борьбы против национализма не будет заглушена или смягчена в газете. Мною было подчеркнуто, что эта линия является обязательной для редактора интернационалистической и революционной газеты и что, наконец, большинство Совета уполномочило редакцию вести систематическую борьбу против всех националистических течений. Сейчас же после этого ответа выступили представители левого сектора, которые еще раз осудили дашнаков и мусаватистов. Выступили также некоторые депутаты-рабочие из беспартийных. Моя просьба об освобождении от обязанностей редактора «Известий» была отвергнута большинством голосов.

Я уже упоминал, что «Известия» считались органом всего Совета.

Поэтому редакции приходилось прилагать много усилий и дипломатической сноровки и отстранять «сотрудников», старавшихся проташить в завуалированной форме неправильные взгляды. Нам надо было постоянно учитывать наличие вражеских глаз. Должен сказать, что мне легче, нежели кому-либо другому, сейчас видны недочеты отдельных моих выступлений в газете и всего редакционного руководства. Ныне, когда я заново пересматриваю старые номера «Известий», лучше и яснее вижу, конечно, теневые стороны отдельных номеров. Бросается в глаза и однообразный тон статей и некоторый примитивизм передовых. И все же, даже при наличии недочетов, историк печати не может пройти мимо материалов, помещенных в «Известиях» в период с 25 октября 1917 года по апрель 1918 года. Я, например, нахожу, что статьи, очерки, материалы, напечатанные в «Известиях», надлежит считать весьма примечательными документами, которые дают некоторое представление о реальных фактах и особенностях общественно-политической борьбы в Баку в те горячие дни.

После образования Бакинского Совета Народных Комиссаров (я был избран тогда народным комиссаром юстиции БСНК) в состав редакции был включен А. И. Микоян. Со второй недели апреля 1918 года и по конец мая 1918 года он был фактическим редактором «Известий», хотя и в этот период иногда помещались в газете мои очерки и статьи. Только в конце мая, после решения о закрытии газеты «Кавказская Красная Армия» и создания вместо двух прежних (т. е. «Известий» и «Кавказской Красной Армии») одной единой газеты под названием «Известия Бакинского Совета», редактором этой новой газеты был избран Сурен Осепян (бывший редактор «Кавказской Красной Армии»), который и руководил редакционной работой вплоть до последних дней Бакинской Коммуны.

Здесь я не останавливаюсь подробно на содержании «Известий». Отмечу лишь, что в газете публиковались статьи о жилищном вопросе, о национализме и националистических течениях, о социал-оборонцах и др. Мною, кроме ряда передовых статей, был напечатан ряд публицистических статей на темы дня—о войне, о национальном вопросе, статьи «Либералы и культура», «Наука и рабочий класс», «Стремления мировых империалистов», «Ложь и провокация», а также небольшие отзывы и рецензии (о книге Погодина по истории польской общественной мысли, о сборнике стихотворений Бялика, о пьесе армянского писателя Шанта «Император» и проч.). Опубликованная в ноябре 1917 года статья «Чернышевский о задачах революционной власти» на

деле являлась критикой политической «философии» социал-оборонцев, хотя и была посвящена характеристике исторических воззрений великого революционного демократа. Из сотрудников этого периода я вспоминаю Антона Габеркорна, Богданова, Везирова, Малыгина. Выделялись блестящие статьи молодого А. И. Микояна, выступавшего под псевдонимом «Коммунист».

Содержание отдельных номеров газеты не было свободно от недочетов и ошибок. В некоторых очерках, например, наряду с правильным освещением актуальных вопросов заметен иногда недостаточно критический подход, поверхностная оценка, наконец, небрежное отношение к языку и стилю публицистических статей. Тем не менее тот конкретный материал, который имеется в старых бакинских периодических изданиях — кадетских, дашнакских, меньшевистских и эсеровских газетах, показывает, что даже в период до марта 1918 года газета «Известия» подвергалась злобной критике борзописцами из среды врагов Советской власти.

Здесь я считаю необходимым отметить, что позже, уже в апреле, после ликвидации мусаватистского мятежа, общее направление газеты и интонация руководящих статей и материалов заметно изменились в соответствии с усилением влияния и роли большевистской организации. Если до апреля газета, ввиду наличия в редколлегии двух меньшевиков-интернационалистов, иногда печатала не совсем выдержанные статьи и материалы, то теперь, после упрочения Советской власти в Баку, на порядок дня была выдвинута актуальная задача более острой и углубленной критики недочетов и просчетов...

Редактор «Известий» С. Осемян, являясь эрудированным и прошедшим в свое время «правдистскую» школу журналистом, сумел расширить отделы газеты, привлечь широкий круг новых корреспондентов, связать с газетой всех большевиков-журналистов и даже создать большие страницы специальных приложений под заглавием «Литература и искусство». Еще в апреле по инициативе А. Микояна одновременно с русским изданием газеты стали выходить азербайджанские и армянские издания «Известий». К сотрудничеству в них были привлечены активные молодые журналисты. Я помню многих из них. В армянском издании «Известий» одним из деятельных сотрудников был О. Караханян, который в июне и июле 1918 года исполнял обязанности фактического редактора. Им были написаны популярные статьи о Французской революции, критические обзоры армянской печати. Из работни-

ков азербайджанского издания запомнились Х. Зейналлы и Р. Ахундов. Судя по откликам разъяренных дашнаков, критические статьи, направленные против армянских воинствующих националистов, наносили сильнейшие удары по врагам Советской власти.

Насколько мне помнится, все редакционные работники постоянно общались друг с другом, нередко сообща намечали планы очередных номеров газеты на всех трех языках, хотя в каждом издании помещались и оригинальные материалы. Большая работа по руководству указанными изданиями в течение мая и первой половины июня 1918 года велась очень тесно связанным с активистами-рабочими в промышленных районах А. Микояном.

Следует отметить, что «профессиональных» в традиционном понимании журналистов в это время в наших газетах не имелось. Дело в том, что все наши журналисты, сотрудничая в газетах, одновременно продолжали работать в советских учреждениях. Кажется, и гонорара эти сотрудники постоянно не получали. Это были энтузиасты, которые нередко за каждое отдельное слово или выражение «сражались» с редакторами.

Разоблачая клеветников-провокаторов, «Известия» вместе с газетами «Бакинский рабочий», «Гуммет» и «Банвори хоск» проделали большую политико-воспитательную работу и оказали значительную помощь делу революционной мобилизации трудящихся Азербайджана.

РЯДОВЫЕ ПАРТИЙНОГО СЛОВА

Я был одним из сотрудников газеты «Бакинский рабочий» в 1908 году, в те дни, когда реакция наступала, когда усиливался рост реакционных общественных течений и наблюдался отход значительных групп интеллигенции от революционного движения. Характерно то, что в этот период можно было заметить сильнейшую тягу неонародников к либералам и определенное стремление всех антибольшевистских течений объединить ряды в общей борьбе против революционного марксизма. Как далеко шли при этом указанные течения, видно из того, что кроме аргументов, взятых из работ ревизионистов, представители антибольшевистских группировок апеллировали нередко к работам синдикалистов. В бакинской обстановке все это, конечно, принимало весьма своеобразные формы. Однако суть дела от такого «видоизмене-

ния» не менялась. Отрицание ликвидаторами нелегальной революционной партии получало поддержку в той атаке, которую начали российские синдикалисты, прикрываясь «левой» фразой. В этот период и пришлось мне вступить в ряды сотрудников газеты «Бакинский рабочий».

* * *

Следует отметить, что вопросы профсоюзного движения в это время играли значительную роль. Основным бастионом меньшевиков был Союз рабочих механического производства. В противовес этому союзу большевиками был организован Союз нефтепромышленных рабочих. Это был мощный профессиональный союз, который опирался на поддержку широких масс многонационального нефтепромышленного пролетариата. Вся свою работу в профсоюзах большевики Баку проводили, основываясь на решениях V (Лондонского) съезда партии, указаниях В. И. Ленина. Меньшевики же занимали оппортунистическую позицию, ратуя за «нейтральность» профессиональных союзов, за организацию «широких» профсоюзов, не связанных с «политикой» или «партийностью». Вместе с тем защита «нейтральных» профсоюзов связывалась с критикой «комитетчиков» — интеллигентов и была направлена против руководства Союза нефтепромышленных рабочих. Я присутствовал на том расширенном заседании правления союза (в Балаханах), на котором именно в такой форме и «критиковал» руководство союза один из бакинских синдикалистов А. Самарцев — официальный редактор-издатель газеты «Гудок». Помню, что в это время меньшевики старались поддержать указанного «критика». Таким образом, атака, начатая группой бакинских синдикалистов — членов редакции газеты «Гудок» против руководства Союза нефтепромышленных рабочих и большевиков под флагом борьбы против «узурпаторских» действий «комитетчиков» — интеллигентов, на деле стала своеобразным трамплином для меньшевиков, поставивших себе задачу нанести серьезный урон массовому союзу, организованному большевиками.

В этих условиях бакинские большевики неустанно укрепляли свои позиции, все более развертывали работу в профессиональных союзах и создали осенью 1908 года свою легальную партийную газету — «Бакинский рабочий».

Газета «Бакинский рабочий» составлялась со знанием дела — умно, серьезно, целеустремленно. Хорошо знал я из членов редакционной коллегии Степана Шаумяна, с которым познакомился в 1907 году.

Шаумян был заведующим народными домами и по поручению Бакинского Комитета партии подбирал лекторов для чтения лекций в рабочих районах. Шаумяном были привлечены для чтения лекций, кроме меня, А. Мясников, С. Лукашин (Срапионян) — мои ближайшие товарищи. Лекции читались на русском и армянском языках. Мною были прочитаны лекции о фабричном законодательстве и об общественных классах.

В 1908 году я несколько раз встречался с Шаумяном, который и предложил мне написать статью о синдикалистах. Статья была одобрена редакционной коллегией и опубликована в двух последних номерах «Бакинского рабочего». Из членов редколлегии я имел беседу с Суреном Спандаряном и С. Ньюшиным (С. Д. Вульфсоном. — *Ред.*). Оба интересовались литературой, и разговор шел преимущественно о новых литературных течениях. Кажется, в эти дни и вышли книги теоретиков синдикализма — Лабриолы, Оливетти, Сореля. Мы уже знали, что бакинские эсеры копаются в этих книгах и выкапывают новые аргументы против революционных социал-демократов. Об этом и шел у нас разговор.

Хорошо знал я также официального редактора-издателя газеты Степана Якушева. Обыкновенно редакторы наших легальных газет и журналов стояли в стороне от редакционного дела, хотя и были смелыми товарищами, совершавшими акт мужества согласием выступить в роли редактора. Каждый так называемый «фиктивный» редактор знал, что в случае репрессий первые удары будут направлены против него, что он может быть и арестован, и заключен в тюрьму, и выслан в административном порядке в «места не столь отдаленные». Отсюда ясно, что редакторами соглашались быть только очень стойкие, мужественные и беспрдельно преданные делу родной партии рабочие и служащие. Якушев был таким стойким работником. В отличие от других подставных редакторов он по-настоящему интересовался редакционной работой, следил за всеми номерами газеты, тепло относился к сотрудникам газеты.

Редактором газеты «Бакинский рабочий» был Шаумян, который написал ряд важных статей. Он очень считался с мнением А. Стопани, старого большевика, работавшего тогда в статистическом бюро Совета съезда нефтепромышленников. Каждый раз, когда дело доходило до статистики, Шаумян старался предварительно узнать мнение Стопани. Кажется, некоторые передовые были написаны Александром Мит-

рофановичем Стопани. Он не был разговорчивым, но принимал являвшихся к нему по делу товарищей очень радушно и дружески. Я много раз видел его, имел с ним беседы.

Очень хорошо помню я также молодого сураханского рабочего— волжанина, который сотрудничал в газете «Бакинский рабочий». Жил он тогда с престарелой матерью в Балаханах и был большим почитателем Горького. При встречах он подолгу спрашивал меня о литературе, о жизни Горького. Однажды он заявил, что имеет небольшие очерки и желает показать их Шаумяну. Его рассказ «Экспроприатор» был напечатан в нескольких номерах газеты.

Помню хорошо и другого из сотрудников газеты. Его давно уже нет в живых. Это был веселый и жизнерадостный парень. Учился он в Лазаревском институте в Москве вместе с А. Мясниковым и поэтом В. Теряном. Был арестован за политическое «преступление» и выслан из Москвы. Затем он поехал на Алавердские рудники и работал вместе с горняками. Здесь он познакомился со Спандаряном, который поручил ему вести агитационную работу среди рабочих. За ним начали следить. Он выехал в Баку и жил у меня продолжительное время. Неоднократно я вместе с ним выезжал в районы на нефтяные промыслы. Очень часто мы ходили пешком по Черному городу вечерами, разыскивая место заседания рабочих кружков. Звали его Оник Оганджян. Раз как-то он рассказал очень красочно о том, что видел на рудниках. Я и убедил его написать очерк-корреспонденцию. Вместе мы обработали этот очерк, который был принят редакцией газеты и помещен в одном из номеров по предложению Спандаряна.

Теперь я хотел бы сказать несколько слов о тех безвестных тружениках, которые продвигали газету в массы.

Надо было учесть всякие неожиданности, надо было сейчас же после отпечатания забрать из типографии все номера газеты. По распоряжению инспектора по делам печати в любое время могло быть задержано распространение даже готовых номеров газеты.

Большой труд надо было вложить, чтобы организовать регулярную доставку газеты во все рабочие районы—Балаханы, Черный город, Белый город, на библийбатские промыслы. Все это могли осуществить только глубоко преданные партии люди.

В промысловых районах имелись работники, которые следили за прибытием газеты и, получая свежие, еще пахнувшие типографской краской номера, распространяли их в рабочих казармах, комментиро-

вали и отстаивали выдвинутые газетой положения, нередко вступали в полемику с недругами и прямыми врагами.

Когда я вспоминаю об этих безвестных рядовых рабочих большевистского печатного слова, чувство глубокого уважения охватывает меня. Как много было сделано этими работниками! Как много души было вложено ими, рядовыми работниками партии, бескорыстно помогавшими прибывавшим из города с кипами газет товарищам! Ни один из деятелей революционного движения не может пройти безучастно мимо указанных рядовых и «простых» работников. В большой и массовой работе, которую приходилось вести каждому сотруднику революционной печати в прошлом, вклад таких простых работников всегда был велик по своему реальному значению. Вот почему мои воспоминания о газете «Бакинский рабочий» я хотел бы посвятить всем тем, кто с риском для жизни, руководствуясь только чувством глубокой и беспредельной преданности делу партии, продвигали номера газеты в рабочие массы и создавали армию друзей и читателей большевистской газеты.

Бакинскому рабочему 60 лет, изд. газеты «Бакинский рабочий», Баку, 1966 г., ст. 18

НА ФРОНТЕ КУЛЬТУРЫ В ДНИ БАКИНСКОЙ КОММУНЫ 1918 г.

(Воспоминания. Факты)

Памяти Надежды Николаевны Колесниковой посвящается

Надежда Николаевна Колесникова вела активную революционную работу в бакинской большевистской организации еще в далекие дореволюционные годы. Партийную работу она талантливо увязывала с продуманной пропагандой гуманизма, культуры, просвещения. Неутраченную учительницу-революционерку знали очень хорошо и в промысловых районах (Балаханах, Сураханах, Черном городе и др.) все передовые рабочие-книголюбы. Н. Н. Колесникова обладала даром незаурядного оратора, ее простая и меткая речь находила отзвуки в сердцах не только большевиков-рабочих, но и стоящих на перепутье—беспартийных, «искателей правды».

В апреле 1918 года Н. Н. Колесникова была избрана народным комиссаром просвещения Бакинского Совнаркома. В короткое время она развернула большую работу не только в городе, но и в рабочих райо-

нах. По ее почину к культурно-просветительной работе были привлечены представители демократической интеллигенции. Между тем, не все примечательные страницы большой работы, проделанной в рабочих районах и другими большевиками, достаточно ярко освещены в нашей исторической литературе. Как это ни удивительно, но как раз события и факты, характеризующие важнейшие черты культурного строительства, остались в тени.

Было бы нелишне отметить также следующее обстоятельство. Историки Бакинской Коммуны 1918 года основное внимание уделяют освещению общественно-политической обстановки в Азербайджане в этот период, военно-оборонных мероприятий большевиков, их агитационно-политической работы, выступлений антагонистических сил, классово-политических течений. Однако, как нам кажется, оценка общественно-политической ситуации в Баку в 1918 году будет недостаточно полной без характеристики «умонастроений» городской общественности, в том числе интеллигенции.

Вот почему в новых исторических исследованиях, посвященных Бакинской Коммуне, было бы желательно, на наш взгляд, уделить больше внимания освещению культурного строительства в те грозные дни. Следует помнить, что большая культурно-просветительная работа, проводимая в городе и районах Н. Н. Колесниковой, велась с учетом директивных решений Бакинского Комитета большевиков и увязывалась с агитационно-пропагандистской и идеологической работой партийной организации города. Все это было известно не только руководителям всех бакинских буржуазно-националистических течений, но и находившимся под сильным влиянием меньшевиков и эсеров городским ремесленникам, служащим торгово-промышленных учреждений, мелко-буржуазной интеллигенции.

Не удивительно поэтому, что коммунистка-революционерка на первых собраниях представителей городских школ была встречена явно настороженно и даже враждебно.

Н. Н. Колесникова 3 мая 1918 года в своем обращении остановилась и на программе работ, на задачах новой власти в области просвещения. Она отметила, что новая школа будет проводить пропаганду идей трудовой коммуны, гуманизма и интернационализма. Из кратких данных, опубликованных в бакинской периодической прессе, видно, что четкая культурно-просветительная программа, выдвинутая ею, поддерживалась небольшой группой педагогов-коммунистов и револю-

ционной интеллигенции. Представители бакинской учащейся молодежи также поддержали новые мероприятия Комиссариата просвещения. Народные дома в промысловых районах, по инициативе Н. Н. Колесниковой, развернули большую работу, которая была поддержана не только рабочими-активистами, но и моряками Каспийского флота. Чтение, например, цикла лекций по геологии, химии, истории, литературе, о революционном движении вызывало значительный интерес у слушателей.

Первое собрание представителей бакинских городских школ, однако, было сорвано организованными усилиями реакционных партий и консервативной части педагогов. Обструкция, организованная по почину антисоветских партий, показала бессилие врагов Советской власти, которые опасались, что Н. Н. Колесникова своим словом сможет завоевать глубокие симпатии всех честных людей. Н. Н. Колесникова просила не нарушать принятые в эти дни нормы «парламентского» регламента. Да и мы все в эти дни были наивны и не учитывали того, что антисоветские партии заранее отстранили всех честных работников культуры, сплотили своих сторонников, подготовили выступления организаторов обструкции. Все это было отмечено и раскрыто на очередном заседании Бакинского Совета. После доклада Н. Н. Колесниковой выступившие на заседании депутаты-рабочие резко осудили провокационные методы представителей антисоветских течений. Подавляющим большинством депутатов при активном участии представителей промысловых районов было принято предложение о самом резком осуждении организаторов политической обструкции. По предложению Шаумяна и Джапаридзе, Бакинский Совет обратился к Колесниковой с просьбой продолжать свою работу на славном посту представителя новой, рабоче-крестьянской революционной власти. Это решение было одобрено работниками культурно-просветительных учреждений. На больших рабочих собраниях во всех нефтяных районах выносились решения о необходимости защиты и ограждения руководителей новой революционной власти от провокационных наскоков, организованных пособниками и прислужниками контрреволюционных партий.

Все это я отмечаю, чтобы стало ясным, что даже очень простая и мирная, как будто, и совсем спокойная работа руководителя народного просвещения в трудные дни организации новой государственности на деле была опасной и тяжелой, находилась постоянно под вражеским обстрелом. Воля, сила, энергия Н. Н. Колесниковой и активная под-

держка бакинского революционного пролетариата сыграли, бесспорно, исключительную роль. Лучшая часть работников культуры, передовые промысловые учителя, все честные и связанные с народом представители городской интеллигенции сплотились вокруг большевиков и сумели направить по новому руслу и изучение разработки новых программ дошкольного и внешкольного образования, и всю конкретную работу культурно-просветительных учреждений. Между тем вражеские группы не дремали и после этого. Неустанно ведя борьбу против большевиков, представители антисоветских течений, не ограничиваясь распространением ложных слухов, старались создать опорные базы в промысловых районах, использовать легальную трибуну и прессу, сплотить под знаменем контрреволюции «нейтральные» группы населения и консервативных представителей культурно-просветительных учреждений.

Н. Н. Колесниковой удалось с помощью коммунистов-учителей в течение небольшого срока развернуть в городе и в рабочих районах интенсивную культурно-просветительную работу. Несмотря на летние, так называемые «каникулярные» месяцы, она сумела встряхнуть учительскую массу и развить энергию активных и преданных педагогов и работников культурного фронта. Идеологическая работа была заметно усилена во всех районах. Прочитанная ею замечательная лекция «Знание—сила, сила—знание», проведенные по ее инициативе доклады и лекции о литературе, о зачинателях русского революционного движения, о государственном праве подняли интерес в рабочих массах к проблемам культуры и просвещения. Исключительно важное значение имела целеустремленная работа по пересмотру репертуара театра, драмы и оперы, руководства деятельностью работников искусств, вовлечению в культурное строительство передовых мастеров искусства и активных пропагандистов гуманизма и интернационализма. Для более успешной реализации намеченных задач было необходимо преодолеть апатию и косность не только открыто консервативных групп, но и неизмеримо более опасных пропагандистов «чистого искусства» или бездумной культуры, выступавших под маской «нейтральных» культуртрегеров, оторванных от жизни и революции деятелей.

В пригородных районах Баку жили в основном рабочие, ремесленники, моряки, портовые грузчики. Все это население чаще всего моральную закалку и «воспитание» получало в заурядных театрах и кинематографах. Само собой разумеется, что антрепренеры и владельцы кинотеатров, призывая граждан занять «нейтральную» позицию и най-

ти утешение в иллюзиях и мечтах, нередко оказывали помощь и услугу замаскированным врагам революции и новой народной власти. Сегодня было бы нелишне остановиться хотя в самых общих чертах на некоторых примечательных фактах, иллюстрирующих значение и роль облаченных в наряд нейтральных и «художественных» кинофильмов.

Если бывшие учреждения дореволюционного Баку—клубы игроков, танцклассы, кафешантаны, кабаки-рестораны, которые играли открыто вредную роль, прекратили свое существование, то этого нельзя сказать о совсем «мирных» и как будто «невинных» кинотеатрах, которых в городе и после установления новой власти было изрядное количество. Имелись кинотеатры и в некоторых рабочих районах. Во всех кинотеатрах безраздельно и полновластно господствовали частные предприниматели, которые при отборе и демонстрации кинофильмов руководствовались исключительно меркантильными соображениями.

Все бакинские кинотеатры сохранили свои старые наименования. Ничего общего с искусством не имели эти дешевые и популярные «театры»—«Рекорд», «Микадо», «Театр», «Экспресс», «Форум», «Мон Репю», «Ренессанс», «Амбир», «Французский электробиограф» и т. д. Во всех кинотеатрах демонстрировались большей частью душеспасительные мелодраматические, детективные фильмы, бездумные драмы и пьесы.

О репертуаре дают некоторое представление названия наиболее ходких кинофильмов: «Чем ночь темнее, тем ярче», «Легенда черных скал», «Из бездны к солнцу», «Во власти зверя». В одном из театров бытовая драма «Ужасы жизни» была показана вместе с прологом («Из русской жизни по стихотворению Некрасова»). В весьма просторном объявлении о фильме «Черные валеты» сказано, что это «сенсационная драма из похождения шайки московского клуба червонных валетов», причем добавлено, что «картина смотрится с захватывающим интересом». В подтексте заглавия другого кинофильма мы читаем, что картина «Неведомые руки» описывает «похождения» аферистов и что вся она—это «криминальная драма из жизни сыщиков и авантюристов»... Нередко с целью привлечь внимание зрителей антрепренеры, кроме заглавия фильма, печатали просторные комментарии, которые могли вызвать лишь недоумение.

Меня, редактора «Известий Бакинского Совета», часто одно содержание крикливых объявлений ставило в весьма трудное положение.

Заведующий финансово-хозяйственным отделом газеты, однако, указывал и настоятельно подчеркивал, что редактор газеты не может вмешиваться в сферу «хозяйственных» дел и не имеет права запретить печатание «невинных» объявлений. Между тем, нередко упомянутые «объявления» врываются в думы и эмоции читателя и звучали как резкие диссонансы в официальном органе Баксовета.

Кинотеатры в большом городе играли значительную роль и направляли внимание утомленного повседневностью «обывателя по пути, назначенному песнопевцем» буржуазного правопорядка и частнособственнической морали. Судя по материалам, помещавшимся на первых страницах газет осенью 1917 года, владельцы некоторых кинотеатров пытались подбором специальных кинофильмов откликнуться на вопросы, выдвинутые после Февральской революции, в духе идеологии социал-оборонцев, несколько преобразованной режиссерами («Под обломками самодержавия», «Великомученик свободы», «Убийство Плеве», «Егор Сазонов», «Емелька Пугачев» и др.).

Неизмеримо более примечательны были кинофильмы, созданные по сюжетам классических литературных произведений («Саламбо» Гюстава Флобера или «Грешница любви» по произведению Оноре де Бальзака). В начале октября 1917 года была показана в одном из кинотеатров историческая драма-хроника «Софья Перовская» («Процесс 193»).

Все это своеобразное «искусство», бесспорно, оказывало влияние на думы и сознание даже трудовых масс. Я не ошибусь, если скажу, что всем нам, работникам фронта культурного строительства, и после установления Советской власти в Баку не удалось создать полный порядок в весьма сложном репертуарном хозяйстве бакинских кинотеатров. Инерция здесь играла значительную роль.

В острые дни боевых схваток и в особенности в первые недели после разгрома контрреволюционного мятежа мусаватистов все театры в городе были закрыты. Некоторое время они начинали свою работу днем в два часа, а в семь с половиной вечера заканчивали. Это летом при бакинской тропической жаре! И даже в эти дни кинотеатры были переполнены. В это же время совсем недалеко от города шла мобилизация и работа по подготовке боевых оборонных мероприятий. А репертуар кинотеатров оставался все тем же, так как новых фильмов не было.

В апреле 1918 года (19 апреля) в одном из бакинских кинотеатров была показана «Грешница любви» с участием красавицы Марии Яко-

бини. Усердные антрепренеры показали бакинцам также «Жужу» — по роману Анри Бернштейна, с участием красавицы Эсперии Сантос... Ко всему сказанному следует добавить, что все бакирские кинотеатры и в конце 1917 года и в первой половине 1918 года имели свою, довольно определенную и устойчивую аудиторию.

Основными зрителями были преимущественно те, кто хотел занять более «спокойную» позицию, отойти от арены борьбы, быть в стороне от схватки.

На деле «нейтральные» зрители не всегда были действительно «нейтральными» гражданами. Мелодрамы, любовь и убийство, месть и кровь, кошмарные сцены, грезы о далеких странах создавали иллюзию и успокаивали обывателя, явно недовольного революционным движением. По почину Н. Н. Колесниковой, вопрос о тематике кинофильмов был обсужден в кругу работников искусства. Однако репертуар кинотеатров был обновлен с большим трудом и лишь в очень незначительной степени. В некоторых кинотеатрах были показаны «видовые» фильмы, географические или научно-популярные картины. Дальше этого дело не пошло. Старые кинофильмы продолжали жить и оказывали влияние на умонастроения некоторых слоев населения большого города. Да и трудно было в течение трех месяцев внести какие-либо серьезные изменения...

•••

На отмеченном примечательном фоне в моих воспоминаниях деятельность передовых представителей театра, драмы и оперы, вдумчивых работников искусства рисуется как новое, светлое и симптоматичное явление. Интенсивной и творческой своей работой честные и умные работники искусства в Баку внесли немалый вклад в дело политического воспитания трудящихся и укрепления революционной обороны Баку.

Я считаю необходимым отметить большое значение и такого значительного факта. Во всех районах работники культурно-просветительных учреждений развернули большую и широкую работу. А промышленные районы, как известно, находились далеко от города. В Балахано-Сабунчинский район, например, можно было попасть только по промышленной железной дороге. Прибывшие в район дальнейший путь продолжали на старинных «линейках». Относительно легче было попасть в Черный или Белый город. Однако и здесь работникам искусства надо было затратить не меньше двух часов только на дорогу.

После марта 1918 года продовольственное положение заметно ухудшилось и в городе и в районах. Что же вселяло бодрость и энергию в эти трудные дни в думы и сердца работников театра, музыки, искусства? На этот вопрос можно дать только один ответ. Всех преданных народу-строителю работников культуры воодушевляло сознание факта, что своей творческой работой они вносят важный и ценный вклад в святое дело защиты Советской власти.

Самым большим театральным учреждением в Баку в 1917—1918 годах был театр Маиловых. Здесь ставились оперные, а нередко и драматические постановки. Их перечень легко составить по объявлениям и информационным заметкам, помещенным в бакинских газетах. Судя по указанным материалам, интенсивная работа в театре оперы велась и в каникулярные летние месяцы. В объявлениях отмечены классические произведения—Чайковского, Мусоргского, Римского-Корсакова. В упомянутом театре были показаны бакинским зрителям «Евгений Онегин», «Черевички» Чайковского, «Кармен» Бизе, «Сказки Гоффмана» Оффенбаха, «Жидовка» Галеви.

Режиссерам и артистам приходилось затрачивать много энергии и работать очень напряженно. Аудиторию можно было привлечь чаще всего новыми постановками. Было бы неизмеримо легче день за днем показывать одно и то же произведение. Однако при такой тактике конкурировать с кинотеатрами было трудно. Только новые постановки могли привлечь внимание нередко утомленных и скептически настроенных зрителей. Спешная работа, конечно, заметно снижала качество постановок. Не все шло безупречно и гладко у бакинских артистов оперы. Бывали иногда и серьезные недостатки. Бросались в глаза дефекты и пробелы. Однако передовые слои трудящихся были довольны, получая необходимую идейно-художественную зарядку. Опера, музыка и искусство поднимали настроение. Артист своей работой вносил новое в жизнь осажденного голодом и разрухой большого города. Вдумчивые художники поднимали и энергию и культурный уровень трудящихся.

Достаточно только сравнить ценный вклад артиста с тем, что давали кинофильмы об апашах, преступниках, сыщиках, чтобы стала ясной высокая ценность творческой деятельности работников бакинской оперы в эти давние и трудные дни.

По решению бакинской организации при Бакинском Совете в июне 1918 года был организован Народный музыкальный дом. Работники этого учреждения развернули большую деятельность и в городе и в рай-

онах. В зале промыслового сабунчинского кинотеатра, например, нефтяники-рабочие слушали артистов-музыкантов, исполнявших классические произведения—Бетховена, Даргомыжского, Венявского. В городском театре Маиловых при переполненном зале были исполнены фрагменты из музыкального наследия Гречанинова, Мусоргского, Лалло. На концертах выступали талантливые скрипачи и выдающиеся исполнители классических произведений. Светлое творчество Баха, Бетховена, Сарасате, Рахманинова, высокодаровитых мастеров искусства вносило бодрый и оптимистический тон в думы, жизнь и настроения трудящихся. По почину Народного музыкального дома было организовано чтение общедоступных лекций с соответствующими музыкальными «иллюстрациями». Я очень хорошо помню, что одним из самых энергичных инициаторов этого большого художественного начинания был активный сотрудник «Известий Бакинского Совета», музыковед-теоретик Черномордиков, который, если только я не ошибаюсь, опубликовал примечательные очерки о музыке на страницах упомянутой газеты. Будучи почитателем художественно-критических работ А. Луначарского, он неоднократно на собраниях откликался на актуальные проблемы нового искусства.

Большая и интересная работа труппы Народного драматического театра также должна быть отмечена. Театр даже в самые трудные дни не прекращал своей деятельности. Опять-таки можно упрекнуть труппу за чрезмерную спешку, иногда не совсем завершенную в художественном отношении отделку некоторых деталей драматических пьес. Артисты стремились привлечь более широкий контингент зрителей и постоянно обновляли репертуар. Театром были показаны пьесы—Леонида Андреева «Дни нашей жизни», «Савва» и Шаломы Аша «Бог мести», которые, правда, вызвали не очень большой интерес.

С целью завоевать внимание театральной и литературной общности артист Е. Любимов-Ланской приготовил специальную инсценировку по роману «Рудин» И. С. Тургенева. К извещению в газете приложено извлечение из заключительной части романа. Эта постановка прошла при переполненном зале. Вторая постановка в том же театре (Маиловых) тоже имела заметный успех. Автором инсценировки была проделана значительная подготовительная работа. Отрывок из романа, напечатанный петитом в газете, должен был поднять интерес читателей к новой пьесе.

В течение небольшого срока в Баку были показаны широкой народной аудитории пьесы Островского «Без вины виноватые», «Талан-

ты и поклонники», «Трудовой хлеб». Пьеса «Трудовой хлеб» вызвала большой интерес и была поставлена вторично в упомянутом театре.

Нередко руководители Народных домов уделяли большое внимание организации общедоступных концертов в рабочих районах. Организованный, например, в Черном городе общедоступный концерт вызвал большой интерес. Организатором его был Е. Любимов-Ланской. На концерте выступили виолончелист Николай Левьен и другие исполнители (скрипка, рояль, пение).

Работники другого театра—«Товарищества русской драмы»—также выступали в районах (Завокзальный район, Черный город и др.). Полный перечень всех постановок и пьес сейчас не так легко привести. По всем данным, отмеченным в бакинской периодической печати, можно установить совершенно точно, что в репертуаре произведения классической драматической литературы занимали немалое место. Например, в течение двух месяцев 1918 г. в Баку были поставлены «Власть тьмы» Л. Н. Толстого, «Дядя Ваня» А. П. Чехова, «На дне» М. Горького, примечательная пьеса Октава Мирбои «Дурные пастыри» и др.

Мой очерк очень краток. Я остановился на небольшом отрезке времени. Перечень пьес показывает, что при их отборе учитывались актуальные вопросы текущей повседневности. Одно несомненно: на темном фоне трафаретного репертуара авантюрно-трагических и бездумных кинофильмов вклад и труды передовых артистов должны были внести жизнерадостную свежую струю в жизнь трудового населения города. Картина, очерченная мною, будет, несомненно, более примечательной, если будущий обозреватель театральной жизни в 1917—1918 годах отметит данные и факты и о работе заводских и промышленных клубов, районных домов, рабочих драматических кружков и нарисует общую картину деятельности всех бакинских культурно-просветительных учреждений.

Как ни скудны имеющиеся сегодня под рукой данные, даже они говорят о большом значении труда передовых мастеров культуры в 1917—1918 годах. Историк не может недооценивать большое значение вклада, внесенного работниками искусства в дело воспитания и идейного подъема трудового населения в городе и районах. В дни, когда жесткие щупальцы голода протягивались к городу, когда недалеко от Баку шли бои, а в самом городе звериный вой националистов врвался

диссонансом в думы и сознание трудящихся, самоотверженные работники культуры, опираясь на светлые заветы классической культуры, оказали большую помощь делу укрепления братского содружества народов, интернационального сплочения трудовых масс вокруг созданной под знаменем В. И. Ленина Советской власти.

В заключение я бы желал отметить, что картину, набросанную в моем очерке, следовало бы дополнить данными и сведениями из азербайджанской и армянской прессы 1917—1918 годов. Я имею в виду сведения о клубах и школах, библиотеках, драматических произведениях и театральных постановках: отбор для постановки пьесы-буффонады «Аршин мал аллан» показывает, к примеру, что и азербайджанской и армянской аудиторией эта пьеса рассматривалась как своеобразная критика имущих классов и старого быта.

Даже простая фактографическая сводка о театральных постановках в промышленных районах может внести новое в освещение умонастроения тех частей трудового населения, которые, не будучи связаны с активными войнами революционной армии и строителями новой жизни, тем не менее проявляли активное отношение к культурному строительству.

Видная революционерка, участница Декабрьского вооруженного восстания 1905 г. на Пресне, народная учительница в годы революционного подполья, активная строительница демократической школы и новой культуры в дни Бакинской Коммуны, Н. Н. Колесникова усвоила ленинские заветы и сумела в острые дни героической борьбы бакинского пролетариата увязать культурно-просветительную работу с активной борьбой под знаменем В. И. Ленина за Советскую власть в Азербайджане.

Известия Академии наук Азербайджанской ССР, серия истории, философии и права, 1966, № 3, ст. 3—10.

ՄՈՎԱՅԻՆ ԱՐՎԱՐՉԱՆ-ՔԱՂԱՔԸ

... Բարու ժամանած բոլոր հյուրերին հայտնեցին, որ «Տաշիկատան» ջերմանավը պիտի ուղևորվի դեպի համբավավոր «Նավթային քարերը»: Դա ծովային ընդարձակ տարածություն է, որ գտնվում է քաղաքից շատ հեռու: Մովային ինքնատիպ բնակարար փոխվել էր շնորհիվ «էստակադների» և նավթա-

բուրգերի, որոնք կառուցվել էին գիտնական-կոնստրուկտորների և բանվորական ամուր կուլեկտիվի միասնական ջանքերով: Չորս կողմը ծով էր: Խորհրդավոր այդ «հանքավայրն» էլ կառուցվել էր ծովի վրա: Արագընթաց նավով անհրաժեշտ էր շորս ժամ ուղի կտրել նավթային արվարձան-քաղաքը հասնելու համար...

«Տաջիկստան» մեծ ու շքեղ ջերմանավը հյուրերին և պատվիրակներին սպասում էր Բաքվի ծովափնյա նավամատուցի մոտ: Ամեն ինչ կար այդտեղ՝ լայն տախտակածներ, նավասարհներ, դահլիճներ, ճաշարան, նույնիսկ փոքրիկ գրախանութ: Ամեն ինչ կարծես թելադրում էր մոռանալ անցյալի գորշ օրերը, հնօրյա Բաքվի միօրինակ և տաղտուկ շենքերը, հեռու անցյալի միայնակ մարդկանց տխուր դիմաստվերները:

Մեղմ էր եղանակը: Մովափին նշմարվում էին նոր Բաքվի գեղեցիկ շենքերը: Նորից վերհիշեցինք մեր պտույտները: Աղբբեջանցի երիտասարդ ավտովարորդն ակներև և օրինական պարծանքով առաջարկեց դիտել լայնարձակ պողոտաները ու շրջապատի պատկերավոր «վավերագրերը», ազատագրված աղբբեջանցի կնոջ և ապա տխուր մտորումներով տարված բանաստեղծուհի նախավանի հուշարձանները: Ազիզբեկովի անվան թատրոնի հրապարակում տեսանք արևելյան հանճարեղ հումանիստ Ֆիզուլիի հուշարձանը: Քիչ հետո մենք կանգ առանք մեծ բանաստեղծ-իմաստասեր Նիզամի Գյանջևիի դասական ոճով կառուցված գրանիտյա «պորտրետի» մոտ: Հրապարակի ու պողոտայի հակառակ մասում, հին ամրոցի մոտ, երևում էր Սաբիրի խոհուն դեմքը:

Ջերմանավը ծայրեծայր լեցուն էր: Նավից բացվում էր շատ գեղեցիկ տեսարան: Քաղաքի վերին մասում՝ նոր Աղբբեջանի աշխատավորները կառուցել էին կենինի մեծագույն զինակից՝ մտածող-հեղափոխական Կիրովին նվիրված մոնումենտալ հուշարձանը... Մովային ընդարձակ տարածությունը դիտող հյուրերի համար ամեն ինչ արտասովոր էր: Հյուրերի մեջ կային բոլոր ազգությունների ներկայացուցիչներ: Նրանց համար ակներև էր, որ «ծովային արվարձան-քաղաքը» նույնպես ազատագրված, դեպի նոր, լուսավետ օրերը քայլող, վերածնված աղբբեջանական ժողովրդի վերելքի ցայտուն արտահայտություններից է:

Ջերմանավի «տուրիստ» ճամփորդներն ամեն ինչ դիտում էին մեծ ուշադրությամբ և հիացմունքով: Մանրթացա ակննավոր գեներալ Տոգորսկու և իր մոտիկ ընկերուհու հետ: Ծամփորդների մեջ էր նաև Բաքվի կոմունայի կրթության ժողովրդական կոմիսար Ն. Կոլեսնիկովայի և Ձեկինի գիտնական սրդին, որ ներկայումս Վ. Ի. կենինի երկերի նոր հրատարակության խմբագիր-ղեկավարներից է:

Անակնկալ էր հանգիստումն ու զրույցը Ստ. Շահումյանի ակննավոր զինակցի, մեծատաղանդ հեղափոխական և տրիբուն Ալ. Ջափարիձեի ազգիկնե-

րի հետ: Վերջին անգամ տեսել էի նրանց քառասունները տարի առաջ՝ պաշարված Բաքվի տազնապալից այն օրերին, երբ երկուսն էլ փոքրիկ, շատ փոքրիկ ազգիկներ էին, առույզ, երազող, տակավին միամիտ աշակերտուհիներ...

Մեր մեծ հայրենիքի բոլոր վայրերից եկել էին գիտնականներ, գրողներ, արվեստագետներ, անվանի գործիչներ և վարպետներ:

Անցել էին հրաշունչ տարիներ և օրեր: Կրակն ու հուրը, հեղափոխական պայքարն ու էպիկական մարտերը քանդել էին հին պատենշները...

Այժմ նավասարհից դիտում էինք հզոր ու մեծ սովետական ժողովրդի օգնության շնորհիվ նոր գաղափարներով ու տեխնիկայով զինված հերոսական բանվոր կառուցողների վերելքի մեծ վկաներից մեկի՝ «ծովային արվարձան-քաղաքի» ուրվագծերը: Արդեն նշմարվում էին էստակադներն ու կենտրոնական մասի շենքերը: Ազդու տպավորիչ էր այդ քաղաքը, և որպես ինժեներական մտքի ստեղծագործություն, և որպես ամուր բանվորական կուլեկտիվի աշխատանքի արդյունք:

Երբ մոտեցանք «արվարձանի» կենտրոնին ու ապա նավամատուցից «մտանք քաղաք», մեզ առաջարկեցին ավտոմեքենաներով ուղևորվել ավելի հեռու վայրերը ու դիտել ինդուստրիայի շնորհիվ ալլափոխված ծովային նոր բնակարը:

...Ամրակուռ հենակետների վրա հաստատված էստակադային ուղիներով՝ «փողոցներով» շարժվեցին բոլոր ավտոմեքենաները: Արտասովոր էր ամեն ինչ: Արտասովոր էին մեր մտորումները: էստակադների ներքո տեսնում էինք ծովը: Իսկ ի՞նչ են անում բանվորներն այդ խորհրդավոր կառույցների մոտ մեծ մրրիկների ժամանակ, մանավանդ մթին գիշերներին, երբ մարում են էլեկտրալամպերը... Այդպես էին խորհում գրեթե բոլոր հյուրերը, երբ դիտում էին դեպի ծով տարածվող էստակադների ցանցը:

Ավտոմեքենաների երկար շարասյունը ձգվեց տարբեր ուղղություններով տարածված էստակադներով, որոնք ինչպես մեզ ասացին, հարյուրհիսուն կիլոմետրից ավելի ճանապարհ են կտրում:

Տեղ-տեղ նշմարվում էին նավթբուրգեր և ապա նավթային ռեզերվուարներ, որոնք «սև ոսկու» շտեմարաններ էին: Տեղ-տեղ մենք տեսանք արտագրական կառուցումներ և փոքրիկ շենքեր: Առանձին շենքերի մոտ խմբված բանվորները սրտագին ողջույններ են ուղղում հյուրերին:

Տեղացի բանվորների փոքրիկ մի խմբի հետ թոուցիկ զրույց ունեցանք: Առույզ և խոհուն բանվորներ էին: Պատմեցին, որ հանքավայրում կան ինքնակրթությամբ զբաղվող ակտիվ ընթերցասերներ, և որ մերթ ընդ մերթ հմուտ մասնագետները կարգում են դասախոսություններ գիտության ու տեխնիկայի մասին: Ապա շեշտեցին, թե հանքավայրում կանոնավոր կերպով լույս են

տեսնում աղբբեջաններեն և ուսերեն պատի թերթեր, որոնց նյութերը պատ-
րաստում և խմբագրում են ակտիվ բանվորները: Ասացին նաև, որ հատկապես
հորափորման տեղամասերում աշխատանքը շարունակվում է նաև գիշերը:
Տակավի՛ն մի քանի տարի առաջ ծովում կառուցված նավթարուրդերի թիվը
մեծ չէր, այժմ դրանք շատ են...

Բարվի հայերեն «Կոմունիստ» թերթի երկու ակնարկագիրներ իրենց բու-
վանդակալից նկարագրական ուրվագծերի մեջ շատ դիպուկ դիտողություններ
են նետել «...էստակազան քայլում է դեպի ծովային հեռուները»: Հիրավի,
այդպիսի տպավորություն է ստեղծում, երբ դիտում ենք զանազան ուղղու-
թյուններով ձգվող էստակազանների բարդ ցանցը, որը ծովային բնակարանին
հաղորդում է գիտություն ու աշխատանքի միջոցով վերափոխված շատ ինքնա-
տիպ ու կենդանի կոլորիտ:

Տեխնիկան վճռական դեր է կատարում արվարձանում: Բոլոր նավթահո-
րերը կապված են միմյանց հետ: Նավթահորային փնջերի աշխատանքին հե-
տևող գործիչները գիտեն, որ ամեն բոպե այս կամ այն նավթահորում ինչ-
պես է նավթահանման ռեժիմը: Ղեկավարումը կատարվում է հեռավորու-
թյունից:

«Նավթային քարեր—արվարձան քաղաքում» աշխատում են բազմաթիվ
ևղբայրական ազգությունների ներկայացուցիչներ, որոնք միմյանց հետ կապ-
ված են ընկերական ամրակուռ կապերով: Աղբբեջանցի և ուս բանվորների
կողքին պատվավոր տեղ են զբաղում նաև հայ նավթագործ բանվորները:

Մեր շատ թոուցիկ պտույտը գրեթե ավարտվում էր, երբ մեզ հրավիրե-
ցին դիտել «Հրդեհը նավթահանքում» կինոնկարը: Դահլիճը բավական մեծ
էր: Նկարի ընտրությունը ճիշտ էր և անշափ ուսանելի: Այն ամենը, ինչ մենք
տեսանք, հիրավի, կարող էր զբաղել թե՛ արվեստագետների, թե՛ խոհուն
զրագետների ուշադրությունը: Մի ակնթարթ մենք նորից հիշեցինք հեռու այդ
հանքավայրի կյանքը փոթորիկների և մրրիկների օրերին, աշխատավորների
ակամա կարվածությունը մեծ քաղաքից, նրանց ապրումները և մեզ համար
նորից ակներև դարձավ «ծովային քաղաքի» շարքային կառուցողների հերո-
սականությունը:

...Երբ վերադառնում էինք քաղաք, հյուսիսից եկած երիտասարդ հյուրե-
րից մեկը համակված հույզով կարգաց Մաքսիմ Գորկու Մարկոյին նվիրված
լեզենդի վերջին տողերն ու առաջ, որ շատ պարզ ու համեստ նավթագործ
բանվորները հենց այն հերոսներն են, որոնց կերպարները տակավին չեն կեր-
տել անհրաժեշտ ուժով մեր արվեստն ու գրականությունը:

«Մովետական շայատան», 1964, հունիսի 25.

Այս տարի «Հայպետհրատը» լույս բնծայեց Ոստիկ Կա-
րակոզյանի «Թորգոմի ընտանիքը» վիպակը: Հեղինակը դիմել է
Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ
Արտաշես Կարինյանին, խնդրելով իր կարծիքը հայտնել այդ
գրքի մասին:

Ընկեր Կարինյանի նամակը համարելով արժեքավոր և ուսա-
նելի մեր գրողների համար, հանդեսի խմբագրությունը նպա-
տակահարմար գտավ այն հրատարակել:

Մեծարգո ընկեր Կարակոզյան.

Ես կարող եմ կանգ առնել Ձեր գրքի միայն ավելի աչքի ընկնող թերու-
թյունների վրա: Գրում եմ այս նամակը սոսկ որպես ընթերցող:

1. Ինձ թվում է, որ Ձեր գրքի առանձին մասերում նշմարվող մանրայ-
նությունը անտեղի է: Նման էջերը կարող են ստեղծել ավելորդ տարակու-
սանքներ:

2. Դուք նկարագրում եք շատ դեպքեր (թեև թոուցիկ կերպով)՝ անզրիա-
կան զինվորներին, տաճիկ ասկերներին, ռազմաճակատի պարագաները: Պետք
է ենթադրել, որ Դուք այդ ամենը տեսել եք կամ էլ պատմում եք այն, ինչ ուր
ժամանակին նկարագրել են ականատեսները: Օրինակ, հնդիկ զինվորների
հրկիզումը, Նուրի փաշայի «ելույթը» տաճարում, գիալոզը և այլն: Ինչո՞ւ
Դուք այնուամենայնիվ աննշան ուշադրություն եք նվիրել անցյալի ավելի
բնորոշ ուրիշ դեպքերին:

3. Ձեր գրքի մեջ անհրաժեշտ չափով չեն նկարագրված 1917—1918 թթ.
Բաքուն, քաղաքի արվարձանները, մերձակա հանքային վայրերը: Շատ հա-
կիրճ են Բաքվի կոմունայի մասին տողերը: Անհնարին է երևակայել, թե
Բաքվում ապրող բանվորները կարող էին այնքան պասսիվ լինել: Պատմա-
կան-հասարակական ֆոնը, համենայն դեպս, գրեթե չի գծագրված Ձեր վի-
պակի մեջ:

4. Կան հատվածներ, որոնք մշակված չեն: Աչքի են ընկնում անհաջող
դարձվածքները և որոշ պարբերությունները, ռեպորտորի արձանագրություն-
ների նման կազմված մակերեսային նկարագրությունները:

5. Ջանարով դիպուկ կերպով բնութագրել առանձին գործիչներին, Դուք
ստիպում եք նրանց դիտավորությունները (այդ աչքի է ընկնում պարզորոշ կեր-
պով) գործածել բանվորական շրջաններում, ինչպես նաև քաղաքի արվար-
ձաններում տարիների ընթացքում կազմավորված յուրահատուկ փաղափային
ժառգներ:

Ես հիշում եմ, որ նախահեղափոխական տարիներին Բաքվում բռնկվել

են նշանակալից դիսպուտներ հենց այդ «ժարգոնի» մասին: Հիշում եմ, որ հայտնի նեո-նարոգնիկ հրապարակագիր Լ. Աթաբեկյանը իր մի զեկույցի մեջ նկարագրել էր հայ լեզվի էվոլյուցիան և շատ յուրահատուկ «աղավաղումը» բանվորական միջավայրում: Նա հիշատակել էր նորամուտ խոսքերի դերն ու նշանակությունը բանվորական շրջաններում.— սլեսար, սյուբյանչի, տարտալչիկ, զարաստովկա, սաբրանի, ժելոնկա, պրիկազչիկ, նարոդ, նագրադ-նոյներ, ուզերվար, գերժիմորդա և այլն: Եթե չեմ սխալվում, հայ լիբերալների «Մշակ»-ի էջերում տակավին 1912 թ. տպագրվել էին այդ դիսպուտների ատենադրությունները: Վիպագիրներն, իհարկե, իրավունք ունեին և՛ ուսում-նասիրել, և՛ միաժամանակ ցուցադրել քաղաքային նորակառույց լեզվի կամ ժարգոնի ուսուցանող նշանակությունը՝ իրական կյանքի վերարտադրության նվիրած երկերի մեջ:

Սակայն և այնպես, ռեալիստ գրողը պետք է ունենա միշտ գեղարվեստական ճաշակ և ինտոնացիա: Ահա հենց այդ ինտոնացիան խախտվում է, երբ վիպագիրը շոսյուրեն է օգտագործում ժարգոնը: Ամեն մի գրող պարտավոր է ամենից առաջ հաշվի առնել հայերեն կարգացող ընթերցողների մտայնությունը և սպասումները: Կասկածից դուրս է, որ առանձին ղեպքերում օտար լեզուներից քաղված խոսքերը կամ մակդիրները՝ «զյազյա, պերաշկիններ, սյուզատի» և այլն, թե՛ օտարոտի են հնչում, թե՛ աններգաշնակ երանգներ են ներմուծում, թե՛ բացահայտում են հեղինակի անփուլթ մտեցումը դեպի գոհակարանությունը:

Ես չէի ցանկանա հետևել ռիգորիստների ուղեգծին: Ռեալիստ վիպագիրը չի կարող հաշվի չառնել քաղաքային «լեզվի» կամ ժարգոնի առկայությունը: Հայ գրական լեզուն, իհարկե, շատ հաճախ աղավաղվում է: Սակայն իրականում աղավաղված այդ հայերենն էլ իրական-փաստ է և ռեալական երևույթ: Բավական է միայն հիշել, թե որքան հյուսիս է դառնում անգամ աղավաղված դավառական բարբառը հայ հայտնի գյուղատնտես հրապարակագիր Կ. Մեյլիք-Շահնազարյանի՝ «Տմրլաչի Խաչանի» դիպուկ ֆելիետոնների մեջ (առանձին հրատարակությամբ լույս են տեսել երկու հատորները): Ահա ինչու ևս չէի վստահանա առանձին ղեպքերում դատապարտել սրող գրողների ձգտումը ուրույն դիտանաններ ներմուծել «անաղարտ» գրական լեզվի մեջ՝ ժարգոնից առնված կոպտավուն խոսքերի միջոցով:

Գործածելով «կոֆտա», «յուրկա», «կամոզ» բառերը, վիպագիրն ըստ երևույթին ցանկանում է նկարագրել կոնկրետ տեղավայրի, կոնկրետ բնակիչների իսկական տիպարները:

Զեր վիպակի մեջ, օրինակ, կան տողեր և խոսքեր, որոնք ամենևին ավելորդ չեն և կատարում են կարևոր ֆունկցիա: Նման խոսքերն ավելի օտար կերպով են ցուցադրում ռեալական մարդկանց կենդանի խոսելաձևի հատկանիշները: Ես կանգ կառնեմ մի դիալոգի վրա:

Սայլապանը վիպակի մեջ հարցնում է.

«— Դաշվորների՞ց եք: Նա այս հարցը տվեց շատ զգուշորեն, ինչպես բինտն են կամաց-կամաց ետ տալիս՝ վերքը տեսնելու համար:

— Ձահար դառնա, լեղի դառնա դրանց դաշան...» (էջ 127):

Դաշա, դաշվորներ, բինտ, զահար— նման խոսքերը չի կարելի թարգմանել, կփոխվի միանգամայն դիալոգի բնույթը և վիպակի պերսոնաժների նկարագրերը:

Միևնույն սայլապանը վիպակի մեջ ահա ինչպես է դատափետում վայրագ, ունևոր հայրենակիցներին.

«Դա... սավետը լավ կանի, որ հարուստների քոքը կտրի: Մարդկանց գժբախտություն բերողը հարուստներն են: Թե որ գայլը խիղճ ունենա, փող ունեցող մարդն էլ խիղճ կունենա: Դրանց քոքը պիտի ոչնչացնել» (էջ 128):

Դարձյալ այդ բացականչության մեջ՝ դա, կամ էլ «դրանց ֆյոֆից պիտի ոչնչացնել» խոսքերը կարևոր և տեղին են, որովհետև բնութագրում են սայլապանի ուրույն սոցիալական նկարագիրը:

Ահա այդ ամենն էլ նկատի առնելով ես չեմ կարող ձայնակցել «անաղարտ» կամ «մաքուր» գրական լեզու պաշտպանող ռիգորիստների կտրուկ դրույթները: Ռեալիստ վիպագիրը համար ամենից կարևորը կենդանի կերպարի ճշգրիտ նկարագրությունն է:

Այնուամենայնիվ, աներկբա է այն էլ, որ գրողը մեծ տակտով պետք է կատարի խոսքերի ընտրությունը: Զի կարելի, իհարկե, առանց քննական գնահատության, վերարտադրել մեծ քաղաքի բնակիչների լեզվի տարբերային կազմավորման պրոցեսում կերտված բոլոր նորամուտ խոսքերը:

Իմ կարծիքով, վիպակի երկրորդ մասում նկատելի թերություններն այնքան էլ շատ չեն: Այդ մասում կան լիրիկական մտորումներ, որոնք կերտված են կարծես արձակ բանաստեղծությունների նման: Կան միօրինակ և տաղտուկ տողեր: Նման կրկնություններն այնքան էլ տեղին չեն:

Զնայած հիշատակված թերություններին, Չեր վիպակը, իմ կարծիքով, ուշագրավ գործ է:

Դուք արձակագիր եք, ընդունակ վիպագիր, մտածող մի գրող: Այդպես է իմ տպավորությունը: Կա Չեր աշխատության մեջ սյուժե: Կան նշանակալից փաստեր, ղեպքեր, կերպարներ: Կենդանի գույներով է նկարված բանվոր-հերոսի կնոջ՝ Օլինկայի կերպարը, ինչպես նաև հայ և ագրեբեջանցի կանանց բարեկամության ցուցանիշները: Լավ է այն էլ, որ վիպակի մեջ բացահայտված է հեղինակի միջազգայնական դիրքը բոլոր ազգությունների նկատմամբ: Կարելի է այնուամենայնիվ տարակուսանք հայտնել այն առթիվ, որ նավթային պրոլետարիատի ներկայացուցիչները գորշ ու ցամաք գույներով են նկարագրված (բացի ագրեբեջանցի բանվորի կերպարից): Գաղտնիք չէ այն, որ

առաջավոր ուս պրելետարները շատ մեծ դեր են կատարել համակովկասյան հեղափոխական շարժումների պատմության մեջ: Ահա այդ անառարկելի փաստի արձանագրությունը մենք չենք տեսնում վիպակի մեջ: Սիրով է, իհարկե, նշված վիպակի մեջ տաճիկ-փաշայի դեմ ծառայող ուս խոհուն պրելետարը: Սակայն այդ պրելետարի սոցիալական դեմքը չի գծված ավելի դիպուկ և մանրակրկիտ գծերով: Ընդհանրապես ամբողջ վիպակի մեջ դասակարգային ներհակությունները և կոնֆլիկտները լավ չեն բացահայտված: Այդ պատճառով թույլ է գծագրված նաև պատմա-հասարակական միջավայրն ու մթնոլորտը:

Ամբողջ գործը բնթերցվում է հետաքրքրությամբ: Կան Ձեր աշխատության մեջ դետալներ, որոնք կարող են գրավել նույնիսկ պատմաբանների ուշադրությունը: Պատկերավոր էջեր էլ կան: Ձերմ են նկարված լեռնաշխարհի տեսարանները: Տպավորիչ են դեպի հայրենի «չայլաղներն» ուղևորվող բանվորական բնտանիքի վայնքի նկարագրությանը նվիրված ներժուն էջերը և առանձնապես՝ վայրագ ազգայինների վայրենի վարքագիծը բնութագրող դառն տողերը: Այնուամենայնիվ, նկարագրության իշխող բնդհանուր կոլորիտը շատ միներային է — մուսլու ու տիտու: Հետագա էջերում Գուբ ջանացել եք ավելի որոշակի կերպով ցուցադրել ուրիշ լեռնցի աշխատավորների բարի և չերմ մոտեցումը դժբախտ հայրենակիցներին: Բայց այս անգամ էլ Գուբ նետվել եք հակառակ ծայրահեղության մեջ. չեք վստահել համենայն դեպս հաղթահարել միակողմանի ծայրահեղությունը:

Լեռնցի գյուղացիներն, իհարկե, պետք է անսահման զայրույթով արձագանքեն վայրագ մարդկանց վայրենի վարքագծին: Դա պարզ է: Այդ գյուղացիները պետք է սայլապանի հետ միասին օգնության ձեռք մեկնեն նորից շատ հեռու քաղաքը նետվող շքավոր համաերկրացիներին: Սակայն այդ ամենը անհրաժեշտ էր նկարել տակտով, ռեալիստ և ճշմարտախոս գրողին հասուկ ձևով: Ընթերցողներին կարող է վարմացնել այն, որ առաջին դեպքում չի գտնվում ոչ մի բարի գյուղացի և ոչ մի օգնական, իսկ հետագա էտապում արդեն համայն գյուղական հասարակությունը նկարագրվում է որպես միասնական և միօրինակ մի հավաքույթ:

Վիպակի որոշ մասերը շատ սեղմ են, չափից դուրս հակիրճ: Գուբ կարող էիք ավելի մանրամասն էջեր նվիրել Ձանգեզուրի բնակարաններին, լեռնային ինքնատիպ կոլորիտին, գեղջուկ աշխատավորների նկարագրի հատկանիշներին: Անհրաժեշտ էր, իմ կարծիքով, ավելի մտածված տողեր նվիրել արդու-նաբերական մեծ քաղաքի շատ յուրահատուկ քաղաքային պեյզաժին: Առանց այդպիսի կոնկրետ նկարագրության, Բաբլի բնակիչների վայնքը նկարագրող վիպակը միշտ կունենա նկատելի թերություն:

Բաբլի արվարձանների կամ թաղամասերի (թեկուզ հենց Սև քաղաքի, մերձկայարանային թաղամասերի, Սալգատսկի բազարի կամ Շամախինկա-

յի, Բաջիլովի) և ծովափնյա հայտնի պողոտայի նկարագրությանը կարելի էր հատկացնել ավելի դիպուկ դիտողություններ:

Վիպակի շատ հակիրճ առանձին էջերը թողնում են «նատուրալիստական» մանրուքների և ցիրուցան տողերի տպավորություն:

Ես չէի կամենա ձայնակցել նրանց, որոնք հենվելով բացառապես վիպակի միմիայն բերությունների կամ հապճեպ կերպով կազմված էջերի վրա, կտրուկ կերպով հայտարարում են, որ Ձեր ջանքերով կատարված նշանակալից աշխատանքը «գորշ ու անարվեստ» կամ էլ «խտուանի» նման միանգամայն անհաջող մի փորձ է:

Իմ կարծիքով, վիպակի մեջ քիչ չեն հաջողված և ամեն կողմից ուշադրավ պատկերավոր էջերը, կան հույզով լեցուն ազդու դրվագներ, գունեղ հատվածներ և նրբին կերպով գծված դետալներ: Կան նաև չերմ տրամադրությամբ հագեցված տողեր, որոնք մնում են բնթերցողի հիշողության մեջ:

Ձեզ անշուշտ լավ են հայտնի ականավոր ուս վիպագիրների, առանձնապես Լև Տոլստոյի, Իվան Տուրգենևի, Անտոն Չեխովի, Մաքսիմ Գորկու նման գեղագետների սուր դիտողությունները կենդանի կերպարների լեզվի նշանակալից մասին: Տոլստոյը ժամանակին գրել էր, որ ռեալիստ ուս գրողներից առանձնապես էրանի յուրաքանչյուր կերպարն ունի իրեն խոսելու շատ ինքնատիպ լեզուն ու ոճը: Տոլստոյը ակնարկ է նետել նաև էրտեյի հերոսների սոցիալական ծագմանը հատուկ խոսելաձևի մասին: Ես ցիտում եմ հենվելով իմ հիշողության վրա: Փաղտնիք չէ այն էլ, որ ինքը՝ Լև Տոլստոյը ջանացել է մեծ տակտով և նրբանկատությամբ մոտենալ առանձին սոցիալական խավերի ներկայացուցիչների հոգեկան ապրումների նկարագրին, լեզվի ուսումնասիրությանը և ցուցահանմանը:

Այդ ամենն, իհարկե, վաղուց հայտնի է Ձեզ:

Ես այսքան բնդարձակ նամակ չէի գրի, եթե համոզված չլինեի, որ Գուբ արդեն գրող և վիպագիր եք: Ձեմ կասկածում, որ եթե Գուբ նորից ուշադրությամբ կարդաք ուս կլասիկներին, աշխատեք, քննեք և ուսումնասիրեք, վերամշակելու դեպքում՝ Գուբ կկարողանաք դարձնել Ձեր գործը գեղարվեստական լիարժեք մի կարգավորված ստեղծագործություն: Իմ կարծիքով գեղագետները նույնպես գիտնականի նման նախնական մեծ աշխատանք պետք է կատարի: Խնդրեմ, թերթեք նկարիչ Գեի և Տոլստոյի տպագիր նամակագրությունը (կա ուսերեն շատ ուշադրավ առանձին հրատարակություն «Տոլստոյ և Գե»): Ձեր ուշադրությունը կարող է գրավել ի միջի այլոց նախնական այն աշխատանքը, որ ձեռնարկվել էր Տոլստոյի ջանքերով «Հաջի Մուրադի» նման գործը գրելուց շատ առաջ: Պարզվում է, որ Տոլստոյը հակայական աշխատանք է կատարել, գիտական պրպուտումներ՝ պատմաբանին հատուկ ջանափրությանը: Մի՞թե այդպես չեն մոտեցել նաև ուրիշ շատ գրողներ՝ Պուշկինը, Գո-

գորը, նեկրասովը, Չեխովը, Գորկին... Ամենից կարևորն այն է, որ նախապես ձեռնարկվի անհրաժեշտ սև աշխատանք, ուշադրությամբ ամբարվեն նյութի մշակման համար անհրաժեշտ տվյալները միջավայրի, ժամանակաշրջանի, տիպարների, կառուցվածքի, լեզվի մասին և այլն: Ես գրականագետ եմ և իհարկե մեծ նշանակություն եմ տալիս պատմական միջավայրի հատկանիշները պարզող հանգամանքների ուսումնասիրությանը: Սակայն ես էլ գրական երկասիրության նշգրիտ մեկնաբանության համար աշխատում եմ քննել գրողի աշխատանքի նախնական ատաղձը, սեպհիր տարբերակները, սկզբնական փորձերը, մտածությունների և մտորումների ուղղությունը: Իսկ բանաստեղծի կամ մանավանդ արձակագրի համար այդ նույնչափ անհրաժեշտ է, ինչպես նաև համաշխարհային կլասիկական ժառանգության կարևոր հուշարձանների ուսումնասիրությունը: Ինձ թվում է, որ իրեն գրող համարողը պետք է աշխատի ուսումնասիրել զեթ ականավոր գրողների հայեցողության բարդ երանգները և ստեղծագործական որոնումների հատկանիշներն ու հիմնական ուղղություններ: Ներքեցեք, որ ես կանգ եմ առնում շտիպանց տարրական ճշմարտությունների վրա: Դուք եք խնդրում «կարծիք հայտնել»: Քանի որ Դուք արդեն գրող եք, պետք է նոր գործեր պատրաստել, կարող եք Ձեր գրքի վերամշակված հրատարակությունը տպագրել, թույլ տվեք առանց դիվանագիտության ասել և կրկնել անգամ շատ պարզ, բայց մոռացողության մատնվող բաները:

Մաներայնությունը, անտեղի կրկնությունները, անտակտությունը Դուք կարող եք հաղթահարել: Կա սակայն կարևոր մի խոշորագույն, որ ամենից առաջ և ամենից վճռական կերպով պետք է հաղթահարվի: Խոսքը հստակ և պարզորոշ հայեցողության մեծագույն նշանակության մասին է, որի ըացակայությունը ստեղծում է պրիմիտիվիզմ և պրիմիտիվ մոտեցում արվեստին: Ահա այդ եմ ես անվանում կարևոր խոշորագույն:

Այսօր, մեր հրաշունչ օրերին, նույնիսկ լավ գրված ու լավ կերտված գործը չի կարող դառնալ լիարժեք գործ, եթե այդ գործի գաղափարական բովանդակությանը խոտեղի է կամ անարժեք: Գաղափարական բովանդակությունն իր հերթին բարձր է միմիայն այն պարագայում, երբ հեղինակի հիմնական դիտակետը նիշտ է և հստակ:

Դուք նկարել եք բանվորի ընտանիքի կյանքը, արդյունաբերական մեծ քաղաքի բանվորների ծանր կացությունը, ինդուստրիական խոշոր կենտրոններից մեկի զանազան բնակիչների ապրումները, տարբեր ազգությունների ներկայացուցիչների դիմաստվերները: Ձեր վիպակի մեջ կան լավ էջեր, հաջողված պատկերներ, դիպուկ դիտողություններ: Առանձին տեղերում գունեղ նկարները, նշանակալից երանգները, պերսոնաժների հարաբերությունները նույնպես հաջող կերպով են զծագրված: Բայց հաջող էջերի հետ խառնված են նաև անհաջողները: Այդ պատճառով հաջող էջերը ցրիվ են ու լավ չեն նըշմարվում:

Դուք, իմ կարծիքով, մոռացել եք, որ Բաբվի նման արդյունաբերական մեծ քաղաքի պրոլետարիատը վաղուց արդեն բացահայտել է իր բազմերանգ դեմքը: Բաբվի պրոլետարիատը հերոսական անցյալ ունի: Նա շատ մեծ պատմական դեր է կատարել նույնիսկ 1917 թ. շատ անաչ: Ձեր վիպակի մեջ նշմարվում են այդ հասարակական դասակարգի միմիայն միայնակ ու մեկուսի կյանք վառող առանձին ներկայացուցիչները: Այդ պատճառով էլ վիպակի մեջ չեն տեսնում դասակարգի, պրոլետարիատի, ռանչպար բանվորություն, հեղափոխական և միջազգայնական դեմքը անհրաժեշտ ու լիակատար շահով: Միևնույն պատճառով վիպակի նույնիսկ առաջավոր բանվորները շատ թույլ կերպով են նկարագրված: Ձեր աշխատության ընդհանուր ինտոնացիան գրեթե միշտ տխուր է, կարելի է նույնիսկ ասել՝ հուսահատ մտայնության հետ կապակցված մի ինտոնացիա է, գրեթե միշտ գերակշռող մոռյլ գույներով համապատասխան տոն են հաղորդում ամբողջ գործին: Ատելություն և զայրույթ ստեղծելու փոխարեն Ձեր վիպակը ավելի հաճախ տխուր տրամադրությամբ է համակում ընթերցողներին...

Դուք գրող եք, արվեստ էլ ունեք: Ես արդեն նշեցի, որ վիպակի մեջ կան ազդու և հաջող էջեր: Եթե շտկեք լեզուն, հրաժարվեք մաներայնությունից, դեն նետեք կրկնությունները, կդառնաք միանգամայն անթերի գործեր կերտող զեղազետ: Բայց այդ ամենն էլ քիչ է, շատ քիչ է: Անհրաժեշտ է ամենից առաջ վիպակի ընդհանուր «անոսմբլի» տխուր կոյրերի և ապա տխուր ինտոնացիան հաղթահարել, ալլափոխել, գոնե դարձնել աննշմարելի: Այդ կլինի միայն այն դեպքում, եթե Ձեր դիտակետը նույնպես փոխվի: Անհրաժեշտ է մշակել նշգրիտ դիտակետ: Անհրաժեշտ է մոտեցումը կյանքին և իրականությանը ամենաանբուրե կերպով կապակցել այն մոտեցման հետ, որ ունեցել է և ունի Ձեր նկարած մեծ քաղաքի՝ ամենաառաջավոր դասակարգի՝ պրոլետարիատի հեղափոխական ավանգարդը: Այլ խոսքով, այդ ավանգարդի կողմից առաջադրված դիտակետից էլ պետք է մոտենալ թե հին կյանքի, մոռյլ անցյալի, դատան իրականության քննական լուսարանությանը, և թե՛ մանավանդ անիծյալ այդ անցյալի տիրակալների դեմ կովի-ելնող և հանուն նոր լուսավետ կարգերի մարտնչող ռանչպար ժողովրդի հերոսական պայքարի, մտորումների և ձգտումների բնութագրմանը: Եթե այդպես տանեք Դուք Ձեր աշխատանքը՝ ինքնին արդեն կստեղծվի նաև ավելի ճշգրիտ կոյրեր, և առանձին նկարների տխուր երանգների ազդեցությունը չի ստեղծի միակողմանի այն մտայնությունը, որ նշմարվում է վիպակի ընդհանուր կառուցվածքի և ուղղության մեջ:

«Գրական Ազդեցում», գրական-գեղարվեստական երկամսյա հանդես, օրգան Ազդեցմանի սովետական դրոշմների միության, 1959, № 5, էջ 123:

Ամերիկյան ժողովրդի հռչակավոր բանաստեղծ Հենրի Լոնգֆելլոն ծնվել է 1807 թ. Պորտլենդ փոքրիկ քաղաքում, ավարտել է Բրունսվիկի համալսարանը և մեծ անուն է վաստակել իր հայրենիքում որպես գրականագիտական երկերի հեղինակ: Իր գրական գործունեության երկրորդ շրջանում արդեն նա դառնում է ականավոր բանաստեղծ: Թարգմանում է արևելյան կլասիկ պոետների երկերը, գրում է լիբրիկական բանաստեղծություններ, ապա արդեն 1885 թ. հրատարակում է իր մեծանուն «Հայավաթի երգը» պոեմը:

Լոնգֆելլոյի գեղարվեստական ստեղծագործության մեջ նշմարելի է կրոնական հայեցողության ուրույն կնիքը: Իր մելամաղձոտ երգերն էլ նա գունավորել է իրեն հատուկ կենսուրախ մտայնության գարնանային տոներով: Համակված օպտիմիստական հույզերով նա անգամ հասարակական պայքարի սուր մոմենտներին գրում էր մեղմագին կոլորիտով շրջագծված անդորր և ներհուն բանաստեղծություններ: Իդիլիական ոռոմանտիկայի երկրպագու լինելով, նա առանձին զգացումով է ակնարկում վաղեմի անցյալի մասին: Լոնգֆելլոյի այդ մեղմ և «անկոխի» երգերի մեջ շեշտված հումանիտար, բարձր հայեցողությունը մեծագույն գրավչություն է հաղորդում նրա պոեզիային և այսօր էլ հմայում է բնթերցողին: Կյանքի և մարդկայնության գովերգությանն է նվիրված նրա հայտնի «Սաղմոսը»: Մելամաղձոտ բանաստեղծությունների կողքին ավելի նշմարելի տեղ են բռնում պանթիստական հայեցողությամբ տոգորված երգերը: Թուրքահայ ազատական-դեմոկրատական շարժման օրերին Ստամբուլի հայտնի հայ հեղինակներից մեկը թարգմանում է վերոհիշյալ բանաստեղծությունը: Հայ ազգային հին երգարանների մեջ տպագրվում է որպես հանրահայտ ժողովրդական երգ հատկապես Լոնգֆելլոյի այդ բանաստեղծությունը:

Առաջավոր դեմոկրատական իր իդեալներով ամերիկյան ժողովրդի ազգային մեծ բանաստեղծը հայտնի էր ամենուրեք: Շատ խոշոր արձագանք են գտնում արևմտյան դեմոկրատական-հեղափոխական մտավորականության շրջաններում նեգրերի ազատագրման գործին նվիրված նրա տաղանդավոր երգերը:

Ամերիկայի հյուսիսային շրջաններում գերակշռում էին ինչպես հայտնի է — արուիցիոնիստները՝ նեգրերի ազատագրման ջահակիրները: Սակայն այդ նահանգներումն էլ տակավին նշմարելի էին հակադիտական ուսիստական հայեցողության տրադիցիաներին կառչած հետամնաց մարդիկ: Ահա հենց այդ խարխուլ և վայրագ տրադիցիաներին շեշտակի հարված էին հասցնում նրբին կերպով կառուցված «ստրուկների» այն երգերը, որոնք հետագայում հայտնի են դառնում նաև Ռուսաստանում: Հայտնի հեղափոխական պոետ Մի-

խայլովի թարգմանությամբ Լոնգֆելլոյի այդ երգերը տպագրվում են 60-ական թվականների արժատական դեմոկրատական օրգանի — «Սովրեմեննիկի» մեջ (1861 թ.):

Ավելի ևս ցայտուն և գեղարվեստական երանգներով է գծվում Լոնգֆելլոյի հումանիստական հայեցողությունը նրա հռչակավոր «Հայավաթի երգ»-ում: Իհարկե, պատահական չէ այն, որ նեգրերից հետո մեծ բանաստեղծ-մտածողի ուշադրությունը գրավում են նորից «գունավոր» ցեղերը, այս անգամ ամերիկյան հնդիկները: Ռեակցիոն իդեալներին հավատարիմ ամերիկացիների համոզմամբ, հնդիկները նույնպես պիտի նետվեին մահացման դատապարտված «երկրորդ» կարգի ժողովրդի շարքերը:

Իր մեծ ուսուցիչ վաշինգտոնի իդեալներին հավատարիմ Լոնգֆելլոն այս անգամ էլ գեղարվեստական խոսքը դարձնում է հումանիստական պրոպագանդայի մեծագույն ազդակ:

Պոեմում կան, իհարկե, բանաստեղծի դավանած կրոնական հայեցողությանը հատուկ տարրեր: Պոեմի վերջին հատվածի մեջ նկարագրված է «սպիտակամորթ» մարգարեն: Խոսվում է այդտեղ Տիրամոր և Քրիստոսի մասին: Մեծարվում է Արևելքից ուղևորվող նոր քաղաքակիրթ ուժի ներկայացուցիչը: Տխուր են պոեմի վերջին տողերը: Հայավաթը հեռանում է կարծես ինքն էլ համակված տխուր հույզերով: Պոեմի տարրեր էջերում մերթ մերթ գծվում է և գերագույն «էակը»: Այնքան աննշան տեղ են գրավում գեղարվեստական ընդհանուր կառուցվածքի մեջ ակնարկված տողերը, որ ավելի հաճախ մնում են աննշմարելի: Պոեմն այնքան հազեցված է հումանիտար բարձր հայեցողությամբ և այնքան մեծ թափով է կերտված, որ հմայում է բնթերցողին սկզբից մինչև վերջ: Շատ ուժեղ է գեղարվեստական մեծ թափով գրված նախերգանքը, որի թարգմանությունը կատարել է հայ ժողովրդի մեծագույն պոետ Հովհաննես Թումանյանը:

Չնայած մելամաղձոտ վերջաբանին, «Հայավաթի երգը» շրջագծված է կենսուրախ գարնանային հովերով:

Ով սիրում է բնությունը
Ու մարդերում լույսն արևի
Սիրում ստվերն անտառների,
Սիրում հովը տերևներում,
Եվ անձրևը, և փոթորիկ,
Եվ սահանքը մեծ գետերի,
Եվ կայծակը սարերի մեջ,
Քավուտներում սոճիների,
Նա կլսի ևս զրույցը,
Չքնաղ երգը Հայավաթի:
(Թարգմ.՝ Հովհ. Թումանյանի)

Հնդկական հովիտներն ու մարգագետինները, «երգով» լի բնությունը, թռչունները, արծիվն ու բիզոնները, կյանքն ու արևը կազմում են անհրաժեշտ գեղարվեստական մի ֆոն: Իզուր չէ ինքը՝ մեծ բանաստեղծը շեշտում, որ Հայավաթի «խաղաղ» երգը ժողովրդական լեզենդների ու բալլադների նման — հետու կանչող ձայների նման «երգ-պատմություն» է — սիրելի՛ բնությունն ու մարդկայնությունը սիրողների համար:

Գեղեցիկ կյանքի և ժողովուրդների բարօրության երգն է երգում Հայավաթը:

Ընդգծվում է պոեմում, որ աշխատանքը շաղկապված է տոկուն պայքարի հետ: Հերոսը զրուցում է բոլոր ցեղերի, բոլոր ժողովուրդների երջանկության մասին: Միաժամանակ նա անողոք է շար ուժերի հանդեպ — կռվում է օձերի դեմ, հաղթում է «շար կախարդին»:

Գեղարվեստական շրջանակն ու երաժշտական ուժը կարծես ավելի ցայտուն կերպով են ընդգծում միմյանց կոտորող ցեղերի վայրագ տրագիդիաների դեմ ուղղված հումանիտար պատգամների էությունն ու ուժը:

Առանձին դրվագները թուցիկ նովելների նման շաղկապված պոեմի ընդհանուր հյուսվածքի հետ, հեքիաթային վիպական բնույթ են կրում: Այդպես է անշափ հմայիչ ֆրագմենտը — տգեղ և ծեր Յագու-որսորդի մասին:

Մեծ սիրտ ունեցող Օսենուի դեմքն էլ հազվագյուտ մի քանդակ է, որ կամայից հիշեցնում է ուս ժողովրդական հեքիաթների նման հերոսներին:

«Հայավաթի երգը» անհատի ստեղծագործություն է: Բայց այդ անհատը ներհուն գրող է և տաղանդավոր բանաստեղծ: Ահա ինչու նա կարողանում է հասկանալ հնդկ ժողովրդի սրտին ու հոգուն մոտիկ երգերի իրական տոնը:

Ընտրելով «Կալեվալայի» ուժը, Լոնգֆելլոն գտնում է հնդկական լեզենդի ողուն հարազատ շափն ու ուժը:

Իհարկե այդ պոեմը «հին արվեստի» հուշարձան է — կլասիկական արվեստի հուշարձանների նման կենդանի և մնայուն մի վավերագիր: Կենդանի է նա անգամ այսօր — հատկապես մեր օրերին:

Չի կարելի մոռանալ այն, որ եվրոպական և ամերիկյան գրականության մեջ քիչ չի եղել հնդկիկներին միակողմանի և աղճատված գույներով նկարագրող վիպագիրների թիվը: Մայն Բիդի և Գուստավ էմարի սպիտակամորթ հերոսների համար հնդկիկները հաճախ վայրագ և արյունարբու դեմքեր են — անխուսափելի դեգրադացիայի դատապարտված կիսազազաններ: «Վայրենի» այդ ցեղերին կրթողների-դատախարակողների դերում գրեթե միշտ հանդես են գալիս հրացանակիր որսորդները, իսկ «վայրենի» հնդկիկներից կոմպլիմենտներ էին շահում միայն սպիտակամորթներին կուրորեն հպատակվող և սպասավորող առանձին հնդկիկները:

Այսպես է եղել «Գաղութային վեպերի» հեղինակների տրագիցիան — իրականում ռասիստական հնօրյա տրագիցիաների հետ կապված մոտեցումը:

Ամերիկյան ժողովրդի լավագույն ներկայացուցիչները միշտ կռվի են ելել միջնադարյան բոլոր այդ տրագիցիաների դեմ: Բավական է միայն հիշել այստեղ Մարկ Տվենի հայտնի վեպերը, որոնք վաղուց արդեն համաշխարհային գրականության ոսկե ֆոնդի մեջ բռնում են պատվավոր տեղ:

Լոնգֆելլոն իր սքանչելի գեղարվեստական պոեմում կարողացել է արծարծել ամերիկյան դեմոկրատիայի հումանիստական հայեցողությունը: Այսօր առանձին ուժով են հնչում ցեղերի պայքարի, հակամարտության և պատերազմների դեմ ուղղված պատգամները:

Պոեմի սյուժեն, հերոսների դեմքերը, առանձին ֆրագմենտները կերտված են հնդկ ժողովրդի երգերի և լեզենդների ազդեցության ներքո: Մեծագույն աշխատանքը և դործը, սակայն ձեռնարկել-կատարել է ինքը՝ Լոնգֆելլոն:

Եղբ՛ւ է արդյոք հեռու անցյալում իրական Հայավաթ — այդ մասին կարող են վիճել ամերիկյան ազգագրագետները: Ժամանակին ձեռնարկված գիտական պրպտումներն ակնարկում են, որ անցյալում, Հյուսիսային Ամերիկայի որոշ վայրերում, հիրավի եղել է հնդկ ժողովրդի ազգային ռեալական հերոս՝ Հայավաթ, որը ցանկացել է վերջ տալ ցեղական պայքարին և ստեղծել հնդկ ժողովրդի միություն: Համենայն դեպս լավ է հայտնի, որ այդ միևնույն Հայավաթի կամ մի որիշ ժողովրդական հերոսի անվան շուրջը հյուսվել են երգեր-լեզենդներ, որոնց ուսումնասիրությամբ զբաղվել է և Լոնգֆելլոն:

Մեզ համար ավելի կարևորն այն է, որ «վերամշակելով» անգամ հին երգերն ու լեզենդները, հմտագին կերպով ինքը՝ Լոնգֆելլոն, իր պոեմը դարձրել է բարձր հումանիստական գաղափարներով հագեցված գեղարվեստական հուշարձան:

Կարևորն այսօր, մանավանդ, այն է, որ մարդատյացության դեմ ուղղված լինելով «Հայավաթի երգը» վեհապանծ ներբող է ձուլում ժողովուրդների բարեկամության վսեմ իդեալին: Լոնգֆելլոյի խոսքն ու քարոզն ուղղված է հեռու սերունդներին էլ, որոնք մեր օրերին հերոսական մեծ պայքար են մղում պատերազմների և կոտորածների վայրագ հեղինակների՝ հիտլերյան ֆաշիստների դեմ: Սովետական Մեծ Միությունն է հումանիզմի ամենահետևողական շահակիրն այսօր և Սովետական Մեծ Միության աշխատավոր-մարտական զանգվածների համար նոր երանգով է հնչում այժմյան օրերին Լոնգֆելլոյի մեծատաղանդ պոեմը:

2. Լոնգֆելլո, «Հայավաթի երգը» հայերեն հրատարակության առաջարանը (անգլերենից թարգմանեց՝ Խ. Գաշտեցը), Հայպետհրատ, Երևան, 1943:

Լավ է հայտնի, որ նույնիսկ շատ հեռու օրերի մի շարք ճանապարհորդներ իրենց «ուղեգրությունները» մեջ հաճախ ոչ միայն նկարագրել են որոշ դեպքեր և իրականության առանձին երևույթներ, այլև շանացել են բացահայտել իրենց մոտեցումը դեպքերին և իրենց սուբյեկտիվ մտորումները: Այդ հնօրյա ճանապարհորդները չեն կարողացել ու չեն ցանկացել մնալ մերկ դեպքերի և փաստերի «սառնասիրտ» արձանագրողների դերում: Այստեղ մենք կարող ենք հիշատակել թեկուզ հենց Օլեարիի, Շարդենի, Գերբերշտեյնի, Կորբի նման ճանապարհորդների հանրահայտ «ուղեգրությունները»:

Հետագա նոր օրերի գործիչներից կարող են մեր ուշադրությունը գրավել Թեոֆիլ Գոտիյեն, Վերնոն Լին, Մուրատովը և շատ ուրիշ արվեստագետներ ու գրագետներ: Յուրաքանչյուր գործիչ իր դիրքերից է մոտեցել կյանքի էջերի վերարտադրությանը: Գաղտնիք չէ նաև այն, որ հիշատակված վաղեմի գործիչները գրեթե միշտ նկարագրական էջերին կցել են իրենց առանձին գիտությունները և ավելի հաճախ՝ սուբյեկտիվ մտորումները: Չնայած այդ հանգամանքին, հիշյալ «մեմուարային» ակնարկները չեն կորցրել իրենց արժեքն ու նշանակությունը:

Հիշատակված բոլոր ակնարկներ-մեմուարաները իրենց հատուկ տեղն են գրավել աշխարհագրական, գեղարվեստական, մեմուարային գրականության մեջ: Ընթերցողների համար համեմատյալապես պարզ են եղել նման գրական վավերագրերի շատ ուրույն հատկանիշները: Նկարագծելով զանազան երկրներ և տարբեր ժողովուրդների կյանքը, ցայտուն դեպքեր կամ հուշարձաններ, նման երկերի հեղինակները, ինչպես նշվեց քիչ առաջ, չեն սքողել իրենց սեփական դեմքը և չեն ծածկել իրենց մտորումները: Առանձին դեպքերում որոշ գործիչների մտահայեցությունը հանդուրժելի չի եղել որոշ ընթերցողների համար: Եղել են ընթերցողներ, որոնք բացասաբար կամ քննադատորեն են մոտեցել անգամ տաղանդավոր երկերի հեղինակների մտահայեցությանը: Սակայն, այնուհանդերձ, նույն այդ ընթերցողներն անընդունելի խոհեր առաջադրող գործիչների աշխատությունները թերթել են մեծ ուշադրությամբ: Այդ ընթերցողը դեն է նետել միայն միանգամայն անորակ երկերը կամ էլ անարյուն ու գերազանցորեն ցամաք փաստագրական, արձանագրությունների նման կերտված տաղտուկ ուղեգրությունները: Մենք չենք սխալվի, եթե նշենք, որ ընթերցողների համար հաճախ նման տիպի վավերագրերը եղել են «էպիստոլյար» գրականության հատկանիշներ ունեցող շատ ուրույն վավերագրեր:

Մանրապատում նկարագրությունների պրոֆիլ ունեցող ակնարկներ չեն, իհարկե, պրոֆ. Հ. Համբարձումյանի հակիրճ ուղեգրական նոթերը: Ինքը հեղինակն էլ հավանություն չունի իր թուղթիկ ակնարկների փոքրիկ ժողովա-

ծուն համարել «հետազոտություն» կամ թե հանրահայտ ուղեգիրների, հուշամատյանների նման կերտված ժողովածու: Այնուամենայնիվ, պրոֆ. Համբարձումյանի գիրքը շատ ուշագրավ աշխատություն է, թուղթիկ հուշերի և մտորումների անշափ հակիրճ մի ամփոփում՝ գրված աշխույժ և կենդանի ոճով: Մեզ համար հետաքրքրական են անգամ ընդհանուր գծերով նկարված վայրերն ու քաղաքները, տուրիստի մտորումները, զանազան հուշարձանների նկարագրությունը նվիրված էջերը: Ավելին կարող ենք ասել: Շնորհիվ ամբողջ ժողովածուի յուրահատուկ հյուսվածքի՝ ընթերցողի ուշադրությունը գրավում է նաև ինքը՝ այդ ալեհեր և միաժամանակ առույգ ու «երիտասարդ» հեղինակը, ալեհեր տուրիստի սուբյեկտիվ մոտեցումը պայծառ էլլադայի մշակույթին. հեղինակի խոհերն ու հուշերը և, վերջապես, ինտիմ մտորումներով շրջապծոված նկարագրական էջերի կուրբիտը:

Շեշտենք այստեղ նաև այն, որ պրոֆ. Համբարձումյանը ժամանակին մոտիկ կապեր է ունեցել հայ առաջավոր մտավորականության անվանի շատ ներկայացուցիչների հետ: Բավական է այստեղ հիշատակել Հովհ. Հովհաննիսյանից հետո հանձարեղ Հովհ. Թումանյանի, Գ. Գեմիլճյանի, Ա. Սատուրյանի, Կ. Կուսիկյանի, Ա. Իսահակյանի, Վահան Տերյանի, Հ. Սպենդիարյանի, Պ. Մակինցյանի, Քալանթարյանների և շատ ու շատ անվանի գործիչների անունները:

Տակավին նախահեղափոխական տարիներին հայ մամուլի էջերում դրվատանքի խոսքերի է արժանանում Հ. Համբարձումյանի «Գարբին» բանաստեղծությունը (1904): Մ. Գորկու առաջին թարգմանիչներից մեկն է եղել նա: Գորկու հանրահայտ «Մրկահավի» թարգմանությունը, ինչպես նաև համաշխարհային հումանիստական պոեզիայի մի շարք տաղանդավոր ներկայացուցիչների՝ Բայրոն, Գյոթե, Հայնե, Լեմոնտով, Շելլի, Օմար Խայամ և այլոց ներհուն երկերը հին օրերին նա թարգմանել է էնտուզիաստ-պատանուն հատուկ եռանդով:

Հ. Համբարձումյանը վաղեմի Պետրոպոլիսի համալսարանում լսել է առաջադեմ ուսու պրոֆեսորների դասախոսությունները: Հանդիպումներ և զրույցներ է ունեցել Վալերի Բրյուսովի հետ, լսել է հնօրյա հայ հումանիստ-մտածող Հովհաննես Երզնկացու մուսին: Իր կյանքի ընթացքում նա անցել ու հաղթահարել է բազմաթիվ պատենշներ և խոշոր դժվարություններ: Նշենք նաև այն, որ Հ. Համբարձումյանը իր ուրույն տեղն է գրավում հունական դասական մշակույթի հայ էնտուզիաստ-երկրպագուների շրջանում: Ժամանակին նա գիտությունների ակադեմիայի կոնֆերենց դահլիճում ուշագրավ ձևով հիմնավորել է իր յուրահատուկ մոտեցումը Մխիթարյան միաբանության ներկայացուցիչների՝ նախաձեռնությամբ ձեռնարկված զրաբար թարգմանությունների լեզվի-ոճի ընդհանուր կուրբիտի մեջ հնչող կրոնական-վերամբարձ գաղափարախո-

սուբյան արձագանքներին: Բացահայտելով իր քննադատական մտտեցումը անգամ ականավոր Մխիթարյան հունագետների գրաբար թարգմանություններին, նա ծերության օրերին պատրաստել է շատ արժեքավոր թարգմանություններ, որոնք գրավել են մեր ընթերցասեր հասարակության առանձին ուշադրությունը: Գիտնականին և մտածողին հատուկ դիտակետից մտենալով հին հունարենի նրբին երանգներին, նա կարողացել է ցուցահանել «Իլիականի» հյուսվածքի ամրակուռությունը, ոճի հանդիսավորությունը, պատկերների հողնդեն-հյուսվածքը և այլն... Թարգմանության մեջ նշմարվում է էրուդիտ և մշտ մտածող թարգմանչի գեմբը...

Ահա այդ ամենը ուրույն տոն են հաղորդում Հ. Համբարձումյանի ուղեգրական ակնարկներին, որոնք շատ սեղմ լինելով հանդերձ, կրում են մերթ թուրցիկ մտորումների, մերթ վիճելի հրապարակախոսական կամ նույնիսկ տարակուսանքներ առաջացնող դիտողությունների բնույթ:

Հ. Համբարձումյանն իր ճանապարհորդության ընթացքում շրջագայել է Հոլանդիայում և Հունաստանում, դիտել շրջապատը և ուսումնասիրել եվրոպական քաղաքների մթնոլորտը, մեծագույն ուշադրությամբ քննել է մյուզեոնների մեջ կուտակված հուշարձանները: Անշափ մեծ սիրով նկարագրել է մանավանդ Հունաստանի կլասիկ ճարտարապետության հուշարձանները: Նրա «Ճանապարհորդական մտորումները» գրեթե միշտ ուժեղ սուբյեկտիվ ինտոնացիա ունեն, իսկ առանձին էջեր այնպես են կառուցված, որ կարող են շատ ուրույն մտորումներ և անգամ կտրուկ քննական նկատողություններ առաջացնել: Այդպես են մասնավորապես հուլանդական մայրաքաղաքի թուրցիկ նկարագրությունները, վաղեմի հոլանդահայ գաղթավայրի, երկու հանճարեղ համաշխարհային հսկաների— Բեմբրանդտի և Սպինոզայի մասին արված թե՛ հարեանցի դիտողությունները և թե՛ մերթ սեղմ ակնարկներն ու ուրույն դիտվածքները, մերթ սուբյեկտիվ տողերի իմաստն ու ինտոնացիան:

Այնուամենայնիվ նշված արտասովոր հյուսվածքը Հ. Համբարձումյանի ակնարկներին-մտորումներին հաղորդում է առույգ կոլորիտ և կենդանություն: Ակնարկները ընթերցվում են որպես շատ աշխույժ պատմվածքների պատկերավոր էջեր:

Հոլանդական քաղաքը գծագրված է շատ հակիրճ, բայց և այնպես նկարագրության ուրույն երանգները մնում են ընթերցողի հիշողության մեջ: Հեղինակի զրույցը ավտոմեքենայի ղեկավարի հետ, հանդիպումը մայրաքաղաքում հաստատված գերմանուհու հետ, թուրցիկ ակնարկները վաղեմի հոլանդահայերի, մանավանդ Գյուրերի և Վան-Ջիխեմի գրավյուրները վերաբարձրող հայ տպագրիչ Ոսկանի, ինչպես նաև օպտիկայով «զբաղվող» հանճարեղ իմաստասեր Սպինոզայի մասին ուշագրավ երանգներ են մտցնում ուղեգրական նկարագրության մեջ: Հ. Համբարձումյանը կանգ է առնում նաև շատ հին

օրերի Բույուզգեի տաճարի մոտ տարածված շուկայի հայ գորգավաճառների, ինչպես նաև Գիրլանդայոյի կամ Հուրեյնի նկարների այն դետալների վրա, որոնք ժամանակին հիշատակվել են արևմտահայ մեծատաղանդ արևելագետ Արմենակ Սաղզյանի իմաստալից ակնարկի մեջ: Այդ ամենի մասին Հ. Համբարձումյանը գուցե և դիտավորությամբ նետել է անշափ սեղմ դիտողություններ:

Այդպես են գրված նաև ուղեգրական նոթերի այն էջերը, որոնք նվիրված են վաղեմի կլասիկական հունական հուշարձանների նկարագրությանը: Այստեղ լավ են առանձնապես այն էջերը, որոնք պատմում են Ակրոպոլի և Պարթենոնի, անտիկ էլլադայի դյութական և խորհրդավոր ավերակների ներհուն զեղեցկության մասին: Հ. Համբարձումյանը ջանացել է հանդես գալ հաճախ սուսկ զեղազետ «տուրիստի» և «պոլիտիկայից» խուսափող անցորդ գործչի դերում: Սակայն, այնուհանդերձ, նա չի կարողանում սթոդել իր հոգու և սրտի ամենախորունկ արահետներում պահված դայրույթը ընդգեմ կլասիկական էլլադայի իմաստալից մշակույթի արժեքները քանդող սև գործիչների: Նա համակված զսպված դայրույթով հաղորդում է, որ Պավլանիի նվիրական էլլադայի հուշարձանների բեկորներով լեցուն են եվրոպական մյուզեոնները: Կանգ առնելով ըմբոստ իմաստասեր-բանաստեղծ Բայրոնի վրա, հեղինակը հիշատակում է մեծ պոետի ցասումնալից դիտողությունները՝ ուղղված Պարթենոնի և Ակրոպոլի հուշարձանները քանդող լորդ էլլինին: Տեղին են Հունաստանի արվեստի հուշարձաններին նվիրված էջերում նաև Երեխտեյոնի մասին արված դիտողությունները և ապա հունական ավանդություններից քաղված առանձին ֆրագմենտներ... Կլասիկական հույն անցյալի էնտուզիաստ-երկրպագուն նշմարվում է նման նկարագրական հատվածներում: Հունաստանին նվիրված ամբողջ մասն այդ պատճառով դառնում է նշանակալից և տրադիցիոն ուղեգրական ակնարկներից տարբերվող ինքնատիպ աշխատություն:

Հ. Համբարձումյանը թելադրում է իր գրքի ընթերցողներին ծանրանալ ամենից առաջ մշակույթի բարձր արժեքների քննարկման վրա: Նրա ճանապարհորդության հիմնական նպատակը բացահայտված է ուղեգրական ակնարկներում շատ որոշակի կերպով: Ծերության օրերին, նետվելով Աթենք և Հունաստան, նա ներքող է ձոնում դեմոկրատական Աթենքի բարձր մշակույթին և հունական կլասիկ արվեստի գովքն էլ դարձնում է հումանիստական մշակույթի յուրահատուկ հիմնավորում: Գրքի վերջին մասում առանձին բավականություն է արձանագրում Հ. Համբարձումյանը, որ Հունաստանում հաստատված իր գաղթական հայրենակիցների մեծամասնությունը կանգնած է Սովետական Միության և Սովետական Հայաստանի ժողովուրդների բարեկամության և խաղաղության պաշտպանի դիրքերում...

Հ. Ա. Համբարձումյան, «Ճանապարհորդական մտորումներ» գրքի առաջաբանը, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1963:

Մաքսիմ Գորկու ոչ միայն հրապարակախոսական, այլև գրական-քննադատական հոգվածները մարտական բնույթ ունեն։ Այդ հոգվածները ուղղված են երկրագնդի բռնակալների և պարագիտների— նեխված կապիտալիզմի-ամենավայրագ ներկայացուցիչների՝ ֆաշիստների դեմ։

Կովի ելնելով մարդակեր-ֆաշիստների դեմ՝ Գորկին զրոզներին կոչ էր անում պրիչն էլ դարձնել միջնադարյան վանդալիզմի նորագույն մունետիկների դեմ ուղղված անողոր սուր։ Այդ աննկուն պայքարը մեծ գրողը մղել է՝ հավատարիմ մնալով ռուս առաջավոր գրականության բարձր գաղափարական ավանդներին։

1

Ռուս կլասիկական գրականության ամենահմայիչ հատկություններից մեկն է և հումանիզմը, որ մինչև այսօր, այդ կարելի է ասել, թիչ է լուսաբանված նույնիսկ շատ հորուստ գրականագիտական-քննադատական գրականության մեջ։

Հայտնի է, որ առանձնապես վաթսուհակաթյան թվականներից այդ հումանիզմը դառնում է ավելի բացահայտ և որոշակի մի հատկանիշ։ Տոլստոյի, Նեկրասովի, Սալտիկով-Շչեդրինի, առաջավոր պոետների ու վիպագիրների ամենահիմնական գիծը հումանիզմի գաղափարախոսությունն է։ Շատ խոշոր դեր է կատարում այդ ուղղությանը հայտնի «Սովրեմեննիկ» հանդեսը։ Դա 60-ական թվականների մարտական-դեմոկրատական մտավորականության պարբերագիրն էր։ Այդ հանդեսի աշխատակիցներն քարկոծում էին բռնակալությունը, բոլոր պարագիտներին և շահագործողներին։ Իր հայտնի պատմագրական ակնարկների մեջ Չերնիշևսկին մերկացնում է գերման շովինիստների, պատմաբանների ռեակցիոն էությունը և ամենակտրուկ կերպով խարազանում է հին օրերի «ուսիստների» ռեակցիոն թեորիական մարգանքները։ Նոր ուղղություն և թափ է ստանում հանուն հումանիզմի պրոպագանդը փննանական թվականներին, երբ բանվորական շարժումների ազդեցության ներքո սկսվում է հասարակական նոր վերելքը։ Բանվորական հեղափոխական շարժումները հսկայական ազդեցություն են թողնում առանձնապես ուսանողության վրա։ Սկսվում է հասարակական-մտավոր ինտենսիվ խմորում։ Առաջ են գալիս կուլտուրայի նոր ներկայացուցիչներ։ Գրողներն էլ նոր տոն են հաղորդում իրենց երկասիրություններին։ Կասկածից զուրս է, որ բանվոր դասակարգի ուսմունքը և, մանավանդ, ինտերնացիոնալիստական պատգամները պետք է նկատելի ազդեցություն թողնեն նաև ռուս գիտության առաջավոր ներկայացուցիչների վրա։ Փաստերը ցույց են տալիս, որ ռուս գիտու-

թյունը հիրավի մեծ դեր է կատարել հատկապես 90-ական թվականներից հետո ռուսական համալսարանական քաղաքներում։ Ռուսական գիտության առաջավոր ներկայացուցիչները մեծ թափ են հաղորդել հումանիզմի պատգամներով հագեցված գիտության վերելքին ճիշտ այն օրերին, երբ արևմտյան երկրներում աչքի էին ընկնում գիտական մտքի անկման նշանները։

Գաղտնիք չէ այն էլ, որ եվրոպայում՝ նույնիսկ առաջավոր երկրներում 90-ական թվականներին իշխում էին իդեալիստական-քնազանցական «թեորիաների» հետևողները։ Մառանալով դեմոկրատական շարժումների դեմ, ֆրանսիական արխիտոկրատ Գոթինոն ստեղծում է իր ռեակցիոն ուսմունքը «արիական» ցեղերի «գերազանցության» մասին։ Գերմանիայում Նիցշեի և այդ իմաստասերի հետևողների կողմից առաջադրվում է ինդիվիդուալիստական իմաստասիրությունը «գերմարդու» մասին։ Ռեակցիոն գործիչների ջանքերով կերտվում են բազմազան «թեորիաներ» միշտ առաջադեմ «սպիտակամորթ» և ապա միշտ «հետադեմ» — անխուսափելի դեգրադացիայի դատապարտված «սեամորթ» ցեղերի մասին։ Գիտությունը օգնության է կանչվում ամենառեակցիոն դրույթների պաշտպանության ու հիմնավորման համար։ Ա.Բեի, Գարոֆալոյի, Գոթինոյի, Լամբերտոյի և մի շարք ուրիշ գիտունների ռեակցիոն «թեորիաները» կառուցվում էին սոցիալական անհավասարության արգարացման համար՝ ճիշտ այն ժամանակ, երբ իսկական գիտության ներկայացուցիչները ջախջախիչ հարվածներ էին հասցնում ռեակցիոն գիտության և և ասպետներին։

Նույնիսկ մարքսիզմի անհաշտ թշնամիներից շատերը՝ տակավին էկլեկտիկ սոցիոլոգիայի դիրքերի վրա կանգնած բուրժուական գիտնականները, դատափետում են ռասայական տեսության արմատները։ Ռուսիայում, առանձնապես մի շարք տաղանդավոր գիտնականներ, զբաղված էին նույնիսկ մարքսիզմից հեռու կանգնած քրեագետներ, բիոլոգներ, պատմաբաններ մահացու հարվածներ են հասցնում ռասիստներին։ Շատ շափավոր լիբերալ հայացքներով տոգորված պատմաբան էր Մաքսիմ Կովալևսկին։ Չնայած այդ հանդամանքին անգամ այդ գիտնական-պատմաբանը հրատարակում է հատուկ հետազոտություն և վճռականորեն դատափետում է ռասիստների դրույթները։ Իդեալիստական-քնազանցական ռեակցիոն գիտության դեմ կովի են ելնում համաշխարհային գիտության առաջավոր ռուս գործիչներ — Մենդելևը, Սեչենևը, Տիմիրյազևը, Պավլովը...

Ռասիստները նորից արթնանում են և ցուցադրում մեծ ակտիվություն իմպերիալիստական առաջին պատերազմի օրերին։ Միևնույն այդ ռասիստների հետևողների դերում վաղուց դատապարտված ու ջախջախված ցնդարանական ռասիստական դրույթների պաշտպանությանը հանդես են գալիս ֆաշիզմի գաղափարախոսները։ Այս անգամ այդ ֆաշիստ-ռասիստները ավելի բա-

ցահայտ կերպով են դրսևորում իրենց «տեսությունների» կապը պատերազմների հրձիգների ուղիներում «իմաստասիրության» հետ:

Երկրագնդի բոլոր վայրերում ժողովրդական հոծ մասսաներին իմպերիալիստական պատերազմի ծանր հետևանքները լավ էին հայտնի: Երբ բռնկվում է Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը՝ ոտքի են ելնում արևելյան բազմամիլիոն ժողովուրդները: Երկրագնդի բոլոր վայրերում սկսվում է բանվորական և ազգային-ազատագրական շարժումների նոր վերելք: Սրվում են իմպերիալիստական պետությունների ներհակությունները: Հայտնի են լենինյան մարզարեական խոսքերն այն մասին, որ երկրագնդի բոլոր վայրերը բռնազրավելուց հետո, իմպերիալիստները պետք է նետվեն միմյանց դեմ...

...Երբ Աֆրիկայի ինը տասներորդը նվաճվեց արդեն (1900 թ. մոտերքը), և բանից դուրս եկավ, որ ամբողջ աշխարհը բաժանված է, անխուսափելիորեն վրա հասավ գաղութներին մոնոպոլ կերպով տիրելու դարաշրջանը, հետևաբար և աշխարհը բաժանելու և վերաբաժանելու համար մղվող հատկապես սուր պայքարի դարաշրջանը, — ասում էր լենինը տակավին պատերազմի նախօրինի:

Հնօրյա ուսիստների վաղուց ջախջախված ցնդաբանական դրույթների վրա խարսխված ֆաշիզմը իր կազմավորման հենց առաջին օրերից հանդես է գալիս նոր պատերազմի պաշտպանության քարոզով: Գերմանական ֆաշիստները հայտարարում են, որ միմիայն «բնատրյալ» փոքրամասնությունը կարող է տնօրինել մարդկության ապագան: Գերման ազգը ֆաշիստ գրչակների մատի մի շարժումով դառնում է «առաջին կարգի» արիական ցեղ: Գերման ֆաշիստները հայտարարում են, որ իրենք նպատակ են դնում ստեղծել արտոնյալ պայմաններ «արեացի» գերմանացիների համար, այն գերմանացիների, որոնք պետք է իշխեն երկրագնդի բոլոր վայրերում: Հիտլերը հիշեցնում է, որ «խակական արիացիներ» կարող են համարվել միմիայն «զտարյուն գերմանացիները»: Այդ գերմանացիներին պետք է հպատակվեն, ըստ ֆաշիստների, Գերմանիայի բնակչության գերազանց մեծամասնությունը — գերմանական բանվորները և գյուղացիները, ազգային բոլոր փոքրամասնությունները: Գերմանական ժողովրդի բախտը տնօրինողներ պետք է դառնային խոշոր հողատերերն ու կապիտալիստները: Ստեղծելով նոր ֆաշիստական «գիտություն», ֆաշիստները հրաժարվում են անզամ վաղեմի բուրժուական գիտության պրոգրեսիվ ավանդներից: Հրատարակվում են նոր բիոլոգիական, պատմագիտական, սոցիոլոգիական հետազոտություններ: Դիմելով ամենախորամանկ մանիպուլյացիաների, գերմանական ֆաշիստները աշխատում են ապացուցել, որ գերմանական յունկերներին, բանկիրներին, խոշոր կապիտալիստների դավալները իբր թե գերմանական ժողովրդի առաջավոր տարրերն են — միակ առողջ ու կենսունակ այն տարրերը, որոնք պատերազմների միջոցով պետք է զարկ

տան պատմության արշավին: Այնքան արտաոռց են լինում ամբարտավան և ցնդաբանական այդ հայտարարությունները, որ զայրույթ են ստեղծում գերմանական ժողովրդի առաջավոր ներկայացուցիչների շարքերում: Մի շարք բուրժուական դեմոկրատներ հանդես են գալիս ընդդեմ ֆաշիզմի: Առաջավոր այդ գործիչները հիշեցնում են, որ կալվածատերերի ու կապիտալիստների «զտարյուն արիական» խմբակը հիմնովին այլասերված ու նեխված է: Գրանք հիշեցնում են ֆաշիստներին, որ ժամանակին մերկացրել ու դատափետել են գերման յունկերներին և կապիտալիստներին, նույնիսկ, անցյալի շափավոր գործիչները: Հիշատակվում են առանձնապես բուրժուական հայտնի երգիծաբանական «Միմպրիցիսսիմուս» հնօրյա հանդեսի նկարիչների սուր ելույթները բնագրեմ գերմանական ժողովրդին շահագործող ֆեոդալների ու կապիտալիստների: Առանձին պրոգրեսիվ գործիչների կողմից արձանագրվում են նաև հանրահայտ փաստեր՝ Հիտլերի ու գերման ֆաշիստների զեզեններատ այդ «զաղափարախոսի» արբանյակների պաթոլոգիական հատկությունները:

Այդ ամենը սակայն չէր կարող նկատելի կերպով թուլացնել ֆաշիստներին, իմպերիալիստական Գերմանիայում պետական ապարատը, մամուլը, զորաբանակը գտնվում էր ֆաշիստների ձեռքին: Բռնությունների, բանտի, կախաղանի միջոցով դրանք կոտորում, խեղդում, սպանում էին իրենց հակառակորդներին ու թշնամիներին: Օգնության է կանչվում նորից հին Շլիֆ-ֆենը: Թնդանոթի միս է դառնում գերմանական ժողովուրդը, իսկ մարզակեր վանդալներն էլ հիմարացած շինականներին բռնում են սպանդանոց: Իր մոռյլ վայրագ ու մարդակեր զինակիցների հետ միասին Հիտլերը դառնում է գերմանական ժողովրդի մեծագույն դահիճը: Խելագար մասիակի նման նա այրում է գերմանական մեծ մտածողների գրքերը, բանտ է նետում ըմբոստներին, վտարում է երկրից դժգոհներին, կոնցենտրացիոն ճամբարներում մահանում են հազարավոր բանվորներ և աշխատավորներ: Ստեղծվում են միջնադարյան վանդալների անօրինակ բռնակալության դաժան օրերը: Այդպիսի պայմաններում անխուսափելիորեն պետք է բռնկվեն ժողովրդական ապստամբություններ և շարժումներ: Նոր պատերազմը պետք է դառնար փրկության ուղի — պետք է կոտորածի մատներ աշխատավորներին, թուլացնել գալիք ապստամբության բազան, զսպեր բողոքողներին: Պատերազմը ֆաշիստների համոզմամբ պետք է նաև քանդեր համայն երկրագնդի դեմոկրատիայի ամուր միջնաբերդը — Սովետական Միությունը:

Ահա վանդալական և վայրագ այդ «իմաստասիրությունն» էլ առաջադրելով գերմանական ֆաշիստները արյան դաշտն են նետում կուրացած և հիմարացած ժողովուրդներին: Հրաժարվելով գերմանական ժողովրդի լավագույն ներկայացուցիչների՝ Գյոթեի, Շիլլերի, Հայնեի լուսավոր ուղիներից, ֆաշիստներին սպասավորող ռեակցիոն «գիտունները» մահվան գերանդին ուսերին՝ պատերազմի և կոտորածների նոր «մարզարեններ» են դառնում:

Ահա այդ «մարգարենների» հայացքների վրա էլ կանգ է առնում Մաքսիմ Գորկին—Ֆաշիզմի դեմ ուղղված իր հրապարակախոսական հողվածներում: Նա ժամանակակից մարդակերների դեմ կովի է ելնում՝ զինված լենինի մարտական զենքերով և ժողովրդական զանգվածներին կոչ է անում համախմբվել բոլշևիկյան կուսակցության շուրջը: Նա գրում է հրաշունչ հողվածներ և ակտիվորեն աջակցում է պատերազմի հրձիգների դեմ ուղղված բոլոր շարժումներին: Գրչի մեծ վարպետ Գորկին հաճախ դիմում է գրչի բոլոր աշխատավորներին և առաջարկում է մեծ թափ հաղորդել հեղափոխական խոսքի ծավալմանը:

«Զկա և չի կարող լինել ոչ մի կուլտուրա պրոֆեսիոնալ մարգասպանների տիրակալության վայրերում», ասում է Գորկին: Առաջավոր կուլտուրայի վարպետները պարտավոր են որոշակի խոսք ասել, պարտավոր են ծառանալ կոտորածների ու ջարդերի բոլոր հեղինակների դեմ:

Ապա շեշտելով, որ պատերազմներ կազմակերպողներին անհրաժեշտ է հակահարված տալ ժողովուրդների միության կազմակերպման միջոցով, Գորկին դիմելով կուլտուրայի վարպետներին գրում է՝ «Ո՞ւմ հետ պետք է դեպի ապագան գնան կուլտուրայի վարպետները. մի՞թե այն մարդկանց հետ, որոնք շահագործում են նրանց ստեղծագործ եռանդը, արդեն հղիացել են դրանով, ճոխարար շրջապատված են նյութական կուլտուրայի առարկաներով, վաղուց արդեն կուլտուրայի դարգացման կարիք չունեն և նույնիսկ սկսում են սահմանափակել կուլտուրայի աճումը, թե՛ պետք է գնան նոր դասակարգի հետ, որին պատմությունը առաջին տեղն է մղում, և որը 163 միլիոն տնտեսություն ունեցող երկրում իշխանությունն արդեն իր ձեռքն է վերցրել...»:

Այդ կտրուկ հարցին անհրաժեշտ էր տալ որոշակի պատասխան, և այդ պատասխանը պիտի տային բոլշևիկյան ուղեգծի հակառակորդները: Սովետական Միության թշնամիները պատասխանի փոխարեն նորից մոլեզնորեն հարձակվում են բոլշևիկներին ձայնակցող ու «ծախված» գրողի վրա: Տատանվող և թուլամորթ գրողները հայտարարում են, որ անհրաժեշտ է «օբյեկտիվ» կերպով ուսումնասիրել սոցիալական մեծ «էքսպերիմենտի» բոլոր հետևանքները: Բնորոշ է այն, որ Գորկու կոչին ոգևորությամբ արձագանքում են միայն ժողովրդի հետ կապված խիզախ գործիչները: Այսօր համենայն դեպս մենք կարող ենք ասել, որ Գորկու ելույթների շնորհիվ ստեղծված ազմունկն ու իրարանցումը ուժեղացրել է արտասահմանյան ինտելիգենցիայի շերտավորման պրոցեսը և մեծապես օժանդակել է հակաֆաշիստական շարժումներին: Խոշորագույն զարկ են տվել այդ պրոցեսին բանվորական շարժումը, պատերազմի բազմաթիվ զոհերի՝ հաշմանդամների ելույթները, ազգային-ազատագրական ապստամբությունները:

Կապիտալիստական դեղին մամուլի ներկայացուցիչները Հոկտեմբերյան մեծ հեղափոխության արդեն առաջին օրերից աշխատում են ազավաղված զույներով նկարագրել սովետական իրականությունը: Ստեղծվում են բազմաթիվ հեքիաթներ և ստահող հերյուրանքներ իբր թե կուլտուրան քանդող «բարբարոս» բոլշևիկների մասին: Բուրժուական համայն մամուլը հարձակվում է բոլշևիկների վրա: Ինտերվենտների արշավանքներին օժանդակում են զրոգների ռեակցիոն խմբակները: Չնայած այդ ամենին, իսկական ճշմարտությունը ի վերջո այս կամ այն ուղիներով հասնում է անգամ դրեզնոտի արքաների դիկտատուրային ենթակա երկրների ժողովրդական զանգվածներին:

Հակառակ բոլշևիզմի բազմաթիվ թշնամիների միահամուռ ջանքերին՝ սկսվում է ամենուրեք մեծագույն բեկում: Թերահավատների և անուղղելի սկեպտիկների համար էլ պարզվում են անակնկալ ու նորանոր փաստեր Սովետական Միության սահմաններում ծավալված սոցիալիստական շինարարության, ժողովրդի կացության բարվոքման, մասսաների կուլտուրական մեծ վերելքի մասին: Այնքան ցնցող էին այդ փաստերը, որ բոլշևիզմից հեռու կանգնած մտածողներին անգամ թելադրում էին խորհել ու մշակել նոր վարքադիժ: Առաջավոր այդպիսի մտածողների շարքերում առաջիններից մեկն է լինում ֆրանսիական մեծ գրող Անատոլ Ֆրանսը: Երբ եվրոպական թերթերի ներկայացուցիչները նետվում են նավից իջնող Անատոլ Ֆրանսի վրա, նրան միմիայն մի հարց են տալիս՝ «Ո՞վ է Ձեր կարծիքով ներկայումս երկրագնդի մեծագույն մարգը»: Անձրևի տարափից նոր միայն ազատված գրողը շատ հակիրճ մի պատասխան է տալիս՝ «Լենինը. որովհետե կովի է ելել պատերազմի հեղինակների դեմ և իրագործում է ժողովուրդների եղբայրության իդեալը»:

Այդպես է լինում այս անգամ «սկեպտիկ» վիպագրի պատասխանը: Յուրահատուկ այդպիսի մի սկեպտիկ էր Անգլիայում Բերնար Շոուն, որը հայտնի է որպես սրամիտ պարադոքսների երկրպագու: Բերնար Շոուն, սակայն, նույնպես հրաժարվում է «սկեպտիցիզմից» և կոչ է անում կովի ելնել ֆաշիզմի ու մարդակեր վանդալների դեմ: Նման դիրք են բռնում նաև Անդրեյ Բեկետը, Լու Սինը, ապա նաև գրողների, վիպագիրների, պոետների հակայական այն պլեյադան, որ համախմբվում է Մաքսիմ Գորկու շուրջը: Մաքսիմ Գորկին շատ կարճ ժամանակվա ընթացքում դառնում է հումանիզմի և խաղաղության բոլոր ջահակիրների ղեկավարն ու կազմակերպողը: Շատ սերտ կապեր է հաստատում նա համաշխարհային կուլտուրայի ամենատաղանդավոր և ամենախիզախ ներկայացուցիչների հետ: Նա աննախընթաց թափ է հաղորդում գրողների հակաֆաշիստական մեծ շարժմանը:

Մերկացնելով ֆաշիստներին և դատափետելով նոր պատերազմների հրձիգներին, Գորկին միշտ հիշեցնում էր Սովետական Միության սահմանները:

րում կատարվող ժողովրդական մեծ վերելքի մասին: Նա միշտ նշում և բնագծում էր, որ մեր մեծ սոցիալիստական հայրենիքի բազմամիլիոն և բազմազգ ժողովուրդների ջանքերով կառուցված նոր քաղաքները, վիթխարի գործարանները, կենարար մեծ ջրանցքները, համալսարաններն ու հիվանդանոցները, առույգ և ամրակուռ կառուցողների ամրակուռ շարքերը պիտի ավելի ցայտուն կերպով մերկացնեն նեխված կապիտալիզմի և փտած ֆաշիզմի հրեշավոր բնույթը: Նեխված կապիտալիզմի սև կուլտուրայի դեմ կազմավորվում էր և արդեն կերտվել էր սոցիալիզմի առաջավոր և լուսավոր նոր կուլտուրան: Գորկին գտնում էր, որ անհրաժեշտ է այդ նոր կուլտուրայի պատկերը ցուցադրել միշտ և ամենուրեք: Նա շատ մեծ նշանակություն էր տալիս այդօրինակ պրոպագանդամանր: Նա գտնում էր, որ նոր փաստերը կարող են ուսանելի լինել նույնիսկ սովետական ընթերցողների համար: Փաստերի հանրագումարը ավելորդ անգամ հիշեցնում էր, որ շատ կարճ ժամանակվա ընթացքում ժողովրդական զանգվածները կարողացել են հաղթահարել մեծագույն դժվարությունները, վերաշինել քանդված մի երկիր, իրականացնել մարդկության լավագույն մտածողների բարձր իդեալները: Հարուստ և պատկերավոր փաստերը պիտի նոր եռանդ ներշնչեն սոցիալիզմի կուլտուրայի շենքը կառուցող մարտիկներին: Փաստերի անդուլ պրոպագանդան, Գորկու համոզմամբ, պիտի սերտորեն շաղկապվեր ֆաշիզմի դեմ ուղղված պայքարին:

«Արդեն 13 տարի է, — գրում է Գորկին 1931 թ., — որ մենք մարտի մեջ ենք ապրում. դա Ձեր մեծ առօրյայի հիասքանչ կոսմոս է անձև մետաղի հետ, որից Դուք ստեղծում եք բանական մեքենաներ, հողի հետ, որին Դուք հարկազրում եք առատ բերք տալ. կոսմոս ընդերքի տակ, որտեղից Դուք ածուխ եք հանում. կոսմոս տրանսպորտում ձմեռային գիշերներին, ձյան բուրբ դեմ. ամենուրեք Դուք մարտեր եք մղում խոսքով ու գործով...»: Այդ խոսքերից հետո Գորկին առաջարկում է ուշադրությամբ դիտել շրջապատի բոլոր երևույթները և ժամանակին արձանագրել տոկոսն աշխատանքի հսկայական հետեվանքները:

...Ձի կարելի անդադար խոսել ու գրել միայն մեր թերությունների մասին: Ինքնաքննադատությունը անհրաժեշտ բան է, բայց այդ ինքնաքննադատությունը երբեք չպիտի լինի ինքնադատափետում և ինքնախարազանում: Հիմնովին վերածնվել է լինվին ավերված ու քանդված մի երկիր, ուր այսօր հիրավի ստեղծվել է հեքիաթային մի վերելք...

Նկարիչներն, — ասում է Գորկին, — պարտավոր են նկարել կենդանի նոր առօրյայի ցայտուն զրվագները: Գրողները պարտավոր են պատմել մեր մեծ Հայրենիքի ամենահեռու և ամենախուլ վայրերի անգամ աննշմարելի հերոսների մասին: Եթե այդ գործը կատարվի հաջող կերպով, արտասահմանյան մեր բարեկամների համար էլ ակներև կդառնա, որ միջնադարյան վանդալ-

ների դեմ ուղղված պայքարը մեզ մոտ ունի շատ ուժեղ, պողպատով ցեմենտված մի հենարան:

Այդ հենարանը ստեղծվել է կենինի հրահանգների համաձայն — միլիոն ու միլիոն աշխատավորների անդուլ ջանքերով: Հզոր ժողովրդական մասսաների հետ է կապված մեր Կարմիր բանակը, որի մարտիկները գիտեն իրենց անելիքը և պատրաստ են դիմագրավելու ֆաշիստների գրոհին: Դառնալով այդ դիտողություններից հետո Սովետական Միության դեմ պատրաստվող պատերազմին, Գորկին գրում է՝ «Բանվոր դասակարգը և գյուղացիությունը պետք է զինվեն՝ հիշելով, որ Կարմիր բանակի հզոր ուժն արդեն մեկ անգամ հաղթականորեն դիմացել է համաշխարհային կապիտալիզմի գրոհին, լինելով անդեն, քաղցած, բոկոտն, մերկ և ղեկավարվելով իր ընկերների կողմից, որոնք այնքան էլ ծանոթ չէին ռազմական գործողությունների խորամանկություններին: Այժմ մենք ունենք Կարմիր բանակ. այնպիսի մարտիկների բանակ, որոնցից յուրաքանչյուրը լավ գիտե, թե հանուն ինչի պետք է կռվի ինքը...»:

Գորկին չի սահմանափակվում սոսկ նշված հայտարարություններով և հրապարակախոսական կարուկ դիտողություններով:

Մարտական բնույթ ունեին նաև նրա գրական-քննադատական հոդվածներն ու ակնարկները, թուրքիկ դիտողություններն ու պատկերավոր հուշերը: Նա շեշտում է, որ ֆաշիստները գիտություն ռիսկիմ թշնամիներն են: Գիտությունը ատելի է ֆաշիստներին, որովհետև նկարում է բռնակալների անխուսափելի անկման մոռյլ հեռանկարը: Գորկին կանգ է առնում անցյալի կուլտուրայի մեծ գործիչների վրա: Նա նշում է, որ անցյալի գիտություն ու գրականությունն առաջավոր ներկայացուցիչները զատափետել են ռեակցիայի սև զազափարախոսներին ու միշտ աշխատել են ամրացնել վանդալների դեմ կռվող զանգվածների գիտակցությունը: Գալիլեյը և Կոպերնիկոսը, Ջորդանո Բրունոն, Վիլյեմսը, Յան Գուսը՝ անցյալի մեծ մտղիկանները եղել են մեծ և ըմբոստ մտածողներ: Ժողովրդի ազատության երզն են երգել գերմանական ժողովրդի ականավոր ներկայացուցիչներ՝ Շիլլերը, Գյոթեն, Հայնեն, գերմանացի շատ ուրիշ պոետներ ու վիպադիրներ անդուլ պայքար են մղել ռեակցիայի, վանդալիզմի, մարդատյացության դեմ: Այդ հսկաների խոսքը սարսափով են լսում ֆաշիստները: Նրանց թվում է, որ հին ըմբոստ մտածողներին ուսումնասիրող ընթերցողները կարող են վարակվել հակաֆաշիստական «բացիլներով» և ենթարկվել այնքան ատելի բուլլեկիների ազդեցությանը: Զարմանալի չէ գրանից հետո, որ ֆաշիզմի զազափարախոսները ղեհադասում են այրել հին գրքերը, ոչնչացնել ժամանակակից ըմբոստ հումանիստների աշխատությունները, զատափետել ժողովրդայնությունը և մարդկայնության քարոզիչներին...

Հոկտեմբերյան մեծ հեղափոխության առաջին տարիներին Գորկին ել-
նելով հումանիստական իր պատգամներից կազմակերպել էր «Համաշխար-
հային գրականություն» ընդարձակ հրատարակությունը: Տակավին այդ օրե-
րին Գորկին շեշտել էր, որ կլասիկական կուլտուրայի ներկայացուցիչները
կարող են դառնալ հեղափոխական նոր կուլտուրայի և միջազգայնական հայե-
ցությունների ակտիվ պրոպագանդիստներ: Գրականությունը, — նշում էր Գոր-
կին, — ապագա հրատարակությունների ընդարձակ պրոպագանդիստներին կրց-
ված նախաբանում, կարող է հեղափոխական ազդակի դեր կատարել:
Առաջավոր գրողները կոչ են անում կուլի ելնել միջին երևույթների դեմ և
վերջ տալ շահագործումներին ու ստրկությունը: Գիրքը շատ հասարակ բան է,
բայց այդ գրքի միջոցով մարդիկ ծանոթանում են միմյանց հետ, մտանում
են միմյանց, հասկանում են իրար: Առաջավոր գործիչները հեռու անցյալում
էլ աշխատել են կուլի ղոլոգիական վայրագ տենչերի դեմ: Այդ գործիչները
ջանացել են վերջ տալ անհատի միայնությունը, դարձնել մարդուն շինարար և
ստեղծագործող ուժ: Հանձարներն ու տաղանդները երազել են տեսնել մարդ-
կայնության հաջթանակը: Համաշխարհային գրականության կլասիկների
հրատարակությունն էլ պետք է նպաստի ժողովուրդների բարեկամության մեծ
գործին...

Ես, իհարկե, շատ հակիրճ խոսքերով եմ բնութագրում բանվոր դասա-
կարգի մեծ գրողի խոհերն ու մտորումները: Հետագայում, երբ սկսվում է
կազմակերպվել հակաֆաշիստական շարժումը, Գորկին նորից շատ կտրուկ
կերպով ընդգծում է իր մտորումները: Գորկու ազդեցության հետքերը նշմար-
վում են գրողների հավաքույթներում և համաժողովներում:

Երբ ժամանակակից առաջավոր գրողները Մոսկվայում, Մադրիդում,
Ամերիկայում քննում են գրականության հրատապ պրոբլեմները, նրանք զրե-
թե միշտ նշում են, որ մարդկության լավագույն ներկայացուցիչները, կլասիկ
գրականության հսկաները եղել են մեծ ըմբոստներ և իրենց իդեալներով ար-
ձագանքել են միջազգային վանդալների դեմ մարտնչող ժողովուրդների ազա-
տագրական շարժումներին: Երբ Փարիզում կազմակերպվում է ֆաշիստների
դեմ ուղղված հակաշակառու ցույցը, մի քանի տասնյակ հազարների հասնող
համաժողովրդական թափորը բարձրացնում է գիտական սոցիալիզմի ուսու-
ցիչներին և ապա՝ Վոլտերի, Գիլգոյի, Բալզակի, Հյուգոյի և ուրիշ մեծ հումա-
նիստ-գրողների պորտրետները: Հումանիստական կուլտուրայի և հեղափոխու-
թյան միջև ստեղծված այդ կապի մասին է գրում ականավոր ֆրանսիական
գրող Ժան-Քլոդ Բլոկը. «Ձեր վզին փաթաթված պատերազմը ազատագրա-
կան պատերազմ է. այնպիսին, ինչպիսին Մովետական Ռուսաստանը վարում
էր Կալուսկի, Գենիկինի, Յուլենիչի, Վրանգելի ոճականների դեմ: Ես երեկ գնացի
Կարմիր Հրապարակ և երևար ժամանակ նայում էի այն դամբարանին, որտեղ
հանգչում է Լենինը...»:

Ողջունի խոսք ուղղելով Մովետական Միությանը, Ժան-Քլոդ Բլոկը
հիշատակում է Հյուգոյի, Մանդլայի, Բալզակի, Վոլտերի, Ռուսոյի, Մալիերի,
Մոնտեյնի անունները և ապա նշում, որ ինքը հանգես է գալիս Մոսկվայում՝
որպես ֆրանսիական հումանիստների «աննշան դեսպան»...

Երկրագնդի բոլոր մասերից էլ մենք լսում ենք այդ նոր «ղեսպանների»
միշտ անկեղծ և սրտաբուխ ողջունի խոսքերը: Անգլիայում՝ Բերնար Շոուն,
Ֆրանսիայում՝ Ռոմեն Ռոլանը, Չինաստանում՝ Լու Սինը և ապա՝ դրանց կող-
քին հեղափոխական պոետների, վիպագիրների, գրողների հակաշակառու մի
բանակ կրկնում է միևնույն սրտաբուխ խոսքերը: Պրոֆեսիոնալ դեսպաննե-
րից շատ են զանազանվում նոր այդ «ղեսպանները»: Այդ նոր դեսպանները
դիվանագետներ չեն և խուսափում են դիվանագիտությունը հատուկ պրիոմ-
ներից ու խոսքերից: Այդ գրողները համայն երկրագնդի բոլոր ժողովուրդ-
ների լավագույն տենչերի և ամենալուսավոր գաղափարների երգիչներն են՝
հումանիստ իրենց ուսուցիչների արժանավոր հետևորդները:

Մախիմ Գորկին գուր չէր ընդգծում, որ «պրոլետարիատ» հասկացության
մեջ ինքը մտցնում է նաև մտավոր աշխատանքի ազնվորեն մտածող մարդ-
կանց: Նա իզուր չէր հիշեցնում, որ կապիտալիստների ջանքերով պատրաստ-
վող ամեն մի պատերազմ՝ պատերազմ է ընդդեմ բանվորների: Ընդդեմ աշխա-
տավորների, ընդդեմ կուլտուրայի: Այդ նոր ազատագրական պատերազմ
մոռոկ մարտիկները պիտի համակվեն անսահման ատելությամբ: Ավաղակնե-
րին անհրաժեշտ է ջախջախել հիմնովին:

Գորկու գեղարվեստական երկերի մեջ ամեն անգամ, երբ խոսք էր լինում
բռնականների և պարազիտների մասին, ընդգծվում էր շեշտված ատելության
անհրաժեշտությունը: Հին, անիրավ աշխարհը Գորկու երկերում միշտ էլ
նկարագրված է անհուն ատելությամբ: Ոչ մի գրող, — նկատում է Գոլոբես
Երաուրին, — այնքան ցայտուն գույներով չի նկարագրել ժողովրդի դաժան
կացությունը, ինչպես Գորկին: Գորկին կապիտալիստների և բոլոր շահա-
գործողների դեմ ուղղված ատելությունն ու պայքարը համարում էր անհրա-
ժեշտ մի ուղեգիր:

«Այսօր, — գրում է Գորկին, — մենք տեսնում ենք, որ նրա (ֆաշիզմի)
գազանային ատելությունը դեպի սոցիալիզմը, դեպի այն աշխատանքը, որ
աշխատավորներին ազատում է կապիտալի երկաթե շղթաներից, հարկադրեց
գերմանական խանութպաններին հրաժարվել նրանց սիրած՝ իբր թե «հումա-
նիտար կուլտուրայից» հոգուտ ամենալիտի ավազակության, որպիսին է ռազ-
մատենչ ֆաշիզմը...»: Ապա արձանագրելով, որ ֆաշիզմը «կուլտուրայի
ժխտումն է, պատերազմի քարոզ, ուժասպառի ճիշտ այն մասին, թե ցանկա-
նում է ուժեղ լինել», Գորկին ասում է՝ «Մի մոռոկ հուժուր կա այն բանի մեջ,
որ աշխատավորների աշխատանքի և առողջության վրա կապիտալիստները

միշտ գոռոններ են ծախսել, իսկ մարդկանց բնաջնջման վրա միլիարդներ են ծախսում բանվորների և գյուղացիների աշխատանքով վաստակած փողերից...»:

Նորից Գորկին ֆաշիստների վճռական դատափետման նվիրված կտրուկ տողերից հետո կոչ էր անում ուսումնասիրել այն ամենը, ինչ որ կատարվում է Սովետական Միության սահմաններում: Նա կանգ էր առնում սոցիալիստական շինարարության կենդանի պատկերների վրա: Մեծագույն պարծանքով պատմելով էնտուզիաստ-հարվածայինների, բանվոր ժողովրդի ընդերքից ելած նոր գիտնականների, գրողների, կարմիր հրամանատարների մասին, Գորկին միաժամանակ ցույց է տալիս գետնափոր հանքավայրերում և ապա հեռավոր Արկտիկայի սառցապատ դաշտերում աշխատող հերոսների դեմքերը...

Առանձին զգացումով է նա խոսում Սովետական Միության վերելքի մասին: Նա առաջարկում է արտասահմանյան գրողներին ուշադրությամբ դիտել և նկարագրել մեծ երկրի հեքիաթային վերածնությունը:

Գիմելով կուլտուրայի վարպետներին Գորկին անդադար կրկնում է ու հիշեցնում, որ Սովետական Միությունը երկրագնդի միակ պետությունն է, ուր վերջ է տրվել մարդկային շահագործմանը, բոլոր պարագիտների տիրակալությունը, բոլոր բռնություններին: Իրական ազատությունը և աշխատանքի իշխանությունը,— նշում է Գորկին,— ստեղծվել է Սովետական Միությունում: Սովետական Միության աշխատավորները համաշխարհային կուլտուրայի առաջավոր պատգամների ամենից վճռական ու հետևողական կիրառողներն են: Սովետական Միությանը համայն մարդկության ապավենն է և նրա դեմ կռվի ելնող բոլոր սեպերից ու թերթի պիտի դիմազրավեն երկրագնդի բոլոր դեմոկրատական զանգվածները: Ահա ինչու կուլտուրայի ազնիվ վարպետները նույնպես պիտի ակտիվորեն պայքար մղեն պատերազմի բոլոր հրձիգների դեմ...

Սովետական Միության հերոսական Կարմիր բանակի մղած պատերազմը՝ պատերազմի բոլոր հրձիգների դեմ ուղղված մեծ ազատագրական պատերազմ է, որի հաղթանակը միայն կարող է հիմնովին ազատագրել երկրագունդը մարդակերների ու վանդալների զազրելի դավերից:

...Այսօր, երբ Սովետական մեծ ժողովուրդը, միացած իր հարազատ Կարմիր բանակի հերոսական ջանքերին, կռվում է բոլոր ժողովուրդների ամենակատաղի թշնամիների՝ ֆաշիստների դեմ, բանվոր ժողովրդի մարտական ավանդները կենդանի պատգամներ են դրչի բոլոր զինվորների համար...

1943 թ.:

ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՀԵՏԱԳԵՄ ՄՈՒՆԵՏԻԿՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Գաղութաճայ բուրժուազիայի գաղափարախոսների «իմաստասիրական» հայացքների բնութագրմանն ու քննադատությանն է նվիրված պրոֆ. Հ. Գաբրիելյանի բովանդակալից նոր աշխատասիրությունը: Այդ գրքի հիմնական սկզբունքային դրույթները պարզորոշ են: Նկատի առնելով ամենից առաջ ՍՄԿԿ XXI պատմական համագումարի ղեկավար որոշումները, Հ. Գաբրիելյանը բավական ուշադրով ձևով քննում է գաղութաճայ սեպերից բուրժուազիայի զանազան գաղափարախոսների մտահայեցողության հակադիտական և հետաշիմական բնույթը, և ապա միաժամանակ բնութագրում է այդ միևնույն գաղափարախոսների «սեպական» և իմաստասիրական շատ ուրույն հայացքները: Նա շեշտում է, որ անգամ կեղծ-դեմոկրատական վարագույրով սքողված առանձին պարբերությունների մեջ որոշակի կերպով նշմարվում է գաղութաճայ ազգայնական մունետիկների մտայնության սոցիալական և դասակարգային էությունը:

Աշխատության մեջ նշվում և ցիտվում են նշանակալից գրական վավերագրեր: Առանձին էջերում կան նաև հակիրճ և թուռցիկ հրապարակախոսական «նոթերի» բնույթ կրող քննական տողեր: Հ. Գաբրիելյանը, սահմանափակվելով զլխավորապես (կարելի է նույնիսկ ասել— բացառապես) հրապարակախոսական-իմաստասիրական մտորումների և հայացքների քննությամբ, դիտավորությամբ կանգ չի առել առանձնապես արվեստի և գրականության պրոբլեմների վրա: Այդ պատճառով էլ աշխատության մեջ սոսկ շատ թուռցիկ տողեր են նվիրվել գաղութաճայ մի շարք գործիչների (Օշականի, Մխիթարյանի, Թեոդոսյանի և այլն) շատ «ուշադրով տեսությունների» բնութագրմանը և քննադատությանը: Սկզբից արդեն մշակված շատ ուրույն պրոֆիլը թելադրել է հեղինակին կատարել որոշ բնորոշում և ծանրանալ միմիայն «իմաստասիրական» պրոբլեմներ արծարծող կամ շոշափող հատկանշական գրական-հրապարակախոսական վավերագրերի վրա: Պետք է արձանագրել, առանց վարանումների, որ Հ. Գաբրիելյանը կարողացել է պատրաստել ամեն կողմից նշանակալից մի գործ: Նրա նոր գիրքը, այժմեական լինելով հանդերձ, բովանդակալից մի աշխատություն է: Մեր կարծիքով ամենից առաջ կարևոր է այն, որ այդ աշխատության մեջ հեղինակը հիշեցնում է բոլոր բնթերցողներին՝ գաղութաճայ սեպերից գործիչների ազգայնական-կղերական հայացքների հետևողական քննադատության մեծագույն անհրաժեշտության մասին:

Բուրժուական նացիոնալիզմի զանազանագույն մունետիկների նշանակալից մտորումների և հայացքների ընդհանուր կոմպլեքսի ճշգրիտ բնութագրման համար նա մերթ ընդ մերթ կանգ է առնում ոչ միայն գրական նորագույն ելույթների, այլ նաև ավելի հեռու օրերում առաջադրված հատկանշա-

կան տեսությունների վրա: Շնորհիվ այդպիսի մոտեցման, աշխատության որոշ հատվածներում բավական լավ են նկարագրված թե՛ տխրահռչակ Գարբինյանի, և թե՛ նրա գինակցի՝ Նավասարդյանի ունակցիոն հայացքները: Ցուցահանված են նաև գաղութահայ ունակցիոն իմաստասերների գաղափարական կապերը ամերիկյան իմպերիալիզմի գաղափարախոսների ուղեգծի հետ: Երկու կարծիք չի կարող լինել այն մասին, որ այժմ և այսօր, առանձնապես, Հ. Գարբինյանի աշխատությունը կարող է ունենալ մեծ դաստիարակչական նշանակություն: Ռեիզիոնիզմի դեմ ուղղված գաղափարական պայքարը գաղութահայ վայրերում չի կարող լինել արդյունավետ և արգասավոր՝ եթե միաժամանակ չի ցուցահանվում և բնութագրվում այդ միևնույն ռեիզիոնիզմի հետ սերտորեն կապված գաղութահայ բոլոր ունակցիոն գործիչների ամբողջ հայեցողությունը:

Բուրժուական ամբողջ գաղափարախոսության, ինչպես նաև ազգայնական-բուրժուական պատմագրության, գրականագիտության, արվեստագիտության դեմ մղվող իդեոլոգիական պայքարը չի կարող երբեք հաջող դառնալ, եթե վաղօրոք կոծկվում կամ քողարկվում են բուրժուական նացիոնալիզմի կարևորագույն հատկանիշները: Բուրժուական նացիոնալիզմի մոտենտիկների քննադատությանը նվիրված նոր աշխատությունը, մեր կարծիքով, ուշագրավ է այն կողմից, որ կոչ է անում լինել աշխուրջ և զգոն՝ ակնհայտ ունակցիոն գաղափարախոսության ակներև ցուցանիշների նկատմամբ...

...

Առաջին նվազ գաղութահայ օջախներում հաստատված բուրժուական մոտենտիկների հայտարարությունները գուցե և կարող են թողնել որոշ տպավորություն միամիտ հայ ընթերցողների վրա:

Արդի գաղութահայ իմաստասերները շատ հաճախ իրենց կարծիքներն առաջադրում են մեծագույն հանդիսավորությամբ: Հիշատակելով գանազան գիտունների պատահական սենտենցիաները, ցիտելով բազմազան պոբլյուրներ, խառնելով ամեն ինչ, շեշտված իմաստասերները ջանացել են հիմարացնել և կուրացնել միամիտ գաղութահայ ընթերցողներին: Ժամանակին, տակավին 1911 թ., նման տիպի գործիչներից մեկի, տխրահռչակ նացիոնալ-դեմոկրատ, հրապարակագիր Միք. Վարանդյանի (Հովհաննիսյանի) մասին ականավոր լենինյան տեսաբան Ստ. Շահումյանը շատ դիպուկ կերպով ասել է, որ դա — «տիեզերական թուփակ» է: Ահա հենց նույն այդ Վարանդյանի ուղեգծով քայլել և քայլում են նաև գաղութահայ շատ ուրիշ ունակցիոն գործիչներ: Միամիտ ընթերցողներին խաբելու նպատակով դրանք աշխատել են օգտագործել մարքսիզմի գանազան «քննադատների» մտացածին դիտողությունները և մակերեսային հայտարարությունները:

Շարահյուսելով կողք-կողքի իդեալիստ-իմաստասերների և ապա գոն-հիկ մատերիալիստների երկերից հանված ցիտատները, ծանրանալով նեականտականության և մախիզմի կամ էլ Բերգսոնի և Զեմսի «ուսմունքների» խայտաբղետ կոմպլեքսի վրա, հայ բուրժուազիայի նացիոնալիստ «տեսաբանները» այդ ամենը հաճախ ցեմենտավորում էին սուբյեկտիվ սոցիոլոգիայի հանրահայտ «ղարոցի» հետևողների գործերից հանված շաղախով: Բնորոշ է այն էլ, որ այդ «տեսաբաններից» մեկը՝ քիչ առաջ հիշված Վարանդյանը, աշխատել է «օգտագործել» մարքսիստների դեմ նույնիսկ սինդիկալիստների տեսությունները: Գրքերի վերնագրերը, անդլերեն կամ գերմաներեն ցիտատները, պատահական էջերի ընդգծումը, տարբեր գիտունների թուղթիկ ասույթները, վերջապես, կեղծ-հեղափոխական պաթետիկան և մանավանդ աղմկալից շոինդ ու շառաչը թողնում էին քաղցեների լսարանի վրա նկատելի տպավորություն: Հեղինակների անունները կամ գրքերի վերնագրերը շժմեցնում էին և կուրացնում միամիտ հայ ընթերցողներին: Ստեղծելով անասելի աղմուկ և մառախուղ, հայ բուրժուազիայի հրապարակագիրները հապճեպ կերպով «մարտական» դիրքեր էին զբաղում և շտապում էին համախմբել իրենց հետևողների շարքերը...

Միևնույնն ահա մենք տեսնում ենք նաև այսօր, երբ ուշագրությամբ քննում ենք «գիտնականության» սքեմով սքողված ստվար «տեսական» այն գրականությունը, որ ստեղծվել և սերտվում է գաղութահայ վայրերում: Իսկական գիտության հետ ամենահեռու առնչություն անգամ չունի խայտաբղետ «իմաստասիրական» այդ գրականությունը: Սակայն և այնպես դա նշանակալից երևույթ է, կարելի է նույնիսկ ասել՝ գաղափարական-հասարակական ուրույն մի գործոն:

Երբեք չի կարելի մոռանալ, որ մի շարք հայկական գաղթավայրերում այսօր էլ բավական մեծ է աշխատավորների թիվը: Ամերիկայում մասնավորապես մեծ թիվ են կազմում հայ բանվորները: Արաբական երկրներում նկատելի է արհեստավորների և մանր սեփականատերերի կշիռը: Գաղութահայ մտավորականության շարքերում մեծամասնությունը կազմում են աշխատավոր գանգվածների հետ կապված մտավորականները: Բուրժուազիայի գաղափարական ազդեցությունը ամրացնելու նպատակով ակտիվ գաղափարական պրոպագանդա են տանում թե՛ ազգայնական-բուրժուական հոսանքների մոտենտիկները և թե՛ բողոքական, կաթոլիկ և լուսավորչական եկեղեցիների ջահակիրները: Զանազան տիպի այդ գործիչները շատ հաճախ հանդես են գալիս կեղծ-դեմոկրատական պատգամների և «ազգասիրության» պաշտպանների դերում: Արևմտյան երկրներում ունակցիոն հայ գործիչներին մեծագույն օժանդակություն են հասցնում թե՛ կապիտալիստական պետությունների ղեկավար օրգանները և թե՛, մանավանդ, հայ բուրժուական պետոկրատիայի անվանի ներկայացուցիչները:

Այդ ամենն ահա ստեղծում են նպաստավոր պայմաններ նույնիսկ ակնորոշ շաղակրատություններ զբաղվող գրչակների համար, ուստի չի կարելի միանգամայն անուշադրության մատնել այդ գրչակների արտադրությունները: Գրանք թողնում են որոշ ազդեցություն միամիտ ընթերցողների վրա: Միայն մեծագույն համբերությամբ ձեռնարկված բացատրական և քննական աշխատանքն ու պայքարը կարող են բացահայտել կեղծ-գիտունների նրկերի մեջ նշմարվող ակներև շաղակրատությունը և անսահման դատարկությունը: Ահա նման քննական աշխատանք է ներկայացնում այսօր հայ ընթերցողներին Հ. Գաբրիելյանը: Մենք չենք կասկածում ամենեին, որ նրա այդ նոր աշխատությունը կգտնի ընթերցողների ակտիվ շարքեր:

Հ. Գաբրիելյանի գիրքը շատ ուշագրավ գործ է: Նա ուշագրությամբ հետևում է գաղութահայ գրականության մեջ արծարծվող կարևորագույն իմաստասիրական հարցերին և կանգ է առնում նույնիսկ տաղտուկ և պրիմիտիվ հայտարարությունների վրա: Նա մերկացնում է առանձին գործիչներին և նպատակ չի դնում վիճել բացահայտ անակցիայի հայ մտնետիկների հետ և չի էլ աշխատում «համոզել» գրանցից որևէ մեկին: Նա լավ գիտե ասյն, որ փախստական հայ հակահեղափոխական էմիգրանտները համաշխարհային դաժան անակցիայի հավատարիմ մանկավիճիկներն են, կոտորածներ պատրաստող «նաբորներ» վարձկան գրչակները, ամերիկյան խոշոր բիզնեսմենների ստոր սպասավորները: Հայտնի է Հ. Գաբրիելյանին նաև այն, որ այդ գրչակներն աշխատում են օժանդակել հզոր Սովետական Միության դեմ դավեր նյութող իմպերիալիստներին...

Սակայն նա գիտե այն էլ, որ գաղութահայ անակցիոն հրապարակախոսների կամ «իմաստասերների» նախաձեռնությամբ պատրաստված աշխատություններն ընթերցողների կոնտրոլներն ունեն արևմտյան երկրների հայաբնակ վայրերում և արձագանքներ են ստեղծում խաբված և կուրացած հայ ընթերցողների միջավայրում: Ահա հենց այդ միամիտ և խաբված ընթերցողներին էլ նա նկատի ունի, երբ քայլ առ քայլ հետևելով անակցիոն հայ մտնետիկների գրություններին և լամենտացիաներին, քննում է, ցուցադրում, բացահայտում այդ մտնետիկների սուտ և պրովոկացիոն ղեկավարացիաների իմաստը:

Շատ դժվարին և ծանր աշխատանք է ձեռնարկել Հ. Գաբրիելյանը: Այնքան էլ գուրեկան բան չէ՝ բրբրել նորից և նորից պատմության հին աննալները, նորից ծանրանալ հանրահայտ ճշմարտությունների վրա, նորից և նորից մերկացնել գաղբելի սև գործիչների տաղտուկ շաղակրատության իսկական իմաստը: Բայց և այնպես նրա ջանքերով ձեռնարկված այդ ծանր աշխատանքը շատ կարևոր նշանակություն ունի առանձնապես այսօր, երբ բուրդ գաղութահայ վայրերում սկսվել է աշխատավորների լայնագույն շարքերի

ազատագրական-հայրենասիրական մեծ շարժումն ընդդեմ անիրավ հին աշխարհի՝ հանուն խաղաղության և ժողովուրդների բարեկամության: Գաղանիք չէ այն, որ գաղութահայ աշխատավոր զանգվածներն այսօր ձայնակցում են անկեղծ կերպով և ուժգնորեն՝ կոմունիզմի մեծ հաղթանակի համար մարտընդ խաղաղասեր ժողովուրդների ազատագրական վեհապանծ արշավին և շարժմանը:

Մեր խորին համոզմամբ Հ. Գաբրիելյանի նոր աշխատությունը այժմեական արժեք ունի ոչ միայն գաղութահայ աշխատավոր ընթերցողների համար: Այդ գիրքը կարող է նկատելի օգնություն հասցնել նաև հայ ժողովուրդական նացիոնալիզմի անգամ քուլարկված զիվերսիոն ձեռնարկներն ուսումնասիրող սովետահայ ընթերցողների ամենալայն շարքերին և առանձնապես գաղութահայ մամուլը ուսումնասիրողներին: Ժամանակակից ուղիղիստների կեղծ-գիտական «հայտնաբերումները» շատ սերտ կերպով կապված են իմպերիալիզմի զանազանագույն համահարգների ջանքերով մշակվող գաղափարական անակցիոն էքսպանսիայի հետ: Ինքնին արդեն պարզ է, որ ուղիղիստների ամեն տիպի «տեսաբանների» դեմ ուղղված պայքարը չի կարող կտրվել բուրժուական իդեոլոգիայի դեմ մղվող ամենօրյա պայքարից և քննադատությունից: Այսօր մանավանդ երկու կարծիք չի կարող լինել այն մասին, որ միմիայն սխտեմատիկ և կտրուկ պայքարը կարող է նպաստել աշխատավոր կառուցողների շարքերի գաղափարական կոմիսանը և ժողովրդական լայն զանգվածների կոմունիստական դաստիարակության մեծ գործին...



Միանգամայն իրավացի է ընկ. Հ. Գաբրիելյանը, երբ իր աշխատության մեջ կանգ է առնում ոչ միայն բացարձակ անակցիայի բացահայտ մտնետիկների առավել բնորոշ ելույթների վրա: Նա հիշատակում է իդեալիստական իմաստասիրության առանձին գրույթները պաշտպանող այն գործիչների հապճեպ մտորումները, որոնք առաջադրվել են խիստ մակերեսային կերպով, անգամ «բարի» նպատակներով: Այդ գործիչներն իրենք անմիջապես կապված չեն իմպերիալիզմի սպասավորների հետ: Չնայած այդ հանգամանքին, Հ. Գաբրիելյանը կարևոր է համարել կանգ առնել շեշտված առանձին գործիչների անընդունելի կարծիքների վրա, որովհետև միայն հետևողական պայքարը սխալ և անհանդուրժելի գրույթների դեմ կարող է ապահովել՝ ընթերցողներին սկզբունքային խնդիրները միազնեցնող գործիչների ազդեցությունից: Հիշված գործիչների սխալ կարծիքները քննադատելիս չի մոռացվում կցելու հավելված տողեր՝ նույն այդ գործիչների դեմքն ու գործունեությունը բնութագրող «գրական» կամ «ընդունելի» հատկանիշների մասին, շատ հակիրճ խոսքերով նկարագրվում է շեշտված գործիչների ամբողջական թե՛ մտահայեցությունը, և թե՛ վարքագիծը:

Նրբեր չի կարելի անուշադրութեան մատնել, այսօր մանավանդ, այն կարևոր հանգամանքը, որ Սովետական Միության անկեղծ բարեկամների շարքերում եղել են և կան զանազան մտահայեցություն ունեցող և իմաստասիրական տարբեր սիստեմներ առաջադրող գործիչներ: Այդ փաստը լավ է հայտնի: Իտալիայում առանձնապես նման գործիչների թիվը նկատելի է: Գրանց դերն այնքան էլ աննշան չէ: Կարելի է հիշատակել Կենտրոնների տաճարի ալազ երեց Ջյուլյետ Ջոնսոնի նման գործիչների ակտիվ հասարակական գործունեությունը Անգլիայում, Ավստրալիայում և ուրիշ երկրներում:

Միջազգային ֆաշիզմի և պատերազմների հրձիգների դեմ կազմակերպված ազատագրական-խաղաղասիրական մեծ պայքարի ընթացքում հումանիստ գործիչները շատ մեծ դեր են կատարել: Գաղտնիք չէ, իհարկե, այն, որ սովետական մամուլի էջերում քննական դիտողություններ են արվել նույնիսկ առանձին բարեկամ գրողների որոշ ասույթներին կամ մտորումներին: Սակայն և այնպես, անգամ քննադատելով բարեկամ գրողների վիճելի գրույթները, մենք երբեք չենք թերագնահատել կամ մանավանդ նսեմացրել նույն այդ գրողների կողմից պատերազմի հրձիգների դեմ մղված պայքարի մեծագույն հասարակական նշանակությունը: Սովետական պարբերական մամուլի էջերում միշտ նշվել և ընդգծվել է ֆաշիզմի և ֆաշիստների, պատերազմի հրձիգների և վայրագ ազգայնականների դեմ հասարակական-գաղափարական ուժգին պայքար կազմակերպող առաջավոր և խոհուն գրողների շատ կարևոր պատմական դերը: Նման առաջավոր և դեմոկրատական շատ լավ հայտնի գրողներից կարելի է այստեղ հիշատակել Լակսնեսսին, Մորավիային, Հանս Շերֆիգին, Միտչել Ուիլսոնին, Պաբլո Ներուդային և շատ ուրիշներին: Մենք կանգ չենք առնում պատերազմի հրձիգների դեմ մարտնչող և հանուն խաղաղության ժողովուրդների բարեկամության աշխատանք տանող զանազան կրոնական գործիչների վրա...

Անցնելով անմիջապես գաղութահայ վայրերում կատարվող դեպքերին և երևույթներին, մենք արձանագրում ենք ամենից առաջ ունեցող իրականության հատկանշական փաստերը: Մենք նկատի ունենք այն, որ իր ընդհանուր շահերով կապված լինելով կապիտալիստական այս կամ այն երկրի իշխող դասակարգերի հետ, հայ բուրժուական հոսանքներն, այնուամենայնիվ, միատեսակ գաղափարական վարքագիծ չեն պաշտպանել տարբեր ժամանակ և տարբեր երկրներում: Գաղութահայ բուրժուազիայի զանազան շերտավորումների վրա զանազան կապիտալիստական երկրներում նկատելի ազդեցություն են թողել տարբեր երկրների կոնկրետ պայմանները, նույն այդ երկրների իշխող դասակարգերի տնտեսական վարքագիծը, արտաքին քաղաքականությունը, վերջապես, դիվանագիտական ձեռնարկները և ուղեգիծը պատմական տարբերությամբ: Բավական է միայն այստեղ հիշատակել թեկուզ հենց արաբա-

կան երկրների շատ նշանակալից պատմության վերջին փուլերը: Ամենակին գաղտնիք չէ այն էլ, որ հենց վերջին շրջանում Սովետական Միության և Հարեջատանի կառավարության առևտրական-տնտեսական նոր հարաբերությունները նորից բացահայտում են առանձնահատուկ, ուշադիր, ներանկա մտեցման մեծագույն կարևորությունը՝ Սովետական Միության բոլոր բարեկամ պետությունների նկատմամբ: Հաշվի առնելով շեշտված ունի փաստերը, մենք նույնիսկ գաղափարական սուր պայքարի ժամանակ մշակում ենք տարբեր դիրքորոշում՝ բացառաձակ թշնամիների և բացահայտ բարեկամների նկատմամբ: Կշռաչափը ամենից առաջ, և դրեթե բացառապես, Սովետական Միության՝ պատերազմի և խաղաղության, ժողովուրդների բարեկամության, կոմունիստական խաղաղ շինարարության ձեռնարկների նկատմամբ ունեցած դիրքավորումն է:

Չ. Գաբրիելյանի շատ կարևոր գիտական աշխատության ճիմնակալ էլակետը հիշյալ շեշտված նշանակալից կշռաչափն է բոլոր դեպքերում, անգամ այն պարագաներում, երբ նա քննադատում և դատապիտում է առանձին գաղութահայ պրոգրեսիվ գործիչների անընդունելի մակերեսային կարծիքները:

Այսօր շատ մեծ է Սովետական Միության անկեղծ բարեկամների թիվը թե՛ արևմտյան և թե՛ արևելյան կապիտալիստական երկրներում: Այդ բարեկամների դերն ու վաստակը երբեք չի կարելի թերագնահատել: Սակայն և այնպես, հենց բարեկամների աշխատանքներին օժանդակելու համար մենք պետք է միանգամայն անկեղծ և անաչառ կերպով նշենք նրանց գործունեության նաև քննադատելի կողմերը: Խաղաղության բարեկամների և պատերազմի հրձիգների դեմ մարտնչող գործիչների շարքերում կան, ինչպես նշվեց արդեն, տարբեր իմաստասիրական սիստեմներ պաշտպանող զանազան իդեալիստական, անգամ կրոնական հայացքներ ունեցող գործիչներ: Արդյոք այդ ամենը նշանակում է, թե մենք վեճի ժամանակ չպիտի առաջադրենք մեր գաղափարները և հայացքները, չպիտի բացահայտենք և ցուցադրենք դիտության վճռական դերը և կրոնի ու գրեթե շեշտված նշանակությունը կամ, վերջապես, դիվանագիտական մատերիալիզմի ուսմունքի ղեկավար արժեքը: Չի՞ նշանակում: Մենք պարտավոր ենք քննադատել անհանդուրժելի հայացքները և մերկացնել անընդունելի գաղափարական տեսությունները: Այնուամենայնիվ, ո՞չ սուր վեճերը և ո՞չ էլ գաղափարական մեր պայքարը չպիտի դառնան խաղաղության և ժողովուրդների բարեկամության դրոշի ներքո մարտնչող ազատագրական-խաղաղասիրական մեծ միությունը՝ վնասող կամ խանգարող ազդակներ և խթաններ:

Ռեկորդներով զանազանագույն «տեսաբանների» արտասովոր աշխուժությունը արտասահմանյան երկրներում բացատրվում է նրանով, որ ժամանակակից բուրժուազիայի նորագույն մոնետիկները ցանկանում են գիտու-

Մյան Ֆալսիֆիկացիայի միջոցով դիմագրավել ժողովրդական մասսաների ազատագրական մեծ արշավը: Ջանալով խափանարար պատնեշներ կառուցել հեղափոխական շարժումների դեմ, հիշված գործիչները իրենց քննադատության հիմնական կրակը ճիգ են անում ուղղել առաջին հերթին մարքսիզմ-լենինիզմի դեմ և աշխատում են մթազնել արթնացող աշխատավորների դիտակցությունը:

2. Գաբրիելյանի աշխատության մեծագույն արժեքը կայանում է հենց նրանում, որ ժամանակին թելադրում է գաղափարական ճակատի բոլոր աշխատավորներին՝ բացահայտել պարզորոշ դիրք կարևորագույն սկզբունքային նշանակություն ունեցող պրոբլեմների նկատմամբ:

Կոմունիստական դաստիարակության մեծ գործը չի կարող հաջող կերպով կիրառվել, եթե առաջին հերթին նկատի չի առնվում ազգայնական-կղերական խարխուլ տրադիցիաների վրա խարսխված՝ հետադիմական տենդենցների դեմ ուղղված գաղափարական սխտեմատիկ և հետևողական պայքարի անհրաժեշտությունը:

Սովետական Միության կոմունիստական կուսակցության պատմական XXI համագումարի որոշումների մեջ հատկորեն նշված է, որ բարձր գաղափարական աշխատանքը և կոմունիստական դաստիարակության ուժեղացման ուղղությամբ մշակվող անհրաժեշտ բոլոր միջոցառումները պետք է նպաստեն սոցիալիզմ կառուցողների կուլտուրական մակարդակի բարձրացմանը և օժանդակեն կոմունիստական շինարարության վեհապանծ յոթնամյա սրանի իրագործման համար հերոսական աշխատանք տանող սովետական նոր մարդկանց կամքի և կորովի ամրությունը: Քննադատելով իդեալիստական իմաստասիրության տաբեր մունետիկներին, Հ. Գաբրիելյանը կոչ է անում յուրաքանչև մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը և այդ ուսմունքի հստակ դիրքերից մերկացնել հակադիտական և ռեակցիոն պատգամների ամեն տիպի բարոզիչներին:

Նրա բովանդակալից աշխատությունը գրված է պարզ և դյուրամատչելի լեզվով: Գրքի գրեթե բոլոր հատվածների մեջ նկարագրված և բնութագրված են բազմաթիվ գրական վավերագրեր և բազմազան գաղութահայ «իմաստասերներ»: Նշված են նաև առանձին հրապարակախոսական, աշխատությունների տիպիկ երանգները: Բացահայտվում են ռեակցիոն մտածողների կողմից առաջադրված «տեսությունների» հիմնական հատկանիշները: Սկզբունքային հարցերը չեն կրճկվում: Հարևանցի գիտողություն նետելով մասնավորապես հանրահայտ ժշականի նման ռեակցիոն «գիտունների» հասցեին, Հ. Գաբրիելյանը նշում է այդ բանասեր-գրականագետի ռեակցիոն հայացքները:

Գաբրիելյանը ուսումնասիրել է հսկայական գրականություն՝ գաղութահայ բազմազան պարբերականների էջեր, գրքեր և ժողովածուներ, տաբեր

գաղթավայրերում տպագրված հայերեն հրատարակություններ: Նյութերի բազմությունն ու բազմազանությունը, գաղութահայ գրականության բարդությունը, հայ մամուլի էջերում արծարծված հարցերի մեծ քանակությունը կարող էին, իհարկե, ծանրացնել աշխատության որոշ հատվածների շարադրությունը: Անհրաժեշտ էր հմտագին կերպով ընտրություն կատարել, լուսարանել ավելի կարևոր խնդիրները, կանգ առնել ավելի հատկանշական նյութերի վրա, ճշգրիտ կերպով բացահայտել և բնութագրել գաղութահայ «իմաստասիրություն» ավելի բնորոշ մունետիկների ավելի նշանակալից հատկանիշները:

Դժվարին այդ աշխատանքը Հ. Գաբրիելյանը կատարել է մեծագույն հմտությամբ և հաջողությամբ...

Հ. Գաբրիելյան, «Ժամանակակից սփյուռքահայ բուրժուական ռեակցիոն փիլիսոփայությունը» գրքի առաջաբանը, Նրևանի համալսարանի հրատ., 1960 թ., էջ 3—15:

«ՊՐԱՎԴԱՆ» ՆԱԽԱՀՈՎՏԵՄԵՐԲՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ Փաստեր, հուշեր

«Պրավդան» հրատարակվում էր հեղափոխական շարժման վերելքի օրերին: Այդ պատմական վերելքի ցուցանիշների վրա, ինչպես հայտնի է, կանգ է առել Վ. Ի. Լենինը տակավին 1910 թ., երբ հիշատակելով բանվորական-գործադուլային շարժումների նշանակությունը, հիշեցնում էր ընթերցողներին հեղափոխական շարքերի կազմակերպման ուղղությամբ տարվող աշխատանքների անհրաժեշտության մասին: Վերելքի անառարկելի ցուցանիշների շատ ուրույն արձագանքները լսում էին այնքան նշմարելի կերպով, որ հիշատակվում էին նույնիսկ բուրժուական-իբերալ մամուլի էջերում: Նույն այդ վերելքի առկայությունը և ակներև ուժն էլ արտացոլվում էր Պետական Դոմայի անշափ փոքրիկ, բայց միաժամանակ ամուր և կորովի բուլշևիկյան խրմբակի տոկոն գործունեության մեջ: Բուլշևիկ պատգամավորների պարբերական ուղևորությունները դեպի գործարանային վայրերը, նրանց նախաձեռնությամբ կազմակերպված բանվորական-մասսայական ժողովները, հանդիպումները և գրույցները հեղափոխական ընտրողների հետ, վերջապես խիզախ ելույթները երկրի «պառլամենտի» նիստերում ցույց էին տալիս նույնիսկ ցարական բռնապետության բազմահմուտ գամփոններին, որ ընդամենը հինգ հոգույց կազմված բուլշևիկ պատգամավորների թիկունքին կանգնած է բողոքող և ոտքի ելնող հեղափոխական պրոլետարիատը:

Չնայած այդ ամենին, նույն այդ շրջանում անգամ, բանվոր դասակարգի հեղափոխական ավանգարդի դեմ պայքարող թշնամիների թիվը շատ մեծ էր

և կազմակերպված: Ցարական դեսպոտիայի ժանդարմների և ոստիկանների կողքին կանգնած էին կալվածատերերին և կապիտալիստներին ակտիվորեն օժանդակող բազմաթիվ հասարակական և գաղափարական կազմակերպություններ: Ռեակցիոն այդ ուժերին աջակցում էին «ազատություն» մասին խաբուսիկ պատրանքներ առաջադրող բուրժուական և մանր-բուրժուական դաշտարարխոսները: Արվեստի, գրականության, առանձնապես պարբերական մամուլի բնավայրերում դրանք իշխում էին և իրենց աշխատություններով ճիգ էին անում մթազնել ժողովրդի արթնացող ուժերի ինքնագիտակցությունը: Պաշտպանելով իդեալիստական իմաստասիրության պատգամները, իշխող հասարակական ուժերի մոնետիկները միահամուռ ջանքերով կռվի էին ելնում մարքսիզմի դեմ և կյանքից պտրված արտադասակարգային մշակույթը դարձնում էին հիմնական կռվան ընդդեմ արթնացող ժողովրդի: «Անկռիվ ապրումներ» և ապա առաձգական «էսթետիկան», իդեալիզմն ու միստիկան, ունիզիոնիզմը, և ռեֆորմիստական կարկատաններով «նորոգված», բայց իրականում աղճատված, գոհհիկ մարքսիզմը առաջադրվում էին որպես ամենազոր սպեղանիներ: Երբ կազմավորվում է «անլեզալ» սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեմ ծառացող և «նոր» ու «լայն» լեզալ «բանվորական կուսակցության» անհրաժեշտությունը հիմնավորող լիկվիդատորությունը, շեշտված պատգամները առատորեն մտնում էին մենշևիկ-լիկվիդատորների հասարակական «իմաստասիրության» մեջ: Լիկվիդատորության գաղափարախոսները ճիգ էին անում օգտագործել մարքսիզմի դեմ պայքարող բոլոր հոսանքների տեսական առաջադրությունները, կառուցել ավելի լեզալ և հանդուրժելի դրություններ, կերտել արթնացող ժողովրդի հիմարացմանը նպաստող գաղափարական նոր պատգամներ...

Ահա շատ ուրույն այդ մթնոլորտում էլ, բոլշևիկյան լեզալ պարբերականների ներկայացուցիչները, պետք է առաջ տանեին իրենց հեղափոխական-գաղափարական աշխատանքը: Այսօր մենք կարող ենք ու պարտավոր ենք արձանագրել, որ գործածելով հին օրերին հատուկ եզոպոսիան «երկպյան» լեզուն բոլշևիկյան լեզալ մեր պարբերականների աշխատակիցներն ու թղթակիցները կատարել են հսկայական աշխատանք, որի ճշգրիտ գնահատականը կարող է ու պետք է տրվի բոլշևիկյան պատմությանը նվիրված ավելի բնդարձակ ուսումնասիրություններում: Նախահոկտեմբերյան մեր պարբերականներում եզակի տեղ է գրավում բոլշևիկյան «Զվեզդա» լրագիրը, որը լեզալ լրագիր լինելով հանդերձ, ժամանակին շատ մեծ դեր է կատարել հեղափոխական մարքսիզմի ժողովրդականացմանը նպաստող գրական-պուբլիցիստական ելույթներով: Իր հիմնական պրոֆիլով այդ լրագիրը, իհարկե, չէր գանաղանվում 1905 թ. հետո հրապարակված պարբերականներից: Դա մեծ, ծավալով բազմազան մշակութային պրոբլեմներ արժարժող լրագիր էր: Բոլշևիկ-

յան պարբերագիր լինելով հանդերձ «Զվեզդան» սակայն բանվորական լայն ընթերցարանի հետ կապված չէր անհրաժեշտ շարժում, թեև առաջավոր բանվորների շրջանում ուներ ընթերցողների լավագույն շարքեր:

Վ. Ի. Լենինը առաջինն էր, որ նշմարեց «Զվեզդայի» ուրույն կառուցվածքի առանձին հատկանիշները և նշեց նոր բանվորական-մասսայական լրագրի կազմակերպման բացառիկ անհրաժեշտությունը: Բանվորական գործադուլային շարժումների ակնհայտնի վերելքի ցուցանիշները՝ հեղափոխական շարժումը, ժողովրդի շարքերից ելած ընթերցողների ելույթները բանվորական լեզալ սկումբներում, պիտերյան առաջավոր բանվորների կողմից առաջադրված պահանջները, վերջապես Պետական Դումայի բոլշևիկ-պատգամավորների կողմից գանազան ուղևորությունների ընթացքում գրի առնված դիտողությունները նորից ու նորից հիշեցնում էին, որ անհրաժեշտ է խորհել նոր, ավելի դյուրամատչելի և բանվոր ընթերցողների ավելի լայն շարքերի մտավոր պահանջներին ակտիվորեն արձագանքող կուսակցական պարբերագրի կազմակերպման: ու հրատարակության մասին:

Տակավին «Զվեզդայի» մեջ, զանազան առիթներով, նշվել է նման նոր տիպի պարբերականի առանձին կարևորությունը: Միևնույն «Զվեզդայի» էջերում էլ նշվել են նաև նոր պարբերագրի թե՛ յուրահատուկ հյուսվածքի և պրոբլեմատիկայի, և՛ մանավանդ լրագրի տարածմանը—էքսպեդիցիայի կազմակերպման համար նշանակություն ունեցող խնդիրները: Բոլշևիկյան «Զվեզդան» ինչպես հայտնի է, լույս էր տեսնում պլեխանովականների մասնակցությամբ և իրականում միմիայն 1911 թ. աշնանն է դառնում լիովին բոլշևիկյան հետևողական լրագիր: Բանվորական դյուրամատչելի նոր լրագրի հրատարակության մասին հիշատակել է Լենինը Լոնժյումոյի կուսակցական զարուցի ուսանողների հետ զրուցելու ժամանակ (Կրուպսկայա): Լենինը միևնույն խնդրի մասին ակնարկել է նաև 1911 թ., երբ նշել է բանվորական մասսայական լրագրի կարևորությունը¹:

Լենինը մեծագույն ուշադրությամբ ուսումնասիրում էր «Պրավդայի» բոլոր համարները. սիստեմատիկ կերպով շեշտում էր, որ նոր բանվորական լրագրի հոգավածները և նյութերը պետք է գրված լինեն պարզ լեզվով: Միաժամանակ նա ընդգծում էր, որ հասկանալի լինելով հանդերձ հիշված հոգավածները պետք է ունենան տեսական բարձր մակարդակ: Լենինի նշանակալից դիտողությունները «Պրավդայի» խմբագիրները նկատի էին առնում և մեծագույն ուշադրությամբ հետևում էին լրագրում զետեղված հոգավածների ուղղությունը: «Պրավդան»՝ հետևելով Լենինի խորհուրդներին, կարողանում է շատ կարճ ժամանակվա ընթացքում դարձնել իր համարները սուր, մարտա-

¹ В. И. Ленин, Полн. собр. соч., 5 изд., т. 21, М., 1961, стр. 453.

կան նյութերով աչքի ընկնող, առույգ և բազմերանգ մի պարբերական: Ցարական դեսպոտիայի մոռյլ երևույթների մերկացմանը նվիրված ակնարկների կողքին ընթերցողները տեսնում էին բոլոր ռեակցիոն հոսանքների դեմ ուղղված միշտ դիպուկ հողվածներ: Քննադատելով բուրժուազիայի գաղափարախոսներին, «Պրավդան» կանգ էր առնում բոլոր հակամարքսիստական հոսանքների սոցիալական էության վրա և միշտ դատափետում էր նրանց: Այդ ամենը նկատելի է դառնում շատ շուտ ոչ միայն ցարական ցենզորների, այլ նաև բուրժուական և մանր-բուրժուական հրապարակախոսությունից մուսուլմանների համար: Եթե սկզբնական շրջանում փոքրիկ ծավալով բանվորական լրագիրը համարվում էր ոչ այնքան «վտանգավոր», ապա հետագայում ցարական բազմահմուտ գրաքննիչների համար ակնհայտի դարձավ, որ իրականում «Պրավդան» շատ յուրջ և ուժեղ ախոյան է: Ահա ինչու ցարական կառավարության կարգադրությամբ արդեն 1913 թ. հուլիսին «Պրավդան» փակվեց: Սակայն «Պրավդայի» հրատարակության գործին հետևում էին Պետական Դումայի բոլշևիկ պատգամավորները: Երբ կառավարության կարգադրությամբ արգելվում էր «Պրավդայի» հրատարակությունը՝ «Պրավդայի» փոխարեն լույս էին տեսնում միևնույն պրավդիստական ուղղություն ունեցող միանման նոր պարբերականներ, որոնց վերնագրերն արդեն հիշեցնում էին ընթերցողներին, որ նոր լրագրերն իրականում հանդիսանում են արգելված «Պրավդայի» շարունակությունը («Բանվորական Պրավդա», «Հյուսիսային Պրավդա» և այլն): Ավելի քան ակնհեր էր, որ տոկուն կերպով հրատարակելով լենինյան ուղեգծին հետևող բանվորական կուսակցական լրագիրը՝ բոլշևիկ պատգամավորները շարունակում էին պայքարը և լրագիրը դարձնում աշխատավորների հեղափոխական գիտակցության բարձրացմանը օժանդակող ազդակ: Այսօր հայտնի է այն էլ, որ բացի գրաքննիչների կողմից հաղորդված տեղեկություններից ցարական կառավարության տխրահռչակ ոստիկանության ղեկավարամենտը գաղտնի տեղեկանքներ է ստացել նաև առանձին լրտեսներից, որոնք ժամանակին օգնություն են հասցրել ցարական կառավարությանը: Զարմանալի չէ դրանից հետո, որ ցարական կառավարության տնօրինությամբ հեղափոխական թերթը փակվում է, տպարանը քանդվում, իսկ ղեկավարները դատապարտվում են: Դժվար է գտնել համաշխարհային ժուռնալիստիկայի պատմության մեջ «Պրավդայի» պատմությունը հիշեցնող որևէ ուրիշ մի պարբերագրի պատմություն:

Մեծ չէր բոլշևիկ պատգամավորների թիվը Պետական Դումայում, բայց հինգ պատգամավորները, անգամ կալվածատերերի և կապիտալիստների պատգամավորների մոռյլ միջավայրում, խիզախորեն կովի էին ելնում ցարիզմի դեմ և մարտական իրենց ելույթներով արթնացնում էին բանվորներին և գյուղացիներին: Ուստի ամենևին զարմանալի չէ, որ այդ պատգամավոր-

ները, հակառակ նույնիսկ գոյություն ունեցող օրենսդրության, դատապարտվում են և ուղարկվում սիբիրյան աքսորավայրերը: Այդ հերոսների անունները հայտնի են այսօր: Լենինի անվան մեծ թանգարանի դահլիճներից մեկում սովետական աշխատավորները կարող են տեսնել կալանավորների դեպոսիտներ հագած հինգ պատգամավորների անշափ նշանակալից դիմաստվերները: Ամենևին դրանք կալանավորների նման չեն: Ամրակուռ, նվիրական է այդ գործիչների կեցվածքը և սուր արտահայտություն, անշափ խոսուն են նրանց աչքերը: Անմար կրակով լեցուն այդ լրագիրը այրող պատգամներ էր նետում, բարձրացնում էր ընթերցողների գիտակցությունը իր «գողջավոր» և «երկպիսի» լեզվով գրված հողվածներով և հմտագին կերպով, սիստեմավորված նյութերով անգամ շոշափելի հարվածներ էր հասցնում իշխող բուրժուական կարգերին և նպաստում էր ժողովրդի հեղափոխական գիտակցության բարձրացմանը... «Պրավդան» եղել է կուռ և հեղափոխական ուղղություն ունեցող մարտական մի լրագիր, որի շուրջը համախմբված թե՛ աշխատակիցները և թե՛ ընթերցողները վարել են հետևողական պայքար՝ զինված են եղել առաջավոր և հեղափոխական թերթիայի զենքերով: Ամրակուռ այդ պրավդիստների հոսանքի ղեկավարը՝ Վ. Ի. Լենինը, շահամանափակվելով աբտաւահամանից ուղղված գիտություններով և խորհուրդներով, ակտիվորեն աշխատակցել է «Պրավդային» և իր հանճարեղ պատգամներով ցուցադրել է «Պրավդայի» աշխատակիցներին հետևողական մարտական ուղեգիծ: Այսօր էլ լենինյան հողվածները մեզ համար թերթիական կարևորագույն նշանակություն ունեցող վավերագրեր են, որոնք օգնում են մեզ մտանալ անցյալի իրականության և ներհակ սոցիալական հոսանքների իրական էության հորիտ մեկնաբանությունը: Երբ մենք անցնում ենք լենինյան առաջարկով հիմնված կուսակցական լրագրի թեմաների և նյութերի ուսումնասիրությանը, մեզ համար ավելի ակնհեր է դառնում, որ նախահետմբերյան «Պրավդան» շատ խոշոր դեր է կատարել հեղափոխական ժառանգախոսիկայի պատմության մեջ...

Գուցե անտեղի չէր լինի մի քանի խոսք ասել առանձնապես նախահետմբերյան «Պրավդայի» հատկանշական այն նյութերի մասին, որոնք թերևս կարող են ավելի նշանակալից կերպով բացահայտել «Պրավդայի» մարտական ուղղությունը: Նման նյութերում, իհարկե, առաջին տեղն են գրավում Վ. Ի. Լենինի բազմաթիվ ակնարկները և հողվածները: Ժամանակին արդեն մի քանի պատմաբանների կողմից իրավացի կերպով նշվել է, որ «Պրավդայի» մարտական ուղեգիծ բնութագրման համար առաջին հերթին միշտ կարևորագույն նշանակություն են ունեցել լենինյան հողվածները: Դրանք եղել են ամենից առաջ պարզ լեզվով կերտված, միշտ դիպուկ աշխատություններ՝ լեցուն ղեկավար նշանակություն ունեցող հստակ գրույթներով: Լենինը կանգ է առել

դանազան հասարակական-քաղաքական հոսանքների սոցիալական էությունը բացահայտող փաստերի վրա, բնութագրել է թե՛ բացահայտ միապետականներին, թե՛ սև հարյուրակայիններին, թե՛ կազնախնայող-լիբերալներին, թե՛ բուրժուական զեմոկրատներին ծրարներն ու վարքագիծը և թե՛ միաժամանակ զանազան հոսանքների փոխհարաբերությունը: Մեծ ուշադրություն է նվիրել Լենինը նաև ազգային հարցի լուսաբանությանը և միշտ սուր դատափետման է Լենինը և տարբեր գույնի ազգայնականների թե՛ ուրույն տեսությունները և թե՛ մասնավոր աշխատավոր խավերի բարեկամությանը խանգարող հետադիմական ձգտումներն ու տենդենցները: Ինտերնացիոնալիզմը միշտ եղել է զեմոկրատիայի և ինքնիշխան հողվածների մեջ և նույն այդ ինտերնացիոնալիզմի դիրքերից էլ Լենինը մտտեցել է մշակութային հոսանքների և երևույթների քննարկմանը: Մեծ տեղ են գրավել «Պրավդայի» էջերում առանձնապես՝ Լենինյան թեորիական հողվածները և մասնավորապես՝ լիկվիդատորության զեմոկրատիայի միջոցով կտրուկ հողվածները, ինչպես նաև հակամարքսիստական իմաստասիրական հոսանքների քննադատության նվիրված ակնարկները:

Ավելորդ չէր լինի շեշտել, որ Լենինը ժամանակին ամենակտրուկ կերպով քննադատել է նաև «ձախ» պատգամներ առաջադրող «վաբրյոգովականներին» և առանձնապես մարքսիզմի սկզբունքները ազավազող էմպիրիոմոնիզմի և էմպիրիոկրիտիցիզմի հետևորդներին: Ականավոր գրող Մաքսիմ Գորկուն ուղղված նամակներում Լենինը կարուկ կերպով նշել է, թե որքան կարևոր նշանակություն ունեն Բոգդանովի նման նախկին մարքսիստի անհանդուրժելի տեսական-իմաստասիրական սխալները և որքան կարևոր է մարքսիզմի փիլիսոփայության զեմ ծառայող բողոքական գիտական հետևորդական քննադատությունը: Լենինը առանձին նշանակություն է տվել ռեկզիտիզմի և երկացմանն ու քննադատությանը:

«Պրավդայի» աշխատակիցների մեջ աչքի ընկնող դեր է կատարել Օլմինսկին, որի Վիտիմսկի ստորագրությամբ բազմաթիվ հողվածներ գրավել են Լենինի առանձնահատուկ ուշադրությունը և ժամանակին նշվել են որպես մարքսիստական հրապարակախոսության նշանակալից վավերագրեր:

«Պրավդայի» մեջ մեծ տեղ են գրավել համառուսական և միջազգային բանվորական շարժումների նկարագրական ակնարկները, զանազան սեռ գործարաններում նշմարվող երևույթների մասին կազմված տեղեկատու տեսությունները, բանվորների կացությունը և աշխատանքի պայմանները բուրժուազրող տվյալներ, գործադուլային շարժումների մասին կազմված ակնարկները:

«Պատերազմը և եվրոպան» հողվածի հեղինակը «Պրավդայում» (1912 թ., սեպտ. 26), ծանրանալով հակամարտ և պարբերաբար մրցակցող իմպերիալիստական պետությունների վրա՝ շեշտում էր, որ բուրժուական պետություն-

ների բախումները նպաստում են պատերազմների հրահրմանը, և միմիայն արևմտյան պրոլետարիատը կարող է խանգարել նոր պատերազմի բռնկմանը: Մեծ տեղ են բռնում «Պրավդայի» մեջ Պետական Դումայի ընտրական պայքարի, բնութաբանների, սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի մասին կազմված նյութերը: Լրագրում զետեղված էր Պետական Դումայի բոլշևիկ-պատգամավոր Բադաևի նշանակալից դիմումը՝ ուղղված պետերբուրգյան բանվորներին, որոնց նա կոչ էր անում՝ նպաստել լրագրի տարածմանը, կազմակերպել «Պրավդայի» դրամական ֆոնդի ամրացման գործը, ամենուրեք ստեղծել բանվոր-բաժանորդների լայնագույն ցանցեր:

Բանասեր-պատմաբանի համար առանձին նշանակություն կարող են ունենալ բանվորների ջանքերով հավաքված դրամական նվերների մասին հրապարակված տեղեկանքները: Լենինը, ինչպես հայտնի է, մեծ ուշադրություն էր դարձնում ռուսումնասիրում էր այդ տեղեկանքներն ու թվական տվյալները: Նա շեշտում էր, որ բանվորական խմբակների ակտիվությունն ու օգնությունն ինքնին արդեն վիպյում է, որ պրոլետարիատի առաջավոր շարքերը գիտակցում են բանվորական լրագրի նշանակությունը և համախմբվում են սեփական պարբերագրի շուրջը:

«Պրավդայում» հատուկ ու բավական նշանակալից տեղ էր նվիրվում նաև ժողովրդական կրթության պրոբլեմներին՝ մասնավորապես ուսուցիչների համագումարի նշանակությունը և գործունեությունը: Երբ հայտնի դարձավ, որ մայրաքաղաքի խոշոր գործարաններից մեկում (ռեզինի «Տրեուզու-նիկ» գործարանում) բազմաթիվ բանվորներ թունավորվել են աշխատանքի անհանդուրժելի պայմանների հետևանքով՝ բանվորները խնդրում են Դումայի անդամներից որևէ մեկին գալ գործարան: Այդ գործարանն է ուղևորվում բոլշևիկ պատգամավոր Բադաևը, որը մանրակրկիտ ուսումնասիրում է գործարանային պայմանները և ապա զետեղում է իր ընդարձակ հողվածը («Պուտ Պրավդի», 1914, № 35): Այդտեղ «Պրավդայի» բանվոր-ընթերցողներին Բադաևը հաղորդում է, որ հսկայական գործարանում աշխատում են մոտավորապես 13.000 բանվորներ և, որ այդ գործարանում դժբախտ պատահարների դեպքերը յուրաքանչյուր օր լինում են մի քանի անգամ, իսկ պրոֆեսիոնալ հիվանդների թիվը օրվա ընթացքում հասնում է 70-ից մինչև 90-ի: Գործարանում աշխատող բանվորների 65 տոկոսը կազմում էին կանայք, որոնք աշխատում էին օրվա ընթացքում 10 ժամ, իսկ աշխատավարձ էին ստանում մի օրվա աշխատանքի համար 40-ից 90 կոպեկ: Բադաևի հողվածը իր փաստական տվյալներով հսկայական տպավորություն է թողնում զեմոկրատական լայն շրջանների վրա: Անհրաժեշտ է նշել այն էլ, որ «Պրավդան» հրապարակել է բանվորների մասսայական թունավորման մասին ուրիշ ցայտուն ակնարկներ: Ես լավ եմ հիշում, որ հին Պետերբուրգում, լրագրի հատկապես այդ համարները, ցնցող տպավորություն էին թողնում:

Նման ուրիշ նյութերի ու վավերագրերի վրա ես չեմ ծանրանում սոսկ իմ ակնարկին հատկացված սահմանափակ էջերը նկատի առնելով: Կուզենայի միայն նշել, որ առանձնապես նշանակալից կարելի է համարել բանվորական մամուլին նվիրված ակնարկներն ու հոդվածները, որոնք բովանդակալից լինելով հանդերձ, հաղորդում էին ուշագրավ տեղեկություններ նաև բանվոր թղթակիցների մասին: Այսպես, օրինակ՝ «Պրավդայի Ուղի» լրագրի հոբելյանական համարում զետեղված մի ակնարկում հեղինակը կանգ էր առնում բանվորական լրագրի յուրահատուկ էվոլյուցիայի վրա, ցուցադրում էր բանվորական լրագրի կապը պրոլետարական բանակի առաջավոր շարքերի ոգու և ձգտումների հետ, շեշտում էր մարքսիստական ագիտացիայի ու պրոպագանդայի մեծագույն նշանակությունը²: Այդտեղ հիշատակվում էին նշանակալից թվական տվյալներ բանվոր թղթակիցների մասին: Զետեղված էր նաև հատուկ ստատիստիկական տախտակ, ուր նշված էր թե՛ թղթակցությունների ընդհանուր թիվը, թե՛ գործազուգային շարժումների թիվը, թե՛ հնօրյա Ռուսիայի շրջանները: Կային տեղեկություններ նաև զանազան շրջաններում բանվորների կողմից ընդունված բանաձևերի քանակի մասին: Հոդվածի հեղինակը կանգ է առնում առանձնապես «Պրավդայում» զետեղված հոդվածների և նյութերի հեղինակների վրա: Բացի 11.114 բանվորական թղթակցությունների բանվոր հեղինակներից, լրագրի էջերում հանդես էին եկել, որպես երկուհարյուր հոդվածների հեղինակներ, բանվորական նոր ինտելիգենցիայի ներկայացուցիչներ: Մամուլի պատմությունը ուսումնասիրողների առանձին ուշադրությունը կարող է գրավել նաև «Պրավդայի» բոլոր նյութերի, հոդվածների և ակնարկների ուշագրավ կլասիֆիկացիան, որ մեր կարծիքով, կարող է որոշ չափով մեթոդական ղեկավար նշանակություն ունենալ անգամ:

«Պրավդայի Ուղի» լրագրում հատուկ ակնարկի մեջ բերված են թվական տեղեկություններ ցարական կառավարության ցերեբրների կարգադրությամբ բանվորական մամուլի դեմ ուղղված ռեպրեսիաների մասին (տուգանքներ, կոնֆիսկացիա, համարների քանակը, հոդվածների թիվը, հալածանքների ընդհանուր թիվը): Հիշատակված են նաև ոստիկանության «մանր» ներկայացուցիչների գործառնությունները³:

Միևնույն համարում զետեղված էր հատուկ մի ակնարկ բանվոր գրողների մասին. ...«Բանվորական մամուլը,— կարդում ենք այդտեղ,— ստեղծում է բանվոր գրագետներին և ընդհակառակը,— բանվոր գրողներն ամրացնում են ու զարգացնում բանվորական մամուլը...»: Ապա շեշտվում է, որ անցյալում շատ և շատ տաղանդավոր բանվորներ չեն կարողացել ցուցադրել իրենց ընդունակությունները: Երկու տարի միայն գոյություն ունի բանվորա-

կան մամուլը և այդ երկու տարիների ընթացքում նա արդեն ստեղծել է բանվոր գրողների շարքեր: Կեցցե՛ Բանվոր գրողը:

Երկու խոսք անհրաժեշտ է ասել նաև «Պրավդայի» մեջ զետեղված այն ակնարկների ու հոդվածների մասին, որոնք նվիրվել են արվեստի և գրականության պրոբլեմների ու դեմքերի քննարկմանը: Նման նյութերում աչքի են ընկնում Օլմիխսկու հոդվածները: Նախահոկտեմբերյան «Պրավդայում» տարբեր ժամանակ, բազմաթիվ ակնարկներ են տպագրվել բուրժուական և ռեակցիոն գրչակների ջանքերով Գորկու դեմ սկսված «քննադատական» արշավի առթիվ, որոնք այսօր էլ կարող են գրավել սովետական գրականագետների ուշադրությունը: Վիտիմսկին (Օլմիխսկին) դատափետում է նացիոնալիզմի, անտիսեմիտիզմի, ռեակցիոն մտայնությունը պաշտպանող գործիչներին⁴: Սովետական գրականագետները կանգ են առել նաև Մաքսիմ Գորկու իտալական «Հեքիաթների» քննարկմանը նվիրված հոդվածի, ինչպես նաև «Պրոլետարական գրողների առաջին ժողովածուի» մասին կազմված ուսումնասիրական այն հոդվածի վրա, որը տպագրվել էր «Պրավդայի» հատուկ հավելված «Ռաբոչի» պարբերականի մեջ: Ժամանակին հրապարակվել է նաև լիկվիդատորական «բելետրիստիկայի» քննադատությունը նվիրված մատենախոսական: «Պրավդայի» հանձնարարությամբ աշխատակիցներից մեկը կազմել էր շատ նշանակալից մի հոդված ուսուսակական ղեկագետ-գրագետների նախաձեռնությամբ կազմակերպված գրական-հասարակական այն հավաքույթի առթիվ, որ կազմակերպվել էր հատկապես առաջավոր զաղափարական պաշտպաններ առաջադրող գրականության դեմ: Այդտեղ ընդգծված է, որ բանվորական շարժման ակնհայտնի վերելքի ազդեցության ներքո սկսվել է ուրույն գաղափարական վերելք նաև մի շարք առաջավոր գրողների շրջանում: Ենթադրվում էր ղեկագետ գրողների հայտարարությունների և ակամա խոստովանությունների իմաստը, ակնարկված հոդվածի հեղինակը գրում էր, որ ռեակցիոն ուսուսողների նոր ստեղծագործությունները յուրահատուկ ձևով արտացոլում են հասարակական իրականության մեջ նշմարվող նոր դեպքերի և երևույթների ցուցանիշները: Ժամանակին «Պրավդայի» այդ հոդվածը («Ռեակցիզմի վերածնունդը») մի շարք հայտնի սովետական գրականագետների կողմից բնութագրվել է որպես անչափ նշանակալից գրական-հասարակական վավերագիր: Բացի հայտնի գրողների կյանքի և ստեղծագործության մասին գրված ակնարկներից և հոդվածներից (Շչեգրին, Օգարյով, էժեն Պոտյե և այլն), «Պրավդան» տպագրել է նաև բազմաթիվ բանաստեղծություններ, որոնց մեջ աչքի են ընկնում առանձնապես բանվոր-գրողների ջանքերով կերտված միշտ առույգ և մարտական բանաստեղծությունները կամ դիպուկ և իմաստալից առակները: Մեր ակնարկի նեղ սահմանները դժբախտաբար

² «Путь Правды», 1914, № 67, 22 апреля.

³ «Путь Правды», № 71, 26 апреля.

⁴ «За Правду», 1913, 3, 4 октября.

հնարավորություն շեղ տալիս ավելի հանգամանորեն կանգ առնել նախահոկ-
աճմբերյան «Պրավդայի» նման և շատ ուրիշ նյութերի վրա: Փետրվարյան
հեղափոխությունից հետո հրատարակված «Պրավդայի» աշխատակիցների
կազմը եղել է ավելի լայն: Լենինի ղեկավար հոգովածները նորից մեծ տեղ էին
գրավում, բայց սկզբնական էտապում «Պրավդայի» առաջին համարները լույս
էին տեսնում առանց Լենինի անմիջական ղեկավարության: Լենինը, ինչպես
հայտնի է, Ռուսիա է գալիս ապրիլի 3-ին (16) և արդեն ապրիլի 7-ին (20) հրա-
պարակում է հանրահայտ իր աշխատությունը պրոլետարիատի հերթական
խնդիրների մասին: Լենինի շուրջը համախմբված ակտիվ լենինյան աշխա-
տակիցների շնորհիվ «Պրավդան» նորից դառնում է ղեկավար նշանակություն
ունեցող պարբերագիր, որի թե՛ ուղեգծին և թե՛ գրական-հրատարակատա-
կան ելույթներին հետևում էին մեծագույն ուշադրությամբ նույնիսկ հեռու
վայրերում հրատարակվող բոլշևիկյան լրագրների ղեկավարները: Նորից
«Պրավդայի» պաշտպանության համար բանվորների և ստալինյանների նա-
խաձեռնությամբ ստեղծվել էր «Երկաթե ֆոնդ» և նորից մեծ երկրի բազմա-
զան վայրերից հեղափոխական ժողովրդի ներկայացուցիչներն ուղարկում էին
իրենց սիրելի լրագրին բազմաթիվ նամակներ ու թղթակցություններ: Նոր
բանվորական պարբերագրի մարտական և հեղափոխական էությունը ակներև
էր: Փետրվարյան հեղափոխությունից հետո մայրաքաղաքում հիմնվել էին
բազմաթիվ բուրժուական և մանր-բուրժուական լրագրեր, որոնց ղեկավար-
ները կատաղորեն նետվում էին բոլշևիկյան լրագրի դեմ, տարածում էին սուտ
և պրովոկացիոն լուրեր, դիմում էին պայքարի ամենավայրագ մեթոդների:
Հրատապ այդ օրերին միայն «Պրավդան» էր ճշգրիտ կերպով արտահայտում
հեղափոխական զանգվածների իսկական ձգտումներն ու մտորումները: Զար-
մանալի չէ դրանից հետո, որ թե՛ բացահայտ ռեակցիոն մամուլի և թե՛ իրենց
իրական ծրագիրները քողարկող բուրժուական-լիբերալ, նարոդնիկական կամ
մենշևիկյան պարբերագրերը միասնական ջանքերով դատափետում էին առե-
լի «պրավդիստներին»: Երբ սկսվեցին ռեակցիոն ուժերի հակահեղափոխա-
կան ելույթները՝ սեհարյուրակային ուժերի անմիջական սպասավորները
«Ժամանակավոր Կառավարության» հավանությամբ 1917-ի հուլիսին ավերե-
ցին «Պրավդայի» տպարանը: Ռեակցիոն կուսակցություններին սպասավորող
սև ուժերը ստեղծել էին մայրաքաղաքում ժանդարմային կացություն: Ստեղծվեց
պառուզա և առժամանակ ընդհատվեց «Պրավդայի» հրատարակությունը: Սա-
կայն, հետագայում, մեր կուսակցության ղեկավար կենտրոնի որոշմամբ նո-
րից վերսկսվեց «Պրավդայի» հրատարակությունը: Շարունակելով մասնաճյուղի
կազմակերպման ուղղությամբ իր աշխատանքը, շատ ակտիվ կերպով «Պրավ-
դան» նորից ձայնակցում է հեղափոխական զանգվածների կազմավորվող նոր
արշավին և պայքարին:

Իր առանձին հատկանիշներով փետրվարյան հեղափոխությունից հետո
հրատարակվող մեր «Պրավդան» նկատելի շափով տարբերվում էր վաղեմի
«Պրավդայից»: Գրական-գեղարվեստական թեմաների քննարկմանը և լուսա-
բանությանը նվիրված հոդվածներն ու նյութերը ավելի քիչ տեղ էին գրավում
նոր «Պրավդայում»: Հրատարակատախանային և բաղաբանական հոդվածները գե-
րակշռում էին: Ավելի մեծ էր նաև հեռու վայրերի մասին կազմված տեղեկու-
թյունների թիվը, ինչպես նաև բազմազան ժողովների և հավաքույթների
ուրույն նկարագրական տեղեկանքների թիվը: Լրագրի հիմնական մասը, սա-
կայն, նորից կազմում էին Լենինի հոդվածները, որոնք և մեր կուսակցության
ղեկավար շտաբի (Կենտկոմի) որոշմամբ բացահայտում էին «Պրավդայի»
ուղղությունը: Կուսակցության աղբյուրագիտական աշխատությունների ոչ մի
հեղինակ չի կարող անուշադրության մատնել «Պրավդայի» համարներում
հրատարակված թե՛ հոդվածները և թե՛ նույնիսկ մասնաբերով տպագրված
անգամ հակիրճ տեղեկանքները: Առանձնապես կարևոր նշանակություն ունեն
շեշտված շրջանի «Պրավդայի» համարների որոշ նյութերը մեր կուսակցու-
թյան պատմությունը ուսումնասիրող գործիչների համար:

Միմիայն Լենինի և հետևողական լենինյանների շնորհիվ Հոկտեմբերյան
սոցիալիստական մեծ հեղափոխության նախօրեին «Պրավդան» նորից կա-
տարել է հսկայական ագիտացիոն-պրոպագանդիստական և կազմակերպա-
կան աշխատանք, որպես մեր կուսակցության ղեկավար շտաբի՝ Կենտրոնական
Կոմիտեի կենտրոնական օրգան... Եթե 1912—1914 թթ. իրականությունը թե-
լադրում էր մեր «Պրավդայի» խմբագիրներին և աշխատակիցներին գործածել
որույն եզրպոսյան «երկպալան» լեզու և անգամ ակնհայտ հեղափոխական և
մարտական գաղափարները առաջադրել «լեզալ» ձևով, փետրվարյան հեղա-
փոխությունից հետո ստեղծված նոր իրականությունը չէր կարող խանգարել
հետևողական լենինյաններին և ավելի շատ հնարավորություն էր տալիս բա-
ցահայտորեն և կտրուկ կերպով արձագանքելու ժամանակի հրատապ պրոբ-
լեմներին: Դժվարին այդ աշխատանքը «Պրավդայի» շուրջը համախմբված
աշխատակիցների հիմնական կազմերը կատարել են մեծագույն տոկոսու-
թյամբ: Այսօր, երբ նշվում է «Պրավդայի» հերոսական հիանալիքը, առաջին
նվազ մեր ուշադրությունը գրավում են հենց նախահոկտեմբերյան «Պրավ-
դայի» գործունեությունը բացահայտող և բնութագրող փուլերը: Լենինը այդ
փուլերի ուսումնասիրությանը շատ մեծ նշանակություն էր տալիս: Կասկածից
զուրս է, որ կոչ անելով կուսակցության ակտիվ բոլոր ներկայացուցիչներին
աշխատակցել «Պրավդային» և ջանալով այդ մարտական լրագիրը դարձնել
վաղեմի «Իսկրայի» տրագիցիաները շարունակող և մասսաների հեղափոխա-
կան կազմակերպմանը նպաստող կենտրոն՝ Լենինը հայ ժողովրդի մեծանուն
հեղափոխական գավակներից մեկի՝ Ստ. Շահումյանի ակտիվ մասնակցու-

թյունը «Պրավդայի» խմբագրության աշխատանքներին տակավին հեռու օրերին, համարում էր շափազանց անհրաժեշտ և կարևոր: Նորերս հրատարակված Լոգինովի ուսումնասիրության մեջ նշված նշանակալից տեղեկանքը համենայն դեպս բացահայտում է այդ հանգամանքը ավելի քան ակնորոշ կերպով⁵: Եթե մենք նկատի առնենք այն էլ, որ ինքը՝ Ստ. Շահումյանը, Բաքվում միշտ հետևել է լենինյան պատգամներին, ակտիվ հրապարակախոսական և գիտական-ստեղծագործական աշխատանքների շրջանում կազմակերպել է «Պրավդայի» ուղեգծին ձայնակցող բոլշևիկյան պարբերականներ, ապա մեզ համար ավելի ակներև կդառնա, որ «Պրավդայի» մարտական ուղին Շահումյանի համար եղել է լենինյան պատգամների վրա խարսխված մի ուղեգիծ...

Անցած հիսուն տարիների ընթացքում կիրառված ուղին պաշտպանվել է մեր «Պրավդայի» այն աշխատակիցների ջանքերով, որոնք այսօր տոնում են իրենց սիրելի ու նվիրական լենինյան պարբերադրի հիսնամյակը:

ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, հասարակական գիտություններ, 1962, № 4:

5 В. Логинов, Ленин и Правда 1912—1914 гг., М., стр. 115.



Բ

ՌԵԱԼԻԶՄԻ ՎԵՐԱՄՈՒՆԻԿ

Մեր գեղարվեստական գրականության մեջ ներկայումս նկատվում է որոշ թեքում դեպի ռեալիզմը: Այսօր «կոպիտ» իրականությունը նկարագրող գրողների թիվը շատ մեծ է, քան մոտիկ անցյալում: Մաքսիմ Գորկին, Ալեքսեյ Տոլստոյը, Բունինը, Շմելյովը, Սուրգուշովը և այլ գրողներ իրենց երկասիրությունների մեջ նկարագրում են ոչ թե «հեքիաթային հեռու ժամանակները» կամ խորհրդավոր «տայիտցիներին», այլ իսկական ռուսական կյանքը իր բոլոր արհավիրքներով և քաղբենիական առօրյայով: Նույնիսկ Սերգեև-Յենսկին, նախկին ռուսական ղեկադեմոստների անպայման տաղանդավոր այդ ներկայացուցիչը, ներկայումս որոշակիորեն քաջում է դեպի ռեալիզմ:

Անցյալում էլ անշուշտ եղել են կյանքի ռեալիստ նկարիչներ: Հիշատակված գրողներից մի քանիսը իրենց գրական աշխատանքը վաղուց են սկսել: Ռուս հասարակությունը, այնուամենայնիվ, անցյալում գրանց չէր նշմարում: Ավելին՝ ռուսական հասարակությունը նրանց չէր գնահատում: Բավական է միայն հիշել, թե այդ հասարակությունը ինչպիսի դիրք էր բռնել Մաքսիմ Գորկու նկատմամբ: Այդ շրջանում ռեակցիան, հասարակական ուժերի ջախջախումը շղթայել էին ռուսական այսպես կոչված «ինտելիգենտ» հասարակության զգացումներն ու ձգտումները: Գրական ասպարեզում իշխում էին պարոնյաք Կամենսկիները, Արցիբաշևները, Զուլկովները՝ իրենց մաներային ու ճղճղան աշխատություններով: Այդ գրողները բացասաբար էին մոտենում իրականությանը կամ միակողմանի կերպով էին մեկնաբանում կյանքի երկվայեղները: Դեկադենտ գրողները ձգտում էին կտրվել ազմկահույզ իրականությունից և ցանկանում էին կերտել «քաղցրավուն» լեզենդներ «դյուրական և զեղեցիկ աշխարհի» մասին (Սուրգուր — «Ստեղծագործվող լեզենդ»): Երբ մենք ծանոթանում ենք «դյուրական այդ աշխարհին», տեսնում ենք, որ դա իրականում բավական տաղտկալի բուրժուական մի վայր է, ուր մարդիկ սրտովում են ստորություններով ու մանր անբարոյականությամբ: «ԽՐԾՆԵՐ-

դավոր պատանիներ» և կիսամերկ աղջիկներ, սեռերի պայքար՝ ահա դեկադենտ գրողների երկերի թեման:

Ալեքսանդրիական, լեսբիական սերն ու սեռական սանձարձակությունների շատ ուրիշ ձևերն էին իշխում իդեալական «Տեքիաթային» այն երկրում, որը ղեկագնեմաների համար «քաղցր լեզինդ» էր:

Այդ շրջանում հերոս էին համարվում բարձր դասի ներկայացուցիչները՝ սպաները, ղեզեններատները, այլասերված արիստոկրատները: Այդ ժամանակ հանդես էին գալիս հեռիակներ, որոնք մասնագետների նման գունազարդում և փառաբանում էին կալվածատիրական հին աշխարհը... Այսօր, մեր օրերին, այդ ամբողջ մղձավանջը կարծես շքանում է, հասարակական մթնոլորտը կարծես մաքրվում է: Անատոլի Կամենսկուն մոռացել են: Արցիբաշեն արդեն տաղտկալի է համարվում: Արցիբաշեն այսօր էլ ունի ընթերցողներ, բայց ընթերցողների այդ շրջանը այժմ ավելի նեղ է ու սահմանափակ: Այսօր հասարակական-դեմոկրատական շրջանները ավելի մեծ ուշադրությամբ են կարդում ռեալիստ գրողներին: Նույնիսկ նեկրասովը, որ մի ժամանակ համարվում էր «տաղտկալի հրապարակախոս», այժմ այլ կերպ է գնահատվում: Նեկրասովի մասին այսօր ուրույն համակրանքով է բարբառում նույնիսկ Մեթեկովսկին:

Ավիլորդ է ասել, որ հասարակական այդ բեկումը մեծագույն շափով կապված է բանվորական շարժման վերելքի հետ: Պրոլետարիատը ուսու հասարակության միակ դասակարգն է, որ նորից ասպարեզի վրա է դնում կենսական խնդիրներ ու նպատակներ: Եվ ահա հենց այսօր էլ ռեալիստ հեղինակներն ստացել ու ստանում են հասարակական մեծ նշանակություն: Նշված գրողներից շատերի համար անշուշտ խորթ են բանվորական շարժումն ու պրոլետարիատի գաղափարախոսությունը: Չնայած այդ հանգամանքին, նրանք իրենց ստեղծագործություններով, իրենց որոնումներով ու տատանումներով արտահայտում են հասարակական ուժերի նոր բեկումն ու դեմոկրատական շրջանների դարձը: Ահա թե ինչու ուսու ղեկագնեմտ գրողները նշմարում են ռեալիզմը մարքսիզմի հետ միացնող շաղկապը: Ահա թե ինչու ղեկագնեմտները կրթտ կերպով, նույնիսկ մոլեգնորեն դատափետում են ռեալիստներին ու գտնում, որ ռեալիզմը նոր շարժման հետևանքն ու արձագանքն է: Այդ փաստը անառարկելիորեն հաստատեցին ուսու ղեկագնեմտների վերջին ելույթները գրական ասուլիսների ժամանակ:

Այստեղ ես կարող եմ հիշատակել այդօրինակ ժողովներից մեկը: Օրերս Կալաշնիկովյան բորսայի դահլիճում ղեկագնեմտները կազմակերպել էին «դիսպուտ»: Պարոնայք Սոլոգուբները, Անիշկովները, Վյաչեսլավ Իվանովներն այդ ժողովում ճշում էին Եմիլովիզմի հաղթանակի մասին և հիստերիկ բացականչություններով քարկոծում ռեալիստներին ու «բանվորական շարժման մասին խոսող» մարդկանց (Ե. Անիշկովի խոսքերը)...

Պարոն Անիշկովը ինքն իրեն մերկացրեց: Պայ. ղեկագնեմտները կովի են ելնում վերակենդանացող ռեալիզմի դեմ, որովհետև պիտեն, որ ռեալիզմը բանվորական շարժման ուժի արտացոլումն է: Դրանք գգում են, որ իրենց զագրելի «ստեղծագործվող լեզինդը» մարում ու անհետանում է պրոլետարիատի ստեղծագործվող կյանքի հանդեպ...

«Պրավդա» («Պուտ Պրավդի»),
1914 թ., 26 հունվարի, 5:

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ «ՀԵՔԻԱԹՆԵՐ»-Ը

«...Չկան ավելի լավ հեքիաթներ, քան այն հեքիաթները, որ ստեղծում է ինքը՝ կյանքը...»:

Անդերսենի այս խոսքերն էլ Գորկին բնորոշում է իր գրքում: Այդ խոսքերով նա բնութագրում է թե իր «Հեքիաթներ»-ի հիմնական մոտիվը և թե, որոշ շափով, իր աշխարհայեցությունը: Եթե ղեկագնեմտ բանաստեղծի համար այդ իրական կյանքը միշտ «կոպիտ» է, «կոպիտ» նույնիսկ այն պահին, երբ «հրդեհվելով աղմկում է», ապա Մաքսիմ Գորկու համար հենց այդ «կոպիտ» կյանքն է հմայիչ և լեցուն յուրահատուկ պոեզիայով: Որպես կյանքի տաղանդավոր քանդակագործ՝ Գորկին ղեղեցիկը որոնում է հենց իրականության մեջ:

Եվ ահա «հեքիաթներ»-ում կան «կոպիտ» իրականության մեջ ստեղծվող ու ապրող այդ «հեքիաթային» շրջագծերը:

Հեքիաթների հիմնական ֆոնը արևաշող Իտալիան է, որը վաղուց ի վեր նկարագրվում է որպես «ճավերթ երիտասարդ» և «երջանիկ երկիր...»: Գորկու «Հեքիաթներ»-ում բացակայում է նման կույր և միակողմանի երկրպագությունը: Այն, ինչ նկարագրում է, շատ հաճախ ցուցադրում է հեռավոր «երջանիկ Իտալիայի» բնակիչների կյանքի նույնիսկ մթին ու սովորտ կողմերը: Գորկու «Հեքիաթներ»-ում շկան միշտ դյուրական, անպատճառ խելոք կամ սքանչելի արիստոկրատներ, ինչպես նաև շեն երևում անորոշ ձգտումներ ունեցող նենգ ինտելիգենտներ: Արտոնյալ դասակարգերի ներկայացուցիչների դիմաստվերներն աննշան տեղ են գրավում Գորկու հեքիաթներում:

Հեքիաթների հիմնական և գլխավոր հերոսը ժողովուրդն է, որն իր հարուստ կյանքով և բոլոր ձգտումներով նկարագրողում է իրական կյանքը: Գորկին միայն ժողովրդի մասին է խոսում և պատմում:

Իտալական աշխատավոր ժողովրդի տարբեր խավերի բոլոր ձգտումները, առօրյա հույզերը, ինքնահատուկ ապրումները Գորկու ակնարկներում բնութագրվում են մեծագույն սիրով:

Նովիվները, գյուղացիները, նավաստիները, բանվորները կուտ շարքերով բայլում-անցնում են և ներքող ձոնում կյանքին ու կյանքի ղեղեցկությանը: Մենք այդ ակնարկների մեջ շենք տեսնում հուսահատություն կամ խոր հոռե...

տեսություն: Մինչդեռ իտալական ժողովրդի կյանքը ծանր է, իսկ տնտեսական պայմանները՝ դժվարին: Մերթ ընդ մերթ մեզ նույնիսկ թվում է, թե այդ ժողովուրդը վաղուց ծանոթ մեր մերձավորն է. այնքան նման ու հարազատ են իտալական ժողովրդի ապրումներն ու ձգտումները ուս ժողովրդին:

Տրադիցիայի տիրապետությունը և հասարակության առանձին ներկայացուցիչների — անդամների ընդվզումը հնօրյա տրադիցիայի դեմ, կրոնական խոր ապրումները և միևնույն ժամանակ ժողովրդի առաջավոր շարքերի բնագատական կամ բացասական վերաբերմունքը կրոնի նկատմամբ, բոլոր հույզերի, սիրո և ատելության անմիջական դրսևորումը, — այս ամենը կարծես վաղուց հայտնի է մեզ: Հայտնի ու ծանոթ են նաև այն մտածող բանաստեղծ-բանվորները, որոնք խոհուն կերպով և քննադատորեն են մոտենում հայրենի իրականության երևույթներին և խոսում են ապագա նոր աշխարհի մասին...

Այդ բոլոր ցայտուն երևույթները «կյանքի հեքիաթներ» են: Գեկադենտ բանաստեղծները չեն նշմարում կամ չեն ցանկանում տեսնել կյանքի այդ «հեքիաթները»: Գորկին իրականության մեջ տեսնում է այդ «հեքիաթայինը» և նկարագրում-ընդգծում է արևաշող Իտալիայի պայծառ երկնքի ու կապույտ ծովի ֆոնի վրա:

Ես այստեղ չեմ ծանրանա շատերի կողմից արձանագրված այն փաստի վրա, որ Մաքսիմ Գորկին իր իտալական հեքիաթներում շատ հաճախ տալիս է ոչ թե անդորր զգացումով համակված գեղարվեստական վերարտադրություն — նկարներ, այլ ջերմ, «միակողմանի» կամ խորունկ հափշտակությունը տողորված կրակոտ հրապարակախոսական ակնարկ-հոգվածներ:

Մաքսիմ Գորկին հիրավի իր իտալական հեքիաթների մեջ շատ անգամ հանդես է գալիս որպես նոր ճշմարտության քարոզիչ...

Գորկին կարծես նկարագրում կամ փորձում է կերտել ժամանակակից հասարակության մեջ նոր կյանքի համար մարտնչող «նոր մարդկանց» հոգեբանության առանձնահատուկ և բնորոշ հատկանիշները...

Կենսուրախ հայեցողությունը և եղբայրական սիրո քարոզը շատ ցայտուն կերպով և ինքնատիպ գույներով ու տոնով զարդարում են Գորկու իտալական բոլոր հեքիաթները...

«Պրավդա», 1914 թ., 23 փետրվարի, № 20:

ԲԱՅՐՈՆ ԵՎ ՍՏԵՆԳԱԼ

Հեռու իրենց հայրենի վայրերից՝ երկու մեծ գրողներն էլ ակտիվորեն մասնակցել են իտալական ազգային-հեղափոխական շարժումներին, ամենամոտիկ հարաբերություններ են հաստատել հայտնի կարրոնար գործիչների հետ, խանդավառ պատանիների նման ձայնակցել են ժողովրդական ըմբոս-

տություններին: Անցյալի մուսյլ օրերին այնքան էլ անվտանգ չէր այդօրինակ գործունեությունը: Եվրոպայում ամենուրեք իշխում էր ռեակցիան: Ռուսական միապետի՝ «համաեվրոպական ժանդարմի» անմիջական մասնակցությամբ կոփվում էին նորանոր շղթաներ ժողովուրդների համար: Բազմաթիվ լրտեսների ու պրովոկատորների խիտ ցանցերով ծածկված էին բոլոր երկրները: Իտալիայում արդեն զրանց թիվը շափազանց սովոր էր, քանի որ մետերնիխյան լրտեսներին միացած էին նաև Հոմի պապի լրտեսները: Կախաղան էին հանվում ամենահասարակ գրվածքի կամ ելույթի համար: Երբ Ստենդալը հրատարակեց իտալական քաղաքների մասին իր գիրքը և առերևույթ անմեղ այդ գրքում առանձին տողեր նվիրեց «ավստրիական մեխանիզմի» բնութագրմանը՝ ամենազոր Մետերնիխի լակեյները կարգադրեցին գտնել անհայտ հեղինակին և կախաղան հանել...

Բայրոնն անվանի լող էր, իսկ Ստենդալը այնքան տաղանդավոր էր, որ միշտ էլ հնարավորություն ուներ ապրել անհոգ տուրիստի նման, նույնիսկ հրաբխային Իտալիայում: Երկուսն էլ իրազեկ էին տիրող հասարակական-քաղաքական անցուղարձին: Երկուսն էլ շատ լավ գիտեին, որ մասնակցելով հեղափոխական շարժմանը՝ իրենց կյանքը ենթարկում են մեծագույն վտանգի: Այնուամենայնիվ, երկուսն էլ համակված միջազգայնական զգացումով նետվում են մեծ հորձանքի մեջ: Պատահական չէր, իհարկե, նման վարքագիծը: Միամտություն կլինեք ենթադրել, թե նման մտայնությունը նպաստել են իտալական բարձր գեղարվեստը, իտալական լուսառատ վայրերի մեղմ կլիման կամ իտալական գեղուհիները...

Մաքսը Բայրոնի մասին հայտնել է հետևյալ կարծիքը. «Բայրոնի և Շելլիի իսկական տարբերությունը հետևյալն է. նրանք, ովքեր նրանց հասկանում և սիրում են, բախտավորություն են համարում, որ Բայրոնը մեռավ իր կյանքի 36-րդ տարում, որովհետև վրդաոնար ռեակցիոն բուրժուա, եթե երկար ապրեր: Ընդհակառակը, նրանք ցավում են, որ Շելլին մահացավ 29 տարեկան հասակում, որովհետև իսկական հեղափոխական էր և միշտ կպականեր սոցիալիզմի ավանդարդին...»:

Ստենդալն իր ամբողջ մտահայեցողությամբ ուրոշ շափով հիշեցնում է Բայրոնին, և նրա կյանքի վերջին շրջանի հոգեկան ներհակությունները ցույց են տալիս, թե որքան դժվար էր տաղանդավոր ռեակտիստի համար ազատագրվել ինդիվիդուալիստական մտածողության կաշկանդիչ կապանքներից: Փարիզյան մթնոլորտը, ֆինանսական պրուստիտիայի տիրակալությունը, բուրժուական հասարակության հակասությունները նա շատ լավ էր նշմարում: Իր նամակներում նա հիացմունքով է խոսում Հուլիսյան հեղափոխության ժողովրդական հերոսների մասին, ծաղրանքով և հեզնանքով է նկարագրում բուրժուաներին, առանձին շեշտով է բացահայտում Հուլիսյան միապետու-

թյան գլուխ կանգնած բանակի նշանակությունը: Նրա բեկված հոգում մերթ ընդ մերթ արթնանում են ժողովրդի հերոսական պայքարի անասելի վեհու-
թյան հին հուշերը: Բայց և այնպես նա սահում էր դեպի իր համար ատելի
բուրժուական աշխարհի զաղափարախոսությունը, անդեկ ու անառագաստ՝
միայնակ ինտելիգենտի նման խորշում էր դեմոկրատիայից և նույնիսկ իր
արվեստին տալիս էր ուրույն գունավորում:

Սակայն քսանական թվականներին Ստենդալը տակավին պատանի էր,
խիստ առույգ հայեցողության տեր, սողորված հեղափոխական հայացքներով և
Բայրոնի հետ միասին գալիք ժողովրդական մեծ ընթացատյուններն էր երա-
զում: Իտալիայում երկու մեծ գրողներն էլ խորապես համոզված էին, որ փոա-
լական շարժումները գալիք համաշխարհային հզոր շարժումների առաջին
ուժգին ազդանշաններն են: Ամենևին պատահական չէր, որ ուղևորվելով Իտա-
լիա՝ երկու գրողներն էլ ամենից առաջ մոտենում են ազատագրական շարժ-
ման ներկայացուցիչներին և դառնում իտալական հեղափոխականների մտե-
րիմ բարեկամներն ու զինակիցները: Ստենդալի կյանքի ուսումնասիրությունը
նվիրած իր հայտնի մենագրության մեջ ռուս բանասեր Վինոգրադովը («Ստեն-
դալը ու նրա ժամանակը») հաղորդում է մի քանի ուշագրավ տեղեկություն-
ներ հենց այդ պատմաշրջանի մասին¹:

Ստենդալի երկերի ռուսերեն թարգմանությունը տակավին ավարտված չէ:
Մեզ անծանոթ են մեծ գրողի բազմաթիվ նամակները, հուշերը, ժամանակա-
կից գործիչների վկայությունները և մեմուարները: Նման պայմաններում Վի-
նոգրադովի վերոհիշյալ տեսումնասիրությունը, թեկուզ և իր մի քանի վիճելի
կողմերով, անպայման որոշ արժեք ունի: Ահա թե ինչու ես գտնում եմ, րդ այդ
գիրքը կարող է օգնել մեզ մեկնաբանելու, եթե ոչ լիակատար կերպով, ապա
գեթ մոտավորապես, Բայրոնի և Ստենդալի հասարակական գործունեության
որոշ մոմենտները: Հետեաբար, մի կողմ թողնենք Վինոգրադովի գրքի առան-
ձին սխալներն ու նրա մեկնաբանությունը և հետևենք նրա գրքում հիշատակ-
ված փաստական նոր տվյալներին:

Ստենդալը Բայրոնի հետ ծանոթանում է Միլանում, 1816 թվականին:
Այդտեղ էլ, ըստ երևույթին, նա առաջին անգամ մոտիկ հարաբերությունների
մեջ է մտնում կարբոնարական շարժման ներկայացուցիչների հետ: Իտալա-
կան կարբոնարները Բայրոնին և Ստենդալին նվիրում են սպիտակ ակաջիայի
ճյուղեր: Սպիտակ ակաջիան կարբոնարների խորհրդանշանն էր, որն արտա-
հայտում էր նրանց անսահման ատելությունը միապետության հանդեպ:

¹ Վինոգրադովը հրատարակել է Միցկևիչի աչքի ընկնող երկասիրություններից մեկը՝ խիստ
ուշագրավ կոմենտարներով, ինչպես նաև Բայրոնի փաստալից կենսագրությունը և ապա՝
«Պոստպեր Մերիմեի նամակները Սորելսկուն» հմուտ հետազոտությունը:

Նրանց նվիրելով սպիտակ ակաջիայի ճյուղեր, Միլանի հեղափոխականները
բացահայտում և ընդգծում են իրենց շերտ վերաբերմունքը դեպի երկու մեծ
գրողները և միաժամանակ որոշակի շեշտում հեղափոխական այդ գործիչնե-
րին միացնող ընդհանուր կապի գոյության փաստը:

Միլանի թատրոնում է Բայրոնը տեսնում Ստենդալին և այդտեղ էլ մտեր-
մանում նրա հետ: Երկու ժամ Բայրոնը և Ստենդալը զրուցում են նապոլեոն-
յան արշավանքի առանձին մանրամասնությունների մասին: Բայրոնը խրնդ-
րում է Ստենդալին՝ պատմել իր անձնական հուշերն ու տպավորությունները:

«...Կես գիշերին,— գրում է Վինոգրադովը իր հետազոտության մեջ,—
երկու գրողները իտալական բանաստեղծ Մոնտիի, Կոնֆալինիների, Սիլվո
Պելլիկոյի և ուրիշ իտալացիների հետ բարձրանում են Միլանի հայտնի տա-
ճարի տանիքը: Լուսնկա զիշերին այդտեղից բացվում է շատ գեղեցիկ տեսա-
րան: Բայրոնը զրույցի ժամանակ իր ուղեկիցներին հիշեցնում է հինավուրց
իտալական կոնգոտիերների մասին...»:

Երբ հետագայում Բայրոնը տեղեկանում է բանաստեղծ Մոնտիի ստորու-
թյանը, ամենավճռական կերպով խզում է իր հարաբերությունները նրա հետ:
Իրավացի է Վինոգրադովի այն դիտողությունը, որ բայրոնյան մի շարք երկե-
րի մեջ ևս կարելի է նշմարել իտալական դեպքերի արձագանքները: Երբ լույս
է տեսնում Բայրոնի «Դանթեի մարգարեությունը» հայտնի հորժը, կառավա-
րությունը կարգադրում է բռնագրավել այն: Պոեմում շատ որոշակի է դրված
կարբոնարիզմի կնիքը: Հոռմի պապը իր կողմից հրապարակում է հատուկ
կոնդակ: Ավստրիական ժանդարմներն էլ ցուցաբերում են իրենց սովորական
ակտիվությունն ու եռանդը:

Իտալիայում հյուսիսային կարբոնարների շարժման հետ կապված ուժեղ
կաղմակերպություններից մեկն էր համարվում, այսպես կոչված, «Ամերիկ-
յան հրաձիգների միությունը»: Կարբոնարներն այդ միությունը այդպես էին
անվանել ի պատիվ Ջորջ Վաշինգտոնի: Հեղափոխական այդ կաղմակերպու-
թյան գլուխ էր կանգնած Բայրոնը:

Իտալական բանասեր Տրիբունատին 1899 թ. հրատարակել է մի շարք
վավերագրեր, որոնցից առանձնապես հետաքրքրական են մի լրտեսի
գրությունները: Յուրաքանչյուր օր այդ լրտեսը հետևել է հեղափոխական գոր-
ծիչներին և ապա կանոնավոր զեկուցել իր պետին: Բնորոշ է այն, որ այդ զե-
կուցագրերում հաճախ հիշատակված է Բայրոնի անունը:

Այդ լրտեսը իր զեկուցագրի մեջ շեշտում է, որ Բայրոնը խենթ է և
իրբ թե միմիայն զրա համար չի ձերբակալվել: Միաժամանակ նա բավական
մանրամասնություններ է հաղորդում Բայրոնի ընդհատակյա հեղափոխական
գործունեության մասին: Միևնույն բանը հաստատում է նաև նման մեկ ուրիշ
վավերագիր: Կառավարությունը Հոռմի պապի պետական քարտուղար կար-

«Պարմի մենաստան»-ի մեջ նա նկարագրում է նաև իտալական իր վաղեմի տպավորությունները: Այդտեղ նա շատ նուրբ գծերով, տաղանդավոր նկարչին հատուկ ուժով է նկարում նաև իտալական պեյզաժը: Մենակյաց բանտարկյալներին պատկերելով, նա կարծես նորից հիշում է իր բարեկամներին, այն կարբոնարներին, որոնց մահվան մասին այնքան խոր կախիժով խոսում է իր նամակների մեջ:

Ստենդալի նովելների հայտնի ժողովածուն նույնպես սովորական պատմական նովելների ժողովածու չէ: Ուսումնասիրելով իտալական հին արխիվների նյութերը և միշտ ջանալով ճշգրտորեն վերարտադրել անցյալի մարդկանց, նա միաժամանակ պատմական նովելն էլ աշխատում է գրել իրեն հատուկ ձևով: Ցուցադրելով մարդկային հոգու բարդ հյուսվածքը, բնութագրելով ապրող ու կենդանի մարդկանց, նրանց հոգեկան ապրումները՝ նա երգում է հերոսությունը, խիզախությունը, վեհանձնությունը: Կարելի է այդ նովելներում գտնել անգամ ուրույն ակնարկներ քաղբենի ու փարիսեցի մարդկանց մասին:

Կարբոնարների շարժումը ճնշվում է և ջախջախվում: Պարտությունը նպաստում են մի շարք հանգամանքներ: Շարժումը շատ խայտաբղետ էր և շունչը ուժեղ սոցիալական հենարան: Ներհակ ու հակամարտ հոսանքների գոյությունը քայքայիչ ազդեցություն է թողնում ժողովրդական զանգվածների վրա: Խոշոր դեր են կատարում նաև թշնամի տարրերը՝ բազմաթիվ մատնիչները, լրտեսները, պրովոկատորները, որոնք մտնելով առանձին կազմակերպությունների մեջ, ջլատում ու տարրալուծում էին շարժումը, հոսանքի ամբողջ ուժը: Երբ շարժումը ջախջախվում է, բազմաթիվ կարբոնար ղեկավարներ ձերբակալվում են, արքայազն, կախաղան հանվում: Վրա է հասնում մոռյլ ու կեղծիք:

Ահա այդ մոռյլ մթնոլորտում էլ անցնում են մեծ ուսուցիչական վերջին տարիները:

Խորտակվել էին պատանեկան անուրջները, ուսմանտիկական այնքան հմայիչ և ազդու իլյուզիաները, ջլատվել էին եռանդն ու կորովը: Ամենուրեք իշխում էր սեպտիկան, և շորս կողմ վխտում էին լրտեսները, որոնք հետևում էին հեղափոխական գործիչների հետ կապված մարդկանց:

Որքան էլ անկատար ու ցրիվ են Բայրոնի ու Ստենդալի հասարակական գործունեության մասին եղած տեղեկությունները, այնուամենայնիվ մի շարք կարևոր մոմենտներ մեզ համար այսօր ավելի պարզ և նոր լույսով են լուսաբանվում: Ոչ մի կասկած չկա, որ երկու մեծ գրողներն էլ ակտիվորեն մասնակցել են իտալական շարժումներին: Սխալ կլիներ, միայն, այդքան ուժեղ շեշտ դնել այդ շարժումների վրա, ինչպես անում է Վինոգրադովը իր մենագրական ուսումնասիրություններում: Իտալական շարժումները որքան էլ մեծ

տպավորություն թողնեին երկու մեծ գրողների վրա, այնուամենայնիվ այդ շարժումները չեն թելադրել Բայրոնի նման մեծ բանաստեղծին և Ստենդալի նման խոհուն վիպագրին՝ դառնալ ըմբոստ ու բողոքող: Երկու գրողներն էլ դեռևս իրենց հայրենի իրականության մեջ կովի են ելել «ժամանակի քուրմերի» դեմ: Չպետք է մոռանալ, որ միևնույն իտալիայում, իր հայտնի երկասիրության մեջ, խարազանելով Վերոնայի ռեակցիոներներին՝ Բայրոնը գրում է նաև Սոուտիի դեմ ուղղված իր հայտնի սատիրական տողերը: Ստենդալը նույնպես երբեք չի մոռանում, որ իր հայրենիքում իսկական հերոսներ տալիս է միմիայն ժողովուրդը:

Իտալական կարբոնարների շարժմանը երկու մեծ գրողներն էլ մոտենում են որպես ուստավոր՝ առանձին ջերմեռանդությամբ, իղբալիզմով, պատանեկան միամտությամբ: Դրա համար էլ հետագայում, երբ պարզվում են շարժման ներհակությունները և բացասական կողմերը, հուսախաբությունը երկուսի համար էլ լինում է խիստ ծանր: Բայրոնը նետվում է Հունաստան, ուր զոհվում է Միսսոլոնգիում: Այդտեղ էլ հույն հեղափոխականները թաղում են մեծ պոետի սիրտը:

Ստենդալը մինչև իր կյանքի վերջին օրերը չի ազատագրվում հակասական ապրումներից: Համակված երկվություններ՝ նա մոռյլ օրեր է ապրում ամայի ու տխուր հինավուրց Չիվիտա-Վիկկիայում: Մերթ ընդ մերթ նա ջանում է սփոփանք որոնել՝ նետվելով Փարիզ, զինուն ապավինելով, ստեղծագործական աշխատանքին փարվելով: Բայց այլևս երբեք չի կարողանում դառնալ Վատերլոյի ռազմադաշտում մարկիտանուհու² հետ զրուցող միամիտ պատանին: Արտասովոր ուժով գրված նրա «Կարմիրը և սևը» ու «Պարմի մենաստանը» խոշոր վեպերի մեջ նշմարվում են հուսահատ վերջալույսի առաջին նշանները: Երկու վեպերի գլխավոր հերոսների հոգեկան ապրումներն էլ հարազատ էին Ստենդալին: Երկու վեպերի տխուր վերջաբանները ցույց են տալիս, որ հոգեկան բեկումը շատ վաղ է սկսվել: Տակավին այդ տարիներին նա համակված էր տխուր հայեցողությամբ և չէր կարողանում այլևս վաղեմի օրերի պատանեկան սուր աչքերով նշմարել հին հասարակության և իշխող ուժերի դեմ ծառայող նոր ժողովրդական հորձանքի ակնհայտ ազդանշանները: Ժողովրդական հերոսներին նա տեսնում է, ժողովրդի հերոսությունն էլ նշմարում է, նույնիսկ շատ սուր իրոնիայով նկարում է բուրժուայի, ֆիլիստերի, քաղբենու դիմագծերը: Բայց համակված միայնակ, ժողովրդական զանգվածներից կտրված մտավորականի տխուր ապրումներով, ապավինում է նորից այնքան ատելի հասարակության զաղափարական կովաններին...

1941

² Բանակային նպարավաճառուհի:

ԲԱՅՐՈՆ ԵՎ ՔՈՒՄԱՆՅԱՆ

Բայրոնը խոշոր ազդեցություն է թողել Հովհաննես Թումանյանի վրա: Հայտնի է, որ «Շիրիտնի կալանավորի» հայերեն թարգմանությունը լույս է տեսել առանձին հրատարակությամբ՝ 1896-ին: Այդ հրատարակությանը կցված ինքնուրույն ձևի մեջ Թումանյանը էնտուզիաստ պատանու նման է խոսում մեծ պոետի մասին... «Հսկա պոետը,—ասում է նա,— իր հանձարեղ արվեստը դարձրել է «գերության վիշտը» քաղցրացնող միջոց»: Նշանակալից են ձևի մեջ առանձնապես հետևյալ տողերը՝

Ինչպես դարձրել ես բանտը հայրենիք
Եվ ողջ աշխարհը լայնարձակ մի բանտ...
Ահա Տանջանքի աշխարհում բեթի,
Մեծարում են քեզ որդիքը հիվանդ...

Տակավին 1894-ին Թումանյանը թարգմանել է «Չայլդ Հարոլդի» հայտնի «Հրամեջը»: Քերևս հենց այդ տարիներին էլ նա թարգմանել է նաև «Մանֆրեդի» առաջին գործողության առաջին տեսարանի մի ֆրագմենտը: Վերջերս հրատարակված ակադեմիական ժողովածուի երկրորդ հատորում հատուկ ծանոթություն չկա այդ թարգմանության իսկական տարեթվի մասին: Իր կոմենտարների մեջ ն. Թումանյանը շեշտում է, որ հենց 1894 թվականների շրջանն էլ եղել է Թումանյանի ստեղծագործական կյանքում—«բայրոնական շրջան»: Անհրաժեշտ է, թվում է ինձ, միմիայն ավելացնել, որ Թումանյանի այդ «բայրոնիզմը» եղել է բավական ուրույն բայրոնիզմ: Հայ ժողովրդի մեծ բանաստեղծի համար Բայրոնը իրականում եղել է ոչ այնքան «համաշխարհային վշտի» — որքան բողոքի և ըմբոստությունների: Ժամանակին այդպես են մոտեցել Բայրոնին նաև իտալական, հույն, բուրբ ճնշված ժողովուրդների ներկայացուցիչները: Տրագիքիոն «բայրոնիզմը», որ մեծ պոետի մահից հետո նրա արվեստը և արվեստի իրական բնույթը աղճատողների ջանքերով ձևակերպվել է որպես հոռետեսություն իմաստասիրություն, անհասկանալի և անհարազատ է եղել հիշված ժողովուրդների առաջավոր ներկայացուցիչների համար: Գաղտնիք չէ, որ ճնշված ժողովուրդների համար բայրոնական ումանտիկական հերոսները միշտ էլ ունեցել են շատ յուրահատուկ նշանակություն:

Թումանյանն էլ սիրում էր առաջին հերթին հենց հին աշխարհի դեմ ծագող ազատության գովքը երգող «Չայլդ Հարոլդի», «Կայենի» մեծ հեղինակին: Բայրոնի անհատական տխուր երգերի մեջ նա նշմարում էր «լայնարձակ բանտի» դեմ կռվի ելնող կենսատենչ պոետի դեմքը: Դրա համար էլ Բայրոնը միշտ մնում է Թումանյանի ամենամիտրական և սիրելի պոետներից մեկը: Պատահականությամբ չի կարելի բացատրել այն, որ նույնիսկ վաղեմի

տարիներին ձեռնարկված իր հին մի թարգմանությունը («Ինեսին») նա տպագրության է հանձնում բավական ուշ՝ 1908-ին: Ես էլ շեմ խոսում այն մասին, որ Թումանյանի ինքնուրույն երկերում բավական որոշակի նշմարվում են բայրոնական պոեզիայի ազդեցության հետքերը:

«Հառաչանք»-ի, «Հաղարան բլրուլի», «Դեպի անհուն» պոեմների մշակումների մեջ հնչում են նաև «բայրոնական» ուրույն մոտիվներ: Շատ ուշագրավ կարելի է համարել նաև Թումանյանի թուրքիկ աֆորիզմները: Բոլոր նման տողերում լսվում են պոետի ինքնահատուկ տխուր ապրումների արձագանքները: Հին օրերի մթին և դաժան իրականության սև ասպետների դեմ Թումանյանը ժամանակին ուժեղ պայքար է մղել: Շատ անգամ նա գրեթե միայնակ է մղել այդ կռիվը բազմազան թշնամիների դեմ: Թե որքան դժվարին է եղել բանաստեղծի կացությունը, այդ մասին դժվար չէ գտնել բնորոշ ակնարկներ «Պոետն ու Մուսան» երգիծաբանական հայտնի պոեմում: Պայքարի ամենաժանր օրերին Թումանյանը նորից իր սիրելի պոետի խոսքերն էր հիշում: Ակադեմիական նոր հրատարակության երկրորդ հատորի մեջ նշանակալից են հատկապես հետևյալ տողերը՝

Թռչնոց դայալը, ուրախ ծվլոցը
Սաստկացնում էին սրտիս կակիծը,
Եվ թվում էր, թե բոլորն աշխարհում,
Ինձ ծաղրում էին կամ արհամարհում.
Այս ժամանակ ես մինչև անգամ
Լսեցի մարդկային մի քրքիջ (անղղամ)
Որ անցնում էր մոտիկ փողոցով,
Վիշտա ծաղրելով լիրք հայհայտներով...
(Երկերի ժողովածու, հատ. Բ):

Ժողովրդական մեծ բանաստեղծի ձեռագրերում կարելի է գտնել նման ուրիշ ակնարկներ և տողեր: Ինքը՝ Թումանյանը, ինչպես հայտնի է, արխիվ էր նետում հաճախ սևագիր տարբերակներն ու պատառիկները: Մեզ համար սակայն այսօր նման վավերագրերը պոետի հոգեկան ապրումների բնորոշ գծերը բացահայտող վավերագրեր են: Անհրաժեշտ է նշել, որ Թումանյանի թարգմանություններն ազատ թարգմանություններ են: Ինչպես երևում է, Թումանյանն իր ձեռքի տակ է ունեցել մի կողմից՝ Բայրոնի առանձին երկերի տառացի թարգմանությունը և ապա ուսումնասիրել էր թարգմանությունները՝ մշտա կողմից: Սովորաբար նա համեմատել է զանազան թարգմանությունները և իր ուրույն ելակետներից ելնելով՝ շատ ազատ թարգմանել է Բայրոնի ֆրագմենտները: Այդ պատճառով գուցե և կարելի է ասել, որ նշված ֆրագմենտներն իրականում եղել են ոչ այնքան թարգմանություններ. որքան «ինքնուրույն» երգեր: Կարող են անշուշտ թումանյանագետները վիճելի համարել

նշված մեկնությունը: Այնուամենայնիվ առարկություններն առաջադրողներին լավ հայտնի է, որ անցյալում շատ շատերն են վարվել թումանյանի նման:

Բայրոնի ուսերեն մի հին հրատարակության առաջին հատորի վերջին մասում, օրինակ, հին թարգմանություններից բավական ուշագրավ հատվածներ են տպագրված: Բայրոնի «Չայլդ Հարոլդի» հանրահայտ «Հրածեղ» հեռու անցյալում ուսերեն թարգմանել են մի քանի բանաստեղծներ: Կոզլովի և Միխայլովի թարգմանությունները իրականում եղել են փոխադրություններ կամ ինքնուրույն ստեղծագործություններ: Կոզլովի «Թարգմանություն» ժամանակին լույս է տեսել «Հյուսիսային ծաղիկներ» արձանախի մեջ և հետագայում երգվել է որպես ժողովրդական երգ... Քաղաքային շքավոր աշխատավորների և բանվորների համար այդ երգը եղել է ամենասիրելի երգերից մեկը: Հիշված արձանախում աշխատակցել են, ինչպես հայտնի է, ղեկաբրիստներին բավական մոտ էանդեամ առաջավոր գրողները: Կոզլովի թարգմանությունը լույս էր տեսել 1826-ին: Ազատատենչ մտավորականների կողմից Բայրոնի հերոսի խոսքերն այդ օրերին, իհարկե, մեկնաբանվում էին շատ ուրույն իմաստով:

Միխայլովը արմատական ուս ինտելիգենցիայի հայտնի ներկայացուցիչներից մեկն էր: Հեղափոխական և աքսորական այդ պոետի թարգմանությունը լույս է տեսել ղեմակրատական մտավորականության հայտնի պարբերագրի — «Սովրեմեննիկ»-ի էջերում՝ 1860-ին: Այդպիսով բացահայտ տենդենցիայից միանգամայն ազատ լիբերական տողերն էլ մեկնաբանվում էին առանձնահատուկ նոր իմաստով: Քսանական թվականների ղեկաբրիստները — «ազնվական հեղափոխականները», դրանցից հետո վաթսուհինյան թվականների հեղափոխական ղեմակրատները, հետագայում ավելի լայն ժողովրդական զանգվածների ներկայացուցիչները գտնում էին, որ իր հայրենիքի սահմանները թողնելով, պոետը միաժամանակ բողոքում է «բանտ-աշխարհի» դեմ:

Հովհաննես Թումանյանը ընդգծում է հենց այդ կարևոր մոմենտը: Իններսնական թվականներին միմիայն Թումանյանը չէր այդպես խորհում: Թումանյանի նման մտածող ուրիշ գրողներ էլ անշուշտ եղել են: Բայրոնի արկածալից կյանքը, նրա հեղափոխական աշխատանքը Իտալիայում, նրա գաղափարական-հեղափոխական կապերը հունական հեղափոխականների հետ, վերջապես անակնկալ մահը Միսոլոնգիում պետք է հսկայական ազդեցություն թողնեին առաջավոր հայ գործիչների և գրողների վրա: Բայրոնի պոեմների պատկերները հասկանալի և հարազատ էին: Լեռների ու լեռնային հովիտների ռոմանտիկական բնանկարի գունագեղ ֆոնի վրա նկարագրված ըմբոստների դեմքերը կարծես հիշեցնում էին հայ ապստամբ լեռնցիներին՝ սուլթանական և ցարական բռնապետությունների դեմ կովի ելնող գյուղացի

ապստամբներին: Այդպես էին մեկնաբանվում բայրոնական տիպարները: Անգլիական ժողովրդի մեծ պոետը հայ ընթերցողների համար հումանիզմի և ազատության երգիչ էր, հեռու արևելյան ժողովուրդների ազատագրական շարժման առաջին մոնետիկը: Ահա թե ինչու Թումանյանի պոեզիայում բայրոնական «մոտիվները» հաճախ են առաջադրվում և արծարծվում, թեև միաժամանակ ունենին շատ յուրահատուկ կոլորիտ ու երանգավորում: Ամենավին պատահական չի կարելի համարել Թումանյանի ջանքերով թարգմանված «Շիլլոնի կալանավորի» մեծագույն ժողովրդականությունը: Հայ ընթերցողների համար անգլիական պոետի «կալանավորը» միմիայն Շիլլոնի մի կալանավորը չէր: Այդ կալանավորը հիշեցնում էր, կամ պետք է հիշեցնեի ուրիշ բազմաթիվ կալանավորների մասին — բանտարկված և խոշտանգված ժանոթ հեղափոխականներին:

«Չայլդ Հարոլդի» հայտնի «Հրածեղ» էլ հեռու օրերի հայ ընթերցողները մեկնաբանում էին հնօրյա ղեկաբրիստների և վաթսուհինյան թվականների ուս «նիհիլիստների» նման: Շատ ուժեղ, անհատական և հասարակական ապրումների մի միասնական ձուլվածք կար այդտեղ, որ կարող էր դուրամատչելի լինել նույնիսկ հետագա նոր պատմաշրջանի բանվոր ժողովրդի առաջավոր գնդերի համար:

Վերջերս հրապարակված իր մի աշխատության մեջ հայտնի բանասեր Պիկսանովը կանգ առնելով Մաքսիմ Գորկու նախնական բանաստեղծությունների վրա, գտնում է, որ Գորկու համար էլ Բայրոնը եղել է մոտիկ ու սիրելի բանաստեղծ: Պարզվում է, որ ժամանակին Գորկին Չայլդ Հարոլդի «Հրածեղ»-ի ազդեցությամբ գրել է մի բանաստեղծություն, որի ընդհանուր հյուսվածքը գրեթե չի տարբերվում «Հրածեղ»-ի առաջին տողերից: Ամենից կարևորն այն է, որ հետագայում Գորկին մի քանի անգամ մշակել է նշված տողերը: 1895-ին Սամարայում նա տպագրել է մի բանաստեղծություն, որի առաջին տողերն առանձնապես կրում են «բայրոնական» երգիչ հատուկ կնիքը:

Прощай. Душа тоской полна...
Я вновь, как прежде, одиноко
И снова жизнь моя темна,
Прощай, мой ясный огонек...

С. Пиксанов, М. Горький—поэт,
М., 1940, Гослитиздат, стр. 81.

Պիկսանովը արձանագրում է մի ուրիշ փաստ ևս: Գորկին 1905-ին իր մի պատմվածքում դիտավորյալ մտքեր է տողեր, որոնք նորից բացահայտում են բայրոնյան պոեմի մեծ ազդեցությունը: Պիկսանովի ուսումնասիրության մեջ տպագրված է նաև Գորկու մինչ այդ չհրապարակված մի բանաստեղծու-

թյունը (այդ ձեռագիր տեքստը հայտնաբերել է բանասեր Բալուխատին), որի բնորոշ վերջաբանը չի կարող անուշադրություն մատնվել:

Пусть волна грозит
бедою,
Море, гнев свой усмири.
Я отважною душою
Чую проблески зари...

Այդ տողերը շատ պարզորոշ ցույց են տալիս, որ «Հրաժեշտ»-ը հիրավի Գորկու համար եղել է շատ սիրելի մի ֆրագմենտ: Կասկածից դուրս է, որ թումանյանն էլ թարգմանության միջոցով շանացել է արտահայտել իր սեփական մտորումները: Երբ այսօր կարգում ենք տկաղեմիական հրատարակության մեջ զետեղված «Ինեսին» հատվածի թարգմանության շորս տարբերակները, մենք շատ որոշակի տեսնում ենք Բայրոնի հույզերն ու ապրումներն ուսումնասիրող ժողովրդական բանաստեղծի ղեմքը: Թումանյանի համար հասկանալի էր ամբողջ Բայրոնը իր հատկանշական բոլոր կողմերով: Նա նույնիսկ տխուր լիրիկայի մեղմ հնչյունների մեջ լսում էր անիրավ կարգերի ու հին աշխարհի դեմ ծառայող ըմբոստ բանաստեղծի ձայնը: Անհատական հուշերի և հակիրճ տողերի մեջ էլ նա նշմարում էր հին օրերի սև ասպետներին խարազանող հեղափոխական-պոետին: Դա շատ ուրույն մի մոտեցում էր: Ժամանակին ճիշտ այդպես են մոտեցել բայրոնական պոեզիային հին Արևմուտքի «Սրբազան Միության» դեմ պայքարող ազգային-ազատագրական շարժումների ներկայացուցիչները: Այդպես է մեկնարանվել բայրոնական պոեզիան նաև հայ իրականության մեջ: Առաջավոր հայ գրողների համար համենայն դեպս մեծ պոետի վիշտն ու բողոքը կրել են կոնկրետ իմաստ, հիշեցրել են անդադար «հողեղեն» աշխարհի կենդանի պրոբլեմների մասին... Այժմ մեզ հայտնի է Թումանյանի մի հին պոեմի սկիզբը, ուր նա բնութագրում է իր արվեստի բնույթն ու նպատակը.

Ես վայր եմ իջնում Հայոց լեռներից,
Գալիս եմ ինձ հետ հովիվն ու հովեր.
Ես ձայն եմ տալիս Հայոց գաշտերից,
Լալիս եմ ինձ հետ գեղջուկն, իր ցավեր:
(Երկեր, հատ. Բ, էջ 263):

Ինչպես տեսնում ենք այդտեղ շատ որոշակի է ընդգծված «տեղական» ֆոնը: Ավելի պարզ է և պոետի խոսքն ու պատգամը: Լեռների, ձորերի, լայնանիստ հովիտների գյուղական դեմոկրատիայի խոհուն երգչի դիմաստվերն ենք մենք նշմարում: Այդպես էր ի ս կ ա կ ա ն թումանյանը: Համաշխարհային պոեզիային էլ նա մոտենում էր ինքնահատուկ դիրքերից: Ամենին դարձա-

նալի չէ, որ Բայրոնը նրա համար չէր կարող մնալ սոսկ «համաշխարհային վշտի» վերացական բանաստեղծ: Բայրոնի երգերն այդ պատճառով դառնում են կենդանի երգեր, շատ հարազատ անգամ «գեղջուկ» ժողովրդի «ցավերը» կրող իմաստասեր-պոետի սրտին ու հոգուն:

Շատ թուցիկ կերպով եմ միայն ես կանգ առնում բանաստեղծի ստեղծագործության նշված կողմի վրա: Իմ նպատակն էր շեշտել, որ հայկական այդ յուրահատուկ «բայրոնիզմը» գեթ այսուհետև պետք է ավելի մանրակրկիտ ուսումնասիրվի:

Առայժմ մենք կարող ենք ու պարտավոր ենք արձանագրել մի կարևոր հանգամանք: Ժամանակն է մոտենալ ընդհուպ Հովհաննես Թումանյանի ոչ միայն հազար ու մեկ անգամ ուսումնասիրված ու լուսաբանված հանրահայտ գործերի քննարկմանը, այլ նաև նրա սեպիր տարբերակների, նրա քիչ հայտնի գործերի, նրա թարգմանությունների ուշադիր հետազոտությանը:

ՏԱՐԱՍ ՇԵՎՉԵՆԿԻՈ (Մահվան 100-ամյակի առթիվ)

Ուկրաինական հանձարեղ բանաստեղծ Շևչենկոյի գրական ժառանգությունը արժանի տեղ է գրավում համաշխարհային առաջավոր մշակույթի պատմության մեջ: Շևչենկոն իր բարձր հումանիստական մտահայեցողությամբ նվիրական երգիչ է ժողովրդական այն զանգվածների համար, որոնք հերոսական պայքար են մղում երկրագնդի բռնակալ ուժերի դեմ՝ հանուն ժողովուրդների ազատագրման և եղբայրական լուսավոր պատգամների հաղթանակի:

1

Շևչենկոյի ներհուն բանաստեղծությունների առաջին ժողովածուն («Կորզար») լույս է տեսել 1840 թվականին: Այդ փոքրիկ ժողովածուի մեջ զետեղված անկեղծ ու սրտաբուխ երգերը մեծ տպավորություն էին թողել ուկրաինական անվանի գրողների վրա: «...Լավ է, շատ լավ է,— ավելին չեմ կարող ասել»,— գրում է Շևչենկոյին Կվիտկա-Օսնովյանենկոն, երբ ստանում է բանաստեղծից «Կորզարի» առաջին այդ հրատարակությունը: Նույնպիսի ուժգին տպավորություն է թողել նաև 1841 թ. հրատարակված նրա երկրորդ ժողովածուն («Գայդամակներ»):

Վաղեմի գայդամակային-կազակային Ուկրաինային նվիրված երգերի մեջ ուշադիր ընթերցողները նշմարում էին հարազատ ժողովրդի մտորումներին արձագանքող հայրենասեր պոետի ղեմքը: Առաջավոր ուկրաինացիների հա-

մար պարզ էր, որ երգիչը ծառանում է անցյալի դաժան բռնակալների դեմ և երգելով հայրենի Ուկրաինայի իդեալականացած հերոսներին, բյուր անեծքներ է ուղղում ընդդեմ իշխանների և կալվածատերերի: Նկարագրելով ուկրաինական զեղեցիկ բնությունը, բանաստեղծը միաժամանակ ցույց էր տալիս գյուղերի տխուր պատկերը և նման արտահայտիչ միջոցներով ուրույն բնույթ էր հաղորդում զայրույթով համակված իր երգերին: Ահա, օրինակ, ինչպես էր Շևչենկոն իր բանաստեղծության մեջ նկարագրում ուկրաինական գյուղի առօրյան.

«...Սոսկալի վատ է այդ գյուղում. սև հողից ավելի սևացած մարդիկ թափառում են. կանաչ դաշտերը սևացել են. փտել են սպիտակավուն տնակները. քանդվել են. կարծես այրվել է գյուղը. կարծես մարդիկ էլ խելագարվել են...»:

Իր մեկ ուրիշ բանաստեղծության մեջ երգիչը անհուն կսկիծով գրում է. «Իսկ ահա այնտեղ — ցանկապատի մոտ մեռնում է սովահար մանուկը, մայրն էլ հնձվորուհի է կալվածատերի դաշտում...»:

Երբեք չի մոռանում Շևչենկոն մանկական տխուր իր հուշերը: Նույնիսկ իր կենսատենչ և լուսավոր մեղմ երգերում նա միշտ մացնում է բողոքի և զայրույթի ուժգին երանգ:

Ավելի ուշ՝ հասարակական բեկման «նոր օրերին», 1860 թ. ունիթորմների նախամուտին, ռուսերեն մի ամսագրի խմբագիրը խնդրում է բանաստեղծին նկարագրել իր կյանքը: Շևչենկոն իր նամակում կանգ է առնում բացառապես մանկության և պատանեկության մտալ օրերի վրա, հիշեցնում մոտ ու սիրելի հարազատների ճորտական ծանր վիճակը: «Այո, մեծապատիվ պարոն, նրանք այսօր էլ տակավին ճորտեր են...»: Այդ նամակը ցնցող տպավորություն է թողնում Շևչենկոյի ժամանակակից ընթերցողների վրա:

Շևչենկոն «անդորր» և «անկոխիվ ապրումների» երգիչ չէր: Ահա ինչու նրա միշտ իմաստալից, զեղակերտ ու նվազային երգերը դառնում են մարտական պատգամներ՝ ուկրաինական առաջավոր երիտասարդության համար: Ռուս ակնավոր հեղափոխական-դեմոկրատ գործիչներ Դոբրոլյուբովը և Չերնիշևսկին, ինչպես հայտնի է, ունեին հետևողներ նաև ուկրաինական մտավորականների շրջանում: Ահա այդ մտավորականներն էլ տարածելով Շևչենկոյի երգերը, միաժամանակ բացահայտում և ընդգծում էին երգերի հեղափոխական իմաստը: Ավելի հեռատես և փորձված ընթերցողները հաճախ կարդում էին անորոշ ակնարկները, մեկնաբանում ու լրացնում՝ բացահայտելով առանձին տողերի ընդգրիմադրական բնույթը: Լինում էին դեպքեր էլ, երբ ինքը՝ բանաստեղծը աշխատում էր օգնության հասնել ընթերցողներին: Նա իր կտրուկ գիծն էր վարում՝ հակառակ լիբերալ ընթերցողների սպասումներին:

Ակներև է, որ դեմոկրատական շրջապատում ավելի ըմբոստ ձևով էին դրսևորվում հեղափոխական մտորումները: Գեղագետ պոեմները նա սիրում էր, բայց երբեք չէր ցանկանում հետևել «անկոխիվ ապրումների» երգիչների ուղեգծին: Ահա ինչու նրա պատկերավոր բանաստեղծություններն անդամ դառնում են շատ ազդու պոստպոզիտիվական վավերագրեր: Վաղեմի ուկրաինական ժողովրդական երգիչների—բանգուրիստների նման նա ոչ միայն գրում էր ինտիմ ռոմով, այլ կարողանում էր այրել ընթերցողների սիրտն ու հոգին, ստեղծել անսահման զայրույթ ընդդեմ իշխողների ու շահագործողների: Յարական բռնապետության մշտարթուն սպասավորները մոլեգին և եռանդուն բանաստեղծի նկատմամբ չէին կարող խաղաղ դիրք բռնել: Նույն այդ սպասավորներին հայտնի էր նաև, որ բանաստեղծը սերտորեն կապված էր ընդհատակյա կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Այդ օրերին ուկրաինական «Կիրիլո-Մեֆոդի» հայտնի ընկերությունը ազգային-ազատագրական պատգամներ էր առաջադրել: Երբ այդ ընկերության ղեկավար անդամները ձեռքակալվում են, Նիկոլայ I-ը խստագույն պատժի է ենթարկում առաջին հերթին ազատատենչ երգերի հեղինակ Շևչենկոյին: Կայսերական հատուկ որոշման համաձայն, ըմբոստ բանաստեղծը պետք է արքայվեր Օրենբուրգի նահանգը, որպես հանցավոր զինվոր: Յարը կարգադրում է, որ ոչ մի պարագայում նրան չթույլատրվի նկարել կամ գրել: Դեկաբրիստների դահիճը գիտեր, որ բանաստեղծ-նկարչի համար անհնարին էր ավելի դաժան պատիժ հնարել: Նիկոլայ Պալկինի կարգադրությունը ցույց է տալիս, որ Տարաս Շևչենկոն հիմնականում մեղադրվում էր ոչ թե ընդհատակյա «ընկերության»-ը աջակցելու, այլ հեղափոխական բանաստեղծություններ գրելու համար: Պաշտպանելով սլավոն ժողովուրդների «ազատագրության» դատը, «Կիրիլո-մեֆոդիցիների» դեմոկրատական թևի ներկայացուցիչները գտնում էին, որ քաղաքական ինքնուրույնություն ստացած սլավոն ժողովուրդները պետք է միմյանց հետ կապված լինեն ֆեդերատիվ կապերով: Ապագա փնքնավար համայնքների մեջ պետք է լինեն կրոնի ազատություն, սլավոն լեզուների և գրականության ազատ դասավանդում, վերջապես դասերի և ճորտատիրության վերացում: Մտանալով գաղութային քաղաքականության դեմ, այդ պահանջները նշմարելի հարվածներ էին հասցնում իշխող սոցիալական կարգերին: Ահա թե ինչու 1847 թ. հունիսին Շևչենկոն ձերբակալվում և անհապաղ արքայվում է Օրենբուրգի նահանգը: Հետագայում ջանալով ավելի ծանր կացություն ստեղծել բանաստեղծի համար, ցարիզմի սպասավորները երեք ամսից հետո արքայական-բանաստեղծին ուղարկում են ավելի հեռու՝ Օրսկի բերդը: Պետերբուրգից ստացված նոր կարգադրության համաձայն Շևչենկոն նույն բերդից փոխադրվում է դեպի Կասպից ծովի ափական ափում կառուցված Նովոպետրովսկի բերդը:

Տասր տարի նա ապրում է հեռու վայրերում. ամենածանր պայմաններում, ենթարկվելով ցարիզմի տնօրինությունը մշակված դաժանագույն ու պրեսիաների: Միայն 1857 թ. բանաստեղծի մտերիմ ծանոթներին հաջողվում է ձեռք բերել պոետի ազատություն մասին անհրաժեշտ կարգադրությունը:

Շեքսպիրը բերդի պարեպի կարգադրությամբ պաշտոնական ուղեգիր է ստանում մինչև Նիմֆ-Նոմֆորոգ քաղաքը: Մայրաքաղաքում հաստատվելու համար նա պետք է ստանար առանձին և նոր կառավարական կարգադրություն: Շեքսպիրը, սակայն, կամենում էր շուտափույթ կարգով մեկնել արևմտաօստրից: Նա պայմանավորվում է մի ձկնորսի հետ և ապա նավակով երեք օրվա ընթացքում հասնում Աստրախան: Շեքսպիրը նկարագրում է իր թափառումներն այդ քաղաքում: Վաղեմի իր աշակերտներից մեկը՝ խոշոր վաճառական Սապոժնիկովը առաջարկում է բանաստեղծին միասին ուղևորվել Նիմֆ-Նոմֆորոգ: Կամիշին քաղաքի մոտ նավ է բարձրանում մի ուղևոր և հայտնում, որ ինքը լիազորված է ջերմորեն ողջունել պոետին: Մերձվողյան քաղաքներում ապրող ուկրաինացիներին արդեն հայտնի էր, որ Շեքսպիրը ազատվել է: Բնորոշ է այն, որ բանաստեղծը իր ուղևորների շրջանում կարողում է Օգյուստ Բարբիեի այն բանաստեղծությունը, որ ուղղված էր ռեակցիոն գործիչների դեմ («Շեքսպիրի խրատներ»): Այն հանգամանքը, որ դեռևս արքայական զինվորի շինելը հազնող բանաստեղծը խնջույքի ժամանակ հնարավոր էր համարել կարողալ Բարբիեի բանաստեղծությունը, ինքնին արդեն ցույց է տալիս, որ Շեքսպիրը չէր կամենում հաշտարար դիրք բռնել հին կարգերի երկրպագուների նկատմամբ:

Բանաստեղծին տեսնելու նպատակով Մոսկվայից գալիս է ականավոր դերասան Շեյկիլինը: Քաղաքացիների վրա մեծ տպավորություն է թողնում երկու նախկին ճորտերի տեսակցությունը: Երբ Շեքսպիրին իր ծանոթները լուր են հասցնում կառավարական նոր կարգադրության մասին, նա անհապաղ Մոսկվա է ուղևորվում և այնտեղ հանդիպում ունենում արքայից վերադարձած ղեկավարիստ Վոլկոնսկու հետ: Շատ ջերմ է ընդունում Շեքսպիրին հայտնի գրող Ակսակովը: Բանաստեղծի օրագրի¹ մեջ նշանակալից տողեր կան այդ մասին:

Պետերբուրգում նույնպես Շեքսպիրին մեծ հանդիսավորությամբ են ընդունում: Ակադեմիայի արեզիդենտ Տոլստոյի տանը հավաքվում են մայրաքաղաքի մասնավորականները: Առանձնապես ջերմ են մոտենում Շեքսպիրին արմատական երիտասարդության ներկայացուցիչները: Բանաստեղծի նվիրական մտորումներն ու հայացքները լավ հայտնի էին նրա ծանոթներին: Սովորա-

բար, ընկերական հավաքություններում Շեքսպիրը երգում էր ուկրաինական ժողովրդական «ղումկաները» և բացահայտորեն արտահայտում իր հոգեկան ապրումներն ու հույզերը: Ուկրաինական ինտիմ «ղումկաները» — կեսուրախ և կես-տխուր երգեր էին, որոնք թե արտահայտում էին ունշապր ուկրաինացիների մտորումները, և թե միաժամանակ բացահայտում ուկրաինական ժողովրդի դիրքը իշխող կարգերի նկատմամբ: Իր ազդու և մեղմ ձայնով Շեքսպիրը կարծես ավելի ցայտուն էր ընդգծում ժողովրդական ղումկաների իմաստը: Ոչ ոքի համար այլևս գաղտնիք չէր, որ Շեքսպիրը ամենևին չէր փոխվել, մնացել էր հեղափոխական-դեմոկրատներին ձայնակցող բանաստեղծ, Գորբուլյուբովի և Չերնիշևսկու երկրպագու: Բնորոշ է այն, որ մայրաքաղաքում կաղմակերպված մի գրական հանդեսի ժամանակ ժողովականները անշափ ջերմ են ընդունել առանձնապես Շեքսպիրին:

Շատ որոշակի էր այդ օրերին նաև լիբերալների դիրքը: Խաղաղ և մեղմ, անկոփ ու հաշտարար երգեր էին ցանկանում լսել պոետի վաղեմի լիբերալ ծանոթները: Նման սպասումներին և պահանջներին արձագանքելու փոխարեն, Շեքսպիրը նույնիսկ իր լուսավետ երգերի մեջ ընդգծում էր բողոքի տրամադրությունները: Ահա ինչու Գերցենը գրում է, որ Չառախի հայտնի «Փիլիսոփայական նամակներ»-ում առաջադրված մոռյլ բողոքից հետո, Շեքսպիրը «լուսավետ» պոեզիան տշ միայն թարմ շունչ է մտցրել ուս իրականության մեջ, այլև բողոքի տրամադրությամբ ոգևորել ընթերցողներին: Շատ ավելի բարձր են գնահատել Շեքսպիրի դերը Գորբուլյուբովը և Չերնիշևսկին: Անսահման ատելություն էր նա ծաղրել ու խարազանել բռնակալ կալվածատիրական ու ցարական բռնապետության ներկայացուցիչներին: Նա կերտել է սուր քննադատությամբ հագեցված երգիծաբանական երգեր: Նրա ստեղծագործական հարուստ ժառանգության մեջ նշանակալից էջեր են կազմում ցարիզմի գաղութային քաղաքականության բնութագրմանը նվիրված երգերը: Շեքսպիրը պատմում է, թե ինչպես է ցարական բռնապետությունը նետվել փոքր ազգերի դեմ, ինչպես է նա շղթաներով և բանտերով, տապարներով ու շախցրուտներով խեղդել ժողովուրդներին: Մոռյլագույն ներկերով է նկարագրում բանաստեղծը ճորտատիրական կարգերը, թալանչիական պատերազմները, ժողովրդական ցասումը, արյան դաշտերը...: Իր «Կովկաս» բանաստեղծության մեջ Շեքսպիրը դատափետում է ցարական բռնապետության ներկայացուցիչներին: «Միբիրն անսահման է,— գրում է Շեքսպիրը,— իսկ բանտերը, իսկ մարդիկ, անհրաժեշտ է արդյոք մի առ մի հաշվել. մոլորակացուց մինչև ֆիններ, ամեն ինչ լուր է...»:

Աքսորավայրում Շեքսպիրը ուսումնասիրել է, ի միջի այլոց, կիրգիզ աշխատավորների կյանքը: Ահա ինչպես է Շեքսպիրը «օրագիրը» նկարագրում ցարական Ռուսիայի ջանքերով կիրգիզների նկատմամբ տարվող «կուլտուր-

¹ Շեքսպիրի վերադարձի մանրամասնությունները նկարագրված են նրա օրագրում. Т. Шевченко. Дневник. М., 1939.

տրեգերական» վայրագ գործելակերպը: «Դարեր շարունակ անհայտ էր անապատը, հայտնաբերում ենք այդ անապատը. արդեն ամբողջներ ենք կառուցել այնտեղ, թիչ հետո կը լինեն նաև գերեզմաններ...»: Շեչենկոն կանգ է առնում «հոգևոր հայրերի» վրա և հիշեցնում, որ այդ սև գործիչները խաբել ու հիմարացրել են ժողովրդին: Մուկեգորեն նետվելով աստծո դեմ, նա գոչում է՝ «Գուցե դու էլ ծիծաղում ես՝ դիտելով մահացող գուղերը, գուցե դու էլ միացել ես կալվածատերերի հետ ու պայմանավորվում ես նրանց հետ»: Անսահման զայրույթով համակված, ժողովրդական մեծ բանաստեղծը դիմելով երկնային բարձունքներից դիտող «ամենատեսա աչքին», հայտնում է դրան, որ նա՝ այդ «ամենատեսա աչքը», քնած է, կուրացել է և միանգամայն անուշադիր վերաբերմունք է ցուցաբերում դեպի անիրավությունը: «Մի՞թե, — գոչում է Շեչենկոն, — դու զարմանում էիր, երբ շղթայակապ կալանավորներին հարյուրներով Սիբիր էին քշում, երբ գանակոծում էին, կախաղան էին հանում սուրբ ստրուկներին. և դու այդ չգիտեիր...»: Բիբլիական սաղմոսներին հատուկ տեղով կառուցված այդ ցատկալից բողոքը շատ ազդու մի կոչ է.

Եվ չը կուրացած: Աչք դու, աչք դու...
Դու այնքան էլ խորը չես դիտում.
Դու: քուն ես մտել, իսկ արքաներին, —
Ստանան տանի այդ պիղծերին...²:

Հանձարեղ բանաստեղծի ստեղծագործությունների մեջ մոլեգին երգերի կողքին մեծ տեղ են բռնում լիրիկական ներհուն երգերը, որոնք յուրահատուկ նոր «գումկաներ» են: Բանաստեղծը երգում է հայրենի երկրի գեղեցիկ բնությունը. գյուղական խճիթները, գեղջուկ աշխատավորների ապրումները: Բնութագրելով Շեչենկոյի լիրիկական նրբին երգերը, Ա. Լունաչարսկին ուկրաինական երգերը համեմատում է նեպոլիտանական այն երգերի հետ, որոնք կես-ուրախ և կես-տխուր են: Միամիտ բնօրհաններն անգամ ուկրաինական գեղեցիկ բնանկարի պատկերավոր ֆոնի վրա կարող են տեսնել տխուր երանդներ՝ սովահար ճորտերի, ողբացող ալքիմիկների, գանակոծվող ստրուկների դիմաստվերները: Շեչենկոն երբեք չի մոռանում, որ շահագործողների ու շղթայակապ ստրուկների ողբն առանձնահատուկ տոն է հաղորդում ուկրաինական գեղեցիկ հայրենիքի ինքնահատուկ կոլորիտին: Իր «Չիգիրինի» մեջ Շեչենկոն գրում է, որ կգա ժողովրդական ապստամբության օրը, կսրվեն զանակները: Անխձելով հայրենակից «պաներին», նա կտրականապես հրաժարվում է «անկողի ապրումների» հետևողների ուղեգծից: Շեչենկոյի բանաստեղծությունների մեջ նրբին երգերը միաժամանակ ազդու կոչեր են, մոլեգին քարոզ ու պրոպագանդ:

² Շեչենկո, Կորգար, թարգմ. Գ. Սարյանի, Երևան, 1939, էջ 253:

Հայտնի է, որ ռուս ականավոր արվեստագետների շրջանում Շեչենկոն, որպես նկարիչ, շատ բարձր է գնահատվել: Նա սկզբնական շրջանում ազդվելով Բրյուլլովից, հետագայում հանդես է եկել ավելի բացահայտորեն, որպես ռեալիստական արվեստի համոզված ջահակիր: Ամենինն պատահական չի կարելի համարել այն, որ իր օրագրի մեջ նա դիտավորություն է ցուցաբերում է, որ ինքը ռեալիստ Ֆեդոտովի երկրպագուներից է և չի կարող ձայնակցել այսպես կոչված «անգործ» ու «անաղարտ» արվեստի գաղափարախոսներին: Ֆեդոտովը, ինչպես հայտնի է, նկատելի չափով եղել է գոգոլյան ռեալիստական արվեստի հետևորդ: Շեչենկոյի համար թանկ ու սիրելի էր այդ նկարչի գեմոկրատական ուղղությունը: Բնորոշ է, որ ինքը՝ Շեչենկոն, կանգ է առել բացառապես աշխատավոր մարդկանց կերպարների վրա: Գեղջուկ ուկրաինացիները, կանաչք, ճնշված աշխատավորները, շարքային զինվորները նրա համար դառնում են սիրելի կերպարներ: Բանաստեղծ-նկարիչը ջանացել է շատ յուրահատուկ ձևով բացահայտել իր ուրույն մտահայեցողությունը նույնիսկ լիրիկական տոն ունեցող բնանկարների մեջ: Այսօր առանձնապես ավելի լավ ենք նշմարում այն, ինչ որ չէին կարողանում տեսնել Շեչենկոյի ժանոթներն ու ժամանակակիցները: Շատ պարզ տեսնում ենք, որ իր նկարների և էսքիզների, մանավանդ տաղանդավոր օֆորտների մեջ մեծ բանաստեղծը արտահայտել է իր ներհուն երգերի հիմնական մտափնտրումները: Ահա թե ինչու հիշված գեղարվեստական ստեղծագործությունները շատ կարևոր վավերագրեց են, որոնք բացահայտելով երգչի հայեցողության հատկանշական գծերը, լրացուցիչ լույսով են մեկնաբանում նաև նրա բանաստեղծությունների առանձին մտափնտրումները: Ինքնատիպ «կոմենտարներ» հիշեցնող այդ նկարները պատկերավոր կերպով բացահայտում են հանձարեղ մտածողի և բանաստեղծի հույզանքն ու հոգեկան ապրումները: Գեղակերտ գործերի մեջ գծված են՝ ուկրաինական բնանկարը, աշխատավորների դեմքերը, կենցաղային բնորոշ մանրամասները: Աքսորավայրում Շեչենկոն առանձնապես մեծ զգացումով է կերտել աքսորական զինվորների և կիրգիզների դիմանկարները: Նա սիրով ու հարգանքով է մոտենում կիրգիզներին ու միաժամանակ կարողանում է ջերմորեն տալ արևելյան ճնշված փոքր ժողովուրդների հոգեկան նկարագիրը: Իր աքսորի վերջին օրերին, թուլացող ստանալով, Շեչենկոն կերտում է կիրգիզ մանուկների տպավորիչ դիմանկարները: Երկու կիրգիզ մանուկների տաղանդավոր այդ նկարը դիտելիս ավելի քան պարզ է դառնում նրա թեմայի, սյուժեի և նկարագրված դեմքերի «հրապարակախոսական» բնույթը: Ինքը՝ Շեչենկոն էլ նշմարվում է այդ իմաստային ստեղծագործության մեջ:

Այդպիսին էր ժողովրդական մեծ երգիչը: Նկարչությունը՝ գրավորներն ու օֆորտները նրան համար դառնում էին քաղաքացիական քարոզիչ օժանդակ:

կող կարևորագույն զենքեր: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ այդ նկարների կատարողական տեխնիկան ու արվեստը բարձր են գնահատվում անգամ տաղանդավոր ռուս արվեստագետների կողմից:

Ինքը՝ Շևչենկոն ևս բարձր պահանջներով էր մոտենում գեղարվեստին: Իր օրագրում խոսելով գերմանական նոր արվեստի մասին՝ քննադատում է ռեալիզմից հեռու կանգնած նկարչներին: Միաժամանակ նա ընդգծում է «հին» արվեստի «հսկաների»՝ Հոլբայնի և Դյուրերի ռեալիստական հանճարեղ գործերը, որոնք, արվեստի բարձր հուշարձաններ լինելով հանդերձ, յուրահատուկ ձևով են արժարժեղ կյանքի հրատապ արտաբանները: Շևչենկոյի համար մեծագույն նշանակություն ունեին առանձնապես կյանքին ակտիվորեն արձագանքող նկարները: Մեզ թվում է, որ նրա համար ոչ պակաս կարևոր նշանակություն է ունեցել նաև Հոլբայնի և Դյուրերի գործերի տարւոյն թեմատիկան: Ուկրաինական մահացող գլուղերն ու սովահար գլուղացիներին նկարող իմաստասեր գեղագետի համար Հոլբայնի հայտնի «Մահվան պարը» նկարների սերիան կամ Դյուրերի «Ապոկալիպսիսի» ձիավորների հանճարեղ նկարը ակտուալ և կարևոր էին թե՛ որպես բարձր արվեստի գեղարվեստական արտագրություններ, և թե՛ որպես բռնակալների ու շահագործողների դեմ ուղղված յուրահատուկ վավերագրեր: Ամենևին պատահական չէ, որ անցյալի ժողովրդական մեծ շարժումների ղեկավարներին վերհիշող Շևչենկոն կանգ էր առնում հենց Հոլբայնի և Դյուրերի իմաստալից ստեղծագործությունների վրա: Գեղարվեստը, նշում էր Շևչենկոն, պետք է հողեղեն լինի: Չայնակցելով Չերնիշևսկոն, նա պաշտպանում էր ռեալիստական արվեստի պատգամները: Արստրավայրում մի լեհացի սպա Շևչենկոյին նվիրել էր մի իդեալիստ-տեսաբանի ուսումնասիրությունը: Շևչենկոն իր օրագրում բննադատելով տեսաբան Լիբերելտի հայեցությունը, նորից հանդես է գալիս ռեալիզմի պաշտպանի դերում: Գատափետելով անկենդան իդեալիստ-տեսաբաններին, Շևչենկոն գրում է, որ շատ ավելի բարձր արժեք ունեն Վագարիի հայտնի կենսագրականների տաղանդավոր հատորները, որոնք կապրեն դարեր:

Հիշատակված դիտողությունները ցույց են տալիս, թե որքան մեծ ուշադրությամբ էր մոտենում Շևչենկոն գեղարվեստին: Ազատության լուրը ստանալուց հետո նա երազում էր նետվել մայրաքաղաք և նորանոր նկարներ կերտել: Նա շատ բարձր նշանակություն էր տալիս առանձնապես զրավյուրային և օֆորտին: Գրավյուրային վարպետը, գրում է Շևչենկոն, ավելի դյուրին կերպով կարող է տարածել գեղարվեստը: Տաղանդավոր գործերը շատ անգամ մնում են մասնավոր սրահներում, միայն հարուստ մարդիկ են տեսնում այդ ստեղծագործությունները: Այնինչ գրավյուրները կարող են արվեստի վավերագրերը մոտեցնել ժողովրդին: Չի կարելի երբեք, նկատում է Շևչենկոն, անուշադրության մատնել նկարների գաղափարական բովանդակությունը:

Նկարը պիտի լինի կյանքի իսկական նկարը, պիտի դառնա առօրյալի, բնության, մարդկային տիպարների վերարտագրություն: Քանի որ իսկապես կան զորանոցներ, զինվորներ, շքավորներ, ռեալիստ-արվեստագետը պարտավոր է առաջին հերթին արժարժեղ «հողեղեն» թեմաների հետ կապված հարցերը:

Ինչպես էլ մոտենանք Շևչենկոյի հայացքներին, շեք կարող երբեք մոռանալ այն, որ թե՛ այդ հայացքները, և թե՛ նրա տաղանդավոր, ռեալիստական և միշտ իմաստալից նկարները նշանակալից լինելով հանդերձ, սերտորեն կապված են նաև նրա հումանիստական երգերի հետ:

3

Ժողովրդական մեծ բանաստեղծին հայտնի էին անցյալի ժողովրդական շարժումների անվանի պարագլուխները: Նա մեծագույն հարգանքով էր հիշատակում Քոմաս Մյունցերին, Յան Հուսին և նման ըմբոստ մտածողներին. ներքոլ էր ձոնում բռնակալների կողմից դատափետվող «հերետիկոսներին»: Խոսելով ռուս գլուղացիական մեծ շարժումների ակնավոր ղեկավար Ստենկա Ռազինի մասին, նա շատ նշանակալից մի դիտողություն է անում, որ Ստենկա Ռազինը «բրանդախտա» էր պահում Վոլգայի վրա... «նավերից բռնագրաված ապրանքներից տուրք էր գանձում. բաժանում էր շքավորներին. հետևապես զուրս է գալիս, որ նա կոմունիստ էր...»: Հետաքրքրական է այն, որ Շևչենկոն նախ վերպով մոտենալով կոմունիզմին, այնուամենայնիվ համակրանքով էր խոսում այդ մասին: Նա, իհարկե, ճշգրիտ հասկացողություն չունեի կոմունիզմի մասին, ուստիական սոցիալիզմի որոշ հետևորդների նման էր մոտենում ապագա կարգերին և հետևում կրոնա-ժողովրդական հնօրյա հոսանքների ջահակիրների ուղեգծին: Նա ծանոթ չէր գիտական սոցիալիզմին: Սակայն ժողովրդական մեծ բանաստեղծի այդ միամիտ անուրջներն ու մտորումները շեն կարող անուշադրության մատնվել՝ նրա մտահայեցության բարդ էվոլյուցիան ուսումնասիրելիս: Ակներև է, որ բյուր անեծքներ տղղելով հին աշխարհին, բռնակալների, կալվածատերերի ու դաժան արքաների հասցեին, Շևչենկոն կոչ էր անում կովի ելնել սեփականատիրական կարգերի դեմ, անողոք պայքար մղել ժողովրդի ազատագրության համար, ստեղծել ազատ ժողովուրդների իշխանություն: Այլ խոսքով, Շևչենկոն ակտիվորեն ձայնակցում էր գլուղացիական հեղափոխության անհրաժեշտությունն առաջադրող ռուս մեծ հեղափոխական-դեմոկրատների պատգամներին: Հակասական երանգներ կարելի է գտնել նրա հայեցության մեջ, բայց չի կարելի մոռանալ, որ այդ հակասական երանգները կապված են նղել 1850—60-ական թվականների առաջավոր մտածողների հայեցության հակասական հայացքների հետ: Հիմնականում Շևչենկոն կանգնած էր ցարական դեսպոտիայի, սեփականատիրական դասակարգերի, կալվածատերերի բռնակալության վրա խարսխված կար-

գերի դեմ ծառայող հեղափոխական գաղափարախոսների շարքում: Ահա թե ինչու նրա մարտական ուղեգիծը անհասկանալի է անհարազատ էր այն ժամանակ իշխող սոցիալական ուժերի ներկայացուցիչներին՝ ազգայնական-բուրժուական և լիբերալ հոսանքների հետ կապված գործիչների համար: Շեչենկոյի հասարակական մտորումներն ու իդեալները թանկ էին ու հարազատ ժողովրդական զանգվածներին: Ժողովրդի համար անհնազատ էր, որ նետվելով բռնակալների դեմ Շեչենկոն կոչ է անում՝ համախմբվել ազատագրական մեծ պայքարի համար: Նույնիսկ իր առանձին հակասական ղեգերումներով հեղափոխական մեծ տրիբունը շատ ավելի բարձր էր միշտ վարանող ու միշտ տատանվող իր ժամանակակից շատ բանաստեղծներից և գեղագետներից:

«... Կը կենդանանան դաշտերն ու լճերը, ազատ ու սուրբ ուղիներ կտա-
բաժվեն և իշխանավորները չեն գտնի՝ այդ ուղիները. իսկ ստրուկները դեպի
այդ ուղիները կուղևորվեն միասին և համախմբված, առանց աղմուկի, առույգ
և կենսուրախ. և զվարթ գլուղեր կզառնան ամայի անապատները...»: Այս-
պես է նկարագրում մեծ բանաստեղծ-իմաստասերը դաշիք ազատ օրերը,
ապագա երջանիկ կյանքը: Այսպիսի պատգամներ բարոզող գործիչ համար
այնքան էլ հեշտ չէր համակերպվել արտոբից հետո Ռուսիայի մայրաքաղա-
քում ստեղծված ծանր պայմաններին: Հոգնաբեկ բանաստեղծը ցանկանում էր
զնալ Ուկրաինա, հաստատվել հայրենի վայրերում, ապրել իր վերջին օրերը
Կանե քաղաքի մոտ՝ անտառից և Դնեպր գետից ոչ այնքան հեռու: Ես կուզե-
նայի, գրում է Շեչենկոն իր եղբորը, միշտ դիտել Դնեպր գետը իմ տնակից:
Մեծ բանաստեղծը հանրահայտ «Կտակի» մեջ տակավին 1845 թ. կոչ է անում
ժողովրդական զանգվածներին՝ ոտքի ելնել և փշրել շղթաները:

Кайданы порвіте
І вражою злою кров'ю
Волю скропіте.
І мене в сем'ї великій,
В чем'ї вольній новій,
Не забудьте пом'янути
Незлим тихим словом.

Շղթաները կտրեք,
Եվ թշնամու շար արյունով
Ազատություն ցողեք,
Եվ ինձ այդ մեծ ընտանիքում
Եվ ազատված, և նոր,
Մի մոռացեք, հիշեցեք ինձ
Խոսքով բարի, անդորր...:

Մայրաքաղաքում Շեչենկոյի թաղման հանդեսը կրել էր իրականում հակակառավարական մեծ ցույցի բնույթ: Լեհական մտավորականության առա-

ջավոր գործիչները հանձնարարել էին իրենց ներկայացուցչին՝ բացահայտել
լեհ ժողովրդի ջերմ հարգանքն ու սերը ժողովրդական բանաստեղծի նկատ-
մամբ: Պանտելեևի մեմուարների մեջ նշված են ուշագրավ փաստեր, որոնք
ցույց են տալիս, որ Շեչենկոն սիրելի է եղել ժողովուրդների առաջավոր խա-
վերի համար: Եատ ջերմ են արձագանքել առանձնապես ռուս հեղափոխա-
կան գեմոկրատները: Գաղտնիք չէ, որ անգամ նախահեղափոխական տարի-
ների ղեմոկրատական գրականության մեջ Շեչենկոն բնութագրվել է որպես
բռնակալական դաժան կարգերի դեմ մարտնչող ժողովրդական մեծ երգիչ և
հեղափոխական տրիբուն:

Բնորոշ է նաև այն, որ Հարավային Ռուսիայի հայ բնակիչներից մեկը՝
Կոխովի առակների թարգմանիչ և Ղրիմի հայերի պատմաբան Քուշնարյանը,
վենետիկյան «Բազմավեպ» պարբերականում հրատարակել էր Շեչենկոյի
«Գայդամակներ» մի ֆրագմենտի թարգմանությունը, բանաստեղծի «Կտակի»
ֆրագմենտը, որին կցել էր մի հակիրճ ու ջերմ ակնարկ:

Հարյուր տարի է անցել Տարաս Շեչենկոյի մահվան օրից: Փոխվել է հիմ-
նովին այն երկիրը, որ բանաստեղծի կյանքի օրերին մահացող աշխատավոր-
ների և շղթայակապ արտոբականների մոռյլ բանտ էր: Կատարվել է շատ
ավելին, քան կարող էր երազել մեծ պոետը: Այսօրվա բանդուրիստները վա-
ղեմի երգերի հետ միասին երգում են Շեչենկոյի իդեալներին ձայնակցող
կենսատու և առույգ երգեր՝ ազատագրված ժողովուրդների վեհապանծ վե-
րելքի մասին:

ՌԱԳԻՇՉԵՎ

Ալեքսանդր Ռադիշչևի կյանքի և գործունեության ուսումնասիրությունը
անցյալում՝ նախահեղափոխական տարիներին սխալ հունով էր ընթանում:

Ռադիշչևը հեղափոխական գրող էր: Նա երազում էր հարազատ ժողովրդի
վերածնությունն ու ազատությունը, ընդվզում էր միապետական և ճորտա-
տիրական կարգերի դեմ: Պահպանողական ու լիբերալ գործիչների համար
ստեղի էր ա՛յդ Ռադիշչևը: Ահա թե ինչու նրանք աշխատում էին սքողել խի-
զախ գրողի դեմքը, աղավաղել նրա հայացքները, անուշադրության մատնել
արխիվներում կուտակված փաստերն ու վավերագրերը:

Միայն Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո է գիտական հիմքերի
վրա դրվում Ռադիշչևի գրական ժառանգության ուսումնասիրության գործը:
Սովետական բանասերները հսկայական թափ են հաղորդել թե Ռադիշչևի, և
թե «Ռադիշչևականների» գործերի ուսումնասիրությանը: Նրանք հրատարա-
կել են նոր և ուշագրավ տեքստեր, արխիվային կարևորագույն վավերագրեր,

վերջապես սկզբունքային բնության վրա խառնված՝ մենագրություններ և հետազոտություններ:

Ուստի սովետական բանասերների և պատմաբանների (Բլազոյ, Մակոգոնենկո, Օւլով և ուրիշներ) աշխատությունները հնարավորություն են տալիս այսօր առանձնապես ճշգրիտ հասկացողություն կազմելու մեծ հումանիտար գրողի հայացքների հատկանշական զծերի մասին...

1

Ռադիշչևը ծնվել է 1749 թ. Սարատովյան նահանգի Աբլյազովո գյուղում: Նրա ծնողները ազնվականներ էին: Մանկության օրերի տպավորությունները՝ գյուղական շրջապատը, հայրենի բնակարար, ժողովրդական երգերը դրոշմվում են պատանի Ռադիշչևի հիշողության մեջ: Նրա դայակները՝ ճորտ Մամոնտովը և ճորտուհի Պրասկովյա Կլեմենտիևան կապված լինելով գեղունի ճորտերի հետ, ամրացնում էին այդ տպավորությունները... Տասնամյա Ռադիշչևին ծնողները ուղարկում են Մոսկվա, իրենց ազգականների՝ ազնվական Արզամակովների մոտ: Այդտեղ էլ Ռադիշչևը ուսանում է և աչքի ընկնում իր բնունակություններով: Մոսկվայից նա փոխադրվում է Պետերբուրգ և մտնում պաժերի լիցեյը: Դա ազնվականների զավակների համար հիմնված միջնակարգ դպրոց էր, որը պատրաստում էր պետական գործիչների կազմը: Մայրաքաղաքում Ռադիշչևը հնարավորություն է ստանում ուսումնասիրելու նոր շրջապատը, բարձր ազնվականների և պաշտոնյաների կյանքը, դրական առօրյան...

Այդ տարիներին կայսրուհի Եկատերինան գրում էր պիեսներ և դրական երկեր: Նա համոզված էր, որ «լուսավորության» պրոպագանդայի միջոցով կկարողանա ամրացնել ճորտատիրական կարգերը: Մերթ ընդ մերթ նա հանդես էր գալիս նաև բացասական երևույթների յուրահատուկ «քննադատի» դերում: Ամրացնելով միապետական կարգերը և դաժանորեն խեղդելով գյուղացիական ապստամբությունները, կայսրուհին միաժամանակ արձագանքում էր «լուսավոր արևոլուտիզմի» նշանակությունը հիմնավորող ֆրանսիական «լուսավորիչների» որոշ պատգամներին: Վոլտերը, Դալամբերը, Դիդրոն կամակներ էին գրում կայսրուհուն: Երբ Դիդրոն Փարիզից ուղևորվում է Պետերբուրգ, շեշտում է, որ ինքը պրոսական դեսպոտիզմի հակառակորդ լինելով հանդերձ, ձայնակցում է կայսրուհու երկրպագուների շարքերին¹: Ուստի ազնվական-վոլտերականներին, իհարկե, լավ էր հայտնի կայսրուհու դիրքը ֆրանսիական էնցիկլոպեդիստների նկատմամբ:

Ահա հենց այդ շրջանում Ռադիշչևը ուղևորվում է Լայպցիգ: Կայսրուհու որոշմամբ ավելի ընդունակ «պաժերը» պետք է անհրաժեշտ կրթություն ստա-

նային արտասահմանյան համալսարանում՝ ապագա օրենսդիրներ դառնալու համար:

Լայպցիգի համալսարանում Ռադիշչևը սովորում է հինգ տարի և ապա՝ 1771 թ. վերադառնում հայրենիք՝ զինված նոր գիտելիքներով և տպավորություններով: Համալսարանական տարիների կյանքը նա նկարագրել է «Ուշակովի կյանքի» մասին կազմած իր պատմա-իմաստասիրական ուսումնասիրության մեջ: Ուշակովը Ռադիշչևի և՛ մոտիկ ընկերն էր, և՛ նվիրական ուսուցիչը: Ռադիշչևը նշված ուսումնասիրության մեջ կանգ է առնում Ուշակովի ձեռագիր աշխատությունների վրա և ընդգծում, որ Ուշակովը մահապատժի հակառակորդ էր և առաջավոր մտածող: Նա ուսումնասիրել է Հելվեցիուսի, Մաբլիի, արևմտյան փիլիսոփաների աշխատությունները:

Լայպցիգում, կառավարության կարգադրությամբ, ռուս ուսանողների կյանքին հետևում էր հատուկ վերակացու՝ մայր Բոկումը: Ուսանողների հանրակացարանն այդ մայրը դարձրել էր զորանոց: Խժռելով ուսանողների համար ստացված գումարները, Բոկումը վայրագությամբ նետվում էր բողոքող ուսանողների վրա և զանակոծում: Մի գեղեցիկ օր զայրացած ուսանողները վաղօրք կազմակերպվելով, հակահարված են տալիս, ծեծելով իրենց դահճին: Դա աննախընթաց մի դեպք էր: Բոկումը ճիգ է անում պատժել ըմբոստներին, բանտարկում է նրանց և որոշում դատել մեղավորներին: Արատսովոր այդ դեպքը ռուս դեսպանին ստիպում է միջամտել և «հաշտություն» հաստատել: Բոկումը, ինչպես պատմում է Ռադիշչևը, այդ ապստամբությունից հետո վերջ է տալիս իր վայրագություններին: Տարիներ անց արդեն մայրաքաղաքում, Ռադիշչևը, վերհիշելով իր ուսանողական վաղեմի հուշերը, գիտավորյալ ծանրանում է նկարագրված դեպքի վրա, ձգտելով բնութագրել թե՛ միապետության սպասավորներից մեկի դեմքը, թե՛ նրա դեմ ըմբոստացող ուսանողների հոգեկան ապրումները: Պուգաչովյան ապստամբությունը նոր էր միայն ճնշվել, բայց երկրի տարբեր վայրերում հնչում էին գյուղացիական մեծ ապստամբության վերջին արձագանքները: Ահա թե ինչու Ռադիշչևի «Ուշակովի կյանքը» գիրքը ազնվական ընթերցողների շրջանում ընդունվում է թշնամաբար, որպես «ապստամբության» անուղղակի հիմնավորում:

Ռադիշչևը, 1771 թ. վերադառնալով Պետերբուրգ, բարձր պաշտոն չի ստանում: Նա ստիպված է լինում Սենատում կատարել «պրոտոկոլիստի» պարտականություն, դառնալ զինվորական դատախազ, մաքսատան կառավարիչ, կոմբեք-կոլեգիայի ծառայող: Բնորոշ է, որ 1775 թ. գյուղացիական ապստամբությունը ճնշելու օրերին նա հրաժարվում է կատարել դատախազի պարտականությունները՝ չցանկանալով միապետության զենքը դառնալ²:

¹ Дидро, Собр. соч., т. X, М., 1947, стр. 17.

² А. Н. Рашищев, Избранные сочинения, М., 1952, стр. 619—620.

Սենատում և մանավանդ կոմերց-կոլեգիայում Ռադիշչևը հնարավորություն է ստանում ավելի մանրակրկիտ կերպով ուսումնասիրելու հայրենի իրականության միջին կողմերը: Նրա համար ավելի ահեհեհ է դառնում բռնակալության ու ճորտատիրական կարգերի իսկական էությունը: Պաշտոնական զեկուցագրերի, արձանագրությունների և նույնիսկ շոր թվերի տաղտկալի շարանների մեջ նա նշմարում է կախազանների զոհերի ստվերները: Կայսրուհին մի միլիոնի շափ ճորտ էր նվիրել իր ֆավորիտներին, պալատներ և ապարանքներ էր կառուցում, իսկ երկրի բոլոր մասերում սովն ու ժանտախտն էին իշխում...

Ռադիշչևը չէր կարող մնալ սառնարչուն դիտողի և մոայլ փաստերն արձանագրողի դերում: Փաստերը դառնում էին ավելի և ավելի ցնցող: Նա լսում էր հեռու Ամերիկայի ապստամբ ժողովրդի հաղթանակի լուրերը, թերթում էր արտասահմանից ստացվող պամֆլետները, դիտում փարիզյան նկարներն ու էստամպները: Հայրենի իրականության մեջ, սակայն, նա տեսնում էր կախաղաններ, բանտեր, սպանդանոցներ և շպիցոտենների հարվածների տակ մահացող հայրենակիցներին: Դաժան պատկերների ազդեցության ներքո նոր իմաստ էին ստանում ֆրանսիական լուսավորիչների քննական դիտողությունները, նրա համար ավելի պարզորոշ էին դառնում այդ լուսավորիչների սենտենցիաները՝ «լուսավորյալ արսուլյուտիզմի» նկատմամբ առաջադրված բազաթականության հակադեմոկրատական էությունը: Գրքերը և համաշխարհային կուլտուրայի ներկայացուցիչների գործերը նրա համար դառնում էին զորավոր զենքեր, որոնց նոր մեկնարանության և ավելի ինքնուրույն վերամշակման միջոցով Ռադիշչևը ստեղծեց հեղափոխական պայքարի իր սիստեմը և ուրույն թեորիան:

Նա հրապարակում է մի շարք գրություններ՝ դրվատելով ըմբոստ հայրենասերի, բռնակալության դեմ ծառայող և հարազատ ժողովրդի հետ կապված հայրենասերի նշանակությունը: Մեծարելով Լոմոնոսով բանաստեղծին, նա նշում է, որ Լոմոնոսովյան հայրենասիրությունը ազատ չէ թերություններից, չի ուղղված բռնության դեմ:

Գրվատելով Պետրոս Մեծին, նա հիշեցնում է, որ թագավորը ճնշել է ազատությունը: Մարլիի գրքի թարգմանությանը Ռադիշչևը կցում է հատուկ ծանոթագրություն դեսպոտիզմի մասին և նշում, որ միապետությունը ամենահանցանգործելի կացությունն է:

Իր «Ազատություն» ներքողը Ռադիշչևը չի կարողանում տպագրության հանձնել: Նա ստիպված է լինում գործածել ժամանակին հատուկ բողոքոված ոճ՝ համակերպվել ցարական գրաքննության պահանջներին: Չնայած այդ ամենին, Ռադիշչևը կարողանում է ասել իր խոսքը և գրվել թե՛ թշնամիներ և թե՛ բարեկամների առանձին ուշադրությունը: Դրանով էլ պետք է բացա-

տրել հատկապես նրա «Ճանապարհորդության» նկատմամբ դրսևորված առանձնահատուկ ուշադրությունը: Երբ Ռադիշչևը իր սեփական տպարանում տպագրելով գիրքը՝ 25 օրինակ հանձնում է Ձոտովի գրախանութին՝ այդ օրինակները իսկույն սպառվում են, իսկ առանձին օրինակները դառնում են շատ թանկարժեք գրքեր: Բանասեր Շտրանգեն նշում է, որ տպագրված 150 օրինակներից փաստորեն շուկա է հանվել մոտավորապես 50 օրինակ: Բնորոշ է և այն, որ կայսրուհին իսկույն սկսում է կարդալ և ուսումնասիրել այդ գիրքը ու շուտափույթ կարգադրություն է անում բռնագրավել գիրքը, ոչնչացնել այն, իսկ հեղինակին բանտարկել:

Գրաքննիչ Ռիլենը 1789 թ. մակագրել էր, որ գիրքը կարելի է տպագրության հանձնել: Ռադիշչևը դրանից առաջ սեփական փոքրիկ տպարանում տպագրել էր «Նամակ Տորոլսկ քաղաքում ապրող բարեկամին» բրոշյուրը:

«Ճանապարհորդության» տպագրությունը սկսվում է 1790 թ. հունվարին և ավարտվում է մի քանի ամսից հետո՝ մայիսին:

Կայսրուհուն հայտնի էր, որ հրապարակում կան «անհանդուրժելի» շատ ուրիշ հրատարակություններ: 1782 թվականին լույս էր տեսել Ֆոնվիզինի կոմեդիան: Կապնիստը 1783 թ. հանդես էր եկել ճորտատիրության դեմ: Բանաստեղծ Նիկոլևը իր «Սորենա և Զամիր» ողբերգության մեջ դատափետել էր բռնակալ ցարին (1771)³: Գրող Կնյաժնինը «Վաղիմ Նովոգորոցի» ողբերգության մեջ ներքող է ձևում հանրապետության հերոս Վաղիմին: Պետերբուրգում կային 20-ից ավելի, իսկ Մոսկվայում՝ 20-ի շափ գրախանութներ, որոնք գրասերներին ծախում էին թե՛ արտասահմանյան բազմաթիվ հրատարակություններ, և թե՛ ռուս հեղինակների երկերը: Շտրանգեն նշում է, որ 1750-ից մինչև 1800-ը լույս է տեսել 11 պարբերական⁴: Նովիկովի ամսագրերում բողոքոված և բացահայտ ակնարկներ էին տպագրվում իշխողների, շահագործողների, պարագիտների դեմ: Պետերբուրգում կար հատուկ հասարակական-բազաթական ընկերություն: Անդամների թիվը հասնում էր 40-ի: Հիմնադիրը Կրեչետովն էր, այն խիզախ հրապարակախոսը, որ հետագայում կայսրուհու կարգադրությամբ ամբոց էր նետվել: Նովիկովի հրատարակությունները տարածվում էին ոչ միայն երկու մայրաքաղաքներում, այլև ուրիշ վայրերում (Կիև, Կազան, Տամբով և այլն): Եվ ահա, չնայած այդ ամենին, կայսրուհին անհրաժեշտ է համարում առանձին ուշադրությամբ ուսումնասիրել Ռադիշչևի՝ շատ անմեղ վերնագիր կրող գիրքը, շուտափույթ կարգով

³ Благой, Книга великой ненависти и любви, см. «Путешествие», М., 1949, стр. 10—11.

⁴ Штранге, Французская буржуазная революция и различные слои русского общества, см. «Исторические записки», 39, стр. 98—102.

նշումներ անել, վերջապես իր քննական դիտողությունները հանձնել քննիչ-ներին և դատի ենթարկել «հանցագործ» գրողին: Պարզ է, որ Ռադիշչևը վաղուց արդեն «կասկածելի» գործի համբավ էր վայելում: Կայսրուհու «դիտողությունները» Սենատի համար դառնում են զեկավար ցուցումներ: Ռադիշչևը մահվան է դատապարտվում: Քննիչներին նա հայտարարում է, որ ոչ մի գինակից չի ունեցել: Խորտակվում է կայսրուհու ակնկալությունը: Նա ցանկանում էր թե՛ տեղորի միջոցով, թե՛ Ռադիշչևի խոսքերի վրա հենվելով, ձերբակալել և նրա հետևորդներին: Երբ այդ հույսերը ի դերև են ելնում, կայսրուհին ջանալով գրավել ազատախոհ հովերով տարված քաղաքացիներին, հանդես է գալիս «վեհանձն» թագուհու գերում և հրահանգում Ռադիշչևին ցմահ աքսորել Սիբիր: Շղթայակալ Ռադիշչևը շրջապատված հատուկ պահապաններով՝ սահնակով ուղևորվում է զեպի հեռավոր աքսորավայր: Սակայն ճանապարհին նրան հայտնում են, որ իշխան Վորոնցովի միջամտության շնորհիվ կայսրուհին կարգադրել է շղթաները հանել: Վերջապես Ռադիշչևը 7000 կիլոմետրի շափ տարածություն կտրելուց հետո կայան է գտնում Սիբիրի Իլիմսկ քաղաքում: Սկսվում է գրողի գործունեության նոր էտապը՝ սիբիրյան հեռու վայրերում: Սակայն Ռադիշչևը չի բնկնվում: Նրան խրախույս է ներշնչում սիբիրյան ժողովուրդը: Նա պտույտներ է կատարում, շփվում է ժողովրդի ներկայացուցիչների հետ, ուղևորվում է Իրկուտսկ և այլ վայրեր, տեսնում է ամրակազմ և տոկոն սիբիրցիներին: Սիբիրյան բնակիչների մեջ գրագետ մարդկանց թիվը փոքր չէր: Աքսորականներն էլ նպաստել և նպաստում էին Սիբիրի բնակչության կուլտուրական խավի ակտիվությանը: Սիբիրյան վայրերում նա գրում է ակնարկներ և մշակում ծրագրեր՝ համակված նոր տրամադրություններով: Եկատերինա կայսրուհու մահից հետո Պավել թագավորի թույլտվությամբ Ռադիշչևը թողնում է աքսորավայրը և իրավունք ստանում ապրելու Նեմցովո գյուղի իր հայրենական կալվածքում (1797): Այդտեղ նա ուսումնասիրում է գյուղական տնտեսությունը և ապա գյուղական կալվածքի կարգավորման մասին գրում հատուկ ուսումնասիրություն: Ինորոշ է, որ նա ուսումնասիրում է հողի քիմիական բաղադրությունը և կանգ առնում աղրոտեխնիկական միջոցառումների կարևորության վրա: Միաժամանակ Ռադիշչևը իր այդ աշխատության մեջ շեշտում է, որ միմիայն ճորտատիրական կարգերի կապերից ազատ գյուղացիությունը կարող է մեծ ազդակ դառնալ գյուղական տնտեսության վերելքի համար:

Ալեքսանդր կայսրի տիրակալության օրերին Ռադիշչևը վերջապես իրավունք է ստանում ապրել մայրաքաղաքում: Շատ բան էր փոխվել այդտեղ, բայց ճորտատիրական կարգերը մնացել էին անսասան, և ամենուրեք իշխում էին ցարական բռնակալության խոշոր և մանր սպասավորները:

Պետերբուրգում Ռադիշչևը կառավարության որոշմամբ նշանակվում է

օրենսդրական հանձնաժողովի անդամ և անցնում իրավաբանական-օրենսդրական աշխատանքի: Նա տողորված էր անսպառ եռանդով, բայց տեսնում էր, որ չի կարող իրեն ազատ համարել թշնամիների մոայլ շրջապատում: Նա ազատ քաղաքացի և պետական բարձր պաշտոնյա էր: Սակայն և այնպես զգում էր, որ իր ձեռքերը կապկպված են: Եվ ահա այդ ամենն էլ ի վերջո ստիպում են նրան վերջ տալ իր կյանքին: Վերջին այդ քայլն էլ նա կատարում է առանց դիրքերից նահանջելու, համակված անսահման զայրույթով՝ բռնակալական կարգերի դեմ ուղղված ցույցի բնույթ: Յարիզմի սպասավոր-ներին համար վտանգավոր և սարսափելի է դառնում անգամ մահացած Ռադիշչևի լուսավոր դիմաստվերը: Յարական դահիճները այրում ու ոչնչացնում են Ռադիշչևի հրատարակությունները: Լիբերալ պատմաբանները ստեղծում են միանգամայն տենդենցիոզ գրականություն հեղափոխական հայրենասերի հայացքների մասին: Սակայն այդ տենդենցիոզ գրականության դեմ այսօր հանդես է գալիս ինքը՝ Ռադիշչևը իր հրաշունչ աշխատությունների մեջ...

Պուշկինը, հետո Գերցենը, ապա 60-ական թվականների գործիչները, վերջապես, այսօր, Սովետական Միության ժողովուրդները ամենից առաջ այդ գործերի վրա են հենվում և դաժան անցյալի դաժան կարգերի դեմ կանդնած մեծ հումանիստի ձայնն են լսում դրանցում...

2

Կայսրի գից վերադառնալուց հետո Ռադիշչևը սկզբնական շրջանում աշխատում էր ղանազան հիմնարկություններում: Ժամանակ քիչ էր մնում: Նա ամբողջովին գրական գործունեության նվիրվել չէր կարող նաև այն պատճառով, որ դժվարանում էր բացահայտորեն արտահայտել իր իսկական և մանավանդ հեղափոխական մտորումները: Անհրաժեշտ էր համակերպվել օրվա ազատախոհ գործիչների զգուշավոր ոճին և ինտոնացիային: Գա շատ դժվար էր, բայց և այնպես անհրաժեշտ էր այդպես վարվել: Եվ ահա այդ ուղին է բնորոշում Ռադիշչևը, երբ հրատարակում է իր առաջին գործերը, մանավանդ «Ուշակովի կյանքը» գիրքը և «Իսկական հայրենասերի» մասին կազմված զեկուցումը: Ծանրանալով լայացի գյան հուշերի վրա, բնութագրելով Ուշակովի ձեռագիր աշխատությունը և փիլիսոփայական հայացքները, Ռադիշչևը ձայնակցում էր իր բնկեր-ուսուցչին, և հենվելով Ուշակովի վրա՝ կովի ելնում իշխող կարգերի զաղափարախոսների դեմ: Եվ պատահական չէր, որ այդ գիրքը մայրաքաղաքի ակնվականների շրջանում գնահատվում էր որպես արտասովոր «ասուպ»:

Ռադիշչևի զեկուցման իրական իմաստը նույնպես պարզ պիտի լիներ բռնակալական կարգերին կառչած ընթերցողների համար:

Ռադիշչևը ազատախոհ գործիչների ընկերության ժողովում արտասանած այդ ճառը հրապարակել է նովիկովի առասպելներից մեկում:

«Հայրենիքի որդու» կամ «պատրիոտի» բնութագրմանը նվիրված իր հրապարակախոսական ակնարկում Ռադիշչևը մեծարում է ազատասեր, ազնիվ, անխարդախ քաղաքացիներին: Մարդ, մարդ պիտի լինի «հայրենիքի որդին»: Նա չպիտի լինի ստրուկ կամ ստրկամիտ անձնավորություն: Հայրենիքի որդին չպիտի ճնշի իր մոտիկներին, չպիտի շահագործի և խաբի. նա չի կարող, իրավունք չունի անտարբերությամբ նայելու իր գծախտ հայրենակիցների ծանր կացությանը...

Բնութագրելով «հայրենասերի» հատկանիշները, Ռադիշչևը միաժամանակ քողարկված, բայց դուրամատչելի ու պատկերավոր խոսքերով քննադատում է պորտաբույծներին, բռնակալներին, եսասերներին, իր օրերի անանուն, միանգամայն իրական «անազնիվ» մարդկանց⁵:

Կասկածից դուրս է, որ Ռադիշչևի ընթերցողները հասարակական հրատապ ու սուր վեճերի ժամանակ լրացնում էին այդ խոսքերը և գուցե նույնիսկ ծանրանում կոնկրետ դեմքերի վրա: Ռադիշչևին շէր կարող դուր գալ այդ քողարկված և միշտ «դիվանագիտական» ոճը: Վաղ թե ուշ նա պիտի շեղվեր այդ զգուշավոր տղեկոճից: Հայտնի է, որ նա այդպես էլ վարվում է, երբ գրում է ազատությանը նվիրված իր բանաստեղծությունը: Բայց և այնպես նա կարողանում է տպագրության հանձնել «Ազատության» միմիայն որոշ մասը և այն էլ «Ճանապարհորդություն Պետերբուրգից Մոսկվա» գրքի մեջ: Իր նվիրական մտորումներն ու խոհերը նա արժարժում է աչքտեղ: Ռադիշչևը դիտմամբ չի հետևում «Ճանապարհորդություններ» գրող տրագիցիոն հեղինակների ուղեգծին:

Ավելին կարելի է ասել. նա դիտավորությամբ մշակում է կյանքի վերարտադրության և կենդանի իրականության բնորոշ երևույթների լուսաբանության նոր մեթոդ: Նրա գրքի կոմպոզիցիան վէլ շատ չուրահատուկ է: Գա և զեղարվեստական, և հրապարակախոսական ստեղծագործություն է: Կան այդտեղ հուշերի բնույթ կրող ակնարկներ: Կան հակիրճ վիպակներ և նովելների նման հյուսված նկարագրական ակնարկներ. կան պատմական էքսկուրսիաների բնույթ ունեցող էջեր. կա պաթոս և անսահման տխրություն. զայրույթ և իրոնիա, ինչպես նշել է ժամանակին Գերցենը՝ չերմ հույզով լեցուն իր տողերի մեջ: Եվ այնուամենայնիվ, տարբեր ժանրերը այդ եզակի գրքերի մեջ կապված են միմյանց, մի ընդհանուր գաղափարի շուրջն են պտտվում և միանման շեշտ ունեն:

Երկու ներհակ բանակ է նշում Ռադիշչևը՝ ժողովրդի — զեղջուկ-աշխատավորների, ճնշվածների և շահագործվողների բանակը և ժողովրդին խեղ-

զող բազմազան տղրուկների՝ ճորտատերերի, վաճառականների, կաշառակեր պաշտոնյաների և բանակը: Անսահման սիրով է պատմում զրոզը ժողովրդական սրտաբուխ երգերի մասին, զրվատում գյուղացիներին, մեծարում նրանց աշխատանքը:

«...Ձիերը սլացնում են ինձ. կառապանս մի երգ սկսեց՝ սովորական պես թախծալի: Ով ծանոթ է ոուս ժողովրդական երգերի եղանակներին, նա կխոստովանի, որ զրանցում ինչ-որ մի բան կա հոգեկան վիշտ արտահայտող: Այդպիսի երգերի համարյա բոլոր ձայները մեզմ տոն ունեն: Ժողովրդական լսողության ձայների այս երաժշտական դասավորության մեջ կարողացիր որոշել կառավարման սանձերը: Դրանցում դու կտեսնես մեր ժողովրդի հոգու կազմվելը: Նայիր ոուս մարդուն. դու նրան կպտես մտախոհ: Եթե նա կամենացրել իր տաղտկությունը կամ, ինչպես այն ինքն է անվանում, եթե կամենա ուրախանալ, ապա զնում է օղետուն: Իր ուրախության մեջ նա պոռթկուն է, խիզախ, կովարար: Եթե որևէ բան իր քեֆով չի լինում, ապա իսկույն վեճ է սկսում կամ կոխի: Գլխիկոր օղետուն զնացող և ապտակներից արյունաթաթախ վերադարձող բուռնալի շատ բաներ կարող է վճռել, որոնք ցարդ զուշակելի են ոուսական պատմության մեջ»⁶:

Վերջին տողերը գրեթե լիովին արտահայտում են զրքի հետագա մասում կտրուկ կերպով արտահայտված հեղափոխական մտորումները, «բուռնալի շատ բան կարող է վճռել»:

Ռադիշչևը անհուն ատելությամբ է նկարում բռնակալների և տղրուկների դիմաստվերները: Հեղափոխական մտածողի տեսակետից մեկնաբանելով «բնական իրավունքի» դրույթները, նա մերկացնում էր իշխող տղրուկներին և պաշտպանում ժողովրդի իրավունքները: Հասարակության բոլոր անդամները, գրում է նա, հավասար քաղաքացիական իրավունքներ պիտի ունենան: Ծորտատերերը՝ բռնաբարելով աշխատավորների իրավունքները, զրանով արդեն իրավունք են տալիս աշխատավորներին կովի ելնել բռնակալական կարգերի դեմ:

Հակառակ ֆրանսիական լուսավորիչների, Ռադիշչևը արդարացնում-հիմնավորում է ապստամբության ուղին բռնող ժողովրդի ըմբոստ քայլերը: Նա բացասաբար չի մոտենում պուգաչևյան ապստամբությանը... Զետեղելով որոշ հատվածներ իր «Ազատություն» բանաստեղծությունից, Ռադիշչևը բացարձակ կերպով իր դիրքը դարձնում է միապետության դեմ ուղղված վավերագիր:

«Ճանապարհորդության» մեջ բավական մեծ տեղ են բռնում գրաքննության պատմական էվոլյուցիայի բնութագրմանը նվիրված փաստալից և սուր

⁵ А. Н. Радищев, Избранные сочинения, стр. 205—206.

⁶ Ա. Ն. Ռադիշչև, Ճանապարհորդություն Պետերբուրգից Մոսկվա, Երևան, 1950, էջ 6:

էջերը: Ռադիշչևը ընդգծում է, որ գրաքննությունը բոլոր երկրներում եղել է զորավոր ղենք գիտության և ազատ խոսքի դեմ պատենշներ կառուցող զանազան բռնակալների համար: Կարծես վաղօրոք նախատեսելով իր ապագան, նա հնօրյա գրաքննիչների դեմ ուղղված ակնարկները դարձնում է իր ապագա թշնամիների քողարկված քննադատություն: Արևմտյան լուսավորիչները նկատում էին իշխող կարգերի բացասական կողմերը, սակայն չէին վստահում հեղափոխական պայքարի դրոշմը պարզել: Վոլտերը և Գիդրոն մեծարանքով էին մոտենում «ուսյալ միսպետներին» և առանձնապես Եկատերինա կայսրուհուն: Ռադիշչևը ոչ միայն տեսնում էր ժողովրդին ճշող բռնակալական լուծք, այլև կոչ էր անում քանգել այդ լուծք, հիմնավորում էր ճորտատիրությունը հեղափոխության միջոցով տապալելու անհրաժեշտությունը:

«Ճանապարհորդության» մեջ շատ նշանակալից են նաև արևմտյան գիշատիչ շահագործողների քաղաքականության բնութագրմանը նվիրված տողերը: Մոլեգին եվրոպացիները, — գրում է Ռադիշչևը, — շաղակրատում են խաղաղասիրության մասին և միևնույն ժամանակ ամենավայրագ բռնություններ են գործադրում թույլ ժողովուրդների նկատմամբ: Փարիսեցի ամերիկացիները ոչնչացրել են հնդիկներին և բնիկ ամերիկացիների արյամբ պարբերաբար զավթված վայրերը: Այդ ամերիկացիները Մենեգայի և Նիգերի նեգրերին դարձրել են ստրուկներ: Ամենին «երանավետ» երկիր չէ այդ Ամերիկան, ուր հզփացած շահագործողների կողքին հառնում են հազարավոր թըշվառների տխուր սովերները...

Բնորոշ է այն, որ երբ Ռադիշչևը 1797 թ. վերադառնում է Նեմցովո գյուղը, նորից ձիգ է թափում գեղարվեստական երկերի միջոցով արծարծել իր մտորումները: Նա գրում է «Բովա» բանաստեղծությունը, «Հուշարձան դակտիլոքորեական ասպետին» տեսական-գրական երկասիրությունը, իր «Պատմական երգը»:

Ռադիշչևը շեշտում է, որ Սիբիրից հետո անդորր կյանքը գյուղական կալվածքում իր համար անտանելի էր: Նա այստեղ իրեն բանտարկված էր զգում, տառապանքով էր դիտում ճորտ գյուղացիների կյանքը: Մակոգոնենկոն իր մի հետազոտության⁷ մեջ կանգ է առնում Ռադիշչևի շատ ուշագրավ և պատկերավոր գրվածքների վրա: Մանրանալով գյուղացիների դժվարին դրության վրա, Ռադիշչևը նկարագրում է ձմռանը հեռու երկրներ սլացող թուշաններին և «Կոռնիկ» առակի մեջ կերտում աննկուն տոկոսությունը դեպի նախագծված նպատակը սլացող կոռնիկներին: Այդ պատմությունը, — գրում է Մակոգոնենկոն, — դառնալով արիության գովք՝ բնութագրում է նաև հետզհետե հասարատուն ուղեգծին հարող գրողի հոգեկան ապրումները:

Մենք արգեն ասացինք, որ սիբիրյան վայրերում Ռադիշչևը շատ ավելի առույգ էր: Նրան խրախույս էր ներշնչում սիբիրյան կորովի ժողովուրդը: Իր անավարտ աշխատության մեջ Ռադիշչևը այսպես է բնութագրել հարազատ ժողովրդի ունակությունները. «Ո՛վ ժողովուրդ, որ ծնված է մեծության ու փառքի համար, եթե դրանք դու դարձնես այն բոլորը ձեռք բերելու միջոց, ինչի կարող է հասնել հանրային բարեկեցությունը»: Սիբիրի համառոտ պատմության, ինչպես նաև շինական առևտրի առթիվ գրված աշխատության մեջ նա շոշափում է կարևորագույն տնտեսական պրոբլեմներ: Նկատի ունենալով ամենից առաջ զեղջուկ ժողովրդի և որսորդների շահերը, նա առաջարկում է խորհել տղրուկ վաճառականների անսահման իրավունքները սահմանափակելու մասին: Նա կանգ է առնում տեղական արդյունաբերության, առանձնապես տնայնագործության առանձնահատուկ նշանակության վրա, առաջարկում է միջոցներ մշակել տնայնագործության զարգացման համար, խոսում է սիբիրյան վայրերի տնտեսական մեծ տպագայի մասին: Չմոռանալու է հեղափոխության, նկատում է Ռադիշչևը, շատ հաճախ ապարդյուն են անցներկար ամիսները, նկատում է Ռադիշչևը, շատ հաճախ ապարդյուն են անցնում հենց այն պատճառով, որ գյուղական վայրերում ձեռարկեստր թույլ է զարգացած: Գործարաններ անհրաժեշտ է կառուցել ոչ միայն մայրաքաղաքներում և խոշոր քաղաքներում, այլ նաև այնպիսի վայրերում, ուր կան ազատ աշխատող ձեռքեր:

Ռադիշչևը շատ հաճախ պտույտներ էր կատարում, մանրակրկիտ ուսումնասիրում ժողովրդի իրական կացությունը, գյուղացիական տնտեսության առանձնահատուկ պայմանները: Նրա թե աշխատությունների, թե, մանավանդ, Վորոնցովին ուղղված նամակների մեջ կան շատ ուշագրավ դիտողություններ գյուղական վայրերում բնակչության կյանքի մասին: Ռադիշչևը իր դրությունների մեջ դատափետելով ճորտատեր-կալվածատերերին՝ հանդես է գալիս որպես ժողովրդի շահերի պաշտպան: Սիբիրյան վայրերում, «ինչպես հաստատում են աղբյուրները, նա ի միջի այլոց ուսումնասիրում է հանքային հարստությունները և նույնիսկ քննում հանքերի տեսակներն ու որակը: Վերջապես հայտնի է նաև այն, որ Սիբիրում նա բժշկական մեծ օգնություն է հասցնում շինականներին...

Ռադիշչևը ուրույն տեղ է գրավում նաև ուսու փիլիսոփայական մտքի պատմության մեջ: Տակավին 1789 թվականին գրած իր մի աշխատության մեջ, ծանրանալով Ուշակովի՝ լայցիգյան իր ընկերոջ հայացքների վրա, նա հանդես է եկել փիլիսոփայական նոր գաղափարների պրոպագանդիստի դերում: Սիբիրյան քարտավայրում գրած աշխատության մեջ նա ավելի պարզորոշ կերպով է արծարծում իր փիլիսոփայական մտորումները: Այս աշխատության առաջին հատվածների մեջ որոշակի կերպով նշմարվում է մատերիալիստական փիլիսոփայության հետևողն ու շահակիրը: Մանրանալով բնա-

⁷ Г. П. Макогоненко, Жизнь и творчество Радищева, см. «Избранные сочинения Радищева», стр. XLI.

գիտական պրոբլեմաների և իր օրերի բնագիտության վրա, Ռադիշչևը պաշտպանում է մեխանիստական մատերիալիզմի սկզբունքները և նույնիսկ հակասությունների մեջ ընկնում: Աշխատության երկրորդ մասի մեջ նշմարվում են շեշտված հակասությունների հետ կապված որոշ սխալներ: Սակայն և այնպես, դաժան անցյալի մոռյլ պայմաններում մեծ հեղափոխական-գրողի այդ գործը կրոնի և միստիկայի դեմ ուղղված շատ գորավոր հարված էր: Օպտիմիստական հայեցողությամբ համակված ըմբոստ հումանիստը կյանքի ու գիտության զովքն է երգում: Նա կոչ է անում գիտնականներին՝ հենվել «փորձի վրա» և նոր թափ հաղորդել անկաշկանդ գիտության հարաճուն զարգացմանը...

«Մեր ճիգերը, բոլոր մեր ձգտումներն անասման են...», — գոչում է Ռադիշչևը՝ տողորված պատանեկան եռանդով:

Այդ եռանդը Ռադիշչևը ստանում է սիբիրյան միջավայրում՝ կենդանի և կորովի մարդկանց շրջանում: Այդ եռանդը, որքան էլ տարօրինակ լինի, աստիճանաբար խամրում է ազատության օրերին՝ Պետերբուրգում: Նա ազատ էր և նույնիսկ «պատվավոր» դիրք ուներ. Օրենսդրական հանձնաժողովի անդամ էր: Բայց այլևս չէր կարող շփվել պարզ մարդկանց, ժողովրդի ներկայացուցիչների հետ: Նա գիշեր ցերեկ պիտի աշխատեր օտար մարդկանց շրջանում, միշտ զսպեր իր հույզերը և քողարկեր իր հայացքները: Ռադիշչևի ամեն մի քայլին ու խոսքին հետևում էին ամենամեծ ուշադրությամբ: Օրենսդրական հանձնաժողովի բոլոր անդամները միապետական-ճորտատիրական կարգերի հլու սպասավորներն էին և անհանդուրժելի էին համարում ժողովրդի կացության բարվոքման համար առաջադրվող ոեալ միջոցառումները: Աքսորավայրից եկած նախկին արքայական գրողին նրանք վերաբերվում էին վերապահությամբ և շատ անգամ էին ծածկում իրենց թշնամանքը:

Ռադիշչևը տեսնում էր այդ ամենը, սակայն անվճատ առաջ էր տանում իր աշխատանքը անգամ թշնամիների այդ ծանր շրջապատում: Նա մի շարք տնտեսական և իրավագիտական զեկուցումներ է կազմում. առաջարկում է ամենամանրակրկիտ կերպով ուսումնասիրել երկրի բոլոր վայրերը, ճշտված տեղեկություններ հավաքել գիներտների ու բուժկայանների, բանտերի ու արքայական վայրերի, քրեական հանցագործությունների և վերջապես ժողովրդի իրական կացությունը բնութագրող տնտեսական պայմանների մասին:

Ռադիշչևը ուսումնասիրելով բազմազան տուրքերի ծանրությունը՝ մշակում է հատուկ նախագիծ-ծրագիր հարկային քաղաքականության մասին: Նշանակալից է այն, որ նա նպատակ է դնում ուսումնասիրել ամենից առաջ հանցագործություններին նպաստող իրական պատճառները: Պետությունը, նկատում է Ռադիշչևը իր գիտողությունների մեջ, պիտի ձգտի ուղղել, դաստիարակել հանցավորներին: Մահվան պատիժը, դաժան ռեպրեսիաները, ժեծը

միմիայն սարսափեցնում են, բայց չեն կարող հետագա հանցագործությունների առաջն առնել: Իրավագիտական իր գրվածքների մեջ Ռադիշչևը շոշափում է հաճախ տնտեսական կարևորագույն պրոբլեմներ: Թղթագրամի հեղեղը, ասում է նա, շարիք է, և ապա արծարծում է իր տնտեսական հայացքները ինֆլացիային օժանդակող անարդյունավետ ծախքերի մասին: Նա առաջարկում է տեղեկություններ հավաքել երկրի ֆինանսական կացության՝ բանկային կապիտալի, մուրհակների ու տնտեսական վարկի, շենքերի պահանջարման, ճանապարհների, ջրանցքների, գործարանների, բանվորական ուժի մասին:

Օրենսդրության էվոլյուցիային Ռադիշչևը մոտենում է պատմական դիրքերից: Յուրաքանչյուր պատմաշրջանին, նկատում է նա, հատուկ են առանձնահատուկ օրենքներ: Ելնելով դրանից, Ռադիշչևը առաջարկում է նկատի առնել ամենից առաջ կոնկրետ պատմաշրջանում ապրող ժողովրդի բազմազան շահերն ու կարիքները: Ժամանակակից մի իրավագետ-պատմաբան (պրոֆ. Օղերով), համեմատելով մեծ հումանիստ-հեղափոխականի հայացքները արևմտյան ականավոր մտածող Բեկկարիայի գաղափարների հետ, ի միջի այլոց, կանգ է առնում Բեկկարիայի անշափ ուշադրավ մի նամակի վրա: Բեկկարիան այդ նամակը գրել է 1776 թվականին: Այդտեղ նա ասում է, որ ինքը իհարկե լսում է շղթաների շոխնդը և ցանկանում է օգնություն հասցնել տառապող մարդկությանը, բայց և այնպես, ստիպված է ծածկել իր իսկական խոհերը և մշուշով սքողել իր մտորումները: Սակայն այս տողերը Բեկկարիան գրում էր այլ պայմաններում. այդ օրերին նա շրջապատված էր մոտիկ զինակիցներով, հնարավորություն ուներ հրապարակելու իր աշխատությունները, ակտիվ օգնականներ էր գտնում անխուսափելի բանավեճերի ժամանակ: Արևմտյան Եվրոպայի մտածողների կացությունը անհամեմատ ավելի լավ էր հեռու այդ անցյալում:

Իսկ Ռադիշչևը հենց Օրենսդրական հանձնաժողովում շրջապատված էր կատաղի թշնամիներով, որոնք բացասաբար էին մոտենում ուշիմ մտածողի ամեն մի առաջարկին: Հանձնաժողովի նախագահը մերթ ընդ մերթ հիշեցնում էր Ռադիշչևին, որ նրան կարող են արքայավայր ուղարկել: Ռադիշչևի համար ամենից ծանրը այն զգացումն էր, որ ինքը չի կարող տպագրություն հանձնել իր ազատ խոսքը, չի կարող մոտենալ հայրենի ժողովրդին, վերջապես հնարավորություն չունի նետվելու հարազատ ժողովրդի անարդ դահիճների դեմ: Ամենուրեք լավում էր տառապանքների և ընկնողների ձայնը: Ընկնում է Ռադիշչևը, բայց ընկնում է համակված մեծագույն ատելությամբ ընդդեմ ցարական ղեսպոտիայի:

«...Սուսկ վերնագրի պատճառով, — գրում է իր «Ճանապարհորդություն» մեջ Ռադիշչևը, — ինձ մերժեցին հրատարակել սույն բանաստեղծությունը»:

Բայց և այնպես, այդ տողերը գրելուց հետո ավելացնում է՝ «մեզանում, տեղին է խոսել ազատության մասին», ապա արդեն կրկնում է իր «Ազատության» խոսքերը.

Ո՛վ օրհնյալ պարզև, շնորհ երկնային,
Բոլոր մեծամեծ գործերի աղբյուր,
Ո՛վ ազատություն, պարզև դու անդին,
Թող ստրուկը բեզ գովերգի այսօր:
Իմ սիրտը լցրու բորբոք կրակով,
Մկանունքների ուժգին հարվածով,
Մուրհաս ստրկության դարձրու դու լույս,
Եվ թող արժանան հրուտոսն ու Թեմ-
իշխիր դու հաստատ, ըտ ձայնից ահեղ
Թող ցարերը ժանտ խլրտվեն անհույս...:

Սովետական մեծ ժողովուրդը, զինված ընդհանրապես կուսակցության վեհ պատգամներով, այսօր կառուցում է լուսավոր նոր կյանքի պայծառ շենքեր: Սովետական ժողովրդի առաջավոր շարքերն այսօր լավ են տեսնում անցյալի հումանիտարների հակասություններն ու թերությունները: Մակայն արանք ավելի ևս բարձր են գնահատում անցյալի այդ մեծ գործիչների հերոսական գործունեության խոշոր նշանակությունը և պատմական մեծ դերը: Սովետական եղբայրական բոլոր ժողովուրդները հարգանքով, մեծագույն ակնածանքով և սիրով են ուսումնասիրում այսօր ուս ժողովրդի մեծ զավակ հեղափոխական հայրենասեր Ռադիշչևի գրական ժառանգությունը:

Ռադիշչևի կյանքը, նրա անցած ուղին, ստեղծագործական աշխատանքը պատմական կարևորագույն վավերագրեր են, որոնք բնութագրում են թե դաժան անցյալը, և թե այդ անցյալի դաժան բռնակալների դեմ մարտնչող մեծ հեղափոխական հայրենասերի անսահման անձնվիրությունը հայրենի ժողովրդի ազատագրության գործին:

1940

ՊՈՒՇԿԻՆԸ ԱՅՍՕՐ

«...Իմ դաժան դարում երգել եմ ես ազատություն...», — այսպես է բնութագրել իր ստեղծագործության իմաստը ինքը՝ ուս ժողովրդի մեծ պոետ Պուշկինը:

Գեղարքիստների ապստամբությունը 1825 թվականին ճնշված էր: Ըմբոսս պոետը մնացել էր գրեթե միայնակ: Նա շատ բան այլևս չէր կարող ասել բացահայտ և ստիպված էր սքողել իր իսկական մտորումները: Բանաստեղծի յուրաքանչյուր քայլին ու խոսքին հետևում էին Նիկոլայ ցարը, ժանդարմապետ Բենկենդորֆը, ազնվական արիստոկրատների սև ամբոխը:

Այսօր մեզ ավելի լավ են հայտնի Պուշկինի ծանր ապրումներն ու մտորումները: Ցարական հին դիվաններից քաղված նորահայտ վավերագրերը, պուշկինյան ձեռագրերը և նկարները, վերջապես սովետական բանասերների ուսումնասիրություններն ու պրպտումները հաստատում են անառակելի մի փաստ. Պուշկինը, հակառակ նախահեղափոխական շրջանի լիբերալ պատմաբանների հերյուրանքներին, մինչև կյանքի վերջին օրերը հավատարիմ է մնացել զաղափարական վեհ պատգամներով հագեցած արվեստի լուսավոր ուղեգծին: «...Պուշկինի ստեղծած պատկերների մեջ, — գրում էր 60-ական թվականներին Գորբուլյուբովը, — իսկապես կարելի է տեսնել մի քանի զաղտնի մտքեր, որոնք ներդաշնակ են նրա մշտապես շրավարարված տրամադրությունը...»:

Այսօր մենք ավելի լավ ենք տեսնում ահա հենց զաղտնի մաքե արտահայտող այդ մտածող-պոետի նվիրական մտորումները...

Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինը ծնվել է 1799 թվականին՝ Մոսկվայում, ազնվականի ընտանիքում: Ռուս ազնվականներն այդ ժամանակ ավելի հաճախ ֆրանսերեն էին խոսում, իրենց զավակներին էլ ֆրանսիական կրթություն էին տալիս: Բայց Պուշկինի դայակը ուս գեղջկուհի էր: Ահա այդ գեղջկուհին՝ Արինա Ռոդիոնովնան, Պուշկինին, տակավին մանկության տարիներին, իր պարզ զրույցներով և հեքիաթներով կապում է ժողովրդական «բառ ու բանի» հետ: Այնուհետև Պուշկինը Մոսկվայից ուղևորվում է Պետերբուրգ, ավելի ճիշտ՝ մայրաքաղաքից ոչ այնքան հեռու գտնվող փոքրիկ «Ցարսկոյե սելո» քաղաքը: Այդտեղ էր գտնվում Ալեքսանդր կայսեր հատուկ որոշմամբ հիմնըված նոր լիցեյը: Այդ դպրոցում պիտի դաստիարակվեին բացառապես հայտնի ազնվականների որդիները՝ հետագայում պետական պաշտոնյաներ և զինվանազետներ դառնալու համար: Այդօրինակ դպրոցը իհարկե չէր կարող առաջավոր ուղղություն ունենալ: Սակայն այդ լիցեյը կտրված չէր շրջապատի իրականությունից:

Անհրաժեշտ է նշել, որ 1812 թվականի Հայրենական պատերազմը նոր միջնորոտ էր ստեղծել անզամ ազնվականների շրջանում: Պատմական նոր առօրյան ու ղեպքերը ցնցող ապավորություն էին թողել ուս հասարակության բոլոր շերտերի վրա: Ռուս ժողովրդի հերոսական ջանքերով ջախջախվել էր սղջ եվրոպայում անպարտելի համարվող Նապոլեոն Բոնապարտի հսկայական բանակը: Այդ փաստն ինքնին թելադրում էր նոր տեսանկյունից մոտենալ շրջապատի բոլոր երևույթների լուսարանությունը: Նապոլեոնյան բանակին մահացու հարված հասցնող ուս ժողովուրդն ըստ էության դառնում էր արևմտյան բոլոր ժողովուրդներին ազատագրող կարևորագույն և առաջավոր գործոն:

1812 թվականի պատերազմը մեծագույն ակոս է փորում ուս հասարակության առաջավոր շարքերի գիտակցության մեջ: Ցնցող ղեպքերի ազդեցու-

թյան ներքո վերադնահատության են ենթարկվում հնօրյա շատ ու շատ արժեքներ: Զորավոր հարված են ստանում առանձնապես արևմտյան կուլտուրայի ստորաքարը սպասավորները և ռուսական ազգային մշակույթի գերըթերազնահատող գործիչները: Արթնանում է ազգային արժանապատվության պահպանումը: Նոր մտածեցում է մշակվում դեպի ժողովրդայնության ակունքների վրա խարսխված հայրենասիրությունը: Հայրենասիրական տրամադրությունները կապակցվում են դեմոկրատական հայեցողությանը հատուկ նոր հովերի ու տրամադրությունների հետ:

Հայտնի է, որ Պուշկինի օրերին լիցեյում դասավանդել են առաջավոր հայացքներով համակված առանձին դասատուներ: Պուշկինը այդ շրջանում է ծանոթանում ժուկովսկու, Կարամզինի, Չտաղակի հետ: Լիցեյի վերջին դասարանում նա արդեն հայտնի էր որպես աչքի բնկնող բանաստեղծ: Իսկ լիցեյն ավարտելուց հետո ակտիվ կերպով կապվում է ռուս գրականության առաջավոր ներկայացուցիչների հետ և հրապարակում իր առաջին գործերը: Ժամանակակիցների վրա մեծ տպավորություն է թողնում Պուշկինի «Ռուսլան և Լյուդմիլա» պոեմը: Այդ տաղանդավոր գործը իր ուրույն ոճով կեղծ կլասիկական արվեստի դեմ ուղղված մի վավերագիր էր: Պուշկինի լիցեյան բանաստեղծություններն արդեն ստեղծել էին ընթերցողների բավական լայն շրջան: Շատ մեծ արձագանք են ստանում նրա «քաղաքացիական» բանաստեղծությունները, հրապարակախոսական սուր ակնարկներով լեցուն ծաղրանկարներ-էպիգրամները, ինչպես նաև բռնակալական կարգերի դեմ ուղղված հեղափոխական տողերը: Նա նկարագրում է սև ուժերին օժանդակող ցար Ալեքսանդրի դիմաստվերը, անիծում է երկրագնդի բռնակալներին և ազատության գովքն անում: Երբ ցար Ալեքսանդրը վերադառնում է արտասահմանից, Պուշկինը հեզնանքով գրում է. Ու ու ա՛, չվում է գեպի Ռուսիա բռնակալը աստանդական... Իսկ «Ազատություն» բանաստեղծության մեջ պոետը գոչում է.

Ատում եմ քեզ և քո գահը
Միահեծան գոռոզ ցար...

Տարված ազատատենչ մտորումներով, նա նկատում է հեղափոխական գործիչներին և շեշտակի հարվածներ ուղղում բռնակալության սպասավորների դեմ: Պուշկինյան երգերը արտատպվում ու տարածվում են ազատախոս գործիչների շրջանում: Հետագայում դեկաբրիստներից շատ-շատերի մոտ ցարական քննիչները գտան պուշկինյան այդ երգերը: Պոետի բանաստեղծությունները քննարկվում էին որպես ազատագրական շարժումներին արձագանքող կամ օժանդակող ոգևորիչ խթաններ: Անսահման զայրույթով համակված Ալեքսանդր կայսրը առաջարկում է պոետին նետել սիբիրյան հեռու արքարավայրը: Միմիայն ժուկովսկու և Կարամզինի միջամտության շնորհիվ ընդունվում է ավելի մեղմ որոշում: Պուշկինը ստիպված է լինում ուղևորվել Հարավային

Ռուսիա: Դա «պատվավոր» աքսոր էր: Ցարական սպասավորները ենթադրում էին, որ հարավային քաղաքներում Պուշկինը կվերադաստիարակվի ու կդառնա պետության օրինապահ քաղաքացի: Բայց կատարվում է հակառակը:

Հարավում Պուշկինը ծանոթանում է ականավոր դեկաբրիստների հետ: Նա հարավում է գրում «Կովկասի գերին», «Բախշխարայի շատրվանը», «Գնչուները», մի շարք բանաստեղծություններ և հակակրոնական «Գավրիլիազա» պոեմը: Հարավային գործերի մեջ որոշ չափով նկատվում են պոետի առմանտիկական ապրումները: Սակայն մեղմ էլեգիաներին հատուկ երգերի կողքին ցան ու ցրիվ երևում են ակնհայտ կամ զսպված զայրույթ արտահայտող տողեր:

Այդ շրջանում ստեղծված ստեղծագործությունների տոնն ու բնույթը շատ որոշ են: Ըմբոստ բանաստեղծը իրեն հատուկ եղանակով ձայնակցում էր դեկաբրիստական շարժման ջահակիրներին: Պատմաբան Բազանովի նյութերս հրատարակած մեկնաբանության մեջ կան շատ նշանակալից փաստեր և դիտողություններ՝ առանձնապես Պուշկինի կյանքի քիչինչլայն շրջանի մասին:

Քիչինչը, ինչպես հաստատում է Բաղանովը, արդեն 1821 թ. դարձել էր դեկաբրիստական շարժման գլխավոր կենտրոնավայրերից մեկը: Այդտեղ ռուս գինվորականների վրա մեծ տպավորություն է թողնում հույն ժողովրդի հերոսական ապստամբությունը: Քիչինչում կար հույն հեղափոխական կոմիտե: Զորահրամանատար Օուլովի բնակարանում հաճախ հավաքվում էին երիտասարդ սպաներ, հույն հեղափոխականներ, նրանց պարագլուխ իշխան Իբսիլանդին: Վերջինս 1821 թվականին կտրելով ու անցնելով Պրուտ գետը, հրապարակել էր իր հրաշունչ պրոկլամացիան, որով հայրենակիցներին կոչ էր անում կովի ելնել տաճկական բռնակալության դեմ: Պուշկինը մի նամակում (1821, մարտ) նշում է, որ Իբսիլանդիի պրոկլամացիան մեծագույն ոգևորություն էր առաջացրել հարավում: Այդ նույն օրերին վերոհիշյալ Օուլովը պատրաստվում էր իր դիվիզիան նետել սահմանի մյուս կողմը և ակտիվ կերպով մասնակցել ազատագրական պատերազմին: Ինքը՝ Պուշկինը, նույնիսկ ցանկանում էր մասնակցել ազատագրական այդ շարժմանը: Նա գտնում էր, որ տաճկական բռնակալության դեմ ուղղված արդար պատերազմը պիտի կապվի բոլոր բռնակալությունների դեմ ուղղված ժողովրդական շարժումների հետ...

Բնորոշ է այն, որ այդ ժամանակ էր կազմակերպվել Քիչինչի «Օվիդիոս» մասնական լուծան, որը անհանդուրժելի կազմակերպության համբավ ուներ կառավարական շրջաններում: Այդ լուծայի կառավարչին՝ գեներալ Պուշկինին ուղղած իր բանաստեղծության մեջ Պուշկինը բավական որոշակի բացահայտում է լուծայի անդամների իսկական ուղղությունը: Այդտեղ գեներալ Պուշկինը բնութագրվում է որպես ստրուկ ժողովրդին ազատության դրոշի շուրջը համախմբող «ապագա կվիրոզա»: Ընթերցողների համար պարզ էր, որ Պուշկինին

զնելով իսպանական հեղափոխութեան ղեկավարի կողքին, բանաստեղծը շատ կտրուկ կերպով բացահայտում էր նաև իր սեփական գիրքը: Նույն այդ շրջանում էին բռնկվել բռնակալ հրամանատարների դեմ ուղղված՝ ռուսական երկու զորամասերի ապստամբությունները:

Ահա այդ լարված մթնոլորտում՝ Քիշինեյան աքսորավայրում, Պուշկինը գրում է իր քաղաքական բանաստեղծությունները և ժողովրդական երգերի ինքնահատուկ ֆոնը կրող «Ավագակ եղբայրներ» հայտնի պոեմը: Բեստուժևին ուղղած նամակում (1823) նա նշում է, որ այդ պոեմի մի ֆրագմենտում սկզբում եղել են հատուկ խոսքեր «նայրենական հնչյուններ»՝ գինեառ, մտրակի, աստրավայրի» մասին:

Պուշկինի վրա շատ ծանր տպավորություն է թողնում իր մտերիմ բարեկամ ըմբոստ Ռաևսկու ձերբակալությունը: Իր հետազոտությունը մեջ Բազանովը գտնում է, որ հատկապես այդ զեպը կարող էր թելադրել պոետին գրելու «Կալանավոր» բանաստեղծությունը: Հատկանշական է, համեմատյալ դեպք, այն, որ ցարական քննիչներն ու լրտեսներն իրենց «տեղեկանքների» մեջ անդադար հիշեցնում են, որ Պուշկինը մտերմական կապեր է ունեցել թե ըմբոստ Ռաևսկու և թե՛ կասկածելի համարվող այլ գործիչների հետ: Հաստատելով այդ փաստը, Բազանովը Ռաևսկու դատական գործի և մանավանդ ձեռագրերի (բանաստեղծություններ, տետրակներ, բողոքագրեր) ուսումնասիրության հիման վրա հանգում է շատ որոշ եզրակացությունների. Վաշինգտոնի, Ֆրանկլինի, Կվիրոգայի, Ռիեգոյի անունները քիշինեյան շրջապատում մեկնաբանվում էին յուրահատուկ ձևով: «...Իր գինավորներին, — հայտնում էր ցարական լրտեսներից մեկը, — Ռաևսկին պատմում էր Մադրիդում կազմակերպված հեղափոխության մասին... Երբ հաղթանակից հետո հեղափոխական շարքերի հրամանատար Կվիրոգան մտնում է Մադրիդ, անվանի իսպանուհիները և ողջ ժողովուրդը ծաղիկներ են նետում Կվիրոգայի ոտքերի տակ...»:

Եթե մենք հաշվի առնենք, որ պուշկինյան հարավային բանաստեղծությունների մեջ ևս Կվիրոգան և Ռիեգոն նկարագրված են համակրական ջերմ տոնով, ապա մեզ համար ավելի պարզ կդառնան Պուշկինի ապրումներն ու հույզերը: Ներքող ձոնելով իսպանական հեղափոխական Ռիեգոյին, նա իր ներքողը դարձնում է իշխան Վորոնցովի դեմ ուղղված ցասումնալից երգ:

Պուշկինը այն համոզումն ուներ, որ Ռուսիան պատերազմ հայտարարելով Ռուրթիայի և Իրանի բռնակալական կարգերին՝ պիտի կատարի պատմական մեծագույն միսիա: Այդպես էր խորհում նա, երբ գրում էր «Կովկասի գերին» պոեմի վերջաբանը: Նա այդպես էր խորհում նաև հետագայում, արդեն Կովկասում և հատկապես Հայաստանում («Ճանապարհորդություն դեպի Էրզրում»): Միևնույն բնույթն են կրում, ինչպես հայտնի է, նաև պուշկինյան այն երգերը, որոնք նվիրված էին սլավոն ժողովուրդների կյանքի և պայքարի

նկարագրությանը: Նույնն են հաստատում նաև Պուշկինի մտերմական կապերը լեհ ժողովրդի մեծ պոետ Ադամ Միցկևիչի հետ:

Այդ ամենը քաջ հայտնի էր Պուշկինի թե՛ բարեկամներին, և թե՛ թշնամիներին: Այնքանոր կայսրն էլ շատ լավ էր ճանաչում ըմբոստ պոետին: Նրա համար ակներև էր, որ Պուշկինը հույն, սլավոն, արևելյան ժողովուրդների ազատագրական շարժումներին մոտենում է արևմտյան միապետների ոնակցին «Արբազան միության» դեմ ըմբոստացող հեղափոխական շարքերի դիրքերից: Զէ՞ որ հայրենասեր Պուշկինը Միցկևիչի հետ միասին երազում էր բոլոր ժողովուրդների լուսավոր ապագայի և եղբայրության մասին: Զէ՞ որ անզուսպ պոետի ամուր կապերը ղեկաբրիստների և «Տիրասպուլյան կալանավոր» Ռաևսկու հետ, վերջապես նրա հանաք-հեղանքներով լեցուն սուր ասույթները և էպիգրամները հայտնի էին լրտեսներին...

Պոետը հարավային քաղաքներում դառնում էր անշեջ կրակով լեցուն պատրույգ: Դա փաստ էր: Դրա համար էլ իշխան Վորոնցովի հատուկ «նամակը» անհետևանք չմնաց: Բենկենդորֆի կարգադրությամբ հրահանգ ուղարկվեց Օղեսա՝ անուղղելի Պուշկինին թշել նոր աքսորավայր՝ Միխայլովսկոյե գյուղը: Միաժամանակ ցարական կառավարությունը Պուշկինի հորը առաջարկում էր մեծագույն դաշագրությամբ հետևել իր որդու բոլոր քայլերին ու խոսքերին:

Այս անգամ պոետը միանգամայն կտրված էր հասարակական շրջապատից: Միայնակ էր աքսորական բանաստեղծը: Հայտնի է, որ նա խորհում էր նույնիսկ իր հայրենիքի սպանանքները թողնելու մասին: Այդ ծանր օրերին նա փոփանք էր գտնում միմիայն ստեղծագործական եղանակում աշխատանքի մեջ:

Միխայլովսկոյե գյուղից ոչ այնքան հեռու գտնվում էր Սվյատոգորյան մենաստանը: Վանքի դարբասի մոտ տոն օրերին կույր երգիչները ժողովրդական երգեր էին երգում: Ուղևորվելով վանք, Պուշկինը մեծագույն ուշադրությամբ լսում էր ժողովրդի ասույթները և գիտնական-բանահավաքին հատուկ բարեխղճությամբ գրի առնում ժողովրդական պարզ ու իմաստալից բանաստեղծությունները: Բազմաթիվ ժողովրդական երգեր է գրի առել Պուշկինը: Այդ երգերի անմիջական ազդեցության ներքո է կերտել Ստենկա Ռազինի մասին գրած իր երգերը: Ամենևին պատահական չէր, որ նա այդ ժամանակ անսահման հիացմունքով էր խոսում ռուս պատմական անցյալի «ամենապոետական դեմքի» — գյուղացիական ապստամբության ղեկավար Ստենկա Ռազինի մասին: Ստենկա Ռազինին նվիրված իր հուզական երգերով Պուշկինը շատ որոշակիորեն իրեն կարում է ազնվականների ամբոխից: Նրա ժողովրդական երգերի մեջ նշմարվում է հարազատ ժողովրդի սրտի զարկերակին հետևող պոետի խոհուն դեմքը: Միխայլովսկոյե գյուղում է Պուշկինը գրում իր «Ծվգենի

Օնեգին»-ի որոշ հատվածները և «Բորիս Գոգոլնով» պատմական դրաման: Վերջինիս մեջ Պուշկինը լուսաբանելով իշխանություն և ժողովրդի փոխհարաբերության պրոբլեմը, ընդգծում է հատկապես ժողովրդի նշանակությունը: Այստեղ էլ նա ուրույն զգացումով է նկարագրում ժողովրդական խավերի ներկայացուցիչներին:

Լիբերալ-իդեալիստ պատմաբանների էսթետիկական տեսություններին վճռական հարված է հասցնում Պուշկինի «Եվգենի Օնեգին» պոեմը: Այդ վեպ-պոեմում մարդիկ կտրված չեն կոնկրետ իրականությունից: Ամբողջ պոեմը ռեալիստական մեծ կտավ է ու միաժամանակ բանաստեղծի նվիրական մտորումների արտահայտությունը: Տասնյակ մեծածավալ հատորներ, նկատում է Մաքսիմ Գորկին, չեն կարող այնքան լավ բնութագրել XIX դարի 20-ական թվականների ուս գործիչների մտորումները, ինչպես անում է Պուշկինը իր գեղարվեստական վեպ-պոեմի միջոցով: Այդ մեծատաղանդ ստեղծագործության 10-րդ գլխի անավարտ պատառիկներում ուրվագծվում են ղեկաբրիստները: Այդ տողերի մեջ հատկապես շատ որոշակի նշմարվում է ղեկաբրիստների հետ կապված մտածող-պոետի ըմբոստ ոգին:

Ցար Ալեքսանդրին փոխարինած Նիկոլայ Առաջինը Պուշկինի նկատմամբ նոր քաղաքականություն է մշակում: Նա որոշում է պալատական պոետ դարձնել ղեկաբրիստների «խորհրդավոր երգչին»: Սակայն այդ ցանկությունը և ծրագիրը խորտակվում են, երբ աքսորավայրից «ազատված» Պուշկինը Մոսկվա է հասնում: Ցարը պոետին խնդրում է հայտնել իր կարծիքը ղեկաբրիստների մասին: Պուշկինը հենց առաջին տեսակցության ժամանակ կտրուկ կերպով հայտարարում է, որ եթե ինքը ղեկտեմբերի 14-ին լիներ Սենատական հրապարակում՝ կմիանար ապստամբ ղեկաբրիստներին:

Նորից Պուշկինը մնում է միայնակ և նորից տեսնում է ու համոզվում, որ չի կարող ազատորեն արտահայտել իր նվիրական խոհերը: Երբ վենետիկյան օդանավով տանը նա կարդում է իր «Բորիս Գոգոլնով» դրաման, ունկնդիրները շերմորեն ողջունում են պոետին: Սակայն Բենկենդորֆը զայրանում է և առաջարկում Պուշկինին՝ բոլոր գրությունները նախօրոք հանձնել իրեն: Նիկոլայ Առաջինն էլ իր կողմից խորհուրդ է տալիս դրամայի որոշ հատվածները «շտեկել»՝ վալտեր Սկոտի վեպերին հատուկ ձևով: Պուշկինը, ինչպես հայտնի է, անհետևանք է թողնում ցարի այդ առաջարկը: Աքսորից «ազատված» Պուշկինը իրականում մնում է պատվավոր կալանավոր և՛ Մոսկվայում, և՛ Պետերբուրգում: Նա գիտեի արդեն, որ հասարակական իրականության մեջ կան ներհակ ու բախվող ուժեր: Նա ծաղրում է հայրենի ժողովրդից կտրված և արևմտյան ռեակցիոն մշակույթով տարված ստորաքարշ գործիչներին:

Պուշկինյան պոեզիայի բարդ երանգները և իրական իմաստն աննկատելի չեն մնում ցարական գրաքննիչների համար: Նրանք տեսնում են, որ պոետը չի ցանկանում ենթարկվել կառավարական հրահանգներին:

Սիբիրյան աքսորական ղեկաբրիստներին Պուշկինը 1827 թվականին ուղարկում է իր սրտաբուխ նամակ-բանաստեղծությունը, որով վաղեմի իր բարեկամներին կոչ է անում հպարտ ապրել հեռու Սիբիրի խավար խորքերում և նկարագրում է գալիք օրերի լուավոր հեռանկարը.

... Եվ կրննեն մի օր շղթաները ձեր,
Բանտը կդառնա խղճուկ ավերակ,
Ազատությունը դեմ կվազի ձեզ,
Ու ընկերներից սրբեր կստանաք...

(Քարգմ. Գ. Դեմիրճյան)

Դեկաբրիստներն ստանում են այդ բանաստեղծությունը: Պատասխանը գրում է Օդոևսկին... «Կայծից բոց կբռնկվի»,—ընդգծում են աքսորականները: Այդ խոսքերը դառնում են հետագայում հեղափոխական պատգամ՝ ցարական բռնակալության դեմ պայքարող մարտիկների համար:

Իր «Արիոն» բանաստեղծության մեջ Պուշկինը պատկերում է ծովն ու նավակը, նավակի ղեկավարին ու ճամփորդներին, վերջապես «խորհրդավոր երգչին»: Մրրիկ է: Խորտակվում է նավակը: Փրկվում է և կենդանի մնում միայն մի ճամփորդ՝ «խորհրդավոր երգիչը»: Այլաբանական այդ բանաստեղծության իմաստը շատ պարզ էր: Երգը Պետելի և ղեկաբրիստների մասին էր: Երգիչը Պուշկինն էր, որ «Արիոնի» վերջին տողերով խոստանում էր հավատարիմ մնալ զոհված ընկերների ավանդներին:

Անհաշտ և ըմբոստ պոետի դեմքը նշմարում ենք նաև մուսյե կոլորիտով շրջագծված «Անշար» բանաստեղծության մեջ: Այդտեղ իր տիրոջը թունաբեր «անշար» հանձնելուց հետո, ընկնում է մահացող ստրուկը: Նշանակալից են բանաստեղծության վերջին տողերը: Բռնակալը իր մահաբեր նետերով մահ է սփռում: Ահեղ անշարն ու բռնակալը դառնում են մահվան սիմվոլներ:

Ցարական գրաքննիչները նորից տեսնում են, որ «Անշարը» (1828) իր հիմնական իմաստով կապված է պուշկինյան վաղեմի մտորումների հետ:

Պուշկինի նկարների մեջ կան շատ բնորոշ ուրվագծեր: Դրանցից մեկում նկարված են կախաղանն ու կախված ղեկաբրիստների սիլուետները: Նկարի կողքին բանաստեղծը գրել է՝ «Ես էլ կարող էի...»: Մանրագույն հուշերով համակված պոետը չէր կարողանում մոռանալ անցած տխուր դեպքերը: Տեսնում էր կախաղանը, սիբիրյան աքսորավայրերը, շղթայակապ ղեկաբրիստներին: Նա ջերմ շնչով համակված սրտաբուխ նամակ-բանաստեղծություն է ուղղում իր ամենասիրելի ընկերոջը՝ աքսորական Պուշկինին: Երբ ավարտում է Պետրոս Մեծին նվիրված հայրենասիրական «Պուլտավա» վեպը, նրան կցում է շատ ջերմ «Ձոն».

Քեզ — բայց իմ մութ մտաայի երգը
Արդյոք հասնո՞ւմ է ականջիդ,
Արդյոք սրտիս ձգտումը, տենչը
Կհասկանա՞մ համեստ հոգիդ:

Վերջին հնչյուն խոսքերը քո
Իմ միակ գանձն ու սրբությունն է
Ու միակ սերն է իմ հոգու...:

(Թարգմ. Ն. Զարյան)

Այդ խորհրդավոր ներածության մեջ ոչ մի անուն չկա: Սակայն «Պուտա-վա»-ի նախաբանի սևագիր տարբերակի մեջ «անապատի» փոխարեն կա շատ որոշակի ակնարկ «սիբիրյան վայրերի» մասին: Ներկայումս պարզված է, որ այդ ուղերձը ուղղված էր Սիբիրում գտնվող իշխանուհի Վոլկոնսկայային:

Շատ ուշագրավ են մեծ պոետի երկերի մեջ ցրված դիտողություններն ու ակնարկները ժողովրդի ներկայացուցիչների մասին: «Դուբրովսկի» վիպակի մեջ Պուշկինը ներբող է ձոնում ամենից առաջ աշխատավոր ժողովրդի ներկայացուցիչներին: Իսկական հերոսներն պլոտեղ ժողովրդի զավակներն են: Երբ նա անցնում է պուգաչևյան գյուղացիական մեծ ապստամբության պատմու-թյանը, ամենամանրակրկիտ կերպով ուսումնասիրում է ոչ միայն գրավոր աղ-բյուրները, այլև շինականների գրույցներն ու նկարագրական ակնարկները. «Ամբողջ սև» (այլ խոսքերով՝ շարքաշ և աշխատավոր) ժողովուրդը Պուգաչևի հետ է, գրում է նա իր պատմությանը կցած հակիրճ ծանոթագրությունների մեջ: Պուշկինը շեշտում է, որ Պուգաչևին ակտիվորեն աջակցել են ուրալյան բանվորները, բաշկիրները, կալմիկները և ճնշված ժողովուրդները: Ազնվա-կանությունը այդ ծանոթագրությունների մեջ պատկերված է որպես միաձուլյ դասակարգ, գյուղացիական շարքերի դեմ կանգնած մի ուժ: Այդպիսով, բա-նաստեղծը տեսնում է ժողովրդին կալվածատերերից բաժանող խորխորատը և հատկապես այդ փաստը արձանագրում է բավական որոշակի կերպով: Տարբերակ տպավորություն է թողնում, առաջին նվագ, այն, որ «Կապիտանի աղջիկը» վեպի մեջ ապստամբ Պուգաչևը հանդես է գալիս որպես երկու երի-տասարդներին հովանավորող բարի բարեկամ: Պուշկինի համար Պուգաչևը դաժան ավազակի սովորական տիպար չէ: Անաշու կերպով պատկերելով բախվող երկու հակամարտ ուժերի դաժանությունները, Պուշկինը տեսնում է Պուգաչևի դրական գծերը՝ խիզախությունը, խելացիությունը, ուշիմությունը: Բնորոշ է այն, որ իր «Երագի» մեջ էլ նա այդպես է նկարագրում Պուգաչևին: Իր հիվանդ հոր փոխարեն նա անկողնում տեսնում է սևամորուք մուժիկին: Այդ մուժիկը «ուրախ-ուրախ է նայում»: Տարակուսանքի մեջ, — պատմում է վեպի հերոսը, — ինքը դառնում է մորը և ասում. «Այս ի՞նչ է նշանակում: Սա հայրս չէ: Եվ ինչո՞ւ ես պետք է մուժիկի օգնությունը խնդրեմ: Միևնույն է.

Պետրուշա, — պատասխանում է մայրս, — նա քո հարսնահայրն է, համբուրիք նրա ձեռքը, և նա թող օրհնի քեզ...»: Այդպիսով, վեպի մեջ հերոսի մայրը հան-դես է գալիս Պուգաչևին «հովանավորողի» դերում: «Նրա դիմագծերը, — կար-դում ենք վեպի մեջ, — կանոնավոր և բավական դուրեկան են. ոչ մի կատաղի արտահայտություն չունեն...»: Պուգաչևի զինակիցների մասին Պուշկինը գրում է. «...Բոլորը միմյանց հետ վարվում են ինչպես ընկերներ և առանձնա-պես ոչ մի գերապատվություն չեն տալիս իրենց առաջնորդին...»: Շատ վառ գույններով են նկարված տխուր և ուսական դաշտերի նման լայնարձակ «ավա-զակային» երգը երգող Պուգաչևն ու նրա զինակիցները:

«... Դեհ, եղբայրներ, — ասաց Պուգաչևը, — եկեք, քնից առաջ երգենք իմ սիրելի երգը: Չունակով, սկսիր: Իմ հարևանը բարակ ձայնով սկսեց բուռյակ-ների մեղամաղձոտ երգը, և բոլորը միասին ձայնակցեցին. մի սոսափիք, կա-նաչ մայր կաղնու անտառ, մի խանգարիք քաջին իր միտքն անելու...»:

Մի ակնթարթ վայրագ «ավազակները» պոետի համար կարծես դառնում են խորհրդավոր դեմքեր: «Անհնար է նկարագրել, — կարդում ենք վեպի մեջ, — թե ի՞նչ ազդեցություն թողեց ինձ վրա կախաղանի մասին հյուսված հասարակ ժողովրդական երգը, որ երգում էին կախաղանի դատապարտված մարդիկ»: Հետաքրքրական են նաև այն տողերը, որոնք բնութագրում են Պու-գաչևի ուրույն մտեցումը կյանքին: Ահա ինչպես է պատմում ինքը՝ Պուգաչևը ծեր կալմիկուհու հեքիաթը. «...Մի անգամ արծիվը հարցնում է ազնավին. ասա, ազնավ թռչուն, այդ ինչի՞ցն է, որ դու աշխարհում ապրում ես 300 տա-րի, իսկ ես՝ ընդամենը երեսուններեք տարի: Այդ նրանից է, տեր փմ, պատաս-խանում է ազնավը, որ դու տաք արյուն ես խմում, իսկ ես լեշով եմ սնվում: Լավ: Թուան միասին արծիվն ու ազնավը: Ահա նրանք տեսան մի սատկած ձի: Ազնավն սկսեց կտցել ու գովել: Արծիվը կտցեց մի անգամ, մեկ էլ թևին զար-կեց և ասաց ազնավին. ոչ, ազնավ եղբայր, քան թե երեք հարյուր տարի լեշով սնվել, ավելի լավ է մի անգամ արյուն խմել, հետո՞ աստված ողորմած է: — Ո՞նց է կալմիկների հեքիաթը...»:

Այդ և նման բնորոշ տողերը ցույց են տալիս, որ Պուշկինը գյուղացիական մեծ ապստամբության ղեկավարին սովորական «ավազակ» չէր համարում:

Առողջ և առույգ մարդուն հատուկ կենսուրախ հայեցողությամբ համակված Պուշկինը չէր ընկձվում, երբ տեսնում էր պատենշներ և խոշորագույններ: Անգամ իր կյանքի ծանրագույն օրերին նա ներբող էր ձոնում կյանքին, արևին, պոե-զիային: Պուշկինի ռեալիզմը և հումանիզմը կապված են շատ որոշ կենսահա-յեցողության հետ:

«... Պուշկինի պոեզիան ժողովրդի միտքը ուղղել է այն առարկաներին, որոնք իսկապես պետք է զբաղեցնեին նրան, և հեռացրել է նրան բոլոր մշու-շապատ, խաբուսիկ, հիվանդագին, երազկոտ առարկաներից, որոնց մեջ առաջ

բանաստեղծները գտնում էին զեղեցկության ու կատարելության զաղափարը...» (Գործույրբով):

Բնորոշ է, որ պուշկինյուն պոեզիայի հատկապես այդ հատկանիշը նկատում է Գործույրբովի և Ջերենիշևսկու զինակից Միքայել Նալբանդյանը: Նա ուսու հեղափոխական-գեմոկրատների դիրքերից է մոտենում հայ գրականության քննարկմանը ու միաժամանակ վճռական կերպով դատափետում է մետաֆիզիկական ուսմունքները: Պուշկինի որոշ երկերը նա թարգմանել էր տակավին երիտասարդության տարիներին: Հետագայում («Հյուսիսափայլում»), անցնելով կամարտինի պոեզիայի հայ հետևորդներին, Նալբանդյանը որոշակի քնննադատում է միտիկական հովերով տարված պոեզիայի ներկայացուցիչներին: Պուշկինի պոեզիայի հումանիստական և գեմոկրատական հատկանիշները նկատում են նաև 80—90-ական թվականների հայ առաջավոր գործիչները: Ռուս ազգային լեզվի և գրականության մեծ կոտուցողը ռեակցիայի մոսյու տարիներին դառնում է հայ առաջավոր գործիչների ապավենն ու հենարանը: Յարական բռնակալությունը ճնշում էր ծայրամասերի ժողովուրդներին, իսկ ռուս ժողովրդի մեծ պոետը, երգելով հարազատ ժողովրդի սրտին մոտ երգեր, կոչ էր անում զարկ տալ ազգային լեզվի, գրականության, կուլտուրայի զարգացմանը:

Մեծ բանաստեղծը երգում էր ժողովուրդների եղբայրությունը, անիծում էր ու դատապարտում ցարական բռնակալության սպասավորներին, հանդես էր գալիս ազատության երգչի դերում: Միանգամայն բնական է, որ ըմբոստ և ազատատենչ պոետը անշափ սիրելի, մոտիկ և թանկագին պետք է դառնար հայ ժողովրդի առաջավոր շարքերին: Երբ 1903 թվականին Թբիլիսիում հեղափոխական ցույց էր կազմակերպվում, Ստեփան Շահումյանի առաջարկով, Հովհաննես Թումանյանը թարգմանում է Պուշկինի «Ազատություն» հայտնի տողերը: Այդ շորս տողերը դառնում են նոր օրերի ժողովրդական-հեղափոխական հորձանքին արձագանքող պատգամներ:

Պուշկինի ճշգրիտ լուսաբանությունը սկսվում է Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո, երբ սովետական գրականագետները, զինված մարքսիստական ուսմունքի հզոր զենքով, մեծագույն թափ են հաղորդում Պուշկինի հարուստ ժառանգության բաղմակողմանի ուսումնասիրությանը:

Պուշկինի սպանությունից հետո նրա բոլոր ձեռագրերը ցարի հատուկ կարգադրությամբ կնքվել էին ու հանձնվել հատուկ պաշտոնյաների: Միակակազմիական, նախահեղափոխական հրատարակությունը տպվում էր տասնյակ տարիներ և դարձյալ մնաց անավարտ: Պուշկինի բաղմաթիվ նամակների դիտավորյալ կերպով չէին հրատարակվում: Միայն 1917 թվականին է գտնվում նրա մեծ (մոտավորապես 15 տպագրական մամուլ) պատմական ուսումնասիրությունը Պետրոս Մեծի մասին: Այդ պատմությունը լույս ընծայվեց 1938

թվականին և այսօր էլ քննարկվում է ուսու պատմաբանների շրջանում: Պուշկինն այդտեղ կանգ է առնում Պետրոս Մեծի հատկանշական գծերի վրա և մանրամասնորեն բնութագրում դաժան էպոխայի բնորոշ կողմերը: Կառուցող և գիտնական Պետրոսի կերպարը թե՛ պոեմի, թե՛ այդ պատմական ուսումնասիրության մեջ գծագրվում է որպես նիկոլայ ցարի անսահման տափակությունը մերկացնող կերպար:

Այսօր մեզ ավելի լավ է հայտնի նաև անզլիական կապիտալիստների էությունը մերկացնող և ամերիկյան փարիսեցի կապիտալիստների դաժանությունը բնութագրող Պուշկինը: Քնարերգու պոետի, արձակի մեծագույն վարպետի, պատմական վեպի ու դրամայի հանճարեղ կոտուցողի, վերջապես ռուս կյանքի հանրագիտարան «Եվզենի Օնեգինի» ստեղծագործողի կողքին մենք տեսնում ենք պատմաբան, հրապարակախոս, քննադատ Պուշկինի միշտ խստահուն և դյուրական կերպարը:

Շատ բարձր գնահատելով գրողի հասարակական նշանակությունը, Պուշկինը չէր սխալվում, երբ արժանապատվության մեծագույն զգացումով գրում էր.

Կանգնեցրի անձեռակերտ ես հուշարձանն իմ վեհ,
Չի մամոտի դեպ այն տանող՝ ժողովրդի ճամփան...

Ժողովուրդների եղբայրության գաղափարախոսին ենք նշմարում, երբ կարդում ենք «Հուշարձանի» մարգարեական տողերը.

Համբավն իմ Ռուսիայում անծայրածիր՝ կտարածվի,
Ինձ կհիշի յուրաքանչյուր լեզու այնտեղ ապրող՝
Սլավոնի թող սեզ ու ֆինն ու դեռ այսօր վայրի
Տունգուղը և կալմիկն ըստեպ սիրող...

Սովետական Միությունում Պուշկինի երկերը թարգմանված են 76 լեզուներով: Սովետական Միության ժողովուրդների մեջ կան այնպիսիները, որոնք գրական լեզու են ստեղծել միայն Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո, կոմունիստական կուսակցության շնորհիվ: Այսօր «վայրենի տունգուզներ» այլևս չկան: Տունգուզներն այսօր ունեն բաղմաթիվ դպրոցներ, ակումբներ, մամուլ և Պուշկինի բարձր արվեստով հմայվող ընթերցասերներ:

Պոետի մեծ հայրենիքն այսօր ժողովուրդների բարեկամության և համաշխարհային խաղաղության պողպատե ջահակիրն է ողջ երկրագնդի բոլոր ճրնշված ժողովուրդների համար: Մեր մեծ Սովետական Միությունը լուսավոր փարոս է անզլիական առաջավոր գրականության ծեր նահապետ Բերնարդ Շոուի համար: Իր ծերության օրերին ուխտավորի նման Մոսկվա է նետվում միջազգային ֆաշիստների դեմ անդուլ մարտեր մղող վիպագիր Անդերսեն Նեքսեն,

որպեսզի Պուշկինի հիշատակին սիրո ու հարգանքի խոսք ասի: Ամերիկյան նեգրերի և ամերիկյան իսկական գեմոկրատիայի անունից իր ջերմ խոսքն է ասում նեգր երգիչ՝ Պոլ Ռոբսոնը: Օդանավով նա կտրում, անցնում է Ատլանտյան օվկիանոսը՝ Պուշկինի հայրենիք՝ Սովետական Միության ժողովուրդներին ողջունելու համար: Ամերիկյան գիշատիչ իմպերիալիզմի դեմ հերոսական պատերազմ մղող չին մեծ ժողովուրդը, հեղափոխական մարտերի օրերին, հայրենի գետի ափին կանգնեցնում է Պուշկինի արձանը...

Այդպես է հնչում այսօր պուշկինյան «Հաշուրձանի» վեհապանձ պատգամը:

Առաջավոր կուլտուրան միշտ պիտի կապվի ժողովրդի վսեմ ձգտումները հետ, ասում էր Մաքսիմ Գորկին, երբ խարազանում էր ամերիկյան կուլտուրայի ստորաբարձ ներկայացուցիչներին:

Պուշկինը ապրում և պայքարում էր ազնվական հեղափոխականների, ազնվականության փոքրամասնության առաջավոր ներկայացուցիչներին՝ դեկաբրիստների կողքին: Նա է կառուցել ռուս ազգային լեզուն ու գրականությունը: Նա է ստեղծել ժողովրդայնության և հումանիզմի սկզբունքների վրա խարսխված բարձր կուլտուրայի հիմնական այն ատաղձը, որ այսօր էլ լուսավոր ուղեգիծ է սովետական կուլտուրայի բոլոր ջահակիրների համար...

1949

ԳՈԳՈՒԻ ՌԻՂԻՆ

«... Ո՞ր է այն մարդը, որ ոտակալ հոգու հարագատ լեզվով կարողանար մեզ ասել այդ ամենազորեղ հատաչ բառը, որ ճանաչելով մեր բնավորության ամբողջ ուժն ու հատկությունները, ձեռքի կախարդական ուժի շարժումով մղեր մեզ դեպի կյանքի բարձր գաղափարներ...»:

ԳՈԳՈՒ

I

Նիկոլայ Վասիլևիչ Գոգոլը ծնվել է 1809 թվականին: Նա իր սկզբնական կրթությունն ստացել է Պոլտավայի գավառական դպրոցում, որից հետո, 1820 թվականին, ընդունվում է Նեժինի գիմնազիան: Դա հին օրերի տիպիկ մի դպրոց էր: Դասատուների մեծամասնությունը կազմում էին ռեակցիոն մանկավարժները: Դրանցից մեկը՝ պրոֆեսոր Բիլևիչը, օրինակ, տարիներ շարունակ հնազդեցություն, գերմաններեն լեզու, տեխնոլոգիա, կոմերցիա, վերջապես «փորձնական ֆիզիկա» դասավանդելուց հետո, սկսել էր կարդալ քաղա-

քական գիտությունների հատուկ կուրսը: Այդ դպրոցում սովորում էին մեծահարուստ կալվածատերերի զավակները, որոնք ակներև արհամարհանքով էին վերաբերվում կոմեդիաներ գրող և գրասերի համբավ վայելող մանր կալվածատերի որդուն՝ Գոգոլին:

Շատ ծանր էր Ռուսիայում ընդհանրապես գիտության և գրականության ներկայացուցիչների դրությունը: Առաջավոր գործիչները ստիպված էին զործածել զգուշավոր լեզու և համակերպվել տգետ ու վայրագ գրաքննիչների անիմաստ պահանջներին: Այդ օրերին մշակվել էր յուրահատուկ այլաբանական «երկպիսի» կամ «եզոպոսյան» այն ոճը, որ հնարավորություն էր տալիս ազատախոհ պոանձին գործիչներին քննադատելու դաժան իրականության դաժան երևույթները: Խորամանկ այդ գործելակերպը հաճախ չէր օգնում, որովհետև ազատախոհ գրողների քայլերին հետևում էին բազմաթիվ լրտեսներ ու ռեակցիոն սործիչներ:

Ժողովրդական լուսավորության ամենազոր մինիստրը տխրահույզ Մագնիցկին էր: Այդ մինիստրի հատուկ կարգադրությամբ, XIX դարի 20-ական թվականներին, ցարական կառավարության սպասավորները կազանում բավական ուշադրավ մի կրոնական թափոք էին կազմակերպել ընդդեմ գիտության: Քափորի մասնակիցները՝ կազանի համալսարանի ծառայողները և քաղաքի քահանաներն էին: Մի գեղեցիկ օր դրանք իրենց հետևորդների հետ միասին ելնում են համալսարանից՝ ուսերին դրած մի քանի դազաղ և ապա ուղևորվում են դերեզմանատուն: Գաղաղներում դարսված էին բժշկագիտական պրեպարատներ: Հսկայական թափորի մասնակիցները հանդիսավոր կերպով թաղում են այդ պրեպարատները, իսկ քահանաներն էլ անեծքներ են ուղղում պրեպարատները հորինող գիտնականների հասցեին: Նույն այդ տարիներին՝ լուսավորության մինիստրության բարձր ներկայացուցիչներից մեկը Խարկովի համալսարանի պրոֆեսորներին առաջարկել էր դասախոսության ժամանակ շեշտել, որ կայծակի ծայրին գտնվում է մի եռանկյունի, որը «սուրբ երրորդության» խորհրդանշանն է:

Գեկաբրիստական հերոսական ապստամբության ճնշումից հետո Նեժինի «բարձրագույն գիմնազիայում» ևս կացությունը դառնում է անտանելի: Սովետական բանասեր Մաշինսկին իր նորագույն հետազոտության մեջ գրում է, որ Նեժինում Գոգոլի ուսուցիչներից մեկը՝ Բելոուսովը ժամանակին հալածանքների էր ենթարկվել որպես «անհանդուրժելի» գաղափարներ արժարժող և տարածող գիտնական: Մաշինսկին կանգ է առնում ցարական դիվաններում պահված մի «գործի» վավերագրի վրա: Նա գտնում է, որ իրականում Բելոուսովի դեմ հարուցված «գործը» եղել է գեկաբրիստական շարժման արձագանքներից մեկը: Նա կանգ է առնում նաև քիչ առաջ հիշված պրոֆեսոր Բիլևիչի վրա: Այդ պրոֆեսորը հայտնել էր ցարական քննիչներին, որ Բելոուսովը

«բնական իրավունքի» մասին կարգացած իր դասախոսություններում գիտավորությամբ «անփորձ» պատանիներին ոչ մի խոսք չէր ասում ասածն գոյություն մասին: Քննիչները մանրակրկիտ հետաքննության ընթացքում պարզել էին, որ բացի Բելոուսովից, նեժինում «կասկածելի» գործիչներ են եղել մաթեմատիկական գիտությունների պրոֆեսոր Պապուլինսկին, ֆրանսիական գրականության պրոֆեսոր Լանգրանժիեր, գերմանական գրականության դասախոս Զինզերը: Վերջինս, պարզվում է, որ թարգմանությունների համար ընտրում էր զանազան հատվածներ հեղափոխությունների մասին: Պրոֆեսոր Լանգրանժիեր ընթերցանության համար ուսանողներին տալիս էր կարգալու Վոլտերի, Հելվեցիուսի, Մոնտեսկիոյի գրքերը և նույնիսկ ուսանողների հետ պատույտի ելնելիս երգում էր «Մարսելյոզը»: Խուզարկությունների ժամանակ ուսանողներից մեկի մոտ գտել էին ղեկարրիստ Ռիլենի «Ազատություն» բանաստեղծության արտագրությունը: Բելոուսովը իր դասախոսությունների ժամանակ արժարժում էր դեպուտիայի դեմ ուղղված զաղափարներ: Մաշինսկին գտել է Գոգոլի ուսանողական մի «տետրակը» և ապա՝ բնորոշ գրություններ, սրոնց առթիվ ցարական քննիչները հարցաքննել էին ուսանող Գոգոլին...

Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ Գոգոլը նեժինի գիմնազիալում ուսանելիս ազդվել է Բելոուսովի նման ազատախոհ գործիչներից: Այդպիսով, շրջապատը, իշխող մթնոլորտը, ազատախոհ դասատուների ազդեցությունը նկատելի արահետներ են փորում նրա գիտակցության մեջ՝ դեռևս պատանեկության տարիներին:

Նետվելով Պետերբուրգ, Գոգոլը նոր իրականության մեջ տեսնում է նույն հակասությունները: Սկզբում նա ճիգ է անում աշխատանք գտնել և ապահովել իր վիճակը: Նա ստիպված է լինում վաղ առավոտից զբաղվել գրագրությամբ և արտագրել պաշտոնական զանազան գրություններ: Այդ ծանր տարիներին նա տպագրում է իր առաջին երկասիրությունը՝ «Գանս Կյուխելգարտեն» պոեմը (1829): Դա ռոմանտիկների ազդեցության ներքո ստեղծված մի գործ էր: Մակայն քննադատների խոսքն այնքան կտրուկ է լինում, որ Գոգոլը ստիպված է լինում ոչնչացնել այդ պոեմը:

Համակված տխուր ապրումներով, նա որոշում է նոր կայան գտնել արտասահմանում և մեկնում է Գերմանիայի Լյուբեկ քաղաքը: Բայց այնտեղ էլ նա հանգրվան չի գտնում, կրկին վերադառնում է Պետերբուրգ և փորձում կապվել թատրոնի հետ՝ դառնալ դերասան: Այդ փորձը ևս ավարտվում է անհաջողությամբ: Նա նորից մտնում է շինովնիկների շարքերը և մի տարի ծառայելուց հետո միայն՝ թողնում այդ պաշտոնը:

Այնուհետև, 30-ական թվականներին, Գոգոլին տեսնում ենք մայրաքաղաքի Գեղարվեստական ակադեմիայի ունկնդիր-ուսանողների մեջ:

Հենց այդ տարիներին էլ նա կապեր է հաստատում գրական շրջանների հետ:

Մի կողմից՝ անվերջ թափառումները, նորանոր ծանոթությունները, նկարիչների հետ ունեցած ուրույն կապերը, մեծ քաղաքի մտավորականության զանազան ներկայացուցիչների հետ ստեղծված հարաբերությունները, մյուս կողմից՝ բնակարանից բնակարան փոխադրվելը, քաղքենիների ու շինովնիկների հետ շփվելը, պետերբուրգյան խուլ փողոցները, չքավոր աշխատավորների կացարաններն ու մթին խորշերը, հասարակական սուր կոնտրաստները, ինչպես նաև ժամանակի առաջավոր գրականությունը նկատելի ազդեցություն են թողնում նրա վրա:

Այդ տարիներին լույս են տեսնում նրա հոգվածները և գեղարվեստական առանձին երկերը «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագրում և ապա՝ «Սևերնիե ցվետի» արձանախում: Իր «Բիսվարյուկ» պատմվածքում նա փորձ է անում պատկերել ժողովրդի ապրումները: Տպագրելով հատվածներ «Գետման» պատմական վեպից, Գոգոլը կանգ է առնում ուկրաինական ժողովրդի անցյալի հերոսական էջերի վրա: Երկու փորձերն էլ ուշագրավ են այն տեսակետից, որ ցույց են տալիս Գոգոլի որոնումների ուղին: Արդեն այդ ժամանակ ակներև էր, որ մոտենալով ժողովրդի կյանքի ուսումնասիրությանը, երիտասարդ գրողը ցանկանում է գրական հերոսի կերպարներ գտնել հնօրյա Ուկրաինայում: Նա սկսում է մեծագույն ուշադրությամբ ուսումնասիրել ուկրաինական ժողովրդական բանահյուսության աղբյուրներն ու վավերագրերը:

Պուշկինի հետ Գոգոլը ծանոթանում է Պլետնյովի մոտ՝ 1831 թ. մայիսի 20-ին: Իր ուկրաինական պատմվածքների առաջին ժողովածուն՝ նա հրատարակում է նույնպես 1831 թվականին: Մի տարուց հետո լույս է տեսնում այդ պատմվածքների երկրորդ ժողովածուն (1832): Երկու ժողովածուներն էլ ցնցող տպավորություն են թողնում ընթերցողների վրա: Անհրաժեշտ է ասել, որ ռուս առաջավոր գործիչներին հետաքրքրում էր Ուկրաինայի պատմությունը: Բայց և այնպես, ուկրաինական ժողովրդի կացությունը, կյանքը, ինքնատիպ առօրյան նույնիսկ այդ գործիչներին քիչ էր հայտնի:

Գոգոլի պատմվածքները կերտված էին կենդանի գույներով: Կերտողը ինքը՝ ժողովրդին սիրող և ժողովրդի ներհուն պոեզիան բարձր զնահատող տաղանդավոր մի գեղագետ էր: Նոր պատմվածքների ինքնատիպ ձևերից, թարմ և առույգ երանգները, կենսատենչ տրամադրությունը, նուրբ իրոնիան մեծ ազդեցություն պիտի թողնեին մեծ քաղաքի անհրապույր և գորշ իրակա- նությունից անբավական քաղաքացի-ընթերցողների վրա: Իր նոր պատմվածքներով Գոգոլը հանդես էր գալիս որպես ազգային և ռեալիստական գրականության սկզբունքները կիրառող արվեստագետ: Նա արձագանքում էր ռուս առաջավոր գրողների և մտածողների դեմոկրատական տենդենցներին՝ ներքող ձոնելով ամենազոր ժողովրդին: Նրա պատմվածքներում նկարագրվում էին պարզ մարդիկ: Գունագեղ նկարների ֆոնի վրա շատ լավ նշմարվում է

ինքը՝ առույգ ժողովուրդը: Լավ էր գծագրված հարավային մեղմ բնակարար: Կյանքի գովքն էր երգվում: Լավում էին սրտաբուխ ժողովրդական երգերի հրնչունները: Վերջապես այդ պատմվածքներում իշխում էին լուսավոր գույները և մոտիվները:

Մեծ քաղաքում ապրող, շրջապատի սուր կոնտրաստներից հոգնած և բարձր առեղծվածների սոսկ անլուծելի հանգուցյունները նշմարող քաղաքացի-ընթերցողների համար գոգոլյան պատմվածքները դառնում են նվազային պատկերներ և թարմ հովեր: Չի կարելի, այնուամենայնիվ, ասել, թե երկու ժողովածուների բովանդակությունը և «ինտոնացիան» միատեսակ էին:

Առաջին ժողովածուի մեջ ավելի ուժեղ էր օպտիմիստական և հեղոնիստական կենսահայեցողությունը: Նրա պատմվածքները ավելի պարզ սյուժեներ ունեին և միշտ ավելի ռեալիստական էին: Երկրորդ ժողովածուի մեջ աչքի են ընկնում ողմանտիկական հայեցողության հատուկ գույները: Իրական կյանքի վերարտադրությունը այդտեղ շաղկապված է ֆանտաստիկական դրվագների նկարագրության հետ: Այդ ժողովածուի մեջ Գոգոլը կանգ է առնում նաև ազգային-ազատագրական շարժումների արձագանքների վրա: Նա միաժամանակ նկարագրում է իրական կյանքի դրվագներ, կանգ է առնում շինովնիկների և կալվածատերերի վրա, բացահայտում է իր դիրքը հասարակական իրականության բնորոշ երևույթների նկատմամբ: Երգիծաբան Գոգոլը այդ հատորի մեջ զբաղվում է արդեն որոշակի կերպով: Մակայն նրա ծիծաղը լի էր դառնությունամբ: Նրա որոշ պատմվածքների մեջ նշմարվում է կյանքի բարդ երանգները ուշադրությամբ ուսումնասիրող և տխուր ապրումներով համակված մտածողի դիմաստվերը...

Իր պետերբուրգյան հայտնի պատմվածքներում Գոգոլը նկարագրում է «փոքրիկ» մարդկանց կյանքը և արժարժում իր խոհերն ու մտորումները («Շինեկ», «Պորտրետ», «Քիթթ», «Խելագարի հուշերը», «Նեայի պողոտան»):

Գոգոլի ծիծաղը դառնում է ավելի ու ավելի դառն արցունքներով շաղախված: Նա չի տեսնում այլևս վաղեմի դվարթ տեսարանները: Նա չի նկարագրում կյանքի գովքը երգող մարդկանց ու չի լսում կենսատենչ երգեր: Նա սուր իրոնիայով է դիտում հասարակական ներհակությունները: Մոլեգին սարկազմով է քննադատում ճորտատիրական հասարակության ներկայացուցիչներին: Քննադատում է նաև մանր կալվածատերերի կյանքը և մորալը: Այդ միջավայրում նա չի գտնում լուսավոր շող և պայծառ գույներ:

Եվ ահա, ծանր ապրումների և հուշերի տպավորության ներքո, նա նորից նետվում է դեպի անցյալը, նորից նկարագրում իր ժողովրդի հերոսական անցյալի վաղեմի էջերը և իր դրական հերոսներին որոնում ու գտնում է այդ անցյալում: Նա նկարագրում է հնօրյա բռնակալների դեմ ծառայող ազատ և խիզախ կազակների՝ կազակային առույգ «վոլնիցայի» հերոսական ազատա-

գրական պայքարի հրաշունչ էջերը: Պատմական անցյալի նկարագրությունը գորշ և անհանդուրժելի իրականություն, իշխող հասարակական կարգերի դեմ ծառայող վիպագրի համար դառնում է հենակետ՝ վաղուց ծովացած մտորումների զեղարվեստական արտացոլման համար...

Գոգոլը կերտում է իր «Տարաս Բուլբա» պատմական հանճարեղ վեպ-պոեմը: Հերոսն այս անգամ դառնում է ըմբոստ ժողովուրդը, անիրավ բռնակալների դեմ ըմբոստացող և հայրենիքի ազատագրման համար մարտնչող ազատասեր ժողովրդի մեծ ու միասնական կոլեկտիվը: Մի քանի անգամ Գոգոլը քննում ու վերամշակում է այդ գործը: Ամեն անգամ անսահման սիրով և նոր ապրումներով համակված՝ նա վերհիշում է անցյալի հերոսական դրվագները և միշտ առաջին պլանի վրա տեսնում դարձյալ ժողովրդի կերպարը:

Տարաս Բուլբան ուկրաինացի է, իսկական կազակ, Զապուտոժյան Սեչի ցայտուն ներկայացուցիչներից մեկը: Բուլբան վաղեմի ավանդույթներին և ժողովրդական երգերի մեջ կերտված հերոսների նման հյուսված կերպար է: Արտասովոր ուժով է նկարագրում Գոգոլը ժողովրդի, Տարասի, նրա որդու՝ Օստապի կերպարները: Հանճարեղ այդ պոեմի մեջ կան էջեր, որոնք այսօր էլ ցնցող տպավորություն են թողնում ընթերցողների վրա:

Այդպիսին են այն տողերը, որոնք նկարագրում են սիրելի որդիներին դիտող մոր զգացումները: Նկարիչ Կիրիլը շատ լավ է նկարել այդ պատկերը՝ վաղ առավոտյան ծեր Տարասի հետ միասին պետք է ռազմի դաշտ ուղևորվեն երկու որդիները: Մայրը տխուր դիտում էր իր որդիների դեմքերը: Նկարը խիստ արտահայտիչ է: Մոր կողքին կարծես նշմարվում է նաև ուկրաինական բոլոր մայրերին դիտող և սուսունասիրող վիպագրի խոստուն դիմաստվերը:

Այդպիսին է նաև այն տեսարանը, ուր նկարագրվում է դատապարտված ուկրաինական հերոսներին դիտող լուրջ ու զուսպ ժողովրդի դեմքը: Օստապի հերոսությունը, աննկուն կորովը, նրա նույնիսկ անակնկալ կանչ-բարձրը տառապանքների ամենածանր պահին՝ հնչում են որպես հայրենասիրությունը զրվատող սուր պատգամներ: Եվ երբ վերջին պահին սիրելի որդու հերոսական կեցվածքն ու կարող դիտող հայրը նետում է զայրույթի, խրախույսի, բողոքի իր խոսքը, մի ակնթարթ հրապարակում այդ խոսքը դառնում է լուս կանգնած ժողովրդի զսպված հույզերն արտահայտող պատգամ: Այդ լուս ժողովուրդը անրակուռ պատենչի նման պաշտպանում է Բուլբային ու ծառանում թշնամիների՝ դեմ:

Համաշխարհային գրականության մեջ չկա նման մի այլ ստեղծագործություն: շատ սեղմ տողեր է գրել Գոգոլը: Շատ հակիրճ նա կարողացել է բացահայտել ժողովրդական մեծ կոլեկտիվի «հոգու» հատկանիշները ու ընթերցողների սիրտն այրել աննախընթաց թափով և ուժով: Չարլզ Դիկկենսը Գոգոլի «Տարաս Բուլբա»-ի միմիայն անգլերեն թարգմանությունն է կարդացել:

բայց նույնիսկ թարգմանության մեջ նա շատ լավ նկատել է մեծ գրողի հանձարի կնիքը: Յանկան: «Ամ էր արդյոք Գոգոլը հանձինն Տարաս Բուլբայի կերպարի՞ իր ժամանակակիցներին ասել, որ փակական հերոսը միշտ պետք է հետևի ժողովրդի հետ միաձուլված և ժողովրդի ազատության համար մարտնչող Բուլբայի մարտական ուղեղով: Կարելի է առանց վարանումների ասել, որ այդ է եղել Գոգոլի հիմնական նպատակը և հենց այդպիսի մտածելովն էլ թելադրել է նրան Տարաս Բուլբայի և Օստապի կերպարների կազմին զծագրել ընկերության գովըրը երգող Կուկուբենկոյի և ազատասեր ուրիշ կաղանները կերպարները...

1836 թ. Գոգոլը հրատարակում է «Ռեխզոր» կոմեդիան: Այս անգամ նա հանդես է գալիս քննադատի և գատավորի դերում՝ տեսնելով միայն մտայն գործիչների դիմաստվերները: Կոմեդիայի մեջ նկարված «հերոսը» մայրաքաղաքից եկած պետերբուրգյան շինովնիկն է: Դերասաններին Գոգոլը խնդրում էր միշտ հաշվի առնել, որ խլեստակովը ոչ թե կարիկատուրային մի կերպար է, այլ մայրաքաղաքի «կրթված» շինովնիկության շատ տիպիկ մի ներկայացուցիչ: Բնորոշ այդ տիպարի կողքին Գոգոլը յուրաքանչյուր է ցարական Ռուսիայի նահանգներում իշխող շինովնիկների մի մեծ պատկերասրահ: Անսահման հիացումով են արձագանքում Գոգոլի գրական նոր ելույթին ուսական դեմոկրատական մամուլի և պուբլիցիստիկայի բոլոր ներկայացուցիչները: Իշխող կարգերի գաղափարախոսները զայրույթով և անբավականությամբ են վերաբերվում գրան: Զագոսկինին ուղղված իր նամակում, այդ գործիչներից մեկը՝ Վիգելը ամենևին չէր էլ ծածկում փր և իր մոտիկ բարեկամների մեծագույն անբավականությունը:

2

Գոգոլի «Մեռած հոգիներ» գրքը իր հրատարակության հենց առաջին օրերից մեծ տպավորություն է թողել ընթերցողների վրա: Պոեմի սյուժեն Գոգոլին հաղորդել էր Պուշկինը: Այդ փաստը ժամանակին հաստատել և արձանագրել է ինքը՝ Գոգոլը:

Գոգոլը «Մեռած հոգիներ» պոեմի առաջին հատվածները գրել է, ինչպես հայտնի է, Ռուսիայում: Այնուամենայնիվ պոեմի մեծ մասը նա ավարտել է Իտալիայում:

Ամբողջ պոեմը շունի կանխորոշված ֆաբուլա կամ հանգուցային մի հիմնական սյուժե: Պոեմում Գոգոլը նկարագրել է իր գլխավոր «հերոսի» ճանապարհորդությունը, հանդիպումները, մտորումները: Ուշագիր ընթերցողը չի կարող չնկատել, որ իրականում այդ ամենը այնքան հմուտ կերպով է ցուցադրված, որ ստեղծվում է թե՛ որոշակի ֆաբուլայի, և թե՛ սյուժեի պատրանքը: Զիչիկովի կերպարը, ճորտատիրական Ռուսիայի ներկայացուցիչների կերպարները, պոեմի մեջ նկարագրված էպիզոդները, կուլիզիաները, դեմքերը

ստեղծում են բունապետական-ճորտատիրական Ռուսիայի շատ հյուսիս գույններով զոված մտայն նկարագիրը: Տխուր դեպքերի և մտայն պերսոնաժների միջին ֆոնի վրա առանձին ուժով է գրսևորվում ուսու ժողովրդի ինքնատիպ ներկայացուցիչների ջերմ բնութագիրը: Իտալիայում, իր պոեմը գրելիս և վերամշակելիս, Գոգոլը շատ հաճախ տեսնվում էր հանձարեղ նկարիչ Իվանովի հետ:

Երկու տաղանդավոր արվեստագետներն էլ հայրենի երկրի և առանձնապես ժողովրդի կարոտն էին քաշում հեռու Իտալիայում: Բնորոշ է, համենայն դեպս, որ իտալական քաղաքների գեղեցկությունը հիշատակելուց հետո, Գոգոլը, համակված հայրենաբաղձ մտորումներով, ջերմ տողեր է նվիրում հայրենի ժողովրդի ներկայացուցիչներին: Այդպիսի բնույթ են կրում, ի միջի այլոց, «Մեռած հոգիներ» պոեմում՝ «Թուշուն-տրոյկային» նվիրված տողերը:

«...է՛յ, տրոյկա թուշուն — տրոյկա, ո՞վ հնարեց քեզ. երևում է, որ ժիր ժողովրդի մեջ միայն կարող է իր դու ծնվել (ընդգծումը մերն է — Ա. Կ.), այն երկրում, որը չի սիրում կատակել, այլ հարթ հավասար մեկնրվել է կես-աշխարհով մեկ. դե դնա ու հաշվիր վերստերը, մինչև աչքերդ շաղվեն...»: Հայրենի «ժիր» ժողովրդի մեծարմանը նվիրված այդ տողերից հետո Գոգոլը գրում է.

«...ե՛վ թվում է՝ ճանապարհորդական մի զովարին գործիք էլ չի, երկաթի պտուտակով չի բռնված, այլ հապճեպ մի կացնով ու գուրով սարքել է քեզ յարոսլավցի ժիր մուսիկը: Գերմանական բոտֆորտներ շունի կառապանը. մի մորուք և թաթմաններ, և նստած է սատանան էլ չի իմանում ինչի վրա. բայց ահա կես վեր կացավ, մեկ էլ թափահարեց մտրակը, մեկ էլ ձգեց երգը. նժույգները՝ մորիկներ, ճաղերը անիվների մեջ խառնվեցին, դառան մի հարթ շրջանակ, միայն ճանապարհը ցնցվեց, մին էլ վախից ճշաց կանգ առած անցորդը, և ահա սլացավ, սլացավ...»:

Գոգոլը իր երևակայությամբ նետվում է հեռուն, տեսնում է հայրենի դաշտերը և անսահման սիրով ու անձկությամբ կերտում «ժիր» յարոսլավցուն՝ ու ուսու ժողովրդական երգերի մեջ երգված յամշչիկի կերպարը: Նույնչափ նշանակալից են նաև ժողովրդի մի քանի ուրիշ ներկայացուցիչների մասին գրված տողերը: Մոկեռական բանասերները արդեն նշել են, որ այս անգամ Զիչիկովի միջոցով ուսու ժողովրդի զավակների մասին իրականում խոսում է ինքը՝ Գոգոլը, երբ առաջարկում է բարձր գնահատել գեղջուկ աշխատավորներին: Բավական է միայն ուշագրություն համեմատել Զիչիկովի օրիգինալ հուշերը թեկուզ հենց պոեմում նկարագրված ճորտատեր-կալվածատերերի կամ պետության ներկայացուցիչների կերպարների հետ, և ընթերցողը իսկույն կնկատի. որ Զիչիկովի հուշերի ուրույն ինտոնացիան պարզում է առաջին հերթին հենց պոեմի հեղինակի դիրքորոշումը ժողովրդի նկատմամբ:

«...Ահա նա, Ստեպան Պոռեկան, ահա այն հսկան, որ պետք կգար գվար-դիային: Ո՞վ գիտե, բոլոր նահանգները մասն է եկել՝ կացիներ գտակում և կո-շիկները ուսին, ուտելիս կլիներ մի գրոշի հաց և երկու գրոշի շորացրած ձուկ, իսկ քսակում երևի տուն կտաններ ամեն անգամ մի հարյուրական ուրբի, բայց կարող է պատահել մի պետական (հարյուր ուրբի) և կարած կունենար քա-թանն շալվարի մեջ կամ կճխտեր սապոկի մեջ, — որտե՞ղ բռնեց քեզ մահը: Մեծ վաստակ ձեռք բերելու համար երևի բարձրացար եկեղեցու զմբեթի տակ կամ կարող է պատահել՝ հասար նաև խաչին և այնտեղի շեղագերանից սայ-թաքելով, թրմփացի գետնի վրա, և միայն կողքից կանգնած մի որևէ քեռի Միխայլ, ծոծրակը բռնելով, ասել է. «էխ, Վանյա, սատանան քեզ բերեց էստեղ, իսկ ինքը պարանը մեջքին փաթաթելով՝ բարձրացավ, տեղդ բռնեց»: Նույն ջերմ ինտոնացիան ունեն պոեմի մեջ ժողովրդի մի շարք ուրիշ ներկայացու-ցիչների մասին նետված դիտողությունները:

«...էխ, ռուս ժողովուրդ՝ չի սիրում իր մահալ մեռնել» բացականչում է նա և, վերհիշելով արբեցող կոշկակարին կամ կավածքներից փախչող և ան-տառներում պտտող շինականներին, ավելացնում է. «Արդյոք բանտերո՞ւմ եք նստած, թե՞ ուրիշ տերերի ձեռքի տակ եք և հող եք հերկում»: Այդ տողերից հետո Գոգոլը նկարագրում է կապիտան-ոստիկանին, արագ և համարձակ պա-տասխաններ տվող «կայտառ կանգնած» անանձնագիր Պոպովին: Նկարագրե-լով, թե ինչպես է ոստիկանը կարգադրել այդ «կայտառ կանգնած» աշխա-տավորի ոտքերին շղթաներ դնել ու բանտ նետել, Գոգոլը նորից գտնում է ին-տիմ խոսքեր կալանավորի հոգեկան կորույթը բնութագրելու համար: Նկարա-գրելով այդ կալանավորին, նա միաժամանակ բնութագրում է նաև ցարական կարգերը.

«Եվ ահա զրպանից հանելով ծխախոտի տուփը, դու հյուրասիրում ես ընկերասիրաբար ինչ-որ երկու հաշմանդամների, ուղոնք ոտներդ կալոտկա են դնում, և հարցնում ես նրանց՝ արդյոք վաղո՞ւց է, որ նրանք պաշտոնաթող են և ո՞ր պատերազմում են եղել: Եվ ահա ապրում ես քեզ համար բանտում, մինչև որ քո գործը դատարանում ընթացք կստանա: Եվ դատարանը գրում է՝ տեղափոխել քեզ Ցարենկոկաշայկից այս ինչ քաղաքի բանտը, իսկ այնտեղի դատարանն էլ գրում է՝ տեղափոխել քեզ ինչ-որ մի Վեսյեգոնսկ, և դու տե-ղափոխվում ես քեզ համար բանտից բանտ և ասում ես՝ տնտղելով նոր օթե-վանդ. ոչ, այ, Վեսյեգոնսկի բանտը ավելի մաքուր կլինի. կուզես վեզ խաղա այնտեղ. տեղ կա. ժողովուրդն էլ ավելի շատ է»:

Միայն էտպից էտպ, բանտից բանտ անցնող կալանավորների կյան-քին, ապրումներին լավ ծանոթ մարդը կարող էր այդքան ճիշտ կերպով բնու-թագրել դաժան օրերի «անանձնագիր» աշխատավորի ֆատալիստական «իմաստասիրությունը...»:

Գեո Մաքսիմ Գորկուց շատ առաջ Գոգոլը եղել է զուցե առաջիններից մե-կը, որը կարողացել է հակիրճ ու դիպուկ խոսքերով նկարագրել հնօրյա թա-փառական-բոսյակների տիպարները: Այդպիսի մի տիպար է «բուռլակների ազատ կյանքը սիրող Աբակում Ֆիրովը...»:

«Եվ իսկապես, որտե՞ղ է այժմ Ֆիրովը. քեֆ է անում աղմկալի և ուրախ հացի նավամատուցում՝ պայմանավորվելով վաճառականների հետ: Մաղիկ-ներ և ժապավեններ են կապած գլխարկին, ուրախանում է բուռլակների խում-բը, հրաժեշտ տալով սիրուհիներին և իրենց կանանց՝ բարձրահասակ, գեղեց-կակաղմ, մանյակներով ու ժապավեններով զարդարված. շուրջպարներ, երգեր. եռում է ողջ հրապարակը, մինչդեռ բեռնակիրները աղաղակներով, հայհոյանք-ներով և կնոսով բզելով իրենց մեջքին, ամրացնելով ինը փութեր, աղմուկով թափա՞ւմ են սիսեռն ու ցորենը խոր նավերի մեջ, շուտ են տալիս վարսակի ու ձավարի պարկերը, և հեռվից երևում են ամբողջ հրապարակի վրա ումբերի պես կիտած տոպրակների բուրգեր, վիթխարիորեն նայում է ողջ հացի զինա-նոցը, մինչև որ այնտեղից բոլորը փոխադրվում է նավերը և իծաշարուկ կու-րա գարնան սառույցների հետ անվերջ՝ նավատորմը: Այնտեղ է, ու՛ր ահա աշ-խատանքի կկալենք, բուռլակներ, և միահամուտ, ինչպես քեֆ է իք անում և զժվում, այստեղ գործի ու քրտինքի մեջ կթաղվենք՝ քաշ տալով փոկը և ձգե-լով Ռուսիայի նման անվերջանալի երգ»:

Պատկերելով աշխատանքի մարդկանց. երգելով աշխատանքի պաթոսը, հիշելով բուռլակների «անվերջանալի երգը», Գոգոլը միայն չի ակնարկում երգի բովանդակության մասին: Եթե նա շեշտեր, որ այդ երգը եղել է «Գուբի-նուշկայի» նման մի երգ և դրանով էլ ավարտեր իր նկարագրությունը, ապա պոեմում գծագրված նկարը կդառնար ճիշտ Գորկու երկասիրություններից մե-կում կերտված վաղյան ժանրային հյուսված մի նկար: Կարող է պատահել, որ հենց Իտալիայում, Նեապոլի նման նավահանգիստների նավաստիների ու բեռնակիրների սիլուետները կամ էլ իտալական ժողովրդական հանդեսները՝ կառնավալներն են թելագրել Գոգոլին իր հայրենասիրական հուշերը շողկա-պել բուռլակներին նվիրված ջերմ տողերի հետ: Շատ հատկանշական է, որ ինտիմ գույներով և սրտագին տոնով գրված այդ տողերը հետևում են կալ-վածատերերի մոռյլ պորտրետներին և բավականին կտրուկ հակադրվում նրանց:

Աբակում Ֆիրովը, բուռլակները, յարոսլավցի հնարագետ մուծիկը, սլա-ցաղ ձիերին ղեկավարող յամշիկը «ժիր» ու ամբակուտ, տաղանդավոր ու սի-րելի ժողովրդի այն ներկայացուցիչներն են, որոնց Գոգոլը, նոզդրովներին, մանիլովներին, չիչիկովներին դատապարտելուց հետո, նկարում էր առանձին սիրով: Նա Իտալիայում վերհիշելով հայրենի բնաշխարհը, հեռու Ռուսիան, հայրենի լեզուն, դաշտերն ու զրնգուն երգերը՝ առանձին սիրով էր կերտում ժողովրդի զանազան ներկայացուցիչների դեմքերը:

Հայրենասիրական նման տողերը մեծ մասամբ գրվել են Իտալիայում՝ հայրենի Ռուսաստանից հեռու: Ինքը՝ Գոգոլը է հաստատում այդ. «Ռուսիա, Ռուսիա, տեսնում եմ քեզ իմ հրաշալի, գեղեցիկ հեռաստանից, քեզ եմ տեսնում...»:

Իտալիայի փոքրիկ քաղաքների գունեղ բնանկարներից հետո, Գոգոլը անցնում է արդեն ռուսական վայրերի բնանկարին և այս անգամ այնպես է կերտում բնանկարն ու ժանրային նկարները, որ լիրիկական իր հուշերը դարձնում է հարազատ ժողովրդին նվիրված երգեր¹:

Գոգոլի քաղմերանց ստեղծագործության և մանավանդ նրա հանճարեղ պոեմի ճշգրիտ գնահատականը տվել են միայն ռուս առաջավոր դեմոկրատական ինտելիգենցիայի ներկայացուցիչները: Սակայն գաղտնիք չէ և այն, որ Գոգոլին շրջապատող գրողների մեջ նկատելի տեղ էին գրավում ռեալիստիկ գաղափարախոսները և ռեալիստիկ խնկարկող գործիչները, որոնք աշխատում էին նրան ամեն կերպ շեղել իր հիմնական ուղեգծից, ինչպես այդ անում էին Բենկենդորֆը, ցար Նիկոլայը, Բուլգարինը և սև զրշակները, երբ հետևելով Պուշկինի բուլդո քայլերին՝ աշխատում էին «դաստիարակել» անզուսպ պոետին: Գոգոլին շրջապատող գործիչները կիրառում էին ամենախորամանկ մեթոդները՝ ջանալով կեղծավոր գովատանքների, մերթ մոլեզվի քննադատականների, մերթ էլ «մտերմական» խորհուրդների միջոցով «խելքի բերել» նրան կամ նոր ուղղություն հաղորդել նրա արվեստի զարգացմանը:

Նրանք ամեն կերպ աշխատում էին Գոգոլին կտրել դեմոկրատական գրողներից և ընթերցողներից: Բայց կտրվելով դեմոկրատական աուդիտորիայից, նա կկորցնեի իր ոտքի տակի հողը: Աշխատելով հենակետ գտնել, նա ճիշդ էր անում հիմնավորել «անգործ» և «այրող» պորբլեմներից կտրված արվեստի սկզբունքները: Հոսմից ուղարկված նրա մի ակնարկը այդպիսի մտորումներով համակված մտածողի հույզների արտահայտությունն էր: Իզուր չէր այդպիսի Գոգոլը անգործ կյանքի և արվեստի աշխարհը հակադրում քաղաքականությունը և ֆրանսիական իրականությունը: Բնորոշ է այն, որ նրա ակնարկի մեջ գծագրված հերոսը Իտալիայից հոգեբանական նետվում է դեպի ֆրանսիական քաղաքները, ապա նորից վերադառնում Իտալիա և այդտեղ էլ հաստատվում է վերջնականապես: Այդ ակնարկը լույս էր տեսել սլավյանոֆիլների «Մոսկովիտային» հանդեսում և հիմնականում նվիրված էր կյանքից կտրված, գաղափարազուրկ արվեստի պաշտպանությանը: Արվեստի միշտ «անգործ» աշ-

¹ Գոգոլը սիրում էր կանգ առնել իտալական տավերնաներում, երբ Հոսմից ուղևորվում էր դեպի մոտակա վայրերը: Փամալաֆին ռուս պարբերական մամուլի էջերում նշվել է արդեն, որ իր հայրենի Ռուսիային ուղղված ջերմ լիրիկական տողերը նա գրել է Մանչիանի փոքրիկ ավանի տավերնայում՝ փոքրիկ սեղանի կողքին, ճիշտ այն պահին, երբ տավերնայի հաճախորդները վիճում և արմկում էին... (տե՛ս Н. В. Гоголь, Статьи и материалы, Л., 1954, стр. 285).

խարհը, իտալական մեծ արվեստագետների գործերը, տաճարներն ու ճարտարապետական հուշարձանները վերոհիշյալ ակնարկում առաջադրվում են որպես փրկարար պատգամներ²: Նա կլսասիկ արվեստից հետո բարձրացնում է «անգործ» արվեստի դրոշմը, իսկ հետո՝ այդ արվեստից անցնում է արդեն կրեմի և միստիկայի պաշտպանությանը: Դեռ ավելին. իր պոեմի երկրորդ հրատարակությունը կցված նախաբանում Գոգոլը ճիշդ է անում առաջադրել և հիմնավորել իր նոր «հիմաստասիրությունը»: Շրջադարձը ակնհեր էր:

Գատապարտելով պոեմի առաջին մասի հիմնական ուղղությունը, Գոգոլը արդեն 1847 թ. շատ որոշակի հայտարարում է, որ ինքը սխալ է համարում իր վաղեմի մոտեցումը իրականությանը: Գոգոլը գրում է նաև, որ ինքը շատ բարձր է գնահատում Ռուսիայի «բարձր դասի» նշանակությունը և, դատապարտելով պոեմի անհանդուրժելի ուղղությունը, խոստանում է նկատի առնել «բարեմիտ» ընթերցողների խորհուրդները և վերամշակել պոեմը՝ համաձայն այդ ընթերցողների կողմից առաջադրված դրույթների և գիտողությունների: Անհրաժեշտ է, սակայն, արձանագրել մի ուրիշ հանգամանք: Խոստանալով շտկել «բարեփոխել» իր պոեմի որոշ հատվածները, Գոգոլը որոշակի ընդգծում է, որ անցյալում ինքը պաշտպանել է այլ ուղեգիծ և ձայնակցել է հին կարգերի և ազնվականների թշնամիների գաղափարներին:

Երբ լույս է տեսնում Գոգոլի «Գրագրություն»-ը, ռեալիստիկ գաղափարախոսները ողջունելով վիպագրին, միաժամանակ ավելի է մեծ եռանդով են սկսում դատափետել նրա մյուս երկասիրությունները: Հակառակ դիրք են բռնում ռուսական առաջավոր դեմոկրատիայի և մանավանդ հեղափոխական խավերի ներկայացուցիչները: Բելինսկին գրում է իր հայտնի նամակը: Զայնակցելով Բելինսկուն, Գոգոլին քննադատում է նաև Գերցենը: Ռեալիստիկ գաղափարախոսները ողջունելով «սթափված» գրողին, պախարակում են նրա ստեղծագործությունները: Առաջավոր և դեմոկրատական գրողները դատապարտելով ռեալիստիկ գիրքը նետվող գրողին, մեծարում են նրա ստեղծա-

² Սենտ-Բյուվը Գոգոլի հետ զրույց է ունեցել 1838 թ., երբ Զիվիտատ-Վիկիայից նավով ուղևորվում էր Հոսմ: «Գոգոլին, — պատմում է Սենտ-Բյուվը, — ամենից շատ հետաքրքրում էր իտալական ժողովուրդը: Գոգոլն ինձ ասաց, որ ինքը գտել է իսկական մի պոետ, որի ստեղծելը գրված էին արանստեղծության բարբառով»: Իտալական «ժողովրդական» այդ պոետը 1838 թ. չէր կարող հրատարակել հոսմեական պապի և բարձր հոգևորականության դեմ ուղղված սարկազմով լեցուն իր բանաստեղծությունները: Իր անշտի ուշադրով և քոմանդակայից հետազոտության մեջ բանասեր Կաստուկինը չի սխալվում, երբ առաջադրում է մեծագույն ուշադրությունը հաշվի առնել Գոգոլի շատ բնորոշ մոտեցումը իտալական ժողովրդին և Բելինի նման՝ բարբառով կերտող բանաստեղծների երգերին: Մեզ թվում է, այնուամենայնիվ, որ բանասեր Կաստուկինը որոշ շահով թերագնահատում է Գոգոլի մոտեցումը անտիկ արվեստի գեղարվեստական վավերագրերին... Տե՛ս Касаткин, Гоголь и простые люди Италии (Сборник, «Гороль», изд. Лен. ун-ва, 1954, стр. 287—289).

գործությունները, դա շատ պարզորոշ մի կ'ընտրաստ էր: Գոգոլի համար էլ պարզ պետք է լիներ, որ իր ռեալիստական արվեստի և հիմնական ստեղծագործությունների խոսքը, իմաստը, ուղղությունը մոտ ու հասկանալի է պրոգրեսիվ և դեմոկրատական աուդիտ: չի աչին: Նա պարզ տեսնում էր և այն, որ ցարիզմի սպասավորները, որոնք հանդես գալով բարեկամի դիմակի տակ՝ պարսավում են իր ստեղծագործությունները, իրականում շատ դաժան դատավորներ են: Հուսահատ ապրումների գիրքը նետվող գրողի «մեղայականը» և ակներև շրջադարձը այդ սև դատավորներն անբավարար էին համարում: Նրանք հիվանդ գրողից պահանջում էին քանդել անցյալին կապող բոլոր կամուրջները, նորից և նորից դատափեսել իր արվեստի ճշմարիտ ուղիները, նորից «շտկել» կամ «վերամշակել» իր գրությունները:

Գոգոլը ստիպված է լինում ընդհատել իր աշխատանքը: 1847 թվականին Էտալիայում նա այրում է ոչնչացնում է իր հանճարեղ պոեմի երկրորդ մասը: Նա ճիշ է անում համակերպվել «խորհուրդներ» տվող գործիչների պահանջներին, բայց նորից չկարողանալով շեղվել ռեալիստական արվեստի ուղեգծից, նույնիսկ իր գործունեության «նոր» էտապում՝ նետում է սուր ակնարկներ և քննական սուր գիտողություններ ընդդեմ հին աշխարհի տիրակալների:

Գեղարվեստագետը և ռեալիստը դեն էին վանում շրջադարձ կատարող գրողին: Ռեակցիայի ուղեգծին մոտեցող գրողը իր հերթին անդադար վանում էր ռեալիստ և ըմբոստ մտածողին: Կոնֆլիկտը անխուսափելի էր, և այդ կոնֆլիկտը ստեղծում է շատ ծանր ողբերգություն: Սխալ և անհիշող հայտարարություններ անելով հանդերձ՝ Գոգոլը զգում էր, որ ինքը կատարում է սխալ և անհանդուրժելի քայլ: Այդ զգացումն էր ահա տանջում նրան: Եթե Գոգոլը չդատապարտեր ինքն իրեն, եթե նա շտառապեր հակասական որոնումների և անվերջ դեգերումների մեջ, նա չէր տանջվի:

Միտոիկան բացարձակ ընդունողի համար չէր կարող լինել տրագիկա և երկրնտրանք: Ողջ խնդիրը նրանումն է, որ Գոգոլի համար էլ շատ պարզ էր, որ ինքը սխալ է կատարել, որ ինքը դավաճանել է իր ռեալիստական արվեստի սկզբունքներին, իր հանճարեղ պոեմի մեջ առաջադրված էսթետիկական պատգամներին...

Գոգոլը տեսնում էր, որ իր «նոր» ուղեգիծը իրեն տանում է դեպի փակուղի և անխուսափելի անկում: Նա չէր կարող շտեպնել, որ իր սիրելի արվեստի դեմ չրաատ պաշտպաններից կտրվելով՝ դարձել ու դառնում է իր արվեստի թշնամիների սպասավորն ու գերին: Ահա այդ ամենն էլ ստեղծում է նպաստավոր հող թե հակասական դեգերումների, թե «ողբերգության» համար: Այդ հողի, միմիայն այդ հողի վրա կարող էր ստեղծվել այն ծանր «ողբերգությունը», որի իսկական պատճառների բացատրության համար բանասերներից շատերը ծանրանում էին Գոգոլի «բիոլոգիական» կառուցվածքի կամ «ժա-

ռանգականության» հետ կապված հատկանիշների, վերջապես գոգոլյան «միստիկայի» և իդեալիստական հայեցողության վրա... Սովետական բանասերների նոր գիտական աշխատությունները, նոր գիտական պրպտումները և վավերագրերը ավելի քան որոշակի հաստատել և հաստատում են, որ Գոգոլին սպանել է ցարական դեսպոտիան՝ սխտեմատիկ կերպով նրա նկատմամբ կիրառելով զանազան մեթոդներ...

Ռեակցիոն գործիչների զրգամաբ Գոգոլը այրում է իր պոեմի երկրորդ մասի կարևոր հատվածները, ստիպված է լինում հրապարակել «մեղայականների» բնույթ կրող հատուկ «գրություններ» թե՛ «Ռեիզոր»-ի և թե՛ «Մեռած հոգիներ»-ի առթիվ: Նա հրատարակում է իր «Գրագրություն»-ը, իսկ 1852 թ. այրում ու ոչնչացնում է իր բոլոր ձեռագիր աշխատությունները: Կարծես թե ամեն ինչ արված էր: Սակայն այդ ամենը բավական չհամարելով, նրա թշնամիներն առաջարկում էին մեկնել վանք և վերջնականապես հրաժարվել գրական գործունեությունից: Կառավարության հանձնարարությամբ, որոշ գործիչներ հետևում էին արդեն հիվանդ գրողի բոլոր քայլերին: Գոգոլի մոտ գտնուվում էր հատուկ քահանա, որ առանձին ուշադրությամբ էր հետևում հիվանդ գրողի բոլոր քայլերին: Քահանա «հայր Մատվեյն» իր տաղտուկ «խորհուրդներով» զայրացնում էր Գոգոլին: Պատմում են, որ «հայր Մատվեյը», մի օր անցնելով Գոգոլի մոտ, առաջարկում է նրան «հրաժարվել» Պուշկինից և հրապարակել նոր գրություն: Այդ դիալոգի մանրամասնությունները հայտնի չեն: Առաջարկել է արդյոք «հայր Մատվեյը» գրել «նզովքի» նման մի գրություն կամ «մեղայական» դեկլարացիա՝ այդ էլ չգիտենք: Հայտնի են միայն Գոգոլի գայրայից խոսքերը. «Բա՛վ է, բա՛վ է, թողեք ինձ, չեմ կարող այլևս լսել ձեզ, այդ արդեն սարսափելի է...»:

Մոսկվ իրականությունը, հիվանդությունը, անկոշ խորհրդատուների վարքագիծը, անվերջ երկվությունն ու անվերջ դեգերումները, փորվածությունը իսկական բարեկամներից սպանում են հանճարեղ գրողին: Գոգոլն իր գրվածքներն այրում է 1852 թ. փետրվարի 12-ին, իսկ ուղիղ երկու շաբաթ հետո՝ 1852 թ. մարտի 4-ին մահանում է: Հասարակ այդ թվականներն արդեն շատ բան են ասում...

Գոգոլի «դարձի» տխուր պատմությունը շատ բնորոշ է: Չաղակին նույնպես «խելագար» էին հայտարարել, բայց վար նետել չէին վստահել: Ավելի ողբերգական է տաղանդավոր նկարիչ՝ Ֆեդոտովի պատմությունը: Ցարիզմի դահիճները Ֆեդոտովին խելագար հայտարարելով, նետել էին մթին մի նկուղ և այդտեղ էլ վերջ տվել միայնակ նկարչի կյանքին:

Գոգոլը մնում է կենդանի: Նա նույնիսկ գրվատվում է: Նա գտնում է նույնիսկ «երկրպագուներ» գուցե հենց սորակեիչների և մանիլովների, նուզղերյովների ու չիչիկովների շրջանում: Նա շրջապատվում է միմիայն հին աշ-

խարհի այդ «հերոսներին» սպասավորող սև վհուկներով: Գրանց թելադրանքով ու պահանջով նա ստիպված է լինում քայլ առ քայլ նահանջել իր մարտական արվեստի դիրքերից, դատափետել սեփական ուղեգիծը և այրել սեփական աշխատությունները: Գոգոլի նամակների մեջ և առանձնապես նրա վերջին տարիների գրություններում նշմարվում է անդունդին մոտեցող հուսահատ գրողի մոռյլ դիմաստվերը:

Անցնում են տարիներ: Գոգոլյան արվեստի մասին ստեղծվում է հսկայական գրականություն: Հետագեմ և լիբերալ բանաստեղծները առաջադրում են մտացածին տեսություններ և առասպելներ գոգոլյան «ողբերգության» մետաֆիզիկական բնույթի կամ գոգոլյան «միստիկայի» նախադրյալների մասին: Գոգոլի դեմքն էլ այդ բանասերների մեկնարանությունների շնորհիվ ծածկվում է մշուշի թանձր վարագույրով: Շատ յուրահատուկ այդ մեկնաբանությունների ազդեցության կնիքը նշմարվում է նույնիսկ մեծատաղանդ բանդակագործ Անդրեևի ստեղծագործության մեջ: Գոգոլը այդտեղ ցուցադրվում է և որպես «Ռեիզոր»-ի ու «Մեռած հոգիներ»-ի մեծ ստեղծագործող, և միաժամանակ՝ որպես «Գրագրության» հեղինակ: Բնորոշ է այն, որ այդ հուշարձանը դիտողները աշխատում են տեսնել րեկրահական պատմվածքների, պետերբուրգյան պատմվածքների, «Ռեիզոր»-ի և «Մեռած հոգիներ»-ի ստեղծագործողին և գրեթե միշտ անուշադրության են մատնում քանդակագործի բավական որոշակի ակնարկն ու դիտողությունը՝ տխուր և հուսահատ մտորումներով տարված Գոգոլի մասին:

Այդպես է եղել միշտ գոգոլյան երկերի ընթերցողների ամենալայն շարքերի և առանձնապես դեմոկրատական աուդիտորիայի մոտեցումը Գոգոլի նկատմամբ: Գոգոլը այդ ընթերցողների համար եղել է ու մնացել միշտ ռեալիստական երկերի մեծ վարպետ, հայրենի ժողովրդի առաջադիմության համար մարտնչող գրող, ճորտատիրական կարգերի դեմ ծառայող, «Ռեիզոր»-ի և «Մեռած հոգիներ»-ի մեծ ստեղծագործող: Գոգոլի կյանքի վերջին էտապը, նրա տխուր «զարձը» և հետագա անկումը, քննարկվել ու քննարկվում է որպես մի նահանջ և բռնապետության ճնշման միջոցով կատարված անհանդուրժելի հանցագործություն: Բելինսկին իր հայտնի «նամակ»-ում քննադատելով Գոգոլին, մեծարանքով էր հիշատակում նրա ռեալիստական-մարտական գործերի բարձր նշանակությունը: Այդպես է մոտենում Գոգոլին և այսօրվա ընթերցողը...

1952

Ն Ե Կ Ի Ա Ս Ո Վ

...Рать подымается—
Неисчислимая,
Сила в ней скажется
Несокрушимая...

Некрасов

...В минуты унынья, о родина мать,
Я мыслью вперед улетаю...

Некрасов, т. 3, стр. 390.

Կարելի է վճռական կերպով ասել, որ նախահեղափոխական տարիներին ռուս ժողովրդի մեծ բանաստեղծ Նեկրասովի այդ տողերը չէին ընդգծվում անհրաժեշտ շափով: Ավելի հաճախ այդ օրերին բանասերները կանգ էին առնում պոետի տխուր և հուսահատ բանաստեղծությունների վրա: Բավական է միայն հիշատակել, թե ինչպես էր ժամանակի Նեկրասովին գնահատել նույնիսկ նրա երկրպագու Ստասովը: Ըմբոստ և անսահման զայրույթով համաձայնված ժողովրդական երգչի դեմքը Ստասովի նման գործիչներն այնքան որոշակի կերպով չէին նշմարում, որքան ողբով լեցուն երգեր կերտող միայնակ պոետի դիմաստվերը: Միակողմանի այդ մոտեցումը որոշ շափով բացատրվում է նրանով, որ անցյալում ընթերցողներին Նեկրասովի շատ և շատ բանաստեղծությունները միանգամայն անհայտ էին: Նեկրասովի բանաստեղծությունների նախահեղափոխական բոլոր հրատարակությունները ոչ միայն անկատար էին, այլ նաև տեղեկացիոց և աղճատված: Ոչ միայն ընթերցողներին, այլ նույնիսկ բանասերներին և պատմաբաններին ծանոթ չէին մեծ պոետի ձեռագիր հարուստ ժառանգության վավերագրերը: Այդու կողմից նախահեղափոխական տարիներին իշխում էր շատ անկատար և միակողմանի հասկացողություն XIX դարի 50—60-ական թվականների առաջավոր ռուս գրականության, ժուռնալիստիկայի, արվեստի մասին: Միայն և տեղեկացիոց կերպով էին մոտենում այդ օրերի կուլտուրական հարուստ ժառանգությանը՝ առանձնապես ռուս հեղափոխական մեծ դեմոկրատների գործունեության և ստեղծագործական աշխատանքի գնահատությանը:

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո է միայն խոշոր բեկում ստեղծվում ռուս առաջավոր պատմաբանների-բանասերների շարքերում: Սովետական բանասերների լայն կադրեր են առաջ եկել, որոնք զինված մարքսլենինյան ուսմունքի թերիական գրություններով, մեծագույն շափով համրվ են տվել գրականության դիտական ուսումնասիրությանը՝ հրատարակելով արխիվային նորանոր վավերագրեր, ձեռագիր նյութեր և տեքստեր, մենագրություններ և ուսումնասիրական էսսեներ: Այսօր Բելինսկու, Գոգոլյու-

բովի, Չերնիշևսկու և 60-ական թվականների ներկայացուցիչների հայեցողության մեկնաբանության համար չի կարելի հենվել միայն հին անկատար հրատարակությունների վրա: Եթե մենք նույնիսկ կանգ էլ չառնենք բազմազան հետազոտությունների վրա, համենայն դեպս երբեք չենք կարող անուշադրության մասին Գիտությունների ակադեմիայի նախագահության նախաձեռնությամբ հրատարակված սովորածավալ «Գրական ժառանգության» մի քանի տասնյակ մեծադիր հատորների, ակադեմիական զանազան ժողովածուների, տեքստաբանական ուսումնասիրությունների նշանակությունը: Միմիայն նեկրասովին «Գրական ժառանգություն» ժողովածուներին խմբագրությունը նվիրել է երեք մեծադիր հատորներ: Ռուս գրականության ինստիտուտը («Պուշկինյան տուն») իր հերթին, 1951-ին Եգուլինի, Բելլիկովի, Բուրսովի, Եվգենև-Մաքսիմովի խմբագրության հրատարակել է բովանդակալից մի ժողովածու՝ նույնպես նվիրված նեկրասովագիտության հրատապ մի շարք պորբլեմների լուսաբանությանը:

Բացի բազմաթիվ այլ նյութերից և ուսումնասիրություններից, լույս են տեսել Եվգենև-Մաքսիմովի «Նեկրասով» մենագրության երեք հատորները, ականավոր նեկրասովագետ Կորնեյ Չուկովսկու եզակի արժեք ունեցող «Նեկրասովի վարպետությունը» անշափ ուշագրավ սովոր հատորը և վերջպես նեկրասովի երկերի լրակատար ժողովածուի առաջին հրատարակությունը: Վերջինը բազմազան է տասներկու հատորներից: Այդ հրատարակության մեջ ամփոփվել են մեծ բանաստեղծի անգամ արձակ երկերը, բազմաթիվ նորանոր տեքստեր, ուշագրավ տարբերակներ, սևագիր ձեռագրեր և առանձնապես նամակները: Այդ հրատարակության տեքստերին կցված են մանրակրկիտ կոմենտարներ, որոնք ինքնին գիտական մեծ արժեք են ներկայացնում: «Լիտերատուրնայա գազետա»-ի էջերում այդ հրատարակությունը, ինչպես հայտնի է, ենթարկվել է որոշ քննադատության որպես «ակադեմիական հրատարակությունների» տրադիցիոն կանոնները խախտող մի գործ: Չի կարելի, այնուամենայնիվ, ժխտել, որ իր առանձին թերություններով հանդերձ, այդ հրատարակությունը շատ խոշոր գրական-գիտական երևույթ է: Իրականում դա ոչ միայն մեծ բանաստեղծի երկերի լրակատար հրատարակության առաջին արժեքավոր փորձն է, այլ նաև, շնորհիվ տեքստերին կցված ընդարձակ ծանոթագրությունների՝ նեկրասովյան էնցիկլոպեդիայի ուրույն մի ձևը: Ծանոթագրությունները կազմել է ականավոր նեկրասովագետ Չուկովսկին իրեն հատուկ մեծագույն ուշադրությամբ: Նա իր տեքստերգիական հիմնական տեսակետն ու գրույթները հանգամանորեն պարզաբանել է «Նեկրասովի վարպետությունը» աշխատության և թե, մանավանդ, վերջերս հրատարակված հատուկ տեքստոլոգիական հետազոտության մեջ¹: Ինչպես էլ մենք մոտենանք

¹ «Новый мир», 1954, книга II.

Չուկովսկու աշխատությունների առանձին վիճելի կողմերին, այնուամենայնիվ երբեք չենք կարող ժխտել այն ակներև փաստը, որ նեկրասովի ստեղծագործությունը ուսումնասիրող ամեն մի բանասեր առաջին հերթին պետք է հենվի Չուկովսկու անմիջական ղեկավարությամբ ձեռնարկված հրատարակության վրա: Այդ հրատարակությունը, ապա Եվգենև-Մաքսիմովի երեք հատորները, «Պուշկինյան տուն» նեկրասովյան ժողովածուի առաջին հատորը հիմնական այն նյութերն են, որոնք ուսումնասիրվել և օգտագործվել են մեր կողմից՝ ժողովրդական մեծ բանաստեղծի բնութագրմանը նվիրված ակնարկը կազմելու ժամանակ:

1

Նեկրասովը ծնվել է 1821-ին: Նրա հայրը Յարոսլավլի նահանգի կալվածատեր էր և ամենևին չէր տարբերվում նախառնֆորմյան էպոխայի վայրագ ճորտատեր-կալվածատերերից: Գյուղացիները չէին սիրում անդադար դագանակի միջոցով աշխատավորներին «խրատող» իրենց վայրագ տիրակալին²:

Նեկրասովի բանաստեղծություններում կարելի է գտնել թուրքիկ ակնարկներ հեռու այն օրերի մասին, երբ նա, ապրելով գյուղում, շփույթ էր գյուղացի մանուկների հետ, դիտում շրջապատի կյանքը, լսում զանազան լուրեր իշխողների ու ճնշվածների մասին: Չքավոր ճորտ գեղջուկների, տխուր բուլլակների, շղթայակապ արտոբականների միջին սովերները մանկության և պատանեկության տարիներին խոշո տպավորություն են թողնում նեկրասովի վրա և գամվում են ընդմիջում նրա հիշողության մեջ: Նա իր հետագա բանաստեղծություններում, անցյալի հուշերի հետ կապված, հնօրյա պատկերներին նվիրում է առանձին զգացումով տողոված տողեր: Բանաստեղծի «մանկական» այդ հուշերը, պետք է ասել, նման չեն ո՛չ Աքսակովի և ո՛չ էլ Տոլստոյի հայտնի հուշերին: Գառնադին կսկիծով էր հիշում նեկրասովը վաղեմի օրերը:

Միջնակարգ դպրոցը կամ գիմնազիան նա չի կարողանում ավարտել: Կան որոշ տվյալներ այն մասին, որ այդ դպրոցը նա ստիպված էր եղել թողնել հիվանդության պատճառով: Հայտնի է և այն, որ պատանի նեկրասովը բնկերների շրջանում աչքի էր ընկնում իր արտասովոր ընթերցասիրությունը: Նրա վրա, ի միջի այլոց, մեծ տպավորություն է թողել Բայրոնի «Մովահեն» պոեմի ուսերեն թարգմանությունը, որը ժամանակին հրատարակվել էր Օլինի թարգմանությամբ: Յարոսլավլից նեկրասովը ուղևորվում է մայրաքաղաք և որպես ազատ ունկնդիր այդտեղ ուսանում հին Պետերբուրգի համալսարանում: Նա արդեն այդ տարիներին ուշադրությամբ հետևում էր գրականության

² Եվգենև-Մաքսիմով, հատ. 1, էջ 30:

նը, թեև ապրում և աշխատում էր ծանրագույն պայմաններում՝ անապահով
ոսղնոչինեց մտավորականների նման: Նեկրասովի տնտեսական կացութիւնը
անշափ ծանր էր: Շատ հաճախ նա մնում էր առանց աշխատանքի. դասեր էլ
տալիս, դուրս էր լրագրային ֆելիետոններ ու ակնարկներ, շտկում էր ուրիշ-
ների. ձեռագիր աշխատութիւնները: Մեծ քաղաքի չքավոր աշխատավորների
կյանքը, անապահով փոստիլիտներին ապրումները, պետերբուրգյան հեռու ու
խուլ փողոցների պոբախտ բնակիչների առօրյան նա ուսումնասիրում է հենց
այդ օրերին (1839—1841), և ինքն էլ դառնալով ոսղնոչինեց-մտավորական,
կտրվում է իր հայրենի սոցիալական շրջապատից: Նա մոտենում է մայրա-
քաղաքի գրական շրջաններին և մոտիկ հարաբերութիւններ հաստատում մի
շարք գրական գործիչների հետ: Շատ կարճ ժամանակում նեկրասովն արդեն
իր գրական աշխատանքների ընթացքում մտերիմ կապեր է հաստատում Բե-
լինսկու հետ ու դառնում նրա ջերմ հետևողը: Հետագայում նեկրասովը դադա-
փարական կապեր է հաստատում Գորբուլյուրովի և Չերնիշևսկու հետ, յուրաց-
նում է ռուս հեղափոխական մեծ դեմոկրատների հայեցութիւնը և դառնում
Գորբուլյուրովի ու Չերնիշևսկու համոզված հետևողն ու զինակիցը: Հսկայա-
կան աշխատանք է կատարում նեկրասովը որպէս առաջավոր դեմոկրատական
«Սովրեմեննիկ» պարբերականի ղեկավար-հրատարակիչ: «Սովրեմեննիկի»
շուրջը համախմբելով ռուս առաջավոր գրողներին և գիտնականներին, նեկրա-
սովը հետևում է Գորբուլյուրովի և Չերնիշևսկու ջանքերով մշակված հեղա-
փոխական-դեմոկրատական, ուղեգծին: Նա շատ հաճախ, ելնելով ժամանակի
պայմաններից և առանձնապէս ցարական զբառնիչների դիրքորոշումից, իր
խսկական հայացքները քողարկելու համար գրում էր «երկպալան» կամ «եզո-
պոսյան» լեզվով:

Լենինը, ինչպէս հայտնի է, քննադատելով նեկրասովի որոշ վարա-
նումները, որոշակի նշել է, որ ընայած որոշ վարանումներին՝ նեկրա-
սովը իր հիմնական ուղեգծով և հայացքներով ավելի կապված է եղել Չերնի-
շևսկու հետ: Նեկրասովի արձակ երկերն ուրախ արձանագրութիւնների նման
նկարագծում էին մեծ քաղաքի բնակիչների կյանքի բնորոշ հատկանիշները:
Այդ երկերը արժեքավոր վավերագրեր են, որոնք բնութագրում են պոետի
կյանքի որոշ էջերը և միաժամանակ պետերբուրգյան աշխատավորների կեն-
ցազն ու ապրումները: Հին Պետերբուրգի հեռու վայրերի և խուլ փողոցների
չքավոր բնակիչների կյանքի դրվագները նեկրասովյան արձակ պատմվածքնե-
րում ցուցադրվում են տիպական գույներով և կարող են դառնալ ուրույն կո-
մենտարներ՝ 60—70-ական թվականների դեմոկրատ-նկարիչների իլլուստրա-
ցիաների կամ նկարների համար: Կարելի է թերևս ասել, որ շեշտված նկար-
ները «մեկնաբանում» էին նեկրասովյան ակնարկները, իսկ նեկրասովյան
պատմվածքներն էլ ավելի պարզորոշ էին դարձնում դեմոկրատական սյուժետ-
ներ լուսարանող նկարիչների նկարները: Ինտիմ հարաբերութիւններ հաստա-

տելով Բելինսկու հետ և ձայնակցելով գործչան ռեալիստական «դպրոցի»
պատգամներին, նեկրասովը 1845-ին հրատարակում է «Պետերբուրգի ֆիզիո-
լոգիա» արմանախ ժողովածուն: Այդ ժողովածուն լույս էր տեսել Բելինսկու
հատուկ նախաբանով և ապա՝ նեկրասովի խմբագրութիւնով: Այդ ժողովածուի
մեջ նեկրասովը զետեղել էր իր «Պետերբուրգյան անկյուններ» ակնարկը: Կո-
նին ժամանակին հիշատակել է, որ 1844-ին ցարական զբառնութիւնն ար-
գելել էր հիշված ակնարկը տպագրել:

Նեկրասովի այս և այլ արձակ գրութիւնները ուշագրավ են այն տեսակե-
տից, որ բնութագրում են գործչան ռեալիստական դպրոցի ուղիներով քայլող
«նատուրալիստական» կամ «ֆիզիոլոգիական» ուրույն հետազոտութիւնների
միջոցով գրական նոր ուղի որոնող դեմոկրատ փիլապոգիների որոնումները:
Հանգես դալով որպէս նոր «դպրոցի» հետևող, նեկրասովը աշխատում էր քա-
ղաքի հեռու խորշերի չքավոր աշխատավորների անհրապույր կյանքի ռեալիս-
տական նկարագրութիւն միջոցով մերկացնել իշխող սեփականատիրական
կարգերի խոցերը և դատափետել ժողովրդին շահագրգիռ սոցիալական բրո-
նակալ ուժերի ներկայացուցիչներին:

Հրատարակչական-խմբագրական գործունեութիւնն ավելի ակտիվ կեր-
պով նեկրասովն անցնում է 1847-ին, երբ կարողանում է ամուր հիմքերի վրա
դնել ռուս հասարակական մտքի պատմութիւն մեջ եղակի տեղ գրավող «Սո-
վրեմեննիկ» պարբերագրի հրատարակութիւն գործը: Թե որքան մեծ աշխա-
տանք է կատարել նեկրասովը, ցույց են տալիս նորագույն այն վավերագրերը,
որոնք վերջերս հրատարակվել են Չուկովսկու անմիջական նախաձեռնութիւնով:
Նեկրասովի երկերի նորագույն հրատարակութիւնն առանձնապէս 11-րդ հա-
տորում զետեղված մատենագրական այն տարեկան տեսութիւնները, ուրոնք
նվիրված են «Սովրեմեննիկի» զանազան նյութերի և հեղինակների մանրակր-
կիտ թվարկմանը և անոտացիոն նկարագրութիւնը, ցույց են տալիս, որ նեկ-
րասովը մեծագույն ուշադրութիւնով էր հետևում ամսագրի և ընթերցողների
միջև ստեղծվող կապերի ամրապնդմանը: Այդ վավերագրերն այնքան նշա-
նակալից են, որ կարող են այսօր անգամ գրավել նեկրասով-խմբագրի դեմքը
ուսումնասիրող բանասերների ուշադրութիւնը: «Սովրեմեննիկ» ամսագիրը
դեմոկրատական նոր ուժերի շատ կարևոր և ազդեցիկ մի տրիբուն էր: Նրա
շուրջը համախմբվել էին ռուս գրականութիւն և գիտութիւն անվանի և առա-
ջավոր ներկայացուցիչները: Ամսագրի էջերում տպագրվում էին պատմագի-
տական ուսումնասիրութիւններ, ուշագրավ աշխատութիւններ՝ ժողովրդական
բանահյուսութիւն և գրականութիւն մասին, տնտեսագիտական հետազոտու-
թիւնը: Ամսագրին առանձին փայլ են հաղորդել Գորբուլյուրովի և Չերնիշևսկու
աշխատութիւնները, ինչպէս և ռուս ականավոր կլասիկների՝ Լե Տոլստոյի,
Տուրգենևի, Սալտիկով-Շչեդրինի և ուրիշ գրողների վեպերը, պատմվածքնե-

բը: Ամսագրի աշխատակիցներն իրենց երկասիրությունների համար բարձր հոնարարներ էին ստանում: Յարական դրաքննության ներկայացուցիչները առանձին ուշադրությամբ էին հետևում «Սովրեմեննիկ»-ի մեջ տպագրված նյութերին և աշխատում էին ժամանակին սատարել անհանդուրժելի հոգավածներ հրապարակող խմբագրին: Ռուս ինտելիգենցիայի առաջավոր շարքերին լավ հայտնի էր ամսագրի ուղղությունը: Ամսագիրը համարվում էր իշխող կարգերի դեմ կազմավորվող հեղափոխական և ընդհատակյա ուժերի ղեկավար շտաբ: Կառավարության ներկայացուցիչները, համենայն դեպս, չէին ծածկում, որ իրենք այդպես են գնահատում ամսագրի դերը: Ամսագիրը շատ որոշակի կերպով էր առաջ տանում իր աշխատանքը: Նրա էջերից հեղափոխական դեմոկրատները լեզու ոճով կոչ էին անում դեմոկրատական խավերի ներկայացուցիչներին՝ համախմբվել: Չերնիշևսկին, ծանրանալով արևմտյան դեպքերին, նկարագրելով իտալական ազգային-ազատագրական շարժումները, դատարաններով լիբերալներին և երկերեսանի գործիչներին, անուղղակի քննադատում էր նաև իշխող կալվածատիրական-ձորտատիրական կարգերի գաղափարախոսներին: Ամսագրի հիմնական աշխատակիցները քարկոծում էին հին կարգի տիրակալներին և մերկացնում բռնակալության ռեակցիոն էությունը քողարկող երկերեսանի գործիչների դեմքը: Անցյալի ծանրագույն պայմաններում, Դոբրոլյուբովի և Չերնիշևսկու նման մոհիկանների ղեկավարությամբ, այդ ամսագիրը կատարել էր դեմոկրատական առաջավոր ուժերի ղեկավար շտաբի դերը: Քսան տարու չափ ղեկավարելով «Սովրեմեննիկ»-ի հրատարակության պատասխանատու գործը, Նեկրասովը աչքի ընկնող դեր է կատարել ռուս հասարակական մտքի պատմության մեջ որպես տաղանդավոր խմբագիր և ժուռնալիստ...

2

Այնուամենայնիվ, Նեկրասովը ամենից առաջ բանաստեղծ էր— Պուշկինի հետնորդը և ռուսական պոեզիայի վերելքի՝ նոր վերելքին ու զարգացմանը օժանդակող մեծագույն պոետ: Միանգամայն իրավացի է Կորնեյ Չուկովսկին, երբ իր «Նեկրասովի վարպետությունը» աշխատության մեջ քննադատելով նախահեղափոխական մի շարք բանասերների մեկնաբանությունները, առանձին ուժով ընդգծում է Նեկրասովյան բանաստեղծությունների ղեղարկեստական աչքի ընկնող հատկանիշները: Նեկրասովի բանաստեղծությունները շատ կարճ ժամանակվա ընթացքում դառնում են հանրահայտ երգեր՝ ղեմոկրատական խավերի ամենալայն շրջաններում: Նեկրասովը կարողանում է բարձր արվեստի հատուկ բովանդակությամբ հարազատ ժողովրդի նվիրական մտորումները, պարզ և միևնույն ժամանակ հույզով լեցուն ու պատկերավոր տողերով երգել ճնշված և աշխատավոր մարդկանց երազներն ու տեն-

չերը: Շատ լավ էր ուսումնասիրել ռուսական ժողովրդական բանահյուսության հարուստ վավերագրերը և մանավանդ ժողովրդական ներհուն երգերի մոտիվներն ու յուրահատուկ ուրիշները: Նրա երգերը միօրինակ չեն երբեք և միշտ տանն առանձին գունավորում՝ երգի բովանդակությանը համեմատ ընտրված հատուկ երանգավորում: Նա անդադար նորանոր փոփոխություններ է մտցնում իր բանաստեղծությունների առանձին մասերի մեջ՝ ջանալով ճշգրիտ կերպով բացահայտել իր մտադրումները:

Նեկրասովի բանաստեղծությունները թե՛ 60—70-ական թվականներին, և թե՛ հետագայում, մեծ ազդեցություն են թողել ռուս ժողովրդի առաջավոր շարքերի վրա: Նախահեղափոխական տարիներին Նեկրասովյան երգերը շատ անգամ քննարկվում էին որպես ցարական դեսպոտիայի և դասակարգային շահագործման դեմ ուղղված հեղափոխական պատգամներ և կոչեր: Ժամանակին այդ փաստը շատ որոշակի արձանագրել է Պլեխանովը:

Ինքուրյուբովի և Չերնիշևսկու գաղափարները կիրառող խմբագիր-ժուռնալիստ Նեկրասովը ատելի էր իհարկե ռեակցիոն բոլոր հոսանքների ներկայացուցիչների համար: Սակայն կարելի է վճռական կերպով ասել, որ անհամեմատ ավելի ատելի էր դրանց համար հրաշունչ երգեր կերտող Նեկրասովը: Որքան էլ զգուշավոր էր այդ երգերի ոճը, և որքան էլ մշուշապատ էին առանձին տողերը, Նեկրասովյան երգերի իրական իմաստը երբեք անհասկանալի չէր մնում առաջավոր ընթերցողներին: Ընթերցողները տեսնում էին, որ իշխողները ատում են ազատատենչ երգեր կերտող պոետին: Ժողովրդի թշնամիների արտասովոր վայնասունը, բանաստեղծի դեմ ուղղված հալածանքները, բամբասանքների և զրպարտությունների խիտ ցանցը— այդ ամենը ավելի հեռատես ընթերցողներին թելադրում էր մեծագույն ուշադրությամբ մոտենալ անավարտ տողերին և քողարկված դիտողությունների մեջ բռնել «երկպալան» տողերի իսկական իմաստը: Բանաստեղծի ոխերիմ թշնամիները ժամանակին ջանացել են օգտագործել նրա ակներև սխալներն ու սայթաքումները: Այդ սխալների համար քննադատել են Նեկրասովին նաև իր զինակիցները: Նեկրասովի թե՛ բանաստեղծությունների և թե՛ նամակների մեջ կան նշանակալից դիտողություններ— դառնագին խոստովանություններ և ինքնաքննադատական ակնարկներով լեցուն հայտարարություններ: Մեծ բանաստեղծն ինքն ուղղելով իր «անճիշտ հնչյունները», մեծագույն թափ է հաղորդել ստեղծագործություններին և, հավատարիմ մնալով հայրենի ժողովրդի ազատագրական դատին, մինչև իր կյանքի վերջին օրերը շարունակում էր պայքարը հին կարգերի և նրա սև գաղափարախոսների դեմ: Երբ պոետը մեռնում է, նրա բարեկամների նախաձեռնությամբ կազմակերպված թաղման տխուր հանդեսը վերածվում է ժողովրդական մեծ ցույցի՝ ընդդեմ միապետական կառավարության: Սիրելի պոետին հրաժեշտի վերջին խոսքն ասելու համար հսկայական թափո-

րին մասնակցում են մայրաքաղաքի մտավորականության առաջավոր ջոկատները: Թաղման հանդեսին մասնակցող Պլեխանովը ճառ է ասում և բնութագրում նեկրասովյան մարտական պոեզիայի նշանակությունը: Այդտեղ թափորի մասնակիցների կողմից շեշտվում է, որ նեկրասովը պիտի կոչվի Պ. Կ. Կիրի արժանավոր հետնորդ և համաժողովրդական մեծ բանաստեղծ: Բնորոշ է այն, որ 1905-ի ռուսական առաջին հեղափոխության պարտության օրերին, ռեակցիային արձագանքող սև մունետիկները, նետվելով «նեկրասովյան կուլտի» դեմ, կոչ էին անում փարել անկոփ և «անդորր» պոեզիայի կովաններին: Կյանքից կտրված և գաղափարագուրկ արվեստի այդ գաղափարախոսները, աղավաղելով պուշկինյան պոեզիայի էությունը, կոչ էին անում կովի ելնել «Տողի» և «Կոշտ» իրականության հետ կապված գրականության դեմ: Մուցիալական շահերի բախումների և դասակարգային հակամարտության սուր մթնոլորտում նեկրասովյան պոեզիայի մարտական ավանդները քննարկվում և մեկնաբանվում էին որպես ռեակցիայի սպասավորների դեմ ուղղված «հակադեղարվեստական» ակնարկներ-պատգամներ: Այդքան ահա կենդանի և ազդու էր նեկրասովյան պոեզիան նույնիսկ 1906—1910 թվականներին: Իշխողների և բռնակալների մունետիկների համար համեմատյալ դեպս ակներև էր, որ հեռու անցյալի սև ուժերի դեմ ուղղված հին երգերը կարող են դառնալ սուր հարվածներ՝ ընդդեմ նոր պատմաշրջանի ռեակցիայի գաղափարախոսների: Իդուր չէր կենիւր շեշտում և հիշեցնում, որ «ժամանակակից ռուսական ինտելիգենտը հիացումով է վերաբերվում կոմս Գեյդենի նման գիշատիչ պոմեշչիկներին» — այնինչ նեկրասովը տակավին հեռու անցյալում մերկացնում է մեղկ ու հղկված կավածատերերի գիշատիչ դեմքը...

Քննադատական սուր դիտողություններով և ապա քրդիծական տողերով լեցուն նեկրասովյան բանաստեղծությունները լավ են հալտնի: Այդ բանաստեղծությունների մեջ բնութագրվում են վայրագ կավածատերերը և դատափնտրվում ճորտատերերին պաշտպանող երկերեսանի լիբերալները: Անսահման ատելության և սուր բողոքի կտրուկ շեշտ կա նրա այդօրինակ երգերում: Նեկրասովը նույնիսկ «մեծ ռեֆորմների» նախամտտին, այն օրերին, երբ ռուսական մամուլը ներբողներ էր ձոնում երիտասարդ Ալեքսանդրին, հանդես է գալիս «մտաքայտ» գլուղի նկարագրությամբ: Հետագա շրջանում նա արդեն շատ որոշակի գրում է. «կտրատված հին ցանցերի փոխարեն կհյուսվեն ուրիշ նոր ցանցեր գլուղացիների համար...»:

3

Բացի բազմաթիվ բանաստեղծություններից, նեկրասովը գրել է պոեմներ, որոնք առանձնապես լավ են նկարագրում ռուս հեղափոխական մեծ դեմոկրատների մարտական պատգամներին արձագանքող ժողովրդական երգչի

դեմքը: Ալեքսանդրյան ռեֆորմներից հետո գրված պոեմներում աչքի է ընկնում «Ո՞վ է Ռուսիայում լավ ապրում» գործը, որի մի շարք առանձին ֆրագմենտները մշակվել են 70-ական թվականներին, և ապա մտցվել պոեմի մեջ: Դա յուրահատուկ մի վեպ-պոեմ է, կերտված ժողովրդական երգերի ոճին հատուկ եղանակով: Պոեմի նախերգանքում տեսնում ենք լոթ գլուղացիների սիրունները՝ «ճորտաթափված» լոթ գեղջուկների, որոնք, հանդիպելով միմյանց, մտնում են վեճի:

Թե ո՞վ է արդյոք Ռուսիայում
Ապրում ազատ ու երջանիկ...

Արդեն այդ «նախերգանքի» մեջ մեծ բանաստեղծը, նկարագրելով «երջանիկ» հայրենակիցներին որոնող գեղջուկ-ճամփորդներին, նրանց բնութագրման համար հատորեն օգտագործում է ժողովրդական երգերի թե՛ ինքնատիպ ոճը, և թե՛ լիրիկական հուշերի բնույթ կրող պատկերավոր մտորումները: Այդպես են նախերգանքի այն տողերը, որոնք նկարագրում են «վեճով տարված» գեղջուկներին, իրիկնամուտը, գիշերը, տարակուսանքները՝ մթին գիշերվա պահին: Եվ ահա, կտրելով պատմության թելը, բանաստեղծը «աշխույժ» իր հերոսների նոր հույզերը ցուցադրում է, հետևելով ժողովրդական երգերի մեծ ստեղծագործողի՝ ժողովրդական կոլեկտիվի սիրելի «ձևին»: Գիշեր է: Նշմարվում են խիտ աստղերը: Լուսինը դուրս է սողում: Սև սովերները կտրում են «աշխույժ ճամփորդների» ճամփին: Ահա հենց այդ պատկերը գծագրելուց հետո բանաստեղծը նետում է տողեր, որոնք շատ լավ էին արտահայտում թե՛ գլուղացի-ճամփորդների, և թե՛ հենց պոետի խոհերն ու մտորումները:

... սեվ
Սովերները կտրեցին ճամփին
Աշխույժ ճամփորդներին,
Օյ սովերներ, սև սովերներ,
Ում հետևից դուք չեք հասել,
Ումից դուք չեք առաջ անցել,
Միմիայն ձեզ, սև սովերներ,
Ոչ կը բռնես, ոչ կը գրկես...

(Նեկրասով, հայ. թարգմ., էջ 197—198)

Նշելով Ռուսիայում ապրող աշխատավորների խիստ ծանր վիճակը, բանաստեղծը կերտում է ցայտուն պատկերներ, որոնք ժողովրդական երգերին հատուկ ինտենսիվա ունեն և մերկացնում են անիրավ հին կարգերի էությունը: Երբ «երջանիկ» մարդկանց որոնող գեղջուկները մտնում են մի գլուղ, նրանք յուրա՛հեն իր դառն վիճակը նկարագրող գեղջուկուհու տխուր երգը: Բանաստեղ-

ծր բավական մանրամասն կանգ է առնում կանանց կացութիւնը վրա: Երիտա-
սարդ, ինչպես և ծեր կանանց տխուր դիմաստվերները կարծես ավելի խտա-
ցած գույներով են ցուցադրում անվի ու մահվան դեմ մաքառող շքավոր գյու-
ղացիների ծանր վիճակը: Շատ մուսլ է մանավանդ պոեմի շորրորդ մասի ընդ-
հանուր կողմերը: Նեկրասովը հատկապես այդ մասը գրել է իր կյանքի ամե-
նածանր տարիներին: Ցարական գրաքննութիւնը՝ ինչպես հայտնի է, առա-
ջարկել էր խմբագիր Կրանսկուն ժուռնալի միջից հանել նեկրասովյան պոեմի
այդ մասի տպագրված էջերը: Հատուկ գեկույցի մեջ գրաքննիչը նշել էր, ի միջի
այլոց, որ նեկրասովյան նեկրները շափազանց մուսլ են. գյուղացու վիճակը
հուսահատական գույներով է նկարված. պոեմը շիկների վարքագիծը այնպես է
ցուցադրված, որ շի կարող շատեղծել «գայրույթ և թշնամանք երկու դասա-
կարգերի միջև»: Հետագայում, երբ տպագրութիւն է հանձնվում պոեմի եր-
գերի ժողովածուն, շեշտված մասը ինչպես հաստատել է Չուկովսկին, տպա-
գրվել էր նկատելի աղավաղումներով: Չեռագրի մեջ, օրինակ, բավական որո-
շակի նշվել է ցարը, որպես մանուկներին և աղջիկներին զավթող բռնակալ:
Ցարից հետո նեկրասովը հիշատակել է պոմեշիկին դիտավորութիւնը՝ ձգտե-
լով ընդգծել ցարի և «պարոնի» կապը: Պոեմի շորրորդ հատվածի մեջ մենք
տեսնում ենք անցյալի գաղափարական գործի դեմքը: Ժողովրդի ազատու-
թիւնը դատը պաշտպանող այդ գործիչը, համակված անսպառ եռանդով, ուսում-
նասիրում է ժողովրդի կյանքը և դատափետում իշխող կարգերը, միշտ երազե-
լով գալիք լուսավոր օրերի մասին: Այդտեղ է նեկրասովը աննախընթաց ուժով
նեկրող ձոնում հզոր և անուժ մայր Թուսիային և կոչ անում փարել «ժողովրդ-
րական ուժին, հզոր ուժին»...

Ты и убогая,
Ты и обильная,
Ты и могучая,
Ты и бессильная,
Магушка—Русь.
Сила народная,
Сила могучая,
Совесть спокойная,
Правда живучая...

Այսօր այլևս ոչ մեկի մտքով չի անցնի արձագանքել հնօրյա այն էսթետ-
րենադատներին, որոնք դատափետում էին «վշտի և վրեժի» մոտիվներն ար-
ծարժող պոեմի «պարլիցիստական» բանաստեղծութիւնները: Սովետական
ոուս նորագույն նեկրասովագետների և առաջին հերթին Չուկովսկու մեծա-
զույն արժանիքներից մեկն այն է, որ նա մերկացրել է նեկրասովի երգերի ու
պոեմների գեղարվեստական արժեքը թերագնահատող բողոք բանասերների

և քննադատների հայեցութիւն միակողմանիութիւնը և հակադիտական լու-
սարանութիւնը: Համենայն դեպս այսօր շենք կարող սահմանափակվել սոսկ
մեծ պոեմի ստեղծագործութիւնների գիտական-գեղարվեստական քննու-
թիւնը: Խնդիրը նրանումն է, որ նեկրասովը իր ժամանակաշրջանի կոնկրետ
իրականութիւնը հիմնական հատկանիշներն այնքան լավ է արտացոլել, որ
կարող է այսօր համարվել անցյալի մթին կուլմերը բնութագրող ճշմարտախոս
վկա: Նրա երգերը ոչ միայն գեղարվեստական, այլ նաև պատմական վավե-
րագրեր են: Այդ հանգամանքը մենք երբեք չենք կարող անուշադրութիւն
մատնել:

...Մեր մեծ հայրենիքի լայն սահմաններում հսկայական հեղաշրջում է
կատարվել, այնքան մեծ հեղաշրջում, որ այսօր հին օրերի դաժան աւօրյայի
պատկերները արտասովոր տպավորութիւն են թողնում: Մուսլ այդ անցյալի
հին քաղաքների ու գյուղերի, մահացու աշխատավորների մասին հրապարակ-
վել են բազմաթիվ վիճակագրական և տնտեսագիտական հետազոտութիւններ:
Սակայն գիտական այդ աշխատութիւնները հաճախ անմատչելի են և չեն
կարող դուրսբերել լինել շարքային ընթերցողների համար: Այնինչ նորից
ու նորից արձանագրել դաժան անցյալի դաժան էութիւնը, երբեք վատ չէր
լինի: Այսօրվա բանվորների և կուլխոզնիկների ներկայացուցիչները պետք է
միշտ ուսումնասիրեն անցյալի պատմութիւնը: Ահա ինչու շատ օգտակար
կլինեք բացատրել, թե ի՞նչ բան է նագայկան կամ շախրատներ, էտայն ու
կատորգան, կանդալները կամ կարցերը, ժանդարմը կամ ախրանկան... Երբեք
բառարանները չեն կարող լիովին պարզել հնօրյա այդ «տերմինների» նշա-
նակութիւնը... Այսօրվա ընթերցողներին օգնութիւն կարող են հասցնել
նեկրասովի նման բանաստեղծները: Շատ անկեղծ, տխուր և միշտ ճշմարտա-
խոս, խոհուն և ցասումնալից նեկրասովը նույնիսկ հակիրճ արձանագրու-
թիւնների բնույթ կրող տողերի մեջ գծագրել է շատ ցնցող դեպքեր և փաս-
տեր...

Չումա և մահ. ահա «սիմվոլներ», որոնք մեծ բանաստեղծի երգերում
ուրույն երանգ են հաղորդում կյանքի նկարագրութիւնը նվիրված տողերին:

...Մահն է իշխում ձմռան օրերին մեծ քաղաքի հեռավոր թաղամասերում
և խուլ փողոցներում, շքավորների մուսլ կացարաններում և մթին նկուղնե-
րում: Ավելի հաճախ ձմռան օրերին բանաստեղծը միայն մի ուրվական է տես-
նում, — և դա մահն է: Հնօրյա ձմռան «պայն» էլ քննարկվում է որպես մահ-
վան ավետարներ: — «Հեռացիր, հեռացիր» գոչում են շքավոր աշխատավորները
հեքիաթներում երգված «Գեղուշկա Մորոզին»: Երկաթուղու ուղիների տակ,
ամայի դաշտերում ու ճահճներում, սառցե պատյանից ազատվել գետերի
մեջ նշմարվում են աշխատավորների դիակները: Բանաստեղծի անսահման
վիշտը, տխուր տողերը, բռնակալ-տիրակալների հասցեին ուղղված ցասումն

ու անեծքները, նորից և նորից ցույց են տալիս, որ տազանդավոր արվեստագետ Վենեցիանովի կտավների վրա նկարված հնօրյա «պեյզաճներ» իրական կյանքը շատ և շատ ծանր է եղել:

Նեկրասովը անշափ մեծ սիրով էր նկարում հայրենի բնության տեսարանները: Ինտիմ զգացումով է նշում թարմ խոտի բույրը և անծայր դաշտերի հմայիչ գեղեցկությունը: Բայց նրա բանաստեղծություններում նույնիսկ բնանկարները համակված են տխուր երանգներով: Չուկովսկին իր սուր դիտողությունների մեջ շատ լավ է արձանագրել այդ պահը: «Երկաթուղին» պոեմը Նեկրասովը գրել էր այն օրերին, երբ ռուս իրականության մեջ սկսվել էր հետադարձ շարժումը: Տխուր է պոեմի կոլորիտը: Այն, ինչպես Չուկովսկին է նշում, հնչում է ինչպես ողբի մելոդիա: Փորում են հողը աշխատավորները և իրենց զանգատով լեցուն երգը երգում:

Грабили нас грамотей-десятники,
Секло начальство, давила нужда...
Все претерпели мы, божьи ратники,
Мирные дети труда.

Братья. Вы наши плоды пожинаете
Нам же в земле истлевать суждено
Все ли нас, бедных добром поминаете
Или забыли давно...

Հիրավի, նեկրասովյան պոեմում սկզբից մինչև վերջ հնչում է տառապող աշխատավորների ձայնը — «զգացվում է նեկրասովյան հանճարեղ ողբը...»

А по бокам-то все косточки русские...
Сколько их, Ванечка, знаешь ли ты.

Նեկրասովյան բանաստեղծություններում կան ֆրագմենտներ, որոնք արտասովոր գույներով են բնութագրում թե՛ մահացող գյուղերի մոռյլ նկարը և թե՛ անսահման տխրությանը համակված պոեմի հույզերը: Բնանկարն էլ այդօրինակ բանաստեղծություններում դառնում է անշափ մոռյլ: Գյուղացիների դառնագին ողբը հնչում է այնքան տխուր, որ նկարն էլ դառնում է անիծյալ հին աշխարհի սև տիրակալների դեմ ուղղված անեծք և բողոք...

Холодно, голодно в нашем селении
Утро печальное—сырость, туман
Колокол глухо гудит в отдалении...

Մոռյլ այդ բնանկարը, իհարկե, զուրկ էր կերտանի մելամաղձիկ նկարներին հատուկ գեղարվեստական-նվագային կոլորիտից: Անսահման վշտի

ու դառնագին կսկիծի ուժգին շեշտն առանձին գունավորում է հաղորդում նեկրասովյան թե՛ արտահայտիչ բնանկարներին և թե՛ միշտ ինքնատիպ ժանրային նկարներին: Երբեք նա չի կարողանում մոռանալ շրջապատի մարդկանց կենդանի և միևնույն ժամանակ տառապող, մահվան անդունդի մոտ կանգնած աշխատավորներին: Որքան շատ են երգվել ձմռան օրերը, ձյունածածկ ուղիները և շատ հեռու տարածությունից լավեղ զանգակների հնչյունները: Նեկրասովն էլ ունի այդպիսի մի բանաստեղծություն: Սակայն նրա այդ բանաստեղծությունն էլ շատ ուշագրավ է և նկատելի չափով տարբերվում է հեռու ուղին և «տրոյկան» նկարող երգերի խոսքերից: Նեկրասովի բանաստեղծության մեջ էլ սահնակը վազում է առաջ, բայց այդ վազքի ժամանակ բանաստեղծը նշմարում է միմիայն տխուր սովերներ և հիշատակում միայն այն, որ սահնակի ուղին հարթել են ղեպի հեռու արտորավայրերը ուղևորվող արտորականներին՝ համբավավոր վյադիմիրյան քայլող ուղիով տաժանակիր արտորականներին: Ռուս ժողովրդի առաջավոր ներկայացուցիչներին շատ լավ էր հայտնի Մոսկվայից ղեպի սիրիլյան հեռու արտորավայրերը տանող այդ ուղին...

Бледные тени, ужасные тени.
Злоба, безумье, любовь..
Едем мы, братец, в крови по колени,
«Полно,—тут пыль, а не кровь...»

Շատ հեղինակներ են երգել ուղի-ճանապարհը, առույգ կամ տխուր յամբը շիկին և տրագիցիոն ռուսական «տրոյկա»—սահնակը: Անշափ բնորոշ է այն, որ միմիայն նեկրասովն է հանրահայտ ու սիրելի թեման արժարժել այնքան յուրահատուկ ձևով, որպես բնապետության դեմ ուղղված սուր պատկեր: Այդպիսին էր արդեն հեղափոխական դեմոկրատների պատգամախոսի խառնրվածքը և հոգեկան տիպարը: Երբ այսօր նորից թերթում ենք նեկրասովի տասներկու հատորներում ամփոփված զանազան գրությունները, նախնական աշխատությունները, արձակ երկերը, պետերբուրգյան հին խորշերի շրջապատ բնակիչների կյանքը նկարող ակնարկները և մեծ քաղաքի բնակիչներին բնութագրող վեպերն ու պատմվածքները, ողբով լեցուն և վրեժի ու բողոքի մոտիվներն արժարժող բանաստեղծություններն ու պոեմները, մատենագրական տեսություններն ու բազմաթիվ նամակները, մենք տեսնում ենք հանճարեղ պոետի դեզերումները կամ վարանումները: Բայց իր բոլոր հակասական քայլերով հանդերձ, Նեկրասովը միակն է ռուս ականավոր կլասիկների շարքերում, համայն ռուս գրականության պանթեոնի մեջ, ու կարողացել է ոչ միայն վառ գույներով նկարագրել գյուղացի ժողովրդի տխուր անցյալի սոսկալի առօրյան, այլև անսահման թափով ու տեմպերամենտով արտահայտել թե՛ ժողո-

վրդի տրամադրությունները և թե՛ նրա առաջավոր ներկայացուցիչների բողոքը իշխող կարգերի դեմ:

Ամենևին պատահական չի կարելի համարել նեկրասովյան երգերի մեջ ժողովրդի ազատության համար մարտնչող գործիչների բնութագրմանը նվիրված երգերը: Այդպիսի ստեղծագործություններ են Դորբուլյուբովի, Չերնիշևսկու, Տարաս Շևչենկոյի հիշատակին նվիրված բանաստեղծությունները: Մի շարք երգերում նշանակալից են առանձնապես ժողովրդի ազատության համար մարտնչող ըմբոստ գործիչների մեծարմանը նվիրված տողերն ու ակնարկները: Այդօրինակ էրգերի մեջ աչքի է ընկնում այն բանաստեղծությունը, որ նեկրասովը նվիրել է հեղափոխական գործիչների հիշատակին՝ առանց այդ գործիչների անունները տալու: Տարիներ շարունակ ուսա բանասերների շարքերում իշխում էր այն կարծիքը, թե նեկրասովը ժամանակին նկատի է ունեցել «նաբոգնայա վոլյա» կուսակցության ղեկավար գործիչներին: Վերջերս հրատարակված «Գրական ժառանգության» մի հատորում բավական համոզիչ նշվել է հիմնավորվել էր այն դրույթը, որ այդ բանաստեղծությունը նվիրված է եղել «Փարիզյան Կոմունայի» հերոսների հիշատակին և միմիայն գրաքննիչներին խաբելու համար է ընտրվել յուրահատուկ այլաբանական-քողարկված ոճ:

Նեկրասովյան բանաստեղծություններում ուրույն տեղ է գրավում հեղափոխական գործիչների հիշատակին նվիրված «Ռուսական կանայք» վերնադրով այն պոեմը, որ գրվել է ղեկաբերիտների կանանց մասին: Այդ պոեմը զգալի չափով տարբերվում է բանաստեղծի բոլոր մյուս բանաստեղծություններից: Այդտեղ չկան արտասովոր մետաֆորներ կամ գունեղ պատկերներ: Նեկրասովը մեծ նշանակություն է տալիս այդ աշխատությանը: Պոեմը մեծ տպավորություն է թողնում ընթերցողների վրա հենց նրա համար, որ մեկնաբանվում է որպես ժողովրդի ազատության համար մարտնչող ազնվական-հեղափոխականների մեծարմանը նվիրված գործ: Հայտնի է, որ ցար Նիկոլայ Պալկինը և այդ ցարի մոտիկ սպասավորները ամեն կերպ ջանացել են իրենց աքսորական ամուսինների մոտ ուղևորվող կանանց սարսափեցնել: Գեկաբերիտների կանանց ուղևորությունը քննարկվում էր որպես ցար Նիկոլայի դեմ ուղղված դեմոնստրացիա: Այդ կանայք հայտնի դեմքեր էին մայրաքաղաքի բարձր ազնվականների շրջանում: Նրանց նախազգուշացրել էին, որ իրենք զրկվելու են ունեցվածքից և Սիբիրում ապրելու են ծանրագույն պայմաններում: Այդ հայտարարությունը անհրաժեշտ ազդեցություն չի գործում: Յարական պաշտոնյաները ստիպված են լինում ուրիշ միջոցներ գործադրել: Հանդես են գալիս ղեկաբերիտների կանանց մոտիկ ազգականները, հայրերն ու եղբայրները, բոլորն ուրիշ ճիգ են անում սարսափեցնել ըմբոստ կանանց: Գարձյալ կանայք մնում են խիզախ և անընկճելի: Կառավարության համհարգները մշակում են առանձին միջոցներ, ծանր ճանապարհորդությունը ավելի

ծանր դարձնելու համար: Մի քանի իջևաններում վերակացուները հրաժարվում են կատարել նրանց ամենատարրական պահանջները: Իրկուտսկ քաղաքում ղեկաբերիտների կանանց հայտարարում են, որ նրանք պարտավոր են ստորագրել կառավարական հատուկ հայտարարությունը: Նրանում ասված էր, որ Սիբիր ուղևորվող կանայք պետք է դառնան մշտական աքսորականներ, իսկ նրանց զավակներն էլ պետք է գրանցվեն որպես գործարանային գյուղացիներ:

Ոչ մի սպառնալիք չի հուսահատեցնում ղեկաբերիտների կանանց: Նրանք Սիբիր են նետվում՝ համակված ջերմագին զգացումով և տրամադրությամբ: Սիբիրում են մեռնում Մուրավևան, Իվաշևան, Տրուբեցկայան: Նրանք, որոնց հետագայում, տարիներ հետո «ազատություն» է շնորհվում, հայրենիք են վերադառնում արդեն ծերացած... Այդ ուղևորությունը ցնցող տպավորություն է թողնում մայրաքաղաքի մտավորականների վրա: Երբ իշխանուհի Վոլկոնսկայան պատրաստվում էր Սիբիր ուղևորվել, նրա բարեկամները Մոսկվայում կազմակերպում են հրաժեշտի երեկո, ուր ներկա են լինում Պուշկինը և Վենևիտինովը: Երեկոյթին հանդես են գալիս դերասանական լավագույն ուժերը, որոնք Վոլկոնսկայային պատվելու համար ընտրում ու երգում են ղեկաբերիտական հատուկ ֆրագմենտներ: Դա արդեն յուրատեսակ մի ցույց էր՝ ընդդեմ կառավարության: Այդտեղ էլ հենց Պուշկինը գրում է ղեկաբերիտներին ուղղած իր շերմ ուղերձը: Այդ նամակ-բանաստեղծությունը ստանում են աքսորական ղեկաբերիտները: Պուշկինին ղեկաբերիտների անունից պատասխան է ուղարկում աքսորական ղեկաբերիտ Օդոևսկին: Այդ պատասխանը հետագայում հրատարակել է իր մեմուարների մեջ Վոլկոնսկայան:

Наш скорбный труд не пропадет
Из искры возгорится пламя,
И просвещенный наш народ
Сберется под святое знамя...

Одоевский

Պուշկինի երգ-ուղերձը և Օդոևսկու պատասխան-ուղերձը ցույց են տալիս, որ Նիկոլայևյան ղեկաբերիտների դաժան օրերին ղեկաբերիտների կանանց սիբիրյան ուղևորությունը շատ մեծ տպավորություն է թողել ուսա առաջավոր հասարակության վրա: Սիբիր ուղևորվող խիզախ կանանցից միմիայն չորսն էին ավելի տարիքավոր: Նրանք մտավորապես 43 տարեկան էին: Մնացած բոլոր կանայք երիտասարդ էին: Վոլկոնսկայան 21 տարեկան էր, Իվաշևան՝ 23, երեքը՝ 23, իսկ չորսը՝ 25—27 տարեկան: Աննենկովան (Պոլինա Գերլ) և Իվաշևան (Լե-Գանտյու) ֆրանսուհիներ էին: Իշխանուհի Տրուբեցկայայի հայրը նույնպես ֆրանսիացի էր: Յոթ հազար վերջտի հասնող տարածություն էր անհրաժեշտ կտրել-անցնել հին օրերի փոխադրական պրիմիտիվ միջոցներով: Սիբիրյան սառնամանիքը, բուքն ու բորանը, ցարական ոստիկանների դիրքը,

անսովոր պայմանները հեռավոր այդ ուղին դարձնում էին ավելի սոսկալի և ծանր:

Նեկրասովը մանրամասն ուսումնասիրում է պատմական կարևորագույն աղբյուրները և առանձնապես ղեկաբերիստների մեծուարները: Սկզբում նա ծրագրում է ընտրել «Գեկաբերիստուհիներ» վերնագիրը: Պոեմը ավարտվել է 1872-ին: Գրական շրջաններին, սակայն, «Ռուսական կանայք» պոեմը հայտնի է դառնում 1873-ին: Ռեակցիայի ներկայացուցիչները մեծ ատելությամբ նետվում են պոեմի դեմ: Չնայած դրան, շատ շուտ նեկրասովյան պոեմը յայն ժողովրդականություն է ստանում: Պոեմի իրական փմաստը պարզ էր առաջավոր երիտասարդության համար: Նկարագրելով «աղնվական հեղափոխականների»՝ ղեկաբերիստների կանանց, նեկրասովը մեծարում էր միաժամանակ ուս հեղափոխական կանանց ու կովի էլնում ցարական բռնակալության դեմ: Ճարական գրաքննիչների համար այդ ամենը, իհարկե, պարզ էր և ակնհայտ:

Նեկրասովը այս անգամ էլ այնպիսի նուրբ «գիվանագիտական» ոճ էր ընտրել, որ նրա ամենամոռեցիկ թշնամիներն անգամ նրանում չէին կարող գտնել վարկաբեկիչ տողեր կամ դատապարտություն: Համար անհրաժեշտ «կասկածելի» ֆրագմենտներ:

Պոեմում պարզ էր ամեն ինչ: Նկարագրվում էին հայտնի դեպքեր: Մտնելի և դիպուկ էր ոճը: Ավելուող զարգանկարներ չկային: Ակներև էր այնուամենայնիվ, որ, ջանալով քողարկել իր մտորումները, պոետը չի կարողանում մնալ սառնարյուն և համակերպվել օրվա լեզալ «էտիկետին» ու ոճին: Նեկրասովի երկերի նոր հրատարակությանը կցված ծանոթագրությունների մեջ կան նշանակալից տեղեկություններ պոեմի առանձին հատվածների կամ տողերի նախնական վարիանտների, սեպիր էսքիզների կամ ձեռագրերի մասին: Կոմենտարների մեջ նշված են, ի միջի այլոց, գրաքննիչների կարգադրությամբ հանված կամ պոետի որոշմամբ ծրագրված նախնական տարբերակները:

Да, цепи, палач не забыл ничего
(О мстительный трус и мучитель),
Но кроток он был, как избравший его
Орудьем своим иекушитель...

«Русские женщины»

Անհրաժեշտ է ասել, որ նույնիսկ «լեզալ» պոեմը այնպես էր կառուցված, որ առանց բացատրությունների, ընթերցողների վրա մեծ տպավորություն էր թողնում: Նեկրասովը նրբին կերպով մոտենալով թեմային, նկարագրում է սիբիրյան ուղին, հեռավոր ճանապարհի էպիզոդները, բնորոշ դեպքերը և քաղա, աստիճանաբար, գույները խտացնելով անցնում է արտրավայրի նկարագրությանը: Պոեմի վերջին հատվածները, առանձնապես

այն մասը, ուր նկարագրված են արտրականները, մոայլ հանքահորերը, ստորերկրյա սրահը և մուլի մեջ նշմարվող լայտերը՝ մեծ տպավորություն են թողնում: Այստեղ գուցե և կան որոշ լափով ղեկորատիվ մոմենտներ և «հորինված» տողեր: Տպավորիչ է հատկապես այն տեսարանը, ուր զգված է Վոլկոնսկայայի տխուր հանդիպումը ամուսնու հետ, երբ խոսվում է շղթաների կամ հանքախորշի խորքերից եկող արտրականի մասին: Վոլկոնսկայան առաջ է նետվում և համբուրում իր արտրական-ամուսնու «սուրբ շղթաները»: Դրամատիկ այդ տեսարանը ավելի ցայտունորեն է մերկացնում պոեմի հեղափոխական-ռոմանտիկական բնույթը: Այդպիսի ռոմանտիկական հարազատ էր 70-ական թվականների ղեմոկրատական մտավորականության զգացումներին և մտորումներին: Այսօր էլ պոեմը ցնցող տպավորություն է թողնում: Այլ տոնով է գրված նեկրասովի «Պապը» բանաստեղծությունը: Առաջին պահ այդ գործը որոշ տարակուսանք կարող է առաջ բերել: Մենք այդտեղ տեսնում ենք ղեկաբերիստ Վոլկոնսկուն, բայց այս անգամ արտրական-ղեկաբերիստ «ամեն ինչի հետ» հաշտվել է և կարծես խաղաղ մի քաղաքացի է:

Նեկրասովի այդ գործին կցված բովանդակալից իր ծանոթագրությունների մեջ Չուկովսկին ասում է, որ բանաստեղծը այդպես է նկարագրել Վոլկոնսկուն, ղեկավարվելով գրաքննության պահանջով և թելադրանքով: Բանաստեղծության սկզբնական բնագրում Վոլկոնսկին բնութագրվել էր որպես ըմբոստ հեղափոխական: Նեկրասովի այդ բանաստեղծության սեպիր տարբերակը գտնվում է լենինգրագում՝ Սալտիկով-Շչեգրինի անվան Հանրային գրադարանում: Ահա հենց այդտեղ՝ նախնական ձեռագրի մեջ Վոլկոնսկին սիբիրյան արտրավայրից վերադառնալուց հետո ասում է հետևյալ ուշագրավ խոսքերը.

Взрослые люди—не дети,
Трус кто сторицей не мстит,
Помни, что нету на свете
Неотразимых обид...

Այդ խոսքերը շատ պարզորոշ են: Վոլկոնսկին ամենին չի հաշտվել: Նա համակված է շատ որոշ տրամադրությամբ: Նա պարզապես խոսում է վրեժի կարևորության և անհրաժեշտության մասին: Ես կանգ չեմ առնում նման շատ ուրիշ այն նմուշների վրա, որոնք, առանձին փայլ հաղորդելով նեկրասովյան նոր հրատարակությանը կցված բովանդակալից ծանոթագրություններին, և՛ բանասերներին, և՛ ընթերցողներին հնարավորություն են տալիս ընդհուպ մոտենալ նեկրասովյան ստեղծագործական լաբորատորիայի ուսումնասիրությանը:

Սովետական բանասերները, առաջին հերթին Չոսկովսկին, լիովին պարզել ու հաստատել են նաև մի ուրիշ անառարկելի և անշափ կարևոր փաստ: Եթե նախահեղափոխական տարիներին ռուս բանասերների ճնշող մեծամասնությունը, ծանրանալով նեկրասովյան պոեզիայի միայն տխուր մոտիվների վրա, հաճախ տեսնում էր միայն տխուր երգերի հեղինակին, ապա այսօր, շնորհիվ սովետական բանասերների գիտական պրպտումների, տեքստոլոգիական ուսումնասիրությունների, վերջապես նեկրասովյան տեքստերի նոր հրատարակության, մենք շատ որոշակի նշմարում ենք հեղափոխական մտածողի, ըմբոստ պոետի, դեպի լուսավոր հեռուները նետվող խիզախ գործչի դեմքը: Այդ դեմքն ենք նշմարում մենք Վոլգային նվիրված հայտնի տոգերի մեջ: Նույն այդ դիմաստվերն է գծվում նաև հայրենի Ռուսիային նվիրված այն տողերում, որ ժամանակին նշել է Լենինը: «Կգան, կգան ուրիշ օրեր, ուրիշ երգեր կը ստեղծվեն»³, — ասում էր նեկրասովը և ապա նշում, որ նոր զվարթ երգերը կբարձրացնեն ժողովրդի տրամադրությունը:

Ամենևին պատահական չէ, որ իր մի բանաստեղծության մեջ նեկրասովը արտասովոր զգացումով նկարագրում էր հեռու ապագայի լուսավոր օրերը.

Увы я дожил до седин,
Но изменился мало.
Иных времен, иных картин
Провижу я начало.

В случайной жизни берегов
Моей реки любимой
Освобожденный от оков
Народ неутомимый.

Созреет, густо заселит
Прибрежные пустыни.
Наука воды углубит
По гладкой их равнине.

Суда гиганты побегут
Несчетною волною
И будет вечен бодрый труд
Над вечною рекою...⁴.

Շատ և շատ առաջ է գրել ժողովրդական մեծ բանաստեղծը իր մարգարեական այդ տողերը.

³ Некрасов, Полное собрание сочинений, т. III, стр. 546.

⁴ Там же, т. II, стр. 384.

... Շատ և շատ բան է փոխվել նեկրասովի մեծ հայրենիքում: Կատարվել է շատ ավելի բան, քան երազում էր նա: Քանզվել ու ջախջախվել է հիմնովին պոմեչչիկների և կապիտալիստների անիրավ ու անիծյալ հին աշխարհը: Յարական դեպպոտիայի փլատակների վրա ստեղծվել է Սովետների Սոցիալիստական Հանրապետությունների ամրակուռ և պողպատե հզոր պետությունը՝ Սովետական մեծ Միությունը:

Միլիոններն են կառավարում այժմ իրենց ներկայացուցիչների միջոցով՝ քաղաքներում, գյուղերում, ավաններում: Այժմ միլիոնավոր ընթերցողներ մի քանի տասնյակ լեզուներով կարդում են Պուշկինի և նեկրասովի երգերը: Նրանց կարդում են Արկտիկայի սառցապատ անապատներում կառուցված իջևաններում: Կարդում են նեկրասովին նաև սառցե տունդրաների էսկիմոսները և լեռնային հեռու աուլների հովիվները: Շատ ուշագիր, ակտիվ ընթերցողներ են այդ նոր գրասեր աշխատավորները: Նրանք չեն կարող արձագանքել սիրելի բանաստեղծի ներհակ քայլերին ու հակասական մտորումներին: Չեն կարող հաշտվել նաև մեծ պոետի երգերի մեջ հնչող տխուր մոտիվների հետ: Սակայն այդ նոր ընթերցողները մեծագույն սիրով են կարդում անգամ այսօր հեռու պապերի ծանր կյանքն ու անսահման տառապանքը նկարագրող տխուր երգչի տխուր երգերը: Նեկրասովի բանաստեղծությունները և պոեմներն այսօրվա ընթերցողներին հիշեցնում են և նորից ընդգծում հեղափոխական զանգվածների հերոսական շանքերով կերտված նոր առօրյայի և նոր լուսավոր օրերի պայծառ գեղեցկությունը...

ԱՆՏՈՆ ՉԵՆՈՎ

Ա. Պ. Չեխովն իր գեղարվեստական ստեղծագործությունների մեջ պատկերել է 80—90-ական թվականների ռուսական իրականության հատկանշական երևույթները և առօրյան: Ռեալիստ և ճշմարտախոս նկարչին ու շատ նրբանկատ հոգեբանին հատուկ ուշադրությամբ է կերտել նա առանձնապես հայրենի ժողովրդի տարբեր ներկայացուցիչների կենդանի կերպարները՝ միշտ շանալով ցուցադրել աշխատավոր խավերի անշափ ծանր կացությունը: Պաշտպանելով առաջավոր արվեստի, գիտության, գրականության հումանիստական տրադիցիաները, նա խորապես համոզված էր, որ կուլտուրական շինարարությունն այն ամենագոր ազդակն է, որի ուժին էլ պիտի ապավինեն ժողովրդի բոլոր առաջավոր ներկայացուցիչները:

«...Սիրում եմ իմ հայրենիքը, ժողովուրդը, զգում եմ, որ եթե գրող եմ, ապա պարտավոր եմ խոսել ժողովրդի մասին, գիտության, մարդու իրավունքների մասին...»: Չեխովը ինքն էլ հետևում էր իր հերոսներից մեկի այդ պատգամ-

ներին, երբ կերտում էր գորշ ու դաժան իրականության անալիտական իր պատկերները և երբ մերկացնում էր բնության և շահագործման վրա խաբսխված հին կարգերի նեխվածությունը: Նա դատասիտելով հին աշխարհի գաղափարախոսներին, ուժգին հարվածներ էր ուղղում ցարական ու կապիտալիստական կարգերի բոլոր պաշտպաններին և իր գեղարվեստական երկերով ձայնակցում էր հերոսական մարտեր մղող հեղափոխական զանգվածների ազատագրական մեծ հորձանքին...

1

Անտոն Պավլովիչ Չեխովը ծնվել է 1860 թ. հունվարի 17-ին, Հարավային Ռուսիայի ծովափնյա Տագանրոգ քաղաքում: Տագանրոգը գտնվում էր Ռոստով և Նախիջևան քաղաքներից ոչ այնքան հեռու և 70—80-ական թվականներին արդեն սկսում էր խամրել՝ արդյունաբերական Ռոստովի տեսեսական աննախընթաց զարգացման հետևանքով: Ի միջի այլոց, այդ փաստն արձանագրել է Չեխովն «Իմ կյանքը» ինքնակենսագրական իր հայտնի վիպակում:

Նկարագրելով վաղեմի առևտրական մեծ քաղաքի տաղտուկ իրականությունը, ամառի փողոցներն ու քաղաքային այգին, քաղքենի բնակիչների միօրինակ առօրյան, Չեխովը բնութագրում է թե՛ իր հերոսների հոգեկան ապրումները և թե՛ միաժամանակ ցուցադրում մարդ ու մահացող քաղաքի պատկերը...

Մանկության և պատանեկության հուշերի հետ էր կապված Չեխովի սերը դեպի Տագանրոգի և Դոնի ափերին տարածված լայնարձակ ոռոսական դաշտերը:

Չեխովի հայրը ճորտ գյուղացու դավակ էր: Տագանրոգում Պավել Չեխովը հայտնի էր որպես կրոնական-պահպանողական ավանդներին հավատարիմ քաղքենի-առևտրական: Խստիվ հետևելով իր ընտանիքի անդամների բոլոր քայլերին, Պավել Չեխովը կիրառում էր դաստիարակչական ամենավարաց մեթոդները: Նա իր որդիներին պարտադրում էր հաճախել եկեղեցի և ճշտությամբ կատարել կրոնական բոլոր ծիսակատարությունները, ինչպես նաև ստիպում էր նրանց կատարել խանութի գործակատարի պարտականությունները: Կինում էին օրեր, երբ նա, գայրույթով համակված, ծեծում էր իր կարգադրությունները խախտող որդիներին: «...Իմ մանկությունը, — գրում է Չեխովը, — տառապանք էր...»: Մանկության այդ ծանր տարիներից էլ սկսվում է Չեխովի այնքան յուրահատուկ և բացահայտ առեւտրությունը քարացած տրագիցիկաների և մանավանդ խոր առեւտրությունը կրոնի ու եկեղեցու նկատմամբ:

Տագանրոգի տնտեսական անկման տարիներին Չեխովի հայրը անանկունում է ու իր պարտատերերից ազատվելու համար ստիպված է լինում նոր կա-

յան որոնել Մոսկվայում: Նրա հետ միասին Մոսկվա են ուղևորվում ընտանիքի բոլոր անդամները: Տագանրոգում մնում է միմիայն Ա. Չեխովը: Այժմ նա պետք է ինքը հոգար օրվա պարենի և իր կյանքի ապահովության մասին: Միաժամանակ նա պետք է շարունակեր ուսումը Տագանրոգի գիմնազիայում: Դա արագիցիոն միջնակարգ դպրոցներից տարբերվում էր նրանով, որ կլասիկական գիմնազիոն էր: Այդտեղ պարտադիր կարգով դասավանդվում էին հին հունարենն ու հին լատիներենը: Ցարական կառավարությունը դիտավորություն էր ստեղծել կլասիկական գիմնազիաները: Ենթադրվում էր, որ օր ու զիշեր հունարենն ու լատիներենն անգիր անող աշակերտները ոչ ժամանակ և ոչ էլ հնարավորություն կուենան կարդալու «անբարեհույս» ուսուցիչների գրքերը կամ գաղափարական կապեր հաստատելու «փտանգավոր» գաղափարներ տարածող հակապետական գործիչների հետ: Տագանրոգի գիմնազիան բավական բարձր էր գնահատվել լուսավորության մինիստր Տոլստոյի կողմից, որպես կառավարության քաղաքականության սկզբունքները ճշգրիտ կերպով կիրառող աեակցիոն դպրոց: Գիմնազիայի ուսուցիչների մեծամասնությունը կազմում էին միևնույն այդ սկզբունքներին հետևող սգետ և վայրագ «մանկավարժները»: Տարիներ հետո, երբ Չեխովը վաղուց թողել էր հայրագ «մանկավարժները», Տագանրոգի գիմնազիայի այդ ուսուցիչները սև ստվերներին նման կոշմարային հուշեր էին արթնացնում նրա հիշողության մեջ: Թե՛ որքան մեծ և ծանր տպավորություն էին թողել պատանեկան մտայն հուշերը, ցույց է տալիս Չեխովը «Պատյանավոր մարդը» հայտնի պատմվածքի մեջ կերտված ուսուցչի մոռյլ կերպարը: Նախահեղափոխական տարիներին այդ կերպարը սովորաբար քննարկվում էր շատ ուրույն ասպեկտով, որպես սգետ և անհոգի սիմվոլիկ տիպար, և նույնիսկ նշվում էր աշակերտական ընդհատակյա կազմակերպությունների անյեգալ կոշերի մեջ:

Տագանրոգի գիմնազիայում Չեխովը սովորել է տասնմեկ տարի (1868—1879): Երբ Չեխովի ծնողները Մոսկվա են ուղևորվում, նա կամա-ակամա ստիպված է լինում դասեր տալ (1876—1879) և միաժամանակ շատ ավելի եռանդով սերտել միջնակարգ դպրոցում դասավանդվող առարկաները: Այդ մասին հիշատակություն կա Չեխովյան նամակների մեջ: Իր մոտ ընկերների շրջանում, տակավին այդ տարիներին, նա աչքի էր ընկնում արտասովոր ընթերցասիրտությամբ: Մոսկվայից նա ստանում էր «Մին Օտեչեստվա» պարբերագիրը, որտեղ երբեմն հաղորդումներ էին արվում բոլոր նշանակալից գրական նորությունների մասին: Չեխովն առանձին ուշադրությամբ էր հետևում այդ պարբերագրի էջերում հրատարակված այն տեսություններին, որոնք նվիրված էին արևմտյան և ուսնական կլասիկ գրականության ականավոր ներկայացուցիչներին: Տագանրոգի հանրային գրադարանում նա պարբերաբար կարգում էր ոչ միայն ուսուցիչների գործերը, այլև XIX դարի ուսուսու-

ջավոր լուսավորիչների, առանձնապես 40—60-ական թվականների հեղափոխական-դեմոկրատների (Բելինսկի, Գերցեն, Չերնիշևսկի, Դոբրոլյուբով, Պրսարև և մյուսների) աշխատությունները: Այդ տարիներին ուսանողների շրջաններում գրականությունն ավելի հաճախ քննվում էր գաղափարական դիրքերից, որպես ժողովրդի ինքնագիտակցությունն արթնացնող կարևորագույն գործոն, իսկ կուլտուրայի աշխատավորները՝ արվեստագետներ, գիտնականները, գրողները համարվում էին հումանիտական պատգամներ տարածող «սերմնացաններ...»:

Այդպես էր բնութագրում «սերմնացաններին» նեկրասովր, և նեկրասովյան պատգամներին արձագանքում էին Տագանրոգի դիմնագիտայի անգամ այն աշակերտները, որոնք կտրված էին հեղափոխական հոսանքներից և խմբակներից: Տագանրոգի թատրոնը շատ պրիմիտիվ էր և խղճուկ, սակայն նա, բեմագրելով Գրիբոեդովի («Նեյքից պատուհաս») կամ Լեբոմոնտովի («Դիմակահանգես»), Գոգոլի («Ամուսնություն», «Ռեկզոր») և Օստրովսկու գործերը, ընթերցասեր պատանիներին և աշակերտներին կապում էր արվեստի և գրականության առաջավոր ներկայացուցիչների հետ: Չեխովը աչքի էր ընկնում թատրոնի և երաժշտական երեկոների մշտական հաճախողների մեջ: Հաճախ նա ինքն էլ մասնակցում էր աշակերտական բեմադրություններին և նույնիսկ գրում ինքնատիպ պիեսներ: Գիմնագիտայի աշակերտները հրատարակում էին ձեռագիր ժուռնալներ: Թատրոնը, գրքերը, ինքնակրթությունը շատ ավելի մեծ շահով էին օժանդակում պատանի դիմնագիտների կրթական մակարդակի բարձրացմանը, քան պաշտոնական կուսիկական դիմնագիտի կոնսերվատիվ «մանկավարժները»...

Պատանեկության տարիներին Չեխովի սիրելի հեղինակներից է եղել Վիկտոր Հյուգոն: Բնորոշ է այն, որ ուշագրությամբ կարդալով ամերիկյան վիպագրուհի Բիշեր Ստոուի հայտնի վեպը, Չեխովը նկատել էր այդ վեպի քաղցրավուն շեշտն ու երանգները: Նա մշակել էր իր սեփական կոռաչափն ու դիտակետը: Շատ բարձր գնահատելով Շեքսպիրի արվեստը, 1876-ին իր եղբորը գրած նամակում խորհուրդ է տալիս նրան կարդալ Տուրգենևի հայտնի հողված-ակնարկը Շեքսպիրի և Սերվանտեսի մասին՝ ձայնակցելով տուրգենևյան մտորումներին: Չեխովի այդ նամակը արժեքավոր է հենց նրանով, որ բնութագրում է իր ժամանակի Տագանրոգի երիտասարդության հոգեկան ապրումները և գաղափարական որոնումների հիմնական գիծը...

Գիմնագիտական ավարտելուց հետո Չեխովը ուղևորվում է Մոսկվա՝ Պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում ուսանելու: Մոսկվայի համալսարանում ցարական կառավարությունը այդ տարիներին (1879—1884) ծանրագույն կարգեր էր ստեղծել: Համալսարանում աւտոնոմ պայմաններ էին ստեղծվել առանձնապես կառավարական շինությունների դերերը կատարող

ուսանողներին այն պրոֆեսորների համար, որոնք աշխատում էին ամեն կերպ խոչընդոտել գիտական առաջավոր մտքի զարգացմանը: Սակայն համալսարանը չէր կարող կտրվել շրջապատի կյանքից և իրականությունից: Երկրի ամենատարբեր վայրերից եկած դեմոկրատական ուսանողությունը շատ լավ տեղյակ էր իրադարձություններին: Կառավարության քաղաքականությունը և ուսանողության մեջ կուտակվող ընդդիմադրական տրամադրությունները և ստեղծել առանձնահատուկ մոտեցում հատկապես գիտության առաջավոր ներկայացուցիչների նկատմամբ: Մոսկվայի համալսարանում 80-ական թվականներին կային այնպիսի գիտնականներ (Տիմիրյազև, Օստրովսկով, Ալիֆասովսկի և ուրիշներ), որոնք մեծ համարում ունեին դեմոկրատական ուսանողության շրջանում:

Չեխովի մի շարք պատմվածքներում բավական որոշակիորեն լսվում են համալսարանական տարիների գաղափարական պայքարի արձագանքները: Չեխովի բոլոր այդ ակնարկների մեջ նշվում է ուսանողների գիտնականների կապը իշխող անհանդուրժելի կարգերի հետ: Չեխովը իր ուսանողության տարիներին ակտիվորեն ձայնակցում էր ռուս առաջավոր գիտության ներկայացուցիչների ջանքերով առաջադրվող (Տիմիրյազև, Էրիսման, Ալիֆասովսկի) գիտական հումանիտական և հեղափոխական պատգամներին: Չեխովը ուսանողության տարիներին Տիմիրյազևի անմիջական ազդեցությամբ ուսումնասիրել է Դարվինի ուսմունքը և ապա գիտական-մատերիալիստական իմացաբանության սկզբունքները: Չեխովը 1902 թ. Կնիպպերին ուղղած մի նամակում առանձին սիրով հիշում է Տիմիրյազևի անունը: Կարելի է ենթադրել, որ ուսանող Չեխովի վրա պետք է որոշ ազդեցություն թողնեին, մանավանդ, գործարանային հիմնարկությունների գիտական ուսումնասիրության համար հատուկ լաբորատորիա հիմնող Էրիսմանի աշխատանքի մեթոդները: Մոսկվայի համալսարանում 80-ական թվականների առաջավոր ուսանողության շրջաններում մեծ էր Բոտկինի, Սեչենովի, Պիրոգովի և նման այլ ռուս գիտնականների հմայքը: Ուսանողներին լավ էին հայտնի Սեչենովի կյանքի հերոսական էջերն ու զբվագները: Հայտնի էր նաև Պիրոգովի խոշոր դերն ու գիտական մեծ վաստակը: Պիրոգովը բոլոր հայրենասերներին կոչ էր անում ծառայել ամենից առաջ ժողովրդին և ճշմարտությանը: Բժիշկներին նա առաջարկում էր բոլոր հիվանդներին մոտենալ մեծագույն նրբանկատությամբ՝ լինել միշտ և ամենից առաջ—մարդ...

Ահա մտավոր այդ բարձր մթնոլորտը շատ մեծ ազդեցություն է թողնում սերվանտեսյան «Ռոն Կիստի» իդեալիստական-ալտրուիստական հովերով տարված ընթերցողի վրա «մթնշաղալին» այն տարիներին, երբ արվեստի և գրականության մեջ հնչում և իշխում էին աշխանային տխուր մոտիվները: Շատ

ծանր էին այդ տարիները: Ծանր էր նաև Չեխովների բազմամարդ ընտանիքի կացութիւնը: Չեխովի հայրը շատ աննշան աշխատավարձ էր ստանում առևտրական մի հիմնարկութեան մէջ: Ինքը՝ ուսանող Չեխովը պետք է, և՛ սովորեր, և՛ միաժամանակ որոներ աշխատանքի անհրաժեշտ հասույթներ:

Հետեւելով իր ավագ եղբոր խորհուրդներին, Չեխովը ծանր օրերին էլ դրոշում է աշխատակցել ռուսական երգիծաբանական պարբերականներին և կարողանում է կարճ ժամանակվա ընթացքում սերտ կապեր հաստատել զրանց խմբագիրների հետ: Սկզբնական շրջանում նա կազմում է թոռուցիկ ակնարկների նման հակիրճ գրույցներ կամ թեթև երգիծաբանական պատմվածքներ: Հաճախ նա լինում էր դատարաններում և կազմում դատական հաշվետու-թյունների նման նկարագրական ակնարկներ: Երգիծաբանական պարբերականներից մեկի («Օսկոլիկ»՝ «Բեկորներ») խմբագիր Լեյկինը շատ շափավոր հայեցողութեան տեր էր և միշտ իր երիտասարդ աշխատակցին առաջարկում էր նկատի առնել գրաբնիշխների հատուկ հրահանգներն ու պահանջները: Զանալով բավարարել մայրաքաղաքի քաղբենիների պրիմիտիվ պահանջները, Լեյկինը աշխատում էր հրապարակել շատ առօրյա նյութեր, ավելի հանդուրժելի ակնարկներ, անատամ և զավեշտական դրույցներ: Միևնույն խորհուրդը նա տալիս էր իր բոլոր աշխատակիցներին:

Չեխովը իր ուսանողութեան տարիներին բազմաթիվ ակնարկներ և դրույցներ է գետնից ռուսական երգիծաբանական պարբերականների էջերում: Ավելի հաճախ նա հանդես է եկել Անտոշա Չեխոնտե մականունով: Զգտելով բավարարել իր խմբագիրների պահանջները, նա գրի է առել զավեշտական առօրյա ղեպերը, կազմել է զավեշտական էսքիզներ և ակնարկներ, նկարագրել է կյանքի ռեալիստական պատկերներ:

Սկզբնական շրջանում նա գրում էր շատ հապճեպ՝ ցանալով շուտափույթ կարգով հանձնել անհրաժեշտ նյութերը և ժամանակին ստանալ անհրաժեշտ վարձատրութիւնը: Հաճախ նկարագրում էր աննշան ղեպեր և շատ անգամ ամենևին չէր վերամշակում իր սեպագիր ակնարկները. ծանրանալով պատահական էպիգրամների և առօրյա ղեպերի վրա, նկարագրում էր կյանքի զավեշտական կողմերը, բայց միշտ աշխատում էր մնալ սառնասիրտ դիտողի դերում:

Գրական ինտենսիվ այդ աշխատանքը անհետևանք չի անցնում: Չեխովը հետզհետե մշակում է կյանքի տիպական երևույթները գիտելու, ուսումնասիրելու և արձանագրելու արտասովոր ընդունակութիւն: Նա չուրացնում է հակիրճ գրելու դժվարին արվեստը ու տիպական պատկերներ կերտելու բարդ տեխնիկան. ժամանակի ընթացքում գրական-ստեղծագործական աշխատանքը նրա համար դառնում է կենսական պահանջ: Ահա այդ նոր էտապում էլ նա սկսում է նոր դիրքերից և նոր գիտակետից մոտենալ կյանքին և իրականու-

թյանը: Այդ նոր էտապում նա սկսում է ավելի մեծ ուշադրութեամբ դիտել ծանր իրականութիւնը և ավելի լավ տեսնել իրական կյանքի հակասական երանգները ու բարդ ելեէջները: Նորից նա գրի էր առնում զավեշտական ղեպերը և նորից աշխատում էր կատակներով գրավել իր ընթերցողների ուշադրութիւնը: Ստեղծարար այժմ արդեն չէր կարողանում սառնասիրտ անցնել ազդակող հակասութիւնների կողքից: Այժմ արդեն նա չէր աշխատում ծածկել իր հույզերն ու խեղդել հոգի: Խորունկ արահետներում պահված ապրումներն ու մտորումները: Պետք է ասել, որ Չեխովի նույնիսկ առաջին էտապի առանձին գրվածքներում նշմարվում են այդօրինակ ապրումներին հատուկ սաղմները: Հաճախ շեղվելով երգիծաբանական պարբերականի տրադիցիոն ուղեգծից, Չեխովը այդպիսի մանրամասներ էր արձանագրում՝ միանգամայն նոր «մոտիվներ» մտցնելով տվյալ պարբերականի մի անգամ ընդմիշտ կերտված միօրինակ «անսամբլի» մէջ:

Գրել շատ հակիրճ և միաժամանակ շրջապատի երևույթները նկարագրել ճշգրիտ գույներով՝ այնքան էլ հեշտ չէր: Չեխովը բժիշկ էր և գիտնական-գրող ամենից առաջ: Շատ ուշադիր և միշտ ճշմարտախոս գիտնականի նման մոտենալով իր պատմվածքների թեմաների մշակմանը՝ առանձին սյուժետների ընտրութեանը և ամբողջ հյուսվածքին, նա պետք է ձգտեր արտացոլել իսկական իրականութեան ամենահիմնական և տիպիկական հատկանիշները: Այդ էր ահա, որ թելագրում էր նրան անվերջ գրել, մշակել, արտագրել, նորից վերամշակել՝ ավելի դիպուկ խոսքեր գտնելու և ավելի ազդու գույներ ընտրելու համար:

Գեղարվեստական այդ նոր սկզբունքների կիրառմանն է անցնում Չեխովը Մոսկվայի համալսարանն ավարտելուց հետո, երբ ավելի կարուկ կերպով հարում է ռուս կլասիկ գրականութեան ռեալիստական և հումանիստական պատգամներին: Եվ ահա ստեղծագործական ինտենսիվ աշխատանքի այդ նոր էտապում նա հանգում է այն եզրակացութեան, որ իշխող հասարակական պայմանների և առանձնապես իշխող ցարական դաժան ցենզուրայի պատճառով ինքը չի կարող կանգ առնել հասարակական անհրաժեշտ երևույթների վրա, ցուցադրել իրականութեան ճշգրիտ պատկերները, միանգամայն որոշակի արծարծել և արտահայտել իր բոլոր նվիրական ապրումները: Չեխովի համար արդեն պարզ էր, որ ցարական մոսկով իրականութիւնը կտրատում է ռեալիստ տրվեստագետի թևերը և խոչընդոտում առաջավոր գրականութեան առողջ զարգացմանը:

Ամենևին պատահական չպետք է համարել այն, որ հատկապես այդ շրջանում Չեխովը սկսում է առանձին սիրով և կլանված ընթերցել ռուս մեծ երգիծաբան-վիպագիր Սալտիկով-Շչեգրինի ցասումնալից աշխատութիւնները: Շչեգրինը հին կյանքի ու անցյալի դաժան բռնակալների գիշատիչ էու-

թյունը քողարկող երկերեսանի գործիչների մոլեգին թշնամին էր: Նկարագրելով մուսյլ անցյալի դեպքերը և աննախնամաց թափով կերտելով անցյալի «հերոսների» կերպարները, Շչեղրինը միաժամանակ կոչ էր անում քանդել անիրավ հին սեփականատիրական կարգերը: Շչեղրինը կարող էր միմիայն մեծ թափ հաղորդել Չեխովի հոգեկան ապրումներին և գաղափարական նոր սրունումներին:

Երբ լույս են տեսնում Չեխովի ակնարկների և պատմվածքների առաջին ժողովածուները, ռուս մի քանի գրականագետներ, ողջունելով նոր հեղինակին, միաժամանակ բավական որոշակի հայտնում են իրենց տարակուսանքները և առանձին պահանջներ առաջադրում: Այսպես, օրինակ, «Ռուս գրականության պատմության» հեղինակ Սկարիչևսկին քննադատում է Չեխովի «թեթև» մոտեցումը կյանքի այրող պրոբլեմներին և առաջարկում է նրան «լուրջ» կերպով մոտենալ գրական-ստեղծագործական աշխատանքին:

«Ռուս, — գրում էր Սկարիչևսկին, — անպայման ունիք տաղանդ, բայց անհրաժեշտ է հանաք անելու փոխարեն գրել ավելի լուրջ և խոսել ավելի լուրջ...»: Այդպիսի բնույթ էր կրում, հիմնականում, Սկարիչևսկու քննական դիտարկումները իսկական իմաստը:

Չեխովի հետ շատ մոտ էր դեմոկրատ գրողներից առանձնապես Պլեշչեևը: Բնորոշ է այն, որ հենց Պլեշչեևին ուղղած իր մի նամակում Չեխովը շատ նշանակալից պատասխան է տալիս Սկարիչևսկու տիպի իր բոլոր քննադատներին: Չեխովը նշում և ընդգծում է, որ հակառակ իր հիշյալ «քննադատների» հայտարարությունների, նա ունի շատ որոշակի հայեցողություն՝ ուղղություն, քանի որ գրելով, ինքը միշտ կովում է ստորության և կեղծիքի դեմ:

«... Մի՞թե դա, — գրում է Չեխովը, — ուղղություն չէ»: Անհրաժեշտ է ասել, որ ինքը՝ Չեխովն էլ առանձին վերապահություններ էր մոտենում իր նախնական որոշ երկերի թերություններին: Հայտնի է, որ հենց այդ թերությունները նկատի առնելով, նա իր երկերի նոր ժողովածուներում չէր մտցրել հին ակնարկները: Նա զգում և գիտակցում էր, որ իր առաջին երկերի մեջ կան առանձին ակնարկներ, որոնք ազատ չեն որոշ թերություններից: Վերջապես, նա եկել էր այն եզրակացության, որ անհրաժեշտ է ակտիվ կերպով արձանագրել կյանքի հրատապ պրոբլեմներին:

Չեխովն այլևս չէր ցանկանում թուցիկ կերպով կամ անճիշտ գրվածքով նկարագրել կյանքի բնորոշ հատկանիշները և սուր ներհակությունները: Գրիչը մտածող հեղինակի ձեռքին և՛ վրձին էր, և՛ սուր: Արձանագրելով իրական փաստերը, նա միաժամանակ մերկացնում և դատափետում էր իրականության խոցելի կողմերը: Եթե առաջ, ուսանողական տարիներին, Չեխովին հայտնի էին միայն կյանքի շատ հասարակ և առօրյա երևույթները, ապա այժմ, երբ նա մոտենում է ժողովրդին, խուլ խորշերում նշմարում է տառապող աշխա-

տավորների դիմաստվերները և ավելի որոշակի ունկնդրում թույլերի և շահագործվողների կանչերին:

Բժիշկ Արխանգելսկին պատմում է, որ Չեխովը, սովորաբար վաղ առավոտից մինչև երեկո լինում էր հիվանդանոցում և այդտեղ տուրուն աշխատանք էր տանում: Ամեն ինչ դիտում էր երիտասարդ բժիշկը, մեծագույն ուշադրությամբ հետևում էր բժիշկների և հիվանդանոցում աշխատող ուսանողների աշխատանքին: «... Որպես բժիշկ, — գրում է իր մեմուարներում Արխանգելսկին, — Չեխովը շատ բարեխիղճ և նրբանկատ էր. համբերությամբ լսում էր բազմաթիվ հիվանդների զանգատները, ուսումնասիրում նրանց կենցաղային պայմանները, գտնում յուրաքանչյուր հիվանդի համար սփոփանքի ջերմագին խոսքեր...»:

Գիտնական-գրողի համար նոր աշխարհ էր տառապող աշխատավորների և հիվանդների տխուր միջավայրը՝ բարդ տիպարների մի հսկայական պատկերասրահ, որտեղ մերկացված կերպով ցուցադրվում էր ժողովրդի ամենաճնշված խավերի անշուք և մուսյլ կյանքի էությունը:

Տառապողների այդ աշխարհին Չեխովը չէր կարող մոտենալ երգիծաբանի նման: Այդ տխուր աշխարհը շրջանցիկ տպավորություն է թողնում նրա վրա: Նա դառնում է անշափ զուսպ և մտախոհ: Սկսում է ավելի մեծ ուշադրությամբ ուսումնասիրել շրջապատի երևույթները: Չեխովը ստիպված է լինում ուշադրությամբ դիտել և նկարագրել, նորից և նորից արձանագրել իրական փաստերը, սուր պինցետով քրքրել մարդկային հոգու խորքերը, քննել և րոտնել հասարակական խոցերի արմատները: Նրա ծոցատետրում նշված թուցիկ նոթերը ուշագրավ են այն տեսակետից, որ գիտնականին հատուկ մեթոդով գծագրում են կյանքի երևույթների բազմափոփոխական մոտեցող հումանիստ գրողի դեմքը:

Մոսկվայում հասարակական հովերով տոգորված առաջավոր գիտնականների շարքերում հայտնի էր էրիսմանը, որի նախաձեռնությամբ ձեռնարկվել էին մի շարք գործարանների մանրակրկիտ ուսումնասիրություններ: Չեխովին լավ հայտնի էր էրիսմանի «հիգիենիկ լաբորատորիան»: էրիսմանի և գործարանային բժիշկների քննությունները պարզել էին, որ գործարաններում գործարանատերերի վարքագծի շնորհիվ ավելանում է հաշմանդամների թիվը և միաժամանակ նպաստավոր պայմաններ են ստեղծվում պրոֆեսիոնալ հիվանդությունների զարգացման համար: Չեխովին հայտնի էին էրիսմանի աշխատանքները: Իր բժշկական ղեկուցադրերից մեկում Չեխովը արձանագրում և դատափետում է հատկապես գործարանատերերի բացասական-թշնամական դիրքորոշումը սանիտարական տեսչության նկատմամբ: Այդ տեսչության ավելի բարեխիղճ աշխատակիցները պահանջում էին աշխատավորների ապահովության համար կիրառել տեխնիկական որոշ բարենորոգումներ, որոնք

կապված էին անհրաժեշտ ծախքերի հետ: Գործարանատերերը գերազանցում էին այդպիսի ծախքեր շահել: Չեխովը ինքը 1892 թվականին մի քանի անգամ նույնիսկ մասնակցել է գործարանների սանիտարական քննության համար ստեղծված «ինսպեկցիաների» աշխատանքներին: Իր պաշտոնական գեկուցագրերում նա, իհարկե, չէր կարող լիակատար կերպով բացահայտել ու մերկացնել բոլոր գիշատիչ կապիտալիստներին: Ցարիզմի տիրակալության պայմաններում պաշտոնական գեկուցագրերը պետք է կազմվեին հատուկ ձևով և «ոճով»: Իր այդ գեկուցագրերում Չեխովը կտրուկ կերպով դատափետում է գործարանատերերին և շեշտում, որ նրանք հրաժարվում են կատարել սանիտարական տեսչության պահանջները: Նա հիշատակում է գործարանատերերի անսահման ագիտությունը և էգոիզմը: Իր թուցիկ նոթերում նա ակնարկում է բանվորների կացության մասին: Մանրանալով մի գործարանի վրա, նա գրում է, որ այդտեղ աշխատում էին մոտավորապես 1090 բանվոր: Գործարանը «կարծես բանտ էր»,— կարդում ենք ժոցատետրի մեջ:— Բազմաթիվ աշխատավորներ հսկայական աշխատանք են կատարում ու տառապում են «ոչնշուխուն» ներկայացնող մի գործարանատիրոջ հասույթ հասցրելու համար...

Բոլոր նման նոթերը թուցիկ են ու հակիրճ, բայց և այնպես, միշտ դիպուկ այդ նշումները ցույց են տալիս, որ առանձին ուշադրությամբ մոտենալով բանվորների կացության հետազոտությանը, քննելով գործարաններում ստեղծված «սանիտարական» պայմանները, նյութեր հավաքելով անպագա իր պատմվածքների համար, Չեխովն ավելի քան լավ տեսնում էր կապիտալիստ-գործարանատերերին և երկրում իշխող բռնապետական կարգերին միացնող կապը:

Շատ ուշադրավ է, որ նման նշումները և մանավանդ չեխովյան նամակների մեջ պարբերաբար կրկնվող սուր դիտողությունները, իշխող կարգերի դեմ նետված քննադատական ակնարկներն ավելի բացահայտ են դառնում սախարինյան հայտնի ճանապարհորդությունից հետո: Այն օրերին, երբ Չեխովը Մոսկվայում քննում և մշակում էր սախարինյան նյութերը, նորից թերթում էր Սախարինի մասին հրատարակված աշխատությունները, վերանայում իր միամիտ կարծիքներն ու պատրանքները, ծրագրում պատրաստել գեղարվեստական նոր ստեղծագործություններ:

Սովետական դրականագետները ժամանակին նշել են, որ սախարինյան այդ ճանապարհորդությունը նկատելի ազդեցություն է թողել Չեխովի վրա, հոգեկան նոր բեկում ստեղծել, նպաստել է գաղափարական որոնումների և մտորումների ավելի կտրուկ ձևավորման:

Հայտնի է, որ 1888—1889 թվականներին Չեխովը տարված էր ստեղծագործական ինտենսիվ աշխատանքով: Այնուամենայնիվ, հենց այդ տարիներին,

նա մերթ ընդ մերթ վարանելով էր կանգ առնում իր գրական գործունեությունը հատկանշող իմաստի ու նպատակների վրա: Գրողը,— ասում էր Չեխովը,— պարտավոր է որոշել, թե ո՞րն է իր հիմնական նպատակը: Գրողը պետք է ցուցադրի իր գրական ուղին լուսավորող «ընդհանուր գաղափարը»: Այդ տարիներին նա գտնում էր, որ գրողները չեն կարող սահմանափակվել սոսկ գեղարվեստական երկեր արտադրելով, նրանք պատասխան պետք է տան «ի՞նչ անել» հարցը առաջադրող բոլոր ընթերցողներին: Չեխովի «Սախարին կղզին» հատորին կցված բովանդակալից դիտական ծանոթագրությունների հեղինակները արձանագրել են չեխովյան նամակների մեջ կրկնվող նման մտորումները և բավական հիմնավոր կերպով հաստատել են, որ մեծ գրողի համար սախարինյան ճանապարհորդությունը հիրավի եղել է շատ կարևոր շրջադարձային նշանակություն ունեցող «գործոն»:

1889 թվականի նոյեմբերին, երբ Չեխովն իր «Տաղակալի պատմության» մեջ նկարագրում էր ականավոր գիտնականի հոգևոր ճգնաժամի և անկման պատմությունը, երբ նա տաղանդավոր գեղագետ-հոգեբանին հատուկ նրբությամբ արձանագրում էր այդ գիտնականի «եզրակացությունները», վասկածից դուրս է, որ որոշ չափով արժարժում էր նաև իր սեփական մտորումները, դուցե և իր որոնումների նոր ընթացքն ու նպատակակետը, իր ցանկությունը՝ ստեղծել «ի՞նչ անել» կարևոր հարցին պատասխան տվող գործեր և գրական լուրջ նշանակություն ունեցող ստեղծագործական նոր աշխատություններ...

2

Սախարինը ցարական Ռուսաստանի ամայի, դաժան և մոռյլ մի քսորավայր էր: Ցարական բռնապետությունը դեպի հեռու այդ քսորավայրն էր նետում կառավարության դեմ ըմբոստացող «անբարեհույս» գործիչներին և բրեժկան հանցավորներին: Հայտնի է, որ այն ժամանակ տրանսպորտի պայմանները շատ ծանր էին:

Կառավարական ոչ մի հիմնարկության հետ Չեխովը կապված չէր: Ոչ որ չէր կարող պարտադրել կամ թելադրել նրան՝ ձեռնարկել սախարինյան անհրապույր և չափազանց դժվարին ճանապարհորդությունը: Իր դիսերտացիայի համար Չեխովը կարող էր անհրաժեշտ նյութեր գտնել և ուսումնասիրել շատ ավելի դյուրին կերպով հենց մայրաքաղաքում՝ Մոսկվայում: Եթե նրա հիմնական նպատակը լիներ զուլա բերել արտասահմանյան ճանապարհորդությունը, նա կարող էր ընտրել շատ ավելի նպատակահարմար մի ուրիշ մարշրուտ: Այդ թուցիկ տողերը, որոնք ցրված են Չեխովի զանազան նամակներում, ցույց են տալիս, որ նրա հիմնական նպատակն է եղել՝ ուսումնասիրել սախարինյան քսորականների կյանքը, քննել իսկական իրականությունը, պարզել ճշմարտությունը: Աքսորավայրերի և քսորականների մա-

սին այդ օրերին ամենից շատ խոսում էին դեմոկրատական հոսանքները ներկայացուցիչները, որոնք, իհարկե, քննադատում և դատափետում էին ցարիզմի ջանքերով մշակված քրեական քաղաքականությունը: Ռեակցիոն գույժիչները և նույնիսկ լիբերալ հոսանքների ներկայացուցիչները կառավարության քաղաքականությունը կամ պաշտպանում էին, կամ նկարագրում սխալ ու միակողմանի կերպով: Աքսորավայրերի, բանտերի, կայանավորների մասին ստեղծված ներհակ կարծիքներն այս կամ այն չափով քննարկվում էին առաջավոր ինտելիգենցիայի շարքերում: Կարելի է ենթադրել, որ Չեխովի վրա կարող էին նկատելի ազդեցություն թողնել հենց 1888—1889 թվաձևերին բռնկված գաղափարական վեճերն ու բախումները: Բավական է միայն հիշատակել այստեղ, որ նրա ամենամոտ բարեկամներից մեկը Պլեշչենն էր՝ նեկրասովյան պոեզիայի հետևողներից մեկը: Հայտնի է Չեխովի նշանակալից այն նամակը, որ ուղղված էր Սուվորինին: Այդ նամակը ցույց է տալիս, որ Սուվորինը բացասաբար էր վերաբերվում Չեխովի ծրագրին և միանգամայն ավելորդ մի բան էր համարում սախալինյան ճանապարհորդությունը:

«... Գուր, — կարդում ենք Չեխովյան նամակում, — գրում եք, որ Սախալինը ոչ ոքի պետք չէ և ոչ մեկի համար էլ հետաքրքիր չէ. մի՞թե դա հիշտ է...»: Զայրալից այդ խոսքերից հետո Չեխովը նշում է, որ Սախալինը «անտանելի տառապանքների» մի վայր է, որ այդ աքսորավայրը մեծագույն ուշադրությամբ պետք է ուսումնասիրվի: Հիշատակելով, որ ինքը կարգացել ու կարգում է Սախալինի մասին հրատարակված աշխատությունները, Չեխովն ընդգծում է, որ հենց այդ աշխատություններում արձանագրված արտասովոր փաստերը բնութագրում են սախալինյան աքսորավայրը ստեղծող պետության ներկայացուցիչներին: «Մենք, — գրում է Չեխովը, — փտեցրել ենք բանտերում միլիոնավոր մարդկանց, փտեցրել ենք զուր տեղը, առանց մտածելու, բարբարոսաբար... քշել ենք սառնամանիքին շղթայակապ մարդկանց... բազմացրել ենք հանցավորների թիվը...»:

Չեխովը դիտավորությամբ գրում էր՝ «մենք»: Սուվորինի դիրքը ցարական կառավարության նկատմամբ նրան լավ էր հայտնի: Չեխովը ցանկանում էր մերկացնել և դատափետել ցարական-բոնապարտական կարգերի բոլոր բացահայտ և քողարկված պաշտպաններին, առաջին հերթին, նաև սովորիչյան տիպի գործիչներին: Չեխովի նամակը այդ իմաստն ունի և ուրիշ որևէ իմաստ չէր կարող ունենալ: Այդ նամակը պարզում է նաև Չեխովյան ճանապարհորդության իսկական մոտիվներն ու դրդապատճառները:

Անհրաժեշտ է նշել, որ Չեխովի մոտիվների վրա շատ անակնկալ ազդեցություն է թողնում նրա սրբաշունտը և հայտարարությունը: «... Անակնկալ կերպով նա (Անտոն Չեխովը) հայտնում է մեզ իր սրբաշունտը և ապա սկսում ուսումնասիրել Սախալինի մասին հրատարակված նյութերն ու հետազոտությունները»:

Այդպես է գրում Չեխովի իրավագետ եղբայրը: Ծանոթ ուսանողները մանրակրկիտ պրպտումներ են կատարում հանրային գրադարանում: Նրանք Չեխովի համար հավաքում են կարևորագույն բոլոր հրատարակությունները: Չեխովի նամակների մեջ հատուկ հիշատակություն կա այն մասին, որ նա ուսումնասիրել է նույնիսկ զանազան հին պարբերագրերի էջերում զետեղված մեմուարային գրությունները, աշխարհագրական ակնարկները, և նյութերը: Առանձին ուշադրություն է նվիրում նա զանազան իրավագետների և մանավանդ քրեագետների աշխատությունների քննարկմանը: Նա թերթում և կարգում է քրեական իրավունքի, քաղաքականության, դատավարության, բանտագիտության մասին հրատարակված գրքերը: Նախապատրաստական այդ մեծ աշխատանքն ավարտելուց հետո, Չեխովը փորձ է անում ձեռք բերել նաև Սախալինի վարչական օրգաններին ուղղված անհրաժեշտ գրությունները: Պաշտոնական այդպիսի մի գրություն է հանձնում նրան գլխավոր բանտային վարչության կառավարիչը, որի հայտարարության համաձայն Չեխովին հնարավորություն պետք է տրվեր ուսումնասիրելու աքսորավայրերի բոլոր ակադամա բնակիչների կյանքը: Ներկայումս հաստատված է, որ պաշտոնյան Չեխովին հանձնելով այդ գրությունը, միաժամանակ սախալինյան աքսորավայրերի պետին ուղղած առանձին գաղտնի մի գրությամբ առաջարկում էր հնարավորություն շտալ, որ Չեխովը հանդիպում ունենա քաղաքական աքսորականների հետ: Այդ գաղտնի գրությունը հայտնաբերվել է միայն Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո, շնորհիվ գլխավոր բանտային վարչության արխիվային վավերագրերը ուսումնասիրող սովետական բանասերների:

Հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ, Չեխովը Սախալին հասնելուն պես անմիջապես անցնում է աշխատանքի: Նա պտույտներ է կատարում մեծ կղզու բոլոր վայրերում, տեսնում է աքսորականներին, ուսումնասիրում աքսորավայրերը, գրի առնում արտառոց ու սոսկալի փաստեր: «Ծս ամեն ինչ տեսել եմ», — գրում է նա 1890 թվականի սեպտեմբերի 11-ին, ապա նշում, որ այնքան հարուստ նյութ է հավաքել, որ կարող է երեք դիտերտացիա պատրաստել: Չեխովը, ուսումնասիրելով աքսորականներին, հատուկ նշումներ է անում 10.000 քարտի վրա, արձանագրում առանձին փաստերն ու հում նյութերը: Հետագայում, արդեն Մոսկվայում, Չեխովը, իր հավաքած նյութերի հիման վրա, կազմում է բովանդակալից առանձին ակնարկներ և այս հրատարակում Սախալինի մասին գրած մեծածավալ իր գիտական աշխատությունը:

Ցարական աքսորավայրերի մասին հրատարակված աշխատությունների մեջ Չեխովի «Սախալինը» աչքի է ընկնում թե իր կոմպոզիցիայով և թե բովանդակությամբ: Այն զոկումենտալ գիտական հետազոտություն լինելով հանդերձ, զեղարվեստական գրականության նոր տիպի վավերագիր է և միաժամանակ հումանիստական բարձր զգացումով տողարկված հրատարակարկական շատ ազդու մի երկասիրություն:

զախութիւնը: Գրեյֆուտի «դատի» և ապա Զուլայի ելույթների կապակցութեամբ Չեխովը հիշատակում է, ի միջի այլոց, նաև Վլադիմիր Կորոլենկոյի հանրահայտ ելույթը «մուլտանական» պրոցեսի օրերին, երբ Կորոլենկոյի դեմ էր նետվել ուսական ակնկալներ:

Չեխովի նամակների մեջ բավական հետաքրքրական դիտողություններ կան Սենկևիչի երկու վեպերի մասին: Մանրանայով լեհական գրականության այդ ականավոր ներկայացուցչի «Առանց դավանանքի» և ապա «Պուլանեցկիների բնտանիքը» վեպերի վրա, Չեխովը նշում է Սենկևիչի առաջին գործի զեղարվեստական հատկանիշները, սակայն միաժամանակ դիտողություն է անում նաև աչքի բնկնող որոշ թերությունների առթիվ: «... Ես,— գրում է Չեխովը 1893 թվականի նոյեմբերի 13-ի նամակում,— մեծ հաճույքով կարդացի «Առանց դավանանքի» վեպը, դա խելոք և հետաքրքրական գործ է առերևույթ. զեղեցիկ է, ջերմ և փայլուն... բայց այդտեղ շատ կա կոկետություն և քիչ է պարզությունը...»:

Երբ մենք այդ ամենից հետո անցնում ենք առանձնապես ուս գրողներին նվիրված նրա դիտողություններին, մեր ուշադրությունը գրավում է շափազանց բնորոշ մի հանգամանք: Չեխովը նշում է, որ իր համար ուս կլասիկներից ամենասիրելի գրողներն են եղել՝ Պուշկինը, Տուլստոյը, Տուրգենևը: Հետագայում, երբ Չեխովին խնդրում են հաղորդել իր կարծիքը հատկապես նեկրասովի պոեզիայի մասին, նա նշում է, որ նեկրասովը միշտ սիրելի է եղել իր համար և մնում է այդպիսին: Անհրաժեշտ է այստեղ նշել, որ առաջին սիմվոլիստների ազդեցության ներքո ուս գրական որոշ շրջաններում առանձին «էսթետ» գրականագետների ջանքերով, հատկապես 80-ական թվականների վերջին սկսվել էր նեկրասովյան «կուլտի» յուրահատուկ մի «քննադատություն»: Չեխովին հայտնի էր այդ փաստը, ինչպես և լավ հայտնի էր նեկրասովի պոեզիայի «այժմեական» նշանակության առթիվ «անկետա» կազմակերպողների հիմնական նպատակը: Ահա ինչու Չեխովի դիտողությունը շատ կարևոր նշանակություն ունի: Այն ցույց է տալիս, որ Չեխովը բացասաբար էր վերաբերվում նեկրասովյան պոեզիայի դեմ հատուկ արշավ կազմակերպող «էսթետներին» հայտարարություններին: Այդ դիտողությունը միաժամանակ ցույց է տալիս, որ Չեխովը երբեք չէր կարող ձայնակցել զեղարվեստը կյանքի հրատապ առօրյայից և խնդիրներից կտրող արվեստագետների դրույթներին:

Այսօր ինչպես էլ մոտենանք Չեխովի ուրույն «հայեցողության» բնութագրմանը, շենք կարող անուշադրության մասնել նման նշանակալից փաստերը: Գաղտնիք չէ այն, որ այսօր էլ նույնիսկ Չեխովի երկերի և նամակների քսան հատույների հրատարակությունից հետո, կան «քննադատներ», որոնք գերադասում են ցուցադրել միմիայն «քնարերգու» և միմիայն «տխուր»

կամ «մեղմ» արձակագիր-գրամատուրգի դիմաստվերը: Այդ միակողմանի մեկնաբանությունը բավական սուր հարված են հասցնում ոչ միայն Չեխովի վաղ շրջանի շատ գործերը, մանավանդ 1890 թվականից հետո գրած պատմըվածքները, պիեսները, նամակները: Մենք երբեք չենք կարող անուշադրության մասնել Չեխովի զաղափարական կապերի նշանակությունը: Չի կարելի հաշվի չառնել Չեխովի այնքան ինքնահատուկ մոտեցումը ուս առաջավոր արվեստի որոշ ներկայացուցիչներին՝ Ռեպինին կամ Սերովին, Չայկովսկուն կամ Լեիտանին, Վերա Կոմիսարժևսկայային, Նեմիրովիչ-Պանչենկոյին, Ստանիսլավսկուն, Մոսկովինին: Կարելի է, արդյոք, խոսք շասել այն ջերմ, ինտիմ, արտասովոր վերաբերմունքի մասին, որ Չեխովը ցուցաբերել է իր գրամատուրգիական պորժունությունը սկզբից մինչև վերջը՝ ուս թատրոնի պատմության մեջ այնքան ուշադրավ Մոսկովայի Գեղարվեստական թատրոնի շուրջը համախմբված փայլուն պլեադայի ներկայացուցիչների նկատմամբ: Ստանիսլավսկու և ապա Նեմիրովիչ-Պանչենկոյի մեմուարների մեջ Չեխովի պիեսներին նվիրված էջերը բնորոշ տեղ են գրավում: Այսօր էլ ցնցող տպավորություն են թողնում Չեխովի և վերահիշյալ արվեստագետների մտերիմ և անշափ ջերմ զաղափարական հարաբերությունները բնութագրող՝ անցյալի կենդանի էջերը: Բավական է միայն թերթել Չեխովի «Ճայր» բեմադրության առթիվ հրատարակված էջերը: Երբ Պետերբուրգի Ալեքսանդրինյան թատրոնում «հասարակությունը» բացահայտում է իր բացասական դիրքը, Չեխովը հայտնում է, որ այլևս ոչ մի պիես չի գրի: Այդ օրերին Կոնին շատ ջերմ նամակ է ուղղում Չեխովին, իսկ Մոսկովայից Նեմիրովիչ-Պանչենկուն կոչ է անում՝ երբեք չընկճվել: Մոսկովայի Գեղարվեստական թատրոնը ծանրագույն պայմաններում նորից բեմադրում է «Ճայր» և հաղթանակը տանելուց հետո բոլոր դերակատարների անունից ջերմ հեռագիր է ուղարկում Յալթայում ապրող հիվանդ Չեխովին: Նեմիրովիչ-Պանչենկուն պատմում է, որ դերասանները շնորհավորում էին միմյանց, գրկում և նույնիսկ այնքան զգացվել էին, որ ուրախությունից գրեթե լաց էին լինում: Դժվար է համաշխարհային թատրոնի պատմության տարեգրություններում գտնել նման ազդու մի ուրիշ էջ... «Ի՞նչն էր կապում Չեխովին այդ թատրոնի հետ, բացի ընդհանուր գեղագիտական հայացքներից, եթե ոչ միանման մոտեցումը հայրենի ժողովրդին, պրոգրեսիվ և հումանիստական ընդհանուր հայեցողությունը, բացասական դիրքը բուսպետական կարգերի նկատմամբ: Չեխովի և ապա Գորկու պիեսների բեմադրությունները Մոսկովայի Գեղարվեստական թատրոնի հարուստ պատմության մեջ միշտ կապված են եղել հասարակական պրոգրեսիվ և դեմոկրատական հոսանքների արձագանքների հետ: Այդ բեմադրությունները եղել են և՛ արձագանքներ, և՛ հին աշխարհի դեմ ըմբոստացող ժողովրդի ազատագրական շարժումներին օժանդակող ազդակներ...»

Մաքսիմ Գորկին մոտ ու սիրելի էր Չեխովի համար ոչ միայն որպես վիպագիր և գեղարվեստական խոսքի ու արվեստի շերտ երկրպագու: Մաքսիմ Գորկու և Անտոն Չեխովի նամակներն առաջին նվազ ստեղծում են արտասովոր տպավորություն: Այդ նամակներում որոշակիորեն աչքի է ընկնում այն, որ Գորկին նկատի էր առնում Չեխովի գեղագիտական բոլոր գիտողությունները և ակներև ակնածանքով էր վերաբերվում Չեխովյան բոլոր քննական խորհուրդներին և առաջադրություններին: Մակայն մեր ուշադրությունը դրավում է մի այլ հանգամանք: Մաքսիմ Գորկին միայն վիպագիր չէր, այլ միաժամանակ նաև բանվոր դասակարգի հեղափոխական շարժման հեղապլած հեղափոխական գործիչ: Չեխովին լավ էր հայանի ոչ միայն վեպեր և պատմվածքներ կերտող երիտասարդ գրող Գորկին, այլ նաև հեղափոխական մտածող և բռնապետության դեմ մարտնչող հայրենի ժողովրդի հեղափոխական ներկայացուցիչը: Չեխովի համար Գորկին գրողի կատարյալ տիպար էր՝ գրող էր, բաղաբացի և մարտիկ: Եվ ահա բնորոշ է, որ երկու մեծ գրողների այդ անձնական և գաղափարական մտերմությունը ստեղծվում և ավելի ամրանում է 1905 թվականի հեղափոխության նախամտերին՝ 1900—1903 թվականներին, այն տարիներին, երբ Գորկու ստեղծագործության մեջ շատ ավելի որոշակի կերպով էին հնչում հեղափոխական մտտիվները, և երբ Գանկոյին կամ Մրրկահավին նվիրված երգերը հնչում էին որպես մարտական երգեր և «տենդենցիոզ» արվեստի սկզբունքներին արձագանքող գեղարվեստական վավերագրեր:

Երբ կառավարության կողմից հետապնդվող Մաքսիմ Գորկին գալիս է Ֆլաթա, Չեխովի մոտ է գտնում իր առաջին կայանը: Գորկին Չեխովի բնակարանում է գրանցվում և, իհարկե, իսկույն գրավում Յալթայի պոլիցիականների առանձնահատուկ ուշադրությունը: Այդ փաստը արձանագրում է Չեխովն իր նամակում:

Նախահեղափոխական տարիներին ռուսական մեծ քաղաքներում շատ տարածված էին, ի միջի այլոց, «տենդենցիոզ» նկարագրազ «բաց նամակներ»: Նշանակալից է այն, որ դեմոկրատական շրջաններում այդ ժամանակ սիրելի էին այն բացիկները, որոնք ցույց էին տալիս Գորկու կողքին կանչած Չեխովին կամ «Զնանիե» հրատարակչության շուրջը համախմբված առաջավոր գրողներին, կամ Վլադիմիր Կորոլենկոյի, Գլեբ Ուսպենսկու, Չեխովի, Գորկու լուսանկարները: Դա նշանակում է, որ այդ տարիներին Չեխովի գեղարվեստական ստեղծագործությունը ժողովրդի գիտակցության մեջ կապվում էր դեմոկրատիայի կողմից սիրված գրողների արվեստի ուղղության հետ:

Չեխովի նամակները հաստատում են, որ նրա սիրելի գրողներն են եղել Վլադիմիր Կորոլենկոն, էրտելը, Մամին-Սիբիրյակը, Սկիտալցեցը, Բունին, Պոլոնսկին, Տելչեշովը և ուրիշ պրոզայի գրողներ...

Մելչին-Յակուբովիչին Չեխովը չէր ճանաչում: Գիտեր միայն, որ այդ գրողը սիբիրյան-աքսորավայրերից մեկում է գտնվում: Չեխովը քսորական-գրողին ուղարկում է իր գիրքը հատուկ մակագրությամբ: Թե ինչ էր գրել նա, դժբախտաբար, մեզ հայտնի չէ: Սակայն հայտնի է Մելչին-Յակուբովիչի պատասխանը: Աքսորական այդ գրողը իր քսորավայրից ուղարկում է Չեխովին իր բանտային հուշեր-ակնարկների ժողովածուի առաջին հատորը հետևյալ մակագրությամբ՝ «Չեխովին սեաքուխ և խախտուիչ ողջունի համար»: Արդեն այդ մակագրությունը ցույց է տալիս, որ Չեխովի գրությունը եղել է շատ չերմ: Նրա նամակներում հիշատակվում են էրտելի՝ Մամին-Սիբիրյակի, Գարշինի ազգանունները: Վիպագիր էրտելը՝ «Գարդենիններ» վեպի և «Ստեպանյակի գրություններ» գեղարվեստական ակնարկների տաղանդավոր հեղինակը, «լեզալ» գրող լինելով հանդերձ, հետապնդվում էր ցարական գաղտնի ոստիկանության կողմից որպես «նախկին հեղափոխական» և «անբարեհույս» գործիչ: Կասկածից դուրս է, որ էրտելի և Չեխովի մոտիկ կապերը մեծապես պայմանավորված էին, առաջին հերթին, գրականության նկատմամբ նրանց ունեցած ընդհանուր շահագրգռությամբ: Չեխովին գրական հարցերն էին կապում և էրտելի, և մյուս բոլոր պրոզայի գրողների հետ: Սակայն, պարզ է, որ, բացի գրական պրոբլեմներից, Չեխովը իր գրող-ժանոթների հետ գրույցների կամ նամակագրության միջոցով շոշափում էր նաև հասարակական հրատապ հարցեր: Այլ կերպ էլ չէր կարող լինել: Այլապես Չեխովի մոտիկ ծանոթների շարքերում մենք կտեսնեինք ոչ թե Տոլստոյին, Մամին-Սիբիրյակին, Պլեշչեևին, էրտելին և նման վիպագիրների կամ բանաստեղծների, այլ ցարիզմի և բուրժուազիայի հետ կապված գրողներին և հասարակական գործիչներին: Մեզ մնում է արձանագրել մի ուրիշ ուշագրավ փաստ ևս:

Երբ հայտնի է գտնում, որ ցարական կառավարության հատուկ հրահանգով Գիտությունների ակադեմիայի ղեկավարները որոշել են ակադեմիկոսների ցուցակից հանել Մաքսիմ Գորկուն, Չեխովը ուղևորվում է և Տոլստոյի մոտ և հայտնում նրան այդ լուրը: Արդեն գաղտնիք չէր, որ ինքը՝ ցար Նիկոլայն էր Գիտությունների ակադեմիայի ղեկավարներին առաջարկել «կասկածովոր» Գորկու ազգանունը ջնջել, Տոլստոյը, ինչպես Չեխովն է պատմում, ոչ մի խոսք չի ասում, այլ միայն մոռացված ստանդ նետում է հետևյալ խոսքերը: «...Ես ակադեմիկոս չեմ...»: Ինքը՝ Չեխովը, համակված անսահման զայրույթով, հատուկ նամակ է գրում Վլադիմիր Կորոլենկոյին, որին մեծագույն հարգանքով էր վերաբերվում: Երկու ականավոր գրողներն էլ պայմանավորվում են մշակել որոշ գործելակերպ և միանման բովանդակությամբ բողոքագրեր ուղարկել Ակադեմիայի ղեկավարներին:

Երկուսն էլ իրենց նամակներում նշում են, որ այսուհետև իրենք այլևս

չեն կարող մնալ ակադեմիկոսների շարքերում: Դա, իհարկե, հասարակ բողոք չէր, այլ հակացարակա՛ն ելույթ: Դաժան ցարիզմի տիրապետության մը-նայլ օրերին, երբ ամեն մի այդպիսի գրություն կարող էր դիտվել ուրույն «ասպեկտով» որպես անմիջապես ցարի և քարիզմի դեմ ուղղված բողոք, Չեխովի ելույթը դառնում էր կառավարության դեմ ծառայող առաջավոր գրող-ներին համախմբող և կազմակերպող շատ ուժեղ մի ազդակ:

Չեխովիսական չէր Չեխովը: Նա ինքը շեշտում էր, որ հետո է «կուսակցություններից» և ձգտում է մնալ «անկախ» արվեստագետի դերում: Սակայն, այդպես մտածող և այդպես գրող Չեխովը երբեք չէր ծածկում իր արգահատանքը բնության և բռնակալների, իշխող կարգերի դաժան էությունը քողարկող մարդկանց նկատմամբ: Նա դիտավորյալ մտտիկ հարաբերություններ էր մշակում ցարական բռնապետության թշնամիների հետ: Կարելի՞ է արդյոք ասել, որ իր այդպիսի գործելակերպով, իր նոր հայացքներով, իր նոր առնումներով և տենդենցներով, կրոնի, միստիցիզմի, իդեալիզմի դեմ ուղղված իր գիտական և մատերիալիստական պատգամներով, իր գաղափարական այնքան բնորոշ կապերով Չեխովը շատ հետո էր և միանգամայն կտրված հայրենի ժողովրդի առաջավոր և հեղափոխական շարքերից: Չի կարելի: Միայն այդպիսի մի պատասխան կարելի է տալ. եթե հաշվի ենք առնում Չեխովի, Գորկու, Պլեշչենի, Կորոլենկոյի, էրտելի, Գարշինի, Շչեգրինի, Մելչինի, Մամին-Միբիդյակի և նման ուրիշ գրողների հետ կապող գաղափարական մտտիկ փոխհարաբերությունները: Շեշտված պատասխանը դառնում է ավելի ևս հաստատուն ու հիմնավորված, երբ մենք անցնում ենք առանձնապես 1890 թվականից հետո հրատարակված Չեխովի գեղարվեստական ստեղծագործությունների հիմնական իմաստի, հիմնական դոմինանտի, հիմնական մտայնության բնութագրման և լուսարանության: Եթե 1887—1888 թվականներին Չեխովը, նկարագրելով կյանքի հակասությունները և հասարակական ներհակությունները, արդեն զգում և գիտակցում էր, որ տոլստոյական իմաստասիրությունը որոշակի պատասխան չի տալիս հասարակական հրատապ հարցերին, ապա սախալինյան ճանապարհորդությունից հետո նրա այդ կարծիքը դառնում է արդեն համոզմունք, որ ոչ միայն արտացոլվում է նրա աշխատությունների մեջ, այլև նոր տոն և ուղղություն է հաղորդում նրա ամբողջ գեղարվեստական ստեղծագործության հետագա զարգացմանը:

Գրականության պատմաբանը և մանավանդ Չեխովի ստեղծագործության էվոլյուցիան ուսումնասիրող բանասեր-պատմաբանը պետք է հաշվի առնի, որ հատկապես 1891 թվականից սկսած Չեխովը տարված ստեղծագործական ինտենսիվ աշխատանքով, հրատարակել է պատմվածքներ և պիեսներ, որոնք, ռեալիստորեն բնութագրելով ռուս իրականությունը, իրենց հիմնական ուղղությամբ կոչ էին անում ընթերցողներին՝ կովի ելնել պոլություն

ունեցող հասարակական շարիքների դեմ, ոչ ոնել հասարակական զարգացման նոր ուղիներ, ծառանալ բռնության, բռնակալների, անիրավության դեմ, ոչ մի հավատ չընծայել ոչ այդ անիրավությունը քողարկող լիբերալ նարոդնիկներին և ոչ էլ հուսահատությամբ համակված քաղթների մտավորականների ողբալի նվաճներին:

Անհրաժեշտ է արձանագրել, որ սախալինյան ճանապարհորդությունից հետո Չեխովը հրատարակել է «Գողը» և «Գուսեր»՝ 1890, «Մենամարտ»՝ 1891, «Կանայք», «Կինը», «Աքսորավարում», «Հարևանները»՝ 1892, «Պալատ № 6»՝ 1892 թ. նոյեմբեր, «Անհայտ մարդու պատմվածք»՝ 1893, «Սև վանականը»՝ 1894 (գրվել է 1893 թ.), «Ռոտշիլդի ջութակը»՝ 1894, «Մուծիկներ»՝ 1897 և շինովնիկության մասին («Պատենավոր մարդը»՝ 1898 և այլն) գրված պատմվածքները և իր հայտնի դրամատուրգիական գործերը... Բնակարաններ, լիրիկական տողեր և էջեր, չեխովյան երկերին հատուկ մեղմ կոլորիտ և նրբին երանգներ, — այդ ամենն ընթերցողը կգտնի նաև նոր էություն գրված պատմվածքների և պիեսների մեջ: Սակայն այդ նոր էության ավելի աչքի է բնկնում չեխովյան ոչ թե վաղեմի հումորը, այլ մոլեգին զայրույթը, զսպված, բայց միշտ դրսևորվող ցասումը: Ամենեին պատահական չի կարելի համարել այն, որ նորից պատկերելով շինովնիկներին, Չեխովը սարկազմով է նկարագրում նրանց, և շինովնիկության քննադատությունը դարձնում իշխող կարգերի դեմ ուղղված սուր քննադատություն:

Չեխովի մի շարք գեղարվեստական ստեղծագործությունների տաղանդավոր իլյուստրատորներ, Կուկրինիկսի ստորագրությամբ հայտնի նկարիչները շատ լավ են նկատել հատկապես այդ մոռյլ սարկազմը և կարողացել են իրենց գեղագիտական ուրույն մեկնաբանությամբ ցուցադրել և ընդգծել չեխովյան նոր հայեցողության հատկապես այդ կարևոր հատկանիշը:

Չեխովին լավ էին հայտնի Գողը և ապա Սալտիկով-Շչեգրինի գործերը: Բնորոշ է այն, որ շինովնիկության բնութագրմանը նվիրված իր գործերում նա ավելի խտացած գույներով էր նկարագրում իր մոռյլ «հերոսներին» և նկարներն էլ դարձնում էր հին աշխարհի դեմ ուղղված շատ սուր և անողոր «պատկերներ», դիտավորությամբ դեն նետելով թե՛ հումորիստական երանգները, թե՛ անցյալի «պատմագրին» հատուկ կես-իրոնիական, կես-էլեգիական տոնը: Չինովնիկությունը միևնույն ցարական բյուրոկրատիան էր: Այդ փաստը Չեխովը չէր ընդգծում, բայց քելազում էր իր ընթերցողներին, նկատի առնել առաջին հերթին հենց այդ փաստը:

Մանրանալով ցարական բռնապետության հիմքը ամբացնող շինովնիկական բյուրոկրատիայի վրա և շեշտելով, որ այդ բյուրոկրատիան ճշգրտատերերին և բուրժուաներին միաձուլող մի «մշտական ֆլյուգել» է, լինինը ժամանակին սուր տողեր է նվիրել այդ բյուրոկրատիայի բնութագրմանը:

«Մի իուզուշկա է դա,— գրել է Լենինը,— որն օգտվում է իր ճորտատիրական համակրանքներից ու կապերից՝ բանվորներին ու գյուղացիներին խաբելու համար, «տնտեսապես թուլյին պահպանելու» և կուլակից ու վաշխառուից պաշտպանելու ու նրա վերաբերմամբ «խնամակալություն» հաստատելու պատրվակով կիրառելով այնպիսի միջոցառումներ, որոնք աշխատավորներին «ստոր ամբոխի» դրություն են իջեցնում, գլխովին մատնելով ճորտատեր-կալվածատիրոջ ձեռքը և դրանով նրան ավելի անպաշտպան դարձնելով բուրժուազիայի հանդեպ»¹:

Ուսումնական թվականներին հաստատվել էին «հետեֆորմյան» կարգերը, բայց այդ թվականներին կայուն էին ճորտատիրական կարգերի ախոյանները և ցարական բռնակալությունն էլ կալվածատերերի ու կապիտալիստների միությունն էր խարսխված մի կառավարություն էր, որի «ներկայացուցչությունն» էր ինքը՝ ցարական բյուրոկրատիան: «... Հայրենական բյուրոկրատիան,— նշում էր Լենինը,— փաստորեն կառավարում է սուսական պետությունը», թեև այդ «բյուրոկրատիան» գլխավորապես ռազմաշինեցներով համարվող բյուրոկրատիա է» ... Երբ Լենինը գրում էր իր ազդեցիկ և հանրամատչելի «Գյուղական շրջափոխումը» բրոշյուրը, նա այդտեղ նորից շեշտում էր, որ «Ոչ մի երկրում այնքան շատ շինվելիկներ չկան, ինչպես Ռուսաստանում»: Լենինը ընդգծում էր, որ շինվելիկական ցարական բյուրոկրատիան, ըստ էության, միևնույն ցարական բռնակալությունն է: «Ցարական ինքնակալությունն աստիճանավորների ինքնակալությունն է: Ցարական ինքնակալությունը ժողովրդի ճորտական կախումն է աստիճանավորներից և ամենից ավելի՝ ոստիկանությունից: Ցարական ինքնակալությունը ոստիկանության ինքնակալությունն է»²:

Սերտորեն կապված լինելով հարազատ ժողովրդի հետ, Չեխովը հանձարեղ և ճշմարտախոս նկարչին հատուկ ուշադրությամբ, ուսումնասիրելով իրական կյանքի երևույթները, տեսել է այն, ինչ որ չէին կարողանում նշմարել և ավելի հաճախ չէին ցանկանում տեսնել լիբերալ նարոդնիկության գաղափարախոսներն ու մունետիկները, Չեխովին լավ էին հայտնի նաև պաշքարի և կոնկրետ աշխատանքի փոխարեն կեղծ պատրանքներ կառուցող կամ ողբով լեցուն երգեր առաջադրող քաղքենիները: Չեխովը տեսնում էր, որ «գլխավորապես ռազմաշինեցներով համարվող» շինվելիկությունը, լինելով «հայրենական բյուրոկրատիա», ըստ էության, միևնույն ցարական բռնակալությունն է՝ իր «պատենավոր» մարդկանց և «ոնտեր-պրիշիբեններին» միջոցով ժողովրդին հիմարացնող, կուրացնող, խեղդող անիծյալ բռնակալությունը: Չեխովը բացահայտ կերպով այդ փաստը չէր ցուցադրում կամ արձանագրում,

բայց սարկազմով նետելով իր դիտողությունները և մոլեգին տոնով մերկացնելով շինվելիկության ներկայացուցիչներին, ծաղրելով ու դատափետելով «պատենավոր» մարդկանց և ստորաբարձ քաղքենիներին, նա, իհարկե, շատ ուժգին և շոշափելի հարվածներ էր հասցնում միապետական բռնակալության իրավական և «բարոյական» պատվարներին: Չեխովին հայտնի չէին լենինյան դիտողությունները, բայց Չեխովին հայտնի էին կյանքի փրական երևույթները: Եվ որովհետև Չեխովը հեղափոխական չլինելով հանդերձ, շատ ճշմարտախոս գեղագետ էր՝ «պատենավոր» մարդկանց, ունտեր-պրիշիբեններին, կեղծավոր ու ստախոս փարիսեցիներին, հորեկյանական միօրինակ ճառեր արտասանող ստորաբարձ մարդկանց, զանազան տիպի «բամբեններին» նա այնպես էր նկարագրում և բնութագրում, որ արդեն նկարագրական պրիմներով և նկարագրությունից բխող «եզրակացություններին» միջոցով ձանձակցում էր հայրենի ժողովրդի առաջավոր ներկայացուցիչների և հեղափոխական շարքերի ազատագրական մեծ հորձանքին: Լենինի երկերում կան էջեր, ուր Չեխովի անունը կամ չեխովյան երկերը չեն հիշատակվում, բայց նույն այդ էջերում նշվում են չեխովյան երկերի մեջ նկարագրված «հերոսները» և չեխովյան դիպուկ դիտողությունների հետ կապված պատկերավոր ասույթները: Լիբերալների, նարոդնիկների, զանազան գույնի թշնամիների դեմ մղված գաղափարական սուր մարտերի և հասարակական պայքարի հրատապ օրերին չեխովյան կերպարները և ասույթները շատ հաճախ հիշատակվել են որպես բողոքական թշնամիների, երկերեսանի և ստորաբարձ մարդկանց, ժողովրդի արթնացմանը խոչընդոտող փարիսեցիների դեմքերը մերկացնող դիպուկ խոսքեր-լուգունգներ...

Երբ հաշվի ենք առնում Չեխովի գաղափարական հարաբերությունները ռուս առաջավոր գրողների՝ Էրտելի, Պլեշչեևի, Մամին-Միբիբյակի, Տելեշովի, Կուպրինի, Վլադիմիր Կորոլենկոյի և մանավանդ Մաքսիմ Գորկու նման գործիչների հետ, երբ նկատի ենք ունենում Տոլստոյի, Գարշինի, Չայկովսկու, Լեյտանի, Նեմիրովիչ-Պանչենկոյի, Ստանիսլավսկու, Ռեպինի նման մտավորականների մոտեցումը չեխովյան խոսքին և բարձր արվեստին, և վերջապես, երբ ուշադրությամբ քննում ենք չեխովյան նամակների մեջ ցրված քննական դիտողությունները, զանազան դեպքերի և տարբեր գործիչների, օրվա հրատապ և «այրող» պրոբլեմների առթիվ նետված խոհուն և իմաստալից ակնարկները, շատ հարուստ այդ «նյութերի» պատկերավոր ֆոնի վրա չեխովյան շեշտված՝ սարկազմով լեցուն քննական դիտողությունները, քամբլեն-չինովնիկների բնութագրմանը նվիրված աշխատությունները ստանում են հասարակական մեծագույն նշանակություն: Այդ աշխատությունները ցուցադրում են արդեն հին աշխարհի դեմ ծառայող գեղագետի դիմաստվերը և ժողովրդի ազատագրական վերելքին օժանդակող շատ ակտիվ մտածողի դեմքը:

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, հրատ. 4, էջ 369:

2 Վ. Ի. Լենին, հատ. 6, էջ 464—465:

Չեխովի հիշյալ պատմվածքների հիմնական հատկանիշն է նաև այն, որ անիրավ ու ստոր մարդիկ, իշխող բռնակալներին սպասավորող «քամելոնները» և քամելոնատիպ մարդիկ, շինովնիկները և պոլիցիակալները նկարագրվում և բնութագրվում են նրա երկերում որպես իշխող կարգերի, իշխող խավար ուժերի պարագիտների ներկայացուցիչներ...

3

Արդյունաբերական կապիտալիզմի վերելքի առաջին ազդանշանները տակավին «միջնադարյին» ութսունական թվականներին գրավել էին ռուս հասարակական մտքի առանձին ներկայացուցիչների ուշադրությունը: Իննսունական թվականներին այդ սիմպտոմներն այնքան բացորոշ են դառնում, որ արձանագրվում են արդեն առօրյա պարբերական մամուլի էջերում և նոր տոն հաղորդում առաջավոր ռուս մտավորականության շարքերում բացահայտվող գաղափարական սուր բխումներին ու վեճերին: Իննսունական թվականներին դեմոկրատական ինտելիգենցիայի և համալսարանական ուսանողության առաջավոր շարքերի վրա նկատելի ազդեցություն են թողնում առանձնապես օրբաստրի ուժեղացող բանվորական շարժումները: Այդ օրերին քաջքայվում և քանդվում են իդեալիստ «հայրերի» պատրանքները: Առաջադրվում են նոր սկզբունքներ, նշվում են հասարակական շինարարության նոր ուղիներ: Սկսվում է նորից ինտենսիվ կերպով սոցիալական խնդիրների, կուլտուրական շինարարության պրոբլեմների գիտական-իմաստասիրական հարցերի սուր քննարկումը:

Ուսաստանում կապիտալիզմի զարգացման շնորհիվ նոր թափ էր ստացել գյուղական տնտեսության քայքայման և գյուղական հասարակության սոցիալական շերտավորման պրոցեսը: Երբ բռնկվում է խուլերայի համաճարակը և երբ գյուղական վայրերում սովի մռայլ ուրվականը գրավում է հասարակության ուշադրությունը, ավելի բացահայտ կերպով են դրսևորվում հասարակական կոնտրաստները, աշխատավոր խավերի տգիտությունն ու թշվառությունը, իշխող դասակարգերի սանձարձակ բռնակալությունը:

Չեխովի նամակները, ակնարկներն ու նոթերը, բազմաթիվ գեղարվեստական աշխատությունները ցույց են տալիս, որ նա այդ տարիներին կանգնած էր հումանիստական պատգամներին կառչած առաջավոր ռուս գրողների շարքերում: Սովի և համաճարակների մռայլ տարիներին նա գյուղական վայրերում հսկայական աշխատանք է կատարել: Չեխովին մենք տեսնում ենք գրչածարանների սանիտարական պայմանները և բանվորների կացարաններն ուսումնասիրող առաջավոր ռուս բժիշկների շարքերում: Կազմակերպելով հասարակական օգնության գործը, Չեխովը հանդես է գալիս բուժկայաններում և հիվանդանոցներում: Համակիված արտասովոր եռանդով, նա հումանիստ-բժշկի

աշխատանքն ամենասերտ կերպով շաղկապում է հասարակական-կուլտուրական ինտենսիվ գործունեության հետ:

Տազանրոզի քաղաքային գրագարանի ղեկավարներից մեկին ուղղված Չեխովի նամակները ցույց են տալիս, թե որքան կարևոր նշանակություն էր տալիս նա հատկապես գրքերի ընտրության գործին: Մերթ ընդ մերթ նա ինքն էր ընտրում ուշադրավ հրատարակությունները և ապա ուղարկում Տազանրոզ, երբեմն էլ հատուկ գրացուցակներ էր կազմում և ապա հայտնում իր կարծիքը առանձին հրատարակությունների մասին: Մի նամակում ընթերցողի ուշադրությունը գրավում է տեղեկատու-ինֆորմացիոն բաժնի նշանակության մասին արված կտրուկ դիտողությունը: Չեխովը գրագարանին առաջարկում է ստեղծել հատուկ մի նոր բաժին, հավաքել բառարանները և տեղեկատու ժողովածուները:

Չեխովը մեծ ուշադրություն է նվիրել դպրոցական շինարարությանը: Նրա անմիջական նախաձեռնությամբ գյուղական մի քանի դպրոցներ են հիմնվել: Այդպիսին է եղել Մելիխովոյի գյուղական դպրոցը: Չեխովն է հիմնել Մելիխովայից ոչ այնքան հեռու երկու գյուղերի՝ Տալեթի (1896) և Նովոսելյսկի (1895—1896) գյուղական ժողովրդական դպրոցները:

Հասարակական-կուլտուրական ինտենսիվ այդ աշխատանքը Չեխովին կապում է ժողովրդի հետ: Այդ աշխատանքի ընթացքում նա հնարավորություն է ստանում ուսումնասիրել հայրենի իրականությունը, գյուղական միջավայրը, աշխատավորների կացությունը: Սախալինյան տակավին թարմ և այրող հուշերը, պտույտներն իր մեծ հայրենիքի զանազան մասերում, մոտիկ հարաբերություններն առաջավոր գործիչների հետ, իրական ղեպքերի և երեվույթների ուշադիր ուսումնասիրությունը դարձնում են Չեխովին կորովի և ամուր մտածող: Նրան հայտնի էր, որ իշխող պայմանների շնորհիվ շատ բան անհնարին է նշել և արձանագրել: Անհրաժեշտ էր մշակել հատուկ խոսելաձև կամ «երկպալան» նուր ոճ՝ ասել ամեն ինչ, արժարժել և արտահայտել ճշգրիտ կերպով «այրող» հարցերի մասին որոշակի կարծիքներ և միևնույն ժամանակ հաշվի առնել գրաքննության հրահանգները: Նովելիստ և դրամատուրգ լինելով հանդերձ, Չեխովը միաժամանակ բժիշկ էր, բնագետ, ամենից առաջ, գիտության համոզված ջահակիր: Մեծագույն ուշադրությամբ ուսումնասիրելով շրջապատի բնորոշ երևույթները, նա միշտ աշխատում էր դիտնականի նման մոտենալ իրականությանը, գիտնականի «մեթոդով» մոտենալ ոչ միայն իրական ղեպքերի, այլ նաև կենդանի մարդկանց հոգեկան ապրումների և հույզերի բնութագրմանը:

Ինչպես ցույց են տալիս նրա տաղանդավոր բնանկարները, Չեխովը սիրում էր կյանքը, բնությունը, հայրենի վայրերը, «ներդաշնակ ապրումներով» աչքի ընկնող մարդկանց, գեղեցկությունը, գաղափարական բարձր տենչերն

ու հուլիսը: Նա երազում էր երջանիկ, լուսավոր հետազոտող մասին և մուրհանորեն ծառանում բնության, կյանքի, մարդկանց գեղեցկությունն աղարտող բռնակալների, քամելեռոնների, տղրուկների դեմ: Իշխողների ու բռնակալների դեմ ուղղված անսահման ատելությունը կապված էր հենց Չեխովի արտասովոր կենսատենչ հայեցողության հետ:

Այդպես էր մտածում նա և հասարակական շարժքների, և մարդկանց թշվառությունների, և առանձին անհատների հոգեկան ծանրագույն ապրումների նկարագրությանը և լուսաբանությանը:

Ռեալիստ գրող լինելով հանդերձ, Չեխովը շատ և շատ հեռու էր թե նատուրալիստական «դպրոցի» հետևորդներից և թե բոլոր այն «տեսաբաններից», որոնք հասարակական խոցերի, ժողովրդի թշվառության, չքավոր աշխատավորների տառապանքների արմատները որոնում էին առանձին մարդկանց կամ մարդկանց առանձին խմբավորումների ֆիզիոլոգիական-ժառանգական կառուցվածքի մեջ: Մեծարանքով հիշատակելով նացիոնալիզմի դեմ ծառայող Զուլայի խիզախությունը, Չեխովը միաժամանակ ընդգծում է, որ ինքը երբեք չի կարող համաձայնել Զուլայի միակողմանի և հակադիտական դրույթների հետ: Դատափետելով Մաքս Նորդաուին, իր «Մե վանականի» մեջ նա աշխատում էր նույնիսկ հոգեկան հիվանդությունների մեկնաբանությանը մոտենալ գիտական դիրքերից: Մեծ տեղ հատկացնելով իր բոլոր երկերի և առանձնապես 1890 թվականից հրատարակված երկերի մեջ սոցիալական ներհակությունների նկարագրությանը՝ իշխող կարգերի դատափետման, բռնակալների և բռնությունը քողարկող քամելեռոնատիպ տղրուկների մերկացմանը, Չեխովը հենց իրականության այդօրինակ լուսաբանությամբ շեշտում է, որ հասարակական խոցերի և աշխատավոր խավերի ներկայացուցիչների տառապանքների իրական արմատներն անհրաժեշտ է որոնել հասարակական իրականության և հասարակական հարաբերությունների մեջ: Չեխովի աշխատությունների հիմնական այդ հատկանիշը և նրա հայեցողության հիմնական այդ գիծը տեսնում էին նրա բոլոր ընթերցողները, նույնիսկ ուսուցիչային տիրակալության տարիներին:

Երբ լույս է տեսնում Չեխովի «Մուծիկներ» պատմվածքը, տպավորությունն այնքան անակրեկալ և արտասովոր է լինում, որ նույնիսկ Չեխովի սրող ընթերցողների շարքերում ստեղծվում է անբավականություն: Չեխովի «գյուղական» պատկերները և մանավանդ նրա «Մուծիկներ» պատմվածքը դառնում են օրվա ամենահրատապ պրոբլեմներին արձագանքող գեղարվեստական նշանակալից վավերագրեր:

«Մուծիկներ» պատմվածքը լույս է տեսել 1897 թվականի ապրիլին, այն օրերին, երբ ռուս ինտելիգենցիայի շարքերում շատ սուր բախվում էին նարոդնիկները և մարքսիզմի հետևորդները: Նարոդնիկները իդեալականացրած

գույներով նկարագրելով գյուղական իրականությունը և ռուսական «համայնքը» կամ «համայնական» մտայնությամբ տարված «միամիտ» և «անգասակարգ» գյուղական հասարակությունը, կոչ էին անում կովի ելնել կապիտալիզմի դեմ: Հակառակ նարոդնիկներին, մարքսիզմի հետևորդները նշում էին, որ կապիտալիզմը ոչ միայն քաղաքներում, այլ նաև գյուղական վայրերում քայքայիչ հարվածներ է հասցրել վաղեմի տնտեսական կարգերին՝ նպաստել գյուղական հասարակության շերտավորմանը: Չեխովի պատմվածքները և մանավանդ նրա «Մուծիկները» հասարակական այդ մթնոլորտում պիտի դառնային նարոդնիկների իդիլիական և քաղցրավուն նկարագրությունների դեմ ուղղված շատ սուր հարվածներ: Չեխովի երկերի սովետական հրատարակությանը կցված բովանդակալից ծանոթագրությունների մեջ շատ ուշագրավ են ցարական գրաքննիչ Սոկոլովի հատուկ գեկուցագրից հանված բնորոշ քաղվածքները:

Իր գեկուցագրում Սոկոլովը նշում էր, որ Չեխովը «շափազանց մուսլ գույներով» է նկարագրել գյուղացիների կացությունը: Այս հիշատակելով Չեխովի պատմվածքի հակահառավարական տենդենցները, գրաքննիչը առաջարկում էր ժուռնալի մեջ տպագրված տեքստից կտրել և ոչնչացնել մի ամբողջ էջ: Ինքը Չեխովը, — ինչպես հաղորդում են նրա երկերի խմբագիրները, — ժամանակին հանել է իր պատմվածքի տեքստից մի ամբողջ գլուխ: Այդտեղ Չեխովը նկարագրել էր գյուղացիներին և նրանց գրույցները կրոնի և իշխանության մասին: Շատ բարձր էին գնահատել Չեխովի պատմվածքը Սուվբատով-Յուծիևր և ապա Նեմիրովիչ-Պանչենկոն՝ Չեխովին ուղղված իրենց նամակներում: Չեխովի պատմվածքը նորից ընդգծում էր այն փաստերը, որոնք ժամանակին շեշտվել էին նարոդնիկների հետ գաղափարական ուրույն կապերով կապված Գլեբ Ուսպենսկու ռեալիստական ակնարկների մեջ: Ուսպենսկին այդ ակնարկներով քանդում էր նարոդնիկների ջանքերով ստեղծված պատրանքները և ցույց տալիս նոր գյուղական իրականության իսկական պատկերը: Չեխովի նոր գործը գալիս էր լրացնելու այն, ինչ որ արդեն արձանագրվել էր, բայց ավելի հիմնավոր կերպով չէր տրված գեղարվեստական գրականության մեջ: Չեխովը հայտնի էր որպես բախվող հասարակական հոսանքներից կտրված և բավական հեռու կանգնած գրող: Եվ ահա այժմ՝ գաղափարական սուր մարտերի օրերին, տաղանդավոր այդ վիպագիրը և շատ ճշմարտախոս ռեալիստ գրողը հանդես էր գալիս առանց վարանումների, ամենակտրուկ կերպով, շատ ազդու պատկերների և իրականության գեղարվեստական վերարտադրության միջոցով հայտարարում էր և հաստատում այն, ինչ որ ամեն կերպ աշխատում էին ծածկել նարոդնիկները: Չեխովն իր ռեալիստական նկարներով քանդում և ջախջախում էր նարոդնիկության իդեալիստ-գաղափարախոսների բոլոր պատրանքներն ու ցնորքները:

Գուցն անտեղի չէր լինի այստեղ նշել, ուր նույնիսկ 1904—1906 թվականներին՝ դպրոցական աշակերտության և համալսարանական ուսանողության առաջավոր շարքերում հեղափոխական ընդհատակյա խմբակները, հաճախ քննելով կապիտալիզմի զարգացման պրոբլեմը, գյուղացիական հարցը, նարոդնիկների և մարքսիստների գաղափարական բախումները, ուսումնասիրում էին ոչ միայն առանձին տնտեսագետների հետազոտությունները, այլև Գլեբ Ուսպենսկու աինարկները, նարոդնիկ-բեյե-տրիստների գյուղական աինարկները և առանձնապես Չեխովի գյուղական պատմվածքները: Չեխովի ստեղծագործության մեկնարանությունն էլ այդ խմբակներում կատարվում է բավական բնորոշ ձևով: Հասարակական հոսանքներից հեռու կանգնած Չեխովը բնութագրվում էր որպես մարքսիստների էրուլյանները հաստատող և հիմնավորող ռեալիստ-վիպագիր: Այդքան ահա հզոր էր Չեխովի հմայքը առաջին ուսական հեղափոխության նախամուտին՝ հեղափոխական խմբակների մասնակիցների շարքերում...

Չեխովը շատ մեծ նշանակություն էր տալիս իր աշխատությունների գեղարվեստական մշակմանը: Բավական է միայն ուշադրությամբ թերթել Չեխովի երկերի վերջին հրատարակությանը կցված ընդարձակ հավելվածների մեջ բերված փաստերը, որպեսզի ավելի ահեբե զսոսնա հսկայական այն աշխատանքը, որ կատարել է նա իր երկերի վերահրատարակությունների ժամանակ:

Բացի սուս ժողովրդից, Չեխովի ստեղծագործություններում նկարագրվել են նաև ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչները: Նացիոնալիզմի ամենահեռու նշույլն անգամ անհնարին է գտնել Չեխովի երկերում կամ էպիստոլյար հարուստ ժառանգության մեջ: Հայրենի ուս գրականության մոհիկանների հումանիստական բարձր պատգամներով է մոտեցել նա բոլոր ժողովուրդների ներկայացուցիչներին:

Վլադիմիր Կորոլենկոյին նա վերաբերվում էր առանձին սիրով ու հարգանքով: Կորոլենկոյի նման Չեխովն էլ չէր սիրում զիլ հնչյունները կամ սուր դիտանանները: Չեխովի շատ և շատ աշխատությունների մեջ նշմարվում են մեղմ կոնտուրները և տխուր մարդկանց դիմաստվերները: Չեխովն ինքը բնդգծել է իր այդ մոտեցումը 90-ական թվականներին՝ ընտրելով մի շարք պատմվածքների համար հատուկ վերնագիր («Մոսյլ մարդիկ»), դիտավորությամբ ընդգծելով, որ իր «մոսյլ» հերոսները կյանքից անբավական և իշխող պայմանների դեմ ծառայող զեմբեր են: Չեխովի թե պատմվածքների և թե մանավանդ պիեսների մեջ աչքի է քնկնում մեծ ուշադրությամբ ընտրված պատկերների նվագային կոլորիտը: Քննադատների կողմից քիչ չի նշվել այն, որ Չեխովի համար գրեթե միշտ սիրելի և հմայիչ է եղել ուսական միջին նահանգներին հատուկ դաշտանկարը: Աբիտանի նկարների կես տխուր և կես

զվարթ կոլորիտն էլ սիրելի և հմայիչ էր Չեխովի համար: Աբիտանի նկարներում, սակայն, միմիայն բնութայուն էր նկարագրվում և երգվում: Չեխովի աշխատությունների մեջ լիրիկական տրամադրությամբ լեցուն և զեղարվեստական մեծ ավելումով նկարված դաշտանկարների, լուս կամ խոսուն բնությունն, ուսնիներով շրջագծված այգիների նրբին կոլորիտը շողկապված էր հոգնաբեկ ու տխուր, մտախոհ կամ երազող հերոսների մեղմ մորմոքի, գանգատի, զուսպ բողոքի հետ: Հաճախ բողոքի խոսքը կարծես դիտավորյալ կերպով չէր ընդգծվում: Շատ անգամ հեղինակը կարծես աշխատում էր հանդես գալ նկարչի, սլառմողի կամ դեպքերը շատ սառնասիրտ կերպով արձանագրողի դերում: Սակայն նույնիսկ զուսպ Չեխովի պատմվածքների և պիեսների հիմնական մոտիվներն ընթերցողների համար շատ պարզ էին: «Այսպես չի կարելի այլևս ապրել», — ասում էին Չեխովի պատմվածքները հնորյա ընթերցողներին և միաժամանակ նրանց թեյազրում որոնել շարքների իսկական պատճառները և կովի ելնել անիրավության դեմ:

Իր «Գուսն» շատ հակիրճ պատմվածքը Չեխովը գրել է Սախալինից վերադառնալուց հետո, ճանապարհորդության ժամանակ, Յեյլոնի Կոլումբո քաղաքում: Յեյլոնը, ինչպես հայտնի է, երկրագնդի ամենագեղեցիկ կղզիներից մեկն է: Շատ գեղեցիկ է նաև Կոլումբո քաղաքը: Չանաղան ճանապարհորդներ իրենց մեմուարային գրությունների մեջ հիացումով են նկարագրել Յեյլոնի տեսարանները: Եվ ահա զարմանալի է այն, որ իր պատմվածքում Չեխովը ոչ մի խոսք չի ասում ոչ ծառայարդ հեռուների, ոչ էլ ցեյլոնյան գեղեցիկ բնանկարի մասին: Նա շատ սեղմ նկարագրում է մեծ նավի խուցերից մեկում խեղդվող և մահացող հայրենակիցներից մեկի՝ աշխատավոր գյուղացու ծանր ապրումները: Նա նշում է և գրեթե արձանագրում հայրենի հեռավոր վայրերի կարոտը քաշող իր դժբախտ հայրենակցի հուսահատ ապրումները և հույզերը: Ամբողջ պատմվածքի մեջ խոսք չկա Հնդկական օվկիանոսի տեսարանների մասին: Չեխովը տեսնում է միայն իր հայրենի ժողովրդի ներկայացուցիչներին և շատ նրբանկատ բժիշկ-հոգեբանի նման հետևում նրանց քայլերին ու խոսքերին: Չեխովը չի նշմարում ոչ մի հարավային էկզոտիկա, ոչ մի գեղեցիկ տեսարան, ոչ մի դուրբական արմավենի՝ երկրագնդի ամենագեղեցիկ կղզիներից մեկի ամենագեղեցիկ քաղաքում: Նա դիտավորությամբ ընդգծում է, որ իր այդ տխուր պատմվածքը գրել է Յեյլոնի Կոլումբո քաղաքում ճանապարհորդության օրերին: Դիտավորությամբ նա չի ցանկանում ծանրանալ այն բնանկարների վրա, որոնք սախալինյան մոսյլ ստվերներից հետո պետք է մեծ տպավորություն թողնեին: Նա ցանկանում էր հիշեցնել, որ դուրբական Կոլումբոյի ծովափին անգամ տեսել է հայրենի ժողովրդի զավակների անասման տառապանքը, բայց դիտավորությամբ սահմանափակվում է սոսկ մի դեպքի հասարակ արձանագրությամբ: Մի՞թե մենք կարող ենք ասել, թե այդ-

պես մոտենալով «թեմային» և այդպես նկարագրելով իր ճանապարհորդության էջերից մեկը, նա եղել է միայն շատ սառնասիրտ դիտող նկարիչ: Կարելի է, արդյոք, ասել, թե նա նպատակ չի ունեցել նկարագրական թուղթիկ ակնարկի միջոցով իր սեփական խոսքն ասել «այրոզ» պորբլեմների մասին կամ նույնիսկ ընդգծել իր ուրույն «տենդենցը»: Այդ հարցին կարելի է միմիայն մի պատասխան տալ: Կերտելով այնքան ինքնահատուկ իր ճանապարհորդական «էտյուդը», Չեխովը մտածված կերպով կանգ է առել հայրենի ժողովրդի աշխատավորների դեմքերի վրա: Նկարագրելով շատ մոռալ մի դեպք, նա նպատակ է դրել «այրել» ընթերցողների սիրտը, բացահայտել իր զուսպ մտորումների էությունը, նշել և ընդգծել իր անսահման ատելությունը հին աշխարհի սև տիրակալների նկատմամբ:

Եթե չեխովյան երկերում գծագրված նվագային բնանկարներն ասում էին, որ կյանքը գեղեցիկ է և մարդիկ պիտի ձգտեն ստեղծել երջանիկ և լուսավոր ապագա, ապա «Գուսև» ակնարկ-պատմվածքի նման կերտված գործերը այնպես էին կառուցված, որ կոչ էին անում կովի ելնել շարություն, անիրավության, բռնակալության դեմ:

Այդ նոր մոտիվը և, հիմնականում, տոլստոյական իմաստասիրության հետևողների դեմ ուղղված նոր հայեցողությունը Չեխովը շատ ցայտուն կերպով էր արծարծում իր հանձարեղ «Հիվանդասենյակ համար վեց» պատմվածքի մեջ: Այդ երկը եղակի տեղ է գրավում ոչ միայն չեխովյան պատմվածքների, այլև իննսունական թվականների ռուս ամբողջ գրականության մեջ:

Չեխովը նկարագրում է ցարական Ռուսաստանի հիվանդանոցներից մեկում ապրող խելագարներին: Այդպիսի մոռալ հիվանդանոցներ քիչ չեն եղել ցարական զնսպոտիայի տիրակալության օրերին: Բնորոշ է այն, որ Չեխովը դաժան սպանդանոց-հիվանդանոցի մոռալ նկարը դարձնում է ցարական կարգերի դեմ ուղղված շատ սուր քննադատություն: Չեխովի վիպակի հերոսը ստիպված է լինում հրաժարվել մոռալ դեպքերի անդորր ու սառնասիրտ դիտողի դիրքերից: Բողոքի ուղին է նա բռնում և ինքն էլ նետվում խելագարների շարքերի մեջ: Չեխովը շատ որոշակի կերպով շեշտում է, որ սպանդանոց-հիվանդանոցի խելագարներից շատերն ամենևին խելագարներ չեն և որ ցարական կարգերում ստեղծված դաժան պայմանների շնորհիվ ամեն վայրկյան խելագարների շարքերը կարող են նետվել անիրավության դեմ ծառայող նույնքան շատ խելացի մարդիկ: Նկարագրելով իր հերոսների ապրումները, Չեխովը մերկացնում և դատափետում է ոչ միայն սպանդանոց-հիվանդանոցի ղեկավարներին, այլ նաև իշխող վայրագ կարգերը: Պատմվածքի մեջ մենք տեսնում ենք և «պուլսիցիստական» սուր ակնարկների բնույթ կրող դիտողությունները, և սկզբից մինչև վերջ շատ հետևողական կերպով արծարծվող «տենդենցիա»:

Պատմվածքի մեջ հերոսներից մեկի խոհերն ու մտորումները ոչ միայն

ծանր ապրումներով տարված բժշկի հոգեկան տագնապն են նկարագրում. այլ նաև այդ հերոսի կողքին կանգնած հեղինակի դայրալից դիտողությունները:

«... Գատական սխալն այժմյան դատավարության պայմաններում շատ հնարավոր է ու դրա մեջ ոչինչ չկա զարմանալի»: այդ տողերից հետո Չեխովն սնցնում է ոչ միայն հիվանդանոցներում ստեղծված անօրինակ կարգերի, այլև ցարական համայն կարգերի մերկացման և դատափետման:

«... Այն մարդիկ, որոնք պաշտոնական, գործարար վերաբերմունք ունեն դեպի ուրիշի տառապանքը, օրինակ՝ դատավորները, ոստիկանները, բժիշկները, ժամանակի ընթացքում, սովորական դառնալու հետևանքով, այն աստիճան քարսիրտ են դառնում, որ եթե ցանկանան էլ՝ չեն կարող իրենց դիմողներին վերաբերվել այլ կերպ, քան ձևականորեն: Այս տեսակետից նրանք ոչնչով չեն զանազանվում գառ և հորթ մորթող ու նրանց արյունը չնկատող գեղջուկից: Իսկ դեպի անհատը ձևական, անհոգի վերաբերմունք ցույց տալու դեպքում՝ անմեղ մարդուն բոլոր իրավունքներից զրկելու և տաժանակիր աշխատանքների դատապարտելու համար դատավորին պետք է միայն մի բան՝ ժամանակ... որպեսզի պահպանի որոշ ձևականություններ, որոնց համար դատավորին ռոճիկ են վճարում, և այնուհետև ամեն ինչ վերջացած է: Հետո արդարություն ու պաշտպանություն փնտրիր այդ փոքրիկ, կեղտոտ քաղաքում, երկաթուղուց երկու հարյուր վերստ հեռավորության վրա: Եվ մի՞թե ծիծաղելի չէ մտածել արդարության մասին, երբ ամեն մի բռնություն հասարակությունն ընդունում է որպես խելացի և նպատակահարմար անհրաժեշտություն, և ողորմածության ամեն մի ակա, օրինակ, արդարացման դատավճիռ, առաջ է բերում չբավարարված, ռիսակալ զգացմունքի մի մեծ պոթկում...»³:

Կարելի էր հիշատակել շատ ավելի ցայտուն էջեր և տողեր, որոնք բնութագրում են հենց չեխովյան հայեցողության նշանակալից նոր հատկանիշները: Չեխովի խոսքն ու եզրակացությունն արտահայտված են շատ որոշակիորեն: Չի կարելի և միանգամայն անհնարին է, — ասում է նա, — խաղաղ ու անդորր կերպով արձագանքել դաժան իրականության մոռալ երևույթներին: Անհրաժեշտ է կովի ելնել բռնակալների ու բռնությունները քողարկողների դեմ: Բողոքի սուր և կտրուկ շեշտը այնքան իշխող մոտիվ է դառնում չեխովյան աշխատությունների մեջ, որ թելադրում է ընթերցողներին՝ միշտ հաշվի առնել անգամ մեղմ կոլորիտով շրջագծված երկերի քննարկման և լուսաբանության ժամանակ: Բողոքի այդ սուր շեշտը նշմարվում է ռեալ իրականությանը նվիրված չեխովյան բոլոր երկերում: Նա որոշակի կերպով ցույց է տալիս, որ մարդկային տառապանքները և հասարակական խոցերը կապված

3 Ա. Պ. Չեխով, Հետիք երկեր, 1948, էջ 194 (թարգմ. Խոնդկարյանի):

են որոշ հասարակական պայմանների ու կարգերի հետ: Այդ միտքը նա հաճախ արտահայտում է շատ նրբին կերպով, թուղթիկ մի դիտողություն է նետում, բայց և այնպես միշտ ընդգծում է այն:

Նետվելով բունկալուսյան և շարուսյան, կեղծիքի և փարիսեցության դեմ, Չեխովի հերոսները ձգտում էին դեպի դարձր լուսավոր օրերը: Այդ հերոսները շխտվյան գործերի մեջ նշում են անձեռնմխել, որ գիտություն և աշխատանքի ամրակուռ պատվանդանին կանչած նոր մարդը կարող է և պետք է հիմնովին հեղաշրջի հին կյանքը: Կարևոր այդ մոտիվը շատ որոշակի է նշում շխտվյան ներհուն աշխատությունների մեջ: Ահա թե ինչու առանձնապես շխտվյան դրամատուրգիան, շնայած իր տխուր երանգներին, հասարակական լայն շրջաններում ավելի հաճախ մեկնաբանվում է որպես կյանքի և աշխատանքի հիմնավորում:

Նկարագրելով իր հերոսների տենչերն ու մտորումները, Չեխովը գրում էր, որ իր հիմնական նպատակն է եղել կերտել ոչ թե ողբերգություն կամ դրամա, այլ կոմեդիա: Կատեգորիկ կերպով նշելով այդ միտքը, նա դրանով իսկ բացահայտում էր իր դիրքը հին աշխարհի և նրա հետ կապված տիպարների նկատմամբ:

Չեխովի այդ ուրույն մոտեցումը ղեմավորական նոր լսարանը, պետք է ասել, լիովին «ընդունում» էր: Այդ պատճառով «Քեռի Վանյայի» մեջ հանդիսատեսը չէր տեսնում տխուր և հուսահատ իմաստ: Այդ պիեսի այնքան նշանակալից վերջին «ատենախոսությունը», շնայած իր կրոնական «կեղևին», այդ լսարանը մեկնաբանում էր որպես աշխատանքի և կյանքի զովք, իսկ Սոնյային էլ համարում էր տուրգենևյան արձակ բանաստեղծության մեջ երգված անձնվեր հերոսուհու նման գեղարվեստական կերպար: Ականավոր դերասանուհի Վերա Կոմիսարժևսկայայի «մեկնաբանությունը», համեմատյան դեպս, այդպես էր և այդ մեկնաբանությունն արդեն սկսվող ռեակցիայի տարիներին համարվում էր համոզիչ և միանգամայն ճշգրիտ մի մեկնաբանություն: Չեխովի պիեսի հիմնական հերոսներն այդ օրերին դիտվում էին որպես գորշ իրականությունից անբավական կորովի գործիչներ և գաղափարական նոր որոնումներով տարված կենդանի դեմքեր: Չեխովի «Բալենու այգին» պիեսում կար տուրգենևյան ջերմ նկարներին հատուկ լիրիկական կորրիւ: Սակայն Չեխովի մոտեցումը ազնվական հերոսների անուրջներին՝ տարբերվում էր տուրգենևյան հայեցողության ինքնահատուկ «ասպեկտից»: Հնորյա գեղեցիկ պուրակը անհետացող անցյալի սիմվոլն էր, բայց այդ պուրակը այլևս պաշտպաններ և երգիչներ չունեիր: Վաղեմի անցյալի մշակ համոզված երկրպագուն ծեր սպասավորն էր: Դա էլ մահվան դատապարտված միայնակ մի սովեր էր:

Հին տերերի անհետացող աշխարհի «գերնգմանափորի» վերում պիեսի

մեջ հանդես է գալիս հասարակական նոր ուժի՝ բուրժուազիայի ներկայացուցիչը: Դա է օրվա ամենագուր տիրակալը և այդ նոր տիրակալը շարժվում է վստահ քայլերով և առաջադրում կտրուկ ծրագրեր: Պիեսում առանձին տեղ է գրավում երիտասարդության ներկայացուցիչը՝ ուսանողը: Առաջ նետվող, բունության և խարխուլ պատգամների դեմ ծառացող այդ միամիտ և էքսպանսիվ ուսանողի իդեալները չէին կարող մոտիկ, հարազատ, հասկանալի լինել ոչ «Բալենու այգու» տիրակալներին և ոչ էլ դրանց հետ կապված մարդկանց համար: Մեղմ ու թեթև իրոնիայով ընդթագրելով իր խենթ հերոսին, Չեխովը ակներև կերպով ձայնակցում էր «հոսանքի դեմ» նետվող այդ «խենթին»:

«... Մարդկությունն առաջ է ընթանում՝ կատարելագործելով իր ուժերը: Այն բոլորը, ինչ անհասկանալի է նրա համար ներկայումս, երբեք կդառնա մոտիկ, հասկանալի. անհրաժեշտ է միայն աշխատել, բոլոր ուժերով օգնել նրանց, ովքեր որոնում են ճշմարտությունը...»:

Երբ մենք կարդում ենք նման տողեր, նորից տեսնում ենք կրոնական պատգամների և միստիկայի դեմ ծառացող, բնագիտության հաղթանակները նկարագրող և գիտության արժեքները մեծարող Չեխովի կերպարը: Չեխովի երիտասարդ հերոսի ոճը առաջ նետվող, կորովի և խիզախ գործչի կտրուկ լեզուն է, հին օրերին՝ 1905 թ. հեղափոխության նախամուտին կազմավորվող առաջավոր ուսանողության էքսպանսիվ ներկայացուցչի ոճը: Չեխովը հենց իր այդ հերոսին էլ թելադրում է նետվել լուպախինների գործնական իմաստասիրության դեմ: «...Ես կարող եմ անցնել ձեր կողքով, ես ուժեղ եմ և հպարտ: Մարդկությունը քայլում է դեպի բարձր ճշմարտությունը, դեպի բարձր երջանկությունը, ինչպիսին միայն հնարավոր է աշխարհում, և ես առաջին շարքերում եմ...»: Պիեսի մեջ նկարագրված բոլոր դեմքերից ամենից կենդանի և թարմ գույներով, սիրով ու համակրանքով կերտված է հենց այդ «խենթ» ուսանողը, որի հանդիսավոր և միամիտ ելույթների պաթոսն էլ Չեխովը դիտավորությամբ ընդգծում է շատ ջերմ կերպով:

Չեխովի «Ճայր» պիեսի մեջ շատ ավելի ուժեղ էր հին աշխարհի տրագիցիաների, մտայնության և մորալի դեմ ուղղված քննադատությունը: Հին Պետերբուրգի Ալեքսանդրինյան թատրոնի տրագիցիոն և մշտական լսարանի համար այդօրինակ նուրբ և սուր քննադատությունը ոչ միայն օտար ու անհարազատ էր, այլև միանգամայն անհանդուրժելի: Ոչ մի տաղանդավոր դերասան, ոչ մի տաղանդավոր ռեժիսորա կամ բեմադրություն չէր կարող ստիպել համբերատար կերպով լսել խարխուլ, հին արժեքները այնքան յուրահատուկ ձևով դատափետող գրողի խոսքն ու պատգամները:

Ուրա գրականության որոշ ներկայացուցիչներ ժամանակին նշել են, որ շխտվյան հերոսներից մեկի՝ Տրիգորինի խոսքերը կարելի է մի որոշ շափով ժամանակի ակտուալ խնդիրներին արձագանքող դիտողություններ համարել:

«... ես սիրում եմ ահա այս ջուրը, ծառերը, երկինքը, ես զգում եմ բնությունը, նա իմ մեջ տենչ է արթնացնում, գրեթե անհաղթահարելի ցանկություն: Բայց չէ՞ որ ես միայն պեղաժիստ չեմ, չէ՞ որ ես նաև քաղաքացի եմ, սիրում եմ իմ հայրենիքը, ժողովուրդը, զգում եմ, որ եթե գրող եմ, ապա պարտավոր եմ խոսել ժողովրդի մասին նրա տառապանքների, նրա ապագայի, գիտություն, մարդու իրավունքների մասին և այլն...»: Բավական է միայն թերթիկ գաղափարազուրկ արվեստի սկզբունքները դրվատող հնօրյա գեղագետների աշխատությունները, որպեսզի ակներև դառնա Տրիգորինի այնքան բնորոշ «ինքնաքննադատության» իրական նպատակն ու իմաստը:

Միևնույն «Ճայր» պիեսի մեջ բնորոշ են մի ուրիշ հերոսի՝ բժիշկ Գորնի խոսքերը, որոնք նույնպես ուղղված են առաջավոր գաղափարական արվեստի նշանակությունը թերագնահատող և բացատրող գեղագետների դրույթների դեմ:

«... Եկի մեջ պարզ, որոշակի միտք պետք է լինի: Գուր պիեսի իմանաք, թե ինչի համար եք գրում, այլապես, եթե գնաք միայն նկարագրողի այդ ճանապարհով, առանց որոշակի նպատակի՝ կմոլորվեք, և ձեր տաղանդը կըկործանի ձեզ...»: Երբ մենք համեմատում ենք նման տողերը շխուշյան նամակների մեջ ցրված գիտողությունների հետ, մեզ համար ավելի պարզորոշ են դառնում մեծ գրողի գրական-գեղարվեստական հայացքների կարևորագույն հատկանիշները: Չեխովի նամակները հին օրերին հայտնի չէին ոչ հասարակական լայն շրջաններին և ոչ էլ նույնիսկ գրականության և քննադատության ներկայացուցիչներին: Լավ էին հայտնի միմիայն Չեխովի գեղարվեստական երկերը՝ պատմվածքները և գրամատուրգիական գործերը և ահա նշանակալից է այն, որ հին օրերի այդ ընթերցողների համար պարզ էին շխուշյան գործերի իրական իմաստն ու գաղափարական սկզբունքները: Նրանց համար պարզ էր Չեխովի թե՛ շատ ուրույն հայացողությունը, թե՛ նրա մոտեցումը հայրենի իրականության երևույթներին, թե՛ մանավանդ կտրուկ պայքարը բռնակալության և անիրավության, սև գաղափարախոսների դեմ: Չեխովի առանձին գեղարվեստական գործերի տխուր երանգները նույնպես հայտնի էին գեմոկրատական լսարանի ակտիվ ներկայացուցիչներին: Սակայն հնօրյա այդ ընթերցողների համար պարզ էր նաև շխուշյան հայացողության օպտիմիստական ուղղությունը: Տխուր գեպքերը, տխուր երանգներն ու կոլորիտն այդ օրերին քննարկվում էին շատ ուրույն ասպեկտով, որպես իշխող կարգերի զոհերի ծանրագույն կացությունը ցուցադրող և բնութագրող «մոտիվներ» և միաժամանակ, որպես այդ կարգերի հեղաշրջման անհրաժեշտությունը բացահայտող մոմենտներ: Հայրենի աշխարհի բնականորեն, լիրիկական առանձին էջերի նվագային կոլորիտը, լուռ դաշտերի նկարները, մեղմ գույները — այդ ամենը հմայում էր ընթերցողներին, որոնք կսկիծով էին լսում նորանոր տխուր լուրերը սիրելի գրողի ծանր հիվանդության մասին:

Սակայն և այնպես, միևնույն այդ ընթերցողները շխուշյան գործերի մեջ տեսնում էին կյանքը, աշխատանքը, գիտությունը, ժողովրդին մեծարող և կենսատենչ հայացողությամբ տոգորված հումանիստ-մտածողի հմայիչ դեմքը:

Այդպես էին մեկնաբանում Չեխովին հետո անցյալում առաջավոր բանվորները, մտավորականները, ուսանողները:

Չեխովի պիեսներն այդ ընթերցողների համար ոչ միայն թատերական նոր կուլտուրայի զարգացմանն օժանդակող գործեր էին, այլ նաև հին աշխարհի և հին տրագիգիաների դեմ ուղղված երկեր: Մաքսիմ Գորկու պիեսների («Քաղքենիներ», «Արևի որդիք»), Նայդենովի բնորոշ պիեսը («Վանյուշինի զավակները»), նման ուրիշ գործերը հեղափոխական տրամադրություններով համակված թատերասերների շրջանում մեկնաբանվում էին նույնպես շատ յուրահատուկ ձևով: Չեխովի գրամատիկական աշխատությունների իմաստն էլ մեկնաբանվում էր այդպես: Ստեղծվել և ստեղծվում էր արդեն նոր լսարանը: Այդ լսարանը նշմարում էր շխուշյան պիեսների մեջ հնչող նոր մոտիվները և հասկանում հումանիստ մեծ գրողի արվեստի և հայացողության իրական իմաստը:

Իր «Նրեք բույրերը» պիեսի մեջ Չեխովը տակավին 1901 թվականին հանդես է եկել որպես գալիք «առողջ» և «ուժեղ» մրրիկի երգիչ: Պիեսի հերոսներից մեկը մարգարեական խոսքեր է նետում աշխատանքի ու գիտության անխուսափելի հաղթանակի մասին:

Անցնում է երեք տարի և Չեխովը նորից իր նոր ստեղծագործություն մեջ (1903 թ.) կրկնում է նույն խոսքերը ավելի կտրուկ: Այդ պիեսի մեջ («Բալանու այգին») երիտասարդ հերոսներից մեկը ջերմ ներքող է ձոնում գալիք լուսավոր օրերին և լսում է ապագայի քայլերը: Հասարակական նոր ուժի ներկայացուցիչը՝ Լուպախինը կիրթ է և դելիկատ: Միևնույն ժամանակ դա սրբազան քանդող գիշատիչ է: Պիեսի ընդհանուր կոլորիտը ցուցադրված է լեիտանյան նկարների հատուկ տոնով: Կա մեղմ տխրության ուրույն շեշտ ամբողջ գործի մեջ: Բայց և այնպես, նկարագրելով նոր կյանքի ավետաբեր Անյայի կերպարը, Չեխովը ձայնակցում է հայրենի իրականության մեջ սկսված նոր շարժումներին՝ լուսավոր և երջանիկ ապագայի համար մարտնչող թարմ ուժերի ներկայացուցիչներին: 1903 թվականին Չեխովը գրում է իր «Հարսը» պատմվածքը: Դա արդեն հիվանդ և մահվան շեմին կանգնած արձակագիր-գրամատուրգի վերջին գործն է: Նրանում նորից ուժգին հնչում է կյանքի երգը, կենսատենչ հայացողության հատուկ ինտոնացիան, ծավալուն և «լայնարձակ» ապագայի մասին ակնարկ նետող նոր երիտասարդության ներկայացուցիչների ձայնը...

Չեխովի բարձր արվեստը, նրա մեծ վարպետությունը, հանճարեղ օնախուս-գեղագետին հատուկ ուշադիր մոտեցումը կյանքի բնորոշ երևույթներին՝

միշտ եղել է սովետական գրողների համար անցյալի կուլտուրական ժառանգության կարևորագույն վավերագրերից մեկը: Չեխովի բարձր արվեստը սիրելի և թանկ է կուլտուրական ժառանգության բարձր արժեքները գնահատող երկրի բոլոր ծայրերում ապրող առաջավոր ընթերցողների համար, որպես հին աշխարհի բռնակալների դեմ ուղղված ցայտուն մի վավերագիր: Այսօր, երբ Սովետական Միությունը իրական մի փաստ է՝ խաղաղության համար հերոսական մարտեր մղող ժողովուրդների համար, Չեխովի արվեստը հնչում է նոր ուժով՝ ընդդեմ հին աշխարհի բոլոր տիրակալների: Այսօր ժողովուրդների համար թանկ ու սիրելի է հումանիտա Չեխովը՝ հանճարեղ այն մտածող-գեղագետը, որն իր ստեղծագործական աշխատանքով, աննախընթաց ուժով մերկացրել և ցույց է տվել սեփականատիրական անիրավ և հիմնովին նեխված աշխարհի սնանկությունը...

ՎԱԿԻՄԻՐ ԿՈՐՈՒՆԿՈ

...Я говорю прощать, но не мириться, прощать побежденного, но не мириться, пока не побеждено дурное.

В. Короленко.

Վլադիմիր Կորոլենկոն պուշկինյան գեղարվեստական ավանդների տաղանդավոր ջահակիրներից մեկն է: Նա մոնումենտալ երկեր շունի: Հիմնականում հանդես է եկել որպես մանր վիպակների և ակնարկների հեղինակ: Բայց նրա գրական ժառանգությունը այնքան հարուստ և բազմերանգ է, որ այսօր էլ չի կորցրել իր արժեքը:

Կորոլենկոն ծնվել է 1853 թվականին: Նրա հայրը դավառական դատավոր էր, իսկ մայրը՝ լեհ կալվածատերի աղջիկ: Ցարական բռնակալությունը, խեղդելով լեհական ազգային շարժումները, արյան դաշտ էր դարձրել ողջ Լեհաստանը: Դատարանում և դպրոցներում մարդկային ամենատարրական իրավունքների բռնադատման դեպքերը աուրյա երևույթներ էին:

Ցարիզմի դաժան դեմքը ծայրամասերում սովորաբար ավելի բացահայտորեն էր աչքի զարնում: Հարածվում-ձնշվում էին ժողովրդական լայն զանգվածները՝ հին Ռուսիայի բոլոր վայրերում: Բայց ճնշված ազգությունների՝ ուկրաինացիների, հրեաների, լեհերի դեմ ուղղված հալածանքները ավելի էին նկատելի այն քաղաքում, ուր ապրում էր դատավոր Կորոլենկոյի ընտանիքը: Ցարական շինովնիկները դազանակի ուժով տարածում էին ցարական «կուլտուրա», հալածելով միաժամանակ ռուսական-դեմոկրատական կուլտուրայի հետեղներին: Հաճախ սոցիալական ներհակությունները շողկապվում էին ազգային տարբերությունների հետ և մեծագույն թափ էին հաղորդում միապետության դեմ ուղղված ընդհանուր դժգոհությունը:

Ահա այդպիսի մթնոլորտում է անվում պատանի Կորոլենկոն՝ շատ վաղ շրջանից արդեն ենթարկվելով ընդդիմադրական հոսանքի ազդեցությանը: Այդ մասին նա պատմում է իր գեղարվեստական ինքնակենսագրության մեջ («Իմ ժամանակակցի պատմությունը»): Դա խոշոր մի էպոպեա է՝ տոգորված հեղինակին հատուկ էպիկական տրամադրությամբ: Ամբողջ այդ ինքնակենսագրությունը գրված է գրեթե միևնույն ավյունով, ինչպես և Տոլստոյի հայտնի «Մանկություն և պատանեկություն»-ը: Տարբերությունը միայն այն է, որ Կորոլենկոն, կանգ առնելով իր կյանքի ավելի մեծ շրջանի վրա, խոշոր տեղ է հատկացնում ցարական կարգերի, ժանդարմների և բանտերի նկարագրությանը:

Ուսանողական տարիներից Կորոլենկոն նետվում է հեղափոխական շարժումների մեծ հորձանքի մեջ: Արդեն 1876 թվականին նա արսորվում է ռուս-նոդական շարժումներին մասնակցելու համար: Երկու տարի անց նա մտնում է լեռնային ինստիտուտ, բայց շուտով նորից է ձերբակալվում և արսորվում: Նման ռեպրեսիաները հետագայում կրկնվում են: Մի քանի տարի Կորոլենկոն Ցակոտայան նահանգում դրաղվում է կոշկակարությամբ և հողագործությամբ: Սիրիլյան բանտերում և արսորավայրերում նա ավելի հանգամանորեն է ծանոթանում ժողովրդական մասսաների իրական կյանքին: Այդ մասսաների կյանքն ու ապրումներն է նկարագրում իր սկզբնական ռեալիստական ակնարկներում և պատմվածքներում: Կորոլենկոն դառնում է ականավոր վիպագիր-հրապարակախոս, որի երկերը շատ բարձր են գնահատել լեհներ և Մաքսիմ Գորկին, շնայած անգամ այն բանին, որ «Կույր երաժիշտ»-ի հեղինակը ժամանակին եղել է նարոդնիկական «Ռուսական Բոգատստովո» ամսագրի խմբագրության անդամներից մեկը, հարել է «ժողովրդական սոցիալիստների» բուրժուական հոսանքին և Հոկտեմբերյան հեղափոխության օրերին չի կարողացել միշտ կողմնորոշվել:

Սովետական իշխանությունը մեծ նրբանկատությամբ մոտենալով տաղանդավոր ռեալիստ-արվեստագետին՝ հրատարակում է նրա գեղարվեստական և հրատարակախոսական երկերը: Քաղաքացիական պատերազմի ամենածանր տարիներին լեհները հրահանգում է հատուկ հոգատարությամբ հետևել Կորոլենկոյի առողջությանը:

Նարոդնիկների հետ բավական սերտորեն կապված Կորոլենկոն, որքան էլ այդ տարօրինակ թվար առաջին հայացքից, հաճախ իր երկերի մեջ քննադատել և ժխտել է նարոդնիկական տրադիցիոն սկզբունքները: Այդ կողմի վրա անհրաժեշտ է կանգ առնել թեկուզ ընդհանուր կերպով:

Կորոլենկոյի ռեալիստական երկերի հիմնական գիծն այն է, որ նրանց մեջ չկա ռուսական գլուղի և գլուղացիության որևէ քաղցրավուն ջատագովություն: Չկա հերոսների և մեծ անհատների ինդիվիդուալիստական այնպիսի

մեծարում, ինչպիսին նկատում ենք բոլոր նարոդներին մտա: Չկա ուսական գյուղական համայնքի իդեալականացումը: Իր հրապարակախոսական հայտնի ակնարկների մեջ անգամ («Մովի տարին») նա ընդգծում է, որ «համայնական» գյուղացիությունը ենթարկվել է սոցիալական շերտավորման, հիմնովին հեղաշրջվել ու ալլափոխվել է կապիտալիզմի զարգացման ընթացքում:

«... Գյուղում,— ասում է Կորոլենկոն,— կան հարուստներ և չքավորներ, կուլակներ ու գյուղատնտեսական բանվորներ, աշխատավոր գյուղացիներ, որոնք շահագործվում են. կա սոցիալական ուժեղ պայքար, որ օրըստօրե ուժեղանում է և ակնհայտ կերպով հեղաշրջում տրագիցիոն «համայնական» գյուղացիության իրական «դեմքը»:

Կորոլենկոն 1897 թվականի ուսական գյուղի իր այս բնութագրությամբ կարծես լրացնում է շխտովյան հայտնի «Մուժիկներ»-ի մտայլ եզրահանգումները: Չկան, ասում է նա, հավասար և միանման մուժիկներ, կան ֆեոդոտներ, իվաններ, չքավորներ, հարուստներ, աղքատներ և կուլակներ, բարոյական և անբարոյական, հարբեցող մուժիկներ... «Համայնական» գյուղացիական հասարակության մեջ չկա շահերի ներդաշնակություն...

Այդպես է վերաբերվում Կորոլենկոն նարոդնիկական ցնորքներին: Դրանից հետո ամենևին զարմանալի չէ, որ «Մովի տարին» Չխովի «Մուժիկներ»-ի հետ միասին կարծես դառնում է նոր առիթ՝ ուստական առաջավոր մամուլի էջերում նարոդնիկությունը խարաղանելու համար: Կանգ առնելով Կորոլենկոյի գրքի վրա, այդ մամուլի ականավոր ներկայացուցիչներից մեկը գրում է հետևյալ նշանակալից տողերը. «Հասարակության գիտակցության մեջ էլ ստեղծվել է բեկում, մի բեկում, որ սուր և ազմկալից կերպով արտացոլվել է գրականության մեջ»:

Այդ հասարակությունը հուսաբեկվել էր և այլևս չէր հավատում նարոդնիկության դոկտրինային, չէր հավատում այն հույսերին, որ կապվում էին «համայնակ» հետ: Կորոլենկոյի մոտ չենք տեսնում նաև նացիոնալիզմի կամ թե հինավուրց մեսսիանիստական գաղափարախոսության որևէ հետք: Ռուս ժողովրդի, գյուղացու, աշխատավորի կյանքն ու ապրումները չենք սիրով նկարագրելով, նա նույնքան չենք մտածում և համակրանքով է պատմում ծայրամասերի ճնշված և մոռացված ժողովուրդների մասին: Հին օրերին շատ բան նա չէր կարողանում ասել բացորոշ կերպով. շատ բան ստիպված էր արտահայտել այլաբանական ոճով: Բայց ընթերցողի, նույնիսկ չափազանց միամիտ ընթերցողի համար պարզ էր, որ հումանիտար պատմվածքների այդ հեղինակը անսահման ատերություն է վերաբերվում ամբողջ սեփականատիրական աշխարհին: Այդպիսի տպավորություն են թողնում անգամ Կորոլենկոյի այն երկերը, ուր բնության գեղեցիկ և պատկերավոր ֆոնի վրա բնութագրվում են տառապող և տանջվող մարդիկ: Կորոլենկոն մարդկանց մոտ

առանձին սիրով էր դրական հատկություններ որոնում. խուսափում էր նկարել կոռվը, ընդհարումները կամ աղմուկը:

Իր հայտնի պատմվածքներից մեկում պատմում է աքսորավայր մեկնող հեղափոխական ուսանողուհու մասին ու բնութագրում ամբողջ շրջապատը, սիրերյան աքսորավայրը, ուղիները, ժանգարմաներին, հեղափոխականներին: Նրա հերոսուհին «աղանդավորի» նման անհաշտ է: Այդ փոքրիկ պատմվածքի մեջ Կորոլենկոն շատ նուրբ կերպով բնորոշում է տարբեր շրջանի մարդկանց հարաբերությունները և հոգեկան հույզերը: Ընթերցողը նշմարում է մեղմ հայեցողությամբ համակված հեղինակի դիմաստվերը: Սիրերյան պատմվածքների մեջ այդ հայեցողությունը դառնում է այնքան որոշ, որ հատուկ գունավորում է տալիս մոայլ պեյզաժին, սիրերյան ուղուն, բուք ու բորանին: Ընթերցողը լավ է տեսնում այդ սոսկալի բնությունը, սառչող մարդկանց և լսում հեռավոր խուլ ձայները: Այնուամենայնիվ, չի կարելի ասել, թե նա սիրում է այդպիսի տեսարանները: Կանգ առնելով մոայլ տեսարանների վրա, նա ցանկանում է ավելի որոշակի ընդգծել գազազած աքսորական-թափառականի վիճակը: Եվ ամեն անգամ նորից հիշեցնում է, որ հեռավոր և տխուր վայրերում ցրված այդ մարդիկ նախ և առաջ տիրող հասարակական-բաղաձայն կարգերի գոհերն են, և որ այդքան գեղեցիկ կյանքը աղտոտել ու փշացրել են իշխող դասակարգերը: Կորոլենկոն մոայլ պեյզաժն էլ դարձնում է իշխող կարգերը նշավակելու միջոց: Այդ տեսակետից չափազանց ուշագրավ է սիրերյան ակնարկների «Վերջին շող» վերնագրով ակնարկը: Այստեղ նկարագրվում է սիրերյան շատ հետամնաց ու մոայլ վայրերից մեկը: Նեղ ձորակի մեջ, լենա գետի բարձր ափերին թառել են մի քանի խղճուկ խրճիթ: Զորակի մեջ անընդհատ մառախուղներ են լինում, սառը խոնավություն և անվերջ մթնշաղ, լավում է անտառի ծառերի խուլ խշռոցը. բնակիչներն էլ հիվանդոտ են ու համակված մշտական ապատիայով: Լենա գետը այդտեղ կոչվում է «Անիծյալ խորշ»: Կորոլենկոն նկարագրում է իր հանդիպումը ծեր պապի և թոռան հետ ու նրանց կյանքը: Վաղ առավոտյան, միայն շատ կարճ ժամանակով երևում է արեգակը. մանուկը իր պապին քարշ է տալիս դիտելու արեգակի տեսարանը: Ապա Կորոլենկոն թուցիկ կերպով պատմում է դեկաբրիստ Չերնիշևի մասին: Դա շատ կարճ ակնարկ է: Բայց նրա ամբողջ կառուցվածքը նորից հիշեցնում է սիրերյան հեռու վայրերում բանտարկված աքսորականների կյանքը:

«... Ամեն անգամ,— ասում է Կորոլենկոն,— երբ ես նորից հիշում եմ Սիրերը, իմ երեակայության մեջ պատկերանում են և այդ նեղ խորշը, և արագընթաց գետը, և իջևանի թշվառ տնակները, և հեռացող արևի վերջին շողերը...»:

Սիրերյան այդ հին հուշերը շատ ծանր են: Հեղինակը չի կարողանում սիրել սիրերյան լեռների և անտառների այն գեղեցկությունը, որ այնքան չու-

ուհատուկ գույներով նկարագրված է ճանապարհորդ Արսենեի «Դերսու Ուզա-
լա» գրքի վամ թե Յադեևի «Վերջին Ուղեհեն» վեպի մեջ:

Պիտի ասել, որ Կորոլենկոյի մոտ էլ կան զվարթ նկարներ: Գարնանային պեյզաժը նրա սրտին ավելի մոտ է: Այդ կողմից նա հիշեցնում է գուցե և Տուրգենևին: Տուրգենևյան պեյզաժը գրեթե միշտ անգործ է ու խաղաղ: Կորոլենկոյի մոտ բնությունը ավելի կենդանի է. անասաները խշշում են, գետը շարժվում է, լավում է բնության առույգ ձայնը: Հակառակ մի քանի քննա-
դատների կարծիքին, Կորոլենկոն որոշ շահով հիշեցնում է պանթեիստ նկա-
րիչներին:

Իր մի ակնարկում («Ակնթարթ») նա նկարագրում է ժայռոտ կղզու մեջ բանտարկված իսպանական ապստամբին: Դա փոքրիկ ակնարկ է, սակայն շատ բնորոշ է Կորոլենկոյի հայեցողության բնութագրման համար: Անցնում են օրեր, ամիսներ, տարիներ... Գալիս է մի օր, երբ ապստամբը փախչում է բանտից: Չորս կողմը ստեղծի մրրիկ է, աղմուկ և որոտ: Բարձր ալիքները տանում են նավակը դեպի ափ՝ դեպի ազատություն, հեղափոխական ընկեր-
ների մոտ: Այս անգամ արդեն մրրիկը գեղեցիկ է և զվարթ: Հնչում է ազա-
տության և պայքարի գեղեցիկ ազդանշանը, որ օպտիմիստական կոլորիտ է հազորդում այդ ակնարկին:

Միապետության տարիներին զեղարվեստական այս փոքրիկ գործը երի-
տասարդության վրա թողնում էր միևնույն տպավորությունը, ինչպես և Բայ-
րոնի «Շիլիոնի կալանավորը»: Կարելի է ասել, որ սիրբիոյան ակնարկների մեջ էլ հնչում է պայքարի մոտիվը. համենայն դեպս այդ մոտիվը սքողված կերպով հնչում է անգամ տխուր գործերում: Ահա հենց այդ էլ առանձին երան-
գավորում է տալիս Կորոլենկոյի ռեալիստական արվեստին: Նրա երկերի հե-
րոսները շարքային, շատ սովորական ու պարզ մարդիկ են: Հեղինակը դրանց կյանքը նկարագրում է սիրով ու համակրանքով: Հաճախ թվում է, թե նու
բժիշկ-հոգեբանի նման է մոտենում իր «մոռացված մարդկանց» կյանքին ու
ապրումներին: Կորոլենկոյի «Կույր երաժիշտը» այդ կողմից եզակի մի երկա-
սիրություն է, որ այժմ էլ մնում է ռուս դրականության ազամանդներից մեկը:
Պատմվածքի սյուժեն հասարակ է, կառուցվածքը պարզ, բայց ուժեղ տպա-
վորություն է գործում ընթերցողի վրա: Այդ պատմվածքի մեջ և՛ իրական
կյանքի նկարագրություն կա, և՛ հոգեկան աշխարհի ամենանուրբ վերլուծու-
թյուն: Իր հասարակ հերոսների մասին խոսելիս, Կորոլենկոն աշխատում է
տեսանելի դարձնել մարդկային հոգու մի անկյունը և նկարել այն աննշա-
րելի գծերը, որոնք ավելի տիպական գույներով են բնութագրում հոգեկան
ապրումների ամենանուրբ արահետները:

Նա մեծ ուշադրություն է դարձնում իր հերոսների արտաքին ձևերին,
քայլերին, շարժումներին: Շատ անգամ թվում է, թե ելնելով ականավոր ֆի-
զիոլոգ Անչենովի դրույթներից, նա աշխատում է «սեֆլեքսների» ուսումնա-

սիրությունը մոտենալ հոգեկան բարդ ապրումների ճանաչողությանը: Կորո-
լենկոյի դրական-քննադատական ակնարկներից հայտնի է, որ նա միևնույն
ձևով է մոտեցել Գոգոլի, Ուսպենսկու նման հեղինակների կյանքի ուսումնա-
սիրությանը: Ըստ երևույթին, արտոր, հանդիպումները դժբախտ մարդկանց
հետ, և ապա՝ հիվանդությունը մի քիչ միակողմանի ուղղություն են տվել
հոգեբանական-ֆիզիոլոգիական այդ պրպտումներին: Սակայն այդ «միա-
կողմանիություն» շնորհիվ Կորոլենկոն կարողանում է դիտել և արձանագրել
իր հերոսների իսկական հոգեկան տիպարը:

Ինչպես հայտնի է, այդպիսի հոգեբան էր նաև Դոստոևսկին: Բայց Դոս-
տոևսկու «դաժան» տաղանդի մեջ կար մի գիծ, որ անախորժ տպավորություն
է թողնում անգամ համբերատար ընթերցողների վրա: Դոստոևսկին առաջին
հերթին նշմարում էր միմիայն պաթոլոգիական, գրեթե «անլուծելի առեղծ-
վածներ»: Կառչած ֆատալիզմին և համակված միստիկական ապրումներով՝
նա համոզված էր, որ մարդկային բոլոր կրքերը, ձգտումները, տենչերը վա-
ղորոք պայմանավորված են ամենազոր ֆատումի տնօրինությամբ: Թերա-
զնահատելով հասարակության պատմա-հասարակական պայմանների նշա-
նակությունը, նա տեսնում էր միմիայն մեկուսացած անհատներին և իր հա-
րազատ միջավայրից կտրված միայնակ մարդուն:

Իսկ Կորոլենկոյի մոտ մենք չենք տեսնում ֆատալիստական և հուսա-
հատական այդ հայեցողությունը: Նրա մոտ մարդիկ սոցիալական տիպեր են և
միշտ կառչած են կոնկրետ միջավայրին: Երբեք նա չի մոռանում, որ մար-
դիկ ապրում են մարդկանց կողքին, կենդանի իրականության մեջ, հասարա-
կական որոշ մթնոլորտում: Նա լավ գիտե, որ կան սոցիալական հակամարտ
խավեր, շերտեր, դասակարգեր: Նրան լավ է հայտնի, որ միշտ և առաջին
հերթին վճռական նշանակություն ունեն հասարակական-քաղաքական պայ-
մանները:

Ահա թե ինչու Կորոլենկոյի երկերը, շատ տխուր պատմվածքները, նույ-
նիսկ «անլուծելի առեղծվածներ» շոշափող երկերը համակված են ուրույն
լավատեսությամբ: Այդ պատմվածքները չեն ստեղծում հուսահատություն
կամ հոռետեսություն: Ընթերցողը ատելությամբ է համակվում միապետու-
թյան հանդեպ: Նա համոզվում է, որ անհատական և հասարակական շարիք-
ներին վերջ տալու համար անհրաժեշտ է հիմնովին քանդել և ջախջախել սե-
փականատիրական հասարակությունը:

Այդպիսին է Կորոլենկոյի երկերից ստացված տպավորությունը: Երկար
տարիներ նա ապրել է սիրբիոյան արտորավայրում: Վերադառնալով արտրից,
նորից արտորվել է դեպի ստոցային հեռուները՝ պտտելով էտապից էտապ և
բանտից բանտ: Այդ անցյալն էլ նշմարելի հեղափոխական բնույթ է տվել
նրա ռեալիստական արվեստին: Իր զեղարվեստական երկերի մեջ նա հաճախ
նկարագրում է ժողովրդի խորքից ելած ըմբոստ անհատներին: Դրանով ար-

դեն կարծես հիշեցնում է, որ վաղ թե ուշ ժողովրդական մասսաները ոտքի կենեն միապետական կառավարության և հին կարգերի դեմ: Այդպիսի անհատ է Տյուլինը («Գետը ճողիում է»), որը աննշմարելի, ծուլ, անշարժ է կարծես, բայց վտանգի պահին դառնում է և՛ ուժեղ, և՛ խելացի: Այդպիսի հերոսներ են բանտարկված աստանդականները:

Իր մի պատմվածքում Կորոլենկոն, մեծագույն ակնածանքով էր վերաբերվում Տոլստոյի գեղարվեստական տաղանդին, որոշակի ընդգծում իր բացասական վերաբերմունքը դեպի տոլստոյական իմաստասիրությունը. «Քաղը ջարդում են Բարով, պողպատը կտրում են պողպատով, իսկ ուժը՝ ուժով». — ասում է նա: Հին կարգերի դեմ պայքարող բոլոր գործիչների մասին նա խոսում է առանձին մեծարանքով: Երկու տարու շափ ուսումնասիրում է պուգաչևյան շարժմանը վերաբերող արխիվային նյութերը, շրջագայում է պուգաչևյան շարժման հիմնական վայրերը, ծանոթանում է գյուղացիների և կազակների հետ, որպեսզի պատմական մեծ վեպի միջոցով նկարագրի անցյալի գյուղացիական շարժումները: Պատմական էպոխայի ճիշտ բնութագրման համար նա ուսումնասիրում է բոլոր մանրամասնությունները, անգամ ամենաչնչին տվյալները: 1907 թվականին գրած մի նամակում նա ասում է, որ պուգաչևյան շարժման մասին գրող հեղինակները կանգ չեն առել ցարիզմի պրովոկացիոն նացիոնալիստական քաղաքականության բնութագրման վրա: Ռուսական իշխանությունը, ընդգծում է Կորոլենկոն, իր ժամանակ հրավիրել էր կիրգիզներին և առաջարկել հարձակվել Պուգաչևին պաշտպանող կալմիկներին և ուսների վրա: Կիրգիզները կատարում են այդ առաջարկը, սպանում և թալանում են ապստամբներին և «եսիր» վերցնում ոչ միայն կալմիկներին, այլ նաև ուս պուգաչևցիների կանանց ու աղջիկներին: Հետագայում, երբ պուգաչևյան ամբողջ շարժումը պարտվում է, կառավարությունն առաջարկում է ազատել ուս «եսիրներին»: Կալմիկներին խանը և սուլթանները պատասխանում են, որ այդ չեն կարող կատարել, քանի որ թագավորից ստացված հատուկ հրահանգի համաձայն են հարձակվել գյուղացիների վրա և «եսիր» վերցրել... Իր նամակի մեջ Կորոլենկոն ասում է, որ այդ և նման ուրիշ նյութերը ինքը մտադիր է օգտագործել հետագայում: Ըստ երևույթին, Կորոլենկոյի վրա մեծ ազդեցություն է թողել պուշկինյան մտտեցումը կալմիկներին և հենց մեծ պոետի թուղթիկ տողերի տպավորության ներքո էլ նա սկսել է առանձին ուշագրություններ ուսումնասիրել արխիվային հին նյութերը:

Պետք է ասել, որ Կորոլենկոյի նամակները և մանավանդ օրագրերը գրական-պատմական մեծ արժեք ունեն, քանի որ նա հենց նամակների և օրագրերի մեջ է ավելի լրիվ կերպով պարզում իր գրական-հասարակական հայացքները: Այստեղ նա որոշակի ընդգծում է իր բացասական վերաբերմունքը «անկոխ ապրումներով» տոգորված գեղարվեստի հանդեպ: Գեղար-

վեստական գրականությունը պիտի կենդանացնի ընթերցողներին և կովի կյանքի «հին ձևերի» դեմ: Այդ կոիվը շափտի երբեք նմանվի ուսական սիմվոլիստների «շնային միստիցիզմին» կամ թե Արցիբաշևի և Սոլոգոբի ալյասերվոլ «էրոտիկային»: Կորոլենկոն զայրույթով է խոսում բուրժուական սեռակցիոն մտավորականության բուրմերի մասին: Եվ միաժամանակ, կարծես ցանկանալով բնութագրել ժողովրդական իսկական գրողի պատկերը, նա հազվագյուտ նրբությամբ նկարում է Գլեբ Ուսպենսկու և Չերնիշևսկու դիմագծերը: Այսօր էլ հնացած չեն այդ երկու խոշոր դեմքերի մասին նրա գրած հոգվածները: Դրանք սովորական քննադատական ակնարկներ չեն: Գլեբ Ուսպենսկուն, օրինակ, Կորոլենկոն մոտենում է որպես նկարիչ և հոգեբան. Հին Նիժնի Նովգորոդի պատկերը, Վոլգայի բարձր ափերի մոտ կառուցված սեռտորանը, երգչուհիների խումբը, Ուսպենսկու զայրույթով լի խոսքերը չմարտկոչի հետևողների մասին՝ շատ պատկերավոր կերպով բնութագրում են հենց իրեն՝ հումանիստ Կորոլենկոյին:

Կորոլենկոն քննադատական-գրական ակնարկների մեջ միշտ հանդես է գալիս որպես հին աշխարհի և սեփականատիրական մտրալի անողոր թշնամի: Այդպիսին է եղել նաև իր բազմաթիվ հրապարակախոսական ելույթների ժամանակ: Ամենահասարակ դեպքերն անգամ նա լուսաբանում է սկզբունքային դիրքերից և դարձնում հասարակական անհաշտ արշավի և պայքարի միշտ այժմեական ազդանշաններ: Այդպիսի բնույթ են կրում նրա հայտնի ելույթները մոլոտանական վոտյակների, Բելլիսի դատավարությունների, սորոշինյան ողբերգության առթիվ: Այդ բոլոր ելույթների ժամանակ նա մերկացնում է ցարական դատարանները, պրավոսլավ միսիոնրներին, նացիոնալիզմը, ոստիկաններին և ամեն գույնի պրովոկատորներին:

Երբ անգրագետ վոտյակները պրովոկացիոն կերպով մեղադրվեցին որպես մարդկային զոհաբերություններ կատարողներ, այսպես կոչված «հասարակական կարծիքը» սկզբում անտարբերությամբ վերաբերվեց այդ անձանոթ և անօգնական գյուղացիների դատապարտությանը:

Վոտյակներին շատ քիչ էին ճանաչում: Նրանք հեռու վայրերում և տափաստաններում «առանց աղմուկի» կոտորվում և մահանում էին: Միապետության դատական մեքենան, ուղղափառ եկեղեցու հետ միասին, մահվան դատապարտեց կատարելապես անմեղ վոտյակներին:

Հնում այդպիսի դեպքեր շատ էին լինում: Դրա համար էլ Կորոլենկոյի առաջին հոդվածը գրեթե աննկատելի անցավ: Սենատը պաշտպանեց մեղադրողներին: Երեք տարի շարունակվեց անհավասար պայքարը: Կորոլենկոն գրում էր ցասումնալից հոդվածներ, ուղևորվում դեպի այդ վայրը, ծանոթանում վոտյակների հետ, ուսումնասիրում նրանց անցյալը, կյանքը, սովորությունները, ինչպես նաև բոլոր դատական նյութերը, և կարողացավ

վերջապես հաստատել վոտյակների կատարյալ անմեղությունը: Որպես դատապաշտպան, նա հանդես եկավ դատարանում և իր ազդու խոսքերով բանդեց պրովոկացիոն մեղադրության խիտ ցանցը:

Շատ խոշոր դեր կատարեց Կորոլենկոն Բեյլիսի նշանավոր դատավարության ժամանակ, որ նույնպես թիվել էր ռուսական սեհարյուրակային կալմակերպությունների ջանքերով: Անտիսեմիտիզմի միջոցով ցարիզմը ձգտում էր նոր թափ հաղորդել հակահեղափոխական պոպոմային շարժումներին: Ինկվիզիտորական այդ դատավարության ժամանակ ցարիզմի մշտական լակեյները նորից աշխատում էին առանձին ուղղություն տալ նացիոնալիստական տրամադրություններին: Կորոլենկոն նորից հանդես եկավ և հասարակական մեծ շարժում կազմակերպեց նացիոնալիզմի դեմ:

Այդքան խոշոր էր Կորոլենկոյի դերը մոսյու անցյալի մութ օրերին: Նրա երկերի մեջ կարելի է, իհարկե, գտնել բազմաթիվ սխալներ և թերություններ: Նրա հայեցողությունը ազատ չէ հակասություններից: Երբ կարդում ենք Կորոլենկոյի պատմվածքները, առանձնապես այն տողերը, ուր նա նկարագրում է թշվառ ու «մոռացված» մարդկանց կամ թե «գետնափոթների երեխաներին», մեզ թվում է, թե այդ ինտիմ տողերի հեղինակը շատ բարի և անզոր տրամադրությամբ իդիլիական մի պապիկ է: Կորոլենկոյի լուսանկարում էլ նշմարում ենք ճիշտ այդպիսի «հանդարտ» դիմադժերով մի մարդու: Նրա բոլոր երկերի մեջ կարելի է նշմարել մեզմ կոլորիտ, որ առանձին հրապույր է հաղորդում նկարված դեմքերին...

Իրականում Կորոլենկոն այնքան էլ անխոտով ու սառնասիրտ չէր: Նրա մեղմ կոլորիտով երկերը անցյալի ճշգրիտ լուսանկարները լինելով՝ ծանոթացնում են շատ մոսյու իրականությանը և ուժեղացնում հին աշխարհի դեմ ուղղված ատելությունը:

Ահա թե ինչու Կորոլենկոյի գեղարվեստական երկերը կարող են այժմեական դառնալ նույնիսկ մեր հրատապ առօրյայի այն ընթերցողների համար, որոնք անսպառ եռանդով և խանդավառությամբ հիդրոկայաններ, գեղեցիկ ու շեն վայրեր են կառուցում՝ բանտարկված «Յաշկային» սիրող հեղինակի նկարագրած խոնավ և «անիծյալ խորշերի» փոխարեն:

1942

ԱԼԻՇԵՐ ՆԱՎՈՅԻ

Արևելյան հումանիստների շարքում եզակի տեղ է զբաղում ուղբեկական լեզվի կերտող և գրականության հիմնադիր Ալիշեր Նավոյին: Այս տարի, նոյեմբերին պետք է տոնվի այդ ականավոր բանաստեղծ-իմաստասերի ծննդյան 500-ամյա հոբելյանը: Նշանակալից այդ հինգհարյուրամյակը նկատի առնելով, ես կուզենայի երկու խոսքով բնութագրել արևելյան այդ մեծ հումանիստի դերն ու վաստակը:

230

Ալիշեր Նավոյին ծնվել է 1441-ին, ցնցող դեպքերով բնորոշ այն պատմաշրջանում, երբ Լենկ-Թեմուրի ջանքերով ստեղծված մեծ պետությունը ճգնաժամային օրեր էր ապրում: Երկիրը ավերված էր ու բանդված: Խոշոր ազնվական-կալվածատերերը խոչընդոտում էին արտադրական ուժերի և կուլտուրական շինարարության զարգացմանը: Թեմուրի մեծ պետության սահմաններում բավական մեծ էր վայրադ կալվածատերերի և դրանց հետ կապված բազմազան սղուղկների թիվը: Տնտեսական բնավայրում այդ ուժերը հսկայական դեր էին կատարում և իրենց գործելակերպով միմիայն ավելի մեծ թափ էին հաղորդում տնտեսական քայքայման պրոցեսին:

Չնայած այդ ամենին, ազնվական-կալվածատերերի այդ բանակը միամիտի և միաձույլ գանգված չէր: Առևտրական խոշոր քաղաքներում առանձնապես ռազմատենչ և հետամնաց կալվածատերերի կողքին ժամանակի բնթացքում կազմավորվել էին առևտրին ու տնտեսական շինարարությանը կառչած ազնվականության նոր շերտեր և խմբակներ: Արևելագետների պրպտումները ցույց են տալիս, որ կուլտուրական նոր շերտերի դերը արևելյան քաղաքներում այնքան էլ աննշան չի եղել:

... Մոնղոլ խաները, — նկատում էր իր հայտնի հետազոտության մեջ ականավոր արևելագետ Բարտոլոյը, — գտնում էին, որ արտաքին գիտությունները գործնական նշանակություն ունեն և դրա համար էլ մեծ ուշադրություն էին նվիրում աշխարհիկ մշակույթի ուսումնասիրությանը: Լենկ-Թեմուրի հայտնի ժառանգներից մեկը՝ ականավոր գործիչ Ուլուգբեկը դիտեր, որ աշխարհիկ գիտությունների եզրակացությունները շատ ավելի կարևոր և հարատև արժեք ունեն, քան աստվածաբանությունը և գրականությունը ... Կառուցելով աստղադիտարան և կրթական հաստատություններ (մեղրեսսեներ), ինքը Ուլուգբեկն էլ հանդես էր գալիս որպես կուլտուրական նոր շարժման հովանավոր և ակտիվ ներկայացուցիչ: Ստեղծվել էր այդ ժամանակ ուրույն տրադիցիա: Իշխում էր նույնիսկ համոզում, որ կանայք պարտավոր են յուրացնել գիտությունը:

Ուլուգբեկի խոսքը դառնում է ղեկավար ուղեղի մեծ ազնվականության առաջավոր ներկայացուցիչների համար: Ուլուգբեկին աշխատում էին հետևել նաև նրան շրջապատող գործիչներն ու սլալատական պաշտոնյաները: Կազմավորվում է կուլտուրական որոշ վերնխավ: Մամարզանդում, Մերվում, Տաշքենդում և արևելյան ուրիշ շահաստաններում կառուցված մեղրեսսեները, զրադարանները, շենքերը ստեղծում են կուլտուրական կենդանի մթնոլորտ: Առևտրական խոշոր քաղաքներում առանձնապես սկսում են աչքի ընկնել ոչ միայն արվեստագետներ ու գիտնականներ՝ այլև մշակութային պրոբլեմներով հետաքրքրվող առաջավոր ազնվականների առանձին ներկայացուցիչներ:

231

Ալիշեր Նավոյին ինքը նույնպես այդպիսի մի ազատախոհ ազնվական էր: Հերաթի պալատական մատենադարանում («Քիթաբխանա») կային բազմաթիվ աշխատավորներ, հատուկ «գրիչներ» կամ մանրանկարիչներ ու ծաղկողներ, կազմարարներ և նույնիսկ հին ձեռագրեր ուսումնասիրող ուշիմ և դրասեր բանաստեղծներ-բանասերներ: Երբ Հերաթից դիվանագիտական միսսիաներ էին ուղևորվում հատուկ կարգադրությամբ, մի առանձին պատվիրակի հանձնարարվում էր ուսումնասիրել օտար երկրներում ձեռնարկված կուլտուրական-գեղարվեստական աշխատանքն ու շինարարությունը: XV դարում (1420) այդպիսի պատվիրակ է եղել հայտնի նկարիչ Խոջա Գիյասեդդինը: Երբ այդ նկարիչը վերադառնում է Չինաստանից, հատուկ գեկույց է ներկայացնում և իր այդ գեկույցագրի մեջ ծանրանում է շինական նկարչության և երաժշտության վրա: Այդ փաստը իր մի հետազոտության մեջ նշել է նաև սովետական հայտնի արևելագետ Յակուբովսկին:

Հերաթ քաղաքը XV դարում տնտեսական կարևոր հանգույց էր: Արևելյան պատմիչ Համդուլլա Ղազվինիի վկայությամբ, այդ քաղաքը դեռևս XI դարում արևելյան հարուստ շահաստան էր՝ հասարակական շենքերով, բաղնիքներով, իջևաններով, դպրոցներով: Հերաթը մի քանի անգամ ավերվել է և ապա նորից վերաշինվել ու վերակենդանացել:

Ալիշեր Նավոյի ժամանակ Հերաթը ուներ բազմազգ և խաչաբողոք բնակչություն: Քաղաքի ծայրամասերում ապրում էին այգեգործ շինականները, իսկ շուկաների շուրջը՝ առևտրականներն ու արհեստավորները: Ժողովրդի աշխատավոր խավերը դժգոհ էին իշխող կարգերից: Մերթ ընդ մերթ ապստամբություններ էին բռնկվում: Լինում էին պարագաներ, երբ անբավական խավերի ներկայացուցիչները հարձակվում էին բռնակալ էմիրների ու պաշտոնյաների վրա: Անբավական և ըմբոստ խմբակների ներկայացուցիչները հանդես էին գալիս որպես ընդդիմադրական շարժման ուրույն պատգամախոսներ: Իրենց հետևորդների շրջանում հնօրյա այդ «ագիտատորները» տարածում էին Ղուրանից քաղված և ապա՝ որոշ սիստեմով դասավորված արեւելյան աֆորիզմների այն ժողովածուն, որը կրում էր «Խոստովարնևրի գիրք» հատկանշական վերնագիրը:

Գյուղական բնակչությունը ծանրաբեռնված էր բազմազան և ծանրագույն տուրքերով: Հարկային դաժան բեռը և ապա՝ շարաշահ կառավարիչների սիստեմատիկ բռնությունները զգալի էին նաև Հերաթում հաստատված արհեստավորների ու քաղաքացիների համար:

Երկրի ամենազոր տիրակալը, Նավոյի օրերին, Հյուսեին Բայթարն էր: Նա տարված էր ռազմական արշավներով և պալատական խրախճանքներով: Այդ արևելյան տիրակալը ևս երբեմն բանաստեղծություններ էր գրում: Պատմում են, որ նա հետաքրքրվում էր զրական-գեղարվեստական հարցերով:

Բարձր ազնվականության կուլտուրական շերտի ներդաշնակուցիչներին Ալիշեր Նավոյին լավ էր ծանոթ: Հերաթում հատկապես նա համարվում էր շատ հայտնի դեմք:

Սուլթան Հյուսեին Բայթարը հանձնարարում է Նավոյին ստանձնել մեծ և ընդարձակ երկրի ընդհանուր կառավարչի պարտականությունները: Պետական այդ աշխատանքը գիտուն վեղիրին ստիպում է մանրամասնորեն ուսումնասիրել շրջապատի պայմանները, մեծ ուշադրությամբ հետևել տնտեսական պարագաների, արհեստական ռոտզման ու ջրաշինարարության բարեկարգմանը և պետական օրենսդրության ու դատավարության կարգավորմանը:

Ալիշերը շրջագայում է երկրի զանազան վայրերում: Նա հանդիպումներ է ունենում ժողովրդի զանազան խավերի ներկայացուցիչների հետ: Քաղաքում նա կառուցում է արհեստանոցներ և մեղրեսաններ: Ակտիվ ու եռանդուն գործչին հատուկ բարեխղճությամբ իր շրջագայությունների ընթացքում նա արձագանքում է շինական ժողովրդի պահանջներին և սաստում: կամ պատժում շարաշահ բռնակալներին: Շփվելով հայրենի ժողովրդի բոլոր խավերին, նա մոտ ծանոթություն է հաստատում Հերաթի արհեստավորական համքարությունների ներկայացուցիչների հետ: Նավոյին մեծ թափ է հաղորդում Հերաթի շինարարությանը, օժանդակում է նորանոր շենքերի ու ճարտարապետական հուշարձանների կառուցմանը: Նա ծանոթանում է կառուցողների և շինարարների, քարտաշների և արհեստավորների հետ: Իր «Յարհադ և Շիրին» մեծատաղանդ պոեմում նա իր կյանքի էջերն է նկարագրում, երբ պատմում է քարհատների մասին և կերտում քարերի վրա դարդեր փորագրող ուշիմ արհեստավորների կերպարները: Ալիշերի կյանքի որոշ էջերը իր մեմուարներում նկարագրել է ականավոր հերաթցի Ջայն-Ադդին-Վասիֆին («Ջարմանալի դեպքեր»): Այդտեղ կան բավական ուշագրավ մանրամասներ: Վասիֆին պատմում է, որ Նավոյին իր պտույտների ժամանակ սիրում էր դիտել նոր շենքեր կառուցողների եռանդուն ու տոկուն աշխատանքը:

Հայտնի է, որ Սուլթան Բայթարը աննշան ուշադրություն նվիրելով պետական գործերին՝ ղեկավարվում էր իր տաղանդավոր «վեզիրի» խորհուրդներով և դիտողություններով: Սակայն նրա հիմնական հենարանը կալվածատեր ազնվականների ռեակցիոն վերնախավն էր: Վատնելով իր ամբողջ եռանդը պալատական սիբարիտների ու բռնակալների շրջանում կամ հարեմի գեղուհիների միջավայրում՝ Սուլթան Բայթարը ոչ միայն հեշտ էր ենթարկվում իր վեզիրի թշնամիների թելադրանքներին, այլև ինքն էլ ուժ էր տալիս դրանց գործելակերպին և հալածում ազատախոհ վեզիրին:

Ալիշեր Նավոյի կյանքի մասին ստեղծվել են բազմազան ավանդություններ և զրույցներ: Նույնիսկ իր կյանքի վերջին օրերին նա մեծ ժողովրդակալություն էր վայելում:

Պատմում են, որ հաճախ Նավոյին ուղևորվում էր զեպի մեղքեսսեն և այդտեղ զրուցում բազում խմբված երիտասարդ գրագետների կամ ուսանողների հետ: Երբ արվեստի առանձին երկրպագուները կազմակերպում էին հնչույթներ կամ երեկույթներ, հրավիրում էին նաև իմաստասեր պոետին, որի ներկայությունը մեծ փայլ էր հաղորդում այդօրինակ հավաքույթներին: Վասիֆին իր մեծուարներում կանգ է առել այդպիսի մի հավաքույթի նկարագրության վրա: Բացի հայտնի երաժիշտներից, հրավիրվում էին անվանի կազմարարներ, նկարիչներ, գեղագետ-փորագորիչներ, տաղանդավոր արհեստավորներ:

Նավոյին կտրված չէր Հերաթում հաստատված արվեստագետներից և գիտնականներից: Հայտնի պատմիչ Նոնդեմիրը իր մեծուարներում հիշատակում է Ալիշերի գրական աշխատությունները: Նավոյի մոտիկ ծանոթներից մեկը՝ հանձարեղ բանաստեղծ Աբդուրահման Ջամին էր (ծնվ. 1414), որը մեծագույն հռչակ էր վայելում արևելյան երկրներում: Նավոյի դիմանկարը ժամանակին կերտել է արևելյան տաղանդավոր նկարիչ Բեհզադան, որի եզակի նշանակությունը արևելյան նկարչության պատմության բնավայրում այսօր առանձնապես լավ է հայտնի: Հերաթի ականավոր ճարտարապետ Բինայի որդին բանաստեղծ էր և ղեկավարվում էր Նավոյի կողմից տրվող ցուցումներով: Նավոյի մոտիկ ծանոթներից էին խոհուն պատմաբան Միրխոնդը և ապա մի շարք ուրիշ հայտնի հերաթցի գործիչներ: Միրխոնդի առանձնահատուկ նշանակությունը ժամանակին նշել է Մարքսը:

Այդպիսին էր Հերաթի մթնոլորտը XV դարի երկրորդ կեսին: Առաջավոր ժամանակակիցների, մտերիմ ծանոթների, զինակիցների և համակիրների շրջանում էր սփռված գտնում ուզեկ ժողովրդի մեծ պոետը իր կյանքի ծանր օրերին: Շրջապատի իրականությունը շատ ծանր էր, թշնամիների թիվը՝ մեծ: Ժողովրդի շարքերը ցրիվ ու անկաղմակերպ էին: Ամենուրեք լավում էին ճնշվածների ու թշվառների բողոքն ու դանդաղները: Շատ խայտաբղետ էր հերաթցի հնօրյա գրական «սալոնների» հաճախորդների ու մասնակիցների կազմը: Հաճախ զրույցների և վեճերի ժամանակ Նավոյին հավաքույթներում բարեկամ իմաստասերների և մտերիմ զինակիցների կողքին տեսնում էր նաև բացահայտ թշնամիներին կամ քողարկված շահակամներին ձայնակցող գործիչներին: Սակայն անգամ այդպիսի խայտաբղետ գործիչների հավաքույթները չէին կարող ազդեցություն չթողնել Ալիշեր Նավոյի վրա:

Առաջավոր գործիչների շրջանում է կոփվում առաջավոր հումանիստի թե՛ կամքն ու կորովը, և թե՛ գրական-գեղարվեստական մեծ տաղանդը:

2. ԻՄԱՍՏԱՆԵՐՆ ՈՒ ՊՈՆՏՈՒ

Պետական ականավոր գործի գիմաստվերը ժամանակի ընթացքում ծածկվում է մշուշապատ վարագույրով: Ժողովրդական հին առականերում կամ

Վասիֆիի նման գրողների մեծուարներում է միայն գծագրվում ականավոր պետական գործի ինքնատիպ նկարագիրը: Ուրիշ տվյալներ կամ փաստական տեղեկություններ չունենք: Այնուամենայնիվ գրող ու պոետ Նավոյին այսօր մեզ հայտնի է: Ամենից հետաքրքրականն այն է, որ այդ գրողի երկերի մեջ գտնում ենք կոնկրետ տվյալներ և փաստական վարկերագույն տեղեկություններ նրա կյանքի և ժամանակաշրջանի մասին: Ալիշերի երկերը գեղարվեստական տաղանդավոր ստեղծագործություններ լինելով, միաժամանակ աչքի ընկնող գրական և պատմական փաստաթղթեր են: Հին Հերաթի բարդ իրականությունը, մարդիկ ու դարաշրջանը, բնակչության սոցիալական կազմը և սոցիալական տարբեր շերտերի փոխհարաբերությունը, վերջապես ինքը՝ հումանիստը իր ապրումներով, խոհերով ու մտորումներով, նշմարվում են վավերագրերի մեջ:

Այս ակնարկի մեջ մենք կարող ենք կանգ առնել միայն Ալիշերի ավելի կարևոր գործերի և հայեցողության հիմնական դոմինանտը կազմող հատկանիշների հանրագումարի վրա: Մեզ համար այսօր հետաքրքրական չեն Ալիշերի կրոնական-իմաստասիրական դատողությունները կամ հակասական առանձին ղեզերումները: Հեռավոր այն օրերին, երբ ապրում էր Ալիշեր Նավոյին, կրոնական մտածողությունը այնքան ուժեղ մի գործոն էր, որ թեև պոետ էր անգամ ազատախոհ մտածողներին համակերպվել ամենազոր պայմաններին և ժամանակաշրջանի որոշ տրագիցիաներին: Կրոնական արգումենտների նշանակությունը ստիպված էին հաշվի առնել նույնիսկ կրոնականների դեմ ծառայող գործիչները: Աշխարհիկ և կրոնական ֆեոդալների դեմ ծառայող արևմտյան հայտնի հերետիկոսներն անգամ ստիպված էին լինում աստվածաշնչից բազմաթիվ «սպացույցներով» հիմնավորել իրենց արմատական գաղափարները և սոցիալական տենդենցները:

Գրեթե նույնը տեսնում ենք նաև արևելյան երկրներում, ուր իշխող կարգերի դեմ ծառայող ազատախոհ մտածողները կամ հերետիկոս գործիչները նույնպես աշխատում էին իրենց մտորումները սքողել կրոնական դատողությունների խիտ ցանցով: Այդպես էին վարվում, ինչպես հաստատում են արեւելիագետները, նույնիսկ մոլեռանդ և միստիկ սուֆիների դեմ ըմբոստացող արմատական ախի աղանդի հետևորդները: Գա միջնադարյան Արևելքի գործիչների մտածողության տրագիցիոն «մեթոդն» էր: Անհրաժեշտ զգեստ և պարեզոտ էր դա: Սուֆիների ուրույն զգեստավորման ներքո շատ անգամ չէր նշմարվում անհաշտ և մոլեգին մարտնչողի սուրբը: Գերվիշ-իմաստասերները երգվում էին մարգարեի անունով, մեկնաբանում էին այլաբանորեն և միաժամանակ քննական դատողություններ նետում՝ ընդդեմ իշխողների կամ իշխողների գաղափարական պատգամների: Ականավոր արևելագետ Կրաչկովսկին արաբական հին ձեռագրերի մասին կերտած իր տաղանդավոր գիտական-գե-

ղարվեստական մեծուարների մեջ կանգ է առնում այդպիսի իմաստասերների վրա:

Արևելյան աղմկալից շուկաներում աշխատանք որոնող արհեստավորները հասարակական բեկման սուր օրերին տեսնում էին սուֆի դերվիշների սուրբ: Այդ արհեստավորներին շէին կարող խաբել կրոնական «կեղեր» կամ դատողությունները: Այդ արհեստավորները սոցիալական իրենց տենդենցների հետ էին շաղկապում կրոնական թեթև վարագույրով պարուրված զրույցները և առակաները, սուր ակնարկները և իմաստալից աֆորիզմները: Կրոնականների համար այդպիսի անհանդուրժելի մի ժողովածու էր Հերաթում տարածված «նոռ վարաների գիրքը»: Այդպիսի առակաների հեղինակ էր համարվում արևելյան հանճարեղ իմաստասեր Օմար Խայամը: Իր հայրենի Նիշապուր քաղաքում Խայամը դառնում է «Քրանկներ սուրբ» և միանգամայն օտար, անհարազատ, անհանդուրժելի մի իմաստասեր: Այդ ամենն անհրաժեշտ է հաշվի առնել, որպեսզի ավելի հասկանալի դառնան Նավոյի երկերի մեջ ցրված կրոնական ուրույն ակնարկները կամ հնօրյա սուֆի իմաստասերների տեսական գինանոցից առնված տրադիցիոն խոհերն ու մտորումները:

Երբ Ուլուգբեկը մղկիթ է կառուցում, նա իր ճարտարապետին հանձնարարում է մղկիթի ճակատին նկարել աստղազարդ երկինք, դրանով ցանկանալով ընդգծել բնության ուժերի գիտական ճանաչողության կարևորությունը: Բուխարայի մղկիթի ճակատին Ուլուգբեկը փորագրում է գիտության գովքը հիմնավորող իր իմաստասիրական սենտենցը:

Այդպիսի մտածող էր նաև Ալիշեր Նավոյին: Նա էլ խոսում է իր ժամանակին հատուկ ոճով և զործածում ժամանակակիցների համար հասկանալի գրական-գեղարվեստական տերմիններ:

Այդ ամենը պարզ տեսնում ենք, երբ թերթում ենք նրա «Լեյլի և Մեջնուն» ու «Չարհադ և Շիրին» պոեմները: Արևելյան բանաստեղծների ջանքերով մշակված հայտնի սյուժեներ են՝ շարահյուսված նշված պոեմներում: Չնայած դրան՝ հնօրյա պատմվածքների ուղբեկ ընթերցողներին Ալիշերը այս անգամ մատուցանում է ստեղծագործություններ, միանգամայն նոր ձևով և նոր երանգավորումներով: Սովետական արևելագետները հատկապես Նավոյի պոեմների այդ հատկանիշները պարզել ու հիմնավորել են համոզիչ կերպով:

Արևելյան տրադիցիոն պոեմների յուրահատուկ սյուժեները եղել են առանձին պոետների համար, ինչպես նշում է ակնաւոր արևելագետ Բերտելսը, հարմարագույն ատաղձներ կամ պրոբլեմատիկ նյութերով լեցուն արտադրություններ: Յուրաքանչյուր բանաստեղծ աշխատել է այդ սյուժեներն օգտագործել իրեն հատուկ եղանակով, իր սեփական մտորումների և խոհերի համար: Արձագանքելով տրադիցիոն պոեմների կամ պատմվածքների մեջ արձարծված գաղափարական պրոբլեմներին, ամեն մի գրող ջանացել է նոր գույ-

ներով նկարագրել այս կամ այն դեպքերը և հաղորդել իր ինքնահատուկ իմաստասիրությունը: Ահա թե ինչու հանրահայտ թեման շոշափող ամեն մի նոր պոեմ նոր իմաստ է ստանում ու դառնում յուրաձև նոր արձագանք կամ պատասխան (Բերտելս):

Արևելյան երկրներում հայտնի սյուժեներից ամենաժողովրդականը Լեյլի և Մեջնունի տխուր սիրո պատմությունն է: Ժամանակին Բերտելսը բավական մանրամասն նկարագրել է այդ պատմության նախնական տարբերակները և հիմնական սյուժեի զարգացման ու փոփոխությունների պատմական յուրահատուկ պրոցեսը:

Հայտնի է, որ Նիզամին 1185-ին հենվելով արաբական տրադիցիայի վրա՝ ավարտում է իր մեծատաղանդ պոեմը: Հետագայում հնդկա-իրանական հուշակավոր բանաստեղծ էմիր Խոսրովը (1298—1299) հետևելով Նիզամուն, գրում է նոր պոեմ: Արևելյան մի շարք այլ պոետներ իրենց նոր ստեղծագործություններում մշակում են նույն թեման: Վերջապես XV դարում (1483-ին) Նավոյին ձեռնարկում է «Լեյլի և Մեջնուն» նոր պոեմի վերամանը՝ ջանալով շատ վաղուց հայտնի տրադիցիոն պատմվածքի մեջ ներմուծել ռեալիստական նոր մոտիվներ:

Լեյլին Ալիշեր Նավոյի պոեմում դարձրած համեստ ուսուցչի աղջիկ է: Նիզամու պոեմի ռոմանտիկական եղնիկների փոխարեն Նավոյի պոեմում նկարագրված է հավատարիմ շունը: Քոչվոր ուղբեկների միջավայրում դա այնքան էլ արտասովոր կերպար չէր: Մուսուլմանական տրադիցիոն բանաստեղծությունների մեջ շունը չէր կարող երգվել կամ մեծարվել: Նավոյին, որպես ժողովրդի հետ կապված ռեալիստ մտածող, վճռականապես խախտում է այդ տրադիցիան: Նա ցանկանում էր ընդգծել, որ ոչ-բանաստեղծական շունը խաշնարած ժողովրդի պահապանն է ու հավատարիմ բարեկամը: Պոեմում փոփոխության է ենթարկված նաև վիպական հյուսվածքի հիմնական իմաստը: Ջերմ գույներով նկարագրելով դժբախտ սիրահարների ապրումներն ու հույզերը, Նավոյին խստորեն դատափետում է ասիական հնօրյա սովորությունները:

Այդպիսով ուղբեկ ժողովրդի մեծ բանաստեղծը միանգամայն նոր պատասխան է տալիս հանրահայտ պոեմի միջոցով առաջադրված պրոբլեմներին, վերամշակում է վաղուց հայտնի սյուժեն կամ թեման՝ իր հիմնական մտահղացման համապատասխանող նոր ձևով:

«Լեյլի և Մեջնուն» պոեմը Ալիշեր Նավոյի պոեմների հայտնի շարքի մի հատվածն է, որն ունի իր առանձին բովանդակությունը և միանգամայն ուրույն մի ստեղծագործություն է:

Բացի պոեմներից, Նավոյին կերտել է բազմաթիվ պարսկերեն և ուղբեկերեն բանաստեղծություններ՝ գազելներ: Բանասերները բարձր են գնահա-

տում նրա բավական հայտնի «Զոր» Դիվան» (Չահար Դիվան) ժողովածուում ամփոփված բանաստեղծությունները: Ինչպես նշել են ուսումնասիրողները, այն ինքնակենսագրական հուշերի բնույթ կրող իմաստալից բանաստեղծությունների մի ժողովածու է:

Առաջին «Դիվանի» մեջ խոսվում է մանկական տարիների, երկրորդի՝ պատանեկության օրերի, երրորդի՝ կյանքի միջին շրջանի, իսկ վերջինի՝ շորորդի մեջ՝ հասուն տարիներին ապրած հուշերի ու մտորումների մասին. «Չահար Դիվանի» մեջ զետեղված բանաստեղծությունները գրված են զանազան շափերով: Այդ «դիվանների» մեջ կան գազելներ, մուխամմազներ, մեանեի, տույուկներ ու բայաթիներ: Ալիշեր Նավոյին իր բանաստեղծությունների մեջ հանդես է գալիս որպես խոհուն իմաստասեր: Ամենից ուշագրավն այն է, որ նրա ինտիմ տողերի մեջ նշմարում ենք հենց իր՝ մեծ մտածող—պոետի դիմագտվերը: Առանձին բանաստեղծությունների մեջ կան ցայտուն և բնորոշ ակնարկներ՝ կոնկրետ երևույթների և կենդանի մարդկանց մասին: Նավոյին խարազանում է ազահությունը և ստրկամտությունը, երկերեսանի և տգետ մարդկանց ստորությունը: Նա սուր դիտողություններ է անում, երբեմն նկատի ունենալով պալատական առանձին գործիչներին, մտրակում է «մեջքը ծող» կեղծավոր մարդկանց: Իսկական մարդը, նշում է Նավոյին, նա է, ով խիզախ է, ճշմարտախոս և վեհանձն: Հերթացիների չքավորությունը Նավոյի համար ավելի թանկ է, քան ուռճացած հարուստների տգիտությունը: Ալիշեր Նավոյին երբեմն, կարծես հետևելով արևելյան մեծ հումանիստ Սաադին, կոչ է անում դառնալ խորագետ և հեռանկատ:

... «Չհավատաս հին թշնամու քաղցրավուն խոսքերին»,— ասում է Նավոյին և ապա՝ առաջարկում մեծագույն զգուշությամբ մոտենալ առանձնապես «գաղտնի թշնամուն»... Անողոր է դառնում նրա գրիչը նաև հողերակա նության քննադատության նվիրված տողերում: Գատափետելով մենաստաններում համախմբված կղերականներին՝ Նավոյին հայտարարում է, թե ինքը կամենում է անդորր հանգրվան գտնել գինետանը:

... «Երբ շեյխը աղոթք է կարդում և հավաքում է հավատացյալներին՝ նրա աղոթքը դառնում է ոչ թե միություն, այլ պառակտումներին նպաստող մի խթան...»: Շեյխերին Նավոյին ծաղրում է անխնա կերպով: Միաժամանակ մերկացնելով սնապաշտ հողերականներին, նա կերտում է շեյխերի միջին կերպարներ: Միանման բնույթ ունեն նաև «Չահար Դիվանի»-ի մեջ բռնակալների դատափետմանը նվիրված սուր ասույթները:

«Շ ա հ ը վ ի շ ա պ է,— գրում է Նավոյին... Նա, ով չի մտածում ժողովրդի կարիքների մասին, մարդ չէ...»: Այդպիսի աֆորիզմներով լեցուն են Նավոյի բանաստեղծությունները, որոնք լիրիկական երգեր լինելով հանդերձ, հազեցված են գաղափարական բարձր պատգամներով: Նավոյին եր-

բեմն կանգ է առնում բացասական երևույթների վրա, համակվում է տխուր տրամադրությամբ, զանգատվում և կարծես հուսահատվում է: Նա ասում է, որ ինքը պիտի թողնի իր հայրենիքի սահմանները և ուղևորվի դեպի հեռու երկրներ: Նման տողերը կենդանի շեշտ են հաղորդում առանձին երգերին, դարձնում ինտիմ վավերագրեր, նոր լույսով նկարագրում միշտ զուսպ իմաստասերի խորունկ ապրումները: Այնուամենայնիվ, նույնիսկ այդօրինակ տխուր տողերում լսվում է բողբոջ բանաստեղծի ձայնը: Հիմնականում Նավոյի բանաստեղծություններում ավելի ուժեղ է հնչում մարտնչող գործչին հատուկ կենսատենչ ձայնը: Պեսիմիստական հայեցողության հետևորդները օտար էին կյանքի գովքը երգող և տոկուն պայքարի մասին երազող այն գործչի համար, որ կոչ էր անում «բարի անուն» թողնել և խորհել ժողովրդի կարիքների մասին: Մեծ բանաստեղծի հայեցողության նշված հատկանիշները բավականին շեշտված են նաև իմաստալից ուրբայիների՝ քառյակների մեջ: Նավոյին իր քառյակներում նորից բացահայտում է իր տխուր ապրումները: ...«Անտուն թափառական եմ ես»,— գրում է նա,— համակված մեծ տխրությամբ: Նման տողերը անսպասելի տպավորություն են թողնում և առաջին նվազ նույնիսկ շատ տարօրինակ են թվում:

Ալիշեր Նավոյին ինչպես հայտնի է, շատ հարուստ էր և մեծ կալվածների տեր: Նույնիսկ իր ակամա թափառումների և մանավանդ արքայի օրերին նա ավելի ապահով կացություն մեջ էր գտնվում, քան արևելյան շարքային քաղաքացիները: Կասկածից դուրս է, որ նա արքայի ժամանակ անգամ չէր կարող «անտուն թափառականի» նման ապրել: Այնուամենայնիվ նման տողերը ցույց են տալիս, որ Ալիշերն էլ ապրել է ծանրագույն պահեր: Սուր պայքարի օրերին, երբ հալածված հումանիստին միայնակ էին թողել իր հին կեղծավոր բարեկամներն ու երկերեսանի և ստորաքար ծանոթները, իհարկե նրա մեջ էլ կարող էին նման տխուր հուշեր և ապրումներ բռնկվել: Գուցե և Նավոյին նման երգեր լսել է արևելյան շուկաներում ու չախանաներում և ազդվել ժողովրդական որն է երգչի խոսքերից:

Ինչպես էլ մոտենանք նման տողերի մեկնաբանությանը, այնուամենայնիվ շեշտ կարող ժխտել, որ առանձնապես այդպիսի տողերն են մերկացնում պոետի հոգու խորքում պահված տխուր հուշերը:

Իր մեկ ուրիշ երկասիրության մեջ՝ կերտված արդեն ծերության օրերին (ըստ ենթադրության — 1500-ին), Նավոյին, հիշատակելով աստանդական ծանր կյանքը և դատապարտելով երկերեսանի մարդկանց՝ գրում է. «Մերթ ընդ մերթ ես թափառում էի խելագարի նման. անիրավ մարդիկ մտրակով զարնում էին վզիս, մանուկները քարեր էին նետում. հարուստները վիրավորում էին ինձ և ես միանում էի չքավորներին, օթևան էի գտնում լեռներում և պահվում էի անապատի խորքերում: Հետագայում նորից հայրենիք էի վեճադառնում...»:

Գծվար է, իհարկե որոշակի պնդել, թե դրանով նավոյին իր կյանքի առանձին էջերն է ակնարկում: Ավելի հավանական է, որ նա լսում էր նման երգեր, գանգատներ, պատմվածքներ ծանոթ, ազատախոհ գործիչներից և հենց նրանց ապրումներն էր նկարագրում: Բայց և այնպես, Արարելի է մի ուրիշ ենթադրություն ևս առաջադրել: Շատ անկեղծ և անշափ ինտիմ տոնով նկարագծելով միայնակ ու հալածված գործչի ապրումները, նավոյին գուցե և որոշ շափով իր սեփական մտորումներն էր արծարծում, երբ այնքան յուրահատուկ ձևով արձագանքում էր հալածված գործիչների խոհերին և մտորումներին:

Իմաստալից իր ուրբայինների-քառյակների մեջ նավոյին հանդես է գալիս որպես բռնակալության դեմ մարտնչող մտածող: Նա վճռականորեն դատափետում է վայրագ բռնապետներին և նրանց սպասավորող մարդկանց: Այդպիսի իմաստ ունեն նշված քառյակների մեջ արտահայտված աֆորիզմները: «...Մույլ մարդկանց բոլոր գործերը ծուռ են, նույնիսկ ստվերները ծուռ են...»: «Նա աշխատավորների անկեղծ բարեկամն էմ, շեյսերի պատմած առակները շեն սփոփել իմ սիրտն ու հոգին...», «Խոսքի արժեքը իմաստն է...»:

Միանման աֆորիզմներ է կերտում նավոյին նաև իր ծերության օրերին գրված «Մ ի ր ա հ ա ր ս ր տ ե ր» աշխատության մեջ: Իրականում դա հրապարակախոսական ուրույն տրակտատ է: ...Երկրագունդը, ասում է պոետը, նեղ է աշխատավորների համար...

Բարձր զնահատելով շինական ժողովրդի աշխատանքը՝ նավոյին խարագանում է թագավորներին, մոլլաներին, սուֆիներին: Ատելություն մարդերի շահագործողներին՝ ակնարկում է նրանց դեմ բմբոստացող ժողովրդի մասին: Այստեղ արդեն նրա ասույթները սուր աֆորիզմներ են՝ ուղղված վատ ու տմարդի մարդկանց՝ թագավորների, վեզիրների, շարաշահ վաճառականների դեմ...

«... Թագավորը մարդասպան է.— վեզիրները կարիճներ են.— թարիքները — բժիշկները մեռցնում են հիվանդներին.— ղորավարները խոռվարարներ են, թալանչիներ. վաճառականները ստախոսներ են ու շարաշահներ.— բոլոր ազգությունների երկերեսանի մարդիկ տգետ են...»:

Մաղձ շատ կա նման տողերում: Մաղձով ու դառն շեշտով աչքի ընկնող իր աֆորիզմներին նավոյին կցում է նաև պատգամների բնույթ կրող հստակ դիտողություններ՝ արդարամիտ ու ճշմարտախոս մարդկանց մասին: Դատափետելով ստախոսներին ու գոռոզ մարդկանց՝ նա ներքող է ձոնում բարեկամության և ճշմարտության ուղեգիծը պաշտպանող գործիչներին, կոչ է անում յուրացնել դիտությունը, մեծարում է բարի և վեհանձն մարդկանց: Նշված սենտենցները մեկնաբանող մի բանասեր ուշագրավ դիտողություն է արել: Նավոյին, ասում է բանասերը, հաճախ հենվում էր ժողովրդական ստեղծա-

գործության վրա և աշխատում օգտագործել հարազատ ժողովրդի հարուստ գանձարանը ամեն անգամ, երբ կերտում էր իմաստալից իր պատգամները: Ազնվական լինելով հանդերձ, նավոյին շատ ուժեղ թելերով էր կապված աշխատավոր զանգվածների հետ: Այդ էլ հնարավորություն է տալիս նրան և՛ ուսումնասիրել ժողովրդական ստեղծագործությունը, և՛ ընտրել ավելի դիպուկ աֆորիզմներ, ավելի ուսանելի պատգամներ:

Այլընտրանք նավոյի երկերի մեջ միանգամայն առանձնահատուկ տեղ է գրավում նրա գիտական-հրապարակախոսական տրակտատը երկու լեզուների նշանակության մասին («Գատողություն երկու լեզուների մասին»):

Ինչպես հայտնի է, Այլընտրանք նավոյի հայրենիքում վաղ դարերից սկսած իշխում էր իրանական կուլտուրան: Ամբողջ միջին Ասիայի բնակչության կուլտուրական վերնախավի համար գրական ճանաչված լեզուն պարսկերենն էր: Կուլտուրայի ներկայացուցիչները սովորաբար պարսկերեն էին գրում իրենց գիտական և գրական աշխատությունները: Կրթված անձնավորություն էր համարվում ամենից առաջ պարսկերեն իմացողը: Այդ տրադիցիան նավոյի օրերին փոփոխություն է կրում: Նա իր գեղարվեստական երկասիրությունները դիտավորյալ գրում է մայրենի՝ հարազատ ժողովրդին հասկանալի լեզվով («Խամսա», «Չահար Գիվան»), որը վճռական հարված է հասցնում իշխող տրադիցիային: Եվ ահա վերոհիշյալ տրակտատի մեջ նավոյին, որպես հայրենասեր մտածող, հիմնավորում է մայրենի լեզվի արժեքը, մեծ թափ է հաղորդում ժողովրդի լեզվի մշակմանը, կոչ է անում ուժ տալ դուրամատչելի մայրենի լեզվի զարգացմանն ու կիրառմանը: Հաղթանակը տանում է նավոյին: Նա գեղարվեստական գործեր է կերտում ուղեբեկներն, մշակում ու կատարելագործում է անցյալում «զուհիկ» համարվող ժողովրդական լեզուն, և վերջապես հիմնավորում է նշված լեզվի պատմական արժեքը՝ տեսական ուսումնասիրության բնույթ կրող վերոհիշյալ աշխատության մեջ: Ամենից բնորոշն այն է, որ նավոյին գրական նոր լեզվի մշակման գործը շարկապում է կենտրոնախույս քաղաքականություն վարող ֆեոդալների դեմ ուղղված՝ պետական ուղեգծի պաշտպանության հետ: Մշակելով գրական նոր լեզուն՝ նավոյին խթանում է հայրենի ժողովրդի կուլտուրական վերելքին:

Ուղեբեկական իրականության մեջ անցյալում եղել են ազգայնական մտածողներ, որոնք ճիգ են թափել աղավաղել նավոյի նախաձեռնության իմաստը: Ազգայնական այդպիսի իմաստասերներին վճռական հակահարված են հասցրել սովետական գրականագիտության առաջավոր ներկայացուցիչները: Պետք է ասել, որ ռեակցիոն ազգայնամոլների դեմ պայքար է մղել նաև ինքը՝ նավոյին ազատատենչ իր մտորումներով, առաջավոր գաղափարներով և հումանիստական բարձր հայեցողությամբ:

Այլընտրանք նավոյի մտայնության հիմնական հատկանիշներն այնքան

պարզ են, որ շեն կարող անտեղի տարակուսանքներ առաջացնել: Իր իսկական նկարագիրը, առաջին հերթին, կերտել է հենց ինքը՝ Նավոյին: Այդ նկարագիրը լրացնելու համար մեզ մնում է թուղցիկ կերպով կանգ առնել հատկապես նրա «Ֆարճատ և Շիրին» պոեմի վրա:

Դա տաղանդավոր գեղարվեստական ստեղծագործություն է՝ լեցուն նշանակալից դադափարնեքով և կերտված հմուտ ճարտարապետին հատուկ շնորհքով: Այդ մեծատաղանդ պոեմի ազդեցություն ուրույն հետքերը կարելի է գտնել առանձին հայ գրողների ստեղծագործություններում: Ես նկատի ունեմ Բաֆֆուն և ապա՝ Վրթանես Փափաղյանին, որոնք ժամանակին, ըստ երեւոյթին, դերվիշների թեոսոֆիայի ուսումնասիրության հետ միասին, հետազոտել են նաև արևելյան մեծ հումանիստների՝ Նիզամու և Նավոյի պոեմները:

Այսօր էլ Նավոյի պոեմը կարող է պատվավոր տեղ գրավել համաշխարհային կուլտուրայի նշանավոր հուշարձանների մեծ պանթեոնում:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԱՐՎԵՍ

Նավոյի նշված պոեմում աշխատանքը դիտվում է որպես հերոսական մեծագործություն: Աշխատանքը իմաստավորվում է՝ սերտորեն կապակցվելով արվեստի հետ: Հնօրյա հանրահայտ սյուժեն մշակելով նոր ձևով, Նավոյին հանդես է գալիս որպես աշխատանքի, արվեստի և գիտության զաղափարախոս:

Անցյալում բանաստեղծները և բանասերները կանգ են առել սյուժեի վրա: Հայտնի է, որ տակավին X դարում Ֆիրդուսին նույնպես մշակել է իր օրերում հայտնի ավանդությունը: Նիզամին բարձր գնահատելով Ֆիրդուսու աշխատանքը՝ այնուամենայնիվ անկատար էր համարում իր մեծ նախորդի փորձը: Նա համեստորեն հայտարարում էր, որ ինքը կամեցել է միայն լրացնել անավարտ խոսքերն ու հղկել ավելի արժեքավոր «բեկորները»: Միաժամանակ, սակայն, Նիզամին ջանացել է թեթևակի նշել նաև իր վաստակի արժեքը: Նա կարևոր է համարել հիշեցնել, որ ինքը նպատակ է ունեցել «փալաւսը» դարձնել «մետաքս» և ապա «արծաթից» ձուլել «ոսկի»: Ինքնին արդեն պարզ է, որ այդպես մոտենալով թեմային, Նիզամին իր սեփական «մշակումը» տրամադիր էր համարել ավելի բարձրարժեք գեղարվեստական ստեղծագործություն:

Բերտելսի կարծիքով, Նիզամին քննադատաբար էր մոտենում արիստոկրատական հովերով տարված Ֆիրդուսուն և սկզբից արդեն նպատակ էր դրել կերտել բոլոր ժողովուրդների համար ընդունելի «նոր պոեմ»: Հիրավի, Նիզամու պոեմը մեծ տպավորություն է թողել արևելյան երկրներում: Բազմաթիվ բանաստեղծներ ջանացել են հետևել Նիզամուն: Դրանցից է Դեհլևին

(XV դ.), որը ինչպես ասում են արևելագետները, գրեթե բառացի շարահյուսել է Նիզամու մշակած սյուժեն: Նավոյին XV դարում քննադատորեն է մոտեցել իր նախորդների փորձերին: Նա իր պոեմում տարակուսանք է հայտնել այն առթիվ, որ Դեհլևին և Նիզամին հերոս են դարձրել դաժան խոսրովին: Լուրջ փոփոխություններ մտցնելով վիպական պատմվածքի կառուցվածքի մեջ՝ Նավոյին կերտում է ինքնուրույն պոեմ՝ աշխատանքի և արվեստի մասին: Փոխվում է նաև պոեմի վերնագիրը: Նիզամու կառուցող Ֆարճազը երկրորդական պերսոնաժ էր: Այժմ գլխավոր հերոսներ են դառնում արդեն Ֆարճազն ու Շիրինը: Նրանց կյանքի, սիրտ, արկածների և աշխատանքի մասին է պատմում Նավոյին:

Խոսքովը պոեմում նկարագրված է բացասական դուշներով: Նրա անմիջական զինակիցները նույնպես բացասական տիպեր են: Հումանիստ բանաստեղծը ներքող է ձոնում գիտությունը, աշխատանքին, արվեստին: Նա հանդես է գալիս որպես ժողովրդական խավերի հետ կապված մտածող: Նա նրբին դժվերգում է ընկերությունը, յաղաղ աշխատանքը, ժողովուրդների բարեկամությունը: Պոեմի գլխավոր հերոսը գիտության նոր արժեքները յուրացնելու նպատակով ուղևորվում է հեռու երկրներ: Նավոյին հակիրճ կերպով ծանրանում է Չինաստանի, Իրանի, Հունաստանի, Հայաստանի վրա: Նրա սիրելի հերոսը՝ Ֆարճազը, ջերմորեն է մոտենում աշխատանքի մարտիկներին, ուսումնասիրում է նկարիչների, ճարտարապետների, քանդակագործների արվեստը: Երբ նա անցնում է Հայաստան՝ տեսնում է ժայռ քանդող քարհատներին, զրուցում նրանց հետ, միանում քարհատների շարքերին, օգնում նրանց և առաջարկում կիրառել աշխատանքի նոր մեթոդներ...

Հայուհի Շիրինի համար հերոս է աշխատանքի մարտիկը: Այդ մոտիվը ընդգծվում է պոեմի մեջ: Միայն հետագայում է այդ հերոսուհին իմանում, որ Ֆարճազը շինական թագաժառանգ է: Նավոյին բարձր խավերի ներկայացուցիչներին թելադրում է իջնել վար, մոտենալ աշխատանքի մարտիկներին, միանալ ժողովրդի շարքերին: Ֆարճազի բարեկամները վեհանձն ու ճշմարտախոս մարդիկ են, աշխատանքի և գիտության երկրպագուներ: Շիրինն ու նրա հորաբույրը՝ Բանուն, ակտիվ, խելացի և առաջավոր կանայք են: Պալատում Ֆարճազը տեսնում է գեղուհիների, որոնցից յուրաքանչյուրը աչքի է ընկնում իր գիտելիքներով: Պարուհիների կողքին Ֆարճազը տեսնում է երգչուհիների, երաժիշտների, արհեստի և գիտության ներկայացուցիչներին: Նա կապվում է Շիրինի հետ և մնում իր նոր հայրենիքում: Երբ հարձակվում են բռնակալ ոճմակները, Ֆարճազը հերոսական պայքար է մղում թշնամիների դեմ և սպանվում է:

Պոեմի վերջին էջերը տխուր են: Շիրինի համար միշտ թանկ ու սիրելի է մնում Ֆարճազը: Ազդու տողերով է նկարագրում բանաստեղծը մահացած

Ֆարհադի արժանիքները դրվատող Շապուրին: Պոետը բարձր ընկերության զուգընթաց է երգում և մեծարում խիզախ Ֆարհադի կողքին կանգնած նրա մոտիկ բարեկամներին՝ հայուհի Շիրինին և իրանցի Շապուրին: Պոեմի նշված էջերը դառնում են ժողովուրդների եղբայրության վսեմ իդեալը դրվատող պատգամներ:

Պոեմում կան բազմաթիվ տեսարաններ, որոնք գծված են տաղանդավոր նկարիչ-հոգեբանին հատուկ ուժով: Ընթերցողի վրա մեծ տպավորություն են թողնում Շիրինի հուզումնալից նամակը, Ֆարհադի դիալոգը՝ Խոսրովի, Ֆարհադի դուրսը՝ ջրառատ առուններ պատրաստող մշակների հետ, Շապուրի անսահման տիրությունը համակված խոսքերը...

Ամբողջ պոեմը կերտված է մեծագույն հմտությամբ: Դա և՛ պոեմ է, և՛ վեպ: Հիմնական սյուժեն չի ծանրաբեռնված ավելորդ կամ անհամողիչ մանրամասնություններով: Ոճը սահուն է սկզբից մինչև վերջ: Հեղինակի խոհերը, ակնարկներն ու դիտողություններն այնքան սերտորեն են շաղկապված դեպքերի ու տիպարների նկարագրության հետ, որ դառնում են լիովին հիմնավորված և անհրաժեշտ հավելումներ: Միրային տրագիցիոն սյուժեն պոեմում նկարագրված է նոր ձևով, որպես մարդկայնության, ընկերության, աշխատանքի և ժողովուրդների եղբայրության հետ սերտորեն կապակցված մոտիվ:

Պոեմի միայն վերջաբանն է տխուր: Պատմվածքի կոլորիտը նույնպես տխուր է: Նավոյին չի ցանկանում ծածկել, որ իրական կյանքը լեցուն է անհրապույր երևույթներով: Չնայած դրան, իր պոեմում, նա տխուր դեպքերի նկարագրությունը դարձնում է ոչ թե հուսահատական պատգամների, այլ ցասման, բողոքի, ըմբոստացման քարոզ: Դա է պոեմի հիմնական դոմինանտը: Նավոյին այդ էլ հենց նկատի ունի, երբ ընդգծում է, որ ինքը ցանկանում է շեղվել Դեհլեի և Նիզամու ուղեգծից, ձգտում է մերկացնել դաժան Խոսրովի իսկական էությունը, նպատակ է դնում անողոր պայքար հայտարարել բռնակալության պատգամախոսներին ու ջահակիրներին: Նավոյին նոր վերնագիր է ընտրում, պոեմը անվանում է «Ֆարհադ և Շիրին», ներքող է ձոնում բարի, գիտուն, արվեստագետ Ֆարհադին...

Լիրիկական էջեր շատ կան պոեմում: Նավոյին հաճախ պոեմի առանձին հատվածներն ավարտում է Օմար Խայամի իմաստասիրական-հեղոնիստական ոտբայիներին հատուկ աֆորիզմներով: Տխուր դեպքերի ազդեցության ներքո նա էլ աշխատում է սիոփանք գտնել գինետան մեջ և գինու թասը ձեռքին՝ միշտ զորավոր կյանքի փոփոխություններն է հիշեցնում: Այդպես էր ավարտում իր Իսկենդեր Նամեի առանձին էպիզոդների նկարագրությունը Նիզամին: Դարեհի և Իսկենդերի պատերազմի նկարագրությունն ավարտելուց հետո, Նիզամին խնդրում է «մատուլակին» գինի բերել, ներքող է ձոնում «Լուսավոր գինուն», հայտարարում է, որ միմիայն գինին կարող է բուժել

սրտի մորմոքը: Մի ուրիշ հատվածում Նիզամին նկարագրում է Իսկենդերի պատերազմը Զինչերի հետ և նորից դիմում է «զվարթ մատուլակին»: Այս անգամ նա նշում է, որ գինին զեղ է, հարեցնելով սիոփանք է տալիս և «իր համար ուրախություն է»...

Գուցե Նավոյին հենց Իսկենդեր Նամեի նշված յուրահատուկ հավելումների ազդեցության ներքո էլ իր պոեմի որոշ հատվածներին կցել է իմաստալից իր մտորումներ-աֆորիզմները, գինու ամենազոր ուժի դրվատմանը նվիրված դատողությունները: Եթե ճիշտ է նման ենթադրությունը, ապա կարելի է գուցե որոշ կապ նշարել «Իսկենդեր Նամեի» ու «Ֆարհադ և Շիրինի» միջև:

Իսկենդերը Նիզամու համար զրական հերոս էր: Շատ յուրահատուկ վեպ-պոեմում Նիզամին հիվանդության և ծերության օրերին արժարժում է իր մտորումները՝ հասարակական հանգույցների ու հեռավոր դալիքի մասին:

Նույնը, ինչպես երևում է, նպատակ է ունեցել նաև Նավոյին: Բնորոշ է այն, որ ուղբեկ ժողովրդի մեծ բանաստեղծի համար զրական հերոս է դառնում աշխատանքի, արվեստի, ընկերության, գիտության ջահակիր Ֆարհադը: Այս անգամ էլ Նավոյին նկատելիորեն շեղվում է տրագիցիոն ուղեգծից:

Պետական խոշոր գործիչ էր նա: Ակնածանքով էր լսում բազմազան առակաները և բազմաթիվ ավանդությունները մեծ Իսկենդերի մասին: Սակայն, մեծարելով անգամ Իսկենդերին, նա հերոսին որոնում էր կառուցողների շրջանում: Շատ և շատ տիրակալներ էր տեսել: Շատ ծանր օրեր էր քաշել, անգամ իր ուսանողության տարիներին «ընկեր» Հյուսիսի Բայբարի տիրակալության ժամանակ: Նրա գրիչը չէր շարժվում Խոսրովին կամ նույնիսկ մեծ Ալեքսանդրին դրվատելու համար:

Մեծարելով գիտնական ու շինարար Ֆարհադին, Նավոյին անսահման ոգևորությամբ կերտում է իր սրտաբուխ վեպ-պոեմը՝ աշխատանքի ու բարեկամության վեհության մասին: Այդպես մոտենալով թեմային՝ Նավոյին նորից հանդես է գալիս որպես հայրենի ժողովրդի բաղձանքներին արձագանքող հումանիստ-բանաստեղծ...*

ՄԻԿԼՈՒԵՈՒՄԱԿԼԱՅ

(«Ճանապարհորդության» հայերեն բարգմանության առթիվ)

Միկլուխո-Մակիլայը շատ ուշագրավ տեղ է գրավում ականավոր ռուս ճանապարհորդների շարքերում: Նա արագիցիոն տիպի սովորական ճանապարհորդ չէր: Նա առաջավոր գիտնական էր և հումանիստ մտածող: Իր ժա-

* Մաճոր. Այս ակնարկը շարագրելիս հենվել ենք առաջավոր սովետական արևելագետների ուսումնասիրությունների վրա:

մանակի տերմիններով ասած՝ «երկրորդ կարգի» կամ «հետամնաց» ժողովուրդների կյանքը այդ ճանապարհորդն ուսումնասիրել է՝ հենվելով XIX դ. 60-ական թվականների ռուս դեմոկրատական ինտելիգենցիայի հումանիտական վեճ պատգամների վրա: Ամենից հատկանշականն այն է, որ իր ամբողջ վարքագծով և գիտական աշխատություններով՝ Միկլուխո-Մակլայը քանդելով ու ջախջախելով արևմտյան ճանապարհորդների հակադիտական դրույթները, ցույց է տվել նաև հնօրյա ազգագրագետների տեսությունների ռեակցիոն բնույթը:

Միկլուխո-Մակլայը Սովետական Միության երիտասարդության առաջավոր ջոկատների ամենասիրելի ու ուսանելի գրողներից մեկն է: Նրա հայտնի «Ճանապարհորդություն»-ը տպագրվել է բազմիցս և լայնորեն տարածվել ու սպառվել է մեծագույն տպաքանակով: ՍՍՀՄ դիտությունների ակադեմիայի նախաձեռնությամբ լույս է տեսել Միկլուխո-Մակլայի գիտական հրատարակության շորրորդ ստվարածավալ հատորը: Դա մեծագույն խնամքով պատրաստված շքեղ հրատարակություն է: Բացի հատուկ ծանոթագրություններից, շորրորդ հատորին կցված են Միկլուխո-Մակլային ուղղված զանազան նամակներ, նրա գործունեության բնութագրմանը նվիրված մի բովանդակալից բնական տեսություն, տարբեր լեզուներով հրատարակված նրա գիտական աշխատությունների ընդարձակ ցուցակը: Այդ ակադեմիական ստվարածավալ հրատարակության մեջ մտել են բազմաթիվ տեքստեր ու նյութեր, որոնք միայն այսօր են դառնում հասարակության սեփականությունը: Այդ նոր տեքստերը և նյութերը ավելի ճշգրիտ կերպով են պարզաբանում գիտնական-ճանապարհորդի կյանքի կարևորագույն էջերը: Պարզվում է, որ Միկլուխո-Մակլայը Պետերբուրգի գիմնազիայում ուսանելիս ուշադրությամբ էր կարդում և ուսումնասիրում 60-ական թվականների հեղափոխական-դեմոկրատների աշխատությունները: Հենց այդ պատճառով էլ միջնակարգ դպրոցի ղեկավարների կարգադրությամբ, նա որպես «անբարեհույս» աշակերտ, 1863 թվականին վտարվում է գիմնազիայից: Այժմ ավելի որոշակի է դառնում, որ նա ժամանակին ակտիվորեն մասնակցել է Պետերբուրգի ուսանողների մեծ ցույցին (1864) և ցույցի ժամանակ էլ ձերբակալվել: Չերնիշևսկու «Ի՞նչ անել» վեպը այդ օրերին ուսանողության ամենասիրելի գիրքն էր: Միկլուխո-Մակլայը ձեռք է բերել այդ վեպի մեկ օրինակը և տարել իր հետ արտասահման: Մահվանից հետո նրա մոտիկ ծանոթները մի շարք արժեքավոր իրերի հետ միասին, Պետերբուրգ են ուղարկում նաև այդ գիրքը:

Շատ բնորոշ է, որ Հայդելբերգի համալսարանում ուսանելիս Միկլուխո-Մակլայը ուշադրությամբ ուսումնասիրում էր ուտոպիստների՝ Ռոբերտ Օուենի և Սեն-Սիմոնի աշխատությունները: Չերնիշևսկու «Ի՞նչ անել» վեպի ազդեցության ներքո նա կազմել էր նույնիսկ «ընկերական արհեստանոցների»

ուրույն նկարագրությունը: Կասկածից դուրս է, որ պատանեկության տարիների ապրումներն են կոփել նրա հումանիստական հայեցողության այն տարրերը, որոնք հետագայում այնքան վճռական տոն են հաղորդել նրա գիտական պրպտումներին:

Ակադեմիական հրատարակության մեջ ղեկողված նամակներից շատերը մի շարք հետաքրքիր կենսագրական փաստեր են պարունակում: Միկլուխո-Մակլայի մայրը, օրինակ, 1864 թվականին գրում է իր որդուն, որ դատապարտության «հանդեսից» հետո նա (Չերնիշևսկին) ուղևորվում է և ապա՝ ավելացնում է «...այսինքն՝ նրան տաճում եմ...»: Նույն տարվա հունիսի 22-ին Միկլուխո-Մակլայի մայրը գրում է, որ Չերնիշևսկու նկարն ստանալուն պես ինքը կուղարկի ծանոթի հետ: Բնորոշ է և այն, որ Միկլուխո-Մակլայը, Պետերբուրգից ստանալով այդ լուսանկարը, մեծ շանասիրությամբ արտանկարում է այն:

Միկլուխո-Մակլայի և արևմտյան տրադիցիոն ճանապարհորդների հիմնական հատկանիշների և հիմնական ուղղության միջև հսկայական տարբերություն կա:

Երբ այսօր մենք թերթում ենք առանձնապես արևմտյան հայտնի ճանապարհորդ Ստենլիի մանրակրկիտ ուղեգրությունները, ավելի քան որոշակի կերպով տեսնում ենք առաջին հերթին զաղութային արշավներ պատրաստող և կազմակերպող արևմտյան գիշատիչ բուրժուազիայի զաղրելի ներկայացուցչի դեմքը: Ստենլին՝ ինքը իր սեփական աշխատությունների մեջ ցինիկաբար նկարագրում է աֆրիկյան նեգրերի կոտորածը և բացահայտ կերպով պաշտպանում է եվրոպական ռեակցիոն ազգագրագետների հակադիտական տեսությունները:

Արևմտյան ճանապարհորդների ճշող մեծամասնությունն ընթացել են նույն ուղեգծով: Իրականում «եվրոպական քաղաքակրթության» այդ վաղեմի ուղեգիծն են հիմնավորել նույնիսկ պացիֆիստական դրոշ պարզած եվրոպական ճանապարհորդները: Գաղտնիք չէ, որ գաղութային ժողովուրդները մեծագույն զայրույթով են արձագանքել այդ ուղեգիծը բացահայտ կամ քողարկված ձևով պաշտպանող ռեակցիոն գիտուններին: Եվրոպական կամ ամերիկյան միսիոներների դեմ զանազան ժամանակ բռնկված յուրահատուկ ելույթները եղել են այդպիսի «արձագանքներ»: Այդ կարևորագույն փաստը ժամանակին արձանագրել են հոլանդական ականավոր գրող Մուլտատուլին, ամերիկյան հռչակավոր վիպագիր Մարկ Տվենը և շատ ուրիշներ: Մերկացնելով ամերիկյան կապիտալիստական բուրժուազիայի գիշատիչ ներկայացուցիչներին, Մարկ Տվենը անասելի զայրույթով դատափետել ու խարազանել է ամերիկյան փարիսեցի միսիոներներին: Խաչը ձեռքին, — գրում է Մարկ Տվենը, այդ գործիչները ճանապարհ են հարթում գաղութային ժողովուրդներին

խեղզող ու կոտորածի մատնող, արյունարբու և գիշատիչ բռնակալների համար: Առանց սքողելու իր սևահոգի հայրենակիցների դաժան վարքագիծը, տաղանդավոր վիպագիրը դատափետում է արևմտյան փարիսեցի և ոտքից մինչև զլուխ ևեակցիոն «կուլտուրեղերների» իսկական էությունը, մերկացնում կոտորածների բոլոր հեղինակների հրեշավոր դեմքը:

Արևմտյան ճանապարհորդների մեջ մեծ է եղել բուրժուական պետությունների անմիջական հրահանգները կատարող հետախույզների թիվը: Ահա թե ինչու զաղութային պատերազմների ժամանակ բնիկ ժողովուրդների տարերային բռնկումները կամ ապստամբությունները շատ հաճախ ուղղվում էին ոչ միայն արևմտյան զորամասերի, այլև նրանց հետ կապված և կապիտալիզմի բանդիտ-ներկայացուցիչներին սպասարկող բազմազան ճանապարհորդների և միսիոներների դեմ: Միանգամայն այլ է եղել զաղութային ժողովուրդների վերաբերմունքը ռուս ճանապարհորդների նկատմամբ:

Արևելքի ամենահեռու վայրերում անգամ Պրժևալսկին կամ Օբրուչևը, Կոզլովը կամ Պոտանինը, Գրում-Գրժիմայլոն, Արսենևը և նման ուրիշ ճանապարհորդներ ընդունվել են որպես բարեկամներ: Այդ ճանապարհորդների բովանդակալից ուղեգրությունների մեջ մենք տեսնում ենք նախ բոլոր ժողովուրդներին հումանիստորեն մոտեցող առաջավոր մտածողին և դեմոկրատական հայացքներով տոգորված գործչին:

Ահա այդ առաջավոր ճանապարհորդների շարքերում Միկլուխո-Մակլայը կարող է ամենից ուշագրավը համարվել:

Իր մեծ հայրենիքի սահմանները նա ստիպված է լինում թողնել: Հեռու և օտար երկրներ ուղևորվելով, նա տանում է իր հետ Չերնիշևսկու «Ի՞նչ անել» վեպը, ռուսանողական վաղեմի մտորումները, Բեկետովի և Սեչենովի նման խոշոր գիտնականների գիտական աշխատությունների ազդեցությամբ ձևավորված տրագիցիաները: Նա միայնակ նետվում է երկրից երկիր՝ նորանոր ժողովուրդների կյանքի և դեմքի ուսումնասիրության համար: Ուղևորվելով արաբական երկրներ, նա արաբական զգեստ է հագնում և կատարում է նույնիսկ արաբների կրոնական ծեսերը¹:

Մեծ նշանակություն են ունենում Միկլուխո-Մակլայի հետագա ճանապարհորդությունները:

Նույնիսկ ռուսական նավի կապիտանը ակներև տարակուսանքով էր հետևում նավից իջնող գիտնական-ճանապարհորդին: Անմիտ և տարօրինակ էր համարում այդ ճանապարհորդի որոշումը: Ինչպես կարելի է առանց հատուկ պահակախմբի, առանց զինվորների՝ կայան հաստատել «մարդակերների» համբավ վայելող «վայրենիների» տեղավայրերում: Այդպես էր դա-

տում նավապետը, երբ նավից վերջին հրաժեշտի ազդանշանն էր հնչում... Միայնակ է ուղևորվում Միկլուխո-Մակլայը կղզիաբնակ «վայրենիների» և «մարդակերների» մոտ: Միայնակ էլ մնում և ապրում է նա իր այդ նոր միջավայրում: Նա մեծագույն ուշադրությամբ ուսումնասիրում է կղզիաբնակ «վայրենիների» սովորությունները, կենցաղը, հատկանիշները՝ միշտ ջանալով մոտենալ նոր և արտասովոր մարդկանց մարդկային ունակությունների ճշգրիտ ճանաչողությանը: Նա շատ ծանր օրեր է քաշում: Շատ հաճախ ենթարկվում է վտանգների, հիվանդանում է ու մնում առանց օգնության: Չնայած այդ ամենին՝ կարողանում է գրավել «վայրենիների» սիրտն ու համակրանքը:

Կատարվում է հեքիաթային մի հրաշք: Միկլուխո-Մակլայը դառնում է խաղաղ օվկիանոսի հեռավոր կղզու բնակիչների ամենասիրելի բարեկամը: Միամիտ մանուկների նման՝ այդ բնակիչները խնդրում են նրան ընդմիշտ մնալ իրենց մոտ, հրաժարվել հայրենի Ռուսիա վերադառնալու մտքից:

Միկլուխո-Մակլայը հակառակ դատարարական-կուլտուրական աշխատանք է կատարում արտասովոր մարդկանց արտասովոր այդ միջավայրում: Նա առաջավոր գիտնականին և նրբանկատ բժիշկ-հոգեբանին հատուկ բարեխղճությամբ օր ու գիշեր հետևում է հետամնաց ցեղերի առանձնահատկություններին և ամենամանրակրկիտ կերպով գրի է առնում իր բոլոր դիտողությունները: Նա նույնիսկ նկարում է կղզիների առանձին բնակիչների սիլուետները, մարմնի առանձին մասերը, տիպական հատկանիշները, թեև հաճախ նկատում է և որոշ անբավականություն կամ նույնիսկ զայրույթ...

Ահա նման դիտողությունների և քննությունների վրա են խարսխված նրա գիտական հետազոտությունները, որոնք ցուցադրում են առաջավոր էվոլյուցիոնիստ-գիտնականի դեմքը:

Ճանապարհորդությունը և ապա՝ ուսումնասիրական պտույտները հսկայական նյութեր են տալիս Միկլուխո-Մակլային: Հրատարակելով իր գիտական նյութերը, կարևոր եղբակացությունները և ընդհանրացումների բնույթ կրող դիտողությունները, նա, հենվելով բազմաթիվ ու բազմազան փաստերի վրա, հարված է հասցնում հնօրյա ազգագրագետների և հասարակագետների հակադիտական տեսություններին:

Այդ օրերին մեծ էր հետամնաց և ակնհայտ ռեակցիոն գիտնականների թիվը: Այդ գիտնականների շարքերում մեծ տեղ էին գրավում զաղութային քաղաքականության էությունը քողարկող գործիչները:

Այդ օրերին զգալի էր նաև զաղութներն ավերող ու զաղութային ժողովուրդների գյուղերն այրող բռնակալների թիվը: Շատ հաճախ յուրաքանչյուր եվրոպական կամ ամերիկյան նոր նավ պատասխանատվության էր կանչվում ամերիկյան որևէ վայրագ նավապետի կատարած ավազակու-

¹ Миклухо-Маклай, Собр. соч., М., 1953, т. IV.

թյունների, թալանի, բռնությունների համար: Այդ ամենը Միկելուխո-Մակլա-
յին շատ լավ հայտնի էր: Այդ պատճառով էլ նա ստիպված է լինում որոշ
զգուշավորություն պահպանել, երբ վերջնականապես որոշում է նորից ուղևոր-
վել իր վաղեմի ծանոթների մոտ: Իհարկե, նա գիտեր, որ իր հին ծանոթները
չեն ցանկանա որևէ վնաս հասցնել իրեն՝ իրենց սիրելի «Մակլային»: Բայց
մի՞թե վայրագ նավապետների դեմ լարված հետամնաց մարդիկ չէին կարող
սխալվել: Վերջապես, մի՞թե կարելի էր վստահ կերպով ասել, թե իր հին ծա-
նոթները կենդանի են մնացել և չեն զսփվել ռազմական ընդհարումների ժա-
մանակ:

Ահա հենց այդ հանգամանքներն էլ Մակլային թելադրում են մի բնորոշ
պայմանագիր կնքել այդ կղզին ուղևորվող նավի նավապետի հետ: Նա դի-
տավորությամբ այդ պայմանագրի մեջ մտցնում է հետևյալ տողերը. «...այն
դեպքում, եթե հանկարծ միտք Մակլայը կղզիներից մեկում սպանվի տե-
ղացիների ձեռքով, նավապետ Վերբերը պարտավոր է մեղավորներին պատժե-
լու պատրվակով ոչ մի բռնություն չգործադրել նրանց վրա...»:

Շատ ուշագրավ դիտողություններ է արել Միկելուխո-Մակլայը հատկա-
պես իր կյանքի այդ շրջանին վերաբերող տողերից հետո:

«...Սպիտակների հանցանքը խաղաղ օվկիանոսի կղզիաբնակների նկատ-
մամբ այնքան մեծ է, որ ամեն տեսակ «պատիժ» կարող է միայն մեծացնել
հանցագործությունների թիվը...»:

Վերջին տողերը նշանակալից են: Միկելուխո-Մակլայը մճռական կերպով
դատափետում է կապիտալիստական վայրագ «կուլտուրայի» ջահակիրներին:
Բնորոշ է այն, որ նրա ուղեգրությունները ընթերցող գործիչները լիովին ձայ-
նակցում էին ուղեգրությունների մեջ արծարծված փիլիսոփայությանը: Ող-
ջունելով Միկելուխո-Մակլային, հանձարեղ վիպագիր և Տոլստոյը գրում է
մի նամակ և ընդգծում ճանապարհորդ-դիտնականի կատարած գործի հակա-
յական նշանակությունը: «...Գրեք,— ասում է Տոլստոյը,— այդ պատմությու-
նը և դուք մեծագույն ու լավ ծառայություն կմատուցեք մարդկությանը»:

Պետք է այստեղ նշել, որ Միկելուխո-Մակլայը ժամանակին անհրաժեշտ
է հասարել ուղևորվել նոր Կալեդոնիա՝ այդ կղզու բնիկներին ուսումնասիրելու
համար: Հատկանշական է, որ հասնելով այդ կղզին, նա որոշում է անցնել
Փարիզի արքայական կոմունարների մոտ և ուսումնասիրել նրանց կյանքը:

Մի վ էր ստիպում նրան կատարել այդ անհրապույր ճանապարհորդու-
թյունը: Չէ՞ որ արքայական կոմունարների կյանքը չէր կարող բնագետ-ճա-
նապարհորդի համար հետաքրքրական լինել: Նոր Կալեդոնիան բոլոր քաղա-
քակիրթ կենտրոններից կտրված շատ հեռու մի կղզի էր: Այդտեղ, հայրենի-
քից հեռու, արքայավայր-արգելարանի դաժան պայմաններում տառապում էին
Փարիզյան կոմունայի պարտված ապստամբները: Միկելուխո-Մակլայը միայն

հակիրճ և զուսպ տողեր է նվիրում իր արտասովոր այցի նկարագրությանը:
Մակլայն, եթե մենք նորից հիշենք, որ արտասահմանում նրա ամենասիրելի
գրքերից մեկը Չերնիշևսկու վեպն էր և, որ Չերնիշևսկու լուսանկարն ստա-
նալուց հետո Մակլայը նկարել էր նրա պորտրեն, ապա հասկանալի կղառ-
նա, որ Չերնիշևսկու ընթերցողի համար, Կալեդոնիայի արքայական կոմու-
նարները իհարկե պիտի դառնային դարձյալ անիծյալ կապիտալիստական
կարգերի վայրագ ջահակիրների անսահման ստորությունը և դաժանությունը
հաստատող անողոր վիաներ և մեղադրողներ: Նոր Կալեդոնիայից Միկելուխո-
Մակլայը ուղևորվում է Փարիզ՝ համակված տխուր հուշերով:

Եվ ահա հասնելով Փարիզ, նա նետվում է իր վաղեմի ծանոթ, անշափ
սիրելի վիպագիր Տուրգենևի մոտ և պատմում իր կալեդոնյան հուշերն ու տալա-
վորությունները:

«Հայրեր և զավակներ» վեպի տաղանդավոր կերտողը շատ ծանր հիվանդ
էր: Երկարատև և ինտիմ է լինում երկու մտերիմ գործիչների զրույցը: Նորից
և նորից Միկելուխո-Մակլայը պատմում է արքայական կոմունարների մասին:
Տուրգենևի վրա ցնցող տպավորություն էին թողել ֆրանսիական սարսափա-
հար և զազազած բուրժուազիայի ցինիզմն ու ստորությունը: Անհրաժեշտ է
նշել, որ այդ օրերին Տուրգենևը մշակել էր նոր մտտեցում արմատական դեմո-
կրատիայի ներկայացուցիչների նկատմամբ: Նա արդեն պատրաստել էր իր
«Շեմք» արձակ բանաստեղծությունը, որը ներքոջ էր հերոսական «Նարոդնա-
յա Վոլչայի» հեղափոխականների հասցեին և յուրահատուկ թելադրանք Մա-
կուսկուն՝ անցնելու Սոֆիա Պերովսկայայի և Կիրալչիչի-հեղափոխական «Երե-
կույթի» («Вечеринка») մասնակիցների կերպարների կերտմանը: Եթե այդ
ամենը մենք նկատի առնենք, թերևս կարողանանք հիպոթեզի կարգով նշել,
որ հատկապես այդ օրերին Տուրգենևի վաղեմի լիբերալիզմից շատ քիչ բան
էր մնացել: Միկելուխո-Մակլայի պատմվածքը կարող էր միայն նոր թափ հա-
ղորդել Տուրգենևի սկեպտիցիզմին...

Միկելուխո-Մակլայը Տուրգենևին խնդրում է որևէ կերպ ձեռք բերել փա-
րիզյան կոմունարների գրությունները: Տուրգենևը, ինչպես նշում է նրա կեն-
սագիրներից մեկը, կատարում է այդ խնդրանքը և Միկելուխո-Մակլային հանձ-
նում կոմունարների նամակներն ու այլ գրությունները:

Դա շատ ուշագրավ փաստ է:

Միևնույն հեղինակը արձանագրել է նաև մի ուրիշ փաստ: Փարիզում
Միկելուխո-Մակլայը առանձին տեսակցություն է ունեցել հայտնի մարդաբան
Բրոկայի հետ և ապա՝ մտերիմ կապեր հաստատել նրա հետ: Ֆրանսիական
գիտնական Բրոկան Կոմունայի օրերին եղել է ժողովրդական հայտնի դեմք:
Նրա տան մոտ, Կոմունայի ղեկավարների հատուկ կարգադրությամբ, կանգ-
նած էր առանձին պահպան-զինվոր: «...Ես,— ասում էր բոլոր անցորդնե-

րին այդ կոմունար պահապանը,—այստեղ կանգնել եմ, որպեսզի քաղաքացի Բրոկան ապահով կերպով շարունակի իր գիտական կարևոր աշխատանքը...»:

Միկլուխո-Մակլայի աշխատությունները մեծ արձագանք են գտել ուսուսուսալու գիտնականների և գրողների շրջանում: Հայտնի ուսուսուսալու արդարագրագետ Յազարինցը ստվարաթավալ ուսումնասիրությունն է հրատարակել, որտեղ քննադատել է մարդատյացության հովերով տարված ռեակցիոն գիտնականներին:

Ոչ միայն ուսուսուսալու դեմոկրատները, այլև նույնիսկ պրոգրեսիվ գործիչների ամենալայն շարքերը ձայնակցել են Միկլուխո-Մակլայի գիտական մտորումներին և կոլի են ելել հնօրյա ուսուսուսական-ցեղական տեսության գաղափարախոսների դեմ:

Միկլուխո-Մակլայը ոչ միայն հումանիստ գիտնական էր, այլև տաղանդավոր գեղագիտական նրբին ճաշակի տեր ներհուն գրող: Ամեննին պատահական չէ, որ նա գիտական իր սեղմ հետազոտությունները հրատարակելուց հետո կարողացել է ստեղծել նաև պատկերավոր ոճով և վառ գույներով կերտված մի գեղարվեստական գործ: Այդ գործի հիմնական և կարևորագույն մտտիվը կապիտալիզմի գաղափարախոսների ռեակցիոն տեսության դատափետումն էր՝ գեղարվեստական ակնարկների միջոցով: Նրա ճանապարհորդությունը, համենայն դեպս, ցույց է տալիս, որ նա, արձագանքելով իր մտտիկ ծանոթների առաջարկին, նպատակ էր դրել ուղեգրությունների միջոցով մերկացնել կապիտալիզմի ջահակիրների դեմքը: Հենց դրանով է բացատրվում Միկլուխո-Մակլայի ուղեգրական ակնարկների արտասովոր ուժն ու ազդեցությունը:

Նրա օրագիրը տրագիցիոն տիպի ուղեգրություններից դանազանվում է ամենից առաջ նրանով, որ գրված է պատկերավոր և կենդանի լեզվով: Խաղաղ օվկիանոսի գեղեցիկ կղզիների բնակարանները, կղզիաբնակ ժողովուրդների ներկայացուցիչների իրական կերպարները թողնում են գունագեղ նրկարների տպավորություն:

Այդ ինքնատիպ ուղեգրական ակնարկների մեջ կան հատվածներ, որոնք փաստական լուսանկարներ լինելով հանդերձ՝ իսկական գեղարվեստական ֆրագմենտներ են: Մեծագույն տակտով կերտված այդ նկարազրույթությունների մեջ չկա ոչ մի կեղծ հնչյուն, անճիշտ տող, քաղցրավուն կամ անիմաստ շեշտ: Արևի ճաճանչներով սղողված փայլուն պատկերները և ապա՝ ինքնատիպ և կենդանի մարդկանց հոգեկան հատկանիշները բնութագրող սեղմ-տողերը շատ լավ են բնութագրում նաև այդ խիզախ գիտնական-ճանապարհորդին:

Ուղեգրական ակնարկների առանձին տողերն այնքան տպավորիչ են, որ գիրքն ավարտելուց հետո անվերջ մնում են ընթերցողի հիշողության մեջ:

«Անձրև ու նորից անձրև, կաթում է սեղանի, անկողնու, գրքերի վրա... հիմա իմ դրությունը այսպես է՝ պարենը վերջացել է, քինաքինան բուլրովին սպառվելու մոտ է. ջերմը հյուսում է ինձ...»:

Նման հակիրճ և ազդու տողերը ցույց են տալիս, որ ուղեգրությունների տաղանդավոր հեղինակը ծանր օրեր շատ է ապրել...

Նույն են օրեր, երբ նա տեսնելով, հետամնաց ցեղերի առանձին ներկայացուցիչների վարագույնները և անիմաստ քայլերը, ընկել է շատ տրիստ ու ծանր մտորումների գիրկը: Այնուամենայնիվ, անգամ այդ ծանր օրերին նա չի ընկճվել, որովհետև երբեք չի կտրվել իր հումանիստական հայեցողությունից և մինչև վերջ հավատարիմ է մնացել նրան: Դա է նրան խրատը՝ ներշնչել կյանքի ամենազովարին օրերին: Դա է ստեղծել այն կորովն ու կյանքի արտասովոր ամբողջությունը, որ հնարավորություն է տվել նրան հաղթահարելու բազմազան պատենչներ և դառնալու միամիտ ու միաժամանակ վայրենի ցեղերի շրջապատում՝ շատ ազդու և սիրելի բարեկամ, անշափ մտիկ ու թանկագին ուսուցիչ:

...Այսօր անզլո-ամերիկյան իմպերիալիզմի ստոր սպասավորները՝ ապավինելով խաչին և ատոմային ումբին՝ շաղակրատում են արևմտյան «կուլտուրայի բարեմասնությունների» մասին: Սակայն իրականում այդ բուլր ռեակցիոն ասպետները հավատարիմ են մնում դրեղնոտների և դինամիտի դաժան արքաների արյունոտ պատգամներին:

Միկլուխո-Մակլայի հին, բայց միշտ նոր գիրքը, քանզելով ու շախախելով ամերիկյան մարդակերների ռեակցիոն փիլիսոփայությունը, ավելի ցայտուն կերպով մերկացնում է նաև այսօրվա ամերիկյան իմպերիալիզմի զազրելի գաղափարախոսներին...

Ա. Կալինյան, «Գրական արձագանքներ», 1945, էջ 114—124:





ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԻՆ ՀԱՅ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ՝

Իր «Հայոց հին գրականության պատմության» Ա հատորի նախաբանի մեջ Մ. Աբեղյանը ընդգծում է, որ մենք այսօր էլ չունենք հայոց պատմության գիտական ուսումնասիրություն, և ապա առաջարկում է գրականագետներին պարզաբանել հայ ժողովրդի պատմության զանազան շրջանների սոցիալ-տնտեսական-քաղաքական կյանքի ուրույն երանգները: «Այդպիսի մի գործը,— նշում է Աբեղյանը,— պիտի օգնեք գրականագետին իր աշխատանքը կատարելիս... քանի որ չկա այդպիսի պատմություն, գրականագետը ինքը պետք է մտնի պատմական խնդիրների պարզաբանման մեջ, հաճախ եկեղեցական պատմության վերաբերյալ... նա պիտի դրազվի նաև այնպիսի կողմերով, որոնք գրականության պատմության մեջ առանձին տեղ չպիտի գրտնեին, այլ իբրև հայտնի իրողություններ մի երկու խոսքով միայն պետք է մեջ բերվեին»... (ընդգծումը իմն է—Ա. Կ.): Ինձ թվում է, որ ականավոր բանասերի այդ գիտողությունները այսօր հատկապես պիտի ղեկավար հրահանգներ դառնան մեզ համար:

Մեր կարծիքով մի շարք գրական վավերագրերի երանգները պարզվում են ավելի որոշակի կերպով, երբ պատմական անցյալին մոտենում ենք զինված պատմական մեթոդով: Պատմական փաստերն ու զեպքերը գրականագետի համար պիտի լինեն հիմնական ելակետեր: Շատ հաճախ այդ ելակետերն են ուրույն ուղղություն հաղորդում գրականագետի պրպտումներին: Հաճախ այդ ելակետերն են թելադրում մեզ ավելի մեծ ուշադրությամբ մոտենալ «պատահական» ակնարկներին, թուուցիկ տողերին, վերջապես, անցյալում «անկարևոր» համարվող մանրամասներին:

1 Մի հատված հեղինակի համանուն ընդարձակ աշխատությունից: Խմբ.:

Այս ակնարկի մեջ ես կանգ եմ առնում այսօրինակ վավերագրերի վրա: Այդ վավերագրերը վաղուց արդեն գրավել են մի շարք բանասերների ուշադրությունը: Չնայած դրան, ակնարկված նյութերը այժմ էլ աննշան տեղ են գրավում հայ մուլտոլորայի պատմությանը նվիրված տրագիցիան ուսումնասիրությունների մեջ:

Թե որքան մեծ նշանակություն ունեն գրական վավերագրերը հեռու անցյալում բռնկված սոցիալական շարժումների ու հոսանքների բնութագրման համար՝ այդ մասին երկու կարծիք լինել չի կարող: Որոշակի կերպով ակնարկելով հայ հերետիկոսական գրականության պատմական նշանակության մասին, վերոհիշյալ վավերագրերը թելադրում են նոր տեսանկյունից մոտենալ անգամ հերետիկոսներից հեռու կանգնած հայ պատմիչների երկերի մեջ նըշմարվող հասարակական տենդենցներին և գաղափարական ղեգերումներին:

1

Հեռու անցյալում բռնկված կրոնական ժողովրդական շարժումների մասին ժամանակին բազմաթիվ ուսումնասիրություններ են հրատարակել արևմտաեվրոպական և ռուսական պատմաբանները: Հայտնի է, որ թե՛ արևմուտյան, թե՛ արևելյան երկրներում այդ շարժումներն եղել են շատ հաճախ կրոնական շղարշով պարուրված սոցիալական բմբոստացումներ իշխող խավերի դեմ:

«... Հեղափոխական օպոզիցիան,— նկատում է Ֆ. Էնգելսը,— ընդգեմ ֆեոդալիզմի, ընթանում է ամբողջ միջնադարի ընթացքում: Կախված ժամանակից և պայմաններից, նա մեկ հանգես է գալիս միսսիկայի ձևով, մեկ բացահայտ հերետիկոսության ձևով, մեկ զինված ապստամբության ձևով...»²:

Էնգելսը շեշտում է, որ հերետիկոսական շարժումները տարբեր էպոխաներում տարբեր բնույթ են ունեցել և արտահայտել են զանազան հասարակական շերտերի բազմանքները: Դառնալով իշխող գաղափարախոսություն, բրխտոնեությունը թելադրում է հերետիկոսներին հանգես գալ կրոնական ղեգստներով: Եկեղեցու և հերետիկոսական շարժումների պատմությանը նվիրված հետազոտությունները և բավական մեծ պատմագիտական գրականությունը ցույց են տալիս, որ Էնգելսի հիմնական գրույթները միանգամայն ճիշտ են:

Նրբ մենք բնուում ենք դավանաբանական հին աշխատությունները, բազմազան մեկնությունները, վկայաբանական պատմվածքները, բոլոր այդօրի-

2 К. Маркс и Ф. Энгельс, том VIII, стр. 128—129.

նակ գրական վավերագրերի մեջ տեսնում ենք անցյալի հակամարտ հոսանքների կրոնական գաղափարախոսներին: Մուլեզին այն ակնարկները, որ նետում են հերետիկոսների հասցեին իշխող եկեղեցու ներկայացուցիչները, հաստատում են, որ հին օրերին սոցիալական բռնկումներն հիրավի եղել են ուժեղ շարժումներ: Հասարակական բուռն հորձանքներն են թելադրել եկեղեցու ականավոր վարդապետներին կովի ելնել նորակառույց քրիստոնեական եկեղեցու միասնությունը քայքայող ազատախոհ կամ սկեպտիկ մտածողների դեմ:

Միևնույնը կատարվում էր և հին Հայաստանում:

Շատ սուր է լինում այստեղ հոգևոր ձգնաժամը քրիստոնեության տիրակալության առաջին շրջանում: Ասիական երկրներում հերետիկոսական հոսանքների բարգավաճմանը նպաստում էին ոչ միայն տնտեսական փոփոխությունները, ուղղակի գործողությունները, սոցիալական ներհակ խավերի բախումները, այլ նաև տարբեր պետական միավորների քաղաքական միավորների քաղաքական միջոցառումները:

Նեստորը, ինչպես հայտնի է, հենարան է դառնում Սիրիայում: Հովհան Դամասկացին, իր աքսորավայրում՝ Հայաստանում գտնում է հետևողների և պրոպագանդիստների նոր շարքերը: Թեոդոր Մոսպոնեստացու մոտ մենք տեսնում ենք Մեսրոպին: Բյուզանդական եկեղեցու ղեկավարները մեծագույն ուշադրությամբ հետևում էին փոքրասիական հերետիկոսների ձեռնարկներին: Դրանք հատուկ նամակ-հրահանգ են ուղարկում հայ եկեղեցու ներկայացուցիչներին և առաջարկում են Սահակին ու Մեսրոպին մշակել զգուշավոր կրոնական քաղաքականություն: Այդ նամակը ցույց է տալիս, որ Հայաստանում հերետիկոսական աղանդներն այնքան էլ թույլ չէին: Հայ գործիչների գործելակերպն, ըստ երևույթին, եղել է բավական ուրույն: Համենայն դեպս, մեզ հայտնի է, որ բյուզանդական քաղաքականությունը հայերը հակադրում են հայ այրուբներ: Այդ քաղաքականությանն է հակադրվում հայ ինքնուրույն գրականության և կուլտուրայի նոր շինարարությունը: Դա էլ պատասխան էր, իհարկե, և շատ կտրուկ, մտածված ու լուրջ պատասխան:

Մեսրոպի գլուխը հնարավորություն էր տալիս հայ ժողովրդին մշակել ինքնուրույն կուլտուրական զարգացման ուղեգիծ, ամբացնել այդ կուլտուրան, միասնացնել՝ ընդգեմ կենտրոնական ուժերի, վերջապես դառնալ հենակետ հայ պետականության շենքը կառուցող առաջավոր գործիչների համար:

Հայ ժողովուրդը միատարր զանգված չէր այդ օրերին: Հերետիկոսական աղանդների գոյությունը ցույց էր տալիս, որ ճնշված խավերը ձգտում են այս կամ այն ձևով արտահայտել իրենց անբավականությունն ու մտորումները: Աղանդների ու աղանդավորների թիվը մեծ էր ամբողջ Փոքր Ասիա-

յում: Քրիստոնյա-հերետիկոսներն աչքի էին ընկնում քաղաքներում: Սկզբնական շրջանում դրանք շատ չէին տարբերվում թափառական հեթանոս-հոնտորներից, ստոյիկյան կամ ցինիկական փիլիսոփայությանը դերվիշ պրոպագանդիստներից³: Անտիոքի խանութների ծածկույթների տակ կամ արևելյան բազարներում դրանք շատ առօրյա դեմքեր էին: Զուր չէր Ֆիլոստրատը հեթանոս հումանիստ Ապոլլոն Տիանցու կյանքի էպիզոդները համեմատում Քրիստոսի կյանքի մասին շարահյուսված առակների մեջ նկարագրված դեպքերի հետ: Իրականում Ֆիլոստրատը ինքնահատուկ ձևով արձագանքում էր իր ժամանակաշրջանում իշխող տրամադրություններին:

Ազաթանգեղոսի և Զենոբ Գլակի հայտնի երկերի մեջ նկարագրված են հեթանոսների և քրիստոնյաների մարտերը: Արյունահեղ և երկարատև են եղել այդ բախումները: Հաղթում է նոր կրոնը:

Հաղթանակից հետո քրիստոնյաներն անցնում են նոր շինարարության: Նոր տաճարներ, ապարանքներ, դպրոցներ կառուցող գործիչներն, ինչպես հայտնի է, չեն կարողանում կտրվել հայ հին ճարտարապետական կուլտուրայի տրագիցիաներից: Ոչ միայն Տեկոթի տաճարի, այլ նույնիսկ, Հռիփսիմեի և նման տաճարների կառուցվածքի մեջ նշմարվում է անհետացած հեթանոսական մեհյանների ուրույն ոճի կնիքը: Անշափ հարուստ գրաբար լեզուն քրիստոնյա գործիչները ստանում են, ինչպես Մառն է հաստատում, իրենց հեթանոս նախահայրերից: Հին օրերի մեհյանները քանդվում են, բայց քրիստոնեական տաճարները կառուցվում են հեթանոս քրմապետների ճաշակով ընտրված վայրերում:

Հայ քրիստոնեության ջահակիրները պիտի որոշեին իրենց դիրքը հելլենիստական-հոմեական մշակույթի տրագիցիաների հանդեպ: Ընդունել, թե՞ միանգամայն ժխտել: Այդպես էր դրված խնդիրը: Նոր տեխնիկա, նյութական նոր կուլտուրա, քիչ-շատե մշակված քրիստոնեական հատուկ ոճ տակավին չկար: Հետևաբար անհրաժեշտ էր շատ բան առնել անցյալի գործիչներից: Հեթանոս պապերն ու հայրերը հարուստ մշակույթ են ստեղծել: Դա փաստ էր և անհնարին էր աչքաթող անել այդ փաստը: Քրիստոնյա որդիները յուրացնում են այդ բարձր կուլտուրան և ապա այդ պատվանդանի վրա հենվելով՝ ձեռնարկում են իրենց սեփական նոր և մեծ շինարարությունը: Մեր պատմիչները նկարագրում են պատմական այդ պրոցեսի նշանակալից դրվագները:

Մեհյանները դառնում են քրիստոնեական տաճարներ: Արևի մեծարմանը նվիրված հեթանոսական հիմնի ազդեցության ներքո հյուսվում է քրիս-

³ Տե՛ս Գոմպերցի հայտնի ուսումնասիրության մեջ ցինիկների բնութագրման նվիրված էջերը.—Гомперц, Греческие мыслители, т. II.

տոննական շարականը: Կրոնական շատ հայտնի հանդեսները, պատարագները, տոնակատարություններն ակնարկում են նույնպես հեթանոսական տրադիցիաների մնացուցիկ մասին:

Կարելի է ասել ավելին. սոցիալական որոշ ինստիտուտներ սկզբնական շրջանում մնում են գրեթե անփոփոխ: Տաճարական մեծ լատիֆոնդիաների սեփականությունը՝ կալվածներն ու պլանտացիաները, ստրուկներն ու անազատ շինականները, ամբողջ գույքը դառնում է քրիստոնեական վանքերի սեփականությունը: Այդ մասին կարելի է գտնել բազմաթիվ ակնարկներ հայ պատմիչների երկերի մեջ:

Տրդատը, ինչպես նշում է Ագաթանգեղոսը, հեթանոսական մեհյանների մեծ կալվածքները նվիրում է քրիստոնյա եկեղեցու ղեկավարներին: Ընդհանուր եկեղեցական սեփականության կողքին մենք տեսնում ենք առանձին եկեղեցականների տոհմական սեփականություն: Անահտի մեհյանի ամբողջ սեփականությունը հանձնվում է եկեղեցուն— «ի սպասավորութիւն» («հանդերձ զետնովքն և սահմանոք»): Փավստոսի վկայությամբ Գրիգորը հատկապես իր տոհմի համար ստանում է մեծամեծ կալվածքներ: Դատարկ գյուղերը կամ անմշակ ու ամայի դաշտերն, իհարկե, արժեք չէին ներկայացնում: Եկեղեցական հայ իշխանների գյուղերում ապրում էին աշխատավորներ, ստրուկներ և անազատ շինականներ, որոնց այդ քրիստոնյա իշխանավորները շահագործում էին նախկին քրմապետների նման:

Ժամանակի ընթացքում եկեղեցականների կալվածատիրությունը մեծանում է ու դառնում ծավալուն տնտեսություն: Բնական է միանգամայն, որ եկեղեցական բռնակալների ղեմ սկսվում է մեծագույն շարժում, որն ընդգրկում է հասարակական գրեթե բոլոր խավերի ներկայացուցիչներին: Կովի ելնելով եկեղեցական կալվածատերերի ղեմ, այդ խավերից յուրաքանչյուրը ղեկավարվում է, իհարկե, սեփական շահերով: Կովի է ելնում հոգևոր գերագույն պետի ղեմ, ինչպես հայտնի է, նույնիսկ աշխարհական իշխանության գերագույն պետը՝ հայ թագավորը: Զանալով կառուցել ամուր և կենտրոնացած պետություն, վերջինս բախվում է հոգևոր իշխանության պետի հետ հաճախ շատ սուր կերպով: Հայտնի է, որ Արշակ թագավորը ճիգ է անում հնվել քաղաքների բնակչության վրա: Նրա ձեռներեցությունները հիմնված Արշակավանը դառնում է կարևոր կայան հոգևոր և աշխարհական ֆեոդալներից անբավական տարրերի համար: Շատ հավանական է, որ ըմբոստ տարրերով լեցուն Արշակավանը հելլենիստական, փոքր-ասիական հին «ազատ» քաղաքների նման քաղաք էր:

Կաթողիկոսների և թագավորների հարաբերությունների մասին կան ուշագրավ ակնարկներ մեր պատմիչների երկերի մեջ: Մի քանի կաթողիկոսներ ենթարկվել են մահվան պատժի: Պապ թագավորի օրերին պայքարը դառնում

է ավելի սուր: Հետևելով իր նոր ուղեգծին Պապը՝ առաջադրում է մի շարք սոցիալական-քաղաքական ռեֆորմներ: Նա գրավում է եկեղեցական կալվածների որոշ մասը, սահմանափակում է եկեղեցու օրենսդրական իրավունքները, խարաղանում է պորտաբույծ եկեղեցականներին:

Ներսեսի և Պապի օրերին սոցիալական շարժումները դառնում են այնքան ուժեղ, որ արտացոլվում են անգամ կրոնական գրականության մեջ: Աշխատավոր զանգվածների կացությունը շատ ծանր էր և սոցիալական շարժումներն անխուսափելի էին հատկապես քաղաքներում, ուր կուտակված էին ոչ միայն արհեստավոր, այլ նաև հողագործ խավերը: Այդ մասին կարելի է գտնել նշանակալից ակնարկներ հայ պատմիչների երկերում: Անհրաժեշտ է միայն ավելի ուշադրությամբ ուսումնասիրել պատմիչների թուրքիկ ակնարկները կամ թեթև կերպով նետված խոսքերը այս կամ այն ցնցող դեպքի առթիվ: Այդպիսի ակնարկներ կան հատկապես Փավստոսի, Խորենացու, Փարպեցու երկերում: Խորենացին պարզորոշ կերպով իր հայտնի «Ողբ»-ի մեջ խոսում է հենց սոցիալական շարժումների մասին, երբ նկարագրում է «ժառանգությունից փախչող» ըմբոստ կամ տգետ մարդկանց անհանդուրժելի քայլերը: Միանման դիտողություններ կան նաև Փարպեցու «Թուղթ»-ի մեջ:

Սոցիալական շարժումները եղել են այնքան լայն և բազմերանգ, որ ստեղծել են կատարյալ իրարանցում: Ավելի հաճախ, ըստ երևույթին, սոցիալական շարժումների ղեկավարները հանդես են եկել զինված զանազան կրոնական աղանդավորական ուսմունքներով: Պատահական չպիտի համարել այն, որ ամենախոշոր փիլիսոփայական ուսումնասիրությունը V դ. հայ կուլտուրայի մեծագույն ներկայացուցիչներից մեկը ուղղում է հատկապես զանազան աղանդների ղեմ: Նրա գիրքը շատ կարևոր սոցիալ-պատմական վավերագիր է հենց նրա համար, որ ակնարկում է որոշակի կերպով Հայաստանում գործող աղանդավորների ակտիվ գործունեության մասին:

Շատ ավելի մեղմ կերպով է քննադատում Եզնիկը հույն բնափիլիսոփաներին⁴: Հայաստանի քաղաքներում նկատելի տեղ պիտի ունենային այդ բնափիլիսոփայության հետևողները, որոնց վերջին ներկայացուցիչները, հատկապես նեոպլատոնական իմաստասերները փոքրասիական բոլոր քաղաքներում մեծագույն համարում ունեին V դարում: Քաղաքային բնակչության ընթերցասերներին լավ էին հայտնի նեոպլատոնական իմաստասիրության և ապա գնոստիկական ուսմունքների ազդեցության ներքո ստեղծված հերետիկոսական հոսանքների ներկայացուցիչները: Եթե ճիշտ է այն, որ Աթենքում, Ալեքսանդրիայում, Բյուզանդիայում ուսանող հայերի թիվը մեծ է եղել, ապա

⁴ Տե՛ս В. Чалоян, К вопросу об учении Езника Кочпеци, Ереван, 1940. Անորոշ և զի՛հելի է. իմ կարծիքով, Վ. Զալոյանի ակնարկը Եզնիկի կարծեցյալ հերետիկոսության մասին:

վասկածից դուրս է, որ այդ քաղաքներում իշխող իմաստասիրական ուսմունքներն էլ պիտի խոշոր ազդեցություն թողնեն թե՛ թարգմանիչներին և թե՛ հունաբան դպրոցի ներկայացուցիչների վրա: Եկեղեցու հայրերից մեկի վկայությամբ հայ ուսանողները Աթենքում հատկապես աչքի էին ընկնում որպես ազատախոհ մտածողներ և ըմբոստներ: Աթենքի «սոստիկաները» նույնիսկ նկարում են դրանցից մի քանիսի պորտրետները դրանց արտաքսելու ժամանակ, որպեսզի հնարավորություն ունենան հայերի անթույլատրելի վերադարձը խափանեն:

Գրել է Եզնիկը իր գիրքը իրեն ապագա մեղադրանքներից ապահովելու համար թե ոչ—մենք չգիտենք: Ակներև է միայն այն, որ քրիստոնյա այդ իմաստասերի գրքի մեջ նշմարվում են հունական հեթանոս փիլիսոփաների ուսմունքներին հատուկ որոշ խոհեր ևս: Ինձ թվում է, միմիայն դրանով պիտի բացատրել այն, որ տաղանդավոր այդ գործիչ երկերից այնքան քիչ գործեր են մնացել: Ի՞նչպես կարող էր շատ ակտիվ փիլիսոփան, թարգմանիչներին այնքան բեղուն գործունեության շրջանում, այն օրերին, երբ քրիստոնյա գործիչները հրապարակում էին բազմաթիվ գրություններ, հրապարակել միայն մի երկու գրվածք: Միևնույն հարցը մենք կարող ենք տալ նաև Խորենացու, Փարպեցու առթիվ: Նրանք էլ եղել են ակտիվ գործիչներ: Նրանք գրել են մեծագույն տեմպերամենտով, բայց և այնպես մեզ հասել են այդ հայտնի գործիչների միայն մի քանի երկերը և այն էլ աղավաղված և կրճատված ձևով: Եղիշեի կարևոր մի աշխատության վերականգնման մի ուշագրավ փորձ նորերս ձեռնարկվել է հայ երիտասարդ բանասերներից մեկի ջանքերով: Եվ ահա մենք տեսնում ենք, որ նույնիսկ Եղիշեն եղել է հելլենիստական կուլտուրայի ջահակիրներից մեկը և որ նրա կարևորագույն երկերից մեկը «անհետացել» է ճիշտ այնպես, ինչպես «անհետացել» են Փավստոսի, Փարպեցու, Եզնիկի, Խորենացու և շատ ուրիշ ականավոր հայ գործիչների բազմաթիվ գրությունները:

Ի՞նչպես բացատրել այդ: Այդ գործիչները հերետիկոսներ չէին: Ենթադրել, թե դրանք եղել են բյուզանդական եկեղեցու ջատագույնները և դրա համար էլ ենթարկվել են «կատարացիայի», նույնպես անհնարին է: Մնում է անել մի ուրիշ եզրակացություն, և ինձ թվում է՝ հենց այդ բացատրությունն էլ կարող է պարզաբանել տակավին միին պրոբլեմը: Խնդիրն այն է, որ քրիստոնեական եկեղեցու հաղթանակից հետո Հայաստանում նույնպես սկսվում է նոր կրոնի հելլենականացման պրոցեսը: Ավելի հաշտարար կերպով մտա-

⁵ Դա բանասեր Խաչիկյանի դիսերտացիան է: Ծնորհիվ ընկ. Խաչիկյանի ձեռնարկության հարստանում է հայ գրականությունը Եղիշեն էլ «Արարածոց գրքի մեկնություն» մեջ նկարագրվում է հիրավի նոր գույներով, որպես հելլենիստական պայծառ կուլտուրայի ջահակիր:

նալով հեթանոս կուլտուրային, ավելի կրթված հայ գործիչները ենթարկվում են նեոպլատոնականների և գնոստիկների ազդեցության: Հայ քաղաքներում կրկնվում է յուրաձև կոլտրիտով ճիշտ միևնույնը. ինչ որ կատարվում էր Ալեքսանդրիայի, Ապամեայի, Եղեսիայի և նման այլ քաղաքների միջավայրում: Քաղաքների բնակչության՝ վաճառականների, արհեստավորների, յուրահատուկ քաղաքային ինտելիգենցիայի համար անտիկ աշխարհի կուլտուրական արժեքները շատ թանկ էին: Մյուս կողմից սոցիալական շարժումներն էլ աչտեղ ստեղծում են ուրույն հերետիկոսական հոսանքներ: Մանիքեականությունը հենարան է գտնում քաղաքներում: Նույնիսկ քրիստոնյա գործիչներից մի քանիսը ենթարկվում են մանիքեական ուսմունքի ազդեցությանը: Զարմանալի չէ դրանից հետո, որ հայ կուլտուրայի ականավոր գործիչների համար նեոպլատոնականների և գնոստիկների ներկայացուցիչները կարող էին մի որոշ շրջանում դառնալ հասկանալի և զուցե նույնիսկ ընդունելի: Հայերեն հին թարգմանությունների մեջ կան ոչ միայն Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Նազիանցու, Հովհան Գամակացու նման գործիչների երկերի թարգմանություններ, այլ նույնիսկ ուրիշ վավերագրեր, որոնց մեջ ցայտուն կերպով գծվում է հեթանոս կուլտուրայի ազդեցության ուժեղ կնիքը:

Հետևաբար, մնում է անել միայն մի եզրակացություն: Հայ գործիչներից՝ Եզնիկը, Փարպեցին, Եղիշեն, Խորենացին եղել են ազատախոհ գրագետներ՝ հելլենիստական կուլտուրայի քրիստոնյա պրոպագանդիստներ: Դրա համար էլ նրանց այն երկասիրությունները, ուր եղել են եկեղեցու ուսմունքին ներհակ գաղափարներ, «անհետացել» են: Խորենացու «Պատմությունը» չի անհետացել, բայց այդ «Պատմությունն» էլ վերախմբագրվել է և կրճատվել: Չնայած այդ հանգամանքին, անգամ կրճատված Խորենացին շատ և շատ պարզորոշ նկարագրվում է իր երկասիրության մեջ, որպես հելլենիզմի երկրպագու: Բավական է միայն ուշադրություն դարձնել նրա խոհերին: Երբ Խորենացին պատմում է անցյալի էպիկական երգերի մասին, նկարագրում է ճարտարապետական հուշարձանները, պատմում է Գառնիի հեթանոսական տաճարի կամ թե պարող նազնիկի մասին, նրա պատմվածքի ոճը դառնում է հյուսիսեղ և պատկերավոր: Ողբի մեջ խոսվում է «հերետիկոսների» մասին, բայց ոչ մի ականավոր հերետիկոսի անուն չկա: Պատմիչը նկարագրում է գնոստիկներով լեցուն Աղեքսանդրիան և Եղեսիան, սակայն ոչ մի ականավոր գնոստիկի անուն չի տալիս: Կանգ է առնում նա միայն գնոստիկ Բարդեժանի վրա և դրա մասին էլ խոսում է ակնածանքով ու հարգանքով: Քաղքեղոնական գրագետը երբեք չէր կարող այդպես գրել և այդքան լիբերալ վերաբեր-

⁶ Եթե ճշտվի, որ Պիտոյից Գիբբը ու կալիսթենեսի վեպը թարգմանել է Խորենացին, այդ հանգամանքը, անշուշտ, կթնադրի մեր բանասերներին նոր դիտակետից մտանալ պատմիչին:

մունք ցուցաբերել հեղինակական կուլտուրայի հանդեպ: Մյուս կողմից անգամ թուղթիկ այն դիտողությունները, որ նետում է պատմիչը իշխող կարգերի, ղանազան իշխանավորների ապօրինի քայլերի, եկեղեցականների անհանդուրժելի վարքագծի մասին, ցույց են տալիս, որ հորենացին եղել է իշխող եկեղեցական կարգերի քննադատների շարքերում, ուրույն հենարան է ունեցել թե քաղաքներում և թե կրթված աշխարհական իշխանների շրջանում: Այդպես էր և Փարպեցին:

Ահա ինչու մենք գտնում ենք, որ մեր խոշոր պատմիչները իրականում արտահայտել են շատ յուրահատուկ ձևով քաղաքներում բռնկված սոցիալական շարժումների ընթացքում առաջադրված զաղափարական տենդենցները: Դրա համար էլ հորենացին և Փարպեցին հալածանքի են ենթարկվել, իսկ նրանց շատ երկասիրություններն էլ աուտոդաֆեի են արժանացել: Ոչնչացնելով ազատախոհ գրագետների երկասիրությունները, ազավաղելով և կրճատելով նրանց պատմական երկերը, օրթոդոքս եկեղեցու ցեղորները միաժամանակ ջանացել են դարձնել անշափ ժողովրդական գործիչներին իշխող կարգերի սպասավորներ: V դարից սկսած մինչև հետագա դարերը բազմազան գրիչներ արտագրել, ազավաղել, լրացրել էին եկեղեցու դավանանքի և գրական ճաշակի համաձայն ազատախոհ գործիչներին, և դարձյալ շեն կարողացել խեղդել ազճատված տեքստերի մեջ անդադար հնչող բողոքի և բմբոստացման, ազատախոհ իմաստասիրության և հայրենասիրության հիմնական այն մոտիվները, որոնք կարող էին ստեղծել քաղաքացիների և աշխարհականների հետ շփվող գործիչների և ոչ թե հասարակական իրականությունից կտրված աշխարհատյաց մտավորականների ջանքերով: Այդ գործիչները չէին ընդունում նեստորի կամ Արիոսի աղանդը, բայց նրանք անհամեմատ ավելի համբերատար կերպով էին մոտենում դրանց, իսկ նեոպատոնական իմաստասիրության հետևողներին նույնիսկ ձայնակցում էին: Հայ ազատախոհ գործիչների ուրույն գործելակերպը աննշմարելի չի մնում Բյուզանդիայում: Այդտեղից գրություններ են ուղարկվում Մոսկովեստացու հետ ծանոթ և գնոստիկներին ուսումնասիրող հայ գործիչներին, առաջարկում են ուժեղացնել պայքարը հերետիկոսների դեմ: Այդ առաջարկը ընդունվում է, բայց նորից կիրառվում է շատ ուրույն ձևով:

Հեթանոսությունը վճռական պարտություն հասցնելուց հետո քրիստոնեության գաղափարախոսները աշխատում են ամրացնել իրենց տիրակալությունը: Պարտված և ջախջախված հեթանոսները չէին կարող այլևս շոշափելի հարվածներ հասցնել աստիճանաբար ամրացող և պետության ուժերին կառչած քրիստոնեությանը: Քրիստոնեության հեղինականացման հետ միաժամանակ հող է ստեղծվում նաև հեթանոս և քրիստոնյա տարրերի որոշ համայնակեցության և փոխհարաբերությունների համար: Մերթ ընդ մերթ առանձին

վայրերում բռնկվում են կրոնական ընդհարումներ: Ալեքսանդրիայում քրիստոնյա ֆանատիկոսները վայրենի կերպով նետվում են հեթանոսական փիլիսոփայությունից տաշանդավոր քարոզչուհի-գիտուն Իպատիայի վրա և գզգզում են նրան: Հուլիանոս Ուրացողը հիգ է անում նորից կյանք տալ այնքան հմայիչ անտիկ աշխարհին⁷: Հանդես են գալիս առանձին քրիստոնյա պետեր, որոնք աշխատում են լայնախոհ քաղաքականության միջոցով զոզել անտիկ աշխարհի կուլտուրան քրիստոնեության հետ: Բայց պատմության խոսքը շատ որոշ էր: Քայլ առ քայլ քրիստոնեությունը քանդում էր գաղափարական բոլոր պատենշները և դառնում էր այնքան զորավոր, որ այլևս չէր վախենում երեկվա իր խոսյանից: Հուստինիանոսը VI դարում փակում է Աթենքի բարձրագույն դպրոցը, բայց մոլեռանդ քրիստոնյա լինելով հանդերձ, անտիկ մեծ կուլտուրայի զենքերին կառչած է ամրացնում իր մեծ պետականության ամբողջ շենքը:

Միևնույն ժամանակ մենք տեսնում ենք նաև Հայաստանում, ուր քրիստոնյա հայ գրագետները տարածում են նոր կուլտուրան զինված անտիկ աշխարհի գիտունների զենքերով: Հեթանոս հայերի վերջին բեկորները՝ արևորդիներն էին, որոնք չէին կորցնում իրենց ազդեցությունը անգամ քրիստոնեության հաղթանակից հետո: Արևորդիների գաղութներ կային, ինչպես հայտնի է, նույնիսկ հայկական Ռենեսսանսի էպոխայում: Արևորդիներին հետևող գյուղացիների մասին հիշատակում է հատկապես Ներսես Շնորհալին իր գրությունների մեջ: Հեթանոս հայ թատրոնի գործիչների մասին ակնարկներ կարելի է գտնել Մանզակունու մոտ⁸: Եկեղեցական հին կանոնների մեջ կան տեղեկություններ նույնիսկ մենաստանների մոտ դերասանների հետ խրախճանքներ կազմակերպող իշխանների մասին: Վերջապես գուսանական երգերի, ժողովրդական սովորությունների, հասարակական հանդեսների մեջ դարեր շարունակ հեթանոսական հին կուլտուրայի տրագիցիաները մնում են կենսունակ: Բոլոր այդ տվյալները ցույց են տալիս, որ հաղթանակը տանելուց հետո, քրիստոնեական պետության ղեկավարների կողմից գոնե մշակվել է ավելի համբերատար գործելակերպ անտիկ մշակույթի հանդեպ:

7 Կասկածից դուրս է, որ Հուլիանոսը հայ իրականության մեջ ժամանակին ստեղծել է հետևողներ, թեկուզ հենց վաղեմի հեթանոս տրագիցիաներին հավատարիմ քրիստոնեական շրջանում:

8 Հեթանոս հայ թատրոնի մասին ուշագրավ տեղեկություններ կան անվանի բանասեր Գ. Առնյանի մենագրության մեջ (Գ. Առնյան, Հին հայ թատրոնը, Երևան, 1943): Մի նկատելի թիրույթուն նշմարվում է այդ արժեքավոր աշխատության այն մասերում, որոնք նվիրված են հեթանոս թատրոնի պատմությանը: Զանալով անպատճառ որոշել Տիգրանակերտում կառուցված հայ թատրոնի տեղը, Առնյանը շատ թիշ է խոսում բուն թատրոնի բնույթի մասին:

Շատ ավելի անողորմ կերպով էին մոտենում ըստ երևույթին միևնույն այդ ղեկավարները քրիստոնեական աղանդների գործունեությունը: Փաստերը համեմատյալ դեպս, ցույց են տալիս, որ այդ աղանդների դեմ պայքարը մղվել է դաժանագույն կերպով: Անհանդուրժելի շարժումները խափանելու համար գործադրվում էին ամենավայրագ միջոցներ: Քրիստոսի անսահման սերը մեծարող քրիստոնյա ինկվիզիտորներն սուանձին եռանդով հետևում էին հերետիկոսներին, գանակոծում էին, արսորում, խեղդում և սպանում գիտուն աղանդավորներին: Գիբբոնի պատմության մեջ կան շատ պատկերավոր էջեր, այսպես կոչված, «տիեզերական» ժողովներում պարբերաբար կրկնվող կանոնավոր ըմբռնամարտության և խայտառակ կոիվների մասին⁹:

Բազմաթիվ նման փաստեր և դեպքեր են հայտնի: Հերետիկոսական հոսանքների պայքարը եղել է իրականում հաճախ յուրահատուկ «կուսակցությունների» պայքար: Հնօրյա այդ «կուսակցությունները» արտահայտել են, իրենց հատուկ եղանակով, սոցիալական ներհակ խավերի տրամադրություններն ու բաղձանքները: Դավանաբանական խրթին վեճերի շուրջ կազմակերպվել են հասարակական խմբակցություններ: Դավանաբանական և իմաստասիրական սուր վեճերը սերտորեն շաղկապվել են տնտեսական, կենցաղային, քաղաքական խնդիրների հետ: Քիչ դեր չեն կատարել ըստ երևույթին նաև տարբեր վայրերում կազմակերպվող նոր պետական միավորների շուրջ համախմբվող ցեղական խմբավորումները:

Հայաստանում նույնպես կատաղի հալածանքների են ենթարկվում առաջին հերթին ոչ այնքան արևորդիները, որքան քրիստոնեական աղանդները: Այդ աղանդները սկզբնական շրջանում ամբողջ Փոքր Ասիայում տարածված կրոնա-կոմունիստական աղանդների պատճեններն են եղել: Կոիվ մղելով եպիսկոպոսական իշխանության դեմ և քայքայելով ամբացող եկեղեցու կապը պետության հետ, նոր հոսանքները ուժեղանում են ամենից առաջ վաճառաչա՛հ քաղաքներում: Քայքայիչ հարվածներ հասցնելով եկեղեցական տրնտեսություններին, աղանդավորները միաժամանակ խանգարում էին նաև

⁹ Գիբբոնի անշարժ բովանդակալից մենագրության հատորներից մեկի մեջ բավական մանրամասն նկարագրվում են, ի միջի այլոց, պավլիկյան պատերազմները: Տարօրինակ կերպով հայ հերետիկոսական շարժումների մասին զորոջ բանասերները, անուշադրության են մատնել տաղանդավոր պատմաբանի զրբի այդ էջերը—այնինչ հատկապես Գիբբոնի դիտողությունները, իմ կարծիքով պիտի առանձին ուշադրություն մատնարկվեն: Պավլիկյանների դեմ ժամանակին կոիվ են մղել, ինչպես նշում է Գիբբոնը, ոչ միայն բյուզանդական զորամասերը, այլ նաև արաբները: Այլ խոսքով՝ բյուզանդական և արաբական դեսպոտների միասնական շարքերով են դիմազրգովել մեծ ժողովրդական շարժումներին: Միաժամանակ որոշ շրջանում և որոշ վայրերում միևնույն արաբները ջանացել են հենվել պավլիկյանների վրա բյուզանդական պետության դեմ մղված պատերազմի ժամանակ:

կուլտուրական շինարարությանը: Առաջին հերետիկոսների շարժումը չքավորների, թափառաշրջիկ տարրերի, լուսպեն-պրոլետարների շարժում էր: Զինված նախնական քրիստոնեության պատգամներով, կրոնա-կոմունիստական աղանդների հետևողները քարկոծում էին իշխող կարգերը, եպիսկոպոսներին, կալվածատերերին և վերջապես հեթանոսականացման ուղու վրա կանգնած եկեղեցու իղեղողներին: Իրականում դա պայքար էր նաև հելլենականացման ուղեգիծ պաշտպանող գիտուն եկեղեցականների դեմ:

Ահա ինչու այդ աղանդավորները դառնում են անհանդուրժելի՝ նոր պետության և նոր եկեղեցու համար: Անհանդուրժելի էին նոր կուլտուրայի դեմ ըմբոստացող հոսանքները, ոչ միայն եկեղեցական կալվածների և իշխանական տնտեսությունների ղեկավարների, այլ նույնիսկ քաղաքներում բարգավաճ առևտրական նոտարքների համար: Քաղաքային այդ ազդեցիկ տարրերի հետ հաշվի էին նստում եկեղեցու հայտնի տեսաբանները և աշխատում էին ավելի մեղմ տոնով քննադատել շրջակայքում, հաշտվել անգամ հեթանոս տաճարներում պաշտոնավարող քրիստոնյաների գործունեության հետ, նույնիսկ ներողամտաբար մոտենալ առևտրական-վաճախատական գործառնությունով տարված քրիստոնեական քաղաքացիներին:

Ժողովրդական աղանդների ջահակիրները մղեկներն խարազանում էին իշխող կարգերը, դատափետում էին նոր բարքերը, հրաժարվում էին հեթանոս կուլտուրայից: Այդ ուղեգիծը չէին կարող պաշտպանել ո՛չ Մեսրոպը և ո՛չ էլ հայ մշակույթի այլ ներկայացուցիչները: Նրանք կարող էին քննադատել տգեա հոգևորականներին և ամբարտավան իշխանավորներին, բայց ոչ մի պարադայում չէին ցանկանա իշխանությունը հանձնել պլեբեյներին: Մեսրոպը ծանոթ էր Մոպսուեստացու հետ, Եզնիկը ուսումնասիրում էր հեթանոս իմաստասերների գործերը: Խորենացին ակնհայտ ակնածանքով էր մոռենում գնոստիկ իմաստասեր Բարբեժանին, Անանիա Շիրակացին ավելի ուշ, VII դարում, ուղևորվում է հույն գիտնական Միսրիսի մոտ բնական գիտություններ ուսումնասիրելու համար: Ինչպես տեսնում ենք, մինչև VII դարը անտիկ աշխարհի հարուստ կուլտուրան ունենում է հետևողներ հայ գիտուն-քրիստոնյաների շրջանում: Զարմանալի չէ զրանից հետո, որ բոլոր այդ գիտունները բացասաբար պիտի վերաբերվեին անցյալի կուլտուրական ժառանգության դեմ ըմբոստացող պլեբեյական հորձանքին:

Երբ Բյուզանդիայի մայրաքաղաքից հայ գործիչներին առաջարկում են ուժեղացնել պայքարի կրակը արմատական-ժողովրդական աղանդների դեմ, այդ հրահանգը իսկույն ընդունվում է: Իշխող կարգերի դեմ ծառացող պլեբեյական շարժումը այս անգամ ուղղված էր ոչ միայն վանքերում, բերդերում, քաղաքներում խմբված օլիգարխիայի, այլ նաև նույն այդ օլիգարխիայի ջանքերով կառուցվող բարձր կուլտուրայի դեմ:

Մեզ դժբախտաբար հայտնի չեն որոշակի տվյալներ նախնական բոլոր աղանդների մասին: Հայտնի է միայն, որ դրանց թիվը նկատելի է եղել: Կան ցրիվ և անկատար ակնարկներ հայ դպիրների երկերի մեջ: Կասկածից դուրս է, աղանդների ծավալմանը նպաստել են բազմազան գործունեներ՝ պատճառազմները, տնտեսական ծանր պայմանները, սոցիալական ներհակությունները:

Հին հայկական աղանդների ժողովրդական բնույթի մասին ժամանակին շատ կտրուկ ակնարկ է նետել Ն. Մառը: Իր մի դասասխոսություն մեջ նա բնութագրում է նույնիսկ հայկական աղանդների գենեզիսը և պատմական զարգացման պրոցեսը:

«... Ժողովրդական անսպառ այբբույրը,— կարդում ենք Մառի այդ ուսումնասիրության մեջ,— Հայաստանում ազգային դավանություն ստեղծողը, երբ տիրապետող դարձած քրիստոնեություն հետ կորցրեց անմիջական շփումը, իր գործունեության համար լայն ասպարեզ գտավ ավելի համակիր ժողովրդական խավերում, ուր ստեղծեց մի շարք այսպես ասած աղանդներ և Հայաստանում ու Հայաստանի սահմաններից դուրս: Այս առատ աղանդավոր վարդապետություններից, որոնք թանձրախիտ բանում էին հայկական հողի վրա, ընդհանուր նշանակություն ունեցավ պավլիկյանությունը: Անցողակի հիշենք և այն, որ մանիքեյան ուսմունքի նախկին ձևը՝ արտոնատականը Հայաստանում է ծաղկել դեռ IV դարում, և մանիքեյան փոփոխության տարածումը Միջին Ասիայում ակնհերև ազդեցություն է ցույց տալիս հայվրացական եկեղեցական ասացվածների եզրերի հետ...»¹⁰:

10 Ն. Մառ, Հայկական մշակույթը, Փարիզ, 1925, էջ 14—15: Միթարթյան բանասերների ջանքերով կառուցված պատմական կանցեպցիան, ինչպես հայտնի է, շատ խոշոր ազդեցություն է թողել ժամանակին հին հայկական աղանդների մասին գրող հայ բանասերների վրա: Մծղնեական շարժումը այդ բանասերների ջանքերով լուսարանվել է միակողմանի կերպով որպես «պիղծ» մարդկանց վայրագ շարժում: Հակագիտական մեթոդով մոտենալով այդ շարժմանը, բանասերներից ոմանք բառացի կերպով կրկնում են մծղնեականների սխեմի մշնախնդրի յուրահատուկ «արգումենտները» և քաղկեդոնական ժողովի «իմաստասիրության» արտենայից առնված «քննական» ակնարկները: Այստեղ մենք չենք կարող ծանրանալ նշված «քննադատության» վրա: Կարող ենք միայն հիշեցնել, որ Մառը ժամանակին մերկացրել է հիշված բանասերների հակագիտական պրիմները: «Ձեզ հայտնի պիտի լինի,— ասում է Մառը,— թե ինչ հալածանքների են ենթարկվել ազգային եկեղեցու և ազգային տիրապետող դասակարգի կողմից՝ VIII դարից մինչև մետասաներորդը նույն ժողովրդական հինավուրց ուսման հետևիչները Հայաստանում: Բավական է Գրիգոր Մագիստրոսի արածները և ասածները նկատի ունենալ: Նրա և նրա զաղափարակիցների համար այս հալածվածները դատապարտելի աղանդավորներ էին. իսկ իրապես նորա հուշիչ և դրդիչներ, նոր ստեղծագործության կանչող հոգու տերեր էին, և նոցա նախաձեռնությունն երևում է և Հայաստանի սահմաններից դուրս երևան եկող կրոնական շարժումների մեջ քրիստոնեական նվրոպայում, ուր Բավկանյան թերակղզու

Փավստոսի պատմության մեջ ցրված ակնարկները ցույց են տալիս, որ մանիքեություն հայ հետևողները բավական ուժեղ ազդեցություն են թողել հայ ժողովրդի որոշ խավերի վրա: Այդ շրջանում են հյուսվում եպիսկոպոսների և քահանաների քննադատությանը նվիրված ժողովրդական գրույցները: Թափառաշրջիկների և գործազուրկ մարդկանց համար ներսեսը ուրկանոցներ է կազմակերպում, որոնք ըստ էության հաճախ, ինչպես ցույց են տալիս եկեղեցական կանոնները, կատարում էին նաև ուրույն պատժարանների դեր: Պապ թագավորը IV դարում, հետևելով իր տաղանդավոր հոր ուղեգծին, ձեռնարկում է մի շարք խոշոր սոցիալական-քաղաքական ռեֆորմներ, և ընդհարվում է ոչ միայն նախարարների որոշ խմբակների, այլ նաև կաթողիկոսի հետ: Նրա ջանքերով սկսված ուրույն սեկուլյարիզացիան, ըստ երևույթի, կողմնակիցներ է ունենում անդամ նախարարների որոշ շրջանում: Փավստոսի մոտ կան որոշ տեղեկություններ նաև Աշտիշատի եկեղեցական ժողովի որոշումների մասին: Այդ ժողովը, ինչպես ենթադրում են հայ բանասերներից ոմանք, գումարվել է 365 թվականին: Ժողովի որոշումների մեջ դատափետվում են հեթանոսական սովորությունները: Միաժամանակ ժողովը առաջարկում է իշխաններին գույթով վերաբերվել «ծառաներին» և «կրտսերներին»: Միևնույն կանոնի մեջ կա ակնարկ անհնազանդ «ծառաների» մասին: «Սոչնպես,— հաղորդում է Փավստոսը,— և ծառայից պատուիրեր տալ յարգարն հնազանդութեան իվրեանց տերանց...»: Գրիգորին վերագրվող կանոնների մեջ խոսվում էր ի միջի այլոց հարբեցող քահանաների, սարկավագների, դպիրների մասին և միաժամանակ դատափետվում են կաշառակեր քահանաները: Այդպիսով հնագույն կանոնների մեջ ցրված ակնարկներն էլ որոշակի կերպով հաստատում են, որ եկեղեցու ներկայացուցիչների դեմ սկսված շարժումը բավական մեծ է եղել:

Հետագա շրջանում բռնկված շարժումների մասին որոշ տեղեկություններ հաղորդում են Կորյունը և Խորենացին:

Ահա ինչ է ասում Կորյունը Մեսրոպի գործունեության օրերին սկսված կրոնական-ժողովրդական աղանդների մասին. «...Այն ժամանակ բերվեցին, երևացին Հայաստան աշխարհում Թեոդորոս անունով մի հոռոմ մարդու սուտապատում գրքերը, դատարկաբան ավանդությունները: Սուրբ եկեղեցու սինհոդոսական հայրապետներն այդ մասին գրելով, իմաց տվին ճշմարտահավատ փառաբանիչներ Սահակին և Մաշտոցին: Եվ նրանք ճշմարտասեր ջանքով մեջտեղից վերացրին այն, աշխարհից հալածելով իրենց սահման-

վրա այս աղանդավորների ահադին բանակ էր գաղթեցրած, և իսլամի բաժին դարձած Փոքր Ասիայում դերվիշիզմի զարգացման մեջ: Թեոդորական ժողովրդական շարժումները, ինչպես հայտնի է, լիովին հաստատում են ականավոր արևելագետի այս լուսարանության ճշտությունը:

ներից դուրս վանեցին, որպեսզի ոչ մի սատանայական ծուխ չխառնվի լուսավոր ուսմանը...»¹¹: Այդտեղ խոսվում է Թեոդորոս Մոպսուեստացու (կամ Մամեստացու) մասին, որ ալանավոր եպիսկոպոս էր և հայտնի էր իր գրվածքներով: Բյուզանդական եկեղեցու ղեկավարները դրան համարում էին վտանգավոր ախոյան և ըստ երևույթին պահանջում էին ուժեղացնել պայքարը հենց դրա դեմ: Թե՛ Մոպսուեստացին, և թե՛ նրա աշակերտ հայտնի նեստորը բազմաթիվ հետևողներ են ունեցել Հայաստանում: Միայն այդ հանգամանքը կարող էր թելադրել բյուզանդական եկեղեցականներին դիմել առանձին պաշտոնական գրություն մեր հայ գործիչներին: Ինչպես երևում է, Մոպսուեստացու դեմ մղվել է սոսկ պաղատարական պայքար: Համենայն դեպս, միևնույն Կորյունը հաղորդում է, որ իր դիտական ճանապարհորդության ժամանակ Մաշտոցը ժամանակին եղել է աշակերտների հետ միասին ասորական քաղաքներում, ուր Մոպսուեստացին մեծագույն համարում է ունեցել «...Աշակերտասեր ուսուցիչը,— դրում է Կորյունը,— իր հետ տարածներին երկու [խմբի] բաժանելով՝ ոմանց ասորական դպրության կարգաց [Եդեսիա քաղաքում] և ոմանց հունական դպրության [կարգելով]՝ ալանադից ուղարկեց Սամուսատական քաղաքը...»¹²: Հայ բանասերներից մեկը գտնում է, որ Մեսրոպը իր շրջագայության ժամանակ որոշ հարաբերություններ է պահպանել գնոստիկ իմաստասերների հետ:

Միանգամայն այլ ոճ է բանեցնում միևնույն Կորյունը, երբ պատմում է արմատական ժողովրդական ազանդների մասին: Կանգ առնելով հատկապես բարբարիանոսների՝ «ժանտագործ մարդկանց» ազանդի վրա, նա իր գրքի մեջ հետևյալ խոսքերով է նկարագրում բարբարիանոսների շարժման ճնշումը. «...Ապա դրանից հետո,— ասում է Կորյունը,— ձեռնարկեց նա անպատշաճ ու ծուռ բարբարիանոս ազանդը քննել: Եվ երբ ոչ մի հնար չգտավ ուղղության բերելու, սկսեց թշվառացնող դավազանը գործադրել, խիստ ծանր պատուհասներով-բանտերով, տանջանքներով, ղեկարաններով: Իսկ երբ դրանով էլ փրկությունից զուրկ մնացին [այն ժամանակ] շարդ տվին ապա խանձեցին-մրեցին ու պես-պես ձևերով խայտառակեցին և աշխարհից դուրս քշեցին...»¹³:

Ինչպես տեսնում ենք, այդ անգամ գործադրվում են ավելի կտրուկ, ունիվերսալ միջոցներ: Անկարկվում է կանոնավոր կրոնական պատերազմի մասին: Խոսվում է սոցիալական ըմբոստացումների մասին և Կորյունի ոճն էլ զանոն է դաժան: Շատ ավելի մեղմ տոնով է պատմում միևնույն բար-

բարիանոսների շարժման մասին Խորենացին, թեև նա էլ չի ծածկում իր ցասումը: Խորենացին խոսում է «Բորբորիտոն» ազանդի մասին և խոսք չի ասում գանակոծության կամ շարդի առթիվ: Մեսրոպը, ըստ Խորենացու, ուղևորվում է դեպի վարակված վայրերը և՛ քննության համար, և՛ հաջողությունների կատարում է իր միսիան («քննել ժանգագործ բորբորիտոնսն»): Հայ եկեղեցու պատմաբաններից մեկը՝ Կարապետ Մկրտչյանը, շեշտելով, որ այդ ազանդի «ծագումն և բնավորությունը մութ են», գտնում է, որ բորբորիտոնները ըստ երևույթին սերտ առնչություն պիտի ունենային «մծղնեություն» հետ: Արեղյանը, սակայն, իր աշխատությանը կցված ծանոթագրությունների մեջ ցիտում է հայ բանասեր Գ. Ֆնտրդյանի ավելի որոշ խոսքերը՝ «...Գոկտոր Մինգանա՝ հայտնի ասորագետը կկարծե, թե burburiani ժանոթ ազանդն է ատ, որ վերին Միջագետք և անկե Հայաստան տարածված էր, և որուն դեմ քանի մը տեղեր դրած է ս. Եփրեմ»¹⁴: Այսպիսով դուրս է գալիս, որ այդ ազանդը եղել է միանգամայն ուրույն հոսանք և կապ չի ունեցել մծղնեից շարժման հետ, ինքը՝ Կարապետ Մկրտչյանը իր գրքի մեջ, ինչպես կտեսնենք, հայ մծղնեականներին համեմատում է մեսալյանների հետ¹⁵: Վերջապես, հայտնի է, որ Եզնիկը և Փարպեցին խոսք շատելով հատկապես բորբորիտոնների մասին՝ քննադատում են. «հայ աշխարհի ազանդը»՝ մծղնեական հոսանքը: Թե ինչու մեսալյանները պիտի դառնային մծղնեականներ, այդ էլ անհասկանալի է մնում: Եզնիկը և Փարպեցին մեծագույն ուշադրությամբ էին հետևում տարբեր ազանդների դավանանքներին և չէին կարող այդքան աղճատել Փոքր Ասիայում հայտնի ազանդի իսկական անունը: Հետևաբար մնում է անել միայն մի ենթադրություն: Մեսալյանները գուցե և կապ են ունեցել բորբորիտոնների հետ, բայց եղել են առանձին ազանդի հետևողներ: Մծղնեականներն, իրենց հերթին, հանգես են եկել բորբորիտոնների ջախջախումից հետո, որպես ինքնուրույն տեղական ազանդի հետևողներ:

Մեսալյանների շարժումը բավական մանրամասն նկարագրել է իր երկհատոր սովոր մենագրության մեջ Դյուլենը, որ համարվում է հին եկեղեցու հմուտ պատմաբան: Դյուլենի խոսքերի համաձայն, մեսալյանները գտնում էին, որ յուրաքանչյուր անձնավորության հոգու մեջ մշտական պայքար են մղում բարի և չար տենդենցները: Մշտական կռիվը սատանայի դեմ էլ պիտի դառնա ամենագոր պատվիրան ամեն մի հավատացյալի համար: Մեսալյանները ունեին ուրույն համայնքներ: Փոքր Ասիայի տարբեր վայրերում մե-

¹¹ Կորյուն, Վարք Մաշտոցի, թարգմ. Արեղյանի, Երևան, 1941, էջ 87:

¹² Անդ, 47:

¹³ Անդ, 69:

¹⁴ Կորյուն, Վարք Մաշտոցի, Արեղյանի կոմենտարները, էջ 116:

¹⁵ Կարապետ վ. Մկրտչյան, Հայ եկեղեցու պատմություն, հատոր Ա: Հմմտ. Մուրադյանց, «Պատմություն Հայաստանի Առաքել. Ս. եկեղեցվո», Երուսաղեմ, 1872:

սալյանները թափառում էին, նիզակներ նետելով պարում էին կամ էլ ցատկոտում դերվիշ-պարողների նման: Երբ շարժումը շարժանց ուժեղանում է հատկապես Պամփյուլիայում, եկեղեցու տիրակալները ձեռնարկում են մի շարք միջոցներ: Իկոնիայի միտրոպոլիտ Ամփիլոխի նախագահությանը դուրսարվում է հատուկ եկեղեցական ժողով: Այդտեղ եպիսկոպոսները որոշում են ընդունում մեսալյանների դատապարտության մասին: Այդ որոշումը հայտնում են Անտիոքի եպիսկոպոս Փլավիանին, որը հատուկ դատաստան է կազմակերպում: Անտիոքում նորից մի քանի եպիսկոպոսների ներկայությամբ դատապարտում են մեսալյաններին և, ինչպես նշում է Դյուշենը, ամենից առաջ մեսալյանների ղեկավարներից մեկին՝ ծեր Ադեմֆիին: Փլավիանը նոր որոշումների մասին հաղորդում է Միջագետքի և Փոքր Հայքի բոլոր եպիսկոպոսներին: Ծարժումը, սակայն, չի անհետանում: Հայաստանում, հատկապես, Դյուշենի կարծիքով բավական երկար ժամանակ մեսալյանների շարժումը շարունակում է իր գոյությունը:

3

Մեսալյանները դատապարտվում են IV դարում: Հետևաբար—բացի բորբորիտոններից Հայաստանում հատկապես IV դարում ակտիվ դեր են կատարել նաև մեսալյանները: Անցնում է հարյուր տարի և մենք տեսնում ենք միևնույն Հայաստանում նորից մեծածավալ շարժում, որի մասին գրում են թե՛ Եգիպտոսի և Փարսիցի, և թե՛ եկեղեցական ժողովները: Դա արդեն մծղնեականների մեծ սոցիալական շարժումն է, որ կառուցվելով մանիքեական ուսմունքի ազդեցության ներքո և կովի ելնելով եպիսկոպոսական իշխանության դեմ, մեծագույն իրարանցում է մտցնում հասարակական մթնոլորտի մեջ:

Մծղնեական շարժումը գրավում է եկեղեցու ղեկավարների առանձնահատուկ ուշադրությունը: Բոլոր փաստերը ցույց են տալիս, որ սոցիալական նոր շարժումը ժամանակին ցնցող տպավորություն է թողել հոգևորականության վրա: Երբ հետագա շրջանում հանդես են գալիս պավլիկյան և թոնդրակյան աղանդավորները, միևնույն եկեղեցու նոր տիրակալները ըմբոստ հերետիկոսներին սաստելու նպատակով գործադրում են մծղնեականների դեմ գործադրված, կիրառված ռեպրեսիվ միջոցներ: Դա չի նշանակում, իհարկե, թե տարբեր էպոխաներում բռնկված աղանդները միատեսակ են եղել կամ միանման սոցիալական բազայի վրա են հենվել: Սակայն ակներև է այն, որ ռեպրեսիաների միանման բնույթը ակնարկում է որոշակի կերպով սոցիալական շարժումների մեծագույն թափի մասին: Իմ կարծիքով, հայ հերետիկոսական շարժումների յուրահատուկ պատմական էվոլյուցիայի հզոր բնութագրման համար անհրաժեշտ է ամենից առաջ ուսումնասիրել հայ եկե-

ղեցական ժողովների կանոնները: Էպիգրաֆիական վավերագրերը կարող են դառնալ օժանդակ աղբյուրներ, բայց այդօրինակ աղբյուրները նկարագրում են գլխավորապես ժողովրդական դանգվածների սոցիալ-տնտեսական կացությունը: Կարևոր նյութեր են՝ հայտնի և անհայտ հին գործիչների երկերի մեջ ցրված ակնարկները կամ տարբեր հոգևորական «պուբլիցիստների» տրադիցիոն «նշումները»:

Եկեղեցական կանոնները նույնպես միակողմանի և տենդենցիոզ աղբյուրներ են: Սակայն այդ կանոնները խտացած նորմեր են, իրականում քարե հուշարձանների նման ղոկումենտներ: Հայտնի է, որ այդ կանոնները սովորաբար ընդունվում էին բազմամարդ ժողովներում: Մասնակցում էին ժողովներին ոչ միայն ականավոր եկեղեցականները, այլ նաև աշխարհականները՝ նախարարներն ու իշխանները, սեպուհները, զուցե հայ քաղաքների «ավագներն» և հարուստ նոտարները: Անի քաղաքի մի ժողովին մասնակցում են շորս քաղաքների պատգամավորներ: Թոնդրակյան աղանդի քննության ժամանակ հավաքվում են մոտավորապես հազարի շափ մարդիկ: Յուրահատուկ համագումարներ էին այդ ժողովները, ուր քննության էին դրվում բազմաթիվ հրատապ խնդիրներ և որոշումներն էլ դառնում էին համապետական նշանակություն ունեցող իրավական նորմեր: Քննարկվում էին հաճախ դավանաբանական, կենցաղային, նույնիսկ զրափական խնդիրներ: Թոնդրակյան շարժումները ուսումնասիրող բանասերները մեծագույն ուշադրությամբ պիտի մոտենան հատկապես այդ որոշումների հետազոտությանը: Այստեղ ես կանգ կառնեմ միայն այն կանոնների վրա, որոնք շատ ավելի որոշակի կերպով են պարզում հերետիկոսական շարժումների իսկական պատկերը, քան մեր պատմիչների երկերի մեջ ցրված թեթև ակնարկները:

Առաջին եկեղեցական ժողովներից մեկը, ինչպես հայտնի է, Աշտիշատի ժողովն էր: Երկրորդ մեծ ժողովը Շահապիվանում գումարված մեծ հավաքույթն է: Այդ ժողովին մասնակցում էին V դարի (447 թ.) ականավոր հոգևորականները, հայտնի նախարարներն ու իշխանները, ազատները, զավավորականները, հայտնի նախարարներն ու իշխանները, վարդան Մամիկոնյանը և ապա Վասակ Մարզպանը նույնպես ներկա էին: Ժամանակը եռում էր և ժողովը ձգտում էր համախմբել երկրի կենտրոնախույս տարրերը: Վարդանանց պատերազմի օրերն էին և հրատապ նոր առօրյայի հիմնական մոտիվների ձայնն է լսվում ժողովի որոշումներին կցված վերամբարձ ներածության կուսխոսքերի մեջ:

«... Պարտ և պատշաճ է նաւավարին,— կարդում ենք հրաշունչ ներածության մեջ,— հոգալ արուեստագործութիւն նաւին և զշաւիղս ծովուն նկատել և ըստ հողմոյն աշողութիւն գնալ ի վերայ մկանաց ծովուն: Նոյնպէս և զօրավարին յամենայն ժամ զզօրսն ի հանդիսի անցուցանել, զայր ընտիր և զծի

ընտիր, զէն զարամբ սպառազէն զերիվարաւ և ակն ունելի ճակատուն, յաղթող գտանել և առնուլ զպսակ և զպատիւ ի թագաւորէն...»¹⁶:

Անհրաժեշտ է դատուում այդ օրերին կոփել հայրենասիրական շարքերը, և ժողովի բոլոր պատգամավորները աշխատում են վճռական միջոցներ մշակել ամենից առաջ իշխող կարգերից անբավական և բմբոստացող տարրերի դեմ: Բավական հետաքրքրական են Շահապիվանի կանոնների թե՛ խմբագրութունը և թե՛ ընդհանուր հյուսվածքը: Առաջին կանոնների (որոնք մեծ տեղ են զբաղում) մեջ խոսվում է հասարակական շարիքների, եկեղեցու անարխիայի, երկրում իշխող հեթանոսական սովորութիւնների, վաշխառու քահանաների և եպիսկոպոսների մասին: Վճռական տոնով խարազանվում են հոգևորականները և քաղաքացիները: Հոգևորականները դատապարտվում են որպես բրիստոնեոթյան նվիրական պատվիրանները խախտողներ, իսկ քաղաքացիները համարվում են «տրտնշացող» կամ «ամբարտաւան» և «շատախոս» կամ «ծաղրաբանող» մարդիկ: Վերջինների հասցեին ուղղված խրատների իմաստը պարզ էր: Խոսքն, ըստ երևույթին, իշխող կարգերը քննադատող խավերի մասին էր:

Ավելի քան ակնորոշ է, որ առաջին կանոնների այդ խումբը յուրահատուկ «պատմական մոտիվացիայի» նման մի հիմնավորում է: Կրկնելով գրեթե բառացի կերպով այն ամենը, ինչ որ ասում էին մծղնեականները և հաշվի առնելով դրանց փաստարկումները, ժողովը մշակում է բուժիչ ղեղատուներ թե՛ հոգևորականության ախտերի և թե՛ հասարակական բարքերի բարեկարգման համար: Որոշումների երկրորդ մասը կազմում են բացառապես մծղնեականների շարժման կտրուկ հաղթահարման համար մշակված կանոնները: Բավական ընդարձակ են այդ կանոնները: Այդտեղ քրեական սանկցիաները շատ ավելի դաժան են և ոճն էլ անհամեմատ ավելի անողոր և կտրուկ է: Խոսվում է այլևս ոչ թե վերացական կերպով ընդհանուր խոցերի, այլ մի որոշ հասարակական հոսանքին հարող մարդկանց անհանդուրժելի «մեղքերի» մասին: Խստիվ դատափետվում են թե՛ մծղնեականները և թե՛ դրանց հետ որևէ հաղորդակցութուն պահպանող մարդիկ:

Ընթերցողը ստանում է այնպիսի տպավորություն, կարծես ամբողջ ժողովն էլ նպատակ է ունեցել առաջին հերթին մշակել վճռական միջոցներ մծղնեականների դեմ: Դուրս է գալիս, հետևաբար, որ Շահապիվանի ժողովը ըստ էության սոցիալական շարժման առաջն առնելու նպատակով կազմակերպված մի ժողով է: Նախաբանի խոսքերը գոնև այդ մասին են ակնարկում: «...Բազմանային որք հաճախեին ի գործն պղծութեան և ընդդեմ գնացից, ի ցամաքել սիրոյն բազմանայր անօրէնութիւն, և ոչ որ էր որ քաղէր

դորոմն և սրբեր զգաղձն վնասակար, քանզի արմատացեալ էր սէզն և տարածէր օր ըստ օրէ, և լինէր յաճախումն մծղնէից և այլոց շարէաց, կնահայէից, պոռնկաց, գողաց, անձնակամաց յամենայն խոտորնակ շարագործած յաշխարհիս Հայոց ի մեջ տանս Թորգոմայ»¹⁷:

Կա նաև ակնարկ, որ եկեղեցին կորցրել է իր ազդեցութիւնը, իսկ առաջին կանոնի մեջ դատափետվում են «վատթար» գործ ձեռնարկող երիտասարդները: Հոգևորականների դատափետմանը նվիրված երկարատև տողերը ցույց են տալիս, որ պատգամավորների անմիջական թելադրանքով հենց հլրետիկոսների շարժումը խափանելու նպատակով, ժողովը միջոցներ է մշակում եկեղեցու վատթար ներկայացուցիչների դեմ: Խստիվ խարազանվում են նաև «կախարհներին» և «հարցուկներին» դիմող հավատացյալները, որոնց մեջ եղել են ըստ երևույթին քահանաներ և եպիսկոպոսներ: Ժողովը առաջարկում է դրանց քարկոծել: Խոսվում է այսպէս հեթանոսական սովորութիւններին հավատարիմ բրիստոնեոթյան մասին: Նշանակալից պիտի համարվեն հատկապես վաշխառուների դատափետմանը նվիրված սենտենցները: «... Զարծաթ ի վարձու ոչ տալ և տոկոսեօք ոչ պահանջել, զգրավ պարտապանին վաղվազակի դարձուցանել, որդիք մարդկան մինչև յն՞րք էք խոստասիրտք, որ մրկեալ նեղասրտեալ, առ նեղել սրտով ունիցի յոյժ յարեմէ ի հեղձուցելոյ, ի շնութենէ...»¹⁸:

Այդպես մի առ մի թվարկվում են բոլոր «մեղքերը»: Հիշատակվում են մի կանոնի մեջ ի միջի այլոց խաղ և երգ սիրողները, լկտի երգերի երկրպագուները, վալրապար ծաղրողները, ատեցողները, վերջապես «հանդուգն» և այլ մարդիկ, որոնք զգալի հարված էին հասցնում բարձրաստիճան մարդկանց հեղինակութիւնը: Եթե մենք ոչ մի վավերագիր չունենայինք V դ. հայ քաղաքացիների բարքերի և տրամադրութիւնների մասին, կարող էինք հենվել հիշված սենտենցների վրա: Այդ կանոնները այնքան հստակ և պարզորոշ կերպով են բնորոշում հասարակական տրամադրութիւնները, որ կարող են դառնալ անառարկելի վավերագրեր: Մի ընդարձակ կանոնի մեջ (կանոն ԺԶ) մենք տեսնում ենք հատկապես կաշառակեր և վաշխառու հոգևորականների, նույնիսկ եպիսկոպոսների մասին որոշակի ակնարկներ: Տգետ, անբարոյական, ազահ քահանաները անդադար նշվում են կանոնների մեջ: Զինվորական զգեստները դրանք հաճախ չեն հանում եկեղեցու բնմը ելնելիս: Գիշատիչ գայլերի նման թախանում են ամեն ինչ: Տուն են տանում և սեփականացնում եկեղեցուն հանձնված նվերները և հավատացյալներին հատկացված «արջառները»: Երբ այդ արջառները պարարտ չեն լինում, իրենք են ընտրում,

17 Անդ, էջ 57—58:

18 Անդ, էջ 74:

16 «Կանոնագիրք հայոց», Թիֆլիս, 1913, էջ 56—57:

հանդիսավոր կերպով օրհնում էին «արջառին» և ապա զավթում (կանոն 2, 3 և այլն): Շատ մեծ տեղ են զբաղում Դվինի որոշումների մեջ այդօրինակ կանոնները: Վաշխատու քահանաների մասին կան ակնարկներ երեք առանձին կանոնների մեջ: Ըստ երևույթին յուրաքանչյուր կանոն ցնցող ղեպքերի անմիջական տպավորության ներքո կազմված բանաձև է եղել:

Կան եկեղեցու պաշտոնյաներ, որոնք ամենևին չեն տարբերվում հարուստ Դվինի ունեոր վաճառականներից: Դրանք դառնում են առօրյա գեմքեր մարզպանական Հայաստանի բոլոր խոշոր առևտրական քաղաքներում և այնքան աչքի են ընկնում, որ զբաղում են ժողովի առանձին ուշադրությունը:

Ժողովի գրեթե բոլոր որոշումներն էլ պատում են մի հիմնական առանցքի շուրջ: Այդ առանցքը հայ հոգևորականության կատարյալ բարոյալքման և անկման ակնբեր փաստն է: Եվ երբ կանոնները նշում են, որ ժողովուրդը չի սիրում քահանաներին, կրոնական զգացումներ չի ցուցադրում, հրաժարվում է տուն թողնել քահանաներին, միշտ անհրապույր ղեպքերի մասին ակնարկող սեղմ տողերի մեջ մենք տեսնում ենք իրական ղեպքերի խիտ կոնտուրները: Որոշակի կերպով այդ տողերի մեջ նշմարվում է մեծ քաղաքի փողոցներում կամ եկեղեցիների մոտ խոնաված աղմկող-բողբոջ ամբոխի ղեմքը ու լսվում սոցիալական շարժումների խուլ արձագանքը: Այդ հույսեղ ֆոնի վրա՝ միայն մի համառոտ կանոնի մեջ հիշատակված ակնարկը աղանդավորների օթևան տվող քրիստոնյաների մասին, դառնում է չափազանց սիմպտոմատիկ վավերագիր:

4

Անցնում է հարյուր տարի—մի ամբողջ դար: Իհարկե շատ բան է փոխվում Հայաստանում: Հարևան մեծ ուժերի սիստեմատիկ ընդհարումները, արաբական արշավանքները, զանազանազույն տիրակալների քաղաքականությունը ստեղծում են հարափոփոխ և անկայուն վիճակ ժողովրդական զանգվածների համար: Լինում է մի որոշ էտապ, երբ արաբները հովանավորում են հայ ֆեոդալներին, ձգտում են հենարան գտնել քաղաքներում, մշակում են երկրի զարգացման օժանդակող միջոցառումներ: Սակայն այդ տարիներին էլ ժողովրդի իրական կացությունը մնում է ծանր՝ շնորհիվ տարբեր քաղաքական օրինակների պաշտպանող հայ ֆեոդալների մշտական հակամարտության և մրցակցության: Պատերազմների և զորամասերի արշավների ժամանակ տրորվում են արգավանդ դաշտերը և կոտորածի են մատնվում աշխատավոր խավերը: Լինում են և սոսկալի արհավիրքի տարիներ, երբ օտարերկրյա բռնակալները կոտորածի են մատնում նախարարներին արևելյան վայրագ բռնապետներին հատուկ մեթոդներով: Քանզում են շեն վայրերը և քաղաքները: Ավերից հետո, սակայն, նորից ոտքի է ելնում հայ

ժողովուրդը և նորից վերաշինում է հայրենիքը: Սկսվում է, նորից և նորից, սոցիալական ուժերի վերադասավորման նոր էտապ, հայրենասիրական շարժումների, հասարակական զաղափարախոսական բախումների, սոցիալական ըմբոստացումների նոր շրջան:

Դվինը նույնպես մի քանի անգամ ենթարկվում է ավերի: Արաբները հատկապես VII դարում (40-ական կամ 50-ական թվականներին) մեծագույն հարված են հասցնում քաղաքի բնակչությանը: Կոտորածի են մատնվում մի քանի տասնյակ հազար մարդիկ: Քաղաքը, սակայն, չի կորցնում իր նշանակությունը սոսկալի կոտորածից հետո: Երբ հունական զորամասերը արաբներից հետո մտնում են Դվին, քան հազարի չափ զինվորներն էլ գտնում են բավական հարուստ ավար և նորից թալանում են քաղաքացիներին: Այդքան հարուստ էր Դվինը: Վերակենդանանում է նա զարմանալի արագընթաց թափով:

Նոր վերելքին նպաստում էր, իհարկե, Դվինի աշխարհագրական դիրքը, մշտական կապը առևտրական մեծ մագիստրալի հետ, հաղորդակցությունը արևելյան կարևոր տնտեսական շուկաների հետ:

Այդպիսի կենտրոնում սոցիալական հարաբերությունները պիտի լինեին բավական բարդ: Արհեստավորներն, ըստ երևույթին, ունեին արհեստակցական միություններ, համբարություններ: Վաճառականները նույնպես կազմակերպված էին: Դրանք էին ընտրում տնտեսական գործերի ղեկավարության համար քաղաքի «ավագներին», որոնք քաղաքի նոտաբլներ էին և խոշոր ղեր էին կատարում դիվանագիտական բանակցությունների ժամանակ: Բազմազգ քաղաքի մեջ բազմաթիվ քրիստոնեական տաճարներ, մզկիթներ (իսլամ կրոնի հետևողների համար), նույնիսկ մեհյաններ (կրակապաշտներ) կային: Եղել են արևելյան աղանդավորներ, որոնց առանձին դպրոցի մասին ակնարկում են արաբական պատմիչները: Չքավոր սուֆիների ինքնահատուկ շարժումը ուղղված լինելով ունևորների դեմ, չէր կարող կապ չունենալ հայ աղանդավորների հոսանքների հետ: Մյուսների «Իսլամի պատմության» մեջ կա ակնարկ սուլտամբ խմբակների հայ ղեկավարներից մեկի մասին: Եթե տիրապետող դավանանքների հայ ազգային լուսավորչականություն, քաղկեդոնականություն, իսլամ կրոնի շուրջ խմբվում էին առաջին հերթին տիրող հասարակական խավերը, ապա սոցիալական սուր բախումների օրերին աշխատավոր զանգվածներն էլ պիտի ստեղծեին իրենց կրոնական աղանդները և հումանիստական հոսանքները: Դա այնհրաժեշտ երևույթ էր:

Երբ 648-ին Դվինում, հատկապես քրիստոնեական իշխող դավանանքների հետևողների փոխհարաբերությունները կարգավորելու նպատակով, կազմակերպվում է նոր եկեղեցական ժողով, այդտեղ քննության է դրվում նորից մի հիմնական պրոբլեմ՝ եկեղեցու բարեկարգման և ամրացման խնդիրը:

ժողովին նախագահում է ներսես կաթողիկոսը, իսկ որոշումները ստորագրողների մեջ տեսնում ենք բացառապես եպիսկոպոսներ: Ժողովին չէին մասնակցում անգամ աշխարհական իշխանները: Չնայած այդ հանգամանքին, ժողովը չի սահմանափակվում դավանաբանական խնդիրների քննությունում: Ավելին: Ջանալով ավելի հաշտարար կերպով մոտենալ հատկապես բաղկեղոնականներին, պատգամավորները, անշուշտ հաշվի առնելով ուժեղացող ժողովրդական անբավականության և սոցիալական շարժումների նշանակությունը, մշակում են մի շարք միջոցներ հատկապես եկեղեցին աշխարհականների քննադատությունից ապահովելու համար: Քրիստոնեական եկեղեցին քննարկվում է որպես միասնական մարմին և ժողովրդի հոգևոր ղեկավար: Խստիվ խարաղանվում են եկեղեցու իրավասությունը և հոգևոր ղեկավարների իրավունքները խախտող աշխարհականները:

Առաջին կանոնների մեջ իրականում կրկնվում են, որքան էլ այդ տարրինակ չէ, միևնույն այդ քննադատների դիտողությունները: Այդ կանոնների մեջ խոսվում է անպարտաճանաչ առաջնորդների մասին: Դատափետվում են եպիսկոպոսները: Առաջնորդներին ժողովն առաջարկում է «արագություն» կատարել իրենց պարտականությունները, իսկ եպիսկոպոսներին էլ հրահանգվում է վերջ տալ շարաշահություններին, վիճակները չխլել միմյանցից, բռնություններ կամ «հափշտակություններ» չտարվել հարուստ վիճակների բռնագրավման համար¹⁹:

Առաջնորդների հսկողության ներքո էին գտնվում ոչ միայն վանքերն ու անապատները, այլ նաև դպրոցներն ու հիվանդանոցները: Կրոնական հիմնարկությունների հասույթները բավական մեծ պիտի լինեին: Վանքերն ունեին հսկայական կալվածներ, բայց այդ կալվածներից ստացված հարբսությունը զավթում էին եպիսկոպոսները: Բյուզեն մեծ էր: Եկեղեցիները ստանում էին հավատացյալներից բազմազան տուրքեր և այդ տուրքերի մեջ քիչ տեղ չէին բռնում «կամավոր տուրքերը»: Բնական է միանգամայն, որ եպիսկոպոսների գիշատիչ «հափշտակության» դեմ հասարակական զայրույթը մեծ է լինում: Ըստ երևույթին այդօրինակ քննադատության առաջն առնելու նպատակով ժողովը դատափետում է անպարտաճանաչ եպիսկոպոսներին և ապա առաջարկում է հավատացյալներին մտածել նյութական միջոցների հայթայթման մասին: Այլ կերպ մոտենալ խնդրին եպիսկոպոսների ժողովը չէր կարող: Դրանով էլ բացատրվում է Դվինի ժողովի կանոնների յուրահատուկ բնույթը: Դատափետելով «բռնություններ» վիճակներ զավթող եպիսկոպոսներին և ապա «անհնազանդ» քահանաներին ու երեցներին, ժողովն ինքն արդեն ակնարկում է եպիսկոպոսների դեմ ըմբոստացող քահա-

նաների մասին: Առաջարկելով «բռնություններ» չծանրացնել ժողովրդի վիճակը, ժողովը այնուամենայնիվ գտնում է, որ հանցավորներից և նույնիսկ պոռնիկներից պիտի առնվեն տուգանքներ, որոնք նույնպես պիտի հանձնվեն եկեղեցու պաշտոնյաներին: Ըստ երևույթին, հանցավորներից և պոռնիկներից ստացված այդ տուգանքներն էլ նշանավոր տեղ են դրավել վանական տնտեսությունների հարուստ բյուջեի մեջ: Ոչ մի որոշում չէր կարող այնքան լրիվ կերպով բնորոշել եկեղեցու անկման փաստը, ինչպես մեծամեծ և անվանի եպիսկոպոսների այդքան յուրահատուկ դիրքը պոռնիկներից առնվող տուգանքների մասին:

Դվինի ժողովը դատափետում է նաև «չար ճանապարհով» ընթացող եկեղեցականներին, որոնց մեջ աչքի են ընկնում «հեծելություններ» պարապող եպիսկոպոսները: Այդ կանոնը մեկնաբանող մի պատմաբանի կարծիքով խոսքը հատկապես որսորդությունները զբաղվողների մասին էր: Թե որքան շարիք էին հասցնում ավատական որսորդ իշխանները գյուղացիությանը, այդ մասին քիչ չի գրվել գյուղացիական շարժումների պատմությանը նվիրված հետազոտությունների մեջ: Հողագործ շինականների համար մորեխի նման պատահաններ էին իրենց դաշտերը տիրող իշխանների որսորդական արշավախմբերը: Զարմանալի չէ դրանից հետո, որ ջանալով բարձրացնել եպիսկոպոսների հեղինակությունը՝ Դվինի ժողովը հրահանգում է հոգևորական իշխաններին վերջ տալ «հեծելությանը»:

Դվինի ժողովի որոշումների մեջ առանձին տեղ են գրավում 9-րդ և 10-րդ կանոնները: Այդ կանոնները ցույց են տալիս, որ հատկապես VII դարում եղել է որոշ անտազոնիզմ, հոգևորականության և ավատական կալվածատերերի միջև: Առաջին կանոնի մեջ նշվում է, որ ազատները հաճախ աշխատում են եկեղեցականներին էլ դարձնել «ստրուկներ»: «Յորժամ ազատք զիրենանց զերդ և զմարդ բաժանեն՝ յոլովք շարակնութեան, առնեն, զժառանգաւորս եկեղեցւոյ ջանան ի ծառայութիւն և ի ստրկութիւն արկանել, մոլեւալք և մոլորեալք ի քրիստոնէական հավատոյս»²⁰: 10-րդ կանոնի մեջ արդեն որոշակի կերպով ակնարկվում է եկեղեցական կալվածները պարզապես զավթող ազնվականների մասին, թեև պատգամավորները ձգտում են դիվանագիտական ոճով խմբագրել իշխանների դեմ ուղղված իրենց բանաձևը: «Ոմանք յազատաց ի վերայ վանաց իշխանութիւնս առնեն և զվանականս զորս կամին հանեն և հարկանեն զոր չէ արժան և օրեն, և ոմանք ընտանեօք ի վանս նստին արհամարհեալ զեկեղեցւան աստուծոյ՝ անպատկառելի անամոթութեամբ...»²¹: Ժողովը չի վստահանում այդ իշխաններին պատժել,

¹⁹ «Կանոնագիրք հայոց», Թիֆլիս, 1913 թ., էջ 121—122:

²⁰ «Կանոնագիրք հայոց», Թիֆլիս, 1913 թ., էջ 126:

²¹ Անդ, էջ 127:

առաջարկում է միայն վերադարձնել վալվածներն ու վանքերը և խոստանում է օրհնել եկեղեցականների ցանկությունը: Կատարող ազատներին: Բանաձևի վերջին խոսքերը բավական բնորոշ են: Ըստ երևույթին անվանի հոգևոր ֆեոդալներն այնքան էլ համոզված չէին, որ իրենց բաղձանքները հաջող ընթացք կունենան: Միանման մի կանոն է նաև 11-րդ կանոնը, ուր խոսվում է արդեն այն ազատների մասին, որոնք զրավելով «տեղաբնոցները»՝ ձգտում են իրենց ղեկավարությունը ենթարկել այդ հիմնարկությունները: Վերջապես, վերջին կանոնի մեջ էլ խոսվում է վանքերում խրախճանքներ կազմակերպող ազնվականների մասին:

Այդ կանոնը անշափ ուշադրավ պատմական վավերագիր է: Հեղինակները հայտնի գործիչներ են՝ անվանի եպիսկոպոսներ: Դրանք արձանագրում են մի երևույթ: Բանից դուրս է գալիս, որ թե՛ ազատները, և թե՛ նույնիսկ «ոսմիկ հեծյալները» (ըստ երևույթին խոսքը ձիավոր զինվորների մասին է) հաճախ իջևանում են վանքերում, այդտեղ խնջույքներ են կազմակերպում, բերում են իրենց հետ անգամ գուսաններ, դերասաններ, պարուհիներ: Եպիսկոպոսները առաջարկում են այդ ազատներին և զինվորներին իջևանել վանքերի մոտ ընկած գյուղերում և գտնում են, որ այդտեղ անգամ, վանքապատկան գյուղերում, կարելի է գուսանների և դերասանուհիների կամ պարուհիների հետ ուրախանալ, երգել հեթանոսական կամ կենսուրախ երգեր: Այլ խոսքով՝ եպիսկոպոսները բռնում են կապիտուլյացիայի ուղին, հաշտվում են գյուղերում և այն էլ վանքին կից գյուղերում ձեռնարկվող հանդեսների կամ խրախճանքների հեղինակների հետ: Նրանք խնդրում և կամ առաջարկում են միայն վանքի հեղինակությունը խնայել և վանքը շղարձնել գուսանների և պարուհիների իջևան: Կարելի է մի ենթադրություն ևս անել: Ըստ երևույթին VII դարում եղել են նույնիսկ եպիսկոպոսների մեջ գուսանական երգերի և հեթանոսական պարերի երկրպագուներ, որոնք նույնիսկ մենաստաններում կազմակերպում էին ուրույն հանդեսներ: Վաճառականությամբ, վաշխառուական գործարքներով կամ որսորդությամբ զբաղվող եպիսկոպոսների մեջ կարող էին լինել այդօրինակ եպիսկոպոսներ, որոնց ցանկությամբ նրանց մոտակա ծանոթ իշխանները կարող էին վանքում ուրախանալ: Համենայն դեպս, ակներև է, որ առանձին մենաստանում գործադրվող փորձը կարող էր խրախուսել թե՛ այդ իշխաններին և թե՛ մանավանդ ոսմիկ հեծյալներին²²: Այլ պարագայում հին օրերի այդ զեղոնխատները երբեք չէին համարձակվի խախտել հնօրյա տրադիցիաները, եթե միայն եղել են հիրավի

այդպիսի տրադիցիաներ, քաղաքամերձ վայրերում մանավանդ: Բնորոշ պիտի համարվի այն էլ, որ հիշված կանոնը ոչ մի խոսք չի ասում բրեհական սանկցիայի մասին. զանցառուները, ոչ բանադրվում են և ոչ էլ ենթարկվում նզովքի: Բանադրել դժվար էր, որովհետև պիտի բանադրվեին գուցե անվանի եպիսկոպոսները: Այդ պարագայում աշխարհական իշխանները կարող էին հիշեցնել եպիսկոպոսներին հոգևոր իշխանների միանման քայլերի մասին: Դրությունը կդառնար շատ փափուկ, և աշխարհականների դեմ ուղղված մեղադրանքները կընթանային նոր հունով՝ ուղղվելով անմիջապես եկեղեցու բարձրաստիճան պաշտոնյաների դեմ: Այսպես թե այնպես, այդ կանոնի մեջ գծվում էին ոչ միայն խրոխտ և սանձարձակ աշխարհականները, այլ նաև կոմպրոմիսային ուղեգծին կառչած եկեղեցականները, որոնք այս անգամ խոսում են քաղաքագիտական տոնով:

Անցնում է նորից կես դար և տնտեսական կացությունը ծանրանում է հատկապես ժողովրդական զանգվածների համար: Եկեղեցու թուլություն և անկման նշան էր արդեն Դվինի վերոհիշյալ ժողովը, որ շանալով համախմբել հայ քաղկեդոնականներին և լուսավորչականներին եկեղեցու բոլոր թշնամիների դեմ, վկայում է միայն սոցիալական շարժումների ծավալման մասին: Քաղկեդոնական օրիննտացիայի կողմնակիցները ուժեղ հենարան չեն գտնում Հայաստանում, բյուզանդական կալվածատիրական պետության դեմ ուղղված շարժումները դառնում են հայրենասիրական մեծ շարժումներ, որոնք գուցե նույնիսկ առժամանակ համախմբում են աղգային եկեղեցու շտրջ բոլոր անբավական տարրերը: Դվինի տաճարից հետք չի մնում: Քանդվում և ավերվում է հիմնովին անգամ Զվարթնոցի տաճարը: Քանդվել են թերևս շատ ուրիշ տաճարներ ևս, որոնց ավերակներն էլ չեն մնացել: Կարելի է ենթադրել, որ մեծածավալ շարժումների ժամանակ ժողովրդական զանգվածների ատելությունը առանձին թափով ուղղվել է հատկապես այն տաճարների դեմ, որոնց հետ կապված են եղել որոշ տրադիցիաներ: Այլ կերպ դժվար է հասկանալ, թե ինչպես կարող էր էջմիածնի և Հոփսիմի տաճարների կողքին կառուցված Զվարթնոցը այնքան շուտ և այնպես հիմնավոր կերպով քանդվել: Ակներև է միայն, որ հայրենասիրական մեծ շարժումների հետ գոնե VIII դարից հետո շաղկապված են եղել հայ ազանգավորների շարժումները: Դրանք են ուժ տվել հայրենասիրական շարժումներին և դրանք են անմար պահել քաղկեդոնական եկեղեցու դեմ ուղղված ատելությունը:

Պավլիկյանների մեծ շարժումը ամբողջ Փոքր Ասիայում և հատկապես Հայաստանում դառնում է բյուզանդական օլիգարխիայի դեմ ուղղված մեծածավալ ապստամբություն: Պավլիկյանները հատուկ և հմուտ հրամանա-

²² «Կանոնագիրք», էջ 128 (կանոն ժԲ): «... Ոմանք յազատաց յնոսմիկ հեծելոց հասնելով ի զեղս ուրեք, թողնալ զգեղն ի վանս առնեն իջևանս և ի յարկս սրբոց, և գուսանօք և վարձակօք պղծեն զնոսիրեալ տեղիսն աստուծոյ, զոր սոսկալի է քրիստոսէկից լսել՝ թող թէ առնել»:

տարների ղեկավարութեամբ շոշափելի հարվածներ էին հասցնում բյուզանդական զորաբանակին: Սակայն շարժումը հետագայում ավարտվում է պարտութեամբ: Մի քանի տասնյակ հազար հայ պավլիկյաններ շարժման ջախջախումից հետո տեղավորվում են Բուլղարիայում և ապրելով նոր վայրերում՝ մեծագույն ազդեցություն են թողնում ոչ միայն բուլղարական ժողովրդի, այլ նաև գրականության վրա: Պավլիկյանների շարժումների այդ օրերին էլ ահա նորից գումարվում է (Դվինում) եկեղեցու բարեկարգման նպատակով հատուկ ժողով: Պատգամավորների հիմնական նպատակը պարզ էր: Հեղափոխական շարժումներ էին սկսվել ամբողջ երկրում և այս անգամ շարժումների մեջ ակտիվ դեր էին կատարում ոչ միայն քաղաքների բնակիչները, այլ նաև շահագործվող գյուղացիության ստվար զանգվածները: Անհրաժեշտ էր ազիտացիոն միջոցներով ամրացնել եկեղեցու հեղինակությունը, կոփել հավատացյալներին դավանաբանական ամուր շաղախով, ստեղծել հավատացյալների կուռ գնդեր ու համայնքներ և միաժամանակ հիմնովին արմատախիլ անել պավլիկյանների ազդեցության ներքո ստեղծված հոսանքները:

Ժողովը գումարվում է 719-ին և նորից ուշադրություն է նվիրվում ամենից առաջ եկեղեցու բարեկարգման հետ կապված խնդիրների քննարկմանը: Առաջին կանոնի մեջ ժողովը նորից դատափետում է արբեցող քահանաներին և հոգևորականներին: Ժողովն այս անգամ կոչ է անում աշխարհականներին էլ վերջ տալ արբեցողությանը: Մշակվում են հատուկ դավանաբանական կանոններ՝ պաշտամունքի, պասի, հավատացյալների կրոնական պարտականությունների մասին: Ազանգավորները սովորաբար հրաժարվում էին երկրպագել խաչին: Ժողովը նշում էր, որանց: Կինում էին աղանդավորներ, որոնք իրենք էին շինում խաչը փայտից կամ այլ նյութից: Ժողովուրդն էլ հետևում էր դրան: Ժողովն առաջարկում է անպատճառ օրհնել և օծել խաչը և այդ պարտականությունը դնել ծիսակատարությունը ձեռնարկող քահանայի վզին: Այդ միջոցը ըստ երևույթին հնարավորություն էր տալիս կանոնավոր հաշվառման ձևով թե՛ ստուգել հավատացյալների թիվը և թե՛ գտնել աղանդավորներին: Երկու կանոնների մեջ մանրամասն խոսվում է աղանդավորների մասին: Մի ընդարձակ կանոնի մեջ (կանոն 29) եկեղեցին հրահանգում է հավատացյալներին ոչ մի հարաբերություն չունենալ աղանդավորների հետ: Մյուս կանոնը նվիրված է բացառապես պավլիկյանների մոլեզին դատափետմանը: Ժողովը մշակում է իսկական հավատացյալների գաղափարական անաղարտությունն ապահովող միջոցներ: Նշվում է կտրուկ կերպով, որ հավատացյալները ոչ մի պարագայում օթևան չպիտի ընտրեն այն վայրերում, ուր ապրում են պավլիկյանները: Այդ կանոնը ցույց է տալիս, որ շարժումը եղել է իսկապես մեծ, քանի որ հիշատակվում են հատուկ վայրեր, ուր

ըստ երևույթին պավլիկյանների քանակը եղել է սովոր: Համեմատելով ապա պավլիկյաններին հնօրյա հայ մծղնականների հետ՝ ժողովը ակնարկում է, որ պարտազանց հավատացյալների նկատմամբ կարող են գործադրվել ավելի ծանր ռեպրեսիաներ:

Ժողովին մասնակցում է հայ եկեղեցու ականավոր տեսաբաններից մեկը՝ Հովհան Իմաստասերը: Նա հրատարակում է պավլիկյանների դեմ ուղղված իր հրապարակախոսական ճառը, և այդ ճառը յուրահատուկ տեսական ձեռնարկ է դառնում պավլիկյանների դեմ պայքարող կրոնական ազիտատորների համար: Արդեն այդ հանգամանքը ցույց է տալիս, որ շարժումը այս անգամ համարվում էր անշափ խոշոր: Եկեղեցու ականավոր տեսաբաններից մեկը կարևոր էր համարում գաղափարական պոլեմիկայի մեջ մտնել պավլիկյանների հետ: Հովհան Օձնեցին հաշվի էր նստում «զարշելի» հոսանքի գաղափարախոսների հետ: Գիտեր, որ դրանք ունեն ընթերցողների և հետևողների որոշ գնդեր քաղաքներում: Գրանց անհրաժեշտ էր համոզել, քանի որ այդ հետևողների մեջ կային ազդեցիկ մարդիկ: Ժողովի գումարման մոմենտին, սակայն, շարժումը այնքան մեծ էր, որ եկեղեցին չէր կարող սահմանափակվել գաղափարական և ազիտացիոն մեթոդներով: Ահա ինչու միևնույն Օձնեցու ներկայությամբ և հավանությամբ ժողովը մշակում է հատուկ ռեպրեսիվ միջոցներ հատկապես աղանդավորներին ձայնակցող, հովանավորող, անուղղակի կերպով օժանդակող, ինչպես նաև դրանց հետ հաղորդակցություն պահպանող հավատացյալների նկատմամբ:

Կրոնական ժողովրդական շարժումները VIII դարում լայնորեն տարածվում են Հայաստանի բոլոր վայրերում: Հայ եկեղեցու ղեկավարների համար ստեղծվել էր բավական փափուկ կացություն: Պավլիկյանների շարժումը անհանդուրժելի շարժում էր, բայց իրականում այդ շարժումն էր քաղկեդոնականությունը ամենավտանգավոր հարվածներ հասցնողը: Երբ ազգային եկեղեցին կուլի է ելնում պավլիկյանների դեմ, անակնկալ կերպով թուլանում է նաև ազգային եկեղեցու հենարանը: Պավլիկյան շարքերի պարտության հետ միաժամանակ ուժեղանում է նաև քաղկեդոնական հոսանքը: Իսկ ուժեղանալով՝ այդ հոսանքն այլևս չի սահմանափակվում սոսկ պավլիկյանների քննադատությամբ, այլ ոգևորվելով հաջողություններից, սկսում է ավելի ակտիվ կերպով քննադատել նաև հայ և ասորի եկեղեցիների ղեկավարներին: Քաղկեդոնականությունը, այլ խոսքով, աշխատում է դառնալ մենատեր եկեղեցի: Ահա այդ գործելակերպը թելադրում է ասորի եկեղեցու ղեկավարներին մշակել նոր ստրատեգիա: Մի կողմ նետելով մանրապատում դավանաբանական տարածայնությունները՝ դրանք առաջարկում են հայերին հիմնական կրակն ուղղել նորից ամենաուժեղ թշնամու՝ քաղկեդոնականության դեմ: Քանի որ քաղկեդոնականները արդեն սկսել էին ակտիվ պայքարը հայ ազգային եկե-

ղեցու դեմ և քանի որ մի քանի հայ ականավոր եկեղեցականներ արդեն դարձել էին քաղկեդոնականության շահակիրներ, ասորիները առաջարկում էին հայերին ոչ թե պաշտպանվել, այլ հարձակվել:

Ժողովը գումարվում է Ապահունյաց գավառի Մանազկերտ գյուղում 727-ին: Մասնակցում են այդ ժողովին հայ եպիսկոպոսներն և ապա Անտիոքի պատրիարքի կողմից ուղարկված պատգամավորները: Մանազկերտի ժողովի բանաձևը բավական ընդարձակ լինելով հանդերձ՝ շատ յուրահատուկ բնույթ է կրում: Կոնկրետ կերպով բազմաթիվ Փոքրասիական հերձվածողներից բանաձևի մեջ նշվում է միայն Հուլիան Հալիկարնացու հետևողները և այն էլ ընդհանուր կերպով: Ո՛չ պավլիկյանների և ո՛չ էլ մծղնեականների մասին ժողովը որևէ դիտողություն չի անում: Նույնիսկ շեն էլ հիշատակվում բանաձևի մեջ այդ ակտիվ աղանդավորները—այնինչ զեռ մի քանի տարի առաջ Գվինի ժողովում հերետիկոսների մուլեդին դատափետումից հետո հավատացյալներին առաջարկվում էր օթեաններ շքերտել պավլիկյան վայրերում, կտրել հիմնովին հարաբերություններն այդ աղանդավորների հետ, պատժել դրանց հետ հաղորդակցություն ունեցող խաղաղ և միամիտ մարդկանց անգամ:

Ինչո՞ւ և ինչպե՞ս. հայ և ասորի եկեղեցականները որոշում են միանգամայն անուշադրության մատնել աղանդավորներին: Կարելի է ենթադրել, որ պավլիկյանները վերջնականապես չախջախվել էին և պայքարի շարունակությունը զեռ երեկ հզոր դանդաժների աննշան բեկորների դեմ անիմաստ էր համարվում: Սակայն, որքան էլ ծանր լիներ պավլիկյանների պարտությունը, Հուլիան Հալիկարնացու հետևողների դատափետողը չէր կարող լուծություն պահպանել քանակով էլ ավելի նկատելի աղանդավորների նկատմամբ: Հիմնական պատճառն ուրեմն այն էր, որ միայն պավլիկյանների պարտությունից հետո է ակներև դառնում ավելի վտանգավոր թշնամու՝ բյուզանդական դեսպոտիայի հետ սերտորեն շաղկապված քաղկեդոնական եկեղեցու բարգավաճումն ու ամրացումը:

«Կանոնները» կամ ավելի ճիշտ՝ ժողովում ընդունված բանաձևը, ստորագրել է Հովհաննես կաթողիկոսը: Ամբողջ այդ բանաձևը հայ եկեղեցու դավանաբանական ուսմունքի բնութագրման և տեսական հիմնավորման մի փորձ է: Այստեղ է արժարժված բավական մանրամասն գծերով հայ ազգային եկեղեցու փիլիսոփայական հայեցությունը: Միաժամանակ շատ սուր կերպով խարազանելով քաղկեդոնականներին, Մանազկերտի ժողովի պատգամավորները որոշակի կերպով հանդես են գալիս որպես ազգության միասնության պրոպագանդիստներ՝ ընդդեմ այդ միասնությունը քայքայողների: Ավելին կարելի է ասել: Մանազկերտի ժողովի պատգամավորները ոչ միայն համաձայնության են գալիս ասորիների հետ՝ ընդդեմ քաղկեդոնականության, այլև

ընդգծելով դեմոնստրատիվ կերպով այդ ալիանսը, ասորիների հետ միասին կազմակերպում են հենց Հայաստանում հատուկ եկեղեցական ժողով, հատուկ խնդրի քննարկման համար («Վասն միաբանության խոստովանության»):

«... Եվ միաբանեալ ընդ միմեանս հավատով զմիութին խոստովանելով կարգեցաք ճառս բազումս հակառակ երկարնակացն Քաղկեդոնի և խլեցաք զորումն ապականութեան, որ սփռեալ էր՝ Լեդրայր ցայս վայր տարածեալ, վասն որոյ բազումք կործանեցան երկաբնակ հաւատն»...²³,

Այդ նախադրության վերջին տողերն էլ շատ նշանակալից են: Ժողովի համար քաղկեդոնականությունը պարզապես ախտ է:

«... Մերժեցաք զախտ ժողովոյն Քաղկեդոնի, և որք անկեալ էին ընդ խոստովանութեամբ նոցա, զայն ևս յուղղութիւն ածելով, շինելով յայսմ հետէ և յավիտեան ժամանակաց, զի այլ մի ևս կարացցեն հակառակել խախտել զուղղութեան զիր խոստովանութեան որ ի Քրիստոս...»²⁴:

Մանազկերտի կանոնների իմաստը այնքան որոշ է, որ ոչ մի տարակուսանք չի կարող ստեղծել: Բոլոր կանոններն էլ, ինչպես արդեն շեշտվեց, ուղղված են քաղկեդոնականության դեմ և հիմնավորում են ազգային եկեղեցու դավանաբանական սկզբունքները: Կնքվում է ըստ երևույթին և ուրույն դաշնակցության նման ինչ-որ համաձայնություն ուստիկանների հետ: «Ես Յովհաննէս Հայոց հայրապետս կարգեցի ձեզ կէտ սահմանադրութեան, միութիւն խոստովանելով աստվածութեանն և մարդկութեանն անապակաբանաբար: Վասնորոյր բարեբնկալ հաճութեամբ զայս խոստովանութիւն ընկալեալ հաճեցան հայրապետքն Ասորոց և ընկալեալ ողջոյն՝ գնացին խաղաղութեամբ յաշխարհն իւրեանց փառաւորելով զաստուած յավիտեանս ամէն...»²⁵:

6

Պատմիչների գրքերի մեջ ցրված տեղեկությունները ցույց են տալիս, որ եկեղեցու դեմ ուղղված սոցիալական շարժումները VIII—IX դդ. սիստեմատիկաբար բռնկվում են Հայաստանի տարբեր վայրերում: Մովսես Կաղանկատվացին պատմում է մասնավորապես Աղվանից երկրում առաջացած «մատնահատներին» կրոնական աղանդի մասին:

Հայ ժողովրդի դրությունը շատ ծանրանում է հատկապես VIII դարի 2-րդ կեսից հետո, երբ օտարերկրյա զավթիչները հարկային ծանր քաղաքականության միջոցով ստեղծում են դաժանագույն տնտեսական-քաղաքական պայմաններ ժողովրդի աշխատավոր զանգվածների համար: Եկեղեցու

²³ «Կանոնագիրք հայոց». կանոնք Մանազկերտայ ժողովոյն, էջ 150:

²⁴ Անդ, էջ 150:

²⁵ Անդ, էջ 155:

և եկեղեցական պաշտոնյաների դեմ ուղղված հարվածներն էլ նոր թափ են ստանում: «Հագարացիները» կնքում են եկեղեցական գանձատուները, խուզում են հոգևորականների մորուքները, հաճախ դրանց պարանոցին էլ հատուկ կապարյա կնիք են կախում (իբրև նշան ստրկության): Կաթողիկոսի և նախարարների բողոքներն անհետևանք են մնում: Բնական է միանգամայն, որ կաթողիկոսի, նախարարների, եկեղեցական պաշտոնյաների հեղինակությունն ընկնում է հայաբնակ բոլոր վայրերում: Մանազկերտի ժողովը որոշակի կերպով ցույց է տալիս, որ ինքը՝ կաթողիկոսը և բարձրաստիճան եպիսկոպոսները չէին վստահանում այլևս շարունակել հին քաղաքականությունը ժողովրդական ազանդների դեմ: Շատ մեծ էր սոցիալական շարժումը հատկապես Աղվանից երկրի սահմաններում:

Երբ 767-ին Գվին քաղաքում Սուլեյման օստիկանի ներկայությամբ կաթողիկոս է ձեռնադրվում «իր հմտությամբ և առաքինությամբ» հայտնի Սիոն եպիսկոպոսը, լուր է հասնում, որ Աղվանից երկրի տարբեր մասերում բռնկվել են կանոնավոր գյուղացիական խռովություններ և ապստամբություններ: Անհրաժեշտ էր մշակել որոշ միջոցներ, բանի որ քաղաքական-աշխարհական իշխանավորներին էլ չէր հաջողվում խափանել ապստամբությունը, նոր կաթողիկոսը խորհրդակցելով մի քանի ականավոր կալվածատերերի հետ, ուղևորվում է Գվինից դեպի Պարտավ և ապա խոշոր առևտրական այդ քաղաքում գտնարում է հատուկ եկեղեցական ժողով: Դա արդեն հին մեծ ժողովների նման մի հավաքույթ էր, գրեթե համազգային համագումար: Ներկա են լինում այդ ժողովում բազմաթիվ հոգևորական և աշխարհական պատգամավորներ: Բացի ականավոր եպիսկոպոսներից Պարտավի այդ ժողովին մասնակցում էին մի քանի հայտնի իշխաններ (Սահակ Պատրիկ Բագրատունի, Մերուժան Արծրունի, Վահրամ Խորխոռունյաց տեր, Արտավազ Աշոցա տեր, Վահան Վարանդա տեր, Սահակ Գողթան տեր և այլք): Աշխարհական հայտնի իշխանների ներկայացուցչությունը ցույց է տալիս, որ կացությունը շատ լուրջ է: Կային որոշ տեղեկություններ այն մասին, որ շարժումը ուժեղանում է օրբստօրև, պաշտպաններ և ղեկավարներ ունի անգամ եպիսկոպոսների շրջանում: Հայտնի էր, որ ապստամբները տարածում էին անհանդուրժելի գրքեր և ձևազրեք:

Դրությունը շատ պարզ էր, քանի որ տեղ-տեղ գյուղացիական ապստամբություններին ըստ երևույթին ուժ էին տալիս նաև «արքունիքի» առանձին պաշտոնյաներն ու ներկայացուցիչները: Դրանք, սովորաբար, կատարելապես անուշադրության մատնելով եկեղեցու ղեկավարներին կամ աշխարհական իշխաններին, աշխատում էին անմիջական հարաբերությունների մեջ մտնել գյուղացիների հետ և հենվել քաղաքային ու գյուղական վայրերի աշխատավորության վրա: Անհրաժեշտ էր ուրեմն մշակել շատ նրբին ու ճկուն

գործելակերպ: Անհրաժեշտ էր մի կողմից մեղմել աշխատավորների շահագործումը, տուրբերը, ռեպրեսիաները և ապա, մյուս կողմից էլ, համախմբել ու կազմակերպել կաթողիկոսի, ազգային կրոնի, համազգային ժողովի շուրջը հայաբնակ վայրերի առաջավոր ներկայացուցիչներին, անվանի եպիսկոպոսներին և իշխաններին:

Քանի որ հասարակական ճգնաժամը սուր էր Աղվանից երկրում, անհրաժեշտ էր ժողովն էլ գումարել այդ երկրի մայրաքաղաք Պարտավում, ուր շնորհիվ ավելի նպաստավոր քաղաքական մթնոլորտի, պատգամավորներն էլ ավելի լայն հնարավորություններ ունեին ազատորեն արտահայտել իրենց բաղձաքններն ու հայացքները: Սիոն կաթողիկոսի ակտիվ մասնակցությունը Պարտավի ժողովին ինքնին արդեն ընդգծում էր, որ այս անգամ եկեղեցական և աշխարհական իշխանների համագումարը խոշոր քաղաքական նշանակություն պիտի ունենա:

Պարտավի համագումարի որոշումները հայտնի են: Հայոց կանոնագրքի մեջ այդ որոշումները նկատելի տեղ են գրավում: Որոշումներին կցված պատմական բացատրական նախադրության մեջ կարճ խոսքերով բնութագրված է պատմական մոմենտը:

«...Եվ վասն զի—կարդում ենք այդ նախադրության մեջ—ամենայն ուրեք խափան և արգելեալ տեսանեմք զգործ մշակութեան վերատեսուչ դիտողաց եկեղեցույ ի բռնագոյն գործավար իշխողացն, որ ընդ մեզ են եպիսկոպոսացս, որ խափան եղեն ի նոցանէ զալ առ մեզ, հաւանական իւրեանց թղթով զրեցին առ մեզ ածել յաւարտումն բանի զբարութեալս խորհուրդն...»²⁶:

Կանոններից առաջինների մեջ դատափետվում են անպարտաճանաչ եպիսկոպոսները (Ա—Ե կանոններ): Խոսվում է այդտեղ աշխարհականների նման ապրող եպիսկոպոսների մասին:

«...Եպիսկոպոս կամ քորեպիսկոպոս կամ երեց մի ստացի պատճառս փառաց մարմնոյ, զփառս շնորհաց հոգւոյն, զպատիւ սրբութեան օժման, որպէս ըստ մարմնական զբօսման ունել անփոյթ առնելով զժողովրդոցս հիւանդութեանց, և որ ի նոսա են հոգեկանաց ցաւոց վէրք, իսկ եթե ծուլասցի՝ լուծցի»²⁷:

Եպիսկոպոսների դատափետմանը նվիրված տողերը ցույր են տալիս, որ 768-ին բռնկված շարժումներն ևս ուղղված են եղել մեծագույն շափով եկեղեցական ֆեոդալների դեմ: Ժողովը կանգ է առնում կենցաղային խնդիրների վրա և ակնարկելով կրոնական արսենտեիզմի մասին, կոչ է անում քահանաներին հետևել ժողովրդական բարբերին, պայքարել «պղծագործ շնու-

²⁶ 26 «Կանոնագրք հայոց», էջ 165:

²⁷ 27 Անդ, էջ 166:

թեան» դեմ (կանոն ԺԳ) և կանոնավոր կերպով կատարել կրոնական ծեսերը: Բավական մթին գույներով նկարագծելով կրոնականներին, ժողովը հիշեցնում է, որ հին օրերին եպիսկոպոսները և իշխանները հատուկ անկելանոցների մեջ պատասպարում էին չքավորներին, որոնք ներկայումս շատ ծանր կացության մեջ են գտնվում («Տկարքն քանզի ի տանս ընտանեաց և ի քաղաքաց իւրեանց մերժեալք և հալածեալք եղեն...»):

Այդ կանոնի մեջ նկարագրվում են բավական տխուր երևույթներ: «...Այժմ ի տեղիս տեղիս այդ աւերեալ է, և ելանեն տկարքն յայլ մուրողաց վիճակաց, առնուն զմուրողին, նոքա զրկին ի միմեանց, և չբաւորեալ շրջին...» (կանոն ԺԷ): Դա արդեն խիտ մի նկար է: Խոսքն, իհարկե, պատահական չքավորների մասին չէ: Ժողովը կոչ է անում եպիսկոպոսներին («և նոցին ազատաց և այլ գլխավորաց») ժողովել անկյալներին և կաղամակերպել թափառական չքավորների օգնության գործը:

Ժողովը հիշեցնում է գյուղական ավազներին, որ նրանք ոչ մի պարագայում իրավունք չունեն անգամ հարկահավաքների պահանջով փակել եկեղեցին: Այդ կանոնը նշանակալից է այն կողմից, որ բնութագրում է եկեղեցու շուրջ խմբվող նոր հայրենասիրական շարժման ջահակիրների վճռական տրամադրությունը: Ժողովը դիտն, որ գյուղապետներին բռնակալներն են ստիպում փակել եկեղեցին, և շնայած դրան՝ առաջարկում այդ գյուղապետներին դիմագրավել հիշյալ հրահանգներին: Դա արդեն պայքարի կոչ էր: «Գեղճաւագ, որ հաղագս արբունի հարկաց զդուռն եկեղեցվոյ փակել տա բռնաւորին և աստուածային ժամուն և աղոթից խափան արասցէ, նզովեսցի ի կեանս և ի մահ» (կանոն ԻԲ):

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Պարտավի ժողովի որոշումների մեջ ընդարձակ այն կանոնը, ուր շատ պարզ խոսքերով խարազանվում են վանական տնտեսություններին հարվածներ հասցնող շինականները և հատկապես սահմանված եկեղեցական տուրքերը չվճարող գյուղացիները: Այս կանոնը շատ կարևոր սոցիալ-տնտեսական վավերագիր է, որ կարող է նշանավոր տեղ գրավել նաև գյուղացիական շարժումների պատմությանը նվիրված պատմական նյութերի ապագա ժողովածուի մեջ: «...Վանք շինեցան ի գիւղս, զի անդ հանգիցին առաջնորդք եկեղեցւոյ և հիւրք և աղքատք, և զհաց նուիրացն օրհնութեան ի տունսն երեց եղբարցն տան և քահանայի, զոր անդր կալեալ եղև և զմատաղենիս, և զհաս ի վեր այս առնուն գիւղականքն. և վարձ տան նահապետի և աւերեն զվանսն, և զլոյս և զպաշտօն և զխնկարկութիւն ի վանացն և եկեղեցւոյ խափանեն: Զայնպիսիսն ծանր նզուրիք կապեալք եմք և բանիւ Աստուծոյ: Մի իշխեսցին ժողովրդականքն այնմ շնորհի. թող և վանս երթայ ամենայն հասն ըստ կար-

գավորութեան առաջնոց հարցն: Եվ վանական մի իշխեսցի տանել ի տուն իւր իսկ եթէ հանդգնեսցի, ի մեղս եղիցի նմա»²⁸:

Նախորդ ժողովների կանոնների տողերի մեջ էինք նշմարում սոցիալական շարժումների արձագանքը: Այս անգամ այդ տողերն այնքան որոշ են, որ առանց մեկնաբանության էլ հասկանալի են: Շարժումն ըստ երևույթին եղել է շատ լայնածավալ: Ժողովի որոշումները նշում են (կանոն Զ), որ բոլոր եկեղեցիներում պիտի լինեն վարդապետներ, որոնք պարտավոր են հետևել «հերձվածողների» գործունեությանը («ճարակող աղաղակների» առաջն առնել):

Նշանակալից է քիչ առաջ բերված 8-րդ կանոնը: Այդտեղ նշվում է, որ գյուղացիները չեն կատարում իրենց կրոնական պարտականությունները: Հրաժարվում են մատաղ ու հաց տալ վանքերին:

Հերետիկոսական գրականության վավերագրերի հետ են կապված, իմ կարծիքով, որոշ շափով նաև այն երկերը, որոնք հերետիկոսական շլինելով հանդերձ՝ շողկապված են սոցիալական շարժումների անմիջական ազդեցության ներքո առաջացած գաղափարական նոր հոսանքների և դեգերումների հետ:

7

Հասարակական-գաղափարական սուր մարտերի օրերին, ժողովրդական շարքերից կտրված չէին անգամ իշխող խավերի առաջավոր ներկայացուցիչները: Զանալով դաստիարակել ժողովրդին, այդ ներկայացուցիչները ոչ միայն հետևում էին առանձին ուշադրությամբ ժողովրդական տրամադրություններին, այլ նաև արձագանքում, հատկապես բեկման օրերին, նույն այդ տրամադրություններին: Ի վերջո, այդ գործիչները, նույնիսկ կապված լինելով իշխող սոցիալական խավերի հետ երազում էին «փրկել» հարազատ ժողովրդին, բարձրացնել նրան, վերջապես դարձնել հարազատ հայրենիք բարձր մշակույթի օրրան: Պատմական որոշ միջավայրի մեջ սնվելով հին օրերի այդ հումանիստները յուրահատուկ ուսույթիստներ էին, որոնք խորապես համոզված էին, որ հենվելով հոգևոր և աշխարհական արիստոկրատիայի վրա՝ կկարողանան զոգել բարձր խավը հարազատ ժողովրդի հետ և ստեղծել միաձույլ կուլտուրական շարժում: Անողոր իրականությունը, սակայն, անգամ հին օրերին, հաճախ ջախջախիչ հարվածներ էր հասցնում հայկական այդ հումանիստներին, դարձնում էր նրանց հակասությունների գերի և զոհ:

²⁸ «Կանոնագիրք հայոց», էջ 167:

Այդ ուրույն հակասութիւնները և մտորումների արձագանքները պարզ նշմարվում են Խորենացու, Փարպեցու, հայ առաջավոր գործիչների երկերի այն էջերի մեջ, ուր խոսվում է հին օրերին իշխող ներհակ ուժերի և գաղափարական բախումների մասին: Խորենացու «Ողբը» և այս Փարպեցու «Թուղթը», համենայն դեպս, ցույց են տալիս, որ արիստոկրատական բարձր կուլտուրայի այդ ներկայացուցիչները շատ ուժեղ թելերով կապված լինելով ժողովրդի հետ, բազմաթիվ թշնամիներ են ունեցել բարձր դասերի միջավայրերում և հարածանքների են ենթարկվել հենց այդ դասերին սպասավորող գործիչների կողմից: Միայնակ են եղել այդ հումանիստները և անցյալի բարդ հասարակական մթնոլորտում շէին կարող զորավոր հենարան ունենալ: Իսկական հենարանը կարող էր դառնալ միայն ժողովուրդը, իսկ այդպիսի հենարան դառնալու համար այդ ժողովուրդը պիտի լիներ գեթ հոգևոր ինտելիգենցիայի շափ կիրթ և միաձույլ: Քանի որ այդպիսի ամուր հենարան չկար, անխուսափելի էին դանդաղանքներն ու բողոքը, տխուր հուշերը և ողբով լեցուն խոհերը: Մեր երկու ականավոր պատմիչներն էլ ընդունում են ուսուպիստ մտածողների ուղեգիծը: Նրկուան էլ աշխատում են հենվել հայ արիստոկրատիայի առաջավոր ներկայացուցիչների վրա և դրանց միջոցով իրագործել իրենց մտահղացումները: Ընտրելով այդ ուղին՝ Խորենացին և Փարպեցին իրականում կտրվում են իրենց էպոխայի կուլտուրական դասից՝ հոգևորականությունից և, հակառակ իրենց ցանկությունների, արձագանքում են այդ դասի դեմ ուղղված հերետիկոսական հոսանքների ջանքերով առաջադրված հասարակական մտորումներին: Առանձին նշանակություն չունեն ներկա պարագայում Խորենացու կամ Փարպեցու երկերի մեջ ցրված ակնարկները հերետիկոսների հասցեին: Կաղմակերպական որևէ կապ չունենալով այդ հերետիկոսների հետ, երկուան էլ, այնուամենայնիվ, կրկնում էին հերետիկոսների խոսքերը, արժարժում էին նրանց խոհերը, պաշտպանում էին նրանց հասարակական իմաստասիրությունը:

Շատ բնորոշ է հենց այդ կողմից մեր ամենահին պատմիչների մեջ Փավստոս Բյուզանդացին: Եկեղեցու ջահակիրներից է նա: Իր պատմության առաջին տողերից մինչև վերջինը նա հանդես է գալիս որպես կրոնի, եկեղեցու, հոգևոր դասի ջերմ երկրպագու: Ներսեսը նրա համար իդեալ է, մարդկային բարձր տիպար, լուսավոր դեմք: Ներսեսի թշնամիներին նա քննադատում է և խարազանում: Մաղրանքով է պատմում Արշակի անհանդուրժելի գործերի մասին: Պապ թագավորը նրա համար նույնպես սիրելի դեմք չէ: Բայց ահա այդ օտար և անհանդուրժելի Արշակը պարտվում է: Փոխվում է պատմության տոնը: Միևնույն Արշակը նկարագրվում է միանգամայն նոր գույներով— դառնում է հայրենասիրության սիմվոլ: Նոր Փավստոսին ենք նշմարում: Նոր այդ Փավստոսը դառնում է մի անկնթարթ Արշակի երկրպա-

գուն և փաստաբան: Ինտիմ են տողերը: Պատմության էջերն էլ հնչում են տխուր էլեգիայի մոտիվների նման: Այդպիսի տպավորություն են թողնում նաև Պապ թագավորի կյանքի վերջին էջերի նկարագրությանը նվիրված անշափ բանաստեղծական և ուժեղ տողերը:

Ով է Ներսեսի զովերգուին այդպես այլափոխել ու դարձրել Արշակի ու Պապի երգիչ: Ինչու՞ Ներսեսի վերջին օրերի մասին գրված տողերն այնքան ցամաք են և անարյուն, իսկ Ներսեսի թշնամիների կյանքին նվիրված էջերն այնքան ջերմ, հյուսիսեղ և հուզիչ: Չէ՞ որ այդ խելոք, գիտուն և անշափ հեռուս պատմաբանին էլ հայտնի պիտի լիներ, որ իր «Պատմության» նորամուտ էլեմենտները կարող են ազդել ընթերցողի վրա: Գիտեր և գրում էր: Գիտեր և չէր ծածկում ոչ ժողովրդի և ոչ էլ իր սեփական զգացումները: Չէր ցանկանում ծածկել: Չցանկանալով ծածկել՝ դրսևորում էր իր հոգու ամենահեռու արահետներում պահված ուրույն պիետետը այդ տարօրինակ, բայց տաղանդավոր, օտար և միևնույն ժամանակ հարազատ ու հմայիչ դեմքերի նկատմամբ: Այդքան ահա ուժեղ էր Ներսեսի զովերգուի, եկեղեցու ջատագովի, հոգևորականության գաղափարախոսի շատ ավելի ուժեղ կապը հարազատ ժողովրդի ու այդ ժողովրդի պարուհիների և տրագիցիաների հետ: Հետևաբար դուրս է գալիս, որ անգամ քննադատելով Արշակին և Պապին, պատմիչը վարանումներով արձագանքում է երկու դժբախտ թագավորների մասին հյուսված հայրենասիրական զուլցներին:

Եթե Փավստոսը սահմանափակվեր սոսկ հին դեպքերի նկարագրությանը, մենք կարող էինք անուշադրության մատնել այդ նկարագրությունը: Բայց նրա պատմվածքի տոնը, ամբողջ հյուսվածքը, վերջապես յուրահատուկ գույները, մերկացնում են հենց իսկական Փավստոսին: Դրանումն է ամբողջ խնդիրը: Իսկ երբ մենք այդ զուլցներից հետո ավելի մեծ ուշադրությանը անցնում ենք արդեն նրա «Պատմության» մեջ այնքան յուրահատուկ տեղ բռնող Հովհան Եպիսկոպոսի մասին²⁹ հայտնի նովելների քննարկմանը, մեղ համար պարզ է դառնում, որ տարօրինակ այդ պատմիչն այնքան էլ միամիտ ու պրիմիտիվ գրագետ չէ: Ես ասում եմ «նովելների», որովհետև Փավստոսի պատմության մեջ բերված հիշյալ ակնարկները, հիրավի, նովելներ են, հին օրերի ուրույն պատմվածքներ, այդ օրերի քաղաքային նովելներին հատուկ ձևով կառուցված շատ սուր և պատկերավոր ակնարկներ:

Եղե՞լ է արդյոք իսկապես մի Հովհան Եպիսկոպոս, թե ոչ—այդ չէ կարևորը: Կարևորն այն է, որ Հովհանի բնութագրմանը նվիրված առակները ռեալիստական զուլցներ են, որոնք ակնարկվում են իրականում ոչ թե մի առանձին Եպիսկոպոսի, այլ տիպիկական մի հոգևորականի արտասովոր ազա-

²⁹ «Փավստոս Բիւզանդացւոյ Պատմութիւն հայոց», Վենետիկ, 1832, էջ 263—269:

հույժան և անկման մասին: Դրանք իսկական նովելներ են, քաղված հավանորեն հին օրերի որևէ գրական ժողովածուից: Հայտնի եպիսկոպոսների դատափետման նվիրված գրքեր կամ ժողովածուներ կարող էին հրատարակել միայն աշխարհականները կամ աշխարհական քաղաքացիների հետ կապված առաջավոր հոգևորականները: Վանական կալվածատերերի տնտեսական ուռճացումն ըստ երևույթին IV դարումն էլ եղել է ցայտուն երևույթ: Ինքը՝ Փավստոսը չէր կարող, իհարկե, կովի ելնել այդ կալվածատիրության դեմ: Մնում է ուրեմն միայն մի ենթադրություն և այդ ենթադրությունը, թվում է ինձ, այնքան էլ անհիմն չէ: Հերետիկոսական շարժումների ընթացքում, անշուշտ, հյուսվել են որոշ բանավոր գրույցներ եկեղեցական կալվածատերերի մասին, որոնք հետագայում հրապարակվել են կամ առանձին ժողովածուների կամ էլ առանձին հերետիկոս-քարոզիչների գրությունների մեջ: Փավստոսն էլ օգտվելով այդ աղբյուրներից՝ ավելի ուշագրավ նովելները գետեղել է իր պատմության մեջ առանց փոփոխությունների:

Եթե համեմատենք Հովհան եպիսկոպոսի մասին կերտված գրույցները «Պատմության» մեջ նկարագրված մի ուրիշ եպիսկոպոսի բնութագրմանը նվիրված տողերի հետ, կնկատենք մի հատկանշական տարբերություն: Անվանի եպիսկոպոսի մասին Փավստոսը խոսում է որպես իրեն էլ լավ հայտնի անձնավորության մասին: Նա կանգ է առնում կոնկրետ մանրամասների վրա, նկարագրում է այդ եպիսկոպոսի զգեստները, օգտվելով առիթից, ակնարկում է նման ուրիշ եպիսկոպոսների մասին: Պատմիչը նկարագրում է իրեն լավ հայտնի պճնասեր Զավենին և հիշեցնելով, որ այդ Զավենի նման հոգևորականներ շատ կան, կոչ է անում դատափետել դրանց: Հրապարակախոսի նման է գրում նա: Գուցե կարող էր պատմել այդ Զավենի և նրա նման գործիչների մասին և զավեշտական գրույցներ, բայց այս անգամ, միմիայն արձանագրում է փաստերն ու խարազանում:

Երբ մենք շաղկապում ենք Զավենի առթիվ գրված տողերը վերոհիշյալ նովելների հետ, մեզ համար ավելի պարզ է դառնում պատմիչի անշափ ուրույն հայեցությունը: Այնքան էլ միամիտ անձնավորություն չէր Փավստոսը, և ոչ մանավանդ անսխտեմ կերպով զանազան անցքեր գրի առնող գրագետ էր նա: Գիտեր, որ իր գիրքը կարգալու են հայ հասարակության բարձր խավերը: Գիտեր և դիտավորությամբ հիշեցնում էր ազահ եպիսկոպոսների մասին, արձագանքելով ժողովրդական շարժումներին և այդ շարժումների ընթացքում ստեղծված գրույցներին: Դրանումն է ողջ խնդիրը: Որևէ այլ պատմիչի մոտ դուք այդօրինակ ակնարկներ և տողեր չեք գտնի:

ՀՍՍՀ ԳԱ Արեղյանի անվան գրականության ինստիտուտ,
«Գրական-բանասիրական հետախուզումներ», հ. II, էջ 329—374:

Հնագույն հայ թատրոնի մասին մինչև այսօր էլ չկա լիակատար գիտական որևէ մի ուսումնասիրություն¹: Կասկածից դուրս է, որ վաղ թե ուշ մեր մասնագետները կանցնեն կարևորագույն այդ աշխատանքին: Այդ ավելի քան անհրաժեշտ է մանավանդ այժմ, երբ մենք անցնում ենք հայ հին գրականության նախնական փուլերի մանրակրկիտ հետազոտությանը: Հին հայ թատրոնի և ընդհանրապես արվեստի ուսումնասիրությունը այն նշանակություն ունի, որ կարող է օժանդակել նաև հնագույն հայ գրականության տակավին չլուսարձևված էջերի պարզաբանմանը: Անուղղակի կերպով—հակառակ մի քանի բանասերների համառ թերահավատությանը—այդօրինակ հետազոտությունը կարող է հաստատել այն, որ հեթանոս արվեստի կողմից հայերը ստեղծել են նաև իրենց ազգային հեթանոս գրականությունը:

Մի ակնթարթ միայն փոխադրվենք հեռուն: Հեթանոս քաղաքներում եղել է բարձր ճարտարապետություն, եղել են կոստյումներ, մեհենական մատենադարաններ, զեղաքանդակ արձաններ, նույնիսկ զեղարվեստական նկարներ: Կարող էր արդյո՞ք այդ քաղաքների բնակչությունն ապրել առանց գրականության: Հայտնի է այն էլ, որ նույնիսկ քրիստոնեության հաղթանակից հետո հայ հին քաղաքներում կատարելապես չէին վտարվել հեթանոս անցյալից մնացած սովորությունները, տոնակատարությունները, հանդեսները... Փավստոսի մի շարք զեղարվեստական գրվածքներն այնպես են կառուցված, որ շատ հեշտ կարող են ամբողջ պատմությունից հանվել և դիտվել որպես ինքնուրույն ֆրագմենտներ: Ինչո՞ւ չենթադրել, որ Փավստոսը կամ կրկնել է մի որևէ հեթանոս մոռացված հեղինակի անհետացած երկերի որոշ էջերը, կամ թե գրի է առել անգիր ժողովրդական ավանդությունները: Հայտնի է, որ ժողովրդական զանգվածները դարեր շարունակ հավատարիմ են մնում ազգային հեթանոսական հին ավանդույթներին և այդ ավանդույթների նյութն էլ այս կամ այն զուրկությունով ներմուծում երգերի և հեթանոսների մեջ: Քրիստոնեության ժամանակ էլ քաղաքների բնակչությունը չի հրաժարվել ո՞չ հին երգերից, ոչ էլ հելլենո-հռոմեական քաղաքակրթության ազդեցության ներքո ստեղծված դրամատուրգիայից: Երբ Ասողիկը զանգատվում է և խարազանում անհոգ ու շվալտ կյանքով ապրող քաղաքացիներին՝ մենք մի ակնթարթ հիշում ենք Ֆլորենցիայի կենսուրախ քաղաքացիներին խարազանող այն Սավանարրոլային, որի կարգադրությամբ

¹ Հայպետհրատն արդեն տպագրության է հանձնել արվեստի վաստ. գործիչ Գ. Առնյանի «Թատրոնը հին հայերի մեջ» մեծածավալ աշխատությունը, ուր լուսարձանված են հնագույն հայ թատրոնի պատմության գրվածքները՝ սկսած հեթանոսական շրջանից մինչև XIX դարը: Մանոթ. ԽՍԲ.:

այրվում էին արվեստի և գրականության մեծարժեք հուշարձանները: Խորենացու վկայությամբ, հայերն էլ ունեցել են այդպիսի վանդալներ: Քրիստոնյա եկեղեցապետները դարերի ընթացքում ջանացել են ոչնչացնել հեթանոս ազգային կուլտուրայի հետքերը: Չնայած դրան, այժմ էլ մենք կարող ենք գտնել այդ անհետացած կուլտուրայի հետքերը՝ եթե ուշադրությամբ մոտենանք մի քանի նշանակալից բեկորների քննությանը:

Ես կանգ չեմ առնում հայ ժողովրդական և գրեթե միշտ կրոնական այն տոնակատարությունների վրա (Համբարձման տոն, Մաղկազարդ, Տյառներն-դառաչ և այլն), որոնք, ինչպես հայտնի է, իրականում եղել են հեթանոս հին հանդեսների այլափոխված կրկնություններ: Հսկայական և անսպառ մի նյութ է դա, որ պիտի ավելի մանրակրկիտ կերպով հետազոտվի: Այդ նյութը հին հայ թատրոնի պատմաբաններին էլ շատ նոր բան կարող է հաղորդել...

Առայժմ ես կանգ կառնեմ քրիստոնյա արվեստի մի քանի հայտնի կողմերի վրա: Այդ արվեստի, ճարտարապետության և առանձնապես կրոնական հանդեսների մեջ այնքան էլ աննշան տեղ չեն գրավում հեթանոս հին կրոնի, պոեզիայի, արվեստի բեկորները: Հին թատրոնների պատմությանը նվիրված իր մենագրության մեջ բանասեր Լուկոմսկին ասում է, որ թե՛ թատրոնների, թե՛ Պրոպիլեաների ճարտարապետությունը եղել է հույների կրոնական արվեստի ճյուղերից մեկը: Կրոնական տոնակատարությունները սկզբնական ելակետներ են հանդիսացել բեմական ներկայացումների համար: Այդ ներկայացումներին նախագահում էր Աթենքի մեծ թատրոնում՝ Դիոնիսի քրմապետը: Հին հռոմեական աշխարհում թատրոնը հեթանոս մշակույթի ժառանգությունն էր և այդ թատրոնի դեմ պայքարելու համար քրիստոնեական եկեղեցին կրոնական ծիսակատարություններին էլ առանձին փայլ ու հանդիսավորություն է տալիս: Եվ ահա քրիստոնեական այդ հանդեսների մեջ էլ հեթանոս կուլտուրայի հետքերը նշմարելի են շատ որոշակի կերպով: Հոմերական տրագեդիայի մեջ «մարդ աստուծո» տառապանքները, արկածները, հաղթանակը խոշոր գաղափարական ելակետներ էին: Միջնադարյան կրոնական թատրոնի մեջ նշմարում ենք միևնույնը—«աստուծո որդու» հողեղեն կյանքն ու հաղթանակն այդ թատրոնի դարգացման առաջին հիմնակետն է լինում: Եկեղեցական ճարտարապետության, ներքին կառուցվածքի, նկարչության մեջ էլ նշմարվում են հեթանոս հին թատրոնների, արխիտեկտուրայի հատկանշական մի քանի դրվագները:

Միջնադարյան թատրոնի մի պատմագիր (Վեսելովսկի) գտնում է, որ ծիսակատարությունների, կրոնական շքերթների, ժողովրդական հանդեսների մեջ անտիկ աշխարհի կուլտուրայի հետքերը շատ խոշոր են եղել միշտ: Նախնի քրիստոնեության անվանի քարոզիչներից մեկը—Տերտուլիանոսը հատուկ մի տրակտատի մեջ առանձին անբավականությամբ էր խոսում մեծ

ժողովրդականություն վայելող հեթանոս պիեսների մասին: Միտո այն համեստ խնջույքները, որ կազմակերպվում էին նախնի քրիստոնյաների ջանքերով, հետագայում դարձան շատ սանձարձակ հանդեսներ՝ դերասանների և երաժիշտների մասնակցությամբ: Եկեղեցիներում բեմադրվում էին նույնիսկ ինտերմեդիաներ: Լատոգիկեի եկեղեցական ժողովը վերջապես ստիպված եղավ արգելել հոգևորականներին՝ մասնակցելու այդօրինակ զայթակղիչ հանդեսներին: Չնայած դրան, թափառող դերասանները մեծ ժողովրդականություն էին վայելում կրոնական-ժողովրդական մեծ հանդեսների ժամանակ: Քրիստոնյա եկեղեցին ի վերջո, ստիպված եղավ համակերպվել ժողովրդական տրագիցիաներին: Ժողովրդական դերասանների օրբստօրե ուժեղացող ազդեցությանը դիմադրավելու նպատակով եկեղեցին ինքն էլ սկսեց օգտագործել հեթանոս թատրոնի պրիոմները և յուրացնելով հեթանոս հեղինակների երկերը՝ աշխատեց սիմվոլիկական-բանաստեղծական գունավորում տալ կրոնական տոներին: Քրիստոսի կյանքը, արկածները և գործունեությունը կրոնական միստերիաների մեջ սկսում են ցուցադրվել ժողովրդական աուդիտորիային հասկանալի ձևով: Քրիստոնյա եկեղեցու անվանի հայրերից Եփրեմ Սիրիսը և Հովհան Ոսկեբերանը այնքան հեռու դնացին, նույնիսկ շատ սանձարձակ բովանդակությամբ հեթանոսական երգերը փոփոխության ենթարկելով՝ դարձրին քրիստոնեական տաղեր: Նույնիսկ Տերենցիոսը օգնության կանչվեց: Մի շարք միստերիաների մեջ ներմուծվեցին ժողովրդական երգեր և առակներ: Մի հին ֆրանսիական միստերիայի մեջ հայր աստվածը հանդես է գալիս որպես «կատակասեր»—ժողովրդական ասացվածքներով և կատակներով: Ավելի ևս ուժեղ էր լինում աշխարհական հայեցողության շեշտը ժողովրդական-կրոնական հանդեսների օրերին: Առանձին հանդիսավորությամբ էին տոնվում հիմարենցի գովերգությանը նվիրված ժողովրդական հանդեսները: Հիմարների պետի գերում սովորաբար հանդես էր գալիս հիմարների վանահայրը կամ եպիսկոպոսը: Մնացյալ բոլոր դերակատարներն էլ զգեստավորված էին մասնակցում ժողովրդական այդ ուրույն բեմակատարությանը:

Սուրբ Ուրբանոսը համարվում էր գինու հովանավորը: Եվ ահա այդ սրբի դերը կատարող անձնավորությունը բազմում էր մի ձևով և հարբածի նման դես ու դեն շարժվելով՝ ընթանում էր ամբոխի մեջ. նրա ուղեկիցներն էլ հարբած մարդկանց նման յուրահատուկ ձոն էին նվիրում գինուն...

Միստերիաները, կրոնական-գրամատիկական հանդեսները, անգամ ֆարսերը ցուցադրվում էին եկեղեցիների մեջ, իսկ երբ եկեղեցական ժողովները արգելեցին՝ ապա փողոցներում, հրապարակներում, շուկաներում...

Լուկոմսկու և Վեսելովսկու մենագրությունների մեջ հիշատակված այդ փաստերը շատ նշանակալից են: Պետք չէ մոռանալ, որ երկու բանասերներն

էլ խոսում են նոր էպոխայի մասին և անգամ այդ նոր պատմաշրջանի մարդկանց մոտ նշմարում են հեթանոս կուլտուրայի ազդեցության հետքեր...

Բնական է ուրեմն, որ մենք առանձին ուշադրությամբ պիտի մոտենանք հայ հին կրոնական գրականության ուսումնասիրությանը, քանի որ հենց այդ գրականության մեջ էլ կարող ենք գտնել անցյալի ուշագրավ կուլտուրայի բեկորներ: Բավական է այստեղ հիշել հայ կրոնական տաղերը՝ մասնավանդ շարականները: Որքան ես հիշում եմ—ժամանակին դեռ Թումանյանն էր իր սրտես աչքերով նշմարել շարականների պատմա-գեղարվեստական նշանակությունը: «Արևազայի» ամբողջ տոնն ու կառուցվածքը ոչ մի կասկած չի թողնում, որ արևին երկրպագող հեթանոս հայերն էլ կարող էին լինել այդ շարականի ստեղծագործողները: Միայն Թումանյանը չի նկատել այդ հանգամանքը: Քրիստոնյա բանաստեղծները քիչ բան չեն ժառանգել հեթանոս իրենց ուսուցիչներից և շարականները կազմելու ժամանակ էլ գիտակցաբար կամ անգիտակցաբար յուրացրել են հեթանոս կուլտուրայի արժեքները:

Միևնույնը կարելի է ասել գուցե և հայ եկեղեցական արարողությունների մասին: Կրոնական միատերիաներն էլ հայտնի են եղել հին հայերին: Թե ինչպե՞ս և ո՞ւմ ազդեցության ներքո են կազմակերպվել եկեղեցական ծեսերը, հաճախ թատրոնական բեմակատարության առանձին հատվածները հիշեցնող կրոնական արարողությունները, այդ մասին կարող են բազմազան կարծիքներ հայտնել հայ եկեղեցական արվեստի պատմաբանները: Այժմ մեզ հետաքրքրում է մի ուրիշ խնդիր: Պատարագն էլ ուրույն թատրոնական հանդես է և դրա համար էլ կարող է ուսումնասիրվել հենց հին հայ թատրոնի միջին էջերի լուսաբանության համար: Կանոց առնելով հայ կրոնական միատերիայի վրա՝ մի ֆրանսիացի բանասեր գտնում է, որ «ավագ շարաթին» կատարվող եկեղեցական արարողությունների մեջ նշմարելի են ոչ միայն նախնի քրիստոնեական եկեղեցու կուլտուրայի, այլ նաև հնագույն հեթանոսական կուլտուրայի շատ ուշագրավ հետքեր: Հին հունական թատրոնի արձագանքը,— ասում է այդ բանասերը,— շատ որոշակի կերպով է հնչում հայ եկեղեցական լիթուրգիայի մեջ: Եկեղեցու սպասավորները հանդես են գալիս որպես դերասաններ: Ամեն ինչ թափել ու կշռել են տաղանդավոր քրիստոնյա արվեստագետները, որպեսզի թատրոնական ձևով կարողանան ավելի ուժեղ կերպով գրավել աղոթողի միտքն ու հոգին: Եվ երբ մեծ թափորի ժամանակ ժողովրդին նետում են վարդեր, աղավախներ են բաց թողնում կամ եկեղեցու բակում խարույկ են վառում—հեթանոսական հին տոների, (Անահիտի և Միհրի) տրադիցիաների ամրությունն ավելի է աչքի ընկնում:

Ո՛չ այդ ուշագրավ դիտողությունների հեղինակը և ո՛չ էլ մասնավանդ հայ բանասերները մինչև հիմա չեն քննել և վերլուծել հայ եկեղեցական

արվեստի կապակցությունը հեթանոս անցյալի կուլտուրայի հետ: Սակայն մի բան ակներև է: Որքան էլ ինքնուրույն և տաղանդավոր լինեին հայ կրոնական երաժիշտները, երգիչները, բանաստեղծները, ամբողջ եկեղեցական արարողությունը, ստեղծագործողները, այնուամենայնիվ չէին կարող կտրվել ո՛չ հարեան ժողովուրդներից, ո՛չ էլ բուն ազգային հեթանոսական կուլտուրայի ազդեցությունից: Մտն ասում է, որ քրմապետներից շատերը դարձան քրիստոնյա: Հին հունական թատերական արվեստի հետ կապված հեթանոսական ծիսակատարությունների ուրույն ոճն ու կոմպոզիցիան, թեկուզ հենց այդ միջնորդների միջոցով, կարող էր ու պիտի սողոսկեր քրիստոնյա արվեստի մեջ էլ: Թե որքան ուրույն բնույթ էին կրում հեթանոսական հանդեսները հին հայերի մեջ, այդ մասին կան շատ անկատար տեղեկություններ միայն Ազգաբանագիտի մոտ: Այդ տեղեկություններն ուշագրավ են այն կողմից, որ պարզում են տոների համապետական-համաժողովրդական նշանակությունը: Սպիտակ ցուլերի պաշտամունքը նույնիսկ մնում է քրիստոնեական մի երկու մենաստանում:

Այդպիսով, թե՛ կրոնական տաղերի, շարականների, ծիսակատարությունների և թե՛ ամբողջ կրոնական արվեստի մեջ մենք նշմարում ենք հեթանոս կրոնական-թատերական հանդեսների ազդեցության հետքեր:

Քրիստոնյա եկեղեցին՝ հակառակ իր հղորդությանը՝ չի կարողանում վերջնականապես հաղթահարել «հին աստվածներին»: Աշտիշատի եկեղեցական ժողովը՝ Փավստոսի վկայությամբ՝ հատուկ որոշում է հանում հեթանոսական ծիսակատարություններին հետևողների դեմ և խստիվ արգելում է... Լաց ու կոծ անել մեռելիների վրա, անկաբզ շարժումներով և ոճրագործությամբ սուղ կատարել... Հետագայում՝ V դարում, Շահապիվանի հայտնի ժողովը նորից հաստատելով այդ կանոնը՝ առանձին քրեական սանկցիաներ հաստատեց ազատների ու շինակառուների համար...

Հին հեթանոսական մեհյանների մոտ հավաքվում էին բազմահազար ուխտավորներ և կատարում էին մեծ հանդեսներ՝ երաժիշտների, գուսանների, պարուհիների մասնակցությամբ: Հաճախ, այդօրինակ հանդեսների ամբողջ արարողությունն ու ծրագրերը մշակում էին հմուտ արվեստագետները: Ազգաբանագիտի նկարագրած հանդիսավոր թափորն քստ երևույթին հենց այդպիսի հանդես է եղել: Բայց ժողովրդական հավաքույթների հանդեսներին, հին օրերին հանդես էին գալիս նաև, այսպես կոչված, «ինքնագործ արվեստի» ներկայացուցիչները: Թե ինչպիսի տոն ու բնույթ էին կրում այդ հանդեսները, այդ մասին կարելի է դատել քրիստոնեական դարաշրջանի ուխտավորների հանդեսների նկարագրությամբ նվիրված պատմություններից: Բաֆթու «Կայծեր»-ի մեջ կա մի այդպիսի նկարագրություն: Պերճ Պոռչյանն էլ, հայ ուրիշ հեղինակներ էլ բավական մանրամասն նկարա-

գրել են ժողովրդական այդ հանդեսները: Մինչև վերջը քրիստոնյա եկեղեցու հայրերը չեն կարողացել հաղթահարել ժողովրդի հեթանոսական անցյալից մնացած տրադիցիաները: Եվ այդ ամենը, ինչ պատմում է Վեսելովսկին, եվրոպական միջնադարի ժողովրդական հանդեսների, տոների, դերասանների, խեղդատակների մասին՝ եղել է նաև հայերի մեջ: Երբեք—անգամ քրիստոնեություն կատարյալ հաղթանակի օրերին—եկեղեցական հայրերը չեն կառուցացել վտարել ժողովրդական սովորությունները: Այդ կողմից շատ ուշագրավ են այն հիշատակությունները, որ գտնվում են եկեղեցական կանոնների մեջ՝ նման հանդեսների մասին: Դվինի 4-րդ եկեղեցական ժողովը, օրինակ (648 թ.), հաստատել էր հետևյալ կանոնը՝ «...Ոմանք ազատաց և ուսմիկ հեծելոց հասանելով ի գեղս ուրեք, թողեալ զգեղն ի վանսն առնեն զիջևանսն և հարկս սրբոցն զուսանսք և վարձակաւք պղծեն զնվիրեալ արդիոն աստուծոյ, զոր սոսկալի է քրիստոնեից լսել թող թէ առնել»: Այդ կանոնից երևում է, որ արգելվում էր զուսաններին և պարուհիներին վանք տանել և այդտեղ պահել: Խոսքը վանքում իջևանելու մասին է: Ըստ երևույթի զինվորականներն այնքան էլ հեշտ կերպով չէին հպատակվում կանոններին:

Կա մի ուրիշ կանոն՝ ավելի կտրուկ և խիստ: Դա Մանդակունու այն կանոնն է, ըստ որի աշապես կոչված ձեռնածուները զատապարտվում էին երկու տարի ապաշխարել և միաժամանակ հավատացյալ քրիստոնյաներին արգելվում էր գնալ թատրոն կամ ներկա լինել թատերական ներկայացումներին: Խոսքն այն ներկայացումների մասին էր, ըստ երևույթին, ուր բեմադրվում էին կամ կոմեդիաներ, կամ ֆարսեր: Մանդակունին, ինչպես հայտնի է, զազազած էր այդ կոմեդիաների դերակատարներից: Դերասաններին նա պարտադրում էր նույնիսկ երկու տարի ապաշխարել: Ձեռնածուներ անվանելով դերասաններին՝ Մանդակունին ցանկանում էր հիշեցնել քրիստոնյաներին, որ դերասանները, որպես կախարհներ, արժանի են շատ խիստ պատժի:

Այդ որոշումն ուշագրավ է ամեն կողմից: Շատ դժվար է ենթադրել, թե Մանդակունին նկատի ունի այդտեղ հին օրերի «լարախաղացներին» կամ թե նույնիսկ «ֆոկլորալիկներին»: Դրանք վտանգավոր չէին ո՛չ իշխող կարգերի, ո՛չ էլ իշխող հոգևորականության համար: «Լարախաղացները» սովորաբար հանդես էին գալիս Մշո Սուլթան սուրբ Կարապետի հովանավորության մեջ, իսկ «ֆոկլորալիկներն» էլ հին օրերի թատրոններում չէին երևում, այլ՝ փողոցներում: Շատ որոշակի կերպով կարելի է ասել, որ Մանդակունին նկատի ուներ գրեթե բացառապես այն դերասաններին, որոնք հանդես էին գալիս ծաղրաբանողների, գուցե կլոունների, կատակաբանների դերում և ձայնակցում էին այս կամ այն չափով իշխող կարգերի դեմ բմբոսաբոցներին:

Եթե մենք համեմատենք Դվինի ժողովի որոշումը Մանդակունուն վերագրվող կանոնի հետ՝ կտեսնենք շատ ուշագրավ մի տարբերություն: Դվինի ժողովը ոչ մի խոսք չի ասում այն զուսանների և պարուհիների կամ դերասանների մասին, որոնք վանքերի պատերից դուրս, անգամ վանքի մոտ գտնվող գյուղի տարածությունն սահմաններում, ցուցադրում էին իրենց շնորհքը ժողովրդին: Խոսքը միայն այն զուսանների և դերասանների մասին է, որոնք բարձրաստիճան կամ թե նույնիսկ սովորական զինվորականների առաջարկով՝ հրավիրվում էին ներկա լինել վանքում և այդտեղ էլ երգել և կամ խաղալ... Հետևաբար, կարելի է ենթադրել, որ եղել են օրեր կամ տարիներ, երբ հայ վանքերում էլ կրկնվել է հենց այն, ինչ պատմում է Վեսելովսկին եվրոպական միջնադարի եկեղեցիների մասին: Դվինի կանոնը քրեական ոչ մի սանկցիա չի սահմանում, այլ միայն արգելում է: Մանդակունին և՛ արգելում է, և՛ բավական խիստ էլ պատիժ սահմանում:

Մանդակունու հայացքների բնութագրման համար խոշոր արժեք է ներկայացնում նրա հայտնի ճառը դերասանների մասին («վասն աճօրեմ քատերաց դիվականաց»): Այդտեղ բարձրաստիճան եկեղեցական ամենից առաջ հայտարարում է, որ թատրոնը պոռնկությունը նպաստող մի ազդակ է: Հիշատակելով խնջույքների ժամանակ կատարվող թատերական հանդեսները՝ նա առանձին անբավականության մեջ հարձակվում է «դիվանագների» վրա, և «մոռոխալքյուն» ու «գարչարանալքյուն» է համարում դերասանների կուլյթները: Մեծագույն զայրույթով նա պատմում է, որ այդ դերասանները «դիվահարներն» նման կոտորատվում են, անարգում կամ ձաղկում: Ինչպես երևում է՝ խոսքը ոչ միայն միմոսների մասին է, այլ նաև սատիրայի ու կոմեդիայի մասին: Ըստ երևույթին շատ հաճախ հայ հին կոմեդիաներն ուղղված լինելով աշխարհական կամ հողեր ֆեոդալների դեմ՝ շարժում էին տիրապետող կրոնի պաշտոնական ներկայացուցիչների կատաղությունը: Կարող է պատահել, որ հելլենական կուլտուրայի ազդեցության ներքո կրթված հեթանոս հայերն էլ ունեցել են իրենց սեփական Արիստոֆանները կամ ալեքսանդրիական կենցաղագիրների նման հեղինակներ: Եթե եղել են թատերական ներկայացումներ՝ պիտի լինեին և պիեսներ: Ես այստեղ կանգ չեմ առնում Պլուտարքոսի հայտնի ակնարկի վրա: Եվրիպիդեսի «Բաբուսուհիներ»-ը ինչպես հայտնի է, բեմադրվել է Արտավազդի կարգադրությամբ՝ Հին Հայաստանում: Հույն մեծ դրամատուրգի այդ պիեսի բեմադրությունն արդեն վկայում է, որ թատրոնական արվեստը ունեցել է զեղարվեստական ճաշակով օժտված մի աուդիտորիա՝ հեթանոսական անցյալում:

Հայ հին պատմիչները խոսում են հատուկ դերասանների մասին և կանգ են առնում առանձնապես միմոսների, խեղդատակների, շաղակրատների վրա: Թատրոնական ներկայացումները հաճախ կրել են ժողովրդական մեծ

հանդեսների բնույթ: Երկայացումներին մասնակցել են նույնիսկ կանայք՝ հատուկ դերասանուհիներ: Դրանք պրոֆեսիոնալ դերասանուհիներ էին՝ երաժիշտներ, պարուհիներ, որոնք իրենց աշխատանքի համար հատուկ վարձատրություն էին ստանում: Կա շատ ուշադրավ հիշատակություն միևնույն Փափատոսի մոտ—դերասանական խմբերի մասին (հացկատակաց ջոկ.): Դերասանուհիների մասին վկայում են ուրիշ աղբյուրներ ևս: Խորենացին, օրինակ, պատմում է ձեռքերով երգող պարուհիների մասին²:

Կարելի է ենթադրել, որ ձեռքերով երգող այդ պարուհիներն էլ հունական պանտոմիմի դերասանուհիների նման պարի ու պլաստիկական շարժումների միջոցով նկարագրում էին թե՛ հոգեկան հույզեր, թե՛ հերոսական կամ դավելշտական տեսարաններ: Դերասանուհիները կոչվում էին երգեցիկ, այն պարագաներին, երբ միաժամանակ հանդես էին գալիս երգչուհիների դերում: Եղիշեն մեծագույն զայրույթով է խոսում պարուհիների մասին («կարավը լիտոթեան»), իսկ Մանգակունին նկարագրելով իրեն հատուկ ոճով «լիտի բազմականաց մեջ» հանդես եկող հացկատակներին՝ ասում է... «Ջամենեսեան աղտով բերանոյն զազրացուցանեն. և զոմանս հայհոյեն. զոմանս բամբասեն, զոմանս թշնամանէ և զոմանս ձաղկէ...»:

Այդպիսով, հեթանոսական էպոսի երգիչների՝ գուսանների, ապա երաժիշտների, պանտոմիմի դերակատարուհիների, միմոսների կողքին տեսնում ենք խեղկատակներ, հացկատակներ, սլարուհիներ, պարուհիներ, մի խոսքով՝ անտիկ քատոնի բոլոր հիմնական մասնակիցներին: Հայ հին պատմիչների մոտ այդ մասնակիցները, գրեթե բոլորն էլ, հիշատակվում են: Հետևաբար, հին հայ թատրոնում, քրիստոնեության վերջնական հաղթանակից հետո և քրիստոնեության տիրապետության օրերին, բնագրվել են բազմաթիվ պիեսներ՝ կազմված անտիկ դրամայի և կոմեդիայի հատուկ պրիմներով: Հեթանոս իր աստվածների արձանները քանդակող կամ նույնիսկ ձուլող հին հայերին չէր վարող անձանոթ լինել ո՛չ հունական, ո՛չ էլ հռոմեական թատրոնի բարձր արվեստը: Պատահական չէր և հայ հեթանոսների պանթեոնում գեղարվեստների հատուկ պաշտպանի ու հովանավորի՝ Տիր աստծու ներկայությունը: Ալիշանի մեկնության համաձայն Տիրը համարվում էր «գիտությանց, դպրության, պերճախոսության ազգեցող կամ պաշտպան» (ըստ Ազաթանդեղոսի՝ «անուանեալ զիվան գրչի Ռեմզղի ուսման նարաարութեան մեհեյան»):

Խորենացուն վերագրվող «Պիտոյից Գիրքը» նշանակալից է այն կողմից, որ հաղորդում է տեղեկություններ հին հայերի գեղարվեստական ճաշակի մասին: Եթե Մանգակունին զայրացած նշմարում է միմիայն լիտի բազմակա-

նաց մեջ «խեղկատակորեն նախատող» շաղակրատներին, ապա Խորենացին և կամ հիշված երկասիրության անհայտ հեղինակը հանդես է գալիս մի որոշ շափով հեթանոս հին կուլտուրայի երկրպագուի դերում:

«Պիտոյից Գիրքի» մեջ հարգանքով է խոսվում անտիկ աշխարհի երկու մեծ գործիչների մասին: Կանգ առնելով ի միջի այլոց ողբերգության վրա՝ Խորենացին նկատում է՝ ...«Յոյժ դերազանցեալ քան զամենեսեան Երիպիդէս ձանաչէր ողբերգակ որ ընվզեալ ուռճանայ առասպելականուն ճառիւքն գիր զբազումս ի հոյս քերթողական պարուցն...»:

Ինչպես տեսնում ենք, այստեղ արդեն նշմարվում է միանգամայն այլ վերաբերմունք: Ավելի ևս հետաքրքրական է, որ միևնույն այդ երկասիրության մեջ առանց թշնամանքի է խոսվում անգամ կենցաղային կոմեդիայի այնպիսի մի վարպետի մասին, որպիսին էր Մենանդրը: Շեշտելով, որ «կատակերգության նպատակը» ծաղրն է՝ «Պիտոյից Գիրքի» հեղինակը որոշակի կերպով նկատում է՝ ...«զՄենանդրոս ասեմ զզլուս կատակերգացն», ապա ավելի ևս կտրուկ կերպով ավելացնում՝ ... «զոյժ հռչակեալ կատակերգիս Մենանդրիս»: Երբից չենք տեսնում թշնամական որևէ վերաբերմունք դեպի հեթանոսական թատրոնի և դրամատուրգիայի ներկայացուցիչներն այդ գիտողությունների մեջ: Հարկավոր է այստեղ հիշել այն էլ, որ Մենանդրը եղել է ոչ միայն կենցաղային կոմեդիաների տաղանդավոր հեղինակ, այլ նաև բավական «սանձարձակ» լեզվով գրված երկերի շատ սրամիտ մի արվեստագետ:

Այդպիսով, «Պիտոյից Գիրքի» հեղինակը հանդես է գալիս ոչ միայն որպես դուրացական տրագեդիաների, անտիկ դրամաների և կոմեդիաների, այլ նաև կատակերգությունների երկրպագուի դերում, այնինչ քրիստոնյա մատենագիրները մոլեգնոտ տոնով խարազանում էին թե՛ հեթանոսական թատրոնը, թե՛ այդ թատրոնի բոլոր ներկայացուցիչներին: Մենք տեսնում ենք կարծես հին և նոր մտայնության միջև ստեղծված զաղափարական պայքարի արձագանքը քրիստոնեական գրականության մեջ: Եթե նույնիսկ ընդունենք, որ «Պիտոյից Գիրքը» եղել է լուկ թարգմանություն՝ այդ պարագայում էլ նրա մեծ արժեքը չի նսեմանում: Թարգմանություններն էլ արտագրվում էին բազմաթիվ օրինակներով և տարածվում քրիստոնյա ընթերցողների շրջանում: Խորենացին՝ պիտի ասել՝ միշտ էլ իր «Պատմության» մեջ առանձին խանդաղատանքով է խոսում հեթանոս անցյալի արվեստի մասին: Երբ Մյունչյաց իշխան Բակուրի մոտ Տրդատ Բագրատունին տեսնում է «ձեռքերով երգող» գեղեցկուհի նազենիկին՝ նեավում է այդ գեղուհու վրա: Բակուրն իհարկե կատաղում է: Տրդատը փախցնում է այդ երգչուհուն: Շատ ուշադրավ է, որ նշանակալից այդ էպիզոդի մասին Խորենացին պատմում է մեղմ հումորով: Ինքը՝ Տրդատը, բավական վայրենի մարդ էր, ապստամբ և նույնիսկ,

² Խորենացու մոտ—«Երգելը ձեռամբ»:

ինչպես Խորենացին է պատմում, «այլ սրտեա և ուժեղ, կարճ հասակաւ և գծուծ տեսիւմը»: Նա իր կնոջն էլ գանակոծում է և վննդում՝ «հրամայէ քաշել արտաքս և ընկենուլ ի սենեկէն»: Եվ ահա, շնայած դրան՝ քրիստոնյա և արդեն ծեր Խորենացին ուրույն հիացումով է կարծես պատմում այդ մասին: ...«Եվ անդ էր, — ասում է Խորենացին, — տեսանել նոր զոման Ողիսես՝ զՊենելուպա զսեղեխն սատակելով, և կամ զԼապիթեացն և զյուշկապարկացն կոխու ի վերա Պերիթեա հարսանեացն...»: Ամբողջ խնջույքի և էպիզոդի նկարագրութեան մեջ մենք նշմարում ենք շատ երիտասարդ ու հեթանոս արվեստի երկրպագուի դեմքը ավելի քան որոշակի կերպով: Մանդակունին, իհարկե, այդպես չէր պատմի երբեք:

Հասարակ այն հանգամանքը, որ քրիստոնյա մատենագիրները մեծագույն ուշադրություն հատկացնելով «խեղկատակներին» քննադատութեանը՝ թելադրում են բարձրաստիճան հոգևոր պետին հանդես գալ հատուկ մի ճառով՝ «անօրեն թատերական դիւահարներին դեմ» ակնհայտնի պարզութեամբ ցուցադրում է, որ մեհյանները քանդող և մեհենական հարուստ մատենադարաններն այրող քրիստոնյա ղեկավարներին այնքան էլ հեշտ կերպով չէր հաջողվել հաղթահարել հեթանոս արվեստի ավղեցությունը:

Քատրոնի և դերասանների շուրջը ստեղծված տարբեր կարծիքները ցույց են տալիս, թե որքան ուժեղ է եղել քրիստոնեական Հայաստանում հեթանոսական հին կուլտուրայի հմայքը:

Ոչ միայն իշխանները և ազնվականները, այլ նույնիսկ քաղաքների հոծ բազմությունն ուրախությամբ էր ընդունում հեթանոս թատրոնի ներկայացուցիչներին: Պատմիչների ակնարկներն ու անցյալի դերասանների դեմ ուղղված դիտողությունները ապացուցում են, որ քաղաքներում գուսանները, հացկատակները, պարուհիները, խեղկատակները և հին թատրոնի մնացած դեմքերը ունեցել են երկրպագուների մեծագույն աուդիտորիա: Մի՞թե կարելի է այդ բոլորից հետո ասել կամ ենթադրել, թե հեթանոս հայերը ժամանակին չեն ունեցել իրենց սեփական դրամատուրգիան և ինքնուրույն գրականությունը: Իմ ակնարկի մեջ ես շատ թուուցիկ կերպով միայն կարողացա արձանագրել շատ հայտնի մի քանի փաստեր: Այդ հասարակ և շատ անգամ արդեն հիշատակված փաստերն էլ թելադրում են առանձին ուշադրությամբ մոտենալ հայ կրոնական գրականության ուսումնասիրությունը: Ինձ թվում է, որ հայ հին թատրոնի պատմության հնագույն այդ էջերն անուղղակի կերպով օժանդակում են նաև նրանց, որոնք որոնում են հեթանոս հայ գրականության հետքերն ու մնացորդները:

«Սովետական արվեստ», Երևան, 1941, № 1, էջ 50:

ՀՍՍՀ Պետական Զեռագրատուն—Մատենադարանի գիտական աշխատակից Շ. Նազարյանի ջանքերով պատրաստված «Պատմություն Յարման մանկանն»¹ հայկական պոեմը նշանակալից գեղարվեստական գործ լինելով հանդերձ, շատ արժեքավոր կուլտուր-պատմական վավերագիր է: Գիտական նոր տեքստը պատրաստվել է ինը ձեռագրերի ամենամանրակրկիտ ուսումնասիրություն վրա: Տեքստին կցված են նաև նախաբան և ապա բառարան: Նախաբանը հակիրճ լինելով հանդերձ, շատ բովանդակալից գիտական հետազոտություն է՝ լեզուն թե՛ փաստական ուշագրավ տվյալներով և թե՛ կարևոր դիտողություններով: Շ. Նազարյանը մանրամասն կանգ է առնում պոեմի հին ձեռագրերի, տպագիր երկու հրատարակությունների, պոեմի առթիվ արտահայտված հիպոթեզների ու կարծիքների վրա:

Արտասահմանում ներկայումս զանազան մատենադարաններում կան պոեմի չորս ձեռագրեր: Հայտնի են երկու տպագիր հրատարակություններ— Պոլսում 1724-ին և ապա Փարիզում՝ Ա. Չոպանյանի «Անահիտ» հանդեսի էջերում: Վերջին հրատարակության համար հիմք է ծառայել Փարիզի ազգային Մատենադարանի հայկական ձեռագրերի ֆոնդի հայերեն մի ժողովածու (ընդօրինակված XVII դարում): Ժամանակին նշել է պոեմի մեծ նշանակությունը հայտնի ֆրանսիական դիտնական Մակլերը:

Մատենադարանի նոր հրատարակությունը եզակի արժեք ունի ամենից առաջ հենց նրա համար, որ խարսխված է ինը ձեռագրերի ուսումնասիրության վրա: Մակլերը իր ձեռքի տակ ունեցել է միմիայն մի ձեռագիր և այն էլ բավական թերի մի ձեռագիր: Մատենադարանի ձեռագրերը օրինակվել են XV դարում (մի տարբերակը) և ապա XVII, XVIII, XIX դարերում: Արտասահմանյան ձեռագրերից մեկը օրինակվել է Թոքթաթում (1563-ին), իսկ մյուսը՝ Խարբերդում (1564-ին): Կասկածից դուրս է, որ ժամանակին պոեմը կերտվել է հայ քաղաքացիների միջավայրում: Շատ բնորոշ է պոեմի ընդհանուր կորոնիտը: Աչքի է ընկնում ավելի քան որոշակի կերպով անհայտ հեղինակի կենսատենչ մտահայեցությունը: Թե ե՞րբ է կերտվել այդ պոեմը և ո՞վ է եղել պոեմի առաջին հեղինակը, այդ մասին հայագետները պարզորոշ որևէ տեղեկություններ չեն հաղորդում: Շ. Նազարյանը ենթադրում է, որ պոեմը պետք է ծանոթ լիներ հայ հնօրյա լրիբերցողներին տակավին XIII—XV դդ.: Այդ ենթադրությունը չի կարող տարակարծություններ ստեղծել: Մեր կարծիքով

¹ «Պատմություն Յարման մանկանն», միջնադարյան պոեմ, հրատ. պատրաստեց Շ. Նազարյան, ՀՍՍՀ Մինիստրների սովետին կից Պետական Զեռագրատուն—Մատենադարան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1957, էջ 194:

չի սխալվում Շ. Նազարյանը, երբ ծանրանալով մինչև այսօր չհասցնաբերված պարսկական ինչ-որ «նախնական» ձեռագիր աղբյուրը հիշատակող գիտնականների հիպոթեզի վրա, շատ կտրուկ կերպով ընդգծում է, որ պոեմը եղել է հայ բանաստեղծի ստեղծագործություն: Համենայն դեպս շատ ուշագործ պիտի համարել այն, որ պոեմը ընդօրինակվել է մի քանի անգամ հայ գրիչների կողմից, ընթերցողներ է գտել հայաբնակ հին քաղաքների հայ քաղաքացիների միջավայրում, նույնիսկ ժամանակին ըստ երևույթին նկարագրողվել է:

Պոեմի հիմնական սյուժետը չի զանազանվում միջնադարյան քաղաքային պոեմների սյուժետներից: Այդտեղ նկարագրվում են մանուկ Ֆարմանի կյանքի դրվագները, նրա մանկությունը, հոգեկան ապրումները, շրջապատի մարդիկ: Արևելյան հերոսական պոեմների տրագիցիոն հերոսների նման Ֆարմանը սիրում է գիտությունը, հարգանքով է մոտենում գիտություն ներկայացուցչին, հետագայում յուրացնում է ռազմական գիտելիքներ և ապա հանդես է գալիս որպես հումանիտար մտածող և մարդկայնության-ընկերաբարություն շատազուգ:

Պատմության «ոճը» և ընդհանրապես խոսելաձևը ցույց են տալիս, որ հեղինակը գրող ու գիտուն գործիչ է—գեղարվեստական նուրբ ճաշակի տեր անձնավորություն: Պոեմը գրված է աշխարհիկ ու «հողեղեն» լեզվով: Անուշյգ է ինտոնացիան և կենդանի առանձին դեպքերի նկարագրությունը: Աչքի է ընկնում նաև հարուստ բառապաշարը: Շ. Նազարյանը նշում է առանձնապես բարբառների հմուտ օգտագործման շնորհիվ ստեղծված գունազեղությունը և նվազայնությունը: Պոեմի հիմնական կերպարները գծագրված են դիպուկ ու պատկերավոր խոսքերով: Ընթերցողը տեսնում է ցայտուն դեմքերի մի պատկերասրահ—«իմաստուն, խելոք և խիկար գործչի» կողքին «ոտովքն արագ, լեզուան ճարտար» Փայփառին: Ապա այդ հերոսների կողքին նշմարում ենք—«սրտով առյուծ և սիրովն եղբայր Շիրինարին» ու նաև՝ «Լուսֆին շաքար և զահրին զերդ քար» Ափիպատկարին: Հերոսների նկարագրության ու բնութագրման համար անհայտ հեղինակը ընտրում է սուր խոսքեր:

Անտեսակ էր կերպով, կարճ հասակով,

Բաց էր լեզուն հրեղեն և խոսքըն շաքրով...

Հիշատակելով բազմաթիվ նմուշներ ու քաղվածքներ, Նազարյանը գրում է հետևյալ, մեր կարծիքով միանգամայն հիմնավորված խոսքերը. «... ըզգացվում է ժողովրդական զրույցների, կենդանի խոսքի շունչը, հմայքը, ձկունությունը...»: Ահա հենց այդ բնութագրական խոսքերին գուցե տեղին կլինեն կցել նաև անհրաժեշտ մի դիտողություն: Ինքնատիպ ոճի ու խոսելաձևի հմուտ ընտրությունը ցույց է տալիս և հաստատում, որ պոեմը կերտվել է տաղանդավոր ստեղծագործողի, հմուտ պոետ-գրողի, ժողովրդի լեզուն մշա-

կող գեղագետի ջանքերով: Նախապես կերտել է պոեմը այդպիսի մի գրող: Այդպես է տպավորությունը: Երբ պոեմի այդ անհայտ հեղինակը նկարագրելով Ֆարմանի ճանապարհորդությունը հակիրճ հաղորդում է, որ «շոտս ավուր ճամփա է դժար ու քար», միայն մի տողի միջոցով զծված պատկերավոր տեսարանից հետո նա գրում է երկու տող ու կերտում արդեն այլաբանական նկարի տպավորություն թողնող մի պատկեր:

Գազանք են յարձակեալ ևւ շուրջ կուգան սար,

Հա շեն թողել, որ աստ յողովն ի տես գար...

(ընդգծումը մերն է—Ա. Կ.)

Հայ հեղինակը կարող էր, իհարկե, օգտագործել «թափառող սյուժետներից մեկը» իրեն հատուկ պրիումներով: Պոեմը նոր «թափառումների» ընթացքում կարող էր նորից և նորից այլափոխվել գուցե և հայաբնակ քաղաքների միջավայրում: Սակայն, հիմնական մշակումը, կասկածից դուրս է, ձեռնարկվել է նախնական այն օրինակի միջոցով, որի հայկական կոլորիտը արտացոլվել է ձեռագրերի մեջ բավական որոշակի կերպով: Այդպես են մոտավորապես պոեմի այն տողերը, որոնք բացահայտում են «ղարիբական» երգերի ակներև ազդեցությունը պոեմի հայ անհայտ հեղինակի վրա: Քաղաքային հնօրյա զրույցներից քաղված հատվածների նման են հնչում պոեմի մեջ անշափ բնորոշ այն դիալոգները, որոնք թե՛ բնութագրում են հերոսներին և թե՛ միաժամանակ ցուցադրում անհայտ պոետի շատ ուրույն դիրքորոշումը:

Ծանրանալով միջնադարյան տրագիցիոն մենամարտությունների վրա Նազարյանը կանգ է առնում, ի միջի այլոց, միջնադարյան երգիչների մրցությունների վրա: Դա շատ ճիշտ մի նկատողություն է: Հիրավի, «Պատմություն Ֆարման մանկանն» պոեմի մեջ մենք տեսնում ենք նման նկարներ: Սակայն և այնպես մի կարևոր փաստ գուցե և ավելորդ չէր լինի արձանագրել: Խնդիրը նրանումն է, որ հայկական պոեմի մեջ հատկապես շատ ավելի կտրուկ կերպով է բացահայտված դեմոկրատական շեշտը— պլեբեյ-դիտողի ու պլեբեյ-բանաստեղծի շատ ինքնահատուկ մոտեցումը, խոսելաձևը, մտայնությունը: Դա է ամենից բնորոշը նաև նշված դիալոգի մեջ: Ամբողջ ոճը ըստ էության ժողովրդական գրույցների հատուկ ոճն է: Ծնորհիվ պատկերավոր ու դիպուկ խոսքերի, նրբին իրոնիայի և շեքմության միջոցով լեզուի տողերի, աչքի է ընկնում ամենից առաջ ժողովրդայնության շատ ուրույն շեշտը:

Մի ուրիշ խնդրի վրա ևս անհրաժեշտ կլինեն կանգ առնել: Պոեմի տեքստին կցված նախաբանի մեջ Շ. Նազարյանը թուցեցիկ կերպով հիշատակում է «Սասունցի Դավիթ» էպոսն ու հայկական հին քաղաքային առակներն ու նովելները: Սակայն նա միաժամանակ գրում ու շեշտում է, որ պոեմը իրականում «մեզ հասած միակ պոեմն է, ուր լիատես թագավորում է աշխարհիկ կյանքի

շունչը ...»: Այդքան կտրուկ կերպով արտահայտված կարծիքը կարող է ստեղծել որոշ տարակուսանքներ: Պոեմի մեծ արվեստը կոմպոզիցիայի ամբողջունը, հմտագին մշակումը համենայնդեպս պետք է միշտ հաշվի առնվի: Այդպիսի բարձրարժեք գեղարվեստական ստեղծագործությունը երբեք չէր կարող միանգամից և անակնկալ կերպով ստեղծվել ու կիրտվել: Հայկական միջնադարյան քաղաքների միջավայրը ի վերջո անապատ չէր: Բավական է միայն նորից նշել հայ կուլտուրայի հանրահայտ վավերագրերը—հայ ճարտարապետների հուշարձանները, տաղանդավոր ռեալիստ մանրանկարիչների գործերը, միջնադարյան տաղերը, վերջապես հայ ժողովրդական առածներն ու մանավանդ առակներ-նովելները: Հետևաբար միշտ անհրաժեշտ է նկատի առնել, որ եղել են գեղարվեստական ստեղծագործություններ, որոնց հետքերը, կամ, ավելի ճիշտ, «բեկորները» հնարավոր է և՛ որոնել, և՛ գտնել նույնիսկ կրոնական հին ժողովածուների, ապոկրիֆական հայկական պատմվածքների, քարոզազրբերի մեջ: Քիչ աշխատանք չեն կատարել հայագիտության ներկայացուցիչները շեշտված վավերագրերի բացահայտման և գիտական ուսումնասիրության ուղղությամբ: Բայց այսօր էլ չի կարելի ասել առանց վարանումների, որ հայ ժողովրդի հարուստ կուլտուրայի պատմության բոլոր էջերը քննարկված ու լուսաբանված են լիովին և միանգամայն կատարյալ ձևով: Աշխատանք տակավին շատ կա: Երիտասարդ բանասերների համար էլ առանձնապես շատ աշխատանք կա: Գաղտնիք չէ ամենևին, որ նույնիսկ մեր հին տպագիր գրքերը սպասում են բանասերներին: Ես էլ չեմ խոսում հայ անշափ հարուստ պարբերական մամուլի էջերում ցրված բազմաթիվ նյութերի, աշխատությունների մասին: Ե. Նազարյանը սկզբում թերթել և ուսումնասիրել է նույնիսկ տպագիր հրատարակությունները: Ուշադրությամբ մտտենալով տպագիր հրատարակությունների քննարկմանը և ապա հրապարակված ուսումնասիրությունների հետազոտությանը, նա անցել է արդեն ձեռագրերի մանրակրկիտ քննությանը և նոր գիտական տեքստի պատրաստման գործին: Այդ աշխատանքների ամուր հիմքի վրա նա կառուցել է նաև իր «Նախաբանը», ուր արդեն արժարժվում են միջնադարյան պոեմի առթիվ հարուցվող կարևորագույն գրական-պատմական պրոբլեմները: Երկու կարծիք չի կարող լինել այդ տիպի բանասիրական աշխատությունների կարևորության և նշանակության մասին: Ողջունելով նաև մեր Մատենադարանի նախաձեռնությունը, մենք կուզենայինք միայն հարցադրման ձևով տարակուսանք հայտնել պոեմին կցված հատուկ գունավոր նկարների մասին: Եթե այդ նկարները կցված են եղել մի ձեռագիր բնագրի, անհրաժեշտ էր հիշատակել իսկական աղբյուրը: Եթե դա միմիայն «մշակում» է, ավելորդ չէր լինի նշել: Թե ո՞վ է մշակել և իսկական նախնական նկարների մեջ «փոփոխություններ» մտցնելը ինչպես է հիմնավորում հատկապես ինքը՝ «մշակողը»: Մեր կարծի-

քով տեքստերի գիտական հրատարակությունների ընդհանուր «ոճը» զգալի չափով խախտվում է, երբ իսկական նկարների փոխարեն տեքստերին կցվում են «մշակված» նկարներ...

«Գրական թերթ», Երևան, հունիսի 9, 1957 թ.:

ՄԵՄ ՀՈՒՄԱՆԻՍՏ-ԳՐՈՂ ՀԱՅՈՒ ՊԱՐՈՆՅԱՆԸ

Հակոբ Պարոնյանը ոչ միայն մեծատաղանդ գեղագետ-երգիծաբան էր, այլ նաև խոհուն հրապարակագիր: Հ. Պարոնյանի կյանքի և գործի պատմության էջերն ուսումնասիրող զրականագետները պետք է անհրաժեշտ չափով հաշվի առնեն նրա բազմաթիվ աշխատությունների հանրագումարի կարևորագույն հատկանիշը-ուղղությունը: Երբ մենք քննում ենք բանաստեղծի կամ նույնիսկ նկարչի ստեղծագործությունները, ավելի հաճախ, ուսումնասիրում ենք նաև գեղագետի մտահայեցողությունը: Ինքնին արդեն պարզ է, որ Պարոնյանի նման հումանիստ-մտածողի հայեցողյան հիմնական երանգների լուսաբանությանը նույնպես պետք է նվիրվի անհրաժեշտ ուշադրություն...

I

Հակոբ Պարոնյանը և՛ գեղագետ էր, և՛ հրապարակագիր: Նրա երկերը ծանոթ էին արևմտահայ ղեմոկրատիայի առաջավոր ընթերցողների ամենալայն շարքերին: Իր գրական-ստեղծագործական աշխատությունները Պարոնյանը կերտել է շատ ծանր պայմաններում—երկրադնդի դաժան դեպքերից մեկի՝ տաճկական սուլթանատի բռնակալության օրերին: Ազդեցիկ և հարուստ մեկենասներ չի ունեցել:

Եստ ուշագրավ է այն, որ Հակոբ Պարոնյանը հարազատ ու սիրելի գրող էր ոչ միայն արևմտահայ, այլ նաև արևելահայ ղեմոկրատիայի ամենալայն շարքերի համար: Կարելի է ավելին ասել: Կարելի է նշել մեծատաղանդ հումանիստ-երգիծաբանի շատ ավելի մեծ կապը արևելահայ ընթերցողների հետ:

Պարոնյանի երկերի լեզուն արևմտահայերի գրական նոր լեզուն էր, մշակված և հարուստ, պատկերավոր ու ձկուն այն գրական լեզուն, որի նրբին երանգները բացահայտում էին վերելքի ուղին բռնող առաջավոր մտավորականների բազմերանգ մտայնությունը: Պարոնյանի երկերի թեմատիկան ու բովանդակությունը, սյուժեներն ու կերպարները, ինքնահատուկ միջավայրն ու տեղական կոլորիտը կարծես պետք է նույնպես օտարոտի լինեին կովկասահայ ընթերցողների համար:

Այնուամենայնիվ, որքան էլ այդ զարմանալի չէ, շատ շուտ Պարոնյանը զանում է կովկասահայ նոր իրականության մեջ անշափ ժողովրդական և

հայտնի գրագետ: Ամենուրեք նրան և՛ կարդում, և՛ ուսումնասիրում են մեծ սիրով: Պարոնյանի երկերի կերպարները կարծես համարվում են արևելահայ միանման կերպարների սիմվոլիկական կրկնատիպարներ: Նրա դիպուկ և թե-վավոր խոսքերը մեկնաբանվում են առանձին ղեպքերում, որպես մարտական և իմաստալից ակնարկներ՝ ուղղված արդեն արևելահայ իրականության մթին երևույթների դեմ:

Արևմտահայ մեծ երգիծարանի տաղանդավոր երկերի լեզուն այնքան էլ դյուրամատչելի չէր արևելահայ կամ կովկասահայ ընթերցողների համար:

Սակայն և այնպես Պարոնյանի երկերի իրական իմաստը, կերպարների բնույթը, ուղղության կարևորագույն հատկանիշը, մոտիկ ու դյուրամատչելի, հարազատ և նվիրական էին ասիական հին կուռքերի դեմ ծառայող կովկասահայ հասարակության լայն ժողովրդական շարքերի համար: Հաճախ հին Ստամբուլի հայ «մեծատուն աղաների» դեմ ուղղված քննադատությունը մեկնաբանվում էր որպես «հայրենի» կովկասահայ իրականության մեջ իշխող «աղաների» քննադատություն: Մերթ ընդ մերթ Պարոնյանը դառնում էր նաև անիրավ համայն հին աշխարհի դեմ կովի ելնող հայ նոր դեմոկրատիայի պատգամախոս...

Երբ սեփականատիրական կարգերը տապալվում են, և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի շնորհիվ ստեղծվում է ազատագրված հայ ժողովրդի նոր իշխանությունը—Սովետական Հայաստանի ամրակուռ շենքը՝ ընթերցողների համար ավելի բացահայտ են դառնում Պարոնյանի հումանիստական բարձր մտահայեցության հատկանիշները: Պատահական չի կարելի համարել այն, որ բազմաթիվ և բազմահարուստ զաղութահայ օջախներում կուտակված իրենց «հայրենասերներ» համարող մտավորականները մինչև այսօր ոչ մի քայլ չեն արել մեծատաղանդ երգիծարանի երկերի և էպիստոլյար ժառանգության խմբագրման ու հրատարակության համար: Այնինչ Սովետական Հայաստանի բանասերներն ու գրականագետները պատրաստել են թե՛ սովոր ժողովածուներ և թե՛ բազմազան ուսումնասիրություններ:

Ներկայումս լույս են տեսել Պարոնյանի երկերի երկրորդ հրատարակության մեծագիր հատորները: Հատկանշական է այն, որ այդ հրատարակությունը պատրաստող բանասերներն անհրաժեշտ և հնարավոր են համարել ուշադրությամբ քննել նույնիսկ արևմտահայ պարբերականների էջերում ղետեղված նյութերի, առանձնապես Պարոնյանի տպագիր երկերի արտասահմանից ստացված միկրոֆիլմերը: Զարմանալի է և այն, որ կարևոր այդ նյութերը և հնօրյա պարբերականների մեջ զեւեղված Պարոնյանի աշխատությունները տակավին չեն գրավել զաղութահայ բանասերների և գործիչների ուշադրությունը: Անհրաժեշտ է ողջունել սովետահայ նոր հրատարակությունը պատ-

րաստող մեր բանասերների-գրականագետների կարևոր նախաձեռնությունն ու մեծ աշխատանքը:

Հետագա նորանոր տրոպուսները կհայտնաբերեն նորանոր վավերագրեր: Գուցե գտնվեն նաև Պարոնյանի անտիպ նոր նամակներ և ձեռագրեր: Կասկածից դուրս է, որ գրական անտիպ վավերագրերը կուսումնասիրվեն ու անհրաժեշտ թափ կհաղորդեն հանճարեղ հայ երգիծարանի կյանքի և գործի նոր հատկանիշների բացահայտմանն ու ուսումնասիրմանը: Պարոնյանի երկերի խմբագրության կողմից առաջադրված շատ հակիրճ դիտողությունը թելագրում է կռահել, որ նորահայտ շատ նյութեր կլինեն և այդ նյութերը կստիպեն պատրաստել ու հրատարակել լրացուցիչ նոր հատորներ: Ցանկություն պիտի հայտնել, որ Պարոնյանի մասին հրատարակվեն նորանոր հետազոտություններ և տպագրվեն նրա ստեղծագործությունների հանգուցային ու բարդ պրոբլեմներին նվիրված գիտական բազմազան ուսումնասիրություններ: Մեզ հասած տեղեկությունների համաձայն հատուկ հետազոտություններ են պատրաստել բանասերներ Աս. Ասատրյանը, Մ. Մկրտչյանը, Ս. Բազյանը, Ա. Մանուկյանը, Գ. Ստեփանյանը: Բազմազան մեկնադրությունները կարևոր են այն կողմից, որ կնպաստեն Հ. Պարոնյանի թե՛ կյանքի բոլոր էջերի ուսումնասիրությանը և թե՛ նրա բառարանի ու լեզվի, ստեղծագործության և մտահայեցության հատկանշական կողմերի բազմակողմանի լուսարանությունը: Թե որքան անհրաժեշտ են նման գիտական մեկնադրություններն, այդ մասին այսօր մանավանդ երկու կարծիք չի կարող լինել:

Խնամքով պատրաստված տեքստերը և ապա տեքստերին կցված մանրակրկիտ ծանոթագրությունները, իհարկե, կգրավեն սովետահայ ընթերցողների ուշադրությունը: Մենք կուզենայինք նշել, որ նույնիսկ լույս տեսած հատորները բավական լավ նկարագրում են Պարոնյանի հասարակական-գրական նկարագրի և մտահայեցության ուշագրավ գծերը:

Հայ իրականության մեջ Պարոնյանը կատարել է իրականում միևնույն դերը, ինչպես զանազան ժամանակ և տարբեր հասարակական-պատմական պայմաններում կատարել են Մովսիսը, Չարլզ Գիլկինսը, Մարկ Տվենը, Շչեդրինը և անցյալի մեծատաղանդ և ուրիշ ակնանավոր հումանիստ գործիչները: Հայ ակնանավոր երգիծարանը մոլեգին պայքար է մղել իշխող կարգերի և բռնակալ ուժերի դեմ: Նա հենվել է քաղաքային դեմոկրատիայի վրա և պաշտպանել շահագործվողների շահերն ու ձգտումները: Նրա միամիտ պատրանքներն անգամ և ուտոպիական անուրջները պետք է գրավեն թե՛ հայ գրականության և թե՛ նույնիսկ հասարակական մտքի ապագա պատմաբանի առանձնահատուկ ուշադրությունը:

Պարոնյանի անողոր ու միշտ ճշմարտախոս գրիչը խոհուն և ռեալիստ նկարչի վրձնի ուժ ունի: Ընթերցողը շատ լավ տեսնում է, որ անհանգուրժե-

լի ու միին երևույթները զայրույթով դատափետող, մարտնչող գրողը շատ ուժգին կապերով միաձուլված է հարազատ ու հայրենի ժողովրդի աշխատավոր խավերի հետ: Կարևորագույն այդ գիծը առանձին գրավչություն է հաղորդում Պարոնյանի հրապարակախոսական մտորումներին և ակնհայտ կերպով լարում է գրականագետ-մարքսիստի մեծագույն ուշադրությունը:

Երբ մենք ջանում ենք մոտենալ գրական վավերագրերին ամենից առաջ անաշու և ռեալիստական դիրքերից՝ թերթում ենք Պարոնյանի երկերը, գրեթե միշտ նշմարում ենք այդ երկերի էջերում արևմտահայ իրականություն նշանակալից պատկերն ու միաժամանակ վաղեմի օրերի հայ հասարակության զանազան շերտերի ու խավերի ինքնատիպ ներկայացուցիչների գիմաստվերները: Ենչտված փաստը նշվել է շատ անգամ անցյալի պատմաբան-բանասերների կողմից: Հայ հնօրյա գրականագիտության նույնիսկ իդեալիստ ներկայացուցիչները շեն կարողացել և շեն ցանկացել քողարկել Պարոնյանի դիտակետի և մտահայեցողության զեմոկրատական հատկանիշներն ու սոցիալական բնույթը: Հակառակ իրենց ցանկություն, ազգայնական բանասերներն անգամ ստիպված են եղել Պարոնյանի հետ միասին՝ բացահայտել և ցուցահանել սոցիալական ներհակ խավերի բախումների դերն ու ազդեցությունը պոլսահայ իրականության մեջ: Նույն այդ ազգայնական գործիչներն ու մտածողները հայ մեծ երգիծաբանի կյանքի նկարագրմանը նվիրված իրենց նկատողությունների մեջ արձանագրել են ռեալիստ-պատմաբանների առաջադրությունները հաստատող հանգամանքների ու փաստերի նշանակությունը: Այլ կերպ մոտենալ թեմային, Հակոբ Պարոնյանի կյանքի ու ստեղծագործության լուսաբանությունը, գրեթե անհնարին էր: Ինքը՝ Պարոնյանը, նշում ու շեշտում էր, որ հայ հասարակությունը միաձուլված հավաքույթ չէ, և որ ինքը ներհակ խավերի բախումները քողարկել չի կարող ու չի ցանկանում: Այդ երևույթը այնքան բացահայտ է, որ չի կարող անուշադրության մատնվել առանձնապես այսօր, երբ իսկական Պարոնյանի ճշգրիտ ճանաչողությանը մոտենալն օրվա հարց է արդեն...

Ամենից զարմանալին այն է, որ թե՛ թեման և նյութը, և թե՛ մեծ երգիծաբանի ամբողջ գրական-հրապարակախոսական գործունեությունը, նրա ինքնատիպ մտահայեցողությունը թելադրում է նույնիսկ մարքսիզմից հետո կանգնած բանասերներին հաշվի առնել հասարակական կեցության և սոցիալական միջավայրի ազդեցության բացահայտ դերն ու նշանակությունը:

Պարոնյանի ռեալիստական աշխատությունների մեջ մենք տեսնում ենք հին օրերի հայ հասարակության պատկերը: Դա ցամաք արձանագրության նման նկարագրված պատկեր չէ: Հանդես գալով վաղեմի իրականության ակտիվ նկարիչ-պատմաբանի դերում, Պարոնյանը արտահայտում է նաև իր

հասարակական մտորումները: Իր աշխատությունների առանձին էջերում նա նետում է նշանակալից նոթեր և տողեր սոցիալական միջավայրի, ներհակ խմբակների, աչքի ընկնող առանձնահատուկ հատկանիշներ. ունեցող խմբակցությունների մասին: Պարոնյանի «Ազգային ջոշեր» ժողովածուի մեջ դժվար չէ գտնել նշանակալից տողեր առանձին «ջոշերին» նվիրված բնութագրական էջերում:

2

Առաջին նվագ կարող է ստեղծվել տպավորություն, թե նա դիտավորությունամբ չի ցանկացել կանգ առնել ավելի ակնառու ամիրաների վրա: Մի շարք արևմտահայ «երեկոյի ամիրաներ» հիրավի շեն նշված նրա կողմից, մասնավորապես այն ամիրանները, որոնց մասին ժամանակին տպագրվել են հատուկ ներբողական ակնարկներ «Բազմավեպի» էջերում: Դա բացատրվում է, մեր կարծիքով, նրանով, որ գրաքննիչները Թուրքիայում չէին թույլատրում անվանի ամիրաների մասին տպագրել որևէ քննադատական ակնարկ: Բացի կառավարական գրաքննիչներից ոչ պակաս չափով ակտիվ էին նաև պատրիարքարանի տրագիցիոն «բարապանները»¹ և մշտաթուն գրաքննիչները:

Չնայած այդ ամենին, շատ և շատ դեպքերում Պարոնյանը կարողացել է իր խոսքն առնել անգամ սուլթանի և պատրիարքարանի հետ անմիջականորեն կապված ազդեցիկ գործիչների մասին: Մամուլի էջերում շատ է նշվել մասնավորապես Կարապետ պեյ Նրամյանին նվիրված լակոնիկ պարբերության արտահայտիչ ինտոնացիան (... ծնված է 1830-ին, կազմով բարեձև, սև ընթվիններով մարդ մ'է: Մզկիթ մը շինել տված է...): Բնորոշ է այն, որ Նրամյանին նվիրված երկտողից հետո Պարոնյանը դիտավորությունամբ և ավելի մանրամասն ծանրանում է Սարգիս Պալյանի վրա և թվարկելով այդ ճարտարապետի ջանքերով կառուցված պալատները, գորանոցները, դպրոցները, քոչքերը, ինչպես նաև երկու մզկիթները, դիտավորությամբ ընդգծում է. «Այս և յուր շինած քանի մը շենքերն աճեցանով և գիտութեամբ կառուցված են»: Միաժամանակ Պալյանին նվիրված էջերում կարդում ենք, որ անվանի այդ «մեծատունը», բացի դպրոցներից և «արվեստով» կառուցված պալատներից, շինել է «թավաղողական մեքենա» և հատուկ «աշխատարան», որ լեցուն էր «բնագիտության և տարրալուծական գործիքներով»:

Ապա ասված է նաև, որ Պալյանը իր աշխատարանում «երեք տարիներ ի վեր բնագիտական ու տարրալուծական փորձերուն կը պարապի»: Պալյանին նվիրված այդ ակնարկը իր ուղղությամբ տարբերվում է մյուս ակնարկ-

¹ Այդ «բարապաններ» բնորոշ կերպարները շատ լավ է կերտել անվանի վիպագրուհի Զապել Եսայանը իր մեմուարների էջերում:

ներից: Ըստ երևույթին, Պալյանը «ջոջերի» շրջանում եզակի դեմք էր, որպես արվեստագետ-ճարտարապետ և մեքենագետ-գիտնական: Ահա այդ էլ թելադրել է Պարոնյանին առանձնահատուկ տոն ու խոսքեր ընտրել Պալյանի բնութագրման համար: Թուր մյուս «Ազգային ջոջերից» առանձնապես Տերոյենցի կամ Հասունյանի² նման գործիչները որոշակիորեն քննարկվում էին, որպես բացասական տիպարներ: Մի քանի ուրիշ անվանի գործիչների մասին կամ նետվում էին մեղմ—բարեկամական շարժի» բնույթ ունեցող ակնարկներ, կամ էլ բացահայտորեն դրական դիտողություններ:

Այդպիսով «Ազգային ջոջեր» ժողովածուն բավական բարդ և յուրահատուկ պրոֆիլ ուներ: Ընդհանուր ևն նկատում Պարոնյանի երկերի նոր հրատարակության խմբագիրները, որ այդ ժողովածուն կարող է համարվել իր «արտահայտչական միջոցներով, գեղարվեստական հնարանքներով, երգիծանքի բազմազանություններով ու գաղափարականությամբ» աչքի ընկնող «բացառիկ երեվույթ հայ նոր գրականության պատմության մեջ»: Տակավին «Փատրոն» պարբերագրի առաջին համարներում Պարոնյանը զետեղել էր կենսագրականներ և վրոպական գործիչների մասին, իսկ 1874-ի սեպտեմբերին արդեն հայտարարել էր «ազգային երևելի» գործիչներին նվիրված «երգիծական կենսագրություններ» նոր շարքի հրատարակության մասին: Նշանակալից այդ ակնարկները նախապես լույս են տեսել զանազան հայ պարբերականների մեջ: Հետագայում՝ 1879—1880 թվականներին Պարոնյանը պատրաստել է երեք փոքրիկ հատորիկներ, որոնք 1891-ին ամփոփվել են մի գրքում և լույս տեսել Թիֆլիսում: Վերջապես, հետագա հրատարակությունների մեջ զետեղվել են նոր ակնարկներ: Պարոնյանի նախաձեռնությամբ 15 ակնարկներին կցվել են նաև ծաղրանկար-պորտրետներ, որոնցից մի քանիսը, ինչպես նշում է խմբագրությունը — անաչառ այնպիսի պորտրետներ են, որ կարող են աղբյուր հանդիսանալ սովյալ անձնավորության կենդանագիրն ունենալու գործում:

Խմբագրությունը չի սխալվում, երբ ընդգծում է Պարոնյանի «Ազգային ջոջերի» աղբյուրագիտական-պատմական կարևոր նշանակությունը: Կասկածից դուրս է այն էլ, որ Պարոնյանը հիմնականում ջանացել է զեպքերին մտաենալ շատ ուշադիր նկարիչ-պատմաբանի դիրքերից: Նրա տաղանդավոր գեղարվեստական ստեղծագործությունների մեջ տեսնում ենք գեղագիտական նշանակալից էջեր՝ հմտորեն հյուսված բյուրեղներ, կոնֆլիկտներ, պատկերներ («Մեծապատիվ մուրացիկներ», «Բաղդասար աղբար»): Երբ այդ երկերից հետո անցնում ենք նրա շատ ուրույն «ուղեգրական» նոթերին կամ մեմուարային ակնարկներին, ապա նաև «Ազգային ջոջերին», ավելի ևս պար-

² Հասունյանին նվիրված էջերը կարող են միշտ գրավել հայ հասարակական մտքի պատմաբանների ուշադրությունը:

զորոշ է դառնում Պարոնյանի մեծ վարպետությունը, հումանիստական հայացությունն ու քննադատական ունակումը:

Ի վերջո, ոչ ոք հին օրերին, իհարկե, չէր ստիպում նրան գրել ու նկարել, հրատարակել պարբերականներ, դատափետել մթին երևույթներ և խարազանել ազդեցիկ, ուժեղ, մոլեղին «մեծ աղաներին» ու դրանց սպասավորներին: Պարոնյանին լավ էր հայտնի, որ «Ազգային ջոջերի» շարքերից ավելի դաժան մարդիկ կարող են նրան հալածել, պատժել, հարվածել: Պարոնյանը շատ հեշտ կարող էր կերտել միմիայն «անմեղ» զավեշտական կոմեդիաներ կամ ծիծաղեցնել պայքարի կրկեսից հեռու կանգնած քաղքենիներին: Դժվար չէր սքողել որոշ դիստնանսները, բողբոջել արտառոց զեպքերի իրական իմաստը, առաձգական տողեր կցել գորշ երևույթների նկարներին: Հակառակ այդօրինակ զգուշավոր և դիվանագիտական ուղեգծի, նա համառ կերպով նկարագծում էր կյանքի պատկերները և մերկացնում, ծիծաղում ու ծաղրում, դատափետում անգամ շատ անվանի գործիչների: Այն, ինչ որ նա գրել ու պատմել է Միսաքյանի կամ նույնիսկ Գրիգոր Արծրունու մասին ցույց է տալիս, որ Պարոնյանին հայտնի էր այդ «հերոսների» ամուր կապը իշխող սոցիալական վերնախավի հետ, և հենց այդ տիպի գործիչների մտայնությունն ու վարքագիծն էլ թելադրում էր նրան բնութագրական դիմագծի համար ընտրել հատուկ գույներ և կտրուկ խոսքեր: Նրա որոշ հերոսներ սոցիալական վերնախավի հետ կապված տիպարներն են, որ շատ հաճախ մամուլի էջերում հիշատակվում են որպես «սոցալատների» հետ կապված «երևելիներ» կամ «բեյեր» ու «մեծ աղաներ»:

Ժողովածուի հերոսներից Խաչատուր Միսաքյանը հայտնի էր որպես անվանի ամիրանների «ընտանեկան» դասատու: Պոլսո ամիրանների հանձնարարությամբ Միսաքյանը Փարիզ էր ուղևորվել ամիրանների զավակների հետ և պետք է դրանց տեղավորեր Փարիզյան դպրոցում: Ըստ երևույթին հենց ամիրաններն էլ նրան անվանել էին «պուետ», թեև այդ «պուետը» սոսկ արևելյան աղաների հավատարիմ սպասավորներից մեկն էր: «Փողոցն ելած ժամանակը,— գրում է Հ. Պարոնյանը,— մինակ չպտտիր, շատ անգամ Օտյան էֆենտիի, Ստեփան փաշայի, Յուսուֆյան էֆենտիի հետ կըպտտիր»: Նման փաստը շեշտելով Պարոնյանը ցանկանում էր հիշեցնել, որ «պուետ» Միսաքյանը Թուրքիայի մայրաքաղաքի պարագիտներին—մակաբույծների շատ առօրյա ներկայացուցիչներից մեկն է: Տերոյենց-Չամուռճյանը նույնպես ամիրա չէր, այլ ամիրանների մի որոշ խմբակի գաղափարախոսը: Պարոնյանի «ժողովածուի» մեջ նման ուրիշ դեմքերը նկարագրվել են նույնպես ակնորոշ ծաղրով: Դրանցից նրանք, որոնք վարել են համեմատաբար անկախ և ինքնուրույն վարքագիծ, ցուցադրված են ավելի անդորր ոգով: Հրապարակագիր Կարապետ Փանոսյանին նվիրված ուրվագիծն, օրինակ, արդեն բարեկամական շարժի

նման էր կերտված և իրականում բացահայտում էր Փանոսյանի դեմքի դրական հատկանիշները: Միանգամայն ինքնատիպ կոլորիտ ունեն Ստեփան Ասլանյանի Հովհաննես Տերոյենցի, Սուքիաս Բազանճյանի և նման ուրիշ «ազգային շոջերի» բնութագրմանը նվիրված ուրվագծերը: Ամենից ուշագրավն այն է, որ բոլոր այդ «պորտրետներին» կողքին նշմարվում է նաև բարձր սոցիալական վերնախավի—ամիրայության դերն ու կշիռը: Պարոնյանը միշտ նշում և հիշեցնում է, որ Թուրքիայի մայրաքաղաք Ստամբուլի բոլոր «կենտրոնական» մասերում ապրում են ամիրաներն ու դրանց հետ կապված «շոջերը», իսկ հեռու թաղամասերում՝ աշխատավորները: Մամաթիա, Միջագյուղ (Օրթագյուղ) և ուրիշ թաղավայրերում հաստատված հայ արհեստավորներն ու «պարզ» մարդիկ բնակչության այն հատվածներն էին, որոնք նշմարում էին աշխարհիկ ամիրաների կապը հոգևոր օլիգարխիայի հետ, բայց չէին վստահում բացերև կերպով հետևողական պայքարի ուղին բռնել ու կովի ելնել աշխարհիկ և հոգևոր իշխանների դեմ: Սահմանադրական շարժման օրերին սկսվում է ակնորոշ և բավական մեծ բեկում: Ստեղծվում է նոր սիտուացիա: Հետզհետե սկսվում է կազմավորվել «ազգային բարեարարների» դեմ դեմոկրատական շատ ուժգին հորձանք և շարժում: Ժողովրդի հետ կապված հայ նոր մտավորականների համար այդ ամենը չէր կարող աննշմարելի մնալ: Արևմտահայ ազգային-կուլտուրական շարժումների պատմությանը նվիրված աշխատությունների մեջ (Սարուխանի, Հրանտ Ասատուրի, Լեոյի, Պերպերյանի) անսպասելի նոր դեպքերն ու «մոտիվները» բավական լավ են նկարագրվել:

Պարոնյանը առաջիններից մեկն է, որ թե՛ մերկացնում է արևմտահայ նոր շարժումների սոցիալական բնույթը և թե՛ վճռական հարված հասցնելով ազգայնական պատրանքներին իր քննադատության հիմնական սլաքը ուղղում է ամիրայության հետ կապված ճանաչված շոջերի դեմ: Պարոնյանը իր երկասիրությունների մեջ կերտում է բախվող հոսանքների ներկայացուցիչների ցայտուն կերպարները:

Ժամանակին Ա. Չոպանյանի հայտնի հանդեսի՝ «Անահիտի» երկու համարներում լույս են տեսել բավական նշանակալից դիտողություններ հին Պոլսի անվանի ամիրաների մասին պատրաստված կիսա-լեզու անշափ ուշագրավ ձեռագիր պամֆլետների մասին: Բնորոշ է այն, որ անվանի ամիրաների դեմ ծառայող թշնամիների թելադրանքով անհայտ պոլսահայ առականներն ու բելետրիստները կազմել են հատուկ երգիծական նորավեպեր՝ նովելներ: Այդ գաղտնի երգիծական առականներում նրանք նկարագրել են առանձին ամիրաների կյանքի էջերը, դատափետել ու մերկացրել են ատելի ամիրաներին, անգամ դրանց հետ կապված բարձրաստիճան հայ հոգևորականներին: Երգիծական նովելներն ամփոփվել են փոթորիկ, բայց շքեղ կաղ-

մերի մեջ: Բոկկաչչիոյի, Սակետտիի, Բանդելլոյի հնօրյա այդ պոլսահայ հետևողները ջանացել են պատրաստել կոնսպիրացիայի համար փոքրագրի ժողովածուներ և ստեղծել տպավորություն թե՛ այդ գրքույկները միանգամայն լեզու աղոթագրքեր կամ կրոնական ձեռնարկներ են: Անլեզու հայերեն գրքույկների բովանդակությունը սակայն շատ որոշակի ուղղություն ունեն: Պետք է ենթադրել, որ աղոթագրքերի նման կազմված գրքույկները կարգում էին ոչ միայն հայ մեծատուն ազաների դեմ մարտնչող գործիչները, այլ նաև էրոտիքական նկարներ և զրույցներ սիրող պոլսահայ քաղքենիները: Կասկածից դուրս է, որ նման կիսալեզու գրքույկները նկատելի հաճույքով էին կարգում Սամաթիայի, Իսկյուտարի կամ ուրիշ թաղերի սրճարանների տրադիցիոն այն հաճախորդները, որոնց կերպարները նկարագրվել է ժամանակի անվանի պոլիգլոտ-արևելագետ Գերման Վամբերին:

Երբ այդ ամենը հաշվի ենք առնում՝ Պարոնյանի գեղարվեստական հրապարակախոսական երկերի իրական իմաստն ու բնույթը դառնում է, իհարկե, ավելի ակնորոշ: Այլ խոսքով բացահայտվում է առաջին հերթին մեծատաղանդ հումանիստ-երգիծարանի գործունեության և ստեղծագործությունների՝ հակամիրայական շատ ցայտուն գիծը: Ավելի պարզ է դառնում այն, որ հին օրերի պոլսահայ հասարակության սոցիալական վերնախավի հետ կապված «առօրյա» քաղաքացիների, պարզ ու խեղճ մարդկանց, բազմազան երկրորդական սոցիալական պերսոնաժներին նկարագրող դեմոկրատ-երգիծաբանի զլխավոր նպատակն է եղել մերկացնել ամիրաներին և բոլոր մյուս իշխաններին, նույնիսկ դրանց ձայնակցող ու սպասավորող զանազան մանր տղրուկներին, դատափետման միջոցով: Ավելի քան ակներև է, որ հասարակական կյանքին այդպես մոտեցող ռեալիստ-գեղագետի համար հայ մեծատունների տրադիցիոն պաշտամունքը չէր կարող հանդուրժելի լինել: Ակներև է այն էլ, որ այդ պաշտամունքի հակաժողովրդական բնույթը մերկացնող հումանիստ գրողի համար մոտիկ ու հարսզատ գրողներ կարող էին լինել միայն արևմտահայ դեմոկրատիայի առաջավոր ներկայացուցիչները՝ Մեղուի կամ «Մաղիկի» խմբագիրները՝ Սվաճյանի կամ Չիլիկիրյանի նման մարտնչող դեմոկրատ-լուսավորիչները: Ժամանակին, ինչպես հայտնի է, ֆրանսիական գրագետ Լամարտինը շատ ուրույն խանդաղատանքով փառաբանել է Թուրքիայի հայ «պայազատներին»: Գ. Այվազովսկու կարգադրությամբ փարիզյան «Մասյաց Աղավնի» հանդեսի էջերում գետնիցվել են արևմտահայերի արագիցիոն «երևելիներին» նվիրված լամարտինյան բնութագրական ակնարկները: Լամարտինի մոլեգին երկրպագու Խորեն Նարբեյը կարևոր էր համարել նույն այդ օրերին ավելի որոշակի կերպով փառաբանել Լամարտինին: Պարոնյանը սակայն չի ձայնակցել «մեծատուններին» մեծարող գործիչներին և, կարծես դիտավորյալ, աշխատել է ցուցահանել «երևելիներին» ուղե-

գծին հետևող զանազանագույն «չոչերի» արգահատելի դեմքն ու մտավոր սնանկությունը: Միշտ զգուշավոր և միաժամանակ ճշմարտախոս նա ստիպված է եղել շատ հաճախ գործածել «երկպալան ոճ» և հմուտ ժուռնալիստների մանր ձեռնարկային լեզուն: Չնայած դրան նա շի ցանկացել քողարկել ոչ իր «Հոսոսոսի ձեռնարկ» մոլեգին ինտոնացիան և ոչ էլ «Աղղալին ջոջերի» շատ յուրահատուկ ընտրություն և կլասիֆիկացիայի «մեթոդն» ու հիմնական կշռաշավը: Ես արդեն ասացի, որ Պարոնյանի մասին գրող հայտնի հայ բանասեր-գրականագետները բացահայտել են որոշակի կերպով նրա հիմնական դիտակետի ռեալիստական բնույթը:

3

Մեզ մնում է այժմ միայն նորից արձանագրել հանրահայտ այն փաստերը, որոնք այսօր այլևս չեն առաջացնում տարակուսանքներ:

Իր հայրենի Ադրիանապոլիս քաղաքում Պարոնյանը, ինչպես հայտնի է, ստացել է միայն նախնական կրթություն: Սակայն ժամանակի ուրիշ հայ երիտասարդների նման Պարոնյանը և՛ ծանր օրեր է ապրել, և՛ միաժամանակ զբաղվել ինքնակրթությամբ, տակավին հայրենի քաղաքում յուրացրել արևմրտյան առաջավոր կուլտուրայի բարձր արժեքները: Նա Ադրիանապոլիսից ուղևորվում է Պոլիս և նոր միջավայրում, ըստ երևույթին, ավելի մոտիկ և ուժգին կապեր է հաստատում 60-ական թվականների դեմոկրատական մտավորականության առաջավոր ներկայացուցիչների հետ: Սկզբում նա ավելի որոշակի կերպով մոտենում է թատրոնի աշխատավորներին և արդեն 1865-ին գրում իր առաջին երգիծական աշխատությունը: Նույն տյոջ օրերին էլ նա կապ է հաստատում արևմտահայ զանազան պարբերականների աշխատակիցների հետ և կարճ ժամանակվա ընթացքում աչքի բնկնող դերք է զբաղում արևմտահայ ժուռնալիստների շրջանում: Քննադատելով հասարակական մթին երևույթները, աշխարհիկ և հոգևոր օլիգարխիայի ներկայացուցիչներին, նա միաժամանակ, ինչպես բացահայտել ու հաստատել է արևմտահայ գրականության և առանձնապես դրամատուրգիայի տաղանդավոր պատմաբան-բանասեր Գ. Ստեփանյանը, քննադատել է նաև սուլթանատի բռնակալության հետ կապված բացասական երևույթները: Իր ակտիվ գրական գործունեության տարիներին է. Պարոնյանը շփվել է հայ ժողովրդի լայն շարքերին և աշխատել է հենվել հարավատ ժողովրդի հետ կապված թե՛ թատրոնի և թե՛ մամուլի ակտիվ աշխատակիցներին: Հայ թատրոնը իր շատ որոշակի սպեցիֆիկայով չէր կարող թերագնահատել ժողովրդի դերը: Առանց ժողովրդի թեկուզ և «լուռ» աջակցության՝ չէին կարող ստեղծել ու զարգանալ ո՛չ թատրոնն ու դրամատուրգիան, և ո՛չ էլ հայ առաջավոր ու երգիծական գրականությունը: Ժողովուրդն է թելադրում թատրոնին ու լրագրողներին ընտրել կյանքի հետ կապ-

ված թեմաներ ու արձագանքել առաջին հերթին՝ կազմավորվող արևմտահայ դեմոկրատիայի գաղափարական նոր որոնումներին:

Ը. Պարոնյանը ժամանակին աշխատակցել է բազմաթիվ հայ պարբերականներին («Թատրոն», «Նիկար», «Լույս», «Միքատ», «Մեղու» և այլն): Նա ինքն էլ հանդես է եկել որպես պարբերական հանդեսների և ամսագրերի ղեկավար-խմբագիր և հրատարակիչ: Նրա ակտիվությունը չէր կարող անուշադրություն մատնվել ոչ պահպանողական-հետադիմական գործիչների և ոչ էլ տաճկական գրաքննիչների կողմից: Դատափետելով ամիրայություն և իշխող-շահագործող ուժերի ջահակիրներին Պարոնյանը սխտեմատիկորեն հալածանքների է ենթարկվել իր բազմաթիվ թշնամիների կողմից: Դրանց անմիջական նախաձեռնությամբ սուլթանական կառավարության ներկայացուցիչները հատուկ ռեպրեսիաներ են ձեռնարկել Պարոնյանի նկատմամբ: Որքան էլ անկատար չեն անառարկելի փաստական տվյալները, որ ժամանակին հրապարակել են արևմտահայ մամուլի հարուստ էջերն ուսումնասիրող հայտնի բանասերներն ու պատմաբանները (Ասատուր Հր., Ալլոյաճյան Ա., Պարթևյան Ս., Թերզիբաշյան Վ., Ստեփանյան Գ. և այլք) հակիրճ և միշտ տպավորիչ տվյալները թելադրում են ավելի մեծ ուշադրությամբ մոտենալ առանձնապես Ը. Պարոնյանի հրապարակախոսական երկերի ուսումնասիրությանը: Առանց վարանումների կարելի է ասել, որ երգիծաբան և զեղազետ Ը. Պարոնյանի ստեղծագործությունների բազմակողմանի քննարկման համար առաջնակարգ նշանակություն ունեն առաջին հերթին, ոչ միայն առանձին հայ պարբերականները, այլ առանձնապես Ը. Պարոնյանի հրապարակախոսական և, այսպես կոչված, «ժուռնալիստական» ելույթները: Նյութերն այնքան բազմազան են, որ կարող են ապագա դիսերտացիոն աշխատություններ գրող սովետահայ բանասերների ուշադրությունը գրավել: Գեղազետ և երգիծաբան Պարոնյանի արվեստի և մտահայեցության ճշգրիտ բնութագրման համար նույնպես կարևորագույն նշանակություն ունեն ամենից առաջ բոլոր տպագիր աշխատությունները և նրա մասին հրապարակված փաստագրական, տեքստոլոգիական և մենագրական-տեսական պրպտումները:

Մեր մամուլի էջերում տակավին 1962-ին հրապարակված մատենագրական մի ակնարկի տվյալների համաձայն Ը. Պարոնյանը 1870-ին խմբագրել է մի քանի պարբերականներ՝ 1872—1874-ին «Մեղու» երգիծաթերթը (1874—1877), «Թատրոնը» (1876—1877), «Թատրոն բարեկամ մանկանց» մանկական երկշաբաթաթերթը (1879—1880), «Լույսը» (1883), «Միծաղը» (1884—1888), «Նիկարը» և այլն, իսկ 1874—1876 թթ. նաև՝ «Թխարո» քուրբերեն երգիծաթերթը³: Եթե մենք հաշվի առնենք նաև մեծ երգիծաբանի ակտիվ աշ-

3 Գ. Խ. Ստեփանյան, Ը. Պարոնյանի «Թխարո» թուրքերեն պարբերականը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1962, № 9):

խատակցութիւնը բազմաթիւ պարբերականներին, կստացվի հիրավի շատ նշանակալից մի պատկեր:

Թուրքերեն «Թիաթրո» պարբերականի մասին ժամանակին թուրք բանասեր Սելիմ Նասերն իր «Թուրքական մամուլը» աշխատութեան մեջ գրել է⁴, որ «Թիաթրո» պարբերականը 18 համար լույս տեսնելուց հետո դարձել է ավելի մեծ և զեղեցիկ: «Թիաթրոյի» մեջ Հ. Պարոնյանը տպագրել է նաև «Թատրոնի» առաջնորդող հոդվածը, որ ջանալով բացահայտել նոր պարբերականի ուղղութիւնը, պարզել է իր հավատամբը՝ ներկայացնելով իր ծրագիրը նա շատ փետել է հայ թերթերի տգիտութիւնն ու անակզբունքայնութիւնը: Մինևույն փաստալից ուսումնասիրական ակնարկում նշված է, որ տաճկերեն «Ստամբուլի հանրագիտարանի» խմբագիր Ռ. Քոչուի հաղորդագրութեան համաձայն կան «հանրագիտարանի» արխիվում «Թիաթրո» պարբերականի 32-րդ և 75-րդ համարները, որ բոլոր նյութերը կազմել էր Պարոնյանը: Գ. Ստեփանյանի համոզմամբ Պարոնյանը հենց սկզբից որոշել էր քերթը հրատարակել երկու լեզվով, բայց թուրք ընթերցողին ներկայացրել է այն նյութերը, որոնք կարող էին հետաքրքրութեամբ ընթերցվել — հատկապես թուրքական շրջաններում: Բնորոշ է այն, որ 1875-ին «Թիաթրոն» երկու ամսով փակվել է «քաղաքական տեսակետից վնասակար մի հոդված հրատարակելու պատճառով», բայց այդ հոդվածը հայերենում չի «եղել»⁵: Մինչև այժմ տպագրված նյութերը ցույց են տալիս, որ նույնիսկ կարևոր զեղարվեստական երկերը, հայտնի երգիծաբանական գործերը թելադրել և թելադրում են բանասերներին ավելի որոշակի կերպով բացահայտել Պարոնյանի ուժգին կապը «հասարակական կեցութեան» հետ ու Պարոնյանի կողմից նետված ռեալիստական դիտողութիւնները, նրա զեմոկրատական և հումանիստական մտահայեցութեան հատկանիշները:

Նույն այդ նյութերը թելադրում են բանասերին այնքան էլ շատ շտարվել «էսթետիկայի» որոնումներով և «էսթետիկական» դատողութիւններով, այլ ավելի ուժգին շարժել հաշի առնել ուս մեծ հեղափոխական զեմոկրատներին՝ Բելինսկու, Գերցենի, Դոբրոլյուբովի, Չերնիշևսկու նշանակալից գաղափարական գրութիւնները, գիտական կոմունիզմի մեծ ուսուցիչներին՝ Մարքսի, Էնգելսի, Լենինի ղեկավար տեսութիւնները, լենինյան գրական-տեսական նկատողութիւնները և, վերջապես, մշակույթի և գրականութեան անվանի ուս բանասեր-գրականագետների թեորիական նշանակութիւնն ունեցող հարուստ փորձն ու ցուցումները: Սովետահայ բանասերները շատ մեծ աշ-

⁴ Նույն տեղում, էջ 66:

⁵ Նույն տեղում, էջ 70, 72, 74:

խատանք են կատարել, նրանք նոր ընթացք են հաղորդել մեծ հումանիստ-երգիծաբան Պարոնյանի երկերի քննարկմանը և ուսումնասիրութեանը: Նույն այդ բանասերները, սակայն, հիշեցրել և հաստատում են, որ անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրութեամբ մտնել Պարոնյանի երկերի հանրագումարի լուսարանութեանը: Եթե Պարոնյանը շատ և շատ անգամ նշել և ընդգրկել է սոցիալական փաստեր և հանգամանքներ, այդ անհրաժեշտ է արձանագրել և ցուցադրել ավելի կտրուկ կերպով: Եթե Պարոնյանը ժամանակին մերկացրել և դատափետել է արևմտյան երկրի մի դիվանագետներին ու զրանց արևելահայ համահարգներին, այդ ամենը նույնպես անհրաժեշտ է բացահայտել լայնորեն և առանց վարանումների: Բոլոր այն փաստական տվյալները, որոնք նշվել ու ցուցադրվում են մեր պարոնյանագետների աշխատութիւնների ու պրպտումների մեջ, հաստատում են, որ թե՛ իր զեղարվեստական-երգիծաբանական և թե՛ մանավանդ ժողովրդապաշտական և հրապարակախոսական ակնարկների մեջ Հ. Պարոնյանը մեծագույն ուշադրութեամբ է նվիրել արևմտյան բուրժուական-կապիտալիստական պետութիւնների, ինչպես նաև տաճկական ղեկավարի հետադիմական վարքագծի և ձեռնարկների մերկացմանն ու դատափետմանը: Նա ջանացել է պաշտպանել հարազատ հայ ժողովրդի, հայ զեմոկրատիայի հումանիստ ջահակիրների ազատագրական գաղափարախոսութիւնը — առանց կուրուեմ հետևելու հայրենի իրականութեան պահպանողական ու ռեակցիոն ուժերի իդեոլոգիային: Ծիշտ չէր լինի հանուն ինչ-որ վերացական «էսթետիկայի» սքողել ակներև և ռեալական վավերագրերի իրական խոսքը և մոռանալ, որ մեծ հումանիստ երգիծաբան Պարոնյանի մտահայեցութեան ճշգրիտ բնութագրման համար կարևոր նշանակութիւն պիտի ունենա նրա հայեցութեան ճշգրիտ լուսարանութիւնը: Այդ անելու համար անհրաժեշտ է ավելի վճռական կերպով կիրառել մարքսիզմ-լենինիզմի և առանձնապես Վ. Ի. Լենինի տեսական այն գրութիւնները, որոնք հրապարակվել են գրականութեան և մշակույթի ակնաւոր ներկայացուցիչների մասին: Ես նկատի ունեմ առաջին հերթին Վ. Ի. Լենինի հայտնի աշխատութիւնների մեջ գրված ղեկավար գրութիւնները՝ ղեկաբերիտների և լուսավորիչների, Գերցենի, Չերնիշևսկու, հեղափոխական զեմոկրատների, հումանիզմի, մշակութային պրոբլեմների, կուլտուրական շինարարութեան մասին: Նկատի ունեմ նաև լենինյան տեսական դիտողութիւնների մասին հրատարակված նորագույն հետազոտութիւններն ու գիտական աշխատութիւնները:

Լենինը միշտ հաշի է առել բարձր արվեստի, լեզվի և ոճի նշանակութիւնը: Բայց և այնպես երբեք նա գրողին չի կտրել իրականութեանից և շրջապատից, երբեք անուշադրութեան չի մատնել անվանի գրողի մտահայեցութեան կարևորագույն հատկանիշների գիտական ուսումնասիրութեան անհրաժեշտութիւնն ու նշանակութիւնը: Ելնելով լենինյան դիրքերից պետք է

թե՛ նոր տոն և թե՛ նոր ուղղություն հաղորդել Պաբոնյանի կյանքի և գործի այսօր անգամ քիչ հայտնի էջերի ճշգրիտ ուսումնասիրություն համար ձեռնարկվող նորանոր աշխատանքներին...

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», հասարակական գիտություններ, № 7, 1964:

Մ. ՄԱՄՈՒՐՅԱՆԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ականավոր արևմտահայ լուսավորիչ-մտածող Մատթեոս Մամուրյանի մասին ժամանակին հրապարակվել են բազմազան ուսումնասիրություններ: Որքան էլ տարօրինակ է, հայ բանասերները ծանրանալով Մամուրյանի մտահայեցության հատկանիշների վրա, հաճախ մոռացության են մատնել հուշակավոր արևմտահայ գրողի պատմագիտական ուրույն մտորումները և մանավանդ անշափ ինքնահատուկ մոտեցումը մշակույթի պատմության պրոբլեմներին: Մեզ թվում է, որ այդօրինակ «միակողմանիությունը» բացատրվում է նրանով, որ Մամուրյանի մասին զանազան ժամանակ գրող բանասերները գրեթե միշտ ջանացել են հիմնական ուշադրությունը նվիրել բացառապես ականավոր գործչի հասարակական-քաղաքական և նույնիսկ հեղափոխական հայացքների բացահայտմանն ու բնութագրմանը:

Ահա հենց շեշտված «միակողմանիությունը» թելադրեց մեզ շեղվել տրագիգիայի ամբողջուն ունեցող ուղեգծից և գեթ հակիրճ կերպով նկարագրել Մ. Մամուրյանի ուրույն այն մտորումները, որոնք նվիրվել են մշակույթի պատմության պրոբլեմների լուսաբանությանը և հնարավորություն են տալիս մոտենալ Մամուրյանի մտահայեցությանը շատ քիչ էնեարկված հատկանիշների բացահայտման:

I

Մ. Մամուրյանի հասարակական և իմաստասիրական հայացքները լավ են հայտնի: Ժամանակին այդ հայացքները արժարժվել են Զմյուռնիայի «Արևելյան մամուլ» հանդեսի էջերում: Տակավին հանդեսի առաջին գրքում Մամուրյանը հիշատակելով արևմտահայ բազմաթիվ լրագրերի առկայությունը բնագծել էր, որ շեշտված նոր հանդեսը պետք է դառնա «... պատմական, տնտեսական, իմաստասիրական և այլ գիտելիքներ»¹ շտեմարան: Առանձին դեպքերում արևմտյան լեզուներից կատարված հայերեն թարգմանություններին կցված հավելվածներում Մամուրյանը բնութագրելով այս կամ այն հեղինակին, ջանացել է բացահայտել նաև իր որոշ մտորումները: Ակա-

նավոր անգլիական վիպագիր Դիկկենսի մասին, օրինակ, հատուկ ծանոթության մեջ նա նշում է, որ Դիկկենսը «ազատասեր, դիտող միտք է... մանավանդ բնկերության ստորին հեք դասերու բարօրության նպաստավոր խնդիրներ հուղելու եփուն գրիչ ունեւր...»: «Դիկկենս,— գրում էր Մամուրյանը,— խնդուր կշարժե, կկծե ու կկրթե...»²:

Չնայած նման կտրուկ տողերին Մամուրյանը չէր ցանկանում ձայնակցել հայ արմատական-դեմոկրատական գործիչներին և որոշակի կերպով շեշտում էր, որ ինքը հայ մտավորականության միասնականության կողմնակից է և կուզենար բացահայտել իր դրական մոտեցումը ոչ միայն Կոստանդյանին և Տետեյանին, այլ նաև Խորասանճյանին, Շահնազարյանին, Կ. Յոթուճյանին, Վիշնյանին, անգամ Կրճիկյանին: Նման իմաստ է ունեցել, համենայն դեպս, Մամուրյանի նկատողությունը «երևելի ազգայնոց» դեմ «թշնամական» դիրք բռնող գործիչների նկատմամբ:

Իր մտահայեցությամբ Մամուրյանը իդեալիստ այն մտածողների շարքին էր պատկանում, որոնք գերադասում էին բախվող հասարակական-քաղաքական հոսանքների նկատմամբ բռնել չեղք դիրք: Բնորոշ է այն, որ կցելով Ֆրանսիական մի իմաստասերի ակնարկի թարգմանությանը իր առանձին գիտողությունները, Մամուրյանը կանգ է առնում մատերիալիզմի և իդեալիզմի հետևողների վրա ու գրում է՝ «... կան նաև այնպիսի հոգիներ, որ այս ինչ կամ այն ինչ փոխոստիային դրույթյան լիովին չհարելով՝ միջին անապատի մը կընտրեն և իրենց հատուկ ըմբռնումով՝ մթինը կմեկնեն կամ կհերքեն...»³:

Իրականում Մամուրյանը չէր սքողում, որ ինքը մատերիալիստական իմաստասիրության տեսաբանների դրույթները համարում է անհանդուրժելի: Հանդեսի մեջ գետեղված «Փոխոստիայություն և հասարակաց գիտողություն» հոդվածին, օրինակ կցված է հատուկ ծանոթագրություն այն մասին, որ էպիկուրի հետևողների «ազանդը վերջին հեշտության և անբարոյականության նշանաբան դարձավ իր աշակերտաց ձեռքով...»: Նման բնութագրումը, իհարկե, չէր կարելի համարել «միջին ճանապարհի» ցուցանիշ: Իր տեսություններից մեկում հանդեսի խմբագրությունը կանգ առնելով հնօրյա արևմտյան կրոնական-սոցիալական շարժումների վրա նորեն ձգտում էր բացահայտել «քաղաքացի ավազանի» դեմ ծառայող «գեղացիների» ապստամբության անհանդուրժելիությունը:

Մի ուրիշ անգամ հիշատակելով Բաստիայի ուսմունքի հիմնական դրույթները, նա շեշտում է, որ «մարդս սեփականատեր կծնի» և որ սոցիալական

² «Արևելյան մամուլ», 1875, էջ 102:

³ Նույն տեղում, էջ 359:

¹ «Արևելյան մամուլ», 1871, էջ 3:

բախումները անհանգուրծելի են: Արևմտյան երկրներում, նկատում է նա բարձր և ստորին դասերը կոչում են, այդ երկրներում «Միջազգային Ընկերությունը» մեծ «աճ ու տազնապ» է ազդում կառավարություններին: Արևելքում, սակայն, այդպիսի «ընկերական տազնապ» չկա: Մի ուրիշ անգամ նշելով, որ աշխարհս «անհավասարությունների ներդաշնակություն է», «Արևելյան մամուլը» հիշեցնում է ընթերցողներին, որ «Ներդաշնակության» ուղեղիծն էլ պետք է պաշտպանվի հակառակ բախվող ու ներհակ հոսանքների կոիվներին: Նորից հիշատակելով «Միջազգային Ընկերության» վարքագիծը, հանդեսի հոգավածագիրը գրում է, որ այդ Ընկերությունը «Բարիզի խակ և գոհճիկ խուժանի մեջ առաջին փորձ մ'ընելու կ'ընեն, և այս փորձը եղբրական վախճան մը կառնուր...»: Կոմունայի մասին կարդում ենք, որ «աճուկի արարք է» եղել կոմունարների գործունեությունը: Եթե մենք ավելացնենք այն, որ տաղանդավոր հրապարակագրին հատուկ համարում էր «միջին ճանապարհի» և ապա սոցիալական շահերի համերաշխության պատգամների պաշտպանությունը Մամուլյանը կարողանում էր կապակցել մշակույթի, արվեստի, գրականության զանազան վավերագրերի ժողովրդականացման հետ, մեզ համար պարզ կդառնա իդեալիստական իմաստասիրության կովաններին կառչած Մամուլյանի դիրքորոշման բնույթը:

Ջանալով ժողովրդականացնել արևմտյան մշակույթի ականավոր ներկայացուցիչների պրոգրեսիվ երկերը, առաջադրելով հայրենասիրության պատգամներ, կոչ անելով կառուցել դպրոցներ և ընկերություններ, հաշվի առնել զգուշավոր գործելակերպի կարևորությունը, Մամուլյանը հեռու էր կանգնած հայ արմատական նոր մտավորականության շարքերից, թեև մերթ ընդ մերթ կղերական-ոնակցիոն ուղեղի պաշտպանների ոնակցիոն էլույթները թելադրում էին նրան հաշտարար դիրք բռնել անգամ «ծայրահեղ» գաղափարներ պաշտպանող «արմատական» զեմոկրատների նկատմամբ: Մամուլյանի խորին համոզմամբ միմիայն «միջին» գծի պաշտպանությունը կառող էր ապահովել արևմտահայերի կուլտուրական-վերածնական շարժման վերելքը: Դրպրոցները, գրքերն ու հրատարակչությունը, մամուլը, կրթական հաստատությունները պետք է համախմբեին հայ հոսանքների բոլոր ներկայացուցիչներին միասնական ազգային-հայրենասիրական պատգամների դրոշի ներքա և ստեղծեին ամուր միասնական մի հավաքույր... Հիմնական այդ ելակետից էլ մոտենում է Մամուլյանը մշակույթի պատմության կարևորագույն պրոբլեմներին ոչ միայն իր հանդեսի զանազան համարներում զետեղված նյութերի մեջ: Նա հորինում է հատուկ ձեռնարկներ, տպագրում է նշանակալից գիտական ուսումնասիրությունների բնույթ ունեցող իր դասագրքերը, ժողովրդականացնում է դպրոցներում մշակույթի պատմության պրոբլեմների լուսաբանությունը նվիրված իր գաղափարական առաջադրությունները:

Երկու կարծիք լինել չի կարող այն մասին, որ ականավոր արևմտահայ լուսավորիչ-մտածողի մտահայեցության ճշգրիտ բնութագրման համար շնչուված դասագրքերը եզակի նշանակություն ունեն...:

Մ. Մամուլյանի պատմական ձեռնարկները շատ յուրահատուկ հյուսվածք ունեն: Դասագրքերից առաջին հատորը նվիրված է «Հին Պատմությանը» (Կարբեղանացվոց, Հունաց, Հոռվմեացվոց և Հայոց): Այդ հատորը լույս է տեսել 1877-ին, Զմյուռնիայում՝ Տետեյան տպագրությանը (405 էջ): Երկրորդ հատորը նվիրված է «Միջին դարու պատմության» և լույս է տեսել արդեն 1878-ին (508 էջ): Այդ հատորի վերջին հատվածները նույնպես նվիրված են «Հայոց Պատմության»:

Երկու հատորներն էլ բացահայտում են թե՛ Մամուլյանի համոզմունքը և թե՛ Զմյուռնիայի հայ դպրոցների մեծ կուլտուրական նշանակությունը: Դասագրքերը հորինելուց առաջ Մամուլյանը պետք է ուսումնասիրեր բազմաթիվ աղբյուրներ և ապա կերտեր ուրույն մի կոնցեպցիա՝ հաշվի առնելով արևմտահայ իրականության կոնկրետ հանգամանքները: Դեպքերի, ցայտուն երևույթների, պատմական կարևոր դեմքերի ընտրությունը նա կատարել է ղեկավարվելով իր ինքնահաստուկ մտահայեցության հիմնական դրույթներով: Գիտավորյալ կերպով նա համաշխարհային պատմության հատորների տեքստին հատուկ հավելված-հատվածներ է կցել հայոց պատմության վերաբերյալ: Ակներև է այն էլ, որ նա ջանացել է դասագրքի առաջին մասերի նկարագրությունը դարձնել հենակետ հայրենի պատմության երևույթների զնահատության համար: Առաջին դեպքում նա հենվել է արևմտյան պատմաբանների գիտական հետազոտությունների վրա և առաջադրել է իր նկարագրական ակնարկները սոսկ որոշ փոփոխություններով վրա՝ լրացումներով: Հայոց պատմությունը գրելու ժամանակ նա կարող էր հենվել միմիայն Չամչյանի, Ինճիճյանի, Մխիթարյան գործիչների աշխատությունների վրա: Այդ աղբյուրների դրույթներին, սակայն, նա չէր կարող հետևել կուրորեն: Այդ պատճառով Մամուլյանը «Հայոց Պատմությունը» շարահյուսել է, ինչպես մեզ է թվում, հենվելով բացառապես ու միմիայն հայ պատմագիրների աշխատությունների վրա:

Թե ինչպե՞ս է նա մոտեցնել անցյալի պատմական դեպքերին և վավերագրերին, մենք կօտեսնենք ավելի լավ, եթե կանգ առնենք շեշտված երկու հատորների հիմնական հատվածների վրա:

Ես արդեն ասացի, որ Մամուլյանը էրուդիտ մտածող էր: Կարելի է նաև ավելացնել, որ նա առաջավոր գործիչ լինելով հանդերձ մի խոհուն պրոգրեսիվ գործիչ էր, որ մեծագույն նշանակություն էր տալիս ժողովրդի հետ կապված

մշակույթին՝ գիտությունը, արվեստին, գրականությանը: Միաժամանակ նա գեղագիտական նրբին ճաշակ ուներ և գրական-գեղարվեստական կամ իմաստասիրական ու գիտական թեմաների ընտրության ժամանակ ձգտում էր նշել կարևոր նյութերն ու ծանրանալ հանգուցային նշանակություն ունեցող պատմական երևույթների ու դեմքերի վրա:

Մամուրյանը հանդիսանալով «ներդաշնակության» պաշտպան, այնքան էլ մեծ հաճույքով չէր նկարագրում սուր հասարակական բախումները, սոցիալական մարտերը, հասարակության «անդորրը» ու միասնական արշավին խանգարող անակնկալ դիտոնանսները: Այնուամենայնիվ նա գիտուն մտածող էր ու չէր ցանկանում քողարկել իրական դեպքերը: Մյուս կողմից, կարելի է ենթադրել, որ նրան ծանոթ են եղել հայտնի մտածողների, մանավանդ արեմբայան գիտնականների աշխատությունները: Կարելի է, համենայն դեպս, առանց վարանումների ասել, որ Մամուրյանը ժամանակին ուսումնասիրել է մեծագույն ուշադրությամբ ո՛չ միայն Վոլտերի, Գիդրոյի, Կոնդորսեի, էնցիկլոպեդիստների աշխատությունները, այլ նաև մի շարք նոր ֆրանսիական պատմաբանների գործերը (Գիդրոյի, Օգյուստինի, Տիերրիի, Միշլեի և այլն): Նրա «դասագրքերի» մեջ նշմարվում է ակնարկված ազդեցությունների ուրույն կնիքը: Սակայն և այնպես, ամբողջ շարահյուսության կոմպոզիցիան, նյութերի ընտրությունը, թեմաների դասավորումը կատարել է ինքը՝ Մամուրյանը: Իր հայեցողությամբ նա իդեալիստ էր և վճռական նշանակություն էր տալիս գաղափարներին, բանականությանը: Այդ գրույթը նա ճիգ է արել նկարագրական իր ակնարկների մեջ հիմնավորել: Չնայած դրան, Մամուրյանը «վերնաշենքային» երևույթների լուսաբանության համար աշխատել է բնութագրել նաև «հասարակական կեցության» պատմական կոնկրետ հատկանիշները: Գոստա-գրքերի մեջ սկզբում նա կանգ է առնում պատմական դեպքերի վրա, իսկ հետագայում արդեն անցնում՝ մշակույթային պրոբլեմների քննարկմանը:

Այսօր, իհարկե, կարելի է բազմաթիվ քննական գիտողություններ նետել Մամուրյանի թե՛ միամիտ և թե՛ նաև մակերեսային առանձին հայտարարությունների առթիվ: Սակայն մենք պետք է միշտ հիշենք, որ իր դասագրքերը Մամուրյանը գրել է անցյալ դարի յոթանասունական թվականներին սուլթանական Թուրքիայում, սուլթանական և կղերական-պատրիարքական գրաքննության տիրակալության օրերին, որպեսզի ավելի ակնորոշ դառնա նրա ջանքերով ձեռնարկած գործի իրական նշանակությունը:

Պատմական իր երկու ձեռնարկների մեջ էլ Մամուրյանը բավական մանրամասն կանգ է առել «ներքին պատմության» նշանակալից գրվագների վրա: Առանձին հատվածներին կցված են պետիտով հավելվածներ՝ կարևոր տնտեսական և կուլտուրական դեպքերի, առևտրի և վաճառականության, արվեստի և գրականության մասին: Կան նաև ուշադրավ ավյալներ քաղաքների զար-

գացման, կառավարական-պետական կարգերի, ճարտարապետության մասին: Ամենից բնորոշն այն է, որ դասագրքերի զանազան մասերում հաղորդվում են տեղեկություններ սոցիալական շերտավորման և հակամարտության մասին: Մամուրյանը խոսում է «դասերի» մասին, բայց նկատի ունի դասակարգերի բախումները, թեև տակավին պարզորոշ հասկացություն չունի հասարակական դասակարգերի մասին: Մարքսիզմից նա շատ և շատ հեռու էր կանգնած, իհարկե: Միամիտ կերպով մոտենալով հասարակական ներհակություններին, նա համակված էր այն համոզումով, թե «ունևորները» վեհանձնությունը և ապա «աղքատները» աշխատասիրությունը կարող են ստեղծել «ներդաշնակություն»: Սակայն Մամուրյանը տեսնում էր, որ հաճախ վճռական դեր են կատարում երկու ներհակ «դասերի» շահերի բախումները: Հոռմի պատմության նվիրված մի հատվածի վերնագիրը նա գիտավորությամբ ավելի խոսուն էր դարձրել: Ծեշտելով այն, որ իր նպատակն է նկարագրել «պատրիկներուն ու ժողովրդյան մեջ կռիվները», նա գրում է՝ «Ժողովուրդը կպահանջեր. որ պատրիկներուն պես ինքն ալ իրավունքներ և արտոնություններ ունենա... մանավանդ չէր կրնար հանդուրժել որ միևնաչափ պատրիկներն անբավ հողային կալվածներ ունենան...»: Ապա հիշատակելով ժողովրդի պահանջներին արձագանքող հոռմեական ռեֆորմատորի «ազարակային օրենքը», նա շեշտում է, որ «ազնվական դասն... իր բոլոր ուժովը դեմ կեցացվ ըսելով թե ժողովուրդը գինք կողպատել կուզե...»⁴:

Մամուրյանը հետագայում կանգ է առնում պատրիկների պարտության վրա և հատուկ հավելվածի վերնագիրն էլ նշում է՝ «ժողովրդյան հաղթանակը»: Բնորոշ են նաև հետևյալ տողերը. «... Այն ատեն պատրիկներուն և ժողովրդյան մեջ տիրած ռոխուրթունք ուրիշ կերպարանք առավ. բայց վերջեն նորեն ծագեցան այս կռիվներն ուրիշ բարորանք և ուրիշ ձևով...»: Մի ուրիշ անգամ նա գրում է. «... Հոռմի պատմության մեջ երկու դասու, այսինքն ազնվական և ռամիկ դասուն կռիվներն մեծ և նշանավոր տեղ կը բռնեն...»⁵:

Մամուրյանը կանգ է առնում նաև պետական-իրավական ինստիտուտների հատկանիշների վրա և նորից հիշատակում է ներհակ սոցիալական ուժերի նշանակալից դերը: Գրեթե միշտ նա դատապարտում է «խաղաղության» դեմ ծառայողներին: Մերթ ընդ մերթ կարծես գիտավորությամբ ծանրանում է սոցիալական բախումների վրա և աշխատում է նկարագրական տողերն էլ դարձնել ընթերցողներին դաստիարակելու ուրույն մեթոդ: «... Գրակրոսյան ժամանակին ի վեր,— ասում է նա,— ժողովրդյան ազնվական ու ռամիկ դասերուն մեջ անպակաս էին երկպառակությունները: Փառասեր մարդիկ շարունակ այս կռիվները կգրգռեին, որ ստեպ արյունահեղությամբ կվերանա-

⁴ «Հին պատմություն», գ. 1, էջ 200—201:

⁵ նույն տեղում, էջ 223:

յին: Իրավ է որ քանի մը հայրենասեր մարդիկ երկու կուսակցությունները հաշտեցնելու փորձ կը փորձեին, բայց իրենց բոլոր ճիգը գրեթե ապարդյուն կմնար...»: Բնորոշ է այն էլ, որ Մամուրյանը ներքող է ձուլում Յիցերոնին և նույնիսկ «ժողովրդյան մարդ» է համարում հոմեակական արխատիրատիայի ակաճավոր այդ ներկայացուցչին»⁶:

Մամուրյանի մտահայեցության ճշգրիտ բնութագրման համար մենք կարող ենք հիշատակել նրա նշանակալից ուրույն եզրակացությունը: «...Որչափ ատեն որ Հոռմ ԵՆՐԲԻՆ ԵՐԿԱՊԱՏԱԿՈՒՅՄԱՄԻ զբաղեցավ առաջ շնաց, վասնզի արտաքին պատերազմներն նույն եռանդով չէին մղած: Բայց երբ այս երկու դաս քաղաքացվոց մեջ միաբանություն մտավ, Հոռմայեցիք իրենց փառավոր պատերազմներն սկսան, որպեսզի Իտալիո այլ և այլ գավառներուն տիրեն...»:

Շեշտված եզրակացությունը դառնում է Մամուրյանի համար կարևորագույն մի հիմնակետ: Երբ նա անցնում է հետագայում հայրենի ժողովրդի պատմությանը, այլևս կանգ չի առնում սոցիալական բախումների վրա, ոչ մի խոսք չի ասում ո՛չ կրոնական-ժողովրդական շարժումների և ո՛չ էլ ազատախոհ մտածողների մասին: Նա դիտավորություններ ցուցադրում է հայ թագավորների և կրոնական պետերի ընդհանուր ջանքերով կերտվող, ամբացող, զարգացող հայ պետության միասնականությունը: Բնորոշ է այն, որ նա անտեղի է համարում հիշատակել թեկուզ այն փաստերը, որոնք հիշատակվել էին Չամչյանի ընդարձակ «Պատմության» մեջ: Ամենից կարևորը նրա համար ազգասիրության և հայրենասիրության ուղեգծի պաշտպանությունն ու հիմնավորումն էր: Անտիկ աշխարհի պատմությունը պետք է ցույց տար, որ սոցիալական բախումները միմիայն մեծ վնաս են հասցրել և միշտ պետք է հիշեցնեին հայ ժողովրդին միասնական ուղեգծի մեծագույն կարևորությունը: Դրանով էլ բացատրվում են դասագրքերի մեջ զետեղված հատվածները, որոնք իրականում դուրամատչելի կերպով ժողովրդականացնում էին հայ պատմիչների աշխատությունների մեջ նկարագրված պատմական դեպքերը, վաղեմի նվիրական ավանդությունները և առասպելները, հայրենասեր-աշխարհիկ և հոգևոր պետերի մասին կերտված վիպական պատմվածքները...

Մամուրյանի ջանքերով առաջագրված «պատմության փոխադրության» հիմնական սկզբունքներն այդպիսով այնքան էլ բարդ չէին և իրականում բավական սերտ կերպով կապված էին արևմտահայ մտավորականության իշխող խմբակների մտահայեցության հետ: Շեշտված «իմաստասիրության» համաձայն հայոց պատմության մեջ չեն եղել սոցիալական բախումներ: Միաձույլ հայ ժողովուրդը միշտ եղել է տիրասեր, աշխարհիկ և հոգևոր պետերի հեղեմոնիային հպատակվող ժողովուրդ: Դժվար է երևակայել, թե Մամուրյանի

նման էրուդիտ և խոհուն մտածողին հայտնի չէին շեշտված «իմաստասիրության» հակասական երանգները: Իհարկե, բավական լավ էին ծանոթ նրան հայրենի ժողովրդի պատմության կարևորագույն էջերը: Սակայն ի՞նչ իմաստ ուներ նշել այն փաստը, որ կարող էր բայթայել դեպի նոր մշակույթի հանգրվանները նետվող հայրենակիցների միասնական շարքերը: Այդպես էր խորհում Մամուրյանը, երբ ընդգծում էր «երկպառակությունների» բացասական դերը և կոչ էր անում հայրենակիցներին ամրացնել միությունը: Նա միշտ կարող էր թե՛ սուլթանական և թե՛ պատրիարքական ցենզորներին ասել, որ ինքը «ղասերի» վրա կանգ է առել միասնականության ուղեգծի պաշտպանության համար:

Միջին դարերի պատմությանը նվիրված դասագրքի մեջ հիմնականում միևնույն կոնցեպցիան էր արժարժված, բայց առանձին դեպքերում փոփոխված ձևով: Մամուրյանը այս անգամ ավելի մեծ ուշադրություն է նվիրում կրոնական և առանձնապես քրիստոնեական շարժումների նկարագրությանը, բավական երկար կանգ է առնում առանձնապես խաչակիրների շարժումների վրա, ուշագրավ էջեր է հատկացնում ավատական կարգերի պայմաններում կազմավորվող պետություններին: Միջին դարերին նվիրված պատմության մեջ ևս մենք տեսնում ենք դարձյալ խոհուն մտածողի դիմաստվերը: Բնորոշ է այն էլ, որ այս անգամ նա դառնում է ջերմ խոսքեր կրոնական-հերետիկոսական գաղափարախոսներից առանձնապես Արնոլդ Բրեշիացու մասին: Մամուրյանը բնութագրում է այդ գործչի հայեցության դրական հատկանիշները, բացահայտում է ազատախոհ իմաստասերի և ըմբոստ մտածողի դեմքը: Նման էջերը ցույց են տալիս համենայն դեպս, որ Մամուրյանը ծառանալով ընդդեմ կաթոլիցիզմի, միաժամանակ բավական որոշակի կերպով հանդես էր դալիս ավատական-կալվածատիրական կարգերի քննադատի դերում: Մենք դիտավորությամբ կանգ ենք առնում «միջին դարերի» պատմությանը նվիրված դասագրքի վրա, որովհետև հենց այդտեղ դրսևորվել է գաղափարական նոր հանգրվաններ որոնող պրոգրեսիվ մտածողի դիմաստվերը:

3

Երկու հատորների գրեյաձևն ու ոճը ցույց են տալիս, որ Մամուրյանը աշխատում էր ընդգծել իր անաշտ և օբյեկտիվ դիրքը պատմական վաղեմի դեպքերի և երևույթների նկատմամբ: Հին անտիկ աշխարհի «ղասերին» նվիրված նկատողությունների մեջ նա հիշատակում է սոցիալական բախումները և ամենևին չի ծածկում, որ ներհակ «ղասերի» հակամարտությունը ինքը համարում է բացասական երևույթ: Սակայն նա շեշտում է, որ առանձնապես հունական և հոմեակական մշակույթը մեծ դեր է կատարել համաշխարհային կուլտուրայի պատմության մեջ: Ակներև ակնածանքով է նա կանգ առնում

⁶ Նույն տեղում, էջ 279—280:

Արևիկոսի վրա⁷: Շատ հակիրճ տողեր են նվիրված նրա կողմից Հոմերոսին: Հիշատակվում են Պինդարոսը («գեղուններ երգեց և ազգային խաղերու մեջ հաղթողներ երգեց»): Անակրեոնի և Սաֆոյի մասին կարդում ենք, որ դրանք կենսուրախ բանաստեղծներ էին: Մամուրյանը բարձր է գնահատում էսքիլևսին, Սոֆոկլին, ապա «խիստ ընտիր ողբերգություններ» կերտող էվրիպիդեսին: Արիստոֆանեսը, գրում է Մամուրյանը, «կատակերգություններ երգեց, քրոս մեջ իր ժամանակի մոլությունները կծաղրեր. նույնպես հեգեսը ոսմկապարները (Կլեոն) և սոփեստները...»⁸: Նշանավոր հունական պատմաբաններից հիշատակված են Քուկիդիդեսը, Քսենոֆոնը, իսկ իմաստասերներից՝ Քալիստոսը, Պլատոնը, Չենոնը, էպիկուրեոսը, պերիպատեկյան, ստոյիկյան, էպիկուրյանց դպրոցների ներկայացուցիչները: Հակիրճ լինելով հանդերձ, նշված տողերը պատմաբան-ուսուցչին թելադրում էին ավելի հանգամանորեն բնութագրել հունական մշակույթի հատկանշական կողմերը: Արվեստին նվիրված հատվածի մեջ կարդում ենք. «... Հունական ճարտարապետությունն՝ սյուններուն ձևին և ի մասնավորի խոյակներուն զարդարանքին համեմատ երեք կարգ կրածնվեր. դորիական կարգ... առանց զարդի, հոնիական կարգ՝ ավելի թեթև և շնորհալի, կորնթական կարգն՝ հարուստ և շատ ալյազան զարդերով»: Հունական ճարտարապետության որդերների մասին նշված անշափ սեղմ այդ տողերը բացահայտում են նրբին զեղազետ-մտավորականի գիմաստվերը: Հիացումով է խոսում Մամուրյանը բարձր կատարելությամբ աչքի բնկնող հույն քանդակագործության: «հրաշակերտների» մասին: Հոմերոսական պատմության հատվածների մեջ Մամուրյանը ավելի շատ է կանգ առել սոցիալական բախումների վրա: Նա նույնիսկ գիտավորությամբ հատուկ վերնագրեր է բնորոշ և կարծես ջանացել է ավելի կտրուկ կերպով բացահայտել հասարակության ներհակ խավերի հարաբերությունները: «... Մեծ երկպառակություն աղնվականաց և ժողովրդյան մեջ. Հարուստներն ու աղքատները. Ստրուկներուն թշվառությունը. Սուսերամարտից ապստամբությունը...»: Առանձին զգացումով են գծված զլազիատորների ապստամբության ցայտուն էջերը և մանավանդ Սպարտակի արիությունը⁹: Հայ պատանիներին և բոլոր ընթերցողներին կարող էին հմայել խորունկ համակրանքով համակված այն նկատողությունները, որոնք պարզում են նաև անվանի հայ հոմանիստ-լուսավորչի մտահայեցության զեմոկրատական հատկանիշները:

«Ալյազան» և «զորավոր» համարելով հոմերոսական մշակույթը, Մամուրյանը գրում է, որ հոմերոսիցները յուրացրել են բազմազան ժողովուրդների մշակույթի «արդյունքները՝ մասնավորապես Արևելքի և Հունաստանի»: Սա-

կայն միաժամանակ նա գրում է, որ հույն մշակույթը նույնպես որոշ դեպքերում ավելի բարձր է եղել: Առանձին ուշադրությամբ է ծանրանում Մամուրյանը Պլավտոսի և Տերենցիոսի երկերի վրա և գրում է, որ նշանավոր այդ «բանաստեղծները» կերտել են «շատ կծու կատակերգություններ»: Գուցե ավելի կարևոր նշանակություն ունեն մի ուրիշ հանգամանք: Պլավտոսը և Տերենցիոսը ոչ միայն տաղանդավոր երգիծաբաններ էին: Նրանք հաղորդում էին նշանակալից տվյալներ հոմերոսական հասարակության, կենցաղային հատկանիշների մասին: Մամուրյանը գիտեր, որ պատմությունը ուսումնասիրող հայ երիտասարդների համար կարևոր նշանակություն կարող են ունենալ երկու տաղանդավոր գրողների ստեղծագործությունների մեջ արձանագրված կենցաղային փաստերն ու դետալները, անգամ թեթև ակնարկներն ու «մանրունքները»: Շատ բարձր է գնահատում Մամուրյանը առանձնապես Յիցերոնի գրվածքներն ու նամակները: Հիշատակում է նա Սալլուստիոսին, Յուլի Յեզարին, Տիտոս Լիվիոսին, Նեպոտին և իրավամբ ընդգծում Տակիտոսի արտասովոր պատմական ստեղծագործության նշանակությունը (ամենեևս համարվավոր պատմաբան): Գեղազետ Մամուրյանի համար Տակիտոսի «Պատմությունը» հիբավի կարող էր մեծ նշանակություն ունենալ:

Որքան էլ հակիրճ չէին դասագրքի մեջ «հոմերոսական քաղաքակրթության» մասին գրված էջերը, հայ ընթերցողներին նման էջերն անգամ հաղորդում էին ուսանելի տվյալներ Հորացիոսի և Օվիդիոսի, Կատուլլոսի և մանավանդ «բնութային վրա իմաստասիրական քերթուած» կերտող Լուկրեցիոսի մասին: Հոմերոսական մշակույթի ներկայացուցիչների ընդհանուր թիվը, իհարկե, շատ ավելի մեծ էր: Մամուրյանը կանգ էր առել միայն կարևոր դեմքերի վրա և զեկավարվելով իր ուրույն գիտակետով, որոշ ընտրությամբ էր նշել զանազան գրողներին: Այսօր մեզ համար ամենից ուշագրավը անվանի լուսավորիչ-հրապարակագրի ուրույն այդ մոտեցումն է: Թվարկելով հոմերոսական գործիչներին՝ Սենեկա իմաստասերին, Ավետոսիոսի հայտնի կենսագրականները, «բնագետ» Պլինիոսին, Մարցիալի, Յուվենալի, Պերսիի երգիծական և շատ հաճախ կենցաղագրական դետալներ հիշատակող տաղանդավոր ստեղծագործությունները, նա թելադրում էր ընթերցողներին ծանրանալ ավելի կարևոր վավերագրերի վրա և միաժամանակ հանդես էր գալիս նրբին զեղազետ-պատմաբանի դերում: Ավելի բիշ ուշադրություն է նվիրել նա հոմերոսական արվեստի նկարագրությանը: «Մեծության և փառավորության գրոշմ ունին», ասում է նա հոմերոսական ճարտարապետական շինությունների մասին: Հիշատակելով քաղաքները, տաճարները և թատրոնները, կոթողները, բազնիքներն ու ջրուղիները, Մամուրյանը առանձին ուշադրությամբ կանգ է առնում առանձնապես հոմերոսական ճամփաների վրա ու գրում է, որ ամուր շաղախով պնդացած հոմերոսական հին ճամփաներից մի քանիսը «մինչև մեր օրերը հասած են և շատ ընդարձակ էին...»:

⁷ Նույն տեղում, էջ 118—119:

⁸ Նույն տեղում, էջ 164:

⁹ Նույն տեղում, էջ 274—275:

Մամուրյանը ընդգծում է նաև «հոռմեական օրենսդրական գործերի» նշանակությունը: Չի սխալվում նա, երբ խոսում է հոռմեական իրավունքի «նոր քաղաքակրթության վրա ունեցած հարատև և հաջող ազդեցության» մասին: Նման սեղմ դիտողությունը ցույց է տալիս, որ Մամուրյանը լավ էր ծանոթ հոռմեական իրավունքի առանձնահատուկ պատմական դերին: «...Արդի քաղաքակրթ ազդերն,— ասում է նա,— իրենց օրինագիրներուն մեջ հոռմեական օրենսդրության սկզբունքն ընդունեցան, և նորա ուսումն անհրաժեշտ է Եվրոպիո ազգերուն այժմյան ընթացքն ըմբռնելու համար...»¹⁰: Գաճիշտ նկատողություն է: Լավ է հայտնի այն, որ հոռմեական իրավական նորմերը մասնավոր սեփականության, տնտեսական փոխհարաբերությունների կարգավորման, քաղաքացիական իրավունքի մասին ընկալվել են բուրժուական երկրներում որպես իրավական կարևոր սկզբունքներ: Նապոլեոնի հայտնի կոդեքսի քննարկման և ձևավորման ժամանակ իրավագետները հենվել են հոռմեական իրավունքի վրա: Նույնը տեսնում ենք ուրիշ երկրներում: Ցարական բռնակալության օրերին հրապարակված կոդեքսի հայտնի 10-րդ հատորի մասին կարելի է նույնը ասել:

Հին Թուրքիայում նոր քաղաքացիական կոդեքսի մշակման ժամանակ հիմնական հենարաններից մեկը եղել է նապոլեոնյան կոդեքսը: Կասկածից դուրս է, որ առևտրի և վաճառականության, արդյունաբերական շինարարության պրոբլեմներն ուսումնասիրող էրուզիտ Մամուրյանի վերոհիշյալ դիտողության մեջ հնչում է նկատելի շափով նաև բուրժուական նոր գաղափարախոսության մտնետիկներից մեկի ձայնը:

Երկու խոսք կուզենայինք ասել վերոհիշյալ հատվածներին կցված պատմական այն ուրվագծի մասին, որ Մամուրյանը նվիրել էր «Հայոց Պատմության»-ը: Նշանակալից ակնարկ լինելով հանդերձ, այդ ուրվագիծը իրականում հայ պատմիչների և առանձնապես Մովսես Խորենացու հայտնի «Պատմության» որոշ էջերի շատ հակիրճ մի շարադրությունն էր:

Սակայն Մամուրյանը XIX դարի ականավոր գործիչներից մեկն էր և, իհարկե, պետք է փորձ աներ հայրենի ժողովրդի պատմությանը մոտենալ բուրժուական նոր պատմագիտության դիրքերից: Իրականում նա կրկնում է ավանդություններն ու զրույցները թաղավորների ու սրբերի մասին, մեծաբան է «հրաշքներ գործող քրիստոնեության» հիմնադրին, նկարագրում է գայրալից տոնով հնօրյա կրոնական պատմիչների կողմից դատափետված Արշակի ու Պապի «անկարգ կյանքն» ու անհանդուրժելի ձեռնարկները: Ավելի ուշագրավ կարելի է համարել «Հայոց քաղաքակրթության»-ը նվիրված այն հատվածը, ուր կրոնական-իդեալիստական հայեցակետը կապակցված էր

¹⁰ Նույն տեղում, էջ 340:

հայ նախարարությունների քննադատության հետ: «... Երբեմն,— նկատում է Մամուրյանը,— միաբանությանը զորացած թույլ մ'էր [նախարարություններ] հյուսիսային ասպատակներու դեմ և տերության համար ազգու նեցուկ մը... սակայն երբեմն էլ «անիշխանության գրգիռ կը դառնար և հայրենի թշնամյաց ձեռքը զենք...»¹¹:

Չնայած այդպիսի մոտեցման, Մամուրյանը բարձր է գնահատում նախարարներին և խանդաղատանքով է հիշատակում նշանավոր «աշխարհաշեն» նախարարներին՝ առանց քննադատական աննշան խոսք անգամ նետելու ուսմիկ հայ ժողովրդին շահագործող գեթ մի բռնակալի մասին: Ներհակ սոցիալական ուժեր նա հայրենի երկրում չի տեսնում ու չի կամենում տեսնել: Կարելի է ավելին ասել: Նա ակնհայտ բավականություն է նշմարում ներհակ «դասերի» բացակայությունը և չի ցանկանում խոսք ասել հնօրյա կրոնական-ժողովրդական շարժումների մասին: Հայ մշակույթին նվիրված ուրվագիծը կարող է տարակուսանքներ ստեղծել: Այստեղ նշված է, որ հեթանոսական անցյալում եղել է սոսկ «անդիր և անհայտ» գրականություն, որոնք կորել են: Միաժամանակ Մամուրյանը հայտնում է այն կարծիքը, թե անցյալում՝ մինչև Մեսրոպի ժամանակը «մեհենական և քրիստոնեական գրվածոց» համար գործածվել են «զենտ կամ մարապարսից, ասորի և հույն տառերը»: Հին հայ երգիչները, վիպասանները Մամուրյանի ենթադրությամբ երգում էին «դյուցազունների և թագավորների» գործերը և երբեմն էլ «գրով էին ավանդում» այդ միևնույն երգերը: Միաժամանակ անվանի հայ գրողը նշում է նաև հետևյալը՝ «կարծվի թե հայերն ի սկզբան սեպածե կամ բեհազիր տառերը կգործածեին...»: Որքան էլ անորոշ են Մամուրյանի դիտողությունները, մենք չենք կարող անուշադրության մատնել նման տողերը: Պետք է ենթադրել, որ նա իր հիպոտետիկ կարծիքներն էլ առաջադրել է արձագանքելով իր օրերի բանասերների որոշ դրույթներին: Ազաթանգեղոսի, Զենոբ Գլակի, Փավստոս Բուզանդի մասին նա գրում է. «... Այս մատենագիրներն հունարեն կամ հույն տառերով հայերեն գրած էին հայկական նշանագիրներուն գլուտն առաջ...»: Շատ հակիրճ է հայ մշակույթի մասին գրված ուրվագիծը: Այդտեղ հիշատակված է, որ Սահակը և Մեսրոպը եկան ու «հայ մատենագրության ոսկեդարը բերին, իրենց աշակերտներովն, որ առաջին թարգմանիչներ կկոչվին...»: Ապա հիշատակվում են Եզնիկ Կողբացին («անվանի», ինչպես ընդդրված է աշխատության մեջ), Կորյունը, Գավիթ Անհաղթը, Հովնան Մանգակունին, Մամբրե Վերժանողը: Խորենացու մասին նշված է, որ «հայ պատմագիրներու հայրը կկոչվի իր պատմությամբը...»:

Ինչպես էլ մենք շնորհակալ ենք Մամուրյանին, չենք կարող ժխտել այն, որ

¹¹ Նույն տեղում, էջ 403:

նրա ակնարկը շատ անկատար է: Նա կարող էր ավելին ասել Խորենացու և Փավստոսի մասին: Շատ հեշտ կարող էր կանգ առնել Թարգմանիչների վրա, բնութագրել Թարգմանիչների հարուստ լեզուն, վերջապես թեկուզ հենց թուցիկ ակնարկ նետել հայ մշակույթի առանձին վավերագրերի մեջ հնչող աշխարհիկ մտքի և ժողովրդական կենդանի մտքի արձագանքների մասին: Բայց նա այդ չի արել, որովհետև նրա նպատակը սկզբից արդեն այլ էր: Հիշատակելով հույն և հռոմեական պատմության գրվագները, նա «դասերի» հակամարտությունը համարել է տխուր երևույթ և չի կարողացել միանգամայն անաշու դիրք մշակել անցյալի դեպքերի նկատմամբ: Նրա համոզմամբ անցյալի թագավորների և կաթողիկոսների, նախարարների և հայրենի երկրի միասնության համար մարտնչող նախարար-դուցազունների ներդաշնակ միությունը պետք է դառնար հիմնական ելակետ բոլոր պատմական դեպքերի գնահատման ժամանակ: Կառչած կրոնական-իդեալիստական պատմագրության ավանդներին, նա սկզբից արդեն անցանկալի է համարել ռեալիստական դիտակետը: Ահա թե ինչու հույն և հռոմեական մշակույթի մասին նետված դիտողությունների մեջ մենք նշմարում ենք առաջավոր մտածողի դեմքը ավելի ցայտուն կերպով դժգոհված: Գիտուն և խոհուն գործիչը նշմարվում էր իհարկե անգամ հայոց պատմության նվիրված անկատար ուրվագծի մեջ: Սակայն ղեկավարվելով նախապես մշակված այն դիտակետով, թե անհրաժեշտ է բացահայտել և ընդգծել բացառապես հայ ժողովրդի միասնությունը, Մամուրյանը չէր կարողանում և չէր ցանկանում տեսնել ո՛չ շերտավորված հասարակության խավերը և ո՛չ էլ իրական հայ ժողովրդի՝ ռամիկ ժողովրդի կենդանի մտքի արձագանքները հայ հին գրականության մեջ...

4

Միջին դարերի պատմության ձեռնարկը կերտված է շատ ուշագրավ ձևով: Այդտեղ էլ նկատելի տեղ են գրավում սոցիալական բախումների մասին նետված դիտողությունները: Սակայն կոնկրետ դեպքերի և փաստերի նկարագրությունը շատ ավելի հյուսիս է և պատկերավոր: Մենք տեսնում ենք, որ Մամուրյանը ուսումնասիրել է բազմաթիվ նյութեր և ջանացել է հետևել մեծագույն ուշագրությունը մշակույթի պատմական զարգացման կարևորագույն ելևէջներին, զինված ամենից առաջ պատմական դիտակետով:

Մամուրյանը կտրուկ կերպով ընդգծում է կաթոլիկ եկեղեցու սերտ կապը Ֆեոդալիզմի հետ: «... Եպիսկոպոսներ և արքաներ,— գրում է նա,— իրապես ավատական իշխաններ եղեր էին...»: Վճռական կերպով նա դատափետում է ազնվականներին և գրում է «...ազնվականաց ձեռք ծաղած երկպառակությունները հասարակապետությանց շատ աղետարեր եղան...»: Քիչ հետո

կարդում ենք. «...Երբեմն նույնիսկ ժողովուրդը՝ ազնվականաց կոիվներեն ձանձրացած՝ օտար ազնվական մ'իբրև տերություն գլուխ կկարգեր...»: Մամուրյանը նշում է իտալական կոնդոտիերների դերը: Կան աշխատության մեջ տողեր սոցիալական շերտավորման, զանազան «դասերի», պարբերաբար բռնկվող բախումների մասին: Հատուկ մի հատված է նվիրված կրոնական-ժողովրդական շարժումներին, կաթարներին և դրանց ուսմունքի ուրույն կապին մանիքեականների ուսմունքի հետ: Չի կարելի ասել, թե Մամուրյանին լավ էին հայտնի առանձին շարժումների հատկանիշներն ու տարբերությունները: Սակայն ամենից կարևորն այն է, որ նա տեսնում էր հերետիկոսական հոսանքների կապը ժողովրդի հետ: Ալբիգոսականների շարժումներին նվիրված ակնարկների մեջ, օրինակ, Մամուրյանը համենայն դեպս ցուցադրում է կաթոլիկ կղերապետության ռեալիստիկ էությունը և բացահայտում է խաչակիրների կապը բռնակալական ուժերի հետ: Հռոմեական պապի վարքագիծը նկարագրված է բացասական գույներով: Աշխատության մեջ նշված է արաբ, թուրք, քուրդ, անգամ «հաշիշ» ազանգավորների ընդհանուր պայքարը խաչակիրների դեմ: Անզիտական գյուղացիական ապստամբություններին նվիրված էջերում Մամուրյանը հիշատակում է լուլարդներին և նկարագրում է Ուոտ Տայլերի սպանությունը: Վիլհելմ Թելին նվիրված էջերը ներբող են:

Աշխատության մեջ մանրամասն նկարագրական էջեր կան Յան Գուսի և գուսիտական պատերազմների մասին: Այդտեղ նշված է, որ Յան Գուսը գյուղացու որդի էր ու ընտիր տաղանդ ուներ: Յան Գուսը,— գրում է Մամուրյանը,— դատափետում էր կղերի մթությունները, եկեղեցու մեջ նշմարվող «զեղծմունքը»: Յան Գուսը խիզախորեն կուլի է ելնում Հռոմի դեմ: Կոնստանտի ժողովին Յան Գուսը ծառանում է ընդդեմ իր թշնամիների: Աշխատության մեջ պատկերավոր լեզվով են նկարագրված պատմական պայքարի ցնցող էջերը: Միաժամանակ ընդգծված է անսահման ժողովրդական դայրույթը ընդդեմ ռեալիստիկ ուժերի: Չեխերի մասին գրված է. «... կուզեին թե իրենց եկեղեցին Հռոմի լծին ազատել և թե երկիրն Գերմանիո իշխանութենե...»: Յան Ժիժկայի մասին աշխատության մեջ նշված է, որ «հնարագետ էր... կարծեք երկրներեն զրկված հրեշտակ մ'էր պապական Բաբելոնը պատժելու...»: Մամուրյանը դատափետում է Հռոմի կղերապետներին: «... Պապը հերետիկոսաց դեմ նոր խաչակրություն կբարոզեր, բայց պարապ տեղը. վասն զի Հյուսեանք կրոնական խանդով ու հայրենասիրական եռանդով վառված՝ միշտ իրենց թշնամյաց դեմ հաղթական կենեին...»: Գիտավորությանը Մամուրյանը նկարագրական իր ակնարկը կերտել է ջերմ ու պատկերավոր գույներով: Ջան Ժիժկան,— ասում է նա,— մահից առաջ ապսպրել է, որ «իր կաշին հանեն ու թմբուկ շինեն, որպեսզի գերմանացվոց դեմ միշտ հաղթական կանգնին...»¹²:

12 «Համառոտ ընդհանուր պատմություն, Միջին դարու պատմություն», էջ 296:

Տաբորիտների մեծ ժողովրդական շարժման վրա ծանրանալով Մամուրյանը նորից դատափետում է Վատիկանի հնօրյա տիրակալներին:

Աշխատության մեջ նկարագրված են նաև Իտալիայի տարբեր քաղաքներում բռնկված սոցիալական բախումները (Պադուա, Վիչենցա, Միլան, Ֆերարա և այլն): Կան նշանակալից տոզեր կոնդոտորներին, վենետիկյան ծովային առևտրի, Զենովայի մրցակցության ու պարտություն մասին: Նետված են թուրքիկ տոզեր ավատական ազնվականության դեմ ուղղված ժողովրդական ապստամբությունների և մանավանդ Ֆլորենտինյան համաբարությունների մասին: Ֆլորենցիայի «բարձր արհեստավորները», — նշում է Մամուրյանը, — բաղկացած էին բժիշկներից, գատավորներից, սեղանավորներից, իսկ «փոքր» արհեստավորների միությունները՝ դարբեններից, ներկարարներից և ուրիշ արհեստավորներից: «...Շատ անգամ կախված կծագեին մեծ ու փոքր համաքարներում, այսինքն հարուստ վաճառականներու ու ստորին գործավարներու դասին մեջ...»: Մամուրյանին, վաղեմի հին օրերին, իհարկե, հայտնի չէին շատ ու շատ կարևոր հանգամանքներ, մանավանդ զանազան արխիվային պահեստներից բաղկած կարևոր վավերագրերը և նույն այդ վավերագրերի հիման վրա կերտված գիտական-մեկնագրական հետազոտությունները: Մակայն և այնպես նա ուշադրություն արձանագրել է բավական կարևոր փաստեր: Կարելի է ենթադրել, որ Թուրքիայի մայրաքաղաքի յուրահատուկ իրականության մեջ նշմարվող «էսնաֆական» էություններն են թելադրել նրան այնքան մեծ ուշադրություն նվիրել դպրոցական դասագրքի մեջ առանձնապես իտալական արհեստավորների սոցիալական էություններին: Իտալիայի հնօրյա ներկայացուցիչներից մեկի՝ Կոզիմո Մեդիչիի մասին Մամուրյանը գրում է, որ դա «հայրենասեր, տաղանդավոր և լուսամիտ մարդ էր...»: Առանձին ուշադրություն է ընդգծված, որ Կոզիմո Մեդիչին «արվեստների ու գիտության» հովանավոր էր: Նշանակալից են նաև Լավրենտիոս Մեդիչիի ու Սավանարոլայի մասին գրված տողերը: Դատափետույնում հռոմեական պապերին, Մամուրյանը նիկոլո Ռիչենցիի մասին գրում է, որ «ժողովրդային մարդ էր... կփափագեր ամեն կողմ բանակալությունը չնջելով ընդհանուր հասարակապետություն հիմնել...»¹³: Դասագրքի մեջ նկարագրված են նաև միջնադարյան Իսպանիայի «դասերը»՝ ազնվականներն ու նրանց արտոնությունները, քաղաքներն ու քաղաքացիները, մանավանդ միապետ-թագավորների դեմ կռվի ելնող, «ընդդիմություն» անողները...

Առանձին ուշադրություն է հատկացված աշխատության որոշ հատվածների մեջ «քաղաքակրթության» զարգացմանը և բնորոշ ցուցանիշներին: Արհեստների, տնտեսական պայմանների, արաբ բամբակագործների ու արհեստավորների մասին զետեղված տողերը շատ որոշակի նպատակ ունենին՝ բա-

ցահայտել արևելյան ժողովուրդների դերը և օժանդակել ժողովուրդների բանկամության զարգացմանը:

Մամուրյանը նորից զեղագետ-գիտնականին հատուկ ընտրությամբ է հիշատակում իտալական մշակույթի առանձին ներկայացուցիչների անունները: Աշխատության մեջ նշված են Զիոտտոն, Մազաչչիոն, Բելլինին, Լեոնարդո դա Վինչին, Միքել Անջելոն, Բաֆայելը, Զիորջիոնեն, Տիցիանը: Կարելի է ենթադրել, որ Զմյուռնիայի վաղեմի դպրոցի բարձր դասարաններում ուսուցիչը պետք է լրացուցիչ տեղեկություններ հաղորդեր իտալական զեղագետների մասին: Նշենք այստեղ միջնակալ կերպով, որ Պոլսո հին հայկական դպրոցներից մեկի աշակերտական պարբերականներից «Երկրագունդ» հանդեսում զետեղված էր մի ակնարկ Պիկո դելլա Միրանդոլայի մասին: Դա ցույց է տալիս, որ առաջավոր արևմտահայ գործիչները 70—80-ական թվականներին մատուցանում էին միջնակարգ հայ դպրոցների բարձր դասարանների աշակերտներին բարձր գիտելիքներ: Մամուրյանի դասագրքերը հաստատում են կերտներին բարձր գիտելիքներ: Մամուրյանն էլ զծագրվում է պատմական այդ ձեռնարկների մեջ որպես շատ ուշիմ և խոհուն պատմաբան-իմաստասեր: Լեոնարդոյի մասին նա գրում է. «...Տոսկանացի էր և ոչ միայն նկարիչ, այլև ճարտարապետ, քանդակագործ և գիտուն»: Շատ բարձր էր գնահատում նա հոլանդական ռեալիստական արվեստի ներկայացուցիչների ստեղծագործությունները: Գերմանական ականավոր նկարիչներից հիշատակված են նրա ձեռնարկի մեջ Դյուրերը, Կրանախը: Թե որքան սուր զեղագիտական մեկնակետ ուներ Մամուրյանը, ցույց են տալիս առանձնապես քանդակագործության և ճարտարապետության վարպետների մասին նետված գիտողությունները: Նորից կարևոր պետք է համարել գիտավորյալ կերպով կատարված ընտրությունը: Աշխատության մեջ նշված են Նիկոլո Պիզանոն, Օրկանյան, Լուկա դելլա Րոբեան, Գիբերտին, Դոնատելլոն, Բրոնելսկոն: Հիշատակվում է նաև Բենվենուտո Զելլինին:

Նշանակալից կարելի է համարել ի միջի այլոց տրուբադուրների և տրուվերների մասին նետված գիտողությունները, ինչպես նաև իտալական բարբառների առթիվ առաջադրված դրույթները: Իտալիայի նշանավոր բարբառները (Միլանի, Վենետիկի, Մանտուայի, Զենովայի, Նափոլիի և այլն) հիշատակելով, նա գրում է հետևյալ տողերը. «... Տոսկանայի բարբառն այնքան կմաքրվի ու կծաղկի որ գրական լեզու կդառնա: Ուստի Տոսկանայի և մանավանդ Փիորենցայի մեջ իտալական նոր գրականությունը կփայլի և գրագետներ ռամկալան կամ կենդանի լեզուն կգործածեն քան թե լատիներենը...»: Ապա ծանրանալով «ազգային գրականության հիմնագրի՝ հռչակավոր» Դանթե Ալիգիերիի վրա, Մամուրյանը շեշտում է, որ «հանձարեղ» այդ հեղինակը քննադատել է մարդկային կյանքը, ակնարկ է նետել Իտալիայի պատմության

¹³ Նույն տեղում, էջ 316—317:

մասին, առաջադրել է իր իմաստասիրական կարծիքները... Հիշատակված են Գանթեից հետո Պետրարքան, Բոկաչչիո Արիոստոն: Միմյանց կողքին նըշված են «մեծ համբավ» վայելող երկու մատենագիր-քաղաքագետներ Մաքիավելլին և Գվինիարդինին:

Քարբաոնների և զանազան լեզուների հարակցությունների առթիվ նետված թուուցիկ նոթերը գուցե և այսօր «հնացած» համարվեն: Այնուամենայնիվ, ուշագրավ պետք է համարել այն, որ XIX դարի 70-ական թվականներին Մամուրյանը մեծ ուշադրություն է նվիրել գավառական բարբաոնների, հասարակաց լեզուների, ինչպես ինքն է նշում, քննարկմանը: Մամուրյանը լեզվագետ չէր, բայց նա գիտեր, որ գրականության վավերագրերի ուսումնասիրությունը պետք է կապակցվի գրական վավերագրերի լեզվի ուսումնասիրության հետ: Միանման գիտողություններ է նետել նա արևմտյան ուրիշ ժողովուրդների գրականության մասին: Անգլիական գրականությանը նվիրված գիտողությունների մեջ նա կանգ է առել անգլերեն լեզվի էվոլյուցիայի վրա: Բնորոշ է այն, որ Մամուրյանի առանձին ուշադրությունը գրավել էր Լանգլանդի պոեմը: Մամուրյանը «ամենն հետաքրքրական ու կարևոր» գործ համարելով վանական հեղինակի այդ ստեղծագործությունը, գտնում էր, որ «Լանգլանդը անգլերեն լեզվին նոր ուժ է տվել»¹⁴: Քիչ հետո ծանրանալով Չոսերի վրա, նա նշում է, որ Չոսերը «միանգամայն երևելի բերթոզներից մեկն» է եղել: Սլավոյան գրականությանն անդրադառնալով, Մամուրյանը հիշատակում է Իգորի արշավանքի մասին կերտված անհայտ հեղինակին: Անկատար և անբավարար են նաև լեհական և չեխական գրականություններին նվիրված տողերը: Հատուկ տեղ էր նվիրված Մամուրյանի ձեռնարկների մեջ գիտության վավերագրերի հիշատակմանը: Ընդգծելով էվկլիդեսի և հույն գիտունների դերը, Մամուրյանը ասում է, որ մաթեմատիկական ուսմունքի զարգացմանը նպաստել են մեծագույն շափով արաբները: Նա գրում է, որ էվկլիդեսի նշանավոր գործը ժամանակին թարգմանել է «արաբացի» հեղինակ Նասիրեդդինը: Խոսքը Մարաղայի հայտնի աստղագիտարանի տաղանդավոր կառուցող Նասիրեդդին Տուսի մասին է: Նորերս հրատարակված ուսերեն ուսումնասիրության մեջ արևելյան ակնավոր այդ գիտնականի կյանքի և գործի էջերը նշված են: Մամուրյանը տակավին XIX դարի 80-ական թվականներին տպագրված հայերեն դպրոցական դասագրքի մեջ անհրաժեշտ է համարել հիշատակել այդ հուշակավոր գիտունի դերը: «Արաբացվոց պարտատանի մեջ վաղուց շատ առաջ գացած էր և արաբացիք անկից առին»: Հիշատակված են աշխատության մեջ նաև ուրիշ ակնավոր արաբական գիտնա-

կաններ, ի միջի այլոց աստղաբաշխության զարգացման նպատակով հուշակավոր գիտնականները: Թերթել է արդյո՞ք Մամուրյանը էլիզե Բեկլյուի հայտնի աշխատությունները, զժվար է ասել: Ժամանակին տակավին Բեկլյուն է նշել, որ եվրոպական հումանիտներից շատ առաջ արաբ գիտուններն են նպաստել «վերածնական» մշակույթի կազմավորմանը: Սակայն մի հանգամանք ակնհայտ է: Մամուրյանը իր դասագրքերի մեջ արևելյան ժողովուրդների մշակույթին մոտեցել է անաչառ դիրքերից՝ հետևելով առաջավոր արևմտյան պատմաբանների ուղեգծին: Պետք է ենթադրել, որ նրան ծանոթ էին Դրեպերի, Նլոսսերի, Բեկլյուի նման առաջավոր գործիչների գիտողությունները հին արևելյան ժողովուրդների մշակույթի հատկանիշների մասին: Մշակույթի վավերագրերի մասին կազմված վերջին տողերը նույնպես պետք է նշանակալից համարել: Այդտեղ Մամուրյանը գրում է. «... Վերջապես հուշակավոր կոպերնիկոս եկավ և նոր ու բանավոր գրություն մը գտնելով՝ աստղաբաշխության և մտաց մեջ հեղափոխություն մը պատճառեց...»: Քիչ հետո հիշատակելով կոպերնիկոսի կյանքի մասին, Մ. Մամուրյանը ընդգծում է, որ աստղաբաշխները և առաջավոր գիտնականները ընդունել են կոպերնիկի ուսմունքի ճշմարտությունը: «... Այսպես կոպերնիկյան գրությունն ոչ միայն աստղագիտությունը տապալեց, այլև մառդկային մտաց նոր ուղղություն մը տուավ...»: Այդպիսով Մամուրյանը վճռական կերպով հրահանգում է հայ ուսուցիչներին պարզաբանել պատմության դասավանդման ժամանակ գեյիոցենտրիստական ուսմունքի մեծագույն գիտական և հեղափոխական նշանակությունը: Եթե ամբողջ աշխատության մեջ դատարկեցնելով էր կաթոլիկ եկեղեցու զաղափարախոսությունը և ապա միջնադարյան ինկվիզիցիան, ապա դասագրքի կարևոր հատվածների մեջ նկարագրված էին առաջավոր մշակույթի շահակիրները, հումանիստ մտածողները, բնագետները և ժողովուրդների բարձր զաղափարական որոնումներին արձագանքող գործիչները: Բնորոշ պետք է համարել այն էլ, որ միջին դարերի պատմության վերջին հատվածին կցված իր հավելվածի մեջ Մամուրյանը հայրենի ժողովուրդի պատմությանը մոտեցել է նորեն կրոնական իդեալիստական պատմահայեցության դիրքերից: Դրանով էլ, գուցե, կարելի է բացատրել այն, որ «հայոց քաղաքակրթության» մասին կազմված ուրվագծի մեջ նա նույնպես իր հիմնական ուշադրությունը նվիրել է «հայոց անմիաբանության» շնորհիվ ստեղծված երևույթների քննարկմանը: «... Մեր միջնադարյան գրականությունը մեծ մասամբ, — գրում է նա, — պատմական ողբերգություն մ'է ազգին թշվառության վրա...»: Մի ուրիշ անգամ նա գրում է, որ հայ մատենագրությունն անցյալում մեղամաղձիկ գույն ունենալով հանդերձ աղքատ է եղել, իսկ պատմագիրները տառապանքների ազդեցության ներքո «միակողմանի հայեցուցացք» են ունեցել... Որքան էլ կտրուկ ու վճռական չեն նման հայտարարությունները, պետք է

¹⁴ Նույն տեղում, էջ 365: Г. Мамедбегли, Основатель Маррагинской обсерватории Насирэддин Туси, Баку, 1961.

ասել, որ այս անգամ էլ Մամուրյանի պեսիմիստական հայեցողությունը ստեղծվել էր նրա կրոնական-իրենախոսական մոտեցման շնորհիվ: Ընդհարել նրանում է, որ Մամուրյանը չէր ցանկանում հաշտվել ազգային միասնականությունը «բայթալող» հոսանքների կամ գործիչների հետ: Երբ խոսք էր բացվում հույն ազատախոհ Իմաստասերների մասին կամ էլ ստրուկների ղեկավար Սպարտակի մասին, կամ Գրաբկոս եղբայրների մասին, նա տեսնում էր սոցիալական բախումները և գտնում էր նույնիսկ համակրական խոսքեր ժողովրդի ներկայացուցիչների մասին: Նույն մոտեցումը տեսնում ենք նաև միջին դարերի պատմության նվիրված հատվածներում:

Հայ ժողովրդի պատմության մեջ նա ցանկանում էր տեսնել միմյան միասնական ազգային հավաքույթ, իսկ այդ «միասնականությունը» բայթալող ազատախոհ գործիչներին չէր տեսնում ու չէր ցանկանում նշմարել: Նա միայն միասնականության զաղափարախոսների գոյությունն էր համարում հանդուրժելի: Կարդացել էր հայ պատմիչների երկերը, բայց չէր ցանկանում խոսք ասել հերետիկոսների ու հայ աղանդավորների կենդանի ժողովրդական մտքի ներկայացուցիչների՝ պավլիկյանների, թոնդրակյանների, ավատական եկեղեցու և ավատական պետության դեմ ծառայող ըմբոստների մասին: Նա առանձին զգացումով էր փառաբանում Հովհան Օձնեցու «բեղմնավոր դուխն ու հայրենասեր հոգին» ու չէր կամենում թեթև ակնարկ անգամ նետել քաղաքների արհեստավորների ու ուսմիկ ժողովրդի ըմբոստ ներկայացուցիչների, անգամ Սմբատ Զարեհվանցու նման գիտուն գործչի մասին: Զարմանալի չէ այդ ամենից հետո, որ Մամուրյանը չէր կարող տեսնել բացի հուսահատ կանչերից և տխուր ողբերգություններից ուրիշ երգեր: Նա չի ուսումնասիրել ժողովրդական մեր հեթաթեների մեջ հնչող աշխարհիկ մտածվածքը, ժողովրդական առածների զիպուկ խոսքը, պատմիչների երկերի մեջ նկարագրված աշխարհիկ մտածողության բեկորները, ազատախոհ հայ գործիչների մտածությունները կամ թե ժողովրդական էպիկական ստեղծագործությունների ուրույն ուղղությունը: Նա ամենուրեք տեսնում էր միմիայն վանքեր և լսում էր միմիայն հուսահատ կրոնական մեղեդիներ: Հովհան Օձնեցու և Գրիգոր Մաղիսարոսի նման գիտուն գործիչներն են եղել նրա համար ուղենիշներ և մեծարելի իմաստասերներ: Ահա ինչու Սպարտակին, Արնուլի Բրեշիացուն, Յան Գուսին, Բեկոնին, Գանտին, Լեոնարդոյին մեծ հարգանքով հիշատակող էրուզիտ ու խոհուն, տաղանդավոր հրապարակագիրը անհրաժեշտ ուշադրությամբ չի մոտեցել հայկական գուստների, հայ քաղաքացիների, հայ ուսմիկ ժողովրդի սոցիալական ելույթների ուշադիր ուսումնասիրության:

Չնայած այդ տարօրինակ դալտոնիզմին, հայ մշակույթի մասին կաղմված իր ուրվագծի մեջ Մամուրյանը հիշատակում է բազմաթիվ ու բազմազան կարևոր տվյալներ: որոնք թեև ազդում են ընթերցողներին արձանագրել զիտա-

վորությամբ անուշադրության մատնվող նշանակալից դեպքեր, փաստեր, վավերագրեր: Այսպես, օրինակ, ինքը՝ Մամուրյանը թվարկել է զանազան դարերի ընթացքում հիմնված հնօրյա հայ կրոնական ուսումնավայրերը: Բազմաթիվ այդ ուսումնավայրերը համախմբել են գիտություն, գրականություն, արվեստ և ճարտարապետություն սիրող բազմազան գործիչներին: Վանական ուսումնավայրերում անգամ չի մարել աշխարհիկ միտքը և չի լռել ժողովրդի հետ կապված գործիչների ձայնը: «... Կրնանք ասել, որ մեր միջնադարյան գրականությունն մեծ մասամբ պատմական ողբերգություն մ'է ազգին թշվառության վրա...» ճիշտ չէ այդ: Եղել են ժողովրդական աշխարհիկ տաղեր, եղել են էպիկական վեպեր, եղել են եկեղեցու գրաքննիչների ջանքերով արգելված դրական ուրիշ վավերագրեր: Միևնույն իր ուրվագծի մեջ Մամուրյանը հիշատակում է «ուսողական գիտության հետևող Անանիա Ծիրակացուն», նրա գիտական աշխատությունները, Հովհաննես Սարկավաղի գործը, Ուսուցիչու հայրենասիրական ողով կերտված պատմությունը, Կիրակոս Գանձակեցու պատմությունը, Հովհան Երզնկացու «Բանք հաղագս երկնային շարժմանց» աշխատությունը: Շատ բան հայտնի չէր, իհարկե, Մամուրյանին: Առանցքերը, հեթաթեները, առածները, ժողովրդական կպուսի վավերագրերը, տաղերի ու պատմիչների երկերի մեջ հնչող աշխարհիկ և կենդանի մտքի բեկորները կամ հետքերը նա չէր տեսնում: Նրա ամբողջ մտահայեցողությունը շատ որոշ ուղղություն ուներ: Այն ամենը, ինչ որ բացահայտում էր միասնականությունը բայթալող որևէ ուժի կամ հոսանքի առկայությունը, նա չէր կարողանում ու չէր ցանկանում տեսնել: Իր հավելվածներն էլ կցել էր հին ու միջին դարերի պատմության դասագրքերի հենց սոցիալական բախումների անընդունելիությունը հաստատելու և ուսմիկ ժողովրդին իշխողների հետ միաձուլող «միասնականության» զաղափարախոսության հիմնավորման համար: Հեշտ չէր դասագրքեր կաղմել: Անհրաժեշտ էր գտնել նպատակահարմար ոճ և սեղմ լեզվով նկարագրել այն ամենը, ինչ որ կարող էր հանդուրժելի դիտվել ոչ միայն ազգային ղեկավար հիմնարկությունների՝ Ազգային ժողովի և Ազգային Պատրիարքարանի, այլ նաև իշխող պետության կողմից: Անհրաժեշտ էր գտնել լեզու պարբերություններ, որոնք պետք է ընկալվեին լուսավորության գործին հետևող կրոնական և աշխարհիկ գործիչների կողմից: Այդ պատասխանատու աշխատանքը Մամուրյանը, պետք է ասել, կատարել է հմտությամբ: Նրա դասագրքերը ուշագրավ պատմական վավերագրեր են, որոնք չեն կարող անուշադրության մատնվել հայ ազգայնական-բուրժուական պատմագրության վավերագրերը ուսումնասիրող բանասերների կողմից:

Մամուրյանի ձեռնարկների մեջ ամեն մի ժամանակակից պատմաբան այսօր կարող է գտնել տարակուսանքներ առաջադրող թե՛ վիճելի, թե՛ միաժիտ և թե՛ սխալ դրույթներ: Սակայն և այնպես նույն այդ ձեռնարկների որոշ

հատվածների մեջ յուրաքանչյուր ուշադիր ընթերցող կարող է տեսնել առաջավոր և խոհուն հայ հումանիստ գրողի դեմքը—գիտություն զարգացման հետևողի և ժողովրդի մասին երազող գործչի դեմքը: Բազմաթիվ այն գիտողությունները, որոնք նվիրվել են անտիկ աշխարհի սոցիալական շարժումների և բախումների նկարագրության կամ թե մշակույթի ներկայացուցիչներին, բնութագրում են նաև Մամուրյանին: Արևոլդ Բրեշիացու կամ Ուտտ Տայլորի, Յան Գուսի կամ Յան Ժիժկայի, արևմտյան և արևելյան մշակույթի գործիչներին նվիրված էջերի մեջ նշմարվում է ժողովրդի հետ կապված բարբառները և բարձր արվեստը ուսումնասիրող հումանիստ-մտածողի խոհուն դեմքը: Ահա թե ինչու Մամուրյանի մտահայեցության հիմնական երանգներն ուսումնասիրող ոչ մի բանասեր-պատմաբան չի կարող ճշգրիտ խոսք ասել տաղանդավոր պրոգրեսիվ այդ գործչի մասին առանց նրա պատմական ձեռնարկների անաչառ քննարկման և նկարագրության...

Հիշատակված քաղվածքները անառարկելի կերպով հաստատում են, որ Մ. Մամուրյանը, հակառակ անապացույց և մտացածին կոահումների, «հեղափոխական» ուղեգծի և հեղափոխական դեմոկրատների ջահակիր չէր կարող լինել նույնիսկ XIX դարի 60—70-ական թվականներին: Նա անչափ տաղանդավոր գործիչ էր, գիտուն, էրուդիտ հրապարակագիր: Միաժամանակ նա եղել է «չափավոր» և «խաղաղ» շինարարության համոզված պաշտպան ու զաղափարախոս:

Իր պատմական դասագրքերը նա տպագրության է հանձնել 1877-ից առաջ, իսկ տպարանին հանձնելուց առաջ նախապես ուսումնասիրել է բազմաթիվ աղբյուրներ և նյութեր, ուշադիր կերպով մշակել է և ապա միայն գրի առել ու պատրաստել իր երկու հատորները: Այլ կերպ վարվել Մամուրյանի նման խոշոր գործիչը ո՛չ մի պարագայում չէր վարող: Ահա ինչու առանց վարանումների կարելի է ասել, որ իր չափավոր և խաղաղ հայեցությունը մշակութային շինարարության մասին նա մշակել է տակավին XIX դարի 60-ական թվականներին: Գասագրքերի մեջ նա միմիայն ավելի հստակ ձևով բացահայտել է իր պատմական և հասարակական մտահայեցության հիմնական հատկանիշները:

Երբ մենք ուշադրությամբ թերթում ենք «Արևելյան մամուլի» 1871-ի համարներում զետեղված ակնարկներն ու նյութերը, նշմարում ենք միևնույնը: Այդ համարներումն էլ բավական որոշակի կերպով արծարծված են Մամուրյանի այն հայացքներն ու մտորումները, որոնք առանց անհրաժեշտ հիմնավորման մերթ ընդ մերթ ազավաղվում են կամ քողարկվում: Մ. Մամուրյանի «Արևելյան մամուլի» համարները լավ են հայտնի: Տպագիր ակնարկները, հոդվածները, նյութերը այնքան պարզորոշ իմաստ ունեն, որ չեն կարող անտեղի տարակուսանքներ ստեղծել: Զետեղելով բազմազան նյութեր իր

հանդեսի էջերում, Մամուրյանը ինքը հիշեցնում էր ընթերցողներին, որ հեղափոխական ուղեգիծը հանդուրժելի ուղեգիծ չի կարող համարվել: Ամենևին պատահական չի կարելի համարել այն էլ, որ գիտավորության Մ. Մամուրյանը ծանրանում էր խաղաղ կուլտուրական շինարարության անհրաժեշտության և կարևորության վրա, երբ խոսք էր բացվում արևմտահայ իրականության մասին:

Այդպիսին էր նրա աշխարհայացքը թե՛ XIX դարի 60—70-ական թվականներին և թե՛ հետագա պատմաշրջանում: Այդպիսի հայացքներ և մտորումներ պաշտպանելով հանդերձ, նա պրոգրեսիվ խոշոր գործիչ էր և առաջավոր լուսավորիչ-հումանիստ, որի համոզումով գիտությունն ու գրականությունը, արվեստն ու մամուլը, առաջավոր կուլտուրան պետք է օժանդակեն «այրող» պրոբլեմների լուծմանը և հայ ժողովրդի վերելքին: Մ. Մամուրյանը շեշտված համոզումով կոչ էր անում իր հայրենակիցներին ստեղծել դպրոցներ և աղագային-կրթական հաստատություններ, աղագային արվեստ և թատրոն, հայ նոր գրականություն: Հասարակական-կուլտուրական համագաղթին շարժումը և միասնական կուլտուրական աշխատանքը նրա կարծիքով կարող էին դյուրին կերպով, անգամ «բարեկարգված» սեփականատիրական կարգերի պայմաններում ստեղծել հայ ժողովրդի համար ապահով վիճակ և նոր կյանք... Ավելացնենք այդ ամենին նաև հետևյալը. Մ. Մամուրյանի պատմական ձեռնարկները կրել են շատ որոշակի ուղղություն և առանձին մասերում հակիրճ լինելով հանդերձ, առաջադրել են գաղափարական-հասարակական բավական հետևողական ուրույն կոնցեպցիայի հետ կապված դրույթներ ու պատգամներ, որոնք հարազատ էին կազմավորվող հայ բուրժուական դեմոկրատիայի նոր մտավորականության համար:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», հասարակական գիտությունների, № 3, 1962:

«Մ. Մամուրյանը մշակույթի պատմության մասին», ՄՍՍՀ ԳԱ հրատարակություն, 1973 թ.:

ՐԱՅՖԻՆ ԵՎ ԻՐ ՌԵԱԿՑԻՈՆ ՔՆՆԱԿԱՏԸ

Րաֆֆին ակտիվ կերպով արձագանքել է XIX դարի 80-ական թվականներին հայ բուրժուական դեմոկրատիայի հասարակական-գաղափարական որոնումներին: Տաղանդավոր այդ վիպագրի աշխատությունների մեջ կան բազմաթիվ միամիտ մտորումներ, հայճեպ հայտարարություններ, հակասական երանգներ: Նրա մեծածավալ «Կյանք» վեպի մեջ աչքի են ընկնում ազգայնական-ոռոմանտիկայի շեշտը և այդ ոռոմանտիկայի հետ կապված տենդենցները: Նկատելի կերպով համակերպվելով հնօրյա պատգամներին, նա

անհրաժեշտ չափով հաշվի չի առել, ի միջի այլոց, սուլթանական բռնապետության դեմ ծառայող թուրք ժողովրդի ուրույն դիրքորոշումը: Սակայն և այնպես, նույնիսկ իր թերութուններով աչքի ընկնող այդ երկասիրության մեջ մենք տեսնում ենք պրոգրեսիվ խոհեր առաջադրող առաջավոր վիպագրի խոհուն դիմաստվերը:

Բաֆֆին այդ վեպում կերտել է թուրք կառավարության, հայ կղերականության, հայ վաշխառուների, հնօրյա հայ դպրոցի նշանակալից նկարները: Բեռլինատական անողորմ դուշներով է նա ցուցահանել արևմտյան կապիտալիստական երկրների էքսպանսիային օժանդակող կաթոլիկ և բողոքական միսիոնարների զաղրելի կերպարները: Վեպի որոշ հատվածները կազմելու ժամանակ նա ազդվել է առաջավոր ռուս վիպագիրներից: «Կայծերի» վերջին հատվածներից մեկում նկարված «Համրի» պորտրետը համենայն դեպս կարող է գրավել մեր առանձին ուշադրությունը:

Ամենևին պատահական չի կարելի համարել այն, որ այդտեղ Բաֆֆին ոչ միայն դրվատում է սիբիրյան վաղեմի հեղափոխականներին, այլ աշխատում է այդ կերպարը դարձնել հայրենի ժողովրդի կուլտուրական զարգացմանը նվիրված հայրենասեր մարտիկ...

Կասկածից դուրս է, որ 70—80-ական թվականներին Բաֆֆու հակասական հայեցողության շեշտված հատկանիշները պետք է առանձին ուժով աչքի ընկնեին: Հայ պարբերական մամուլի մեջ ցրված հողվածներն ու ակնարկները ցույց են տալիս, որ «Կայծեր» վեպը ստեղծել էր հասարակական մեծագույն ռեզոնանս մտավորական շարքերում: Հայ հասարակության, առանձնապես դեմոկրատական խավերը 80-ական թվականներին հանդես են եկել որպես «Կայծեր» վեպի շատ ակտիվ ընթերցողներ: Վեպի անմիջական տպավորության ներքո հայ մամուլի էջերում բռնկվել են սուր վեճեր: Կղերական պահպանողական «Մեղու Հայաստանի» լրագրի աշխատակիցներից մեկը՝ Հայկունին գրել է մի շարք քննադատական հողվածներ: Դատափետելով Բաֆֆու հայեցողությունը և առաջադրելով ռեակցիոն պատգամներ, կղերական այդ գործիչը ոչ միայն իր և իր ընկերների հայացքներն է արտահայտել, այլ միաժամանակ անուղղակի կերպով բացահայտել է Բաֆֆու գաղափարախոսության որոշ կողմերը:

Ահա այդ ամենն էլ թելադրում են մեզ, մոտենալ հնօրյա ռեակցիոն այդ հայ հրապարակախոսի շատ ուրույն իդեոլոգիայի բնութագրմանը:

1

Հայկունին՝ Բաբվի խոշոր նավթատերերի շրջանում հայտնի ավագ քահանա Գեղամյանն է: Ժամանակին նա բարձր է գնահատվել պահպանողական շրջաններում՝ որպես հեղափոխական հոսանքների բացորոշ հակառակորդ:

Թեև հեղափոխության տարիներին նա հրատարակել է բազմաթիվ հրապարակախոսական հողվածներ «Հովիտ» կղերական ժուռնալի էջերում: Նա հրապարակել է նաև մի շարք պատմական պուբլիցիստական ուրվագծեր:

Կուլտուրական շինարարության բոլոր բնագավառներում հայ ժողովրդի հեգեմոնը, ըստ Գեղամյանի, պիտի լիներ միայն հայ եկեղեցին: Հիմնավորելով այդ տեսակետը, նա չի սքողում իր վերապահ դիրքը ցարական կառավարության նկատմամբ և միշտ էլ ընդգծել է, որ չի կարող ձայնակցել ռուսական օրինեստացիան պաշտպանող գործիչների ուղեղծին:

Սակայն, իր պատմական ակնարկների մեջ նա ոչ թե ցարական կարգերի դեմ էր ծառայում, այլ՝ ցարիզմի կողմից մշակված եկեղեցական քաղաքականության դեմ: Նա գտնում էր, որ ցարական կառավարության բացասական դիրքը անկախ քաղաքականություն կիրառող հայ կաթոլիկոսների և հայ եկեղեցու հեգեմոնիան պաշտպանող կղերական ինտելիգենցիայի նկատմամբ, խանգարել է հայ կուլտուրայի զարգացմանը:

Միևնույն ուղեղծին էին պաշտպանում նաև «Մեղու Հայաստանի» լրագրի ղեկավարները: Պաշտպանելով կղերականության հեգեմոնիան և եկեղեցու միջոցով կառուցվող «ազգային կուլտուրայի» արժեքները, այդ լրագրի ղեկավարները, դրվատելով առևտրական-դրամատիքական հայ բուրժուազիայի ներկայացուցիչներին, աշխատում էին կուրացնել և հիմարացնել միամիտ իրենց ընթերցողներին առաձգական և կեղծ դեմոկրատական ղեկլարացիաներով:

Բաֆֆին հայ պահպանողականների համար ամենից առաջ ավատական կարգերի և ֆեոդալականացած եկեղեցու դեմ ծառայող գործիչ էր: Աշխարհիկ և դեմոկրատական կուլտուրայի ավանդները պաշտպանող Բաֆֆին քննադատում էր որպես եկեղեցականության և կրոնական դպրոցների ռիսերիմ թշնամի: Վերջապես Բաֆֆու կողմից առաջադրվող ռուսական օրինեստացիայի պաշտպանությունը սերտորեն կապակցված էր ռուսական առաջավոր և դեմոկրատական կուլտուրայի պաշտպանության հետ: Կղերական գործիչները չէին կարող լույս ղիրք բռնել եկեղեցու հեգեմոնիայի դեմ ծառայող և աշխարհիկ-դեմոկրատական կուլտուրայի պատգամները պաշտպանող վիպագրի նկատմամբ:

Երբ լույս են տեսնում Բաֆֆու «Խենթը» և ուրիշ գործերը, վիպագրի շեշտված հայեցողությունը դառնում է ավելի ևս կտրուկ: Ահա ինչու, հատկապես, այդ նոր էտպումն էլ սկսվում է Բաֆֆու դեմ կազմակերպված ինտենսիվ արշավը:

«Խենթը» գրված էր ռուսական օրինեստացիան պաշտպանող և ռուսական բանակի ազատագրական դերը հիմնավորող առաջավոր մտածողի դիրքերից: Այդ էր վեպի հիմնական դոմինանտը և հենց այդ դոմինանտն էլ թելադրում է

«Մեղու Հայաստանի» լրագրի աշխատակցին կուլի ելնել Բաֆֆու դեմ: Չգտելով «խելքի բերել» Բաֆֆու միամիտ և էնտուզիաստ ընթերցողներին՝ Հայկունին 1881-ին տպագրում է «Խենթի» քննադատությանը նվիրված իր ընդարձակ հոդվածաշարը («Մեղու Հայաստանի», 1881, № 183): Ավելի ևս կտրուկ ու մոլեգին է դառնում Հայկունու ելույթը «Կայծեր» վեպի հրատարակությունից հետո: Նոր վեպը շատ կարճ ժամանակվա ընթացքում ստեղծել էր ընթերցողների լայն շարքեր: Լիբերալների ճանաչված գաղափարախոս Լեոն էր «Մշակի» էջերում հրատարակել իր հատուկ հոդվածը («Մշակ» 1883, № 118—119):

Բռնկվում է շատ սուր բանավեճ: Հայկունին «Մեղու Հայաստանի» լրագրի էջերում տպագրում է իր հոդվածաշարը («Մեղու Հայաստանի», 1883, № 31, 37, 39): Քիչ հետո՝ «Մշակի» էջերում գետեղվում է Փավստոսի (Բաֆֆու) ընդարձակ հոդվածաշարը («Մշակ», 1883, № 141—146—148, 150): Նորից հանդես է գալիս միևնույն Հայկունին, որը քննադատելով Բաֆֆուն, առաջադրում է պահպանողական հոսանքի պատգամները («Մեղու Հայաստանի», 1883, № 104—109, 112, 113, 115, 117)... Այդպիսով մի տարի շարունակ երկու ամենահայտնի հայ թերթերի էջերում գետեղվում են ընդարձակ հոդվածներ և շարունակվում է շատ սուր բանավեճը:

Հայ ընթերցողների լայն շարքերը մասնակցում են այդ բանակովին: Ինքը՝ Հայկունին արձանագրում է, որ Բաֆֆու վեպերը սրտատրոփ կարդում էին գավառական հնուս վայրերում:

Ամբողջ այդ աղմուկն ու իրարանցումը ստիպում են հայ պահպանողականներին մորիզացիայի ենթարկել իրենց ուժերը և կազմակերպել Բաֆֆու դեմ հասարակական կամպանիա: Նրանք գտնում են հովանավորներ և Բաբվի խոշոր կապիտալիստների շարքերում: Վերջապես տպագրության է հանձնվում Բաֆֆու դեմ ուղղված հոդվածների ժողովածուն և նշվում այդ հրատարակության հատուկ դաստիարակչական նշանակությունը:

Այդ ժողովածուն լույս է տեսել Բաբվում 1884-ին՝ Սեյադ Ամիրյանի հրատարակությամբ: Գրքի վերնագիրն է «Բաֆֆու «Կայծերը». մատենախոսություն...»:

Սեյադ Մելրույան-Ամիրյանը 205 էջից բաղկացած այդ ժողովածուին կցել է հատուկ ներբողագիր՝ ուղղված կաթողիկոսական ընտրության Շամախու թեմական պատվիրակ Սարգիս Տեր-Միրջայլյան-Վարշամյանցին: Սեյադ Ամիրյանը գրում է այդտեղ, որ իր նպատակն է՝ պաշտպանել հայ եկեղեցու «նվիրական սկզբունքները մաքուրսական խաբեությունից և ցնորական հարվածներից...»:

Բացի այդ ներբողից, ժողովածուի մեջ գետեղված է բժիշկ Արամյանցի նամակը (գրված 1883-ի դեկտեմբերի 19-ին): Արամյանցը գրում էր Սեյադ

Ամիրյանին, որ ինքը մեծ հետաքրքրությամբ էր հետևում Հայկունու գրություններին և որ Հայկունու պատասխանները առանձին բավականություն էին տալիս իրեն... «Երբեք,— գրում է բժիշկ Արամյանցը,— իմ խիղճը ոչ մի տեսակ շարամիտ կամ թեթևամիտ գրվածից այնպես վիրավորված չէր, ինչպես Բաֆֆու «Կայծեր»-ից: Մեր սրտին անբուժելի ցավ էր, որ Բաֆֆու գողտրիկ գրչի նման մի ճարտար գրիչ... շարժվում է անմիտ և անիմաստ անեղենցիաների համար՝ եղծելով և աղավաղելով...»:

Շատ կտրուկ կերպով շեշտելով, որ Բաֆֆու «հայրենասիրական եռանդը պարուրում են ցնորքների և զառանցանքների տենդենցիաները», բժիշկ Արամյանցը միաժամանակ ճիգ է անում բնութագրել Բաֆֆու հասարակական դեմքը:

«Բաֆֆին,— նշում է նա,— ծափահարում է ռամկամիտ ամբոխի խոստացած բռնակալությանը»:

Արամյանցի համար Բաֆֆին ոչ միայն «հերետիկոս» է, այլ նաև դեմոկրատիայի գաղափարախոս: Դատափետելով հերետիկոս վիպագրին, Արամյանցը գրում է, որ այդ հերետիկոսը «պատրաստ է ամեն բույս եղծել, հարվածել այն, ինչ որ մարդկային բանականությունը դարերի ընթացքում ստեղծել է (դեմոկրատիայի) բռնակալությունը սանձելու համար...»:

Այդպիսի բնույթ էր կրում բժշկի խրատական գրությունը: Բաֆֆու վեպի ընթերցողը՝ նկատում է նա, ռամիկն է: Այդ ռամիկ ամբոխը գայթակղվում է, երբ կարդում է վեպը: Նետելով այդպիսի մի երկու սենտենցիաներ, բժիշկ Արամյանցը ի վերջո դիմում է Ամիրյանին և որոշակի կերպով ընդգծում, որ նրա մատենախոսական հոդվածների ժողովածուն կարող է մեծագույն հարված հասցնել «ամեն տեսակ անմիտ, անհեթեթ և վնասակար մտքեր ու գաղափարներ» տարածողներին: Առանձին գայրութով է Արամյանցը հիշատակում Բաֆֆու վեպի այն տողերը, որոնք մուսլիմներով էին բնութագրում հայ վանականներին:

«Ինչ տեսակ եղծանելի ներկերով նկարագրված էր այս պատկերը և որքան հանդուգն հանձնապատասխանությամբ, որ նենգությունը անպատեհ և անիմանալի կմնա...»: Մի քանի անգամ Արամյանցը մոլեգնորեն դատափետում է «հերետիկոսական» մտքեր արժարժող վիպագրին: «Բաֆֆին եղծում է պատմությունը, աղավաղում է նորա իմաստը, նենգում է փաստերը»:

Ինչպես տեսնում ենք, Հայկունի-Գեղամյանի հոդվածների ժողովածուի հրատարակությունը կոլեկտիվ մի ձեռնարկություն էր և, ըստ էության, կազմակերպված մի ելույթ: Բաֆֆին այս անգամ խարաղանվում էր որպես «ռամկամիտ ամբոխի բռնակալության» գաղափարախոս և որպես կոնսերվատիվ պատգամներին սուր հարվածներ հասցնող մի դեմոկրատ գրող:

Սեյադ Ամիրյանի, բժիշկ Արամյանցի, Վարշամյանցի, դրանց կողքին

կանգնած ժողովածուի բաժանորդների հիմնական միտքը շատ պարզ էր: Ժողովածուն պետք է սթափեցներ «գալթակոնցոցի» մտորումներով տարվող երիտասարդներին: Եթե մեծ նավթային քաղաքում Բաֆֆին հետևողներ չունենար, եթե կապիտալիստական այդ քաղաքի շատ ուրույն իրականության մեջ ոուս առաջավոր գրականության արձագանքները («Նոր» և «անհեթեթ» գաղափարները) հետևողներ չունենային, ինչ իմաստ ուներ անտեղի և ավելորդ իրարանցում ստեղծել: Ի վերջո Հայկունի-Քեղամյանի բոլոր հողմածները լավ էին հայտնի ընթերցողներին: Ինչ կարիք կար մեծ ծախսեր կատարել, բաժանորդներ հավաքել, ստեղծել հատուկ գրամական ֆոնդ, նորից արտատպել ու հրատարակել հայ ընթերցողներին բավական լավ հայտնի հողմածները...

Ժողովածուի հրատարակությունը կարևոր փաստ է և նշանակալից մի սիմպոսիում, կարելի է նույնիսկ ասել պատմական մի վավերագիր, որը անուղղակի կերպով բացահայտում է նշանակալից դեպքեր՝ հայ ընթերցողների ակտիվությունը և ապա նավթային մեծ քաղաքի հայ ընթերցողների, առաջին հերթին ոուս գրականության նորություններին հետևող ընթերցողների առանձնահատուկ մոտեցումը Բաֆֆու նոր վեպի մեջ արձարձված գաղափարներին:

Մեր այդ եզրակացությունը դառնում է ավելի հաստատուն, երբ անցնում ենք ժողովածուի քննարկմանը: Ամենից բնորոշն այն է, որ դատարկեցնելով Բաֆֆուն՝ ռեակցիոն հայ քննադատը հնարավորություն է տալիս մեզ՝ մոտենալ նաև Բաֆֆու դեմոկրատական տենդենցների և պրոգրեսիվ հայացքների անաչառ ճանաչողությանը...

2

Հայկունին կանգ է առնում ամենից առաջ «Կայծեր» վեպի բովանդակության վրա: Բնութագրելով վեպի իմաստը, նա հիշատակում է հիմնական կերպարները և ապա կարուկ կերպով բացահայտում իր բացասական դիրքը: Նա իրոնիայով է նշում վեպի շատ և շատ էջերը, ծաղրում է առանձին հերոսներին, բնորոշում է վեպի մեջ նկարագրված դեպքերի բնութագրման համար հատուկ ինտոնացիա...

Այսպես, օրինակ, ծանրանալով Ղարա Մելիքների ընտանիքի պատմության վրա, նա իրոնիայով գրում է. «...Բաղտի բերմամբ մնաց միմիայն Կարոն, որը մի քանի տարի Տեր-Թողիկի «գոթիսքում» (չափերտները Հայկունուն են) տանջվելուց հետո, վերջապես իրան հոր տանտիրոջ որսորդ Ավոյի ճանկն ընկավ — այսինքն, ընթերցող, գոթիսքից ելավ գեհեանը ընկավ...» (էջ 6):

Անցնելով մեկ ուրիշ էպիզոդի նկարագրությանը, Հայկունին, ահա թե ինչպես է շարահյուսում Բաֆֆու խոսքերը՝ «...մյուսները մնացին Հասոյի ազարակում: Այնտեղ նրանք լավ կերան, լավ էլ կոնծեցին: Կոնծաբանություն

նր, իհարկե, առանց երգի շեղավ, թե սոլով և թե «խորով» երգեր էին երգում... Ես էլ ասում եմ, որ գինու մեջն է և հաշտություն ուսմիկների մեջ, իսկ լուսավորյալների մեջ ազգասիրություն, այսինքն՝ ճառաբանություն...» (էջ 9):

Ակնհայտնի իրոնիայով է հիշատակում «Մեղուի» աշխատակիցը «էշի փալանի» (Հասոյի) կարծիքները «աշխատանքի և հողի մասին» և ապա առանց կարկամելու ցինիկորեն հայտարարում է, որ այդօրինակ տողերը իրականում մերկացնում են ոուսական «գեմլուկեցիների» քողարկված կողմնակցի մտորումները: Ծաղրելով է նշում Հայկունին բանակցությունները եզիդիների ցեղապետ Միր Մասումի և ասորիների պետ Մար Շիմոնի հետ: Վեպի հիմնական հերոսներից մեկի՝ Կարոյի մասին նա գրում է. «...Վերջինս (Կարոն) եզիդիների ցեղապետի հետ արգեն զաշնակցած պրծած էին և մի քանի հինավուրց աշտարակներ էին ամրացնում: Կարոն ուներ և ամբողջ Տաճկաստանի քարտեզը (չեմ կարծում թե Կիպրոսի գործարանից դուրս եկած): Յեղապետի կշտից հայ կտրիճները գնացին մի ինչ որ «գիժ Տեր-Պետրոսի տունը»:

Այսպես տենդենցիոզ կերպով է շարադրել Հայկունին վեպի որոշ էջերի բովանդակությունը: Նա գրում է, որ Բաֆֆու վեպը «մի ծրագիր է տաճկահայերի ապագա կյանքի, գործունեության ... գեղարվեստական կոշվելու իրավունք չունի»: Չնայած այդպիսի հայտարարության, նա ավելի մանրամասն ծանրանում է վեպի հերոսների գաղափարների, հեղինակի հայացքության, վեպի գաղափարական առանցքի վրա:

Քննադատելով Բաֆֆուն, Հայկունին դատարկեցնում է նաև առաջավոր հայ կրասիկներին: Նա գրում է, որ «Կայծերի» մեջ նշված որսորդ Ավոն Աբովյանի Աղասին է, Աղայանի Հարությունը, Պոռչյանի Վարդը, Մերենցի Թեոդորոս Թշտունին կամ Թորոս Լևոնին: Այդպիսով, «Մեղու»-ի աշխատակիցը բացահայտում է Բաֆֆու հերոսների կապը Աբովյանի, Աղայանի, Մերենցի հերոսների հետ: Նրան՝ այդ «քննադատին» դուր չէր գալիս առաջին հերթին Բաֆֆու վեպի քաղաքացիական տենդենցիան, դեմոկրատական ուղղությունը: Հայկունին դիտավորյալաբար մի քանի անգամ իրոնիայով կրկնում է «էշի փալան» խոսքը: Հնօրյա Բաբվում բուրժուանների շրջանում այդպես էին անվանում պարսիկ շքավոր համալներին և գավառից դեպի նավթային հանքերը նետվող շճած հայ գեղջուկ աշխատավորներին:

Առանձին կատաղությունները Հայկունին կանգ է առնում վեպի մեջ նկարագրված հնօրյա «մանկավարժներին» նվիրված էջերի վրա: «...Պարոն Բաֆֆու Տեր Թողիկը, — գրում է նա, — դա Աղայանցի Տեր Մարկոսն է, այն զանազանություններ, որ Տեր Մարկոսի համար, ես մի օր ավագ քահանություն և ծաղկի փիլոն կցանկանայի, իսկ Տեր Թողիկի համար իմ կարծիքով, իրա հասարակ փիլոնն էլ հերիք է»: Մի ուրիշ անգամ նա խոսքով դատարկեցնում է Բաֆֆուն

հին դպրոցի «անհանդուրժելի» նկարագրության և Տեր Թողիկի «տենդենցիոզ» նկարագրության համար:

«Րաֆֆու հերոսները, — կարդում ենք «մատենախոսության» մեջ, — «Թրուշուններ» են, միայն ոչ Հայաստանի, այլ օտար երկրների թռչունների փետուրներով ծածկված»: Ասելով այդ, Հայկունին նկատի ունի առաջավոր ռուս գրողների ազդեցության ներքո մշակված առանձին մտորումները և «Կայծերի» որոշ հերոսների այն դիտողությունները, որոնք ուղղված էին շահագործող դասակարգերի դեմ: Ակնհայտնի իրոնիայով և ատելությամբ նշելով հայ կլասիկների վեպերի հերոսների «վեհանձնհոգությունը» նա գրում է «... այդպիսի վեհանձնհոգություններ մենք շատ անգամ տեսնում ենք «Կայծեր»-ի գործողների մեջ...» (էջ 22):

Րաֆֆին, ջանալով ընդգծել իր հերոսների արժանիքները, թելադրում էր դրանց արժարժեղ քաղաքացիական խոհեր, լինել խիզախ, նետել դիզակատիկական սենտենցիաներ: Բնորոշ է, սակայն, որ «Մեղուի» աշխատակցին զայրացրել էին շեշտված հերոսների միայն որոշ զաղափարները և առաջին հերթին եկեղեցու և ամիրայության դեմ ուղղված դիտողությունները, Հայկունին շատ լավ գիտեր, որ իր բոլոր խոսքերին հետևում են թե՛ ցարական ցենզորները և թե՛ ոստիկանական հաստատություններին զեկուցագրեր ներկայացնող գաղտնի լրտեսները: Չնայած դրան, նա «Կայծերի» հերոսներից մեկի՝ Կարոյի «ոգևորված ճառերի» նշանակության զաղտնի իմաստը ցուցահանելու նպատակով, ձայնակցում է Վատիկանի ռեակցիոն պրոպագանդիստներին և գրում է հետևյալ տողերը՝ «...հիշում եմ նմանապես մի կոմունարի այդպիսի և կարծես թե բառացի ճառը, որ տպած են Մխիթարյան վարդապետները իրանց մի թարգմանության մեջ...» (էջ 30):

Նշանակալից այդ տողերից հետո Հայկունին գրում է. «Բայց ինչ հարկավոր է մեզ այնքան հեռուները գնալ: Մեր մյուս գրողներն էլ այդ իմաստով ճառեր շատ ունին խոսած...»: Ավելի հեռուն նետվել դրանից հետո անհնարին էր: Հայկունին ընդգծում է, որ «կոմունարի» ճառի նման ճառեր են արտասանել նաև Աբովյանի և Աղայանի հերոսները: «... Պարոն Աբովյանի Աղասին, — այդ հրաբխային լեռը, այդ իմաստով ճառը խոսեցավ Անիի ավերակների մեջ: Պարոն Աղայանի Աբովյանը մի այդպիսի ճառ գրեց ուրիշներին սովորեցնելու համար...» (էջ 31):

Անշուք նշանակալից են «մատենախոսության» այն տողերը, որոնք նշվում են ուրիշ գրողների մտքերը կրկնող Րաֆֆու դատափետման համար: Բնորոշ է մանավանդ համեմատության համար բերված առանձին ֆրագմենտների յուրահատուկ ընտրությունը:

Հայկունին կանգ է առնում Պատկանյանի մի բանաստեղծության վրա և ապա գրում է, որ «Կայծերի» հերոսներից մեկի՝ Հասոյի երգը շեշտված

բանաստեղծության փոփոխված մի տարբերակն է: Քննադատելով դրանից հետո «Երկրագործի» մոտիվներ արժարժող Րաֆֆուն, և ապա բացահայտելով Րաֆֆու առանձնահատուկ մոտեցումը հատկապես աշխատանքի ներկայացուցիչներին, «մատենախոսության» հեղինակը գրում է հետևյալ նշանակալից խոսքերը:

«Դարձյալ պարոն Րաֆֆու եզրուհին երգում է, այն քաջ մարդու շարիկն է դա, իմ ձեռքով կարեցի, արյունոտ է կարմիր ներկված, արտասուքով լվացի...»:

Շատ ուշագրավ է այն, որ հենց այդ տողերից հետո «մատենախոսության» հեղինակը խորհրդավոր տոնով և ակներև կերպով ջանալով ընդգծել Րաֆֆու կասկածելի «կապերը» գրում է՝ «... Նալբանդյանի իտալուհին էլ ճիշտ այդ եղանակով երգում էր. «Ահա եղբայր, քեզ մի գրոշ, որ իմ ձեռքով գործեցի, գիշերները ես քուն չեղա, արտասուքով լվացի...» (էջ 33):

Հայկունին և նրա ազդեցիկ հովանավորողները միամիտներ չէին և շատ լավ գիտեին, որ Նալբանդյանի անվան հիշատակությունն անգամ կարող է լարել ցարական կառավարության «ուշադրությունը»: Ամենքին էլ լավ էր հայտնի, որ Նալբանդյանի բանաստեղծությունը քննարկվում էր որպես հեղափոխական պատրիոտիկայի մոտիվներ արժարժող ազգային և ժողովրդական երգ: Ավելի քան ակներև էր, թե ինչպիսի զազրելի նպատակներ էր հետապնդում «Մեղու Հայաստանի» լրագրի աշխատակիցը, երբ ծանրանում էր Նալբանդյանի բանաստեղծության վրա: Ահա, ասում և ընդգծում էր այդ «քննադատը», Րաֆֆին ոչ միայն ամբոխին է մեծարել և ոչ միայն ուսմական մոտիվներ է արժարժեղ, այլ նույնիսկ ակտիվ կերպով արձագանքել է Պետրոպավլովյան ամրոցի մեծ կալանավոր-հեղափոխականի մարտական երգերին...

Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, նշել, որ Հայկունին արձանագրում էր Րաֆֆու ղեմոկրատական հայեցության հատկանիշները: Նա գտնում էր, որ «Կայծերի» հեղինակը «պակաս ծառայություն չի անում հայ ամբոխին»: Նա շեշտում էր Րաֆֆու վեպի սոցիալական էկվիվալենտը, թեև միանման դիտակետից էր մոտենում նաև Աբովյանին և Աղայանին: Րաֆֆին, — գրում է նա, — Ռուսոյի հետևող լինելով, իզեալականացրել է իր հերոսներին և աշխատել է «ղեմագոգներ դարձնել» նրանց: Հայկունին ճիշտ է անում ի միջի այլոց հաստատել, որ Րաֆֆու «մի շարք մտերը բարոյվիճ հակառակ են «Մշակի»-ի բարոյներին»:

«Րաֆֆին, — գրում է նա, — շատ ավելի հեռու էր գնում, քան Գրիգոր Արծրունին: Րաֆֆին, օրինակ, գրվատում էր պայքարի և սրի նշանակությունը և խստիվ դատափետում ավետարանի «սուրբ պատգամները»: Նրա վեպի հերոսները — «ծաղրում են Տեր Թողիկի խորին տգիտությունը» և նույնիսկ

«մոլեռանդաբար այդ դպրոցի կործանումը պահանջում...» (էջ 46, 47): Շարաուսի և Ռենանի նման «զարգացած աստվածաբանների» ուրույն դիրքորոշումը հաշվի չէր առնում Բաֆֆին և ինչպես Հայկունին է ընդգծում, — կովի էր ելնում կրոնական բոլոր գրքերի դեմ: Հակառակ այդ ուղեգծին, «Մշակը» ասում էր՝ աշխարհաբարի վերածնեցեք ու գիրքը, տվեք ժողովրդի ձեռքը, թող կարգա և հոգով ու սրտով բարձրանա, վսեմանա—լույս, լույս...»: Գատափետելով այդպիսի մոտեցումը՝ Բաֆֆին պնդում է՝ «ձգեցեք, շուտ մի կողմ ձգեցեք այդ միտքը, ճնշող և սիրտ թուլացնող գրքերը—խավար, խավար...» (էջ 46—47):

Մեծագույն ատելությունը է Հայկունին նշում Բաֆֆու այն դիտողությունները, որոնք ուղղված էին հոգևորականության և հայ դրամատիկների դեմ: «Բաֆֆու հենարանը, — գրում է նա, — ամբոխն է» (էջ 57): Անհրաժեշտ է, «մի ճաշակ տալ մեր վիպասանի ոչ միայն փողոցային լեզվի, այլև լրբենի տգիտության հետ մի ազգի ամբողջ գասակարգերը ուսումնասիրելու սրբազան գործումը» (էջ 58 և այլն):

Բանից դուրս է գալիս, որ Բաֆֆին գրել է ժամանակին՝ «մեր դրամատիկները, սկսած առաջին ամիրայից, ավագակներ են և ապրում են ժողովրդի արյունով և քրտինքով»: Բաֆֆու կամքով — ավագակներ են անվանվել «թե՛ հայ դրամատիկները, թե՛ հայ եկեղեցականները (սկսած պատրիարքից մինչև վերջին հայր սուրբը)»:

Բաֆֆին, հիրավի, անողոր ակախոսական գույներով է նկարագրել իր «Կայծեր» վեպի մեջ հնօրյա հայ մենաստաններից մեկում կուտակված վանականներին: Բավական է միայն համեմատել Բաֆֆու նկարագրությունը Հուլյաի «Լուրդ» վեպի որոշ էջերի հետ, որպեսզի ակներև դառնա նրա հակիրճ, ակախոսական ակնարկի արտասովոր ուղղությունը: Մոայլ այդ պատկերը հիրավի կարող էր բնութագրվել որպես «կղերապաշտ վեղարավորների» դեմ ուղղված շատ անողոր հարված: «Մի մոռանաք, — գոչում է Հայկունին, — որ ձեր այդ պատկերով դուք վեր եք առնում և ծեփում քրիստոնեական եկեղեցվո պատնիսի վեր և քրիստոսի պաշտոնեի երեսն ի վեր...» (էջ 61):

Քիչ հետո, անցնելով վանական «խեղճերի» նկարագրությանը, Հայկունին մոլեռանդորեն գրում է, որ իզուր է Բաֆֆին «մի ամբողջ ազգի դարավոր սրբությունները խեղկատակության և եղենագործության որջեր շինել...» (էջ 62):

Բնորոշ է այն, որ հայ կրոնականներին քննադատող Բաֆֆին հենց դրա համար շատ անակնկալ կերպով դառնում է «հայ Պուշկին» և «հայ Միցկևիչ»:

Ինչպես տեսնում ենք՝ «Մեղու Հայաստանի» լրագրի աշխատակցին լավ էին հայտնի Պուշկինի և Միցկևիչի կյանքի ու գործունեության «գատափետելի» էջերը: Ինչ կարիք կար, — գրում է Հայկունին, — հիշատակել, թե Հա-

յաստանում չկա գոնե մեկ ժողովրդական դպրոց, իսկ վանքերի և եկեղեցիների թիվը չափազանց մեծ է: Ինչ իմաստ ունի պոլսահայ ամիրաների «ազգավնաս գործունեության» դատափետումը կամ հիշատակությունը:

«... Պարոն Բաֆֆու միակ ղեզը, — կարդում ենք «մատենախոսության» մեջ, — հայհույություն է — դա ղեղ չէ, այլ դա այն ատրոֆիա ներվորումն է միայն, որով Չերնիշևսկու երևելի բժիշկները, — Պետերբուրգի բժշկականության տուգերը, — կամենում էին բժշկել Կատերինա Վասիլենային: Պարոն Բաֆֆին, անշուշտ գիտե, որ օրիորդը այդ ատրոֆիա ներվորումով չբժշկեցավ» (էջ 70):

Ի վերջո Հայկունին նորից առաջարկում է Բաֆֆուն — «չլլատել բարոյական այն օղակները, որով մի ազգի դասակարգերը մեկզմեկու հետ միացած են ամբողջ դարերի ընթացքում...» (էջ 71):

Երկրորդ անգամ Հայկունին Բաֆֆու դեմ է ելնում ութ ամիս անց: Նա ինքը նշում է, որ «փոքրոգի մարդիկ» նեավել են իր դեմ «չոինդ ու բամբուլով»: Ապա ջանալով արդարացնել իր քայլերը, նա նկատում է, որ ակնարկելով առանձնապես Բաֆֆու վեպի «Ծրագրային նշանակությունը» ինքը նպատակ չի ունեցել լրտեսի դերը կատարել: «Ես «Կայծերին» ծրագիր չեմ անվանել, այլ իբր (կվազի) ծրագիր»: Ես նմանապես նրա հերոսներին չեմ համեմատել այն անձանց հետ, որոնք «մի ամբողջ աշխարհ սգո մեջ թողին»:

Փավստոս-Բաֆֆին շատ կտրուկ կերպով դատափետել էր իր «քննադատին»: «Մի աններելի համեմատություն է արվել, որ եթե մատենություն չանվանենք, կատարյալ զրպարտություն, շարամիտ բամբասանք պիտի համարվի»: Փավստոսը Հուլյաի հետ էր համեմատում մոլեգին իր «քննադատին»: «Արդյոք... Հուլյաի համբույրով չէ մերձենում պարոն Բաֆֆին ղեպի մեր հարդելի վիպասանները...» (էջ 98): Հիրավի, Հայկունին, համեմատելով Բաֆֆու հերոսների գաղափարները ռուս հեղափոխականների՝ ժելլարովի, Կիրալիչի Գուզափարևների հետ, հանդես էր եկել իրականում բավական զազրելի դերում: Ինքը՝ Հայկունին, համենայն դեպս, լավ գիտեր, որ շատ դժվար է կողք-կողքի շարել ռուս և հայ հնօրյա գործիչներին, որ երկու տիպի գործիչների գաղափարները ստեղծվել են տարբեր պայմաններում և զանազանվում են միմյանցից բավական որոշակի կերպով: Ջանալով արդարացնել իր վարքագիծը, նա առանձին ծանոթագրության մեջ գրում է հետևյալ տողերը:

«...«Ես հո չեմ ասում, թե պարոն Բաֆֆին «Կայծերում» էլ այնպես է վարվել, ինչպես մի ժամանակ «Նեներում», ուր Չերնիշևսկու վերա Պավլովնայի երազը իրան վարդանի բերանն էր դնում...»:

Իր «բացատրության» Հայկունին իրականում հաստատում էր իր դեմ ուղղված մեղադրանքների ճշտությունը: Փավստոսը, ի միջի այլոց, որոշակի կերպով գրում է, որ Հայկունին ցանկացել է վնաս հասցնել Բաֆֆուն և մատ-

նություն է արել՝ հիշատակելով Չերնիշևսկու ազգանունը, նշելով, որ «Բաֆֆին իր վեպերը գրել է Չերնիշևսկու ազգեցության ներքո: «Հայկունուն պետք է հայտնի լինի, որ Չերնիշևսկու հիշյալ գիրքը Ռուսաստանում արգելված է և հեղինակը անհայտության մեջ է ապրում... Ինչ նպատակ ունի պարոնը, որ մեր անմեղ գրականության վրա տարածում է այս տեսակ կասկածներ...»:

Ինչպես էլ մենք չգնահատենք այդ պոլեմիկայի բնույթը, մենք չենք կարող, իհարկե, անուշադրության մատնել այն, որ Հայկունին նպատակ է ունեցել սաստել Չերնիշևսկու հայ ընթերցողներին:

Այդպես է եղել նրա իրական նպատակը: Նա դիտավորությամբ էր նշել հեղափոխական-դեմոկրատական Չերնիշևսկուց հետո կանգնած Բաֆֆու գաղափարական կապակցությունը Չերնիշևսկու հետ: Նա դիտավորությամբ է հիշատակում Չերնիշևսկու ազգանունը ռեակցիայի այն տարիներին, երբ մեծ հեղափոխական-դեմոկրատի անունը չէին վստահում նշել ուսուցիչների էջերում... Կիրառելով պոլեմիկայի զարեղի պրիոմները, նա այնքան էլ միամիտ չէր և ձգտում էր անարեկման մեթոդով խափանել Չերնիշևսկու ազգեցությունը:

Շատ խիստ նետվում է Հայկունին նաև իր օրերի հայ դեմոկրատ թղթակիցների, առանձնապես հասարակական խոցերը մերկացնող թղթակիցների դեմ: «Ամեն մարդ, — գրում է նա, — դատավոր, խրատատու և քննիչ է դարձել: Ամենքն էլ Ոլիմպոսի նման մի-մի աստուածներ են եղել: Շարունակ շանթեր է, որ տեղվում է և կաթողիկոսի, և սինոդի, և առաջնորդի ամեն մի բարեգործ անձի ու հիմնարկության վրա: Ամեն բան ոտքից գլուխ քննվում, խորտակվում և ջախջախվում է»: Նորից՝ այդ տողերի մեջ մենք նշմարում ենք որոշակի ակնարկ՝ հայ դեմոկրատ գործիչների էլույթների մասին:

Մտտենալով Արծրունուն «ղեկիկատ» կերպով, Հայկունին Բաֆֆուն խարաղանում է անսահման ատելությամբ համակված: «Այդ զոհհիկը, — գրում է նա, — հանդգնություն ունեցավ իր հեքիաթներում... սեփական ցնդարանությունց նյութ և իր ձեռքի խաղազունը շինել ամբողջ հայ ժողովրդի անցյալը և ներկան... Բաֆֆին, — նկատում է Հայկունին, — փողոցային սրիկաների պես գործիչ է» (էջ 116), նա ամբոխի և նույնիսկ «խավար ամբոխի» մի երկրպագու է (էջ 117), վերջապես նա, — «շահախնդրությամբ տգետ ամբոխը շոշոշելով, նրան գործիք է ուզում անել շար դիտավորության...» (էջ 118):

Պատասխանելով սուլթանական ղեսպոտիզմի քննադատներին, Հայկունին գրում է, որ վեպի տենդենցիան «վտանգավոր և անհաշիվ է տանկանայելի համար»: Վեպի մեջ նկարագրված հայ հեղափոխականները նրա կարծիքով, ուսու հեղափոխականների նման գործիչներ են: «Վրոպայում հեղափոխականների տեսակը բավական շատ է, սակայն եվրոպական հեղափոխականների մեջ համակրելի են միմիայն նրանք, որոնք աշխատում են խաղաղ կուլտուրական միջոցներով...»: Ղրանք, բանից դուրս է գալիս, աշխատում են — «աչքի

առաջ ունենալով ժամանակը... տիրող իշխանության հարաբերությունը և ազդեցությունը: Այդ տիպի գործիչներին ոչ մի եվրոպական տերություն չի հալածում: Կան, սակայն, այնպիսի հեղափոխական գործիչներ, որոնք ձգտում են դիտարկել թագավորներին, կեղծել ժողովուրդների սովորությունները, գործադրել դժոխային գործիքներ, գրգռել ամբոխին և ապստամբացնել: Բաֆֆու հերոսները ահա հենց այդ տիպի գործիչներ են...»: Դրանք «ամբոխի» ներկայացուցիչներ են: Բաֆֆին բացի «ամբոխից» ոչ մի օգտակար դասակարգ չի գտնում: Հայ պատրիարքը, դրամատիկները... բոլորն էլ... ցեցերի նման կպած են ժողովրդի ջանին և ծծում են նրա արյունը...» (էջ 134):

Նշանակալի դիտողություններ է անում «մատենախոսության» հեղինակը թուրքիայում ապրող հայերի մասին: «Հինգ դար, — գրում է նա, — տանկահայք իսլամի մեծ խալիֆայի հլու հպատակներն են»: Անցյալում այդ տանկահայերի ղեկավարներն եղել են բարձր դասի ներկայացուցիչները: Ականավոր հայ ամիրաները՝ Պեղճյանները, Ճեզայիրլյանը, Տատյանները, նպաստել են «տանկահայերի» կուլտուրական վերելքին շատ ավելի, քան ամիրաների դեմ մարտնչող Սվաճյանները և Փանոսյանները:

...«Եթե այսօր տանկահայ ամբոխը փորը ի շատե ձայն է հանում... ինքնաճանաչության դասերը տանկահայ ամբոխը ինքն իրանից իր փալանի տակ շտեղծեց, այլ ուրիշներից, վերոհիշյալ դասակարգերից սովորեց ու սերտեց...»: Նորից, ինչպես տեսնում ենք, ամիրաների հնօրյա այդ երկրպագուն առանձին սիրով նշում է «ամբոխ և փալան» սոցիալական տերմինները, ջանալով ընդգծել իր վերաբերմունքը: «Ամբոխը», — նկատում է նա, — «տանկի հպատակների» մի հավաքույթ է: Բաֆֆին իր «տենթի» մեջ մեծարելով ուսու բանակը, իսկ «Կայծերի» մեջ դատասիտելով սուլթանական ղեսպոտական կարգերը, պատերազմի «արհավիրալից օրերում» իրականում մեծ վնաս է հասցնում «հլու հպատակներին»:

...«Մեր դարերում եվրոպական տերությանց մեջ ամենազարգացածը, ամենից ապահովը Անգլիան է, բայց ահա քանի դար է, որ այդ երկրում ոչ մի խիստ միջոց, մի հեղափոխություն պատահած չէ: Անգլիան բոլորովին կուլտուրական խաղաղ ճանապարհով է կաղզուրում ինքն իր մեջ իր ներքին ուժերը...»: Դիտավորությամբ աղավաղելով պատմական փաստերը, ոչ մի խոսք չստեղծելով անգլիական սոցիալական հնօրյա շարժումների մասին, նույնիսկ Չարտիստական շարժումների մասին խոսք չստեղծելով, Բաֆֆու «քննադատը» զրվատելով «անգլիական» լեզու ուղեգիրը, դատասիտում է ոչ միայն հեղափոխական մտքի ներկայացուցիչներին, ոչ միայն Պուշկինի, Միցկևիչի և այլ առաջավոր գրողների ուղեգրով քայլողներին, այլ նույնիսկ դրանց թեկուզ աննշան շարժում ձայնակցողներին: Ամենեին պատահական չի կարելի համարել այն, որ Հայկունին փորձ է անում հենվել ավատական-ճորտատի-

րական կարգերի փաստաբաններից մեկի՝ Խորաճոշակ և Տարյուրակային Բուրենինի վրա:

...«Այ լսեցեք, ոչ թե կարոներին, այլ զբանց պապերին ու ծնողներին ինչպես է նկարագրում պարոն Բուրենինը իր իմաստուն հողվածում (ընդ-գծումն ամենուրեք մերն է—Ա. Կ.): «Այն ժամանակ (խոսքը կրճատովի ժամանակաշրջանի մասին է—Ա. Կ.) Ռուսաստանում առաջ եկան մի տեսակ շատ ցած և անմիտ ու դատարկ, ստորաբարձ ու անձնատեք իմաստականեր, և կամ կատարյալ անպիտաններ, որոնք կարծեցին թե իրենք մի-մի դժոխային հերոսներ են: Միևնույն բանը կատարվեցավ և մեզ ավելի մոտիկ օրերում, 60-ական թվականներին, երբ Տուրգենևի «Հայրեր և ուղիներ» վեպից հետո՝ խիստ շատացավ այն վայրենի, տգեա և հիմար իմաստականների թիվը, որոնք իրենց մի-մի Բազարով երևակայեցին, որոնք իրենց ոչնչականներ (նիհիլիստ) էին համարում...»:

Բաֆֆու «քննադատի» հիմնական գիտակետը, ինչպես տեսնում ենք, ավելի քան պարզորոշ է: Իր սոցիալական հայեցողությունը նա ինքն է մերկացնում, խարազանելով «ամբոխի» գաղափարախոսներին և խնկարկելով «բարձր դասի» ներկայացուցիչներին՝ ամիրաններին: Նա նշմարում է ներհակ հոսանքների սուր բխումներ նույնիսկ հեռու անցյալում XIX դարի 20—30-ական թվականների իրականության մեջ: Նա ցուցադրում է հայ «ամբոխի» գրողներին ուս «ամբոխի» գրողների հետ միացնող կապերը: Նա լիովին գիտակցում է, որ ուս ըմբոստ գործիչները եղել են հայ դեմոկրատիայի ներկայացուցիչների գաղափարական «պապերն ու հայրերը»: Շատ պրիմիտիվ էր Հայկունի-Գեղամյանի պատմահայեցողությունը. սակայն և այնպես ելնելով իր շատ պրիմիտիվ այդ «պատմական» հայեցողության գրույթներից, հնօրյա հայկական կղերական գործիչը գիտեր, որ Բաֆֆին հայ իրականության մեջ կատարել է գաղափարական մի աշխատանք, որի իրական փմաստը չէր տարբերվում Պուշկինի, Լեբմոնտովի, Միցկևիչի օրերին սկսված գաղափարական աշխատանքի նշանաբաններից: Բուրենինի համար ատելի էին Պուշկինին, Լեբմոնտովին ձայնակցող առաջավոր ընթերցողները: Սկզբից մինչև վերջ ձայնակցելով Բուրենինին, «Մեղու Հայաստանի» լրագրի աշխատակիցը արձանագրում է առանց վարանումների, որ հայ դեմոկրատական երիտասարդության վրա մեծ ազդեցություն են թողել թե՛ XIX դարի 20—30-ական թվականների և թե՛ 60-ական թվականների առաջավոր ուս գրողները: Իր առաջին հոդվածներում նա ճիգ է անում դատափետել նույնիսկ բոլոր առաջավոր հայ գրողներին: Հետագայում, սակայն, «մատենախոսության» հեղինակը ստիպված է լինում «դեղիկատ» ժեստեր նետել Աբովյանի, Աղայանի, հայ մյուս գրողների հասցեին՝ ջանալով մեկուսացնել Բաֆֆուն և ուժեղացնել քննադատության կրակը միայնակ Բաֆֆու դեմ: Բավական է միայն ուշադրությամբ թերթել

«մատենախոսության» առաջին և հետագա հատվածների էջերը, որպեսզի ակնհայտնի դառնա շեշտված խորամանկ «ստրատեգիայի» հիմնական նպատակը:

Մենք դիտավորությամբ հիշատակեցինք մեր ուրվագծի մեջ Բաֆֆու դեմ ուղղված «քննադատության» բազմաթիվ բնորոշ էջերն ու տողերը: Ինչպես էլ մենք չմոտենանք այսօր անցյալի գաղափարական բախումների լուսաբանությանը, երբեք չենք կարող ժխտել այն, որ Բաֆֆու շատ ուրույն և հակասական աշխարհայեցողության ճշգրիտ մեկնաբանության համար շեշտված էջերն ու տողերը անպայման մեծ արժեք են ներկայացնում: Այդ էջերը թե՛ պարզում են հնօրյա հայ պահպանողականների ելույթների իմաստն ու զրր-դասատեճանները և թե՛ միաժամանակ անուղղակի կերպով օժանդակում են Բաֆֆու հայեցողության մի քանի կարևոր հատկանիշների պարզաբանությանը:

Կասկածից դուրս է, որ Բաֆֆին հեռու էր կանգնած Չերնիշևկուց, սակայն և այնպես, անվիճելի է, որ հեղափոխական-դեմոկրատ շինելով հանդերձ, Բաֆֆին հիացումով և մեծագույն ակնածանքով է մոտեցել ուս մեծ հեղափոխական-դեմոկրատի երկերի ուսումնասիրությանը: Անվիճելի կարելի է համարել այսօր այն էլ, որ Բաֆֆու՝ նման ընթերցողների թիվը այնքան էլ փոքր չի եղել հայ իրականության մեջ 80-ական թվականներին, որ հենց այդ ընթերցողների ակտիվությունն էլ թելադրել է նավթային ֆալաֆի հայ «մեծատունների» խմբակին՝ համախմբվել ու հրատարակել Բաֆֆու դեմ ուղղված «քննադատական» սեակցիոն հոդվածների ժողովածուն...

Մ. ՆԱԼԲԱՆԳՅԱՆԸ ԵՎ XIX Գ. 60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌՈՒՄ ԱՌԱՋԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Լենինգրադում նեայի ափին է կառուցված Պետրոպոլյովյան ամրոցը: Ամրոցի հետ է կապված Ալեքսեևյան Ռավելինը, որի խոնավ նկուղներում բանտարկվել են 1825 թ. (գեկարիստների անպատմություն) մինչև 1866 թ. հեղափոխական 149 գործիչներ (կալանավորների ցուցակը հրապարակել է ցարական բանտերի պատմաբան պրոֆ. Գերնետը):

1825 թ. Ռավելինի նկուղներն են նետվել Պեստելը, Ռիլեքը, Բեստուժեր, Մուրավյով-Ապոստոլը, Կախովսկին՝ կախաղան հանված դեկարրիստները: Հետագա շրջանում բանտարկվում են Պետրաշևսկին, Կարակոզովը, Իշուտինը, հայտնի գրող Շելգունովը և շատ ուրիշ գործիչներ: 1862 թ. ցարական ժանդարմները ամրոց են բերում նալրանդյանին:

Ալեքսեևյան Ռավելինի պատմաբանը այսպես է բնութագրում կալանավորների կացությունը. «Ամենազաղտնի այդ բանտը նետվելու և բանտից ազատվելու համար անհրաժեշտ էր ցարի հատուկ կարգադրությունը: Միայն

բերդի կոմենդանտը, ժանդարմների պետը և ապա երրորդ բաժանմունքի կառավարիչն իրավունք ունենել ամբողջ ու բանտ: Երբ բանտարկյալը մեռնում էր, կես գիշերին նրա դիակը դուրս էին տանում այնպես, որ ոչ ոք չիմանա, թե Ռավելիի նկուղներում բանտարկված են կալանավորներ...»: Գաժան այդ բանտից կալանավորները սովորաբար «ազատվում» էին մեռնելու կամ արտորավայրերում տառապելու համար:

Բանտը հյուսիսում է նալբանդյանին և նա հիվանդ վիճակում արտորվում է և 4 ամսից հետո մահանում արտորավայրում:

Նալբանդյանը հարազատ ժողովրդի դատը ձգտել է շաղկապել հին կարգերի դեմ ուղղված ժողովրդական-հեղափոխական շարժումների հետ: Հեղափոխական գաղափարները նրա համար նվիրական պատգամներ էին:

Զինված ուսու հեղափոխական դեմոկրատների առաջավոր մտքերով՝ նա ստեղծում է ուրույն հոսանք հայ իրականության մեջ: Ընկնում է սլաքարի ճամփին, առաջին գիրքերում, մինչև կյանքի վերջին օրերը գրիչ-սուրճ ձեռքին...

1

Միքայել Նալբանդյանը ծնվել է Նոր-Նախիջևանում 1829 թ. նոյեմբերի 2-ին (ն. տ.— 14-ին): Նրա հայրը արհեստավոր էր: Նախնական կրթությունը Նալբանդյանը ստանում է հայրենի քաղաքում և արդեն պատանեկության տարիներին աչքի է ընկնում իր արտասովոր ընդունակություններով: Որպես հոգևորական Նալբանդյանը պարտավոր էր յուրացնել ամենից առաջ կրոնական գիտելիքներ: Սակայն Նոր-Նախիջևանցիները կապված էին թե՛ մոտակա Ռոստովի, թե՛ հարավային Ռուսաստանի ուրիշ վայրերի ուսու բնակչության հետ: Ռուսերեն լեզուն, իսկ գրասեր հայերը նաև ուսու գրականությունը, հնարավորություն ունեն ռուսամասիրել հենց Նախիջևանում: Տակավին պատանեկության տարիներին Նալբանդյանը փոխադրել է ուսու հայտնի ազատախոս գրող Կանտեմիրի բանաստեղծությունը: Այդ թարգմանությունը լույս է տեսել 50-ական թվականներին Պատկանյանի «Արարատի» էջերում:

Նոր-Նախիջևանի հայկական համայնքը միատարր զանգված չէր: Քաղաքը շրջապատված էր հայաբնակ գյուղերով, որոնց աշխատավոր բնակչությունը հաճախ ընդհարվում էր մեծահարուստ ազանների հետ: Այդ վաճառական-ազաններին թշնամաբար էր տրամադրված քաղաքի չքավորությունը, նրանցից անբավական էին քաղաքի մեծամասնությունը կազմող արհեստավորները, մանր առևտրականները, կիսաապահով աշխարհական և հոգևոր պաշտոնյաները: Հարուստ ազանների մեջ աչքի ընկնող դիրք էր գրավում Խալիբյանը: Դա կապված էր թե՛ ցարական բարձր իշխանություն և թե՛ հայ կղերականության բարձր խավի հետ: Խալիբյանը խոշոր առևտրական էր: Կա-

տարում էր առևտրական խոշոր օպերացիաներ, գնում էր էժան դնով ցորեն և ապա սովի ժամանակ սպեկուլյատիվ գներով վաճառում: Նրա շուրջ խրմբված հարուստ վերնախավի ներկայացուցիչները աշխատում էին տուրքերի ամբողջ ծանրությունը բարձել արհեստավորների և գյուղացիների ուսերին: Իշխողների, տղրուկների այդ խումբը աշխատում էր իշխող դիրքեր գրավել քաղաքային մագիստրատի մեջ ու դառնալ հասարակական գումարների ինքնահեծան տնօրենը: Նոր-Նախիջևանի հայ իշխող և տիրապետող խավերը պաշտպանվում էին կաթողիկոսի կողմից: Սոցիալ-դասակարգային ներհակությունները և սլաքարը նոր-Նախիջևանյան համայնքում եղել է նաև անցյալում: Հայտնի է, որ Արղուիյանի տիրակալության օրերին հանդես են եկել Նոր-Նախիջևանում յուրահատուկ ազատախոս գործիչներ: Գրանցից մեկը՝ Գեղեջանյանը մտրակահար է արվել և ապա շղթայակապ արտորվել Սիբիրի ներչինսկ քաղաքը: Կաթողիկոսը հրահանգել է հետևել սրճարաններում համախմբվող մարդկանց: Սոցիալական ներհակությունները և դասակարգային սլաքարը դառնում են ավելի սուր 30—40-ական թվականներին: Գասակարգային ներհակությունները և սլաքարը ուժեղ տպավորություն են թողնում պատանի Նալբանդյանի վրա:

Նոր-Նախիջևանի հայ տիրապետող շերտերի և Խալիբյանի կողքին կանգնած էին ցարական ոստիկանները, ցարական շինովնիկները, հայ կղերականության գլուխ՝ ներսես կաթողիկոսը: Խալիբյանականների դեմ կոմունիստների շարքերում տեսնում ենք արհեստավորների, աշխատավորների, անապահով պաշտոնյաների: Հայ բուրժուական դեմոկրատիայի տակավին անկազմակերպ խմբակն էր դա, որ փորձ էր անում դեմոկրատացնել մագիստրատը, քաղաքային վարչական օրգանները, եկեղեցական-ծխական հաստատությունները: Նոր-Նախիջևանում, իսկ հետագայում նաև Բեսարաբիայում, Նալբանդյանը ուսումնասիրում էր աշխատավորների բողոքներն ու դիմումները հենց առաջնորդարանի գրասենյակում: Որոշ քաղաքացիներին օգնելով, նա կազմում կամ գրում է թեմական առաջնորդին ուղղված նամակներ-բողոքներ: Այդ նամակները կապում են առաջնորդի երիտասարդ քարտուղարին ժողովրդի հետ: Նալբանդյանը ատելություն է լցվում դեպի տիրապետողները, հենց դեպի կաթողիկոսը: Շատ սուր ընդհարում է ունենում կաթողիկոսի հետ:

Նալբանդյանը 1848 թ. օգոստոսի 9-ին հատուկ գրություն է ուղղում արքեպիսկոպոսին, խնդրում է արձակել իրեն ու հայտարարում է. «Չկարեմ ամենին մնալ ի հոգևորական կոչման...»:

Ներսես կաթողիկոսի և Խալիբյանական «կուսակցության» նախաձեռնությամբ կազմակերպված հետապնդումները ցույց են տալիս, որ Նալբանդյանը այդ շրջանում համարվում էր հակակղերական հոսանքի ուրույն ղեկավար: Կաթողիկոսը ձիգ է անում եկեղեցու իրավասության ենթակա «ամբարտավան» երիտասարդին պատասխանատվության ենթարկել ու պատժել:

Նալբանդյանը, խույս տալով կաթողիկոսի հետապնդումներից, 1853 թ. ուղևորվում է Մոսկվա և հովանավորություն է գտնում Լազարյանների կողմից, որոնք լավ հարաբերության մեջ շէին ներսես կաթողիկոսի հետ:

Մոսկվայում Լազարյանները սկզբնական շրջանում որոշ աջակցություն են ցույց տալիս Նալբանդյանին: Նա Լազարյան ճեմարանում դառնում է հայ լեզվի դասատու: Քիչ հետո՝ 1854 թ. (սեպտեմբերի 2-ին) Նալբանդյանը մտնում է Մոսկվայի համալսարան, նախ երպես ազատ ունկնդիր, իսկ հետագայում բժշկական ֆակուլտետի «օրինական ուսանող»:

Այդ մասին իր եղբորն ուղղված նամակում (1855 թ. փետրվարի 10-ին) նա գրում է. «Առավօտ մինչև երկու ժամը լինում եմ ամեն օր համալսարանում»:

Մոսկվայի համալսարանում Նալբանդյանը ուսումնասիրում է ամենից առաջ բնագիտական և բժշկագիտական առարկաները: Նրա գրադարանում պահված գրքերը ցույց են տալիս, որ նա մեծագույն ուշադրությամբ հետևում էր բնագիտական զրականությանը: Այդ տարիներին ռուս իրականության մեջ բնագիտությունը քննարկվում էր ուրույն ասպեկտով, որպես տեսական գիտական հայեցողությունը կազմավորող և կյանքի հեղաշրջման օժանդակող կարևորագույն գործոն: Գերցենը իր մեմուարների մեջ բնութագրում է ի միջի առջոց խորթ եղբայր Յակովլևին և պատմում նրա գիտական աշխատանքի մասին: Յակովլևի տիպի գործիչները դառնում են 50-ական թվականներին Տուրգենևի համար նոր սերնդի մտայնությունը բնութագրող Բադարովի յուրահատուկ պրոտոտիպեր: Մոսկվայի համալսարանում Նալբանդյանը լսում է ի միջի առջոց տաղանդավոր բնագետ Ռուլյեի դասախոսությունները: Ռուլյեն նախադարձիչան շրջանի էվոլյուցիոնիստ էր: Նա իրեն հատուկ ձևով ժողովրդականացնում էր առաջավոր բնագիտության սկզբունքները: Իր դասախոսությունների մեջ այդ գործիչը կոչ էր անում ուսումնասիրել կոնկրետ ռուսական միջավայրը, օգտագործել բնագիտությունը գործնական նպատակների համար: Վերջապես, գիտության միջոցով փոփոխություններ մտցնել բնության մեջ: Ռուլյեի մասին Նալբանդյանը իր եղբորը հիշեցնում է բանտից գրված այն նամակի մեջ (1862 թ. մայիսի 1), ուր կանգ է առնում բնագիտության գործնական նշանակության վրա, քննադատում է միակողմանի արհեստավոր բժիշկներին և շեշտում, որ— «Կենդանիների և բույսերի օդընտելացումը մարդկային կենցաղի բարելավման նոր աղբյուր է... Ռուլյեն մեծ ժողովրդականություն էր սլայելում թե՛ ուսանողական, թե՛ մտավորական շրջաններում. հատկապես 50-ական թվականներին: Նալբանդյանը ռուս ակնասվոր այդ գիտնականի դերը բարձր էր գնահատում... Ռուլյեն գրում է նա, օդընտելացման առաջին հիմքը դրեց... որբան կհրճվեր նա՝ տեսնելով իր անխոնջ ջանքերի հսկայական հաջողությունը...»: Բնորոշ է այն, որ Ռուլյեի մահվան կապակ-

ցությամբ Նալբանդյանը հիշում է կենդանիների և բույսերի ակլիմատիզացիայի, կարմիր որդանի, խեժի, գիստորաբեր պիծակի կարևորության մասին:

Մոսկվայից Նալբանդյանը մերթ ընդ մերթ ուղևորվում էր Պետերբուրգ: Լազարյան ճեմարան մտնելուց առաջ՝ 1853 թ. ուսուցչի իրավունք ստանալու համար նա հատուկ քննություն է տալիս Պետերբուրգի համալսարանի արեվելյան ֆակուլտետում: 1855 թ. Նալբանդյանը նորից ուղևորվում է Պետերբուրգ հատկապես հայկական տղարանի համար ստանալու պատվիրելու նպատակով: Քիչ հետո դառնում է միևնույն Պետերբուրգի համալսարանի ազատ ունկնդիր: Նա 1860 թ. (հունիսի 7-ին) այդ համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի հայ, վրաց և թաթարական բաժնում քննություն է տալիս, դիսերտացիա է ներկայացնում և արժանանում թեկնածուի աստիճանի:

Մոսկվայում և Պետերբուրգում շփվելով առաջավոր ռուս ուսանողության հետ, Նալբանդյանը ընդհուպ մոտենում է ռուս դեմոկրատական հոսանքների առանձին ներկայացուցիչներին: Նրա մտայնությունը հեղաշրջվում է հենց այդ մտավոր մթնոլորտում: Այդ փաստը հաստատվում է, երբ ավելի մեծ ուշադրությամբ ենք ուսումնասիրում նրա գրադարանի բոլոր գրքերը: Բացի հայերեն հրատարակություններից, նշանակալից տեղ են գրավում այդտեղ ռուսերեն հենց այն գրքերը, որոնք այս կամ այն ձևով նշվում էին 50—60-ական թվականներին ռուս-դեմոկրատական մամուլի էջերում: Եթե ամփոփենք ի մի այն տվյալները, որ կան Նալբանդյանի գրությունների և նամակների մեջ և ապա հաշվի առնենք վերոհիշյալ գրքերի նշանակությունը, մենք կտեսնենք, որ Նալբանդյանը ուսումնասիրում էր հենց այն նյութերը, որոնք հետաքրքրում էին ռուս առաջավոր դեմոկրատական ինտելիգենցիայի ներկայացուցիչներին: Բոկլ, Գերվինուս, Շլոսեր, Կուլբ, Լիբիխ, Ռուլյե, Իլինկով— բոլոր այդ գրողները քննարկվում էին որպես կուլտուրական վերելքին օժանդակող գործիչներ: Բանտից գրված նամակների մեջ Նալբանդյանը կանգ է առնում Սերվանտեսի, Մակուլեյի վրա: Իր «Աղցմիք»-ի մեջ նա տողեր է բնորոշում Բայրոնի, Շեքսպիրի, Ռուսսոյի գործերից և կցում է էպիգրամներ իր գործի առանձին մասերին: Գրիբոյեդովի «Խելից պատուհաս» կոմեդիայի ձեռագիր օրինակը պատվավոր տեղ էր գրավում Նալբանդյանի գրադարանի մեջ: Բնորոշ է այն, որ արդեն 1855-ին Նալբանդյանը համբավ է ստանում հայ ուսանողական շրջաններում:

Նալբանդյանը տակավին 1855 թ. որոշ քայլեր էր ձեռնարկել հայերեն հանդեսի հրատարակության գործը գլուխ բերելու համար: Այդ հանդեսը պիտի անվանվեր «Հյուսիսայգ»։ Հետագայում «Հյուսիսայգը» դառնում է արդեն «Հյուսիսափայլ»։ Հիշենք այստեղ այն, որ Գերցենի և Օգարևի նախաձեռնությամբ հիմնված «Հյուսիսային (կամ Բեռային) աստղ» հանդեսը զարգարված էր կախաղան հանված ղեկաբրիստների սիրուետներով: Հավանականու-

Մյուսից հետո չէր լինի, եթե մենք 1855 թ. Իսկանդերին ընթերցող Նալբանդյանի նախաձեռնությամբ ծրագրված հանդեսի վերնագիրը կապելինք գերցնյան 1855 թ. հրապարակված հանդեսի վերնագրի հետ:

«Հյուսիսսփայլի» մեջ Նալբանդյանը գրավում է առաջին ու ղեկավար դիրքերից մեկը: Ազդվելով ուսու հեղափոխական-դեմոկրատական գործիչներից, նա հայ իրականության երևույթների լուսաբանությանը մտտենում է նոր դիրքերից: Հենվելով հայ աշխատավորական լայն տարրերի, դեմոկրատական հայ ինտելիգենցիայի վրա, նա կուլի է ելնում հայ իրականության մեջ իշխող «օբսկուրանտներին» և ունակցիոն գործիչների դեմ: Նալբանդյանի կյանքի հետագա փուլերը լավ են հայտնի: Երբ ունակցիոն ուժեղանում է և միաժամանակ աճելի ակնհայտնի է դառնում նազարյանցի հետադարձ շարժումը, Նալբանդյանը որոշում է հանդեսի տպագրությունը փոխադրել արտասահման: Այդ ուղղությամբ նա որոշ քայլեր է ձեռնարկում առաջին արտասահմանյան ճանապարհորդության ժամանակ: Ինչպես հայտնի է, այդ ծրագիրը ինչ-ինչ պատճառներով գլուխ չի գալիս:

Արտասահմանյան երկրորդ ճանապարհորդության ժամանակ Նալբանդյանը ծանոթանում է Գերցենի, Օգարևի, Տուրգենևի և ուսու ուրիշ գործիչների հետ. ապա մոտ հարաբերություններ է հաստատում արևմտահայ առաջավոր դեմոկրատական ինտելիգենցիայի ներկայացուցիչների հետ (Սվաճյան, Ս. Թազվորյան): Նալբանդյանը օգնում և գաղափարապես ղեկավարում է ամիրա-կղերական ունակցիոն տարրերի դեմ ուղղված պոլսահայ դեմոկրատիայի կողմից տարվող պայքարը: Հեղհաստանում նա աշխատում է կապվել առաջին հերթին հնդկահայ առաջավոր գործիչների՝ Թաղիադյանական հոսանքի ներկայացուցիչների հետ: Դրանք գալիս են նավամատուց, ողջունում են, հանդես են կազմակերպում Զմյուռնիայում: Նա է մերկացնում կուսինյանի նման ավանտյուրիստներին: Նալբանդյանի անմիջական ազդեցության ներքո ուժեղանում է ամիրայական-կղերական և լիբերալ-բուրժուական հոսանքների դեմ ուղղված պոլսահայ դեմոկրատիայի պայքարը:

Նալբանդյանը գրում և տպագրում է Փարիզում իր «Երկրագործություն» տրակտատը և «Երկու տող» պուրլիցիատական երկասիրությունը: Այդ երկու աշխատանքների նյութերը բնույթապես լայն ղեմ մարտնչող ժողովուրդների միության գաղափարախոսությունն էր: Յարական Ռուսիայի և սուլթանական Թուրքիայի դեմ պայքարող ժողովրդական զանգվածները պիտի միասնական շարքերով կապվեն թուրք ազատասեր ժողովուրդների հետ ու տապալեն բռնակալական պետությունները՝ ամենուրեք մահացու հարվածներ հասցնելով բռնակալ ուժերին: Դա իհարկե յուրահատուկ ուստպիա էր, բայց գերակշռող

այդ ուստպիայի մեջ դեմոկրատական հայեցողությունն էր: Հիմնականն այդտեղ հեղափոխական հայրենասիրությունն էր և ժողովուրդների եղբայրության վսեմ պատգամների վրա խարսխված իդեոլոգիան:

Արտասահմանից վերադառնալուց հետո Նալբանդյանը ձերբակալվում է: Յարական դահիճները տանում են նրան Նուր Նախիջևանից Պետերբուրգ և բանտարկում: Ալեքսեյան Ռավելինի նկուղներից մեկում նա բանտարկված է մնում մինչև 1865 թվականը: Դուրս է գալիս հիվանդ ու կիսահաշմանդամ և քշվում է արտոսվայր...: «Ինձի գիր ալ գրել պետք չէր,— գրում է նա,— բայց այս քանի տողը դարձյալ գրեցի...»: Դեկտեմբերին նա հասնում է արտոսվայր ու գրում Կամիշլինի մասին. «անպիտան մի տեղ է և ձմեռը բոլորովին մեռած...»: Ծանր հիվանդությունը դառնում է անհաղթահարելի: Այդ մասին է գրում Նալբանդյանը իր եղբորը. «տկարությունս չի ներում երկար-բարակ նամակ գրել... ես օրէ-օր մոտենում եմ գերջմանին»: Անխուսափելի վախճանը հայտնի էր ցարական դահիճներին: Բժիշկների և մանավանդ ակադեմիկոսների հարկադարձ ընդունում էր: Բայց այդ եղբայրությունը դահիճները չէին կարող ու չէին ցանկանում ընդունել: Նրանց նպատակն էր սպանել հայ խոշոր հեղափոխական դեմոկրատին:

2

Նալբանդյանի ու ուսու հեղափոխական-դեմոկրատների գաղափարական կապերի ճշգրիտ բնութագրման համար անհրաժեշտ է սմեկից առաջ երկու խոսք ասել ժամանակաշրջանի մասին:

Նալբանդյանը, ինչպես տեսանք, ընդհարվել է ունակցիոն-կղերական «կուսակցության» հետ տակավին 40-ական թվականներին: Այդ շրջանում դեմոկրատական շարժումը Ռուսիայում թույլ էր: Գյուղական որոշ վայրերում բռնկվում էին մերթ ընդ մերթ գյուղացիական ապստամբություններ, բայց նրանք դեռևս անկազմակերպ էին և ցրված: Բայց այդ շրջանում արդեն սկսում է հանդես գալ ուսու հեղափոխական-դեմոկրատական հոսանքը, որը ըստ էության արտահայտում էր ճորտացած և ճնշված գյուղացիության պայքարը ցարական ինքնակալության դեմ: Մեծ ազդեցություն են թողնում 1848 թ. մահացած Բելինսկու հեղափոխական-դեմոկրատական պատգամները հատկապես Պետրաշևսկու խմբակի անդամների վրա:

Դատափեսելով «բուրժուական ազատությունները» Գերցենը 1848 թ. Ֆրանսիական հեղափոխության անկման անմիջական տպավորության ներքո բյուր անեժներ է ուղղում «կատաղած խանութպանների» հասցեին. «Քաղքենիները հաղթեցին, 8 հազար դիակներ և 10000 բանտարկյալներ— ահա նրանց տրոֆեյները... աղտոտ տեղոր, մանր տեղոր, հասկացեք, ունակցիոն տեղոր ֆրանսիական բուրժուազիայի բթամտության հատուկ...»: Սանրագույն

հուշերի ազդեցության ներքո Գերցենը ընկճվում է և նահանջում է դեպի լիբե-
րալիզմի կայանը: Բայց կապված լինելով իր ապրումներով և տենչերով հա-
րազատ ժողովրդի հետ, նա հետագայում, առանձնապես 60-ական թվական-
ներին, նորից անցնում է պայքարի գծին: Մանրանալով Գերցենի տատանում-
ների վրա, Լենինն ընդգծում է, որ գեմոկրատ Գերցենը ի վերջո հաղթահարում
է լիբերալին... Գերցենյան հայեցողության հակասությունները նկատել է Ժա-
մանակին Չերնիշևսկին: Ընդհարվելով, սակայն, բավական սուր կերպով Գեր-
ցենի հետ, Չերնիշևսկին աշխատում էր ազատագրել Գերցենին լիբերալիզմի
ազդեցությունից: Դրանով է բացատրվում Չերնիշևսկու դիրքը Գերցենի նկատ-
մամբ: Երբ Չերնիշևսկին դատապարտվում է, Գերցենը իր «Կոլոկոլի» մեջ
մեծագույն զայրույթով համակված ցասումնալից հոգված է գրում ցարական
դահլիճների դեմ...

Գաղափարական տարածայնություններն ու բախումները բռնկվում են
առանձնապես սուր կերպով 50—60-ական թվականներին՝ հեղափոխական
շարժումների նոր հորձանքի տենդոտ օրերին: Լենինը կանգ է առնում այդ
նոր հորձանքի վրա: Նա շեշտում է շատ որոշակի կերպով, որ Ռուսիայում
հատկապես 1859—1861 թվականներին ստեղծվել էին «հեղափոխական սի-
տուացիային» հատուկ բնորոշ պայմաններ: Միաժամանակ Լենինը ընդգծում
է, որ այդ «հեղափոխական սիտուացիան» չէր կարող դառնալ և չէր դարձել
հեղափոխություն: Այնուամենայնիվ շեշտված «հեղափոխական սիտուացիան»
այնքան ակներև էր, որ չէր կարող աննշմարելի մնալ 60-ական թվականներին
առաջավոր ուսուցողների համար: Գյուղացիական շարժումները դառնում
էին ավելի ու ավելի լայնածավալ: Երկու մայրաքաղաքներումն էլ համալսա-
րանական երիտասարդությունը 1861 թ. ցուցադրում է իր բացասական դիրքը
բավական նշանակալից կերպով: Բազմաժամանակ Լենինը համարում էր լայն-
բազմաբան Գեմոկրատական մամուլի էջերը դառնում են պայթուցիկ նյութե-
րով լեցուն էջեր: Ռուս երիտասարդության առաջավոր շարքերի համար պարզ
էր, որ ասիական դեսպոտիզմների կամ շինական կարգերի քննադատության
նվիրված հոգվածներն ուղղվում են մեծագույն շարժում ցարական բռնապե-
տության դեմ: Հեռատես ընթերցողների համար պարզ էր Չերնիշևսկու պատ-
մական հոգվածների, պատմագիտական խոհերի, դիվանագիտական ակնարկ-
ների ծածուկ և իսկական իմաստը: Քննելով իտալական շարժումների ընթաց-
քը, Գարիբալդիի, Մադալինիի ելույթները, նա հանդես էր գալիս որպես քաղա-
քագետ և պրոպագանդիստ: Իր հոգվածների, ինչպես նաև Միլիի քաղաքա-
տնտեսությունը կցված հանճարեղ ծանոթությունների մեջ քննադատում էր
կապիտալիզմի կարգերը պաշտպանող տնտեսագետներին...

Թե՛ Դոբրոլյուբովը և Չերնիշևսկին, թե՛ նրանց զինակիցները շատ դեպ-
քում գրում էին եզրվապոսյան լեզվով: Բայց ընթերցողները հասկանում էին սի-

րելի հեղինակներին և իրենց վարքագիծն էլ մշակում էին համաձայն տողերի
մեջ հնչող պատգամների և իմաստի:

Այդպես էր ահա 50—60-ական թվականների մթնոլորտը ուսական իրա-
կանության մեջ: Այդ մթնոլորտը չէր կարող մեծ ազդեցություն չթողնել նուս-
դուն և երիտասարդ նալբանդանի վրա հենց առաջին օրերից: Նոր մարդիկ,
նոր գրքեր և դասախոսություններ, նոր երգեր, կոչեր և լողունգներ: Այդ ամենը
նա տեսնում ու լսում է համալսարանական միշտ կենդանի լսարաններում:
Եվ արդեն 1855 թ. գրված երկու հայ գործիչների նամակագրության ակնարկ-
ների մեջ տեսնում ենք նոր տիպի հայ հայրենասերի ուսու հեղափոխական
դեմոկրատներին արձագանքող «կասկածավոր» նալբանդանի դիմաստվերը:
Այդ դիմաստվերը շատ ավելի որոշակի կերպով նշմարվում է նալբանդանի
բոլոր «ելույթների մեջ»:

Այդպիսի «ելույթ» էր նրա լոնդոնյան հայտնի ճանապարհորդությունը:

Առաջին անգամ նալբանդանը Լոնդոն է մտնում 1861 թ. հունվարի 11-ին
և մնում է այդտեղ, ինչպես ինքն է նշում, մոտավորապես մի շաբաթ: Երկրորդ
անգամ նա Փարիզից Լոնդոն է անցնում միևնույն՝ 1861 թ. փետրվարի 3-ին
և մնում է այդտեղ մեկ ամիս: Վերջապես 1862-ին նա երկու անգամ Փարիզից
ուղևորվում է Լոնդոն (հունվարի 8—9 և ապա փետրվարին): Լոնդոնում նա
մտնում է գրախանութ լոնդոնյան ազատ հրատարակությունները գնելու նպա-
տակով և այդտեղ ծանոթանում է Կելսիեի հետ, որը համարվում էր լոնդոնյան
էմիգրանտների հետ կապված գործիչ: Ինքը՝ Կելսիեը պատմում է այդ հան-
դիպման մասին իր ցուցմունքների մեջ, երբ դավաճանելով Գերցենին, դառ-
նում է ցարական կառավարության սպասավոր: Նալբանդանը պատմում է
սենատական իր ցուցմունքների մեջ Գերցենի որդու մասին, որին նա տես-
նում է զոլոտոգիական թանգարանում: Գերցենի և Օգարևի նամակները ցույց են
տալիս, որ նալբանդանը գերցենյան շրջանում համարվում էր բարեկամ անձ-
նավորություն: Նալբանդանը մի քանի անգամ լինում է Գերցենի և Օգարևի
մոտ, գրուցում է երկու ակնամարտ գործիչների հետ ժամանակի հրատապ
պրոբլեմների մասին: Ինքն էլ մեծ տպավորություն է թողնում Գերցենի և Օգա-
րևի վրա: Քիչ առաջ շեշտված նամակների մեջ Գերցենը և Օգարևը մեծագույն
սիրով են խոսում նալբանդանի մասին: Գերցենը 1862 թ. հունիսի 24-ին գրում
էր Սերնո-Սոլովյովիչին. «Նալբանդանը շափազանց ազնիվ մարդ է, ասա-
ցեք նրան որ մենք հիշում և սիրում ենք նրան»: Սերնո-Սոլովյովիչը 60-ական
թվականների ակնամարտ գործիչներից մեկն էր:

Այդպիսով, եթե մենք ամփոփենք մինչև այժմ հրատարակված ցան ու
ցրիվ փաստերը, կտեսնենք, որ ուսու առաջավոր գործիչներից հատկապես
Գերցենը, Բակունինը, Օգարևը, Տուրգենևը, Սերնո-Սոլովյովիչը շատ լավ
հայտնի էին նալբանդանին: Ակնամարտ այդ գործիչների հետ նա անձամբ

ծանոթ էր: Բելինսկու, Գորբուլցուրովի, Չերնիշևսկու, ինչպես նաև «Սովբե-մեննիկի» ուրիշ աշխատակիցների հողվածները նա կարգում է 1855 թ.՝ սկսած այն օրերից, երբ ստանում է Պատկանյանից Իսկենդերի հողվածի մի օրինակը: Նալբանդյանը գիտությունը մոտենում էր 60-ական թվականների արմատական հեղափոխական-դեմոկրատների դիրքերից: Գիտությունը և առանձնապես բնագիտությունը քննարկվում էր այդ ժամանակ, որպես Եսասկան հայեցողությունը կազմավորող և ժողովրդի վերելքին գործնական օգնություն հասցրնող ազդակ: Մենդելևի, Ռուլյեի, Իլինկովի աշխատությունները Նալբանդյանը բարեբաղն ուսումնասիրում է առանձին ուշադրությամբ: Իր մի ուսումնասիրության մեջ նա կանգ է առնում Լիբիխի վրա, որը նույնպես շատ անգամ է նշվում 60-ական թվականների ռուս գործիչների շրջանում: Նա ձեռք է բերում Կոլբի և Շլոսերի այն աշխատությունները, որոնք նշվում են Չերնիշևսկու ոեցենզիաների մեջ: Եթե մենք ոչ մի վավերագիր չունենայինք, շեշտված տվյալներն էլ, թվում է մեզ, բավական են Նալբանդյանին և ռուս հեղափոխական լուսավորիչների հարաբերությունների բնութագրման համար: Սակայն կան ավելի ցայտուն վավերագրեր, որոնք առանց երկար մեկնաբանությունների կարող են պարզել անցյալի էջերը:

Մենք նկատի ունենք Նալբանդյանի հասարակական գործունեությունը և ապա նրա գրական աշխատությունները: Թե՛ այդ գործունեությունը և թե՛ ակնարկված աշխատությունները ցույց են տալիս, որ Նալբանդյանը միշտ մի հիմնական երակետ է ունեցել՝ աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպանությունը: Նա գիտեր, որ կան հայկական հատվածներ Թուրքիայում և Իրանում, եվրոպական ու հնդկական վայրերում: Գիտեր այն էլ, որ հայ ժողովրդի զանազան հատվածները ապրում են տարբեր քաղաքական պայմաններում: Զանալով մոտենալ հայ ժողովրդի բոլոր հատվածների կեցության ու վիճակի շանաչողությանը, նա կապվում է Սվաճյանի, Ստեփան Ոսկանի, Քյաթիպյանի կամ հնդկահայ վաճառական Սեթ-Աբգարի նման ազատախոհ գործիչների հետ: Նալբանդյանն իր գաղափարական ազդեցության տակ է առնում 60-ական թվականներին արևմտահայության մեջ հանդես եկող արմատական-դեմոկրատների (ձախ սահմանադրականներ) հոսանքը: «Ազգային թշվառություն» իր նշանավոր աշխատության մեջ մերկացնում է լիբերալ սահմանադրականների (Սերվիլեն, Գր. Օտյան, Ռուսինյան և այլք) դավաճանությունը պոլսահայ դեմոկրատիայի շահերին, մերկացնում է նրանց կոմպրոմիսը ամիրա-կղերական ռեակցիայի հետ: Հեղափոխական-դեմոկրատ Նալբանդյանը աշխատում է զարկ տալ արևմտահայ ազգային ազատագրական շարժմանը:

1859—61 թվականների «հեղափոխական տիտուացիայի» պայմանները նկատելի ազդեցություն են թողնում Նալբանդյանի վրա: Թերթելով «Սովբե-

մեննիկի» էջերը, նա յուրացնում է հեղափոխական դեմոկրատ հրապարակախոսների հեղափոխական պատգամները: Չերնիշևսկին պաշտպանում էր դուրազիական հեղափոխության գաղափարը: Հեղափոխական ապստամբության միջոցով ժողովրդական մասսաները պիտի ստեղծեին նոր, ազատ, դեմոկրատական Ռուսիայի շենքը: Նոր այդ Ռուսիան պիտի եղբայրական ամրակուռ թելերով կապվեր բռնապետական կարգերը ջախջախող հեղափոխական ժողովուրդների հետ:

Չերնիշևսկու և ռուս հեղափոխական դեմոկրատների այս հայացքները ելակետեր են դառնում նաև Նալբանդյանի համար:

Նալբանդյանը գտնում է ակտիվ հետևորդներ արևմտահայ իրականության մեջ: Նրա քարոզը հասկանալի ու պարզ էր: Նա առաջարկում էր ոչ մի հավատ չընծայել կալվածատերերի կամ կապիտալիստների շահերը պաշտպանող սֆերային: Նա կոչ էր անում իր հայրենակիցներին կապել այսուհետև հայ ժողովրդի բախտը ռուս հեղափոխական ժողովրդի ու հեղափոխական գործիչների բախտի հետ: Հայկական ռեակցիայի գաղափարախոսները մոլեղանորեն անիծում էին Նալբանդյանին և միևնույն ժամանակ հակառակ իրենց ցանկության մերկացնում իրենց սոցիալական էությունը: Այդպիսի գործիչներ էին նախկին եզվիտ պրոպագանդիստ Գաբրիել Այվազովսկին, կղերական պուրիցիտներ Չերքեզյանը և Մսերյանցը Ռուսաստանում: Դրանցից Այվազովսկին կապված էր ցարական կառավարական որոշ շրջանների հետ: Համանման գործիչ էր Թուրքիայում մի շարք օրգանների խմբագիր և ամիրայական-ռեակցիոն կուսակցության գաղափարախոս Տերոյենց-Չամուրչյան պատվելին: Այդ գործիչը իր ժուռնալ «Նրևակի» մեջ փառաբանում էր արևմտյան կայսրների «Սրբազան Միությունը», բռնակալ թագավորներին և սուլթաններին: Պաշտպանելով և քարոզելով կրոնական խավարամոլությունը, Տերոյենցը խարաղանում էր Դարվինին և գիտության առաջավոր ներկայացուցիչներին: Առանց վարանումների պաշտպանելով Մետերնիխին, նա կոչ էր անում նետվել դեմոկրատ գործիչների դեմ: Զանալով գրավել կառավարական շրջանների ուշադրությունը, նա դիտավորությամբ հիշեցնում էր իր ժուռնալների էջերում, որ Նալբանդյանն իր գիտակիցների հետ միասին արևմտյան հեղափոխականների և կոմունիստների հետ կապված գործիչ է: Սուլթանաթի հետախուզական օրգանների հետ կապված այդ եզվիտը ձգտում էր սարսափեցնել հայ ընթերցողներին ու կտրել նրանց Նալբանդյանի նման «կապկածավոր» գործիչներից: Բայց նման տիպի ռեակցիոն գործիչների ելույթները ստեղծում են հակառակ էֆեկտ և ավելի ևս ամրացնում ու խտացնում հայ դեմոկրատական մտավորականների արդեն կազմավորվող շարքերը: Նալբանդյանն իր գործունեությամբ ստեղծում է 60-ական թվականներին նոր տիպի հայրենասիրական-դեմոկրատական շարժում հանդես գալով դաժա-

նագույն ղեկավարները տիրակալության օրերին, որպես ռուս առաջավոր գործիչների՝ հեղափոխական ղեմոկրատների գաղափարների ջահակիր ու պրոպագանդիստ: Դա է ահա, որ տեսնում են Այվազովսկին ու Տերոյենցը՝ մետերնիխյան ռեակցիայի գաղափարասունքը: Դա է, որ թելադրում է հայկական ռեակցիայի մունետիկներին մոլեղնորեն ու միաձույլ շարքերով նետվել ամենից առաջ նալբանդյանի — «Հյուսիսսփայլի» ամենաարմատական աշխատակցի և հայ հեղափոխական-դեմոկրատական մտքի ամենատաղանդավոր ներկայացուցչի դեմ: Տեսնենք այժմ՝ ինչպես են արտացոլվում ռուս հեղափոխական ղեմոկրատների գաղափարները նալբանդյանի երկերի մեջ:

3

«Հյուսիսսփայլը» ըստ նալբանդյանի նախնական ծրագրի պիտի լիներ մարտական օրգան — ռուսական «Սովրեմեննիկի» նման մի ժուռնալ: Այդպես էր ըստ երևույթին նալբանդյանի նախագիծը: Սակայն վերջնական անօրենք նա չէր:

Նալբանդյանի կողքին կանգնած էր ամենից առաջ Ստեփանոս Նազարյանցը՝ ժուռնալի հիմնական ղեկավարն ու պաշտոնական խմբագիրը: Լիբերալ էր, ոտքից մինչև գլուխ իդեալիստ, անշափ զգուշավոր գործիչ և շափավոր հայացքներով համակված շատ լոյալ բուրժուական պրոֆեսոր: Լիբերալ լինելով հանդերձ՝ այդ պրոֆեսորը, օգնական և նույնիսկ ուղեկից էր ընդհանուր թշնամու՝ կղերական-ազգայական հոսանքի դեմ մղված սուր պայքարի օրերին: Մեծ հենարան չունեց նալբանդյանցը: Իրականում կտրված էր հասարակության առաջավոր շարքերից, թեև աշխատում էր ամեն կերպ մոտենալ թե՛ այդ շարքերին, թե՛ երիտասարդությանը: Նալբանդյանցը ավելի քան լավ գիտակցում էր, որ առանց երիտասարդության և մանավանդ առանց նալբանդյանի՝ ինքը ընթերցողների լայն շարքեր չի ունենա և կմնա մեկուսացած գործիչ: Նա բարձր էր գնահատում նալբանդյանին և չէր համարձակվում բացորոշ կերպով ընդհարվել նրա հետ: Գուցե և խորհում կամ երազում էր, թե կկարողանա վերադաստիարակել կրակոտ նալբանդյանին կամ որևէ ձևով «օգտագործել» նրան: Ինչ էր խորհում, կամ ինչ պիտի մտածեր նալբանդյանը այդպիսի խմբագրի կողքին: Իհարկե, պիտի աշխատեր ամենից առաջ օգտագործել լեզալ օրգանի բոլոր հնարավորությունները և արժարժեղ ազատորեն իր հեղափոխական-դեմոկրատական գաղափարները: Նա այդպես էլ վարվում է: Ըստ երևույթին նալբանդյանի այդ տակտիկական նկատում է նալբանդյանցը: Երբ մենք ուշադրությամբ թերթում ենք «Հյուսիսսփայլի» էջերը և ուսումնասիրում ավելի հատկանշական հոդվածներն ու նյութերը, պարզորոշ կերպով տեսնում ենք երկու գործիչների բաժանող սահմանագիծը: Նալբանդյանը գրում է բնագրիտական հոդվածներ և աշխատում է տարածել ժամանակի առաջավոր գիտ-

նականների տեսությունները: Նա կանգնած էր մատերիալիզմի դիրքերի վրա: Միևնույն «Հյուսիսսփայլի» մեջ կամենալով ապահովել հայ ընթերցողին նալբանդյանի հոդվածների ազդեցությունից, նալբանդյանցը տպագրում է իր հոդվածները և բացորոշ կերպով պաշտպանում է Շեկինգի կամ նման տիպի այլ իմաստասերների իդեալիստական տեսությունները: Նալբանդյանը գրում է կանանց ազատագրության մասին և հանդես է գալիս որպես կանանց դատի պաշտպան: Հիշենք այստեղ այն, որ կանանց ազատագրության պրոբլեմը շատ ակտիվ կերպով առաջադրվում էր ռուս ղեմոկրատական մամուլի էջերում: Չերնիշևսկին նույնիսկ Միլի քաղաքատնտեսությանը կցված ծանոթագրությունների մեջ կանգ է առնում կանանց հարցի վրա: Նալբանդյանը շոշափում է միևնույն պրոբլեմը իր արձակ երկասիրության՝ «Մեռելահարցուկի» մեջ: Եվ ահա՛ երբ նալբանդյանի երկերից հետո անցնում ենք նալբանդյանցի ասույթներին, տեսնում ենք անսպասելի մի բան: Նալբանդյանցը — «արևմտյան քաղաքակրթության» այդ էքսպանսիվ շատագույր և երկրպագուն՝ «Հյուսիսսփայլի» մեջ զրվատում է անտիկ աշխարհի հարեմները, էքսպանսիվ տողեր նվիրելով հունական հին հյունեյկոնների իդեալականացրած նկարագրության: Երկու պորբիցիտների ոճն էլ շատ յուրահատուկ է: Նալբանդյանցը գրում է հանդիսավոր ու միաժամանակ ցամաք ոճով: Նալբանդյանը երբեք չի ծածկում իր հույզերը և գրում է ժողովրդական տրիբունին հատուկ կրակոտ սոնով: Նալբանդյանցը կոչ է անում բոլորին հաշտվել: Նալբանդյանը ավելորդ է համարում այդօրինակ բարոյախոսությունը և գտնում է, որ հայ իրականության մեջ կան արդեն ձևավորված ու ներհակ հոսանքներ: Նա շեշտում է, որ միմիայն սկզբունքների պարզարանումը և բացահայտ պայքարը կարող է օժանդակել ժողովրդի կուլտուրական վերելքին: Երբ մենք համեմատում ենք անգամ շատ թուուցիկ կերպով երկու գործիչների հոդվածների մեջ արժարժեղ գաղափարները, հաճախ տեսնում ենք կարծես քողարկված մի պոլեմիկա: Այդ պոլեմիկան ցույց է տալիս, որ նալբանդյանցը չէր ցանկանում շեղվել իր լիբերալ դիրքերից և աշխատում էր ամեն կերպ հակահարված տալ իր կրակոտ ուղեկցի «անհանդուրժելի» պրոպագանդին: Նալբանդյանն իր հերթին երբեք չէր կորցնում առիթը և նույնիսկ աշխատում էր հետևողական կերպով բանդել կղերական-ազգայական պատգամներին ուժ տվող իդեալիստական փրիխոսփայլության սկզբունքները: Պորբիցիտական գործունեությունը նրա համար ազիտացիոն աշխատանք էր: Գրականությունը նալբանդյանի համոզումով պիտի լիներ գաղափարական պրոպագանդ: Մի շարք բանաստեղծություններ է տպագրում նա «Հյուսիսսփայլի» էջերում և բոլոր այդ բանաստեղծությունների մեջ հանդես է գալիս ամենից առաջ որպես պրոպագանդիստ: Նույնիսկ հուշերի բնույթ կրող իր լիրիկական «Մանկության օրեր» բանաստեղծության մեջ նա հավատարիմ է մնում գաղափարական արվեստի պատգամ-

ներին: Բանաստեղծութեան առաջին տողերը տխուր են՝ լիրիկական ուրույն հուշերի բնույթ են կրում: Բայց միևնույն այդ բանաստեղծութեան մեջ նաև բանականը ժողովրդական տրիբունի նման գոչում է՝

Ես պիտի գուրս զամ դեպի հրսպարակ
Ասանց բնարի, անզարդ խոսքերով.
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Նավարի ընդդեմ պատերազմելով.

Ներկա օրերում այլ ինչ սև քնար,
Մուր է հարկավոր կտրիճի ձեռքին,
Արյուն ու կրակ թշնամու վերա,
Այս պիտի լինի խորհուրդը մեր կյանքին:

Ռուս ականավոր երեք գրողներ ներբողներ ձոնելով «ազատության», կովի էին ելել բռնակալական կարգերի դեմ: Ռադիշևից հետո ազատությունը երգում է Պուշկինը, իսկ Պուշկինից հետո ազատության մասին գրում է իր բանաստեղծությունը Օգարևը, որին հետևում է Նալբանդյանը: Կգտնվեն գուցե «անաղարտ» արվեստի կամ «անկոխի» պոեզիայի տեսաբաններ, որոնք կնքումարեն Նալբանդյանի բանաստեղծությունների մեջ թերություններ: Սակայն դրանք էլ չեն կարող ժխտել այն, որ Նալբանդյանի երգերը ժամանակին բոլոր հայաբնակ վայրերում ստեղծել են մեծագույն հասարակական ռեզոնանս: Երբ 1863 թ. հնդկահայ առաջավոր գործիչները լուր են ստանում Նալբանդյանի կյանքի վերջին էտապի մասին, այդ գործիչներից մեկը՝ խմորափուր «Սեդախյաններ» հանդեսի երկու համարների մեջ ընդարձակ առաջնորդող է տպագրում Նալբանդյանի մասին և կցում այդ առաջնորդողին վերոհիշյալ բանաստեղծությունները: Կանտեմիրից, Պուշկինից, Լեոնտովից հետո Նալբանդյանը անցնում է 60-ական թվականների ռուս պոետների ուսումնասիրության: Բնորոշ է այն, որ նա գրում, թարգմանում, փոխադրում է, հենվելով «Սովրեմեննիկի» մեջ հրատարակված նյութերի վրա: Բերանձեռի երգերի փոխադրության ժամանակ նա հենվում է Կուրոշկինի և Լենսկու թարգմանությունների վրա: Կարդում է միևնույն «Սովրեմեննիկի» մեջ զետեղված հայտնի հեղափոխական-պոետ Միխայլովի թարգմանությունը (Հայնեյից) և ապա գրում իր փոխադրություն-բանաստեղծությունը: Սովետահայ բանասերներից մեկը ժամանակին նշել է, որ Նալբանդյանը անգամ իր հայտնի «Խտալացի աղջկա» երգը գրել էր ոչ այնքան իտալական պոետ Մերկանտինիի, որքան այդ պոետի բանաստեղծության ռուսերեն արձակ բանաստեղծության անմիջական ազդեցության ներքո: Այդ թարգմանությունը լույս էր տեսել Գերցենի «Բևեռային աստղ» ժուռնալի մեջ: Մեկ թվում է, որ Նալբանդյանի վրա կարող էին մեծ

ազդեցություն թողնել նաև «Սովրեմեննիկի» մեջ տպագրված Չերնիշևսկու ականարկները առանձնապես Գարիբալդիի և իտալացի աղջիկների հանդիպման նվիրված պատկերավոր տողերը: Երբ կարդում ենք Նալբանդյանի «Բոկլին» բանաստեղծությունը, նորից կարծես տեսնում ենք «Սովրեմեննիկի» հայ բնթերցողին: Բոկլի հայտնի գիրքը շատ ժողովրդական գիրք էր 60-ական թվականներին: Կարճ ժամանակվա ընթացքում լույս են տեսել ռուսերեն երկու թարգմանություններ: Բոկլը և Դրեպերը սովորաբար քննարկվում էին որպես սխոլաստիկայի, կրոնական-իդեալիստական հայեցողության և միստիկայի սկզբունքները դատափետող գիտնականներ: Բոկլի և Դրեպերի գրքերը առաջին փուլերն էին իդեալիզմի կայաններից դեպի մատերիալիստական նոր դիրքերը քայլող գործիչների համար: Նալբանդյանն էլ ըստ երևույթին այդպես է անցել իր ուղին:

Նրա հայտնի «Հեզելը և չուր ժամանակը» փիլիսոփայական աշխատությունը, ինչպես հաստատված է ներկայումս, գրվել է ժամանակին Պետրոպոլիսի ամբիոնում: Չնայած դրան այդ աշխատությունը նույնպես կարող է քննարկվել որպես 1859 թ. կամ 1860 թ. հրատարակված աշխատանքների տեսական փիլիսոփայական ուրույն հիմնավորում: Չերնիշևսկու մարտական ուղեգծի հետևորդը փիլիսոփայական այդ աշխատության մեջ երևում է: Նալբանդյանի համար փիլիսոփայությունը վերացական սկզբունքների կոմպլեքս չէ և ոչ էլ մանավանդ բնագիտությունից կտրված տեսական սխտեմների ամփոփում «...Բարվոսել մարդկային կյանքը — ահա փիլիսոփայությունը, էնչ համփով կուզես զեա միայն քե խորհուրդը և նպատակը այդ լինի: Հայտնի է, թե ավելի բնական և ավելի հաջող ճամփան ընտրելի է, քան այն բարդ և միգապատ ճամփաները, որ ցույց էին տալիս այս ու այն փիլիսոփայական համակարգությունքը...»: Նալբանդյանը գիտե, որ գաղափարական վերնաշենքը կառուցվում է հասարակական կեցության բազայի վրա: Իրեն հատուկ ոճով նա նկատում է. «Որևիցե փիլիսոփայի փիլիսոփայական համակարգությունքը ուղղակի աղբերանում է այն ազգի կյանքից և պատմությունից, ինչ ազգի ինքը պատկանում է... Միաժամանակ Նալբանդյանը շեշտում է նաև հետևյալը. «միևնույն ազգի փիլիսոփայությունը նույնիսկ իր համար չէր կարող ամեն ժամանակ ուղիղ լինել, որովհետև ժամանակն առաջ է վազում, հասկացողության զուգարը կերպարանափոխ է լինում...»: Պատմական դիրքերից է մոտենում Նալբանդյանը փիլիսոփայական տաժուկների էվոլյուցիային. «Ո՛չ Հեզելի աշակերտ ենք, գրում է նա, և՛ ոչ Շելլինգի»: Ամբողջ աշխատությունը կրում է թուրքիկ դիտողությունների բնույթ և զերծ չէ որոշ հակասություններից: Բայց դա «ուցենդիա» լինելով հանդերձ, նշանակալից մի գրություն է, որպես ռուս մամուլի էջերում արժարժվող պորբանների յուրահատուկ մի արձագանք: Նալբանդյանը կանգ է առնում իր այդ ռեցենզիայի

մեջ Գրանուվսկու վրա և ձայնակցում է այդ պատմաբանին, թեև միաժամանակ աշխատում էր ընդգծել իր սեփական ինքնուրույն դիրքը. «Ինչ որ ինձ է վերաբերում, ես ոչ մի համակարգությունը չեմ ընդունում... ամեն համակարգությունն ստրկաբար հետևողքը ծաղրից ավելի ուրիշ բան թող չսպասեն ինձանից...»:

Մեր ուշադրությունը գրավում է նաև Նալբանդյանի փիլիսոփայական այդ աշխատության շատ կտրուկ և առույգ տոնը: Ուսուցչի նման է գրում Նալբանդյանը, գրեթե միշտ կատեգորիկ կերպով: Կարծես գիտե, որ կունենա լսարան և հետևողների շարքեր: Ը՛իշտ այդպիսի տոն ունեն նրա բանտից գրված նամակները, որոնք մեծ մասամբ շոշափում են հասարակական և գիտական կարևորագույն պրոբլեմներ:

Միևնույն տոնն ունի նաև «Մոս և Վարդիթերի» մասին գրված նրա եղակի և բովանդակալից քննադատական ուսումնասիրությունը: Մեր գրականություն մեջ ժամանակին արդեն նշվել է, որ Նալբանդյանի այդ աշխատության մեջ հիմնականում կիրառվում են մեծ ուսու հեղափոխական-գիտական Չերնիշևսկու էսթետիկայի սկզբունքները:

Նալբանդյանը գրականությանը և գրական դեմքերին մոտենում է մատերիալիստական դիրքերից: Արդեն նախաբանի մեջ նա շեշտում է, որ մտադիր է ցուցադրել գրականության անբաժան կապը կյանքի հետ. «Ազգերի սեփական դպրության մեջ, այսինքն՝ նոցա բանաստեղծական գործերի մեջ երեւում է նոցա ոգին, նոցա վարքն ու բարքը...»: Նալբանդյանի համոզմամբ պատմաբանին կարող են արժեքավոր նյութեր մատակարարել զեղարվեստական երկասիրությունները: Անցնելով Պոռոչյանի բնութագրմանը, Նալբանդյանը նշում է, որ այդ վիպագիրը— «մի անխարդախ հայելի է, ուր ցույց տալով են բնության ճառագայթքը»: Վերջին խոսքերի իմաստը պարզ է: Պոռոչյանը գնահատվում է այդտեղ որպես իրականության ռեալիստ՝ նկարիչ: Պոռոչյանի վեպի թերությունների վրա ևս կանգ է առնում Նալբանդյանը: Նա նշում է, որ «Մոս և Վարդիթեր» վեպի որոշ թերությունները նշմարվում են հատկապես այն էջերում, ուր հեղինակը դուրս գալով բնականի սահմանից, օգնություն է խնդրում երևակայությունից: Նալբանդյանի կրիտիկական ուսումնասիրությունը սոսկ քննադատություն չէ, այլ նաև հրապարակախոսական գրություն: Թգտվելով առիթից, Նալբանդյանը ոչ միայն քննադատում է Պոռոչյանին, այլ նաև արժարժում իր հասարակական կամ գիտական մտորումները: Տեսնելով, որ Պոռոչյանը ծանրանալով նատուրալիստական մանրամասնությունների վրա և նկարագրելով հին բարքերն ու սովորությունները, հաճախ ինքն էլ դառնում է հեռու անցյալի կույր երկրպագու, Նալբանդյանը վճռական կերպով դատափետում է հետամնաց անցյալը իդեալականացնող գործիչներին:

«Ի՞նչ կարող են հիշեցնել մեզ,— գրում է նա,— միջին դարերը. կործա-

նում, գերութուն, կոտորած, արյուն, կրակ, սով, խավար և մահ: Սոքա են մեզ համար միջին դարերի բերածը և նոցա բեռի տակ ճնշված է այսօր հայ մարդը: Բափել այդ բեռը մեր վրայից՝ ահա մեր գործը...»: Բնորոշ է այն, որ դատափետելով անցյալի շատագուցներին, Նալբանդյանը հրահանգում է թերթել և ուսումնասիրել կրիտիկ նամակների էջերը: Նա ընդգծում է, որ անցյալի իդեալիզացիայով սովորաբար տարվում են ավելի հաճախ հայ ինտելիգենցիայի և ոչ թե ժողովրդի ներկայացուցիչները: «Ժողովուրդը, գրում է նա, շատ անգամ ավելի ազատ է միջնադարյան լուծից, քան թե մեր պատվելի գրագետը... մեր պարոնները անդադար այդ միջին դարի կպրե կարասում լողալով ազգության և լուսավորության անունով աշխատում են նորոգել և հաստատել լուսավոր ազգի վրա այդ խավար ուղղության տիրապետությունը...»:

Ավելի քան ակներև է, որ Նալբանդյանը այդ տողերը ուղղում էր անմիջապես հայ կղերական հոսանքի պարագլուխների դեմ: Իավական մեծ տեղ են բռնում Նալբանդյանի քննադատական ուսումնասիրության մեջ կրոնական սնոտիապաշտությունը նվիրված քննադատական դիտողությունները: Կրոնական տրագիցիաների կամ ավանդույթների մեկնաբանության միջոցով Նալբանդյանը աշխատում է ժողովրդականացնել գիտության տվյալները: Իր աշխատության հատկապես այդ մասում Նալբանդյանը կանգ է առնում բավական մանրամասն Գալիլեյի դատապարտության պատմության վրա և, օգտը վելով առիթից նորից խարազանում հայ ամիրայական-կղերական կուսակցության, հայտնի իդեոլոգին՝ Տերոյենց Չամուրչյանին:

Ահհրաժեշտ է երկու խոսք ասել նաև լեզվի պրոբլեմի լուսաբանությանը նվիրված այն դիտողությունների մասին, որոնք նկատելի տեղ են գրավում «կրիտիկայի» մեջ: Նազարյանցը, ինչպես հայտնի է թերագնահատելով ժողովրդական բարբառների նշանակությունը, ժամանակին միակողմանի կերպով է գնահատել անգամ Մայաթ-Նովայի բանաստեղծությունների տաղանդավոր հրատարակիչ Ախվերդյանի նախաձեռնությամբ սկսված աշխատանքը: Նալբանդյանը մեծագույն նշանակություն է տալիս ոչ միայն ժողովրդական բանահյուսության, այլ նաև ժողովրդական լեզվի և առանձնապես բարբառների ուսումնասիրությանը: Լեզվի կառուցմանը և էվոլյուցիային նա մոտենում էր դինված ուշադիր պատմաբանի գիտական հայեցողությամբ: Նա առանձնապես շեշտում է, որ Պոռոչյանի նախաձեռնությունը «մեծ շնորհակալության արժանի գործ է»: Միաժամանակ Նալբանդյանը նկատում է, որ Պոռոչյանը տարվելով բնկնում է որոշ ծայրահեղությունների մեջ և զգալի շափով նսեմացնում իր վեպի արժեքը: Նա կոչ է անում ուշադրությամբ հետևել և ուսումնասիրել հայ բարբառները: «Բնության և պատմության ազդեցությանց մասին,— կարդում ենք կրիտիկայի մեջ,— պատասխանատու չէ մարդը, ուրեմն և պատասխա-

նատու չէ և ոչ իսկ պախարակելի կամ ծագրելի, եթե մի սարսափելի ավերանքի տակ է ընկել պատմաբանի գիտական հայեցողությամբ: Ահա ինչու նախնայանքը դրա՛հան գնահատություն է տալիս Պոռոջյանի վեպին: «Պոռոջյանցը, ասում է նա, գուցե և դիտավորություններ է գրել Աշտարակի բարբառով, որպեսզի կարգացողը ոչ միայն Աշտարակի վարքի, բարքի, այլ նրա լեզվի վրա էլ տեղեկություն ստանա...»:

Հետաքրքրական են կրիտիկայի մեջ նոր լեզվի— «համազգային միություն» պրորբեմի լուսաբանությունը նվիրված տողերը. «Նոր լեզվի, հիմնավոր դիտությունը,— գրում է նա,— նրա մշակությունը և առաջադրությունը որպես նաև ապագա միության գաղափարը առանց գավառական բարբառների օգնության աներևակայելի է անդամ...»: Մեզ թվում է, որ հասկապես այդ տողերի մեջ նախնայանքը մի որոշ շափով քննադատում է նազարյանցին, առանց նրա անունը տալու: Հատկանշական են հետևյալ տողերը. «Ստրկանալով հին լեզվին, առանց ժողովրդին ակնաջ դնելու լեզվի նոր ծլած ձևերը, որ դեռ թարմ են և կերպարանագործվելու վրա կապելով և ճրնշելով անցածի և մեռածի պատանքի մեջ, նոր լեզվի մշակության գաղափարը ազգին համար դառնում է նույնպես ամուլ և անպտուղ, ինչպես հին և մեռած լեզվի գործադրության գաղափարը: Անշուշտ, այս խոսքերը չեն նշանակում թե հին լեզվի լծից ազատելով նոր լեզվի մշակությունը պիտի դնել այս կամ այն գավառական բարբառի լծի տակ...»:

Քննադատելով երկու ծայրահեղությունները, նախնայանքը հիշեցնում է, որ նոր լեզուն մշակողները պարտավոր են ամենից առաջ հաշվի առնել ժողովրդի մեծամասնության շահերը: Այդ մշակները պիտի ձգտեն «որքան կարելի է առավել մեծ բազմության հասկանալի կերպով խոսել...»:

Լեզվի շինարարությունը պատմական բարդ պրոցես է՝ «ծանր խնդիր» — բայց և այնպես նախնայանքի կարծիքով «ճարտար» հեղինակները կարող են նկատելի դեր կատարել, որպես նոր լեզվի կառուցողներ: «Լեզուն,— գրում է նախնայանքը,— պիտի նայվի և մշակվի ինքնուրույնաբար, առանց ամենևին հին լեզվից խսնելու, առանց գավառական բարբառների կամ օտար լեզուների ազդեցությանց ստրկանալու: Բոլոր գավառական բարբառների էական տարբերքը, որ իրենց ձևով և կազմությամբ ավերի ընդունակ են, կենդանի, ընդհանրության լեզվի վրա պատվաստվելու, պիտի ընկնեն ճարտար հեղինակների քուրայի մեջ... ծանր խնդիր է այս և իր բնությամբ շատ ժամանակի կարոտ, բայց գոնե այս է մեր ճանապարհը...»:

Ես դիտավորությամբ կանգ առա ավելի մանրամասն լեզվի կառուցման մասին նետված այդ դիտողությունների վրա: Նախնայանքը իր կրիտիկայի հատկապես այդ էջերի մեջ հանդես է գալիս որպես ուս առաջավոր գրողների կողմից պաշտպանված գաղափարների ջահակիր ու հետևող: Նախնայանք-

յանի կրիտիկայի ամբողջ ձուլվածքը կուռ է և միասնական: Ժողովրդական սովորությունները, բարբերը, հին երգերը, ժողովրդական բանահյուսության վավերագրերը, և վերջապես, ժողովրդական լեզուն—բարբառները 60-ական թվականներին առանձնապես զեմոկրատական հոսանքի հետ կապված ուս գրողները բննում և ուսումնասիրում էին մեծագույն եռանդով և ուշադրությամբ:

Երբ թերթում ենք ուս բանասերների ուսումնասիրությունները, մենք պարզորոշ կերպով նկատում ենք անբաժան այն կապը, որ միացնում է առաջավոր ուս բանասերներին Գորբուլյուբովի և Չերնիշևսկու հետ: Ժողովրդայնության պատգամների վրա խարսխված գրականությունը պաշտպանող Բելինսկին ժամանակին կանգ է առել ժողովրդական բանահյուսության վավերագրերի վրա: Հեղափոխական-զեմոկրատական գրողների մարտական օրգան «Սովրեմեննիկի» էջերում 60-ական թվականներին լույս են տեսել ժողովրդական բանահյուսությանը նվիրված քննական ուսումնասիրություններ: Ահա այդ ամենը ակամայից հիշում է ընթերցողը, երբ ուսումնասիրելով նախնայանքի կրիտիկական ուսումնասիրության ընդհանուր կառուցվածքը, աշխատում է լուսաբանել նախնայանքի հիմնական մտքերի ընթացքն ու ուղղությունը:

4

Նախնայանքի գրադարանում կա ի միջի այլոց տնտեսագետ Մոլինարիի քաղաքատնտեսության կուրսի առաջին հատորի ուսերեն թարգմանությունը (1869): Նախնայանքը հատուկ մակագրությամբ (մատիտագիր) ընդգծում է, որ այդ երկասիրությունը տխմար ու զարկելի գործ է...: Երբ թերթում ենք Մոլինարիի գիրքը, միանգամայն հասկանալի է դառնում նախնայանքի դայությունը: Մոլինարին բուրժուական իմաստասեր էր: Իր գիրքը նա կազմել է բացառապես «սոցիալիստներին» դատափետելու նպատակով: Պաշտպանելով «արգունաբերական ազատության» սկզբունքները Մոլինարին ի միջի այլոց նետվում է Մալթուսի բոլոր քննադատների դեմ: նա գտնում է, որ տնտեսագետները պիտի հենվեն Մալթուսի ուսմունքի վրա: Պաշտպանելով կապիտալի և մասնավոր սեփականության շահերը, նա իր ամբողջ ուսումնասիրությունը գրում է՝ բանվորներին և աշխատավոր ժողովրդին իբր թե «խրատելու» ու «խելքի բերելու» նպատակով:

Մոլինարիի գրքի առթիվ նետված նախնայանքական հակիրճ «ակնարկը» ցույց է տալիս, որ նախնայանքին լավ էր հայտնի տակավին 1860 թ. ուս հեղափոխական զեմոկրատների գիրքը Մալթուսի ուսմունքի նկատմամբ: Չեր-

նիշխակու հայտնի թարգմանությունը (Միլի-բաղաբատնետություն) և ծանոթությունները լույս են տեսել «Սովրեմեննիկի» մեջ:

Ոչ մի կասկած չկա, որ այդ ամսագրի ակտիվ ընթերցող նալբանդյանը ծանոթ էր այդ ծանոթությունների հետ և իր վերոհիշյալ դիտողությունն էլ գրել էր այդ ծանոթությունների անմիջական ազդեցության ներքո:

Ինձ թվում է, որ նրան պիտի լավ հայտնի լինեք նաև Մոլինարիի ուսուցիչներն հրատարակության առթիվ «Սովրեմեննիկի» էջերում հրապարակված մատենագրական ղեկավարան: Չերնիշևսկին էր գրել այդ ղեկավարան: Գատափետելով ստորաբաղադրյալը տարված ուսուցիչական տնտեսագետներին, Չերնիշևսկին իրոնիայով մերկացնում է Մոլինարիի տնտեսագիտական հայեցողության ղեկավարան էությունը: Նա կանգ է առնում նաև Մոլինարիի պատվին կազմակերպված ժողովի վրա: Ամբողջ ղեկավարան լեցուն է սուր ակնարկներով: Նալբանդյանի հակիրճ դիտողության մեջ բնորոշ է «գազելի» խոսքը: Չերնիշևսկին գլխավորապես ծաղրում է: Նալբանդյանը արտահայտում է իր անսահման դայրույթը, նկատի առնելով անշուշտ Մոլինարիի ղեկավարան հայեցողությունը:

Ես կանգ եմ առնում նալբանդյանի այդ դիտողության վրա ահա ինչու: Սովորաբար նալբանդյանի «Երկրագործության» մասին գրող առանձին բանասերներ շատ կտրուկ կերպով կտրում են «Երկրագործության» հեղինակին «Հյուսիսսիբիրի» աշխատակից նալբանդյանից: Մենք արդեն տեսանք, որ այդօրինակ մոտեցումը սխալ է և մակերեսային: Նալբանդյանի երկերի ժողովածուին կցված ծանոթությունների հեղինակները հսկայական աշխատանք են կատարել: Նալբանդյանի ուսումնասիրությունների քննարկմանը նվիրված գիտական աշխատությունները քանզի են ավելի քան վճռական կերպով հայ ազգայնական պատմաբանների ջանքերով ստեղծված սխալ հերյուրանքները: Համեմատաբար ավելի քիչ են ուսումնասիրված նալբանդյանի գրադարանի պատմական և հասարակագիտական գրքերը, որոնք, ինչպես ասացինք, նույնպես պիտի գրավեն մեր առանձին ուշադրությունը:

Այսպես թե այնպես ակներև է, որ Կոլրի ու Մոլինարիի գրքերն ուսումնասիրող նալբանդյանը ժամանակին կարգացել է Չերնիշևսկու ղեկավարանները և, լիովին միանալով Չերնիշևսկու մտորումներին, անցել տնտեսագիտական պրոբլեմների մանրակրկիտ ուսումնասիրության՝ իր երկրորդ առաստիճանային ուղևորությունից առաջ: Փարիզում նա միայն նորից ամփոփում էր իր մտածություններն ու խոհերը: Այդտեղ նա հնարավորություն է ստանում ընդհուպ մոտենալ ուսական անլեզալ հրատարակությունների, ինչպես նաև առանձին ուսուցիչական սոցիալիստների երկերի ուսումնասիրությանը: Ամփոփելով իր խոհերը, հենց Փարիզում էլ նա տպագրում է իր «Երկրագործություն» տրակտատը: Նալբանդյանի հիմնական ելակետն այդտեղ շատ

պարզ է: Որոշակի կերպով նա շեշտում է, որ կապիտալիստական Արևմուտքը ղեկավար է ստեղծում և նոր շղթաներ կուտում ամենուրեք: Արևմտյան պետությունների գաղութային էքսպանսիան իրականում բռնակալ պետությունների արշավ է: Նալբանդյանը մերկացնում է առանձնապես Անգլիայի գաղութային քաղաքականության իսկական էությունը: Հնգակաստանում և Չինաստանում: «Անգլիան,— կարդում ենք «Երկրագործության» մեջ,— ամիսը երեք շոգենամ ավիտոն բռնությամբ ներս է տանում Չինաստան և այդ թույնի փոխարեն ամիսը երեք շոգենամ արծաթ է ստանում. այս անբարոյականությունն է...»:

Ես այստեղ կանգ չեմ առնում նալբանդյանի աշխատության առանձին թերությունների վրա: Նա կանգ է առնում «բանականության» վրա. բարոյախոսական դիտողություններ է անում. նույնիսկ ընկնում է որոշ հակասությունների մեջ: Այս ամենը բացատրվում էր գուցե և նրանով, որ հապճեպ կերպով հրատարակելով իր տրակտատը, նալբանդյանը հնարավորություն չի ունեցել ավելի մեծ ուշադրությամբ վերանայել իր աշխատության որոշ էջերը: Չնայած որոշ հակասություններին, նալբանդյանը կապիտալիստական Արևմուտքի նկատմամբ ունի շատ կտրուկ բացասական տեսակետ:

«Մեր աչքի առաջ են,— գրում է նալբանդյանը,— բյուրավոր անգործ գործավորք, որ տանջվում են սովից և վերջին ճիգն են թափում, պատերազմելով մի ծայրացյալ ազդեցության դեմ...»: Կանգ առնելով «ազդեցության» վրա, նալբանդյանը շեշտում է, որ «իսկական ազդեցությունը» հասարակ ժողովուրդն է, և ոչ թե ժողովրդին շահագործող «մեծատունները»: Նա դատափետում է պատերազմների և կոտորածների հեղինակներին. «Խեղճ ազգը— (կարգա՝ ժողովուրդը—Ա. Կ.)—կրում է ծանր հարկեր՝ զոհում է իր առույգ զավակներին թշնամին վանելու համար, ոգևորվում է հաղթությամբ, տաղեր է երգում և գործը ավարտելուց հետո ուրախ-ուրախ վերադառնում է յուր տեղը, կարծելով և հավատալով, թե մեծ գործ կատարեց հայրենիքը փրկեց և պատիվը պահեց: Սրանից ավելի կոպիտ և խոշոր հեղուկություն մենք չենք կարող երևակայել...»:

Նալբանդյանի տրակտատի առաջին մասը կազմված է այդ ձևով: Մի ակնթարթ հիշում ենք Գերցենի հայտնի «Ռուս ժողովուրդը և սոցիալիզմ» աշխատության (նամակ՝ ուղղված Միլեյին) որոշ էջերը, երբ ուշադրությամբ հետևում ենք նալբանդյանի քննական դիտողություններին: Գատափետելով կապիտալիստական պետությունները, նալբանդյանը կանգ է առնում նաև ցարական միապետության քաղաքականության վրա: «Երկրագործության» ամբողջ առաջին մասը ըստ էության ուղղված է առաջին հերթին նրանց դեմ, որոնք «թուրքա-հայերի» ազատագրությունը կամ հայ ժողովրդի «վերածնությունը» կապում են կապիտալիստական պետությունների և ցարական կառավարության «հայասիրական» քաղաքականության հետ: Այլ խոսքով նալ-

բանդյանը կովի է ելնում այս անգամ ոչ միայն պահպանողական, այլ նաև լիբերալ «հայրենասերների» դեմ: Գրա համար էլ նա ընդգծում է, որ եվրոպայում «գլխավոր նյութը» ամենից առաջ «տնտեսական խնդիրն է», որ տակավին չի լուծվել, թեև «կանուխ թե ուշ սոսկալի» փոփոխիկներով «պիտի լուծվի»: Պետք է ասել, որ խորազանելով կապիտալիստական կարգերը, նալբանդյանը շատ ընդհանուր դիտողություններ է նետում ապագա կարգերի մասին: Նա որոշ շափով հաշտվում է մասնավոր սեփականության պաշտպանողների հետ: Նրա ապագա հասարակության մեջ մնում են անխախտ մասնավոր սեփականության որոշ տարրեր: Պաշտպանելով «հողի համայնացման» պոստուլատը, նա ցանկանում է այդ ձևով կովել «աղքատության» դեմ: Բնորոշն այն է, որ դերցենյան հայտնի թեզը նալբանդյանը նոր ձևով է հիմնավորում: Գերցենը գտնում էր, որ հակառակ կապիտալիստական եվրոպայի, գյուղացիական Ռուսիան կարող է ավելի շուտ և ավելի հեշտ հասնել «սոցիալիզմին»: Նալբանդյանը հակառակ Գերցենին կանգ է առնում կապիտալիստական Արևմուտքին հատուկ ներհակություններից ազատ Ասիայի վրա: Նա գտնում է, որ Ասիան կարող է ապահովել «ժողովրդի մեծամասնությունը» սոցիալական շարիքներից, սովից, շքավորությունից: Որպեսզի Ասիայում ևս չկրկնվի Անգլիայի կամ Ֆրանսիայի «տխուր պատմությունը», — գրում է նալբանդյանը, — անհրաժեշտ է հողը համայնացնել և ապագա շարիքների առաջն առնել:

Ապագայի մասին նետված այդ ակնարկները իհարկե հակասական են և առաձգական: Նալբանդյանը, շատ խոշոր մտածող լինելով, արձագանքել է իր օրերի հայրենի իրականության հակասություններին շատ յուրահատուկ ձևով: Նա չի կարողացել ազատագրվել 60-ական թվականների հայ դեմոկրատների մտայնությունը հասուկ հակասություններից: Շատ ավելի ուժեղ և հետևողական է դառնում նա, երբ ծանրանում է արևմտյան պետությունների էություն, քաղաքականության, տնտեսական-քաղաքական քայլերի վրա: Թուրքիայում գործող արևմտյան միսիոներները, — գրում է նա բանտից, — ամենևին չեն տարբերվում Հնդկաստանում և Ճապոնիայում գործող միսիոներներից: Նրանք «մեծամեծ ոռճիկներ են ստանում և կանխիկ դրամով կամ անգլիական դեսպանության հովանավորությամբ գնված զավանսփոխ անձերի թիվը ավելացնելով» օժանդակ ուժ են հանդիսանում կապիտալիստական Արևմուտքի համար: Քիչ հետո նա նկատում է. «Անգլիական և ֆրանսիական կառավարություններն իրենց օգտին են ծառայեցնում» այն հանգամանքը, որ հայերը Թուրքիայում անպաշտպան են: Այդ կառավարությունները հանդես են գալիս քրիստոնեաների պաշտպանների դերում և այդ ձևով առաջ են տանում իրենց քաղաքականությունը:

Նալբանդյանը արտասահմանում մերկացնում է ավանտյուրիստ Լուսին-

յանին: Այդ մերկացումները մեծ ապավորություն են թողնում հատկապես պոլսահայ գործիչների շրջանում: Իր գործունեության սկզբնական շրջանում Լուսինյանը կապված էր ցարական կառավարության հետ: Հետագայում նա կապվում է ֆրանսիական կառավարության, հայ կաթողիկ ամիրանների, ամիրայական պուրլիցիստների հետ: Միսիոնարյան գործիչներից Հյուսիսային Ասիայի ճիգ է անում հիմնավորել Լուսինյանի ավատական-ժառանգական իրավունքները: Երբ պարզվում է Լուսինյանի իսկական դեմքը, ամիրայական պուրլիցիստների կացությունը դառնում է բավական զավեշտական: Հետաքրքրական է այն, որ այդ պուրլիցիստներից մեկը նույնիսկ աշխատում է կապել Լուսինյանին լոնդոնյան էմիրանտների հետ: Նալբանդյանը դատական հարցաքննության ժամանակ շատ պարզ հայտնում է, որ Լուսինյանը «շառլատան» է և անգլիական կառավարության ագենտ»: «Ոչ մեկ հավատ, — ասում է նալբանդյանը, — ոչ այդ շառլատանին, ոչ էլ նրա ագենտին, ես չեմ ընծայում...»: Նալբանդյանի «Երկրագործության» մեջ կան տողեր, որոնք լեցուն են դերցենյան գրություններին հատուկ «կրակով»: Այդօրինակ տողերի մեջ ավելի ցայտուն գծերով նշմարվում է ռուս հեղափոխական-դեմոկրատ գործիչների հետ կապված մարտնչող հայ պուրլիցիստի խոհուն ու խիզախ դեմքը: Ես կանգ կառնեմ միայն այն տողերի վրա, որոնք նվիրված են զաղուխավարներ զավթող արևմտյան կապիտալիստական պետությունների և դրանց հետ կապված ցարական դեսպոտիայի բնութագրմանը: «Սոքա ամենքը իբրև բռնի վարժապետ, քաղաքականություն են տարածում և ոչ ոք չի հարցնում աշակերտի կամքը՝ կամի արդյոք ուսանել թե ոչ: Սակայն չէ պիտո աչքից հեռացնել նոցա տարբերությունը մեր հասկացած քաղաքակրթությունից: Բանտերն են նոցա դպրոցները, պուրլիցիստներ և ժանդարմը՝ դաստիարակները, շղթան՝ հրահանգիչ դիրքը, աքսորը՝ բարոյականությունը վերին աստիճանի կազդուրելու մարզարան, կախաղանը և գլխատուության խայտառակ սյունը՝ «դուռն ճշմարիտ», որ տանի ի կյանս հավիտենական»:

Ժողովուրդների եղբայրության մասին էր երազում նալբանդյանը, երբ գրում էր այդ տողերը: Հայ աշխատավոր ժողովրդական մասսաներին նա կոչ էր անում կապվել ամենասերտ կերպով հին աշխարհի դեմ ըմբոստացող հեղափոխական զանգվածների հետ, դառնալ ալեկոծվող մասսաների մեծ հորձանքի ալիքներից մեկը:

Նալբանդյանի կացությունը շատ դժվարին էր: Հեղափոխական-դեմոկրատական ռուս գործիչների հետևող էր նա: Աշխատում էր տարածել հեղափոխական զաղափարներ հայ իրականության մեջ, բայց ինքն էլ տեսնում էր, որ այդ իրականության մեջ ցրիվ ու անկազմակերպ են հայ դեմոկրատիայի շարքերը: Նա իր հույսերը կապում էր հեղափոխական-դեմոկրատական շարժումների հաղթանակի հետ: Սակայն տեսնում էր, որ այդ շարժումները

շախազախում են ու թուլանում: Հարազատ իրազեանութան մեջ նա ուներ երկրպագուներ և բարեկամներ, հետևողներ և զինակիցներ: Այնուամենայնիվ, հետևողների որոշ շարքերը հաճախ լիովին չէին հասկանում նրան ու չէին էլ կարող հասկանալ: Այդ հետևողների համար նախանշանք սուկ հայ հայրենասեր էր, կուլտուրական գործիչ, բունակայնների և «ասիականություն» դեմ մարանշող խիզախ դործիչ:

Նախանշանի թշնամիների «կուսակցությունը» ուժեղ էր: Լազարյանները Ռուսիայում և ականավոր ամիրանները Քուրբիայում կանգնած էին այդ «կուսակցության» թիկունքին: Յարական ժանդարմները և սուլթանական համհարզները պաշտպանում էին հետադիմական հոսանքի շահակիրներին: Տերոյենց-Չամուրչյանը և Գաբրիել Այվազովսկին մերթ իդեոլոգիական պայքար էին մղում, մերթ պրոֆեսիոնալ մատենիչներին հատուկ եռանդով «նախազգուշացնում» ցարական և սուլթանական գամփաներին: Ամեն ինչ գործադրվում էր դրանց ջանքերով:

Չնայած այդ ամենին պահպանողականների «կուսակցությունը» չի կարողանում գրավել «ուժեղ դիրքեր» հայ հասարակական միջավայրում: Պարբերաբար նա հարվածներ է ստանում:

Բավական ուժեղ և շոշափելի հարված է ստանում այդ «կուսակցությունը» Նոր-Նախիջևանում: Այդտեղ նախանշանին մոտիկ զինակից Հայրապետյանը կազմակերպում է պրոգրեսիվ քաղաքացիների շարքերը: Քաղաքային համայնքի հայտնի ներկայացուցիչները որոշում են հանում արտասահման ուղարկել նախանշանին և նրան հանձնարարել ստանալ Հնդկաստանում Բարջանյանի կտակած հակայական գումարը: Այդ որոշումը զորավոր հարված էր ուղղված անմիջապես կղերական կուսակցության դեմ:

Երկրորդ ուժեղ հարվածը հայկական ռեակցիայի ջահակիրները ստանում են 1862 թ.: Երբ նախանշանը ձերբակալվում և բանտարկվում է, հայ պահպանողականները առաջին նվազ ոգևորվում են և ճգնում Նոր թափ հազորդել իրենց արշավին: Հայրապետյանը և նրա զինակիցները չեն հուսահատվում և չեն նահանջում իրենց դիրքերից: Նրանք ակտիվ կերպով շարունակում են պաշտպանել նախանշանին: Սենատական գործի մեջ կա նշանակալից մի վավերագիր: Դա այն հայտարարությունն է, որ կազմել էին Նոր-Նախիջևանի բազմաթիվ քաղաքացիները նախանշանի մասին: Ըստ էության այդ քաղաքացիները բացորոշ հայտարարում էին, որ իրենց համար կալանավորված նախանշանը հարգելի անձնավորություն է: Հեշտ չէ ցարական բռնապետության դաժանագույն օրերին ձեռնարկել այդպիսի մի բայ: Նախանշանը քաղաքական «հանցավոր» էր համարվում և Ալեքսեևյան Ռավելիի կալանավոր էր: Նախիջևանի հայ քաղաքացիները իրենց ստորագրություններով վրաստահանում էին հանդես գալ բացորոշ կերպով, որպես կառավարության թըշ-

նամու հովանավորներ և պաշտպաններ: Իսկական և շատ ազդու փաստ էր դա: Թերազնահատել նախիջևանի քաղաքացիների ելույթի նշանակությունը չէին կարող ոչ կառավարական բարձր շրջանները և ոչ էլ մանավանդ նախբանդյանի մոլեգին թշնամիները: Սակայն դրանց համար այնքան էլ նպատակահարմար չէր ստեղծել ռեֆորմների շրջանում ավելորդ աղմուկ և բացերև կերպով ընդգծել կատարված անհրապույր զեպքի իրական իմաստը: Այդպիսով, նախանշանի բանտարկությունից հետո հասարակական կյանքը չի մարում: Պայքարը շարունակվում է:

Հայտնի է, որ 1865 թ. Թբիլիսիում բռնկվում է արհեստավորների շարժումը, որը ուղղվում է մեծահարուստ վաճառականների և ապա մի որոշ շահով կառավարության դեմ: Բնորոշ է այն, որ վրաց գործիչ Նիկոլաձեն Գերցենին ուղարկած իր թղթակցությունների մեջ, նկարագրելով 1865 թ. շարժումը, կանգ էր առել ապստամբության հակակառավարական բնույթի վրա: Այդ թղթակցությունները ժամանակին լույս են տեսել Գերցենի «Կոլոկոլի» էջերում:

Միևնույն ձևով է մոտենում ցարական կառավարությունը նաև նախանշանի հանդիսավոր թաղման առթիվ կազմակերպված ժողովրդական լայնածավալ ցույցի հետաքննությանը և մեկնաբանությանը:

Ներկայումս մենք հնարավորություն ունենք նախանշանի երկերի ակադեմիական հրատարակության շրջանում հատորի մեջ ամփոփված պաշտոնական վավերագրերի հիման վրա նկարագրել 1866 թ. այդ ցույցը:

Երբ նախանշանը 1866 թ. ապրիլ ամսին մեռնում է Կամիշինում, նրա մարմինը կառավարության թույլտվությամբ տարվում է Նախիջևան: Նոր-Նախիջևանի քաղաքացիները հատուկ պատվիրակներ են ուղարկում Կամիշին: Նախանշանի դիակը Վոլգայով փոխադրվում է Դոն և նավով մայիսի սկզբին հասցվում Նախիջևան: Հայրապետյանի կարգադրությամբ կազմակերպվում է հակայական ցույց: Եկեղեցիների զանգերը հաղորդում են տխուր գույժը աշխատավորներին: Դոնի ափին դազաղը դիմավորում են արտասովոր հարգանքով, երաժշտությամբ՝ քաղաքի համարյա ողջ բնակչության մասնակցությամբ: Փոխգնդապետ Յանովը իր գաղտնի զեկուցագրի մեջ (ուղղված ժանդարմների շեֆին) հաղորդում է, որ հատուկ կարգադրության համաձայն նախանշանի դիակը տանում են քաղաքից 5 վերստ հեռավորության վրա գանդվող վանքը և այդտեղ թաղում: «Վանքի վարդապետը,— գրում է Յանովը,— իր դամբանական ճառում հանգուցյալին անվանել է անմեղ նահատակ»: Շեշտված հանգամանքները նկատի առնելով, Եկատերինսկայի նահանգապետը գտնում է, որ նախանշանի թաղումը կառավարության դեմ ուղղված բնույթ ունի և հանձնարարում է Ռուստովի ռատիկանապետին այդ մասին պատշաճ քննություն կատարել: Հետաքրքրական է այն, որ Նախիջևանի հոգևոր կառա-

վարություն անդամ Շապուշնիկովը (քահանան) հայտարարում է, որ նա իր տված անկեղծ ցուցմունքների համար «ենթարկվել է նախիջևանի քաղաքադուխ Հայրապետովի, ավագ քահանա Բալաբանովի և այլ անձանց հալածանքներին»: Ժանդարմական պետ կապիտան Բելոցերկովսկին իր զեկուցագրի մեջ հայտնում է, որ «ավագ քահանա Շապուշնիկովը իր նվիրվածությամբ կառավարությունը և Նալբանդովի թաղման մասնակցած անձանց հանցագործությունների մերկացումով արժանի է առանձին ուշադրության և հովանավորության»:

Պաշտոնական այդ վավերագրերը անհնարին է անուշադրության մատնել: Նալբանդյանի բարեկամները և համակիրները կարողանում են, ինչպես տեսնում ենք, հակադաս ցույց կազմակերպել և ստեղծում են մեծագույն իրարանցում կառավարական շրջաններում: Յուրյը լինում է այնքան ազդու, որ այս անգամ կառավարական օրգանները նախ ստիպված են լինում բնութայություն: նշանակել և մանրակրիտ կերպով ուսումնասիրել ցույցի հետ կապված հանգամանքները, իսկ հետագայում — կոծկել ամբողջ գործը: Վերջի որոշումը բնորոշ է: նախնական բնութայությունը պարզել էր, որ ցույցը հիրավի մեծ է եղել, իսկ ցույցի ղեկավարների վարքագիծն էլ բավական որոշ: ինչ իմաստ ուներ այդպիսի պարագաներին ավելորդ իրարանցումը: Գատավարությունը կամ սենատական նոր բնութայությունը կժողովրդականացնեն ամենից առաջ միևնույն Հայրապետյանին և Նալբանդյանի բարեկամներին: Միաժամանակ հասարակական լայն շրջաններում այդ դատավարությունը կարող էր ստեղծել անբավականություն և հակակառավարական ուրույն շարժում: Յարական պաշտոնյաների պոլիտիկան պարզ էր:

Նալբանդյանի հետևողները կամ նրան համակրողների շրջանները կարող էին նույնիսկ նետվել ուսու ընդդիմադրական հոսանքների գիրկը և ուժ տալ հակապետական հոսանքներին: Ըստ երևույթին այդ կատեգորիայի մոտիվներն են թեյազրում կառավարական օրգաններին կոծկել ամբողջ գործը և քննիչների զեկուցագրերը նետել արխիվ:

Եսլիբյանական «պարտիան» նորից ստանում է շոշափելի հարված: Կղերական գործիչները ստիպված են լինում բռնել նահանջի ուղին:

Նալբանդյանի երկերի հրատարակությունը արգելվում է: Սակայն Նալբանդյանի անունը դառնում է սիմվոլ հայ ընդհատակյա խմբերի և հասարակության առաջավոր շրջանների համար: Տպագրվում է Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը և պորտբար: Անլեզալ այդ հրատարակությունը տարածում են Նալբանդյանի անհայտ երկրպագուները: Մեծագույն թափ է ստանում յուրահատուկ այդ պրոպագանդան: Յարական ժանդարմական օրգանները 70-ական թվականներին ստիպված են լինում հատկապես Թբիլիսիում հատուկ բնութայուն կատարել: Աբգար Հովհաննիսյանը որոշում

է զետեղել իր «Փորձ» հանդեսի մեջ Նալբանդյանի բանաստեղծությունները: Տպագրվում են այդ երկերը: Յարական ցենզորները սակայն կոնֆիսկացիայի են ենթարկում տպարանում արգեն շարված թերթերը: Նշանակալից այդ վավերագրերը գտնվում են նախկին Կովկասյան ցենզուրայի կոմիտեի վավերագրերի պահարանում՝ Սովետական Վրաստանի Պետական արխիվում: Նալբանդյանի երկերի առաջին հրատարակությունը աղավաղված և անշափ կրճատված մի հրատարակություն է: Այդ փաստը արձանագրվել է մեր մամուլի էջերում շատ որոշակի կերպով: Հայտնի է նաև, որ Նալբանդյանի ընթերցողները շատ հաճախ արտագրում էին «Երկրագործությունը» և ապա տարածում ձեռագիր օրինակները: Բազմաթիվ այդպիսի հրատարակություններ են հայտնի, որոնք տակավին ուսումնասիրված չեն անհրաժեշտ շափով:

5

Մ. Նալբանդյանը, որպես հայ խոշոր հեղափոխական ղեմավար և լուսավորիչ իր լիակատար գնահատականը ստանում է միայն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո: Ներկայումս արգեն ավարտվել է ու հրատարակվել Նալբանդյանի երկերի սովորածավալ շուրս հատորներից բաղկացած ժողովածուն: Ակադեմիական այդ հրատարակությունը, ինչպես նաև սովետահայ բանասերների պրպոտմաները անշուշտ մեծագույն շափով կօժանդակեն Նալբանդյանի կյանքի տակավին քիչ լուսաբանված էջերի ճշգրիտ լուսաբանության: Հրապարակված նյութերը այնքան հարուստ են, որ լիովին հնարավորություն են տալիս բարեխիղճ ընթերցողին արձանագրել Նալբանդյանի խոշոր պատմական դերը հայ հասարակական մտքի պատմության մեջ:

Հայ ժողովրդի առաջավոր ներկայացուցիչների փայլուն պանթեոնում Նալբանդյանը եզակի տեղ է զբաղում ամենից առաջ որպես հեղափոխական մտածող, ղեմավար-լուսավորիչ, ժողովուրդների բարեկամության աննկուն պրոպագանդիստ: 60-ական թվականների ուսու հեղափոխական ղեմավարների նման գործիչ էր նա: Գրասեր էր և էրուդիտ: Էնցիկլոպեդիական գիտելիքներ ուներ: Հետազոտել էր իր օրերի բնագիտության և հասարակագիտության ներկայացուցիչների ուսումնասիրությունները, աշալուրջ գիտնականին հատուկ ուշադրությամբ: Կանգնած լինելով մատերիալիզմի դիրքերի վրա, նա աշխատում էր տեսականորեն հիմնավորել իր հասարակական, քաղաքական և գրական-զեղարվեստական սկզբունքները: Նրա կյանքի դրվագներն էլ զբաղում են ընթերցողի առանձին ուշադրությունը:

Ամենաախրելի հեղինակներն են նրա համար՝ Բելինսկին, Գորբուլուրովը, Չերնիշևսկին: Լոնգոնում նա դառնում է Գերցենի և Օգարևի մտերիմ բարե-

կամը: Տեսնում ենք նրան Իտալիայում գարիբալդիականների կողքին՝ Վեր-
գիի «Տրուբադուրի» հրատարակությունը ձեռքին: Հնդկաստանում նա հավա-
քում է նյութեր ազատախոս հայ գործիչ Քաղիադյանի մասին և դիտում
ժողովին փոխնի բեռներով բարձրված նավերը: Ստամբուլի և Զմյուռնիայի
հայ ժուռնալիստները պատմում են նրան Զեյթունի ապստամբների մասին:
Ոսկանը Փարիզում նկարագրում է Մոնմարտը— կատինական թաղամասի
ուսանողներին, հուլիսյան հեղափոխության գրվագները, Տյուլլերի պալատի
գրավումը: Ինքը Ռսկանը այդ օրերին ֆրանսիական ցուցարար ուսանողների
շարքերում գրողակազմի էր: Նոր ապրումներով, նոր հուշերով ու հույզերով,
նոր զենքերով գինված նա վերագառնում է հայրենիք և ձերբակալվում: Նալ-
բանդյանի վերջին կացարանը դառնում է Ալեքսեևյան Ռավելինը...

Հեղափոխական հայրենասերի և մեծ հումանիստի երկերի էջերի մեջ
գծագրվում են անցյալի բոլոր այդ ցնցող դեպքերն ու էպիզոդները: Հիմնա-
կան մի գիծ ավելի ցայտուն կերպով է երևում հրաշունչ այդ էջերի և տողերի
մեջ: Դա նրա ամուր կապն է 60-ական թվականներին ուսու հեղափոխական
դեմոկրատների հետ: Ամենեին պատահական չի կարելի համարել այն, որ
Նալբանդյանը, ձայնակցելով Զերնիշևսկուն, ամենակտրուկ կերպով որոշում
է իր դիրքը հին օբսկուրանտների, նացիոնալիստների, ռասիստների դեմ:
Մոլինարիի քաղաքատնտեսության կուրսը նա դեն է նետում՝ համակված
անսահման զայրույթով: Մոլինարին գտնում էր, որ ժանտախառը, մահճ, կո-
տորածները «անհրաժեշտ վիրաբույժներին» զեր են կատարել խավար անց-
յալում և, կրճատելով բնակչության քանակը, նպաստել ժողովուրդների բարե-
կեցությանը: Մոլինարին, պաշտպանելով Մալթուսին, առաջարկում էր սահ-
մանափակել արհեստական միջոցներով աշխատավորների թիվը: Յինիկորեն
նա նույնիսկ մեծարում էր «ժանտախտի» նման «վիրաբույժներին»: Հնօրյա
մարդակերական գրույթները հիմնավորվում էին հիտլերյան մարդակերների
կողմից: Այսօր նույն այդ վայրագ «պատգամները» պաշտպանում են իմպե-
րիալիզմի անգլո-ամերիկյան լակեյները իրենց կեղծ գիտական գրույթուն-
ների մեջ...

Հեռու անցյալում Նալբանդյանը անդուլ մարտեր է մղել ուսակցիայի բոլոր
զաղափարախոսների և դրանց հետ կապված ռասիստների դեմ: Ժողովուրդ-
ների ազատագրության և ժողովուրդների եղբայրության գրոշն է պարզել նա:
Կոփել է հայ ժողովրդի շարքերը և ձայնակցել XIX դարի 60-ական թվական-
ների ուսու հեղափոխական-դեմոկրատների գաղափարներին: Խորունկ և շատ
սուր ակոս է փորել նա հայ ժողովրդի գիտակցության մեջ:

Հայաստանը այսօր երկրագնդի ամենահզոր սոցիալիստական պետու-
թյան— մեծ Սովետական Միության անբաժան հատվածն է:

Հայ ժողովուրդը կոռում է նոր կյանքի լուսավոր շենքը՝ միաձուլված սովե-

տական եղբայրական ժողովուրդների շարքերի հետ ու զինված կենինի պող-
պատե կուսակցության հեղափոխական պատգամներով:

Աննկուն և կորովի Նալբանդյանի անունը սիրով ու մեծագույն ակնա-
ծանքով է նշում այսօր իր դարավոր կապանքներից ազատագրված հայ ժո-
ղովուրդը:

Դասախոսությունը կարգացված է ՀՍՍՀ-ի առողջապահական
մինիստրության ֆիզիոթերապևտիկ ինստիտուտի և ներվային հի-
վանդությունների կլինիկայի աշխատողների միացյալ աուդիտորիա-
լում, «Կենտրոնական դասախոսական բյուրո», Երևան, 1949:

ՆՈՐ ՍԱՐՅԱՆԸ

Ասում ենք «նոր» ոչ թե նրա համար, որ այսօրվա Սարյանը հակասում է
երեկվա Սարյանին: Ամենեին ոչ: Կա նույնիսկ ընդհանուր մի գիծ նրա հին
և նոր նկարների մեջ:

Միևնույն պարզությունը և հստակությունը, միևնույն սուր և բարձր ար-
վեստի ուժը հնարավոր է նշմարել նրա բոլոր արտադրությունների մեջ:

Սակայն կա և տարբերություն:

Եվ այդ տարբերությունը ոչ միայն աչքի է զարնում, այլև բնորոշում է
միանգամայն նոր կողմից և լուսավորում է նոր լույսով արվեստագետ Սար-
յանին:

Վենետիկի միջազգային ցուցահանդեսի ուսական մասնաճյուղի պաշ-
տոնական ցուցակից մեկ հայտնի է, որ Վենետիկում ցուցահանված են 11
նկարներ, որոնք այստեղ, Մոսկվայում, գրավել էին ուսական ժյուրիի առան-
ձին ուշադրությունը: Այդ գործերից 148—150-ը պորտրետներ են, իսկ 151-ից
մինչև 157-ը նկարչի նորագույն երկերն են¹:

Նկարներից 153-ը (նատյուրմորտ), որքան ես հիշում եմ, Սարյանի հին
գործերիցն է: Բոլոր մնացյալ նկարները պատրաստված են Հայաստանում և
ահա հենց սրանց մասին է իմ խոսքը:

Առանձնապես ուժեղ են «Հայաստանը», «Երևանը» և «Կենները» (թիվ
151, 154, 155 ըստ ցուցակի):

Անդորր և պայծառ զգացումով են համակված այդ մեծ կտավները, այդ-
տեղ լուսավոր և հեքիաթային է ամեն: քիս ծանոթ Երևանը իր այրող արևով և
ղեղնավուն կոշորիտով:

¹ Այդ ցուցակը տպված է Վենետիկում և կրում է հետևյալ վերնագիրը՝ „19. Esposizione
Internazionale d'Arte della città di Venezia, 1924“ — Սարյանի նկարների մասին (էջ 5,
14): Ցուցակին կցված է նկարչի «Երևան» լուսանկարը:

Առաջին նվազ տարօրինակ է թվում նույնիսկ, որ այդ պելլագոսները ստեղծվել են ավերված, անտուն և աղքատ Հայաստանում:

Հիշում եմ ռուսական նկարիչներին մեկի զարմացական դիմումը Սարյանին Մոսկվայում.

— «Մի՞թե եիշտ ձեր Հայաստանը այդքան գեղեցիկ է... Մի՞թե ձեր երկրում կան այդքան բարձր լեռներ և անձայր հեռուներ»...

— «Ես տեսա այդ գեղեցկությունը, իմ աչքերին այդպես է երևում Հայաստանը»...

Բերում եմ դիալոգը անփոփոխ:

Նկարիչ-պոետի «տարօրինակ այդ պատասխանը ինքնին բացատրում է շատ բան:

Ի վերջո չպիտի մոռանանք իհարկե այն, որ արվեստագետները և պոետներն ամենից հաճախ վերարտադրում և նկարում են իրականությունը այնպես, որպես նա տպավորվում է նրանց գիտակցության և երևակայության մեջ: Ահա հենց այդ հանգամանքն էլ թելադրում է մեզ հարցնել.

— Այդ ինչպե՞ս է պատահել, որ հենց մեր երկրում, անպահույն և գյուղական Հայաստանում ստեղծվել են Սարյանի զվարթ, առույզ և պայծառ նկարները: Ինչո՞ւ է նկարչի վրձինը այնքան վստահ և կենսուրախ: Ինչպե՞ս բացատրել այն, որ նկարչի երևակայության առաջ գծվում են հսկայական լեռների անվերջ շարքերը, գունավոր արտերի և մարդագետիների զվարթ հեռանկարները, անդնդախոր ձորերը և ուժ ու ոգևորություն ներշնչող արևը:

Մարտիրոս Սարյանի մեծ կտավը ճիշտ այդ պատկերն է ներկայացնում.

Իրական և ապրող Հայաստանի մի նկար է դա:

Ի՞նչ Սարյանի մի ուրիշ գործի, Երևանի Պետական թատրոնի վարագույրի հիմնական, մոտիվի ընդգծումն է կարծես... այն տարբերությամբ միայն, որ վարագույրի ձախ անկյունում երևում է յայլի պարող մի խումբ, այնինչ վեներտիկ ուղարկված նկարը շունի այդ ֆրագմենտը և յայլի փոխարեն երևում են մաճկալը, խաղաղ գոմեշները և հողը հերկող հայ գյուղացին:

Տարօրինակ մի զգացում է համակում մեզ, երբ գիտում ենք այդ լայն հորիզոնների, սարերի և ձորերի մեջ աշխատող գյուղացուն:

Զգում ես և հիշում, որ այսօր այդ շինականը ազատ է իրապես, որ նա շնչում է «սարերից փչող հովը» և ձուլվել է այդ մեծ և սքանչելի բնության հետ:

Ուրույն պանթիստական զգացումով համակված դեկորատիվ այդ նկարը մի ապտակ է նրանց, որոնք այսօր ևս խմբված արտասահմանյալ Բաբելոնի կաֆեներում՝ շաղակրատում են ավատական անցյալի «փառապանծ օրերի» մասին:

Ի՞նչ խրատ է նաև այն «միամիտներ»-ին, որոնք մինչև այժմ շնչում կարո-

ղացել հասկանալ, որ Հայաստանն ունի իր սեփական, իրական և դյուրական այսօրը:

Ինչպե՞ս չհիշել այդ առթիվ մեծ լեզվագետ և Անին հետազոտող պատմաբանի, պրոֆ. Մառի այն խոսքերը, որ նա գրել է Շիրակի նորակառույց չրանցքի կառուցման օրերին:

Մարտիրոս Սարյանը արժարժել է շափազանց ցայտուն ներկերով հայ ժողովրդի մեծամասնության հոգեբանության խորհրդավոր մետամորֆոզը: Ինքնահատուկ ձևով և իրեն հատուկ պարզությամբ մեծ նկարիչը արտահայտել է այն ընդհանուր տրամադրությունը, որով համակված են Հայաստանի աշխատավոր շարքերը...

Սարյանը իր խոսքն ասել է որպես նկարիչ և արվեստագետ:

Բայց արվեստագետի այդ խոսքը հասարակական մտահայեցողության և հույզերի բնորոշ մի արձագանքն է, մեր նոր կյանքի և իրականության ինքնատիպ պատկերների գեղարվեստական բնորոշումը: Ուղենք-չուղենք այդ եզրակացության պիտի հանգենք, եթե միայն ցանկանում ենք ըմբռնել Սարյանի նորագույն նկարների հասարակական արժեքը:

Անհրաժեշտ կլինե՞ր կցել մի դիտողություն ևս:

Իր նոր գործերով Սարյանը կատեգորիկ կերպով հայտարարում և ապացուցում է այն, որ Սովետական Հայաստանը ևս չնայած իր նեղ սահմաններին և ծանր վիճակին, կառող է ստեղծագործական աշխատանքի լայնագույն ասպարեզ հանդիսանալ: Ծիշա այնպես, ինչպես այդ կա եվրոպական փոքր երկրներում:

Ժամանակին այնպիսի միջատուր-երկիր, որպիսին Բելգիան է, ստեղծել է Ռոդենրախի, Մետերլինգի, Լեմոնիեի, Վան-Լեբրեգի և Վերհարնի նման տաղանդավոր գեմբեր: Ի՞նչ խոսք, որ մեր արվեստի և մշակույթի զարգացման համար ևս պարտավորեցուցիչ չէ, որ հայ գեղագետներն ապրեն անպատճառ թիֆլիսում կամ Մոսկվայում, Լոնդոնում կամ Փարիզում: Այնքան, որքան նրանք հեռու կլինեն իրենց կոնկրետ միջավայրից, իրական հողից, ապրող և գործող, պայքարող և մտածող ժողովրդից— նրանց արվեստը կլինի անկենդան և տաղտկալի: Նրանց խոսքը կլինի անհամոզիչ, գունդերն ու ներկերը ցամաք ու պղտոր, հանգերն ու ուրիշներ անորոշ...

Մարտիրոս Սարյանը հաստատում է այդ իր գործով:

«Երևանը»— հակառակ ինտելիգենտական թերահավատության, ոչ թե սառցրել է նկարչի ստեղծագործության աղբյուրները, այլ նոր ուժ և կենդանություն է ներշնչել արվեստագետին:

Մենք այդ տեսնում ենք:

Սարյան-արևելքցին կարողացել է գծել նոր եղանակով այն աշխարհի

էութիւնն, որն այժմ էլ արեւելասեր արեւմտացիներէ համար հանդիսանում է խորհրդավոր մի ֆանտոմ:

Մարջան-արվեստագետը ներկերով հաստատել է այն, որ նոր Հայաստանը թարմ, կենսունակ և առաջամարտ Արևելքի մի մասն է:

«Մարտակոչ», № 162, 1924:

Ն. Ա. ԳՈՔՐՈՒՅՈՒԹՈՎ

Իր մի շարք հանրահայտ աշխատութիւնները Գոքրույրովը, ինչպես ներկայումս հաստատված է, հրապարակել է տակավին վաղ երիտասարդութիւն օրերին: Քանհինգամյա Գոքրույրովի գործերը հասուն և տաղանդավոր մտածողի ստեղծագործութիւններ են, որոնք նեկրասովի ու Չերնիշևսկու նման տաղանդավոր գրողների կողմից արժանացել են բարձր գնահատականի:

Գոքրույրովը շատ կարճ ժամանակվա ընթացքում գրական մեծ ժառանգութիւն է թողել և իր գործերով խոր ապաստան է փոքր ուսուսարակական մտքի պատմութիւն մեջ: Նա կրակոտ հրապարակագիր էր, ներհուն քննադատ, գիտնական-բանասեր և պատմաբան, բանաստեղծ էր և գրականագետ: Նրա աշակերտական տետրակները, շատ ուշագրավ օրագիրը և հետաքրքրական նամակները նկարագրում են անգույ աշխատանքին կառած պատանի-մտածողի կազմավորման պրոցեսը: Տասնյոթ տարեկան Գոքրույրովը կարգում և ուսումնասիրում է ժան-ժակ Ռուսոյի «Հասարակական պայմանագրի» ուսերեն թարգմանութիւն ձեռագիրը: Անցնում է մի տարի և մենք պատանի-ուսանողին տեսնում ենք բազմազան գրքեր ուսումնասիրող ժրջան բանասերի դերում: Գոքրույրովը կազմում է հայրենի վայրերի մասին հրապարակված նյութերի մատենագրական ցանկ: Սովետական բանասերները Հոկտեմբերյան մեծ հեղափոխութիւնից հետո հայտնաբերել են բազմաթիւ նոր վավերագրեր և նոր տվյալներ, ինչպես նաև բանասիրական հետազոտութիւններ և պրպումներ, որոնք երբեք չեն կարող անուշադրութիւն մատնել Գոքրույրովի կյանքն ու գործունեութիւնը ուսումնասիրող բանասեր-պատմաբանի կողմից: Մինչև այժմ հրապարակված այդ նյութերը լիովին բնութագրում են վաթսունական թվականների ակնանավոր հեղափոխական-դեմոկրատ գրողին: Այժմ արդեն հայտնի է, թե ի՞նչ էր կարգում Գոքրույրովի իր պատանեկութիւն և ապա երիտասարդութիւն տարիներին: Մենք հենվելով միանգամայն ճշտված փաստական տվյալների վրա, այսօր հնարավորութիւն ունենք նկարագրելու նրա ստեղծագործական աշխատանքի հիմնական փուլերը և պարզելու, թե ինչպես էր նա ինքնուրույն աշխատանքի միջոցով՝ գրական և պատմական հրատու պրոբլեմների լուսարանութիւնը զուգակցում բնագիտական, տնտեսագիտական, իմաստասիրական հանգուցային խնդիրների քննարկման և վերլուծութիւն հետ:

Քանհինգ տարեկան էր Գոքրույրովը, երբ կտրվեց նրա կյանքի թելը: Այսօր էլ ցնցող տպավորութիւն է թողնում խիզախ և տոկուն հեղափոխական-մտածողի գրական հարուստ ժառանգութիւնը: Մարքսը և Էնգելսը մեծ հարգանքով են Գոքրույրովի անունը հիշատակում Չերնիշևսկու անվան կողքին: Լենինը խորունկ զգացումով և սիրով է հիշում Գոքրույրովի պատմական դերը: Երբ հին օրերին Գոքրույրովի մահվան 40-ամյակի առթիւ Մոսկվայի բարձրագույն դպրոցների հեղափոխական ուսանողները հասուկ ցույց են կազմակերպում ընդդեմ ցարական ղեկավարութիւնի, «Բակրայի» էջերում նշվում է ուսանողական այդ ցույցի առանձնահատուկ նշանակութիւնը:

Գոքրույրովի կյանքի և գործունեութիւն պատմութիւնը պետք է գրավի մեր օրերի երիտասարդութիւն մեծագույն ուշադրութիւնը:

Երբեք չի կարելի մոռանալ, որ Գոքրույրովն իր գրական և հեղափոխական տոկուն աշխատանքը տարել է երկրագնդի ամենազաժան ղեկավարաների տիրակալութիւն ծանր օրերին. ապրել է դառն և անապահով կյանքով, միշտ ենթարկվել հալածանքների. ստիպված է եղել գրել գաղտնածածուկ և դիվանագիտական ոճով: Նա երբեք չի նահանջել իր մարտական դիրքերից: Միշտ բարձր է պահել հայրենի ու հարազատ ժողովրդի ավատութիւնը դրոշմ: Համաշխարհային առաջավոր կուլտուրայի արժեքները նրա համար եղել են գաղափարական պայքարի զենքեր: Գոքրույրովի կյանքի և աշխատանքի պատմութիւնը կարող է ոչ միայն նկարագրել մեծ հեղափոխական-դեմոկրատ գրողի բնորոշ կողմերը, այլ նաև բնութագրել XIX դարի 50—60-ական թվականների հեղափոխական դեմոկրատական հոսանքի ակնանավոր ներկայացուցիչների հայեցողութիւն տաղանդավոր գաղափարախոսի մտավոր էվոլյուցիայի շատ յուրահատուկ պատկերը:

1

Ղրիմի պատերազմից հետո, ավատական-ճորտատիրական Ռուսիայի ճշնաժամը ավելի էր սրվել: Այդ նոր էտապում գյուղացիական ապստամբութիւնները դառնում են պարբերաբար կրկնվող շարժումներ: Պատմական ակններև փաստերը և բազմազան վավերագրերը ցույց են տալիս, որ այդ էտապում նույնիսկ ցարական բռնապետութիւն մոլեգին սատրապները ստիպված են լինում համակերպվել նոր պայմաններին և մշակել դիվանագիտական ավելի խորամանկ ստրատեգիա՝ ընդդեմ ոտքի ելնող հասարակական նոր ուժերի: Գյուղական վայրերում պարբերաբար բռնկվող շարժումներին ավելի ուժգին լին արձագանքում համալսարանական քաղաքների ուսանողական զանգվածները և նույնիսկ աշխատավոր բնակչութիւնն առաջավոր խավերը: Ռուս կուլտուրայի ներկայացուցիչները շէին կարող բացասական կամ պասսիվ դիրք բռնել հասարակական ճգնաժամի այդ օրերին: Վաթսունական թվական

ների առաջավոր գիտնականների նոր մտայնությունը և տրամադրությունները փրենց հուշերում շատ դիպուկ բնութագրել են Տիմիրյազևը, Մենդելևեր, Պիրոգովը: Վախտանական-յոթնամյա անցումն առաջին թվականներին, թե՛ ուս գիտություն և թե՛ ուս գրականության ներկայացուցիչների աշխատությունների մեջ ավելի նշմարելի կերպով են բացահայտվում ժողովրդայնության, հումանիզմի, միջազգայնության վեհ մատգամների վրա խարսխված գաղափարական նորանոր խմորումներն ու որոնումները: Ռուս առաջավոր և դեմոկրատական մտավորականության շարքերում Բոտկինի ու Մենդելևեի, Պիրոգովի, Սեչենովի, Ռուլիևի նման գիտնականների աշխատությունները քննարկվում էին շատ ուրույն ասպեկտով՝ որպես հին արժեքների, հին կյանքի և մտայնության դեմ ուղղված գաղափարական ազդակներ: Գիտության և գիտական աշխատանքի պրոպագանդը, կյանքի առարկայական ճանաչողության համար կազմակերպվող ձեռնարկները, բնական գիտությունների նվաճումները և մանավանդ մատերիալիստական մտածողության կնիքը կրող գիտական փորձերն ու գործերը մեծագույն բեկում առաջացնելով, ստեղծում են առաջավոր և հեղափոխական մտորումներով զինվող նոր երիտասարդների պայծառ և հերոսական մի պլեյադա: Նոր դեմոկրատական այդ երիտասարդության ներկայացուցիչների կենդանի կերպարները ջերմ գույներով արտանկարվում են Գերցենի, Տուրգենևի, Ալեպցովի, Չերնիշևսկու գեղարվեստական հանրահայտ ստեղծագործություններում: Հրաշունչ այդ տարիներին օրվա հերոսը դառնում է Չերնիշևսկու «Ի՞նչ անել» վեպի Ռախմետովը: Եվ երբ արմատական դեմոկրատիայի ներկայացուցիչներից հեռու կանգնած Տուրգենևը ճիգ անելով հանդես գալ սոսկ «չեզոք» և «օբյեկտիվ» գիտողի ու նկարչի դերում, կերտում է լիբերալ «հայրերի» վաղեմի ավանգանդի դեմ ծառայող «զավակների» ցայտուն ներկայացուցիչ՝ Բազարովի կերպարը, նա, հակառակ Տուրգենևի ցանկություն, «ընդունվում է» առանց վարանումների, «ընդունվում է» նոր երիտասարդության տաղանդավոր ներկայացուցիչներից մեկի՝ Պիսարևի կողմից: Բազարովը դառնում է Ռախմետովին ձայնակցող ու Ռախմետովի կողքին կանգնած գաղափարական նոր ուղիներ պաշտպանող գործիչ նվիրական ու սիրելի կերպար՝ ոչ միայն 60—70-ական թվականների, այլ նաև հետագա տարիների արժատական դեմոկրատիայի գաղափարախոսների համար: Այժմազանքելով 60-ական թվականների տրամադրություններին, հետագայում նկարիչ Յարոշենկոն, վերարտադրելով հին օրերի գաղափարական ուսանողի և ուսանողուհու կերպարները, այնքան ճշգրիտ է բնութագրել նրանց դեմքերը, որ այդ մեզ լիովին հնարավորություն է տալիս հենվել դրանց վրա և բնութագրել հերոսական 60—70-ական թվականների այնքան ինքնահատուկ հասարակական և մտավոր մթնոլորտը: Ահա հենց այդ նոր մթնոլորտում էլ կազմավորվել է Գորբուլյուբովի նման երիտասարդ գործիչների նոր մտայնություն:

նր: Գորբուլյուբովի համար արվեստը, գիտությունը, գրականությունը դառնում են կյանքի հետ կապված իրական կյանքի պահանջներին արձագանքող հումանիստական բարձր գաղափարներով հագեցված գորավոր գործոններ: Այդ գործոնները կարող էին 60—70-ական թվականների առաջավոր գործիչների համոզումով օժանդակել և պետք է օժանդակեին հին անիրավ աշխարհի դեմ կռվի ելնող ազատատենչ ժողովրդի կուլտուրական վերելքին և հայրենի ժողովրդի մարտական շարքերի հեղափոխական համախմբմանն ու կոփմանը: Այդպես մոտենալով իրենց աշխատանքներին և հասարակական գործունեությանը, հեղափոխական դեմոկրատները լիովին հաշվի էին առնում հարագատ ժողովրդի ազատագրական պատգամների սերտ կապակցությունը՝ ողջ երկրագնդի կամ ավելի ճիշտ, արևմտյան դեմոկրատիայի առաջավոր և հեղափոխական պատգամների հետ: Հայրենասերներ լինելով հանդերձ, ուս հեղափոխական դեմոկրատիայի գաղափարախոսները լիովին գիտակցում էին, որ ուս ժողովրդի ազատագրման համար մղվող գաղափարական և հեղափոխական ձեռնարկները ոչ միայն չեն կարող կտրված լինել արևմտյան հեղափոխական աշխատավոր զանգվածների ազգային-ազատագրական շարժումներից, այլև պետք է ամենասերտ կերպով կապվեն այդ շարժումների հետ... Հասարակական-մտավոր այդ մթնոլորտը 50—60-ական թվականներին ակնհայտ կերպով վկայում էր այն մասին, որ Ռուսիայում և մանավանդ արևմտյան երկրներում սկսվել է հասարակական-հեղափոխական ուժերի նոր գրոհ՝ ընդդեմ հին կարգերի:

2

Լենինը, ծանրանալով այդ թվականների շարժումների վրա, ժամանակին շատ որոշակի նշել է հատկապես «հեղափոխական սիտուացիայի» հիմնական հատկանիշները: Նա կանգ է առել մի շարք բնորոշ երևույթների վրա, որոնք նրա համոզմամբ կարող էին ստեղծել և պետք է ստեղծեին շատ ուրույն հեղափոխական մտայնություն: Լենինը նշել է դեմոկրատիայի աշխուժացումը Եվրոպայում, լեհական և ֆիննական շարժումները, ուս մամուլի և աշխատանքների կողմից առաջադրված ռեֆորմների պահանջները, գերցենյան «Կոլտկոլի» տարածումը, Չերնիշևսկու հզոր պրոպագանդը, ցարական զորամասերի դեմ բռնկված գյուղացիական ապստամբությունները, ուսանողական անկարգությունները... Նշված հանգամանքներն արձանագրելուց հետո, Լենինը հրահանգում է անել նաև անհրաժեշտ եղրակացություններ: Այդպիսի պայմաններում, նկատում է Լենինը, նույնիսկ անչափ զգուշավոր-քաղաքագետները պետք է հնարավոր համարեին հեղափոխական գալիքի և գյուղացիական ապստամբության անխուսափելիությունը:

Ինչպես տեսնում ենք, Լենինը կանգ է առնում հեղափոխական սիտուացիայի հատկանշող մի քանի կարևոր մոմենտների կամ երևույթների վրա: Նա

նշում է և՛ բուն Ռուսիայի սահմաններում նշմարվող ցայտուն դեպքերը, գյուղացիական ապստամբությունները, հակակառավարական ըմբոստացումները, հասարակական բռնկումները, ուսանողական ցույցերը, և՛ լեհական ու ֆիննական ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, մանավանդ, «գեմոկրատական շարժման աշխուժացումը Եվրոպայում»: 1894 թ. Լենինը «Ի՞նչ են ժողովրդի բարեկամները և ինչպե՞ս են նրանք մարանչում սոցիալ-գեմոկրատիայի դեմ» աշխատության մեջ ընդգծել է առանձնապես ֆրանսիական ուսուցիչական սոցիալիզմի գաղափարախոսների ազդեցության փաստը... «Ֆրանսիան,— գրում էր Լենինը,— սոցիալիզմի գաղափարներն էր սփռում ամբողջ Եվրոպայում...»: Նա նշում էր, որ ֆրանսիական սոցիալիստների գաղափարները մեծ ազդեցություն են գործում ուսուցիչական մտքի ականավոր ներկայացուցիչների վրա: Այդ գաղափարները սնունդ էին տալիս Գերցենի, Չերնիշևսկու թեորիաներին և ուսմունքներին¹: Նույն աշխատության մեջ, ծանրանալով 60—70-ական թվականների հեղափոխական-գեմոկրատիայի առաջին սոցիալիստների հայեցողության կարևորագույն հատկանիշների վրա, Լենինը բացահայտում է նաև հեղափոխական գեմոկրատների այն հայացքները, որոնք հատուկ էին առանձնապես 60—70-ական թվականների ուսուցիչական գործիչներին: Լենինի համոզմամբ այդ գործիչների բաղաբաղական ծրագիրը նպատակ է ունեցել «...ռաբի հաճել գյուղացիությունը սոցիալիստական հեղափոխություն կատարելու համար՝ ընդդեմ ժամանակակից հասարակության հիմքերի»... Հեղափոխական այդ ծրագիրը պաշտպանող գործիչները գտնում էին, որ ուսուցիչական կյանքի առանձնահատուկ հատկանիշներն են «համայնական կարգերը» և որ Ռուսիայում սոցիալիստական հեղափոխությունը միանգամայն հնարավոր է: ...«Ահա թե ինչն է,— գրում էր Լենինը,— ոգևորել նրանց, տասնյակ ու հարյուրավոր մարդկանց ոտքի հանել հերոսական պայքարի՝ կառավարության դեմ»: Այդպես բնութագրելով 60—70-ական թվականների հեղափոխական մեծ գեմոկրատների հայացքները, Լենինը բնութագրում էր, իհարկե, նաև Գորբուլյուբովի հասարակական հայեցողությունը:

Եթե իր ստեղծագործական աշխատանքի նախնական էտապում Գորբուլյուբովը մնում էր սոսկ ուսանողի դերում, ապա 1855-ին, մոտենալով հեղափոխական գեմոկրատական հոսանքի ղեկավարներին, նա դառնում է հեղափոխական նոր հոսանքի կոփված գաղափարախոս: Պետերբուրգում նա ուսանում էր «Մանկավարժական ինստիտուտում» և այդ ժամանակ, բոտ երևույթին, որոշ կապեր էր հաստատել հեղափոխական առանձին ուսանողների հետ: Հայտնի է, որ այդ ինստիտուտի ուսանողները երբեմն ձեռք էին բերում նույնիսկ լոնդոնյան անլեգալ հրատարակությունները: Գորբուլյուբովի հետ միա-

սին «Մանկավարժական ինստիտուտում» սովորում էր Քերովբե Պատկանյանը: Պետք է ենթադրել, որ նույն այդ Պատկանյանից է ստացել Ռաֆայել Պատկանյանը Գերցենի անլեգալ հրատարակություններից մեկը:

Գորբուլյուբովը ծանոթացել է Չերնիշևսկու հետ 1856-ի ապրիլին: Այդ փաստը ժամանակին արձանագրել է Չերնիշևսկին: Ինքնին արդեն պարզ է, որ Չերնիշևսկու մոտ ուղևորվողը չէր կարող պատահական անցորդի նման մոտենալ հայտնի հեղափոխական-գեմոկրատին: Կասկածից դուրս է, որ հեղափոխական հայեցողության որոշ սկզբունքները Գորբուլյուբովը չուրացրել էր մինչ այդ ծանոթությունը, միանգամայն ինքնուրույն կերպով՝ ընթերցանության միջոցով: Ծանոթանալով Չերնիշևսկու հետ, Գորբուլյուբովը կարճ ժամանակվա ընթացքում ամրացնում է իր կապերը «Սովրեմեննիկ»-ի ղեկավարների հետ և ապա դառնում հեղափոխական-գեմոկրատների կենտրոնական շտաբի դերը կատարող մարտական ամսագրի ամենակատիվ աշխատակիցը: Հայտնի է, որ 1857-ին Գորբուլյուբովը մեծ սիրով թարգմանում է, ի միջի այլոց, Հայնրիխ Հայնեի բանաստեղծությունները: Նույն այդ 1857-ին նա «Սովրեմեննիկ»-ի էջերում հրատարակում է իր ինքնուրույն երգերը: Կարելի է թերևս ասել, որ 1856-ին Գորբուլյուբովի կապերը հատկապես հեղափոխական անլեգալ խմբերի հետ, թույլ են եղել: Իր նամակներից մեկում նա, հիշատակելով «սուրբ գործի» համար ձեռնարկվող աշխատանքի նշանակությունը, գրում է, որ այդ «սուրբ գործ»-ին ինքը տակավին չի աշակցել: Մյուս կողմից՝ կան ավելի կարևոր տվյալներ, որոնք ասես բացահայտում են Գորբուլյուբովի որոշ հարաբերություններն ու կապերը՝ լոնդոնյան «կենտրոնի» ղեկավարների հետ: Հայտնի է, որ «Չայնեի Ռուսաստանից» լոնդոնյան անլեգալ հրատարակության մեջ տպագրվել է «Ռուս երգիչ» բանաստեղծությունը, որի իսկական հեղինակը ժամանակին համարվում էր Գորբուլյուբովը:

Եթե հաշվի առնենք Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո հրատարակված պատմական փաստաթղթերը, սովետական բանասերների գիտական հետազոտությունները և մանավանդ Գերցենի ու Օգարևի, այսպես կոչված, «Պրագայի արխիվում» ամփոփված վավերագրերը, ապա որոշ վերապահումներով կարող ենք ասել, որ Գորբուլյուբովը որոշակի կապեր է ունեցել հեղափոխական խմբակների հետ տակավին «Մանկավարժական ինստիտուտում» ուսանելու օրերին:

«Սովրեմեննիկ»-ի ընթերցողների համար Գորբուլյուբովի ակնարկները չէին կարող աննշմարելի մնալ: Նեկրասովը 1857-ի դեկտեմբերի 25-ին Տուրգենևին ուղարկած իր նամակում ոչ միայն խորհուրդ է տալիս կարգալ Գորբուլյուբովի գրությունները, այլև բարձր կարծիք է հայտնում Գորբուլյուբովի մասին: «Դու,— գրում է Նեկրասովը,— կկարդաս խելոք և նույնիսկ փայլուն էջեր»: Գորբուլյուբովի վրա նկատելի ազդեցություն են թողնում Չերնիշևսկու գրական-պատմական ակնարկները: Գորբուլյուբովը այդ ակնարկի (1858-ին)

¹ Վ. Բ. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., 1950, հատ. 1, էջ 330—332:

ազդեցության ներքո մայրաքաղաքի արձանախաներից մեկում տպագրում է Պուշկինի մասին իր ակնարկը: Նշելով պուշկինյան պոեզիայի ռեալիստական էությունը, Գորբուլյուբովը որոշակիորեն ծառայում է պուշկինյան ստեղծագործության լիբերալ մեկնարանողների դեմ: Միևնույն 1858-ին (սեպտեմբերին) գերցենյան «Կոլտոլ»-ի էջերում արդեն առանց ստորագրության լույս է տեսել Գորբուլյուբովի հոդվածը «Պարտիզան Դավիդովի» մասին, որ Գորբուլյուբովի երկերի նոր խմբագրության ենթադրությամբ գրված է եղել տակավին 1856—1857 թվականներին²: 1857-ին տպագրված հոդվածների շարքում միանգամայն ուրույն տեղ է գրավում Գորբուլյուբովի այն հոդվածը, որ նվիրված է Սալտիկով-Շչեդրինի «Նահանգական ակնարկներ» գործի քննարկմանը: Այդ աշխատության մեջ Գորբուլյուբովը նշում է շչեդրինյան ստեղծագործության թե՛ ռեալիզմը և թե՛ մանավանդ դեմոկրատական ուղղությունը:

1857-ին տպագրված ռեցենզիաների մեջ բնորոշ էր քաղաքական պոեմ Պոլեմակի բանաստեղծությունների մասին գրված սուր ռեցենզիան: Օգտվելով առիթից, Գորբուլյուբովը, ծանրանալով խոշտանգված պոետի կյանքի տխուր էջերի վրա, հանդես է գալիս ցարական բռնապետական կարգերի քննադատի դերում: Սովետական բանասիրության ներկայացուցիչները նշել են, արդեն, որ Գորբուլյուբովը տակավին 1855-ին կանգ էր առել Պոլեմակի կյանքի վրա, և հենց ինքն էլ նշել է իր հիմնական աղբյուրը: Գերցենի «Եղեղություններ և խոհերի» նախնական մասի լոնդոնյան առաջին հրատարակությանը (1854) Գորբուլյուբովը ծանոթացել է տակավին 1855-ին և հենց այդ ժամանակ էլ զբաղվել է Պոլեմակի կյանքի և բանաստեղծությունների ուսումնասիրությամբ:

«Սովրեմեննիկի» մեջ նա ժամանակին (1858) տպագրել է նաև ռուս հայտնի ֆուլկլորագետ Ա.Ֆանասևի «Ռուս ժողովրդական հեքիաթների» մասին կազմված ընդարձակ ռեցենզիան: Այդտեղ նշանակալից են հետագեմ «պատմարանների» միակողմանի մոտեցման քննադատությանը նվիրված դիտողությունները: Գորբուլյուբովը շեշտում էր, որ ժողովրդական հեքիաթների հրատարակությունը պետք է հնարավորություն տա մոտենալ ժողովրդի ճանաչողությանը: Հեքիաթները գրի առնողներին Գորբուլյուբովը առաջարկում էր նկարագրել անգիր պատմողների կոնկրետ կյանքը բնութագրող միջավայրը: «Սովրեմեննիկի» մեջ Գորբուլյուբովի հոդվածներն առանձնապես մեծ տեղ են գրավում 1859-ին և 1860-ին: Արդեն «Գրական մանրուքներ» աշխատության մեջ նա մերկացնելով ու դատափետելով իշխող կարգերը, մի կողմից՝ քննադատում էր լիբերալ գրողների առաձգական դատողությունները, մյուս կողմից՝ պարզաբանում դեմոկրատ գրողների սկզբունքները և մոտեցումը հրատապ խնդիրներին:

«Ռոբերտ Օուենի» մասին գրած իր աշխատության մեջ Գորբուլյուբովը համակրանքով է բնութագրում անգլիական այդ սոցիալիստ-ուտոպիստին: Սակայն, նա, միաժամանակ, նշում է, որ սոցիալիզմը կարելի է իրագործել միմիայն կապիտալիստական իշխող կարգերի հեղափոխական հեղաշրջման միջոցով: Իր աշխատության մեջ Գորբուլյուբովը, հակառակ անգլիական ուտոպիստի միամիտ ծրագրին, մերկացնում էր կապիտալիստների սոցիալական էությունը և քննադատում դասակարգային շահերի համերաշխության սկզբունքները պաշտպանողներին: Անցնում է մի քանի ամիս և Գորբուլյուբովը տպագրում է Գոնշարովի «Օբլոմով» վեպի մասին գրած իր հանձարեղ քննադատական հոդվածը: Գորբուլյուբովը այդտեղ քննադատում է ամենից առաջ անաղարտ արվեստի զանազանագույն էսթետ քննադատներին: Սակայն նա չի թերահանահատում գեղարվեստական քննադատության կարևորությունը: Ծանրանալով Գոնշարովի վեպի գեղարվեստական և գաղափարական կողմերի վրա, Գորբուլյուբովը իր ամբողջ աշխատությունը դարձնում է հին կարգերի և այդ կարգերի հետ հաշտվող գործիչների դեմ ուղղված հրապարակախոսական սուր ելույթ: Հայտնի է, որ ինքը՝ Գոնշարովը 1859-ին (մայիսին) այդ հոդվածը կարդալով, միանգամայն ձիշտ է համարում «օբլոմովշինայի» սուր և պատկերավոր գնահատականը: Իր հիմնական էությունը Գորբուլյուբովի հոդվածը և՛ իշխող իրականության մերկացումն էր, և՛ միաժամանակ, հեղափոխական գալիք պայքարի շատ յուրահատուկ հիմնավորումը:

Ներկայումս հաստատված է, որ «Սովրեմեննիկի»-ի խմբագրական հայտարարություններից մեկը (1859) կազմել է Գորբուլյուբովը: Բնորոշ է նաև այն, որ նա ծանրանալով առանձնապես ամսագրի գաղափարախոսության վրա, բնութագրում է նրա ուղղությունը: Նա միաժամանակ այդ «հայտարարության» մեջ բնոգծում է, որ ամսագրի շի մնա հասարակական շարժման շեղոք ակահատեսի դերում:

Օստրովսկու մասին Գորբուլյուբովը հրապարակել է երկու աշխատություն, որոնցից առաջինը («Մթին թագավորություն») գրեթե մի մեծ մենագրություն է: Այսօր էլ Օստրովսկու մասին հրապարակված բոլոր աշխատությունների մեջ Գորբուլյուբովի այդ գործը և մանավանդ 1860-ին տպագրված ավելի փոքրիկ ու շատ ավելի կրակոտ հոդվածը եղալի տեղ են գրավում տաղանդավոր դրամատուրգի ստեղծագործություններին նվիրված քննադատական ստվար գրականության մեջ: Գորբուլյուբովի հոդվածը նախահեղափոխական տարիներին, որքան հիշում ենք, կանանց հարցի քննարկման կապակցությամբ մեծագույն ուշադրությամբ ուսումնասիրվում էր Բաքվի աշակերտական ընդհատակյա հեղափոխական խմբակներում:

Գորբուլյուբովի կյանքի և գործունեության այն «Տարեգրության» մեջ, որ կազմել է բանասեր-պատմաբան Ռայսսերը, գետնից է ի միջի այլոց, Գոր-

² Н. А. Добролюбов, Собр. соч., том I, 1950, стр. 692.

բոլորովի նամակից բերված շատ նշանակալից մի քաղվածք: Այդտեղ Գորբուլովը առանձին զգացումով հիշատակում է իր և իր ընկերակիցների «սուրբ և անաղարտ» երազանքները և ապա՝ վաղեմի այդ երազանքների «բարձր իմաստը»: Մինևույն այդ նամակում Գորբուլովը կոչ է անում կատարել «խսկական գործ»: Ժամանակին, ականավոր նեկրատովագետ-բանասեր Չուկովսկին նշել է, որ ոուս հեղափոխական-դեմոկրատների գրությունների մեջ որոշ խոսքեր-տերմիններ կրել են շատ կոնկրետ իմաստ, որպես հեղափոխական աշխատանքի կամ ընդհատակյա գործունեության մասին ակնարկող տերմիններ: Եթե մենք հաշվի առնենք Չուկովսկու կողմից առաջադրված միանգամայն համոզիչ կարծիքը, ապա պետք է ընդունենք, որ իր նամակում Գորբուլովը հիրավի միայն հեղափոխական «գործը» կարող էր նկատի ունենալ: Ես բերում եմ բնորոշ այդ տողերը.

«Пойдем же дружно и смело, ты можешь и меня поддерживать и удерживать, напоминая мне о моих планах и стремлениях... Попробуй же, Ваня, сознательно окунуться в тот кипящий водоворот, который мы называем жизнью, мысли и убеждения, сочувствием в общественным интересам и т. д.

Можно бы назвать и короче, но ты и без того понимаешь, о чем я говорю...».

Նույն 1859-ին Գորբուլովը միանման «կոնսպիրատիվ» ոճով հետևյալ խոսքերն է գրում.

Нам нужно говорить о предметах очень важных. Теперь нас зовет деятельность...».

Նշենք նաև այն, որ Չերնիշևսկին Լոնդոն էր ուղևորվել 1859-ին Գերցենին տեսնելու և նրա հետ բանակցություններ վարելու նպատակով: Այդ հարցի ուսումնասիրությամբ ժամանակին զբաղվել են սովետական մի շարք բանասերներ, որոնց կողմից առաջադրվել են զանազան և նույնիսկ ներհակ կարծիքներ: Ես չէի կամենա շեղվել իմ զեկույցի հիմնական թեմայից և բնութագրել այդ վեճերը կամ ներհակ մեկնաբանությունները: Իմ կարծիքով ավելի իրավացի են այն բանասերները, որոնք հաշվի են առնում ամենից առաջ իրական փաստերը և ապա՝ Գերցենի հիշատակին նվիրված լենինյան հայտնի հոդվածի հիմնական գրույթները: Ավելի քան ակներև է, որ Չերնիշևսկին ոչ մի պարագայում չէր կարող Լոնդոն ուղևորվել Գերցենի հետ կովելու կամ փրհարաբերությունները Գերցենի հետ վերջնականապես խզելու նպատակով: Չերնիշևսկին Լոնդոն էր ուղևորվել վեճի զրգապատճառները պարզաբանելու, համաձայնության գալու, Գերցենի ու «գերցենյան» խմբակի հետ հարաբերություններն ամրապնդելու նպատակով: Դա ակներև է: Գորբուլովին իհարկև հայտնի պիտի լինեին Լոնդոնյան ուղևորության թե բոլոր հանգամանքները,

թե վերջնական հետևանքները: Նա երբեք չէր կարող նկատի չառնել Չերնիշևսկու և Նեկրասովի դիրքորոշումը: Բացի բազմաթիվ քննադատական հոդվածներից և գրախոսություններից, Գորբուլովը տպագրել է 1859—1960 թթ. ընթացքում ոուս ժուռնալիստիկայի պատմությանը նվիրված ուշագրավ ակնարկներ: Սկզբում նա, ինչպես երևում է ծրագրել էր մի շարք ակնարկներ գրել առանձնապես մանկական ժուռնալների մասին: Մանկավարժության պրոբլեմները միշտ էլ հետաքրքրում էին Գորբուլովին: Քննելով և լուսաբանելով ոուսերեն մանկական ժուռնալները, նա կարող էր պարզաբանել հեղափոխական դեմոկրատների մանկավարժական հայացքները ու միաժամանակ բացահայտել հեղափոխական գրողների և լիբերալ մանկավարժների խոցելի և ամենաթույլ կողմերը: Հետագայում նա ստիպված է լինում ընդհատել ծրագրված այդ աշխատանքը: Նրա այն աշխատությունը, որ նվիրված էր եկատերիչյան էպոխայի ոուս ժուռնալիստիկայի պատմությանը, գրեթե մենագրական գրական-պատմական մի ուսումնասիրություն է: Այդտեղ Գորբուլովը կանգ է առնում հին երգիծաբանական ժուռնալների պրոֆիլի, բովանդակության, ուղղության վրա: Հետազոտության վերնագիրն էլ շատ պարզ էր («Ռուսական սատիրան Եկատերիչյայի դարաշրջանում»): Այդ և՛ գրականագիտական աշխատություն կամ գրական-պատմական հետազոտություն էր, և՛ ավատական-ճորտատիրական կարգերի մերկացմանը նվիրված դիպուկ պուրլիցիստական գործ: Չերնիշևսկու հայտնի գրական-պատմական աշխատության միայն մի քանի հատվածներն էին նվիրված հնօրյա ժուռնալների նկարագրական բնութագրմանը: Ինձ թվում է, որ Գորբուլովն էլ նպատակ էր դրել հեղափոխական-դեմոկրատների գաղափարախոսական դիրքերից մոտենալ որոշ ժուռնալների պատմական լուսաբանությանը և այն դարձնել հեղափոխական-մարտական գաղափարներ պրոպագանդելու մի գեներ:

Անհրաժեշտ է երկու խոսք ասել նաև տուրգենևյան «Նախամտերն» վեպի քննադատությանը նվիրված հայտնի հոդվածի մասին: Այդ հոդվածի առթիվ, նույնիսկ հոդվածի տպագրությունից առաջ ստեղծվել էր մեծ աղմուկ և իրարանցում: Գրաքննիչ Բեկետովը իր գրության մեջ նշել էր, ի միջի այլոց (տե՛ս այդ գրությունից շատ բնորոշ մի քաղվածք Ռասսերի «Տարեգրության» մեջ), որ դա այնպիսի մի հոդված է, որի նմանը ոչ մի գրող չի գրել: Բեկետովը գտնում էր, որ Գորբուլովին այդ նոր հոդվածը անհնարին է առանց կրճատումների տպագրել: Այդ օրերին Տուրգենևն իր կողմից խնդրել էր Նեկրասովին շտպագրել նշված քննադատական հոդվածը: Բռնկվում է բավական սուր վեճ: Նեկրասովը ճիգ է անում հանդես գալ խաղաղարար միջնորդի դերում: Չնայած Նեկրասովի կողմից ձեռնարկված քայլերին Գորբուլովը հրաժարվում է մեղմել իր հոդվածը:

Քննադատությունը, գրականագիտությունը հեղափոխական դեմոկրատ-

ների համար ոչ միայն հասարակական հրատապ աշխատանք էր, այլ նաև հեղափոխական գործունեության հետ կապակցված ակտիվ գաղափարախոսական աշխատանք: Տուրգենևի վեպի մասին գրված հոդվածը լույս է տեսել, ինչպես հայտնի է, որոշ աղավաղումներով և ուրիշ վերնագրով («Պարոն Տուրգենևի նոր վիպակը»):

1860-ին գրությունը երկու մայրաքաղաքներում էլ բավական սրված էր: Գորբուլյուբովն էլ այնքան հիվանդ էր, որ պետք է բուժվեր: «Սովրեմեննիկ»-ի ղեկավարների որոշմամբ նա 1860-ի մայիսին ուղևորվում է արտասահման և օգտվելով առիթից, պտույտ է կատարում արևմտյան մի շարք վայրերում և քաղաքներում: Արտասահմանյան վայրերն այդ ժամանակ հենակետեր էին այն գործիչների համար, որոնք ցանկանում էին զեթ առժամանակ ազատագրվել այն մղձավանջից, որ խեղդում էր ազատախոհ մտածողներին՝ ցարական ժանդարմների տիրակալության վայրերում: Պասսեկը իր մեմուարների մեջ նկարագրում է նման գործիչների ու վտարանդիների հանդիպումները հեղափոխական իր փնթնահատուկ «սալոնում»: Երեք տարի առաջ հրատարակված «Գիտական ժառանգություն» ժողովածուների մի հատորում ղետեղված է Մենդելևեի շատ ուշագրավ օրագիրը, ուր նկարագրվում են նշված ուսուցողների իտալական պտույտները:

Գորբուլյուբովի համար արտասահմանյան ճանապարհորդությունը իհարկե շատ ավելի թանկ պիտի լիներ: Իտալական քաղաքները ցնցող տպավորություն են թողնում նրա վրա: Իր ծանոթ Ջախարինին ուղղված մի նամակում նա 1860-ին (հունիսին) խնդրում է գտնել Վերդիի «Տրուբադուր» օպերայի ուսանկան պարտիտուրան և ապա ուղարկել իրեն: Նեկրասովը այդ օրերին Գորբուլյուբովի համար դառնում է նվիրական ու շատ սիրելի «Գարիբալդի պոեզիայի բնավայրում»: Սկզբում Գորբուլյուբովը կայան է հաստատում Ջենովայում և Նիցցայում: Բայց ի՞նչպես կարող էր նա անդորր կյանք ապրել խաղաղ Նիցցայում, երբ ամենուրեք հնչում էին կանչող, երգող, ըմբոստացող հեղափոխական ժողովրդի երգերը: Նիցցայից նա 1861-ի հունվարին ուղևորվում է Ֆլորենցիա և այդտեղից Վենետիկ, Միլան, Տուրին, Հոմ և ապա Նեապոլ: Նետվում է նաև զեպի Միցիլիա, ուր տեսնում է Պալերմո և Մեսսինա քաղաքների բնակիչներին: Տուրինում Գորբուլյուբովը մտնում է ղեպուտատների պալատ և այդտեղ լսում նրանց ելույթները: Նա «Սովրեմեննիկ»-ին ուղարկած իր ընդարձակ թղթակցության մեջ («Տուրինից») նկարագրում է ղեպուտատների նիստը և արժարժում իր մտորումները: Դա գրեթե մի ամբողջ ուսումնասիրություն է՝ լեցուն փաստերի լուսաբանությամբ և դիպուկ դիտողություններով: Մարտին նա գրում է համակված արդեն ջերմ զգացումով, շատ կրակոտ և պատկերավոր իր հայտնի «Հայր Գավազցին և նրա քարոզները» աշխատությունը: Այդ գործի մեջ ամբողջ կառուցվածքը, ընդհանուր

ոճը և, մանավանդ, Գավազցիի ելույթներից բերված կտորները ցույց են տալիս, որ ամբողջ գրությունը կերտվել է հնչուն մի երգի նման ռեալական դեպքերի ժողովրդական ցույցերի անմիջական տպավորության ներքո: Բավական է միայն թերթել գերցենյան մեմուարների այն էջերը, որոնք նվիրված են իտալական ցույցերի և ապա Կոլիզիի ժողովրդական ցույցի ժամանակ հանդես եկող Գավազցիի արտահայտիչ կերպարին, որպեսզի պարզ լինի, որ Գորբուլյուբովին էլ նման մի ցնցող տեսարանն է «այրել»...

Յարական գրաքննիչները արգելում են այդ աշխատության տպագրությունը: Միմիայն Գորբուլյուբովի մահից հետո 1861-ին է լույս տեսել «Հայր Գավազցին» և այն էլ նրա երկերի շորրորդ այն հատորում, որ չէր կարող մասսայական ընթերցողի ձեռքն ընկնել:

Անհրաժեշտ է նշել, որ գրաքննիչներն առանձին ուշագրությամբ էին քննում արտասահմանյան դեպքերի նկարագրությանը նվիրված հոդվածները կամ թղթակցությունները: Նրանց լավ էր հայտնի, որ հրատարակելով քաղաքական հեղաշրջումները կամ ժողովրդական ցույցերը նկարագրող թղթակցությունները, ուսանկան որոշ ժառանգների խմբագիրները դիտավորությամբ ընտրում էին հարմարագույն թեմաներ և հետապնդում էին ազիտացիոն նպատակներ: Իրենց «քաղաքական տեսությունների» մեջ, գրում է գրաքննիչներից մեկը, ժառանգները հաղորդում են լուրեր իտալական ապստամբությունների մասին... Բավական է միայն թերթել «Սովրեմեննիկ»-ի այն հատորները, ուր զետեղված էին Գարիբալդիի ու գարիբալդիականների արշավին նվիրված ջերմ էջերը, որպեսզի պարզ լինի գրաքննիչների դիտողության իմաստը:

Գորբուլյուբովի իտալական աշխատությունները և հոդվածներ էին, և ուսումնասիրություններ, և հրահանգների բնույթ կրող կենդանի պուլիտիկատական ակնարկներ: Շատ ծանր հիվանդ էր Գորբուլյուբովը: Սակայն նա չէր կարող անդորր սրտով հաստատվել միմիայն մի քաղաքում, կտրվել շրջապատի կենդանի աղմուկից և ղեպի լուսատու նոր հանգրվանները նետվող այնքան հարազատ հեղափոխական գանգվածներից...

Երբ նա ստիպված է լինում վերադառնալ և հասնում է Օդեսա, նրա գրությունը դառնում է շատ ծանր: Այդտեղ մեծ դժվարությամբ նա կարողանում է ավարտել ղեռն Իտալիայում գրած այն հոդվածը, որ նվիրված էր Կավուրի բնութագրմանը: Դա մի ուսումնասիրություն էր, ուր միաժամանակ տրված էր և՛ իտալական դեպքերի հմուտ վերլուծությունը, և՛ Կավուրի իրական դեմքի ու վարքագծի բնական լուսաբանությունը, և՛ լիբերալիզմի ու լիբերալ գործիչների դատափետումը: Ռուսական մի շարք պարբերագիրներ այդ աշխատության առթիվ տպագրում են մոլեգին «քննադատականներ»:

Մղձավանջը մայրաքաղաքում դառնում էր ավելի ու ավելի ծանր: Գորբուլյուբովը անչափ մտահոգված էր: Հասնում էին նոր-նոր լուրեր ձերբակալու-

թյունների ու հետապնդումների մասին: Չերքակալվել էր և մոտ ընկեր Միխայլովը: Շեղարևուն է հայտնում տխուր այդ գույժը Գորբուլյուբովին: Առաջավոր գրողները հիգ են անում փրկել Միխայլովին և «պետիցիայի» նման յուրահատուկ մի գրություն են պատրաստում: Սակայն բոլոր ջանքերն ապարդյուն են անցնում:

Իտալիայից և ադմիրալ ու կանչող հեղափոխական ցույցերից հետո, տեսնել նորից ժանդարմներին ու լսել նորից անվերջ խոշտանդումների մասին, այնքան էլ հեշտ չէր: Հանճարեղ նկարիչ Իվանովին էլ մահացու հարված էին հասցրել ցարական ժանդարմներին սպասավորող ստոր գործիչները: Կոնտրաստները Գորբուլյուբովի համար պիտի շատ ավելի ծանր լինեին:

1861-ի նոյեմբերին նա մեռնում է: Ցնցող տպավորություն է թողնում 25-ամյա աննկուն, եռանդով համակված, տաղանդավոր գործչի մահը ուսուցիչական թուր ատաշտվոր ներկայացուցիչների վրա: Գորբուլյուբովի թաղման հանդեսը դառնում է ցարական բռնակալության դեմ ուղղված շատ ազդու և տպավորիչ հեղափոխական ցույց:

Անցել են տարիներ, բայց Գորբուլյուբովի երկերը չեն կորցրել փրենց թարմությունը, իրենց առույգ տոնը: Նրա կենդանի տողերում այսօր էլ նշմարվում է գալիք լուսավոր օրերը երգող մեծ հրապարակագիր-քննադատի լուսավոր դիմաստվերը...

ՉԵՐՆԻՇԵՎՍԿԻՆ ԵՎ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Չերնիշևսկու աշխատությունների մեջ ուշագրավ են սոցիալական հակամարտ ուժերի, մտավոր ներհակ հոսանքների, «կուսակցությունների» բնութագրմանը նվիրված նկատողությունները: Նրա մի շարք պատմական հետազոտությունների («Կավենյակ», «Հուլիսյան մոնարխիան» և այլն) և ապա՝ արևմտյան-կապիտալիստական երկրների մասին կազմված տեսությունների («Պոլիտիկա») մեջ լսվում է դասակարգային բախումներին հետևող հեղափոխական մտածողի ձայնը: Այդ աշխատությունների վրա կանգ են առել սովետական պատմաբանները և գրականագետները՝ ուշագրավ հետազոտությունների և ուսումնասիրությունների մեջ: Համեմատաբար ավելի քիչ է խոսվել ժամանակի մամուլի վերաբերյալ Չերնիշևսկու արած դիտողությունների մասին, որոնք այսօր էլ կարող են գրավել մամուլի պատմության և բիբլիոգրաֆիայի խնդիրներն ուսումնասիրող բանասերների ուշադրությունը:

Ցարական գրաքննիչների ջանքերով ստեղծված դաժան պայմանները ստիպում էին Չերնիշևսկուն բողոքակցական ձևով առաջադրել իր հեղափոխական գաղափարները: Պարբերական մամուլի առթիվ նրա արած դիտողությունները նույնպես արված են «երկպալան», շատ յուրահատուկ ոճով: Սակայն և այնպես,

այդտեղ էլ որոշակիորեն նշմարվում է մեծ հեղափոխական-գիտնականի դեմքը: Զգուշավոր կերպով արված դիտողություններում Չերնիշևսկին միշտ ընդգծում էր ազատատենչ ժողովուրդների գալիք հեղափոխական ապստամբության անհրաժեշտությունը և ժողովուրդների եղբայրական միության վսեմ պատգամների մեծագույն նշանակությունը...

1

Տակավին պատանեկության տարիներին Չերնիշևսկին հետևում էր ուսական պարբերագիրներին և ուշադրությամբ ուսումնասիրում կուլտուրայի մասին հրապարակված նյութերը¹: Հետագայում, երբ Չերնիշևսկին կոփվում է որպես հեղափոխական-դեմոկրատների տեսության-ղեկավար, մշակում է առանձին մտտեցում և արդեն նոր դիտակետից մտտենալով պարբերագիրներին, ծանրանում է առաջին հերթին որոշ պարբերագիրների հիմնական հատկանիշները և ուղղությունը բնորոշող նյութերի վրա:

Այդպիսի մի հոդված էր, ի միջի այլոց, Տոլստոյի «Յասնայա Պոլյանա» ժուռնալի մասին գրված հատուկ մատենագրական տեսությունը²: Ինքը՝ Լ. Տոլստոյն էր խնդրել Չերնիշևսկուն (1862-ի փետրվարի 6-ին) հայտնել «անկեղծ և լուրջ» կարծիք՝ նոր ժուռնալի հրապարակված համարների մասին: Չերնիշևսկին գիտեր, որ «Յասնայա Պոլյանա» ժուռնալը գյուղական-ժողովրդական նոր աիպի դպրոցի հետ սերտորեն կապված մանկավարժական պարբերագիր է: Իր տեսության մեջ Չերնիշևսկին ակներև հարգանքով է խոսում այդ դպրոցի մասին, սակայն, անցնելով «Յասնայա Պոլյանա» ժուռնալին, նա առանց որևէ դիվանագիտության, կտրուկ կերպով քննադատում է այդ ժուռնալի ուղղությունը: Չերնիշևսկին նշում է, որ նոր մանկավարժական ժուռնալի հիմնադիրները իրականում շունեն ոչ պարզորոշ համոզումներ և ոչ էլ գիտական անհրաժեշտ կրթություն: Հենվելով ժուռնալի նյութերի վրա, նա քննադատում է նաև դպրոցի ղեկավարներին:

Ժուռնալի առաջնորդողը գրել էր ինքը՝ Տոլստոյը: Ծանրանալով այդ առաջնորդի վրա, Չերնիշևսկին շեշտում է, որ ժողովուրդը միաձուլյ մի գանդված չէ և չի կարող երբեք միակողմանի կերպով դատափետման են-

¹ Սարատովի սեմինարիայում ուսանելու օրերին Չերնիշևսկին գրել է հատուկ շարադրություն «տպագրության հետևանքների» մասին և նշել «մեծատունների» բացասական դերը կուլտուրայի ներկայացուցիչների նկատմամբ: Դա Չերնիշևսկու առաջին աշխատությունն էր մամուլի մասին: Այդ ժամանակ նա 15-ամյա պատանի էր: Նրա մի շարք աշակերտական շարադրությունները նվիրված էին կուլտուրայի խնդիրների լուսաբանությանը: Դրանցից բնորոշ քաղվածքներ հիշատակել է Չերնիշևսկայան նորերս հրատարակված հատուկ ուսումնասիրության մեջ, Տե՛ս Ի. Մ. Чернышевская.

² «Н. Г. Чернышевский в Саратове», Саратов, 1952, стр. 81—84.

թարկվել: Կան,— ասում է Չերնիշևսկին,— ժողովրդի շարքերում կ' հետա-
մնաց, կ' առաջավոր մարդիկ: Անհրաժեշտ է միշտ հաշվի առնել, որ գյուղա-
ցիների նյութական կացությունը շափազանց ծանր է և այդ կացությունն էլ
ստեղծել է կրթության և դպրոցի նկատմամբ բացասական կամ անտարբեր
գիրք բռնող գյուղացիների ուրույն շարքեր:

«Յասնայա Պոլյանա» ժուռնալի մեջ կային «քննական» արտառոց դի-
տողություններ ուսակաան առաջավոր ինտելիգենցիայի ներկայացուցիչների
մասին: Հողվածագիրներից մեկը գրել էր, որ եկեղեցու հետ կապված տիրա-
ցունները ավելի լավ են դաստիարակում, քան համալսարանական կրթություն
ստացած ուսուցիչները: Չերնիշևսկին կանգ է առնում թե յուրահատուկ այդ
գիտողության և թե նման այլ տիպի նկատողությունների վրա:

Չերնիշևսկին կանգ է առնում «Յասնայա Պոլյանա»-ում տպված մի գրույց-
ցի վրա և նշում, որ այդ «գրույց-պատմվածքի» լեզուն պարզ է և դյուրամատ-
չելի: Ենչու է նաև գեղարվեստական արժանիքները: Անցնելով «գրույցի»
իրական իմաստի գնահատությանը, նա քննադատում է և պատմվածքի հե-
ղինակին, և ժուռնալի ղեկավարներին: «Հեղինակը,— նկատում է Չերնիշև-
սկին,— հաստատուն և պարզորոշ հայացքներ չունի. այդ հեղինակը չգիտե
նույնիսկ, թե ինչն է ավելի օգտակար և ինչ է պետք ժողովրդին»³: Այս տողե-
րից հետո Չերնիշևսկին գրում է, որ ժուռնալի խմբագրությունը հստակ մի
հայեցակետ չունի և հենց այդ պատճառով չի կարողացել հարմարագույն
նյութեր ընտրել ժողովրդական աուդիտորիայի համար: Գիմեղով անմիջապես
արդեն խմբագրին, Չերնիշևսկին⁴ իր տեսության մեջ գրում է ...«Խնդրում ենք
չբարկանալ... մենք պարտավոր ենք նշել ժուռնալի խմբագրության տեսական
հայեցության թերությունները...»⁵:

Նման մի տեսություն էր նաև «Ազգային անտակառուցություն» վերնագիրը
կրող այն հոդվածը, որ նվիրված էր Գալիցիայի մայրաքաղաք Լվովում հրա-
տարակվող «Մլոդո» ժուռնալի երկու համարների քննարկմանը: Այդ ժուռ-
նալը հիմնել էին Գալիցիայի ազգայնականները, ջանալով դատափետել ուկ-
րաինական առաջավոր գործիչների ուղեգրեր: Չերնիշևսկին ամենից առաջ
կանգ է առնում ժուռնալի ռեակցիոն ուղղությունը բնութագրող հիմնական
նյութերի վրա: Նա քննադատում է «րուսիանների դատի» պաշտպանների գերում
հանդես եկող վայրագ ազգայնականներին և մերկացնում մետտերնիխյան
ուղեգրի կառույցի ռեակցիոն գործիչներին:

Կան մարդիկ,— գրում է Չերնիշևսկին,— որոնք դիտավորությամբ հրա-
հրում են ազգային բախումները՝ իրենց տիրակալությունը ամրացնելու նպա-

տակով: Իրականում ավելի քան լավ հայտնի է, որ ազգային բախումներին
ուժ են տալիս բացառապես սոցիալական իշխող խավերը:

Չերնիշևսկին դատափետում է ժուռնալի ղեկավարների սեպարատիզմը:
Ենչու է, որ րուսիանները միևնույն ուկրաինացիներն են, նա մերկացնում է
ժուռնալի ղեկավարներին: Կառչած Վիեննայի տիրակալների ռեակցիոն ուղե-
գրին,— գրում է Չերնիշևսկին,— այդ ղեկավարները ցանկանում են րուսի-
աններին բաժանել հարազատ ուկրաինական ժողովրդից: Մենք,— գրում է նա,—
գտնում ենք, որ ձեր հայացքները սխալ են և դուք անհանդուրժելի ուղեգրի
եք պաշտպանում: Լեհերի և ուկրաինացիների սուր հարաբերությունները ըս-
տեղծվել են իշխող դասակարգերի վարքագծի շնորհիվ: Ժողովուրդը ամենու-
րեք ատելությամբ է վերաբերվում բոլոր կալվածատերերին: Լեհական և ուկ-
րաինական կալվածատերերը միանման շահագործողներ են և շեն զանազան-
վում միմյանցից: Միանման են նաև լեհ և ուկրաինացի գյուղացիների շահերը:
Այս տողերից հետո Չերնիշևսկին հիշեցնում է, որ ժամանակին Ենչենկան
նույնն է ասել իրեն: Տարաս Ենչենկոյի անունը,— գրում է Չերնիշևսկին,—
շատ թանկ է ամեն մի ուկրաինացու համար: Ենչենկոն ինքը շատ կտրուկ
կերպով դատափետել է ոչ միայն լեհական, այլ նաև ուկրաինական կալվա-
ծատերերին-պաներին⁶: Քիչ հետո նորից ընդգծելով, որ Ենչենկոն անառար-
կելի հեղինակություն է ուկրաինական համայն ժողովրդի համար, Չերնիշև-
սկին դատափետում է մետտերնիխյան ուղեգրի պաշտպանող ազգայնական-
ների հայացքները⁷:

Մի ուրիշ մատենագրական տեսություն մեջ Չերնիշևսկին կանգ է առնում
ոուսական ազգայնականների— սլավյանոֆիլների վրա: Մերկացնելով հատ-
կապես «Դեն» ժուռնալի ռեակցիոն ուղղությունը, նա սուր իրոնիայով դա-
տափետում է սլավյանոֆիլներին: Սենտիմենտալ խոսքեր նետող սլավյանո-
ֆիլները, նկատում է Չերնիշևսկին, իրականում ցանկանում են ոչ թե ազա-
տագրել իրենց սլավոն եղբայրներին, այլ ձգտում են կոել նոր կապանքներ
և շղթաներ՝ ջանալով բոլոր սլավոններին նետել նոր բռնակալների գիրկը:
«Եզովպոսյան» լեզվով էր գրված այդ ամենը, սակայն Չերնիշևսկու ընթեր-
ցողների համար պարզ էր բողարկված դիտողության իրական իմաստը: Այդ
ընթերցողներին լավ հայտնի էր, որ Չերնիշևսկին որոշակի ակնարկում է ցա-
րական բռնապետությունը: Ընթերցողները հասկանում էին, որ մերկացնե-
լով և դատափետելով «Դեն» ժուռնալի ուղղությունը, Չերնիշևսկին կոպի է
ելնում միապետական բռնակալության դեմ: Ոլորապատույտ նախադասույնու-
նների միջոցով մի երկու անգամ կրկնելով իր դիտողությունները, Չերնիշևսկին
բավական որոշակի ընդգծում էր իր հիմնական միտքը: Նրա մատենագրական

³ Н. Г. Чернышевский. Полное собрание сочинений, 1951, т. 10, стр. 503—517.

⁴ Նույն տեղում, էջ 514:

⁵ Նույն տեղում, էջ 515:

⁶ Н. Г. Чернышевский, 1859, т. 7, стр. 775—793.

⁷ Նույն տեղում, էջ 791:

տեսութիւնը հենց դրա համար էլ գառնում էր ոչ միայն կոնկրետ որևէ պարբերագրի ուղղութիւնն բնութագրում, այլ՝ նաև ցարական բռնապետութիւնը ծառայող ազգայնականների դեմ ուղղված շատ սուր մի հրապարակախոսական հոդված⁸:

Մատենագրական տեսութիւնն էր նաև ուկրաինական «Օսնովի» ժուռնալի մասին կազմված բերվագիծը: Այդ ժուռնալի ուրույն գիծը որոշ շափով պաշտպանում էին, ինչպես հայտնի է, 60-ական թվականների «Սովրեմեննիկ»-ի ղեկավարները:

Չերնիշևսկին այս հոդվածում ևս քննադատում է նացիոնալիզմի գաղափարախոսներին: Նա նորից ընդգծում է իր դրական դիրքը ուկրաինական և լեհական առաջավոր կուլտուրայի ջահակիրների նկատմամբ: Շատ բարձր գնահատական տալով ուկրաինական ժողովրդի մեծ զավակ Տարաս Շևչենկոյի պոեզիային, նա դատափետում է մեծապետական նացիոնալիզմի հետևողներին: Մատենագրական այս հակիրճ տեսութիւնն մեջ կան հատուկ տողեր՝ ուկրաինական դեմոկրատական գրականութիւնն տաղանդավոր ներկայացուցիչներից մեկի՝ Մարկո Վովչեկի մի պատմվածքի մասին: Չերնիշևսկին այդ տեսութիւնն մեջ կանգ է առնում սլավոններին միացնող ու համախմբող ազգակների վրա և որոշակիորեն հանդես է գալիս որպես սլավոն եղբայրական ժողովուրդների դեմոկրատական մեծ միութիւնն պրոպագանդիստ: Չերնիշևսկու այս նշանակալից ուրվագիծը ևս ուկրաինական նոր ժուռնալի բնութագրման նվիրված առօրյա մատենագրական ակնարկ չէր միայն: Դա շատ որոշակի և հրատապ իմաստ ունեցող մի ելույթ էր, որի հիմնական նպատակն էր՝ ֆեոդալական-ճորտատիրական կարգերի դեմ միասնական հեղափոխական ճակատ ստեղծել: Դատափետելով սլավյանոֆիլների՝ ռեակցիոն ուղեգիծը, ինչպես և ավստրիական բռնապետութիւնն ռեակցիոն ուղեգիծը բողոքող և Մետերնիխին սպասավորող ազգայնականներին, Չերնիշևսկին բոլոր ռեակցիոն պետութիւններին հակադրում է դեմոկրատական դրոշի ներքո մարտնչող ազատատենչ ժողովուրդների միութիւնն հեղափոխական ուղին:

Շատ ավելի զգուշավոր լեզվով էր գրված Չերնիշևսկու այն տեսութիւնը, որ նվիրված էր Դոստոևսկիների «Վրեմյա» ժուռնալի բովանդակութիւնն և ուղղութիւնն քննարկմանը: Այդ ժուռնալի խմբագրութիւնը իր հիմնական սկզբունքներով կապված էր սլավյանոֆիլների հետ: Չերնիշևսկին գրում է, որ յուրաքանչյուր ժուռնալի իրական դեմքի բնութագրման համար անհրաժեշտ է ամենից առաջ հաշիվ առնել ժուռնալի մեջ ամփոփված մատենագրական և քննադատական նյութերի ուղղութիւնը:

Շատ բնորոշ պիտի համարել այն, որ քննելով ժուռնալների բովանդա-

⁸ Н. Г. Чернышевский, т. 7, стр. 841.

կութիւնը, Չերնիշևսկին աշխատում էր որոշել և պարզել առաջին հերթին կոնկրետ պարբերագրի ուղղութիւնը բնութագրող հատկանիշները:

Շեշտված բոլոր տեսութիւնները միանման կառուցվածք ունեին: Իրականում դրանք հրապարակախոսական սուր ակնարկներ էին, և ոչ թե պատմական-մատենագրական ուրվագծեր: Ծանրանալով առանձին պարբերականների վրա, Չերնիշևսկին աշխատում էր օգտագործել հարմարագույն առիթը՝ լեզու կերպով ռեակցիայի սպասավորներին նոր հարվածներ հասցնելու համար:

2

Չերնիշևսկու աշխատութիւնների մեջ՝ գրախոսութիւնների կողքին մենք տեսնում ենք նաև բիրլիոգրաֆիական ամփոփ ակնարկներ և ուրվագծեր: Բուսական տարբեր պարբերագիրների մեջ զետեղված նյութերի և հոդվածների վրա ծանրանալով, Չերնիշևսկին աշխատում էր դիտավորյալ կերպով հանդես գալ ժուռնալների նյութերը նկարագրողի դերում: Նա նույնիսկ ընդգծում էր, որ իր նպատակն է միմիայն արձանագրել իրական փաստերը:

Սակայն և այնպես, արդեն ժուռնալային նյութերի ընտրութիւնը և նկարագրութիւնն կցված թուցիկ կամ հակիրճ քննական դիտողութիւններով, Չերնիշևսկին շատ բան էր ասում «միամիտ» ու բաղմահմուտ իր ընթերցողներին⁹: Նա կարողանում էր առօրյա ռեցենզիաները, «առերևույթ» անգորր տոնով կազմված ուրվագծերը դարձնել «Սովրեմեննիկ»-ի շուրջը համախմբված հերոսական փայլուն պլեադայի հրապարակախոսութիւնը և պրոպագանդային օժանդակող կարևոր ազգակներ: Իզուր չէր նեկրատովը Չերնիշևսկու անմիջական ազդեցութիւնն ներքո նկատելի փոփոխութիւններ մտցրել «Սովրեմեննիկ»-ի տրագիցիոն հայտարարութիւնների մեջ և դարձրել այդ հայտարարութիւնները մի տարվա ընթացքում հրատարակված բնորոշ նյութերի անտացիոն-մատենագրական ուրույն տեսութիւն¹⁰:

Առանձին տեղ են գրավում «Սովրեմեննիկ»-ի մեջ 1858-ին հրատարակված մատենագրական տեսութիւնները: Անհրաժեշտ է նշել, որ ակնավոր առաջ գրականագետ Մակաշինը վերապահութիւնով մտտենալով դրանց, ժամանակին Չերնիշևսկուն վերագրվող այդ տեսութիւնները համարում էր ուրիշ գրողի ստեղծագործութիւն: Չերնիշևսկու երկերի առաջին հրատարակութիւնն մեջ (Չերնիշևսկու որդու — Միխայիլ Չերնիշևսկու նախաձեռնութիւնով պատրաստված) բոլոր այդ տեսութիւնները զետեղված են որպես Չերնիշևսկու երկասիրութիւններ: Սովետական նոր, լիակատար հրատարակութիւնն իրմ-

⁹ Н. Г. Чернышевский, Заметки о журналах, т. 3, стр. 630—729.

¹⁰ Այդ նյութերը հրապարակել է նորերս Չուկովսկին (Некрасов, Собр. соч., т. 12).

բազիրները նույնպես դրանք մտցրել են Չերնիշևսկու երկերի տեքստային բաժնի մեջ, բայց տպագրելով «Դուբիա» վերնագրի ներքո, նշել են, որ չեն վստահանում կատեգորիկ կերպով Չերնիշևսկուն վերագրել դրանք:

Մենք գտնում ենք, որ «վիճելի» հարցի լուսարանության համար մեծագույն նշանակություն ունի ամենից առաջ «Սովրեմեննիկ»-ի մեջ տպագրված տեսությունների ինքնահատուկ ոճը: Չի կարելի ասել, թե այդ ակնարկների ոճը նկատելիորեն դանազանվում է Չերնիշևսկու գրությունների ոճից: Կարևոր նշանակություն ունի նաև մի այլ հանգամանք: Ոչ ոք «Սովրեմեննիկ»-ի աշխատակիցներից չէր կարող այնքան մեծ ուշադրություն նվիրել ուսական դանազան պարբերագրերի էջերում հրապարակված տնտեսագիտական նյութերի մանրակրկիտ քննարկմանը: Դորբուլյուբովը նույնպես հետևում էր տնտեսագիտական թեմաներ շոշափող ժուռնալիստների գրություններին, սակայն մանրակրկիտ կերպով ուսումնասիրել առանձնապես գյուղացիության տնտեսական կացության մասին գրված դանազան հետազոտությունները և նյութերը կարող էր միմիայն Չերնիշևսկին:

Առաջին տեսության մեջ նշվում էին կալվածատիրական գյուղացիների մասին հրապարակված ժուռնալային ակնարկները և հոդվածները: Երկրորդ տեսությունը կրում էր այլ վերնագիր («Գյուղացիական հարցի մասին տպագրված ժուռնալային հոդվածների բիբլիոգրաֆիա»)¹¹:

Առաջին տեսությունը շատ ընդհանուր մի նկարագրություն է, բայց այդտեղ, առանձնապես 810—812 էջերի որոշ տողերը ունեն «չերնիշևսկիական» գրություններին հատուկ ինտոնացիա: Այդպիսի տպավորություն են թողնում նաև երկրորդ տեսության առանձին տողերը: Նկատելի շափով տարբերվում են 1859-ին տպագրված ընդարձակ և մանրակրկիտ տեսությունները: Այդտեղ արդեն հիշատակվում են առանձին-առանձին որոշ ժուռնալներ՝ կարծես դիտավորությամբ՝ ժուռնալների ուղղությունը բնութագրելու համար: Հատուկ մի ուրվագծի մեջ և առանձին վերնագրի ներքո նշվում են «Գյուղական բարեկարգություն» ժուռնալի նյութերը: Նկարագրական տողերին կցված են քննական դիտողություններ: Այդպես են կառուցված նաև «Հողատերերի ժուռնալի» մի շարք նյութերի մասին գրված ակնարկները: Այդտեղ էլ սկզբում նշվում են ժուռնալի էջերում գետեղված հոդվածները, իսկ քիչ հետո արդեն արվում են քննական դիտողություններ: Միևնույն ձևով են կազմված նաև մի քանի ուրիշ ժուռնալների («Ռուսակի վեստնիկ», «Բիբլիոտեկա դլյա շտենիյա» և այլն) մեջ տպագրված բնորոշ աշխատությունների մասին եղած տեսությունները: Մեզ համար ամենից ուշագրավը բոլոր այդ տեսությունների պրո-

ֆիլն է¹²: Մի ակնթարթ ընդունենք, թե Մակաշինի դիտողությունը միանգամայն անվիճելի է: Մի՞թե նույնիսկ այդ պարագայում պարզ չէ, որ հատկապես տեսությունների «պրոֆիլի» ընտրությունը կարող էր կատարվել միմիայն Չերնիշևսկու առաջարկով և հավանությամբ: Երբ Դորբուլյուբովը առաջարկել էր ստեղծել նոր տիպի բիբլիոգրաֆիական աշխատություններ, 60-ական թվականների ականավոր բիբլիոգրաֆներից մեկը՝ Նեուստրոկը կազմել էր անշափ արժեքավոր բիբլիոգրաֆիական նոր ուսումնասիրություն, որը այսօր էլ եզակի տեղ է զբաղում պարբերական մամուլի պատմությանը նվիրված բիբլիոգրաֆիական աշխատությունների մեջ: Սակայն և այնպես, նա, ով ուշագրությամբ կմտենա «Սովրեմեննիկ»-ի մեջ գետեղված բիբլիոգրաֆիական տեսությունների կառուցվածքի և մանավանդ «անոտացիաների» բնույթը խախտող տողերի ոգուն, չի կարող շնկատել, որ նույնիսկ Նեուստրոկի նման հմուտ բիբլիոգրաֆները չեն կարող հանգես դալ այդօրինակ աշխատությունների հեղինակների դերում:

Ամենից բնորոշը, — ինչպես ասացինք քիչ առաջ, — այդ տեսությունների ուրույն «պրոֆիլն» է: Բիբլիոգրաֆիան, պատմությունը, հրապարակախոսությունը թելադրել են «Սովրեմեննիկ»-ի ղեկավարներին ստեղծել նոր տիպի մի աշխատություն: Այդ ղեկավարները հիշեցնում էին իրենց ընթերցողներին, որ նույնիսկ մի որոշ թեմայի շուրջը պատող ժուռնալային նյութերի և հոդվածների նկարագրական քննական տեսությունը կարելի է դարձնել առանձին պարբերագրի, պարբերական մամուլի պատմությանը և բիբլիոգրաֆիային նվիրված գիտական հետազոտություններին օժանդակող նյութեր:

Շատ նշանակալից է բանասեր-պատմաբանին հատուկ մոտեցումը Չերնիշևսկու գրությունների մեջ: Մեծագույն ուշադրությամբ ուսումնասիրելով անգամ նկարագրական-փաստագրական աշխատությունները, Չերնիշևսկին նշում էր, որ թե՛ պատմական և թե՛ նույնիսկ բիբլիոգրաֆիական աշխատությունների մեջ պիտի լինի և փաստերի կլասիֆիկացիա և միշտ որոշակի դիտակետ, և քննական մոտեցում գրական-պատմական վավերագրերին: Նա չէր կարում գրականության պատմությունը ժուռնալիստիկայի պատմությունից: Շատ բարձր գնահատելով գեղարվեստական գրականության վավերագրերը և համաշխարհային կուլտուրայի ակնավոր ներկայացուցիչների դերը, այնուամենայնիվ, նա միշտ առանձին գրական-գեղարվեստական «գրպ-

11 Н. Г. Чернышевский, т. 5, стр. 804—819.

12 Եվգենե-Մարսիմովը իր սովորածավալ հետազոտության երկրորդ հատորի մեջ որոշակի կերպով գրում է, որ մատենագրական տեսությունների հեղինակը Չերնիշևսկին էր: Միևնույնը հաստատում է նաև Զորնովը: Евгений-Максимов, «Современник» при Чернышевском и Добролюбове, Л., 1936, стр. 297—298.

րոցները» ներկայացուցիչների կողքին, առաջավոր կամ հետագեմ գրողների, ականավոր վիպագիրների կամ բանաստեղծների կողքին նշմարում էր որոշ պարբերագիրների շուրջ համախմբված գրականագետների, արվեստագետների, գիտնականների շարքեր:

Այդպես էր մոտենում Չերնիշևսկին գրականության պատմությանը: Միևնույն մոտեցման հատուկ ցուցանիշները նշմարվում են նաև մեծ հեղափոխական-դեմոկրատի գրեթե անուշադրուստ մատնված բիրլիոգրաֆիական նոր տիպի այն աշխատությունների մեջ, որոնք վիճակագրական ակնարկներ լինելով հանդերձ, կարող են գրավել և պիտի գրավեն պարբերական մամուլի պատմության բիրլիոգրաֆիան ուսումնասիրող բանասերների առանձնահատուկ ուշադրությունը¹³:

3

Բիրլիոգրաֆիական այդ ակնարկները հակիրճ տեսություններ են: Նրանցում բերված թվական տվյալները մեծ տեղ են բռնում, կարելի է ասել՝ գերակշռում են:

«Սովրեմեննիկ»-ի մեջ լույս են տեսել այդ տիպի երեք տեսություններ: Առաջին տեսությունը գրեթե ամբողջովին վիճակագրություն է: Չերնիշևսկին առանց որևէ ներածության պարզապես հրատարակել է ուսական նահանգների և մի շարք քաղաքների ընդարձակ մի ցուցակ: Նա կանգ է առել բացառապես այն նահանգների և քաղաքների վրա, ուր «Սովրեմեննիկ»-ը քիչ թե շատ տարածված էր: Բաժանորդների թիվը շատ մեծ էր առանձնապես Պետերբուրգի նահանգում, ուր միայն մայրաքաղաքում այդ թիվը 1859-ին հասնում էր 1274-ի: Նահանգի մյուս քաղաքներում «Սովրեմեննիկ»-ը ուներ 45 բաժանորդներ (որոնցից 15-ը Կրոնշտատի քաղաքացիներ էին): Ռուսաստանի երկրորդ մայրաքաղաքում՝ Մոսկվայում բաժանորդների թիվը ավելի քիչ էր՝ 622, իսկ Սերպուխով քաղաքում՝ 16: Սարատովի նահանգում բաժանորդագրվել էին ընդամենը 105 հոգի, իսկ Կուրսկի նահանգում՝ 111 մարդ: Մեզ համար հետաքրքրական կարող են լինել իհարկե Ռուսաստանի այն վայ-

¹³ Н. Г. Чернышевский, т. 7 (Сведения о числе подписчиков на «Современник», 1859, էջ 418—428, նույնը 1860, էջ 890—908, նույնը 1861, հատոր 10, էջ 454—479): Բացառություն է կազմում ականավոր սովետական պատմաբան-բիրլիոգրաֆ Զոթրեովը, որը ծանրանալով Չերնիշևսկու մատենագրական ոեցենդիաների վրա, ժամանակին նշել է շեշտված վիճակագրական-մատենագրական ակնարկների նշանակությունը: Զոթրեովը գրում է, որ «Սովրեմեննիկ»-ի էջերում բացի ցուցակից և ակնարկներից զետեղված են եղել նաև ստատիստիկական տախտակներ: Здобнов, Русская книжная статистика в XIX веке, «Советская библиография», 1934, № 1, стр. 46—47, Здобнов, История русской библиографии, М., 1951, стр. 271—274.

րերը, որոնց բնակչության շարքերում զգալի թիվ էին կազմում հատկապես ազգային փոքրամասնությունները: Դրանց շարքերում կարող էին լինել կովկասցիներ և այդ թվում հայ բաժանորդներ:

Այդպիսի վայրերից հիշատակվում են Աստրախանը՝ 19 բաժանորդ, Քիշինը՝ 19, Դերբենդի նահանգը՝ 18, Նախիջևանը՝ 2, Ռոստովը՝ 12, Տագանրոգը՝ 23, Կամենեց-Պոդոլսկի՝ 13, Ստավրոպոլը՝ 24, Ստավրոպոլի նահանգը (քաղաքի հետ միասին)՝ 94, Տավրիկյան նահանգը՝ Ղրիմ՝ 95, Թբիլիսիի նահանգը՝ 69, այդ թվում Գանձակում՝ 1, Զաքաթալայում՝ 2, Սղնախում՝ 1, Թելավիում՝ 5, քաղաքում՝ 44: Բաքվում եղել է 4 բաժանորդ, Նուխիում՝ 1, Շամախիում՝ 3, Շուշիում՝ 4, Երևանում՝ 2, Նախիջևանում՝ 1, Ալեքսանդրապոլում՝ 1: Պետք է ենթադրել, որ յուրաքանչյուր բաժանորդ ժուռնալը տալիս էր իր ընթերցասեր ծանոթներին և հանդես գալիս «Սովրեմեննիկ»-ի ուրույն պրոպագանդիստի դերում: Չերնիշևսկին այդ նկատի ունի, երբ ծանրանում էր բաժանորդների վրա: Վիճակագրական տվյալներին նա կցել էր հակիրճ դիտողություններ, որտեղ առանձնապես շեշտում էր, որ Լուգանսկում նույնչափ բաժանորդներ կային, որչափ շատ ընդարձակ Ուոնեցկի նահանգում: Վերինդնեպրովսկում 3000 բնակիչներից բաժանորդագրվել էին 23 հոգի: Դա, իհարկե, մեծ տոկոս էր. մինչդեռ Նիժնի Նովոգորոդում 40.000 բնակիչներից միայն 21 հոգի էին բաժանորդագրվել:

Իր երկրորդ տեսության մեջ Չերնիշևսկին կանգ է առնում 1860-ի ընթացքում բաժանորդագրողների վրա: Նա նորից հիշատակում է առանձին նահանգները, քաղաքները, բաժանորդների թիվը: Որոշ վայրերում ավելացել էր բաժանորդների թիվը: Դերբենդի նահանգում, օրինակ, բաժանորդների թիվը հասնում էր 26-ի, Ստավրոպոլում կային արդեն 40 բաժանորդներ, Քուբայիսիի նահանգում՝ 7, Ղրիմյան վայրերում՝ 126 (այդ թվում՝ Թեոդոսիայում՝ 4, Սիմֆերոպոլում՝ 32, Թբիլիսիի նահանգում՝ 80, քաղաքում՝ 52, Սղնախում՝ 2, Թելավում՝ 5, Ախալցխայում՝ 1, Շամախու նահանգում՝ 14), Բաքվում՝ 5, Շուշիում՝ 4, Նուխիում՝ 2, Երևանի նահանգում՝ 10, Նախիջևանում՝ 2, Երևանում՝ 4:

Քննելով վիճակագրական այս տվյալները, Չերնիշևսկին նշում է, որ «Սովրեմեննիկ»-ը 1859-ին ուներ ընդամենը 5500 բաժանորդ, իսկ 1860-ին 6.600: Բնորոշ է այն, որ Չերնիշևսկին դիտավորյալ միացնելով Դերբենդի, Քուբայիսիի, Թբիլիսիի, Շամախու, Երևանի նահանգները Սև ծովի վայրերի հետ, «կովկասյան» այդ վայրերում նշմարում է նկատելի պրոգրես: Ըստ Չերնիշևսկու նշված վայրերում 1860-ին 300.000 բնակիչներից «Սովրեմեննիկ»-ին բաժանորդագրվել էին 158 մարդ: Դա անշուշտ բարձր տոկոս էր:

Զգտելով բնութագրել մի քանի մեծ քաղաքների բնակչության դիրքը, Չերնիշևսկին կազմել է վիճակագրական տախտակ: Այդտեղ նշվում են,

ի միջի այլոց, հետևյալ թվական տվյալները: Քբիլիսիի 38.000 բնակիչներից 1860-ին «Սովրեմեննիկ»-ին բաժանորդագրվել էին 52 հոգի, այնինչ Վորոնեժի 38.000 բնակիչներից միայն 29 հոգի էին բաժանորդներ, Քիշինևի 63.000 բնակիչներից 37 հոգի. Կուրսկ քաղաքում կային 40.000 բնակիչներ, որոնցից 39 բաժանորդներ և այլն:

Չերնիշևսկին իհարկե հաշվի է առնում տոկոսային հարաբերությունների նշանակությունը: Նա գտնում է, որ կովկասյան վայրերում «ուսու հասարակությունը» հիմնականում բաղկացած էր դինվորական սպաներից և պետական-կառավարական հիմնարկությունների ծառայողներից, որոնց թվում էին «Սովրեմեննիկ»-ի ընթերցողները: Մեզ թվում է, որ Չերնիշևսկու այդ տեսակետն այնքան էլ ճիշտ չէր: Չերնիշևսկու ենթադրությունամբ ուսերեն ամսագրի բաժանորդները և ընթերցողները պիտի լինեին բացառապես և միմիայն ուսական բնակչության ներկայացուցիչները: Իրականում կովկասյան վայրերում, այդ թվականներին և դրանից էլ առաջ եղել են ուսերեն կարգացող կովկասցի ընթերցողների նշմարելի շարքեր: Կովկասյան ժողովուրդների առաջավոր ներկայացուցիչները պայքար են մղել ֆեոդալական-ճորտատիրական կարգերի դեմ՝ հետևելով ուս պրոգրեսիվ և դեմոկրատական գրականությանը: Կովկասյան մի շարք վայրերում, առանձնապես 60-ական թվականներին ադրբեջանցի, վրացի, հայ ընթերցողները (խոսքը իհարկե առաջավոր ընթերցողների մասին է) կարող էին ակտիվ կերպով արձագանքել դեմոկրատական գաղափարներին: Իր տեսության վերջին մասում Չերնիշևսկին նահանգական փոստերի ղեկավարներին առաջարկում էր արձանագրել զանազան պարբերագրեր ստացող բաժանորդների թիվը՝ ըստ դասերի: Միաժամանակ նա նշում է, որ բոլոր պարբերագրերի խմբագիրները նույնպես իրենց բաժանորդների մասին պետք է թվական կոնկրետ տվյալներ հրատարակեն: Չերնիշևսկին Կերչից ստանում է այդ տիպի ուշագրավ տեղեկություններ և կցում իր ակնարկին: Հենվելով այդ տվյալների վրա, նա հանգում է այն եզրակացության, որ հատկապես Տավրիկյան նահանգում (Ղրիմ) 1860-ին զինվորականների և շինովնիկների կողքին պարբերագրերի բաժանորդների շարքերում նկատելի տեղ էին բռնում վաճառական-բաժանորդները:

Իր երրորդ տեսության մեջ Չերնիշևսկին կանգ է առնում արդեն 1861-ի ընթացքում բաժանորդագրվողների վրա: Նորից նա հիշատակում է առանձին նահանգներ և քաղաքներ: Թվական տվյալներին նա կցում է մեկնաբանական հատուկ դիտողություններ և շեշտում առանձնապես, որ «Սովրեմեննիկ»-ի բաժանորդների թիվը մեծ էր Նովորոսիայում և հարավային վայրերում: Ամբողջ Կովկասում 1861-ին կար արդեն 161 բաժանորդների կուռ մի զանգված: Ղզլարում նկատելի կերպով պակասել էր բաժանորդների թիվը (1860-ին կար 9, իսկ 1861-ին միայն 5 բաժանորդ): Մի քանի քաղաքներում դրությունը

մնում է անփոփոխ: Ստավրոպոլում բաժանորդների թիվը հասնում է 50-ի: Նույնը կատարվում է նաև Քբիլիսիում՝ որտեղ արդեն կար 55 բաժանորդ:

Չերնիշևսկին ընդգծում է, որ ընթերցողները չեն սիրում շաղկրատությունամբ զբաղվող գրողներին: Եթե առաջ այդ ընթերցողները որոշ սպասումներով էին մոտենում «գրականությանը», ապա 1861-ին նրանք հուսախաբվելով ցուցադրում են թերահավատ վերաբերմունք դեպի մամուլը: Այդ, — ասում է Չերնիշևսկին, — նշանակում է, որ ընթերցողները անբավական են: Ստատիստիկական նոր տվյալները թելադրում են ժողովուրդատիրական ներկայացուցիչներին և բոլոր գրողներին հաշվի առնել բաժանորդների — ընթերցողների այդ նոր դիրքը:

Չերնիշևսկու վերջին տեսության մեջ վիճակագրական տվյալներին կցված է գրեթե մի ամբողջ ուսումնասիրություն, երեք տարիների ընթացքում փոփոխվող «տրամադրությունները» բնութագրող սիմպտոմների մասին: Մենք դիտավորությունամբ ծանրացանք միմիայն որոշ վայրերի բաժանորդների վրա ոչ թե նրա համար, որ ցանկանում էինք «Սովրեմեննիկ»-ի բաժանորդների ընդհանուր հավելույթի մեջ նշմարել անհայտ և մոռացված կովկասցի դեմոկրատների դիմաստվերները: Երևանի, Նախիջևանի, Ղզլարի և այլ քաղաքների բաժանորդները կարող էին լինել նաև ուրիշ ազգությունների ներկայացուցիչներ: Դա կասկածից դուրս է: Կարելի է միայն հիպոտետիկ կարգով ենթադրել, որ հայաբնակ որոշ վայրերում բաժանորդների մի որոշ տոկոսը, թեկուզ և աննշան, կարող էր և պետք է ցուցադրեր նաև առաջավոր հայ գործիչների ակտիվ դիրքը «Սովրեմեննիկ»-ի նկատմամբ¹⁴: Վերջնական պատասխանը մենք կստանանք միայն «Սովրեմեննիկ»-ի արխիվային նյութերը ուսումնասիրելուց հետո: Մեզ չպիտի շփոթեն Ռուսիայի հարավային բաժանորդների ուսական ազգանունները: Հյուսիսային Կովկասում, Դոնի շրջանում, զրիմյան վայրերում հաճախ հայ քաղաքացիները հանդես են եկել ուսական ազգանուններով (Պոպով, Տարասով, Չերնով, Կուզնեցով, Չերոտարյով և այլն):

¹⁴ Ուսումնասիրելով ճնշված ժողովուրդների կացությունը և պատմությունը, Չերնիշևսկին առանձնահատուկ ուշադրություն էր մոտենում արևելյան ժողովուրդների կուլտուրային: Հայտնի է, որ նա թաթարերեն լեզուն լավ էր ուսումնասիրել տակավին իր ուսանողության տարիներին՝ հենց իր հայրենի քաղաքում՝ Սարատովում: Այդ փաստը ընդգծում է իր նոր աշխատության մեջ Չերնիշևսկայան (էջ 61—63): Արաբերեն և պարսկերեն լեզուներն էլ նա սկսել էր ուսումնասիրել այդ տարիներին: Հետագա շրջանում Չերնիշևսկու հատուկ ուշադրությունը գրավում են կովկասյան ժողովուրդները: Հավանական է, որ հենց այդ շրջանում նա անցել է նաև հայ լեզվի ուսումնասիրությանը: Հայերեն ձեռագիր աշխատքեր, և ապա Չերնիշևսկու ձեռքով գրված հայերեն մակագրությունը ներկայումս պահվում են Չերնիշևսկու անվան թանգարանում՝ Սարատովում (Նիմոլսկի, էջ 157): Ոչ մի պարագայում չի կարելի թերահանգատել այդ վավերագրերի նշանակությունը: Ерымовский, Чернышевский в Астрахани, 1952, Астрахань.

Միմիայն արխիվային փաստաթղթերը կարող են որոշակի ցույց տալ, թե «Հյուսիսսփայլ»-ի բաժանորդներից ովքե՞ր են բաժանորդագրվել «Սովրեմեննիկ»-ին:

Չերնիշևսկու համար թվերի ամբողջությունը յուրահատուկ մի «բարոմետր» էր: Դա կշռաշափ էր: Այդ բարոմետր-կշռաշափը նրա համոզմամբ կարող էր պարզել ընթերցողների դիրքորոշումը մամուլի, գրականության, կոնկրետ պարբերագրերի նկատմամբ: Հրահանգելով կազմել հատուկ տեղեկագրեր և հաշվետու հոդվածներ, առաջարկելով փոստի նահանգային մարմիններին կազմել վիճակագրական տեղեկություններ, վերջապես կոշ անելով պարբերագրերի ղեկավարներին հոգ տանել հաշվետվության մասին, Չերնիշևսկին միաժամանակ դիմում էր մատենագիրներին և ցույց տալիս բիր-լիոգրաֆիայի նոր ուղիների ու մեթոդների նշանակությունը: Մեծ հեղափոխական-գիտնականը հրահանգում էր ժուռնալիստիկայի պատմության պրոբլեմները հետազոտող բանասերներին՝ հաշվի առնել որոշ սխտեմով դասավորված և կլասիֆիկացիայի ենթարկված թվական տվյալների մեծագույն նշանակությունը:

Կազմելով վիճակագրական ցուցակներ և կլասիֆիկացիայի ենթարկելով թվերը, Չերնիշևսկին առաջ շարժվող բանակի հրամանատարի նման էր մոտենում նման փաստերի վերլուծությանը: Նա ձգտում էր պարզել առանձին վայրերում բազմացող կամ պակասող բաժանորդների դիրքորոշման պատճառները: Մեծագույն ուշադրությամբ համեմատելով բաժանորդների ակտիվությունը կամ պասիվությունը բնութագրող թվերը, նա աշխատում էր պարզել զալիք հեղափոխական պատերազմի թույլ օղակները: Նա յուրաքանչյուր նոր բաժանորդի կողքին նշմարում էր ապագա ապստամբ բանակի ընթերցող մարտիկների գիմաստվերները: Յուրաքանչյուր նոր տեղեկություն արձանագրում էր, միշտ ջանալով որոշել «Սովրեմեննիկ»-ի բաժանորդների և ընթերցողների կշիռն ու արժեքը:

ՎԵՐԵՍԱՆՎԻ ՄԱՍԻՆ

Վիկենտի Վիկենտևիչ Վերեսանը (Սմիդովիչ) բարձր էր զնահատվում դեմոկրատական երիտասարդության շրջանում, առանձնապես 1904—1905-ին: Նրա ալեգորիկական փոքրիկ «Աստղը» գրույցը ծանոթ էր վաղեմի այդ օրերին «արդարություն» որոնող միամիտ ընթերցողների լայնագույն շարքերին: Ես 1905-ին Բաբվի միջնակարգ դպրոցներից մեկի— գիմնազիայի աշակերտ էի: Կար մեր դպրոցում հեղափոխական մի խմբակ, որի մասնակիցները հաճախ կարդում և քննում էին ականավոր ռուս գրողների առանձին աշխատությունները: Հիշում եմ, որ տարված ռոմանտիկական գաղափարներով,

մենք գրականության մեջ աշխատում էինք ամենից առաջ գտնել հասարակական «այրող» պորբլեմների լուծմանը օժանդակող պատասխաններ: Տարօրինակ կերպով ակներև ակնածանքը Բազարովի և Ռախմետովի նկատմամբ այդ տարիներին կապակցվել էր մեր մտայնության մեջ լուսավետ հեռուները նետվող հումանիստ-հերոսների ուղեգծի պաշտպանության հետ: Նույնիսկ Պիսարևի էքսպանսիվ ընթերցողներս սիրով էինք կարդում Բայրոնի «Շիլիոնի կալանավոր» պոեմը և ուժգնորեն համոզված էինք, որ Գորկու Դանկոն, Կորոլենկոյի ինտուրգենտը, սիբիրյան արտոբանդները հերոսական կերպարներ են: Վերեսանի փոքրիկ գրույցի մեջ նկարագրված «Աղեյիլն» էլ աղբ տարիներին մեկնաբանվում էր որպես նշված հերոսների նման գաղափարական կերպար: Եվ ահա այսօր, երբ նշվում է արդեն ալեհեր ու վաստակավոր գրողի հոբելյանը, շատ ուժգին կերպով իմ հուշերի մեջ ընդգծվում է, առաջին հերթին, հենց շատ փոքրիկ գրույցի այդ իդեալիստ հերոսի՝ մշուշով սքողված կերպարը: Բնական է միանգամայն, որ այժմ դյուրին չէ ինձ համար գտնել ավելի ճշգրիտ խոսքեր ուշադրավ և բազմավաստակ այդ գրող-գիտնականի իսկական դեմքի բնութագրման համար:

Վերեսանը ծնվել է 1867 թ. հին Ռուսիայի գործարանային համրավաճոր Տուլա քաղաքում: Նրա հայրը հայտնի բժիշկ էր ու շատ հարգված էր առանձնապես գործարանային մեծ քաղաքի բանվորական թաղամասերի կողմից: Այդ մասին կարելի է գտնել նշանակալից տողեր Վերեսանի եղակի արժեք ունեցող բովանդակալից ու պատկերավոր մեմուարների մեջ: Նախնական կրթությունը հայրենի քաղաքում ստանալուց հետո, Վերեսանը ուսանել է համալսարանում և ավարտել է պատմա-բանասիրական ու բժշկագիտական ֆակուլտետները: Հետագայում, նետվելով կյանքի հորձանքի մեջ, Վերեսանը աչքի ընկնող դեր է կատարել թե՛ որպես ռեալիստ-գրող և թե՛ նաև բժշկագիտության բնավայրում: Ամենից բնորոշն այն է, որ նրա գրական աշխատությունների մեջ նույնպես արտացոլվել են հումանիստ-բժշկին և միաժամանակ տաղանդավոր բանասեր-պատմաբանին հատուկ հատկանիշները: Վերեսանի կյանքի պատմությունն էլ կարող է գրավել նրա ընթերցողների ուշադրությունը: Տուլա և ռուսական հին պրովինցիա, Պետերբուրգ և համալսարանական միջնուրտ, ապա նորից աստանդական թափառումներ, հետո աշխատանք ռազմի զաշտերում՝ ռուս-ճապոնական պատերազմի օրերին, ապա նորանոր ապրումներ, նորանոր դեպքերից շժմած անդեկ մտավորականության շարքերում վաղեմի արժեքների վերագնահատման նոր փորձեր, հակասական դեգերումներ, նոր հանգրվանների որոնումներ, — այդ ամենը չէր կարող արձագանք չգտնել գրողի տարբեր ժամանակ գրված աշխատություններում:

Երիտասարդ բժիշկը մոտիկ կապեր է ստեղծում աշխատավոր խավերի ներկայացուցիչների հետ, շրջում է բանվորական հեռու թաղամասերում և

գյուղական վայրերում, մեծագույն ուշադրությամբ հետևում է հին օրերի դաժան իրականության մուսլ էրեւոյթներին և աշխատում է ակտիվորեն արձագանքել կյանքի ամենահրատապ և կարեւոր պրոբլեմներին: Վերեսակը առաջիններից մեկն էր, որ շատ սուր կերպով առաջադրեց բժշկի հասարակական պարտականութունների կարևորագույն պրոբլեմը: Բժիշկների համար գրված նրա պուբլիցիստական գիրքը շատ կարճ ժամանակվա ընթացքում դառնում է հրատապ քննության նյութ՝ հասարակական լայնագույն շրջաններում: Անցյալում Վերեսակի նշված գիրքը համարվում էր անիրավ հին կարգերի և հնօրյա բժշկագիտության պահպանողական ներկայացուցիչների դեմ ուղղված անշարի կտրուկ մի մեղադրական ակտ:

Ռուս-ճապոնական պատերազմի օրերին Վերեսակը գրում է ռազմական բժշկի իր հուշերը, որոնք ցնցող տպավորություն են թողնում ընթերցողների վրա: Հեռավոր Արեւելքի—Մանջուրիայի մուսլ տափաստաններում կոտորածի մատնված ժողովրդի զավակների տխուր դիմաստվերները մոլեգին և զայրալից ցայտուն «վավերագրեր» էին՝ ուղղված ցարիզմի և նրա դաժան դեմքը քողարկող բոլոր գործիչների դեմ: Բնորոշ է այն, որ ընթերցողների վրա շատ մեծ տպավորություն էին թողել «Ջնանիե» հայտնի ժողովածուների հերթական հատորներից մեկում գետեղված վերեսակյան այդ հուշերը...

Վերեսակը գրել է մի շարք վիպակներ և պատմվածքներ, որոնց ընդհանուր կուրսիտը հաճախ բավական «անդորր» է և մի որոշ շարիով նույնիսկ նատուրալիստական-նկարագրական: Ժամանակին այդ գործերը քննադատություն են ենթարկվել զեղարվեստական առանձին թերությունների համար: Հիշատակելով հատկապես որոշ էջերի պուբլիցիստական ուժեղ շեշտը, քննադատները կանգ են առնում նաև ուրույն «արձանագրությունների» բնույթ կրող նկարագրական հատվածների վրա: Չի կարելի ասել, իհարկե, թե թերություններից միանգամայն ազատ են եղել Վերեսակի զեղարվեստական նշված աշխատությունները: Սակայն և այնպես, այսօր մանավանդ մենք չենք կարող անուշադրության մատնել անգամ վերեսակյան անկատար գործերը: Վերեսակի այդ գործերը կարևոր նշանակություն ունեն ռուսական ինտելիգենցիայի անցած ուղիների, ապրումների, գաղափարական որոնումների բազմակողմանի ուսումնասիրության համար: Չի կարելի մոռանալ, որ գրողը եղել է հին դեպքերի ականատես և ակտիվ մասնակից: Վատ չէ այն էլ, որ ջանալով ճշգրիտ կերպով նկարագրել անցյալի էջերը, Վերեսակը անհրաժեշտ է համարել արձանագրել անգամ մանրուքները: Հետևելով ռուս կլասիկների զեղարվեստական արվեստի ռեալիստական ավանդներին, Վերեսակը ջանացել է ամենից առաջ նկարագրել կյանքի և իրականության իսկական առօրյայի կենդանի կոնտուրները: Նրա աշխատությունների մեջ միշտ տեսնում ենք դիտուն պատմաբանի և նույնիսկ պուբլիցիստի խոսուն դեմքը: Վիպակների և պատմվածք-

ների հերոսների կողքին գրեթե միշտ նշմարվում է ինքը՝ հեղինակը: Ընթերցողների համար ակներև է, որ այդ հեղինակը չի կարողանում ու չի ցանկանում մնալ սոսկ անդորր նկարչի դերում և աշխատում է բացահայտ կերպով դրսևորել իր առանձին դիրքորոշումը և ասել իր սեփական խոսքը: Իր արվեստի այդօրինակ հատկություններով Վերեսակը հաճախ դառնում էր միանգամայն անհանդուրժելի «անկախ արվեստի» դիրքերին կառչած տեսաբանների համար: Հեռու անցյալի այն օրերին, երբ շատ ուժեղ էր ցարական դեպոտիայի երկրպագուների կոնտինգենտը, խիզախ ռեալիստ-գրողի հրապարակախոսական ուժեղ շեշտը արձագանքում էր հեղափոխական ժողովրդի անմիջական ապրումներին ու տենդենցներին: Այդ փաստը համենայն դեպս անհրաժեշտ է ընդգծել ամենակտրուկ կերպով: Քիչ առաջ շեշտվեց արդեն, թե ինչպես էին վերաբերվում պատանի և երիտասարդ ընթերցողները Վերեսակին 1904—1905-ին: Նրա «Աստղ» զրույցը մեկնաբանվում էր շատ ուրույն ասպեկտով:

Մեծագույն ուշադրությամբ էին կարդում հին օրերի երիտասարդ ընթերցողները Վերեսակի այն վիպակները, ուր նկարագրված էին հասարակական-գաղափարական բախումները, առաջին մարքսիստների ելույթները, լիբերալիզմի դեմ մղված պայքարը, ինտելիգենցիայի տարբեր շերտերի վարանումներն ու տատանումները, նահանջի ուղին բռնող ինտելիգենտների ռեակցիոն ապրումները: Միանգամայն իրավացի են այն բանասերները, որոնք առանձնապես շեշտված տիպի աշխատությունները համարում են ռուսական ինտելիգենցիայի զեղարվեստական պատմագրության շատ ուշագրավ վավերագրեր:

Վերեսակի գրական ժառանգության մեջ միանգամայն ուրույն տեղ են գրավում նրա բանասիրական-գրականագիտական հետազոտություններն ու պրպտումները: Պուշկինի և Գոգոլի կյանքի և գործի նկարագրական քննարկմանը նվիրված նրա ստվարածավալ ժողովածուների մեջ ամբարված են շատ ուշագրավ աղբյուրներից հմտագին կերպով հանված քաղվածքներ: Կասկածից դուրս է, որ հրատարակելով այդքան յուրահատուկ ձևով կազմված իր «Տարեգրությունները», Վերեսակը նյութերի դասավորման և կլասիֆիկացիային մոտեցել է ելնելով իր սեփական հիմնակետից: Բացի Պուշկինի «Տարեգրության» նվիրված աշխատությունից նա հրատարակել է նաև Պուշկինի ժամանակակիցների մասին կազմված եզակի արժեք ներկայացնող երկու ստվար այն հատորները, որոնք այսօր էլ չեն կարող անկարևոր համարվել...

Կարող են, իհարկե, վիճելի և նույնիսկ անընդունելի դատվել Վերեսակի առանձին կարծիքները պուշկինյան պայծառ արվեստի որոշ հատկանիշների մասին: Սակայն և այնպես, չի կարելի ժխտել, որ Վերեսակի հիմնական

մտանցումը Պուշկինի կենդանի և լուսավոր հայեցողությանը միանգամայն ճիշտ և հիմնավորված շատ համոզիչ կերպով:

Անհրաժեշտ է ասել, որ կյանքի և կենսատենչ ստեղծագործության նվիրված շեշտված հիմնական մտափյլը Վերեսաևը նշմարել և բացահայտել է նաև հին հունական բանաստեղծների ստեղծագործությունների մեջ: Վերեսաևը հին հունարենից թարգմանել է այսպես կոչված Հոմերոսյան Հիմները, որոնք ժամանակին, ինչպես հայտնի է, թարգմանվել են անգլերեն՝ Շելլիի անմիջական նախաձեռնությամբ:

Անշափ արժեքավոր են Գեսիոգից, Արխիլոխից, Սաֆոյից, հունական հին բանաստեղծների գեղարվեստական ֆրագմենտներից կատարված տաղանդավոր թարգմանությունները: Կյանքի ու պայքարի միշտ առույգ և կենդանի երգն է հնչում եռանդուն իմաստասեր-բանաստեղծների ստեղծագործությունների մեջ: Վերեսաևը ոչ միայն թարգմանել է հմտորեն ընտրված ավելի դիպուկ ֆրագմենտները, այլ նաև ընդգծել է հույն հեղինակ բանաստեղծների մտայնության կարևորագույն հատկանիշները: Կանգ առնելով Մոնտեմի մի պարբերության առթիվ նետված այն դիտողության վրա, որ արել էր Եմերսոնը, Վերեսաևը հելլեն բանաստեղծների ստեղծագործությունների մեջ էլ նշմարում է «արյունով լեցուն» այբույր ու հրաշունչ խոսքեր:

...Ամուր է այդ մարգկանց հողին,— ասում է Վերեսաևը,— և անիմաստ «ճակատագրի» ոչ մի հարված չի խեղդում կորովի այդ բանաստեղծների անսահման եռանդը: Իր տաղանդավոր թարգմանություններին Վերեսաևը կցել է շատ համառոտ բնութագրական նախաբաններ, որոնք բովանդակալից են ու կրում են գիտական-ուսումնասիրական սեղմ էքսկուրսների բնույթ: Կարող են այդ «նախաբանների» մեջ էլ լինել առանձին գրույթներ կամ մտորումներ, որոնց զեմ գուցե և կառարկեն շատ ավելի հմուտ հելլենիստները— մասնագետները: Փաստերն այնուամենայնիվ մնում են փաստեր: Վերեսաևի ջանքերով կերտված յուրահատուկ այդ «պորտրետները» կառուցված են փաստերի ամուր պատվանդանի վրա: Ձեռնարկելով անտիկ աշխարհի պոետների մտայնության ռեալիստական մեկնաբանության իր փորձը, Վերեսաևը նկարագրում է այնքան կենդանի, խոսուն և ցայտուն պորտրետներ, որ նույնիսկ ամենասկեպտիկ ընթերցողներին թելադրում է համաձայնվել նշված մեկնաբանության հետ:

Մենք տեսնում ենք ապրող և կենդանի պոետների իսկական տիպարներ. բանասերի հետ միասին, հասարակական սուր բախումների ֆոնի վրա տեսնում ենք քաղաքացի-բանաստեղծների դիմագծերը, լսում ենք նրանց և հետևում զայրույթով, հույզով լեցուն նրանց խոսքերին: Արխիլոխը Վերեսաևի նկարագրության մեջ կոպիտ սալգաթ է, կյանքի մշտական հարվածներից գազազած սալգաթ, անբավական և «անբախտ» մի «քեֆչի», վրիժառու և մոլեգին

մի պոետ, որի խոսքերը լեցուն են մաղձով... Վերեսաևը ձայնակցում է հնօրյա ալեքսանդրիական քննադատ Կալլիմախի շատ դիպուկ բնութագրմանը. ...Վերեսաևը ջանալով իր կողմից լրացնել Արխիլոխի պորտրետի գույները, հիշատակում է պոետի մտայնության կարևոր գծերը: Արխիլոխը, կարդում ենք Վերեսաևի էքսկուրսի մեջ, մեծ հոգու տեր անձնավորություն է. անշափ անկեղծ և կորովի գործիչ է. իսկական մեծ արվեստագետների նման ճշմարտախոս մի բանաստեղծ: Համակված վայրենի եռանդով, Արխիլոխը կոտորում է թշնամիներին և ապա ջարդից հետո, առանց ուրախության, վերհիշում կոտորածի մասին: Կարծես Արխիլոխը, նկատում է Վերեսաևը, քննադատում է ինքն իրեն և զզվանքով վերհիշում արգահատելի կոտորածը: Ահա այդպիսի դիպուկ ու սուր դիտողություններով լեցուն են Վերեսաևյան բնութագրական սեղմ ակնարկները:

Վերեսաևը թարգմանել է Հոմերոսի պոեմները, թարգմանել է բնագրից, այն էլ նրան նվիրված ընդարձակ քննական գրականության ամենամանրակրկիտ ուսումնասիրությունից հետո: Հոմերոսին, ինչպես հայտնի է, անցյալում թարգմանել են շատ ռուս գրողներ: Վերեսաևի նախաձեռնությամբ կատարված թարգմանությունը այն նշանակություն ունի, որ ձեռնարկված է հմուտ արվեստագետ-գիտնականի ջանքերով. մի գիտնականի, որի համար թանկ են եղել ոչ միայն պոեմների տողերի ու խոսքերի իմաստը, այլ նաև շատ յուրահատուկ ոճն ու ինտոնացիան:

Ես կանգ չեմ առնում այստեղ Վերեսաևի վերջին տարիների ընթացքում գրված ռեալիստական կենցաղագրական փոքրիկ ակնարկների վրա: Դրանք նշանակալից են այն կողմից, որ, մերկացնելով անցյալի իրականության դիպուկ էջերը, միաժամանակ բնութագրում են նոր որոնումներով տարված Վերեսաևի ամուր կապը հայրենի ժողովրդի աշխատավոր զանգվածների հետ: Մեր մեծ սոցիալիստական հայրենիքը այսօր հերոսական ազատագրական պայքար է մղում ֆաշիզմի դեմ, նրանց դեմ, որոնք ավերելով համաշխարհային կուլտուրայի բարձր արժեքները, այրում են նույնիսկ գերման ժողովրդի կուլտուրայի հսկաների գրքերը: Ազատագրական այս մեծ պատերազմի օրերին Սովետական Միության սահմաններում անդուլ տեմպերով ապրում է ու զարգանում կուլտուրական միտքն ու շինարարությունը:

Առաջավոր ըմբոստ գրողները Սովետական Միության սահմաններում են միայն ազատորեն ստեղծագործում: Մենք ջերմագին ողջուն ենք ուղղում 75-ամյա վետերան-գրողին, մի գրողի, որը տակավին շատ հեռու անցյալում երիտասարդությանը կոչ է արել կովի ելնել հին աշխարհի մոռյլ տիրակալների դեմ: Նա իր գրական գործունեության ընթացքում շարունակել է զազափարական պայքարը, իսկ ծերության օրերին ձեռնարկել է և հաջողությամբ ավարտել այնպիսի բարդ ու դժվարին մի գործ, ինչպիսին է համաշխարհային

կուլտուրայի պատմության մեջ առաջին տեղը գրավող հույն ժողովրդի էպիկական պայծառ պոեմների թարգմանության խոշոր գործը...

1942

Մ Ա Ք Մ Ի Մ Գ Ո Ր Կ Ի

Для того, чтоб ядовитая каторжная мерзость прошлого была хорошо освещена и понята, необходимо развить в себе умение смотреть с высоты достижений настоящего, с высоты великих целей будущего...

М. Горький

Հսկայական ուղի է անցել Գորկին անցյալ դարի իննսունական թվականներից մինչև իր կյանքի վերջին օրերը: Նրա կյանքի պատմությունը հեքիաթ է: Պատանեկության տարիներին նա ծանոթանում է բանվորների շարքաշ կյանքին: Ինքն էլ ապրում է բանվորի նման: Երկաթուղային պահակ, նավային խոհարարի աշակերտ, գրագիր, վոլգյան նավաբարձների՝ բուռլակների, նավաստիների հետ շփվող, քաղաքից քաղաք թափառող սկսնակ գրողը՝ իր ամուր կոնակով ճեղքում է դժոխային իրականության մուռլ պատերո, առնում է ժողովրդից կորով, և պատմության հրահանգով, զեռես նախասովետական շրջանում, դառնում ականավոր գործիչ: Հետագայում, յուրացնելով համաշխարհային կուլտուրայի արժեքները, ինքն էլ հանդես է գալիս որպես նոր պատմական էպոխայի սոցիալիստական կուլտուրայի մեծ մոնետիկ...

Անցյալում եղել են ուս ուրիշ գրողներ էլ, որոնք ելնելով ժողովրդի ընդերքից՝ վարել են շարքաշ կյանք, իրենց գրիչը նվիրել աշխատավոր զանգվածների կյանքը պատկերելուն, երգել են ճնշվածներին: Սակայն այդ գրողների մոտ ավելի հաճախ եկատելի է մի հատկանշական գիծ. կառչած ժողովրդին, նրանք աչնումենայնիվ չեն կտրվել հայրենի միջավայրից, առօրյայից, կարելի է ասել՝ գյուղացիական առօրյայից և գյուղական պրոբլեմներից.

Գորկու մոտ էլ գուցե կարելի է տեսնել նույնը: Շատ սերտ էր կապված նա մայրենի իրականությանը: Նա անշափ սիրում էր իր վոլգյան ծննդավայրը, անծայրածիր ուռական դաշտերը և հայրենի պեյզաժը: Իտալիայից գրված նամակներում հեռու հայրենիքի կարոտը քաշող վիպագրի ձայնը միշտ էլ հնչում է առանձին տոնով: Երբ պատահական կերպով կապրի էին գալիս ուս երգիչներ կամ երաժիշտներ, Գորկին խնդրում էր երգել հայրենի ժողովրդական երգեր: Պատմում են, որ նա խուփ աչքերով էր լսում— կարծես ինքն էլ երգչի հետ փոխադրվում էր հարազատ վոլգայի ափերը:

Գորկու ստեղծագործությունը սկզբից մինչև վերջ հողեղեն է՝ ժողովրդի իրական ապրումներին, տենչերին, հույզերին մոտ մի ստեղծագործություն: Սակայն սիրելի ու նվիրական այդ միջավայրը Գորկու համար մեկուսացված և կղզիացած իրականություն չէր: Ռուսիան ինքը՝ մեծ գրողի համար եղբայրական բազմաթիվ ժողովուրդների հսկայական արհեստանոց էր, ցարական բուսնապետության ծանր լծի տակ միշտ ներքին կյանքով ապրող և միասնական ձգտումներով շաղկապված մի ամբողջություն: Այդ մեծ արհեստանոցից նա տեսնում էր մեծ հեռաստաններ ու հեռու հորիզոններ, երկրագնդի բազմաթիվ ուրիշ ժողովուրդներին: Միջազգայնական ամուր այդ զգացումը Գորկու մտահայեցության մեջ ստեղծվում է շնորհիվ բանվորական շարժման, հեղափոխական և ինտերնացիոնալիստական այն շարժման, որը կազամկերպվելով լնինյան հրահանգների համաձայն՝ հսկայական ազդեցություն է թողնում երիտասարդ Գորկու վրա և հիմնովին հեղաշրջում է նրա մտածելակերպը: Այդ մասին պատմում է ինքը՝ գրողն իր հուշերում և բազմաթիվ նամակներում: Նա բանվոր զասակարգից էր ստանում կամքի անսպառ ուժ, մեծագույն տոկունություն և հետևողական ինտերնացիոնալիզմի հստակ զգացում:

Նիժեգորոդյան արհեստավորի որդի Ալեքսեյ Պեշկովը զարտուղի արահետներով բարձրանում է զեպի ստեղծագործության նոր բարձունքներ և կարճ ժամանակվա ընթացքում դառնում համայն երկրագնդի ժողովրդական մասսաների ամենասիրելի գրողը: Պատմական իր միսիան Մաքսիմ Գորկին կատարում է աննախընթաց թափով: Չի եղել և այժմ էլ չկա մի ուրիշ գրող, որի արվեստը Գորկու ստեղծագործության նման հարազատ լիներ զեպի կամունիզմի լուսավետ հեռուներն ընթացող հեղափոխական զանգվածների համար...

Հին օրերին, ցարական Ռուսիայի ծանր մթնոլորտում երիտասարդ Գորկու խոսքն ու արվեստը զբեթե առաջին օրերից արդեն ուղղված էին իշխող կարգերի դեմ: Նա շատ վաղ է սկսում մասնակցել նաև հեղափոխական շարժմանը: Տակավին 1889-ին նիժեգորոդյան ժանդարմական վարչությունը իր լրտեսներին հրահանգում է հետևել Պեշկովի գործունեությանը: Գորկին հանդես է եկել որպես ժուռնալիստ, բացասական երևույթներն արձանագրող ու դատափետող պուբլիցիստ, ըմբոստ տրամադրությամբ համակված հեղինակ: Նրա առաջին պատմվածքը՝ հայտնի «Մտկար Չուդրան» լույս է տեսնում 1892 թվականին: Արդեն առաջին աշխատությունների մեջ նշմարվում է օպտիմիստական մտացնությունը, կենսատենչ և առույգ տրամադրությամբ հագեցված ուռմանտիկան...

Մեծ գրողի առաջին այդ պատմվածքների ընդհանուր ինտոնացիան արտասովոր էր 80-ական թվականների մթնշաղային պոեզիայի ուղղության ու տրադիցիաներին սովոր ընթերցողների համար: Հնչում էին նոր մոտիվներ, լսվում էին առույգ ձայներ, երկինքն էլ ավելի պայծառ էր երևում:

Զեխովը նույնպես ուսական հին իրականութեան միջին երևույթների անողորմ թշնամին էր: Նա էլ նոր կյանք էր երազում: Նրա հերոսներն էլ դժգոհ էին իշխող կարգերից և իրենց երազներով նետվում էին դեպի լուսավոր հեռուները: Սակայն շեխովյան հանձարեղ ստեղծագործությունների մեջ ուժեղ էին աշխատանքային գույները: Զեխովի արվեստը իր էությունը հին աշխարհի և դաժան իրականության դեմ ուղղված շատ ուժեղ քննադատությունն էր: Զեխովի արվեստից շատ հեռու էին սիմվոլիստները: Չկարողանալով սրողել «կոշտ» իրականության ներհակությունները, սիմվոլիստները նետվում էին անհատապաշտ ապրումների գիրկը և հիմնավորում էին կյանքից կտրված ռեակցիոն ու հակաժողովրդական արվեստի պատգամները:

Ահա հենց այդ օրերին էլ լույս են տեսնում Գորկու առաջին պատմվածքները: Սկզբնական շրջանում շատերի համար նոր գրողի հասարակական ուղեգիծը տակավին որոշ չէր: Ռուսական նարոդնիկների գաղափարախոսները ճիշդ էին անում իրենց կողմը քաշել գրողին: Այդ մասին կան բավական հետաքրքրական տեղեկություններ Գեանիցիու շատ բովանդակալից աշխատության մեջ: Գորկուն ուղղված նամակների մեջ հայտնի նարոդնիկ-բանաստեղծ Յուկուբովիչը ակնհայտնի դայրությունով է խոսում «մարքսիզմի» մասին և իր կողմից առաջարկում է Գորկուն հեռանալ «մարքսիստների» շրջանից:

Անակնկալ կերպով Գորկին դառնում է օրվա ամենահայտնի դեմքերից մեկը: Նրա գրքերը կարդում էին հասարակական լայն շրջաններում: Հեռու այդ օրերին Գորկին ասում էր պարզ ու հարազատ խոսքեր, ոգևորում էր ընթերցողներին, կարծես կյանքն էլ դարձնում էր ավելի դյուրական ու սիրելի: Շատ զարմանալի մի երևույթ էր դա: Նույնիսկ հեղափոխական գանգվածներից հեռու կանգնած մարդիկ անիծելով «մարքսիստներին», կարդում ու փառաբանում էին «բոսյակներին» երգչի պատմվածքները: Այդ նոր գրողը երգում էր կյանքը, բնությունը, պայքարը: Առողջ և կենսուրախ մարդու մի հայեցություն էր երևում այդ գրողի երկերում—անսահման համոզում, որ անհրաժեշտ է անխնա պայքար մղել կյանքը աղտոտող և միշտ ողբացող քաղցեհիների դեմ: Գորկին միանգամայն նոր եղանակով նշում և ընդգծում էր, որ կյանքի իսկական հերոսներին անհրաժեշտ է որոնել ժողովրդի շարքերում:

Բանվորական մեծ շարժման ազդանշաններն ակներև էին ու ամենքին հայտնի: Ռուսիայի բազմազան վայրերում, անգամ հեռու քաղաքներում բանվորական գործադուլների ու ցույցերի հետ միասին՝ նոր թափ էր ստանում նաև ուսանողական հեղափոխական շարժումը: Նոր այդ ֆոնի վրա Գորկու պատմվածքները շատ անգամ զօղում էին որպես ուռճացող հեղափոխական նոր հորձանքի ազդանշաններ: Թարմ հովի նման կենդանի տոն էին հաղորդում մեծ գրողի առաջին գործերը: Գորկու այդ առաջին երկերի հերոսներն էլ՝ Չելկաշը, Մալվան, Վարենկա Օլեսովան հաճախ իղեպականացվում էին և համարվում

մի նոր, տակավին անհայտ, բայց դյուրական հեռուների համար մարտնչող հերոսներ: Ընթերցողներին թվում էր, որ նոր այդ հերոսները ի վերջո ընդգծում են ու բացահայտում այն, ինչ որ կարծես աստիճանաբար դառնում էր ակներև:

... Հին կյանքը,— ասում էին այդ հերոսները,— անհանդուրժելի է. այդ հին կյանքի դեմ անհրաժեշտ է կռվի ելնել. առանց պայքարի՝ ուժեղ անձնավորությունը չի կարող ապրել. պայքարն էլ կյանք է... Կային իհարկև ընթերցողներ, որոնք ճիշդ էին անում անարխիստական լույսով մեկնաբանել նշված հերոսների հայեցությունը: Գորկու նախնական երկասիրությունների մեջ նկատելի էին տրադիցիոն ուսական նարոդնիկության մորալիստական տենդենցների դեմ ուղղված որոշ տենդենցները: Այդ պատճառով առանձին քրննադատներին թվում էր, թե Գորկուն կարելի է համարել ուս նիցչեականություն ուրույն ձևով ձայնակցող մոնետիկ: Նույնիսկ մեծարելով Գորկուն, որոշ քննադատներ աղավաղում էին նրա արվեստի իսկական իմաստը և գտնում էին, որ Գորկին սիմվոլիստներին «մոտեցող» և «անաղարտ արվեստի» սկզբբունքները պաշտպանող մի գրող է: Այդպես էր մոտենում Գորկու մեկնաբանությանը հայտնի մենշելի-քննադատ Նեեդոմսկին: Այդպես էին մոտենում նաև լիբերալ և նարոդնիկ որոշ քննադատները:

Սակայն ընթերցողների գերազանց մեծամասնությունը, առանձնապես ժողովրդական շարքերից ելած ընթերցողները շատ ավելի լավ էին հասկանում Գորկու երկերի իրական իմաստը: Դեռ նետելով սիրելի իրենց գրողի երկրորդական թերությունները և առանձին հակասությունները, այդ ընթերցողները տեսնում էին, որ Գորկին դիտավորությամբ անօգնական, խեղճ ու թույլ աշխատավորների փոխարեն ցուցադրում է կյանքից անբավական և կյանքի աշխատակ երևույթները դատափետող իր ըմբոստ հերոսներին: Գորկին իր ընթերցողներին ասում էր՝ չպիտի լինեն խոնարհ մարդիկ, ողբացող «խեղճեր» նույնպես չպիտի լինեն: Կյանքը պայքար է: Հաղթում են ավելի ուժեղ ըմբոստները: Այդպիսի ըմբոստներ էին Գորկու «բոսյակները», որոնք սիրում են կյանքը, բնությունը, պայքարը: Բոսյակների հիմնական թերությունը, նկատում է Գորկին, այն է, որ նրանք չեն կարողանում ճիշտ ուղղություն հաղորդել իրենց եռանդին, կորովին, բողբոխին: Դուք էլ,— ասում էր Գորկին,— ուս ինտելիգենցիայի ներկայացուցիչներին՝ թուլամորթ մարդիկ եք և երբեք չեք կարող դառնալ իսկական հերոսներ: Հին, անիրավ և անհանդուրժելի կյանքի դեմ կռվելու համար անհրաժեշտ է ունենալ արիություն և խիզախություն: Դեմոկրատական առողիտորիայի համար «բոսյակային» շարքի երկերի իմաստը շատ պարզ էր: Այդ երկերի մեջ կային առույգ և խոստուն ակնարկներ այն մասին, որ անհրաժեշտ է ծառանալ իշխողների ու բռնակալների դեմ: Այդ էին նշմարում առաջին հերթին Գորկու պարզ ընթերցողները կյանքից անբավական ժողովրդական կերպարների ուրույն իմաստասիրության մեջ:

Երկու ներհակ դիրքերից ելնելով՝ երկու կատեգորիայի ընթերցողները այդպիսով զանազան դիրքերից էին մոտենում Գորկու շեշտված երկերի մեկնաբանությունը: Այսօր մենք կարող ենք ասել, որ երկրորդ՝ ժողովրդական աուդիտորիայի մոտեցումը և մեկնաբանությունը ավելի ճիշտ էր:

Գորկու սկզբնական երկերի մեջ շատ որոշակի հնչող օպտիմիստական տոնն ինքնին արդեն միանգամայն նոր երանգ էր մտցնում գրականության մեջ: Իզուր չէ նա շատ շուտ հայտնի դառնում որպես «Մրրկահավի» երգիչ: Հիրավի նրա արձակ բանաստեղծությունները՝ «Բազեի երգը», «Մրրկահավի երգը», Գանկոյի մասին կերտված երգը հնչում էին որպես մարտական-հեղափոխական երգեր: Հայտնի է, որ 1905-ի մեծ ժողովրդական հեղափոխության օրերին առանձնապես այդ բանաստեղծությունները հսկայական ազդեցություն են թողել հեղափոխական բախումներին մասնակցող զանգվածների վրա: Շատ անգամ այդ երգերը տպագրվում էին զանազան քաղաքներում և տարածվում որպես անլիզալ պրոկլամացիաներ: Գորկու նշված երգերից հանված առանձին տողերն էլ հաճախ հիշատակվում էին հեղափոխական պրոկլամացիաների մեջ: Խիզախ բազեն դառնում էր ազնվություն և բմբոստություն սիմվոլ: Քննադատության ժամանակ լիբերալները կոչվում էին պինդվիներ: Լենինի հողվածների մեջ նշվում են այդ կերպարները: Ահա թե ինչու լիբերալ ընթերցողներին էլ զայրացնում են հետագա պատմաշրջանում առաջին հերթին Գորկու «նոր» շքադարձի և ուղեգծի շեշտված ցուցանիշները: Բնորոշ է համենայն դեպս մի հանգամանք: Երբ ռեակցիայի տարիներին սկսվում է Գորկու դեմ կանոնավոր նոր «քննադատական» արշավ, Գորկու հեղափոխական երգերի դեմ նետվում են ոչ միայն լիբերալները, այլ նաև բանվորական շարժման բոլոր թշնամիները: Երգերը վաղուց էին կերտվել, բայց երգերի հեղափոխական իմաստը ավելի բացահայտ է դառնում, որքան էլ այդ զարմանալի չէ, միայն հետագա տարիներին:

Պատասխանելով և քննադատելով Գորկու պիեսները, նրա բուրժուական «կրիտիկոսներից» մեկը (ոուս սիմվոլիստների «կշիռներ» ժուռնալում) հայտնի սիմվոլիստ էլլիսը գտնում էր, որ հարելով հեղափոխական ուղեգծին, Գորկին «դավաճանել է արվեստին», — միանգամայն գուր տեղը դարձել է «գեմոկրատիայի» երգիչ և վերջապես նոր աշխատություններով ցածրեցրել է իր տաղանդը: Շատ հետաքրքրական են էլլիսի «տեսական» գատողությունները: Արվեստագետի իսկական ուղին, գրում էր էլլիսը — միայնակությունն է: Դա է նրա մեծագույն պարծանքը և մեծագույն արժանիքը: Արվեստագետի ուղին — ինդիվիդուալիզմն է: Էլլիսի այդ հողվածը ուշադրով է այն տեսակետից, որ շատ պարզորոշ կերպով լուսաբանում է Գորկուն քննադատող բոլոր «տեսաբանների» հայեցության իրական արմատները: Քանի դեռ այդ «քննադատների» համար պարզ չէր Գորկու հասարակական-հեղափոխական ուղեգիծը,

նրա սոցիալական հավատամքը, վերջապես կուսակցական հայեցությունը, դրանց տեսակետով Գորկին կարող էր համարվել տաղանդավոր արվեստագետ: Բայց երբ շատ անսպասելի կերպով հայտնի է դառնում, որ այդ գեղագետը բանվոր դասակարգի գրող է, հեղափոխական աննկուն գործիչ է, բոլշևիկյան հոսանքի ներկայացուցիչ, անմիջապես փոխվում է և վերաբերմունքը: Այժմ արդեն սկսվում է կազմակերպված և կանոնավոր արշավ Գորկու դեմ: Լիբերալներին միանում են նեո-նարոդնիկները, ապա դրանց հետևում են նաև մենշևիկ գործիչները: Գորկին դառնում է «գալիք գոեհիկ»-ների գրող: Ստեղծվում է լեզենդ անխուսափելի մահացման դատապարտված «գալիք գոեհիկ» մասին: Քիչ առաջ հիշատակված մենշևիկ քննադատ նեկոմսկին սպառագինված աղավաղված ու գոեհիկացրած մարքսիզմի զենքերով, մոլեգնորեն նետվում է Գորկու վրա և խարազանում «գողմաների» և «սխեմաների» դերի դարձած գրողին: Անասելի վայնասուն է բարձրանում: Գորկու թշնամիները սկսում են ամեն կերպ շաղակրատել Գորկին մեռավ, կորավ, անհետացավ. այլևս նա գեղագետ չէ, տաղտուկ հրապարակախոս է, գեղարվեստական գրականության համար ոչ մի նշանակություն չունի... Մերեժկովսկին, Գիպպիուսը, էլլիսը, նեկոմսկին և բազմաթիվ ուրիշ քննադատներ տարբեր վարիացիաներով սկսում են երգել միևնույն հանգերգը՝ շանալով մահացու հարված հասցնել մեծ գրողին և միաժամանակ Գորկու դատափետումն էլ դարձնել ռեալիզմի դատափետում... Գորկու հիմնական ուղին սակայն որոշ էր: Իր հեղափոխական արվեստի սուր զենքերով նա կանգնած էր հակաժողովրդական բոլոր տարրերի դեմ: Իր հայտնի պիեսների մեջ նա մթին ու բացասական գույներով էր պատկերում թուլամորթ ինտելիգենցիայի ներկայացուցիչներին: Նա շատ սուր ու շեշտակի հարված է հասցնում ղեկագնեատական պոեզիայի բոլոր մունետիկներին: Նրա հերոսները աուրյա ոուսական իրականության դեմքեր էին: Երբ դրանցից մեկը նվազկոտ տոնով արտասանում է իր ղեկագնեատական բանաստեղծությունը, անսպասելի կերպով «նոր մարդկանց» ներկայացուցիչը ծաղրում ու մերկացնում է այդ գործչին: Գորկու պիեսների ընդհանուր ինտոնացիան — օպտիմիստական է: Հերոսներից մեկը՝ մեքենավար Նիլը («Քաղքենիներ» պիեսում) ռեալական կերպար է և խոսում է կյանքի ու պայքարի մասին:

Գորկու դեմ սկսված արշավը խիստ ուժեղանում է 1905-ին և հետագա տարիներին: Գորկին 1905-ին ակտիվորեն մասնակցում է հեղափոխական շարժումներին: Բոլշևիկյան «Նոր կյանք» լրագրի էջերում 1905-ին լույս են տեսնում առանձնապես թուլամորթ ինտելիգենցիայի դեմ ուղղված նրա հայտնի հողվածները («Գիտողություններ քաղքենիության մասին»), որոնք գրվում են Լենինի առանձնահատուկ ուշադրությունը: Ժամանակին ոուս գրականագետներից մեկի կողմից նշվել է, որ միևնույն 1905-ին էր Գորկին կազմել իր «Մայրը» վեպի ծրագիրը: Վեպի մեջ նկարագրված Զալոմովը, նրա մայրը,

մի շարք ուրիշ տիպարները առնված են իրական կյանքից: Գորկին ուսումնասիրել է բազմաթիվ բանվորների նամակները, ծանոթացել է բանվորական շարժման գործիչների հետ, հսկայական նյութեր է հավաքել և ապա՝ 1906-ին գրել իր վեպը: Հայտնի են այդ գործի արտասահմանյան մի քանի հրատարակություններ: Առաջին անգլերեն հրատարակությունը լույս է տեսել Ամերիկայում (1907): Այդ թարգմանությունից հետո լույս են տեսել նորանոր թարգմանություններ՝ ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն, շվեդերեն և այլ լեզուներով: Ռուսերեն վեպը տպագրվել է հայտնի «Զնանի» հրատարակչության ժողովածուների մեջ և իսկույն գրավել է ցարական ժանդարմների ու գրաքննիչների մեծագույն ուշադրությունը: Գրա համար էլ ուսերեն այդ հրատարակությունը տպագրվել էր աղավաղումներով և կրճատումներով: Ցարական գրաքննիչների պահանջով վեպից հանվել էին մի շարք կարևոր հատվածներ:

«Մայրը» հսկայական տպավորություն է թողնում արևմտյան պրոլետարիատի առաջավոր ներկայացուցիչների վրա: Ռուսիայի ամենահեռու վայրերից բանվոր-ընթերցողները գրում են Գորկուն իրենց տպավորությունները: Բանվորական մամուլի էջերում հրապարակվում են ուշագրավ արձագանքներ: Երբ մեր կուսակցության V համագումարում կենինք տեսնում է Գորկուն, հայտնում է նրան, որ կարգացել է վեպը և այն շատ «աշխատական գիրք» է համարում: Իր հրատարակչության առաջին օրերից արդեն «Մայրը» դառնում է իրական կյանքի վերարտադրության նվիրված գեղարվեստական ստեղծագործության միանգամայն նոր մի վավերագիր:

Փոխվել էր ուսական իրականությունը: Ցրված ըմբոստների փոխարեն մեծ քաղաքներում և գործարանային թաղամասերում երևում էին բանվորների կուռ շարքեր: Գորկու նոր ստեղծագործության մեջ պեղծարարական պրիմաներով նկարագրվում էր նոր շարքերի հերոսական շարժման ուրույն ոտմանտիկան: Զալոմովը, նրա մայրը, ընկերները իրական դեմքեր էին: Վիպագիրը ուսումնասիրել էր շքապատի բոլոր բնորոշ երևույթները և կոնկրետ ֆոնի վրա էլ զծել կենդանի ու գործող մարդկանց դեմքերը: Վեպի հիմնական հերոսը — գիտակից բանվորն էր, այն նոր և ըմբոստ բանվորը, որ կոչ էր անում ժողովրդական զանգվածներին՝ զինվել գիտության սուր զենքերով, կազմակերպվել և միասնական շարքերով կովի ելնել հին աշխարհի դեմ: Այդ նոր հերոսը — մտածող բանվորը՝ այլևս միայնակ չէր զգում իրեն: Դա Կոնովալովի և Չելկաշի նման չէր: Հեռու գործարանային վայրերում, գյուղական դաշտերում և լեռներում: Պիտերի գործարաններից սկսած մինչև Ափշերոնի նավթահանքերը — այդ բանվորը տեսնում էր իր հետ միաձուլված աշխատավորներին: Այդ նոր հերոսը՝ մտածող-բանվորը գիտեր, որ համայն կերպարանի բանվոր ժողովուրդն էլ լինելու է կապիտալիստական նեխված ու խարխուլ կարգերի գերեզմանափորը:

«Միակողմանի» ու «տենդենցիոզ» Գորկու վրա մեծագույն կատաղություն էր հարձակվում են նրա բազմաթիվ թշնամիները: Ինչպես չհարձակվեին, երբ վեպի հերոսները՝ Պավել Զալոմովը և նրա մայրը, ընդհատակյա հեղափոխական շարժման մասնակիցները, հեղափոխական բանվորները հաստատուն ու վճռական կերպով շարժում էին պատմության անիվը...

Իր «Ընկեր» հակիրճ ակնարկում Գորկին գրում է ընկեր-եղբայրների մասին: Նյու-Յորքի մետրոպոլիտենի գնացքում անգամ նա տեսնում է նեպրի հետ միասին քայլող բանվորին և հիշեցնում նորից ու նորից՝ ընկեր խոսքի արտասովոր վեհությունը: Իր իտալական հեքիաթների մեջ նա կապույտ Ադրիատիկայի գունեղ ֆոնի վրա ջերմ տոնով կերտում է իր հեռու հայրենիքի ուս աշխատավորներին հիշեցնող իտալական ձկնորսների կերպարները: Գեղարվեստական իր ստեղծագործությունների, հրապարակախոսական հոդվածների, պատկերավոր ակնարկների մեջ նա անդադար և միշտ աննկուն համառությամբ գրում է, որ բուրժուական աշխարհի նացիոնալիստական փտած բարոյականության դեմ է ուղղված պատմության նոր հեղեմների՝ գիտակից պրոլետարիատի ինտերնացիոնալիզմը:

Երբ Գորկին Ամերիկա էր ուղևորվում, շատերին թվում էր, թե ամենագորտեխնիկայով հարուստ այդ երկրում Գորկին ինքն էլ կալլափոխվի ու կդառնա ամերիկյան քաղաքակրթության ջերմ երկրպագու: Սակայն այս անգամ էլ ջախջախվում են կապիտալիզմի բոլոր սպասավորների ու ջատագովների սպասումները: Գորկին «նոր աշխարհում» ավելի որոշակի է տեսնում դասակարգային հասարակության ներհակությունները և ամերիկյան հայտնի իր ակնարկների մեջ էլ անողոր գույներով է նկարագրում ոսկու տոպրակների վրա բազմած բռնակալների անհատապաշտական մորալը: Լիբերալ և նարոդնիկ ընթերցողներն առանձին թափով են հարձակվում հատկապես մեծ գրողի պատկերավոր և իմաստալից այդ ակնարկների դեմ: Այդ օրերին ամենագետ «բըննադատները» նորից ճիգ են անում հանդես գալ մարգարեների դերում և արձանագրել գեղագետի անխուսափելի «անկման» ցուցանիշները:

Գարձյալ կատարվում է միանգամայն հակառակը: Գորկին գրում է գեղարվեստական նոր ստեղծագործություններ, իր հայտնի «Մանկությունը», ապա օկուրովյան ցիկլի անշափ ուժեղ իր վիպակները: Հետագայում նա ծերության օրերին կերտում է՝ ֆլամանդական նկարիչներին հատուկ ճոխ գույներով «Արտամոնոլները», իսկ մոնոմենտալ այդ գործից հետո ծավալուն «Կլիմ Սամոյլի կյանքը» բազմահատոր վեպը: Այդ բոլոր երկերն էլ մտնում են ուսական գեղարվեստական գրականության ոսկե ֆոնդի մեջ և դառնում համաշխարհային գրականության ցայտուն վավերագրեր: Գորկուն հատուկ պատիվ էր այդ երկերի մեջ հասնում է մեծագույն բարձրության: Գրողը այդտեղ և նկարիչ է, և՛ մտածող: Գրողը մեծատաղանդ այդ գործերի մեջ միա-

ժամանակ հեղափոխական պուրլիցիստ է, որ կոչ է անում զիտել կյանքի զարգացման պրոցեսը:

Ռուսական նախահեղափոխական իրականությունը Գորկու վիպակների մեջ նկարագրվում էր ամենամուռյա գույններով: Պաժան, սոսկալի, սարսափելի առօրյան էր երևում: Լուսավոր ոչ մի շող չէր գծվում: Իր մանկության օրերն անգամ Գորկին նկարագրում էր անեծքով և անսահման տռելություններով: Նա ընթերցողների համար պարզում էր անօրինակ տառապանքի, աշխատավորների, ճնշվածների, թուլերի մղձավանջային կյանքի տխուր տեսարանները: Նկարագրական այդ ֆրագմենտների մեջ չկար անգամ Չեխովի նկարներին հատուկ մեղմ և նվազային կոլորիտը— այն կոլորիտը, որ հաճախ տխրությունն ու վիշտն էլ հարձնում են համեմատաբար ավելի տանելի:

Չնայած այդ ամենին, չնայած ատելության հույզերով լեցուն պատկերներին և մուռյա կոլորիտին, նշված արտագրությունները չէին ստեղծում պեսիմիստական տրամադրություն: Գորկու ընթերցողները երբեք չէին ընկճվում և երբեք չէին ընկնում հուսահատ ապրումների գիրկը:

Կարելի է թառցիկ կերպով կանգ առնել մի համեմատության վրա: Չեխովը, իհարկե, շատ ավելի բարձր գեղագետ էր և շատ ավելի նրբին ստեղծագործող: Չեխովի հայեցությունը սակայն նկատելի չափով տարբերվում էր Գորկու մտայնությունից: Չեխովի «Քեռի վանյա» կամ «Երեք քույրեր» հանձարեղ պիեսները մեղմ տոնով էին նկարագրում անգամ շատ բարդ հոգեկան կոնֆլիկտները: Մեղմ գույներն ու խոսքերն էլ սակայն ստեղծում էին անսահման տխրություն: Կյանքն էլ երևում էր շափաղանց բարդ, կյանքի պրոբլեմներն էլ գրեթե անլուծելի էին թվում, կիթառի նվագն ու հնուտ երաժշտությունը միայն խաբում էին: Նեմիրովիչ-Գանշենկոն իր հուշերի մեջ պատմում է, որ չեխովյան «Օրորի» հանդիսավոր առաջին տրիումֆի ժամանակ հանգիստանները լաց էին լինում...

Գորկու պիեսներն ու վիպակներն, ընդհակառակը, ատելություն էին առաջ բերում հին և անիրավ աշխարհի դեմ: Չի կարող և իրավունք չունի որևէ մեկը ապրել անխռով ու խաղաղ սրտով՝ այդքան անհանդուրժելի միջավայրում— ասում էին Չեխովի ընթերցողները: Նույնը ասում էին նաև Գորկու ընթերցողները, բայց այդ ընթերցողները չէին սահմանափակվում միմիայն անհանդուրժելի իրականության քննադատությամբ:

Անհրաժեշտ է քանդել, ջախջախել, հիմնահատակ անել անիծյալ և անիրավ այդ կարգերը— ավելացնում էին Գորկու ընթերցողները «Մանկության» վերջին էջերն ավարտելուց հետո: Այդպիսի հույզեր էին արթնանում ընթերցողների հոգու խորքերում:

Գորկին ամենուրեք տեսնում էր պայքար և կյանք: Արև, լեռներ, ծով, մրրկաշունչ և զվարթ բնություն— այդ էր նրա սիրած տարրերը: Անսպառ

եռանդով նա երգում էր կյանքի այլանդակությունների դեմ պայքարող ըմբոստ մարդկանց:

Գորկու թե՛ մտայնությունը և թե՛ հոգեբանությունը սերտորեն կապված էին հին աշխարհի դեմ ծառայող նոր ուժերի ներկայացուցիչների կենսահայեցության հետ: Պա շատ ուրույն մի մտածելակերպ էր, որ բավական հարազատ կերպով արտացոլում էր ոտքի ելնող ու կազմակերպվող պրոլետարիատի առույգ ու մարտական կենսազգացումը: Պա ոչ կույր օպտիմիզմ էր և ոչ էլ կյանքի միակողմանի գովերգություն: Ոչ մի այլանդակություն Գորկին չի սքողում: Նա միշտ խուսափում է քաղցրավուն խոսքեր գործածել: Չի սիրում քաղցրավուն մարդկանց: Նա իր «Կլիմ Սամգինի» մեջ կանգ է առնում հասարակական նշանակալից տիպերի բնութագրման վրա: Այդ վեպը հսկայական մի աշխատություն է, իրականում ռուսական ինտելիգենցիայի անցած ուղիների գեղարվեստական պատմության մի փորձ: Կան այդտեղ էջեր, որոնք մեմուարային ակնարկների բնույթ ունեն: Կան ուշադրավ պուրլիցիստական դիտողություններ: Կան վավերագրերի արժեք ունեցող նկարագրական մանրամասներ:

Այդ վեպից առաջ գրված էր «Արտամոնոֆներ» վեպը, որը ավելի կուռ է իր կառուցվածքով և սեղմ իր շարահյուսվածքով: Արտամոնոֆները կարծես Գորդենների այն ժառանգներն են, որոնք հանդես են եկել նոր պատմաշրջանի պայմաններում: Ռուսական ուռճացող բուրժուազիայի նախահայրերն են դրանք՝ նկարագրված իրենց հայրենի միջավայրում: Այս անգամ սակայն նախկին կալվածատերերին հաղթող բուրժուա-կոնդոտիերները նահանջում են նոր ուժի— բանվոր դասակարգի առաջ: Հնչում է նաև հին աշխարհի քայքայման և անկման անխուսափելիությունը ցուցադրող նոր ուժերի շարժման ուրույն արձագանքը: Գորկու ռեալիզմը հենց այդ պատճառով տարբերվում է ռուս մեծ կլասիկների ռեալիզմից: Գորկու ռեալիստական ստեղծագործությունները նոր տոն են հաղորդում կլասիկ գրականության տրագիցիաների շարունակությանը և նոր թափ են հաղորդում ժողովրդայնության սկզբունքների վրա խարսխված արվեստի զարգացմանը: Նա տակավին նախահեղափոխական տարիներին կերտված իր գործերի մեջ ցույց է տալիս լուսավետ ապագայի համար պայքարող «գրական հերոսի» ուղեգիծը: Գորկին առաջին մեծ վիպագիրն է, որ ակտիվորեն արձագանքելով բանվորական շարժման վերելքին՝ դնում է նոր հեղափոխական և սոցիալիստական նոր գրականության հիմնական սյուները:

Գորկու կյանքի և գործի մասին հրապարակվել են գիտական և մատենագրական բազմաթիվ աշխատություններ: Առանձին աշխատությունների հեղինակները ժամանակին կանգ են առել նաև Գորկու հակասական դեղերումների վրա և արձանագրել են մեծ գրողի առանձին սայթաքումները:

Հենվելով ժամանակակից հասարակության ամենաառաջադեմ դասակար-

գի՝ պրոլետարիատի վրա, բանվոր ժողովրդից ստանալով անսպառ ուժ, կամք և տոկուն ոգի, հազեցնելով իր արվեստը հարազատ դասակարգի մարտական իդեալներով, Գորկին կարողանում է ժամանակին հաղթահարել իր սայթաքումները: Բանվոր դասակարգի թշնամիների ուրախությունը երկար չի տևում: Նորից մեծ գրողը ավելի ու ավելի մեծ եռանդով է նետվում ունշյալ ժողովրդի թշնամիների դեմ և նորից զինված մարտական գրչով՝ մահացու հարվածներ է հասցնում իմպերիալիզմի զանազանագույն լակեյներին: Նրա կյանքն էլ, ստեղծագործությունն էլ միշտ ուսանելի կլինեն մեզ համար: Յարական դժոխքի մոռյալույն պայմաններում, յուրացնելով համաշխարհային կուլտուրայի մեծ արժեքները, ուսու բանվոր ժողովրդի մեծ զավակը դառնում է համաշխարհային կուլտուրայի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը: Կարծես մեծ էպոխայի պրոլետարիատի ուժը և տաղանդը զեղարվեստական գրականության բնագավառում բացահայտվում են Գորկու ստեղծագործությունների միջոցով:

Նա ծանոթ էր մեր էպոխայի բոլոր խոշոր և առաջավոր գործիչների հետ: Հետևում էր կուլտուրայի բոլոր նորույթներին: Գրում էր ակնարկներ և հոգվածներ արևելյան ժողովուրդների, հնդիկ հեղափոխականների, չինական ազատագրական շարժումների, սևամորթ աշխատավորների մասին: Գորկին էր իմպերիալիզմի և նացիոնալիզմի դեմ պայքարող առաջավոր մտավորականության ղեկավարն ու պարագլուխը թե՛ քաղաքացիական պատերազմի հերոսական տարիներին և թե՛ հետագա այն շրջանում, երբ կանգնած մեր կուսակցության մեծ հիմնադիր Լենինի կողքին պաշտպանում և հիմնավորում էր ժողովուրդների բարեկամության պատգամների վրա խարսխված հումանիտական բարձր կուլտուրայի արժեքը:

1941

ԿՈՐՆԵՅ ՉՈՒԿՈՎՍԿԻ

(Չուկովսկու 75-ամյակի արթիվ)

Չուկովսկու 75-ամյակի առթիվ լույս են տեսել նրա մի բանի դիմանկարները: Բոլոր այդ դիմանկարների մեջ Չուկովսկուն մենք տեսնում ենք մանուկների կողքին և մանուկների հետ միասին: Եթե մի ուրիշ գրողի նկարեն այդպես, նկարը կերևար անբնական: և գուցե նույնիսկ մի քիչ քաղցրավուն: Սակայն այս անգամ ոչ ոք չի կարող առարկել, որ Չուկովսկին հիրավի իրավունք ունի այդպես հանդես գալ մանուկների կողքին և մանուկների հետ: Գաղտնիք չէ այն, որ ոչ մի գրող ներկայումս այնքան շատ մանուկ-բարեկամներ չունի, ինչքան Չուկովսկին: Երբ լույս տեսան Չուկովսկու առաջին մանկական զրույցները — արտասովոր խոսքերով ու բացականչություններով լեցուն, հակիրճ, մինիատյուր զրբույցները, քիչ չէին գրողին դատափետող ուրբրիստներ և դա-

տախազներ: Անցան տարիներ: Այսօր ոչ մի ուրբրիստ չի կարող այլևս կրկնել իր առարկությունները: Այսօր Չուկովսկին կանգնած է բոլոր մանկական զրույցների հեղինակների առաջին շարքերում, այնքան մեծ է նրան ճանաչող ու սիրող մանկական լսարանը: Ամենից զարմանալին այն է, որ Չուկովսկուն մեծ սիրով են կարդում անգամ վաթսուներկու և յոթանասուներկու շատ լուրջ ընթերցողները: Խորհրդավոր կախարդին հատուկ արտասովոր տաղանդի շնորհիվ Չուկովսկին նույնիսկ լուրջ ընթերցողներին ստիպում է մի ակնթարթ դառնալ մանուկներ ու խորհել-դատել մանուկների նման: Արտասովոր տպավորություն է թողնում մանավանդ նրա յուրահատուկ մի գիրքը՝ մանուկների ջանքերով կերտվող խոսքերի, լեզվի, դատողությունների մասին: Դա իհարկե գիտական հետազոտություն է, թեև գրված է շատ պարզ լեզվով և լեցուն է մանուկների ասույթներով, դատողություններով ու մտորումներով: Չուկովսկին նկարագրում է մանուկների աշխարհը, մանուկների հոգեկան ինքնատիպ հույզերը, նրանց մտքի երանգները, անսպասելի մտահղացումները: «Փոքրիկ լինզիստներ», — այդպես է անվանել Չուկովսկու մանուկներին նրա մասին գրող մի հեղինակ: Հիրավի, իր այդ գրքում Չուկովսկին կարողացել է շատ պարզ ու միաժամանակ շատ ջերմ նկարագրել իր այն փոքրիկ «լինզիստներին», որոնք, վարանելով անգամ, ջանացել են դիտել ու արձանագրել, նույնիսկ կերտել լեզու և իմաստալից «եզրակացություններ»: Նա ամենևին չի սխալվում, երբ կոչ է անում գիտուններին ու գրողներին այսուհետև ավելի մեծ ուշադրությամբ ուսումնասիրել մանուկների ապրումներն ու հույզերը, նրանց մտավոր զարգացման փուլերն ու երանգները: Սակայն մեզ համար այսօր Չուկովսկու մանկական զրույցները և ապա նրա շեշտված գիտական հետազոտությունը հետաքրքիր է այլ կողմից: Մեզ համար այդ ամենը ուշադրալ վավերագրերի բնույթ ունի, վավերագրեր, որոնք հնարավորություն են տալիս նշմարելու և բնութագրելու ամենից առաջ հենց իրեն, արտասովոր այդ կենսուրախ կախարհ-գրողին: Մեզ համար ամենից նշանակալիցը ինքը՝ Չուկովսկին է, որ երևում է բոլոր զրույցների մեջ՝ միշտ կենսատենչ իր հայեցումներով՝ բարի, ազնիվ, առույգ խոսքի վարպետ-գրողը, որ թեև ազդում է իր մանուկ ընթերցողներին խնդալ ու տեսնել շարի պարտությունը և բարու հաղթանակը:

Եվ ահա, ինձ թվում է, որ Չուկովսկու գրականագիտական ուսումնասիրությունների մեկնաբանությունն էլ կարող է լրիվ լինել, եթե մենք առաջին հերթին նկատի առնենք Չուկովսկու հայեցողության մեջ գերիշխող վերահիշյալ հոգեկան հատկանիշները: Ինձ թվում է, որ նույնիսկ գրականագիտական իր հետազոտությունների թեմաների ընտրության և ապա այդ թեմաների արժարժման ժամանակ Չուկովսկին չի կարողացել ու չի կարողանում մնալ սոսկ սառնասիրտ գիտնական-գրականագետի դիրքերում: Նա խոսում է ավելի հա-

Ճախ այն գործիչների մասին, որոնց սիրում է և որոնց նույնիսկ հակասական գեղերումներին ու որոնումներին հետևում է անկեղծ բարեկամի դիրքերից: Ռեպին, Գորկի, Մայակովսկի, Բրյուսով, Կորոլենկո... Ահա նրա սիրելի գործիչները: Նա կանգ է առնում նաև այն գրողների վրա, որոնց արտասովոր ձևաարկները կամ պատգամները հնարավորություն են տալիս մոտենալ հոգեկան բարդ կոնֆլիկտների մեկնաբանության: Չուկովսկին երբեմն տարվելով, այնքան հեռու է գնում, որ մեծարում է իր սիրելի գեղագետներին: Ամենին պատահական չի կարելի համարել Չուկովսկու այնքան արտասովոր ակնածանքը ուսումնասիրական արվեստի մեծագույն վարպետներից մեկի՝ Ռեպինի նկատմամբ: Նա Ռեպինին նկարագրում է շատ ուրույն ձևով: Ռեպինը նրա համար ոչ միայն տաղանդավոր նկարիչ է և մեծ գեղագետ: Նա գծագրոված է որպես մտածող և ըմբոստ մտորումներով տարված գեղագետ: Ռեպինի հակասական գեղերումները բնավ չի ծածկում կամ քողարկում: Նա նույնիսկ նշում է, որ պատերազմի տարիներին, առաջին շրջանում Ռեպինը տարվել է լիբերալ լոգոնգներով: Սակայն, միաժամանակ, Չուկովսկին արձանագրում է մի ուրիշ շատ ավելի կարևոր հանգամանք՝ նկատի առնելով Ռեպինի ընդհանուր հայեցողության ամենահիմնական հատկանիշները՝ արտասովոր սերը աշխատավորների նկատմամբ, ուրույն դեմոկրատիզմը, առաջադիմական մտորումները: Շեշտելով առանձնապես երիտասարդական տարիներին ստեղծված հեղափոխական դեմոկրատական մտորումների ազդեցությունը, Չուկովսկին գտնում է, որ երիտասարդ օրերին հատուկ «ստասովյան» գիծը եղել է շատ ուժեղ ռեպինյան մտայնության մեջ: Չուկովսկին նշում է կարևոր փաստեր: Երբ մի հեղափոխական գործիչ 1913-ին փախչում է, Ռեպինը օգնում է այդ փախստական հեղափոխականին: Իր հուշատետրում Ռեպինը գրում է ցասումնալից տողեր ցար Նիկոլայի դեմ: Երբ սեպտեմբեր արշավ է սկսվում Տուլատոյի դեմ, Ռեպինը զայրույթով դատափետում է սեպտեմբերի ջահակիրներին: Նկարիչը, ինչպես Չուկովսկին է նշում, նույնիսկ մի այլաբանական նկար է գծագրում և ընդգծում իր համոզումը, որ պատերազմը պիտի ավարտվի Գերմանիայում բանվոր դասակարգի հաղթանակով... (էջ 77—80): Չուկովսկին գրում է, որ այդ նկարը գտնվում է իր մոտ:

Ներկայումս հայտնի են մեզ Ռեպինի հայտնի և մեծ թափով կերտված մեմուարները: Մենք պետք է նշենք, որ Չուկովսկու դիտողությունները և հուշերի բնույթ կրող ակնարկները չեն կարող երբևէ անուշադրության մատնվել հենց նրա համար, որ այդ դիտողությունները նպաստում են մեծ ռեալիստ-նկարչի ոչ միայն արվեստի, այլ նաև բազմերանգ հայեցողության ճշգրիտ լուսաբանությանը:

Չուկովսկին առաջիններից մեկն է եղել գրականագետների շարքերում, որ մեծագույն թափ է հաղորդել 60-ական թվականների ուսումնասիրությանը:

Նի գործունեության կարևորագույն երանգների ուսումնասիրությանը: Նա է, ի միջի այլոց, առանձնապես շեշտել 60-ական թվականների ուսումնասիրությանը ամենաուշագրավ դեմքերից մեկի՝ Ավդոտյա Պանակայի կյանքի և գործունեության կարևոր դերը: Պանական, ինչպես հայտնի է, եղել է ակտիվ գրող: Նա ժամանակին զաղափարական սերտ կապերով կապված էր Բելինսկու, Գորբուլյուբովի, Չերնիշևսկու, Նեկրասովի հետ: Չուկովսկին շատ ջանք տողերով է բնութագրել Պանակային: Պանակայի հայտնի մեմուարների հրատարակությանը կցված նրա հակիրճ բնութագրական ակնարկը փաստերով և դիպուկ դիտողություններով լեցուն, գրեթե ամբողջական մի հետազոտություն է: Այդտեղ կան սուր դիտողություններ Պանակայի մեմուարների ձեռագիր տեքստի (որը մեզ չի հասել), Պանակայի և Նեկրասովի հարաբերությունների, Նեկրասովյան անշափ ինտիմ տողերի և վերջապես Պանակայի ուրույն հայեցողության մասին: Այդ հակիրճ ու փաստալից գիտական էքսկուրսի մեջ Չուկովսկին նշում է միջավայրի ու շրջապատի առանձին կարևորությունը:

Անհրաժեշտ է նշել, որ անգամ նախահեղափոխական օրերին ձեռնարկված իր որոշ աշխատությունների մեջ Չուկովսկին նկատի է առել նշված մոմենտը: Բավական է միայն հիշատակել թեկուզ հենց Օսկար Ուայլդի երկերի ուսերեն հին հրատարակությանը կցված կենսագրական ակնարկը: Այդտեղ Չուկովսկին, ջանալով բնութագրել Ուայլդի շատ ուրույն էթիկական մտորումները, նշում է այն ազդեցությունը, որ թողել է Ուայլդի վրա ֆարիսեական-ուստափական գաղափարներով տարված նրա մայրը: Ուայլդի մայրը ժամանակին տարված է եղել ֆարիսեական սոցիալիզմի ուրույն հովերով: Եվ երբ այդ հանգամանքը հաշվի առնելով մենք անցնում ենք Ուայլդի հանրահայտ հերթաթերթի քննարկմանը, հիրավի նշմարում ենք այն հատկանիշները, որոնք նշվել են Չուկովսկու կողմից:

Հանգամանորեն ուսումնասիրելով յուրաքանչյուր գրողի երկերը և հետեւելով նրա բոլոր որոնումներին ու մտավոր էվոլյուցիային, Չուկովսկին հենվում է ռեալական փաստերի վրա և երբեք չի նետվում անհիմն ենթադրությունների դիրքը: Շատ ուշագրավ կարելի է համարել այդ կողմից անգամ գեղարվեստական երկերի թարգմանության մասին գրած նրա հայտնի «Բարձր արվեստ» գիրքը: Այդտեղ Չուկովսկին թարգմանիչներին կոչ է անում ամենից առաջ ուսումնասիրել գրողի կյանքն ու հայեցողությունը, նկատի առնել գրողի արվեստի ինքնատիպ հատկանիշները, թարգմանության ժամանակ ճշտորեն արտահայտել գրողի գեղարվեստական արվեստի կարևորագույն կողմերը: Անհրաժեշտ է նշել, որ Չուկովսկին տակավին նախահեղափոխական տարիներին իր այդ աշխատանքի մի շարք մոմենտները արժարժել է առանձնապես ամերիկյան հայտնի բանաստեղծ Ուոտ Ուիտմենի այն թարգմանությունների առիթով, որ ձեռնարկել էր ժամանակին ակնաւոր փիլիսոփայական Բայլ-

մոտոր: Հետագայում շահամանափակվելով Բայլմոնտի աշխատանքի կտրուկ ու միանգամայն հիմնավորված թարգմանություն, Չուկովսկին անհրաժեշտ է համարել տպագրության հանձնել իր սեփական թարգմանությունը և ապա հրատարակել կարևոր արժեք ներկայացնող իր մենագրական ուսումնասիրությունը՝ Ուիտմենի կյանքի և գործունեության մասին: Այսօր արդեն հաստատված է, որ Չուկովսկու ջանքերով կատարված այդ թարգմանությունը եզակի մի գործ է՝ ամեն կողմից ուսանելի բոլոր թարգմանիչների համար:

Չուկովսկու բոլոր գործերի մեջ առաջնակարգ նշանակություն ունեն առանձնապես նրա քննադատական ակնարկները և ուսումնասիրական էքսպոզիցիաները նեկրասովի մասին: Նա, ով երջանիկ պատեհություն է ունեցել կարգալ այդ աշխատությունները և ուշադրությամբ հետևել զանազան ժամանակ գրված հետազոտությունների և էտյուդների մեջ արժարժվող մտորումներին, անշուշտ, առանձին ուսումնասիրությունների մեջ նկատել է նաև ժամանակի կնիքը: Չուկովսկին ինքը որոշ փոփոխություններ և ուղղումներ է մտցրել իր վաղնախնային էսսեների և մտորումների մեջ և ինքն առաջին հերթին շտկել իր հնօրյա պնդումներն ու գրույթները: Նոր նյութերի հայտնաբերումը, ձեռագիր սեքստերի նոր վարիանտները, սովետական բանասերների նորանոր դիտողությունները, անգամ երիտասարդ նեկրասովագետ-տեքստաբանների դիտողությունները, ամեն ինչ նա քննարկել է և հաշվի առել, միաժամանակ ջանալով միշտ հենվել իսկական աղբյուրների՝ ժողովրդական մեծ պոետի հարուստ ժառանգության ձեռագիր տեքստերի, սեպեր վարիանտների, նամակների, անգամ փոքրիկ պատառիկների ամենամանրակրկիտ ուսումնասիրության վրա: Կարելի է այսօր վստահորեն ասել, որ ոչ մի գրող չի ունեցել տակավին այնպիսի մի ուսումնասիրող, որպիսին է նեկրասովագետ Չուկովսկին: Հայտնի է, որ Չուկովսկու ջանքերով ձեռնարկված նեկրասովյան բանաստեղծությունների նույնիսկ առաջին հրատարակությունը ժամանակին գրավել է կենսի առանձնահատուկ ուշադրությունը: Ողջ խնդիրը նրանումն է, որ Չուկովսկուց առաջ հրատարակված նեկրասովյան բանաստեղծությունները դիտավորությամբ աղավաղվել են, կտրատվել, կաստրացիայի ենթարկվել՝ մեծ պոետի բազմազան թշնամիների ջանքերով: Ձեռնարկելով նեկրասովյան բանաստեղծությունների հրատարակության գործը, Չուկովսկին ամենից առաջ ուսումնասիրել է բոլոր հին նախնական տպագրությունները: Այդ աշխատանքից հետո նա անցել է բոլոր ձեռագիր տարբերակների քննարկմանը, նեկրասովյան նամակների և ասույթների ուսումնասիրությանը, մեծ պոետի ժամանակակիցների հետազոտությանը: Չուկովսկին հաշվի է առել նաև ուս նեկրասովագետների դիտողությունները անգամ այն պարագաներին, երբ այդ բանասերների առանձին հայացքներին ինքը չի ցանկացել ձայնակցել: Ներկայումս մենք ունենք արդեն նեկրասովի երկերի տասներկու սովորածավալ

և սկզբից մինչև վերջ բովանդակալից հատորները: Ակադեմիական հրատարակություն չլինելով հանդերձ, մոնումենտալ այդ գործը եզակի արժեք ունեցող մի աշխատություն է, որ, իհարկե, պետք է ուսումնասիրվի մեծագույն ուշադրությամբ: Այդ հատորների տեքստերին կցված են հանգամանալից կոմենտարներ, որոնք հաճախ ուսումնասիրական պրպտումների բնույթ են կրում և նոր լույս են սփռում միջին խնդիրների վրա: Ծանոթությունների մեջ նշվում են բոլոր ուշադրավ վարիանտները: Տպագրելով նեկրասովյան արձակ երկերը և նրա քննադատական հոդվածներն ու մատենագրական ակնարկները, հատորների խմբագիրները հրահանգում են ընթերցողներին՝ պոետի բանաստեղծությունների հետազոտությունը ամենասերտ կերպով շաղկապել պոետի ամբողջական ժառանգության ուսումնասիրության հետ:

Այդ ամենից հետո զարմանալի չէ, որ նեկրասովի երկերի հրատարակությունից հետո Չուկովսկին պետք է ձեռնարկեր իր եզակի արժեք ներկայացնող մենագրական այն աշխատությանը, որ այսօր էլ իր կառուցվածքով և բովանդակությամբ աչքի է ընկնում նորագույն սովետական գրականագիտական աշխատությունների մեջ: Ինչպես միշտ, այս անգամ էլ Չուկովսկին ոչ մի անգամ չի ցիտում անվանի գործիչների երկերից որևէ ասույթներ, ոչ մի տեղ չի ավտում իր սկզբունքները, ոչ մի տեղ խոսք չի ասում այն մասին, որ գրական-գաղափարական հոսանքներին կամ գործիչներին ինքը մոտենում է մատերիալիստական պատմահայեցողության դիրքերից: Սակայն և այնպես, ամենապահանջկոտ ընթերցողի համար էլ պարզ է, որ Չուկովսկու «նեկրասովի վարպետությունը» մոնումենտալ հետազոտությունը խարսխված է հիմնականում մատերիալիստական մարքս-լենինյան գրականագիտության սկզբունքների վրա:

Չի սխալվում Չուկովսկին, երբ բարձր գնահատելով Պլեխանովի գրականագիտական վստակը, թերի ու անկատար է համարում Պլեխանովի հայտնի էտյուդը նեկրասովի մասին: Չի սխալվում նա նաև այն պարագային, երբ քննադատելով Պլեխանովի անճիշտ մոտեցումը, գտնում է ակներև սխալներ նաև մի շարք ուրիշ նեկրասովագետների աշխատությունների մեջ: Գաղտնիք չէ այն, որ անցյալում, անգամ նեկրասովի երկրպագուներից շատ-շատերը, բարձր գնահատելով նրա խոսքի ուժը, գաղափարախոսությունը, ժողովրդայնությունը, ակներև կերպով թերագնահատել են պոետի գեղարվեստական մեծ վարպետությունը, տաղանդը, գեղադիտական արժեքը: Չուկովսկին չի սխալվում նաև այն դեպքում, երբ քննադատում է պոետի մարտական և հեղափոխական մոտիվների նշանակությունը թերագնահատող բանասերների միակողմանի մոտեցումը նեկրասովի պոեզիային: Ամենից զխաղտրը վերջապես այն է, որ Չուկովսկին իրեն հատուկ եզակի տաղանդով բացահայտում է պոետի հեղափոխական արվեստի արտասովոր միասնությունը, նրա խոսքի ու ար-

վեստի կամ նրա բանաստեղծությունների «բովանդակության» և «ֆորմայի» կամ ձևի միասնությունը: Չուկոլսկին հաստատում է կոնկրետ կերպով, թե որքան մեծ աշխատանք է տարել պոետը իր միտքը ավելի հստակ ու կտրուկ արտահայտելու համար, թե որքան մեծ ուշադրություն է նվիրել իր երգերի ինտոնացիայի, առանձին խոսքերի ու էպիտետների ընտրության, վերջապես իր խոսքի ազդեցությունն ավելի ուժեղացնելու համար՝ երգերի նվագայնությունը: Չուկոլսկին կանգ է առնում բազմաթիվ պատկերավոր ֆրազաների վրա, երբեմն հիշատակում նաև ուրիշ պոետների երգերից քաղված առանձին հատվածներ, նեկրասովյան երգերը համեմատում ուրիշ պոետների երգերի հետ: Ոչ մի տեղ և երբեք Չուկոլսկին չի նշում այս կամ այն պոետի դասակարգային էությունը կամ կապը որոշ դասակարգի հետ: Նա խոսք չի ասում դասակարգային շահերի կամ պայքարի մասին: Սակայն և այնպես, ընթերցողը շատ պարզորոշ տեսնում է, որ Չուկոլսկու աշխատության նշված հատվածները հաստատում են որոշ բանաստեղծների մոտեցման մեջ դասակարգային մտայնության առկայությունը:

Չուկոլսկին խոսք չի ասում 60-ական թվականների գյուղացիական բռնկումների, ապստամբության ազդեցության մասին: Բայց ընթերցողը նեկրասովյան երգերի մեջ նորից նշմարում է գյուղացիական ապստամբությունների ակներև կնիքը: Նույնիսկ նեկրասովի արվեստի հնօրյա այնպիսի երկեր-պագուն, որպիսին էր Ստասովը, չէր կարողացել որոշակի կերպով նշմարել և ընդգծել նեկրասովյան պոեզիայի հեղափոխական շեշտը և ինտոնացիան: Չուկոլսկու աշխատության մեջ այդ շեշտը ընդգծված է ավելի քան որոշակի: Այդ մոտեցումը բացատրվում է ոչ միայն նրանով, որ նեկրասովյան հարուստ ժառանգության ձեռագիր վավերագրերը հայտնաբերվել են միայն Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո: Այդ նոր ձեռագիր նյութերի ուսումնասիրությունը, անկասկած, մեծագույն շահով օգնել է և՛ Չուկոլսկուն, և՛ սովետական շատ ուրիշ բանասերներին: Սակայն անհերքելի է նաև այն, որ Չուկոլսկուն, ինչպես նաև սովետական բոլոր առաջավոր բանասերներին, հրահրել է նոր տիրակառույց մոտենալ նեկրասովի կյանքին և գործին, ամենից առաջ Հոկտեմբերյան մեծ հեղափոխության շնորհիվ ազատագրված սովետական ժողովուրդը՝ խաղաղության, աշխատանքի, մարդկայնության, հումանիտական բարձր պատգամների վսեմ գրողի ներքո միշտ առաջ նետվող այն ժողովուրդը, որը նոր պահանջներ է առաջադրել նաև գրականագիտությանը: Այսօր ջերմորեն ողջունելով Չուկոլսկու յոթանասունհինգամյակը, մենք օրինական հպարտության զգացումով ենք նշում ակներև այն փաստը, որ Չուկոլսկու բոլոր աշխատությունների մեջ հնչում է կյանքի երգը և առույգ ինտոնացիան, այն ամենը, ինչ որ այսօր կազմում է Սովետական Միության և գեմոկրատական երկրների եղբայրական ժողովուրդների հոգեբանության ամե-

նարնորոշ հատկանիշը: Միևնույն շեշտը առանձին ուժով եշմարվում է Չուկոլսկու բոլոր մանկական գրույցների մեջ, որոնք իհարկե տարբերվում են մանուկներին նվիրված այն էջերից, որ ժամանակին կերտել են Դիկկենսը իր «Ուլիկեր Տվիտի» կամ «Մարտին Չեզվիտի» մեջ, Գոստոնսկին, Չեխովը, Գորկին և ուրիշ գրողները հին աշխարհի դժբախտ մանուկներին նվիրված իրենց տողերի մեջ, հայ կլասիկ գրողների՝ Ղազարոս Աղայանի և Հովհաննես Թումանյանի այն երկերը, որոնք նկարագրում են մանուկներին: Միևնույն առույգ զգացումով է համակված նաև Չուկոլսկու վերջին գրականագիտական աշխատությունը՝ մեծ թափով կերտված Չեխովի ռեալիստական դիմանկարը: Ավելորդ կլիներ նշել, որ մեզ համար թանկ են ոչ միայն Չուկոլսկու մեթոդոլոգիական ուսանելի սկզբունքները և անշափ արժեքավոր աշխատությունները, այլ նաև նրա երկերի մեջ զրսևորվող կենսատենչ տրամադրությունը և հայեցությունը...

Մ Ի Խ Ա Յ Ի Լ Շ Ո Լ Ո Ս Ո Վ

Սովետական ականավոր վիպագիր Միխայիլ Ալեքսանդրովիչ Շոլոխովը ծնվել է 1905 թվականին Դոնի մարզի կաղակային մի ավանում (ստանիցա), դասախարակվել է իր հայրենակից կազակների միջավայրում և հարազատ ժողովրդի աշխատավոր խավերի հետ կապվել տակավին վաղ պատանեկության տարիներից:

Նա ծանր օրեր շատ է տեսել հայրենի իրականության մեջ: Շփվել է բանավոր ժողովրդի հետ, պայքար է մղել հնօրյա կարգերի և բռնակալների դեմ, ակտիվ կերպով մասնակցել է քաղաքացիական պատերազմի հերոսական մարտերին և Հոկտեմբերյան մեծ հեղափոխության անմիջական ազդեցության ներքո կազմակերպվել որպես հեղափոխական գրող ու տաղանդավոր վիպագիր:

Շոլոխովը սկսել է գրել 1923 թվականին և իր առաջին գրվածքների մեջ արդեն որոշակի կերպով հանդես է եկել որպես ռեալիստ գրող: Ժամանակին նա աշխատակցել է կոմերիտական թերթերին, հրապարակել է գրական ակնարկներ և պատմվածքներ, արձագանքել է անդադար փոփոխվող իրականության հրատապ պրոբլեմներին: Առաջին այդ ակնարկների և պատմվածքների մեջ երիտասարդ գրողը նկարագրում է աշխատավորների վիճակն ու կյանքը, անցյալի ներկայացուցիչներին, ժողովրդի ազատագրության համար մարտնչող նոր գործիչներին: Տակավին սկսնակ և անփորձ գրողի նախնական այդ երկերի մեջ նշմարվում են հասարակական առօրյա բարդ ելևէջները, մեծագույն ուշադրությամբ ուսումնասիրող ռեալիստ նկարչի դիմաստվերը:

Իր հասուն գործերի մեջ Շոլոխովը հանդես է գալիս որպես հայրենի ուսու

գրականության հումանիտական բարձր պատգամների աննկուն հետևող։ Սակայն արձագանքելով Մաքսիմ Գորկուն և ակտիվ կերպով նպաստելով ռուս սովետական գրողների շարքերում սկսված կենդանի բեկմանը, նա իրեն հատուկ տաղանդով կիրառում է սոցիալիստական ռեալիզմի մեթոդը և աննախընթաց թափ հաղորդում սովետական գրականության վերելքին։ Երբեք չաբողելով կյանքի հակասական երանգները, անաչառ գույներով նկարագրելով կենդանի մարդկանց, Շոլոխովը նույնիսկ հասարակական ամենաբարդ երեվոյթների մասին արած իր դատողությունների մեջ հանդես է գալիս որպես դաժան անցյալի մնացուկների դեմ մարտնչող և լուսավոր ապագայի համար պայքարող երգիչ։ Այդ իմաստն ունեն նրա հանրահայտ «Խաղաղ Դոն» և «Հերկած խոպան» մեծատաղանդ վեպերը։

Շոլոխովի «Խաղաղ Դոն» մեծածավալ վեպի մեջ տխուր էջեր շատ կան։ Արտասովոր թափով կերտված լայնածավալ մի կտավ է դա՝ լեցուն կենդանի իրականության ցայտուն էջերի, հատկանշական սուր կոնֆլիկտի, իրական գեմբերի գունագեղ նկարներով։ Վեպի առաջին հատորը լույս է տեսել, ինչպես հայտնի է, 1928 թվականին։ Հետագա տարիներին (1929, 1933, 1940) հրատարակվեցին մնացած հատորները։

Գլխավոր հերոսները կազակներն են։ Նկարագրված դեպքերն էլ կատարվում են մեծ մասամբ Դոնի մարզի կազակների ինքնատիպ միջավայրում։ Ռուսական հին ժողովրդական երգերի մեջ Դոն գետը սովորաբար նշվում է որպես մայր Վոլգա գետի կրտսեր եղբայր, որպես «Խաղաղ Դոն»։ Ինքը՝ Շոլոխովը, իր վեպի մի հատորին կցելով Դոնի մասին կերտված երգի մի հատվածը, ընդգծում է հայրենի ժողովրդի այդ ինտիմ վերաբերմունքը և միաժամանակ հատկանշական բնաբանի վերջին տողերն էլ դարձնում է վեպի իմաստը բացահայտող նշանաբան։ Ռուս ժողովրդին Դոն գետը և Դոնի մարզը հայտնի էին նաև որպես Դոնի աշխատավորների հեղափոխական բռնկումների և առանձնապես հնօրյա գյուղացիական ապստամբությունների թատերավայր։

Շոլոխովի Դոնը ամենևին «խաղաղ» չէ։ Վեպում սկզբից մինչև վերջ նկարագրվում են մրրկալից օրեր և մրրկահույզ դեպքեր։ Լայնատարած գեղեցիկ դաշտերի նկարներն անգամ գծագրված են վեպի առանձին հատվածների բովանդակությանը հատուկ տոնով։ Առաջին հատորի մեջ կան մեղմ կոնտուրներ ունեցող հատվածներ։ Ռուս հայտնի նկարիչ Կրավչենկոն նկատել է այդ ինքնատիպ բնանկարի երանգը և շատ լավ է ցուցահանել իր փոքրածավալ նկարի մեջ։ Վեպի մնացած հատորների մեջ այդ մեղմ կոլորիտը գրեթե չկա և եթե նույնիսկ թեթևակի նշմարվում է, այդ էլ արվում է բնության «ներդաշնակությունը» խախտող մարդկանց բախումների բնութագրման համար։ Վեպի երրորդ հատորի մեջ Շոլոխովը նկարագրում է ապստամբությունը և ապրա-

տամբների ուրույն զգացումները։ Շատ անակնկալ կերպով նա կարում է իր պատմության թելը և ինտիմ զգացումով կերտում հետևյալ բնանկարը. «...Իսկ այն տարվա դարունը շողշողում էր շտեսնված պերճանքներով։ Ապրիլին օրերը սպառվ էին, ասես ապակիացած, եղանակը հիանալի էր։ Երկնքի անհաս, կապույտ անհունում ճախրում, դեպի հյուսիս էին սլանում վայրի սագերի, պղնձաձաձայն կունկների երամները՝ անցնելով ամպերից։ Տափաստանի զալկականաչ ծածկույթի վրա, լճակների կողքին շաղ տված մարգարտի նման կալկրլտում էին քջուջ անելու համար նստած կարապները։ Դոնի կողքին գետառները հնծկտում էին թռչունների կոնչյունից ու աղմուկից... անպատմելի հրապույրով էր լցվել տափաստանը, որը մի քիչ կանաչել էր, պարուրվել ձյունից ազատված սևահողի հնարարյան ու մատղաշ խոտաբույսերի հավերժորեն թարմ բուրմունքով...»։

Այդ նույն՝ երրորդ հատորի մեջ Շոլոխովը նկարագրում է առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը և ապա՝ կրկին ջանալով ընդգծել կյանքի գեղեցկությունը աղարտող աններդաշնակ «գամմայի» էությունը, նորից կերտում է մի բնանկար.

«...Ձյունն իջնում էր և տեղն ու տեղը հալչում։ Կեսօրին զառթթափերից խուլ աղմուկով թափվում էին ձյան նստվածքները։ Դոնի մյուս կողմում աղմրկում էր անտառը։ Կաղնիների բները հալչում էին, սևանում։ Ծյուղերից պոկվում էին կաթիլները, ձյունը ծակում մինչև գետինը, որը տաքացել էր թափված տերևների փտող ծածկոցի տակ։ Արդեն զգացվում էր դարձան ձնհալի արբեցուցիչ բույրը, այգիներում բուրում էին բալենիները»։

Այդպես են շոլոխովյան այն բնանկարները, որոնք կարծես դիտավորյալ մոտեցող մահվան հետ կապված տխուր էջերին հակադրում են դարձան կենսատենչ նկարները։ Առանձնապես առաջին հատորի մեջ, պետք է ասել, այդբրինակ նկարները միանգամայն այլ բնույթ ունեն և շատ ավելի գունագեղ են անմիջական՝ հենց նրա համար, որ նվիրված են միմիայն բնությանը...

Անդրադառնալով պատերազմի հետ կապված դեպքերին, Շոլոխովը դառնում է ավելի մտախոհ ու զուսպ։ Այլևս չի կարողանում վաղեմի օրերին հատուկ տրամադրությամբ դիտել շրջապատը, բնանկարները, գեղեցիկ տեսարանները։ Նա չի էլ կամենում նկատել գետերի կամ դաշտերի ուրույն գեղեցկությունը։ Տեսնում է միայն մարդկանց և լսում միայն միմյանց վրա նետվող ուղմիկների վանչերը։ Շատ ազդու են առանձնապես կազակների հետպատերազմյան ապրումների բնութագրմանը նվիրված տխուր տողերը։

«...հորձիթները, ուր կազակները վերադարձան իբրև տերեր կամ սպասված հյուրեր, լցվեցին բերկրանքով։ Հենց այդ բերկրունքն էլ ավելի կտրուկ, ավելի անագորույն կերպով էր ընդգծում այն մարդկանց խուլ, անանց վիշտը, ովքեր առմիշտ կորցրել էին հարազատներին և մերձավորներին... չէին վերա-

դարձել շատ կազակներ, — ընկել էին Գալիցիայի, Բուկովինայի, Արևելյան Պրուսիայի, Մերձկարպատյան, Ռումինիայի դաշտերում, նրանց դիակներն ընկել ու փտել էին հրանոթային հոգեհանգստի ներքո, և հիմա մուխտտերով էին ծածկվել այդ եղբայրական շիրիմների բարձր թմբերը. դրանք նստել էին անձրևներից, ծածկվել փխրուն ձյունով...»:

Այդտեղ էլ կա, իհարկե, բնանկար, բայց այս անգամ բնանկարը հարմարեցվել է զոհված կազակների մերձավորների անսահման վիշտն ու տրտմանը բնութագրող տողերի իմաստին և կոլորիտին: Վեպի նման հատվածների մեջ Շոլոխովի ինքնատիպ ոճը մի ակնթարթ կարծես ստանում է գոգոլյան նկարագրական հանճարեղ տողերին հատուկ հույզով լեցուն մի ինտոնացիա: Այդպիսի սպավորություն են թողնում առանձնապես այն տողերը, որոնք նվիրված են մայրերի անսահման վշտի բնութագրմանը:

«...Մայրը դառն, ժլատ արցունք էր թափում, հոտ էր քաշում, բայց որդու բրտինքի հոտը միայն վերջին շապկից էր առնում, որ բերել էր Միշկա Կոշևոյը, ու գլուխը դնելով այդ շապկին, օրորվում է պառավը, աղիողորմ հեծկլրտում, դրոշմված, կեղտոտ բյազե շապիկը նախշում արցունքներով...»:

Շոլոխովի վեպի մեջ կան շատ հատվածներ, որոնք կարող են տաղանդավոր նկարչին մոտիվներ և սյուժեներ մատուցել թե՛ իլյուստրացիաների և թե՛ նույնիսկ մեծ կտավների համար: Սակայն ոչ մի նկարիչ չի կարող այնքան ճշմարտացի նկարել այդ հիրավի ծանր տեսարանը, որ կերտել է տաղանդավոր վիպագիրը հմտորեն ընտրված բառերի, խոսքի ուժով:

Պատերազմից հետո երկրի տարբեր վայրերում բռնկվում են հեղափոխական շարժումներ: Հեղափոխական մեծ հորձանքը դառնում է «խաղաղ» դաշտերի բնակիչներին շարժող ու արթնացնող զորավորագույն ազդակ: Այս անգամ մերկիվը լինում է շատ հզոր և հսկայական ազդեցություն է թողնում ժողովրդական ամենալայն զանգվածների վրա: Յնցվում ու ոտքի են ելնում կազակային հասարակության բոլոր շերտերն ու խմբավորումները: Սոցիալական վերնախավի ներկայացուցիչները՝ ունևորներն ու զոռբանները, իրենց դիրքը որոշում են հենց առաջին օրերին, առանց տատանումների, անվերապահորեն ձայնակցելով սեփականին և բացարձակ կովի ելնելով հեղափոխական շարժման դեմ: Աշխատավոր կազակները հակառակ ուղեգիծն են բռնում: Այդ կազակները իրենց սկզբնական «կրթությունը» ստանում են ուղեմի դաշտում և ապա՝ հեղափոխության առաջին օրերին բռնկած մարտերի ժամանակ՝ ազատագրական պայքար մղող ժողովրդական մասսաների շարքերում:

«Խաղաղ Դոն»-ի հիմնական հերոսը կազակների ստանիցայի աշխատավոր շերտերից մեկի ներկայացուցիչն է: Այդ հերոսի կողքին մենք տեսնում ենք զանազան շերտերի ու խմբավորումների տարբեր ներկայացուցիչներին:

Շոլոխովը նկարագրում է ուղեմական առանձին դեպքերը, ցարական

սպաներին, շարքային կազակներին և զինվորներին, հակահեղափոխության դեկավարներին, ապստամբ ուս ժողովրդի հեղափոխական ավանգարդի՝ բուշևիկյան կուսակցության ներկայացուցիչներին: Արդեն ասացինք, որ վեպի հիմնական հերոսը Գրիգորի Մելեխովն է: Անհրաժեշտ է միայն մի ճշտում մտցնել: Ավելի ճիշտ կլիներ ասել, որ վեպի մեջ իրականում հիմնական հերոսը ժողովրդական կուլեկտիվն է՝ ժողովրդական մասսան: Դա է հենց այն գլխավոր իրական ֆոնը, որի վրա Շոլոխովը նկարագրել է Գրիգորի Մելեխովի կյանքի ազդու պատմությունը: Շոլոխովի էպոպեի մեջ զծագրված են մի շարք կենդանի դեմքեր՝ իրենց սոցիալական ծագման կամ պրոֆեսիային հատուկ հատկանիշներով: Այդպիսիք են ցարական զենեքալները և առամանները, դեպքերի ազդեցությունից շժամ կազակները, տատանվող կամ վաղեմի ապրումներով ծանրաբեռնված շարքային մարտիկները: Բազմաթիվ հյուսիսային պրոտերներ մի մեծ պատկերասրահ է շոլոխովյան վեպը: Նրա բոլոր պրոտերները գեղարվեստական յուրահատուկ տիպարներ լինելով հանդերձ՝ պատմական վավերագրերի նման բնութագրում են հերոսական օրերի ամենաբնորոշ էջերը:

Շատ ուշագրավ են, ի միջի այլոց, երկաթուղային կայարանում խմբված էշելոնների շարքային մարտիկների դիմաստվերները: Յրված ու խոնված երկաթուղային վագոններում, շժամ անակնկալ դեպքերի ու հակասական լուրերի ազդեցությունից՝ կազակները իրենց հրամանատարների անմիջական թելադրանքով պատրաստվում են կովի ելնել հեղափոխական կենիզրադի ապրստամբ պրոլետարիատի դեմ: Շոլոխովը արտահայտիչ կերպով է նկարագրել կենիզրադի մոտ համախմբված էշելոնների կազակ մարտիկներին:

Կազակները միաձույլ «կլանի» — համայնքի անդամների նման են արձագանքում արտասովոր դեպքերին: Նրանք տեսնում են պատերազմի հետևանքները և առանձին պարագաներում նույնիսկ քննադատում սպաներին: Եվ ահա տատանվող ու սահմանագծի մոտ կանգնած այդ կազակների մոտ է գալիս նախկին կազակ Բունչուկը՝ նախօրոք նախագծված հակահեղափոխական արշավի առաջն առնելու նպատակով: Միայնակ է Բունչուկը: Նա մոտենում է կազակներին առանց զինակիցների կամ թիկնապահների: Նա բուշևիկ-հեղափոխական է և շատ լավ է ճանաչում իր հայրենակիցներին, ինչպես նաև դիտե, որ խիստ ճկուն կերպով պիտի մոտենալ պահպանողական տրադիցիաներով մեծացած իր հայրենակիցներին:

Մոտենալով մեծ էշելոնի վագոններին, Բունչուկը սկսում է որոնել ամենից առաջ իր ծանոթ կազակներին: Գրանց աշակցությանը էլ սկսում է իր ազդեցություն աշխատանքը: Այդ ամենը, սակայն, տեսնում են կազակ սպաները և, իհարկե, աշխատում են խափանել ու խեղդել պատրաստվող շարժումն ու խլրտումները: Երկու «հոսանքների» ներկայացուցիչներն այդ ժամանակ

կանգնած էին միմյանց դեմ: Բունչուկը միայնակ էր և ձգտում էր պաշտպաններ գտնել շարքային կազակների մեջ: Սպաները ավելի ուժեղ էին, բայց չէին կարողանում ամուր հենակետ գտնել շարքային կազակների շրջանում: Բունչուկը ամենավճակապահ պահին ավելի կտրուկ ու պարզորոշ դիրք է բռնում և հաղթում է: Վեպի մեջ միայն մի էջ է նվիրված այդ դրվագի նկարագրությանը, բայց այդ սակավաթիվ տողերը արտահայտիչ գծերով են բնութագրում և սպաներին, և շարքային զինվորներին, և մանավանդ միայնակ Բունչուկին՝ «հեղափոխական կուրս բռնող» ապստամբ ժողովրդի համոզված ներկայացուցիչին: Այս դրվագը զանազան է հերոսական էպոսայի ամենացայտուն հատկանիշները խտացած գույներով բնութագրող շատ արտահայտիչ և պատկերավոր մի դետալ:

Գեղարվեստական մեծ ուժով կերտված այդպիսի դետալներ շատ կան «Խաղաղ Դոն» վեպի մեջ, ուրույն երանգ են հաղորդում ամբողջ գործին: Նավաստիների մասին, օրինակ, նետված են միայն թուուցիկ ակնարկներ, բայց դրանք սուր են և դիպուկ:

Մենք պիտի աշխատենք մոտենալ Շոլոխովի գեղարվեստական մեծատաղանդ գործի հիմնական մոտիվի կամ ավելի ճիշտ «ընդհանուր ուղղության» ճշգրիտ ճանաչողությանն ու մեկնաբանությանը:

Մեր ուրվագծի սկզբում ասացինք, որ «Խաղաղ Դոն» վեպի հիմնական սյուժեն կապված է կենտրոնական դեմքի՝ Գրիգորի Մելեխովի կյանքի և ղեկերումների տխուր պատմության հետ:

Առաջին հատվածներին հատուկ կոչորիտը Մելեխովի սիրո պատմությանը հաղորդում է յուրահատուկ տոն: Սուր կոնտրաստներ՝ գեղեցիկ բնանկար, թարմ խոտի ղեղերը, դարնանային անձրևը, առույզ մարդկանց բուռն ապրումները և այդ ամենից հետո՝ պատերազմի մուսլ դրվագները՝ զիպներով լեցուն սայլերը, վայրենացած մարդկանց ու վայրագ հրեշների կերպարները ծառայում են որպես ֆոն, որի վրա գծագրվում է Գրիգորի և Աքսինիայի սիրո պատմությունը:

Գրիգորի Մելեխովը եռանդուն, խելացի, խիզախ աշխատավոր է, մեծ կամքի տեր: Սակայն պատմական աննախընթաց դեպքերի՝ վճռական շրջադարձի օրերին այդ կորովի «հերոսը» պարտվում է, մնում միայնակ, նույնիսկ դավաճանում է հարագատ ժողովրդի ազատագրական մեծ դատին:

Վիպագիրը մեծ ուշադրությամբ հետևում է իր հերոսի մտորումներին և բոլոր քայլերին. պատմում է նրա թափառումները, որոնումները, անկումն ու պարտությունը: Նա ոչ մի դիստոնանս չի սքողում. արձանագրում է նաև բավական անհրապույր, գուցե և անտեղի մանրամասնությունները: Վեպում կան տողեր, որոնք կարող էին հեշտությամբ դեն նետվել՝ առանց ազարտելու վեպի գեղարվեստական ամբողջությունը:

Վեպի վերջին էջերը շատ տխուր են: Վիպագրի համար գուցե և դժվար չէր լինի միանգամայն այլ տոն հաղորդել այդ վերջաբանին, ցուցադրել դեպի լուսավոր հանգրվանները նետվող հերոսի վերածնունդը: Այդպիսի վերջաբանը գուցե և լիներ շատ դյուրին մի «լուծում»: Սակայն այդպես լուծելով Մելեխովի տատանումները, Շոլոխովը ստիպված կլիներ հիմնովին վերակառուցել նաև իր դժբախտ հերոսի կյանքի ամբողջ պատմությունը, այլ խոսքով՝ Գրիգորի Մելեխովին դարձնել ոչ թե սահմանափակ շրջապատի մի ներկայացուցիչ և ժողովրդի առաջավոր շարքերից կտրված աշխատավոր, այլ նույն ժողովրդի տատանվող, պատահաբար սխալ կատարող ներկայացուցիչ: Վիպասանը չի դիմում հեշտ միջոցի և չի սքողում միայնակ Գրիգորի երկվություն հետ կապված հակասական ղեկերումները: Նա նպատակ է դնում բացահայտել անհատական ապրումներով տարված և ժողովրդից կտրված, մեկուսացած անհատի անխուսափելի անկումն ու պարտությունը: Հենց դա է Շոլոխովի վեպի իրական արժեքը: Միաժամանակ ծանրանալով Գրիգորի Մելեխովի կերպարի առանձին գծագրի վրա, ցուցադրելով այդ խիզախ կազակի— «արդար» ուղի որոնող հերոսի ղեկերումները, ծանրանալով նրա և Աքսինիայի սիրո պատմության վրա, Շոլոխովը Գրիգորի հոգեկան ծանր ապրումները բնութագրելու համար շատ նրբին տողեր է գտնում, հատկապես շորրորդ հատորում: Այդ հմուտ նկարագրության շնորհիվ ընթերցողի անսահման ատելությունն ուղղվում է Գրիգորի նման աշխատավորներին անդունդը նետող անիրավ ու ապականված հին աշխարհի տիրակալներին դեմ: Հիվանդ Աքսինիայի տխուր սիլուետը, դեպի անորոշ հեռուն ուղևորվող Գրիգորին ընթերցողի կողմից նույնպես «ընկալվում» և մեկնաբանվում են որպես հին աշխարհի դեմ ուղղված փաստեր: Շոլոխովի վեպի գաղափարական այս միտումը ավելի պարզորոշ է դառնում, երբ մենք ուշադրությամբ ուսումնասիրում ենք մյուս կերպարները: Հին աշխարհի դեմ մարտնչող հեղափոխական զանգվածների նկարագրությունը և ապա՝ լենինյան պողպատե կուսակցության ներկայացուցիչներին՝ Բունչուկի նման աննկուն մարտիկների շրջապատում, Գրիգորի և Աքսինիայի կյանքի տխուր պատմությունը նորից դառնում է անիծյալ անցյալի դեմ ուղղված ամենացայտուն մեղադրագիրը:

* * *

«Հերկած խոպան» վեպի մեջ Շոլոխովը նկարագրում է գյուղական վայրերում սկսված՝ կազակների սոցիալական շերտավորման ավելի սուր էտապը: Վեպի միայն առաջին հատորն է լույս տեսել: Հեղինակը հսկայական աշխատանք է կատարել և այնպես է կառուցել այդ առաջին հատորը, որ ընթերցողները անգամ այսօր «ընկալում» են որպես միանգամայն ամփոփ և ավարտված մի գործ:

«Հերկած խոսպան» վեպը մեծ կտավ է և գրված է արտասովոր թափով. Հիմնական «դեմքը» նորից ժողովրդական մասսան է, գյուղացիական մասսան, ավելի ճիշտ՝ գյուղացիության առաջավոր մասը: Շուրխովը նշում է, որ գյուղի սոցիալիստական վերակառուցման համար մղված պայքարի առաջին էտապում նույնիսկ այդ առաջատար հատվածի որոշ մասը դեռ որոշակիորեն չի դիրքորոշվել: Նա այնքան լավ է արձանագրում օրրստօրե սրվող պայքարի բնորոշ էջերը, որ նույնիսկ պատմարանները կարող են հենվել նրա վեպի մեջ նկարագրված դիտումների վրա:

Շուրխովը ցույց է տալիս, թե ինչպես գյուղական բուրժուազիայի ներկայացուցիչները, կիրառելով ամենաստոր մեթոդներ, ճգնում են հիմարացնել միամիտ գեղջուկներին: Գյուղական կուլակները սնունդ են տալիս թե՛ վնասարարական գործողություններին, և թե՛ գյուղական ակտիվի ղեմ ուղղված բանդիտական արշավներին: Գյուղում սկսված սոցիալական պայքարը իրականում կանոնավոր քաղաքացիական պատերազմ էր: Երկու ներհակ հոսանքների նպատակները այնքան պարզորոշ էին, որ ոչ ոք այլևս չէր կարող այդ կատաղի մարտերի ու բախումների օրերին շեղոք մնալ և սքողել իր իսկական դեմքը:

Շուրխովը կերտում է բազմազան դեմքեր, բայց կանգ է առնում առանձնապես գյուղական ակտիվի ներկայացուցիչների վրա: Գյուղական կոմունիստները տակավին անսիրտ են և կատարում են առանձին սխալներ, թեև արդեն պայքարի պրոցեսում նրանք կարողանում են հաղթահարել այդ սխալները: Մեծ դեր է կատարում կուսակցությունը, որի ներկայացուցիչներից մեկը՝ Պուտիլովյան գործարանի բանվոր-կոմունիստ Դավիդովը, գլխավորելով գյուղական կոմունիստներին, ղեկավարում է գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման համար մղվող պայքարը:

Շուրխովն այդ վեպում նկարել է գյուղի շաբաթյին ներկայացուցիչների բազմազան դիմաստվերները: Լավ է կերտված առանձնապես Դավիդովի կերպարը: Նա «գրական հերոս» է՝ զինված ժամանակին և մարտական բոլշևիկին հատուկ ունակություններով: Դավիդովի կողքին մենք նշմարում ենք Բազմյոտնովին, Նաչուլնովին, Մայրանյակովին, առաջավոր գյուղացիներին: Գյուղում սև աշխատանք են կատարում բուցահայտ ու բողբոջված թշնամիները: Դավիդովին լավ է հայտնի, որ աշխատանքը անհրաժեշտ է առաջ տանել ծանրագույն պայմաններում: Նա ստեղծում է ամուր մի հենակետ և կարողանում է կռիվել ապագա մարտիկների շարքերը: Միօրինակ տիպարներ չեն, իհարկե, նրա շուրջը համախմբված առաջավոր գյուղացիները: Դասակարգային սուր պայքարի պրոցեսում դրանք դաստիարակվում և կոփվում են, բայց իսկական փորձառությունը դժվարություններ են ձևեր բերում: Խիզախությունը բավական չէր այդ օրերին: Շուրխովի վեպի հերոսներից մեկը՝ Նագուլնովը, օրինակ,

խիզախ է, բայց նետվում է մի ծայրահեղությունից մի ուրիշը: Կան նաև ակտիվ գյուղացիներ, բայց սրանք չեն կարողանում ավելի նրբանկատ մտանալ տատանվող կամ ավելի հետամնաց շինականներին:

Վեպում նկարագրված բազմապիսի գործիչներից յուրաքանչյուրն ունի իր ուրույն դեմքը: Ահա այդ փաստը Շուրխովը ոչ միայն արձանագրում է, այլև կարողանում է ցույց տալ տաղանդավոր նկարիչ-քանդակագործին հատուկ հմտությամբ: Վեպի յուրաքանչյուր հերոս ունի իր ոճը և կարող է «սյուժե» դառնալ վեպը նկարազարդող նկարիչ-իլյուստրատորի համար: Շուրխովը ցույց է տալիս նաև իր առանձին հերոսների յուրահատուկ «էվոլյուցիան»: Պայքարի պրոցեսում վեպի մեջ նկարագրված մարդիկ փոխվում են և հասունանալով՝ դառնում իսկական նոր մարդիկ: Ահա այդ էլ «Հերկած խոսպան» վեպի ամենաբնորոշ հատկանիշներից մեկն է:

Վեպի մեջ լավ է գծված առանձնապես գյուղական բնանկարը: Լիրիկական ուրույն տրամադրության հատուկ գույները, պետք է ասել, գերակշռում են բնակարաններին նվիրված պատկերավոր տողերի մեջ: Դրանք ավելի ցայտուն են դարձնում ղեկաբերի նկարագրությունը և ավելի կենդանի՝ ամբողջ պատմության ընդհանուր ութմը: Շատ հատկանշական է մի ուրիշ երևույթ: Կապիտալիստական մեծ քաղաքի անցյալը լավ է հայտնի հեղափոխական, Լենինի գրադի Պուտիլովյան գործարանի բանվոր-բոլշևիկ Դավիդովին: Դավիդովը իսկական պրոլետար է: Չնայած այդ հանգամանքին, պուտիլովյան այդ բանվորը բավական գյուղին կերպով կարողանում է դառնալ գյուղացիների ընկերակիցը, ընդհուպ մոտենալ գյուղի աշխատավորներին, նույնիսկ ձուլվել գյուղական իրականությանը: Գյուղ ուղարկված այդ նոր դեմքը ամենեկին նման չէ գյուղական ժողովրդի մասին բարբառող հնօրյա այն ինտելիգենտներին, որոնք գյուղացիների հետ խոսում էին կեղծ ժողովրդական լեզվով և չէին կարողանում մոտենալ գեղջուկի առօրյա ապրումներին: Լենինի գրադից եկած պուտիլովյան բանվորը խոսում է պարզ ու կտրուկ ոճով, առանց համակերպվելու գյուղացիների տրադիցիաներին: Դա նոր պերսոնաժ է, իրական դեմք, ժողովրդի ղավակներից մեկը: Այդ նոր դեմքը գյուղի գովքը երգող հնօրյա նարդնիկներից շատ է տարբերվում, նախ՝ իր կենսահայեցողությամբ և միաժամանակ՝ անկախ ու ինքնուրույն վարքագծով:

Դավիդովը քայլում է հաստատուն քայլերով: Նա դիտե, որ իր թիկունքին կանգնած է ողջ բանվոր դասակարգը՝ հեղափոխական հզոր ջոկատը: Մոտենալով ժողովրդին, նա Լենինի մեծ կուսակցության հստակ պատգամները կիրառում է հմտորեն՝ քայլ առ քայլ առաջ շարժվելով, հաղթահարելով ամենադժվարին պատենշները, բանդելով միամիտ գեղջուկների թերահավատությունը և տակավին թույլ կոլտնտեսության շուրջը համախմբելով գյուղի կենսունակ և ակտիվ ուժերին:

Շոլոխովի երրորդ վեպը նվիրված է արդեն Հայրենական մեծ պատերազմի հերոսամարտերի գեղարվեստական վերարտադրությունը («Նրանք պայքարում էին հայրենիքի համար»)։ Այդ գործը տակավին անավարտ է։ Առայժմ մեզ հայտնի են միայն այն հատվածները, որոնք հրատարակվել են պարբերական մամուլում։ Այդ հատվածները ցույց են տալիս, որ Շոլոխովի այդ գործը պետք է գրավի սովետական ընթերցողների ամենալայն շարքերի մեծագույն ուշադրությունը։ Դա ըստ էության «մեծ կտավ» է կամ այդպիսին պիտի լինի։

Գուցե հենց դրա համար էլ Շոլոխովը, սահմանափակվելով զծագրված վեպի միմիայն որոշ մասի հրատարակությամբ, զերադասում է անգամ այսօր շարունակել թեմայի հետ կապված բազմաթիվ ու բազմազան նյութերի մանրակրկիտ ուսումնասիրությունը՝ իր վերջնական գեղարվեստական խոսքը ավելի հիմնավորված և ավելի լիարժեք դարձնելու համար։

Ես կանգ չեմ առնում Շոլոխովի հրապարակախոսական հողվածների վրա։ Հայրենական մեծ պատերազմի օրերին Շոլոխովը գրել է ռազմական թղթակցություններ, ուսումնասիրել է պատմական ցնցող դեպքերը, նկարագրել է սովետական հերոսական բանակի մարտիկների սխրագործությունները։ Ռազմական թղթակից Շոլոխովը գրել է հիտլերյան մարդակերների զագրելի դեմքը մերկացնող հրաշունչ տողեր, որոնք ազդու տպավորություն են թողել ընթերցողի վրա և մեծապես նպաստել են թիկունքում աշխատող սովետական հայրենասերների շարքերի ամրապնդմանը։ Շոլոխովը սուր հարվածներ է հասցրել նաև հիտլերականների վայրագ գեմքը բողբոջող անգլո-ամերիկյան երկերեսանի ստոր գրչակներին։

Իր բեղուն գործունեության ընթացքում Շոլոխովը հսկայական աշխատանք է կատարել։

Նրա գեղարվեստական երկերը այսօր հայտնի են ոչ միայն սովետական ընթերցողներին, այլ նաև ժողովրդական դեմոկրատիայի երկրների առաջավոր ընթերցողներին հոծ զանգվածներին։ Այսօր միլիոնների է հասնում սովետական տաղանդավոր վիպագրի ընթերցողների հսկա բանակը։ Այդ ընթերցողները ոչ միայն անսահման հետաքրքրությամբ են կարդում և ուսումնասիրում սիրելի գրողի գործերը, այլև առաջադրում են իրենց առանձնահատուկ պահանջները։ Այդ ընթերցողները սպասում են, և իրավունք ունեն սպասելու, որ շարունակելով իր այնքան ներհույս և ինտենսիվ աշխատանքը՝ «Ենդադ Դոն» էպոպեի տաղանդավոր ստեղծագործողը կվերարտադրի սովետական մեծ ժողովրդի հերոսական պայքարի և առաջամարտի նորագույն փուլը բնութագրող ցայտուն էջերը...



Գ

ՌՈՒՍ-ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՑ

1

Չափազանց հատկանշական մի երևույթ գրավում է մեր ուշադրությունը, երբ ուսումնասիրում ենք հայ ժողովրդի պատմական անցյալի մի երկու ուշագրավ էջերը։ Ամեն անգամ, երբ սկսել է ծանրանալ ժողովրդական զանգվածների կացությունը, հայ ժողովրդի առաջավոր ներկայացուցիչները ջանացել են բարեկամ-օգնականներ որոնել և գտնել ուսու առաջավոր գրողների շարքերում։ Ռուսական գրականության ավելի հայտնի ներկայացուցիչները հաճախ դիտվել են որպես և անկեղծ, և ավելի մոտիկ բարեկամներ։ Բնորոշ է այն, որ մոտեցումը ուսու գրողներին գրեթե միշտ եղել է շատ յուրահատուկ։ Հայ գործիչների կողմից ուսումնասիրվել է իհարկե ուսու գեղարվեստական գրականության վարպետների բարձր արվեստը առանձնահատուկ ուշադրությամբ, բայց շատ ավելի կարևոր է համարվել առաջին հերթին ուսու գրողների արվեստի բովանդակությունը — հումանիտական ուղղությունը։

Թե՛ հայ ընթերցողներին, և թե՛ նաև բանաստեղծներին գրավել է ուսու գրողների, բանաստեղծների և վիպագիրների խոսքը, բմբուսաշունչ պոեզիան, ժողովրդայնության սկզբունքների վրա խարսխված ուրույն հասարակական իդեոլոգիան։ Շատ բնորոշ է, որ Պուշկինը, Լերմոնտովը, Գոգոլը, Նեկրասովը, ընդհանրապես ուսու գրականության մեծ վարպետները հայ իրականության մեջ քննարկվում էին յուրահատուկ ասպեկտով, որպես ազգային-ազատագրական շարժումների հիմնական պատգամները հիմնավորող գաղափարախոսներ։

Մերատ Շահագիրը իր հայտնի «Ազնիվ ընկեր» բանաստեղծությունը գրում է Դոբրոլյուբովի անմիջական ազդեցության ներքո։ Հայ առաջավոր ուսանողները մայրաքաղաքում հրատարակում են Դոբրոլյուբովի հայտնի հողվածը իտալական հեղափոխական-բահանայի՝ «Հայր Գավազցու» մասին։

Ուկրաինական ժողովրդական մեծ բանաստեղծ Տարաս Շեչենկոյի մասին շատ ջերմ հոգոված է հրապարակում դրիմցի Քուչնարյանը: Մխիթարյանների «Բազմավեպ» ժուռնալի էջերում զետեղված նշանակալից այդ հոդվածին կրցված էր նաև «Կոբզար»-ի որոշ էջերի հայերեն առաջին թարգմանությունը: Պահպանողական հրապարակագիր էր «Կոունկ» ժուռնալի խմբագիր Մարկոս Աղաբեկյանը: Սակայն այդ գործիչն էլ կարևոր է համարում տպագրել իր ժուռնալի էջերում Բելինսկու մի աշխատության հայերեն առաջին թարգմանությունը: Ես կարող եմ հիշատակել նաև Ղազարոս Աղայանին և ուրիշ հայ գրողների, որոնք բացահայտել են իրենց պիետետը ուսուսուսալու կուլտուրայի ներկայացուցիչների նկատմամբ: Պետք է ասել, որ քննադատելով կովկասյան իրականության մեջ իշխող ցարական սատրապներին, հայ առաջավոր գործիչները միաժամանակ աշխատում էին հենարան գտնել ուսուսալու գրողների շրջանում:

Մանուկ Աբեղյանը, իհարկե, թարգմանություն համար դիտավորություններ է ընտրում Գոգոլի «Տարաս Բուլբա»-ն: Եվ երբ լույս է տեսնում հայերեն առաջին այդ թարգմանություն-փոխադրությունը, Գոգոլի հերոսը — ուկրաինական ժողովրդի բառական դառնում է հայրենի ժողովրդի նվիրական մտորումների և ազատագրական շարժումներին արձագանքող զեղարվեստական կերպար: Ուկրաինական հայրենասերները կարծես նոր ուղեգիծ են ցույց տալիս հայ դեմոկրատական երիտասարդությանը, աննկուն հասարակական պայքարի և հայրենասիրական շարժման ուղեգիծը: Հայ գրողների վրա մեծ տպավորություն է թողնում Տուրգենևը: Բնորոշ է այն, որ Տուրգենևի վեպերին իրենց հատուկ եզանակով են արձագանքում ԲաժՖին, Շիրվանզադեն, Շանթը...

Ռուս հայտնի բանասեր Յուրի Վեսելովսկին իր մի ուսումնասիրության մեջ, ի միջի այլոց, նշել է, որ հատկապես արևմտա-եվրոպական գրական հոսանքները հայ գրականության մեջ բավական ուշ էին արտացոլվում: Զայնակցելով հայ բննազատ Բերբերյանին, Վեսելովսկին գրում է, որ զբիթն միշտ միջնորդների ղեր են կատարել առաջին հերթին ուսուսուսալու գրողները: Վեսելովսկին նկատի է ունեցել, իհարկե, ուսաստանյ գրականությունը: Հիրավի ուսաստանյ գրողների համար ուսաստանյ կուլտուրան է եղել նոր ուղիներ ցուցադրող հիմնական ուղեցույցը: Այստեղ ես կուզենայի հիշատակել մի նշանակալից փաստ:

Ֆոթանասնական-ուսուսուսական թվականները անցյալում մի շարք ուսուսուսուսների կողմից հաճախ քննարկվում էին որպես հետադարձ շարժման տարիներ: Ժամանակին լեզու մարքսիստների «Ժիզն» («Կյանք») ժուռնալի էջերում զետեղված իր գրական-պատմական ակնարկներում Անդրեևիչ-Սոլովյովը հատկապես 80-ական թվականների մասին գրել է, որ այդ տարիները եղել են «մթնշաղալի մարիներ»: Անդրեևիչը նկատի է ունեցել գրականության մեջ իշխող ուսաստանյ մոտիվները և ընդհանրապես տխուր երգերի տի-

րապետությունը: Նույն այդ 80-ական թվականներին հայ առաջավոր գրողները տարօրինակ համառություն հավատարիմ են մնում քաղաքացիական պոեզիայի պատգամներին և հանդես են գալիս որպես 60-ական թվականների արմատական-մարտական ուսուսուսուս ինտելիգենցիայի ուղեգծի պաշտպաններ: Այդ տեսակետից շատ ուշագրավ պատմական հոդերանական «վավերագիր» է Հովհաննես Հովհաննիսյանը: Նրա ստեղծագործությունների մեջ եղել են և՛ տխուր շեշտեր, և՛ տխուր մոտիվներ: Այնուամենայնիվ ոչ ոք վստահություն չի կարող ասել, թե այդ երգերը իրենց հիմնական ինտոնացիայով և ուղղությամբ եղել են պեսիմիստական. ավելին կարելի է ասել: Հայ ժողովրդական այդ բանաստեղծի պոեզիան անգամ 80-ական թվականներին հուսահատություն չի ներշնչել: Այդ պոեզիան ժողովրդայնության ամրակուս պատմականի վրա խարսխված առույգ և կենսատենչ պոեզիա է: Նման ուրիշ փաստեր էլ կարելի է հիշատակել:

Սամբուլի «Մասիս» ժուռնալի էջերում ուսուսուսական թվականներին հանդես է եկել արևմտահայ հայտնի գրող Արփիար Արփիարյանը, որի որոշ հոդվածները նշանակալից են նրանով, որ օգնում են մոտենալ ուսաստանյ իրականության ճանաչողությանը: Խնդիրը նրանումն է, որ «Մասիս»-ի էջերում Արփիարյանը հնարավորություն ուներ ասել այն, ինչ չէր կարող պարզորոշ գրել կովկասահայ «Մշակ» լրագրի էջերում: Արփիարյանի հոդվածների ընդհանուր ինտոնացիան առույգ է: Ամենից բնորոշն այն է, որ այդ նոր տոնը նա ստանում է հենց ուսաստանյ իրականության մեջ: Նա ինքն է արձանագրում ուշագրավ այդ հանգամանքը:

...«Գրքերն այժմ,— գրում է Արփիարյանը,— մրցում կրենն մասունքներուն հետ»: Ապա նա կանգ է առնում մի շարք նոր երկերի վրա և ընդգծում, որ ազգային նոր վիպասանության մեջ նույնպես հնչում է կյանքի աղմուկն ու առույգ տոնը: «Հուսահատությունը մահ է», գրում է նա և ընդգծում, որ օրվա հիմնական պատգամը պայքարն է: Հրաշունչ իր տողերը Արփիարյանը ավարտում է արդեն ուսաստանյ անվանի բանաստեղծի երգից քաղված իմաստալից խոսքերով. «Գիտուն, թող գիրքդ. ժամ չէ կարգալու. գեղջուկ, դո՛ւ էլ թո՛ղ եզներ և գու՛թան, տերտեր, դո՛ւ էլ դադարիլ մեռել թաղելուց...»:

Միևնույն այդ խոսքերը մենք գտնում ենք նաև ուսաստանյ «Միություն հայրենասերների» ընդհատակյա կազմակերպության անլեզու օրգանի՝ «Ազատության ավետարեր» պարբերագրի մեջ՝ 1884-ին: Այդտեղ ժուռնալի աշխատակիցներից մեկը առանձին զգացումով է խոսում հատկապես ուսուսուսուս կարեորության և նշանակության մասին: ...«Պատմական հանգամանքները,— կարդում ենք այնտեղ,— սերտ են կապել մեր ժողովրդի մի մասի կյանքը ուսուսուսուս ժողովրդի կյանքի հետ...»: Հեղինակը շեշտում է նաև այն, որ հայ մտավորականության ձգտումները կերպավորվում են ընդհանուր ուսուսուսուս

կյանքի ազդեցութեան ներքո, և իր նկատողութիւններն վերջին մասում ջերմագին ողջուն է ուղղում ռուս ժողովրդի առաջավոր գործիչներին...

Աբգար Հովհաննիսյանի պարբերագիրների ուղղութիւնը «հառաջդեմ» լինելով հանդերձ, ազատ չէր կղերական-պահպանողական ուրույն մտքովներից: Այնուամենայնիվ սխալ կլինէր հատկապէս «Փորձ» ժուռնալը կապել հայ կղերական հոսանքի տրագիցիոն պարբերագիրների հետ: Լեզու «հաստ» ժուռնալ «Փորձը» իր պրոֆիլով մի քիչ ռուս պրոպրետիվ ժուռնալների նման պարբերագիր էր: Այդ ժուռնալի մեջ տպագրված վեպերը, հոդվածները, թարգմանութիւնները ցույց են տալիս, որ առույգ և կենսատենչ տրամադրութիւնը շատ ուժեղ էր կովկասահայ իրականութեան մեջ, նույնիսկ ռեակցիայի դաժան տարիներին: Բնորոշ է Գվերացիի պատմական վեպի թարգմանութիւնը կամ Պերճ Պոռշյանի «Շահեն» վեպի տպագրութիւնը, կամ էլ Թոնդրակյան շարժումների մասին զետեղված ուսումնասիրութիւնը:

Նրբ թերթում ենք ռուսահայ մյուս պարբերագիրները, նորից նշմարում ենք ռուսական առաջավոր գրականութեան ազդեցութեան հետքերը: Նույն այդ օրերին ռուս հեղափոխական դեմոկրատների հայտնի ներկայացուցիչներից մեկը՝ հայտնի հրատարակադիր Շելգունովը խմբագիր Գուցեկին ուղղված իր նամակում առանձին զգացումով է պատմում իր հոբելյանի առթիվ իրեն ուղղված շատ բնորոշ մի ողջունի մասին: Նշանակալից այդ ողջունը հատուկ նամակի միջոցով Շելգունովին ուղղել էին Պետերբուրգի հայ ուսանողները: Շելգունովը որոշակի գրում է, որ նամակը իրեն է ուղղել մի ամբողջ խմբակ: Իրիւ կարծիք չի կարող լինել այն մասին, որ այդ նամակը իրականում գրանվորում է ոչ միայն մի խմբակի, այլ հայ մտավորականութեան որոշ երիտասարդ ներկայացուցիչների մտտեցումը ականավոր գործչին: Շելգունովը այնքան հայտնի համբավ է ունեցել, որպէս հեղափոխական մտածող, որ ցարական բռնակալութեան բազմահմուտ ցերեքների համար նրան ողջունող ամեն մի քաղաքացի իհարկէ պետք է «կասկածելի» դեմք դառնար: Եթէ, այնուամենայնիվ, 1880-ի «մթնշաղային տարիներին» հայ ուսանողների մի ամբողջ խումբ հնարավոր է համարում ողջունի հատուկ գրութիւն ուղղել «կասկածավոր» Շելգունովին, նշանակում է այդ օրերին հայ իրականութեան մեջ շատ ուժեղ է եղել 60-ական թվականների առաջավոր գաղափարական պատգամների ազդեցութիւնն ու հմայքը...

Նա ծանրացա իմ ակնարկի մեջ միայն ցրիվ և պատահական դեպքերի ու փաստերի վրա: Կարելի էր բազմաթիվ ուրիշ փաստեր արձանագրել:

Պոեզիան, վիպագրութիւնը, ընդհանրապէս գեղարվեստական գրականութիւնը ամենից առաջ արվեստի վավերագրեր են: Սակայն նրանք միաժամանակ առաջավոր և բարձր գաղափարներով հագեցված վավերագրեր են: Ինքը արվեստագետը կարող է շմտածել նույնիսկ պրոպագանդայի մասին:

Նա կարող է հանդես գալ սոսկ որպէս «ազատ» և միանգամայն «անաղարտ» գեղագետ: Եթէ նրա արվեստը հագեցված է բարձր գաղափարներով, իսկ բարձր արվեստը պետք է լինի այդպէս, նա կդառնա անհրաժեշտաբար մարդկանց սիրտն այրող պատգամախոս — կդառնա կենդանի պրոպագանդիստ: Այդպէս է եղել ռուս գրականութիւնը հայ ժողովրդի առաջավոր ներկայացուցիչների համար: Ահա ինչու ռուս կլասիկ գրականութեան մեծ վարպետները անցյալում հայ իրականութեան մեջ դիտվել ու քննարկվել են որպէս հայ ժողովրդի նվիրական ուսուցիչներ, անկեղծ և մոտիկ բարեկամներ...

2

Մոսկվայում և Պետերբուրգում դեռևս XIX դարի 30—40-ական թվականներին կային հայ ուսանողներ, որոնք կապված էին ռուս առաջավոր կուլտուրայի հետ: Հայտնի է, որ հատկապէս այդ ուսանողների նախաձեռնութեամբ են Մոսկվայում և Քբիլիսիում կազմակերպվել առաջին հայ թատերական ներկայացումները: Այդ ժամանակ բեմադրվել են ժողովրդական ռճով գրված կենցաղային կոմեդիաներ: Հայ դրամատիկական գրականութեան պատմաբանները իրենց վճռական խոսքը չեն ասել այդ կոմեդիաների սոցիալական էութեան մասին, թեև դեմոկրատական տենդենցները նշված գործերի մեջ անշուշտ ակնբեր են եղել: Հայտնի է նաև այն, որ անցյալի հայ երիտասարդութեան առաջավոր ներկայացուցիչները իրենց կոմեդիաները գրել են ռուս ռեալիստ դրամատուրգների ազդեցութեան ներքո: Թատրոնն էլ այդ ժամանակ ռուս գործիչների ազդեցութեան ներքո համարվում էր հասարակութեան կուլտուրական վերելքին օժանդակող կարևորագույն ազդակ: Գաղտնիք չէ, որ «արվեստը արվեստի համար» սկզբունքը հայ իրականութեան մեջ աչքի ընկնող կողմնակիցներ չի ունեցել XIX դարի 30—40-ական թվականներին:

Ռուսական գեղարվեստական գրականութեան հայտնի ժանրերից մեկը՝ «առակագրութիւնը» հագեցված էր ուրույն գաղափարականութեամբ: Բավական է միայն նշել Գմիտրիևի, Խնմնիցերի, մանավանդ Կոխլովի իմաստալից առակների հասարակական արձագանքները: Ռուս առակագիրների գործերը լավ էին հայտնի հայ գրողներին: Խաչատուր Աբովյանը իր գաղափարների և հասարակական մտորումների բնութագրման համար կերտում է ռեալիստական առակներ, որոնք միանգամայն ուրույն իմաստ ունեն և տարբերվում են հայկական տրագիցիոն առակներից ամենից առաջ իրենց կառուցվածքով և կուրիոսով: Առակների ժանրը հայտնի էր նաև արևմտահայ գործիչներին: Մի ուշագրավ փաստ, այնուամենայնիվ անհրաժեշտ է արձանագրել: Արևմտահայ առակագիրներն ավելի հաճախ աշխատում էին հղկել հին առակները և մեղմացնել առակների սոցիալական շեշտը կամ տենդենցները: Սակայն, շափավորելով անգամ Լաֆոնտենի առակների սուր շեշտը՝ արևմտահայ այդ

առակազիրները աշխատում էին ամենօրյա գրույցները համեմել բարոյախոսական տաղտուկ սենտենցիաներով:

Արովյանն առաջինն է լինում մեր գրականության մեջ, որ հրաժարվելով հայ տրագիցիոն առակազիրների շեշտված ուղեգծից՝ մշակում է ժողովրդական առակներին— գրույցների նոր մի տիպ: Նա առանց վարանումների հետևում է շատ պարզ, զիպուկ և սուր, ժողովրդական լեզվով գրող Կոխլովի ուղեգծին: Տաղանդավոր կերպով վերամշակելով անգամ հանրահայտ սյուժեաները, որպես ինքնուրույն ստեղծագործող, նա կերտում է նոր գործեր և կարճ ժամանակվա ընթացքում ստեղծում է հյուսիսում ու ռամկական ոճով գրված իմաստալից առակների մի ամբողջ շարան: Արովյանը կերտում է ինքնուրույն գործեր, բայց առաջին և հիմնական խթանը նա նորից ստանում է ոչ թե Եզովպոսից կամ Լաֆոնտենից, այլ ժողովրդական առակների մեծագույն վարպետ Կոխլովից:

Առաջավոր ռուս գրականության հիմնական իդեական գիծը, ինչպես հայտնի է, բավական որոշակիորեն ստեղծվել էր Նովիկովի, Ռադիշևի, Զառզանի օրերին: «Արվեստը արվեստի համար» սկզբունքը վճռականորեն դատապարտվում էր այդ օրերին: Ռուս առաջավոր գործիչների ուղեգիծը միանգամայն պարզորոշ էր: Արվեստագետը պետք է լիներ ամենից առաջ քաղաքացի, մարանչող քաղաքացի, հարազատ ժողովրդի հետ կապված տոկուն քաղաքացի: Բարձր գաղափարական այդ պատգամը հետագայում, 60-ական թվականներին, ավելի կտրուկ կերպով է առաջադրվում և ձևակերպվում: Բարձր այդ պատգամը այդ տարիներին դառնում է կատեգորիկ իմպերատիվ հայ գրականության առաջավոր ներկայացուցիչների համար: Այդ պատգամը մեծ եռանդ է հաղորդում Արովյանի և Նալբանդյանի հետևողներին: Այդ պատգամը խթան է դառնում Սմբատ Շահազիզի և Հովհաննես Հովհաննիսյանի, Հովհաննես Թումանյանի և Ավետիք Իսահակյանի, Վահան Տերյանի և ավելի ուշ՝ Եղիշև Գարենցի, Հակոբ Հակոբյանի, հայ վիպագիրների ու պոետների համար: Ռուս գրագետները քննարկվում էին շատ ուրույն ասպեկտով: Նրանք հայ գրողների համար և՛ մոտիկ ընկերակիցներ էին, և՛ ուսուցիչներ, և՛ անկեղծ բարեկամներ՝ ժողովրդին նվիրված գործիչներ:

Շատ զգուշավոր կերպով շարժվող և լիբերալ հովերով համակված Ստ. Նազարյանցը հիացումով է բացահայտում իր դիրքը Լեբմոնտովի նկատմամբ և «Հյուսիսափայլ»-ի էջերում տպագրում է նշանակալից հատվածներ: Միբայել Նալբանդյանը իր ինքնուրույն բանաստեղծությունների մեջ հանդես է գալիս որպես ռուս ռեալիստական գրականության պատգամների պրոպագանդիստ: Նա գաղափարական մոտ կապեր է հաստատում Գերցենի և Օղարյովի շուրջը համախմբված ռուս գրողների հետ: Ռուս վիպագիրների ազդեցության ներքո Նալբանդյանը գրում է իր «Մենելախարցուկ» վեպը և, հետևելով Բե-

լինսկուն ու Դորբոլյուբովին, տաղանդավոր գրականագետին հատուկ համաթյամբ կառուցում Պերճ Պոռչյանի «Սոս և Վարդիթեր» վեպի քննադատությամբը նվիրված եղակի արժեք տնեցող իր հետազոտությունը:

Ռուս գրողները մեծ ազդեցություն են թողնում Սմբատ Շահազիզի վրա: Մեծապես ազդվելով Դորբոլյուբովից՝ Շահազիզը գրում է իր հայտնի բանաստեղծությունը, որը հետագայում դառնում է հայ դեմոկրատական երիտասարդության ամենասիրելի և ժողովրդական երգերից մեկը: Իր «Ամառային նամակներին» մեջ Շահազիզը գրվատում է գոգոլյան ռեալիզմի գեղագիտական սկզբունքները և ապա, առանց Չերնիշևսկու անունը տալու, իրեն հատուկ ձևով ակտիվորեն արձագանքում է մեծ հեղափոխական-գիտնականի հանրահայտ հոգվածների մեջ առաջադրված պատգամներին:

Ցարական ռեակցիայի ամենամուսուլ տարիներին Պետերբուրգի հայ ուսանողները շերմազին ողջույն են ուղարկում ականավոր պուրլիցիստ Շելզոնովին: Միևնույն այդ տարիներին են հրապարակվում Հովհ. Հովհաննիսյանի և Ալ. Սատուրյանի ջանքերով ձեռնարկված նեկրասովյան բանաստեղծությունների թարգմանությունները: Բաֆֆու վրա մեծ տպավորություն է թողնում Տուրգենևը, որի «Նորը» վեպի անմիջական ազդեցության ներքո է գծագրվում «Կյանք»-ի հերոսներից մեկի գյուղական կուլտուր-տրեգերական աշխատանքը: Հայ գեղարվեստական գրականության մեջ կազմավորվող գյուղագիրները ականավոր ռուս նարոդնիկ-բելլետրիստների ազդեցության ներքո, նոր դիրքերից մոտենալով հայ գյուղական իրականությանը՝ պատկերում են հայ գյուղացիության շերտավորման պրոցեսը, գյուղական «պիջակավոր» նոր տիրակալներին— զոռքաների ու սովորաբարների բռնությունները: Հայ ռեալիստ գրողները իրենց երկերի մեջ նշում ու շեշտում են, որ «Հացի խնդիրը» կտրուկ կերպով գրված է օրակարգի հրատապ խնդիրների մեջ:

Միանման փաստեր են արձանագրում նաև արևմտահայ գրականության տարեգրությունները: Պոլսահայ շատ հայտնի «Մասիս» ժուռնալի էջերում, օրինակ, ժամանակին լույս են տեսել ոչ միայն Պուլիկինի և Լեբմոնտովի, այլև Տուրգենևի արձակ բանաստեղծությունների, հնօրյա ռուս գործիչ Գերադորի Մակրիկիչի անլեզալ մեմուարների, արքայական բանաստեղծ Միխայլովի երկերի հայերեն թարգմանությունները: Արփիար Արփիարյանը, ինչպես հաստատել է սովետահայ բանասեր Գ. Ստեփանյանը, ժամանակին շատ բարձր է գնահատել Գերցենին և ակնածանքով՝ բնորոշ տողեր է նվիրել հատկապես Գերցենին: Զիլինգարյանը, արևմտահայ դեմոկրատիայի մեկ ուրիշ տաղանդավոր ներկայացուցիչը, Գերցենի գեղարվեստական հանձարեղ մեմուարների անմիջական ազդեցության ներքո է կազմում և հրապարակում իր անշափ նշանակալից գրական-հասարակական մեմուարները: Բազմաթիվ նման փաստեր կարելի է արձանագրել: Բոլոր նման փաստերը թելադրում են մի կարևոր և զրակացություն անել:

Լինելով ճնշված ազգություն և Նյոյ ազգության դեմոկրատական խավերի ներկայացուցիչներ՝ հայ գրագետները տեսնում են, որ ռուս առաջավոր գրողները անհաշտ պայքար են մղում ոչ միայն բոլոր ճնշումների ու բռնությունների դեմ, այլև «մանր» ու այսպես կոչված «երկրորդ կարգի» ազգությունների արժեքը նվաստացնող ռասայական տեսությունների դեմ:

Այդպիսով, հայ առաջավոր գրագետները լավ էին տեսնում, որ արդեն իդեական իրենց բարձր պատգամներով հումանիզմի ռուս ջահակիրները՝ ռուս առաջավոր բանաստեղծներն ու վիպագիրները հայ ժողովրդի անկեղծ և խկական բարեկամներն են: Դրանով էլ բացատրվում է, իհարկե, հայ գրողների առանձնահատուկ և միշտ զրական մոտեցումը ռուս գրականությանը: Շատ հետաքրքրական ձևով է դրսևորում այդօրինակ մոտեցումը Շիրվանզադեն:

Շիրվանզադեի ամենախոշոր գեղարվեստական ստեղծագործությունները՝ «Նամուսը», «Ցավագարը», «Քառուր» ռեալիստական վեպեր են: Մենք ակամայից Օստրովսկու, Պիսեմսկու, առանձնապես Դոստոևսկու երկերն ենք հիշում, ևրբ անցնում ենք մեծ թափով կերտված այդ գործերի ուշադիր ուսումնասիրությանը: Շիրվանզադեն իսկական նկարչին՝ ռեալիստ վիպագրին հատուկ տաղանդով կերտում է նախակապիտալիստական կովկասյան գավառի, անմխիթար և տխուր գավառական աշխարհի, հնօրյա դաժան իրականության ներկայացուցիչների քանդակները: Այդ դիպուկ նկարները իրականում անիծյալ հին աշխարհի դեմ ուղղված շատ ուժեղ հարվածներ էին՝ լեցուն բարձր հումանիստական տրամադրությամբ: Իր մոտումենտալ «Քառու» վեպի մեջ Շիրվանզադեն նկարագրում է կովկասյան Կրնդայկի իսկական առօրյան՝ ողջ նավթաշխարհը, հանքային վայրերը, բազմազգի բուրժուազիայի տիպական ներկայացուցիչներին: Մեծածավալ այդ վեպը պատմական-գեղարվեստական կարևորագույն փաստաթուղթ է, որ կարող է գրավել հասկապես կովկասյան կապիտալիզմի պատմաբանների ուշադրությունը: Բացասական տիպերի դիմանկարները վեպի մեջ անշուշտ ավելի հաջողված են: Միքայել Ալիմյանը, «Երական հերոսը» ճիշդ է անում լուծել սոցիալական ստեղծվածը շուրջն-գելիչյան բեֆորմների միջոցով և նկատելի դիստանս է մտցնում ռեալիստական կապի ընդհանուր կառուցվածքի մեջ: Տաղանդավոր վիպագրի հոյակապ վեպի ամենաթույլ կողմը, մեր կարծիքով, արժույթական լիբերալիզմի ակներև ազդեցության ներքև կերտված այդ Ալիմյանն է: Ջանալով ստեղծել յրական կերպար՝ Շիրվանզադեն այս անգամ ճիշդ է անում հայ բուրժուազի լիբերալ որդուն դարձնել հայերի «մեղքերը» փվող ազգասեր և բարեհոգի կապիտալիստ: Այդ ամենը կույրն անգամ կարող է շատ լավ տեսնել: Վարանումներով տարված սկեպտիկ Մմբատի և ապա «արթնացած» ու «վերածնված» Միքայելի կողքին նկարագրված ասիացի «հայրերի» և մանավանդ նավթաշխարհի «ասպետների» կերպարները շատ ավելի ցայտուն և կենդանի գույներով են նկար-

ված: Ռեալիստ նկարչի և արվեստագետ հոգեբանի վրձնի մեծ ուժը ավելի լավ երևում է հենց նման տիպերին նվիրված նկարագրական ռեալիստական էջերի մեջ: Նավթաշխարհի շատ ուրույն տոպոգրաֆիան և կապիտալիստական մեծ քաղաքի բորսայի շուրջը պատող պարագիտների սովերները մնում են բնթերցողի հիշողության մեջ: Հակիրճ են պրոլետարիատի ներկայացուցիչների բնութագրմանը նվիրված տողերը, բայց այդ տողերում տեսնում ենք առաջավոր ռուս գրականության տրագիցիաներով տարված վիպագրի դիմաստվերը: Վտանդի և հրդեհի ամենասուր մոմենտին նավթային պրոլետարիատի երեք ներկայացուցիչները՝ ռուս, հայ, ազրբեջանցի բանվորները հանդես են գալիս որպես միաձույլ և ամրակուռ ընտանիքի անդամներ: Բնորոշ է այն, որ հակառակ հեղինակի ցանկության, Կարապետը, Ռասուլը, Չուպրովն են դառնում վեպի իսկական հերոսներ: Ազգայնական միազմներով լեցուն բուրժուական միջավայրին վեպի մեջ կարծես հակադրվում է երեք բանվորների եղբայրությունը այնքան ցայտուն, որ մեծ տպավորություն է թողնում նույնիսկ բանվորական շարքերից կտրված բնթերցողների վրա: Եվ իհարկե, ամենեին պատահական չի կարելի համարել վեպի մեջ նետված այնքան ուշադրավ ակնարկը՝ վաղեմի անցյալի ապրումների մասին: Կասկածից դուրս է, որ «Քառուր» գրելու ժամանակ Շիրվանզադեն գտնվում էր ռուս գրողների ազդեցության ներքո: Նրա բազմերանգ և հարուստ արվեստի ավելի ազատ և անկաշկանդ թուխքին կարող էին խանգարել միայն արժույթական ուրույն ավանդները: Այդ ավանդների կնիքը նշմարվում է նույնիսկ Շիրվանզադեի դրամատուրգիական գործերի մեջ: Անհրաժեշտ է ընդգծել հետևյալ հայտնի և կարևոր փաստը: Իր «Կործանվածը» պիեսի մեջ Շիրվանզադեն իրականում դիտավորությամբ հանդես է եկել «հայրերի» պատգամախոսի դերում: Նա, որ տարիներ առաջ նշմարում էր գոնե մի ակնթարթ Չուպրովի, Ռասուլի, Կարապետի այնքան արտասովոր եղբայրության վեհությունը, այս անգամ տարօրինակ կերպով չի կարողանում գտնել անհրաժեշտ գույներ և ճշգրիտ տոն՝ «հայրերի» դեմ ծառայող «զավակների» ներկայացուցիչների ռեալիստական վերարտադրության համար: Պիեսը, այնուամենայնիվ, զրական գնահատականի էր արժանացել հայ մամուլի էջերում: Շիրվանզադեին նվիրված հորելյանական մեծ ժողովածուի մեջ արևմտահայ հեղինակները նշել և ընդգծել էին պիեսի զրական արժեքը: Կասկածից դուրս է, որ և՛ հնօրյա այդ «քննադատներին», և՛ պիեսի բնթերցողներին դուր էր եկել առաջին հերթին «հայրերի» իդեալները պաշտպանող ու հիմնավորող վիպասանի միակողմանի մտեցումը «զավակների» ներկայացուցիչներին:

Չնայած այդ ամենին, Շիրվանզադեի նույնիսկ տեղեկցող այդ պիեսի մեջ աչքի է ընկնում նրա ուշադիր մոտեցումը հայրենի իրականության մեջ կատարվող նոր պրոցեսներին: «Ջավակներին» քննադատելով հանդերձ, Շիր-

վանդադեն ճիգ է անում հասկանալ նրանց և միամիտ ուտոպիստի նման ցուցադրել «հայրերին» անհաշտ «զավակներին» հետ միաձուլող գաղափարական օղակները: Թուամանյանից հետո, Շիրվանզադեն առաջին խոշոր հայ գեղագետն է, որ ակտիվորեն ձայնակցում է սովետական կարգերին: Այդ երկու ակահնավոր գրագետները անցնում են ուրբիկոնը և նվիրվում ազատագրված հայրենիքի կուլտուրական շինարարության մեծ գործին: Կատարելով վճռական շրջադարձ, Թուամանյանը և Շիրվանզադեն արտահայտում են հարազատ ժողովրդի կամքն ու բաղձանքները: Մեզ թվում է, որ այդ շրջադարձը կատարելու ժամանակ հայ կուլտուրայի երկու այդ մոհիկանների համար էլ մեծ նշանակություն են ունեցել ուս զեմոկրատական և պրոգրեսիվ գրականության վաղուց ծանոթ գաղափարական բարձր պատգամները: Հովհաննես Թումանյանը երբեք չէր թաքցնում, որ իր համար սիրելի ու նվիրական են եղել Պուշկինի և պուշկինյան պայծառ պլեհադայի ավանդները: Շիրվանզադեն սկզբում գուցե և վարանումով էր արձագանքում հայրենի նոր իրականության մարտական ուղղություն կրող նոր գրական հոսանքներին և որոնումներին: Այնուամենայնիվ, Շիրվանզադեն էլ գիտեր, որ չի կարող այլևս սահմանափակվել Սահառունու իդեալների պաշտպանությամբ: Կարելի է ավելին ասել: Մոտենալով նոր իրականությանը՝ նա միանգամայն մտածված դառնում է սովետական գրականության ակտիվ մարտիկ և Գորկու շուրջը համախմբված գրագետների հետ միասին, վճռական պայքար հայտարարում հին աշխարհի խոցերը վարագուրող գաղափարազուրկ արվեստի բացահայտ և քողարկված հետևողներին ու պրոպագանդիստներին:

Ես կանգ չեմ առնում մեր գրականության հետագա էտապների վրա: Կանգ չեմ առնում նաև Հոկտեմբերյան մեծ հեղափոխության ազդեցությամբ ստեղծված հայ հարուստ նոր գրականության՝ սովետահայ գրականության գեղարվեստական վավերագրերի վրա: Հայ գրագետներն այսօր ստեղծագործում են միշտ կապված Սովետական Միության եղբայրական բոլոր ժողովուրդների գրողների շարքերի հետ: Այսօր ուս կուլտուրայի, արվեստի և գրականության հումանիստական պատգամները կիրառվում են անհամեմատ ավելի վճռական կերպով: Լենինի ջանքերով հիմնված կոմունիստների կուսակցությունն է ամրացնում և կոփում սովետական գրողներին: Ահա թե ինչու ուս և հայ ժողովուրդների գրական կապերն էլ մեր օրերին շատ ավելի լայն են ու շատ ավելի խոր, քան այդ եղել է հեռու անցյալում: Կարևոր այդ պրոբլեմը ժամանակին նշվել և լուսաբանվել է սովետական բազմաթիվ բանասերների աշխատություններում...

Գործարանային իրականության մասին հրապարակված գեղարվեստական գրականությունը, ինչպես հայտնի է, այնքան էլ հարուստ չէ: Սովետական վիպագիրները բազմաթիվ վեպեր և վիպակներ են հրատարակել, որոնք ոչ միայն գրական-գեղարվեստական, այլ նաև պատմական մեծ նշանակություն ունեն: Մաքսիմ Գորկու, Ֆուրմանովի, Ֆադեևի, Ֆեդինի, Վսեվոլոդ Իվանովի, Շոլոխովի, Նովիկով-Պրիբուդի, Օստրովսկու, Կավերինի և ուրիշ անվանի վիպագիրների երկերը հայտնի են ընթերցողների մեծ զանգվածներին:

Շատ ուշագրավ մի փաստ գրավում է մեր ուշադրությունը, երբ անցնում ենք այդ վիպագիրների գործերի մանրակրկիտ քննարկմանը: Դա այն է, որ արդյունաբերական մոտիվները հատկապես ավելի թույլ են արծարծվում շատ և շատ երկերի մեջ: Բանվոր հերոսներին նկատել են, իհարկե, մեր վիպագիրները, սակայն բուն գործարանային իրականության վրա այդ վիպագիրները չեն ծանրացել: Առանձին գրողների վեպերի մեջ կարելի է գտնել միայն թուուցիկ ակնարկներ: Այդ ակնարկներն իրականում թեթև էսքիզներ են և չեն բնութագրում գործարանային իրականության իսկական դեմքը, բնորոշ գծերը, յուրահատուկ կոլորիտը: Բացառություն են կազմում Գլադկովի «Յեմենտ» և Լեոնովի «Սոտ» հանրահայտ վեպերը:

Գլադկովի «Յեմենտ»-ի և Լեոնովի «Սոտ»-ի մեջ կան շատ ցայտուն էջեր: Երկու վիպագիրներն էլ իրական մարդկանց դիմաստվերները ներառում են հմուտ նկարիչների նման և առաջադրում են հասարակական հրատապ խրնդիրներ:

Եթե տասը կամ քսան տարի առաջ մեր վիպագիրները պատմում էին քաղաքացիական պատերազմի, հասարակական տարրեր խավերի բախումների, գյուղի սոցիալիստական վերակառուցման մասին, ապա նույն այդ հեղինակների ստեղծագործության մեջ այժմ հիմնական տեղը պետք է գրավեն նաև գործարանային իրականության և նրա հետ կապված գործիչների աշխատանքի, պայքարի, ապրումների պատկերումը: Ժամանակի պահանջն է այդ: Հայրենական մեծ պատերազմի օրերին արդեն ակներև էր արդյունաբերական նոր մեծ կոմբինատների պատմական նշանակությունը: Գաղտնիք չէ, որ այդ կոմբինատները, հակառակ թափ հաղորդելով սոցիալիստական արդյունաբերության վերելքին, մեծագույն օգնություն են հասցրել ռազմաճակատին: Ահա թե ինչու քաղաքացիական և Հայրենական պատերազմի հերոսներին երզող վիպագիրները, հետևելով սոցիալիստական շինարարության վերելքին, այսօր ավելի մեծ թափով ուսումնասիրում են արդյունաբերական շինարարության հետ կապված պրոբլեմները:

Հետպատերազմյան հնգամյազի կենսագործման համար մարտնչող գործարանային կոլեկտիվների շարքերում աշխատում են համայն սովետական ժողովրդի զավակները: Այդ կոլեկտիվների մեջ կան քաղաքացիական մարտերի վետերաններ և ավելի մեծ թվով՝ Հայրենական մեծ պատերազմի հերոսներ: Այնտեղ նկատելի տեղ են բռնում երեկվա գյուղացիները, կոլտնտեսությունների հետ կապված աշխատավորները, սովետական նոր ինտելիգենցիայի ներկայացուցիչները: Այսօր գյուղն այլևս կտրված չէ քաղաքից: Այսօրվա գործարանային իրականությունն ունի առանձին կոլորիտ: Արդյունաբերական վայրերում համախմբված բանվոր ժողովուրդը միևնույն սովետական ժողովուրդն է, բայց այդ հակայական բանվորական կոլեկտիվը նույնպես ունի հատկանշական գծեր:

Սովետական արվեստագետները չէին կարող անփութ կերպով մոռենալ իրականության մեջ կատարվող նոր պրոցեսների ուսումնասիրությունը: Հրակայական աշխատանք են ձեռնարկում ու կատարում նրանք առանձնապես հետպատերազմյան վերջին տարիների ընթացքում: Սովետական պարբերական մամուլի՝ ամսագրերի, ամսանախոսների, նույնիսկ լրագրերի մեջ կան նշանակալից գործեր, որոնք տակավին անհրաժեշտ չափով գնահատված չեն:

Այս ակնարկում ես կանգ կառնեմ ավելի բնորոշ այն գործերի վրա, որոնք այս կամ այն չափով բնութագրում են սովետական նորագույն վիպագիրների յուրահատուկ մոտեցումը գործարանային իրականությանն ու «թեմատիկային»: Խոսենք գրանցից միայն երեքի մասին: Առաջինը՝ Բորիս Գորբատովի «Իմ սերունդը» գիրքն է, որը հիշեցնում է մեմուարային վեպը: Գորբատովը պատմում է քաղաքացիական պատերազմի հերոսական էպոխայի մասին, բնութագրում գլխավորապես երիտասարդության էջանքն ու ապրումները: «Իմ սերունդը» վեպը վավերագրական նշանակություն ունի: Այդ վեպը թերթող և ուսումնասիրող ընթերցողը, մեր կարծիքով, ավելի լավ կարող է որոշել ու գնահատել մեր օրերի իրականությունը նկարագրող Կարավաևայի և Լիկստանովի նորագույն վեպերի հասարակական արժեքը:

2

Հոկտեմբերյան մեծ հեղափոխության օրերին Բորիս Գորբատովը տակավին պատանի էր, ապրում էր իր ծննդավայրում՝ համբավվոր Դոնրասի ածխահանքային շրջաններում, օր ու գիշեր շփվում էր հանքափորների հետ: Պատանեկության տարիներին նա նետվում է հեղափոխական հորձանքի մեջ, դառնում կոմերիտիության ակտիվ անդամ, պայքար է մղում հակահեղափոխական ոճակների դեմ: Հետագայում մենք տեսնում ենք նրան Արկարկայում և Կովկասում: Որպես Կարմիր բանակի մարտիկ՝ Գորբատովը Հայրենական մեծ պատերազմի օրերին հանդես է գալիս ռազմաճակատում: Այդ հրատապ

օրերին նա հրապարակում է մեծատաղանդ «Չընկճվածները» վեպը և ապա՝ ռազմական թղթակցություններ: Նա ունի մի շարք զեղարվեստական գործեր: Որպես հասուն և ինքնուրույն վիպագիր նա հանդես է գալիս առանձնապես 30-ական թվականներին հրատարակված գործերի մեջ:

«Իմ սերունդը» վեպը մեմուարային-ինքնակենսագրական ակնարկների ժողովածուի տպավորություն է թողնում: Այդտեղ Գորբատովը պատմում է իր մանկության և պատանեկության տարիների մասին: Վեպը կերտված է մեծագույն հմտությամբ: Պատկերավոր և ջերմ գույներով լեցուն այդ գրքում նկարագրվում են Դոնրասի վայրերը, քաղաքացիական պատերազմի, փոքրիկ քաղաքների մթնոլորտը, այդ քաղաքների բնակիչների ապրումները և դաղափարական բախումները: Բանվորական միջավայրի հետ կապված գրողի դիմաստվերը նշմարվում է վեպի բազմաթիվ էջերում: Գեղարվեստական կուս և ուժեղ կերտվածք է Գորբատովի այդ գործը: Գրքում սկզբից մինչև վերջ տարվում է մի միասնական գիծ: Հիմնական սյուժեն, արձանագրված փաստերը, նկարագրված տիպարները այնքան լրիվ են վերաբուրում մոտակա հերոսական էպոխայի բնորոշ երանգները, որ կարող են գրավել անգամ խրատապահանջ պատմաբանների ուշադրությունը:

Մենք գուցե և չենք սխալվի, եթե ասենք, որ Գորբատովի վեպն իր նշանակությամբ Ակսակովի, Տոլստոյի, Կորոլենկոյի, Շելգունովի, Մաքսիմ Գորկու հայտնի գրքերի նման վավերագիր է: Ակսակովի և Տոլստոյի «մեմուարային» գրքերի մեջ մենք տեսնում ենք նախակապիտալիստական իրականությունը, գյուղական ինտիմ բնակարաններ, բարեմիտ ազնվականների անդորրավետ դաստակերտ-պուրակներ և վերջապես իդիլիական գույներով զծագրված ազնվական հերոսների դիմաստվերներ:

Վլադիմիր Կորոլենկոյի «Իմ ժամանակակցի պատմությունը» մոնումենտալ գրքի մեջ առաջագրվում են նոր թեմաներ: Կորոլենկոն հանդես է գալիս որպես «բարի հին անցյալի» դեմ ծառայող գործիչ: Ռոմանտիկական պուրակների կողքին նշմարում է բանտերում և աքսորավայրերում տառապողների դիմաստվերները: Կորոլենկոն թեև ժողովրդի հետ կապված ըմբոստ մտածող է, բայց նույնպես ամուր թելերով կապված է «հայրերի մեղքերը» քավող ինտելիգենցիայի հետ: Նա տարված է ռոմանտիկական հուշերով: Գատապարտելով դաժան անցյալը, նա չի կարողանում ու չի ցանկանում վերջնականապես կտրվել հին հուշերից. անիծում է այդ անցյալը և միաժամանակ չի վրստահում ձայնակցել անցյալի դեմ վճռական պայքար մղող «չորորդ դասի» շարժմանը: «Երկու լեռների արանքում» կանգնած տխուր ուխտավորի նման է հետևում Կորոլենկոն հասարակական-գաղափարական նոր պրոցեսներին: Կորոլենկոյի նման են մոտենում հայրենի իրականությանը նաև Շելգունովը, Վոդովոզովան, Կրասնոտկինը, «Նարոդնայա Վոլյա»-ի ներկայացուցիչները:

Այդ գործիչները չեն նկատում քաղաքներում ու գործարաններում կազմավորվող «նոր ուժի»—բանվոր դասակարգի ներկայացուցիչներին, իսկ եթե նշմարում են, դարձյալ չեն կարողանում հասկանալ «նոր մարդկանց»: Նույնիսկ Գլեր Ուսպենսկին իր օրերի «Հաստուշկաների» մեջ տեսնում է գործարանի ղեմ ըմբոստացող անգիտակից շինականի դիմաստվերը: Մաքսիմ Գորկին առաջինն է, որ խաչ է քաշում անցյալի իդեալականացմանը նվիրված նարոդնիկական գրականությունից վրա: Անողորմաբար քարկոծելով քաղաքներին, նա կերտում է մեքենավար Նիլի կերպարը: Դատապարտելով Գորգեններին ու Արտամոնովներին, նա իր «Մայրը» վեպում ներբող է ձուլում հին աշխարհի ղեմ ծառայող «չորրորդ դասի» ներկայացուցիչներին՝ պրոլետարներին: Գորկին քանդակում է վլատովների կերպարները: Երկրագնդի բոլոր աշխատավորների համար վլատովները դառնում են նվիրական կերպարներ: Բողոքի մոտիվը շատ որոշակի հնչում է նաև Գորկու «Մանկություն» և այլ գործերի մեջ:

Սհա այս ֆոնի վրա էլ Գորբատովի գիրքը ստանում է շատ մեծ նշանակություն, որպես պատմա-գեղարվեստական նոր վավերագիր: Ընթերցողի համար հետաքրքրական են վեպում նկարագրված և՛ ղեպերը, և՛ տիպարները, և՛ թե ինքը՝ նոր «պատմիչը»— հանքագործների հետ կապված, Հոկտեմբերյան հերոսական երիտասարդության շարքերից ելած ու միշտ առաջ նետվող մասսաների շարքերին միաձուլված վիպագիր-արվեստագետը:

Գորբատովի վեպում կան նաև բանվորների պորտրետներ, բայց գլխավոր ու հիմնական հերոսները պատանիներ են: Առաջին հատվածի մեջ արդեն տեսնում ենք դպրոցում ուսանող այդ պատանիներին: Աշակերտների մեծ մասը բանվորների և արհեստավորների զավակներն են: Քաղաքում էլ ավելի մեծ թիվ են կազմում աշխատավորները:

...Քաղաքացիական պատերազմը սկսվել է: Դաժան օրեր են: Մարտեր են բռնկում քաղաքի մերձակա վայրերում: Ազատագրված շրջաններում անգամ նշմարվում են թշնամի ոհմակներին այս կամ այն ձևով ձայնակցող երկերեսանի քամելեռոններ: Այդպիսի մարդիկ կան նույնիսկ դպրոցում: Գորբատովը կանգ է առնում ոչ միայն աշակերտների, այլ առանձին ուսուցիչների վրա: Գպրոցը ամենանորը բարոմետրի նման արտացոլում է քաղաքում տարող բնակիչների տրամադրությունները:

Խիզախ և ըմբոստ պատանիների ղեմ պայքար են կազմակերպում թուլամորթ ու տատանվող աշակերտների վրա հենվող հակահեղափոխական աշակերտները: Աշակերտական կոմունիստական խմբակը, սակայն, համակված պատանեկան եռանդով, նոր թափ է հաղորդում աշակերտական հեղափոխական շարժմանը: Գորբատովը նկարագրում է զավակների գաղափարական բախումները «հայրերի» հետ: Սուր վեճեր են բռնկվում կրոնի և օրվա հրատապ հարցերի շուրջը: Հաճախ պատանիներն ստիպված են լինում թողնել հայրե-

նական տունը: Վեպի մեջ հյուսիս գոյներով են գծագրված և՛ բանվորների, և՛ աշակերտների, և՛ կոմերիտականների տարբեր տիպարները: Հեղինակը իր սեփական գրով նկարում է կենդանի ղեմքերի հսկայական մի պատկերասրահ ու միաժամանակ անաշու կերպով բնութագրում է դրամատիկական կոնֆլիկտները: Գարինի «Տյոմայի մանկությունը» և «Գիմնադիտները» գրքի ընթերցողն այս անգամ կարող է արձանագրել ուշագրավ մի մանրամասնություն: Գարինի օրերին ազատախոհ աշակերտների շրջանում նկատելի տեղ էին գրավում ունևոր քաղաքացիների զավակները: Աշակերտների գաղափարական բախումները կարծես սոցիալական աստառ չունեին: Գորբատովի վեպի մեջ այդ աստառը նշմարվում է խիստ որոշակի կերպով:

Վեպի հերոսները հանդես են գալիս որպես աշխատավորական զանգվածների հետ կապված բանվորների զավակներ: Աշակերտներն իրենց հայրերի նման են մոտենում գործարանին ու գործարանային իրականությունը: Նրա հորեղբայրը հին վարպետ է, հմուտ մեքենագետ, գործարանային աշխատանքի էնտուզիաստ, որն առանց աշխատանքի չի կարող ապրել: Նա ուրախանում է, երբ տեսնում է պատանի աշակերտների եռանդը: Վեպում լավ են գծագրված մահացող գործարանի հոգնարեկ դիրեկտորը, աշխատանքի մարտիկ հետ, բայց միաժամանակ աշխատում են ամեն կերպ նպաստել գործարանի վերակենդանացմանը: Ամրակուռ թելերով կապված են գործարանի հետ թե՛ հասակավոր բանվորները, թե՛ վարպետների կողքին աշխատող պատանիները: Գործարանը բանվորական մեծ կոլեկտիվի համար «հրեշ» չէ: Մեքենաները սիրելի գեներեր են: Բանվորի, մեքենավարի, վարպետի մասնագիտությունը համարվում է պատվաբեր: Հպարտ քայլերով է քայլում Ալյոշայի հորեղբայրը: Ավելի ևս հպարտ է դառնում նա, երբ տեսնում է մեքենաների մոտ աշխատող իր «ժառանգներին»— պատանի բանվորներին: Հուսահատվում է այդ վարպետը, երբ իմանում է գործարանային վարչության անսպասելի կարգադրությունը: Ըստ նոր որոշման՝ պատանի աշակերտների արհեստանոցը պիտի փակվի: Կոմերիտիության ներկայացուցիչ միջամտությունը այդ որոշումը չի կիրառվում: Նորից արհեստանոցը կյանք է առնում: Տակավին երեկ կոմերիտականներին բնագոտող վարպետը դառնում է նոր երիտասարդության բարեկամ և նոր կարգերի համոզված ջատագով: Այդ ամենի մասին Գորբատովը պատմում է որպես ականատես և, ծանրանալով հին օրերի բանվորների կյանքի վրա, բնութագրում է նրանց հոգեկան ապրումները:

Նախահեղափոխական ուսուցողականության մեջ ժամանակին արծարծվել են արդյունաբերական մոտիվներ, բայց չի արձանագրվել կամ ընդգծվել բանվորների յուրահատուկ մոտեցումը գործարանին: Գործարանային իրա-

կանությունն անցյալում նկարագրվում էր միայն ու միայն բացասական գույններով: Գործարանն անցյալում «դժոխք» էր և բացառապես իր «հրեշավոր» էությունը էր ցուցադրում: Նարոզնիկ վիպագիրները կանգ չէին առնում պրոլետարների նոր հատկանշական գծերի վրա: Կուպրինը նարոզնիկ չէր, բայց իրականում իր «Մոլոք»-ի մեջ գործարանին մոտենում էր նարոզնիկների նման: Գորբատովը տեսնում է բանվորներին և հենց բանվորների դիտակետով զինված է մոտենում գործարանային իրականությանը: Հին կարգերի դեմ ծառանալով հանդերձ՝ նրա բանվորները բացասաբար չեն գնահատում գործարանի դերը, այլ դրվատում են գործարանն ու աշխատում ուժ տալ գործարանի վերականգնմանը: Գործարանն այժմ իրենց՝ բանվորներինն է: Ահա այս փաստը վիպագիրը արձանագրում է որոշակի: Գորբատովի վեպի պատմական խոշոր արժեքը հենց դրա մեջ է:

Վեպի հերոսը հիացումով է գիտում ինդուստրիական բնանկարին հատուկ մանրամասները: Մեքենաների աղմուկը նրան ոգևորում է: Նա տեսնում է գործարանային մարտկոցներ, շուգունով լեցուն կաթսաներ և որոնում է մեքենաների «պտուտակները»: Ալյոշան սովորում է, նորից սովորում, բայց չի դառնում գործարանից փախչող, գործարանի թշնամի: Նա գիտե, որ իր աշխատանքով կարող է շարժել կյանքը և մեծագույն թափ հաղորդել հին կյանքի հեղաշրջման համար մղվող հերոսական պայքարին: «Մարդիկ ամեն ինչ կարող են անել», — ասում է նա, երբ լսում է գործարանի շշակի ձայնը: Գնացքի վազոնի պատուհանից տեսնելով հայրենի վայրերը, նա տեսնում է և ապագայի կենսատու հեռաստանները: Վերհարնյան «Գարբինը» նույնպես առույգ և մարանչող հերոսի կերպար է: Սակայն Վերհարնի հերոսը սահմանագծի մոտ է կանգնած և շատ հեռու հորիզոնում է միայն նշմարում գալիք հաղթանակի գրավականները: Գորբատովի հերոսները կտրել, անցել են այդ սահմանագիծը և անմիջապես մարտեր են մղում խուճապի, սովի, քայքայման դեմ: Նրանք տեսնում են կառուցվող շենքերի և վիթխարի գործարանների կենդանի սիլուետները, լսում են շոգեմեքենաների ու գնացքների աղմուկը և համակվում արտասովոր եռանդով ու էնտուզիազմով:

Վեպում կա երեք էջ, որոնք ահա այդպես էլ բնութագրում են գործարանային իրականության ազդեցության ներքո նոր մոտիվներով տարված պատանի հերոսի ապրումները: Արձակ բանաստեղծությունների հատուկ ձև ունեցող այդ էջերում շատ ավելի որոշակի է հեշտում նոր էպոխայի հեղափոխական պատանու ձայնը:

Աննա Կարավաևան առաջին անգամ չէ, որ նկարագրում է գործարանային իրականությունը: Նրա «Սղոցագործարան» վեպը շերտ կոլորիտով կերտ-

ված ուժեղ կտավ է: Այստեղ Կարավաևան, իրատես նկարչի նման մոտենալով նյութին, կանգ է առնում ոչ միայն նոր գործարանը կառուցողներին, այլ նաև գործարանի ազդեցությամբ վերափոխվող գյուղի վրա: Կավ են գծագրված կառուցման պրոցեսի առանձին երանգները: Վեպի կենտրոնական դեմքերից մեկը սովետական նոր կանանց ներկայացուցիչն է: Իր ամբողջ կեցվածքով, կուռ քայլվածքով և անմիջականությամբ այդ նոր կինը կարծես որոշ շափով հակադրվում է Տոլստոյի և Տուրգենևի վեպերի ազնվական հերոսուհիներին: Վեպն ամբողջովին հագեցված է դինամիկայով: Առանձին էջերը գունեղ էություններ են, որոնք ավելի են սրում գործարանի հեղափոխական նշանակության բնութագրությունը:

Կարավաևայի նոր վեպը («Վաղք»), մեր համոզմամբ, գեղարվեստական ուժեղ կտավ է: Այդ վեպը միաձուլ է՝ սկզբից մինչև վերջ:

Վեպի սյուժեն այնքան էլ բարդ չէ: Վիպագրուհին նկարագրում է թիկունքում կազմակերպված մեծ գործարանի պատանի և երիտասարդ աշխատավորների կյանքը: Գործարանը ռազմանյութեր է պատրաստում: Պատանիները գիտեն, որ իրենց աշխատանքով նպաստում են ազատագրական մեծ պատերազմին: Պատանիների մեջ, սակայն, կան զանազան հոգեկան խառնվածք ունեցող տիպարներ: Կարավաևան բավական մանրամասն կանգ է առնում պատանիների փոխհարաբերությունների և առանձնապես նորեկ բանվորների հոգեկան ապրումների վրա: Նա շատ հետաքրքրական ձևով է նկարագրում նոր մարդու, աշխատավոր, էնտուզիաստ մարդու կազմավորման բարդ պրոցեսի առանձին երանգները:

...Ավերված վայրերից ու այրվող քաղաքներից զաղթականների շարքեր են հոսում: Մեծ թիվ են էազմում սպանված ու զոհված քաղաքացիների զավակները: Կոմերիտական կազմակերպության հրահանգով, գործարանի մարզված պատանի բանվորների մի խմբակ կայարան է ուղևորվում՝ իրենց նորեկ ընկերներին ողջունելու և խրախուսելու նպատակով: Այդ տեսարանը լավ է նկարագրված: Հիմնական հերոսների դիմաստվերները նշմարվում են արդեն այդտեղ՝ կայարանում: Տխուր են եկվորները: Կան նրանց մեջ նույնիսկ հուսահատ ապրումներով համակված մարդիկ: Նրանք տխուր ճանապարհորդություն են կատարել: Նրանք կարծես տեսնում են հայրենի վայրերը, ավերված քաղաքները, կայարանների մոտ խմբված տխուր զաղթականներին, օդանավերից կրակ ու ռումբեր նետող վայրագ բորենիներին: Եվ ինչպե՞ս կարող են մոռանալ երեկվա պայծառ օրերը, կապույտ ծովափը, հարազատներին ու բարեկամներին: Տակավին հայտնի չէ, թե ինչպես կլինի կյանքն այդ անձանոթ կայարանի մոտ տարածված անձանոթ քաղաքում: Սևաստուպոլից է եկել պատանի Սեմյոնովը: Նա շատ ակտիվ տղա է, բայց չի կարողանում ու չի ցանկանում հաշտվել իր նոր բախտը տնօրինողների որոշման հետ: Նա

ինչպես՝ կարող է մոռանալ իր մտերիմ ծանոթներին ու առույգ նավաստիներին: «...Նորից պիտի վերադառնամ Սևաստոպոլ», — կրկնում է նա անվերջ, չզարողանալով համակերպվել նոր իրականությունը: Սեմյոնովի նման են մոտենում գործարանային աշխատանքին զրեթե բոլոր եկվորները: Այդ փաստը Կարավաևան արձանագրում է շատ կտրուկ կերպով: Նա նույնիսկ առաջարկում է հաշվի առնել զրա նշանակությունը: Հեղինակը կարծես դիտմամբ հիշեցնում է, որ այս անգամ գործարանային բանվորությունը շատ չուրահատուկ «դեմք» ունի: Նոր տիպի բանվորություն է հեռու վայրերից եկած այդ բանվոր պատանիների ջոկատը: Այդ նոր ուժը աշխատում է պատերազմի ծանր պայմաններում, նոր շրջապատում, նոր և անծանոթ միջավայրում: Տխուր լուրեր են հասնում ճակատից: Տխուր մտորումներով են համակված մեքենաների մոտ կանգնած պատանիները: Հուշերով ծանրաբեռնված նորեկները մեքենաների ձայնն են միայն լսում ու չեն կառողանում նետվել ստեղծագործական աշխատանքին լծված մարտիկների հորձանքի մեջ: «Շատ ծանր տղերք են եկել, անդադար ետ են նայում: Մեկը ցանկանում է նորից վերադառնալ Սևաստոպոլ, մյուսն իր կոլխոզն է երազում...»:

Նորեկները ծանր տպավորություն են թողնում գործարանում արդեն կազմակերպված պատանեկան առաջին զվարդիայի վրա: Այդ զվարդիայի շարքերում գտնվեցին, իհարկե, նորեկներին դատափետող քննադատներ, որոնք զայրույթով են խոսում նրանց մասին: Չէ՞ որ իրենք էլ կորցրել են մոտիկներին, իրենք էլ ապրել ու ապրում են ծանր օրեր: Առաջավոր պատանիները չեն ձայնակցում անողոք քննադատներին: Այդ պատանիներն ընկերական օգնության ձեռք են մեկնում նորեկներին, ոգևորում ու խրախուսում անփորձ պատանիներին: Այս ուշադրով երևույթի վրա էլ ծանրանում է Կարավաևան և ընդգծում ընկերականության վսեմ նշանակությունը: Նա հիշեցնում է, որ «ընկերականության» ոգին սովետական երիտասարդության կարևորագույն հատկանիշներից մեկն է: Վիպագրուհին նորից ու նորից ստիպում է մեզ հիշել Հայրենական մեծ պատերազմի օրերի լուռ մարտիկների, հեռու թիկունքում, գործարաններում ու հանքերում տոկուն աշխատանք կատարող սովետական «անշուք», պարզ աշխատավորների արտասովոր հերոսությունը:

«Վազք» վեպի մեջ հիմնական գաղափարը հենց «ընկերության» նշանակության ընդգծումն ու հիմնավորումն է, այն «ընկերության», որը գոյություն ունի միայն սովետական իրականության մեջ և միլիոնների ազատագրական շարժման օժանդակող ազդակներից մեկն է:

Կարավաևան «Վազք» վեպի մեջ ծանրանում է նաև մի ուրիշ հարցի վրա: Նա կոչ է անում ուսումնասիրել պատերազմի օրերին հերոսաբար աշխատող պատանիների կյանքը:

Հեղինակը շեշտում է, որ պատմական մեծ աշխատանք կատարողների

շարքերում ակնառու դեր են կատարել սովետական պատանիները՝ մեր մեծ ժողովրդի զավակները, զրեթե մանկահասակ, անկուն ու եռանդուն պատանիները: Վիպագրուհին կարծես ապագա հերոսական օրերի պատմաբանին ևս կոչ է անում հաշվի առնել պատանեկան ռեզերվների կշիռն ու նշանակությունը: Նա ցույց է տալիս այդ պատանիների նոր հատկանիշները: Գորբատովի ժամանակ սոցիալական շերտավորումը շատ ուժեղ էր: Քաղաքացիական պատերազմի օրերին դպրոցում անգամ լսվում էին սոցիալական պայքարի սուր արձագանքները: Այժմ, Հայրենական մեծ պատերազմի օրերին, սովետական պատանիների զորագունդը միաձույլ և միասնական զանգված է: Բանվորների զավակների կողքին կարելի է տեսնել ինժեներների և ուսուցիչների, կոլտնտեսականների և սովետական ուրիշ աշխատավորների զավակներին: Ո՞վ է համախմբել զրանց: Ո՞վ է թելադրում տարբեր վայրերում սնված պատանիներին կազմակերպվել ու մեծագույն խանդավառությամբ աշխատել նոր միջավայրում, մառախլապատ քաղաքում, անհրապույր գործարաններում և ծանրագույն պայմաններում: Վեպի ընթերցողն ինքն արվեն կարող է վճռական պատասխան տալ: Այդ ընթերցողը տեսնում է սովետական իրականության դաստիարակած երիտասարդներին և գիտի, որ նոր իրականությունն էլ կոփել է պատանիներին: Կարավաևան միայն նկարում է, բայց հենց իր ռեալիստական նկարներով թելադրում է ընթերցողներին անել որոշ եզրակացություններ: Նոր մոտեցումը գործարանին ու գործարանային աշխատանքին, նշում է Կարավաևան, կապված է սովետական պատանեկության հայրենասիրական հայեցողության հետ: Նոր մոտեցումը պիտի ստեղծվեր ու մշակվեր: Գործարանը պիտի դառնար պատանիներին մարզող ու միաձուլող նոր դպրոց:

Կարավաևայի «Վազք» վեպի մեջ այդ գործարան-դպրոցի պատկերը նկարված է շատ արտահայտիչ գույներով: Նորեկ պատանիները միանգամայն վերափոխվում ու դառնում են աշխատանքի էնտուզիաստներ: Միասնական աշխատանքը դառնում է նրանց համար պահանջ և պատվի գործ: Հանդես են գալիս էնտուզիաստներ, որոնք մրցելով միմյանց հետ՝ դառնում են մեքենաների ղեկավարներ: Վիպագրուհին նկարագրում է պատանի դյուտարարների, երիտասարդ ստախանովակոնների, մեքենաները կատարելագործող մեքենագետների դիմանկարները: Ռազմաճակատից վերադարձած նկարիչ Ռակիրանին հիացումով է հետևում մեքենաների մոտ կանգնած աշխատավորներին: Նա հիացումով է նկարում պատանի տղաների ու աղջիկների պորտրետները: Գործարանային ակումբում կազմակերպվում է նրա նկարների ցուցահանդեսը: Այդտեղ ցուցադրվում են նկարչի դիտողություններն ամփոփող ու բնութագրող նոր նկարները: Յուզահանդեսում բնանկարներ չկան: Նկարչին ողևորում են գործարանային նոր մոտիվները՝ մեքենաների պատանի ու երի-

տասարդ կառավարիչները: Նկարիչն աշխատում է ճշգրիտ կերպով արտանկարել աշխատանքի մարտիկների զուսպ ապրումները... Նրա համար հոգնաբեկ աղջիկը ապագա հերոսուհու նախատիպարն է: Նա տեսնում է, որ աշխատանքը ստեղծագործություն է, բայց այդ ստեղծագործությունը շատ բարդ երանգներ ունի: Պատանիները մրցելով՝ հաճախ ընդհարվում են միմյանց հետ և հենց այդ մրցման ժամանակ էլ դրսևորում են իրենց հոգեկան լավագույն հատկությունները: «Մի՞թե, — նկատում է նկարիչը, — բրիզազի պատմությունը սոսկ արտադրական կյանքի փաստ է... Հինգ աղջիկ, այն էլ զանազան հատկություններով օժտված և հոգեկան ծանրագույն ապրումներով համակված աղջիկ, հուզվում են որպես իսկական ռազմիկներ...»:

Կարավաճայի վեպի հատկապես այդ էջերը, մեր կարծիքով, կարող են գրավել նաև մեր նկարիչների առանձին ուշադրությունը: Գաղտնիք չէ, որ այսօր էլ կան նկարիչներ, որոնք կուլյրերի նման են մոտենում մեր նոր իրականությանը: Նրանք հաճախ չեն լսում գործարանային մեքենաների առույգ ձայնը և չեն տեսնում նոր կառուցողներին, չեն ոգևորվում և այրվում: Հաճախ նշմարում են միայն գործարանների մոտ թափված քարակույտերը, իսկ նոր կյանքի իսկական շինարարներին չեն կարողանում տեսնել: Պլեխանովը շատ ճիշտ մի դիտողություն է անում բելգիական հուշակավոր քանդակագործ-նկարիչ Կոնստանտին Մյոնիեի գործերի մասին: Մյոնիեն, նշում է Պլեխանովը, ուսուցիչի նման մոտենալով բանվորներին՝ կերտել է բարձր գործեր: Սակայն միևնույն Մյոնիեն ուրույն դիտակետով է զինված և հենց դրա համար էլ տեսնում է միայն հոգնաբեկ և ընկճված բանվորների սիրուետները: Բանվոր դասակարգի ավելի ինքնատիպ ներկայացուցիչներին նա չի տեսնում կամ չի կարողանում տեսնել: Չմոռանանք նաև, որ այդ տողերը Պլեխանովը գրել է մոտավորապես քառասուներկու տարի առաջ կապիտալիստական Բելգիայի ածխահանքերի բանվորների մասին: Ի՞նչ կարող ենք ասել մենք այսօրվա այն նկարիչների մասին, որոնք անգամ Մյոնիեի շփուվոր ուղեգծից էլ խորշում են:

«Վազը» վեպի մեջ նկարագրված նկարիչը, խախտելով այդ տրագիգիան, իր պրակտիկայով արդեն հրահանգում է մեր ներկայացուցիչներին՝ դիտել ու նկարել նոր հերոսներին: Վերագառնալով ռազմաճակատից, նկարիչը անցնում է այդ հերոսների ուսումնասիրությանը: Նա տեսնում է անգամ անշուք բանվորների ուրույն գեղեցկությունը, այդ նոր մարդկանց զուսպ շարժումների ներքին ուժն ու կորույր: Նա տեսնում է այդ ամենը, որովհետև ինքն էլ շատ որոշ դիտակետ ունի և իսկական բարեկամի նման է հետևում նոր կյանքին: Նկարիչ Ռակիտինին, ուշադրությամբ հետևելով պարտկազմակերպիչ Պլաստունովի դիմագծերին, նկատում է, որ պատասխանատու աշխատանք վարող այդ գործիչը հոգնաբեկ, հիվանդոտ ու գեղնավուն դեմք ունի: Սակայն

Պլաստունովի դեմքը ցուցահանդեսում միանգամայն փոխվում է: Առաջավոր աշխատավորների պորտրետները դիտող Պլաստունովը դառնում է կարծես ավելի առույգ ու զվարթ: Նկարիչը տեսնում է արդեն իսկական Պլաստունովին:

Բացի պատանիներից վեպում երևում են բազմաթիվ բանվորների ու բանվորուհիների դիմաստվերներ: Վիպագրուհին կանգ առնելով սովետական մարդկանց կյանքի վրա՝ ընդգծում է շատ կարևոր մի հանգամանք: «Վազը»-ի մեջ բանվորները երեկվանը չեն, նրանք կարդում են, սովորում, միշտ առաջ են նետվում: Եվ երբ վեպի հերոսներից մեկը՝ Սոնյան նվագում է Շուբերտի երգը, գտնում է շատ նուրբ ճաշակ ունեցող պատանի «էքսպերտների» աուդիտորիա: Դեռ երեկ այդ հերոսուհին երազում էր կոնսերվատորիայի մասին: Այսօր նա գտել է նոր ասպարեզ և կարծես հանգում է նոր եզրակացության: Նա գտնում է, որ կարող է լինել և՛ ուսանողուհի, և՛ բանվորուհի: Կարավաճան շատ թեթևակի է կանգ առնում այդ նոր «մոտիվի» վրա, բայց և այնպես, անգամ թուրցիկ ակնարկ նետելով, խիստ այժմեական պրոբլեմ է առաջադրում: Այսօր չկա այլևս ֆիզիկական աշխատանք կատարողներին և ինտելիգենտներին բաժանող կտրուկ սահմանագիծ: Բանվորների մեջ կան բազմաթիվ «ինտելիգենտներ», իսկ մեր ինտելիգենցիայի շարքերում կարելի է տեսնել բանվորների նման աշխատող բազմաթիվ տեխնիկների, ինժեներների, բժիշկների:

Կարավաճան հանդես է բերում նաև բացասական կերպարներ: Վեպի հերոսների մեջ կան հին բանվորներ, որոնք մեծամտությամբ համակված՝ արհամարհանքով են մոտենում երիտասարդ կարգերին: Նրանք սիրում են աշխատանքը, բայց չեն կարողանում, հաճախ նույնիսկ չեն ցանկանում ենթարկվել նոր կյանքի արագընթաց ռիթմին: Նրանք սնամասնությամբ տարված, անընդհատ շաղակրատում են իրենց հին արժանիքների և վաստակի մասին: Կարավաճան կերտում է այդ տիպի հերոսների դիմանկարները հմուտ նկարիչ-հոգեբանին հատուկ վարպետությամբ: Այդօրինակ հերոսներից մեկը հետագայում սթափվում է, լծվում ընդհանուր աշխատանքի և դառնում նոր ու հին կարգերին միաձուլող յուրահատուկ շաղկապ: Դժբախտաբար, այդ կարևորագույն պրոբլեմը «Վազը» վեպում արժարժված է հարևանցիորեն:

4

Լիկստանովը նոր դեմք է սովետական նորագույն գրականության մեջ: «Պատիվ»¹ վեպը նա գրել է պատանի ընթերցողների համար, բայց այն կարող է գտնել ընթերցողների շատ ավելի լայն շարքեր: Տակավին Բելինսկին

¹ Ликстанов, Малышок, М., 1948.

է նշել, որ լավագույն մանկական գրքերը պետք է համայն բոլոր ընթերցողներին: Հատկապես այս վեպի համար կիկստանովը ստացել է Պետական մրցանակ: Հայտնի է, որ թե՛ հեղինակը, և թե՛ հրատարակչությունն այժմ էլ բազմաթիվ նամակներ են ստանում: Ընթերցողների մեջ շատ են դպրոցականները, բայց աչքի ընկնող տեղ են բռնում նաև ուսանողները, ուսուցիչները, ինժեներները, արտադրության առաջավորները, կոլտնտեսային գաղտերի աշխատավորները: Այդ ընթերցողներն իրենց ընդարձակ գրությունների և նամակների մեջ բարձր գնահատականներ են տալիս կիկստանովի գործին:

Վեպի սյուժեն պարզ է: Հեղինակը նկարագրում է Հայրենական պատերազմի օրերին աշխատող գործարաններից մեկի միջավայրը: Գործարանում մեծ թիվ են կազմում այն պատանիները, որոնք ավերված վայրերից գալով՝ դառնում են բանվոր և մեծագույն թափ են հաղորդում գործարանի վերելքին:

Վեպի առաջին հատվածի մեջ նկարագրվում են պատանիների էջելոնք, ուսուցիչները, զլխավոր հերոսները: Վեպի հերոսը կարճահասակ լինելով հանդերձ՝ ամրակազմ է: Նա սիբիրցի է: Սնվել է սիբիրյան տալգաներում, պարզ մարդկանց և շինականների շրջանում: Նա գործարան է ընկնում պատահականությամբ, երբ կորցնելով իր անձնագիրը՝ ստիպված է լինում միանալ մորթիլիզացիայի ենթարկված պատանիների շարքերին: Նա անօթևան չի մնում, գտնում է ընկերներ և բարեկամներ հենց էջելոնի մեջ: Հիմնականում բոլոր պատանիները գործարանային աշխատանքին անսովոր միամիտ տղաներ են, կորցրել են մերձավորներին: Կան պատանիներ, որոնք ոչ մի լուր չունեն հեռու ուղևորված պայքարող հայրերի կամ եղբայրների մասին: Նրանք գործարան են ուղևորվում կոմերիտականների ղեկավարությամբ: Վեպի հետագա հատվածներում նկարագրվում են արդեն բուն գործարանը, առանձին արտադրամասերը, պատանիների աշխատանքն ու տոբյան: Զկա որևէ սիրային սյուժե, չկան «ոռոմանտիկական» դրվագներ: Ոչ մի խոսք չի լսվում նաև արկածների կամ հերոսական ելույթների մասին: Ամբողջ վեպը յուրահատուկ գեղարվեստական նկարագրություն է, առանց սուր կամ ցնցող դեպքերի: Երկու հիմնական գաղափարներ են հիմնավորվում վեպի մեջ, որոնք և ստեղծում են կենդանի դեպքերի մի շարան: Առաջին գաղափարը շատ պարզ է: Կիկստանովը ծանրանալով միմյանց անծանոթ պատանիների վրա՝ շեշտում է, որ այդ պատանիներին միաձուլում է ընկերականության գաղափարը: Ոչ մի պատանի միայնակ չի մնում: Գործարանում ամեն մի պատանի գտնում է և՛ հովանավորներ, և՛ մտերիմ ընկերներ:

Երկրորդ գաղափարը աշխատանքի հեղափոխական-ստեղծագործական արժեքի դրվատումն է: Գործարանն աշխատանքի վայր է ու միաժամանակ դպրոց: Այդ աշխատանքն ստեղծում է արտասովոր եռանդ և էնտուզիազմ: Պատանիները քաջ գիտեն, որ այդ աշխատանքը հիտլերյան վայրագ մարդա-

գայլերի դեմ մղած ազատագրական պատերազմին օժանդակող կարևոր ազդակ է. «...Երբեք,— գրում է կիկստանովը,— մարդիկ այնպես ջերմ չէին սիրում մեքենաները, ինչպես պատերազմի այդ ահեղ օրերին...»: Պատանիները գիտեին, որ զենք պատրաստելու համար են ստեղծվել դազգահները, գիտեին, որ դազգահները պիտի կանոնավոր կերպով աշխատեն, որպեսզի ուղղաձեռակատին ժամանակին հասցվեն հրանոթներ, հրացաններ, ուղղամթերք: Դրա համար էլ նրանք մեծագույն հոգատարությամբ մոտենալով դազգահներին՝ դատափետում են անկանոն աշխատող ընկերներին: Կիկստանովը այդ աշխատանքի և պայքարի վրա կանգ է առնում բավական մանրամասնորեն: Դազգահներին վնաս են հասցնում ոչ միայն թույլ և անվարժ աշխատավորները: Վեպի հերոսը այնքան է ոգևորվում, որ ցանկանալով իր սեփական նախաձեռնությամբ կատարելագործել իրեն հանձնարարված դազգահները՝ փչացնում է մեքենաների կարևորագույն մի մասնիկը: Նա դատափետվում է խիստ կերպով: Այդ փաստը կիկստանովը արձանագրում է, բայց հիշատակում է նաև միամիտ ուսուցիչներին, որոնք մեծագույն նրբանկատությամբ վերաբերվող վարպետներին ու ղեկավարներին: Դրանք դատափետելով անգամ տեսնում են, որ Պատիկի սխալը հապճեպ ու միամիտ եռանդի հետևանք է: Միևնույն Պատիկը կիրառելով ուսուցիչներին հարմարակալան նոր մեթոդ՝ հետագայում հիրավի կարողանում է կատարելագործել անգամ հին մեքենաները: Վեպի մեջ ահա այդօրինակ դեպքի նկարագրության նվիրված էջերը մեծ տեղ են բռնում:

Կիկստանովը հարևանցի դիտողություններ է նետում ամեն անգամ, երբ ստիպված է լինում ծանրանալ անհատական ապրումների վրա: Առաջին նվագ, այդօրինակ մոտեցումը գուցե և անտեղի խստապահանջություն կարող է համարվել: Մեզ, այնուամենայնիվ, թվում է, որ կիկստանովի մոտեցումը շատ ճիշտ է: Զէ՞ որ գործարանում աշխատող բոլոր պատանիներն էլ ուղղաձեռակատի հետ կապված են շատ անմիջական կապերով: Պատիկի եղբայրը սպանվել է պատերազմում: Ծատ-շատերի հայրերն ու եղբայրները պայքար են մղում ճակատում: Սովետական ուղջ ժողովուրդը միաձուլյ ամբողջություն է: Թիկունքում էլ սովետական մեծ ժողովուրդը պայքար է մղում: Քաղաքում, գործարանում, մեխանիկական արտադրամասում մի մոտիվ է հնչում միայն՝ տոկոն աշխատանքի մոտիվը: Վեպի հերոսի հովանավորը և ամենամոտ ընկերը՝ միշտ առույգ Միշան, սիրում է կատակներ անել, շատ հաճախ զվարթ իրոնիայով է մոտենում Պատիկին: Նրան քննադատում է կարծես հարևանցիորեն, բայց և այնպես երբեք չի հեռանում սովետական հայրենասերի վարքագծից: Ամենից հաջողված էջերը Պատիկի և Միշայի բնութագրմանը նվիրված էջերն են:

Կիկստանովը մանրամասնորեն նկարագրում է գործարանային իրականու-

թյունը, բայց չի ֆետիշացնում ոչ գործարանը, և ոչ էլ մեքենաները: Մեքենաների մոտ նա տեսնում է ամենից առաջ կենդանի մարդկանց: Գործարանում պատանի հերոսները աշխատանքի շնորհիվ ու աշխատանքի մթնոլորտում դառնում են ավելի մոտ ընկերներ: Աշխատանքն ինքը արթնացնում է լավագույն հույզեր ու ասպրամաներ: Աշխատանքի կարգապահությունը մշակվում է հենց ընկերական աշխատանքի պրոցեսում: Ընկերական կապերը դառնում են ավելի ամուր՝ դարձյալ շնորհիվ ընդհանուր աշխատանքի: Երբ պատանիների բրիգադը բացասական դիրք է բռնում ծուլ և անփույթ աշխատավորի համբավ կրող Կոլյայի նկատմամբ, նա նախ զայրանում է և անուշադրություն մատնում կոլեկտիվի որոշումը: Սակայն հետագայում, գործարանային ընդհանուր մթնոլորտի ազդեցությամբ, այդ հերոսն էլ դառնում է եռանդուն աշխատող ու էնտուզիաստ:

Լիկստանովի վեպում բազմաթիվ հյուսիսային և պատկերավոր տողեր կան անգամ դրամատիկական բնույթ կրող առանձին կոնֆլիկտների մասին: Հետաքրքրական է, որ այդ կոնֆլիկտները առաջանում են ոչ թե սիրային արկածների, այլ դարձյալ աշխատանքի հետ կապված վեճերի ու մրցակցության հետևանքով: Ամենից զարմանալին այն է, որ այդքան յուրահատուկ թեմաներ արծարծող Լիկստանովը կարողացել է կերտել Մարկ Տվենի վեպերի նման ուժեղ գեղարվեստական գործ: Նրա վեպի մեջ կա թարմ շունչ և պատանեկան անկեղծ ուժանտիկա: Արվեստագետին հատուկ շնորհքով արձանագրելով պատանիների սխրագործությունները, Լիկստանովը միանգամայն ժամանակին հիշեցնում է այդ պատանիների կատարած հերոսական մեծ աշխատանքը:

5

Մենք դիտավորյալ ծանրացանք այդ երեք գործերի՝ Գորբատովի, Կարավաևայի և Լիկստանովի վեպերի վրա: Կարող էինք անշուշտ հիշատակել նորագույն ուրիշ վեպեր կամ վիպակներ: Կարելի է հատուկ ակնարկ գրել գործարանային իրականության և գործարանային «մոտիվներին» նվիրված սովետական զանազան ակնարկների բնութագրմանը: Գա շատ հետաքրքրական և խիստ այժմեական թեմա է: Սովետական ակնարկների մեջ կան նշանակալից վավերագրեր, կան այնպիսիներ, որ գրեթե վիպակներ են և գեղարվեստական մեծ արժեք ունեն: Օրինակ՝ Գալինի «Դոնբաս»-ի մասին կազմած ժողովածուն գեղարվեստական հրապարակախոսության մի ցայտուն վավերագիր է:

Ինչպես էլ մոտենանք բոլոր այդ ակնարկների գնահատությանը, չենք կարող անուշադրության մատնել կարևոր մի փաստ: Սովետական ռուս գրողների շարքերում, առանձնապես վերջին տարիների ընթացքում, սկսվել է նոր

«բեկում» կամ «շարժում»: Սոցիալիստական գործարանները ինքնատիպ ինդուստրիական բնակարք, վերջապես գործարանային մոտիվներն այսօր—հրատապ թեմաներ են: Նոր թեմաների քննարկմանը կամ արծարծմանը նվիրված գեղարվեստական երկերը, հասարակական մեծ արժեք ունենալուց բացի, մեծագույն թափ են հաղորդում սովետական գրականության վերելքին:

Այդ ակներև փաստի կողքին մենք նկատում ենք, սակայն, բավական տխուր մի երևույթ: Սովետական գրականության հայկական ջոկատի մարտիկները տարօրինակ կերպով ետ մնալով կյանքից՝ որևէ վճռական քայլ չեն անում և գրեթե ամենեին չեն արձագանքում այսօրվա իրականության ամենահրատապ պրոբլեմներին: Մենք այսօր չունենք ոչ միայն քիչ թե շատ հաջող վիպական գրվածքներ, այլ նույնիսկ Հայաստանի գործարանների, գործարանային իրականության, գործարանային աշխատավորների մասին կազմված հաջող ակնարկներ կամ նկարագրական ուրվագծեր:

Նսկայական հեղաշրջում է կատարվել Հայաստանում: Երեկվա դուրդական Հայաստանը դարձել է ինդուստրիայի երկիր:

Հին Երևանում 1922 թ. ընդամենը 25 տարի առաջ, կար ինչ որ Տեր-Ավետիքովի մի արհեստանոց և կոնյակի մի գործարան: Այժմ Սովետական Հայաստանի մայրաքաղաքում կան մեծ գործարաններ, որոնք հսկայական արտադրանք տալով՝ երեկվա այգեգործների Երևանը դարձրել ու դարձնում են արդյունաբերական խոշոր քաղաք: Նույնը մենք տեսնում ենք նաև Հայաստանի այլ վայրերում: Կառուցվել է արդյունաբերական նոր Հայաստանի շենքեր: Գործարանային հսկաները, ծխնելույզների և շենքերի սիլուետները, գործարանային լույսերը գիշերվա պահին՝ ահա նոր Հայաստանի դեմքը: Սոցիալիստական արդյունաբերության մեջ կազմավորվել ու կազմավորվում են նոր մարդիկ: Կառուցողների, ինժեներների, բանվորների և վարպետների շարքերը կենդանի երանգ են հաղորդում երկրին. նոր մոտիվներ են հնչում Հայաստանի ինդուստրիալ վայրերում: Հիմնովին փոխվել է մեր հայրենիքի բնակչության «դեմքը»: Նախահեղափոխական տարիներին Երևանում կար 35.000-ի հասնող բնակչություն, իսկ այսօր այն ավելի քան 300.000 աշխատավորներով լեցուն մի մեծ կայան է:

Ոչ միայն մեր վիպագիրները, այլ նույնիսկ բանաստեղծներն ու ակնարկագիրները ետ են մնում մեր կյանքի զարգացման ուղեգծից: Մեր ճանաչված գրողներն այսօր էլ չեն վստահանում մոտենալ նոր մոտիվների վերարտադրմանը: Փաստ է, որ անկեղծ կերպով նոր իրականությունը մեծարող Անանյանն այսօր էլ հին զենքով է մոտենում նոր կյանքին, և նոր միջավայրում էլ դարձյալ նշմարվում են միմիայն Հովհ. Թումանյանի հերոսների սիլուետները: Ո՛չ վ. Անանյանը և ո՛չ էլ մեր մյուս վիպագիրները հաշվի չեն առնում, որ անգամ մեզ՝ հին ընթերցողներին վրա նկարագրական հնօրյա պրիոմները

Լավ եմ գրել ես, թե վատ—
Սրտովդ իմացիր,—
Չկա ուրիշ բննադատ
Քո սրտից բացի:
«Ընթերցողիս» — 1929 թ.:

1

Եղիշե Չարենցը հրատարակել է երկերի երեք ժողովածու, որոնք այսօր կարևոր գրական-պատմական վավերագրերի արժեք ունեն: Նա է ընտրել ամեն մի ժողովածուի ուրույն կոմպոզիցիան, և նա է դասավորել յուրաքանչյուր առանձին հատորի բոլոր նյութերը, ջանալով պարզել, թե՛ իր «ղեմքի» հիմնական հատկանիշները, թե՛ միաժամանակ բնութագրել իր ստեղծագործական էվոլյուցիան: Չարենցի երկու ստվար հատորներից բաղկացած առաջին ժողովածուն լույս է տեսել 1922-ին, Մոսկվայում: Այդտեղ ամփոփված են նրա վաղ շրջանի ստեղծագործությունները՝ «Դանթեական առասպել» պոեմը, «Իմ վրիզմի ներքո կերտված բանաստեղծությունները», և, վերջապես, հեղափոխական բանաստեղծություններն ու պոեմները: Հետագա երկու ժողովածուները լույս են տեսել Երևանում, 30-ական թվականներին: Այդ ժողովածուներից առաջինը՝ «Երկեր» վերնագիրը կրող մեծագիր և ստվար այն հատորն է, ուր զետեղված են նրա պոեմները, բանաստեղծությունները, թարգմանությունները, արձակ երկերը: Ժողովածուն Չարենցը սկսել է պատրաստել 1931-ին և տպագրության է հանձնել 1932-ի սկզբին, իսկ ապրիլին լույս է տեսել ամբողջ հատորը: Երկրորդ ժողովածուն, որի վերնագիրն է «Գիրք ճանապարհի», Չարենցը հրատարակել էր 1933-ի այն օրերին, երբ նրա դեմ ուղղված «պայքարը» շափազանց սուր բնույթ էր ստացել: Այդ ժողովածուն լինելով նախորդ հատորի շարունակությունը, միաժամանակ իր առանձին մասերում կրում էր պոլեմիկայի բնույթ ունեցող «պատասխանների» եղանակ:

Այժմ անցնենք հիմնական և ավելի ծավալուն այն ժողովածուին, որը Չարենցը կազմել է մեծագույն ուշադրությամբ՝ իր իսկական «ղեմքը» բացահայտելու նպատակով: Այդ մեծագիր հատորին կցված նախաբանում նա շեշտում է, որ ինքն անհրաժեշտ է համարել հիմնովին վերակառուցել իր երկերի առաջին հրատարակությունը:

...«Ես,— գրում է Չարենցը,— կատարել եմ խստագույն քննություն»: Ապա ընդգծելով, որ մոսկովյան առաջին ժողովածուից նոր հատորի մեջ ինքը զետեղել է միայն մի բառորդը և դիտավորությամբ զուրս է նետել ամբողջ շարքեր, Չարենցը գրում է, թե ինչու է հիմնովին վերակառուցված նոր ժողովածուն հրատարակել: Նա առում է, որ ինքը հանված երկերը համարում

և միօրինակ գյուղանկարները կամ ժանրային տեսարաններն այլևս նկատելի ազդեցություն չեն թողնում: Իսկ ինչպե՞ս կարող է այդ հին սյուժեներին և հին թեմաներին մոտենալ Երևանի բնակիչների երիտասարդ մեծամասնությունը, կամ թե ամբողջ Հայաստանում Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո ծնված սերունդը: Ոչ միայն պատանիները, այլ նույնիսկ երեսնամյա աշխատավորները նոր մարդիկ են ու չեն կրում հնօրյա հուշերի կամ վերապրումների ծանր բեռը: Նրանք են ամբացրել սոցիալիստական մեր հայրենիքի պայծառ շենքը: Նրանք են մահացու հարված հասցրել հիտլերյան մարդակերներին: Նրանք կառուցել ու կառուցում են նորանոր ջրանցքներ, էլեկտրակայաններ, հակալական գործարաններ և կոմբինատներ: Չորագլուստում, Գյումրուղէստում, Ալավերդու և Զանգեզուրի պղնձահանքերում Հոկտեմբերյան այդ սերունդն է կրում նոր կյանքի հիմքը... Եվ մահ այդ սերունդն էլ այժմ գրքերի, վնասների, պոեմների հիմնական ընթերցողն է:

Այդ նոր ընթերցողների աշխատանքը, պայքարը, ապրումներն ու խանդավառությունը պիտի այսուհետև ավելի մեծ տեղ գրավեն մեր գեղարվեստական գրականության մեջ: Գործարանը, գործարանային իրականությունը, գործարանային աշխատավորները՝ ինժեներները և լաբորանտները, գյուտարարները և վարպետները, նորարարները, հարվածայինները, լուռ և տոկուն էնտուզիաստները իրական և կենդանի վավերագրեր են:

Վիպագիրներն իրավունք չունեն անցնելու այդ փաստերի կողքից: Հայ գրողները տեսնում են, անշուշտ, նոր իրականությունը: Այդ մասին երկու կարծիք լինել չի կարող: Նրանք ընդունակ արվեստագետներ են և կարող են արձագանքել նոր ընթերցողների միանգամայն արդարացի պահանջներին՝ կերտել նոր բարձրարվեստ գործեր... Սակայն և այնպես, անգամ այսօր մենք չունենք գործարանային իրականությանը նվիրված, այդ իրականության ուրույն «ոռոմանտիկան» նկարագրող ոչ մի վեպ կամ պոեմ:

Ահա այս փաստերն էլ արձանագրում ենք մենք՝ անկեղծ ցանկություն ունենալով մեր կյանքի առաջատար հերոսներին տեսնել մեր գրականության մեջ այնպես, ինչպես նրանք կան, ապրում, աշխատում ու երազում են ապագայի մասին:

է «թե՛ ձևի, և թե՛ բովանդակութեան տեսակետից» ոչ ինքնուրույն գործեր: Անցնելով «հետհեղափոխական շրջանի» գրվածքներին, Չարենցը գրում է, որ «դուրս է թողել «Կոմալմանախն» ու մի շարք այլ գրվածքներ»: Այդ ստեղծագործությունները, Չարենցի կարծիքով, «զուրկ են գեղարվեստական արժեքից»: Վերջապես ես նշում է, որ ինքը «Դանթեական առասպելից» դուրս է գցել մի ամբողջ գլուխ: ... Հետաքրքրական են հետագա դիտողությունները... «Իր ժամանակին, — կարդում ենք նախաբանի մեջ, — «Դանթեական առասպելը» գրված է եղել ազգամիջյան կոտորածների բովանդակ զարհուրանքը պատկերելու նպատակով, սակայն այժմ ոչ միայն կարող է թվալ գեղարվեստական տեսակետից վուլգար ու անհամոզեցուցիչ, այլև առիթ տալ սխալ մեկնություններին»... Ինչպես տեսնում ենք, Չարենցը շատ որոշակի ընդգծում է, որ վերոհիշյալ պոեմից դիտավորությամբ հանել է թե՛ վուլգար ու «անհամոզեցուցիչ» էջեր, և թե՛ մանավանդ այն մասերը, որոնք «կարող էին առիթ տալ սխալ մեկնություններին»:

Երկերի ժողովածուի երևանյան հրատարակության մեջ առաջին տեղն է բռնում հենց «Դանթեական առասպել» պոեմը: Չարենցը գեն է նետել մի ամբողջ գլուխ, ջանալով շեշտել ու ցուցադրել պոեմի այն մասերը, որոնք իր կարծիքով, այլևս չէին կարող առիթ տալ սխալ մեկնություններին: Չարենցն, այնուամենայնիվ, նոր ժողովածուում պահպանել է պոեմի մեծագույն մասը՝ ձգտելով բացահայտել հնօրյա ապրումներն ու մտորումները: Պոեմի տակ նշված է, որ հեղինակն այդ գործը գրել է 1915—1916 թվականների շափազանց տխուր զեպյեների ազդեցության ներքո. այն օրերին, երբ ինքը շարքային զինվոր էր և գտնվում էր ռազմաճակատում: Պոեմն, այդպիսով, կրում է յուրահատուկ ռազմական հուշեր — ակնարկների բնույթ: Շարքային զինվորը ռազմի դաշտն է ուղևորվում: Սկզբում այդ զինվորը որևէ արտասովոր երևույթներ չի տեսնում: Երիտասարդ է: Քայլում է մյուս զինվորների հետ՝ համակված միամիտ և անդորր հույզերով: Տեսնում է հայրենի դաշտերն ու լեռները, գեղեցիկ բնանկարներ՝ «ոսկե դաշտերի գեղեցկությունը»: Սակայն հետզհետե փոխվում են տեսարանները: Անակնկալ կերպով շարքային զինվորը դաշտում նշմարում է մի դիակ և քիչ հետո՝ նորից դիակներ: Զինվորների ջոկատը ուղևորվում է դեպի նոր վայրերը, տեսնում է ավերված գյուղեր և կրկին դիակներ ու դիակներ: Զինվորների ջոկատը մտնում է մի գյուղ: Զինվորը նետվում է դեպի ջրհորը և աշխատում հագեցնել ծարավը: Սակայն, երբ նա պարանք ձգելով բարձրացնում է դուլը, ջինջ ջրի մեջ տեսնում է մարմնի կիսանեխ մասեր, որոնք հանդարտ անազմուկ օրորվում էին: Զինվորները շարունակում են իրենց ուղին: Մտնում են մի քաղաք և նորից տեսնում են ամայացած ու ավեր շենքեր, ավերված սենյակներում՝ դարձյալ դիակներ ու դիակներ...

Այդպես բանաստեղծը պատմում է իր հուշերը: Նա նկարագրում է թըշնամու պարտությունը և «հաղթողների» անսպառ եռանդը. բայց դարձյալ վերջնական հաղթանակը չի տեսնում: Նա նկարագրում է գեղեցիկ բնանկարներ. «դաշտերի ոսկե հեռաստաններում գյուղական շուրջպարը կանաչ», սակայն անվերջ տեսնում է ավեր, կոտորած, դիակներ...

Կոտորածի ու պատերազմի դեմ ուղղված իր մոռյալ պոեմը Չարենցը գրել է այն օրերին, երբ մամուլի էջերում դրվատվում էր պատերազմը և երբ հայ իրականության մեջ իշխող մտիվներ էին «արյան ձայների» կամ «արցունքի հովիտների» երգիչների երգերը: Միևնույն մտիվներին նա արձագանքում է նաև 1916-ին գրված իր «Աթիլա» բանաստեղծությունում: Սիմվոլիստ պոետներին հատուկ ձևով կերտված այդ բանաստեղծության մեջ Չարենցը նորից նկարագրում է մոռյալ տեսարաններ, ավեր, կոտորած, մահ...

Այդպես է եղել, ասում է կարծես պոետը, իմ վաղեմի ուղին: Շատ և շատ օրեր եմ ես տեսել: Մանրագույն և տխուր պատկերներ եմ դիտել իմ հայրենի երկրում: Տեսել եմ հայրենի ժողովրդի անսահման տառապանքը: Իմ առաջին երգերն էլ ստեղծվել են ցնցող զեպյեների ազդեցության ներքո:

Այդ տարիներին Չարենցի վրա առանձնապես մեծ ազդեցություն էին թողել սիմվոլիստ-բանաստեղծները: Չարենցը, ինչպես տեսանք, ինքն է նշում, որ իր հին բանաստեղծությունների մեծագույն մասը դիտավորությամբ չի զետեղել երևանյան նոր ժողովածուում: Սակայն և այնպես, նա անհրաժեշտ է համարել նույնիսկ իր երևանյան ժողովածուում մտցնել հնօրյա մի քանի երգեր: Նա չի ցանկացել ծածկել, որ ինքը 1915—1919 թվականներին, հիրավի, համակված է եղել տխուր ու հուսահատ ապրումներով... «Գիշերը, — գրում է նա 1915-ին, — ամբողջ հիվանդ, խելագար, ես երազեցի արևի մասին...»: Տխուր իր երգը նա ավարտում է շատ հուսահատ տողերով.

... Բայց շուրջս այնպես գունատ էր, տկար,
նոսքեր շկային ու արև չկար...

Այդպես են մի շարք բանաստեղծությունները: Հետևելով սիմվոլիստներին, Չարենցը նկարագրում է «անտես» ու «անձայն» հյուրերի սիրուետները և գրում.

... եվ ինչո՞ւ եկան, և ինչո՞ւ անցան,
Մենք չենք իմանում աշխարհում անդուռ...

Մի ուրիշ բանաստեղծության մեջ Չարենցը նկարագրում է իրեն հմայող մեծ քաղաքի «փողոցային լապտերը» և «փողոցների աղմուկը հին» կամ էլ «փառքերի վազը հավերժական», «շրջիկի երգը տխուր»: Ամեն ինչ տաղտուկ է: Բանաստեղծը տեսնում է միայն «գորշ առօրյան իր ձանձրույթով ու հե-

քիաթով»: Նման տխուր բանաստեղծությունների մեջ կարելի է տեսնել սիմվոլիստների յուրահատուկ պոեզիայի ազդեցությունը: Օտար դեմքեր, կանանց անհասկանալի հայացք, հավերժական ուրվական, ջարդված հույսեր, զանազան այդպիսի մտապատկերները ցույց են տալիս, որ ժամանակին Չարենցը նկատելի չափով ազդվել է սիմվոլիստներից և հենց այդ փաստն էլ կարևոր է համարել ցուցադրել իր երևանյան ժողովածուում: Աշնանը նվիրված իր բանաստեղծությունը Չարենցը հեռույալ տողերով է ավարտում.

Աշուն է, շուն ի՞մ աշուն է, աշուն,
Գզի՛ր, փաթաթվի՛ր իմ ոտքերին հիմա.
Քաղցած, ամենի՛ է գալի պես աշունը,—
Աշունը մշուշ է, մորմո՛ք ու մահ...

Ակներև նոր շրջադարձը պոետի ստեղծագործության մեջ սկսում է արտացոլվել 1920-ին՝ ազգայնական բուրժուական պետության քայքայման սուր օրերին: Նորից բանաստեղծին տեսնում ենք ռազմիկների շարքերում: Նա, ինչպես ինքն է նշում, արդեն 1918-ին մարտիկ է կարմիր բանակի զինվորների մեջ: Նորից նա նկարագրում է կոիվն ու ռազմական դեպքերը, բայց այս անգամ չի ցանկանում ծանրանալ մտալ տեսարանների ու տխուր սովերների վրա: Երգի ընդհանուր ինտոնացիան այս անգամ դառնում է առույգ և մարտական, ուրախ ու կենսատենչ.

Հե՛յ, հեռավոր ընկերներ ու եղբայրներ,—
Դուք չեք լսում՝ ձեզ ենք կանչում,—
Զվարթ ու սեզ...

Դա արդեն նոր տոն է: Փոխվել է բանաստեղծի դիտակետը: Փոխվել է ամենից առաջ դիրքը ժողովրդի ազատության համար մղվող պատերազմի նկատմամբ: Բանաստեղծն այժմ տեսնում է, որ պայքարն ու պատերազմը բարձր իմաստ ու նպատակ են հետապնդում, ամբոխներն ահազին գալիս են վերջ տալու անիրավ հին կարգերին, հնօրյա տիրակալների բռնակալությունը:

Անցնում է մի տարի, և Չարենցը հանգես է գալիս նոր մոտիվներով: Համակված անսահման էնտուզիազմով, «Ամբոխները խելագարված» բանաստեղծության մեջ նա ներքող է ձոնում քաղաքացիական հերոսական էպոսայի մարտիկներին: Բանաստեղծության բնորոշ վերնագիրը ցույց է տալիս, որ Չարենցը տակավին չէր ազատագրվել սիմվոլիստների ազդեցությունից: Նրա խոսելիքը, կերտված պատկերների յուրահատուկ երանգավորումը ցույց են տալիս, որ հեղափոխական նոր բանաստեղծության ստեղծագործության ժամանակ հիմնականում եղել է ոչ միայն մասսաների վեհապանձ հերոսամար-

տի պաթոսը, այլ նաև Վալերի Բրյուսովի ուրբանիստական բանաստեղծությունների ազդեցությունը: Երգելով հեղափոխական զանգվածների ներկայացուցիչներին, Վալերի Բրյուսովը նշմարում էր նաև դիտության ուժին կոթնած, հեռուները նետվող նոր մարդու կերպարը.

Նրանց ձգված մկաններում ս'մն է նստել խոնավ հողի,
Եթե ուզեն՝ արևներին նոր տեմպ կտան ու նոր ուղի...
Եթե ուզեն՝ արեգակներ կշարտեն երկիրն ի վեր.
Եթե ուզեն՝ վա՛ր կրերեն երկիրներից արեգակներ...

Իր այս բանաստեղծության վերջին տողերը Չարենցն ավարտում է ոգիշունչ բառեր նվիրելով դեպի արևը քայլող հեղափոխական և միևնույն ժամանակ «խելագարված» ամբոխների շարժմանը... Այսպես է իր ընդհանուր ձևավորումով և ինտոնացիայով նաև 1920-ին գրված «Ինպի ապագան» բանաստեղծությունը, թեև հենց 1920-ից Չարենցն սկսում է ակտիվորեն արձագանքել Մայակովսկու բանաստեղծություններին: Նա հենց 1920-ին է գրում իր նոր երգերի նոր իմաստի մասին... «Այսօրվա իմ երգի առաջ, իմ հոգու կարմիր կաթնի հանդեպ, ռադիո կայան է ամեն մի հոգի, տը էլ նա լինի...»: Նետվելով հին աշխարհի դեմ, դատափետելով իշխող կարգերը, երգելով հեղափոխական զանգվածների հերոսական մարտերը, Չարենցն իր «Բրոնզե թևերը կարմիր գալիքի» բանաստեղծությունը կերտելու ժամանակ աշխատում էր, ինչպես ինձ է թվում, որոշ չափով հետևել է միլ Վերհարնի կամ նույնիսկ Ուոլտ Ուիտմենի չանքերով օրինականացված «ազատ ոտանավորի» յուրահատուկ ոճին: Այդպիսին էր, համենայն դեպս, Չարենցի 1921-ին գրված «Քամին» բանաստեղծությունը:

Բնորոշ է մի ուրիշ փաստ և նշանակալից երևույթ: Երբ Չարենցն անցնում է հեռու հյուսիսի դաշտավայրերի ու ռուս ժողովրդի հերոսական հնօրյա ըմբոստացումների նկարագրությանը, նա նորից հիմնովին փոխում է իր նոր երգերի տոնն ու «ձևավորումը» և ընտրում միանգամայն նոր ուժի՞մ՝ ջանալով ցուցադրել «ընդարձակ տափաստաններում» կատարվող դեպքերի ինքնատիպ կոլորիտը:

Երկիրը մե՞ծ էր ու լայն:—Տափաստաններ ընդարձակ,
Անծարածիր հովիտներ ու ստեպներ հեռանիստ,
Հորիզոնից — հորիզոն ձյունե դաշտեր սպիտակ,
Կա՛յն երկնքի տակ փոված գլուզեր անգորր ու հանգիստ...

«Երգ ժողովրդի մասին» պոեմում Չարենցը նկարագրում և պատմում է՝ ջանալով ցույց տալ «ընդարձակ երկրի» սոցիալական ներհակ խավերի փոխհարաբերությունը, ցարական դեսպոտիայի և կալվածատերերի վարքագիծը,

ազատագրական ուղիներ որոնող ժողովրդի կացութունը, գյուղացիական մեծ ապստամբության ղեկավարներին: Չարենցը կանգ է առնում Ստենկա Թագինի և ապա՝ Եմելյան Պուգաչովի անունների հետ կապված գյուղացիական մեծ շարժումների վրա:

Հազար տարի էր երկրում արևն ելավ արյունոտ
Ու մայր մտավ արյունոտ, որպես թրով զարկված աչք.
Երկիրը ծով էր արևան, երգը երկրում—մահվան բոթ,
Ու շեր վառվում օրերում լույս-փրկաբեր մի հրաշք:
Վաղուց էր, շատ էր առաջ, որ հայտնվեց մի մուսիկ,
Շուրջը խմբեց բյուրավոր ըռանչյարներ անոթի,
Անտուն մայրիկ հավաքեց, գործից ընկած ու բորիկ,
Ու խմբերով նրանց խեղճ ուղեց երկիրն ազատի:
Չայն տվեց.— օ՛հ, ընչազուրկ, անհող մարդի՛կ, եկե՛ք դես,
Հավաքվեցեք բյուրավոր հոսանքն ի վար էս գետի.
Հազար-հազար հավաքվեք, պիտի տանեմ աչսօր ես
Մինչև քաղաքը ցարի, ձեր էս բանակն անոթի:
Պիտի Մոսկո՛ւ վ տանեմ ձեզ...

Ես կանգ չեմ առնում մեծ թափով կերտված պոեմի մնացյալ հատվածների վրա: Պոեմի երկրորդ հատվածում Չարենցը ընթերցողներին տանում է Մոսկվա: Այնտեղ կառափնատան մոտ տեսնում ենք տապալված գյուղացիական ապստամբության ղեկավարի դիմաստվերը:

Միևնույն բիլինային ոճով պոեմի մեջ նկարագրվում են հետագա հասարակական-ժողովրդական շարժումները՝ առանձնապես նախահոկտեմբերյան շրջանի հեղափոխական ապստամբությունները: Պոեմի վերջին տողերը նվիրված են արդեն բանվորական հեղափոխական հզոր շարժման նկարագրությանը:

Չարենցն ավելի որոշակի զրսևորում է իր նոր հայացքները 1921-ին, երբ ճիգ է անում կերտել բանաստեղծություններ Մայակովսկու երգերին հատուկ ձևով: Կարելի է առանց վարանումների պնդել, որ 1920—1921 թվականներին գրված նրա «Ամենապոեմը» կերտված էր Մայակովսկու պոեմներին հատուկ մաներայով: Պոեմի սկզբնական մասերում Չարենցը նկարագրում է 1914-ի պատերազմի օրերի Երևանի բնորոշ «դեմքը», իսկ վերջին մասում կանգ է առնում հին աշխարհի դեմ կռվի ելնող հեղափոխական զանգվածների հերոսական արշավի վրա:

Ամբողջ պոեմը գրված է շատ պարզ ոճով ու միևնույն ժամանակ սկզբից մինչև վերջ լի է մարտական տրամադրությամբ: Մենք տեսնում ենք նախահեղափոխական տարիների Երևանի պատկերը, երևանյան յուրահատուկ կոլորիտը, այրող արևն ու տապը, տոթն ու փոշին, գորշ փողոցներն ու տաղտուկ առօրյան.

Ամեն ինչ-գորշ, առօրյա:
Ինչպես միշտ, գորշ-փոշոտ փողոց:
Սառը ջուր:
Խաղող:
Գինի:
Մարդիկ, Կառքեր, Մարդիկ:

Չարենցը կերտում է «պորտրետներ», որոնց մեջ աչքի են ընկնում խանութպան Համոն և «վարժապետ» Սողոն: Խանութպան Համոն նախրյան Երեվանի ամենաբնորոշ տիպերից մեկն է, որ գծված է թուուցիկ շտրիխներով.

Երազ էր թվում Համոյին
Փողոցի արևոտ հեռուն.
Թվում էր՝ արևի վրա
Նստել է ինքը՝ Համոն:
Ոտքերը կախել է վար
Ու մոմոում է դանդաղ մի երգ...

«Նախրյան» դիրքերից մոտենալով իրականությունը, խանութպան Համոն հեռվում նշմարում է նախրյան փողոցների նման փողոցներ: Բայց ահա բռնկվում է պատերազմը և շարժվում է նախրյան ճահիճը: Ցնցվում են նախրյան երկրի մայրաքաղաքի բնակիչները: Միևնույն պիթմով է, սակայն, ընթանում պոեմում նոր դեպքերի նկարագրությունը: Հիմնական պերսոնաժը դարձյալ մնում է խանութպան Համոն, որի կողքին կանգնած վարժապետ Սողոն ունի իր առանձին պատմափոխափայտությունը «աշխարհի ճամփեքի մեջտեղում» կանգնած երկիր նախրի մասին: Վարժապետ Սողոն նախրցիների զաղափարախոսն ու իմաստասերն է.

Դարերի մշուշից ելած,
Ձեռքին՝ հնամյա մի նետ—
Դարերի մշուշի վրա
Գրում էր՝ «Վ ե ց վ ի լ ա ե թ...»

Ինձ թվում է, որ հենց իր «Ամենապոեմը» գրելու օրերին և մանավանդ այդ պոեմի սյուժետը մշակելիս, Չարենցը կարող էր խորհել նաև «Երկիր նախրի» վեպը կերտելու մասին: Երգիծաբանական ինտոնացիան շատ որոշակի նկատելի է «Ամենապոեմում»: Իրականում դա այն առաջին գործն էր, որ նվիրված էր «դարերի ուրու-հնամյա երկիր նախրի»-ի երկրպագուների ջանքերով կերտված «ուղեղային մորմոքի» քննադատությունը: Հետագայում միայն Չարենցը նոր տեղավայր է փոխադրել իր նախրցիներին... Երևանի փոխարեն ընտրել է հայրենի Կարս քաղաքը և կարսեցիներին: Էլ դարձրել տիպական նախրցիներ: «Ամենապոեմում» մերկացվում և դատափետվում

են դաշնակցական գործիչները: Մուսլլ այդ «հերոսներին» բնութագրելուց հետո Չարենցը թեթև ակնարկ է նետում «Կարմիր Մոսկվայից» հնչող նոր պատգամների մասին և ապա նշում հեղափոխական շարժումների պատմությունում այնքան նշանակալից դեր կատարող հեղափոխական «գրահապատի» դերը: Փոխվում է բանաստեղծի պատմության տոնը: Կարմիր դրոշմ է նշմարում նա «խանդավառ» իր հայրենիքում: Տեսնում է նա նոր կյանքի կառուցողներին և ներքող է ձուլում իր «հզոր երկաթե եղբորը»... Լսում է նա նոր հեղափոխական պատգամները և ինքն էլ մի ակնթարթ դառնում է գալիք մեծ օրերը երգող մարզարեն:

Նա ասում եմ՝ աշխարհը կդառնա
Մի հանձնար խնդրության փողոց,
Ու Չինկ-Ֆուն Պեկինում կխմե
Քո կենացը, Բարթոլո, Պոզոս...

Վալերի Բրյուսովը շատ բարձր էր գնահատում Չարենցի տաղանդավոր այդ գործը: Համենայն դեպս, հայտնի է, որ նա խնդրել էր այն բառացի ուսերեն թարգմանել: Հետագայում Բրյուսովը հայերենից կատարած բառացի թարգմանությունը մեծագույն ուշադրությամբ համեմատել է իսկական բնագրի հետ և հիմնովին վերամշակելով, կազմել սեփական, գեղարվեստական թարգմանությունը:

Բացի «Ամենապոեմից», Չարենցը Մայակովսկու անմիշտական ազդեցության ներքո գրել է նաև ուրիշ բանաստեղծական երկեր: Մայակովսկին 30-ական թվականներին նրա համար թանկ և հարազատ էր, որպես մարտական տարիների հրաշունչ բանաստեղծ: Չարենցը 1930-ին թարգմանել էր Մայակովսկու մի քանի բանաստեղծությունները, ջանալով ընդգծել, որ Մայակովսկու պատգամներն իր համար նվիրական հրահանգներ են. «...Գնանք, պոետ, գոռանք, երգենք, խրվենք կյանքի գորշ խորքը»: Գաղափարական-ոնախատական արվեստի հիմնական սկզբունքը բացահայտող մի լողունգ էր դա: որ առանձնապես թանկ պիտի լիներ հայ իրականությունում Մայակովսկու հեղափոխական արվեստի ուղիները շատ բարձր գնահատող Չարենցի համար:

Չարենցն իր հարուստ ստեղծագործական աշխատանքի ընթացքում անցել է բավական բարդ ուղի. նրա համար 1915—1917 թվականները եղել են պատանեկության տարիներ: Հեղափոխական ապստամբությունների և շարժումների ազդեցության ներքո նա նետվում է հեղափոխական պայքարի մեջ և դառնում նոր կյանքի հաղթանակի համար մարտնչող բանաստեղծ: Նա ճիգ է անում որոնել ու գտնել հեղափոխական մեծ մրրիկի էությունը լիովին համապատասխանող գեղագիտական ճշմարիտ ուղիներ և սկզբունքներ: Չարենցը, ինչպես իր ժամանակակիցներից շատերը, տարվում է հին, նախահեղա-

փոխական կուլտուրայի և առանձնապես դասական արվեստի և գրականության դեմ ուղղված զանազան գեղագիտական տեսություններով: Այդպիսի տեսությունների հետևողներ են եղել Մոսկվայում և Լենինգրադում ուսուցողները: Այդ տեսություններին արձագանքել են նաև «պրոլետարական» արվեստի «անադարտ» սկզբունքները պաշտպանող տարբեր տիպի գրողներ: Ինչպես էլ մենք այսօր գնահատենք հեղափոխական շարժումների առաջին օրերին հանդես եկող ֆուտուրիստ կամ կոմֆուտուրիստ պոետներին, պոլիտկուլտականներին կամ հետագայի ռապակականներին, իմաժինիստներին կամ կոնստրուկտիվիստներին, երբեք չենք կարող ժխտել այն, որ հիմնականում բոլոր այդ «հոսանքները» շատ անգամ միանման տեսակետներ էին առաջադրում, երբ խոսք էր բացվում առանձնապես հին արվեստի, դասական ճարտարապետության, նախահեղափոխական տարիների թատրոնի, օպերայի, բալետի, գեղանկարչության մասին:

Մի կարևոր հանգամանք, այնուամենայնիվ, մենք պարտավոր ենք արձանագրել: Նետվելով հեղափոխական հոսանքներին հարող գրողների շարքերը, Չարենցը չի բավարարվում հապճեպ կերպով «ընդունված» պատգամներով և շարունակում է որոնել գեղագիտական նոր սկզբունքներ և ուղիներ: Նա առանձին ուշադրությամբ հետևում է ուսական գրականության նորություններին և եզակի եռանդով հետազոտում արվեստի և գրականության մասին հրատարակված գիտական ուսումնասիրությունները: Նա ստորագրում է «Երեքի» հայտնի դեկլարացիան, բայց շատ շուտ առաջադրում է այդ դեկլարացիայի դեմ ուղղված նոր սկզբունքներ, ակտիվ կերպով ձայնակցում Մայակովսկուն և միաժամանակ ջերմ ողջունքներ ուղղում Վահան Տերյանին: Նա շտապում է արձագանքել մարտական լողունգներ առաջադրող բոլոր հոսանքներին և գործիչներին, բայց միշտ մնում է Չարենց, իր դիրքը պաշտպանող և սեփական «անկախ» ուղեգիծը որոնող Չարենցը: Միրով և գրեթե միշտ հապճեպ կերպով է նա յուրացնում «ձախ» գեղագիտական պատգամները, բայց հետագայում հենց ինքն էլ դատափետում է իր որոշ պատգամները:

Չարենցին տեսնում ենք «նորքի» աշխատակիցների շարքերում: Այդտեղ նա տպագրում է իր «Երկիր նախի» վեպը— հին աշխարհի դեմ ուղղված եզակի գործը, և միաժամանակ այնքան արտասովոր «Ասպետական» պոեմը: Երբ «ձախ» ֆորմուլաներին կառչած հայ որոշ բանաստեղծները յուրահատուկ «կամպանիա» են սկսում Վահան Տերյանի դեմ, առաջին օրերին Չարենցն էլ ձայնակցում է այդ «կամպանիային»: Սակայն անգամ այդ օրերին, նա շեշտում է, որ իր համար միշտ բարձր է եղել Վահան Տերյանի արվեստը:

Վահան Տերյան, ինչպես երգեմ հիշատակը քո,
Թո՛ղ լուս փովի հիմա իմ դեմ անույս երկդ...

Եվ թող թափվին շուրջս աշնան տերեւներ դեղին
Եվ զարդարեն, Վահան Տերյան, բո անցած ուղին...

Չարենցը երեք բանաստեղծություն է նվիրել Վահան Տերյանի հիշատակին. այդ երեք բանաստեղծություններն էլ գրված են անկեղծությամբ ու ջերմությամբ: Նա միանգամայն մտածված այդ բանաստեղծությունները գետն-դեմ է 1933-ին հրատարակված իր ժողովածուում և միաժամանակ գնն է նետել ու չի արտատպել ո՛չ այդտեղ, և ո՛չ էլ հետագա «Գիրք ճանապարհին» ժողովածուում, Վահան Տերյանի դեմ ուղղած իր դիտողությունը: Չարենցը միշտ մնում է Չարենց: Նա 1920-ին գրում է իր «Կարմիր սոնետ» բանաստեղծությունն ու միաժամանակ, ընտրելով հատուկ էպիգրամա, ընդգծում Վալերի Բրյուսովի՝ հետհեղափոխության շրջանի կտրուկ խոսքերի նշանակությունը՝ «Պոետը միշտ ժողովրդի հետ է, երբ աղմկում է մրրիկը...»:

Արևմուտքի նոր պոետներից Չարենցը ամենից շատ սիրում էր էմիլ Վերհարնին: Իմ կարծիքով Չարենցի «Քամին» բանաստեղծությունը գրված էր վերհարնյան երգերի ազդեցության ներքո, թեև միանգամայն ինքնուրույն ստեղծագործություն էր: Մի ակնթարթ մենք հիշում ենք սիմվոլիստների բանաստեղծությունները, երբ կարդում ենք հենց առաջին տողերը.

Քամին,
Աշնան քամին
Թոցնում է գեղին նմուշները իրա...

Բանաստեղծությունը պատկերավոր է: Քաղաքի բնանկարն էլ նշմարվում է շատ պարզ կերպով: Ամբողջ կերտվածքը տխուր ապրումներով տարված միայնակ պոետի տխուր տրամադրությունների մի նկարագրություն է.

Փողոցները երկա՛ր,
Ու ձանձրալի, աշնան անձրևների նման,
Փողոցները, որ կան,
Փողոցների ներկան,
Փողոցները՝ դաժան, անհրապույր, շարակամ, —
Որբա՛ն, որբա՛ն, որբա՛ն ա՛հավոր են հիմա:
Քամին,
Աշնան քամին,
Մոլորվել է այստեղ.
Մահվան սարսուռ առած վիրավոր է նա մի:
Ու կարող է հիմա ամե՛ն արգելք բանդել
Քամին,
Աշնան քամին...

Ամենից զարմանալին այն է, որ տաղանդավոր այդ բանաստեղծությունը Չարենցը գրել է 1921-ին այն օրերին, երբ միաժամանակ գրում էր հեղափո-

խական երգեր: Վերհարնյան բանաստեղծությունների ազդեցության կնիքը կրող այս բանաստեղծության իմաստն, ամբողջ ձևը և երանգավորումը հիմնովին զանազանվում էր 1921-ին գրած թե՛ հեղափոխական երգերից, և թե՛ «Պոեզիոսոնա» ժողովածուում զետեղված, հին Գյումրիին նվիրված՝ կես հանարով և կես իրոնիայով գրված բանաստեղծություններից:

Չարենցի երկերում յուրահատուկ տեղ է գրավում «Կապկազ թամաշան», որն ուղղված էր կովկասյան հակահեղափոխական կուսակցությունների՝ դաշնականների, մենշևիկների, մուսավաթականների դեմ: Այն ըրված էր Մայակովսկու «Միստերիա. Բուֆֆի» ազդեցության ներքո և շատ սուր մի գործ էր: Այդ թամաշայի առաջին տեսարանի սկզբում բեմ է ելնում «թամաշա շանց տվող Ղարան»: Դատափետելով «Անտիգոնեն», «Նամուսը», «Օթելլոն» և մասնավանդ, այդ գործերի երկրպագուներին, նա արտահայտում է, իհարկե, հենց իր՝ հեղինակի ուրույն, «կրեդոն» դասական կուլտուրայի նկատմամբ... «Ինչիս է էսօր հարկավոր «Դատաստան» — «Ձանգ ջրասույզ» — գոչում է «թամաշա շանց տվող Ղարան».

... էլ ինչո՞ւ են շանց տալիս հիմա
էդ բոլոր Փափազն ու Օրին,
Որ ի՞նչ...

«...էղպիսի խոսքեր ճաճան, էղպիսի շորեր մե թավուր, ձեր պա՛պն է տեսել երազում...»: Գոհհիկ տողեր շատ կան այդ «թամաշայի» մեջ, բայց և այնպես, այդ բուֆֆոնադան քաղաքացիական-մարտական սուր շեշտ ունեւր: Նկարագրելով անցյալի իրականությունը և ռամկորեն ծիծաղելով ու ծաղրելով շոկոլադ, շաքար, քաղցր գաթա սիրողներին — երգիչներին, Չարենցը խաբարանում էր քաղցրավուն արվեստի երկրպագուներին: Սակայն իր հիմնական ինտոնացիայով առույզ և «ագիտկայի» նման կերտված այդ բուֆֆոնադան լնցուն էր զիլ հնչյուններով: Դա մեծ փոթորկի արձագանքներից մեկն էր. բայց այնպես էր «ձևավորված», որ կարող էր խրախուսել անիշխանական բունտարական հովերով տարված այն ինտելիգենտներին, որոնց համար անընդունելի էր պրոլետարիատի հեղափոխական ավանգարդի կազմակերպված արշավը: Միանգամայն բնական և հասկանալի էր պոետի կտրուկ երույթը ընդդեմ անցյալի սև տիրակալների: Բայց սև տիրակալների և սև մոնետիկների դեմ ուղղված մուլեգին և ցասումնալից այդ բողոքը կապված էր կուլտուրայի և կլասիկ արվեստի՝ էսքիլեսի, Շեքսպիրի, Շիրվանզադեի կամ նրանց մեկնաբանող արվեստագետների դեմ ուղղված ծաղրական բացականչությունների հետ:

Չարենցն ամենին չի ծածկում, որ ինքը ժամանակին խախտել է ընդունված և օրինականացված տրագիցիաները, արտահայտել հակասական կար-

ծիրքներ: նա դիտավորյալ 1932-ի իր ժողովածուի մեջ ամփոփել է բազմազան երգեր՝ լիբրիկական հուշեր, մորը նվիրված ազդու գազելը, տխուր բանաստեղծություններ, թուրքիկ ակնարկներ, մտորումներ...

2

Երբ մենք ուշադրությամբ քննում ենք 1932-ին հրատարակված ժողովածուում ամփոփված նյութերը, տեսնում ենք, որ նոր թեմաներին նվիրված բանաստեղծություններով Չարենցն սկսել է հանդես գալ 1924-ին: Այդ թվականին է նա հրատարակել իր ամենաբնորոշ և ուժեղ պոեմներից մեկը՝ «Մաճկալ Սաքոյի պատմությունը» վերնագրով գեղջկական պոեմը: Իմ կարծիքով, 1924—1926 թվականները եղել են Չարենցի համար շրջադարձային տարիներ: Այդ տարիներին նա եղել է ավելի հասուն: Նա ձգտել է այդ տարիներին ակտիվորեն արձագանքել հեղափոխական պրոլետարիատի ավանգարդի՝ Կոմունիստական կուսակցության պատգամներին և ավելի վճռականորեն ղեկնետել հեղափոխական պոեզիայի զարգացմանը խանգարող ֆորմալիստական պաճուճանքները: Դա Չարենցի համար եղել է ստեղծագործական ծանր ու համառ աշխատանքի էտապ:

«Մաճկալ Սաքոյի պատմությունը» կերտված է մեծագույն հմտությամբ: Չարենցը նշում է, որ իր հիմնական նպատակն է եղել մի գյուղացու պատմությունը դարձնել մոռյալ անցյալի դեմ ուղղված պատմություն, անցյալի սև ուժերի էությունը բացահայտող և ցուցահանող մի «խրատական զրից»: Ամբողջ պոեմը գրված է պարզ լեզվով, կարելի է նույնիսկ ասել ժարգոնին մոտեցող գեղջկական բարբառով: Դա թե՛ պոեմ էր և թե՛ շատ հանրամատչելի մի «ագիտիկա»: Սակայն պոեմը կուռ և ամուր կառուցվածք ունի և միանգամայն ազատ է այդ տիպի հանրամատչելի գրություններին հատուկ կեղծժողովրդական երանգներից ու շեշտներից: Նախերգանքի մեջ բանաստեղծն իր խոսքն ուղղում է անմիջապես գեղջուկ ժողովրդին.

Ռանջա՛ր, ուշով լսի հիմի,
Թե ոնց քո էս ախպեր Սաքոն
Ադի համար գնաց կոփվ,
Կուռը կտրած էտ ևկավ տուն,
Ու թե ընչեր արավ Սաքոն
Ու ո՞նց հասավ իր ուղածին—
Ու թե ընչի՞ մաճկալ Սաքոն
Դեմ է հիմի պատերազմին:

Պոեմում նկարագրվում են պատերազմի օրերը, առօրյա դեպքերը, հայ բուրժուազիայի սպասավորների՝ դաշնակների դեմ կռվի ելնողները, դաշնակների իշխանության տապալումը, վերջապես ազատագրված հայրենի երկրում

աշխատանքի լծված մաճկալ Սաքոյի ապրումները: Չարենցը մեծագույն ուշադրությամբ է ուսումնասիրել հայ գյուղագիրների երկերը, ժողովրդական առածները, բանահյուսական նյութերը, նույնիսկ գյուղական թղթակիցների գրությունները: Շատ մեծ աշխատանք է կատարել նա պոեմի յուրահատուկ «լեզուն» ավելի պատկերավոր դարձնելու համար: Պոեմը բնորոշ է նաև որպես պատմական վավերագիր, քանի որ հնարավորություն է տալիս հասկացողություն կազմել քսանական թվականներին գյուղական իրակառուցված մեջ հեղափոխական աշխատանք տանող ագիտատորների մասին:

Այդ պոեմից հետո ժողովածուում զետեղված է Մուստաֆա Սուբխիի և թուրք կոմունիստների հիշատակին նվիրված «Ստամբուլ» պոեմը: Հիմնականում այն ուղղված էր արևմտյան իմպերիալիստների ու նրանց արևելյան համահարգների դեմ: Դիպուկ է նկարագրված Ստամբուլի միջավայրը, հղիացած պարազիտների կյանքը, մղձավանջային ամբողջ մթնոլորտը: Չարենցը ինքր տեսել է ստամբուլյան իրականության «գրիմասները» և իր պոեմը գրել է թարմ տպավորության ներքո: Անհրաժեշտ է նշել այստեղ, որ Չարենցի պոեմում գծագրված «պորտրետները» սուր բնութագրականներ լինելով, մարտական-հրապարակախոսական շեշտ ունեն: Այդպես են Չարենցի արտասահմանյան բոլոր բանաստեղծությունները: Նրա ուշագրությունը գրավում են ամենից առաջ կապիտալիստական մեծ քաղաքներում տիրող սոցիալական ներհակությունները, բանվորական հեռավոր թաղամասերը: 1925 թվականին Բեռլինում նա գրում է Ալեքսանդր Մարտունի-Մյասնիկյանի հիշատակին նվիրված «Կոմունարների պատր Փարիզում» պոեմը: Այդ պոեմում ամենից քիչ խոսվում է Փարիզյան Կոմունայի մասին: Զերմ տողեր նվիրելով կոմունարների հիշատակին, կանգնած կոմունարների պատի մոտ, Չարենցը վերհիշում է իր հայրենի մեծ երկրի հեղափոխական դեպքերը— հերոսական մարտերի օրերը, և նվիրական հերոսներին: «...Պեր կաշեզի նման պատեր ինչքան ենք մենք փորել»,— գրում է նա՝ համակված հայրենասիրական հեղափոխական հուշերով: «...Կրեմլյան պատր մի նոր Պեր կաշեզ է», բայց դա արդեն «հաղթանակի պատ է»: Նա հեռու Փարիզում տեսնում է և իր հայրենի երկրի հեղափոխական զանգվածների մեծ ղեկավարի նվիրական դիմաստվերը.

Լսո՞ւմ եք...
Այդպիսի ղեկավար — չկա՛,
Ու չի՛ եղել երբեք —
Ո՛չ երեկ,
Ո՛չ առաջ,
Ո՛չ հնո՞ւր...

«Լենինը—ուղեղն էր մեր դասի. մեր դասի հոգի՛ն էր: Նրա ամեն մասում հոսում էր մեր դասի արյունը...»: Իհարկե, պաթետիկա կա անակնկալ այդ

բացականչության մեջ, բայց իր սիրելի ուսուցիչ-ընկերոջ, Մյասնիկյանի հիշատակին նվիրված հույզով լեցուն պոեմում Չարենցը կարողացել է շատ լավ ձևակերպել ոչ միայն իր անձնական հուշերը: Լենինին նվիրված տողեր շատ կարելի է գտնել Չարենցի գրքերի մեջ: Եվ պետք է ասել, որ բոլոր այդ տողերը լեցուն են խորունկ տրամագրությամբ և միշտ անկեղծ ինտոնացիա ունեն: Այդպես է նրա հակիրճ «բալլադը» («Բալլադ Վլադիմիր Իլյիչի, մուժիկի և մի զույգ կոշիկի մասին»), որ գրել է նա 1924-ին: Այդպես են նույն թվականին գրված «Լենին բռնին» պոեմը կամ 1925-ին գրված «Լենինն ու Ալին» պոեմը: Այդ պոեմներում լսվում է Մայակովսկու ստեղծագործությանը հատուկ մոտիվը:

Ես կանգ չեմ առնում մի շարք բանաստեղծություններում Լենինին նվիրված դիպուկ և անկեղծ տողերի վրա, որոնք այնքան ուշադրավ են, որ կարող են գրավել Չարենցի հեղափոխական երգերը հետազոտող ապագա բանասերի առանձին ուշադրությունը:

Նշանակալից է այն, որ հենց արտասահմանում Չարենցը կտրուկ նշում է, որ ինքը որոշել է ընտրել նոր խոսելաձև և նոր զենքեր:

Լեֆյան թմբուկը թողած մի կողմ,
Հասվող տողերը նետելով դեմ,
Կրկին խրթին մի նոր զոզով
Առնում եմ յամբ ևս ու քողազոտ,
Որ պայքարը բնարեզեմ...

Այս տողերով է սկսվում Հոտմում 1925-ին գրած «Պոեմ հերոսականի» պրոլոգը: Չարենցը, սակայն, նշում է, որ անցյալում իր երգը բազկացած էր «հատվող տողերից» միմիայն այն պատճառով, որ իրականությունն էլ տարիչ էր: «Անցյալում, — նկատում է նա, — կռիվ, շոփնդ էր... ճակատ էր ու բարիկադ... ճշում էր ամեն մի բար...»: «Այսօր, — ավելացնում է նա, — ուսմբի շաշտունը չկա...»: Հետագայում Չարենցը, կրկնելով վերոհիշյալ զեկլարացիան, գրեթե բառացիորեն, այլևս չէր աշխատում «բացատրել», այլ կտրուկ կերպով շեշտում էր, որ ինքը որոշել է վերջ տալ «լեֆյան» ուղեգծին: Բնորոշ է այնուամենայնիվ, որ հենց այդ պրոլոգում Չարենցը կտրուկ ընդգծում է իր բացասական դիրքորոշումը դեպի «նախկիններ» և ասում, որ ինքը հերոսական տարիներին «խոր հիացքով» է ողջունել «այդ երկիրը» և ավետել իր հայրենի երկրի «թռչիքն ու նոր բախտը»...

Վենետիկում, նույն թվականին, նա կերտել է նախրյան աշխարհի և այդ աշխարհի երգասացներից մեկի զեղարվեստական յուրահատուկ «պորտրետը»: Չարենցը բերել էր նույնիսկ Ռուսինյանի հայտնի բանաստեղծության առաջին տողերը:

Տեսի երկիրը ևս Իտալիո,
Եվ Վենետիկը, և գոնգոլներ...
Այնտեղ շրջում էր պոետը մեր
Երազային իր տարտամ քայլով...

Այդ էլեգիայի առաջին գրուխը գրված էր շատ մեղմ տոնով: Չարենցը գրում էր.

Նա իր սրտով հին, հին բնարով
Եվ մատներով իր՝ արդեն անուժ՝
Գեռ գուրգուրում էր հետո մի հուշ—
Եվ այնպե՛ս, այնպե՛ս, այնպե՛ս անուշ
Նա փաղաքշում էր հուշը այդ ուշ,
Եվ ի՞նչ էր հուշը.—մշուշ ու մուժ:—

Ապա Չարենցը պատմում է, որ պոետը Իտալիայում «երազում էր Արփաշայը», հին Գյումրին հեռավոր, այն, ինչ հին էր, հուշ էր... Պետք է ասել, որ հետագա գլուխները կերտված են տիպական գույներով, ցուցադրում են նախրյան հին աշխարհի ներկայացուցիչ և վերածնված երկրից եկած նոր պոետի բնորոշ դիմաստվերները: «Էլեգիայում» կան տողեր, որոնք ցնցող ապավորություն են թողնում: Հեղափոխական-Չարենցի խոհուն դիմաստվերը այդ տողերում գծված է ցայտուն կերպով:

Չարենցը թարգմանության համար պատահական կերպով շէր բնտրում իր սիրելի պոետների այս կամ այն բանաստեղծությունը: Ուղտ Ուլտմենից նա թարգմանել է «Եվրոպա» բանաստեղծությունը, ջանալով ամերիկյան այդ պոետին մոտենալ ոչ թե Բալմոնտի, այլ Չուկովսկու ճշգրիտ դիրքերից: Էմիլ Վերհարնի բանաստեղծություններից Չարենցը զետեղել է մի շարք թարգմանություններ («Բանկիր», «Կինը ճամփամիջին», «Լոնդոն»), հիմնականում հետևելով բրյուսովյան թարգմանությունների ոճին: Նեկրասովի հայտնի «Երկաթուղին» պոեմից նա թարգմանել է մի հատված: Դիտավորությամբ նա բնտրել էր այն հատվածը, որի վերջին տողերն ինքնին լավ էին բնութագրում «Վրեժի ու վշտի» պոետի մտայնությունը. «բայց փոսոս, որ Վանյա, զեղեցիկ կյանքին այդ շենք հասնի ոչ դու և ոչ ես...»: Գեմյան Բեդնուց Չարենցը թարգմանել է շատ փոքրիկ «Լենա» հատվածը, որը գրել էր հեղափոխական պրոլետարիատի տաղանդավոր պոետը՝ 1912-ին: Բոլոր այդ թարգմանությունները Չարենցը պատրաստել է 1925-ին և, զետեղելով իր երևանյան ժողովածուում, ավելի քան որոշակի նշել է, որ ինքը նպատակ է ունեցել իր երգերի իմաստը շաղկապել հին աշխարհի դեմ ծառայող պոետների արվեստի հիմնական իմաստին:

Իր «Երկիր նախրի» վեպ-պոեմը Չարենցը սկսել էր գրել տակավին 1920-ից: 1926-ին նա նորից վերանայել է այն և ապա հատուկ ծանոթագրու-

Թյուն կցել վեպի երկրորդ հրատարակությունը (1926): Վերջապես նա վեպն իր արձակ ակնարկների հետ միասին ղեկավարել է ժողովածուի վերջին մասում: Գա նշանակում է, որ Չարենցը մեծ նշանակություն է տալիս այդ գործին և հարկավոր է համարում հիշեցնել, որ նաիրյան աշխարհի և այդ աշխարհի էքսպանսիվ երգիչների նախաձեռնությամբ ստեղծված «ուղեղային մորմոքի» նկատմամբ իր տրույն մոտեցումը մնում է անխախտ ու կապված է հեղափոխական-միջազգայնական հայեցողության հետ: Իմ ուրվագծի նեղ սահմանները հնարավորություն չեն տալիս ծանրանալ Չարենցի շատ տաղանդավոր այդ գործերի վրա: Կուզենայի միայն շեշտել, որ կերտելով իր նոր վեպ-պոեմը Գոգոլի «Մեռած հոգիներ»-ի անմիջական ազդեցության ներքո, Չարենցը կարողացել է ճիշտ և տեղին մերկացնել «ուղեղային մորմոքի» երգիչների մտայնության ռեակցիոն էությունը:

Բավական է միայն թերթել Չարենցի ժողովածուն, որպեսզի ակներև դառնա այն, որ նա զիտավորությամբ ղեկավարելով իր լիրիկական բանաստեղծությունները կամ վարանումների կնիք կրող երգերը, միշտ կարևոր էր համարում իր ընթերցողներին հիշեցնել, որ այդօրինակ երգերը եղել են վարանումների օրերին նետված դիտողություններ, հուշերի բնույթ կրող ակնարկներ, նույնիսկ գեղագիտական պրպտումների բնույթ կրող ֆրագմենտներ: Թե՛ քանակով, և թե՛ մանավանդ որակով բոլոր այդօրինակ գրություններն աննշան տեղ են բռնում Չարենցի ժողովածուում: Հակառակ դրան, գերակշռում են հեղափոխական բանաստեղծությունները և մանավանդ գեղարվեստական խոր իմաստ արտահայտող երգերը: Այդ կարևոր փաստը երբեք չպետք է մոռանան այն քննադատները, որոնք սիրում են հիշատակել Չարենցի ոչ թե հիմնական և կարևորագույն երկերը, այլ որոնումներն ու ոլորագծերը բացահայտող պատահական կամ թուղիկ ակնարկների բնույթ կրող քառյակները, էպիգրամները, սենտենցիաները: Ինքը՝ Չարենցը մի քանի անգամ նշել է, որ իսկական պոետը պետք է մեծ աշխատանք թափի իր երգերն ավելի կատարյալ ու պարզ դարձնելու համար: Նա մի քանի անգամ անդրադարձել է Պուշկինին: Իր «Ընթերցող պոետին» բանաստեղծությունում (1929) Չարենցը նշում է, որ իր համար անցած ուղի է «համաշխարհային ռեթիմը նվագուն» և որ «չինչ պարզությունը» ձևը է բերվում «զժվար վարժությունը»:

Մոլորի՛ր գրել դու պարզ ու պայծառ,
 Ինչպես այն շքնաղ պոետը զանգուր,
 Որի երգերում թե՛ քորեչ, թե՛ յամբ
 Գյութում են իրենց տոկուն պարզությամբ,
 Թովում են թափով, առնությամբ արի—
 Սրանով է նա ահա վիթխարի:

Քննադատելով «երջանիկ թմբուկներ առած, հարսանիքի երգ» երգողներին, Չարենցը գրում է, որ ինքը «գերադասում է ուղին քարքարոտ»: «Լիրի-

կական անտրակտ»: բանաստեղծության մեջ նա իրոնիայով դատափետում է «անտանելի ռիթմով դեպի ձանձրույթ» նետվող պոետներին ու գոչում:

... 0՞, վիթխարի Վոլթե՛ր, օ՞, Բուալո՞, օ՞, Գի՛լ,
 Ինձ օգնության հասե՛ք, ինձ փրկեցե՛ք կրկին...

Չարենցը գրում է ուժեղ «Մանկություն» պոեմը, որը կրում է Գորկու հանձարեղ «Մանկության» և ընդհանրապես օկուբոլյան շարքի ակներև ազդեցության կնիքը. «...Գու քնքշություն, դու մեղմ թովչություն չես բուրում»,— ասում է Չարենցը և ապա գրում:

Փովում է դեմս ահա քո գորշագույն կտավը—
 Եվ իմ երգի համար ես ընտրում եմ օկուպը:—

Անսահման ատելությամբ է նա խարաղանում նաիրյան աշխարհի վաղեմի տիրակալներին: Ատելության և բողոքի շեշտը շատ ուժեղ է թե՛ «Նմաբապետ Շավարշը» պոեմի, թե՛ դաշնակցականների դատափետմանը նվիրված բանաստեղծության և թե՛ նույնիսկ հայ ժողովրդի խաղիկների կամ ավելի ճիշտ՝ ռուսական շաստուշկաների նման կառուցված «Բալլադ գեղջկական» բանաստեղծության մեջ:

Այդպես են 1928-ին գրված՝ Բաբլի հեղափոխական անցյալին նվիրված բալլադները («Բալլադ գնդապետ Տոմսոնի, կոմերիտ խոխի և գործադուլի մասին», «Բալլադ 26-ի մասին»): Իր կոլորիտով այդ բալլադներից տարբերվում է ինտիմ պատանեկան հուշերի նման գրված «Իմ ընկեր Լիպոն» ջերմ և ազդու պոեմը: Առանց վարանումների կարելի է ասել, որ Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո ոչ մի հայ գրող այնքան արտահայտիչ չի արձագանքել մեր հերոսական էպոպեայի հրատապ մոտիվներին, ինչպես այդ արել է Չարենցը: Այսօր էլ ընթերցողի վրա ցնցող տպավորություն է թողնում անիծյալ անցյալի սև ուժերի մերկացման և նրանց դեմ մարտնչող հեղափոխական ուժերի մեծարմանը նվիրված հակիրճ, միշտ անկեղծ և սուր տողերը:

Ինքը՝ Չարենցը այդ օրերին անդադար հիշեցնում էր, որ հիմնովին փոխել է իր ուղեգիծը...

«... Եթե երգով ես ասում եմ, թե
 ես այլ եմ հիմա, այլևս այն չեմ,
 նշանակում է՝ նոր հուն եմ մտել»
 («Ես այն չեմ այլևս», 1929 թ.):

Չարենցի «նոր հունը» դուր չէր գալիս ո՛չ ազգայնականներին, ո՛չ էլ «թմբուկ զարնող» և անվերջ «հարսանիք» երգող երգիչներին: Չարենցը հենց այդ օրերին գրում է, որ «երկաթավորվող հայրենիքում» շատ կա աշխա-

տանք... «Ներկան է հիմա իմ դեմ ազմկում»— կարդում ենք շեշտված տողերից առաջ գրված մի բանաստեղծությունում (1929 թ. մայիս): Տակավի՛ն 1928-ին նա նշում էր, որ իր համար ատելի են սիմվոլիստների՝ աշնան ու մահվան մոտիվները: «...Վախենում եմ, ինչպես նեկրոման»,— գրում է նա և միաժամանակ բացահայտում իր սարսափը: «...Ձգում եմ սարսափով, որ ահա կգա Բողոքը, կերևա էզգար Պոն, ծերունի Վեոլենը, կգա ու ֆավնի ձայնով երգեցիկ կերպն աշուն, թախիժ, գիշերվա լապտեր, ակացի...»:

Բարձրից Չարենցը մեկնում է Լենինգրադ և այնտեղ կերտում լենինգրադյան ցիկլի իր մի շարք բանաստեղծությունները: Լենինի անվան մեծ քաղաքի իրականությունը՝ աշխատանքի ու իրավունքի, հսկայական տպավորություն է թողնում բանաստեղծի վրա: Լենինի նվիրական դիմաստվերն է նշմարում նա ամենուրեք: «...Սովորեցի ալատել ես էլ լինել զգաստ, լինել տոկուն», գրում է Չարենցը «Հրաժեշտ» բանաստեղծության մեջ (1929):

Հավանականությունից զուրկ չէ, որ հենց Լենինգրադում նա սկսում է նորից կարգալ լենինյան ուսումնասիրությունները, առանձնապես Լենինի «Գերցենի հիշատակին» հոդվածը: Ինձ թվում է, որ հենց այդ հոդվածում արժարժված մտորումները կարող էին Չարենցին թելադրել այնքան յուրահատուկ կերպով մոտենալ անցյալի ուսու հեղափոխական շարժումներին: Լենինգրադում նա 1929-ի Հոկտեմբերին գրել է «Չմեռային պալատի ներքնահարկում» պոեմը, որ նա նշմարում է ղեկաբրիստների դահիճ ցար Նիկոլայի մոռյլ ստվերը և ապա՝ հետեւելով պատմական աղբյուրներին, նկարագրում ղեկաբրիստների հարցաքննության հայտնի հանդեսը: Պետտելին և Ռիլենին է նկարում Չարենցը և շեշտում, որ ցար Նիկոլայը «բացել է» անգամ իր սիրտը ոմանց... մի հեքիաթային արքայի նման...

Աչքերում պահած ամենի հուրեր՝
Յրհնել է նրանց ժպիտով խաղաղ,—
Եվ ճանապարհ է այտեղից դրել
Գեպի բանտ, Սիրի՛ր, ղեպի կախազան:

Հայտնի է, որ ցար Նիկոլայի խորամանկ տակտիկան որոշ ազդեցություն էր թողել շատ ղեկաբրիստների և առանձնապես ղեկաբրիստ-բանաստեղծ Ռիլենի վրա: Չարենցի փոքրիկ պոեմի շատ սեղմ տողերը ցույց են տալիս, որ նա ուսումնասիրել էր ղեկաբրիստների մասին հրատարակված պատմագիտական հետազոտությունները:

Իմ կարծիքով, Լենինի «Գերցենի հիշատակին» հոդվածի ազդեցության ներքո է կերտված նաև «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամբոցում» հայտնի պոեմը: Ընթերցողի վրա մեծ տպավորություն են թողնում պոեմի հենց առաջին տողերը: Չարենցը նկարում է նվիրական հին ստվերները. «ղեմբեր և՛ պարզ, և՛ ջինջ, և՛ սիրելի»— «հին անուններ— այնքան հերոսական»...

Իմ ուզելի միջով հիմա նրանք
Ահա անցնում են լուռ, խստաբարո,
Խարազանի հետքեր մարմինների վրա,
Բայց աչքերում վճիռ մի շմարող:
Մտաբերում եմ ես նրանց մեկ-մեկ,
Ռիլենից մինչև պայծառատես
Այն մտածողը վե՛հ ու հանճարեղ:
Որին Մարբան է մի օր անվանել մեծ:
Այս քարերի վրա, այս պատերի,
Որոնց նայել են այդ մարդիկ մի օր—
Հայացքների նրանց ու խոհերի
Անանց հետքերն եմ ես փնտրում սիրով:

Չարենցի շեշտված անունը չի հիշատակում Չարենցը: Հեռու երկրներից եկած ճամփորդի նման պատմում է նա իր հուշերը: Այդպես մինչև վերջ իր հույզերն ու ապրումներն է նկարագրում՝ շատ պարզ, անկեղծ, ինտիմ և սրտաբուխ: Միքայել Նալբանդյանի անունն անգամ չի տալիս, բայց մենք տեսնում ենք Պետտելի և Ռիլենի՝ «ազնվական հեղափոխականներին» հետևող հերոսական պլեադայի ներկայացուցիչների, մեծ հեղափոխական-դեմոկրատ Չարենցի կողքին հեղափոխական-դեմոկրատ Նալբանդյանի նվիրական դիմաստվերը: Չարենցը միայն ամբոցն է նկարագրում: Միայն բաստիոնն է նշում, խոսում է կամերների մասին, անխոս պատերն է տեսնում, պատմում է իր հուշերը, բայց և այնպես կարողանում է շատ ազդու գծագրել Գերցենի և Օգարևի բարեկամի խոհուն դիմաստվերը...

Շատ և շատ բանաստեղծներ են նկարագրել ամբոցներ ու բանտեր, արտորավայրեր ու արտորականներին, կալանավոր հեղափոխականներին և ժողովրդի ըմբոստ ներկայացուցիչներին: Բայց ոչ մի արեւո այնքան յուրահատուկ ձևով չի մոտեցել հանրահայտ թեմաների մեկնաբանությանը, և ոչ մի պոետ չի կերտել հեղափոխական հերոսների մեծարմանը նվիրված այդքան պարզ և ջերմ բանաստեղծություն...

Այդպես էր Չարենցը ստեղծագործական կյանքի և աշխատանքի ամենաբեղուն տարիներին:

Սխալներ նա կատարել է: Հաճախ երգել է շատ զիլ ձայնով: Հաճախ սալթաբել է ու նահանջել վաղեմի իր դիրքերից: Սակայն իր սխալներն ու դիսոնանսները նա ինքն է ամենից առաջ մերկացրել ու դատափետել՝ միշտ ձգտելով ձայնակցել հին, անիրավ, հիմնովին նեխված սեփականատիրական աշխարհի դեմ մարտնչող հեղափոխական ժողովրդի արշավին ու պատգամներին: Իր ամենից ուժեղ և ամենից տաղանդավոր գործերի մեջ Չարենցը հանդես է եկել որպես հին աշխարհի դեմ ծառայող և հեղափոխական զանգվածների հերոսական շարժումը երգող պոետ: Դա է Չարենցի «ղեմբի» ամենա-

բնորոշ գիծը, որը ամուր թելերով կապում է նրան սովետական հումանիստական և հեղափոխական պոեզիայի առաջավոր ներկայացուցիչների հետ:

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1972 թ.

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԱՂԿՈՒՄԸ¹

Քառասուն տարի առաջ, 1917 թվականի հոկտեմբերին, կալվածատիրական և կապիտալիստական լծից ազատագրվելու համար ժողովրդական մասսաների մղած պայքարն ավարտվեց պատմական մեծ հաղթանակով: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը նոր դարազրույի բացեց մարդկության պատմության մեջ: Նա վերջ դրեց ամեն տեսակ սոցիալական ու ազգային ճնշումներին մեր երկրում և հեղափոխական պայքարի նոր թափ հաղորդեց աշխարհի բոլոր ճնշված ժողովուրդներին:

Հոկտեմբերյան հեղափոխությունն իր արձագանքը գտավ նաև Հայաստանում: Հայ աշխատավորական մասսաները ողջունեցին այն և նոր ուժով պայքարի ելան սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար: Բաքվի և Անդրկովկասի մյուս արդյունաբերական կենտրոնների պրոլետարիատի պայքարը, Բաքվի հերոսական Կոմունայի կազմակերպումը ավելի խթանեցին հեղափոխական շարժման աճը Հայաստանում: Հայտնի են աշխատավորների հեղափոխական պոսթիլումներն ու ելույթները 1917—18 թթ., ապստամբությունների հզոր ալիքը 1920 թվականի մայիսին, վերջապես, հեղափոխական մասսաների հաղթանակը և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում 1920 թվականի նոյեմբերի 29-ին: Սկիզբ առավ հայ ժողովրդի տնտեսական կյանքի և մշակույթի իսկական ծաղկման ու վերածնության դարաշրջանը:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը ջերմորեն ողջունեցին հայկական կուլտուրայի, գրականության և արվեստի առաջավոր ներկայացուցիչները: Առաջին հայ գրողը Անդրկովկասում, որն իր ստեղծագործություններում արտացոլեց հայ ժողովրդի առաջադեմ խավերի վերաբերմունքը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության լուսավոր պատգամների նկատմամբ, նշանավոր ժողովրդական բանաստեղծ Հակոբ Հակոբյանն էր: Հեղափոխական աշխարհըմբռնմամբ հագեցած նրա առույգ բանաստեղծությունները ուժգին արձագանքներ գտան հայ ղեմկրատական հա-

սարակալնություն շարքերում: Ականավոր բանաստեղծի ըմբոստությունը քարոզող երգերը դեռևս 1905—1907 թվականների առաջին ժողովրդական հեղափոխության տարիներին ժողովրդին պայքարի և ակտիվ ելույթների էին կոչում: Պոետի՝ զայրույթով տոգորված բանաստեղծությունները Պետերբուրգի հեղափոխական ջոկատների հզոր ելույթների առաջին արձագանքները հանդիսացան: Հայ ղեմկրատական հասարակալնության շարքերում ուժեղ արձագանք առաջացրին նաև Հակոբյանի՝ կսկիծով ու զայրույթով լի երգերը՝ նվիրված Բաքվի 26 կոմունարների հիշատակին:

Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ 1917—1920 թթ. այդ գործերը Հակոբյանի կողմից ստեղծվել են հեղափոխական մարտերի անմիջական արենայից հետո:

Մի փոքր այլ բնույթ են կրում հայ նախահեղափոխական պոեզիայի տաղանդավոր ներկայացուցիչներից մեկի՝ Վահան Տերյանի արձագանքները Հոկտեմբերյան մեծ հեղափոխությանը: Վահան Տերյանը հոկտեմբերի փոթորկալից օրերին ակտիվորեն մասնակցում էր հեղափոխական իրադարձություններին և կուլտուր-լուսավորական նոր հիմնարկների կառուցման գործին: Նա առաջին հայ բանաստեղծն էր, որ մարտական մկրտություն ստացավ հեղափոխության հնոցում՝ Պետերբուրգում և Մոսկվայում: Գերմանիայի հետ բանակցություններ վարելու օրերին, Վահան Տերյանը կենդանի առաջարկով ուղարկվում է Բրեստ որպես խորհրդական: Հոկտեմբերյան մեծ հեղափոխության առաջնորդների հետ ունեցած հանդիպումները վճռական ներգործություն ունեցան արվեստի և գրականության նոր ուղիներ որոնող խոհուն բանաստեղծ-մտածողի աշխարհայացքի ձևավորման վրա: Տակավին մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը Տերյանը, Ստ. Եահումյանի առաջարկով, գրում է «Ինչ է ասում կենինը գյուղացիներին հողի մասին» աշխատությունը: Սահմանադիր ժողովի ընտրությունների նախընտրական կամպանիայի օրերին կուսակցական ղեկավար օրգանների որոշմամբ նրա անունը մտցվում է Անդրկովկասի բոլշևիկ թեկնածուների ցուցակի մեջ: Տերյանը թարգմանել է կենինի «Պետություն և հեղափոխություն» նշանավոր աշխատությունը: Նա հիմնադրել է «Կոմունիստ» ամսագիրը, հայկական հրատարակչությունը, առաջին հայկական հեղափոխական թատրոնը Մոսկվայում, որոնք Սովետական Ռուսաստանի հայաշատ վայրերում մեծ դեր խաղացին: Տերյանն անդադար նոր գեղարվեստական ձևեր էր որոնում, որպեսզի կարողանար իսկական հնչողություն մեջ գրիտ արտահայտություն տալ «համաշխարհային պատմության մեծագույն էպոպեային», ինչպես քանիցս նշել է ինքը: Այդ շրջանում գրած նրա բանաստեղծություններում լսվում են հեղափոխական փոթորկի արձագանքները, բանաստեղծի վերաբերմունքը դեպի պատմական իրադարձությունները: Տերյանի նախաձեռնությամբ Թուրքեստանի տափաստաններում Բաքվի պրո-

¹ Ձեկուցում՝ կարգացված Հայկական, Ադրբեջանական և Վրացական Սովետական Սոցիալիստական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների հոբելյանական միացյալ գիտական սեսիայում, նվիրված Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 40-ամյակին:

լետարիատի ղեկավարների զոհվելու տխուր լուրը նշանավորվեց հատուկ զեկուցումներով ու դասախոսություններով: Այդ նույն օրերին Տերյանը գրեց կակիժով լի այն բանաստեղծությունը, որը մինչև այսօր էլ մնում է հայ բանաստեղծների կողմից Շահումյանի հիշատակին ձոնված բազմաթիվ ստեղծագործություններից ամենալավը: Այդ աչքի ընկնող գեղարվեստական գործի զայրույթն ու վիշտը, հատու խոսքն ու հստակ միտքը, ինքնատիպ կառուցվածքը բնորոշում են նաև կոմունիստ-բանաստեղծի կերպարը: Հարկ է նշել և մի այլ փաստ: Վահան Տերյանը առաջինն էր հայ գրականության մեջ, որ չվախեցավ վշտալի երգի համար ընտրել անսովոր վերնագիր՝ «Գազել խնդություն», ընտրել նոր «ձև» և ստեղծել բացառիկ ուժեղ մի երգ-պոեմ, նվիրված 1918 թ. Բաքվի Կոմունայի ղեկավարի հիշատակին:

Երրորդ տաղանդավոր գրողը, որն իր ստեղծագործություններում արտացոլել է ժողովրդական մասսաների լուսավոր ձգտումները, Եղիշե Չարենցն է, որը դեռևս Հայաստանում սովետական կարգերի հաստատումից առաջ ջերմորեն արձագանքեց Հոկտեմբերյան մեծ հեղափոխության վեհապանձ էպոպեային:

Եղիշե Չարենցի ստեղծագործական ուղին մեծ հետաքրքրություն է ներկայացնում հայ կուլտուրայի պատմությունն ուսումնասիրողի համար: Միշտ չէ, որ հարթ է եղել նշանավոր հեղափոխական-պոետի ուղին: Չարենցի վաղ շրջանի ստեղծագործություններում կարելի է գտնել հայրենասիրական պոեզիայի արձագանքներ, նկատելի դիստանանսներ և հակասություններ, տխուր երգեր՝ լի մտորումներով հարազատ ժողովրդի բախտի մասին: Դաստիարակված լինելով հայ նախահեղափոխական գրականության տրադիցիաներով, Չարենցը սկզբնական շրջանում գտնվում էր սիմվոլիստների ազդեցության ներքո: Հետագայում նա Մոսկվայում ուսումնասիրում է Լեկոնտ դ'Լիլի, Սամենի, Բոդլերի, Վեռլենի և ուրա սիմվոլիստների ստեղծագործությունները: Նրա «Իսթրեական առասպել»-ում ուրվագծված է պատանի հայրենասեր-բանաստեղծի կերպարանափոխման ուղին: Չարենցի՝ Կարմիր բանակի շարքերն ընդունվելը զուգահեռում է Կոմունիստական կուսակցության մեջ մտնելուն: Մոսկվայում ապրելն ու սովորելը, աշխատավորների հետ շփվելը, մասնակցությունը հեղափոխական իրադարձություններին զինեցին բանաստեղծին մեծ գիտելիքներով և պայծառ աշխարհայացքով: 1918 թ. հուլիսին արգեն, կարմիր բանակային Չարենցը գրեց «Ամբոխները խելագարված» պոեմը, որը պատկերում է հեղափոխական մասսաների հզոր պայքարով հմայված պոետ-տրիբունի մտորումները:

Ժողովրդական մասսաների ուժը մեծարելով Չարենցը գրում էր, որ նրանք՝ «եթև ուզեն» արևներին նոր տեմպ կտան ու նոր ուղի...»: Այս պաթետիկ դարձվածքում նա արտահայտում է նաև հեղափոխության նոր պոետների մտորում-

ները: Ստեղծագործության ամբողջ կառուցվածքի ինքնատիպ բնույթը հաճախ է ընդգծվել Չարենցի քննադատների կողմից:

Չարենցի հայտնի «Ամենապոեմը» թե՛ ձևով, և թե՛ բովանդակությամբ նշանակալից նորարարություն էր հայկական պոեզիայում: Ուղղված լինելով բուրժուական ազգայնականների դեմ, այն ներթափանցված է կենսախինդ-հեղափոխականի առույգ տրամադրությամբ և ինտերնացիոնալիստական աշխարհայացքով: Բավական է միայն հիշել, թե ինչ էր կատարվում արյունոտ ված Հայաստանում, որպեսզի պարզ դառնա պոետի խիզախությունը, որը արիարար վճռել է հեղափոխական երգով ծաղրել անցյալի կույր ջատագովների ազգայնական պատրանքները:

Չարենցի ստեղծած «Կապկազ-թամաշա» կատակերգություն-բուֆոնտը, անկասկած, հին Անդրկովկասի տիրակալների սուր քննադատությունն է: «Երկիր նաիրի» վեպը ուղղված է ընդդեմ հնագույն անցյալի երգիչների և ազգայնականների: Այս վեպը հայ էմիգրանտների կողմից ընդունվեց կատաղի զայրույթով: Չարենցի ստեղծագործության մեջ կարելի է գտնել և՛ Գոգոլի, և՛ Գոթկու, և՛ Մայակովսկու, և՛ նույնիսկ Բրյուսովի ազդեցության հետքեր: Բայց և այնպես, Չարենցը միշտ մնում էր ինքնատիպ գեղագետ, նա ձգտում էր ինքնուրույն կերպով, Հոկտեմբերյան մեծ հեղափոխության լուսավոր պատգամներից ելնելով՝ լուսաբանել հարազատ իրականության խնդիրները: Բացահայտորեն միակողմանի քննադատելով հին մշակույթի առանձին վարպետներին, Չարենցը դիտավորյալ ընդգծում է դասակարգային սուր բախումների օրերին ստեղծված կուպիտ ժարգոնը: Նախահեղափոխական Անդրկովկասի սև տիրակալներին խարաղանող պլեբեյների այդ յուրահատուկ «ժարգոն»-ն լավ էր հաղորդում սուր պայքարի պատկերը: Յուրահատուկ է նաև «Մաճկալ Սաքոյի պատմության» կենդանի ոճը: Չարենցը ուրվագծել է հայ գյուղացու նոր կերպարը: Լենինի մասին պատմությունն այս ստեղծագործության մեջ արտացոլում է Հոկտեմբերյան հեղափոխության էջերից մեկը: Չարենցի մի շարք ստեղծագործությունների ուժը պայմանավորված է հեղափոխական իրադարձություններին նրա անմիջական մասնակցությամբ: Օրինակ, երկաթուղային կայարանի գրավման տեսարանը «Մաճկալ Սաքոյի պատմության» մեջ տրված է լակոնիկ, բայց միաժամանակ շատ պատկերավոր: Հետագայում, Փարիզում կոմունարների պատի մոտ վերհիշելով անցյալի հերոսական օրերը, նա կրկին վերագտնում է այս թեմային և նշում կայարանի մոտի կախազանները:

Բազմիցս պատկերելով հեղափոխական դեպքերի առանձին էջերը, Չարենցը կրկին ու կրկին անդրադառնում է Լենինի կերպարին և տալիս հայ գրականության մեջ շգրազանցված ցայտուն ու պատկերավոր ստեղծագործություններ: Լենինի մասին Չարենցը խոսում է մի շարք երգ-պոեմներում:

1924 թ. նա գրում է «Լենին», «Բալլադ Վլադիմիր Իլիչի, մուժիկի և մի գույզ կոշիկի մասին», «Լենին քեռին», 1925 թվականին՝ «Լենինն ու Ալին», «Կոմունարների պատը Փարիզում», հետագայում նաև այլ ստեղծագործություններ:

«Լենինն ու Ալին» պոեմում Չարենցը միաժամանակ խարազանում է և՛ թուրք, և՛ հայ ազգայնականներին: Լենինի կերպարն ստեղծելով, նա միշտ ընդգծում է նաև էպոխայի իրադարձությունները և ժողովրդի ու Լենինի ստեղծած կուսակցության միասնությունը: Աչքի է ընկնում նրա ձգտումը՝ գտնել պարզ ու հատու խոսքեր, մարքսիստական հայեցակետից լուսաբանել Լենինի դերն ու նշանակությունը:

Նախահեղափոխական Հայաստանի իշխողների ցայտուն բնութագրությունը տվող «Երկիր Նաիրի» վեպը, «Խմբապետ Շավարշ» պոեմը, ազգայնականություն և ազգայնականներին խարազանող քննադատությունը, իր ընկեր, հեղափոխական Մխչյանին նվիրված տխուր ու ինտիմ տողերը, ուղեբձներն ու էլեգիաները ցույց են տալիս, որ Չարենցը ամուր և վստահ կանգնած էր սոցիալիզմ կառուցողների առաջին շարքերում: Իր հայտնի «Թաղման քայլերգում» Չարենցը հավերժացնում է Կանտոնի շին հեղափոխականների հիշատակը, «Բալլադ քսանվեցի մասին» պոեմում հիշում է հերոս կոմունարներին, մի այլ բալլադում ներկայացնում է անգլիական զենքերալ Տոմսոնին և կերտում է կոմերիտականի կերպարը, իր երգերում և էլեգիաներում նկարագրում է հեղափոխական շարժումների հրաշունչ էջերը: Ես այստեղ կանգ չեմ առնում Չարենցի հայտնի լենինգրադյան երգերի վրա: Հարկավոր է նշել նաև, որ նա ուներ բեկման շրջաններում պոետի անելիքները ըմբռնելու ճիշտ զգացություն:

Հեղափոխական գոտեմարտերի փոթորկալից օրերին նա կանգնած էր դասական մշակույթի դեմ հանդես եկող նորարանների շարքերում: Բայց նա առաջինն էր, որ վճռեց կուրականորեն խզել կապերն իր այդ համախոհների, իսկ հետագայում նաև «ստանդարտ» արվեստի անփառունակ երկրպագուների հետ: Քաջ հայտնի են նաև Չարենցի խոսքերը «Լեֆիսական թմբուկի» մասին: Հաճախ դրանք խեղաթյուրված են մեկնաբանվում նույնիսկ այժմ: Մեկնաբանները, դժբախտաբար, հաշվի չեն առնում, որ Չարենցը՝ էրուզիտ-դեղազետ լինելով, մեծ ուշադրությամբ ուսումնասիրում էր ընթացիկ տեսական գրականությունը: Նրանք հաշվի չեն առնում և այն, որ Չարենցն ինքը, իր աշխատանքով, իր կոնկրետ պրակտիկայով, իր ժողովածուների հրատարակությամբ, այդ գրքերի նյութերի ընտրությամբ, դեպի Պուշկինն ու Գորկին, Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանն ու Վահան Տերյանը կատարած ավելի հստակ շրջադարձով ցույց տվեց անցյալի մշակույթի նկատմամբ իր նոր, բազմերանգ մտեցման նշանակությունը: Նոր Չարենցի հա-

մար ժողովրդական բանաստեղծ Ավետիք Իսահակյանը դասական գրականության ցայտուն ներակայացուցիչն էր, հումանիստ-մտածողների մտորումների ու տրամադրությունների այն արտահայտիչներից, որոնք ժողովրդական մասսաներին անողու կերպով կոչ էին անում կովի ելնել նեխված կարգերի ու հին աշխարհի դեմ: Պատահական չէ, որ իր վերջին ժողովածուի մեջ Չարենցը, խարազանելով դաժան անցյալի մթին տիրակալներին և մեծարելով մայիսյան ապստամբության հերոսներին, սիրով հիշատակում է դասական մշակույթի ներկայացուցիչներին և ընդգծում հայ մշակույթի, հայտը լեզվի, հայ մանրանկարիչ-վարպետների արվեստի, միջնադարյան ազատախոհ պոետների դերն ու նշանակությունը: Այս ամենը մեզ իրավունք են տալիս ընդգծելու Չարենցի բացառիկ դերը սովետահայ գրականության պատմության մեջ:

Այսուհանդերձ, սխալ կլինեք անտեսել սովետական այն գրողների պանծալի պլեադայի պատմական մեծ նշանակությունը, որոնք Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո ակտիվորեն արձագանքեցին Հոկտեմբերյան մեծ հեղափոխության լուսավոր պատգամներին և խթան հանդիսացան հայրենի երկրում կուլտուրական շինարարության ինտենսիվ զարգացմանը:

Հնի քննադատությունը և պայքարը անցյալի տիրակալների դեմ, ժողովուրդների եղբայրության և բարեկամության զաղափարներն իրենց ուժգին արտահայտությունն են գտել Դերենիկ Դեմիրճյանի և Ստեփան Զորյանի, Ազատ Վշտունու և Նաիրի Զարյանի, Արազու և շատ ուրիշ տաղանդավոր գրողների երկերում: Սովետահայ գրականության ծնունդն ու զարգացումն ընթանում էր ողջ սովետական գրականության զարգացման հետ սերտ միասնություն մեջ, ժողովուրդների եղբայրության ու համագործակցության, խաղաղության ու սոցիալիզմի դրոշի ներքո:

Նշանակալից է նաև այն, որ հայ մտավորականության ճնշող մասը, սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից, ներգրավվեց նոր կուլտուրայի ստեղծման աշխատանքների մեջ: Հայ դասական գրականության ամենանշանավոր ներկայացուցիչները ոչ միայն արձագանքեցին Հոկտեմբերյան մեծ հեղափոխությանը, այլև մտան ազատագրված Հայաստանի շինարարների շարքերը: Բանաստեղծներ Հովհաննես Հովհաննիսյանը, Հովհաննես Թումանյանը, արձակագիրներ Ծիրվանդաղեն, Դերենիկ Դեմիրճյանը, Արագին, Ստեփան Զորյանը, ժողովրդական բանաստեղծ Ավետիք Իսահակյանը և գրականության շատ այլ ներկայացուցիչներ, սովետական գրողների հաջորդ սերնդի հետ միասին սովետահայ գրականությունը դարձրին սովետական հզոր գրականության առաջավոր ջոկատներից մեկը:

Հայ առաջավոր գրողների ստեղծագործական աշխատանքի փորձը նպաստեց պոեզիայի և արձակի վարպետների նոր կարգերի աճին: Հայրենական

մեծ պատերազմի տարիներին սովետական զրահանութայն զարգացումը չընդհատվեց: Հանուն արդար և սուրբ գործի պայքարողների շարքերում իրենց պատվավոր տեղը գրավեցին նաև հայ գրողները:

Ներկայումս սովետահայ գրականությունը մտել է իր զարգացման նոր, առավել պատասխանատու շրջանը, երբ գրողների առջև հարց է դրված գրականությունը բարձրացնել էլ ավելի բարձր մակարդակի, ավելի մոտ կանգնել կյանքին, ժողովրդին, ժամանակի ակտուալ հարցերին: Կասկածից վեր է, որ սովետահայ գրողները նշանակալից աշխատանք են կատարել, ստեղծել են իսկական հումանիտական և ինտերնացիոնալ գաղափարներով տոգորված գործեր, սրունք ժողովրդական մասսաների մեջ ջերմ արձագանք են գտել:

Մեր դրամատուրգները ևս շատ բան են արել դրամատուրգիայի մեջ սոցիալիստական ռեալիզմի գաղափարների մարմնավորման համար: Սովետահայ գրականության սրտամբաններն իրենց քննական ակնարկներում նշելով դրամատուրգիայի դերը, կտրուկ կերպով առաջ են քաշել սովետահայ դրամատուրգիան ավելի մեծ բարձրության վրա դնելու հարցը: Այդպիսի պահանջկոտությունը բացատրվում է անկասկած նրանով, որ թատրոնը հանդիսանում է ժողովրդական մասսաների դաստիարակման ամենազորեղ ազդակներից մեկը: Ներկայումս Հայաստանում կան տասնյակից ավելի թատրոններ: Մայրաքաղաքի թատրոններից բացի, մեծ թատրոններ կան Լենինականում և Կիրովականում: Դա մեծ և նշանակալից ուժ է: Սունգուկյանի, Շիրվանզադեի, Պարոնյանի, Դեմիրձյանի հայտնի պիեսներից բացի, հայկական թատրոններում դեռևս քսանական թվականներին ներկայացվել են Գոգոլի, Գորկու, Գոլդոնիի, Շեքսպիրի, Շիլլերի, Իբսենի և այլ նշանավոր վարպետների պիեսները: Հանդիսատեսը մեծ ջերմությամբ է ընդունել Տրենյովի, Լավրենևի, Ֆուրմանովի, Վսեվոլոդ Իվանովի և այլ հեղինակների հեղափոխական գործերը:

Հայ մշակույթի պատմաբանների համար, անշուշտ, մեծ հետաքրքրություն է ներկայացնում ռեժիսորների ստեղծագործական աշխատանքը, որն իր իսկական բարձրությանը հասավ սովետական իշխանության օրոք:

Դերասանների, հեղինակների, ռեժիսորների կոլեկտիվ աշխատանքը չբացվում էր նկարիչների ստեղծագործական աշխատանքով: Մեր թատերական քննադատները բազմիցս ցույց են տվել դերասանների ձգտումը՝ ընդգծել պիեսների գաղափարական էությունը, հեղափոխական ուսմանտիկայի հատկանշական կողմերը:

Թատրոնը մասսաներին մոտեցնելու նպատակով հաճախ նրա աշխատողները գնում էին շրջանները: Ավագագույն դերասաններից մեկը՝ Ամո Խարազյանը, տակավին 1925 թվականին կազմակերպեց «Ազատ կոլեկտիվ» խումբը, որը սպասարկում էր ինչպես բանվորական, այնպես էլ գյուղական

հեռավոր շրջանների հանդիսատեսին: Ի դեպ, այդ խումբը հետագայում դարձավ Հայաստանի պետական շրջիկ թատրոն:

Թատերասեր հանդիսատեսի աճի շնորհիվ ներկայումս թատրոնների նշանակությունն էլ ավելի է մեծացել: Այժմ հայկական թատրոնները աշխատում են անհամեմատ ավելի բարենպաստ պայմաններում:

Երկու խոսք մեր երաժշտության նվաճումների մասին: Նախասովետական Հայաստանում, ինչպես հայտնի է, չկային կոնսերվատորիա, երաժշտական դպրոցներ: Չկար նաև օպերայի և բալետի թատրոն: Չկային, վերջապես, համերգային դահլիճներ: Սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից տեղի ունեցավ շեշտակի բեկում: Ստեղծվեցին բոլոր նախապայմանները երաժշտության և արվեստի մյուս ճյուղերի բուն զարգացման ու ծաղկման համար: Խոշոր դեր խաղաց, անշուշտ, Ռիմսկի-Կորսակովի մերձավոր գաղափարակից, դասական երաժշտության լավագույն տրադիցիաներով դաստիարակված կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի Հայաստան գալը: Նա դարձավ երիտասարդ երաժիշտների ուսուցիչն ու մտերիմ բարեկամը: Կարճ ժամանակամիջոցում ընդլայնվեց երաժշտությունը գնահատողների շրջանակը: Զգալիորեն աճեց հետաքրքրությունը դեպի դասական երաժշտությունը: Ռոմանոս Մելիքյանի, Սպիրիդոն Մելիքյանի, Արմեն Տիգրանյանի, Արամ Խաչատրյանի, Տեր-Ղևոնդյանի և մյուսների ստեղծագործությունները ազգային երաժշտության վերելքի նշանակալից ցուցանիշներ են: Հայ մեծ երաժիշտ Կոմիտասի ստեղծագործությունների գիտական մանրակրկիտ ուսումնասիրությունը, նրանց ժողովրդականացումը շտեմոված լայն շափերով իրականացվեցին միայն սովետական իշխանության տարիներին: Պետք է նշել նաև այն մեծ աշխատանքը, որ ձեռնարկվեց նշանավոր արևմտահայ կոմպոզիտոր Տիգրան Զուխաջյանի երաժշտական ժառանգության ուսումնասիրման գծով, որի ստեղծագործությունները համեմատաբար քիչ էին հայտնի:

Կերպարվեստի բնագավառում հայկական կուլտուրայի վերածնունդը ցայտուն կերպով դրսևորվեց ի դեմս գեղանկարչության նշանավոր վարպետ Մարտիրոս Սարյանի, որն իր մասնագիտական կրթությունը ստացել է Մոսկվայում և բարեկամական սերտ կապեր ունի ռուսական արվեստի առաջավոր ներկայացուցիչների հետ: Նրա մի շարք աշքի ընկնող ստեղծագործություններում բացահայտված ու արտացոլված են ճնշումից ազատագրված ժողովրդական մասսաների և հենց իր՝ նկարչի կենսուրախ աշխարհայեցողությունը: Մերը դեպի բնությունը, աշխատանքը և աշխատանքի մարդիկ ընդգծված են Սարյանի նկարներում և անգամ էտյուդներում, որոնք պատկերում են հայրենի հովիտներն ու լեռնաշարքերը:

Բազմաթիվ գործերի ցայտուն գույներն ու արևային երանգները, առօրյա կյանքը պատկերող նկարների կենսուրախ ինտոնացիան, նույնիսկ փոքրիկ

էտյուղները ընդհանուր կոլորիտը լավ են արտահայտում և՛ բնության, և՛ վերածնված Հայաստանի վեհուխումը արբեցած միշտ խոհուն, երազող-նկարչի մտահայեցողութեան հատկանշական գծերը:

Սարյանի հետ միասին հայ կերպարվեստի մեջ իրենց զգալի ավանդն են ներդրել նրա մոտիկ բարեկամ-զինակիցներ՝ Աղաջանյանը, Փ. Քերլմեղյանը, Քաղեոսյանը, Առաքելյանը, Գյուրջյանը, Կոջոյանը և շատ ուրիշ վարպետներ, որոնք աշխիւորեն արձագանքելով ազատագրված ժողովրդական մասսաների կոչին, իրենց աշխատանքներում պատկերեցին ռեալ իրականության մանրամասներն ու փաստերը:

Սովետահայ նկարիչների կողմից արտացոլված են և՛ աշխատանքային կյանքի առօրյան, և՛ էպիկական սխրանքների հերոսապատումը, և՛ երկրի սոցիալիստական վերափոխումն ու Հայաստանի ինդուստրացումը, և՛ աշխատանքի մարդկանց կերպարները:

Նրիտասարգ վարպետների մի շարք ստեղծագործություններում ներկայացված են շարքային բանվոր-հերոսների, կոլտնտեսականների, ինժեներների, դիտույան, արվեստի և գրականության ներկայացուցիչների դիմանկարները: Բոլոր այս նոր աշխատանքները արժեքավոր պատմա-գեղարվեստական փաստաթղթեր են, որոնք արտացոլում են սովետական նոր մարդու կազմավորման բարդ պատկերը, երկրի վերափոխման պրոցեսի հատկանշական գծերը: Նշված ստեղծագործությունները միաժամանակ ցույց են տալիս հայկական արվեստի երիտասարդ վարպետների աճը, վարպետներ, որոնք հեղափոխական-հայրենասերներին հատուկ նրբազգացողությամբ ուսումնասիրում են աշխատավորների կյանքը, աշխատանքն ու պայքարը:

Ավելորդ չէր լինի ավելացնել, որ առաջին Գեղարվեստի զպրոցը Հայաստանում կազմակերպվել է սովետական իշխանության օրոք, որ նախահեղափոխական տարիներին Հայաստանում չկային թանգարաններ և երբեք չէին կազմակերպվում գեղարվեստի ցուցահանդեսներ:

Կերպարվեստի ստեղծագործությունների գիտական էքսպոզիցիան և ուսումնասիրությունը, հայկական արվեստի բաժին ստեղծելը՝ այս ամենը մայրաքաղաքի Կերպարվեստի թանգարանը դարձրին հանրապետության գիտա-գեղարվեստական կարևոր կենտրոններից մեկը:

Այսօր, սակայն, արվեստի քննադատները չեն կարող սահմանափակվել գեղարվեստական վավերագրերի սոսկ նկարագրությամբ: Օրակարգի հարց է դարձված անցած ուղու մանրակրկիտ ուսումնասիրությունը և որակական ցուցանիշների օրջեկտիվ գնահատումը: Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը ոչ միայն խթանեց ազգային մշակութի բուռն զարգացումը, այլև անհրաժեշտ դարձրեց հեղափոխության պատգամների պրոպագանդայի, մասսաներին ինտերնացիոնալիզմի և սոցիալիզմի ոգով դաստիարակելու հարցը: Հայ արվես-

տի վարպետները մեծ աշխատանք են կատարել, բայց նրանք դեռ շատ անելիքներ ունեն, հատկապես այժմ, երբ արվեստի աշխատողների առաջ խնդիր է դրված ուժեղացնել կապը ժողովրդի հետ, պայքարել հանուն խաղաղության և ժողովուրդների եղբայրության, հանուն սոցիալիստական հասարակություն կառուցողների շարքերի ամրապնդման:

Անհրաժեշտ է երկու խոսք սանել նաև ճարտարապետության՝ սինթետիկ արվեստի ամենից ավելի կարևոր այդ տարատեսակի մասին: Պետք է հաշվի առնել մի կարևոր հանգամանք: Գրական և երաժշտական ստեղծագործությունները, թատերական ներկայացումները, անգամ քանդակագործների ու նկարիչների աշխատանքները հնարավոր է ուղղել կամ վերափոխել: Այդպես հեշտ չէ ճարտարապետական հուշարձանների սխալներն ուղղելը կամ ավարտված հուշարձանը քանդելը: Այդ պատճառով էլ ճարտարապետության վարպետներին ներկայացվող պահանջները պետք է ավելի խիստ լինեն: Հայկական ազգային ճարտարապետության դարավոր տրագիցիաները քաջ հայտնի են: Այսուհանդերձ, դրանք անցյալում մոռացության էին տրվել, նախահեղափոխական տարիներին Հայաստանում ակնհայտ արհամարհանք էր տիրում հայ դասական ճարտարապետության նկատմամբ: Հայտնի է, որ այդ ժամանակ երկրում չկար մտածված կամ պլանային շինարարություն: Վճռական շրջադարձը սկսվեց միայն սովետական իշխանության հաստատումից հետո: Պլանային քաղաքաշինությունը և ճարտարապետական հուշարձանների մտածված, գեղարվեստական ձևավորմանը հիմք դրվեց 1922 թ. սովետական ճարտարապետության ներկայացուցիչների ջանքերով:

Երևանի ինտենսիվ շինարարության օրերին բացառիկ դեր խաղաց մեծատաղանդ ճարտարապետ Ալեքսանդր Քամանյանը: Ներկայումս ոչ ոքի համար դադտնիք չէ, որ Քամանյանի նորարարական ստեղծագործական գործունեությունը առաջին օրերին պահպանողական շրջանների կողմից անբարյացակամորեն ընդունվեց: Գաթիարակված լինելով դասական ճարտարապետության լավագույն տրագիցիաներով և հրաշալի կերպով ուսումնասիրելով ճարտարապետության նշանավոր վարպետների՝ Ալբերտի և Պալլադի, Գվարենդիի և Կամբրոնի, Զախարովի և Բաժենովի, Վորոնիխինի և շատ ուրիշների ստեղծագործական ժառանգությունը և, վերջապես, լինելով Շչուսևի և Շչուկոյի, Ֆոմինի և ժոլտովսկու բարեկամն ու գործակիցը, Ալեքսանդր Քամանյանը համեմատաբար կարճ ժամանակամիջոցում հսկայական աշխատանք կատարեց Հայաստանում շինարարության մեջ պլանային սկզբունքը արմատավորելու, շենքերի գեղարվեստական որակը բարձրացնելու, նոր, ազգային և միաժամանակ սովետական ճարտարապետություն ստեղծելու ուղղությամբ: Ալեքսանդր Քամանյանի, այդ լրջամիտ էրուդիտ-գեղագետի ստեղծագործական որոնումներն ու նվաճումները զգալի ազդեցություն ունեցան երիտասարդ կա-

ուուցողների արվեստագիտական հետաքրքրությունների աճի և հայ ճարտարապետների նոր սերնդի զարգացման վրա: Պետք է ասել, որ այդ ճարտարապետների ջանքերով համեմատաբար կարճ ժամանակամիջոցում վերափոխվեց ոչ միայն հանրապետության մայրաքաղաքի, այլև մյուս քաղաքների և շրջանային կենտրոնների դեմքը:

Հայ ճարտարապետության ուսումնասիրման և ստեղծագործական յուրացման հետ միաժամանակ օգտագործվել են դասական ճարտարապետության համաշխարհային և ուսուցիչական կարևորագույն նվաճումները: Թամանյանի անմիջական նախաձեռնությամբ հատուկ ուշադրություն դարձվեց տեղական շինանյութերի հետազոտման աշխատանքներին, հայկական մարմարի, գրանիտի, բազալտի արժեքավոր տեսակների և հատկապես տուֆի տարատեսակների մշակմանը:

Նախահեղափոխական Հայաստանում քաղաքները չափազանց մոռյալ կոչորիտ ունեին, քանի որ գերակշռում էր սև տուֆը: Բացի այդ՝ քաղաքային շենքերի մեծ մասը, փողոցների անճաշակ ձևավորումը շատ ծանր տպավորություն էին թողնում: Ոչ ոք չէր հետաքրքրվում փողոցների պլանավորված կառուցմամբ կամ շենքերի գեղարվեստական ձևավորման գործով: Սովետական Հայաստանում գործը կտրականապես փոխվեց: Խիստ մտածված պլանով կատարվող շինարարությունը, մոնումենտալ շենքերի գեղարվեստական դասավորությունը, նրանց ձևավորումը, շինությունների համար ընտրվող վարդագույն և բաց մոխրագույն տուֆը արտացոլում և բացահայտում էին նոր սոցիալիստական Հայաստանի կառուցողների կենսուրախ աշխարհայեցողությունը և ազատագրված երկրի աշխատավոր զանգվածների ձգտումը դեպի կոմունիզմի նոր լուսավետ հեռուները: «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և հայ կուլտուրայի ծաղկումը» թեման չի կարող բավարար չափով լուսաբանվել, առանց հաշվի առնելու սովետահայ ճարտարապետների նշանակալից նվաճումները, այն ճարտարապետների, որոնք միայն սովետական իշխանության օրերին հնարավորություն ստացան ստեղծելու մոնումենտալ շենքեր և մեծ թափ հաղորդել ճարտարապետության զարգացմանը:

Ես հնարավորություն չունեմ նշելու Թամանյանի արժեքավոր նախաձեռնությունը շարունակողների զգալի կոնտինգենտի անուններն ու գործերը: Այդ պետք է արվի սովետահայ ճարտարապետության անցած ուղիների մանրամասն բնութագրման մեջ: Քննադատությունն, անկասկած, կարող է և պետք է բացահայտի այն զիջողներն ու հակասությունները, ավելորդ մանրամասներով կամ զարդարանքներով տարվելը, նկատելի վրիպումներն ու թերությունները, որոնք կան հայկական նոր ճարտարապետության այս կամ այն վարպետի գործերում: Սակայն ամենապահանջկոտ և խիստ քննադատություն անգամ անկարող է շրջադառնալ նոր ճարտարապետության անվիճելի և ակնհայտ

նվաճումները, հայկական նոր ճարտարապետության կարևոր պատմական արժեքը: Այդ ճարտարապետությունը նշանավորում է անցումը հնից՝ նորին, հայ ազգային կուլտուրայի այգաբացն ու ծաղկումը, այն կուլտուրայի, որը փառաբանում է աշխատանքը, խաղաղությունը և ժողովուրդների եղբայրությունը:

Նա, ով առիթ է ունեցել մոտիկից ծանոթ լինելու նախահեղափոխական Հայաստանի իրական պատկերին, տեսնելու անսահման տրամօթյուն ներշնչող նախահեղափոխական շինությունները, անկասկած կերպով ցրված շենքերի ու անճաշակ կառուցումների խառնակույտը և, վերջապես, սև տուֆի գերակշռությամբ ընդգծվող մոռյալ կոչորիտը, չի կարող չխոստովանել, որ հայկական նոր ճարտարապետությունը, որը կյանքի է կոչվել սովետական կարգերի հաստատումից հետո, հանդիսանում է միանգամայն նոր և ցայտուն վավերագիր...

Սովետական իշխանության տարիներին հսկայական նվաճումներ են ձեռք բերվել նաև կուլտուրական շինարարության, գիտության, կրթական գործի ծավալման և այլ բնագավառներում:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների, տեխնիկումների, միջնակարգ դպրոցների լայն ցանցի շնորհիվ ստեղծվել է օրըստօրե աճող նոր մտավորականություն: Միայն ուսանողների թիվը հանրապետությունում ներկայումս 20 հազարից ավելի է: Բացի Պետական համալսարանից, նորանոր կուլտուրական կադրեր են ստեղծում Պոլիտեխնիկական, Անասնաբուժական, Գյուղատնտեսական, Բժշկական և այլ ինստիտուտները: Բազմաձևում, աճում, ուժեղանում է այն մասնագետների թիվը, որոնք իրենց տոկոսն աշխատանքով նպաստում են սոցիալիստական տնտեսության և կուլտուրայի բարգավաճմանը: Գիտա-հետազոտական ինստիտուտների հետ մեկտեղ մեծ դեր է կատարում Սովետական Հայաստանում հանրապետության ղեկավար գիտական օրգանը՝ գիտությունների ակադեմիան, որի բազմաթիվ հաստատությունները սերտորեն կապված են արտադրության հետ և ակտիվորեն օժանդակում են հայրենիքի տնտեսական ու կուլտուրական շինարարությանը: Գիտությունների ակադեմիան իր պատասխանատու աշխատանքը վարում է ականավոր գիտնական, ակադեմիկոս Վ. Համբարձումյանի ղեկավարությամբ:

Սովետական իշխանության տարիներին բարձր զարգացման հասավ հայագիտությունը: Այդ բնագավառում խոշոր ներդրում կատարեցին ականավոր հայագետներ Մ. Աբեղյանը, Հր. Աճառյանը, Լեոն, Ստ. Մալխասյանը, Հ. Մանանդյանը, Գր. Ղափանցյանը, Հ. Օրբելին և ուրիշները:

Օգտագործելով դարերի ընթացքում կուտակված գիտական արժեքները, հենվելով մարքսիզմ-լենինիզմի դրույթների վրա, Հայաստանի գիտությունների ակադեմիայի և գիտական մյուս հաստատությունների ներկայացուցիչ-

ները եռանդով ու տոկոսներով բն վարում իրենց աշխատանքը՝ մշտապես կապված եղբայրական հանրապետությունների գիտնականների և առանձնապես Սովետական Միության գիտությունների ակադեմիայի հետ:

Հոկտեմբերյան մեծ հեղափոխության առաջին օրերից արդեն հայ ժողովրդի հեղափոխական շարքերի համար ուղենիշ են եղել լենինյան այն լուսավոր պատգամները, որոնք կիրառվել ու իրագործվել են Սովետական Հայաստանի սոցիալիստական շինարարության ընթացքում:

Անհրաժեշտ է շեշտել, որ Սովետական Հայաստանի տնտեսական և կուլտուրական վիթխարի վերելքը մեծ բերկրանք է առաջացնում արտասահմանի հայ հասարակայնության դեմոկրատական շարքերում:

Գուցե անտեղի չէր լինի հիշել և ընդգծել, որ Հայաստանը 1920—1921-ին շատ ծանր պայմաններում էր գտնվում: Երկիրն ավերված էր, քայքայված էր զլուղական տնտեսությունը: Չկար արդյունաբերություն: Չկային կառուցողների անհրաժեշտ կադրեր: Դժվարին պայմաններումն է կատարվել այն ամենը, ինչ ստեղծվել է ազատագրված հայ ժողովրդի ջանքերով: Երկու կարծիք չի կարող լինել այն մասին, որ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության շնորհիվ ազատագրված և վերածնված հայ ժողովրդի մեծ նվաճումները չէին կարող լինել, եթե նրա կողքին կանգնած չլինեին ռուս ժողովուրդը և ամրակուռ ու հզոր Սովետական Միության եղբայրական ժողովուրդները:

Կոմունիստական կուսակցության ղեկավարության շնորհիվ հայ ժողովուրդը կարողացել է իր ավերված հայրենիքը դարձնել դեպի կոմունիզմի լուսավետ ուղիները քայլող ինդուստրիական խոշոր երկիր և բարձր հումանիստական կուլտուրայի կենդանի մի անդամատան: Հին Երևանը տաղտուկ «մայրազյուղ» էր քայքայման հուսահատ օրեր ապրող այն բնակչության համար, որը միայն «արցունքի հովիտներ» էր տեսնում հայրենի իր բնավայրում: Այսօրվա Երևանը արդյունաբերական մեծ քաղաք է՝ լեցուն բարձրագույն գիտական հաստատություններով, դպրոցների խիտ ցանցով, հսկայական գործարաններով, ճարտարապետական հուշարձաններով: Հայ գիտնականները հայտնաբերել են խոշոր հանքավայրեր և նպաստել մետալուրգիայի արդյունաբերության կառուցման գործին: Հսկայական վերելք է ապրում Հայաստանի էներգետիկան: Անշափ նշանակալից են նաև նվաճումները սոցիալիստական գյուղատնտեսության բնավայրում և իրիգացիոն բեզուն շինարարության ասպարեզում: Հիմնովին փոխվել է նաև հին Գյումրի-Ալեքսպոլի «ղեմբը»: Մեծ Լենինի անվան քաղաքը՝ Լենինականը նույնպես խոշոր ինդուստրիական քաղաք է: Ստեղծվել են նոր քաղաքներ և քաղաքատիպ մեծ ավաններ: Սովետական կառավարության կողմից ցուցաբերվող օգնության շնորհիվ Հայաստանի սահմաններում հաստատվել են 90.000-ի չափ հայրենագարձ աշխատավորներ,

որոնց հատկացվել են հարմարագույն շենքեր, դպրոցներ, հիվանդանոցներ:

Սովետական Հայաստանի տնտեսական վիթխարի վերելքին զուգընթաց զարգանում է նաև ազատագրված Հայաստանի գիտությունը, արվեստն ու գրականությունը, ճարտարապետությունը և համայն մշակույթը: Ազատագրված նոր Հայաստանի այսօրվա մշակույթը կառուցվում է Սովետական Միության Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ— Լենինի դրոշի ներքո աշխատող և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության երիտասարդ հեղափոխական նոր սերնդի հերոսական ջանքերով: Այդ մշակույթը հագեցված է բարձր հումանիստական պատգամներով, ուղղված է բուրժուական ազգայնականների ու պատերազմի հրձիգների ուղղման ծրարները քղարկող բացահայտ մունետիկների դեմ:

ԿԱՐԵՎՈՐ ԽՈՍՔ ԸԻՆ ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Պրոֆ. Խ. Սամուելյան—«Հին հայ իրավունքի պատմություն», հ. 1, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիա—Հայկական ֆիլիալ, Երևան, 1939, էջ 363):

Պրոֆեսոր Խաչիկ Սամուելյանի վերջին մենագրությունը հայ իրավունքի պատմության մասին՝ լուրջ ուսումնասիրություն է: Մենագրության մեջ ամփոփված փաստական տվյալները խոշոր նշանակություն ունեն անգամ հայ հին գրականության մի շարք կարևոր պորթլեմների ճշգրիտ պարզաբանման համար: Լուսաբանելով հայ ժողովրդի կուլտուրայի կարևոր ճյուղերից մեկը, Սամուելյանը պարզում և բնութագրում է կոնկրետ սոցիալական այն ֆոնը, որի վրա հյուսվել են հեռու անցյալի գաղափարական-մտավոր հոսանքները: Կասկածից դուրս է, որ հայ իրավունքի պատմությանը նվիրված մենագրությունը կարող է օժանդակել բոլոր այն բանասերներին, որոնք շատ հաճախ, նյութերի և գիտական հետազոտությունների բացակայության հետևանքով, ստիպված են ընդհանուր մակերեսային և առաձգական ենթադրություններ անել անցյալում իշխող սոցիալական հարաբերությունների մասին: Իրավական վավերագրերը շատ կարևոր պատմական աղբյուրներ են, սակայն հենց այդ աղբյուրներն էլ ամենից քիչ են ուսումնասիրվել մեզ մոտ: Եղած ուսումնասիրություններն էլ կրում են միակողմանի բնույթ և շատ հարևանցի կերպով են միայն մոտենում պատմական պորթլեմների լուսաբանությանը: Այդ կողմից Սամուելյանի նոր հետազոտությունը կարող է համարվել հազվագյուտ արժեք ունեցող նորույթ:

...«Հին հայ հասարակության իրավական վերնաշենքը.— նկատում է պրոֆ. Սամուելյանը,— լայն ուղիներ է բաց անում պատմագետի առաջ՝ լուծելու մի շարք պորթլեմներ Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման

պատմության նկատմամբ, որոնք մուժ են մնացել կամ անտեսվել մեր հին մատենագրության մեջ...» (էջ 7, ընդգծումները մերն են—Ա. Կ.):

Այդ միանգամայն ճիշտ դիտողությունը կարելի է ավելացնել այն, որ հին ու միջնադարյան հայ գրականության տակավին փչ լուսարանված էջերի պարզաբանման համար ևս «իրավական վերնաշենքի» նշգրիտ բնութագրումը հսկայական նշանակություն ունի: Օրինակ՝ թոնդրակյան գրականության, մոտացված հեղինակների, բանաստեղծների, իմաստասերների կամ էլ լայնածավալ թոնդրակյան շարժումների ազդեցության ներքո ստեղծված գրականության լուսաբանության համար անհրաժեշտ է ամենից առաջ պարզել այդ ժամանակաշրջանի սոցիալական հարաբերությունների իսկական պատկերը: Լաստիվերտցու նկարագրությունը, հայ հին պատմիչների շափազանց թուրքիկ և անկատար ակնարկները, վերջապես առանձին հեղինակների գրական ելույթները կամ «նշգրտները» (Մագիստրոս, Նարեկացի, Օձնեցի, Անանիա Շիրակացի և այլք) հաղորդում են միմիայն շատ ընդհանուր տվյալներ, գրեթե միշտ տենդենցիոզ և կցկտուր փաստեր: Այնինչ եկեղեցական ժողովների կանոնները, այլ խոսքով, հին օրերի իրավական խտացած նորմաներն օժանդակում են թե՛ շարժման սոցիալական բնույթի և թե՛ պատմական զարգացման հիմնական ուղեգծի պարզաբանմանը: Այդպիսի օրինակներ շատ կարելի է բերել:

Առայժմ լույս է տեսել պրոֆ. Խ. Սամուելյանի մենագրության միայն մի մասը՝ առաջին հատորը: Դա բավական սովոր և փաստալից հատոր է, բաղկացած երեք հիմնական հատվածներից: Առաջին հատվածում հեղինակը սեղմ խոսքերով բնութագրում է հայ իրավունքի հետազոտության ընդհանուր վիճակը: Այդտեղ Սամուելյանն ընդգծում է այն, որ գրեթե բոլոր հին հետազոտություններն էլ կրում են միակողմանի բնույթ: Մի հիմնական թերություն նշմարելի է բոլոր հին բանասերների մոտ էլ: Թե՛ պատմագիրները և թե՛ իրավագետները սովորաբար իրենց հետազոտություններում ելնում են այն հենակետից, որ «իրավաբանական նորմերն ու իրավական ինստիտուտները ծագում են հենց ինքնին իրավունքից, որպես մարդկային բնության մեջ հավիտյան բովանդակված «արդարության ու նշմարտության» ռզուց...»: Երկրորդ հատվածում Սամուելյանը կանգ է առնում հայ իրավունքի աղբյուրների մանրակրկիտ քննության ու բնութագրման վրա: Այդ հատվածն ամբողջ մենագրության հետաքրքրական մասերից մեկն է:

Այդ տեսության մեջ առանձին արժեք է ներկայացնում հայ սովորույթային իրավունքի բնութագրմանը նվիրված գլուխը: Շեշտելով ազգագրական գրականության շատ հարուստ տվյալների մեծագույն կարևորությունը, Սամուելյանը հրավիրում է իրավագետներին անհրաժեշտ ուշադրությամբ մոտենալ հին սովորույթի գիտական ուսումնասիրությանը: Նրա այդ դիտողություն-

ներ միանգամայն տեղին է, քանի որ հայ բանասերները ամենից քիչ լուսաբանել են հենց սովորույթային հայ իրավունքի աղբյուրները: Միանգամայն ճիշտ ու տեղին է Սամուելյանի դիտողությունը, թե «հայ ֆոլկլորի գաղափարախոսության և սյուժետային պատկերների մեջ, ընտանեկան և գյուղական նահապետական կենցաղի ծիսական կարգերում որոշ շափով արտացոլվել են հասարակական-արտադրական հարաբերությունները, որոնք կովաններ են տալիս պատկերացնելու ամբողջ սովորույթային իրավունքը...» (ընդգծումը մերն է—Ա. Կ.): Այդպիսի հարուստ նյութեր, ինչպես նկատում է Սամուելյանը, շատ կան «մեր հին ու միջնադարյան գրականության մեջ»: Հետաքրքրական է մենագրության մեջ նաև հայ կանոնական որոշումների տեսությանը նվիրված հատուկ գլուխը: Այդ որոշումների մասին ժամանակին գրել են մի շարք հայ բանասերներ, որոնք բոլորն էլ նյութին մոտեցել են ազգայնական ակնոցներով զինված: Նրանք խուսափել են անգամ պարզել եկեղեցական կանոնների սոցիալական բնույթը: Հակառակ այդ բանասերների միակողմանի և սկզբից մինչև վերջ հակադիտական մեթոդին, Սամուելյանը նորից առաջինն է, որ հիշեցնում է կանոնական որոշումների պատմական էվոլյուցիայի և սոցիալական էություն ուսումնասիրության կարևորության մասին:

Օտար ղեկավարային նվիրված գլուխը մենագրության մեջ, դժբախտաբար շափազանց սեղմ է ու համառոտ: Ըստ երևույթին, հեղինակը հնարավորություն չի ունեցել մանրակրկիտ կերպով ուսումնասիրելու մի շարք կարևոր ձեռագրեր: Անցյալում իրավունքի այդօրինակ աղբյուրները, կասկածից դուրս է, շատ կարևոր նշանակություն են ունեցել: Իր մենագրության մեջ Սամուելյանը կանգ է առնում մասնավորապես Մովսիսական իրավունքի, Ասոր-հոմեական Դատաստանագրքի և Հոմեական իրավունքի ղեկավարի վրա: Նրա դիտողությունները շատ թուրքիկ են, թեև ժամանակին հիշեցնում են մեր բոլոր մասնագետներին, որ հայկական հին ձեռագրերի ուսումնասիրությունն այսուհետև կարող է ու պիտի ընթանա ավելի մեծ թափով:

Մենագրության մեջ ամենահետաքրքրական գլուխներից մեկն է ազգային դատաստանագրքերի քննությանը նվիրված ընդարձակ գլուխը, որը ինքնին արդեն կարող է համարվել առանձին մի ուսումնասիրություն: Այդ գլխում Սամուելյանը կանգ է առնում Դավիթ Ալավկա որդու Դատաստանագրքի, ապա Մխիթար Գոշի հայտնի Դատաստանագրքի և վերջում էլ Սմբատ Գունդստապլի Դատաստանագրքի վրա:

Աղբյուրների մեջ ուրույն տեղ են գրավում հայ պատմագիրները մի կողմից և վիճական արձանագրությունները մյուս կողմից: Կարևորագույն այդ աղբյուրների վրա հեղինակը կանգ է առնում առանձին գլխում, և կարծես թե լազրում է մեր իրավագետներին՝ հատուկ ուշադրությամբ մոտենալ անցյալում աննշան շափով գնահատված այդ աղբյուրների քննությանը:

երրորդ հատվածում Սամուելյանը տալիս է հայ իրավունքի համադրու-
թյունը: Այդ հատվածը բաղկացած է երկու ընդարձակ մասերից: Առաջին մա-
սում բնութագրվում են հայ իրավունքի պատմական զարգացման էտապները,
իսկ երկրորդում խոսվում է հայ պետական ու վարչական իրավունքի մասին:

Որքան էլ հասցնեալ ու վիճելի համարվեն Սամուելյանի կողմից առաջա-
դրված մի շարք դատաբանական հայ իրավունքի զարգացման մասին, այ-
նուամենայնիվ շի կարելի ժխտել, որ նա կարողացել է տալ հիրավի շատ հե-
տաբանական, բովանդակալից և այժմեական մի հետազոտություն:

Սկսելով «նախարարական իրավունքից» հեղինակն անցնում է Բագրա-
տունյաց կամ արաբա-բյուզանդական շրջանի և ապա ավարտում է իր տեսու-
թյունը՝ բավական մանրամասն կանգ առնելով թուրք-մոնղոլական շրջանի վրա:
Վերջին մասում նա խոսում է սելջուկյան տիրապետության, Կիլիկիայի հայ
պետության մեջ գործող իրավունքի մասին: Յուրաքանչյուր առանձին հատված
ունի իր ստորաբաժանումները: Այսպես, օրինակ՝ նախարարական իրավունքի
բնութագրմանը նվիրված մասում խոսվում է վաղազույն ֆեոդալիզմի, Արշա-
կունյաց թագավորության, մարզպանական Հայաստանի, բյուզանդական Հա-
յաստանի, եկեղեցական ֆեոդալիզմի մասին: Ծիշտ աչդպես է կազմված նաև
երկրորդ մասը, ուր բնութագրվում են արաբա-բյուզանդական շրջանի իրավա-
կան նորմերը:

Այդպես են կառուցված մենագրության բոլոր հատվածները: Շոշափելով
մի շարք պորբեմներ, Սամուելյանը հաճախ միայն թուռցիկ կերպով է հիմ-
նավորում իր պաշտպանած դրույթները: Սակայն այդ թերություններով հան-
դերձ, մենագրության մեջ արձանագրված փաստական տվյալները շատ ուշա-
գրավ են և օժանդակում են հայ իրավունքի պատմական էվոլյուցիայի ուսում-
նասիրության դործին:

Առանձին արժեք են ներկայացնում մանավանդ այն էջերը, ուր խոսվում
է հայ ժողովրդի սոցիալական պատմության մասին: Կանգ առնելով ֆեոդալա-
կան հասարակության մեջ իշխող հողային ունեռայի վրա, Սամուելյանը անում
է բավական որոշ եզրակացություններ: Նրա համոզմամբ՝ ֆեոդալական Հա-
յաստանում նույնպես շահագործման սկզբնական ձևը եղել է աշխատապարտ
ունեռան: Փավստոսն ակնարկում է հատկապես խաշարի մասին, այնինչ VII
դարի պատմիչների մոտ հիշատակվում են կոռ ու բեկարը: Հետագայում, հա-
սարակական հարաբերությունների զարգացման ավելի բարձր շրջանում, աշ-
խատապարտ ունեռան վեր է ածվում արդյունավեար ունեռայի: Հիշեցնելով
Մարքսի խոսքերն այն մասին, որ արդյունավեար ունեռան տնտեսական տե-
սակետից ոչինչ չի փոխում հողային ունեռայի էությունը, Սամուելյանը
գտնում է, թե «դա բնատուրքն է, որ իսկական արտադրողը վճարում է կալվա-
ծատեր-ֆեոդալին նախկին աշխատապարտության փոխարեն»: Բնորոշ է նաև

այն, որ աշխատապարտ ունեռան պահպանում է իր գոյությունն արդյունա-
վեար ունեռային կից: Սամուելյանի կարծիքով այդ երևույթը «տեսնում ենք
անխախտորեն Հայաստանի ֆեոդալիզմի ամբողջ պատմության մեջ»: Արա-
բական տիրապետության օրերին, սակայն, առևտրի զարգացման հետ միա-
ժամանակ, «ամուր ոտք է դնում Հայաստանում» դրամական ունեռան: Ապա
կանգ առնելով մատենագրական աղբյուրների վրա, բանասերն ընդգծում է, որ
արաբ տիրակալները վերածելով սովորական բնահարկը դրամական հարկի՝
ստեղծում են տնտեսական «հեղաշրջում» (ընդգծումը մերն է—Ա. Կ.):

Սակայն դրամական հարկերը (ըստ Սամուելյանի՝ անգամ դրամական
ունեռան) եղել են նույնիսկ Աբեմենյան թագավորների շրջանում (Քսենոֆոն—
«Կիրոպեդիա» «Հերոդոտ»): Այդ ընդհանուր դատողություններից հետո բանա-
սերն անցնում է շահագործվող խավերի բնութագրմանը: Ելնելով աղբյուրների
մեջ ցրված տվյալներից, նա գտնում է, որ շինականներն էլ իրականում եղել են
նորտեր: Շինական, գեղջուկ, ռամիկ տերմինները— նկատում է նա,— չեն
բնորոշում ճորտության զանազան կատեգորիաները, քանի որ հայ հին գրա-
կանության մեջ «հաճախ հանդիպում ենք շինական տերմինին զուգահեռ կամ
հոմանիշ առումով նաև գեղջուկ և ռամիկ բառերին»: Շինականները նորտ
գյուղացիներն էին, այնինչ ռամիկները կարող էին լինել նաև քաղաքացիները
(ստորագրա խավերից): Գյուղացիներ լինելով հանդերձ՝ շինականները եղել
են շեն վայրերի—կառուցվածքների, շեների, ավանների ճորտեր: Վիժական
արձանագրություններում նորտ և ժողովուրդ տերմինները Սամուելյանի կար-
ծիքով, հոմանիշ իմաստ ունեն:

Մենագրության մեջ բազմաթիվ ցիտատներ են բերված թե՛ մեր պատմիչ-
ներից և թե՛ վիժական արձանագրություններից՝ հատկապես ակնարկված
ստուգաբանության հիմնավորման համար: Հետաքրքրական է Մխիթար Գոշի
Դատաստանագրքից հանված այն ցիտատը, ուր ընդգծվում է, թե շինականը
չի կարող մտնել ազատների դասը՝ մինչև որ նախօրոք չստանա տիրոջ կամքն
ու համաձայնությունը յուր «ծառայությունից» ազատվելու մասին: Միևնույն
ավելի կտրուկ կերպով արտահայտված է XIII և XII դարերի վիժական արձա-
նագրություններում: Մենագրության կտրուկ այդ թեզի հետ առաջին նվազ
դժվար է հաշտվում այն որ միևնույն շինականներն ունեցել են գույքային սե-
փականության իրավունք (բացառյալ հողն ու ջուրը) եղել են ունեռա վճարող-
ներ: Այդ շինականները ենթարկվել են դրամական տուգանքների, ունեցել են
արտագրության միջոցներ և նույնիսկ (ըստ պատմիչների վկայության) երբեմն
քաղաքական սուր ճգնաժամերին որոշ նշանակություն են ստացել իբրև քա-
ղաքացիներ: Փավստոսի վկայությամբ, շինականների ներկայացուցիչները
(ղասապեաֆ) մասնակցել են աշխարհաժողովներին: Հայ պատմիչները, սա-
կայն, բազմաթիվ տվյալներ են հաղորդում շինականների շահագործման մա-

սին և շատ որոշակի կերպով են ակնարկում շինականների նորական կախման մասին: Սամուելյանը, ի միջի այլոց, կանգ է առնում Եղիշերի մի դիտողության վրա: Յանկանալով բնութագրել Հայաստանում մնացած ազնվական կանանց թշվառ դրությունը, Եղիշեն դրանց համեմատում է շինականների հետ, անվանելով վերջիններին «զեղչուկ վշտացեալ» կամ «շինական վշտամբեր» (էջ 267):

Չափազանց հետաքրքրական են այն էջերը, ուր նկարագրված են շինականների սոցիալական շարժումները: Գրքի այդ մասն էլ մի առանձին էքսկուրս է, լեցուն փաստական հարուստ տվյալներով: Այդտեղ առանձնապես խոսվում է նաև Թոնգրական մեծածավալ շարժումների մասին: Դժբախաբար բովանդակալից այդ էքսկուրսի մեջ անհրաժեշտ շափով չի պարզարանված անցյալի ժողովրդական շարժումների բարդ բնույթը: Եկեղեցական կանոններն ակնարկում են, ի միջի այլոց, ըմբոստ հերետիկոսներին աջակցող իշխանների, բարձրաստիճան հոգևորականների, անգամ «թագավորական տան» ներկայացուցիչների մասին: Հայտնի են հայ պատմիչների արած հավաստումներն ու դիտողությունները Արշակ Բ-ի քաղաքականության մասին՝ Արշակավանի առթիվ: Նման տվյալները հիմք են տալիս ենթադրելու, որ միջնադարյան Հայաստանում ևս ժողովրդական շարժումները, որպես դասակարգային պայքարի արտահայտություն, հարկավոր է քննարկել երկրի սոցիալական հարաբերությունների ամբողջականության ասպեկտի տակ, հատկապես աչքի առաջ ունենալով կենտրոնացած պետության ձգտող թագավորների քաղաքականությունն ընդդեմ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների:

Սամուելյանի հետազոտության մեջ կան հատկանշական դիտողություններ ստրկության մասին: Հակառակ մի շարք հայ պատմաբանների հայտարարությունների, նա հաստատում է, որ հին Հայաստանում գոյություն է ունեցել ստրկության ինստիտուտը: Այդ մասին վկայում են մի շարք պատմիչներ: Կան որոշակի ակնարկներ հայ հին դատաստանագրքերի մեջ: Սամուելյանի կարծիքով՝ հայ օրինագրքերի առանձին հատվածները կազմել են նույնիսկ հին հայկական որոշ շրջաններում՝ համապատասխան սովորույթների հիման վրա: Նա համոզված է, որ եղել են անգամ «տեղական որոշումներ» ստրկիների վիճակի մասին:

Ստրկության ինստիտուտը զարգացած էր հատկապես Կիլիկյան թագավորության սահմաններում (էջ 301): Մենագրության մեջ ընդգծվում է, որ Սմբատ Գունդատապլի հայտնի Գատաստանագրքի հոդվածներն ստրկիկների մասին՝ դաժան են: Մխիթար Գոշի Գատաստանագրքի մեջ էլ կան ակնարկներ ստրկիկների մասին: Կիլիկիայում գոյություն ունեւ ստրկավաճառություն: Այդտեղ ջենովացիների հետ կնքվում են դաշնագրեր, ուր խոսվում է ստրկիկների վաճառքի մասին:

Ես կանգ չեմ առնում մենագրության այն տողերի վրա, ուր խոսվում է

ստրկիկների իրավական դրության և հատկապես ստրկության նպաստող աղբյուրների մասին: Բանասերի հիմնական դրույթն այն մասին, թե Հայաստանում իրապես եղել է ստրկություն, կարելի է միանգամայն հաստատված համարել: Եղել են ոչ միայն ռազմագերի-ստրկիկներ, այլև իրենց պարտքերը չվճարող ազատ մարդկանցից ստրկիկներ: Այն հանգամանքը, որ Մխիթար Գոշն իր Գատաստանագրքի մեջ փորձում է սահմանափակել իրենց զավակներին ստրկիկներ դարձնող (վաճառքի միջոցով) ծնողների «սովորությունը», ակնառու կերպով ցույց է տալիս, որ ոչ միայն կիլիկյան, այլ նաև հայաբնակ այլ վայրերում ստրկավաճառությունը կապված էր իշխող կարգերի հետ:

Շատ կարճ խոսքերով եմ ես բնութագրում Սամուելյանի աշխատասիրության նշանակությունը: Կարելի էր կանգ առնել նաև այն էջերի վրա, ուր ակնարկվում է հայ կանանց իրավական կացության մասին: Սամուելյանը նշում է, որ տիրապետող դասակարգերի կանայք կրել են ժամանակին պատրճեն կամ պառճեն կոշիկները—ցուցաբերել են ի տիրական իրավունքներ (էջ 247): Նա կանգ է առնում հատկապես Հոռոմոսի (1228) վանքի մի արձանագրության վրա և ապա պատմում է վիմական մի շարք ուրիշ արձանագրությունների մասին: Կանայք վանքերին և եկեղեցիներին նվիրաբերում էին գյուղեր, այգիներ և դրամ—կառուցում էին վանքեր, եկեղեցիներ, կամուրջներ և այլ հասարակական շենքեր: Անի քաղաքի պարիսպների բուրգերից մի քանիսը անեցի կանայք են կառուցել իրենց միջոցներով: Չնայած շատ ակնառու այդ տվյալներին, XII դարի այնպիսի վավերագիր, ինչպիսին է Մխիթար Գոշի Գատաստանագրքը, չի արտացոլում ամենևին միջնադարյան հանրահայտ այդ իրավունքը: Սամուելյանը գտնում է, որ «Գատաստանագրքի հեղինակն այդ հարցում օգտագործել է հին իրավաբանական աղբյուրները... և արտացոլել է վաղեմի տոհմա-պատրիարխատական գերդաստանական կազմի վերապրուկները, երբ կիրք գտնվում էր ստորացված, իրավազուրկ դրության մեջ» (էջ 248): Ինձ թվում է, որ կարելի է ասել նաև հետևյալը. Հենվել բացառապես դատաստանագրքերի և կանոնագրքերի իրավաբանական նորմերի վրա չի կարելի. երբ խոսվում է հասարակական բարդ հարաբերությունների մասին: Եթե վիմական արձանագրությունները միանգամայն նոր լույսով են մեկնաբանում կանանց (թեկուզ և ազնվական կանանց) իրավական կացությունը, ապա կարելի է պնդել, որ այսուհետև նման արձանագրությունները և մանավանդ նյութական կուլտուրայի հուշարձաններն ավելի լայն շափով պիտի քննարկվեն հայ կուլտուրայի հին էջերի լուսաբանության համար: Համառոտ մատենագրական ակնարկում անհնարին է, իհարկե, կանգ առնել մենագրության մեջ արժարժված բոլոր պրոբլեմների վրա: Իմ նպատակն էր հիշեցնել, որ հայ իրավունքի պատմության մասին գրված առաջին ամփոփ այդ ուրվագիծը սոսկ «մատենագիտական» մենագրություն չէ, այլ ընթերցողների ամենալայն շրջանների համար էլ արժեքավոր մի գիրք:

Մի դիտողություն միայն թերևս անհրաժեշտ է անել ամբողջ մենագրության մասին: Ակնարկելով հոռոմեական իրավունքի ունեցիկների մասին Սամուելյանը գրեթե ամենևին կանգ չի առնում հայ հին դատաստանագրքերի տարածմանը նպաստող ռեալ գործոնների վրա: Ելնելով, իր համոզմամբ կատարելապես անաուարկելի, այն թեղից, թե հիշված դատաստանագրքերը եղել են բացառապես Ֆեոդալական հասարակության դոկումենտներ և արտացոլել են միմիայն որոշ դասակարգերի մտահայեցությունը—աչքաթող է անում մի հանգամանք: Նա անուշադրության է մատնում այն, որ քաղաքների զարգացման շրջանում առանձին գործիչներ ենթարկվել են քաղաքային կուլտուրայի ազդեցության: Այդ մասին համենայն դեպս, ակնարկում են նյութական և հոգևոր կուլտուրայի բազմաթիվ և բազմազան հուշարձանները: Եթե այդ այդպես է, ապա ուրեմն կարելի է ենթադրել, որ անգամ «Դատաստանագրքի» նման մի վավերագրի մեջ պիտի նշմարվեն նոր էպոխային հատուկ որոշ էլեմենտներ: Մի՞թե պատահական է այն, որ հատկապես Գոշի Դատաստանագրքը տարածվում է հենց որոշ պատմաշրջանում, որոշ շրջանից սկսած էլ առանձին տոն է հաղորդում իրավունքի «ունեցիկների»: Զի՞ թե լադրում արդյոք այդ ակնառու հանգամանքը, իրավագետներին՝ հատուկ ուշադրությամբ մոտենալ Գոշի Դատաստանագրքի մեջ նշմարվող որոշ օրենքների քննարկմանը և ուսումնասիրությանը: Շատ հարցեր կարելի է տալ նաև մենագրության մեջ արժարժված ուրիշ պրոբլեմների մի քիչ սխեմատիկ լուսաբանության առթիվ: Հայ իրավունքի պատմության ուրվագիծն ասպարեզի վրա է դնում անգամ չլուծված կամ շատ քիչ լուսաբանված պատմական պրոբլեմների դիտական լուսաբանության խնդիրը: Ենչուված «սխեմատիզմն» էլ չի կարող նսեմացնել ժրաշան բանասերի ձեռնարկած խոշոր աշխատանքի մեծ արժեքը: Այնքան էլ մեծ չէ հայ ժողովրդի սոցիալ-կուլտուրական պատմության մասին գրված հետազոտությունների թիվը: Ահա թե ինչու հայ կուլտուրայի, գիտության, արվեստի, գրականության զարգացմանը սնունդ տվող պատմա-հասարակական միջավայրի լուսաբանությանը նվիրված ամեն մի նոր ուսումնասիրություն միշտ կունենա ընթերցողների ամենալայն կոնտիգենտ: Սամուելյանի գիրքը հենց այդօրինակ դիտական հետազոտության մի փորձ է, որ պիտի համարվի շատ արժեքավոր նորույթ...

Տեղեկագիր ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի, 1942, № 6 (20), էջ 109—113:

Տակավին 1909-ին, իմ ուսանողության տարիներին, վահան Տերյանը Պուշկինի մասին խոսելիս հաճախ անցնում էր Թումանյանի պոեզիայի քննարկմանը:

— Թումանյանն էլ մեր Պուշկինն է, հայ ժողովրդի ամենապայծառ և մեծ բանաստեղծը:

Ապա ընդգծում էր, որ Հովհ. Թումանյանի պոեմները կարող են պատվավոր տեղ գրավել «համաշխարհային գրականության պանթեոնի» մեջ:

— Երբ Սոբաշնիկովները Սոֆոկլեսի և էվրիպիդեսի երկերի հետ միասին հրատարակեն նաև Թումանյանի երկերի ուսերեն թարգմանությունը, դուք էլ չեք կարողանա վիճել և առարկել...

Այդ օրերին ես թերահավատությամբ էի արձագանքում վահան Տերյանի խոսքերին:

— Տաղանդավոր բանաստեղծ է, շատ տաղանդավոր, բայց և այնպես հեռու է Պուշկինից:

Պուշկինյան ստեղծագործությունը Տերյանի համար արվեստի գերագույն բարձունք էր: Երբ նա էքսպանսիվ ոգևորությամբ ասում էր՝ պուշկինյան ուժ, պուշկինյան ոճ, պուշկինյան պարզություն, դրանով արդեն ընդգծում էր կարծես գեղարվեստական ելակետն ու որոշում իր գիրքը որևէ բանաստեղծի կամ պոեմի նկատմամբ:

Ռեակցիայի տարիներին մենք սուր պայքար էինք մղում հատկապես դաշնակցականների դեմ: Այնքան էլ դուր չէր գալիս մեզ այն, որ դեմոկրատ բանաստեղծը, այնուամենայնիվ, դաշնակցության դեմ հանդես չի գալիս վճռական և կտրուկ:

— Շատ լավ է թարգմանել,— ասում էինք մենք,— Լոնգֆելլույի «Հայավաթի երգի» նախերգանքը: Բայց մի՞թե կարելի է այս օրերին անդորր սրտով պատել մարտնչող ու բախվող բանակների ռազմադաշտում «խաղաղության շիբուխը» բերնին:

— Ճիշտ է,— պատասխանում էր Տերյանը:— Դա անհնարին բան է: Բայց ինչո՞ւ եք դուք կարծում, թե խոսելով և ակնարկելով խաղաղության մասին, Թումանյանը ձեր երևակայած պացիֆիստն է: Ամենևին ոչ: Իմ համոզմամբ, բանաստեղծի նկարագրած «խաղաղությունը» հեղափոխական իմաստ ունի համենայն դեպս, որոշակի կերպով ուղղված է իշխողների և շահագործողների բանակի դեմ: Իր խաղաղության դրոշն էլ բանաստեղծն ուղղում է բռնակալների դեմ: Նա ակնարկում է շատ պարզ բոլոր ազգությունների եղբայրության մասին: Ահա ինչու նրա քարոզած «խաղաղությունն» իրականում դառնում է ժողովուրդների բարեկամության վեհ գաղափարների ուրույն պրոպագանդ:

Վահան Տերյանի դիտողությունը տեղին էր: Ազգայնական կոիվների հեղինակների դեմ Քումանյանը մղել է անդուլ և անողոր կոիվ: Երբ նա ուղևորվում է ազդեցական քոչվորների մոտ և կոչ անում միանալ հայ շինականներին՝ ընդդեմ ցարական բռնակալության, մեծազույն իրարանցում է ստեղծվում վայրագ շովինիստների շրջաններում: «Հայավաթի երգի» նախերգանքը մեծ բանաստեղծի համար հիրավի եղել է ժողովրդի թշնամիների դեմ ուղղված երգ: Միայն հետագա տարիներին՝ 1921-ին, ինձ համար հասկանալի դարձավ Վահան Տերյանի մեկնաբանության իսկական իմաստը: Շատ անգամ թուրքիկ գրույցների ժամանակ Քումանյանը բացատրում, պարզաբանում էր իր իմաստասիրությունն էլ, առանձին դիտողություններն էլ: Հստակ և բավական հետևողական հայեցություն էր դա:

— Խաղաղություն խրճիթներին, պատերազմ պալատներին,— այս է ահա,— ասում էր բանաստեղծը,— իմ դավանած իմաստասիրությունը: Իմ շիբուլին էլ հենց էդպիսի խաղաղության մասին է ակնարկում և հիշեցնում: Իմ համոզմամբ, էդպես պիտի հասկանանք և Լոնգֆելլոյի «Հայավաթի երգի» իմաստը: Միևնույն իմաստն ունեն ուս ժողովրդական երգերը, հեքիաթներն ու բիլինաները: Երկրագնդի բոլոր ժողովուրդների ստեղծագործության հիմնական մոտիվը հենց խաղաղության միջազգայնական այդ պատգամն է...

Այսօր, երբ գրի եմ առնում իմ հուշերը հայ ժողովրդի մեծ բանաստեղծի մասին, վերոգրյալ խոսքերը կարծես ավելի որոշակի են հնչում ինձ համար: Եվ ամեն անգամ, երբ թերթում եմ Քումանյանի ներքերն ու պոեմները, միշտ առաջին հերթին հիշում եմ հենց բանաստեղծի այդ նվիրական խոսքերը ժողովուրդների բարեկամության մասին...

Պատանեկության տարիներին արդեն ես ուսումնասիրել եմ Հովհ. Քումանյանի մի քանի հայտնի երկասիրությունները: Այդ ժամանակ էլ խոշոր տպավորություն է թողել ինձ վրա «Սասունցի Դավիթը»: Բաքվի նավթային շրջաններում Բալասանի, Բիրի-էյբաթ արվարձաններում, բանվոր-բուլշևիկները նույնպես առանձին սիրով կարդում էին հատկապես բանաստեղծի հենց այդ պոեմը: Բանվորական ժողովներում հաճախ Սա. Շահումյանն էլ անգիր արտասանում էր Քումանյանի երկերից բաղված որևէ հատված:

Հովհ. Քումանյանի հետ ես առաջին անգամ ծանոթացել եմ Թիֆլիսում, ճիշտ այն տեղում օրերին, երբ Անդրկովկասում նոր էր միայն հաստատվում սովետական իշխանություն: Խոշոր տպավորություն էր թողել ինձ վրա այդ հանդիպումը:

... Նիհար, բարձր հասակով, հաճախ կես-ուրախ, կես-տխուր ժպիտը շրթներին, միշտ աշխույժ և կենդանի գրույցի սիրահար, Քումանյանը հենց առաջին անգամից հմայում էր: Ավելի շատ ինքն էր խոսում: Զրույցի ժամանակ անդադար պատմում էր հայ ժողովրդական ստեղծագործության անսպառ

զանձարանից առնված ավանդությունների մասին և կանգ էր առնում ավելի բնորոշ առակների վրա: Ինձ էլ ասում էր միևնույն խոսքերը, ինչ որ շարունակ կրկնում էր Մոսկվայից եկած նոր եկվորներին:

— Էդպես էլ զարմանալի բան, առաջին անգամ հեռու հյուսիսից գալիս են էդ տարօրինակ «սալդաթները»: Լավ չեն հագնված ու զինված, բայց ժողովուրդների եղբայրության վսեմ դրոշակն է դրանց դրոշակը. մեծ պատգամներով են մտնում մեր երկրի սահմանները: Էդ էլ է պարզ: Խաղաղություն են բերում և մեր մեծ երկրագնդի բոլոր սահմաններում էլ կամենում են աշխատանքի և խաղաղության նոր իշխանություն հաստատել: Ի՞նչ մարդ է կենինը՝ չլաված ու շտեմնված հանձար: Դե՛, ես էլ հո լավ գիտեմ, որ եղել են հին, շատ հին օրերին Գրաբկոս եղբայրներ, եղել է ստրուկ-ըմբոստների գլխին կանգնած դեկավար Սպարտակ, եղել են հեղափոխական մեծ գործիչներ: Շատ զրբեր եմ կարդացել անցյալի մեծ գործիչների մասին: Բայց դրանք հո ամբողջ երկրագնդին չեն ասել իրենց խոսքը: Իսկ կենինը ամբողջ աշխարհին է դիմում, համայն մարդկությանը. և շատ պարզ էլ ասում է՝ վերջ պիտի տանք էդ անիծյալ պատերազմին, վերջ պիտի տանք իշխանների, կալվածատերերի, կապիտալիստների տիրապետությանը: Անհրաժեշտ է վերջապես ստեղծել արդար աշխատանքի հզոր իշխանություն: Կենինն էդ ամենն ասում է և միաժամանակ անցնում գործի: Ասում է՝ կարելի է իրագործել մարդկության լավագույն մտածողների բարձր իդեալները և կովում է հենց էդ իդեալների համար: Բա ո՞ր խելառ մարդը հիմի չի կովի էդպես մեծ դրոշի ներքո: Էդ դրոշակն էլ կարմիր է: Վրան մի էնպես բան է նկարված, որ զարմանալի է. մուրճ ու մանգաղ՝ այսինքն բանվորի և գյուղացու միություն՝ աշխատանքի մարդկանց եղբայրություն: Չտեսնված դրոշակ է, որ մարդու սիրտն է այրում—արթնացնում է ամենանուրբ մեր ղզացումները. հենց էն է ասում, ինչ որ հարկավոր է ասել, բայց մինչև հիմա էդբան պարզ ու հասկանալի լեզվով ոչ ոք չի ասել:

Տարբեր երանգներով Հովհ. Քումանյանը կրկնում էր իր այդ խոսքերը և ավելացնում.

— Ի՞նչ են մտածում մեր էդ հիմար մարդիկ, էդ զաշնակցականները և հնչակյանները: Մինչև էսօր չեն խրատվել ու կարծես ամենևին չեն էլ ցանկանում խելքի գալ: Դրանցից շատերին հենց ես լավ եմ ճանաչում, հին ծանոթներ շատ եմ ունեցել: Իմ կարծիքով ժողովրդին է հարկավոր բացատրել, անհրաժեշտ է լավ բացատրել, մեր հասարակ ժողովուրդը կհասկանա:

Մի քանի անգամ ես եղել եմ Քումանյանի բնակարանում: Մի երկու անգամ ճաշի է հրավիրել ինձ և իմ մի երկու ընկերներին:

Ճաշին հավաքվել էր մեծ բանաստեղծի ամբողջ ընտանիքը՝ հայկական հին և բազմամարդ ընտանիք՝ միաձույլ և կենսուրախ: Եռանդ և ուրախու-

թյուն ներշնչողը ինքը՝ Քուճանյանն էր, մեծ սեղանի ծայրին նստած նահապետը. ինձ գոնե այդպես էր թվում: Բողոքն էլ սիրով և ակնածանքով էին լսում. ընդհատում էին զգույշ տոնով: Քուճանյանը անեկղոտներ էր պատմում, կանգ էր առնում ժողովրդական առակների վրա, խոսում էր հին գրողների, բանաստեղծների, գործիչների մասին: Մովորական թամաղա շէր:

Ամեն մի խոսքի և ակնարկի մեջ երևում էր տաղանդավոր վարպետը, հայ կուլտուրայի նախանձախնդիր երկրպագուն: Շատ անգամ առանձին սիրով իմաստալից տողեր էր բերում արևելյան մեծ հումանիստ բանաստեղծների երկերից՝ Սաադիի, Օմար Խայամի, Ֆիրդուսու, Ջամիի բանաստեղծություններից: Մեկ-մեկ էլ ֆարսերեն էր ցիտում, ինքն էլ իսկույն թարգմանում և մեկնաբանում էր, սակայն միշտ շեշտում էր, որ ֆարսերեն չգիտես: Ապա մի պատմությունը տակավին չավարտած անցնում էր մի ուրիշ պատմության:

— Հա՛, էն էի ասում. միտս մի ուրիշ բան բնկավ. մի էդ էլ ասեմ, որպեսզի չմոռանամ: Խոսքը գինու մասին է: Գինին շատ լավ բան է: Ես լավ եմ հասկանում Օմար Խայամին: Զանազան տեսակ գինիներ են լինում: Հիմի մենք խմում ենք Վրաստանի գինին՝ Կախեթի գինին. շատ պատվական գինի է: Թե կուզեք իմանալ, ընկերական հավաքույթի, քեֆի համար Կախեթի գինուց լավ բան չի լինի: Ամեն գինի իր համն ունի. հաշկական գինին էլ լավ է, շատ թունդ է սակայն, անասելի տխրություն է բերում մեր հայկական էդ գինին: Ես լավ եմ փորձել, էդպես է: Իսկ Կախեթի գինին ուրախացնում է: Լավ քեֆի համար Վրաստանի գինուց լավ բան չես գտնի:

Երջանիկ երկիր է: Պատմությունն էլ հենց էդ է հաստատում: Մեր եղբայրակից վրաց ժողովուրդն էլ շատ ծանր օրեր է քաշել, բայց էլի ավելի երջանիկ է եղել: Ամեն փոթորիկ անցել է ամենից առաջ հայ ժողովրդի գլխով: Մեր հայրենիքի բնությունը շատ գեղեցիկ է և հզոր, բայց էլի էնքան մեղմ չի, ինչպես Վրաստանի բնությունը: Ծիշտ է, մեր Լոռվա լեռներում, ձորերում էլ նշմարելի է միևնույն մեղմությունը. Ղարաբաղ, Զանգեզուր, էդպես չի: Լեռներն էդտեղ շատ հուժկու են և հզոր...

Ճաշից հետո հյուրերն անցնում են առանձնասենյակ: Բանաստեղծի արվեստանոցն է դա: Նստում ենք արևելյան կապերտով դարդարված թախտի վրա: Մեծ պահարանների մեջ շարված էին բազմաթիվ հրատարակություններ: Պահարաններից հանում էր մի քանի հատորներ, առանձին հրճվանքով ցույց տալիս հազվագյուտ զրբերը. միաժամանակ հիշեցնում էր, թե ո՞ր հեղինակին ինչո՞ւ է սիրում և ինչո՞ւ է բարձր գնահատում:

Մենք խնդրում ենք պատմել իր երկերի մասին. ի՞նչ է գրում, ինչո՞ւ չի հրատարակում իր «Հազարան բլբուլը» և «Սասունցի Գավթի» երկրորդ մասը:

— Լավ եք ասում, շատերն են էդ մասին տեսել, անհրաժեշտ է էդ անել, բայց ի՞նչ մեղքս ծածկեմ. հիմի, էս մեր օրերին բան դուրս չի գալիս: Հար-

կավոր է նոր բան գրել, էդ էլ են ասում ինձ. նոր ձև էլ է անհրաժեշտ, պետք է մի լավ մտածեմ էդ մասին էլ:

Շատ ու շատ բան կա անելու: Եթե հնարավոր լիներ նորից մի քան տարի վերադարձնել, ի՞նչ լավ բան կլիներ: Հիմի է հարկավոր ապրել: Հիմի է անհրաժեշտ ուշադրություն դարձրել ստեղծագործել: Մեկ-մեկ պտտում եմ բազարում, մտնում եմ բուկինիստների մոտ. շատ հետաքրքրական է էդ բուկինիստների աշխարհը: Քրքրում եմ հին հրատարակություններ, մեկ էլ տեսնում եմ, ձեռքս է ընկնում մի որևէ հազվագյուտ գիրք: Իհարկե, դրանք էլ, էդ բուկինիստներն էլ աշխատում են խաբել, վաճառական մարդիկ են: Հին նկարներ շատ եմ սիրում, խաբում են, դուրս է գալիս կեղծիք, սլոդկելիկ: Էդպես բան էլ է պատահում: Ա՛յ, օրինակ, մի լավ նայեք: Իմ կարծիքով դա շատ լավ նկար պիտի լինի: Ասում են հայտնի Ռյուսիզալի գործերից է:

Սեղանի դարակից հանում է խոշորացույցը և առաջարկում դիտել, ուսումնասիրել նկարի տակ մանր տառերով գրված խորհրդավոր անվանատառերը: Հուլանդական բնանկար է: Տաղանդավոր վարպետի ստեղծագործություն է: Ներկերը խունացել են և մթնել, սակայն երևում է խոսուն բնանկարը:

Մթնում է և առանձնասենյակում:

Թեյ են բերում Քուճանյանի աղջիկները: Նորից բանաստեղծը կանգ է առնում Պուշկինի, Հոմերոսի, էսքիլեսի, արևելյան մեծ հումանիստների վրա: Նորից դիմում ենք Քուճանյանին, պահանջում շուտափույթ կերպով ավարտել «Սասունցի Գավթի» երկրորդ մասը, խնդրում ենք վերջապես կարգալ մի երկու հատված ձեռագրից: Քուճանյանը մոտենում է ձեռագրերի պահարանին, բայց քիչ հետո հեռանում է պահարանից և նորից ասում. «Հարկավոր է կարգալ և բննել, շատ քիչ բան է արված, գրելու դեռ շատ բան կա...»: Այլևս շատ դժվար էր համոզել բանաստեղծին: Նա շեշտում էր միայն այն, որ դեռ շատ աշխատանք կա անելու:

Հյուրերից մեկը սկսում է կարգալ «Սասունցի Գավթի» այն տողերը, որոնք պատմում են կովի դաշտն ուղևորվող ժողովրդական հերոսի մասին:

Մեղմ երեկո էր: Հայ ժողովրդի սիրելի հերոսի խոսքերը հիշեցնում էին բաղաբացիական պատերազմի մեր աննկուն գործիչներին: Լուռ էին հյուրերը, և յուրաքանչյուրն այդ վայրկյանին իրեն հատուկ եղանակով է մոտենում ժողովրդական հերոսի խոսքերին: Մեծ ուշադրությամբ էր լսում ինքը՝ Քուճանյանն էլ:

Հարցնում ենք, իրավունք ունի՞ արդյոք բանաստեղծը փոխել ժողովրդական ստեղծագործության սյուժեն:

— Իհարկե, ավելի լավ է միշտ հավատարիմ մնալ աղբյուրին, հետևել բնագրին: Սակայն առանց փոփոխություն մտցնելու անհնարին է կերտել նոր և ինքնուրույն գեղարվեստական ստեղծագործություն: Սյուժեն էլ ունի

նշանակութիւն, բայց հիմնականը գեղարվեստական վերամշակման նոր ձևն է: Հարկավոր է էնպես գրել, որ ժողովրդի խոսքը, հոգին ու սիրտը ցուցադրվեն: Ես ահա հենց էդպես եմ ջանացել մոտենալ նյութին: Իհարկե, իմ պոեմի մեջ հաճախ խոսում է մեր լեռների գեղջուկը, բայց դուք տեսնում եք, էլի, որ դա չի տարբերվում սասունցի շինականներից:

Հյուրերից ոչ ոք չի առարկում Քումանյանին:

— Հայ ժողովրդական առակներն էլ էդպես եմ մշակել:— Նորից մոտենում է դարակներին:

— Ահա էստեղ հավաքել եմ մեր ժողովրդական հեքիաթների և առակների բազմաթիվ վարիանտներ: Կան անշափ արժեքավոր վարիանտներ: Ծրագրել եմ մի բան էլ գրել հատկապես հայ ժողովրդական հեքիաթների մասին: Մանրամասն ուսումնասիրել եմ ուրիշ ժողովուրդների, մանավանդ ռուս ժողովրդի հեքիաթները: Կովկասագիտական հին ժողովածուների մեջ էլ հո բազմաթիվ նյութեր կան, թեև հայկական հեքիաթների մասին շատ քիչ են գրել մեր բանասերները:

Հետադայում ամեն անգամ, երբ տեսնում էի Քումանյանին, նա խոսք էր բաց անում առաջին հերթին հայ ժողովրդական հեքիաթների գիտական ուսումնասիրության և հրատարակության մասին:

— Երբ հրատարակության կհանձնվեն կանոնավոր կերպով խմբագրված հատորները, միմիայն մենք շենք լինի զարմացողները: Կզարմանան թե՛ ռուս և թե՛ եվրոպական գիտնականները: Մեր մեծ հանցանքներից մեկն էլ էդ է. մինչև էսօր էլ կույրերի նման ենք: Սպասում ենք, որ էլի մի գեղեցիկ օր մի Վալերի Բրյուսով հրապարակ դա ու ասի:

— Մեծ գանձեր ունեք և անշնորհք մարդիկ եք, շեք կարողանում գնահատել:

Երբ կազմակերպվում է Հայաստանի օգնության կոմիտեն, Թիֆլիսից մի խումբ հայ գրողներ ուղևորվում են Երևան: Մեծ տպավորություն է թողնում եկողների վրա այս անգամ էլ Գեղեղի հայտնի ձորը: Առավոտյան թափանցիկ մշուշի մեջ անտառապատ լեռները և ձորերը շատ գեղեցիկ են: Այդ մասին էին պատմում Թիֆլիսից եկվորները ու ապա ինչ-որ նոր տոնական արամադրությամբ լցնում երևանյան փողոցները:

Քումանյանը առաջին հավաքույթի նախագահն էր:

Ժողկոմխորհի նախկին շենքի դիմաց, ռազմական կոմիսարիատի կողքին, կա մեկհարկանի փոքր մի տուն, որի արևելյան օրնամենտներով զարդարված զահլիճում կայացավ ժողովը. ներկա էին Լեոն, Գեմիրճյանը, Ստեփան Զորյանը, Ստեփան Կանայանը, Տիգրան Հովհաննիսյանը: Որոշվում է կազմել արտասահմանյան հայ աշխատավորությանն ուղղված ընդարձակ մի կոչ: Այդտեղ շեշտվում է այն, որ նոր իշխանությունը հենվում է հայ ժողովրդի գերազանց մեծամասնության վրա և նպատակ է դրել զարկ տալ հայ կուլ-

տուրայի զարգացման գործին: Առանձին կետերի մասին ժողովականները սկսում են վիճել: Լեոն նետում է շատ կարճ, աֆորիզմների նման պարբերություններ: Քումանյանը առաջարկում էր ավելի մանրամասն գրել հատկապես կուլտուրայի մասին:

Նորակազմ միությունը, որքան հիշում եմ, պիտի ազիտացիա մղեր հակասովետական հոսանքների, մանավանդ դաշնակցականների պրովոկացիոն աշխատանքի դեմ: Այդ օրերին պրովոկացիան հակահեղափոխական կազմակերպությունների ձեռքին պայքարի մի զենք էր:

Հայ մտավորականության առաջավոր ներկայացուցիչների հավաքույթը ամենակարուկ կերպով կովի էր ելնում այդ սև բանդաների դեմ և առաջարկում հայ ժողովրդի կենսունակ տարրերին համախմբվել նոր՝ սովետական իշխանության շուրջ:

Քումանյանը առանձին կենդանություն էր տալիս գրույցներին և վեճերին: Մոտենում էր յուրաքանչյուրին, պատմում իր ծանոթ բոլշևիկների, վրաց հայտնի գրողների, արվեստագետների, գործիչների մասին: Հաճախ խոսում էր Օրշոնիկիձեի մասին:

— Էլ ի՞նչ երկար խոսենք: Ամեն ինչ պարզ է: Հայրենիքն էստեղ է, էն էլ երկրագնդի ամենադեմոկրատական պետության կողքին կանգնած, ռուս մեծ ժողովրդի ամբողջանը հենված ազատ հայրենիքը: Մեր այժմյան կոչն էլ արտասահմանի հայ աշխատավորներին հենց էդ պիտի ասի...

Երևանում ապրող հայ գրողները մեծագույն ակնածանքով էին լսում Քումանյանին: Այդ պահին նա, հիթավի, հայ կուսիկների լիազոր ներկայացուցիչ նման մի դեմք էր Սովետական Հայաստանի մայրաքաղաքում:

— Մենք էլ միամիտ չենք,— ասում էր,— հայրենիքը քանդված է հիմնովին: Շատ բան կա անելու: Էնքան էլ հեշտ չէ նոր իշխանության գործը: Հարկավոր է և՛ կառուցել նորը, և՛ միաժամանակ հուսալքվածներին նոր եռանդ ներարկել, ապացուցել, որ ավերված Հայաստանը կարող է ու պիտի վերածնվի:

Միշտ հարկավոր է հիշել անցյալի սև օրերը: Մահ էր ու կոտորած, անվերջ կոտորած, այժմ կյանք է ու խաղաղություն...

Կավ շեմ հիշում այսօր բանաստեղծի անշափ պատկերավոր ակնարկը մեր Կարմիր բանակի մասին: Հիշում եմ միայն, որ նա ինքն էլ առանձին տրամադրությամբ էր պատմում:

— Դուք հո կարգացել եք Գյոթեի «Ֆաուստը»: Մեծ գործ է, գեղարվեստական և իմաստասիրական հանճարեղ արտադրություն: Գիտեք հո, որ Կուն-Ֆիշերը պատմա-փիլիսոփայական մենագրություն է գրել հենց Գյոթեի «Ֆաուստի» մասին: Շատ ուրիշներն էլ գրել են: Հիմի էդ մասին չէ խոսքս: Հիշում եք հո էն տեսարանը, ուր Մեֆիստոֆելը կանգնած է ու խոսում է

Ճառուտի հետ: Բուլշևիկները նոր ճշմարտության ավետարեբներ են, ժողովուրդների եղբայրության մեծ գաղափարների ջահակիրներ են: Հայ ժողովուրդը մահվան անդունդն էր նետվում, անդունդի ափին էր կանգնած: Էդ վայրկյանին բուլոն էլ, նույնիսկ հայությանը բազմաթիվ խոստումներ տվողները, ասացին մեզ. «Դե՛հ, էլ ոչինչ չենք կարող անել, ձեր գլխի ճարը հիմի դուք պիտի տեսնեք...»: Շատ ծանր ու դժման օրեր էին: Մենակ մնացինք, միանգամայն մենակ էինք: Սահմանիցն էլ մահն էր քայլում: Թարսի պես մեր երկիրն էլ աղքատ էր և քարքարոտ, ոչ նավթ կար, ոչ էլ ծով, որ գոնե գրավեր հողը պետությունների ուշադրությունը: Ահա հենց էդ ծանր ու դժման օրերին հեռու հյուսիսից գալիս է էլի մեր դարավոր բարեկամ ռուս ժողովրդի, այս անգամ վերջնականապես ազատագրված ժողովրդի, Կարմիր բանակը, կանգնում է սահմանի մոտ, հրացանն էլ գետնին է դնում— ա՛յ էսպես— ու ասում է. «Դե՛, կանգնիր, սահմանն էս է: Կանցնես, ինձ հետ գործ կունենաս: Չեմ թողնի էս գծից անցնել...»: Ա՛յ, երբ հիշում եմ էդ օրերը, երբ տեսնում եմ ռուս կարմիրբանակայինին, միտքս է գալիս Գյոթեի «Ճառուտի» հիշված տեսարանը...

Պատմում էր նաև թիֆլիսյան դեմոկրատիայի մասին: Երբ մենշևիկները լեղապատառ Թիֆլիսից փախչում են, և քաղաք են հասնում Կարմիր բանակի առաջին զորամասերը, կենդանանում են քաղաքի փողոցներն ու հրապարակները: Փողոցներում խռնվում, հավաքվում են մարդկային խմբեր և սկսում քննել նոր դեպքերի նշանակությունը: Սովորաբար այդ խմբակները շրջապատում էին կարմիրբանակայիններին և զրուցում օրվա դեպքերի մասին:

— Շատ անգամ,— պատմում էր Թումանյանը,— մեծ ուշադրությամբ լսում էի զանազան զրույցներ և վեճեր: Երևանյան հրապարակի անկյուններում, մեծ փողոցներում, մեծ շենքերի մոտ հա խոսում էին ու վիճում: Մեկմեկ էլ տեսնում էի, որ բուլոն էլ շրջապատել են մի կարմիրբանակայինի և զանազան հարցեր են տալիս: Կանգնում էի, նայում ու լսում: Ես հո շատ լավ եմ հիշում հին օրերի սալգաթներին: Փողոցում մոտենալն էլ անհնարին էր: Իսկ հիմի էդ հասարակ ռանչպար-զինվորը փողոցում կանգնել է և էնպես է խոսում, կարծես միշտ էլ կլուբումն է խոսել: Յուրաքանչյուր հարցին պատասխան է տալիս և էն էլ ինչպիսի պատասխան: Մի քանիսը դրանցից հո շատ խելոք էին խոսում. երևում էր, որ կրթված էին, դարգացած. բայց կային նաև շատ պարզ, գյուղական, հողեղեն ոճով խոսող կարմիրբանակայիններ: Գրանց լեզուն էլ կենդանի էր: Ա՛յ, զրանց ես միշտ ավելի մեծ ուշադրությամբ էի լսում: «Նոր մարդիկ են, իսկապես, նոր մարդիկ»,— լսում էի ես ամենուրեք այդ օրերին, բուլոն էլ զարմանում էին, որ կարող են առանց վախենալու խոսել հրամանատարների հետ էլ:

Մի բան էլ է զարմանալի: Էդ առաջին օրերին քաղաքում գողությունն էլ

կարծես պակասել էր: Մտածում էի, եթե էդքան կարճ ժամանակվա ընթացքում կենինին հետևողները կարողացել են ստեղծել նոր մարդկանց էդպիսի շարքեր, ի՞նչ կլինի, երբ բուլշևիկների իշխանությունն ամբողջ Անդրկովկասում:

Ինձ թվում է, որ առաջին օրերի այդ տպավորությունը շատ մեծ ազդեցություն է թողել Հովհ. Թումանյանի վրա: Նա շէր կարողանում մոտանալ վաղեմի իր այդ հուշերը: Հետագայում նույնիսկ ստամբուլյան հայ գրողների միջավայրում նա մի քանի անգամ կանգ էր առնում հիշատակված զրույցների վրա և աշխատում էր բնութագրել ազատագրական հեղափոխական մեծ բանակի խիզախ մարտիկին...

Թուրքիայի հին մայրաքաղաք Ստամբուլը 1921—22-ին յուրահատուկ մի քաղաք էր:

Տաճկերեն լեզուն ավելի հաճախ լսվում էր քաղաքի ծայրամասերում և ապա բուն Ստամբուլի փողոցներում: Կենտրոնական վայրերը՝ ծովափնյա Ղալաթիան, շքեղ Բերան և հարուստ պոլսեցիների ռեզիդենցիան՝ Շիրշին, լեցուն էին օտար եկվորներով, որոնց գերազանց մեծամասնությունը կազմում էին սպիտակ էմիրանտները: Դենիկիների և Վրանդելի ջախջախված զորամասերի առանձին հատվածները խմբվել էին Պոլսի շրջակա վայրերում: Բազմաթիվ ռուսական ճաշարաններ կային: Միշտ լեցուն էին այդ ճաշարանները, և ամեն տեղ էլ հնչում էր ռուսերեն լեզուն: Նույնիսկ ռուսերեն հատուկ օրաթերթ էր լույս տեսնում տխրահոշակ Սուվորինի որդու խմբագրությամբ:

Էմիրանտ այդ «հյուրերն», իհարկե, աշխատում էին պրովոկացիոն լուրեր տարածել բուլշևիկների մասին:

Բոսֆորում իշխում էին օտարերկրյա պետությունների ռազմանավերը, իսկ քաղաքի տարբեր մասերում էլ միևնույն պետությունների հետախուզական օրգանները: Ճաշարաններում և ռեստորաններում վխտում էին լրտեսաներն ու լրտեսուհիները: Հայ զաշնակցական էմիրանտներն էլ կատաղությամբ օժանդակում էին հակաբուլշևիկյան կազմակերպություններին: Չնայած դրան, քաղաքի թերթերից մի երկուսը, հաճախ հակառակ իրենց ցանկություններին՝ արձանագրում էին հակահեղափոխական զորամասերի քայքայման պրոցեսը բնորոշող շատ հատկանշական փաստեր: Ահա այդ օրերին էլ Ստամբուլ է հասնում Թումանյանը: Սովետական Հայաստանի պատվիրակությունը հանձնարարել էր ինձ ուղևորվել Ամերիկա, և ես էլ 1921-ին ապրում էի Ստամբուլում: Ինձ համար պարզ էր, որ որոշ մարդիկ կաշխատեն ամեն կերպ մեկուսացնել բանաստեղծին: Դաշնակցականները հատկապես ձգտում էին հակապրոպագանդ կազմակերպել և խանդարել Թումանյանի աշխատանքը:

Թուրքիայի հին մայրաքաղաքն այդ ժամանակ շափազանց կեղտոտ էր և անհրապույր: Բոսֆորից հեքիաթային մի սքանչելի քաղաքի էր նման: Սպի-

տակազուն պալատները, Չրադանի ապարանքը, գեղեցիկ մզկիթները և դեպի երկինք սլացող բարձր մինարեները խորհրդավոր տեսք էին տալիս հեռու քաղաքին: Բայց երբ նավը մոտեցավ Ղալաթիայի համբավավոր նավամատույցին, և մենք իջանք նավից ու աղմկալից Ղալաթիայից անցանք դեպի շքեղ ու գրեթե նույնչափ աղտոտ Բերան, հերթաթը շրացավ: Բերայի գլխավոր պողոտայի կողքի բոլոր փողոցները ասիական նեղ և կեղտոտ փողոցներ են:

Շատ գեղեցիկ են ասիական ափին տարածված հայտնի Իսկյուտարը, Կադիբյոյը, Մոզան: Ղալաթիայից մի մեծ կամուրջ տանում է դեպի իսկական Ստամբուլը. զուտ տաճկաբնակ քաղաքամասը: Այդտեղ կային հնօրյա բյուզանդական Պոլսի գեղարվեստական պատմական հուշարձաններ, գեղեցիկ պուրակ, ճարտարապետական մեծագույն կոթողներ: Դուրեկան էին նաև երկհարկանի փայտաշեն գեղեցիկ տները, արևելյան ապակեպատ վերանդանները, ավելի մաքուր փողոցները: Աղմուկն էլ այնքան ուժեղ չէր Ստամբուլի խորհրդավոր այդ փողոցներում:

Մի երկու անգամ Թումանյանի հետ ուղևորվեցինք Բերայից դեպի Ստամբուլ, և մեզ համար ավելի նկատելի էր մեծ քաղաքի խոշոր այդ «թաղամասերի» արտասովոր հակադրությունը:

— Եվրոպական Բերան, — նկատում էր Թումանյանը, — Եվրոպայի կարիկատուրան է՝ խառնիճաղանջ, ապազգայնացած և այլասերված կոմիվոյաժորներով լեցուն մի անհրապույր վայր: Իսկ Ստամբուլը ազգային կոլորիտ ունի, թեև Բերայի պողոտայի նման աղմկալից չէ: Փողոցներն էլ էդտեղ լուռ են և կարծես թե տխուր:

Թումանյանի ու Դանուշ Շահվերդյանի հետ միասին դնացիներ սուլթանական պուրակ և ապա հատուկ թուլտվություն ստանալուց հետո մի քանի ամերիկացի տուրիստներին հետ միասին մտանք Թուրքաթուրքի պալատը: Պարետր բարձրահասակ ալբանացի զինվորական էր, հայտնի Աբդուլ Համիդի նախկին թիկնապահներից մեկը: Դերասանի նման հանդիսավոր էր խոսում և աշխատում ընդգծել իր գեյիկատ վերաբերմունքը բոլոր տուրիստների նկատմամբ: Ավելի հաճախ դիմում էր Թումանյանին: Բավական հոգնեցինք: Ահա այդ ժամանակ էլ մոտեցավ մի պատանի և առաջարկեց բոլոր տուրիստներին մի-մի զավաթ սուրճ խմել: Սրճամանները փոքրիկ զավաթներ էին՝ զարդարված թանկագին քարերով:

— Պալատում հին ժամանակ այդպես էին ընդունում օտարերկրյա ներկայացուցիչներին, — նկատում է ալբանացին և հիշեցնում, որ ինքը միշտ էլ «բարի, հին անցյալի» մեծագույն երկրպագուներից է եղել:

Ամբողջ պալատը, թանգարանը, պալատական այգին զիտելուց հետո անցանք մեծ պատշգամբը, որը շատ դուրեկան էր. այդտեղ կային ամրոններ, կարելի էր մի քիչ հանգստանալ, տեսարանն էլ շատ գեղեցիկ էր: Նորից պա-

րետի հետ շատ աշխուժ տոնով զրուցում է Թումանյանը: Այստեղ անակնկալ կերպով հանդես եկավ ինչ-որ լուսանկարիչ, նկարեց նախ ամերիկացի տուրիստներին և ապա մեզ: Այնքան էլ հաջող չէր փոքր այդ լուսանկարը, շնայած դրան, իսկական Թումանյանը լավ էր դժվել, հատկապես վերջին տարիների Թումանյանը:

Պետք է ասել, որ ինքը՝ Թումանյանը, միշտ էլ զրույցների ժամանակ աշխատում էր ծանրանալ առաջին հերթին գրական խնդիրների վրա: Սակայն 1921-ին հաճախ այնքան համառ կերպով էին առաջադրվում քաղաքական հարցերը, որ կատարելապես անհնարին էր «լուռ ճամփորդի» դիրք գրավել:

Ստամբուլի «Ենի շարզ» թերթի, որքան հիշում եմ այժմ, խմբագրության ներկայացուցիչները գալով Թումանյանի մոտ, խնդրել էին «լուսաբանել», առաջին հերթին, ժամանակի քաղաքական խնդիրները: Այդ այցելության մասին պատմել է ինձ ինքը՝ բանաստեղծը:

— Աշխատում էի ծանրանալ բացառապես գրական հարցերի վրա, բան դուրս չէր գալիս: Մարդիկ եկել են միանգամայն լավ նպատակով: Ես նկատեցի, որ դրանց ամենից առաջ հետաքրքրում են ազգային հարաբերությունները...

Պատմական թուուցիկ ակնարկ նետելով, Թումանյանը իր հարցազրույցի մեջ շեշտում է, որ անդրկովկասյան բոլոր վայրերում սովետական իշխանությունը ստեղծել է իրական խաղաղություն:

— Սովետական Հայաստանի կառավարությունը, — պատմում է պոետը, — Մոսկվայից ստացել է մեծագույն նվեր՝ ոսկու վալյուտա. գնել է հաց և այդ հացապաշարից առանձին բաժին էլ հանձնել է իր կողմից նախիջևանի շրջանի ազրբեջանցի բնակիչներին: Ի՞նչ խոսք կարող է լինել այժմյան օրերի ազգային կոիվների մասին: Սովետական Հայաստանի բոլոր վայրերումն էլ հայ և ազրբեջանական ժողովուրդները միաձույլ եղբայրական շարքերով անցել են խաղաղ շինարարության:

— Նոր էջ է բացվում հայ ժողովրդի պատմության մեջ: Հայ առաջավոր գրողները համոզված են, որ տաճկական ինտելիգենցիայի առաջավոր ներկայացուցիչներն էլ ամեն կերպ կօժանդակեն ազգությունների բարեկամության մեծ գործին:

Հետագայում, մի երկու օր անցնելուց հետո, ես էլ ծանոթացա Ստամբուլի տաճկական թերթի հիշված ներկայացուցիչների հետ: Դրանք պատմեցին ինձ և Թումանյանի մասին: «Ենի շարզ» թերթի խմբագրությունն իր կողմից հատուկ առաջնորդող հոդված էր հրատարակել հատկապես Թումանյանի հարցազրույցի առթիվ:

— Մեզ պատմել են հայ ժողովրդի բանաստեղծի մասին. կարդացել ենք նաև նրա երկերի, հատկանշական հոդվածների թարգմանությունը. տաճիկ ժողովրդի համար այդպիսի հյուրերը սիրելի են...

Առանձին ուրախությամբ և գոհունակությամբ են այդ ժողովուրդներն արձագանքում այն հայտարարությանը, որ հայ ժողովուրդը մի անգամ ընդ-միշտ կապել է իր բախտը ուս ժողովրդի հետ և ղեկավարվելու է այսուհետև բացառապես Հոկտեմբերյան մեծ հեղափոխության միջազգայնական և ժողովրդական վսեմ սկզբունքներով:

Լավ հիշում եմ այսօր մի այլ դեպք ևս: Մերթ ընդ մերթ ես ճաշում էի թու-մանյանի հետ: Ստամբուլի ուսական ճաշարաններն, իհարկե, այդ ժամա-նակ լեցուն էին էմիրաններով: Հայեր, վրացիներ, ադրբեջանցիներ էլ կա-յին դրանց մեջ: Նշմարելի տեղ էին բռնում անգլիական, ֆրանսիական, իտա-լական սպաները: Հստորագային երգիչներ ու երգչուհիներ էլ կային, որոնք երբեմն, որքան էլ այդ զարմանալի է, երգում էին նաև ուս ժողովրդական երգեր: Ստամբուլյան շատ ինքնահատուկ մթնոլորտում նոր ձևով էին հնչում ըմբոստաշունչ տրամադրությամբ տողորված հին երգերը: Արդեն քայքայվում և տարրալուծվում էր ստամբուլյան էմիրացիայի որոշ մասը: Ժողովրդական հայտնի երգերն էլ կարծես թելադրում էին նոր հիմնականից մոտենալ հեռու Ռուսիայում շարունակվող պատմական մեծ պայքարին: Երգը դառնում էր ավելի նոր և կենդանի: Նույնիսկ հին երգերը քրքրում էին այրող վերքերը և մերկացնում ուսական հակահեղափոխության սնանկությունը և պարտու-թյունը: Զինվորների խմբերն էլ շատ յուրահատուկ ձևով էին արձագանքում քաղաքական նոր լուրերին: Մի անգամ մենք ստիպված եղանք կանգ առնել ավելի մեծ խմբի մոտ: Ռուս զինվորները լսում էին հարմոնիստ ընկերոջ եր-գը: Շատ սովորական «գորշ շինելավոր սալգաթ» էր դա: Բավական մոռոտոն եղանակով երգում էր հայտնի «Յաբլոչկա» երգը: Ուշագրավ էին երգի խոս-քերը, որոնք առանձին հեղանքով էին ակնարկում ջախջախված ռեակցիայի գործիչների մասին: Լսողները չէին էլ ծածկում իրենց ատելությունը վրան-գելյան սպաների հանդեպ:

Մի երեկո էլ մեզ առաջարկեցին ուղևորվել դեպի «Կովկասյան» ճաշա-րան: Թումանյանի պատվին այդտեղ շատ փոքրիկ մի հավաքույթ էին կազ-մակերպել: Հրավիրել էին նաև արևմտահայ հայտնի երգիծաբան Երվանդ Օտյանին: Ներկա էին և երկու ժողովուրդներ:

Օտյանը եկել էր պոլսահայ մի տիկնոջ հետ: Հանպատրաստից կազմա-կերպված երեկույթ էր: Ճաշարանում փոքրիկ մի հստորագա կար: Արևելյան երաժշտախումբը նվագում էր տաճկական, թաթարական, հայկական եղա-նակներ: Աչքի էր ընկնում հատկապես երգչուհի Սուրաբյանը:

Երվանդ Օտյանը նստած էր մտախոհ, շատ քիչ էր խոսում, մերթ ընդ մերթ ընդհատում էր բանաստեղծին, կարճ հարցեր տալիս կամ առաբկում: Սեղանի «նախագահը», իհարկե, թումանյանն էր:

Սուրաբյանը շնորհալի երգչուհի էր. աշխատում էր երգել բանաստեղծի

սրտին ու հոգուն մոտ երգեր: Թան ու քյամանչան, հայ ժողովրդական եր-գերը, ընկերական մտերիմ մթնոլորտը ոգևորել էին թումանյանին: Նա ան-շափ ուրախ էր և իր ուրախ կեցվածքով գրավում էր բոլորի ուշադրությունը: Երաժիշտները նվագեցին հայտնի սահարին, ուստը, շոբան-բայաթին: Թու-մանյանն էլ մի շարք գովեստի խոսքեր ասաց թառի ու քյամանչայի առթիվ վարպետ երաժիշտների հասցեին: Երաժիշտներն էլ այդ առթիվ երգեցին «Աղջի բախտավորը»: Թումանյանն առաջարկեց խմել բոլոր հստորագային արտիստների կենացը: Դրանք էլ զգացված ու ոգևորված ոտքի ելան և բա-նաստեղծի կենացը խմեցին:

Օտյանը կարծես դիտում էր միայն: Առաջին նվագ նա հիշեցնում էր վոլտերին: Այդ երեկո շատ զուսպ էր. հոգնարեկ ճամփորդի նման էր: Ինձ գոնե այդպես էր թվում: Ես կարծում էի, թե ինքն էլ կատակներ կանի և եր-գիծաբանի նման կպատասխանի թումանյանին: Օտյանը միայն տխուր ժրպ-տում էր, այնինչ մնացած հյուրերն աշխատում էին տխուր Օտյանին էլ ուրա-խացնել: Թումանյանը պատմում էր և ապա ինքն էր առաջինը ծիծաղում, մենք էլ ձայնակցում էինք: Օտյանը լուս էր մինչև վերջ, թեև սիրալիր հա-յացքով հետևում էր սեղանի զլխին բազմած բանաստեղծին, որ այդ պահին և՛ մարգարեի, և՛ կապիտանի նման էր:

— Էդպես է, էդպես է, հիմի է մեզ մոտ ստեղծվում իսկական կյանքը: Դարեր են անցել, դարեր շարունակ հայ ժողովուրդը երազել է երջանիկ ապա-գայի մասին, երազել է ու պայքարել: Ժողովրդական հեքիաթների մեջ էլ ար-տացուղվում է էդ անցյալը: Միայն «Հաղարան բլրույն» ի՞նչ արժե: Լավ երգը ժողովրդի հոգու, սրտի ամենաթանկագին զգացումների լավագույն ցուցա-նիշն է:

Մեր ժողովրդական երգերի մեջ կա շատ մեծ միտք. էդ երգերը խոսում են աշխատանքի, ազնվության, եղբայրության մասին: Քարքարոտ վայրե-րում, ժայռերի և ապառաժների երկրում ապրող մեր էդ ուսմիկ ժողովուրդը սքանչելի ավանդություններ և հեքիաթներ է կերտել: Է՛ն էլ է բնորոշ, որ ամենադաժան պայմաններում էլ ժողովուրդը չի կորցրել իր կամքը: Երազել է, վագել է «կապույտ թռչունի» ետևից, շատ ծանր օրեր է քաշել և էլի հո-րովել երգելով հողն է հերկել: Լավ է դա թե վատ, հիմի դրա մասին չի խոսքը: Բանն էն է, որ մեր ժողովուրդը կեղծավոր բարեկամներ շատ է ունեցել. դրանք հաղար ու մեկ խոստումներ են տվել մեզ և միշտ խաբել: Ամենաժանր վայրկյանին էլ մենակ են թողել մեզ: Եվ ո՞վ է էդ ծանր ժամին օգնության հասել հայ ժողովրդին, լավ է հայտնի...

Ապա նորից կրկնելով իր պատմությունը կարմիր բանակի մասին, թու-մանյանը խնդրում է Սուրաբյանին երգել Ստենկա Բազինի մասին հորինված ուս ժողովրդական հայտնի երգը:

— Հիմի ահա ուս ժողովուրդն է էլի մեծ եղբոր նման հսկում, օգնում և խրախուսում մեզ...

Օտյանը լսում էր ուշադրությամբ:

— Մեծ երկիր է, անշափ մեծ, սակայն միայնակ, երազկոտ և տակավին թույլ, — փորձում է առարկել նա:

— Ի՞նչ եք ասում: Հզոր երկիր է, և ժողովուրդն էլ երիտասարդ, թարմ և հզոր: Մեր պապերն ու հայրերը միշտ էդ մեծ ժողովրդի բարեկամներն են եղել: Դաժան օրերին հյուսիսից են եկել մեր իսկական բարեկամները: Էն էլ շպիտի մոռանանք, որ այժմ էդ ժողովրդի մեծ իղեալները ողջ երկրագնդի առաջավոր շարքերի լավագույն պատգամներն են:

Կոիվներ դեռ կլինեն, բայց այսուհետև էդ կոիվները պիտի ուղղվեն մարդատյացության, կոտորածների, պատերազմների բոլոր հեղինակների դեմ: Մեր հայրենիքում էլ կոիվը շարունակվում է, բայց էդ կոիվը հիմի մղվում է տղիտության դեմ: Մեծ կոիվ է մղվում բնության կույր ուժերի դեմ: Գիտության կուռ զենքերով զինված հայ ժողովուրդը օգտագործում է բնության բոլոր ուժերը. ջրանցքներ է կառուցում, դաշտերն է հերկում, լեռներն է փորում: Իսկ ամենից հիմնականն էն է, որ էդ մեծ աշխատանքն էլ միայնակ չի կատարում: Էդ է, որ նրան ուժ է տալիս: Դրա համար է հիմի մեր գեղեցիկ լեռներում բարձր հնչում աշխատանքի մեծ երգը...

Օտյանը կարծես համաձայնում էր և նույնիսկ ձայնակցում էր թարմ հովի նման հնչող առույգ խոսքին: Եկել էր սոված երկրից, «ղուլումի աշխարհից» այդ բանաստեղծը. եկել էր «վայրենի» համարվող բուլղարիկների հեռու երկրից. եկել էր հարուստ մի քաղաք, կանգնել էր գրեթե նվրոպայի շեմքին և ասում էր առանց տատանումների.

— Դո՛ւք եք մահացողները... Պատմությունը ձե՛զ է անխուսափելի մահվան դատապարտել, է՛րպես է լինելու: Կյանքն է՛նտեղ է: Լուսավոր է հայ ժողովրդի ուղին: Իսկական մարդիկ, ապագան կերտող մարտիկները մե՛զ մոտ են:

Հանդիսավոր և մարգարեական էր դառնում ժողովրդական բանաստեղծի ինքնաբույս խոսքերի ջերմ ինտոնացիան:

— Կգա՛ էն օրը, երբ մեծագույն գործարաններ կկառուցվեն լեռնային ու նվիրական մեր հայրենիքի սահմաններում, բազմաթիվ դպրոցներով, ընթերցարաններով, հիվանդանոցներով կլցվի մեր երկիրը, ժողովրդի ամբողջ եռանդը կնվիրվի խաղաղ շինարարության գործին...

— Հեքիա՞թ է դա, հեքիա՞թի պես զեղեցիկ երազ: Չէ՞ որ կան ազգային տարածայնություններ, կրոնական բախումներ, ցեղային ընդհարումներ: Իսկ ներհակ ու մրցակից ուժերը, վերջապես դրամատիրական մեծ պետությունների շահերը... Մի՞թե այդ ամենը չի խանգարի ձեզ նման երազողներին...

— Ահա այդ հեքիաթն էլ էսօր մեզ մոտ դառնում է իսկական իրականություն: Ազգային-ցեղական կոիվներին մեզ մոտ վերջ է տրվել: Ավելին: Անդրկովկասյան բոլոր ժողովուրդները միացած են և միասնական ամրակուռ շարքերով կառուցում են նոր հասարակության վեհապանծ շենքը: Իհարկե, եղբայրական էդ միությունը կորով և ուժ է ներշնչում ժողովրդին:

1921-ին էր: Այդ օրերին հերոսական աշխատանք էր կատարվում սոցիալիստական մեր մեծ հայրենիքի սահմաններում:

... Երբ դուրս ելանք ռեստորանից, ստիպված էինք քայլել աղտոտ ու քարքարոտ մայթերով: Աղոտ էր լապտերների լույսը: Օտյանը գրեթե ստամբուլցի էր, ճաշարանների ու սրճարանների մշտական հաճախորդ, ծանոթ միջավայրի մեջ: Բայց նա քայլում էր թումանյանի կողքից խարխափելով, վարանոտ և անվստահ քայլերով: Բանաստեղծը պատանու էր նման: Փողոցումն էլ հնչուն ձայնով և ծիծաղելով ինչ-որ «գարմանալի մարդու» մասին էր պատմում: Օտյանը նորից մտախոհ էր, աշխատում էր ետ շմնալ և արագացնում էր քայլերը...

Սա կանգ չեմ առնում Բերայի հայտնի Թոքատլյան հյուրանոցի զահլի-ճում կազմակերպված հասարակական բանկետի նկարագրության վրա: Լավ չեմ հիշում, այդ երեկո էր, թե դրանից առաջ, Թումանյանը պատմեց նաև 1905-ի ազգայնական բախումների մասին: Յարիզմի գործակալներին օժանդակել են նաև իշխող դասակարգերի «ականավոր» ջոջերը: Թումանյանը հայթուրքական կոտորածները կանխելու նպատակով մի խումբ ձիավոր համագյուղացիների հետ միասին Դսեղից ուղևորվում է թուրք «թարաքյամա» քոչվորների մոտ, դիմում է յալլաներում խմբված գյուղացիներին և առաջարկում հայ գյուղացիների հետ միասին ընդհանուր պայքար մղել ցարական բռնապետության դեմ: Այդ պատմական ուղևորությունը մեծ տպավորություն է թողնում հայերի և թուրքերի վրա: Բանաստեղծը պատմում է նաև առակներ և այլաբանական ձևով բնութագրում ցարիզմի կովկասյան ազենտների պրովոկացիոն քաղաքականությունը: Առանձին վայրերում հաճախ հավաքվում էին մի քանի հարյուր շինականներ:

Սովորաբար ինքը՝ Թումանյանը, շատ կարճ էր պատմում այդ ուղևորության մասին: Հետագայում ես նորից թերթեցի դաշնակցության հայտնի դատավարության սենատական գործերը: Մեծադիր և հաստատիոր մի հատորի մեջ հատկապես ակնարկված «էպիզոդի» նկարագրությանը, որքան հիշում եմ, նվիրված են մոտավորապես 35 էջ: Թուրք կալվածատերերը, բեգերն ու աղալարները, գյուղացիները և մի ուսուցիչ բավական մանրամասն պատմում են Թումանյանի ջանքերով կազմակերպված անշափ ինքնատիպ լեռնային «միտինգների» մասին: Բեգերը և աղալարները հիշեցնում են քննիչին հատկապես այն, որ Թումանյանը հեղափոխական ճառեր էր ասում, անհանդուրժելի առակներ էր պատմում, ծաղրում էր իշխողներին...

Այսպես թե այնպես, սենատական գործի մեջ տպագրված մանրամասն և շատ անգամ պատկերավոր «Տնտեսաբարոյթյունները» ցույց են տալիս, որ թումանյանի պատմական ուղեորությունը մեծ արձագանք ու ցնցում է առաջ բերել լեռնային վայրերում:

Այդ բանկետին ներկա էին մտավորապես 35-ի շարքի մտավորականներ, ի միջի այլոց, նաև մի քանի դերասանուհիներ, նկարիչներ, բժիշկներ: Առանձին ներբողական ճառեր ասացին Վ. Թեթեյանը, Թովյանը, Միսակյանը, որքան հիշում եմ, նաև նկարիչ Թերլեմեզյանը: Բուլոբն էլ ողջունելով թումանյանին, հարտարարում են, որ լիովին ձայնակցում են Երևանի հայ գրողների կոչին: Թումանյանն իր պատասխանի մեջ նորից նկարագրեց հայ ժողովրդի միջին անցյալը, բնութագրեց առաջ ժողովրդի կուլտուրայի հիմնական գծերը և ապա Կարմիր բանակի պատմական խոշոր դերը: Անշափ ոգևորված նա առաջարկեց խմել «նոր կյանքի» և ազատագրված, «նոր վերածնված հայրենիքի» կենսունակութանը օժանդակող գործիչների կենացը: Որքան էլ «դիվանագիտական» չէր այդ ճառը, բայց բոլոր հանդիսականների համար էլ պարզ էր, որ բանաստեղծը որոշակի ակնարկում է բոլշևիկյան կուսակցության մասին: Անհրաժեշտ է ընդգծել, որ Թեթեյանը հյուրանոցում ապրում էին բազմաթիվ օտարականներ, կային նույնիսկ զինվորականներ: Հյուրանոցի դռների մոտ, նախասենյակում, միշտ կարելի էր երկու կամ երեք սպա տեսնել: Իհարկե, հետախուզական օրգանների ներկայացուցիչները որսկան շների նման հետևում էին Անդրկովկասից եկած մարդկանց: Այդ քաջ հայտնի էր թումանյանին: Չնայած դրան, իրեն հատուկ տաղանդով և դիվանագիտական տակտով նա կարողանում էր ղեկավարել վրանագեղյան բանակի թափափուկներով լեցուն քաղաքում անգամ շատ որոշ տոն և ուղղություն տալ «գրական» բանկետին: Այդտեղ էլ նա առաջարկում է ստեղծել Ստամբուլի Հայ արվեստի տուն և կուլտուրական նոր շարժում կազմակերպել: Այդ առաջարկը միաձայն ընդունվեց, բայց հետագայում ստամբուլյան հայ ինտելիգենցիան գործնական ոչ մի աշխատանք չձեռնարկեց: Միակ նախաձեռնությունը մեծ նկարահանողն էր, որը կազմակերպել էր Թիֆլիսից եկած նկարիչ Խաչատրյանը:

— Զարմանալի բան է,— ասում էր թումանյանը,— Ստամբուլը մեծ քաղաք է, գեղարվեստական հուշարձաններով լեցուն մի քաղաք, մայրաքաղաք է վերջապես: Եվ էդ մայրաքաղաքումն էլ առաջին մեծ նկարահանողն էր կազմակերպում են վերածնված Հայաստանի նկարիչները, և էն էլ էս օրերին՝ երբ չեն անհետացել միջին հուշերը կոտորածների մասին...

Վերջին անգամ թումանյանին տեսա Բաթումում: Նոր էր վերադարձել Ստամբուլից և հիվանդ էր: Վերադառնում էր Թիֆլիս: Ավելի էր նիհարել, բայց դարձյալ առույգ էր և կենսուրախ: Լինում են այդպիսի հին և ամուր

կաղնիներ: Անցորդներն անդադար կացիններով հարվածներ են հասցնում, անխնա կտրատում են ճյուղերը, բայց հասնում է զարուհը, և նորից կանաչում է հին կաղնին...

— Եթե էս աշունն ու ձմեռն էլ անցնի, նորից ոտքի կենեմ: Միայն թե կարողանամ շուտ տուն հասնել: Կարոտել եմ. շարունակ մեր տանեցոց մասին եմ մտածում:

Ապա սկսեց պատմել Ստամբուլի հայ մտավորականների մասին: Ինձ էլ հարցրեց հատկապես Ստամբուլի Հայ արվեստի տան կազմակերպողների մասին: Այս անգամ թերահավատությամբ էր խոսում իր հին ծանոթների մասին էլ:

— Հաղիվ թե մի բան դուրս գա դրանից:

Ինձ վարմացրեց այդ: Դեռ մեկ ամիս առաջ բանաստեղծը այն կարծիքին էր, որ Ստամբուլի Հայ արվեստի տունը հայ մտավորականության համար Կարող է դառնալ հասարակական աշխատանքի կարևոր գործոն:

— Կուլտուրան էլ պիտի ամուր պատվանդան ունենա: Էդ պատվանդանը հայրենիքն է, հայրենի հողն ու իրականությունը: Միայն հարազատ ժողովրդի միջավայրն է հյուսիս արվեստին և գրականությանը: Այ, քեմալականներն էդ բանը հասկացել են և զրա համար էլ նոր մայրաքաղաք են կառուցել Անատոլիայում: Թուրքիայի սիրտն է դա: Անցյալում Պոլսումն էլ է եղել հայ կուլտուրա: Բայց էդ էլ եղել է էն օրերին, երբ ինքը՝ Պոլսի հայ ինտելիգենցիան, կապված էր գավառների հայ բնակչության հետ: Երբ թուլանում է էդ կապը, խամրում է և հայ գրականությունը...

— Իսկ Պեշկիթաշյանը. չէ՞ որ նրա պոեզիայի մեջ նշմարելի չէ գավառական շեշտը:

— Չկա էդպիսի շեշտ, թեև Պեշկիթաշյանի արվեստի խթանողն էլ եղել է գավառի բնակչությունը և թուրքահայ գավառների հետ կապված քաղաքային ղեմակրատիան. էդ բանը լավ էր հասկանում Պարոնյանը...

Հիվանդ էր թումանյանը, բայց չէր ուզում հեռանալ, անդադար խոսում էր. նորից պատմում էր հին օրերի և հին ծանոթների մասին: Բանաստեղծին առաջարկել էին ուղևորվել Փարիզ, ասել, որ եվրոպական քաղաքներում էլ կունենա ընթերցողներ և մեկենասներ:

— Օտարներ են դրանք ինձ համար, օտար է և ամբողջ շրջապատը: Բաթումից ահա տեսնում եմ մեր լեռները, հեռու Դսեղը, գյուղական անշուք խրճիթները:

... Ամենից լավն էն է, որ էս մեծ օրերին, երբ ապագայի նոր պատմությունն է կերտվում, հայ ժողովուրդն էլ հին, անիրավ աշխարհի դեմ կովող ազատագրական մեծ բանակի անբաժան և հարազատ հատվածներից մեկն է...

Շատ սերտ կապով Գրաստամատ Տեր-Սիմոնյանը կապված էր երիտասարդ այն կոմունիստների հետ, որոնք ավելի որոշակի կերպով բացահայտել էին իրենց անսահման եռանդն ու հեղափոխական կորովը կովկասյան վայրերում՝ սովետական իշխանության հաղթանակի համար մղվող հերոսական պայքարի հրաշունչ օրերին: Երիտասարդ այդ հեղափոխական մարտիկներից այսօր ես հիշում եմ միշտ առույգ Հայկ Հովսեփյանին, տոկուն Շավարշ Ամիրխանյանին, Արամ Շահգեղյանին, Քարամյանին, շատ և շատ ուրիշ խիզախների, որոնք ծանրագույն տարիներին կառչած լենինյան բարձր պատգամների և համակված անսահման եռանդով՝ գաղափարական-հեղափոխական գործունեություն են ծավալել աշխատավորների ամենալայն շրջանում:

Սովետական Ուկրաինայում Գրաստամատ Տեր-Սիմոնյանը շատ կարևոր աշխատանք է տարել այն օրերին, երբ մի շարք քաղաքներում կազմակերպվել էր նացիոնալիստական հայ զանազան հոսանքների դեմ ուղղված գաղափարական նոր պայքարը: Քաղաքացիական պատերազմի օրերն էին: Սահմանամերձ վայրերում վխտում էին իմպերիալիստական սև ուժերին սպասավորող ոհմակները: Ուկրաինայում ես տեսա այդ ժամանակ Գրաստամատի կողքին Քաբվի հերոսական կոմունայի հայտնի գործիչ, վաղեմի պետերբուրգյան ուսանող և հետագայում Քաբվի կոմունայի հաղորդակցության ուղիների ժողովրդական կոմիսար Սմբատ Մարգարյանին: Հիշում եմ, որ խարկովում լեհական կոմունիստական շարժման ականավոր գործիչներից մեկը՝ համբավավոր Ֆելիքս Կոնը, առանձին գործվանքով ու հարգանքով շեշտեց, որ Մոսկվայից եկած հայ ընկերները շատ կարևոր աշխատանք են տանում և աչքի են ընկնում իրենց գործունեությամբ: Խարկովում հայկական գործերի բաժանմունքին տրվել էր ինչ-որ կալվածատերերի երկհարկանի մեծ շենքը, որի կողքին տարածված էր մեծ պուրակ: Կիևը շատ գեղեցիկ և դյուրիշ քաղաք էր: Ուկրաինական բնաշխարհի մեղմ կոլորիտը զվարթ էր: Մենք էլ երիտասարդներ էինք: Սակայն ամեն կողմից լսվում էին նորանոր լուրեր, և՛ դիվերսիոն ուժերի, և՛ կուլակային ապստամբությունների, և՛ խուճապի մասին: Չնայած այդ ամենին, երբ ընկերները պատմում էին նորանոր դեպքերի մասին, Գրաստամատը իրեն հատուկ նրբին իրոնիայով զանազան քաղվածքներ էր բերում Գոգոլի երկերից և նկարագրում էր ուկրաինական վիպագիր Կվիտկա Օսնովյանենկոյի զվարթ կիևյան բուրսակներին: Իմ հիշողության մեջ մնացել է նրա շատ զուսպ կեցվածքը: Մենք ծիծաղում էինք, իսկ ինքը՝ Գրաստամատը, անզորր ոճով միայն պատմում էր: Ընկերական կապերն այդ ժամանակ շատ ամուր էին: Հին ընկերներին լավ հայտնի էր Գրաստամատի հորեղբայրը՝ Սիսակ Տեր-Սիմոնյանը: Ստ. Շահումյանին, Ս. Սպանդարյանին, առանձնա-

պես Գանուշ Շահգեղյանին լավ էր ծանոթ վաղեմի «Նարոդնայա վոլյա» կուսակցության երկրպագու այդ գործիչը: Ժամանակին, Աշոտ Խումարյանի, Սերգո Խանոյանի, Սարգիս Մարտիկյանի հետ միասին Սիսակ Տեր-Սիմոնյանը մեծ աշխատանք է տարել հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիայի կազմակերպման ուղղությամբ: Բնական է, միանգամայն, որ մենք էլ մեր երիտասարդ ընկերոջ նկարագրի մեջ ցանկանում էինք տեսնել իր անվանի ազգականի—հնօրյա հեղափոխականների հոգեկան նկարագրի որոշ հատկանիշները:

Գրաստամատը ոչ միայն հեղափոխական մարտիկ էր, այլ նաև մարքս-լենինյան ուսմունքի շատ ուշադիր ջահակիր և լենինյան պատգամների ակտիվ պրոպագանդիստ: Մեծագույն եռանդով և ուշադրությամբ նա ուսումնասիրում էր Մարքսի, Էնգելսի, Լենինի շատ աշխատությունները: Գիտեր, որ միմիայն զինված մարքսիզմ-լենինիզմի ղեկավար տեսական գրույթներով կարելի է շոշափելի հարվածներ հասցնել իդեալիստական բոլոր տեսություններին, բուրժուական լիբերալիզմի և նեո-նարոդնիկության զանազանագույն գաղափարախոսներին:

Նշելով այդ ամենը, ես չէի ցանկանա սքողել Գրաստամատ Տեր-Սիմոնյանի ակնարկների կամ հոդվածների մեջ նշմարվող առանձին թերությունները՝ անճիշտ ձևակերպումները կամ նույնիսկ սխալ արտահայտությունները: Ձի կարելի մոռանալ այն, որ վաղեմի հրաշունչ օրերի կոմունիստ հրապարակագիրը մերթ ընդ մերթ ստիպված էր լինում անմիջականորեն և շուտափույթ կարգով պրի առնել իր դիտողությունները, հասցնել կերպով կազմել իր հոդվածը, հենց տպարանում գրել և հենց այդպես գրված, տակավին անմշակ և սևագիր ձեռագիրը հանձնել տպարանի գրաշարին: Լինում էին դեպքեր, երբ լրագրի խմբագիրն էլ ժամանակ չէր ունենում շտկել նկատելի սխալներն ու վրիպումները: Ահա դրա համար էլ չի կարելի անուշադրության մատնել հրաշունչ օրերի պուբլիցիստի շատ ուրույն աշխատանքի շատ յուրահատուկ մրթնուրտի այդ պայմանների նշանակությունը:

Ես դիտավորությամբ կանգ եմ առնում Գրաստամատ Տեր-Սիմոնյանի նկարագրի ավելի կարևոր և հիմնական հատկության վրա:

Որքան հիշում եմ, մոտավորապես 1919—1920 թթ. կուսակցության կողմից պաշտպանվող գրականագիտական սկզբունքների դեմ շատ կտրուկ արշավ էին սկսել «էմպիրիոկրիտիցիզմի» մի երկու հետևողներ: Դրանք ակնորոշ կերպով պաշտպանում էին Լենինի կողմից դատափետված հակամարքսիստական իմաստասիրությունը՝ Շուլյատիկովի սոցիոլոգիատորական դրույթները: Դրանք նիհիլիստորեն ժխտում էին ամբողջ հին մշակույթի՝ «հին» արվեստի և «հին» գրականության նշանակությունը: Զանազան հոսանքների զանազանագույն ներկայացուցիչները («Դարբնոց», Բրիկի հիմնած լենին-

գրադյան «Կոմֆուտ» խմբակը, իմաժինիստ Կանդինսկու հետևողները արվեստի բնագավառում և այլն) ջանալով տեսականորեն հիմնավորել «ձախ» ու ձախլիկ գրույթները, կրկնում էին բողոքանքային հակամարքսիստական տեսությունների հիմնական գրույթները: Այդ ժամանակ էլ նշվել է հայ գրական-սյուրռեալիստական մտքի ներկայացուցիչների շրջանում մարքսիզմի ուսուցիչների տեսական հայացքների մանրակրկիտ ուսումնասիրության անհրաժեշտությունն ու կարևորությունը: Դրաստամատը հենց իր բանավորելույթների ժամանակ առաջարկ է մտցրել հայերեն թարգմանել և հրատարակել Լենինի, Պլեխանովի, Մերինգի, Վարովսկու, Լունաչարսկու ընտիր գրական-քննադատական երկերը: Այդ օրերին էլ նա հիշեցնում է, որ Բողոքանքի և Շուլյատիկովի տեսական գրույթների բացահայտ քննադատության հետ պիտի կապակցվի անցյալի կուլտուրայի ժառանգության դեմ նիհիլիստորեն ծառայող հայ սոցիոլոգիատորների հետևողական քննադատությունը:

Այդպես էր Դրաստամատ Տեր-Սիմոնյանը նաև նրանում, երբ աշխատում էր կուլտուրական շինարարության ղեկավար օղակներում: Իմ հիշողության մեջ ավելի որոշակի կերպով մնացել է հենց մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդիստի խոհուն դիմաստվերը: Նրա կացությունը բավական դժվարին էր: Իր վաղեմի մոտիկ ընկերներն անգամ անբավական էին նրանից: Հեղափոխական մարտիկներ լինելով հանդերձ, այդ ընկերները պաշտպանում էին գրույթներ, որոնց դեմ անհրաժեշտ էր առանց տատանումների ծառանալ: Բավական է միայն վերհիշել, որ հենց սովետական իշխանության հաստատման առաջին օրերին Հայաստանում հրատարակել են իրենց հայտնի «ձախ» ղեկավարացիան երեք անվանի բանաստեղծներ: Բավական անորոշ էին այդ օրերին նաև երեք «ձախ» պոետների դեմ ծառայող թրիլիսիի հայկական «Գարբոց»-ի և Մոսկվայի հայկական «Բուրա»-ի հետևողների, Բարվի միաման խմբակի և անգամ նրանում կազմակերպված հայ «դիրքականներ»-ի քննարկական դրույթները: Հայտնի է, որ նշված հոսանքների փոխհարաբերություններն էլ բավական բարդ էին: Պարբերաբար միմյանց դեմ մարտնչող զանազան հոսանքների հետևողները նիզ էին անում հիմնավորել իրենց վիճելի կամ անընդունելի հայտարարությունները՝ կառչած գիտական սոցիալիզմի մեծ ուսուցիչների երկերից բաղված և տենդենցիոզ կերպով մեկնաբանվող պատահական ու աղձատված ցիտատներին: Ահա այդպիսի բարդ միջավայրում անհրաժեշտ էր մշակել ճշգրիտ ուղեգիծ և միաժամանակ գրական գործիչների կոնսոլիդացիային օժանդակող կուսակցական մի ուղի: Չի կարելի շարձանագրել, որ նրա հայեցողության հիմնական դոմինանտը կապակցված էր Լենինյան պատգամների հետ, և հետապնդել է կուսակցության ղեկավար մարմինների կողմից առաջադրվող նպատակի ավելի ճշգրիտ կիրառումը:

Անտեղի չի լինի հիշատակել նշված երևույթները բացահայտող մի երկու կարևոր փաստեր: Քիչ առաջ ես նշեցի, որ Մոսկվայում շեշտվել էր առանձնապես գիտական սոցիալիզմի մեծ ուսուցիչների ընտիր գրական երկերի հայերեն թարգմանությունների մեծ նշանակությունը: Ահա հենց այս օրերին Դրաստամատի կողմից առաջադրվել էին երկու ծրագիրներ: Նա գտնում էր, որ ցանկալի կլինեին Լենինի, Պլեխանովի, Վարովսկու, Լունաչարսկու ընտիր երկերի թարգմանությունների հետ միաժամանակ պատրաստել համաշխարհային մշակույթի ականավոր ներկայացուցիչների մասին հայերեն կազմված հանրամատչելի մի սերիա:

Առաջին սերիայի մեջ պետք է մտնեին ամենից առաջ Լենինի հայտնի աշխատությունները (Տոլստոյի մասին, «Գերցենի հիշատակին» կուսակցական գրականության մասին, բանվորական մամուլի մասին աշխատությունները, հատընտիր ֆրագմենտներ Չերնիշևսկու մասին, Պլեխանովի գրական-գեղարվեստական աշխատությունները, Վարովսկու և Լունաչարսկու ընտիր գրական-քննադատական երկերը): Թարգմանություններին պետք է կցվեին հայերեն ինքնուրույն նախաբաններ և ապա հատուկ ծանոթագրություններ: Երկրորդ սերիայի մեջ պետք է մտնեին գերադանցորեն հանրամատչելի նկարագրող հայերեն գրքույկներ ոչ միայն նկարչության, այլ նաև երաժշտության և ընդհանրապես համաշխարհային մշակույթի ականավոր ներկայացուցիչների մասին: Այդ սերիայի մեջ առաջին հերթին նկատելի տեղ պիտի բռնեին Լեոնարդո դա Վինչին, Դյուրերը, Բեթհովենը, Վերելազզին, Բեպիսը, Բոգեն, Կոնստանտին Մյունչեն, Գոյան, Թեոֆիլ Ստեյնլենը, Գրոսը, նաև Մանեն, Իենուարը, Սեզանը, Կուրբեն, Վանո Խոջաբեկյանը... Մեզ հաջողվեց պատրաստել և հրատարակել Գոյայի, Գրոսի, Ստեյնլենի մասին գրված բրոշյուրները: Ինքը՝ Դրաստամատը, պետք է պատրաստեր գրքույկը Կուրբեյի մասին, սակայն անակնկալ մի շարք հանգամանքներ և առանձնապես նոր գրական-գեղարվեստական հրատարակչության լիվիդացիան հնարավորություն չտվին շարունակել նշված գրքույկների հրատարակությունը: Դիտեմ, որ հետզհետե սրվող բախումների և սուր պայքարի օրերին Դրաստամատը նորից ծրագրել էր ստեղծել զանազան տեսակետներ պաշտպանող ստեղծագործող գործիչների կոնսոլիդացիայի ուղեգիծը: Դրոհը, սակայն, ավելի ակտիվ կերպով մղվում էր «ձախ» ու ձախլիկ հոսանքների ջանքերով այնքան ուժեղ, որ խանգարում էր անգամ ընկերական կոնտակտի մշակմանը:

Բնորոշ է այն, որ Զարենցը, ջանալով հետևել Մայակովսկու ուղեգծին, ստեղծել է ժամանակին հայկական «Նոյեմբեր» խմբակը և ճիգ է արել պարզել Լեֆիստական գրողը: Քիչ հետո նա ուրույն դաշինք է կնքում հայկական «դիրքականների» հետ: Անցնում է որոշ շրջան, և նա աշխատում է ստեղծել նորից Լեֆիստական «Ստանդարտ» խմբակը (կա նաև համանուն հայերեն

ամսագրի առաջին համարի տպագիր մի օրինակ), որը շուտափույթ կարգով լիկվիդացիայի է ենթարկվում հենց իր՝ Չարենցի կարգադրությամբ (հիշված ամսագրի նշված համարը հայտարարվում է սոսկ «ձեռագրի իրավունքով» տպագրված մի ամսագիր): Վերջապես, հետագայում Չարենցը միշտ անկեղծ, ճշմարտախոս և տաղանդավոր գրողին հատուկ անմիջականությունը հայտարարում է իր բանաստեղծությունների և երկերի մեծածավալ ժողովածուում, որ ինքը կտրականապես հրաժարվում է «Լեֆիտական թմբուկից» և նպատակ է դնում ընդունել պուշկինյան կլասիկական բարձր պատգամների վրա խարսխված կլասիկական մշակույթի բարձր արժեքները: Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, որքան ինձ հայտնի է, Չարենցի մոտիկ և սիրելի ընկերներից մեկն էր: Սիրով և մեծ ուշադրությամբ վերաբերվելով մեծատաղանդ ընկերոջ վարանումներին և որոնումներին, Դրաստամատը միաժամանակ ջանացել է ցուցադրել և ընդգծել ավելի ճշգրիտ ուղեգիծ: Այսօր կարելի է ասել և շեշտել, որ նա չի ձայնակցել լենինյան ուղեգծից շեղվող իր անգամ մոտիկ ընկերների սխալ ձեռնարկներին և իր կողմից ակտիվ աշխատանք է կատարել լենինյան պատգամների ժողովրդականացման ուղղությամբ:

Պատահական չի կարելի համարել, որ Մյանսիկյանի կողմից միշտ բարձր է գնահատվել Դրաստամատի գաղափարական տոկուն աշխատանքը: Երբ Բաբլում ձախլիկների մի խմբակ ճիգ է անում մշակել հակալենինյան պայքարի նոր ուղեգիծ՝ Դրաստամատին չի խաբում այդ խմբակի կեղծ, մարքսիստական ֆրազեոլոգիան: Նա մնում է իր վաղեմի գաղափարական դիրքերում: Այսօր ես կարող եմ համենայն դեպս արձանագրել, որ նա, լիովին ձայնակցելով իրեն ուղղված առաջարկին, ինձ հետ միասին շատ կարճ ժամանակվա ընթացքում պատրաստել է Մարտունի-Մյանսիկյանի հիշատակին նվիրված հայերեն առաջին ժողովածուն: Երբ սիրելի ընկերոջ մահվան գույժի ազդեցության ներքո մենք որոշեցինք կազմել հիշված ժողովածուն, Խճարկե, գիտեինք, որ ամենից շատ ասեկոսների տեղիք կարող են տալ երիտասարդ Մարտունու կյանքի անցած օրերի էջերը: Այդ պատճառով առաջարկեցին ինձ հանձնարարել Մյանսիկյանի վաղ շրջանի կյանքի նկարագրությանը նվիրված առաջին մասի պատրաստման պարտականությունը: Դրաստամատը կազմեց Մյանսիկյանի կյանքի երկրորդ շրջանի՝ ավելի հասուն տարիների նկարագրությանը նվիրված էջերը: Դա շատ լավ կազմված մի ակնարկ է, որ այսօր էլ կարող է կարևոր վավերագիր համարվել: Ամբողջ ժողովածուի առաջին մասը կուսակցական կովկասյան ղեկավար օրգանի տնօրինությամբ և կարգադրությամբ ժամանակին թարգմանվել է ռուսերեն և ղեկավարվել է Մյանսիկյանի կյանքին ու գործունեությանը նվիրված շատ ուշագրավ բնութագրական մի ժողովածուում: Այդ ժողովածուն լույս է տեսել Քրիլիսիում:

Վաղուց հրատարակված այդ ժողովածուն, որ պատրաստվել է լենինի ակննավոր աշակերտի և հետևորդի մահվան լուրի անմիջական տպավորության ներքո, այսօր, Խճարկե, միայն գրական-պատմական վավերագիր է: Այդտեղ շատ քիչ է ասված և ամեն ինչ չի ասված: Սակայն իր ճիմնական էությունը դա կուսակցության բացահայտ թշնամիների ղեմ ուղղված մի վավերագիր էր և այդպես էլ մնում է իր նշանակությամբ:

Ես կուղենայի շատ ավելի մանրակրկիտ տողեր նվիրել իմ վաղեմի երիտասարդ ընկերոջ նվիրական հիշատակին: Գիտեմ, որ Դրաստամատի նկարագրի բնութագրման համար իմ նախաբանը շատ հակիրճ է: Կուղենայի, սակայն, հուսալ, որ հենց այդ հակիրճ նախաբանը կթելադրե Դրաստամատ Տեր-Սիմոնյանի կյանքի էջերն ուսումնասիրող ապագա բանասեր-պատմաբանին խորհել ավելի բազմերանդ և ընդարձակ մի աշխատություն պատրաստելու մասին...

Գ. Տեր-Սիմոնյան, «Հողմաներ», գրքի առաջաբանը, Հայպետհրատ, Երևան, 1961, էջ 3—7:

ԿԱՄՈ

Ես 1919-ին ապրում էի Մոսկվայում, նախկին «Մետրոպոլ» հյուրանոցում: Հայկական գործերի կոմիսարիատի հրատարակչական բաժնի ղեկավարն էի: Այդ հիմնարկը գտնվում էր վաղեմի կազարյան ճեմարանի շենքում: Այդտեղ էլ ես ունեի սենյակ: Այդ հին օրերին ընկերները հաճախ հավաքվում էին, և միասին ուսումնասիրում էինք օրվա գրական-քաղաքական նորությունները: Շատ անգամ մտնում էին ինձ մոտ Աթարբեկյան երկու եղբայրները՝ Գևորգը և Օնիկը: Աթարբեկյանը նոր էր վերադարձել Աստրախանից և հայտնել մեզ, որ Կամոն ցանկանում է ծանոթանալ Մոսկվայում աշխատող հայ ընկերների հետ: Ահա հենց այդ ժամանակ ես շատ մոտ ծանոթացա Կամոյի հետ և հնարավորություն ունեցա, ինչպես ասում են, «ընդհուպ» մոտենալ նրան:

Կամոյի մասին մենք մինչ այդ, նախահեղափոխական տարիներին, լեզենդար զրույցներ էինք լսել: Մեր երևակայության մեջ ստեղծվել էր քավական ուրույն պատկեր՝ զանազան զրույցների տպավորության ներքո: Մեղ թվում էր, որ այդ խիզախ հեղափոխականը պիտի լինի «խակական բուշկիկի» տիպար: Այդ հետևողական հեղափոխականը, մեր համոզմամբ, ամենից առաջ պիտի լիներ թեոքրիական զենքերով զինված, ամրակուռ և կրթված անձնավորություն: Այդ գործիչը պիտի լիներ մի քիչ Բազարովի, ավելի շատ Զերնիշևսկու «Ի՞նչ անել» վեպի հերոսներից մեկի՝ Ռախմետովի նման մի ղեմը: Վերջապես այդ երևակայական Կամոն պիտի հենվեր փաստերի,

թվերի, իրերի առարկայական անողորմ վերլուծության վրա: Այդպես էինք խորհում մենք՝ երիտասարդ մարքսիստներս և այդպես էլ ցանկանում էինք նկարագրել սիրելի և խորհրդավոր հեղափոխականի դիմաստվերը: Երբ ուսումնասիրում էինք մեր կուսակցության ծրագիրը, աշխատում էինք հասկանալ, յուրացնել ամենից առաջ ծրագրի առաջին՝ պատմական - թեո-րիական մասը և այդ մասին ուսումնասիրության ժամանակ կարդում էինք Մարքսի — էնգելսի «Կոմունիստական մանիֆեստը», Մարքսի «Կապիտալ»-ի առանձնապես առաջին հատորի վերջին հատվածները, էնգելսի «Անտի-Պյուրինզը», Լենինի երկերը: Մենք արհամարհաբար էինք վերաբերվում իդեալիստական պատմահայեցողության հետևողներին: Ավելի հոռետես «ոսմանտիկներին» իրանիայով էինք մոտենում: Բայց և այնպես, այդպես մտածելով՝ չէինք վստահում ժխտել այտրուիզմի, հեղափոխական անձնազոհության, հերոսական գործունեության նշանակությունը: Մեծագույն ակնածանքով էինք հիշատակում Զորգանո Բրունոյի, Յան Լուսի, Բայրոնի, Պուշկինի, Կերցենի, Գորբուլյուբովի, Չերնիշևսկու, Խալաուրիևի, Սոֆյա Պերովսկայայի անունները: Երբ խոսք էր բացվում հերոս հեղափոխականների մասին, մեր հակառակորդները առանձին շարախնդությամբ նետվում էին մեր դեմ:

«Ա՛, ուրեմն դրանք էլ, ձեր կարծիքով, միմիայն «ցամաք մատերիալիստներ» են եղել, չէ՞: Ի՞նչ է, մի՞թե դրանց էլ նյութական շահերը կամ ձեր օբյեկտիվ գիտական «վերլուծությունն» է թելադրել դառնալ ալտրուիստ, անձնազոհ, էնտուզիաստ...»:

Խոստովանում եմ, որ այդօրինակ հարցերը մերթ ընդ մերթ մեզ շմեցնում ու մի քիչ շփոթեցնում էին:

«Ինչո՞ւ ձեր գիտակից բանվորը, մոռանալով իր անմիջական շահերը, զոհում է իր կյանքը. ինչո՞ւ Միբիլ են գնում բոլշևիկները. ինչո՞ւ դեկաբրիստները ապստամբության դրոշ են պարզել. որո՞նք էին մոտիվները՝ անձնակա՞ն, թե՞ հասարակական-բարոյական, նյութակա՞ն, թե՞ գաղափարական...»:

Բոլոր այդ «ինչո՞ւ»-ներին պատասխանելու համար մենք կանգ էինք առնում նորից Չերնիշևսկու Ռախմեսովի վրա, խոսում էինք «բանական էգոիզմի» մասին, վերջապես երկարապատում մի «տեսություն» էինք կերտում «անձնական» ու «հասարակական» շահերի միաձուլման մասին: Ի վերջո, սակայն, հանգում էինք այն եզրակացության, որ, բացի վերացական ուժմանտիզմից, կա և պիտի լինի «հեղափոխական ուժմանտիկա»: Եթե մեզ խնդրեին ավելի կոնկրետ կերպով պարզել այդ նոր տիպի ուժմանտիկայի իմաստը, մենք կգժվարանայինք հիմնավորել մեր տեսակետը:

Միբիլյան աքսորական-հեղափոխականները, տուրգենևյան հերոսները, Ռախմեսովը և Ժելյաբովը, մեր կարծիքով, միանման հոգեկան գծեր ունեին

Վիկտոր Հյուգոյի «Մովի աշխատավորները», Ռոստանի «Սիրանո դե Բերթերակը», Բայրոնի «Շիլլոնի կալանավորը», Կարալենկոյի նկարած կալանավորի մշուշապատ կերպարը, Գորկու պատմվածքների ըմբոստները և, մանավանդ, Նիլն ու Պավել Վլասովը, Գորկու Մորկահասվն ու Բազեն, Գանկոյի ուղեգրի — այդ ամենը մենք հիշատակում էինք և, ի վերջո, նորից ու նորից հանգում այն եզրակացության, որ ալտրուիզմի նշանակությունը անհնարին է թերագնահատել... Ես խոսում եմ նախահեղափոխական տարիների մեր պատանեկան հույզերի և զգացմունքների մասին...

Ահա ամեն անգամ, երբ պատմում էին Կամոյի արկածների մասին, մեզ թվում էր, թե նա էլ նման պիտի լինի հնօրյա «խիզախներին» և «խենթներին», բայց մի հիմնական տարբերությամբ: Քանի որ Կամոն բոլշևիկ էր, նա, մեր կարծիքով, պիտի լիներ գիտության վրա հենվող և միշտ կոլեկտիվի հետ կապված մտածող-հեղափոխական:

Ես անհրաժեշտ եմ համարում այժմ շեշտել, որ առաջին օրերին, երբ ծանոթացանք Կամոյի հետ, իդեալականացնում էինք նրան և մեր երազած հեղափոխականների գծերն էինք նշմարում նրա կեցվածքի, խոսքերի, նկարագրի մեջ: Հետագայում արդեն, ընկերական զրույցներից հետո, մենք ստիպված եղանք արձանագրել, որ կուսակցության և կոլեկտիվի հետ կապված Կամոն, խիզախ հեղափոխական լինելով հանգերձ, մի որոշ շափով տարբերվում է մեր երևակայության մեջ պատկերված հեղափոխական-բոլշևիկի կերպարից հենց այն բանով, որ ավելի «ոսմանտիկ» է, քան պիտի լիներ բոլշևիկ-հեղափոխականը:

Շատ ջերմ ընդունեցինք Կամոյին, իհարկե: Շատ պարզ էր նա և անկեղծ, կուս կազմվածքով, շեկ մազերով, առույզ տղամարդ էր: Բազմաթիվ հարցերին պատասխան տալու փոխարեն հատու կերպով կտրում էր խոսքը և համեստորեն նետում միայն կցկտուր խոսքեր իր հին արկածների մասին: Իսկ մեզ այդ հին էջերն էին հետաքրքրում: Խնդրեցինք պատմել ու նկարագրել զեթ մի բանի դեպքեր: Նա հանաք անելով ասում էր, որ հոգնել է միևնույն խոսքերն ասելուց: Ասաց, որ Մաքսիմ Գորկին էլ խնդրել է գրել հուշեր, բայց ինքը ո՛չ ժամանակ և ո՛չ էլ տրամադրություն ունի վերհիշել հին օրերի դեպքերը: Մի բանի անգամ այդպես մտնում էր ինձ մոտ և ամեն անգամ էլ թեյը խմելուց հետո հրաժարվում էր կատարել մեր խնդիրը: Ի վերջո, խորհրդակցելով Գևորգ Աթարբեկյանի հետ, ես որոշեցի դիվանագիտորեն մոտենալ Կամոյին: Ասացի նրան, որ էլ չենք հոգնեցնի նրան, բայց խնդրում ենք ավելի հաճախ մտնել թեյ խմելու և զրույցելու համար: Հյուրանոցի իմ սենյակը բավական հարմար էր այն կողմից, որ ոչ ոք մեզ չէր կարող խանգարել զրույցների ժամանակ: Սովորաբար, երբ մեկը կամենում էր մտնել «պորտիեն» հեռախոսով զանգահարում էր, իսկ ես կարող էի պատասխանել, որ շատ

գրադված եմ և շեմ կարող ընդունել անսպասելի հյուրին: Ահա հենց այդ էլ նկատի առնելով՝ Կամոն ի վերջո համաձայնեց պատմել իր հուշերը: Առաջին երեկոներին ներկա էր նաև Գեորգ Աթարբեկյանը: Հետագայում նա որոշում է այլևս չխանդարել մեզ, և մենք մնում ենք մենակ: Կամոն պատմում էր, իսկ ես փոքրիկ թերթիկների վրա հակիրճ կերպով գրի էի առնում նրա պատմությունը և ապա՝ կարողում անհրաժեշտ ուղղումներ կատարելու համար: Այդպես ես կարողացա գրի առնել մոտավորապես 180 էջ Կամոյի հուշերը իր կյանքի և հեղափոխական գործունեության մասին: Ես աշխատում էի վերարտադրել նրա պատմությունը առանց «նախշելու» կամ գեղազարդելու: Ճշտիվ արձանագրում էի միմիայն նրա խոսքերը և մերթ ընդ մերթ հարցեր տալով պարզում անորոշ գնտալները կամ թուուցիկ խոսքերը:

Հետագայում այդ բոլոր թերթիկները կորան և անհետացան՝ ինձնից անկախ պատճառներով:

... Ինձ կարճ ժամանակով ուղարկել էին Լենինգրադ: Լազարյան ճեմարան էին եկել այստես կոչված «Արևելյան ասոցիացիայի» մի երկու անդամ՝ գրադարանից արևելագիտական գրքեր վերցնելու նպատակով: Իմ բացակայության ժամանակ այդ անակնկալ «հյուրերը» մտել էին նաև իմ սենյակը և, հակառակ քարտուղարի բողոքին, զավթել թե՛ իմ մի քանի գրքերը և թե՛ իմ որոշ ձեռագրերը: Գրքերի մեծ մասը ես հետագայում կարողացա ետ ստանալ, բայց մի քանի գրքեր (Կրիմսկու հատորները, Հոֆմանի հնատիպ ուսեսերեն եզակի մի հրատարակություն և այլն) և որոշ ձեռագրեր ընկել էին ինչ-որ «ամատյորի» ձեռքը և անհետացել: Այդպես կորան նաև իմ ձեռքով գրված Կամոյի բավական մանրամասն «հուշերը»: Հետագայում իմ մի գրքի մեջ ես գտա այդ հուշերի միայն մի թերթիկը, որը պահում էի համակված այն համոզումով, որ կկարողանամ որևէ կերպ գտնել և մնացած թերթիկները: Բայց և այնպես ջլարողացա գտնել «անհետացած» ձեռագիր թերթիկը:

Հենվելով իմ հուշերի վրա, ես այսօր կարող եմ վերարտադրել, միմիայն շատ ընդհանուր կերպով, որոշ էջեր, հատկապես այն էջերը, որոնք շատ տիպիկ լինելով, տարօրինակ կերպով գամվել են իմ հիշողության մեջ:

Լավ հիշում եմ, որ առաջին հանդիպման ժամանակ ես խնդրեցի Կամոյին կանգ առնել իր պատանեկության վրա և պատմել, թե ի՞նչ ապրումներ է ունեցել նա վաղ պատանեկության տարիներին:

«Իմ իսկական ազգանունը, պատմեց Կամոն, Տեր-Պետրոսյանց է: Իմ ծնողները հայեր են, վրաստանցիներ: Ծփվել եմ մեծ մասամբ վրացիների կամ վրացախոս հայերի հետ: Երևակայիր, որ հայերեն լավ չգիտենալով հանդերձ, ես էլ ժամանակին տարված եմ եղել «վաթան» գնացող հայ հայրուկներով: Այդ օրերին դրանք ինձ համար եղել են հեղափոխական

հերոսների տիպարներ: Լուրեր էին գալիս տաճկական սուլթանի սև համահարզների բռնությունների մասին: Լսում էի լուրեր բուլղարական և մակեդոնական խիզախ հայրուկների մասին: Ինձ էլ թվում էր, որ տաճկական սուլթանի դեմ կովելու նպատակով սահմանն անցնող հայ հայրուկները բուլղարական և մակեդոնական հայրուկների նման գործիչներ են: Դուր էր գալիս դրանց խիզախությունը, անձնազոհությունը, հերոսությունը: Եղել է նույնիսկ մոմենտ, երբ ես էլ մտածել եմ անցնել սահմանը և միանալ այդ խորհրդավոր հայրուկներին՝ թուրքահայերին օգնելու համար: Ինչո՞ւ ծածկել: Ինձ շրջապատող ծանոթ հայերից շատերն էին հին օրերին այդպես մտածում: Բաթումում մանավանդ համառ կերպով շափազանցրած լուրեր էին պատմում զանազան արկածների մասին: Այդ ամենը մի որոշ շրջանում ինձ վրա էլ տպավորություն է թողել...

Շատ շուտ անցնում է այդ ամենը...»:

Մեծ տպավորություն են թողնում Կամոյի վրա Թիֆլիսի ու Բաթումի բանվորների առաջին գործադուլները: Այստեղ Կամոն շփվում է առաջավոր ուսուցիչների և վրացի բանվորների հետ: Նա իմանում է, որ կան ընդհատակյա հեղափոխական խմբակներ, և աշխատում է կապվել հեղափոխական բանվորների հետ: Դա հաջողվում է նրան: Նա մասնակցում է նաև մայիսյան շուրջըներին: Հսկայական աշխատանք է կատարում, որպես անլեզալ գրականության տաղանդավոր էքսպոզիտոր: Կոնսպիրատոր Կամոն որևէ ուրիշ մրցակից չունի: Նրան ճանաչում էին կովկասյան բոլշևիկների բոլոր ակա՛նավոր ղեկավարներն ու ներկայացուցիչները:

Իր էքսպոզիտորական անլեզալ աշխատանքների մասին Կամոն պատմեց մի քանի բնորոշ էպիզոդներ: Նա ասաց, որ ժամանակին Բուլղարիայից փոխադրել է անլեզալ գրականության հետ միասին նաև հրացաններ: «Այդ ժամանակ ես, — ասաց Կամոն, — մոլգավական իշխանի զգեստներ էի հագել և այդպես էլ կանգնած նավի վրա, հետևում էի իմ «ապրանքների» փոխադրությանը»: Ցարական կառավարության ժանդարմները ձերբակալելով Կամոյին, երկու անգամ բանտարկում են Բաթումի բանտում՝ 1903-ին և 1904-ին: Կամոն փախչում է բանտից և նորից անցնում հեղափոխական աշխատանքի:

Առաջին ուսական հեղափոխության օրերին նա ակտիվ կերպով մասնակցում է հեղափոխական ապստամբություններին: Հինգ անգամ նրան վիրավորում են ցարական զինվորները: Թիֆլիսի Միքայելյան հիվանդանոցում 1910-ին քննելով Կամոյին, գտել էին, որ նա շատ լուրջ վերքեր է ստացել: Այդ վերքերի հետքերը նշմարվում էին նույնիսկ 1910-ին կատարված բժշկական քննության ժամանակ: Կամոն պատմեց նաև անլեզալ գրա-

կանությունը արտասահմանից փոխադրելու գործողությունների մասին: «Սո-
վորաբար մենք և, իհարկե, նաև ես, լավ հայտնի որևէ արհեստավորի
պատվիրում էինք պատրաստել հատուկ ճամպրուկներ: Այդ արհեստավորը
ճամպրուկների հատակին և պատերին կցում էր երկրորդ հատակ և պատեր:
Մենք ճեղքերի մեջ տեղավորում էինք անլեզալ զրականության անհրաժեշտ
վավերագրերը: Դրանք բարակ, շատ բարակ թղթի վրա տպագրված բրոշ-
յուրներ և թուղիկներ էին: Միևնույն ծանոթ արհեստավորը շատ խնամ-
քով և զգուշությամբ ծածկում էր այդ ամենը և ապա հանձնում մեզ ճամպրուկ-
ները: Ահա այդպիսի մի ճամպրուկ ես էլ եմ փոխադրել: Հիշում եմ, որ
Պետերբուրգ էի եկել իշխան Գաղեշկելիանու անձնագրով: Իմ ուսերին կար
«նիկոլաևյան» պելերինա-շինել: Երբ ֆինլանդական զնացքը կանգ առավ, և
ես էլ պատրաստվում էի արդեն իջնել վագոնից, անակնկալ կերպով վագոնի
դռան մոտ, կայարանի սլաֆոթումի վրա, տեսա երկու ժանդարմների: Ահա
հենց դրանցից մեկին վտրուկ տոնով խնդրեցի բարձրացնել ճամպրուկը: Գուցե
հենց այդ էլ թելադրեց ժանդարմին՝ հետևելու իմ առաջարկին: Մտնելով
դահլիճ, ժանդարմը այլևս չառարկեց, երբ ես կարգադրեցի հանձնել
ճամպրուկը կայարանի բեռնակրին: Ինքը՝ այդ ժանդարմը, ինձ հետ միասին
գուրս ելավ և կայարանի շենքին կանգնած՝ հետևում էր, թե ինչպես եմ ես
տեղավորում իմ ճամպրուկը և մյուս իրերը կառքում: Դա շատ արտասովոր մի
դեպք էր: Մեծ էր ուսկը, բայց հենց այդ ուսկն էլ ինձ փրկեց...»:

Կուսակցության շարքերն էր մտել Կամոն 1901-ին Թիֆլիսում: Իր կու-
սակցական աշխատանքի համար նա ձերբակալվել է վեց անգամ և ապա՝
բանտից փախել երեք անգամ: Հեղափոխական գործունեության համար Կա-
մոն մահվան է դատապարտվել չորս անգամ: Երկու տարի Կամոն բան-
տարկված է եղել Գերմանիայի մայրաքաղաքի բանտում և բանտի հետ կապ-
ված հոգեբուժական հիվանդանոցում: Նա բանտարկվել է նաև Բուլղարիայում
(Սոֆիա) և Թուրքիայում (Ստամբուլ) դինամիտի փոխադրության համար:

Կամոն պատմեց իր նախաձեռնությունները կազմակերպված հայտնի «էքս-
պրոպրիացիայի» հետ կապված բնորոշ հանգամանքներն ու փաստերը: Նա
շեշտեց, որ կուսակցական կազմակերպությունը նրան չէր թույլատրել կազ-
մակերպել այդ էքսպրոպրիացիան: Բանն այն է, որ այդ ժամանակ տար-
բեր տիպի էքսպրոպրիատորական խմբակներ շատ լուրջ վնաս էին հասցնում
մասսայական բանվորական շարժմանը և զեմորալիզացիա էին մտցնում
բանվորական-կուսակցական շարքերի մեջ:

Սկսվել էր դաժան ուսուցիչական: Ռուսիան ծածկված էր կախաղաններով:
Վլադիմիրյան խճուղով անընդհատ տանում էին դեպի Սիբիրի արքորավայ-
րերը շղթայակապ հեղափոխականների: Քաղքենիները սարսափահար նետ-
վում էին կրոնի, էրոտիկայի, ղեկադանսի գիրկը: Առանձին մունետիկներ

հուսահատ մտավորականներին խրախույս ներշնչելու համար երգում էին
«խիզախ անհատներ»-ի անիշխանական իմաստասիրությունը: Կրոն և իդեա-
լիզմ, միստիկա և էրոտիկա, պեսիմիզմ և անարիստիզմ — այդ ամենը միա-
ձուլվել էր և ստեղծվել հեղափոխությունից սարսափահար և ինդիվիդուալիս-
տական հովերով տոգորված բունտարների-տեոքրիստների մի խայտաբղետ
մտայնություն:

Միանգամայն հասկանալի է, որ այդ ամենը պիտի թելադրեր մեր կու-
սակցությանը ամենակտրուկ կերպով դատափետել շեշտված տրամադրու-
թյուններին արձագանքող և անգամ աննշան կերպով համակերպվող առան-
ձին կուսակցական գործիչների քայլերը: Կուսակցությունն այլ կերպ չէր
կարող վարվել: Մեր կուսակցությունը և կուսակցության կովկասյան կազմա-
կերպությունը թե՛ կրոնը սոցիալիզմի հետ համաձուլող «տեսարանների» և
թե՛ տարբեր տիպի էքսպրոպրիատորական խմբակների նկատմամբ իր դիրքը
դրսևորել է այնքան որոշակի կերպով, որ ոչ մի բուլշևիկ չէր կարող երկու կար-
ծիք ունենալ կուսակցության ղեկավարների պարզորոշ ուղեգծի մասին: Դա լավ
էր հայտնի նաև Կամոյին: Երբ ես զրույցի ժամանակ նրան հարց տվեցի
Թիֆլիսի կազմակերպության և ղեկավար ընկերների դիրքորոշման մասին, նա
հաստատեց, որ իր հայտնի էքսպրոպրիացիան ձեռնարկել է իր սեփական
նախաձեռնությամբ: Այնուհետև ես հասկացա, որ ժամանակին նա ղեկավար
ընկերների կողմից սաստվել է և նույնիսկ բավական խիստ քննադատվել:
Առանց այդ էլ ինձ հայտնի էին անցյալի դեպքերը: Բայց և այնպես ինձ
համար հետաքրքրական էր պարզել հենց իր՝ Կամոյի դիրքորոշումը և
ուրույն «իմաստասիրությունը», այն մտախփախան, որը նա կարող էր բերել
իր այնքան անակնկալ վարքագծի հիմնավորման համար: Բավական երկար ու
մանրամասն զրույցելուց հետո, ես կարողացա հանգել ուշադրավ մի եզրա-
կացություն:

Այժմ վերհիշելով այդ զրույցի առանձին պարագաները, ես կարող եմ
շատ ընդհանուր կերպով բնութագրել Կամոյի ուրույն «իմաստասիրությունը»:
Ես ծանրանում եմ այդ իմաստասիրության վրա, որովհետև զրույցի ընթաց-
քում տեսա, որ նա կտրականապես չի հրաժարվել հնօրյա իր հայացքների որոշ
պաշտպանությունից:

...«Ռեակցիա էր: Գաժան ուսուցիչական ուժեղանում էր
ամենուրեք: Մանր էր կուսակցության կացությունը: Դրամ չկար: Սկսվել էին
անկումային հոսանքներ: Սկսվել էր որոշ զեմորալիզացիա նույնիսկ հե-
ղափոխական շարքերում: Անհրաժեշտ էր ցնցել նիւհողներին: Անհրաժեշտ էր
դրսևորել ցարիզմի թուլությունը: Անհրաժեշտ էր, վերջապես, հերոսական մի
հարված ուղղել այդ ցարիզմին և ապացուցել նիւհողներին, որ նորից պիտի
ամրանա հեղափոխությունը, և նորից պիտի կոփվեն հեղափոխական շարքերը:

Միաժամանակ այդ հարվածը պիտի հասցնեն կուսակցությանը դրամական միջոցներ՝ հեղափոխական գրականության հրատարակության համար...»:

Նրա հայացքի մեջ և խոսքերի ամբողջ ինտոնացիայի մեջ կար շատ բնորոշ մի հատկանիշ, որ բնութագրում էր կուսակցությանը անսահման նվիրված մարդու հայեցողությունը: Նա գիտեր միայն, որ պիտի զոհի իր կյանքը կուսակցության հզորության և հաղթանակին նպաստելու համար: Լավ գիտեր այն էլ, որ ինքը մի փոքրիկ պատուտակ է միայն: Գիտեր և այն, որ կդատապարտվի իր սիրելի ղեկավար-ընկերների կողմից: Բայց գիտենալով այդ ամենը, նա խորհում էր, որ ինքը, այնուամենայնիվ, կկարողանա մեծ օգնություն հասցնել հեղափոխական շարքերի ղեկավար շտաբին և այս կամ այն կերպ ներման կարծանանա: Միամիտ մանկական տրամաբանություն կար այդ ամբողջ իմաստասիրության մեջ: Արտասովոր նախություն հետ միասին կար նաև այնպիսի մի գիծ, որ շէր կարող շղատապարտվել, բայց և այնպես այդ նախություն կնիքը կրող հեղափոխականի դիմաստվերը երբեք չէր կարելի համեմատել ռեակցիայի էպոխայի տրագիցիոն «էքսպրոպրիատորներին» դիմաստվերների հետ: Չէր կարելի համեմատել հենց այն բանի համար, որ ինդիվիդուալիզմի, թատերական «հերոսության» ֆեյերվեկային հեղափոխականության ոչ մի գիծ չկար այդ դիմաստվերի մեջ:

«Ես,— ասում էր Կամոն,— մտածում էի. միայն մի անգամ, միայն մեկ մեծ էֆս կանենք, և դա մեծ վնաս չի հասցնի մեր շարքերին, բայց և այնպես կօգնի մի որոշ շահով, թեկուզ և շնչին շահով: Թող ինձ քննադատեն. թող ինձ դատապարտեն. կարևորն այն է, որ կուսակցությունն ուժեղանա... Դու կարծում ես՝ ես ճիշտ եմ համարում իմ այդ քայլը. ո՛չ, իհարկե. դու խնդրեցիր, ես էլ պատմեցի. բայց այժմ, երբ հիշում եմ այդ քայլը, էլի գտնում եմ, որ ժամանակին, ռեակցիայի օրերին, օրը ցերեկով կատարված ղեպքը եղել է քաղաքական-հեղափոխական ցույցի բնույթ կրող մի երևույթ. քննադատի՛ր բայց մի՛ մոռանա այդ էլ հիշատակելու»:



Կամոն մեծ հաջողությամբ է կատարում այդ օպերացիան: Ամեն ինչ նա նախապես ծրագրում է: Իրամբ բանկից փոխադրող կառքը պիտի սլանար՝ շրջապատված դինված կազակներով: Փողոցում կարող էին զոհվել և անմեղ մարդիկ: Անհրաժեշտ էր, հետևաբար, ումբեր նետել հրապարակում, որպեսզի զոհերի թիվը աննշան լինի: Կամոն կարգադրում է մի հատուկ ընկերոջ պատույտ կատարել հրապարակում և որևէ կերպ նախազգուշացնել ժողովրդին: Դա էլ մեծ ռիսկ էր, իհարկե: Հրապարակն էլ հարմար չէր: Բայց այդ ամենը կարող էր ապահովել անմեղ և պատահական անցորդների կյանքը: Ամբողջ

օպերացիան ավարտելուց հետո նա անմիջապես մեկնում է արտասահման և ամբողջ գումարը հանձնում կուսակցության ղեկավար շտաբին և հետո նորից անցնում հեղափոխական ընդհատակյա աշխատանքի՝ շաբաթվա մարտիկի նման: Ոչ մի վտպեկ նա չի վերցնում: Շարունակում է թափառական հեղափոխականի իր կյանքը՝ միշտ համեստ: Միաժամանակ նա դիտավորություն էր ցնցող տպավորություն և ազդեցություն գործող այդ ղեպքերի մասին: Պատմում էին ընկերները, պատմում էին հեղափոխականները, պատմում էին քաղաքացիները: Ինքը Կամոն ավելի հաճախ նկարագրում էր իր հեղափոխական կյանքի ուրիշ էպիզոդներ և իր սիրելի կուսակցական ընկերների սխրագործությունները: Ահա դա էլ շատ մեծ տպավորություն էր թողնում: Արտասովոր համեստությունը, մանկական միամտության հասնող անկեղծությունը, ասկետական կյանքը այդ թիչ կարգացած և թեորիական աննշան պաշար ունեցող գործչին դարձնում էր հեղափոխական ուժանտիկայի կուրիտով շրջագծված մի խորհրդավոր դեմք: Գորկին երևի հենց ա՛յդ էր տեսնում, երբ թախանձանքով խնդրում էր Կամոյին՝ գրի առնել իր հեղափոխական հուշերը: Նույնը տեսնում էինք նաև մենք, երբ շտամ էինք նորանոր պատմություններ իր կամքը ամբողջովին կուսակցությանը ենթարկող աննկուն հեղափոխականի մասին...

Ես այժմ կրնդհաստեմ իմ պատմությունը: Կամոյի մասին իմ գրած հուշերը, ինչպես ասացի, կորել են: Հիշողության վրա հենվելով ես կարող էի, իհարկե, նկարագրել և՛ վերոհիշյալ ղեպքի առանձին դետալները, և՛ նրա կյանքի հետագա էջերը: Դա կլիներ ճիշտ, բայց այդ կցկտուր պատմությունը, իմ կարծիքով, չի կարող այնքան լավ բնութագրել Կամոյին, ինչպես ցամաք, բայց միանգամայն նշաված այն փաստերը, որոնք հաղորդում են արխիվային տվյալները: Ահա հենց այդ էլ նկատի առնելով, ես կժանրանամ այն փաստերի վրա, որոնք շատ ցամաք լինելով հանդերձ մեծ տպավորություն են թողնում նույնիսկ շատ սկեպտիկ ընթերցողների վրա: Ամենից գլխավորն այն է, որ այդ փաստերը շատ ավելի լավ են դժագրում Կամոյի կենդանի պորտրեն:

Ահա՛ թե ինչ են հաղորդում արխիվներում պահված որոշ վավերագրեր: Ցարական լրտեսները տակավին 1903-ին սկսել էին հետևել Կամոյի բոլոր քայլերին: Բաթումի բանտից նա փախչում է 1904-ին: Ոստիկանության ղեկավարամենտը 1905-ի փետրվարի 1-ին նշում է նրա անունը հատուկ ցուցակի մեջ (N 1000) և կարգադրում իր բոլոր բաժանմունքներին՝ գտնել փախստական-հեղափոխականին: Կամոն ուղևորվում է արտասահման: Շուտով նա նորից գալիս է Թիֆլիս և սկսում կազմակերպել անլեզալ տպարաններ. ումբերի լաբորատորիաներ, անլեզալ գրականության էքսպլոզիվ:

Երբ նա լուր է ստանում, որ 1907-ի հունիսի 23-ին մեծ գումար է փո-

խաղրվելու պետական բանկը, հավաքում է իր ղինակիցներին և մշակում կանոնավոր մի ծրագիր: Գումարը բավական մեծ էր՝ 250000 ուրբ.: Այդ ամբողջ գումարը փոխադրում էին երկու կառքով՝ պետական բանկի հաշվապահ Կուրդյումովը և զրա օգնական Գոլովնյան: Ուղեկցում էին հինգ ձիավոր կազակներ և երկու զինված պահակներ: Երբ առավոտյան ժամը 10-ին կառքերը երևում են հրապարակում, նետվում են ումբեր, և թանձր ծխով ծածկվում է ողջ հրապարակը: Ստեղծվում է անասելի իրարանցում: Քննուրջան ընթացքում պարզվում է, որ մի սպա մինչ այդ ղեկը պտտելով հրապարակում, քախանձելիս է եղել ժողովրդին՝ բողնել հրապարակը: Երբ ստեղծվում է իրարանցում, հեղափոխականները նետվում են առաջ ու զավթում դրամը: Կառավարությունը հայտնի էին մեծ դրամանիշների սերիաները և համարները: Գեպրից հետո բանկն այդ համարները հայտնում է ուսական քաղաքների դրամային հաստատություններին և արտասահմանյան բանկերին: Փարիզում դրամի փոխանակության ժամանակ ձերբակալվում են երկու հայ ուսանողներ՝ Տիգրան Բազդասարյանցը և Միհրան Խոջամիրյանցը*: Նույնպիսի օպերացիայի ժամանակ ձերբակալվում են նաև ուրիշ մարդիկ: Արտասահմանյան պետությունները հրաժարվում են հանձնել ձերբակալվածներին ցարական կառավարությանը: Սակայն, բացի զրանցից, 1907-ի նոյեմբերի 9-ին Բեռլինում ձերբակալվում է նաև ինքը՝ Կամոն: Խուզարկության ժամանակ Բեռլինի ոստիկանները, բացի անլեզու գրականությունից, նրա սենյակում գտնում են մեծ քանակությամբ պայթուցիկ նյութեր: Ցարական կառավարության ոստիկանական ղեկարտամենտը հայտնում է Բեռլինի ոստիկանությանը, որ ձերբակալված «Միրսկին» միևնույն Կամոն է (Տեր-Պետրոսյանցը), որը հայտնի է որպես զենքերալ Ալիխանովի տեղորին մասնակցող և ումբերի լաբորատորիաներ կազմակերպող «վտանգավոր հեղափոխական»: Ձերբակալված Կամոյին ուղարկում են Մոսքիտի բանտը, բայց մինչ այդ արդեն նշմարվում է, որ ձերբակալված հեղափոխականը հոգեկան հիվանդ է: Այդ պատճառով հատուկ բժշկական քննության համար, դատախազի առաջարկով, Կամոյին փոխադրում են հոգեբուժարան: Բժիշկ-էքսպերտները երկարատև և մանրազնին քննությունից հետո հայտարարում են, որ մեղադրյալը հոգեկան հիվանդ է: Ի վերջո, զերմանական կառավարությունը որոշում է հանում կալանավորին հանձնել ցարական կառավարությանը:

Տեր-Պետրոսյանցը 1909-ի սեպտեմբերի 21-ին ուղարկվում է Ռուսիա և ապա՝ հոկտեմբերի 12-ին հասնում Թիֆլիս, ուր անմիջապես բանտարկվում է: Հետաքննության հետևանքով պարզվում է, որ Կամոն եղել է ժամանակին Մամբուլում, որ նրա ձերբակալությունից հետո Կոպենհագենի միջազգային

* երկուսին էլ ես ճանաչում էի:

կոնգրեսում զերմանական դելեգատ Կոնը պատմել է ուսական դելեգատներին Կամոյի ձերբակալության մասին:

Ընդհատելով այդ պատմությունը, ես պիտի ասեմ, որ ինքը՝ Կամոն զրույցի ժամանակ ինձ ասում էր, թե երբ զերմանական Ռայխստագում սոցիալ-դեմոկրատները տեղեկանում են զերմանական կառավարության հատուկ որոշման մասին, նրանք բողոքագիր են ներկայացնում, նշելով այն, որ ձերբակալվածը նախ՝ քաղաքական հանցավոր է և ապա՝ հոգեկան հիվանդ: Այդ առթիվ այցի էին զննցել բանտում Կամոյին տեսնելու համար երկու փաստաբաններ՝ վերոհիշյալ Կոնը և Կարլ Լիբկեխտը: Քանի որ վերջինի մասին արխիվներում չկային որոշակի տվյալներ, ես հարցրի Կամոյին, թե որքան էիշտ են լուրերը երկու այցելուների մասին: Կամոն հայտնեց ինձ հետևյալը.

«Կոնը մի քանի անգամ է եկել ինձ մոտ: Երբ մի անգամ նա եկավ հատկապես Կարլ Լիբկեխտի հետ միասին, ես աշխատեցի գաղտնի կերպով նրանց հասկացնել, որ իրականում ես խելագար չեմ. նկատեցի, որ նրանք ուրախացան և խրախուսելով ինձ, հեռացան...»:

Անցնում եմ նորից արխիվային տվյալներին:

Թիֆլիսում Կամոյին բանտարկում են Մետեխի ամբոցում: Սակայն 1910-ի մայիսի 7-ին ցարական կառավարության ներքին գործերի մինիստր Ստոլիպինի ստորագրությամբ կովկասյան փոխարքա Վորոնցով-Գաշկովը ստանում է բավական ուշադրավ մի գրություն: Ստոլիպինը հաղորդում էր, որ զերմանական դեմոկրատական մամուլի էջերում դատափետվում է զերմանական ոստիկանությունը և միաժամանակ նշվում, որ Տեր-Պետրոսյանցը, որպես հոգեկան հիվանդ, չպիտի հանձնվեր ցարական կառավարությանը: Եթե Տեր-Պետրոսյանցը մահվան դատապարտվի, այդ պարագայում արտաքին գործերի մինիստրը գտնում է, որ կառավարության հատուկ դիմումը անարխիստների արտաքսման մասին անհավարար կերպով կլուծվի: Այդպիսով, Ստոլիպինը նշելով արտաքին գործերի մինիստրի կարծիքը, միաժամանակ հրահանգում էր հաշվի առնել այդ «տեսակետի» պետական-կառավարական կարևորությունը: Այդ պաշտոնական գրությունը Վորոնցովը պատասխանում է, որ ինքը հաշվի կառնի արտաքին գործերի մինիստրի թելադրանքը, երբ զինվորական դատարանի որոշումը կհանձնվի իրեն՝ կոնֆիրմացիայի համար:

Արդեն այն հանգամանքը, որ գործը քննության համար հանձնվել էր արտակարգ զինվորական դատարանին, ցույց էր տալիս, որ կառավարությունը որոշել է ծանրագույն պատժի ենթարկել կալանավորին: Թիֆլիսի դատարանի գատախազը հատուկ գրությամբ 1910-ի ապրիլին նշում է, որ մեղադրյալը շատ զուսպ և զղույշ է և ոչ մի ղեկքում չի կարող համարվել խելագար անձնավորություն: Բայց շորս էքսպերտների եզրակացությունը լսելուց հետո նա զրուս է, թե որոշում է հանվել՝ մանրակրկիտ և երկարատև քննության միջո-

ցով պարզել հիվանդության բնույթը: Դատասխանը, սակայն, համոզված էր, որ կալանավորը բացահայտ սիմուլյանտ է: Երբ Կամոյին բերում են դատարան, նա մտնում է ձեռքին մի թուշուն և անհեթեթ պատասխաններ է տալիս: Թե՛ կալանավորի այդ արտասովոր վարքագիծը և թե՛ մի որոշ շափով նաև արտասահմանյան մամուլի որոշ մասի դիրքը ստիպում են ցարական դատավորներին՝ հատուկ քննությունից հետո կալանավորին տեղափոխել Միքայելյան հիվանդանոցի հոգեկան հիվանդների բաժանմունքը: Հիվանդանոցի վարչությունը խնդրում է շղթաները հանել, բայց այդ դիմումը անհետևանք է թողնվում: Հիվանդանոցի բժիշկները բավական մանրամասն զրի են առել իրենց բոլոր դիտողությունները հենց առաջին օրից (1910-ի դեկտեմբերի 21-ից) մինչև վերջին օրը, երբ Կամոն փախչում է (1911-ի օգոստոսի 15-ը): Այդ ուշադրավ վավերագրերը պահվում են Վրաստանի պետական արխիվում, իսկ որոշ ֆաղվածքներ ժամանակին հրատարակվել են Մախիմովի հատուկ ուսումնասիրության մեջ: Այդտեղ նշանակալից են առանձին նշումներ բանտ-հիվանդանոցի վերակացուների դիտողությունների մասին: Այդ վերակացուներից մեկը հայտնել է, որ կալանավորը կարգում է վրացերեն լրագրեր և գրքեր, առողջ դատողություններ է անում և միայն բժիշկների ներկայությամբ է ասում արտասովոր բաներ: Փախուստից հետո կատարված քննությունը պարզում է հետևյալ հանգամանքները: Կալանավորը համաձայնության գալով վերակացուներից մեկի հետ, նամակ էր ուղարկել իր քրոջը՝ Զավահիր Տեր-Պետրոսյանցին, և ապա՝ թե՛ այդ քրոջ և թե՛ մյուս քույրերի ու ծանոթների օգնությամբ գլուխ էր բերել ամբողջ գործը: Քույրերը և ծանոթներն էլ կազմակերպել էին փախուստը՝ ուղարկելով թե՛ բազմաթիվ փոքրիկ սղոցներ (ասեղի բարակությամբ), թե՛ բարակ, բայց ամուր թուկ: Կամոն սղոցներով կարողանում է կտրատել արգելարանի արտաքնոցի մոտ գտնվող ներբանցքի պատուհանի երկաթե վանդակների ձողերը և հացի կտորներով միացնել կտրտված մասերը: Միևնույն ձևով նա կտրում է իր երկաթե շղթաներն ամրացնող օղակները և, դարձյալ հետքերը ծածկելու համար, ամբողջ օպերացիան կատարելուց հետո միացնում ոտքերի կտրտված շղթան: Պարզվում է նաև, որ Կամոն վերջին օրը քանդելով պատուհանի երկաթե ձողերը, դուրս է եկել շապկով, իսկ ամբողջ հագուստը թողել իր կացարանում: Նա թուկի օգնությամբ պատուհանից սահել է վար և այդտեղ արգեն իր օգնականների միջոցով հագնելով նոր զգեստներ, անհետացել:

Ժանդարմական վարչությունը, իհարկե, ձեռք է առնում բոլոր միջոցները կալանավորին ձերբակալելու համար: Հատուկ գործակալների հանձնարարվում է հետևել բոլոր կասկածելի մարդկանց Թիֆլիսի, Ավճալայի, Նավթլուդի կայարաններում և դեպի Վլադիկավկազ, Թելավի, Սոնախ ու Ավճալա տանող խճուղիներում: Հետախույզները ճգնում են նույնիսկ փախստականին

գտնել հատուկ շների միջոցով: Քուս գետի ափով այդ շներին տանում են տարբեր ուղիներով՝ նախօրոք շներին ցույց տալով փախստականի զգեստները: Այդ հետախույզությունը ավարտվում է անհաջողությամբ, ինչպես հաղորդում է իր վերոհիշյալ ուսումնասիրության մեջ Մաքսիմովը:

Ընդհատելով այդ պատմությունը, ես այստեղ նորից կարող եմ բերել Կամոյի նկարագրությունը:

«Ես էլ, իմ օգնականներս էլ դիտեինք, որ կարող են ժանդարմները ինձ բռնելու համար դիմել ոստիկանական մարզված շների օգնությանը: Ահա հենց այդ էլ նկատի ունենալով՝ ես սրոշեցի շնորհել ավելի դյուրին ուղի և Քուս գետի ափով շուղևորվել դեպի քաղաք: Այդպես ինձ շատ հեշտ կարող էին գտնել: Անհրաժեշտ էր այնպես անել, որ շները կորցնեն իմ հետքերը և չկարողանան որևէ օգնություն հասցնել ոստիկաններին: Դրա համար էլ փախուստի ծրագիրը կազմելու ժամանակ մենք որոշել էինք ընտրել դժվարին, բայց ավելի ապահով ուղի: Քոն մյուս ափին իմ աջակիցները գիտեին, թե ե՛րբ պիտի իջնեմ պատուհանի տակ գտնվող հողաթմբին և ապա հասնեմ Քոն ափը: Քոն մյուս ափից գալիս է հատուկ մի նավակ, և ես անմիջապես փոխադրվում եմ հենց հակառակ ափը: Ոչ մի ոստիկան չէր կարող, իհարկե, ենթադրել, թե մի կալանավոր-փախստական իր կյանքը նորից վտանգելով, դյուրին ճանապարհի փոխարեն պիտի ընտրի անչափ դժվարին մի ուղի: Էլ չեմ խոսում այն մասին, որ այդպիսի մի բարդ ուղի ընտրելով, ես կարող էի ապահով լինել, որ ոստիկանական հետախույզ շները չեն գտնի իմ հետքերը...»:

Անցնում եմ նորից արխիվային նյութերին: Երբ պարզվում է, որ կալանավորին օգնել են ոչ միայն իր քույրերը՝ Զավահիրը, Արուսյակը և Սանդուխտը, այլև ուրիշ անձնավորություններ և զրանց մեջ, առաջին հերթին, արգելարանի բանտային վերակացուներից մեկը, ոստիկանությունը, իհարկե, որոշում է ձերբակալել այդ մարդկանց:

Ձերբակալված բանտային վերակացուն՝ Ժդանկովը, հարցաքննության ժամանակ հայտնում է, որ ինքը մի քանի անգամ եղել է կալանավորի քրոջ՝ Զավահիրի մոտ, հասցրել է նրան կալանավորի նամակները, բերել է սղոցներ, ակտիվ կերպով օգնել փախուստը կազմակերպողներին: «Ես,— ասում է այդ վերակացուն,— համաձայնել էի օգնել կալանավորին, որովհետև հավատում էի, որ կկարողանամ ինքս էլ ուղևորվել արտասահման և «ղառնալ մառդ»: Բացի կալանավորի քույրերից, ես տեսել եմ նաև կալանավորի այն ծանոթին, որը հանձնել էր ինձ չորս կապոց սղոց և թուկը: Կալանավորը խնդրել էր իր ծանոթներին անպատճառ անզլիական սղոցներ: Ընդամենը ես ստացել եմ 48 սղոց, որոնք հանձնել եմ կալանավորին: Երբ հերթապահությունը կատարում էի ես, կալանավորը սկսում էր սղոցել պատուհանի

երկաթները և հետո խմորով միացնել կտրտված մասերը: Այդպես էր անում նաև իր ոտքերի երկաթե շղթաները սղոցելուց հետո»:

Կամոյին օգնող թե՛ քույրերը և թե՛ մյուս աջակիցները դատի են տրվում: Դատարանը որոշում է աջակցողներից երկուսին աքսորել Սիբիր՝ տաժանակիր աշխատանքի, իսկ կալանավորի քույրերից երկուսին՝ Զախաճիբին և Արուսյակին, ուղարկել աքսորավայր...

... Արտասահման մեկնելուց հետո Կամոն լինում է ղանազան երկրներում: Երբ Բուլղարիայում նրան ձերբակալում են, նա կարողանում է ազատվել բուլղարական ս.-դ. կուսակցության հայտնի ղեկավարներից մեկի՝ Բլագոեի աջակցությամբ: Արտասահմանում նա տեսնում է Լենինի հետ: Այդ մասին պատմում է Կրուպսկայան իր հիշողությունների մեջ: Բուլղարիայում Կամոն փորձ է անում կապեր հաստատել մուղավազի գործիչների հետ ղենքի և անլեզալ գրականության ապահով փոխադրությունը գլուխ բերելու համար: Երբ Բուլղարիայից հասնում է Ստամբուլ, այս անգամ նրան ձերբակալում են տաճկական կառավարության ոստիկանները: Այդտեղ նրան օգնում են, ինչպես հաստատում են Մաֆսիմովի աշխատույթյան մեջ հիշատակված վավերագրերը, Ստամբուլի վրացական-կաթոլիկական վանքի որոշ վանականներ: Դա կանանց վանք էր, որի հետ կապված գործիչների շրջանում կային ցարական կառավարության գործելակերպից անբավական մարդիկ: Թե՛ այդ մարդիկ և թե՛ տաճկական կառավարության ներկայացուցիչները գտնում էին, որ ցարական կառավարության կողմից հալածվող հեղափոխականը վտանգավոր կարող է լինել արտասահմանում և ոչ թե իր հայրենիքում: Համենայն դեպս ուղարկվ է, որ Կամոն իրեն հատուկ հնարագիտությամբ կարողացել է օգտագործել իր համար օտար տարրերի անբավականությունը և տրամադրությունները: Ցարական կառավարության արտասահմանյան լրտեսներին, սակայն, հայտնի են դառնում նշված պարագաները: Այդ լրտեսները, որսկան շների նման, քայլ առ քայլ հետևում էին Կամոյի բոլոր գործողություններին: Գիտեին, որ Ստամբուլից Կամոն մեկնել է Աթենք: Դրանցից մեկը ենթադրելով, որ Կամոն Աթենքից մեկնել է Ամերիկա, այդ մասին հատուկ տեղեկանք էր ուղարկել ցարական մարմիններին:

Շատ շանցած՝ մի անակնկալ նոր ղեպի պատճառով պարզվում է, որ Կամոն նորից եկել է Կովկաս: Բավական երկար ժամանակ լրտեսներն սկսում են հետապնդել նրան և վերջապես 1913-ի հունվարին նորից կարողանում են ձերբակալել: Այս անգամ գործը քննվում է առանց հնօրյա ձևականությունների: Շրջանային դատարանը բժիշկների միջոցով քննում է Կամոյին և որոշում համարել նրան միանգամայն առողջ՝ անհրաժեշտ պատասխանատվության ենթարկելու համար: Այդ որոշումը հանվում է 1913-ի փետրվարի 9-ին:

Դրանից հետո մարտի 1-ին դատական գործը հանձնվում է շրջանային-ուսուցմական դատարանին՝ շուտափույթ քննության համար: Սովորաբար, այդ տիպի դատարաններն իրավունք ունենին արագընթաց կերպով, առանց հետևելու նույնիսկ ցարական օրենսդրության իրավական նորմաներին, ընդունել կառավարության համար ցանկալի որոշումներ: Մարտի 2-ի հատուկ որոշմամբ Կամոն դատապարտվում է տաժանակիր աշխատանքի և ուղարկվում Խարկովի տաժանակրության բանտը: Քսան տարի նա պիտի շղթայակապ կատարեր տաժանակիր աշխատանքներին հետևող ցարական գամփոնների հրահանգները: Սակայն սկսվում է Փետրվարյան հեղափոխությունը, Կամոն ազատվում է և նորից նետվում հեղափոխության հորձանուտը:

Այդ նոր էտապում նա սկսում է ընդհատակյա աշխատանք մենշևիկյան վրաստանում և մուսավաթական Ազրբեջանում: Կամոն նետվում է Բաքվից Թիֆլիս: Այստեղ 1920-ի հունվարի 15-ին ձերբակալվում է և բանտարկվում է արգեն իրեն ձանաշող սոցիալ-դեմոկրատների՝ վրացական մենշևիկների որոշմամբ:

Կուսակցական տոմսը Մոսկվայում 1920-ի սեպտեմբերին ստանալու ժամանակ Կամոն նշում է, որ ինքը ծնվել է 1882-ին և ստացել եռամյա կրթություն: Այստեղ գրում է նաև, որ խոսում է վրացերեն, սուսերեն և հայերեն, բայց իր մայրենի լեզուն վրացերենն է: Անկետայի այն հարցին, թե Լոնդոն է արդյոք արտասահմանում, Կամոն պատասխանում է՝ Եվրոպայի 15 պետություններում: Անկետայի 6-րդ կետը պահանջում էր կանգ առնել իր «մասնագիտության» վրա: Կամոն պատասխանում է, որ իր մասնագիտությունն է հեղափոխական գործունեությունը (հեղափոխական):

Այժմ ես կուզենայի նշել մի երկու դետալ ևս և ավարտել իմ այս պատմությունը:

Կամոն շատ մոտ էր Գևորգ Աթաբեկյանի հետ: Առանձին սիրով էր կարդում արկածային-ռոմանտիկ վեպերը: Հայերեն ո՛չ կարդում էր և ո՛չ էլ գրում, բայց միշտ էլ շատ կտրուկ կերպով հայտարարում էր, որ ինքը անշափ սիրում է հայ լեզուն ու մշակույթը:

Կամոն երբեք չէր ծածկում, որ հին տիպի ռոմանտիկ-հեղափոխականները իր համար միշտ թանկ են եղել: Նա շատ մեծ դժվարությամբ էր կարողանում ազատագրվել հնօրյա «կոնսպիրատորին» հատուկ տրադիցիաներից ու սովորություններից: Նա գտնում էր, որ հին տրադիցիաները կոփում էին հեղափոխականներին ու դարձնում կորովի մարտիկ:

«Նո՛ւ, լավ,— ասում էր նա ընկերական զրույցի ժամանակ մերթ քնդ մերթ:— Ես հո շատ լավ գիտեմ, որ գիտությունը մեծ զենք է: Գիտեմ և այն, որ կուսակցության յուրաքանչյուր անդամ պարտավոր է յուրացնել գիտության հիմնական սկզբունքները: Այդ ամենը ճիշտ է: Բայց մի՞թե դուք

կարող եք ժխտել, որ ձեր այդ շատ կրթված ինտելիգենտների մեջ կան անհամակրելի մարդիկ, կեղծավոր ու երկերեսանի, վերջապես վախկոտ մարդիկ... Մի՞թե կարելի է հավատ բնծայել «գրանց» բոլոր հայտարարություններին...»:

Այդ խոսքերն ասելուց հետո Կամոն կանգ էր առնում առանձին փաստերի և որոշ դեպքերի վրա: Հրատապ օրեր էին Մոսկվայում: Մայրաքաղաքի հեռուստական պրոլետարիատի առաջավոր ներկայացուցիչները խումբ-խումբ ուղղմանակատ էին մեկնում: Մոսկվայում հերթական ամենահրատապ խնդիրներն էին՝ պայքարը սովի ու խուճապի դեմ, բուլճերիկների մոբիլիզացիան և ուղղմանակատի ամրացումը:

Կամոն և Գևորգ Աթարբեկյանը միասին ծրագրել էին ստեղծել հեղափոխական հատուկ ջոկատներ և ուղարկել հարավային վայրերը՝ ընդհատակյա ուղղմանական աշխատանքի կազմակերպման համար: Բացի «ընդունակություններ» ունենալուց, այդ ընկերները պիտի լինեին ամենից առաջ անձնավեր և խիզախ գործիչներ: Անհրաժեշտ էր ընտրություն կատարել մեծագույն զգուշությունով:

Մերթ ընդ մերթ գալիս էր Կամոն Գևորգի հետ միասին ու զանգատվում: Կամոն շեշտում էր ու անդադար կրկնում, որ «առանց հատուկ քննության» անհնարին է կանոնավոր կերպով կազմակերպել հարավ ուղարկվող «կոնսպիրատորներին» մոբիլիզացիայի գործը:

Ալեքսեյ Տոլստոյի հայտնի էպոպեայի մեջ կա հակիրճ, բայց շատ ազդու և պատկերավոր մի հատված, որը նվիրված է սերբ հեղափոխական Օլեկո Դունդիչի բնութագրմանը: Ահա Կամոն խոսում էր այդ տիպի «պարտիզաններ» պատրաստելու և դաստիարակելու մասին:

Նա շատ ծանր ապրումներ էր ունենում և լավ էր գիտակցում, որ Կամոնի բանակի կազմակերպման հետ միաժամանակ սահմանափակվում է վաղեմի հեղափոխական պարտիզանի նշանակությունը: Նոր օրերի պարտիզանի վաբազիժը պիտի ենթարկվեր Կամոնի բանակի դեկավար օրգաններին: Նոր օրերի պարտիզանը պետք է լինե՛ր և՛ կրթված գործիչ, և՛ կազմակերպված հեղափոխական:

Տասնյակ տարիներ «կոնսպիրատոր» Կամոն գործ էր ունեցել քիմիական լաբորատորիաների, զինամիտի, ռումբերի, խիզախ ձեռնարկումների հետ: Նրբ զրույցի ժամանակ խոսք էր բացվում գիտական որևէ նյութի կամ քիմիական արդյունաբերության մասին, Կամոն սկսում էր նկարագրել քիմիական գաղտնի լաբորատորիաների տեսակները, ռումբերի հատկանիշները: Նա նույնիսկ ծանոթացրեց ինձ Գրաժանի՝ հեղափոխական գաղտնի հնօրյա անձնավեր քիմիկոս-լաբորանտներից մեկի հետ: Հիշում եմ, թե ինչպես մի անգամ ներս մտավ և ասաց.

«Ահա՛, սա է ընկեր Գրաժանը, որ կատարում էր նիկիտիչի (Կրասինի) հրահանգները»:

Գրաժանը ժպտալով հաստատեց, որ ինքը հիրավի ժամանակին աշխատել է հեղափոխական լաբորատորիայում՝ թե՛ Մոսկվայում, թե՛ նախահեղափոխական շրջանի Պետրոգրադում: Կամոյի համար Գրաժանը ո՛չ թե գիտնական-քիմիկոս էր, այլ հեղափոխական՝ Կամոյին համարում ու ոգևորում էր իր ընկերոջ անկեղծությունը, պարզությունը, խիզախությունը: Ահա թե ինչու նա ուրույն տարակուսանքով էր մոտենում «նոր» մարդկանց ու «նոր» գործիչներին:

«Նո՛ւ, լավ, կարդացած եմ, բայց չե՞ որ ամեն ինչ արդեն պատրաստ է, և դրանք աշխատում են առանց ռիսկի: Ինչպե՞ս իմանանք, թե ինչո՞ւ են «դրանք» մտել կուսակցության շարքերը: Հարց է ծագում՝ արդյոք «դրանք» միշտ ուղղամիտ, հավատարիմ և խիզախ բուլճերիկներ են...»:

Նման այրող ու սուր «հարցերը» շատ էին հետաքրքրում Կամոյին: Նա ոտքից մինչև գլուխ միաձուլվեց կերտված լենինյան մարտիկ էր: Նա ինքն էլ զգում և տեսնում էր, որ անցել և անցնում են վաղեմի հեղափոխական ռոմանտիկների օրերը, որ ստեղծվել և ստեղծվում է հզոր սովետական պետությունը, որ կուսակցության յուրաքանչյուր անդամ այսուհետև պետք է ավելի մեծ եռանդով յուրացնի Մարքսի—Էնգելսի—Լենինի ուսմունքը, որ ինքն էլ պարտավոր է վերակառուցվել և հիմնովին վերակառուցել հեղափոխական աշխատանքի մեթոդները...

Մենք շատ մեծ ուշադրությամբ հետևում էինք Կամոյի խոսքերին ու ձեռնարկումներին: Տեսնում էինք, որ նա շտապում է և աշխատում քայլել երիտասարդների հետ միասին: Նա հաճախում էր կուրսեր, կարդում էր, լսում էր, հաճախ նորից և նորից ուղևորվում էր հին ընկերների մոտ, նորից լսում նրանց խոսքերն ու խորհուրդները:

Միայն Կամոյի նման գործիչը կարող էր այդքան անակնկալ շրջադարձ կատարել՝ հնօրյա հեղափոխական-պարտիզանի ռոմանտիկ անուրջներից անցնել շատ առօրյա, «ցամաք» խնդիրների մանրակրկիտ ուսումնասիրության, կազմակերպված ու մեթոդական նոր աշխատանքի:

Կամոյի մասին քիչ չեն գրել: Սակայն նրա մասին գրողներից ոչ մեկը ակնարկված շրջադարձի նշանակությունը, որչափ ինձ հայտնի է, հաշվի չի առել և չի ցուցահանել: Այնինչ հենց այդ յուրահատուկ «շրջադարձը» շատ լավ է բնութագրում միշտ աննկուն և միշտ կորովի հեղափոխականի ամուր կապը հարազատ լենինյան կուսակցության հետ...

«Էին բուլճերիկների հիշողություններ», Հայպեսհրատ, 1958, էջ 131—147:

Ռուսական տպագրության 400-ամյակին նվիրված հոբելյանի կարևոր մի հատկանիշը չի կարող անուշապրության մատնվել: Այդ հոբելյանը ոչ միայն մեկ կամ երկու ակնաժայռ հիմնադիրների արժեքավորումն է, այլ ավելի շատ տպագրության արվեստի բազմաթիվ ներկայացուցիչների ջանքերով ձևոնարկված ու կատարված աշխատանքների ուրույն հանրագումարի գնահատմանը նվիրված հոբելյան:

Թեման ինքն արդեն այնքան բարդ երանգներ ունի, որ թելադրում է ծանրանալ զանազան պատմական փուլերի գործիչների վրա և առանձնակի ուշադրությամբ մոտենալ միշտ բազմերանգ մշակույթի ուսումնասիրությանը:

Անհրաժեշտ է ամենից առաջ նշել, որ տպագրության հիմնադրման սկզբը նական շրջանում մեծ չի եղել տպագրիչների ու հրատարակիչների թիվը, ինչպես նաև բարձր չի եղել ակտիվ ընթերցողների ընդհանուր կուլտուրական մակարդակը:

Հետագա պատմաշրջանում, սակայն, ռուսական տպարանների և հրատարակչությունների թիվը դառնում է ավելի մեծ: Շատ և շատ լայնանում են նաև տպագրությունն ու գիրք սիրողների շարքերը: Տպագիր հրատարակչությունները XVIII դարից սկսած դառնում են ժողովրդի ու հասարակական մտքի պատմության ներհակ էջերը լուսարանող վավերագրեր: Հետզհետե ակնհայտ է դառնում նաև իշխող սեփականատիրական կարգերի դեմ ծառայող նոր ուժերի հետ կապված ազատախոհ իմաստասերների շատ ուրույն գերը: Ավելի ուշ, երբ արդեն XIX դարի իննսունական թվականների նախամուտին հանդես են գալիս հեղափոխական պրոլետարիատի առաջին գաղափարախոսները, մենք զրանց կողքին նշմարում ենք հնօրյա Ռուսիայի ժողովուրդների ներկայացուցիչներին: Բանվոր դասակարգի հեղափոխական ավանգարդի լինինյան մարտական պատգամների շուրջը համախմբված հեղափոխական մարքսիստների պատմական արշավն ու գրոհը արդեն աչքի են ընկնում որպես ռանչպար ու հեղափոխական ռուս ժողովրդի հետ ամրակուռ շղթաներով միաձուլված քաղաքացի աշխատավորների եղբայրական միջազգային շարժում...

Այդ ամենն, իհարկե, արտանկարվում է արդեն XIX դարի վերջին տասնամյակում զարգացած ռուսական մամուլի և տպագրության, գիտության և դրականության պատմության էջերում:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո արդեն ռուսական տպագրությունը դառնում է սոցիալական-դասակարգային կա-

¹ Ռուսական տպագրության 400-ամյակին նվիրված գիտական նստաշրջանում կարդացված զեկուցումը:

պանքներից ազատագրված մեծ սովետական ժողովրդի եղբայրական շարքերը ամրացնող հզոր ազդակ:

Վերջապես, այսօր, հրաշունչ մեր օրերին, ռուսերեն տպագիր խոսքը և առաջավոր ռուս գիտնականների ու գրողների երկերն ընկալվում են առանց վարանումների ազատասեր ու խաղաղասեր բոլոր ժողովուրդների կողմից, որպես նոր, լուսավետ կոմունիստական կարգերի կառուցմանն օժանդակող կարևորագույն գաղափարական-իմաստասիրական զենքեր:

Ինքնին արդեն պարզ է, որ վերոհիշյալ գրույթներն ու փաստերը հիրավի թելադրում են մեզ այսօր առանձին ուշադրությամբ մոտենալ ռուսական տպագրության պատմական զարգացման պատկերը ցուցահանող տպագիր վավերագրերի քննարկմանն ու լուսարանմանը:

1

Իր կազմակերպման առաջին օրերին տպագրության արվեստը աշխարհիկ և հոգևոր ավատական իշխանավորների կողմից օգտագործվել է, ինչպես հայտնի է, գրեթե բացառապես իշխող դասակարգերի գաղափարախոսության ամրացման և տարածման նպատակով: Սակայն մի հանգամանք այդ օրերին հաշվի չի առնվել: Եթե նորանոր այն տվյալները, որ հաղորդվում էին հեռավոր նոր երկրների մասին, նորանոր գյուտարարների ու ճանապարհորդների, հնօրյա մշակույթի կուլանների դեմ ծառայող կոպերնիկի և Գալիլեյի, ամենահեռու երկրների «գաղտնիքներն» ուսումնասիրող գիտնականների մասին, քայքայում էին կրոնական-իդեալիստական իմաստասիրության պատվանդանը և նոր ուղղություն էին հաղորդում աշխարհիկ քաղաքացիների մտավոր զարգացմանը, տպագրությունն ու նոր տեխնիկան այդպիսի պայմաններում ինքնին արդեն պետք է կապակցվեին նոր գյուտերի ազդեցության ներքո բռնկվող մտորումների հետ: Ուստի զարմանալի չէ, որ հին օրերի տպագրիչների շարքերում նշմարվում էին աշխարհիկ մշակույթի նոր պատգամներին արձագանքող նաև առանձին ազատախոհ մտածողներ: Տպագիր խոսքի արժեքն ու նշանակությունը թերազնահատել այդ գործիչներն, իհարկե, չէին կարող: Զանալով որևէ լեզու ձևով բացահայտել իրենց նոր որոնումներն ու մտորումները, այդ գործիչները հրատարակում էին այբբենարաններ կամ քերականական ձեռնարկներ, աշխարհիկ զարդանկարներով կամ նկարներով զարդարված կրոնական գրքեր, դասագրքեր կամ յուրահատուկ տաղաբաններ. վերջապես հնօրյա տպագիր տեքստերին կցված գրական ակնարկներ կամ «հիշատակարաններ»: Բնորոշ է այն, որ շանալով միանգամայն հանդուրժելի լեզու ուղղություն հաղորդել տպագրիչների աշխատանքին և հրատարակչությունների թեմատիկային, բոլոր եկեղեցիների ղեկավարները, զրանց թվում առանձնապես մեծ նշանակություն կրեապետները, հրատարակել են արգելված գրքերի հատուկ ինդեքսներ, ցուցակներ:

Անտեղի շէր լինի գուցե նշել այն, որ ժամանակին կաթողիկ եկեղեցու ղեկավարներն աշխատել են ամեն կերպ խանգարել առաջին հայ տպագրիչներին և հատկապես Ոսկանին: Երբ Ամատերգամում հաստատվելուց հետո, Ոսկանը կցում է հայերեն կրոնական գրքերին առանձնապես Ալբրեխտ Գյուրերի հանրահայտ գրավչությունները, նա, իհարկե, որոշակիորեն բացահայտում է իր բացասական դիրքը կաթողիկ կղերապետության նկատմամբ:

Ականավոր ուսուցիչական, արվեստի և հնատիպ ուսուցիչներին (և տպագրության) պատմաբան Սիդորովը ստվար հատորների մեջ լավ է նկարագրել տպագրիչներին սքողված այն մտորումները, որոնք առաջադրվել են թե՛ ուրույն թեմաների և թե՛ տեխնիկայի հմտագին ընտրության միջոցով:

Բոլոր այն վավերագրերն ու հետազոտությունները, որոնք հրատարակվել են ուսական տպագրության պատմաբանների ջանքերով (Տիխոմիրով, Զերնովա, Սիդորով, Շչեպկին, Կոլյազա և այլն), ցույց են տալիս, որ ականավոր սուս տպագրիչ Իվան Ֆեոդորովը վաղեմի հին օրերին ունեցել է թե՛ ազդեցիկ հովանավորներ և թե՛ բավական ուժեղ թշնամիներ: Հայտնի է նաև այն, որ Ֆեոդորովից առաջ նրա գործունեության օրերին թե՛ Ռուսաստանում և թե՛ ուսարևակ ուրիշ երկրներում եղել են ուսական և սլավոնական տպարաններ ու տպագրիչներ: Այդ մասին կարելի է գտնել նշանակալից տվյալներ գանազան բանասիրական-պատմական ուսումնասիրությունների մեջ: Չնայած այդ հանգամանքին, այսօր, առանձնապես առաջին հերթին ուսական տպագրության պատմության հարուստ աննախնդրում հիշատակվում է Իվան Ֆեոդորովը:

Ես կանգ չեմ առնում այդ գործի այնքան հատկանշական հուշարձանի վրա, որը հիրավի լավ է բացահայտում Մոսկվայի կենտրոնում կառուցված շենքերի ֆոնի վրա մշակույթի ականավոր այդ ներկայացուցչի տպավորիչ գիմաստվերը: Այսօր ոչ ոք չի կարող ժխտել, որ Ֆեոդորովը հիրավի իրավունք ունի ուսական տպագրության և՛ հիմնադրի, և՛ մեծանուն ներկայացուցչի դերում հանդես գալ: Տպագրիչ լինելով հանդերձ, նա միաժամանակ եղել է նոր մշակույթի շատ ակտիվ ջանակիր, նաև, ինչպես հաստատել են անվանի բանասերները, պատմաբանները՝ մեծատաղանդ գրագետ գործիչ, հմուտ տպագրիչ և նկարիչ: Իր հրատարակությունների զարգանկարներն ու տառերի ձևերը, գրքերի ձևավորման համար անհրաժեշտ հատկանիշները նա ինքն է ընտրել՝ ջանալով բարձրացնել գրքի արժեքն ու կշիռը: Նախապես Իվան Ֆեոդորովը մեծագույն ուշադրությամբ քննել է հին ձեռագրերը, սլավոններն տպագիր հրատարակությունները, իր նախորդների ջանքերով պատրաստված գրքերը: Նա ուսումնասիրել է նաև իտալական հայտնի վարպետների արվեստը, հնորյա իտալերեն գրքերի հատկանիշները և բարձր տեխնիկան:

Մանրանալով տակավին 1954-ին հրատարակված Կոլյազայի հետազոտության վրա Ա. Սիդորովը շեշտում է, որ Ֆեոդորովը ժամանակին հան-

դես է եկել նաև որպես շատ ուշագիր խմբագիր, նկարիչ, տպագրիչ: Սիդորովի կարծիքով Ֆեոդորովը եղել է մեծ վարպետ, աշխատավոր և «գրքի հերոս», որի ջանքերով հրատարակված գրքերը բացահայտում են «ուսական արվեստի ուրույն կոնտակտը՝ վերածնության պատմաշրջանի գեղարվեստի հետ»²: Բոլոր կարևոր այն վավերագրերն ու հետազոտությունները, որոնք հրատարակվել են վերջին տարիների ընթացքում սլավոն և ուսական հնորյա տպագրիչների մասին, ցույց են տալիս, որ Ֆեոդորովը ճանաչված ու հայտնի դեմք էր և՛ Մոսկվայում, և՛ սլավոնական ժողովուրդների արևմտաեվրոպական բնակավայրերում: Նրա էությունից և վարպետությունը, գրագետ-ուսավորչին հատուկ մտահայեցողությունը չէին կարող աննշմարելի մնալ: Մոսկովյան Ռուսիայում ազգային նորակառույց մշակույթի բնագավառում հեղեմունք եկեղեցին էր և այդ հեղեմունի զաղափարախոսները գիտեին, որ իրականում Ֆեոդորովը հակառակ ուրիշ տպագրիչների, հետպնդում էր եկեղեցու դիրքերը քայքայող նպատակներ՝ ջանալով նոր և ավելի ինքնուրույն աշխարհիկ մշակույթ կառուցել ու զարգացնել: Ահա թե ինչու եկեղեցու ղեկավար գործիչներն ամեն կերպ աշխատել են խանգարել Ֆեոդորովին և, ի վերջո, այնքան ծանր կացություն ստեղծել նրա համար, որ ստիպել են նույնիսկ հրաժարվել այնքան մեծ դժվարությամբ կազմակերպված գործից, ընդհատել աշխատանքները, նետվել ղեկի արևմտյան երկրներ: Այնինչ իրականում նա նախագծել էր կազմակերպել լայն հրատարակչություն, տպագրել գեղագիտական ճաշակով ձևավորված գրքեր, աշխարհիկ նոր ընթերցողների շարքերը լայնացնել, տպագրել դասագրքեր, աշխարհագրական և գիտական ձեռնարկներ: Նման նպատակը չէր կարող հանդուրժելի համարվել այն հին օրերին, երբ Ֆեոդորովը մոլեգնորեն քննադատվում էր եկեղեցու զաղափարախոսների կողմից: Նրա նախաձեռնությամբ և ջանքերով հրատարակված արդեն առաջին իսկ գիրքը («Գործք Առաքելոց» — «Ապոստոլ Առաքյալ» 1564) գեղակերտ հատոր էր, որի հմտագին կերպով ընտրված զարգանկարները, ինչպես նաև Ղուկաս Առաքյալի փայտափոր գրավչության նկարը բացահայտում էին արտասովոր նոր տպագրիչ-հրատարակչի նկարագրի նրբին հատկանիշները:

Ներկայումս արդեն հաստատված է, որ Ֆեոդորովը հիրավի ստիպված է եղել ընդհատել իր ստեղծագործական աշխատանքները: Այդ փաստը, նա ինքը, հետագայում (1574-ին) նշել է Գալիցիայի կով մայրաքաղաքում տպագրված իր «Առաքյալի» նոր հրատարակության այն վերջաբանում, որ անգամ այսօր կարող է ցնցող տպավորություն թողնել ընթերցողների վրա: Զսպված զայրույթով և հույզով լեցուն այդ «վերջաբանի» ազդու տողերը ցույց են տա-

² А. А. Сидоров, Особенности славянского первопечатания (основания) («У истоков русского книгопечатания». Под ред. М. Н. Тихомирова, А. А. Сидорова и А. Назарова, М., АН СССР, 1959, стр. 80).

լիս, որ Ֆեոդորովի նպատակն է եղել ոչ միայն նկարագրել իր գործունեությունը էջերը, այլ նաև դատափետել ու մերկացնել եկեղեցուն սպասավորող աշխարհիկ և հոգևոր օլիգարխիայի ղեկավարներին: Ֆեոդորովը գրում է և դիտավորյալ ընդգծում, որ ինքը Մոսկվայում շատ դառն օրեր է ապրել ու հալածվել վերահիշյալ իշխանավորների կողմից, որ հենց դրանց թելադրանքով նա «հերետիկոսի» համբավ է ստացել և որ իր մասին «չար» խոսքեր են տարածել «առանց հիմքի» նույն այդ իշխանավորները: Դրանց ատելությունը, գրում է Ֆեոդորովը, ստիպել է մեզ հեռանալ և ուղևորվել դեպի անհայտ ուրիշ երկրներ: Ֆեոդորովը միևնույն այդ վերջաբանում շեշտում է, որ հայրենի երկրից իրեն «արտափել» են իր քննամիները³:

Նշենք նաև այն, որ Ֆեոդորովը այդ օրերին կին և ընտանիք ուներ և իր տպարանի անհրաժեշտ բոլոր պարագաները, առաջին հերթին տառերն ու զարդանկարների նմուշները, պղնձն ու փայտե կարեոր ու բավական ծանր տախտակները պետք է տաներ դեպի նոր վայրեր: Անհրաժեշտ էր վարձել մի քանի մեծ սայլեր և հաշվի առնելով սահմանամերձ վայրերում շարունակվող ռազմական ընդհարումները, ընտրել ավելի հարմար ու միաժամանակ ավելի դժվարին ուղիներ: Այնքան էլ հեշտ չէր կատարել այդպիսի մի հեռու ուղևորություն, երբ ամենուրեք իշխում էին աշխարհիկ և հոգևոր ֆեոդալ բռնակալները: Մոսկվայից Ֆեոդորովը ուղևորվում է Լիտվա և այնտեղ ժամանակավոր օթևան գտնում հետման խողովակի Ջաբլուգովո կալվածքներում: Այդ ժամանակ խողովակի կապված էր կաթոլիցիզմի ուղեգծի հետևողների՝ ունիատների դեմ պայքարող սլավոն շրջանների հետ: Այդ «մեկենասը» թերևս այդ պատճառով գտնում էր, որ Ֆեոդորովի ջանքերով տպագրված գրքերը կարող են նպաստել կաթոլիցիզմի դեմ մարտնչող շարքերին: Հետագայում, սակայն, խողովակի ստիպված է լինում փակել տպարանը: Չնայած տրան, նա Ֆեոդորովին նվիրում է մի գյուղ և առաջարկում հաշվի առնել անակնկալ բարդ հանգամանքները, անցնել գյուղատնտեսական գործունեության, ավելի խաղաղ աշխատանք ընտրել: Ֆեոդորովը մեծ հարգանքով արձագանքելով այդ առաջարկին, հայտարարում է, որ չի կարող հրաժարվել իր հին աշխատանքից: Նորից նա սայլեր է վարձում և այս անգամ գնում Լվով: Կարճ ժամանակից հետո Լվովից նա ուղևորվում է դեպի Օստրոժսկ քաղաքը և այնտեղ հաստատված գրասենյակի ղեկավարությանը հանձնարարությամբ հիմնում է տպարան և հրատարակում նոր գրքեր: Անցնում է կարճ ժամանակ և Ֆեոդորովը ստիպված է լինում թողնել Օստրոժսկի սահմանները և նորից ուղևորվել դեպի Լվով:

Այդտեղ նա շատ ծանր օրեր է ապրում: Սկզբում չի գտնում ո՛չ մեկենասներ, ո՛չ օգնականներ: Ի վերջո, Լվով քաղաքի արհեստավորների «եղբայրություններից» մեկի նախաձեռնությամբ նա հիմնում է նոր տպարան և նորից

անցնում հրատարակչական, գրական աշխատանքի: Ես դիտավորությամբ շեշտում եմ, որ զրքերի տպագրությունը հիրավի գրական-ստեղծագործական աշխատանք էր: Հետագայում նորից, ինչպես իրավամբ նկատել և արձանագրել են «ուսական տպագրության անվանի պատմաբանները, Ֆեոդորովը Լվով քաղաքում հանդես է եկել որպես թե՛ ազատախոհ լուսավորիչ-դեղագետ և թե՛ մեծատաղանդ տպագրիչ-նկարիչ:

Այդ օրերին նրա հովանավորներն ու մեկենասներն են եղել Լվովի քաղաքային բյուրգերական դեմոկրատիայի աշխատավոր խավերը՝ արհեստավորներն ու արհեստավորների ուրույն «եղբայրություններից» մեկի ղեկավար անդամները: Լվովյան «Առաքյալի» (Ապոստոլ—1574) նոր հրատարակության տեքստին կցված վերջաբանը թե՛ յուրահատուկ հյուսվածք ունի և թե՛ նշանակալից պատմական և գրական-հրատարակախոսական երկասիրություն է:

Ֆեոդորովը դիտավորյալ է հիշեցնում ընթերցողներին, որ Ջաբլուգովոյի տերը՝ հետման խողովակից ակտիվորեն օգնել է իրեն ու հնարավորություն տվել հիմնելու նոր տպարան և հրատարակելու անհրաժեշտ գրքեր: Հարկավոր է նշել, որ 1570-ին Ջաբլուգովոյի այդ տպարանի հրատարակության մեջ Ֆեոդորովն իր ազգանունը տպել էր՝ Իվան Ֆեոդորովիչ Մոսկովիտին (Մոսկվացի): Կասկածից զուրս է, որ տպագրելով «Մոսկվացի» կամ Մոսկովացի որդի հավելյալ մակդիրները նա ցանկանում էր հիշեցնել, որ իր համար միշտ թանկ ու նվիրական են և՛ հայրենի Ռուսիան, և՛ այդ հայրենիքի մայրաքաղաք Մոսկվան:

Նրբ վատիկանի կղերապետների թելադրանքով կաթոլիցիզմին հետևողները դառնում են ավելի ուժեղ, և երբ խողովակից ստիպված է լինում համակերպվել լեհական կառավարության պահանջներին, նա, ջանալով ապահովել Ֆեոդորովի նյութական կացությունը, խորհուրդ է տալիս նրան զբաղվել գյուղատնտեսությամբ: Ըստ երևույթին խողովակին հայտնի էր, որ Ֆեոդորովի աննկուն եռանդն ու ակտիվ տպագրական-հրատարակչական գործունեությունը, առանձնապես ունիատների շարժման հետևողները, համարում են անհանգուրժելի և հենց իրենք, այդ միևնույն հետևողները կարող են նորից հալածել ինքնուրույն իր ուղեգիծը վարող խիզախ լուսավորիչ-գործչին:

Լվով քաղաքում 1574-ին տպագրված «Առաքյալին» կցված վերջաբանում Ֆեոդորովը դատափետելով տակավին 1563-ին Մոսկվայում «չար» խոսք տարածող աշխարհիկ բազմամիլի իշխանավորներին, ինչպես արդեն ասացինք, շիտավորությամբ նշելով, որ ինքն «արտաքսվել» է իր հայրենիքից, միաժամանակ գրում է, որ իր հովանավոր խողովակից նվիրել է իրեն մի գյուղ և ստեղծել տպագրության և հիմնականում վիճակ: Անմիջապես այդ տողերից հետո Ֆեոդորովը գրում է, որ ծերության և հիվանդության պատճառով միևնույն խողովակից հետագայում հրամայել է դադարեցնել աշխատանքը և զբաղվել գյուղատնտեսու-

³ Տե՛ս հիշատակված ժողովածուն, էջ 235:

թյամբ: Ես,— գրում է Ֆեոդորովը,— ստիպված եղա հրաժարվել, ինձ համար անհարմար էր զբաղվել ուրիշ աշխատանքով: Իմ նպատակն է եղել՝ շարունակել շատ անհրաժեշտ և իմաստալի աշխատանքը: Բնորոշ է այն, որ Ֆեոդորովը դիտավորություն էր հիշեցնում է ընթերցողներին, որ ինքը չի ցանկանում ընտրել ավելի ապահով ուղեգիծ⁴:

Տաղանդավոր գեղագետ-նկարչին հատուկ հյուսիսը ուժով նա նկարագրում է իր դժվարին, նոր ճանապարհորդությունը դեպի Լվով քաղաքը և հին օրերի տխուր էջերը, ժանտախտի համաճարակի շնորհիվ ստեղծված անհրապույր անակնկալներն ու «չարագույն» պատահարներն ու դեպքերը:

Լվով քաղաքում Ֆեոդորովը սկզբում ծանր օրեր է ապրել: Նա ստիպված է եղել աշակիցներ և հովանավորներ որոնել վայրագ ունևորների շրջանում: Ֆեոդորովը ընդգծում է, որ առևտրական այդ մեծ քաղաքում սոցիալական վերնախավի-աշխարհի և հոգևոր օլիգարխիայի ներկայացուցիչները ցուցարեքել են անսիրտ ու անտարբեր վերաբերմունք⁵:

Իր շատ ուշագրավ «Հիշատակարանում» նա պատմում է, որ Լվովում նոր տպարանի օժանդակողների գերում հանդես են եկել ազնվականներից և հոգևոր իշխանավորներից հեռու կանգնած քաղաքային դեմոկրատիայի ներկայացուցիչները:

Զարևուղովոյի տպարանում 1569-ին տպագրված «Ավետարանի» նախաբանը գրել էր մեկենասը: Այստեղ՝ հետման խոդկեիչը հայտնում է, որ նախապես ծրագրված էր այդ գիրքը հրատարակել «հասարակ» մարդկանց համար և ավելի դյուրամատչելի ու պարզ լեզվով: Հետագայում, սակայն, «գիտուն» մարդկանց խորհուրդը լսելուց հետո, սրտում է ընդունվել հրատարակել «Ավետարանի» հին բնագրի թարգմանությունը:

Հատկանշական է այն, որ Օստրոգ քաղաքի տպարանում 1581-ին տպագրված «Աստվածաշնչի» հրատարակությանը կցված հիշատակարանում Ֆեոդորովը կարևոր է համարել շեշտել, որ ինքը Մոսկվայի «զավակն» է:

Ըստ երևույթին նա Օստրոգ քաղաքում նույնպես թշնամիներ է ունեցել, որոնց, կասկածից դուրս է, լավ էին ծանոթ Մոսկվայի «իշխաններին» կողմից

⁴ Տե՛ս միևնույն ժողովածուն՝ Ֆեոդորովի գրքերի նախաբաններին և վերջաբաններին նվիրված էջերը:

⁵ ...«И многократно обходил богатых и благородных мирян, прося от них помощи и кланаясь и припадая к ногам их; и склоняясь до лица земли, омыбал ноги их от сердца идущими слезами. И не раз и не два, но многократно делал это... И плакал я горькими слезами, что не нашлось никого, кто бы сжалился или помог... И нашлись только некоторые из меньших людей священнического чина да незнатные из мирян, которые подавали помощь...».

М. В. Щепкина, Переводы предисловий и послесловий первопечатных книг. *Նույն ժողովածուում*, стр. 245—246.

Ֆեոդորովի դեմ կազմակերպված ձեռնարկումները և ապա Լվովյան «Առաքյալին» կցված հայտնի բնագատական դիտողությունները: Այդ թշնամիները կարող էին տարածել անհիմն լուրեր Ֆեոդորովի դիրքորոշման մասին: Ահա թե ինչու նա հիշեցնում էր բոլոր ընթերցողներին, որ ինքը մոսկվացի է («Մոսկվիտին») և Մոսկվայի «որդին» է (Ֆեոդորովիչ—Մոսկվայի որդի): Նա նկարել է նաև անձնական իր գերբը և գրոշմանիշի վրա տպագրել՝ «Յոհանն Ֆեոդորովիչ—տպագրիչ Մոսկվայից»:

Այդպես էր իր մտահայեցողությունները ականավոր գրող ու լուսավորիչ, իր հայրենի ուսական մշակույթի համար նոր ուղիներ որոնող մեծատաղանդ այդ տպագրիչը:

Հակասական երանգներ են եղել, իհարկե, նրա հայեցողության մեջ, այն հայեցողության, որ ստեղծվել էր ավատական-կալվածատիրական կարգերի պայմաններում: Դատաստիտելով իր թշնամիներին՝ աշխարհիկ և հոգևոր իշխաններին, Ֆեոդորովը չէր սքողում միևնույն իշխանների վրա հենվող ցարի նկատմամբ կամ առանձին իշխան-մեկենասների նկատմամբ ստեղծված միամիտ իր անուրջներն ու պատրանքները: Այդպես են եղել հին օրերին նաև ուրիշ շատ «ազատախոճ» լուսավորիչներ՝ նույնիսկ սլավոն ժողովուրդների բնակավայրերում վերածնական մշակույթին արձագանքող կամ թե վերածննդի գործիչների ուղեգծին հետևող ազատախոճ և իմաստասեր գրողներն ու նկարիչները:

Ռուսական կուլտուրայի պատմության հարուստ աննախնեում հայտնի Մաքսիմ Գրեկը իտալական հայտնի գործիչ Ալդո Մանուցիի հետ մոտիկ ծանոթ էր: Տիրականորեն իշխող ավանդության համաձայն, Իվան Ֆեոդորովը իտալական տպագրիչների բարձր արվեստը լավ էր ուսումնասիրել: Վերջապես նրա հրատարակությունների զարգանկարները կերտված էին, ինչպես նշվել է նորագույն հետազոտությունների մեջ՝ վենետիկյան նկարիչների զարդանկարների նման և ցուցադրում էին հումանիստ-նկարչին հատուկ նկարագրի հատկանիշները...

Ֆեոդորովի աստանդական կյանքի էջերը, նրա դժվարին պտույտներն ու թափառումները նույնպես նշանակալից փաստեր են: Զարմանալի չէ այդ ամենից հետո, որ բազմաթիվ սլավոնական տպարանների և վաղմի ուսական հայտնի ու մոռացված տպագրիչների ֆոնի վրա, այսօր ավելի ցայտուն կերպով է նկարագրվում մարտնչող և լուսավորիչ Իվան Ֆեոդորովի դիմաստվերը...

Առանձին անխուսափելի պատրանքներից չէին կարող ազատագրվել նաև հետագա դարերի պատմության նոր պայմաններում հիմնված տպարանների և հրատարակչական հիմնարկների ղեկավարները:

Հայտնի է, որ XVIII դ. առանձնապես մշակույթի բնավայրում իրական հեզեմոնը ցարական բռնակալությունն էր: Զգտելով ամեն կերպ ամրացնել ավատական-կալվածատիրական կարգերը, միապետական կառավարության ղեկավարներն աշխատում էին արդյունաբերական-տնտեսական շինարարության հետ միաժամանակ անհրաժեշտ թափ հաղորդել պետության հպատակների «դաստիարակության» գործին՝ արվեստի, գրականության, գիտության՝ համայն հոգևոր մշակույթի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքի միջոցով: Տպարանները և հրատարակչությունները այդ պատճառով պետք է գրավեին ցարական միապետության մեծագույն ուշադրությունը:

Սակայն նույն այդ նոր պատմաշրջանում մենք նշմարում ենք հասարակության շերտավորման հետևանքով կազմավորվող նոր խմբակների առանձին ներկայացուցիչների գիմաստվերները:

Այդ նոր զեմքերի դերը ավելի որոշակի կերպով նշմարելի է դառնում Պետրոս Մեծի և Եկատերինա կայսրուհու օրերին: Վերջինս, ինչպես հայտնի է, սիրում էր հանդես գալ «օրինակականության» և «լուսավորության» բարձր հոգևանավորուհու գերում, մշակել էր հատուկ դիրքորոշում ֆրանսիական իմաստասերների՝ Վոլտերի, Գրոտիի նկատմամբ, հրապարակել էր նույնիսկ գրական որոշ աշխատություններ: Ռուսական տպագրության պատմաբանները ժամանակին նշել են այդ կայսրուհու տիրակալության օրերին տպագրված թե՛ ինքնուրույն և թե՛ թարգմանական գրքերի դերը:

Սակայն նույն այդ կայսրուհու կարգադրությամբ ռուսական մշակույթի մի շարք ներկայացուցիչներ (Կրեչետով, Նովիկով, Ռադիշև) ենթարկվել էին հալածանքների: Բավական է միայն թեկուզ ընդհանուր կերպով թերթել գիտության պատմությանը նվիրված Պեկարսկու բովանդակալից հետազոտությունը կամ Գերնետի «Յարական բանտի պատմությունը», որպեսզի ականերե դառնա խոշոր ֆեոդալ-ճորտատերերի վրա հենվող այդ կայսրուհու վարքագծի իրական բնույթը: Կայսրուհին հիշեցնում և շեշտում էր, որ պետության բոլոր հպատակները պետք է ղեկավարվեն «օրինական» հեզեմոնի հրահանգներով: Միամիտ պատրանքով տարված նովիկովը խախտել էր ահա հենց այդ «պատվիրանը»: Հարավային Ռուսիայում՝ հայկական նոր-նախիջևան բաղա-

քում դասապարտվել էր կայսրուհուն սպասավորող Հովսեփ Արղուիթյանի դեմ պայքարող Գերեջանյանը...

Վերջապես կայսրուհու կարգադրությամբ կալանավորված գործիչների շարքերում տեսնում ենք ականավոր գիտնական-իմաստասեր Ռադիշևին, որի հայտնի «Ճանապարհորդությունը» դառնում է ալիստական-ճորտատիրական կարգերի դեմ ուղղված ցայտուն վավերագիր: Ռադիշևի կյանքի և գործի պատմությունը, ինչպես նաև նրա գիտական-իմաստասիրական, իրավագիտական և տնտեսագիտական մտորումները ցույց են տալիս, որ պաշտոնական «պատրիոտիկայի» զաղափարախոսության դեմ տակավին Ռադիշևի օրերին սկսվել էր ժողովրդի առաջավոր ներկայացուցիչների հետ կապված հեղափոխական հայրենասերների ավելի ու ավելի ուժեղացող շարժումը: Ռուսական տպագրության, ինչպես նաև գրականության պատմությանը էջերում կառավարական շքեղ գրքերի կողքին աչքի ընկնող տեղ են գրավում տակավին XIX դարի նախօրյակին տպագրված ըմբոստ այդ գործիչների աշխատությունները: Սովետական նորագույն բանասերները և պատմաբանները ժամանակին նշել են, որ Ռադիշևի հեղափոխական մտահայեցողությանը արձագանքող գործիչները կարող են նույնիսկ հիշատակվել որպես «ռադիշևականներ»:

Ռուսական տպագրության ցուցահանդեսի էքսպոնատներին մեջ ուշադրավ տեղ են գրավում նաև 1812-ի Հայրենական պատերազմի առթիվ ստեղծված բարձր զաղափարական պատգամներին արձագանքող բազմադան տպագիր հրատարակությունները: Գաղտնիք չէ այն, որ Պուշկինի և պուշկինյան լուսավոր համաստեղության ներկայացուցիչների ստեղծագործությունները հետազոտող բանասերները չեն սահմանափակվել Պուշկինի հետ կապված տպագիր հրատարակությունների ուսումնասիրությամբ: Նրանք մեծագույն ուշադրությամբ կանգ են առել Հայրենական պատերազմի պատմության, զորամասերի մասնակիցների, պատմազրական ելութերի վրա: Նույնը անհրաժեշտ է ասել ղեկաբերիստական շարժման և ղեկաբերիստական գրականության ուսումնասիրությանը նվիրված աշխատությունների մասին: Գեկաբերիստների դատավարության հայտնի ատենագրությունների սովորածավալ հատորների շատ էջերում իրենք ղեկաբերիստները, հարցաքննության ժամանակ, անհրաժեշտ են համարել կանգ առնել ոչ միայն հնօրյա գրքերի և հեղինակների, այլ նաև Հայրենական պատերազմի որոշ դրվագների վրա: ԳԱ կենտրոնական գրադարանի աշխատակիցների ջանքերով կազմակերպված ցուցահանդեսում 1812-ին նվիրված տպագիր գրքերից բացի ցուցադրվում են Ռիլենի «Մտորումների» ժողովածուն, Բեստուժենների, Վոլկոնսկայայի, Օդոևսկու, Կյուխելբեկերի, Պեստելի տպագիր նոր հրատարակությունները և ապա դրանց կողքին Գրիբոյեդովի հանճարեղ ստեղծագործությունը: Ռուսական տպագրության պատմության էջերն ուսումնասիրող բանասերը չի կարող հաշվի չառնել թե՛

⁶ Ճարիգմի «կրթական» մեթոդների բնութագրման համար, իհարկե, կարելի է շատ բնորոշ փաստեր հիշատակել: Մենք կարճանագրենք միայն մի վավերագիր տպագրության պատմության անցյալից: Պետրոս Մեծի կարգադրությամբ 1696-ին Կարիոն Իստոմինը տպագրել էր նկարազարդ այբբենարան և հենց այդ գրքում գետնից ծեծի-ֆիզիկական պատժի օգտակարության մասին 12 տողից կազմված ընդարձակ «բանաստեղծություն» «Розга ум острит, память возбуждает... целуйте розгу, бич и жезл лобзайте... и այլ... Տե՛ս Դ. Быкова և Մ. Гуревич. Описание изданий, напечатанных кириллицей, 1683—1725, М.—Л., 1958, էջ 59—60.

քաղմաթիւ սկզբնազրուորների (ղեկաբրիստ-գրեզների երկերը, մեմուարները, ղեկաբրիստների մասին հայտնաբերված արխիվային վավերագրերը կամ նորանոր գիտական ուսումնասիրությունները) և թե՛ Բազանովի (տիրասպառլյան կալանավոր Ռասկու մասին) կամ Նեչկինայի («Գրիբոյեզովը և ղեկաբրիստները», «Դեկաբրիստական ապստամբությունը») հանրահայտ գործերը: Պետք է ասել, որ արխիվային վավերագրերը և քաղմաթիւ նոր ուսումնասիրություններ լիովին հաստատել են լենինյան կտրուկ դիտողության տեսական մեծ արժեքն ու ղեկավար նշանակությունը: Տպագիր հրատարակությունների նշանակալից հանրագումարը ցույց է տալիս, որ ցարական կառավարության ուղեգծին համակերպվող կամ հարող գործիչների կողքին, անցյալում աչքի ընկնող դեր են կատարել «ազնվական հեղափոխականների» պատգամներին ձայնակցող շատ ավելի քաղմաթիւ գործիչներ, քան կարելի էր ենթադրել: Ժամանակին — տակավին նախահեղափոխական տարիներին Վ. Ի. Լենինը «Գերգենի հիշատակին» նվիրված իր ուսումնասիրության մեջ շատ որոշակի կերպով քաջահայտել է «ազնվական հեղափոխականներին» և ապա «հեղափոխական դեմոկրատներին» պատմական դերը: Ելնելով հենց այդ դիտակետից ուսական տպագրության պատմության էջերն ուսումնասիրող գործիչները կարող են ճշգրիտ կերպով մոտենալ տպագիր գրքի պատմական զարգացման հիմնական փուլերի լուսաբանությանը և նկարագրությանը:

Վ. Ի. Լենինի կողմից առաջադրված դիտակետը՝ նշելով պատմական երեք փուլերի հատկանիշները, հնարավորություն է տալիս նշմարել թե՛ ավատական-կալվածատիրական կարգերի ընդերքում կաղմավորվող հետագա նոր պատմական ֆորմացիայի նախնական տարրերն ու ցուցանիշները և թե՛ ազնվական հեղափոխականների և հեղափոխական դեմոկրատների միջև նկատարժան սահմանագծի մոտ կանգնած նոր գաղափարախոսների դիմաստվերները: Սկզբնական էտապում մեծ չի եղել Բելինսկու, Գերցենի, Դոբրոլյուբովի, Չերնիշևսկու հետևորդների, ինչպես նաև ընթերցողների ընդհանուր թիվը: Բայց դա ամբակուռ ու ծավալվող մեծ հոսանք էր, որ, իհարկե, ավելի ուժգին կերպով էր կապված ժողովրդի լայն շարքերի հետ: Այդ տեսնում և արձանագրում էին Դոբրոլյուբովն ու Չերնիշևսկին:

Նույն այդ ժամանակաշրջանում Վ. Բելինսկու հայտնի «Նամակը Գոգոլին» քննարկվում էր ուսանողական գաղտնի ժողովներում: Դոբրոլյուբովի «Հայր Գավազին» լույս է տեսել միջնադարյան տարիներին, իսկ հայերեն թարգմանությունը ժամանակին տպագրվել է հայ ուսանողների նախաձեռնությամբ: Լոնդոնյան տպարանը հնուր էր Պետերբուրգից, բայց լոնդոնյան վտարանդիների՝ Գերցենի և Սգարևի հեղափոխական «Կոլոկոլի» էջերում հնչող ազդանշանները լավում էին անգամ հեռու մերձվողյան վայրերում:

Լոնդոնյան «Պալլադնայա զվեզդայի» էջերում տպագրված էր Սգարևի

հեղափոխական-բանտարկյալի և բանտային պահակի մասին կերտված դիտող-բանաստեղծությունը, որ երգվում է թե՛ 70—80-ական թվականներին և թե՛ 1905-ի հեղափոխության նախամուտին, որպես հեղափոխական երգ:

«Սովրեմեննիկի» էջերում տպագրված այն հողվածները, որոնք նվիրված էին իտալական ազատագրական շարժումներին և լեզնեզար ժողովրդական հերոսին՝ Գարիբալդին, անգամ հեռավոր կովկասյան վայրերում հնչում էին որպես բարձր գաղափարական պատգամներով հագեցված, իմաստալից ակնարկներ...

Այսպես էր հասարակական իրականությունն ու առանձնապես Ռուսիայի երկու մայրաքաղաքներում նշմարվող հասարակական-մտավոր մթնոլորտն ու մտայնությունն այն օրերին, երբ Փարիզից ստացված «Երկրագործության» անլեզալ հայերեն հրատարակությունը կարդում էին Դոբրոլյուբովի և Չերնիշևսկու հայ ընթերցող ուսանողները ու ակնածանքով և խորունկ հարգանքով երգում ազատությանը նվիրված Մ. Նալբանդյանի բանաստեղծությունը:

Ռուսական տպագրության 400-ամյակին նվիրված օրերին Ռադիշևի գիրքը, Պուշկինի և Գրիբոյեզովի ստեղծագործությունները, ղեկաբրիստների կյանքի և գործի էջերը, լոնդոնյան վտարանդիների՝ Գերցենի և Սգարևի «Կոլոկոլի» հեղափոխական պրոպագանդը, ազատասեր և բմբոստ երգերը, ժողովրդի կաղմավորվող նոր հորձանքներին արձագանքող տպագիր խոսքն ու տպագիր գրքերը պետք է հիշատակվեն, որպես հին աշխարհի և հին կարգերի դեմ կռվի ելնող ուս ժողովրդի և նրա հետ եղբայրական կապերով միացած հնօրյա Ռուսիայի բոլոր ազատասեր ժողովուրդների արթնացման և հեղափոխական ինքնագիտակցությանը նպաստող կարևորագույն ազդակներ:

Ես կանգ չեմ առնում տպագիր այդ հրատարակությունների մեջ նշանակալից տեղ գրավող գիտական հրատարակությունների՝ Բուտլերովի, Մենդելևի, Պիրոգովի, Սոֆիա Կովալևսկայայի, Տիմիրյազևի, Սեչենովի և շատ ուրիշ այն գիտնականների տպագիր աշխատությունների ու գրքերի վրա, որոնք անգամ ծանրագույն օրերին ամբողջում ու տոկունություն են հաղորդել հին աշխարհի սև ուժերի դեմ ուղղված ազատագրական, հումանիստական մեծ արշավին...

Անտեղի չէր լինի գուցե երկու խոսք ասել այն տպարանների մասին, որոնք հին օրերին, Ռուսիայի սահմաններում ապրող ժողովուրդների կյանքի և պատմության մասին, հրատարակել են զանազան գրքեր և ժողովածուներ: Դա կարևոր և միևնույն ժամանակ բարդ թեմա է: Եթե մենք ուշադրությամբ մոտենանք այդ թեմայի ուսումնասիրությանը, կտեսնենք, որ ժամանակաշրջանի և հասարակական հոսանքների ազդեցության կնիքը նշմարվում է շեշտված հրատարակությունների մեջ:

Այսպես, օրինակ, կաղարյան ճեմարանի կամ Ներսիսյան թեմական դրպ-

ըրոցի հրատարակությունները, առանձնապես պատմագրությունն ուսումնասիրողների համար կարևոր նշանակություն ունենին:

Միևնույնը կարելի է ասել նաև առաջին իմպերիալիստական պատերազմի շրջանում հրատարակված «հայկական» կամ «կովկասյան» թեմատիկա շոշափող ուսանելի ժողովածուների կամ պարբերականների մասին: Նույնը հնարավոր կլիներ նշել նաև հայ ժողովրդի անցյալին, մշակույթին, պատմությանը նվիրված զանազան ուսանելի հրատարակությունների մասին: Կարելի է, օրինակ, կանգ առնել XIX դարի 20-ական թվականների թեկուզ հենց Արզանովի նկարազարդ մեծադիր «Հայոց պատմության» վրա, որի շատ լուրահատուկ զարդանկարներն անգամ կարող են աղբյուրագետների ուշադրությունը գրավել, կամ էլ հայտնի Արարատսկու մեմուարների վրա, հետագայում տպագրված ականավոր իրավագետ-հրապարակագիր Զանդյանի շատ նշանակալից ժողովածուի, վերջապես 1914-ի պատերազմի օրերին Վ. Բրյուսովի խմբագրությամբ հրատարակված «Հայաստանի պոեզիայի» վրա: Մատենագրության պրոբլեմները ուսումնասիրողներն, իմ կարծիքով, պետք է նշեն նաև մարքսիզմ-լենինիզմի անվանի հայ տեսաբանների աշխատությունների հրատարակությունները (Ստ. Շահումյան, Ս. Սպանդարյան, Բ. Կոտեչյանց, Ա. Մյասնիկյան) և ապա հայ կլասիկ գրագետների ուսանելի բազմազան թարգմանությունները:

Ես հնարավորություն չունեմ այսօր կանգ առնել ուսական տպարանների անմիջական ազդեցության ներքո կազմակերպված այն նախահեղափոխական տպարանների վրա, որոնք ժամանակին տպագրել են նաև հայերեն զրբեր: Կուզենայի միայն հակիրճ խոսք ասել նման բնորոշ մի հրատարակության մասին: Ես նկատի ունեմ հայ մշակույթի անվանի ներկայացուցիչներից մեկի՝ «Հայկական քնար» գրքի և ապա կովկասագիտական հնօրյա բերլիոգրաֆիական ժողովածուի հեղինակ Մ. Միանսարյանցի ուշադրավ մի գիրքը: Ընթերցողների լայն շարքերին այդ գիրքը (լույս է տեսել 1872-ին) համեմատաբար քիչ է հայտնի: Գրքի վերնագիրն է «Կանոնավոր ու վայելուչ գրություն պատմությունն ու տեսությունը»: Տիտուլային էջի ցածի մասում տպագրված է Ս. Պետերբուրգ, Գոլովինի տպարանում, հեղինակի տառերով տպած (գիրքը նկարազարդ է): Երբ թերթում ենք այդ գիրքը պարզվում է, որ Մ. Միանսարյանցը տակավին 60-ական թվականներին ցանկացել է պատրաստել «Կանոնավոր ու վայելուչ գրության օրինակներ»: Մանրամասնությունների վրա ես՝ նկատի ունենալով իմ ակնարկի սահմանափակ էջերը, չեմ կարող ծանրանալ:

Անհրաժեշտ է միայն նշել, որ ժամանակին Մ. Միանսարյանցը շատ մեծ աշխատանք է կատարել, բանակցություններ է վարել բազմաթիվ արևմտյան մասնագետների և մասնավորապես անվանի հայ լեզվագետ Ա. Այտրյանի հետ: Հետագայում նա ուղևորվել է Լայպցիգ, ուր «պարապել է», ինչպես ինքն

է հաղորդում, երեք շաբաթ, Լայպցիգում Բրոկհաուզի մոտ», գերմանացի վարպետի հետ (էջ 115—116): Քիչ հետո մենք կարդում ենք հետևյալ տողերը. «Երբ որ գրած գաղափարը քարի վրա փորվեցավ, մեզ ուղարկում էին փորելու, որը կրկին և կրկին ուղղելով դարձուցանում էինք Լայպցիգ ուղղելու և նորից մեզ ուղարկելու»:

Հսկայական աշխատանք է կատարել Մ. Միանսարյանցը տպագրության համար անհրաժեշտ և հարմար տոների, տեխնիկայի ամենամանրակրկիտ ուսումնասիրության համար: Լուսավորության ու կրթության գովքն է նա երգում և միաժամանակ առաջարկում է հաշվի առնել մշակույթի անվանի ներկայացուցիչների պատգամների նշանակությունը: Նա անհրաժեշտ է համարում նույնիսկ հիշատակել Ալբրեխտ Դյուրերի աշխատանքները: Տպագրության ու տեխնիկայի հարցերի վրա ծանրանալով, այնուամենայնիվ, նա անուշադրության չի մատնել գաղափարախոսական պրոբլեմները և մեծագույն ուշադրություն է նվիրել գաղափարական-դաստիարակչական խնդիրների լուսաբանությանը: Բնորոշ է նաև այն, որ գրքի ու տպագրության աթիվ ունեցած հետազոտությունների մեջ հարեանցի կերպով նա շոշափել է նաև կարևոր ուրիշ հարցեր, միշտ ջանալով մոտենալ քաղաքացի-հայրենասերի վարքագծի բնութագրման 60-ական թվականների ուսական առաջավոր գործիչների դիրքերից: Հրահանգելով ուսումնասիրել հայրենի ժողովրդի լեզուն, մշակույթը, պատմությունը, Մ. Միանսարյանցը հայ երիտասարդներին խորհուրդ էր տալիս զբաղվել ֆիզկուլտուրայով, յուրացնել բարձր բարոյական սկզբունքներ, կազմակերպել «ընկերություններ»: Ինքնին արդեն պարզ է, որ ժամանակաշրջանի «լեզալ» գրելաձևին հատուկ երկպառակ «Եզոպոսյան» ոճի իսկական իմաստը լավ էր ծանոթ հայ առաջավոր այն ընթերցողներին, որոնց մեծամասնությունը նույն այդ օրերին կարդում էր ուսանելի գրքեր և պարբերականներ: Դիմելով դաստիարակչական աշխատանք կատարող ուսուցիչներին Միանսարյանցը դիտավորությամբ ընդգծում էր «արդարագատություն» և «վեհանձնություն» նշանակությունը, գրելով հետևյալը. «Անհրաժեշտ է անբիծ պահել իր սեփական մարդկային պատիվը... գգուշանալ վիրավորել, դիպչել այլոց մարդկային պատվին»⁷: Ակտիվ պրոպագանդիստի դիմաստվերն ենք նշմարում, երբ կարդում ենք լրտեսների, բանասարկուների, խաբեբանների, ստախոսների, սնապարծների և ընդհանրապես «ամենայն անպիտան անձանց» դատափետմանը նվիրված կտրուկ դիտողությունները: «Պիտո է աշխատել մեծացնել և զարգացնել բոլոր հայոց ազգի ապագա սերունդը» գրում է «վեհանձնական զգացմունքները» գրվատող հրապարակագիրը:

7 Միանսարյանց, Կանոնավոր և վայելուչ գրության պատմությունն ու տեսությունը, Ս. Պետերբուրգ, 1872, էջ 80—81:

Բավական է միայն նկատի առնել այն, որ ուսական մամուլի էջերում նույն այդ օրերին պաշտպանվում էին արևելյան բուսապետության պայմաններում ճնշված ու շահագործվող ժողովուրդները, իսկ 80-ական թվականներին Պետերբուրգի հայ ուսանողների նախաձեռնությամբ քննարկվում էին օսմանյան սովետական ղեկավարության և լեհական վիպագիրների մարտաշունչ երկերը, որպեսզի ավելի բացահայտ դառնա 70—80-ական թվականների թե՛ մտավոր մթնոլորտը և թե՛ հասարակական նոր տրամադրությունների ազդեցությունը շատ ուրույն կշիռը: Անհրաժեշտ է նշել այն էլ, որ Միանսարյանցը իր մտորումները տպագրել է դիտավորությամբ «անմեղ» և միանգամայն «լեզալ» հարցերին նվիրված մի աշխատության մեջ՝ համակված խոհուն հեռաձայն գործչին հատուկ հայեցությամբ:

Այս ամենին ավելացնենք նաև այն, որ ջանալով արձագանքել իր օրերի «արդիական» ու հրատապ խնդիրներին, նա աշխատել է գրել պարզ ու գյուրամատչելի լեզվով: Պոլեմիկա էլ կար նրա գրքում — ուր առանձին հատվածներին կցված են տղետ ու հետամնաց, բանասրկու ու երկերեսանի մարդկանց դատափետմանը նվիրված շատ իմաստալից ակնարկներ: Ես նկատի ունեմ ոչ այնքան բացահայտ քննադատական դիտողությունները, որքան հայ ժողովրդական ստեղծագործությունների հարուստ զինանոցից քաղված դիպուկ և սուր առածները.

Իմաստունի հետ քար կրի
Հիմարի հետ փրավ մի ուտիլ:

Քրի կտրածը կը սաղանա,
Լեզվինը չի սաղանա...

Իշի քացուցը բեղամաղ մի ընիլ:

Միանսարյանցի աշխատության թե՛ բովանդակությունը, թե՛ շատ յուրահատուկ կառուցվածքը ցույց է տալիս, որ իր գիրքը կազմելու ժամանակ նա հաշվի է առել 60-ական թվականների առաջավոր ուս հրապարակագիրների գրելաձևի ու պայքարի մեթոդները...

70—60-ական թվականներին շատ որոշակի է դառնում հասարակական նոր ուժի շորթորդ դասի առանձնահատուկ ղեմքն ու դերը: Նույնիսկ բուրժուական լիբերալ մամուլի նարոդնիկական ուրույն հովերով համակված աշխատակիցներն ու թղթակիցները ստիպված են լինում արձանագրել բանվոր դասակարգի ակտիվությունը ցուցահանող ղեպքերն ու փաստերը: Մարքսիզմի ականավոր տեսաբան Գ. Վ. Պլեխանովը «Բանվոր դասակարգը հեղափոխական շարժման մեջ» մեմուարներում կանգ է առել իր ծանոթ բանվորներին հիրավի հատկանշական երանգների վրա: Կավ են հայտնի նաև մեր կուսակցության մեծ հիմնադիր Վ. Ի. Լենինի շատ նշանակալից բնութագրական ու-

տողությունները պրոլետարիատի ականավոր հեղափոխական ներկայացուցիչների՝ Բաբուշկինի, Շելկունովի և ուրիշ հայտնի ղեմքերի մասին⁸:

Բանվորական խմբակները և կազմակերպություններն ավելի մեծ ակտիվություն են բացահայտում 80-ական թվականներին: Երբ հայտնի են դառնում արտասահմանում (Ժնև—Շվեյցարիա) կազմակերպված «Աշխատանքի ազատագրման խմբակի» ծրագրային-տեսական պատգամները, նոր թափ է ստանում մարքսիզմի գաղափարախոսների արշավն ու պայքարը՝ ընդդեմ իդեալիստական իմաստասիրության և առանձնապես նարոդնիկության «տեսաբանների»: Ռուսական տպագրության պատմության էջերում առանձին տեղ են գրավում թե՛ նոր հոսանքների պարբերագրերը, լեզալ և անլեզալ հրատարակությունները, և թե՛ մանավանդ մարքսիստների և նարոդնիկների գաղափարական բախումները ցուցահանող տպագիր գրքերը: Պլեխանովի հայտնի տեսական ուսումնասիրությունը, նշել է ժամանակին Լենինի ականավոր զինակիցներից մեկը, միանգամայն անակնկալ կերպով «կայծակի նման պատեհց մեր հորիզոնը և հնչեց, որպես առույզ մի կոչ» ... Քիչ հետ Բոնշ-Բրուեիչը պատմում է, որ այդ գիրքը խոշորագույն երևույթ էր անցյալում և մեծ ազդեցություն էր թողել հայրենակցական միությունների զանազան խմբակցությունների, կազմակերպությունների անդամների վրա: Բելտովի գիրքը թեև պարզ էր բացահայտ դիրքորոշում բռնել բախվող հոսանքների նկատմամբ⁹:

Հետագայում այս կամ այն շափով շեշտված գաղափարական պրոբլեմները նկարագրվել կամ շոշափվել են գեղարվեստական գրականության մեջ: Վերեսակի, Ուսպենսկու, Չեխովի և ուրիշ գրողների երկերում կարելի է գտնել թե՛ նշանակալից էջեր և թե՛ յուրահատուկ արձանագրությունների կամ ակնարկների նման նկարներ:

Իննսունական թվականներին լեզալ պարբերական մամուլի էջերում տպագրված բազմաթիվ հետազոտություններն ու հոդվածները կամ ուսումնասիրական էքսկուրսները ցույց են տալիս և նկարագրում հակամարտ և ներհակ մտավոր հոսանքների կարևորագույն հատկանիշները: Քիչ առաջ հիշված Բոնշ-Բրուեիչը Ժնևյան իր մեմուարներում գրում է, որ Լենինի հռչակավոր տեսական աշխատությունը՝ «Ինչ անել» ուսումնասիրությունը ստիպել է յուրաքանչյուր գործչի ճշտիվ որոշել իր սեփական գիրքը կուսակցության շարքերում և շատ ավելի մեծ տպավորություն է թողել, քան Բելտովի գիրքը: Միաժամանակ ծանրանալով հին «Իսկրայի» վրա Բոնշ-Բրուեիչը

⁸ Պլեխանովի այդ տարիների աշխատությունների մեծ արժեքը նշել է Վ. Ի. Լենինը նաև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո:

⁹ Бонч-Бруевич, Пройденный путь, Избр. сочинения, т. II, М., 1961; стр. 153.

ընդգծում է, որ անլեզալ և հեղափոխական այդ լրագրում գետեղված մեծ ղեկավարի տեսական խորունկ հողմածները մերկացնելով «Բունդի» և նման ուրիշ կազմակերպությունների անհանդուրժելի դրույթները, օգնում էին մարքսիստներին և նպաստում բոլոր հակամարքսիստական հոսանքների և մասնավորապես նացիոնալիզմի դեմ մղվող զաղափարական պայքարի օրերին:

Լենինի բազմաթիվ գիտական ուսումնասիրությունները՝ «Նարոդնիկության տնտեսական հիմնավորումը», «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում», «Պետություն և հեղափոխությունը» օգնել են հեղափոխական մարքսիզմի զարգացմանը և ուժեղորեն նպաստել կոմունիստական կուսակցության շարքերի ամրացմանն ու կոփմանը:

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը համայն երկրազնդի միակ կուսակցությունն է, որ իր թե՛ ծագման առաջին շրջանում, թե՛ հետագա գործունեության ընթացքում մեծագույն ուշադրություն է նվիրել գիտության և գիտական պրոբլեմների ուսումնասիրությանը և կառչած մշակույթի բարձր զաղափարական պատգամներին, անգամ, գործնական և առօրյա իր աշխատանքն առաջ է տարել՝ զինված գիտության տեսական ամրակուռ սկզբունքներով:

Այսօր, երբ հիշվում են ուսական տպագրության առաջին հիմնադիրները և կարևորագույն վավերագրերը, շի կարելի մոռանալ, որ Սովետական Միության բոլոր եղբայրական ժողովուրդները յուրացնելով անցյալի մշակույթի մեծ ներկայացուցիչների ժառանգությունը, աշխատել են ավելի մեծ թափ հաղորդել ազատության և խաղաղության, բոլոր ժողովուրդների բարեկամության և մեծ համաշխատակցության՝ բարձր զաղափարական սկզբունքների վրա խարսխված նոր, հեղափոխական և կոմունիստական կարգերի ամրացման համար տարվող մեծ աշխատանքին ու գործին: Լենինի դրոշի ներքո է սկսվել սովետական ժողովուրդների հերոսական պայքարը՝ ընդդեմ դաժան կարգերի, դաժան բռնակալների: Այսօր Սովետական Միության և կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, Լենինի դրոշի ներքո է տարվում նաև այն հերոսական և տոկուն աշխատանքն ու շինարարությունը, որ մղվում է ընդդեմ պատերազմի հրձիգների, — հանուն լենինյան պատգամների ճշգրիտ կիրառման, խաղաղության և կոմունիզմի, ժողովուրդների բարեկամության:

400 ЛЕТ РУССКОГО КНИГОПЕЧАТАНИЯ

Резюме

В докладе, прочитанном на заседании научной сессии, посвященной 400-летию русского книгопечатания, отмечены страницы истории печати

и ведущая роль книги в культурном строительстве великого советского народа. Русская книга — один из могучих рычагов борьбы за гуманизм и братство народов, за мир и коммунизм.

Научные труды и разыскания историков русской культуры, книги, просвещения (А. Зернова, М. Тихомиров, Р. Коляда, М. Щепкина, Лихачев, Сидоров и др.) внесли богатейший вклад в дело изучения и освещения как стародавних славяно-русских и «безвыходных» российских изданий, так и жизни и деятельности одного из замечательных зачинателей русского книгопечатания — Ивана Федорова. Основанные им в Москве (1564 г.) и других городах (Острог, Львов) типографии, изданные им учебники и книги, гравюры-заставки и орнаменты книг, шрифт и все оформление, наконец, памятные записи и приложенные к московскому и львовскому изданиям «Апостола» послесловия выявляют черты выдающегося просветителя и активного работника культуры. Данные и факты, приведенные в трудах русских исследователей, показывают, что И. Федоров имел жестоких врагов в рядах духовной и светской олигархии. Реакционные преследования против считавшегося «еретиком» Федорова, по-видимому, и вынудили его переезжать из города в город (Москва, Острог, Львов). В «послесловиях» Федорова мы видим прежде всего активного и просвещенного издателя-гуманиста, стойкого и непреклонного деятеля культуры. Приложенное к тексту Львовского издания «послесловие» Федорова является замечательным памятником литературы, который и сегодня может привлечь внимание самого взыскательного читателя.

И. Федоров был не только выдающимся основателем типографии, печатником-художником, редактором и реформатором печатной книги. Он по праву вошел в историю русской культуры как работник, «в деятельности которого дан первый точный контакт русского искусства с искусством Возрождения» и который заслужил имя «великого мастера, труженика и героя книги» (А. А. Сидоров).

Нельзя считать случайным и указанные в трудах русских ученых многочисленные данные и факты о преследованиях и репрессиях, направленных против выдающихся вольнодумцев-просветителей и борцов за новую, светскую, прогрессивную и революционную книгу и культуру (Новиков, Радищев и др.), за освобождение народных масс от гнета и кабалы. Достаточно вспомнить яркие страницы истории русской культуры — хорошо известные факты о роли Пушкина и пушкинской плеяды, о декабристах-литераторах, позже — о лондонских эмигрантах —

Герцене и Огареве, о руководителях «Современника» — Добролюбова и Чернышевском, еще позже — об историческом вкладе, внесенном в историю революционной мысли русскими марксистами-ленинцами, выдающимися учениками-соратниками В. И. Ленина. Не удивительно поэтому, что труды выдающихся работников культуры и строителей КПСС и Советского Союза, советской науки, искусства и литературы оказали и оказывают значительное влияние на культуру всех народов нашей великой родины — ряды строителей которой под знаменем КПСС ведут борьбу за дружбу и мир, за ленинские заветы и коммунизм...

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր»,
Հասարակական գիտություններ, № 4, 1964:



Ա Ն Ձ Ն Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր

- Մարքս Կ. 107, 111, 234, 316, 385, 502, 525, 530, 545
 Էնգելս Ֆր. 111, 255, 316, 385, 525, 530, 545
 Լենին Վ. Ի. 6, 7, 10, 12, 16, 18, 19, 25—27, 31, 32, 40, 53, 54, 74, 76, 77, 79, 80, 91, 93, 95—97, 100, 101, 172, 176, 186, 207—209, 223, 316, 317, 360, 381, 385, 387, 388, 418—420, 424, 428, 439, 450, 479, 480, 484, 487, 489, 490, 498, 499, 509, 515, 525—527, 529, 530, 542, 545, 556, 560—562, 564
- Արակում Փ. 163
 Արեղյան Մ. 254, 269, 442, 497
 Արդուրաճման Ջ. 234
 Արտվյան Խ. 345—347, 352, 445, 446
 Ազաթանզեղոս 257, 258, 295, 298, 329
 Ազաճյան Ա. 34
 Ազելֆի 270
 Ազիզբեկով Մ. 28
 Աթարբեկյան Լ. 58
 Աթարբեկյան Գ. 529, 531, 532, 543, 544
 Աթարբեկյան Օն. 529
 Ալբերտի 495
 Ալբրեխտ Գյուրեր 548
 Ալեքսանդր, կայսր 134, 143, 144, 147, 148, 176, 245
 Ալիխանով 538
 Ալիշան Ղ. 298
 Ալիշեր Նավոյի 230—245
- Ալսոյաճյան Ա. 315
 Ախվերդյան Գ. 369
 Ախունզով Ռ. 39
 Ակսակով 122, 453
 Ազարեկյան Մ. 442
 Աղայան (Աղայանց) Ղ. 345—347, 352, 431, 442
 Աղաջանյան Ստ. 494
 Աճառյան Հր. 497
 Ամիրբեկյան Վ. 4
 Ամիրխանյան Շ. 524
 Ամիրյան Ա. 31, 32
 Ամսն 73
 Ամփիլոս (Ամփիլոսոս) 270
 Ալվազովսկի Գ. 313, 363, 364, 376
 Ալվազովսկի Հովհ. 24
 Այսրենյան Ա. 558
 Անակրեոն 326
 Անահիտ 294
 Անանիա Շիրակացի 265, 337, 500
 Անանյան Վ. 465
 Անդերսեն-Նեքսի 77, 105, 153
 Անդրեևիչ-Սուրովյով Ե. 442
 Անդրեև Լ. 51, 168
 Անիչկով Ե. 104, 105
 Անիչկովներ 104
 Աննենկովա (Պոլինա Գերլ) 183
 Առաքելյան Ս. 494
 Ապոլլոն Տիանցի 257
 Ասատրյան Աս. 307

Ցանկերը կազմեց՝ Ա. Գ. Ավագյանը

Ասատուր Հր. 312, 315
Ասլանյան Ստ. 312
Աստղիկ 291
Աբազի Մ. 491
Արամազդ 298
Արամյանց 342, 343
Արարատուհի 558
Արզանով 558
Արինա Ռադիոնովնա 143
Արիս 262
Արիստո 334
Արիստոֆանես 326
Արիսանդելյակի 195
Արիլիով (Արքիլոբոս) 412, 413
Արծրունի Գր. 311, 347, 350
Արծրունի Մ. 284
Արզուբյան Հ. 355, 555
Արնուդ Բրեշիացի 325, 336, 338
Արշակ, թագավոր 258, 288, 289, 328, 504
Արսեն 226, 248
Արտավազդ Աշոցա 284
Արցիբաշև 104, 229
Արցիբաշևներ 103
Արփարյան Արփ. 443, 447
Աքակով 171
Աֆանաս 390

Բաբաջանյան 376
Բաբուշկին 561
Բագրատունի Ս. (Պատրիկ) 284
Բազան 97
Բազանճյան Ս. 312
Բազանով 145, 146, 556
Բազյան Ս. 307
Բաժենով 495
Բալարանով 378
Բալզակ Օն. 48, 80, 81
Բալուխատի 118
Բախ Ի. 51
Բակունին 361
Բակուր 299
Բաղդասարյանց Տ. 538
Բալմոնտ 428, 481
Բալուն Ջ. 69, 71, 106—119, 171, 226, 357, 409, 530, 531
Բանդելլո 313

Բասին 28
Բաստիա 319
Բարբեժան 265
Բարբիս Օզ. 122
Բարտոլո 231
Բեգնի Գ. 481
Բեթհովեն Վ. 51, 527
Բելինսկի Վ. 165, 168, 169, 172, 173, 190, 316, 359, 362, 371, 379, 427, 442, 446—447, 461, 556
Բելլի 165
Բելին Ջ. 333
Բելշիկով 170
Բելոցերկովսկի 378
Բելոուսով 155, 156
Բելտով տն՝ս Պլեխանով
Բեկարիա 141
Բեկետով 248, 393
Բեկոն 336
Բեհզադա 234
Բելլ Ա. 110
Բելլիս 229, 230
Բենկենդորֆ 142, 147, 148, 164
Բենվենուտո Չելլինի 333
Բեստուժև 146, 353
Բերանժե 366
Բերբերյան 442
Բերգսոն 85
Բերնշտեյն Ա. 49
Բերտելլո 236, 237, 242
Բիզե ժ. 50
Բիլկիշ 154, 155
Բինայի 234
Բիշեր Ստոու 190
Բլազոյ 130
Բլազոն 542
Բլոկ ժան-Րիշար 80, 81
Բլալիկ 37
Բոգդանով 38, 96, 97, 526
Բոզլեր 484, 488
Բոկլ 357, 367
Բոկուվ 131
Բոնապարտ Ն. 143, 328
Բոնշ-Բրուսիշ 561
Բոսկին 191, 359, 386
Բրելաման 26

Բրիկ Լ. 525
Բրյուլով Կ. 125
Բրյուսով Վ. 69, 426, 471, 474, 476, 489, 512, 558
Բրոկա 251, 252
Բրոկհաուզ 559
Բրոնեկո 333
Բուլրա Տ. 159, 160
Բուլզարին 164
Բունին 103, 204
Բուլերով 557
Բուրժե Պ. 201
Բուրենին 200, 352
Բուրսով 170

Գաբելորն Ա. 38
Գաբրիելյան Հ. 83, 84, 86, 87, 89—91
Գալիլեո Գալիլեյ 79, 369, 547
Գալին 464
Գալույան Գ. 10
Գանտե 336
Գավացցի 395
Գարիբալդի Ջ. 360, 367, 395, 557
Գարին 455
Գարշին 205, 206, 209
Գարոֆալո 73
Գե 61
Գելդեն 176
Գեսիոզ (Հեսիոզոս) 412
Գերբերշտեյն 68
Գերենտ 353, 554
Գերվինուս 357
Գերցեն Ա. 123, 135, 136, 165, 190, 316, 317, 356—361, 366, 373, 374, 377, 379, 386, 388—390, 392, 446, 447, 485, 530, 556, 557, 562
Գիրերտի 333
Գիրբոն 264
Գիլո 322
Գիլասեղյան 232
Գիպպիուս Զինաիդա 419
Գիրլանդյո 71
Գլադկով 451
Գյոթե Վ. 69, 75, 79, 513, 514
Գյուրջյան Հ. 494

Գեունյան Լ. 24
Գորինո 73
Գոգոլ Ն. 61—62, 154—168, 190, 207, 227, 411, 441, 442, 482, 489, 492, 524
Գուդոնի 492
Գուլովին 558
Գուլովյա 538
Գուլցե 444
Գողթան Ս. 284
Գոմպերց 257
Գոյա Ֆր. 527
Գոնչարով 391
Գոտին Ք. 68
Գորբատով Բ. 452—456, 459, 464
Գորկի Մ. 7, 11, 12, 24, 42, 52, 56, 61, 62, 69, 72, 76—82, 96, 99, 103, 105, 106, 117, 118, 148, 154, 163, 203—206, 209, 221, 223, 409, 414—424, 426, 431, 432, 450, 451, 453, 454, 483, 489, 490, 492, 531, 537, 553
Գվարենցի 495
Գվերացի 444
Գվիլիարդինի 334
Գրաժան 544, 545
Գրանովսկի 368
Գրաքիոս եղբայրներ 509
Գրեանինով 51
Գրիբոյեզով Ա. 190, 357, 555, 557
Գրիգոր 258, 267
Գրիգոր Մազիստրոս 266, 336, 500
Գրիգոր Նազիանացի 261
Գրիգոր Նարեկացի 500
Գրիգոր Նյուտոն 261
Գրոս 527
Գրոմ-Գրոմալլո 248
Գուրանով 28

Գազնկելիանի 534
Գալամբեր 130
Գալտանց Խ. 67
Գանտե Ալիգիերի 333, 334
Գավիթ Ալավկա որդի 501
Գավիթ Անհաղթ 329
Գարբիլյան 84
Գարգոմիժսկի Ա. 51
Գարվին Զ. 191, 363

Գերադոքի-Մակրիևի 447
Գեշիկ 242—244
Գեմիրճյան Գ. 69, 491, 492, 512
Գենիկին 80, 515
Գեանիցյի 416
Գերեշանյան 355, 555
Գիդրո Գ. 80, 130, 133, 322, 554
Գիկկենս Զ. 159, 307, 319, 431
Գիոնիսոս 292
Գմխարին 445
Գլուշեն 269, 270
Գլուրեր Ալբ. 70, 126, 333, 527, 559
Գորբուլուրով Ն. 120, 123, 143, 152, 169—170, 172—175, 182, 190, 316, 360, 362, 371, 379, 384—396, 402, 403, 427, 441, 447, 530, 556, 557, 564

Գոնատելլո 333
Գոստոսկի 227, 400, 431, 448
Գրեպեր 335, 367
Գունդիշ Օլեգո 544

Եզրին 170
Եզնիկ Կողբացի 259—261, 265, 269, 270, 329
Եզովպոս 446
Եկատերինա, կայսրուհի 130, 134, 138, 554
Եդիշեն 260, 298, 504
Եմերսոն 412
Եսայան Զ. 309
Երամյան Կ. 309
Երիմովսկի 407
Եվզենն-Մաքսիմով 170, 171, 403
Եփրեմ Սիրին 293

Ջազուկին 160
Ջախարին 394
Ջախարով 495
Ջան-Աղդին-Վասիֆ 233
Ջարգարյան 28
Ջարյան Ն. 150, 491
Ջղորնով 403, 404
Ջենալի Խ. 59
Ջենոն 326
Ջենոթ Գլակ 257, 329
Ջերնովա Ա. 548, 563
Ջինգեր 156
Ջուլա էմ. 201, 202, 212, 348

Ջոտով 133
Ջորյան Ստ. 491, 512
Ջինն 28, 54

Էլիավա Շ. 21
Էլլիս 418, 419
Էլլին 71
Էմար Գ. 66
Էպիկուր (էպիկուրես) 319, 326
Էսքիլես 326, 511
Էվկլիդես 334
Էվրիպիդես 297, 299, 326, 507
Էրիսման 191, 195
Էրտել 61, 204—206, 209

Թագվորյան Ս. 358
Թաղևոսյան 494
Թալես 326
Թադիսիան Մ. 380
Թամանյան Ալ. 495
Թեոդորոս 267
Թեոդորոս Մոպուսեստացի (Մամեստացի) 256, 262, 265, 268

Թեոֆոլյան 83
Թերզիրաշյան Վ. 315
Թերլեմեզյան Փ. 494, 522
Թերեյան Վ. 522
Թորգոմ 273
Թոփյան 522
Թորատյան 521, 522
Թուկիդիդես 326
Թումանյան Հովհ. 13, 65, 69, 114—119, 152, 294, 431, 446, 450, 465, 490, 491, 496, 507—519, 521—523
Թումանյան Նվարդ 114

Փղանկով 541
Փելլարով 349
Փիժկա Յ. 331, 338
Փուլտովսկի 495
Փուկովսկի 144

Քրարուրի Գուրբես 81
Քրսեն 492
Քրսիլանտի 145
Քզոր, կելազ 334

Իլննկով 357, 362
Ինճիճյան 321
Իշուտին 353
Իոաննիսյան Հ. 32
Իպատիս 263
Իսահակյան Ավ. 69, 446, 490, 491
Իսկանդեր 358
Իստոմին Կ. 554
Իվան Իվանովիչ 24
Իվանով 161, 396
Իվանով Վ. 451, 492
Իվաշևա (Լե Գանսյու) 183

Լարրիսի 41
Լալարյաններ 356, 376
Լալո 51
Լակսնեսս 88
Լամարտին 152, 313
Լանզլանդ 334
Լանդրաթ 156
Լավրենտիոս Մեդիչի 332
Լավրենյով 492
Լաստիվերտցի 500
Լաֆոնտեն 445, 446
Լեկոնտ դ' Լիլ 488
Լեյկին 192
Լեմոնիե 383
Լեկկի 366
Լենկ-Քեմուր 231
Լեո 312, 342, 397, 512, 513
Լեոնարդո դա Վինչի 333, 336, 527
Լեոնով 451
Լերմոնտով Միխ. 69, 190, 352, 366, 441, 446, 447

Լիրբելտ 126
Լիրիս 357, 362, 369
Լիրկենխտ Կ. 539
Լիխաշեն 563
Լիկստանով 452, 461—464
Լիվիոս Տ. 327
Լյուբիմով-Լանսկոյ Ն. 51, 52
Լոզինով 102
Լոմբրոզո 73, 229
Լոմոնոսով Միխ. 132
Լոնգֆելլո Հ. 64—67, 507, 508
Լուկաշին Ս. (Սրապյոնյան) 41

Լուկա դելլա Բոբիա 333
Լուկոմսկի 292, 293
Լուկեցիոս 327
Լունաշարսկի 51, 124, 526, 527
Լու Սին 77, 81
Լուսինյան 358, 374, 375
Լևեն Ն. 52
Լեիտան Յու. 180, 203, 209, 214, 215
Լեոնյան Գ. 263, 291

Խալիբյան Հ. 354, 355
Խալտուրին 530
Խանդյան Ս. 525
Խաչատրյան 522
Խաչատրյան Ա. 493
Խաչիկյան Լ. 260
Խաչկյան 358
Խարադյան Ա. 492
Խեմնիցեր 445
Խոզկեկի 550—552
Խոջաբեկյան Վ. 527
Խոջամիրյան Մ. 538
Խորասանճյան 319
Խորխոսույաց Վ. 284
Խումարյան Ա. 525

Սատուրյան Ալ. 69, 447
Սերենց 345

Կապի Մ. 28
Կալինին Միխ. 8, 13, 17—22
Կալիսթենես 261
Կալլիմախ 413
Կախովսկի 353
Կամենսկի Ան. 104
Կամերոն 495
Կանայան Ստ. 512
Կանդինսկի 526
Կանտեմիր 354, 366
Կանտոն 490
Կասիխտ 133
Կասպարով Վ. 5, 6
Կասատկին 165
Կավերին 451
Կավուր 395
Կատուլլոս 327

Կարախանյան Ն. 33, 38
 Կարակոզյան Ռ. 57
 Կարակոզով Ա. 353
 Կարամզին 144
 Կարավաևա Ա. 452, 456—459, 461, 464
 Կարինյան Ա. Բ. (Բրուտ, Բրուտյան Լ.) 11
 Կելսին 361
 Կիրրալիլ 251, 349
 Կիրրիկ 159
 Կիրակոս Գանձակեցի 337
 Կիր-Պարթև 24
 Կլեո 326
 Կյուսեղրեկեր 555
 Կնիսպպեր (Կնիսպպեր-Չեխովա) 191
 Կնյաժնին 133
 Կնունյանց Բ. 24, 558
 Կոզլմո Մեդիլի 332
 Կոզլով, բանաստեղծ 116
 Կոզլով, ճանապարհորդ 248
 Կոլբ 357, 362, 372
 Կոլեսնիկովա Ն. 43—46, 49, 53, 54
 Կոլյազա 548, 563
 Կոլյակ 80
 Կոմիտասիական վ. 203, 218
 Կոն, գերմ. ղեկավար 539
 Կոնգրես 322
 Կոնի Ա. 203
 Կոնի Ֆելիքս 524
 Կոնի Ֆյոդոր 173
 Կոնսալի 110
 Կոնֆալսոնիեր 109
 Կոպերնիկոս 79, 335, 547
 Կոչոյան Ն. 494
 Կոստանդյան 319
 Կովալևսկայա Սոֆիա 557
 Կովալևսկի Մ. 73
 Կորբ 68
 Կորյուն 267, 268, 329
 Կորոլենկո վ. 25, 202, 204—206, 209, 214, 222—230, 409, 426, 453, 531
 Կոխով Ի. 445
 Կվիտկա-Օսեովյանենկո 119
 Կվիրոզա 146
 Կրամարենկո 26
 Կրանախ 333
 Կրաչկովսկի 235
 Կրապոտկին 453
 Կրավչենկո 432
 Կրանսկի 178
 Կրեչետով 133, 554
 Կրիմսկի 532
 Կրճիկյան Ն. 319
 Կրուպսկայա Նադեժդա 93, 542
 Կուզնեցով 407
 Կուկրինիկսի 207
 Կունո-Ֆիշեր 513
 Կուպրին Ա. 209, 456
 Կուսիկյան Կ. 69
 Կուրբե Գ. 527
 Կուրդյուով 538
 Կուրչիկին 366
 Լակորյան Ն. 12, 446, 486, 487
 Լամբարձոսյան Ն. 68—71
 Լամբարձոսյան վ. 497
 Լամոզյա Ղազվինի 232
 Լամիգ Աբ. 516
 Լախունի-Գեղամյան 340—352
 Լալին Ն. 69, 75, 79, 366, 389
 Լալրապետյան 376, 378
 Լանեսոլլյան Գ. 20
 Լասունյան 310
 Լեգել 367
 Լելվեցիուս 131, 156
 Լյուդո վ. 25, 80, 81, 190, 531
 Լյուսեին Բայբար 232, 233, 245
 Լյուրմուզ 375
 Լուրենյն 71, 126
 Լոմերոս 326, 413, 511
 Լոսեֆյան Ս. 37, 38
 Լովճան Գամակոսցի 256, 261
 Լովճան, նպիսկոպոս 289, 290
 Լովճան Իմաստասեր 281
 Լովճանենս Երզնկացի 69, 337
 Լովճանենս, կաթողիկոս 282, 283
 Լովճանենս Սարկավազ 337
 Լովճանեսիսյան Աբ. 378, 444
 Լովճանեսիսյան Աղ. 32
 Լովճանեսիսյան Լովճ. 69, 443, 446, 447, 491
 Լովճանեսիսյան Ս. 512
 Լովճան Մանգակունի 263, 296—298, 300, 329
 Լովճան Ոսկերեբան 293

Լովճան Օձնեցի 281, 336, 500
 Լովսեֆյան Ն. 524
 Լորացիս 327
 Լոֆման 532
 Լուլիան Լալիկարնացի 282
 Լուլիանոս Ուրացող 263
 Լուլիոս Կեսար (Յուլի Ցեզար) 327
 Լուս Յ. 79, 127, 331, 336, 338, 530
 Լուստինիանոս 263

Ղափանցյան Գր. 497
 Ղուկաս Առաքյալ 549

Ճեղաչիրլյան 351

Մարլի 131, 132
 Մազնիցլի 155
 Մազալիո 333
 Մախլովներ 50, 51
 Մալթոս 371, 380
 Մալիգին 38
 Մախասյան Ստ. 497
 Մակաշին 401, 403
 Մակինցյան Պ. 69
 Մակլեր 301
 Մակոզենենկո 130, 138
 Մակոլեյ 357
 Մակովսկի 25, 251
 Մաձձինի Ջ. 360
 Մամբրե Վերձանող 329
 Մամին-Սիրիրյակ 204—206, 209
 Մամոնտով 130
 Մամուրյան Մ. 318—339
 Մայակովսկի վ. 426, 471, 472, 474, 475, 477, 480, 489, 527

Մանանդյան Ն. 497
 Մանդելշտամ Մ. 34
 Մանե Էդ. 527
 Մանուկյան Ա. 307
 Մանուցի Ալոն 553
 Մաշինսկի 155, 156
 Մարգարյան Ս. 524
 Մառ Ն. 257, 266, 295, 333
 Մասոս Ս. 111
 Մասուլ Մ. 345

Մարտիկյան Ս. 525
 Մարցիալ 327
 Մաքիավելլի 334
 Մաքսիմով 540—542
 Մելիքյան-Ամիրյան Ս. 342
 Մելիքյան Ռ. 493
 Մելիքյան Ս. 493
 Մելիք-Շահնազարյան Կ. 58
 Մելլին-Յակոբովիչ 205, 206, 416
 Մելբումյան-Ամիրյան Ս. 342, 343
 Մենանդր 299
 Մենդելեև 362, 386, 394, 557
 Մենիկով 73
 Մեսալյաններ 269, 270
 Մեսսինա 394
 Մեսրոպ Մաշտոց 256, 265, 267—269, 329
 Մեսերլինգ 383
 Մեստերիս 107, 363, 400
 Մերեժկովսկի 104, 419
 Մերինգ 526
 Մերկանտինի 366
 Միանսարյանց Մ. 558—560
 Մինգանա 269
 Միլ 360, 365, 372
 Միխալով 64—65, 116, 366, 395, 447
 Միկոլաև-Մակլայ 245—253
 Միկոյան Ա. 37—39
 Միհր 294
 Միլլե 322, 373
 Միտակյան 522
 Միսաբյան Խ. 311
 Միրբո 0. 52
 Միրխոնդ 234
 Միցկևիչ Ա. 108, 147, 348, 351, 352
 Միքելանջելո 333
 Միսիթար Գոշ 501, 503—506
 Միսիթարյաններ 375, 442
 Միշյան Լ. 490
 Մկրյան Մ. 307
 Մկրտչյան Կ. 269
 Մյասնիկյան Ալ. (Մյասնիկով, Մարտունի)
 13, 41, 42, 479, 480, 528, 558
 Մյունիե Կ. 25, 460, 527
 Մյուլլեր 275

Մյուսները Բ. 127
Մուխեր 81, 307
Մուխեարի 371, 372, 380
Մոնտեյն Մ. 81, 412
Մոնտեսկյո 156
Մոնտի 109
Մոսկովին 203
Մովսես Խորենացի 259—262, 265, 267, 269, 288, 292, 298—300, 329, 330, 338
Մովսես Կաղանկատվացի 283
Մորավիա 88
Մսերյանց 363
Մուսատուրի 247
Մուխտարի 28
Մուսրղակի Մ. 50, 51
Մուրավյովա 183
Մուրավյով-Ապոստոլ 353
Մուրատով 68

Յադրինցն 252
Յակոբին Մարիա 48—49
Յակովլև 356
Յակուբովիչ 416
Յակուբովսկի 232
Յակուչև Ստ. 41
Յան Հ. 127, 530
Յանով 377
Յարոշենկո 25, 386
Յուդենիչ 80
Յուսուճյան Կ. 319
Յուսուֆյան 311
Յուվենալ 327

Նազարյան Շուշանիկ 301—304
Նազարյանց Ստ. 358, 364, 365, 369, 370, 446
Նալբանդյան Միր. 152, 347, 353—359, 361—381, 446, 485, 557
Նայդենով 221
Նասեր Սևիմ 316
Նասիրեզդի Տ. 334
Նավասարդյան 84
Նարբեյ Խ. 313
Նարիմանով 28
Նեկրասով Ն. 25, 62, 72, 104, 169—187, 190, 202, 384, 389, 393, 394, 401, 403, 427—430, 441, 481

Նեմիրովիչ-Գանչենկո Վ. 203, 269, 213, 422
Նեչկինա 556
Նեպոտ 327
Նեստոր 256, 262, 268
Ներսես Աշտարակեցի 355, 356
Ներսես Մեծ 259, 267, 288, 289
Ներսես Շնորհալի 263
Ներուզա Պ. 88
Նեուստրոն 403
Նիգամի Գյանչևի 54, 237, 242—245
Նիկոլո Պիզանո 333
Նիկոլո Բինցի 332
Նիկիտիչ (Կրասին) 545
Նիկոլաձև 377
Նիկոլայ I (Նիկոլայ Պավլին) 121, 142, 148, 153, 164, 182, 426, 484
Նիկոլև 133
Նիցչե 73, 201
Նյուշին (Վուֆսոն) Ս. 41
Նովիկով 133, 136, 446, 554, 563
Նովիկով-Պրիբոյ 451
Նորդաու Մ. 201, 212
Նուրի 57
Նենդոմսկի 417, 419

Շահազիզ Ս. 441, 446, 447
Շահգեղդյան Ա. 524
Շահնազարյան Ա. 12, 319
Շահվերդյան Գ. 516, 525
Շահումյան Ս. 26
Շահումյան Ստ. 5, 6, 8, 11, 12, 26, 28, 31, 32, 34—36, 40—42, 45, 54, 84, 101, 102, 152, 487, 488, 508, 524, 558
Շանթ Լ. 37, 442
Շապուշիկով 378
Շատունովսկայա Օլգա 26
Շարդեն 68
Շելդունով 355, 396, 444, 447, 453, 561
Շելլի 69, 107, 412
Շելլինգ 365, 367
Շերֆիզ Հ. 88
Շերսպիր 190, 357, 477, 492
Շիլլեր 75, 79, 492
Շիմոն Մ. 345
Շիրվանզադե Ալ. 12, 442, 448—450, 477, 491, 492

Շլիֆեն 75
Շլոսսեր 335, 357, 362
Շմելյով 103
Շոլոխով Միխ. 431—440, 451
Շոլոմա Ա. 51
Շոու Բ. 77, 81, 153
Շչեպոկին Մ. 122, 548, 563
Շչուկո 495
Շչուան 495
Շտրանզե 133
Շտրասու 348
Շուբերտ Յո. 461
Շուվյատիկով 525, 526
Շևչենկո Տ. 119—129, 182, 399, 400, 442

Ռգինա 300
Ռիմպուս 350
Ռսկան, տպագրիչ 70, 548
Ռսկան Ստ. 362, 380

Չաադահ 123, 144, 167, 446
Չալոյան Վ. 259
Չամչյան 321, 324
Չալկովսկի Պ. 59, 203, 209
Չարենց Ե. 14, 446, 467—485, 488—491, 527, 528

Չերտաբով 407
Չեսոստե Ա., տե՛ս Չեսով Ա.
Չեսով Ա. 24, 52, 61, 62, 187—222, 224, 416, 422, 431, 561

Չերնիչ 225
Չերնիշևսկի Մ. 401
Չերնիշևսկի Ն. 25, 72, 120, 123, 126, 152, 170, 172—175, 182, 190, 225, 229, 246—248, 251, 316, 317, 349, 350, 353, 360, 362, 363, 365, 367, 368, 371, 372, 379, 380, 384—389, 392, 393, 396—408, 427, 447, 485, 527, 529, 530, 556, 557, 564

Չերնոմորզիկով 51
Չերնով 407
Չերբեզյան 363
Չիլինգարյան 447
Չիլինկիրյան 313
Չոպանյան Ա. 301, 312

Չոսեր 334
Չուկովներ 103
Չուխաչյան Տ. 493
Չուկովսկի Կ. 170, 171, 173, 174, 178, 180, 185, 186, 392, 401, 424—431, 481
Չումակով 151

Պալլադի 495
Պալյան Ս. 309, 310
Պանաս Ալզոդյա 427
Պանտելև 129
Պապ Թագավոր 258, 259, 267, 288, 289, 328
Պապուլինսկի 156
Պասսեկ 394
Պավել, թագավոր 134
Պավլանի 71
Պավլիկյաններ 264, 279, 280
Պավլով 73
Պատկանյան Ռ. 346, 354, 362, 389
Պատկանյան Ք. 389
Պարթևյան Ս. 315
Պարոնյան Հ. 305—318, 492, 523
Պեզճյաններ 351
Պելիկո Ս. 109
Պեկարսկի 554
Պելիկովյան 523
Պելիկով Ա., տե՛ս Գորկի Մ.
Պեստել 149, 353, 484, 485, 555
Պետրաշևսկի 353, 359
Պետրարքա 334
Պետրոս I 132, 149, 152, 153, 554
Պերովսկայա Սոֆիա 251, 530
Պերպերյան 312
Պերսի 327
Պիկո դելլա Միրանդոլա 333
Պիկանով 117
Պինգարոս 326
Պիսարե 190, 386, 409
Պիսեմսկի 448
Պիրոգով 191, 386, 557
Պլավտոս 327
Պլատոն 326
Պլեխանով Գ. 175, 176, 429, 460, 526, 527, 560, 561
Պլեշչև 194, 198, 205, 206, 209
Պլետնյով 157

Պլինիոս 327
Պլուտարքոս 297
Պոզոզին 37
Պոլեմակ 390
Պոլոնսկի 204
Պո էդ. 484
Պոպով 407
Պոտանին 248
Պոտյև էժ. 99
Պոտլյան Պ. 295, 345, 368—370, 444, 447
Պրժևալսկի 248
Պուգաչով Ե. 150, 151, 228, 472
Պուշկին Ա. 61, 135, 142—154, 157, 160, 164, 174, 183, 187, 202, 348, 351, 352, 366, 390, 411, 412, 441, 447, 450, 482, 490, 507, 511, 530, 555, 557, 563
Ջամի 510
Ջանչյան 558
Ջափարիձե Ալ. 5, 6, 8, 26, 28, 35, 36, 45, 54
Ջափարիձե Ռ. 27
Ջեմս 85
Ջիովաննի Բոկկաչչիո 313, 334
Ջիոտտո 333
Ջիորջիոնե 333
Ջոնսոն Խյուլլես 88
Ջորդանո Բրոնո 79, 530
Ռադիշչև Ա. 129—142, 366, 446, 554, 555, 557, 563
Ռադին Ստ. 25, 127, 147, 472, 519
Ռախմանինով Ա. 51
Ռայսեր 391, 393
Ռասուլ Ջադև Մ. 35, 36
Ռաֆայել 333
Ռեմբրանդտ Լ. 70
Ռենուար Օգ. 525, 527
Ռեսպին Ի. 203, 209, 426, 527
Ռջնան 348
Ռինգո 146
Ռիլեն 133, 156, 353, 484, 485, 555
Ռիմսկի-Կոսսակով Ն. 50, 493
Ռյուիսդալ 511
Ռոբսոն Պ. 154
Ռոզեն Օգ. 527

Ռոզենբախ 383
Ռուլան Ռ. 81
Ռոստան էդ. 531
Ռուլին 356, 357, 362, 386
Ռուսինյան 362
Ռուսո ժան-ժակ 81, 116, 347, 357, 384
Սաադի 238, 510
Սաբիր 54
Սազգյան Ա. 71
Սալլյուստիոս 327
Սալտիկով-Շչեգրին 24, 72, 99, 173, 185, 193, 194, 206, 207, 307, 390
Սակեատրի 313
Սահակ Պարթև 256, 267, 329
Սամարյն Ա. 40
Սամեն 488
Սամոսկյան Խ. 499—506
Սայաթ-Նովա 369
Սանտոս է. 49
Սապոժնիկով 122
Սավանարոլլա Ջ. 291, 332
Սարասատե Պ. 51
Սարգսյան Գր. 14
Սարգսրով 28
Սարյան Մ. 381—384, 493, 494
Սարուխան 312
Սաֆո 326, 412
Սեզան Պ. 527
Սեթ-Արզար 358, 362
Սենեկա 327
Սենկևիչ Լ. 202
Սեն-Սիմոն Ա. 246
Սենտ-Բյով 165
Սելենով Ի. 73, 191, 226, 248, 386, 557
Սերգեն-Ցենսկի Ս. 103
Սերնո-Սոլովյովիչ 361
Սերով Վ. 203
Սերվանտես Մ. 190, 357
Սերվիլեն 362
Սիդորով 548, 563
Սիոն, կաթողիկոս 284, 285
Սլեպցով 386
Սկարիչևսկի 194
Սկիտալեց 204
Սկլիֆասսովսկի 191

Սկոտ Վ. 148
Սմբատ Գունդատաբլ 501, 504
Սմբատ Զարեհավանցի 336
Սոկրով 213
Սոկրատ 326
Սորել 41
Սոսուի 113
Սոփոկլես 326, 507
Սպանդարյան Ս. 5, 6, 41, 42, 524, 558
Սպարտակ 326, 336, 509
Սպենդիարյան Ալ. 69, 493
Սպինոզա 70
Սվաճյան 313, 358, 362
Սվաճյաններ 351
Սվետոնիոս 327
Ստանիսլավսկի 203, 209
Ստասով 169, 430
Ստենյեն Ք. 25, 527
Ստենդալ 81, 106—109, 111—113
Ստենի 247
Ստեփան 311
Ստեփանյան Գ. 307, 314—316, 447
Ստոլիպին 539
Ստոպանի Ա. 6, 41, 42
Սուբիսի Մ. 479
Սուլեյման 284
Սումբատով Յու. 213
Սունդուկյան Գ. 492
Սուվորին 198, 200, 201, 515
Սուրբարյան 518, 519
Սուրբուշով 103
Վազարի 126
Վամբերի Գ. 313
Վան-Ջիսեմ 70
Վան-Լեբերգ 383
Վաշինգտոն Զ. 65, 109, 146
Վասակ Մարզպան 271
Վասիլի 233—235
Վարանդա Վ. 284
Վարանդյան Միք. (Հովհաննիսյան) 84, 85
Վարդան Մամիկոնյան 271
Վարովսկի 526, 527
Վեդիբով 38
Վելնբերգ 35

Վենեցիանով 180, 183
Վենյավսկի 51
Վենեխտինով 148
Վեոլեն 484, 488
Վեսելովսկի Յու. 292, 293, 296, 297, 442
Վերդի Զ. 380, 394
Վերեշագին Վ. 527
Վերեսաև (Մաիգովիչ) Վ. 25, 408—413, 561
Վերհարն էմ. 383, 456, 471, 476, 481
Վերնոն Լի 68
Վիկելեֆ 79
Վինոգրադով 108—110, 112
Վիշնյան 319
Վիտիմսկի (Օլմինսկի) 99
Վոզովոզովա 453
Վոլոնսկայա 150, 183, 185, 555
Վոլոնսկի 122, 185
Վոլտեր Զ. 80, 81, 130, 138, 156, 322, 519, 544
Վոյնիչ Լ. 25
Վովչևկ Մ. 400
Վորոնիսին 495
Վորոնցով-Պաշկով 134, 139, 146, 147, 539
Վյաչեսլավ Իվանովիչ 104
Վշտունի Ազ. 491
Վրանգել 80, 515
Տադանց 200
Տակիտոս 327
Տալլեր Ռ. 331, 338
Տատյաններ 351
Տարասով 407
Տելեշով 204, 209
Տետյան 319, 321
Տեր-Առաքելյան Ա. 34
Տեր-Ավետիսյան 465
Տեր-Պարթևյան 28
Տերենցիոս 293, 327
Տեր-Ղազարյան Գ. 34
Տեր-Ղևոնդյան 493
Տեր-Միքայելյան-Վարշամյանց Ս. 342, 343
Տերյան Վ. 26, 32, 42, 69, 446, 475, 476, 487, 488, 490, 507, 508
Տերոյենց-Չամուռճյան Հովհ. 310—312, 363, 364, 369, 376

Տեր-Պետրոսյան Արուսյակ 541, 542
Տեր-Պետրոսյան Կ. 529, 531—545
Տեր-Պետրոսյան Ջավահիր 540—542
Տեր-Պետրոսյան Սանդուխտ 541
Տեր-Սիմոնյան Գ. 524—529
Տեր-Սիմոնյան Մ. 524, 525
Տերտուլիանոս 292
Տիգրանյան Ա. 493
Տիերրի Օգոստի 322
Տիխոմիրով Մ. 548, 563
Տիմիրյազև 73, 191, 386, 557
Տիր 298
Տիրամայր 65
Տիցիան 333
Տխուփոս 265
Տյուլին 228
Տոգորսկի 54
Տոլստոյ Ալ. 103, 544
Տոլստոյ, Գև սրեզդիգենա 122
Տոլստոյ, լուսավորության միեկամար 189
Տոլստոյ Ա. 52, 61, 72, 171, 173, 200—202, 205, 209, 223, 228, 250, 397 426, 453, 457, 527
Տոմսոն 490
Տորկվատո Տաստ 111
Տվեն Մ. 67, 247, 307, 464
Տրենյով 492
Տրիբուատտի 109
Տրուբեցկայա 183
Տրդատ 258
Տրդատ Բագրատունի 299
Տրենյով 492
Տուրգենև Ի. 25, 51, 61, 173, 190, 202, 226, 251, 352, 356, 358, 361, 386, 389, 393, 394, 442, 447, 457
Րաֆֆի 242, 295, 339—353, 442, 447
Րեկլյու էլիզ 335
Րիդ Մ. 66
Ցիցերոն 324, 327
Ռալլո Օ. 427
Ռոլանտ Մ. 88
Ռոխամեն Ռ. 427, 428, 471, 481
Ռուդոլֆ 231, 236

Ռշակով 131, 135, 139
Ռոհայնցի 337
Ռուպենսկի Գ. 24, 204, 213, 214, 227, 229, 454, 561
Ուրբանոս 293
Փանոսյան Կ. 311, 312
Փանոսյաններ 351
Փավստոս Բլուզանդացի 258—260, 267, 288—291, 295, 298, 330, 342, 349, 502, 503
Փարսեցի 259—262, 269, 270, 280
Փափազյան Վ. 242
Փլավիան 270
Փալանթարյաններ 69
Փարաջյան 524
Փլաթիպյան 362
Փոլո Ռ. 316
Փանտֆոն 326, 503
Փրիստոս 65, 264, 283, 293
Փուշնարյան 129, 442
Փրոուշև 248
Փարսյով (Օգարև) 99, 357, 358, 361, 366, 379, 389, 446, 485, 556, 557, 564
Օգոստի 149, 183, 555
Օզերով 141
Օլեարի 68
Օլին 171
Օլիվետտի 41
Օլմինսկի 99
Օհանջանյան Օն. 42
Օմար Խայամ 69, 236, 244, 510
Օշական 83, 90
Օսով, բանաստեղծ 130
Օսով, զորավար 145
Օսնովյանենկո Կ. 524
Օստրովսկի Ալ. 51, 190, 391, 448, 451
Օստրոմով 191
Օվիդիոս 327
Օտյան Գր. 362
Օտյան Նր. 311, 518—521
Օրբելի Հ. 497
Օրկանյա 333
Օրջոնիկիձե Ա. 20, 21, 513

Օուեն Ռ. 246
Օֆֆենբախ 50

Ֆադեև 226, 451
Ֆեդին 451
Ֆեդոտով 125, 167
Ֆեոդորով Ի. 548—553, 563
Ֆիզուլի 54
Ֆիլոսոֆատ 257

Ֆիուլետով Վ. 27, 28
Ֆիրդուսի 242, 510
Ֆլորեր Գ. 48
Ֆնտրդյան Գ. 269
Ֆոմին 495
Ֆոնովիզին Դն. 133
Ֆրանկլին 146
Ֆրանս Ան. 77
Ֆուրմանով Դմ. 451, 492

Տ Ե Ղ Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր

Աբլյազովո 130
 Ազրբեջանական ՍՍՀ 39, 44, 53, 54, 63, 486, 543
 Ազրիանապոլիս 314
 Ազրիատիկ 421
 Աթենք 13, 71, 259, 260, 263, 292, 542
 Ալավերդի 42, 466
 Ալեքսանդրապոլ, տե՛ս Լենինական
 Ալեքսանդրիա 259, 261, 263
 Ախալցխա 405
 Ակրոպոլիս 71
 Աղվանից երկիր 283—285
 Ամերիկա 13, 64, 80, 85, 132, 138, 420, 421, 515, 542
 ԱՄՆ (Ամերիկայի Միացյալ Նահանգներ) 9
 Ամատերդամ 548
 Անատոլիա 523
 Անգլիա 77, 81, 351, 373, 374
 Անդրկովկաս 7, 8, 33, 52, 486, 487, 489, 508, 515, 522
 Անի 271, 346, 383, 505
 Անտիոք 257, 270, 282
 Աշտարակ 369, 370
 Աշտիշատ 267, 271, 295
 Ապահոնյաց, գավառ 282
 Ապամեա 261
 Ասիա 241, 374
 Աստրախան 122, 405
 Ավճալա 540
 Ատլանտյան օվկիանոս 154
 Արկտիկա 82, 187, 452
 Արշակավան 258, 504
 Արփաշայ 481

Արևելյան Պրուսիա 434
 Արևմտյան եվրոպա 10, 141
 Աֆրիկա 74
 Բարեյոն 331, 382
 Բաթում 522, 523, 533, 537
 Բախով 23
 Բալտիանի 23, 40, 42, 43, 508
 Բալտիանո-Սարունչինսկ 49
 Բալկանյան թերակղզի 266
 Բարու 5—9, 11, 12, 23, 26, 27, 29—31, 37, 38, 40, 42, 44, 46—57, 60, 63, 102, 340, 342, 345, 391, 405, 408, 483, 484, 486—488, 508, 524, 526, 543
 Բելգիա 383, 460
 Բեռլին 479, 538
 Բեսարաբիա 355
 Բերա 515, 516, 521
 Բերգամո 111
 Բիրի-էյրաթ, արվարձան 508
 Բիրի-Ղելբաթ, հովիտ 23
 Բինազադի 23
 Բյուզանդիա 259, 262, 265
 Բոլոնիա 110
 Բոսֆոր 515
 Բոյուզգե, տաճար 71
 Բրեշիա 111
 Բրեստ 487
 Բրունսվիկ 64
 Բուլղարիա 280, 533, 534, 542
 Բուխարա 236
 Բուկովինա 434
 Գալիցիա 398, 434, 549

Գանձակ 405
 Գառնի, տաճար 261
 Գերմանիա 73—75, 156, 426, 487, 534
 Գյումրի-Ալեքսանդրապոլ, տե՛ս Լենինական
 Գյումուշղէս 466
 Գվաստալա 111
 Գիբետ, ձոր 512
 Գերբենտ 405
 Գնեսպր 128
 Դոն, գետ 188, 377, 432, 433
 Դոնրաս 452, 453
 Դոնի-Ռոստով 16
 Դոն, մարզ 431, 432,
 Դոն, շրջան 407
 Դսեղ 521, 523
 Դվին 274—277, 279, 280, 282, 284, 296, 297
 Եդեսիա 261, 268
 Եկատերինոսլավ, նահանգ 377
 Դվին 274—277, 279, 280, 282, 284, 296, 297, 388, 516, 520, 543
 Եվրոպական թերա 516
 Երեթեյոն, տաճար 71
 Երևան 381, 382, 405, 407, 465—467, 473, 495, 498, 512, 513, 522, 526
 Երևանի նահանգ 405
 Զարուզովո 550—552
 Զանգեզուր 60, 466, 510
 Զաքաթալա 405
 Զելթոն 380
 Զմյուռնիա 318, 321, 333, 358, 380
 Զվարթնոց 279
 Էլլադա տե՛ս Հունաստան
 Էջմիածին, տաճար 279
 Քրիլիսի (Քիֆլիս) 9, 10, 21, 35, 152, 310, 377, 378, 383, 405—407, 445, 508, 512, 514, 522, 526, 528, 533—535, 537, 539, 540, 543
 Քրիլիսի, նահանգ (Քիֆլիսի նահանգ) 405
 Քելավ 405
 Քելավ, նահանգ 405
 Քևոքոսիա 405

Քոբաթ 301
 Քուրբեստան 487
 Քուրբիա 9, 10, 146, 309, 311—313, 322, 328, 332, 351, 358, 362, 363, 374, 376, 515, 523, 534
 Ժնև 561
 Իլիմսկ 134
 Իկոնիա 270
 Իսպանիա 332
 Իտալիա 88, 105—111, 113, 116, 160, 161, 163, 164, 166, 324, 332, 333, 380, 395, 396, 414, 481
 Իսկյուտար, թաղամաս 313, 516
 Իրան 146, 243, 362
 Իրկուսկ 134, 183, 188
 Լայպցիգ 130, 131, 135, 558, 559
 Լեզրայր 283
 Լեհաստան 222
 Լենա, գետ 225
 Լենինական 17, 18, 20—22, 405, 477, 481, 492, 498
 Լենինգրադ 5—7, 9, 11—13, 17, 25, 26, 32, 97, 121, 122, 130, 131, 133, 134, 140, 143, 148, 156, 171, 172, 185, 203, 219, 246, 247, 349, 353, 357, 359, 388, 403, 404, 409, 420, 435, 439, 444, 445, 447, 475, 484, 487, 532, 534, 545, 556, 558, 560
 Լիավա 550
 Լյուբեկ 156
 Լոնդոն 361, 379, 383, 392, 556
 Լվով 398, 549—553, 563
 Լուզանսկ 405
 Խաղաղ օվկիանոս 250
 Խարբերդ 301
 Խարկով 155, 524, 543
 Կադիքոյ 516
 Կազան 133, 155
 Կալեդոնիա, տե՛ս Նոր Կալեդոնիա
 Կախնթ 510
 Կամենեց-Պոդոլսկ 405
 Կամիլին 122, 359, 377

Կանտոն 490
Կանն 128
Կասպրի, կղզի 414
Կասպից ծով 121
Կարս 473
Կերչ 406
Կենտրոնական, տաճար 88
Կիլիկիա 502, 504
Կիրովական 492
Կին 133, 524
Կոլիզեյ 395
Կոլոմբո 215
Կոմո 111
Կոնստան 331
Կոպենհագեն 538
Կովկաս 6—8, 11, 12, 26, 146, 406, 452, 542
Կրեմոնա 111
Կրոնշտադտ 404
Կրևալիներա 111
Կուրսկ 406
Կուրսկ, նահանգ 404

Հայաստան 146, 243, 256, 259, 260, 263, 264, 266—270, 274, 279, 282, 297, 300, 346, 348—349, 380, 382, 446, 488—493, 495, 496, 502—505, 512
Հայդելբերգ 246
Հարավային Ռուսիա (Հարավային Ռուսաստան) 129, 144—145, 188, 354, 554
Հերաթ 232—236
Հյուսիսային Ամերիկա 67
Հյուսիսային Իտալիա 111
Հյուսիսային Կովկաս 407
Հնդկական օվկիանոս 215
Հնդկաստան 334, 358, 373, 374, 376, 380
Հոլանդիա 70
Հոլանդերների 466
Հոսի 107, 109, 110, 164, 165, 323, 324, 321, 394
Հոտոնո, վանք 505
Հոֆբուրգ, տաճար 257, 279
ՀՍՍՀ (Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն) 4, 9, 10, 13, 17—19, 21, 29, 57, 71, 301, 306, 339, 381, 383.

384, 465, 486, 494, 497—499, 513, 515, 517, 522, 526
Հոնաստան 69—71, 113, 243, 326
Զորագլու 466

Ղարաթիա 515, 516
Ղարաբաղ 510
Ղալաթ 406, 407
Ղրթ 16, 129, 385, 405, 406

Ճագոնիա 374
Ճենովա 332, 333, 394

Մադրիդ 80, 146
Մոնազիկերտ 282—284
Մանչեստր 10
Մանչեսթեր 164
Մանչուրիա 410
Մանտուա 333
Մարազա 334
Մեախի, ամրոց 539
Մելիտոփո 211
Մեսսինա 394
Մեսսոլոնգի 113, 116
Մերփ 231
Միլան 108, 109, 111, 332, 333, 394
Միխայլովսկոյե 147
Միչագետք 270
Միչագուլ (Օրթագուլ) 312
Միչին Ասիա 266
Մոարիտ 538
Մոզան 516
Մոզենա 111
Մոնմարտ 380
Մոսկվա 8, 9, 12, 21, 42, 80, 81, 122, 130, 133, 143, 148, 153, 181, 183, 189—191, 193, 195—197, 199, 203, 356, 357, 381—383, 385, 404, 445, 467, 472, 474, 475, 487, 488, 493, 509, 517, 524, 526, 527, 529, 543—545, 548—553, 563
Մշո ս. Կարապետ, վանք 296

Յալթա 203, 204
Յակոտիա, նահանգ 223
Յարոսլավլ, նահանգ 171

Նաիրի 473
Նախիջևան (Ադր. ՍՍՀ) 517
Նավարա 111
Նավթուղ 540
Նարվա-Պետրոգրադ 9, 13
Նեապոլ (Նափոլի) 163, 333, 394
Նեմին 155, 156
Նեմցովո 134, 138
Ներչինսկ 355
Նիդերիա 138
Նիժնի-Նովգորոդ 122, 229, 405
Նիշնայոր 236
Նիցցա 394
Նյու-Յորք 421
Նովոպետրովսկ, բերդ 121
Նովոսելսկ 211
Նոր Կալեդոնիա 250, 251
Նոր Նախիջևան (Նախիջևան) 354, 355, 359, 376, 377, 405, 407, 554
Նուսի 405
Նևա 353

Շահապիվան 271, 272, 295
Շամախի 342, 405
Շամախի, նահանգ 405
Շիլլիոն 117
Շիրակ 383
Շվեյցարիա 561
Շուշի 405

Ուոնեցկ 405

Չինաստան 232, 243, 373
Չիլիատա-Վիկկիա 113, 165

Պաղույա 332
Պալերմո 394
Պամփուլիա 270
Պավիա 111
Պարթենոն 71
Պարմա 111
Պարտավ 284—286
Պետրոգրադ, տե՛ս լենինգրադ
Պետրոպոլիսյան ամրոց 347, 353, 367
Պետրոգրադ, տե՛ս լենինգրադ

Պետրոպոլիս 69
Պիաչենցա 111
Պիտեր, տե՛ս լենինգրադ
Պոլիս 13, 301, 311, 312, 314, 515, 516, 523
Պոլտավա 154
Պորանդ 64
Պրեսնե 53
Պրուա 145

Ռավելին 353, 354, 359, 380
Ռոման 23
Ռոստով 188, 354, 377, 405
Ռումինիա 434
Ռուսաստան (Ռուսիա) 10, 18, 64, 73, 98, 100, 123, 128, 144, 146, 155, 160, 161, 163—165, 177, 178, 186, 197, 200, 210, 216, 222, 249, 350, 352, 358—360, 363, 374, 376, 385, 387, 388, 404, 407, 409, 415, 420, 518, 534, 538, 546, 548, 549, 551, 557

Սախալին 196—200, 215
Սամաթիա 312, 313
Սամարա 117
Սամարզանդ 231
Սարատով 407
Սարատով, նահանգ 130, 404
Ս. Պետրոգրադ, տե՛ս լենինգրադ
Սենեզա 138
Սերպուխով 404
Սիրի 124, 134, 138, 139, 150, 182, 183, 225, 355, 530, 534, 542
Սիմֆերոպոլ 405
Սիրիա 256
Սիցիլիա 394
Սղանիա 405, 540
ՍՍՀՄ (Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն) 10, 13, 16, 67, 71, 75—77, 79—82, 88—90, 135, 153, 154, 187, 222, 246, 380, 413, 430, 450, 487, 498, 499, 562, 564
Սոֆիա 534
Սպիտակ բաղաթ 23, 42, 49
Սվյատոգորսկ, մենաստան 147
Ստամբուլ 64, 306, 312, 380, 443, 449, 479, 515—518, 522, 523, 534, 538, 542

Ստավրոպոլ 405, 407
 Ստավրոպոլ, նահանգ 405
 Սուրբին 23, 43
 Սևաստոպոլ 457, 458
 Սև ծով 405
 Սև բաղաբ 23, 42, 43, 49, 52, 60

Վատերլո 113
 Վատրիկան 10, 332, 346, 547, 551
 Վենետիկ 10, 333, 381, 382, 394, 480
 Վերին Միջագետք 269
 Վերինեղեկապովսկ 405
 Վերոնա 113
 Վիեննա 10, 399
 Վիլենցա 332
 Վլադիվոկլավա 21, 540
 Վլադիմիրյան խճուղի 534
 Վոլգա 127, 186, 229, 377, 414, 432
 Վոլոգդա (Ցարիցին) 12
 Վորոնեժ 406
 Վրաստան 510, 540, 543
 Վրացական ՍՍՀ 379, 486

Տագանրոգ 188—190, 211, 405
 Տալեժ 211
 Տաճկաստան 345
 Տամբով 133
 Տաշքենդ 231
 Տավրիկյան նահանգ 405, 406
 Տեկոր, տաճար 257
 Տերիոկի 6, 11
 Տիգրանակերտ 263
 Տորոլսկ 133

Տոսկանա 333
 Տոլա 409
 Տուրին 394
 Տրեբիզոն 111

Ցեչյուն 215
 Ուկրաինա 119, 120, 128, 157, 524
 Ուկրաինական ՍՍՀ 524

Փարիզ 10, 80, 113, 130, 250, 251, 301, 311, 358, 361, 372, 380, 383, 479, 489, 523, 538, 557
 Փիրոնեցիա, տե՛ս Ֆլորենցիա
 Փոքր Ասիա 256—257, 264, 267, 269, 279
 Փոքր Հայք 270
 Քաղկեդոնիա 283
 Քիշինև 145, 405, 406
 Քուբախի, նահանգ 405
 Քուբ 541

Պղեսա 147, 395
 Օստրոգ 552, 563
 Օստրոժսկ 550
 Օրենբուրգ, նահանգ 121
 Օրշոնիկիձե 21
 Օրսկ, բերդ 121

Ֆերարա 111, 332
 Ֆինլանդիա 6, 25
 Ֆլորենցիա 291, 332, 333, 394
 Ֆրանսիա 81, 374, 388

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Արտաշես Կարինյան (Գ. Ա. Գալույան)	5
Վաստակավոր հրապարակախոս բննադատը (Գր. Սարգսյան)	11
Ողջույն և շնորհակալություն պիոներներին	15
Մ. Կալինինը Լենինականում	17

Ա

Բարձի դպրոցականները 1905 թվականին	23
Նվիրական զեմբեր	25
К характеристике бакинской периодической печати в 1917—1918 гг.	29
Рядовые партийного слова	39
На фронте культуры в дни бакинской коммуны 1918 г.	43
Մովսիս արվարձան քաղաքը	53
Գիտակետի կարևորության մասին	57
Լոնգֆելլուն և իր «Հայավաթի երգը»	64
Ուշագրավ ակնարկ-մտորումներ	68
Մարտիմ Գորկին գեղադեմ-հրապարակախոս	72
Գաղութաճայ հետադեմ մտնեախններին իմաստասիրությունը	83
«Պրավդան» նախահոկոսներին տարիններին	91

Բ

Ռեալիզմի վերածնունդը	103
Մարտիմ Գորկու «Հեթաթիներ»-ը	105
Բայրոն և Ստենդալ	106
Բայրոն և Թոմասյան	114
Տարաս Շևչենկո	119
Ռադիշև	129
Պուշկինը այսօր	142
Գոգոլի ուղին	154
Նեկրասով	169
Անտոն Զեխով	187
Վլադիմիր Կորոլենկո	222
Ալիշեր Նավոյի	230
Միկուլսո Մակլայ	245

Գ

Սոցիալական պայքարի արձագանքները հին հայ գրականության մեջ	254
Հեթանոս հայերի թատրոնի մասին	297
Հայ կուլտուրայի անցյալից	301
Մեծ հումանիտ-գրող Հակոբ Պալանյանը	305
Մ. Մամուրյանը մշակութի պատմության մասին	318
Բաճիճին և իր անակցիոն բննադատը	335
Մ. Նալբանդյանը և XIX դարի 60-ական թվականների ոտս առաջավոր գործիչները	353
Նոր Սարյանը	381
Ն. Ա. Գորբուլուրով	384



Չերնիշևսկին և ժողովրդագրության հարցերը	396
Վերնասահի մասին	408
Մաքսիմ Գորկի	414
Կորնեյ Չուկովսկի	424
Միխայիլ Շոլոխով	431

Դ

Ռուս-հայ գրական նկատմամբ պատմությունից	441
Աշխատանքի մոտիվները սովետական գրականության մեջ	451
Եղիշ Չարենցի ստեղծագործական ուղին	467
Հոկտեմբերյան հեղափոխությունը և հայ մշակույթի ծաղկումը	486
Կարևոր խոսք հին հայ իրավունքի պատմության մասին	499
Հովհաննես Թումանյան	507
Գրաստամատ Տեր-Սիմեոնյան	524
Կամո	529
Ռուսական տպագրության 400-ամյակը	546
Անվանացանկ	565

ԱՐՏԱՇԵՍ ԲԱԼԱՍԻԻ ԿԱՐԻՆՅԱՆ
 АРТАШЕС БАЛАСИЕВИЧ КАРИНЯН

ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԻ ԵՂՔԱՅՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՇԻ ՆԵՐՔՈ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ նախագահության որոշմամբ

Հրատարակչական խմբագիր է. Ս. ԱՎԵՏՅԱՆ
 Գեղարվեստական խմբագիր Հ. Ն. ԳՈՐՄԱԿԱՆՅԱՆ
 Տեխնիկական խմբագիր Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
 Մերագրիչներ Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ռ. Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Սուպեր-շապիկը տպագրվել է ԳԱ էջմիածնի տպարանում:

ՎՅ 05614 Պատվեր 601 Հրատ. 4186 Տպարանակ 3000

Հանձնված է շարվածքի 29/VI 1976 թ.: Ստորագրված է տպագրության 30/IX 1976 թ.: Տպագր. 36,5 մամուլ, +1 ներդիր, հրատ. 36,5 մամուլ, պլամանկ 42,7 մամուլ: Թուղթ N 1,

70 × 90¹/₁₆: Գինը 2 ռ. 70 կ.

Հայկական ՍՍՀ հրատարակչություն, Երևան—19, Բարեկամության 24գ

Издательство АН Армянской ССР, Ереван-19, Барекамутян 24г.

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Երևանի, տպարան, Բարեկամության 24